


ՄԵԾ ՊԱՅՔԱՐ



Է. Ուայթ

ՄԵՐ ՊԱՅԳԱՐ

ՆԱԽԱԲԱՆ.....	4
ԳԼՈՒԽ 1—ԵՐՈՒՄԱՂԵՄԻ ԿՈՐՃԱՆՈՒՄԸ.....	45
ԳԼՈՒԽ 2—ՅԱԼԱՃԱՆՔ ԱՌԱՋԻՆ ԴԱՐՆՐՈՒՄ..	156
ԳԼՈՒԽ 3—ՅՈԳԵՎՈՐ ԽԱՎԱՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆ..	209
ԳԼՈՒԽ 4—ՎԱԼԴԵՆՍՆԵՐԸ.....	273
ԳԼՈՒԽ 5—ՋՈՆ ՈՒԻԿԼԻՖ.....	369
ԳԼՈՒԽ 6—ՅՈՒՄ ԵՎ ՅԵՐՈՆԻՄՈՍ.....	465
ԳԼՈՒԽ 7—ԼՅՈՒԹԵՐԻ ԱՆՋԱՏՈՒՄԸ ՅՈՈՄԻՑ. 	586
ԳԼՈՒԽ 8—ԼՅՈՒԹԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՌԱՋ719	
ԳԼՈՒԽ 9—ՇՎԵՅՑԱՐԱՑԻ ԲԱՐԵՆՈՐՈԳԻՉԸ....	854
ԳԼՈՒԽ 10—ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՅԸ	
ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ.....	927
ԳԼՈՒԽ 11—ԻՇԽԱՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԸ.....	992
ԳԼՈՒԽ 12—ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ... 	1069
ԳԼՈՒԽ 13—ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐ ԵՎ	
ՍԿԱՆԴԻՆԱՎԻԱ.....	1212
ԳԼՈՒԽ 14—ԱՎԵԼԻ ՈՒՇ ՇՐՋԱՆԻ ԱՆԳԼԻԱՑԻ	
ԲԱՐԵՆՈՐՈԳԻՉՆԵՐԸ.....	1255
ԳԼՈՒԽ 15—ԱՍՏՎԱՃԱՇՈՒՆՉԸ ԵՎ	
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ.....	1360
ԳԼՈՒԽ 16—ՈԼԽՏԱՎՈՐ ՅԱՅՐԵՐԸ.....	1488
ԳԼՈՒԽ 17—ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ԱՎԵՏԱԲԵՐՆԵՐԸ. 	1543
ԳԼՈՒԽ 18—ԱՄԵՐԻԿԱՑԻ ԲԱՐԵՆՈՐՈԳԻՉԸ... 	1632
ԳԼՈՒԽ 19—ԼՈՒՅՍ՝ ԽԱՎԱՐԻ ՄԵՋ.....	1767
ԳԼՈՒԽ 20—ԿՐՈՆԱԿԱՆ ՄԵՃ ԱՐԹՆՈՒԹՅՈՒՆ.....	1827
ԳԼՈՒԽ 21—ՄԵՐԺՎԱՃ ՆԱԽԱՉԳՈՒՇԱՅՈՒՄ. 	1932

ԳԼՈՒԽ 22—ԿԱՏԱՐՎԱՅ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2018
ԳԼՈՒԽ 23—Ի՞ՆՉ Է ՍՐԲԱՐԱՆԸ	2109
ԳԼՈՒԽ 24—ՍՈՒՐԲ ՍՐԲՈՅՈՒՄ	2178
ԳԼՈՒԽ 25—ԱՍՏՆՈ ԱՆՓՈՓՈՒՍ ՕՐԵՆՔԸ	2225
ԳԼՈՒԽ 26—ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ԳՈՐԾԸ	2316
ԳԼՈՒԽ 27—ՄԵՐ ՕՐԵՐԻ ԱՐԹԵԱՅՈՒՄՆԵՐԸ ..	2368
ԳԼՈՒԽ 28—ՀԱՆԴԻՊՈՒՄ ՃԱԿԱՏԱԳՐԻՆ	2462
ԳԼՈՒԽ 29—ՉԱՐԻ ԾԱԳՈՒՄԸ	2526
ԳԼՈՒԽ 30—ԹՇՆԱՄՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԴՈՒ ԵՎ ՍԱՏԱՆԱՅԻ ՄԻՋԵՎ	2592
ԳԼՈՒԽ 31—ՉԱՐ ՈԳԻՆԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ	2624
ԳԼՈՒԽ 32—ՍԱՏԱՆԱՅԻ ՈՐՈԳԱՅԹՆԵՐԸ	2659
ԳԼՈՒԽ 33—ԱՌԱՋԻՆ ՄԵՆ ԽԱԲԵՈՒԹՅՈՒՆԸ	2727
ԳԼՈՒԽ 34—ՈԳԵՀԱՐՑՈՒԹՅՈՒՆ	2827
ԳԼՈՒԽ 35—ԽՂՃԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՎՏԱՆԳԻ ՏԱԿ	2887
ԳԼՈՒԽ 36—ՎԵՐԱՀԱՍ ՊԱՅՔԱՐԸ	2989
ԳԼՈՒԽ 37—ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ ՈՐՊԵՍ ՄԻԱԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	3050
ԳԼՈՒԽ 38—ՎԵՐՋԻՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՅՈՒՄԸ ..	3103
ԳԼՈՒԽ 39—ՆԵՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ	3152
ԳԼՈՒԽ 40—ԱՍՏՆՈ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ 3264	
ԳԼՈՒԽ 41—ԵՐԿՐԻ ԱՄԱՅԱՅՈՒՄԸ	3354
ԳԼՈՒԽ 42—ՊԱՅՔԱՐՆ ԱՎԱՐՏՎԱՅ Է	3399

ՆԱԽԱԲԱՆ

Մինչ մեղանչումը Ադամն
ազատ հաղորդակցվում էր իր
Ստեղծողի հետ, բայց
անօրենսության հետևանքով
մարդը բաժանվեց Աստծուց և
զրկվեց այդ վեհ
արտոնությունից: Սակայն
փրկության ծրագրի միջոցով
ճանապարհ բացվեց, որով
երկրի բնակիչները կարող էին
վերականգնել կապը երկնքի
հետ: Աստված հաղորդակցվում
էր մարդկանց հետ իր Յոգով, և
աստվածային լույսը տրվում էր
աշխարհին Նրա ընտրյալ

ծառաների հայտնությունների
միջոցով: «Սուրբ Հոգուց
շարժված՝ խո-սեցին Աստծո
մարդիկ» (Բ Պետրոս 1.21):

Մարդկության պատմության
առաջին 2500 տարիների
ընթացքում գրավոր
հայտնություն գոյություն
չունեի: Նրանք, ովքեր
սովորում էին Աստուծուց,
մյուսներին հաղորդում էին
իրենց գիտությունը, որը
սերնդեսերունդ փոխանցվում
էր հորից որդուն: Աստծո խոսքը
սկզբում գրի առնվեց Մովսեսի
օրերում, և հետո ներշնչված

հայտնությունները
մարմնավորվեցին ներշնչյալ
գրքում: Այս գործընթացը
շարունակվեց տասնվեց երկար
դարեր՝ սկսած Մովսեսից՝
արարչագործության և օրենքի
պատմիչից, մինչև
Յովհաննեսը՝ ավետարանի
ամենավսեմ
ճշմարտությունների հեղինակը:

Աստվածաշունչը Աստծուն է
համարում իր հեղինակը, բայց
այն գրվել է մարդկային
ձեռքով, և նրա գրքերի ոճերի
զանազանությունը
ներկայացնում է նրա տարբեր

գրողների բնութագրերը:
Չայտնված ճշմարտություններն
«աստվածաշունչ են» (Բ
Տիմոթեոս 3.16), սակայն
արտահայտված են մարդկային
բառերով: Անսահման Աստված
Իր Սուրբ Չոգով լուսավորել է
Իր ծառաների միտքն ու
սրտերը: Նա տվել է երազներ ու
տեսիլքներ, խորհրդանիշներ ու
պատկերներ, իսկ նրանք, ում
այս կերպ բացահայտվել է
ճշմարտությունը, արդեն իրենք
են միտքը մարմնավորել
մարդկային լեզվով:

Տասը պատվիրանները
հռչակվել են անձամբ Աստծո
կողմից և գրվել Նրա իսկ
ձեռքով: Դա Աստծո, [6] ոչ թե
մարդու ստեղծագործությունն
է: Իսկ Աստվածաշունչը՝
մարդկային լեզվով
արտահայտված իր
աստվածատուր
ճշմարտություններով, իրենից
ներկայացնում է
աստվա-ծայինի և մարդկայինի
միություն: Այդպիսի միություն
կար նաև Քրիստոսի բնության
մեջ, ով Աստծո Որդի էր և
մարդու Որդի: Այսպիսով,
ինչպես Քրիստոսի, այնպես էլ

Աստվածաշնչի վերաբերյալ
ճիշտ է այն, որ «Բանը մարմին
եղավ և բնակվեց մեր մեջ»
(Յովհաննես 1.14):

Աստվածաշնչի գրքերը, որոնք
գրվել են տարբեր դարերում
այնպիսի մարդկանց կողմից,
ովքեր մեծապես տարբերվել են
միմյանցից իրենց դիրքով,
զբաղմունքով, մտավոր և
հոգևոր շնորհներով, հույժ
տարբեր են իրարից ինչպես
ոճով, այնպես էլ լուսաբանվող
թեմաներով: Նրա
հեղինակներն արտահայտման
տարբեր ձևեր են օգտագործում.

հաճախ մինևուշյն
ճշմարտությունը մեկն ավելի
ցայտուն է ներկայացնում, քան
մյուսը: Քանի որ գրողներն այս
կամ այն նյութը ներկայացնում
են տարբեր տեսանկյուններից,
մակերեսային, անուշադիր կամ
նախապաշարված ընթերցողը
կարող է անհամաձայնություն
և հակասություն տեսնել
այն-տեղ, ուր խոհուն,
բարեպաշտ ու խորաթափանց
ուսումնասիրողին
բացահայտվում է նրա հիմքում
ընկած լիակատար
ներդաշնակությունը:

Քանի որ ճշմարտության մասին
գրել են տարբեր անհատներ,
այն ներկայացված է իր ողջ
բազմազանությամբ:
Չեղինակներից մեկի վրա ավելի
մեծ տպավորություն է թողել
հարցի մի կողմը. նա իր
ուշադրու-թյունը սևեռում է այն
հանգամանքների վրա, որոնք
ներդաշնակ են իր
փորձառությանը կամ
ընկալման և գնահատման
ունակությանը: Մյուսին
գրավում է հարցի մի այլ կողմը,
և այսպես յուրաքանչյուրը,
գտնվելով Սուրբ Չոգու
ներգործության տակ, խոսում է

այն մասին, ինչը ամենից ուժեղ
է տպավորվել իր մտքում.
Ճշմարտությունն իր տարբեր
կողմերով արտահայտված
յուրաքանչյուրի մեջ՝
կատարելապես ներդաշնակ և
ամբողջական, և կարող է
բավարարել մարդկանց
կարիքները բոլոր
պարագաներում և
փորձառություններում:

Աստված բարեհաճեց իր
ճշմարտությունն աշխարհին
հաղորդել մարդկանց միջոցով,
և հենց ինքն էլ իր Սուրբ Հոգով
պատրաստեց նրանց՝ օժտելով

այդ գործը կատարելու
ունակութեամբ: Նա
ղեկավարում էր նրանց միտքը,
իսկ նրանք իրենք էին ընտրում,
թե ինչ խոսեն և ինչ գրեն: Թեև
գանձը վստահվեց հողեղեն
անոթներին, այդուհանդերձ,
այն երկնքից է: Վկայութունը
[7] տրված է մարդկային լեզվի
անկատար
արտահայտություններով,
բայց, այնուամենայնիվ, դա
Աստծո վկայութունն է, և
Աստծո հնազանդ,
հավատացյալ զավակը
նրանում տեսնում է
աստվածային զորության

փառքը՝ շնորհով և
ճշմարտությամբ լի:

Իր խոսքում Աստված
մարդկանց փրկության համար
անհրաժեշտ գիտելիքներ է
տվել: Սուրբ Դիրքը պետք է
ընդունվի որպես Նրա կամքի
հեղինակավոր, անսխալական
հայտնություն: Այն
բնավորության չափանիշ է, և
Նրանով պետք է ստուգվի
ցանկացած ուսմունք և
փորձառություն: «Ամեն գիրք
աստվածաշունչ են և օգտակար
վարդապետ- տության և
հանդիմանության, ուղղելու և

արդարութեան խրատելու
համար, որպեսզի Աստծո
մարդը կատարյալ լինի՝ ամեն
բարի գործերի համար
պատրաստված» (Բ Տիմոթեոս
3.16,17):

Բայց այն փաստը, որ Աստված
Իր կամքը մարդկանց հայտնել
է Իր խոսքի միջոցով, չի
վերացրել Սուրբ Հոգու
մշտական ներկայութեան և
առաջնորդութեան
անհրաժեշտութիւնը:
Հակառակը, Փրկիչը
խոստացավ ուղարկել Հոգին,
որպեսզի այն բացահայտի

խոսքը Նրա ծառաներին և
պարզաբանի Նրա
ուսմունքները: Եվ քանի որ
Աստվածաշունչը գրվել է
Աստծո Յոգու ներշնչմամբ,
անհնար է, որ Յոգու ուսուցումը
հակասի գրված խոսքին:

Յոգին չի տրվել և երբեք չի
կարող շնորհվել
Աստվածաշնչին փոխարինելու
համար, քանի որ Սուրբ Գիրքը
պարզորոշ ասում է, որ Աստծո
խոսքն է այն չափանիշը, որով
պետք է ստուգվի ցանկացած
ուսմունք և փորձառուլթյուն:
Յովհաննես առաքյալն ասում է.

«Ամեն հոգու մի՛ հավատացեք,
այլ փորձեցե՛ք հոգիները, թե
արդյոք Աստուծոց են, որովհետև
շատ սուտ մարգարեներ են
դուրս եկել աշխարհ» (Ա
Յով-հաննես 4.1): Եվ Եսայիան
Էլ պատվիրում է. «Օրենքին և
վկայությանը դիմեցեք, եթե
Նրանք չխոսեն այս խոսքերի
համեմատ, Նրանք արշալույս
չունեն» (Եսայիա 8.20):

Սուրբ Յոզու աշխատանքին մեծ
Նախատինք են բերում Նրանց
մոլորությունները, ուլքեր,
կարծելով, թե լուսավորված են
Նրանով, հայտարարում են, որ

այլևս կարիք չունեն
ղեկավարվելու Աստծո խոսքով:
Նրանք տպավորությունների
ազդեցության տակ են, որոնք
հոգում հնչող Աստծո ձայն են
համարում: Բայց նրանց իշխող
հոգին Աստծո Յոզին չէ:
Աստվածաշնչի անտեսումը[8] և
տպավորություններին հետևելը
միայն խառնաշփոթության,
մոլորության և կործանման
կհասցնեն: Դա նպաստում է
միայն սատանայի ծրագրերին:
Քանի որ Սուրբ Յոզու
ծառայությունը կենսական
կարևորություն ունի Քրիստոսի
եկեղեցու համար, սատանան

փորձում է ծայրահեղականների
և մոլեռանդների միջոցով
Նախատինք բերել Յոզու
աշխատանքի վրա և ստիպել
Աստծո ժողովրդին մերժելու
գորութեան այս աղբյուրը, որ
Տերն Ինքն է տվել:

Աստծո խոսքին ներդաշնակ՝
Նրա Յոզին պետք է շարունակի
Իր գործը ավետարանի
տարածման ողջ
ժամանակաշրջանի
ընթացքում: Այն դարերի
ընթացքում, երբ գրվում էին
Յին և Նոր Կտակարանների
գրքերը, Սուրբ Յոզին այն

հայտնություններից զատ,
որոնք պետք է Սուրբ Կանոնը
կազմեին, չի դադարել
լուսավորել առանձին
անհատների միտքը: Յենց
Աստվածաշունչն էլ վկայում է
այն մասին, թե ինչպես են
մարդիկ Սուրբ Յոգու միջոցով
Նախագուշացում,
հանդիմանություն, խորհուրդ և
խրատ ստացել այն հարցերի
վերաբերյալ, որոնք որևէ
առնչություն չեն ունեցել Սուրբ
Գիրքը գրելու հետ:
Յիշատակվում են տարբեր
դարաշրջանների մարգարեներ,
ուն խոսքերը չեն

արձանագրվել: Այսպիսով՝
Աստվածաշնչի կանոնը
կազմվելուց հետո էլ Սուրբ
Յոզիմն դեռ շարունակում է
լուսավորել, զգուշացնել և
մխիթարել Աստծո
զավակներին:

Յիսուսն իր աշակերտներին
խոստացել էր. «Մխիթարիչը՝
Սուրբ Յոզիմ, որ Յայրը
կուղարկի իմ անունով, նա
ամեն բան կսովորեցնի ձեզ և
կհիշեցնի ձեզ ամեն ինչ, որ ձեզ
ասացի»: «Երբ նա՝
ճշմարտության Յոզիմ կգա, նա
կառաջնորդի ձեզ ամեն

ճշմարտության մեջ... և գաղութաները կպատմի ձեզ»
(Յովհաննես 14.26, 16.13):
Աստվածաշունչը պարզորոշ
սովորեցնում է, որ այս
խոստումները չեն
սահմանափակվում
առաքյալների ժամանակով, այլ
վերաբերում են բոլոր դարերի
Քրիստոսի եկեղեցուն: Փրկիչն
իր հետևորդներին
հավաստիացնում է. «Ահա ես
ձեզ հետ եմ ամեն օր՝ մինչև
աշխարհի վերջը» (Մատթեոս
28.20): Եվ Պո— դուք
հայտարարում է, որ Յոզու
պարզաներն ու դրսևորումները

շնորհվել են եկեղեցուն
«սուրբերի կատարելության
համար, պաշտոնի գործի
համար, Քրիստոսի մարմնի
շինության համար, մինչև որ
ամենքս հասնենք հավատի և
Աստծո [9] Որդու ճանաչման
միությանը, Է կատարյալ մարդ
լինենք Քրիստոսի կատարյալ
հասակի չափով» (Եփեսացիս
4.12,13):

Եփեսոսի հավատացյալների
համար առաքյալն աղոթում էր,
«որ մեր Տեր Հիսուս Քրիստոսի
Աստվածը՝ փառքի Հայրը, ձեզ
տա իմաստության և

հայտնության Յոգին՝ իր
գիտությունով, որ ձեր սրտերի
աչքերը լուսավորվելով՝
գիտենաք, թե ինչ է նրա
կոչումի հույսը, և... ինչ է նրա
զորության գերազանց
մեծությունը մեզանում, որ
հավատացինք» (Եփեսացիս
1.17-19): Մարդկային միտքը
լուսավորող և Աստծո սուրբ
խոսքի խորությունները
բացահայտող Յոգու
ծառայությունն էր այն
օրհնությունը, որ Պողոսը
խնդրում էր Եփեսոսի եկեղեցու
համար:

Պենտեկոստեի օրը, Սուրբ Հոգու
հրաշք դրսևորումից հետո,
Պետրոսը հորդորեց ժողովրդին
ապաշխարել և մկրտվել
Քրիստոսի անունով մեղքերի
թողության համար՝ ասելով.
«Եվ Սուրբ Հոգու պարգևը
կընդունեք, որովհետև ձեզ և ձեր
որդկանց համար է այս
խոստումը, և այն ամեն
հեռավորների համար, որոնց
մեր Տեր Աստվածը կկանչի»
(Գործք 2.38, 39):

Անմիջականորեն Աստծո մեծ
օրվա իրադարձությունների
հետ կապված՝ Տերը Հովել

մարգարեի միջոցով Իր Յոգու
հատուկ դրսևորում է
խոստացել (Յովել 2.28): Այս
մարգարեությունը մասամբ
կատարվեց Պենտեկոստի օրը՝
Սուրբ Յոգու հեղումով, սակայն
վերջնականապես
կիրականանա ավետարանի
եզրափակիչ գործին ուղեկցող
աստվածային շնորհի
դրսևորման ժամանակ:

Բարու և չարի միջև մղվող մեծ
պայքարի լարվածությունն
աճելու է ընդհուպ մինչև
ժամանակների վերջը: Բոլոր
դարերում սատանան

կատաղորեն պայքարել է
Քրիստոսի եկեղեցու դեմ,
սակայն Աստված իր ժողովրդին
պարգևել է իր շնորհն ու Յոզիան,
որպեսզի գորացնի նրան՝
դիմակայելու չարագործի
իշխանությանը: Երբ Քրիստոսի
առաքյալները պետք է նրա
ավետարանը տարածեին
աշխարհում և գրի առնեին այն
գալիք բոլոր սերունդների
համար, նրանք օժտվեցին
Սուրբ Յոզու հատուկ
լուսավորությամբ: Բայց երբ
[10] եկեղեցին մոտենա իր
վերջնական ազատագրմանը,
սատանան գործելու է ավելի

մեծ ուժով: Նա վայր է իջնում
«մեծ բարկությամբ՝
գիտենալով, որ քիչ ժամանակ
ունի» (Յայտնություն 12.12):
Նա գործելու է «ամեն
գործությունով, սուտ նշաններով
և հրաշքներով» (Բ
Թեսաղոնիկեցիս 2.9): Այն
հանճարեղ էակը, ով մի
ժամանակ ամենաբարձրն է
եղել Աստծո հրեշտակների մեջ,
վեց հազար տարի շարունակ իր
ողջ եռանդն ուղղել է
խաբեության ու կործանման
գործին: Եվ դարավոր պայքարի
ընթացքում ձեռք բերված
սատանայական ողջ

իմաստությունն ու
նենգությունը և բորբոքված ողջ
դաժանությունը վերջին
ճակատամարտում ուղղվելու
են Աստծո ժողովրդի դեմ: Այդ
վտանգավոր ժամանակներում
Քրիստոսի հետևորդները պետք
է նախազգուշացնեն աշխարհը
Տիրոջ երկրորդ գալստյան
մասին, և ժողովուրդը պիտի
պատրաստվի՝ Նրա գալստյան
պահին կանգնելու Նրա առջև
«անբիժ և անարատ» (Բ
Պետրոս 3.14): Աստվածային
շնորհի և զորության հատուկ
պարգևը այդ ժամանակ
պակաս անհրաժեշտ չի լինելու

Եկեղեցու համար, քան
առաքյալների օրերում էր:

Բարու և չարի միջև մղվող
երկարատև պայքարի
մանրամասնու-թյունները
Սուրբ Հոգու միջոցով
բացահայտվել են այս էջերի
հեղինակին: Ժամանակ առ
ժամանակ ինձ թույլ է տրվել
տեսնել, թե տարբեր դարերում
ինչպիսի ընթացք է ստանում
հակամարտությունը
Քրիստոսի՝ կյանքի իշխանի,
մեր փրկության Աղբյուրի, և
սատանայի՝ չարի իշխանի,
մեղքի հեղինակի ու Աստծո

սուրբ օրենքի առաջին
խախտողի միջև: Քրիստոսի
հանդեպ սատանայի
թշնամությունը մշտապես
բորբոքվել է Նրա հետևորդների
դեմ: Աստծո օրենքի
սկզբունքների հանդեպ նույն
ատելությունը, խաբեության
այն նույն
քաղաքականությունը, որով նա
կեղծիքը ներկայացրել է որպես
ճշմարտություն, Աստծո օրենքը
փոխարինել մարդային
օրենքներով և մարդկանց դրդել
երկրպագելու արարածին՝
Արարչի փոխարեն, նկատելի է
անցյալի ողջ պատմության

ընթացքում: Բոլոր դարերում
սատանան համառորեն ձգտել է
սխալ ներկայացնել Աստծո
բնավորությունը, մարդկանց
մոտ կեղծ պատկերացում
ստեղծել Արարչի մասին և,
այդպիսով, Նրա հանդեպ վախ
և ատելություն ներշնչել՝ սիրո
փոխարեն: Նա ամեն կերպ
փորձել է վերացնել
աստվածային օրենքը,
մարդկանց ազատել դրա
պահանջներից: Նա միշտ
անզուսպ կատաղությանմբ
հալածել է Նրանց, ովքեր
համարձակվել են դիմակայել
իր խաբեությունը, և դա կարելի

Է նկատել [11] նահապետների,
մարգարեների, առաքյալների,
նահատակների և
բարենորոգիչների կյանքում:

Վերջին մեծ պայքարում
սատանան վարելու է նույն
քաղաքականությունը,
դրսևորելու է նույն ոգին և
հետապնդելու է նույն
նպատակը, ինչ և նախորդ
բոլոր դարերում: Ինչ որ եղել է,
նորից կրկնվելու է, միայն այն
տարբերությամբ, որ գալիք
պայքարն աչքի է ընկնելու
այնպիսի ահավոր
սաստկությամբ, որպիսին

աշխարհը դեռ չի տեսել:
Սատանայի խաբեություններն
ավելի նենգավոր են լինելու,
նրա հարձակումները՝ առավել
վճռական: Եթե հնարավոր
լիներ, նա կմոլորեցներ
նույնիսկ ընտրյալներին
(Մարկոս 13.22):

Երբ Աստծո Յոզիւն ինձ
բացահայտեց Իր խոսքի մեծ
ճշմարտությունները, ինչպես
նաև անցյալի և ապագայի
տեսարանները, ինձ պատվեր
տրվեց այդ ամենը փոխանցել
ուրիշներին, այսինքն՝ գրի
առնել անցյալ դարերի

պայքարի պատմութիւնը և
այնպէս ներկայացնել այն, որ
լույս սփռվի ապագայի
վերահաս պայքարի վրա: Այս
նպատակն իրականացնելու
համար եկեղեցու,
պատմութեան
իրադարձութիւնները ես
այնպէս եմ ընտրել և
դասավորել, որպէսզի
բացահայտվեն այն մեծ քննող
ճշմարտութիւնները, որոնք
տարբեր դարերում տրվել են
աշխարհին,
ճշմարտութիւններ, որոնք
բորբոքել են սատանայի
զայրույթն ու աշխարհասեր

Եկեղեցու ատելութունը, և
որոնք պաշտպանվել են նրանց
վկայությամբ, ովքեր «չսիրեցին
իրենց անձը մինչ մահ»:

Այս գրվածքներում մենք կարող
ենք տեսնել մեզ սպասվող
պայքարի նախապատկերը:
Ընկալելով դրանք Ասածո
խոսքի լույսի ներքո և Սուրբ
Չոգու լուսավորությամբ՝ մենք
կհասկանանք չարագործի
հնարքներն ու այն վտանգները,
որոնցից պետք է խուսափեն
բոլորը, ովքեր կամենում են
«անարատ» լինել Տիրոջ առջև
Նրա զալստյան օրը:

Սեժ իրադարձությունները,
որոնցով աչքի է ընկել
բարեփոխումների զարգացումն
անցյալ դարերում, բոլորին
հայտնի և բողոքական աշխար-
հի կողմից ընդունված
պատմական անվիճելի
փաստեր են: Դրանք ևս ձգտել
եմ հնարավորինս համառոտ
նկարագրել՝ չշեղվելով գրքի
բուն նպատակից, և խտացրել
եմ դրանք այնպես, որ [12] ճիշտ
ընկալվի դրանց իրական
նշանակությունը: Որոշ
դեպքերում, երբ պատմաբանն
այնպես է ներկայացրել

իրադարձությունները, որ
կարելի է ընդհանուր
պատկերացում կազմել նյութի
մասին, կամ հասկանալի
կերպով ամփոփել է
մանրամասները, ես
անմիջապես մեջբերել եմ նրա
խոսքերը: Որոշ դեպքերում էլ
ադբյուրը նշված չէ, քանի որ
մեջբերումները տրված չեն
հեղինակավոր պատմաբանին
վկայակոչելու նպատակով, այլ
որով-հետև նրա խոսքերը
համոզիչ կերպով
պարզաբանում են
ներկայացվող խնդրի
եությունը:

Այս գրքի նպատակը ոչ այնքան
նոր ճշմարտություններ
ներկայաց-նելն է անցյալ
պայքարի վերաբերյալ, որքան
այն փաստերի և սկզբունք-ների
բացահայտումը, որոնք
վերաբերում են գալիք
իրադարձություն-ներին:
Մինևույն ժամանակ, երբ
անցյալի դեպքերը դիտում ենք
որպես լույսի և խավարի միջև
ընթացող պայքարի մի մաս,
դրանք նոր իմաստ են ձեռք
բերում մեզ համար, և դրանց
միջոցով լույս է սփռվում
ապագայի վրա՝ լուսավորելով

Նրանց ուղին, ուլքեր, անցյալ
դարերի բարենորոգիչ-ների
նման, կանչվելու են, նույնիսկ
իրենց երկրային ողջ
ուկենցվածքը կորցնելու գնով,
վկայելու «Աստծո խոսքը և
Ջիսուկա Բրիստոսի
վկայու-թյունը»:

Բացահայտել ճշմարտության և
մոլորության միջև մղվող
պայքարը, սատանայի
նենգավոր գործունեությունն ու
նրան հաջողությամբ
դիմակայելու միջոցները,
ներկայացնել չարի մեծ խնդրի
գոհացուցիչ լուծումը՝ այնպիսի

լույսի ներքո պատկերելով
մեղքի ծագումն ու դրա
վերջնական ոչնչացումը, որ
լիովին բացահայտվի Աստծո
արդարադատությունն ու
գթասրտությունն իր բոլոր
արարածների հանդեպ, և,
վերջապես, ներկայացնել Նրա
օրենքի սրբությունն ու
անփոփոխելիությունը. սա է
այս գրքի նպատակը: Իմ
անկեղծ աղոթքն է, որ այն օգնի
մարդկանց՝ ազատվելու
խավարի իշխանությունից և
«մասնակից լինելու սուրբերի
վիճակին՝ լույսի մեջ»՝ ի փառս

Նրա, ով սիրեց մեզ և հանուն
մեզ տվեց իր կյանքը:

Է. Գ. ՌԻԱՅԹ

ԳԼՈՒԽ 1—ԵՐՈՒՄԱՂԵՄԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

«Եթե դո՛ւ ել իմանայիր՝ գոնե
այս օրվա օրը քո
խաղաղության մասին, բայց
հիմա ծածկվեց քո աչքերից:
Որովհետև օրեր կգան քեզ վրա,
և քո թշնամիները չորս կողմովդ
պատնեշ կպատեն ու
կպաշարեն քեզ, և ամեն կողմից
քեզ կնեղացնեն և
հիմնահատակ կանեն քեզ և քո
որդիքն ել քո միջում, և չեն
թողնի քո մեջ քարը քարի վրա,
քանի որ չճանաչեցիր քեզ

այցելելու ժամանակը» (Ղուկաս 19.42-44):

Ձիթենյաց լեռան գագաթից
Յիսուսը նայում էր
Երուսաղեմին: Յիս-նալի և
խաղաղ տեսարան էր բացված
Նրա առջև: Չատկի ժամանակն
էր, և բոլոր երկրներից Յակոբի
որդիները հավաքվել էին՝
նշելու ազգային մեծ տոներ:
Պարտեզների, խաղողի
այգիների և ուխտավորների
վրաններով պատված կանաչ
սարալանջերի միջև վեր էին
խոյանում Իսրայելի
մայրաքաղաքի սանդղածն

բլուրները, հոյակերտ
ապարանքներն ու վիթխարի
պատերը: Թվում էր՝ Սիոնի
աղջիկը հպարտորեն ասում է.
«Նստած եմ որպես թագուհի, և
սուգ չեմ տեսնի»: Նա նույնքան
գեղեցիկ էր, նույնքան
զմայլված իրենույ՛ ու վստահ, որ
վայելում է երկնքի
բարեհաճությունը, որքան այն
ժամանակ, երբ դարեր առաջ
աշուղ-արքան երգում էր.
«Գեղեցիկ բարձրություն, [18]
բոլոր երկրի ուրախությունն է
Սիոն սարը... մեծ Թագավորի
քաղաքը» (Սաղմոս 48.2): Պարզ
երևում էին տաճարի

վեհասքանչ կառույցները: Մայր
մտնող արևի շողերը
լուսավորում էին նրա
ձյունաճերմակ մարմարյա
պատերը և անդրադառնում
ոսկեփայլ դարպասից ու
աշտարակից: Դա
«գեղեցկության
կատարելություն» էր, հրեա
ազգի պարծանքը: Իսրայելի ո՞ր
զավակը կարող էր դիտել այդ
տեսարանն՝ առանց
ուրախության և հիացմունքի
զգացումի: Բայց Յիսուսին
բոլորովին այլ մտքեր էին
հոլզում: «Երբ մոտեցավ,
տեսնելով քաղաքը՝ լաց եղավ

Նրա վրա» (Ղուկաս 19.41):
Հաղթական մուտքի հետ
կապված համընդհանուր
ցնծության ժամանակ, երբ
արմավենու ճյուղեր էին
ծածանվում, երբ ցնծագին
օվսաննաներն արձագանքում
էին սարերում, և հազարավոր
ձայներ Նրան թագավոր էին
հռչակում, աշխարհի Փրկիչը
համակված էր հանկարծահաս
և խորհրդավոր վշտով: Աստծո
Որդին՝ Իսրայելի Խոստացյալը,
ում գորությունը հաղթել էր
մահը և գերեզմանից դուրս
կանչել նրա գերյալներին,
արտասվում էր ոչ թե

սովորական վշտից, այլ
վերահաս ծանր ու անտանելի
հոգեվարքից:

Իր համար չէ, որ Նա
արտասվում էր, թեև լավ
գիտեր, թե իրեն ինչ էր
սպասվում: Նրա առջև
Գեթսեմանն էր՝ իր մոտավորապես
հոգեվարքի վայրը: Երևում էր
Նան Ոչխարաց դուռը, որով
դարեր շարունակ անց էին
կացնում զոհաբերվող
կենդանիներին, որով ինքն էլ
պիտի անցներ «ինչպես մի
ոչխար, որ մորթվելու է
տարվում» (Եսայիա 53.7):

ՅԵՌՈՒ ԶԵՐ ՆԱՆ ԳՈՂԳՈԹԱՆ՝
ԽԱՃԵԼՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ: ՔՐԻՍՏՈՍԸ
ՉՈՒՄՎ ԱԿԻՄԻ ՔԱՅԼԱՐ ՄԻ
ՃԱՆԱԿԱՐԻՈՎ, ՈՐԸ ՍՈՍԿԱԼԻ
ԽԱՎԱՐՈՎ ԷՐ ԱԿԱՏՎԵԼՈՒ, ԵՐՔ
ՆԱ ԻՐԵՆ ՄԵՂՔԻ ՉՈՒ ԴԱՐՃՆԵՐ:
ՍԱԿԱՅՆ ԱՅՍ ԱՄԵՆԸ ԶԷ, ՈՐ
ՎՉՏԱԳՆՈՒՄ ԷՐ ՆՐԱՆ
ԳՆԾՈՒԹՅԱՆ ԱՅՌ ԱԿԱԽԻՆ: ԻՐ
ԳԵՐՄԱՐՈՒԿԱՅԻՆ ՏԱՌԱԿԱՆՔԻ
ԿԱՆԽԱԳԳԱԳՈՒՄԸ ԶԷ, ՈՐ
ԽՈՉՎԵՑՆՈՒՄ ԷՐ ՆՐԱ ԱՆԵՍԱՍԵՐ
ՈԳԻՆ: ՆԱ ՈՂՔՈՒՄ ԷՐ
ԵՐՈՒՍԱՊԵՄԻ ԽԱԳԱՐԱՎՈՐ
ԴԱՏԱԿԱՐՄՈՒՄԸ ԲՆԱԿԻՃՆԵՐԻ,
ՆՐԱՆԳ ԿՈՒՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՆ-ՉԵՂՋ

սրտի համար, ում եկել էր
օրհնելու և փրկելու:

Յիսուսի աչքերի առջևով
անցավ ընտրյալ ժողովրդի
հանդեպ Աստծո
բարեհաճության և մշտարթուն
հոգատարության ավելի քան
հազար տարվա
պատմությունը: Ահա Մորիա
լեռը, ուր զոհասեղանին դրվեց
խոստումի որդին՝ հնազանդ
զոհը՝ Աստծո Որդու
զոհաբերության խորհրդանիշը:
Այստեղ հաստատվեց
օրհնության ուխտը՝ մեսիական
փառավոր խոստումը՝ տրված

բոլոր հավատացյալների հորը
(Ծննդոց 22.9, 16-18): Այստեղ
Ոռնայի կալատեղից երկինք
բարձրացող ողջակեզի բոցը
կասեցրեց [19] կործանիչ
հրեշտակի սուրը (Ա
Մնացորդաց 21). հանցավոր
մարդկության համար Փրկչի
զոհաբերության ու
միջնորդության ինչպիսի՞
դիպուկ նախապատկեր:
Աստված երկրում ամենից
առավել պատվել էր
Երուսաղեմը: «Տերը Սիոնն
ընտրեց, հավանեց նրան՝ իրեն
բնակարան շինելու համար»
(Սաղմոս 132.13): Այստեղ

դարեր շարունակ սուրբ
մարգարեները
Նախագգուշացման
պատգամներ էին հռչակում:
Քահանաները խնկարկուժյուն
էին անում, և խնկի ամպը
երկրպագողների աղոթքների
հետ բարձրանում էր առ
Աստված: Այստեղ օրեցօր
թափվում էր մորթված դառների
արյունը՝ մատնացույց անելով
Աստծո Գառանը: Այստեղ
փառքի ամպի մեջ եիովան
ողորմության աթոռի կամ
քավության վրա հայտնում էր
իր ներկայությունը: Այստեղ էր
դրվել երկիրն ու երկինքը

միացնող խորհրդավոր
աստիճանի հիմքը (Ճննդոց
28.12, Յովհաննես 1.51),
աստիճան, որով իջնում և
բարձրա- նում են Աստծո
հրեշտակները, և որն աշխարհի
համար ճանապարհ բացեց
դեպի ամենասուրբ տեղը: Եթե
Իսրայելը որպես ազգ
հավատարիմ մնար Երկնքին,
Երուսաղեմը հավիտյան կմնար
որպես Աստծո ընտրյալ քաղաք
(Երեմիա 17.21-25): Բայց այդ
արտոնյալ ժողովրդի
պատմությունը նահանջի ու
խռովության
արձանագրություն էր: Նրանք

մերժեցին Երկնքի շնորհը,
չարաչափեցին ստացած
արտոնություններն ու
անտեսեցին իրենց
հնարավորությունները:

Թեև իսրայելցիներն
«անարգում էին Աստծո
պատգամավորներին,
արհամարհում էին նրա
խոսքերը և ծաղրում նրա
մարգարեներին» (Բ
Մնացորդաց 36.16), Աստված
առաջվա պես հայտնվում էր
նրանց որպես «Եհովա՝
Աստված ողորմած և գթած,
երկայնամիտ և առատ

ողորմությամբ ու
ճշմարտությամբ» (Ելից 34.6):
Չնայած համառ մերժումներին՝
Նա իր ողորմությամբ դեռ
շարունակում էր դիմել նրանց:
Ավելի մեծ սիրով, քան հոր
գորովագութ սերն է իր որդու
հանդեպ, Աստված «իր
պատգամավորների միջոցով
առավոտյան կանուխ
ուղարկում էր նրանց իր
պատգամները, որովհետև
խնայում էր իր ժողովրդին ու իր
բնակարանը» (Բ Մնացորդաց
36.15): Երբ հորդորները,
աղերսներն ու
հանդիմանությունները

արդյունք չտվեցին, Նա
ուղարկեց Նրանց երկնքի
լավագույն ընծան, ավելին՝ այդ
մեկ Պարզևի մեջ Նա շնորհեց
ողջ երկինքը:

Անգեղջ քաղաքը իրեն
դարձնելու համար ուղարկվեց
Ինքը՝ Աստծո Որդին: Քրիստոսն
էր, որ փոխադրեց Իսրայելը
Եգիպտոսից՝ որպես մի բարի
որթ (Սաղմոս 80.8): Նրա ձեռքը
Նրանց [20] առջևից քշեց
հեթանոսներին: Նա տնկեց
Նրան «մի պարարտ
լեռնաձայրին», խնամքով
ցանկապատեց և ուղարկեց իր

ծառաներին, որ մշակեն այն:
«Էլ ի՞նչ կար անելու իմ այգուն,
որ ես չեմ արել»,—
բացականչում է Նա (Եսայիա
5.1-4): Թեև իր ակնկալած
խաղողի փոխարեն այն ազոխ
բերեց, այդուհանդերձ,
չկորցնելով պտուղ ստանալու
հույսը, Քրիստոսն անձամբ
այցելեց իր այգին, որպեսզի
հնարավոր ամեն բան աներ
այն կործանումից փրկելու
համար: Նա վարեց իր
որթատունկի շուրջը, էտեց ու
խնամեց այն: Նա աննկուն էր
իր ջանքերում՝ փրկելու իր իսկ
տնկած որթատունկը:

Երեք տարի շարունակ լույսի և
փառքի Տերը շրջում էր Իր
ժողովրդի մեջ: «Շրջեց՝ բարիք
անելով և սատանայից բոլոր
բռնվածներին բժշկելով»,
բուժելով սրտով
կոտրվածներին, գերիներին
ազատություն քարոզելով,
կույրերին՝ տեսողություն,
կաղերին քայլացնելով, խուլերի
լսողությունը վերականգնելով,
բորոտներին սրբելով,
մեռյալներին հարություն
տալով և աղքատներին
քարոզելով ավետարանը
(Գործք 10.38, Ղուկաս 4.18.

Մատթեոս 11.5):

Չասարակության բոլոր
խավերին էր ուղղված Նրա
գթառատ կոչը. «Եկեք ինձ մոտ,
բոլոր հոգնածներ և
բեռնավորվածներ, և ես
հանգիստ կտամ ձեզ»

(Մատթեոս 11.28):

Թեպետև բարության դիմաց
Նրան չարությամբ էին
հատուցում, իսկ սիրուն
պատասխանում էին
ատելությամբ (Սաղմոս 109.5),
Նա համառորեն շարունակում
էր իր գթասրտության
առաքելությունը: Նրա շնորհը

փնտրողները երբեք չէին
մերժվում: Նա՝ անտուն
թափառականը, ում ամենօրյա
բաժինն անարգանք ու
չքավորութուն էր, ապրում էր,
որպեսզի հոգար մարդկանց
կարիքները, փարատեր վշտերն
ու աղերսեր նրանց՝ ընդունելու
կյանքի պարգևը: Ողորմության
ալիքները, որ բախվելով
համառ սրտերին՝ հետ էին
մղվում, կրկին նրանց էին
վերադառնում կարեկից ու
անպատմելի սիրո ավելի զորեղ
հորձանքով: Բայց Իսրայելը
երես թեքեց իր լավագույն
Ընկերոջից և միակ

Օգնականից: Նրա սիրո
աղերսներն արհամարհվեցին,
խորհուրդները մերժվեցին,
Նախազգուշացումները ծաղրի
արժանացան:

Հուլյսի ու Ներման ժամանակն
արագորեն անցնում էր: Աստծո
երկար զսպված բարկության
բաժակը գրեթե լցվել էր:
Ուրացության ու
ապստամբության երկարատև
դարերի ընթացքում
կուտակված սև ու աղետաբեր
ամպերը պատրաստ էին
ճայթելու հանցավոր ժողովրդի
գլխին:[21] Իսկ Նա՝ միակը, ով

Կարող էր փրկել Նրանց
վերահաս կործանումից,
արհամարիվել, անարգվել ու
մերժվել էր և շուտով պիտի
խաչվեր: Քրիստոսի
խաչելութունը վերջ էր դնելու
Աստծո սիրելի և օրհնյալ ազգը
լինելու՝ Իսրայելի
արտոնությանը: Մեկ հոգու
կորուստն անգամ մեծ
դժբախտություն է. հոգու գինն
անսահմանորեն գերակշռում է
աշխարհի բոլոր
հարստություններն ու գանձերը:
Բայց երբ Քրիստոսը Նայեց
Երուսաղեմին, Նրա հայացքի
առջև պատկերվեց ողջ

քաղաքի, ամբողջ ազգի
կործանումը, այն քաղաքի և
ազգի, որ մի ժամանակ Աստծո
ընտրյալն էին՝ Նրա հատուկ
գանձը:

Մարգարեները ողբացել են
Իսրայելի նահանջն ու այն
սուսկալի ավերածությունները,
որոնցով պատժվել են նրանց
մեղքերը: Երեմիան ասում էր.
«Երանի թե գլուխս ջուր լիներ և
աչքերս՝ արտասուքի աղբյուր,
ես լաց կլինեի ցերեկ և գիշեր իմ
ժողովրդի աղջկա
սպանվածների վրա»,
«որովհետև Տիրոջ հոտը գերի

առնվեց» (Երեմիա 9.1, 13.17):
Որքա՞ն ավելի խորն էր,
ուրեմն, Նրա վիշտը, ում
մարգարեական հայացքը
Ներառում էր ոչ թե տարիներ,
այլ դարեր: Նա տեսավ, թե
ինչպես է կործանիչ հրեշտակն
իր սուրը բարձրացնում այն
քաղաքի վրա, որն այդքան
երկար ժամանակ եղել էր
Եհովայի բնակավայրը:
Ձիթենյաց լեռան գագաթից՝
հենց այն տեղից, որը
հետագայում նվաճվեց Տիտոսի
և Նրա բանակի կողմից,
Հիսուսը հովտի վրայով նայեց
սրբազան Դավիթներին ու

սյունազարդ սրահներին և
արտասովոր աչքերով տեսավ
սոսկալի ապագան՝
օտարերկրյա զորքերով
շրջապատված պարիսպները և
այդ պաշարման բոլոր
զարհուրելի հետևանքները: Նա
լսեց վրա հասնող զորքերի
ռազմաքայլի դոփյուները, լսեց
պաշարված քաղաքում հաց
աղերսող մայրերի ու
երեխաների ողբը: Քաղաքի
սուրբ և գեղեցիկ տաճարը, նրա
պալատներն ու աշտարակները
Նա տեսավ կրակի բոցերի մեջ՝
վերածված ավերակների
կուլյտի:

Թափանցելով գալիք դարերի
խորքը՝ Նա տեսավ ուխտի
ժողովրդին՝ ցրված ամբողջ
երկրով մեկ, ինչպես
«Նավաբեկորներ՝ ամառի
ափին»: Այս մասնակի պատժի
մեջ, որ պատրաստ էր
թափվելու Նրա զավակների
վրա, Նա տեսավ ընդամենը
առաջին ումպը ցասման այն
բաժակից, որը Նրանք մինչև
վերջ պիտի խմեին վերջնական
դատաստանի օրը:
Աստվածային գուլթ ու
կարոտագին սեր կային Նրա
այս ողբայի խոսքերում.

«Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ,
մարգարէներին կոտորող և քեզ
մոտ ուղարկվածներին
քարկոծող, քանի՛ անգամ
կամեցա[22] քո զավակներին
ժողովել, ինչպես հավն է
ժողովում իր ձագերին թւերի
տակ, և դուք չկամեցաք»
(Մատթեոս 23.37): Օ՛, եթե
միայն դու, բոլորից ավելի
արտոնյալ ազգ, ճանաչեիր քո
այցելութեան ժամանակը և այն,
թե ինչն է նպաստում քո
խաղաղութեանը: Ես
կանգնեցրի
արդարադատութեան
հրեշտակին, կանչեցի քեզ

ապաշխարութեան, բայց՝
իզուր: Դու մերժեցիր ու
արհամարհեցիր ոչ միայն
ծառաներին,
պատգամավորներին ու
մարգարեներին, այլև Իսրայելի
Սուրբին՝ քո Փրկչին: Բո
կործանման մեջ միմիայն ինքդ
ես մեղավոր: «Դաք չեք
կամենում դեպի ինձ գալ,
որպեսզի կյանք ունենաք»
(Մատթեոս 23.37, Հովհաննես
5.40):

Քրիստոսը Երուսաղեմի մեջ
տեսավ անհավատության ու
ըմբոստության մեջ

Կարծրացած աշխարհի
խորհրդանիշը, աշխարհ, որն
արագորեն իր վրա էր
հրավիրում Աստծո պատժիչ
դատաստանները: Անկյալ ցեղի
թշվառությունը, որ ճնշում էր
Նրա հոգին, Նրա շուրթերից
պոկեց այդ ծայրաստիճան
դառն աղաղակը: Մարդկային
դժբախտության, արցունքների
և արյան վրա Նա տեսավ մեղքի
դրոշմը: Նրա սիրտն
անսահման կարեկցանքով էր
լցված երկրի վշտահարների ու
տառապյալների հանդեպ, Նա
տենչում էր օգնել բոլորին:
Բայց նույնիսկ Նրա ձեռքը չէր

Կարող հետ մղել մարդկային
տառապանքի հոսքը, քանզի
քչերն էին դիմելու օգնության
միակ Աղբյուրին: Հանուն
Նրանց փրկության՝ Նա
պատրաստ էր զոհաբերեք իր
հոգին, սակայն քչերն էին
գալու Նրա մոտ, որպեսզի
կյանք ունենան:

Երկնքի Վեհափառությունն
արցունքների մե՛ջ: Անսահման
Աստճո Որդին՝ խռովված հոգով,
տվայտանքների մե՛ջ: Այս
տեսարանը ցնցեց ողջ երկինքը:
Այն մեզ ցույց է տալիս մեղքի
ծայրահեղ հանցավորությունը

և այն, թե ինչ դժվարին խնդիր
է, նույնիսկ Անսահման
Չորութեան համար, մեղավորին
փրկելը Աստծո օրենքի
ոտնահարման հետևանքներից:
Նայելով ապագայի խորքը՝
վերջին սերնդին, Յիսուսը
տեսավ աշխարհին՝ ընկղմված
նույն մոլորութեան մեջ, ինչը
Երուսաղեմի կործանման
պատճառը դարձավ: Յրեաների
ամենամեծ մեղքը Քրիստոսին
մերժելն էր, իսկ
քրիստոնեական աշխարհի
մեծագույն մեղքը Աստծո
օրենքի՝ երկնքում ու երկրում
Նրա կառավարման հիմքի

մերժումն է: Եհովայի
պատվիրաններն
արհամարհելու են՝ համարելով
անվավեր: Երկրորդ մահվան
դատապարտված միլիոնավոր
մեղքի գերիներ՝ սատանայի
ծառաները, [23] հրաժարվելու
են ճշմարտության խոսքերը
լսել իրենց «այցելության» օրը:
Սարսափելի կոկոսյո՛ւն:
Խորհրդավոր կախարդա՛նք:

Չատկից երկու օր առաջ, երբ
Քրիստոսը, իրեա
առաջնորդների
կեղծավորությունը
հանդիմանելուց հետո, վերջին

անգամ հեռացավ տաճարից,
դարձյալ իր աշակերտների հետ
գնաց Ձիթենյաց սարը և նրանց
հետ նստեց քաղաքին նայող
կանաչապատ լանջին: Մեկ
անգամ ևս Նա նայեց քաղաքի
պարիսպներին,
աշտարակներին ու
պալատներին: Մեկ անգամ էլ
Նա տեսավ տաճարն՝ իր
շլացուցիչ շքեղությամբ, որ
գոհարազարդ թագի պես
պսակում էր սրբազան սարը:

Հազար տարի առաջ
սաղմոսերգուն գովերգել էր
Աստծո բարեհաճությունն

Իսրայելի հանդեպ, երբ Նա այդ տաճարն իր բնակա-վայրն էր դարձրել: «Սաղեմի մեջ է նրա խորանը, և նրա բնակարանը՝ Սիոնի մեջ»: Տերը «Յուդայի ցեղն ընտրեց, Սիոնի սարը, որը սիրեց: Եվ իր սրբարանը շինեց, ինչպես բարձր պալատներ» (Սաղմոս 76.2, 78.68, 69): Առաջին տաճարը կառուցվել էր Իսրայելի պատմության ամենաբարգավաճ ժամանակաշրջանում: Դավիթ թագավորն այդ նպատակով գանձերի ահռելի պաշար էր կուտակել և աստվածային ներշնչմամբ պատրաստել դրա

կառուցման նախագծերը (Ա
Մնացորդաց 28.12,19), իսկ
աշխատանքը ավարտեց
Սողոմոնը՝ Իսրայելի
միապետներից
ամենախմաստունը: Այս
տաճարն ամենավեհասքանչ
կառույցներից մեկն էր, որ
երբևէ տեսել էր աշխարհը:
Սակայն, Տերն Անգե մարգարտի
միջոցով երկրորդ տաճարի
մասին ասել էր. «Այս վերջին
տան փառքը մեծ պիտի լինի
առաջինից»: «Ես կշարժեմ
բոլոր ազգերը, և կգա բոլոր
ազգերի ցանկալիքը, և կլցնեմ

այս տունը փառքով, ասում է
Չորաց Տերը» (Անգե 2.9,7):

Այն բանից հետո, երբ
Նաբուգոդոնոսորն ավերեց
տաճարը, այն նորից
վերականգնվեց Քրիստոսի
ծննդից մոտ հինգ հարյուր
տարի առաջ մի ժողովրդի
կողմից, որը երկարատև
գերությունից հետո
վերադարձել էր իր ամայացած
ու գրեթե անբնակ երկիրը:
Նրանց մեջ կային տաբեց
մարդիկ, ովքեր տեսել էին
Սողոմոնի տաճարի փառքը, և
հիմա, երբ դրվում էր նոր

շինութեան հիմքը, նրանք լաց
էին լինում: Նրանք ցավում էին,
որ նախկինի համեմատ՝ այն
շատ անշուք է լինելու: Նրանց
հուզող զգացումները հստակ
կերպով պատկերված են
մարգարեի խոսքերում. «Ո՞վ
է[24] ձեզանից մնացել, որ
տեսել է այս տունն իր առաջի
փառավորութեամբ: Եվ դուք
ինչպիսի՞ն էք տեսնում նրան
հիմա. չէ՞ որ նրա
համեմատութեամբ սա ոչնչի
պես է ձեր աչքերի առաջ»
(Անգե 2.3, Եզրաս 3.12): Այդ
Ժամանակ խոստում տրվեց, որ

այս վերջին տան փառքը
գերազանցելու է նախկինին:

Բայց երկրորդ տաճարն իր
վեհությամբ ո՛չ հավասար էր
առաջինին, ո՛չ էլ սրբվեց
Աստծո ներկայութեան այն
տեսանելի նշաններով, որոնք
եղել էին առաջին տաճարում:
Նրա նվիրաբերումը չուղեկցվեց
գերբնական զորութեան
դրսևորումով: Փառքի ամպը
չլցրեց նորաշեն սրբարանը:
Երկնքից կրակ չիջավ՝
սպառելու նրա զոհասեղանին
դրված զոհը: Շեկինասն՝ Աստծո
փառքի ամպը, այլևս չէր

հանգչում քերովբեների միջև՝
Սուրբ Սրբոցում, այնտեղ
չկային ո՛չ տապանակը, ո՛չ
քավությունը կամ ողորմության
աթոռը, ո՛չ էլ վկայության
տախտակները: Երկնքից ձայն
չհնչեց՝ ի պատասխան
Եհովայի կամքը հարցնող
քահանայի խոսքերի:

Դարեր շարունակ հրեաներն
իզուր ջանում էին ապացուցել,
որ Անգե մարգարեի միջոցով
արված Աստծո խոստումը
կատարվել է: Բայց
հպարտությունն ու
անհավատությունը կուրացրել

Էին նրանց միտքը, և նրանք
չհասկացան մարգարեական
խոսքերի ճշմարիտ
նշանակությունը: Երկրորդ
տաճարը փառավորվեց ոչ թե
Եհովայի փառքի ամպով, այլ
Նրա կենդանի ներկայությամբ,
ուն մեջ բնակվում է
Աստվածության ողջ լիությունը
մարմնապես: Աստված Ինքն էր,
որ հայտնվեց մարմնում:
«Բոլոր ազգերի Ցանկալիքն»
իրոք եկել էր Իր տաճարը, երբ
Նազովրեցի Այրը սովորեցնում
և բժշկում էր նրա սրբազան
Դավիթներում: Միմիայն
Քրիստոսի ներկայությամբ էր,

որ երկրորդ տաճարն իր
փառքով գերազանցեց
առաջինը: Բայց Իսրայելը
մերժեց երկնքի առաջարկած
Պարզևը: Խոնարհ Ուսուցչի
հետ, ով այդ օրը դուրս եկավ
ոսկե դարպասներից, տաճարից
ընդմիջտ հեռացավ նաև
փառքը: Փրկչի խոսքերն արդեն
կատարվել էին. «Ահա ձեր
տունն ավեր-ված կթողնվի ձեզ»
(Սատթեոս 23.38):

Աշակերտները երկյուղով ու
զարմանքով լցվեցին՝ լսելով
տաճարի ավերման մասին
Քրիստոսի մարգարեությունը, և

կամեցան ավելի պարզ
հասկանալ Նրա խոսքերի
իմաստը: Ավելի քան քառասուն
տարի հարստություն, ջանք ու
ճարտարապետական
հմտություն չէր խնայվել
տաճարն ավելի շքեղ դարձնելու
համար: Յերովդես[25] Մեծը
դրա համար շռայլալ էր
հռոմեական
հարստություններն ու
հրեական գանձերը, և նույնիսկ
աշխարհակալ կայսրն էր
հարստացրել այն իր
ընծաներով: Այդ նպատակով
գրեթե առասպելական չափերի
սպիտակ մարմարի գանգվածեղ

հիմնաքարեր էին բերվել
Յոնմից, որոնք դրա շինության
մասն էին կազմում, և հենց
դրանց վրա աշակերտները
հրավիրեցին իրենց Ուսուցչի
ուշադրությունն՝ ասելով.

«Վարդապետ, տես ինչպիսի՞
քարեր և ինչպիսի՞ շինվածքներ
են» (Մարկոս 13.1):

Այս խոսքերին Յիսուսը
հանդիսավոր և ապշեցուցիչ
պատասխան տվեց. «Ճշմարիտ
եմ ասում ձեզ, այդտեղ քարը
քարի վրա չի թողնվի, որ
չքանդվի» (Մատթեոս 24.2):

Աշակերտները Երուսաղեմի
կործանման հետ կապեցին
Երկրային փառքով Քրիստոսի
գալստյան
իրադարձությունները՝
կարծելով, թե Նա կնվաճի
համաշխարհային կայսրության
գահը, կպատժի անզեղ
հրեաներին և ազգի վրայից
կթոթափի հռոմեական լուծը:
Տերը նրանց նախապես
հայտնել էր, որ պիտի գա
Երկրորդ անգամ: Դրա համար
էլ, լսելով Երուսաղեմին
սպասվող դատաստանների
մասին, նրանց մտքերն
ուղղվեցին այդ գալստյան վրա:

Ու երբ Փրկչի շուրջն էին
հավաքվել Ձիթենյաց սարի
վրա, նրանք հարցրին. «Ասիր
մեզ, այդ և՛րբ կլինի, և ի՞նչ
կլինի քո գալստյան և
աշխարհիս վերջի նշանը»
(Մատթեոս 24.3):

Ապագան գթասրտորեն
ծածկվեց աշակերտներից: Եթե
նրանք այդ պահին լիովին
ըմբռնեին երկու զարհուրելի
իրադարձությունները՝ Փրկչի
տառապանքներն ու մահը և
իրենց քաղաքի ու տաճարի
ավերումը, ապա սարսափահար
կլինեին: Բրիստոսն ընդհանուր

գծերով նկարագրեց այն
կարևոր իրադարձությունները,
որ տեղի էին ունենալու
աշխարհի վախճանից առաջ:
Նրա խոսքերն այդ ժամանակ
ըստ ամենայնի չընկալվեցին:
Դրանց իմաստն
աստիճանաբար
բացահայտվելու էր Նրա
ժողովրդին, երբ զգային այդ
խրատների կարիքը: Քրիստոսի
մարգարեությունը երկակի
իմաստ ուներ, մի կողմից այն
կանխագուշակում էր
Երուսաղեմի կործանումը, մյուս
կողմից խորհրդանշում էր

վերջին մեծ օրվա
սարսափները:

Հիսուսն աշակերտներին
հայտնեց այն
դատաստանները, որոնք
շուտով թափվելու էին
ուխտադրուժ Իսրայելի վրա, և
հատկապես այն պատժիչ
հատուցումը, որ վրա էր
հասնելու նրանց՝ Մեսիային
մերժելու և խաչելու
պատճառով: Այդ անառարկելի
նշանները նախորդելու էին
սոսկալի վախճանին:
Չարիուրելի ժամը[26] վրա էր
հասնելու արագ ու

անսպասելիորեն: Եվ Փրկիչը
Նախագգուշացրեց Իր
հետևորդներին. «Արդ՝ երբ որ
տեսնեք ավերածի
պղծությունը, ասված Դանիել
մարգարտի միջոցով, կանգնած
սրբության տեղում,
կարդացողը թող մտածի: Այն
ժամանակ նրանք, որ
Հրեաստանում են՝ թող
փախչեն սարերը» (Մատթեոս
24.15,16, Ղուկաս 21.20, 21):
Երբ Հռոմի կռապաշտական
դրոշները բարձրացվեին սուրբ
հողի վրա, որը տարածվում էր
քաղաքի պարիսպներից մի
քանի հարյուր մետր հեռու,

Քրիստոսի հետևորդները պետք
է փախչելով փրկվելին: Յենց որ
երևար նախազգուշացնող
նշանը, փախչողները չպետք է
հապաղելին: Ինչպես ողջ
Յրեաստանում, այնպես էլ
Երուսաղեմում անմիջապես
պիտի հնազանդվելին
փախուստի ազդանշանին:
Տանիքի վրա գտնվողը չպետք է
տունն իջներ անգամ իր
ամենաթանկ գանձը փրկելու
համար: Դաշտում կամ խաղողի
այգում աշխատողները չպետք
է ժամանակ կորցնելին՝
վերցնելու իրենց
վերնազգեստը, որ ցերեկվա

շոգին աշխատելիս հանել էին:
Նրանք ոչ մի պահ չպիտի
հապաղեն, որպեսզի բոլորի
հետ միասին չկորչեն:

Չերովդեսի իշխանության օրոք
Երուսաղեմը հռչակված էր իր
գեղեցկությամբ, և
աշտարակների, պարիսպների
ու ամրոցների շնորհիվ, որ
ավելի էին ամրացրել քաղաքի
դիրքը, այն կարծես անառիկ էր
դարձել: Եթե որևէ մեկն այդ
ժամանակ հրապարակավ
ազդարարեր քաղաքի
կործանումը, նրան, ինչպես
Նոյին՝ իր օրերում, ցնորված

Խուճապարար կհամարեին:
Բայց Քրիստոսն ասաց.
«Երկինքն ու երկիրը կանցնեն,
բայց իմ խոսքերը չեն անցնի»
(Մատթեոս 24.35): Իր մեղքերի
պատճառով Երուսաղեմը
դատապարտվել էր
կործանման, և նրա
բնակիչների համառ
անհավատությունը
վերջնականապես վճռեց
քաղաքի ճակատագիրը:

Միքիա մարգարեի միջոցով
Տերն ասել էր. «Լսեցեք այս, ով
Չակոբի տան գլխավորներ և
Իսրայելի տան իշխաններ,

իրավունքից զզվողներ, որ
ամեն ուղիղ բանը ծռում եք՝
Սիոնը արյունահեղությամբ
շինելով և Երուսաղեմն՝
անիրավությամբ: Նրա
գլխավորները կաշառքով են
դա-տում, նրա քահանաները
վարձով են սովորեցնում, նրա
մարգարեները վաղով են
մարգարեանում և Տիրոջ վրա
են կռնում՝ ասելով. Չէ՞ որ Տերը
մեր մեջ է, մեզ վրա չարիք չի
գա» (Միքիա 3.9-11): [27]

Այս խոսքերը ճշտորեն
նկարագրում են Երուսաղեմի
ապականված ու ինքնարդար

բնակիչներին: Կարծելով, թե
խստորեն պահում են Աստծո
օրենքի պատվիրանները,
Նրանք մինևուլյն ժամանակ
ոտնահարում էին դրա բոլոր
սկզբունքները: Նրանք ատում
էին Քրիստոսին, որովհետև
Նրա մաքրությունն ու
սրբությունը բացահայտում էին
իրենց անօրենությունը, և
իրենց բաժին ընկած բոլոր
դժբախտությունների մեջ, որ
իրենց իսկ մեղքերի հետևանքն
էին, նրանք մեղադրում էին
Նրան: Թեև գիտեին, որ
Քրիստոսն անմեղ էր, նրանք
հայտարարեցին, թե Նրա մահն

անհրաժեշտ է ազգի
անվտանգության համար: «Եթե
Նրան այսպես թողնենք,—
ասացին հրեա
առաջնորդները,— բոլորը
կհավատան Նրան, և
հռոմեացիք կգան, վեր կառնեն
մեր երկիրն էլ, ազգն էլ»
(Յովհաննես 11.48): Եթե
Քրիստոսը զոհաբերվի, ազգը
Նորից կդառնա զորեղ ու
միաբան: Այսպես էին Նրանք
կարծում՝ համաձայնելով իրենց
քահանայապետի այն
որոշմանը, որ ավելի լավ է մեկ
մարդ մեռնի, քան ողջ ազգը
կործանվի:

Այսպես էին հրեա
առաջնորդները շինել «Սիոնն՝
արյունահեղու-թյամբ, և
երուսաղեմն՝ անհրավու-թյամբ»
(Միքիա 3.10): Ու թեև
սպանեցին իրենց Փրկչին,
քանի որ Նա հանդիմանում էր
իրենց մեղքերը, նրանք էլի
համոզված էին իրենց
արդարության մեջ ու
շարունակում էին իրենց Աստծո
ընտրյալ ժողովուրդը համարել՝
կարծելով, թե Տերն իրենց
կփրկի թշնամիներից: «Դրա
համար,— շարունակում է
մարգարեն,— Սիոնը ձեր

պատճառով պիտի իբրև
ագարակ հերկվի, և
Երուսաղեմն ավերակների
դեզեր դառնա, իսկ տաճարի
սարը՝ անտառի
բարձրավանդակներ» (Միքիա
3.12):

Մոտ քառասուն տարի այն
բանից հետո, երբ Քրիստոսն
անձամբ ազդարարեց
Երուսաղեմի կործանումը, Տերը
դեռ հետաձգում էր իր
դատաստանները քաղաքի և
ազգի վրա: Սրտառուչ էր
Աստծո երկայ-նամտությունն
իր ավետարանը մերժողների և

Իր Որդուն սպանողների
նկատմամբ: Անպտուղ թզենու
առակը ներկայացնում է Աստծո
վերաբերմունքը հրեա ազգի
հանդեպ: Առակում
կարգադրվեց՝ «Կտրիր դրան,
ինչո՞ւ դա երկիրն էլ խափանի»
(Ղուկաս 13.7), բայց
աստվածային ողորմությունը
դեռ որոշ ժամանակ էլ խնայեց
նրան: Դեռ կային շատ
հրեաներ, ովքեր անձանոթ էին
Քրիստոսի բնավորությանն ու
ծառայությանը: Երեխաները
նույնպես տակավին չէին
ունեցել այն
հնարավորությունները և [28]

չէին ընդունել այն լույսը, որ
իրենց ծնողներն արհամարհել
էին: Աստված կամենում էր, որ
առաքյալների և մյուս
աշակերտների քարոզչության
միջոցով լույսը շողար նրանց
վրա: Նրանց պիտի թույլ տրվեր
տեսնելու, որ ոչ միայն
Քրիստոսի ծնունդն ու կյանքը,
այլ նաև Նրա մահն ու
հարությունը մարգարեության
իրակա-նացում էին:
Երեխաները մեղավոր չէին
իրենց ծնողների մեղքերի
համար, բայց երբ, իրենց
ծնողներին տրված ամբողջ
լույսն ունենալով, մերժեցին

իրենց իսկ շնորհված լրացուցիչ
լույսը, նրանք մասնակից
դարձան իրենց ծնողների
մեղքերին և լցրին իրենց
անօրենության չափը:

Աստծո երկայնամտությունը
երուսաղեմի հանդեպ միայն
ավելի խստացրեց իրեաներին
իրենց համառ անզեղչության
մեջ: Յիսուսի աշակերտների
հանդեպ իրենց ատելությանմբ
ու դաժանությանմբ նրանք
մերժեցին ողորմության վերջին
առաջարկը: Եվ Աստված գրկեց
նրանց իր պաշտպանությունից,
դադարեց զսպել սատանային

ու Նրա հրեշ-տակներին, և
ազգը թողնվեց իր ընտրած
առաջնորդի իշխանության
տակ: Նրա զավակներն
արհամարհեցին Քրիստոսի
շնորհը, որը կօգներ Նրանց՝
ճնշելու իրենց չար մղումները, և
հիմա դրանք հաղթեցին Նրանց:
Սատանան մարդու հոգում
բորբոքում էր ամենադաժան ու
ամենաստոր կրքերը: Չրկված
դատողությունից՝ մարդիկ
գտնվում էին զգացմունքների
ու կույր ցասման կառավարման
տակ: Իրենց դաժանությամբ
Նրանք նմանվել էին
սատանային: Ընտանիքում և

հասարակության մեջ, ինչպես
ամենաբարձր, այնպես էլ
ամենացածր խավերում,
իշխում էին կասկածը,
նախանձն ու ատելությունը, և
տեղի էին ունենում վեճեր,
կռիվներ, ապստամբություններ
ու սպանություններ: Ոչ մի տեղ
ապահովություն չկար:
Ընկերներն ու ազգականները
մատնում էին միմյանց:
Ծնողները սպանում էին իրենց
զավակներին, զավակները՝
ծնողներին: Ժողովրդի
ղեկավարները կորցրել էին
ինքնակառավարումը: Անզուսպ
կրքերը նրանց դարձրել էին

բռնակալներ: Յրեաները կեղծ
վկայութիւնն էին ընդունել
Աստծո անմեղ Որդուն
դատապարտելու համար, և
հիմա կեղծ մեղադրանքները
հարցականի տակ էին դրել
իրենց իսկ կյանքը: Իրենց
գործերով նրանք, ըստ էութեան,
ասում էին. «Վերցրեք մեր
առաջից Իսրայելի Սուրբին»
(Եսայիա 30.11): Այժմ նրանց
ցանկութիւնը բավարարված
էր: Աստծո երկյուղն այլևս չէր
անհանգստացնում նրանց: [29]
Ազգի գլուխ կանգնեց
սատանան՝ իր ձեռքն առնելով

Թե՛ քաղաքացիական, թե՛
կրոնական իշխանությունը:

Ընդդիմադիր խմբավորումների
առաջնորդները ժամանակ առ
ժամանակ միավորվում էին
իրենց թշվառ զոհերին
թալանելու և տանջելու համար,
իսկ հետո նորից հարձակվում
էին միմյանց վրա՝ անողորմ
կոտորածներ անելով: Տաճարի
սրբությունն անգամ անկարող
էր սանձել նրանց զարհուրելի
վայրագությունը:
Երկրպագողներին սպանում
էին զոհասեղանի առաջ, և
սրբարանը պղծվում էր

սպանվածների դիակներով: Եվ
չնայած դրան՝ այս դժոխային
գործողությունների
սադրիչները կույր ու հայիոյիչ
ամբարտավանությունամբ
հրապարակավ հայտարարում
էին, թե Երուսաղեմը չի
կործանվի, քանի որ այն Աստծո
քաղաքն է: Իրենց
իշխանությունն ավելի
ամրացնելու նպատակով
նրանք կաշառում էին կեղծ
մարգարեների՝ հռչակելու,
նույնիսկ այն ժամանակ, երբ
հռոմեացիները պաշարել էին
տաճարը, որ Աստված
ազատելու է իր ժողովրդին:

Շատերը մինչև վերջին պահը
հավատում էին, թե Բարձրյալը
միջամտելու է՝ ջախջախելու
իրենց թշնամիներին: Բայց
հարայելն արհամարհել էր
աստվածային
պաշտպանությունը, և հիմա
մնացել էր անպաշտպան:
Դժբա՛խտ երուսաղեմ՝
ծվատված ներքին
պառակտություններով.
զավակների սպանված՝ մեկը
մյուսի ձեռքով, ներկում են
փողոցների արյունով, երբ
օտարերկրյա բանակներն
ավերում են ամրոցների և
կոտորում զինվորների:

Երուսաղեմի կործանման
վերաբերյալ Քրիստոսի բոլոր
կանխաստումները տառացիորեն
կատարվեցին: Հրեաներն
անձամբ տեսան, թե որքան
ստույգ էին Նրա
նախագգուշական խոսքերը.
«Ինչ չափով որ չափում եք,
նրանով էլ կչափվի ձեզ»
(Մատթեոս 7.2):

Նշաններ ու հրաշքներ
երևացին՝ կանխագգուշակելով
աղետներ ու պատուհասներ:
Կեսգիշերին տաճարի և
գոհասեղանի վերևում

գեր-բնական լույս ցլաց:
Արևամուտին ամպերի վրա
պատերազմի պատ-րաստվող
զինվորներ ու կառքեր էին
երևացել: Սրբարանում
գիշերային ծառայութուն
իրականացնող քահանաները
սարսափահար էին եղել
խորհրդավոր ձայներից:
Երկիրը ցնցվում էր, և
բազմաթիվ ձայներ աղաղակում
էին. «Եկեք հեռանանք
այստեղից»: Արևելյան մեծ
դարպասը՝ այնքան ծանր, որ
քսան հոգի հազիվ էին
կարողանում բացել, և որը
փակված էր կարծր քարե

պատի մեջ խորը
մտնող[30]վիթխարի երկաթյա
ձողերով, կեսգիշերին բացվեց
անտեսանելի միջամտությամբ
(Միլման, Հրեաների
պատմությունը, Ա. 13):

Յոթ տարի շարունակ
երուսաղեմի փողոցներով մի
մարդ էր շրջում՝ ազդարարելով
աղետների մասին, որոնք
թափվելու էին քաղաքի վրա:
Օր ու գիշեր նա վայրի ողբերգ
էր երգում. «Ձայն արևելքից,
ձայն արևմուտքից, ձայն չորս
քամիներից, ձայն ընդդեմ
երուսաղեմի ու տաճարի, ձայն

ընդդեմ հարսի ու փեսայի, ձայն
ընդդեմ ողջ ժողովրդի» (Նույն
տեղում) : Այս տարօրինակ
էակին բանտարկեցին ու
մտրակեցին, բայց Նրա
շուրթերից բողոքի ոչ մի խոսք
չպոկվեց: Վիրավորանքին ու
անարգանքին նա միայն
պատասխանում էր. «Վա՛յ,
վա՛յ երուսաղեմին, վա՛յ, վա՛յ
Նրա բնակիչներին»: Նրա
նախազգուշացման ճիշդ չլռեց,
մինչև նա չսպանվեց իր իսկ
կանխասած պաշարման
ժամանակ:

Երուսաղեմի կործանման
ժամանակ ոչ մի քրիստոնյա
չմեռավ: Քրիստոսն իր
հետևորդներին
նախազգուշացրել էր, և բոլորը,
ովքեր հավատացել էին Նրա
խոսքերին, մշտաբար լսելով
էին խոստացված նշանին: «Երբ
որ կտեսնեք Երուսաղեմը
գործերով շրջապատված,—
ասել էր Հիսուսը,— իմացեք, որ
Նրա ավերումը մոտ է: Այն
ժամանակ նրանք, որ
Հրեաստանում են, թող սարերը
փախչեն, և նրանք, որ Նրա
միջում են, թող հեռանան»
(Ղուկաս 21.20, 21): Ցեստիոսի

գլխավորութեամբ քաղաքը
շրջապատելուց հետո
հռոմեացիներն
անսպասելիորեն դադարեցրին
պաշարումը, երբ ամեն ինչ
բարենպաստ էր թվում
անհապաղ գրոհի համար:
Պաշարվածները, հույս
չունենալով հաջողութեամբ
դիմադրել, պատրաստ էին
հանձնվելու, երբ հռոմեացի
զորավարն, առանց որևէ
ակնհայտ պատճառի, ետ քաշեց
իր զորքերը: Աստճո ողորմած
Նախախնամութիւնն էր
իրադարձութիւնները
դեկավարում հոգուտ իր

Ժողովրդի: Խոստացված նշանը
տրվեց սպասման մեջ գտնվող
քրիստոնյաներին, և հիմա
բոլորին, ովքեր կկամենային,
հնարավորություն շնորհվեց
հետևել Փրկչի

Նախազգուշացմանը: Դեպքերն
այնպիսի ընթացք ստացան, որ
ո՛չ հրեաները, ո՛չ էլ
հռոմեացիները չխոչընդոտեցին
քրիստոնյաների փախուստին:
Ցեստիոնսի հետ քաշվելուց
հետո հրեաները, դուրս գալով
Երուսաղեմից, սկսեցին
հետապնդել նրա հեռացող
զորքին, և մինչ երկու կողմերն
էլ խիստ զբաղված էին,

քրիստոս-նյաներին
հնարավորութիւն ընձեռվեց
լքելու քաղաքը: Այդ ժամանակ
երկիրը նաև [31] մաքրվել էր
թշնամիներից, ովքեր կարող
էին խանգարել նրանց:
Պաշարման ժամանակ
հրեաները հավաքվել էին
Երուսաղեմում՝ նշելու
Տաղավարահարաց տոնը, և
այդպես երկրի բոլոր
քրիստոնյաները անարգել
կարող էին փախչել: Նրանք
անհապաղ փախան մի
անվտանգ տեղ՝ Պելլա քաղաքը
Պերեայի երկրում՝ Հորդանանից
այն կողմ:

Ցեստիոսի բանակը
հետապնդող հրեական ուժերը
թիկունքից այնպիսի կատաղի
հարձակում գործեցին, որ
թվաց, թե հիմնովին
ջախջախելու են այն:
Յոմեացիներին մեծ
դժվարությամբ հաջողվեց
Նահանջել: Յրեաները, գրեթե
առանց էական կորուստների,
հարուստ ավարով
հաղթականորեն վերադարձան
Երուսաղեմ: Այդ թվացյալ
հաջողությունը, սակայն,
Նրանց միայն չարիք բերեց: Դա
Նրանց մեջ ամրապնդեց

հռոմեացիների հանդեպ համառ
դիմադրութեան ոգին, ինչը
շուտով աննկարագրելի աղետ
բերեց դատապարտված
քաղաքի վրա:

Սոսկալի էին պատուհասները,
որ բաժին ընկան Երուսաղեմին,
երբ Տիտոսը վերսկսեց
պաշարումը: Քաղաքը
շրջապատվեց Չատկի օրերին,
երբ միլիոնավոր հրեաներ էին
հավաքվել այնտեղ: Մթերքի
պաշարները, որ խնամքով
պահպանվելու դեպքում մի
քանի տարի կբավարարեին
բնակիչներին, ոչնչացվել էին

հակամարտող
խմբավորումների նախանձի ու
վրիժառույթյան պատճառով, և
հիմա նրանք ճաշակում էին
սովահարության ողջ
զարհուրանքը: Մի կապիճ
ցորենը վաճառվում էր մեկ
տաղանդով: Սովն այնքան
տանջալից էր, որ մարդիկ
կրճոտում էին իրենց կաշվե
գոտիները, կոշիկներն ու
վահանների պատյանները:
Բազմաթիվ մարդիկ գիշերը
ծածուկ դուրս էին գալիս
քաղաքից՝ վայրի բույսեր
հավաքելու, թեև շատերը
բռնվել ու գազանաբար

սպանվել էին, իսկ նրանցից,
ովքեր ապահով վերադառնում
էին, հաճախ խլում էին այն
ամենն, ինչ նրանք հավաքել
էին՝ վտանգելով իրենց կյանքը:
Իշ-խանավորներն
ամենաանմարդկային
տանջանքների էին ենթարկում
սովահար ժողովրդին՝ նրանցից
կորզելու վերջին խղճուկ
պաշարները, որ կարող էին
թաքցրած լինել: Այս
դաժանությունները հաճախ
անում էին նրանք, ովքեր լավ
սնվում էին, բայց ուզում էին
պարզապես ապագայի համար
պաշար կուտակել: [32]

Չազարավորները մեռնում էին
սովից ու ժանտախտից:
Բնական կապվածություններն,
ասես, վերացել էին:
Ամուսինները կողոպտում էին
իրենց կանանց, կանայք՝
ամուսիններին: Չավակներն
ուտելիքը թռցնում էին իրենց
տարեց ծնողների բերանից:
Մարգարեի այս հարցը՝ «Մի՞թե
կինը կմոռանա իր կաթնակեր
մանուկին», պատասխան
ստացավ դատապարտված
քաղաքում. «Ողորմած կանանց
ձեռքերը եփեցին իրենց
զավակներին, նրանց համար

կերակուր եղան իմ ժողովրդի
աղջկա բեկման ժամանակ»
(Եսայիա 49.15, Ողբ 4.10):
Իրականացավ նաև տասնչորս
դար առաջ տրված
մարգարեական
նախագգուշացումը. «Քո միջի
քնքուշ և փափուկ կինը, որ իր
փափկություննից և
քնքշություննից ոտքը գետնի
վրա դնելու սովոր չէր, ծուռ
աչքով պիտի նայի իր ծոցի
մարդին, իր տղային, իր
աղջկան... որովհետև
պաշարման ժամանակ, երբ
թշնամիներդ քո դռներում քեզ
նեղը գցեն, ամեն բանի

պակասութեան համար
ծածկաբար պիտի ուտի նրանց»
(Երկրորդ Օրինաց 28.56, 57):

Յոմեացի առաջնորդները
փորձում էին ահաբեկել
հրեաներին և, այդպիսով,
ստիպել նրանց հանձնվել:
Բռնվելու պահին
դիմադրութուն ցույց տվող
բանտարկյալներին մտրակում
էին, տանջում և ապա խաչում
քաղաքի պարսպի առջև: Ամեն
օր այսպես հարյուրավոր
մարդիկ էին սպանվում: Այդ
հրեշավոր գործը շարունակվեց
այնքան ժամանակ, մինչև որ

Յովսափաթի հովիտն ու
Գողգոթան այնպես ծածկվեցին
հազարավոր խաչերով, որ
գրեթե անհնար էր նրանց միջով
անցնել: Ահա այսպես
իրականացավ այն սուկալի
նզովքը, որ հնչեց Պիղատոսի
դատական աթոռի առջև, «Նրա
արյունը մեզ և մեր որդիների
վրա» (Մատթեոս 27.25):

Տիտոսը պատրաստ էր վերջ
դնել այդ զարհուրելի սպանդին
և փրկել Երուսաղեմը հիմնովին
ավերվելուց: Նա սուկումով
լցվեց՝ տեսնելով հովիտներում
դիակների կույտերը: Ձիթենյաց

լեռան գագաթից հափշտակված
Նայելով վեհաշուք տաճարին՝
Նա հրաման արձակեց, որ Նրա
քարերից ոչ մեկին չդիպչեն:
Մինչ կփորձեր գրավել այս
ամրոցը՝ [33] Նա հրեա
առաջնորդներին անկեղծորեն
կոչ արեց՝ չստիպել իրեն սուրբ
վայրը պղծել արյունով: Եթե
Նրանք դուրս գան և կռվեն
ցանկացած այլ վայրում, ապա
ոչ մի հռոմեացի չի խախտի
տաճարի սրբութունը:
Չովսեփոսն ինքը Նրանց դիմեց
ամենապերճախոս կոչով՝
աղերսելով, որ հանձնվեն և
փրկվեն իրենց կյանքը, իրենց

քաղաքն ու երկրպագութեան
տեղը: Սակայն, ի պատասխան,
դառն անեծքներ հնչեցին:
Նետեր թռան վերջին միջնորդի
վրա, ով կանգնած աղաչում էր
Նրանց: Հրեաները մերժել էին
Աստծո Որդու աղերսները, և
այժմ հորդորներն ու
աղաչանքներն ավելի վճռական
դարձրին Նրանց՝ դիմադրելու
մինչև վերջ: Ապարդյուն էին
տաճարը փրկելու Տիտոսի
ջանքերը: Մեկը՝ ավելի մեծ,
քան Նա էր, հայտարարել էր, որ
այնտեղ քարը քարի վրա չի
մնալու:

Չրեա առաջնորդների կույր
համառությունն ու պաշարված
քա-դաքում տեղի ունեցող
զազրելի ոճիրները
հռոմեացիների սարսափն ու
վրդովմունքը առաջացրին.
Տիտոսն, ի վերջո, որոշեց
գրոհով վերցնել տաճարը և,
հնարավորության դեպքում,
փրկել այն կործանումից: Բայց
նրա հրահանգներն
անտեսվեցին: Երբ նա գիշերը
հեռացավ իր վրանը, հրեաները,
դուրս վազելով տաճարից,
հարձակվեցին դրսում գտնվող
զինվորների վրա: Կռվի
ընթացքում մի զինվոր այրվող

Խանձող նետեց բաց մուտքից
ներս, և սրբազան տան շուրջը
մայրու փայտից շինված
սրահներն անմիջապես
բոցավառվեցին: Իր
գորապետների և լեգեոներների
ուղեկցութեամբ Տիտոսը
նետվեց այդ տեղը և
զինվորներին հրամայեց
հանգցնել հրդեհը: Բայց ոչ ոք
չլսեց նրա խոսքերը: Մոլեգնած
զինվորները բոցավառվող
խանձողներ նետեցին
տաճարին կից սրահների մեջ, և
ապա սկսեցին սրի քաշել բոլոր,
այնտեղ պատսպարվածներին:
Արյունը ջրի պես հոսում էր

տաճարի աստիճաններով:
Չազար հազարավոր հրեաներ
կոտորվեցին: Կռվի աղմուկից
բարձր՝ շատերը ճչում էին.
«Իքարո՛ղ»՝ «Փառքը
հեռացավ»:

«Տեսնելով, որ անհնար է զսպել
զինվորների կատաղությունը,
Տի- տոսն իր սպաների հետ
մտավ տաճար և զննեց
սրբազան շինության ներսը:
Տաճարի շքեղությունն
ապշեցրեց նրանց, և քանի դեռ
բոցը չէր թափանցել սուրբ
տեղը, [34] Տիտոսն իր վերջին
ջանքն արեց՝ փրկելու այն:

Նետվելով առաջ՝ նա կրկին
փորձեց համոզել զինվորներին՝
կասեցնել հրդեհի տարածումը:
Չարյուրապետ Լիբերալիսը
ջանաց իր գավազանով ստիպել
զինվորներին հնազանդվել,
բայց նույնիսկ հարգանքը
կայսրի հանդեպ տեղի տվեց
հրեաների նկատմամբ կատաղի
ատելությանը, կռվի սոսկալի
գրգռվածությանն ու թալանի
անհագ տենչին: Տեսնելով
իրենց շուրջը փայլփլող ոսկին,
որ կրակի վայրագ բոցերից
ավելի պայծառ էր շողշողում,
զինվորները ենթադրեցին, թե
սրբարանում անհամար

գանձեր են կուտակված: Մի
զինվոր անգիտակցաբար դռան
ծխնիների միջով վառվող ջահ
նետեց, և մի ակնթարթում
ամբողջ շենքը հայտնվեց
բոցերի մեջ: Կսկծեցուցիչ
ծուխն ու կրակը սպաներին
ստիպեցին հեռանալ, և
վեհասքանչ տաճարը մատնվեց
կործանման:

«Եթե դա զարհուրելի տեսարան
էր հռոմեացիների համար,
ապա ի՞նչ կարելի է ասել
հրեաների մասին: Բլրի ողջ
գագաթը, որի վրա քաղաքն էր,
հրաբխի նման բոցավառվում

Էր: Յրեղեն վիհը կլանում էր
մեկը մյուսի հետևից
զարհուրելի աղմուկով
փլուզվող շենքերը: Մայրուց
կառուցված տանիքները հրե
թիթեղներ էին հիշեցնում,
ոսկեզօծ գմբեթները կարմիր
լույսի ցուլքեր էին արձակում,
իսկ դարպասների
աշտարակներից կրակի և ծխի
սյուներ էին բարձրանում:
Ճրջակա բլուրները
լուսավորվեցին, և հեռվում
երևացին մարդկային
կերպարանքներ, որ
զարհուրելի տագնապով
հետևում էին կործանման

ընթացքին: Վերին քաղաքի
պա-տերի մոտ ու
բարձունքներին նույնպես
երևում էին մարդիկ, ոմանք՝
հու-սահատության
հոգեվարքից գունատ,
մյուսները՝ վրիժառության
ցասու-մով լցված: Այս ու այն
կողմ վազող հռոմեացի
զինվորների գոչյուններն ու
կրակի մեջ այրվող
ապստամբների վայնասունը
խառնվում էին հրեղեն
տարերքի շառաչյունին ու վայր
ընկնող գերանների
ամպրոպանման դղրդոցին:
Բարձունքներում գտնվող

մարդկանց ճիշն արձագանքում
էր սարերում, պարիսպների ողջ
երկայնքով աղաղակ ու ողբ էր
հնչում, սովից մեռնող մարդիկ
հավաքում էին իրենց վերջին
ուժերը՝ հուսահատության ու
վշտի ճիչ արձակելու
համար:[35]

«Սպանդը քաղաքի ներսում
շատ ավելի զարհուրելի էր, քան
նրանից դուրս: Տղամարդիկ և
կանայք, երիտասարդներն ու
ծերերը, խռովարարներն ու
քահանաները, կռվողներն ու
ողորմություն աղերսողները՝
բոլորն անխտիր մորթվում էին:

Սպանվածներն սպանողներից
ավելի շատ էին: Բնաջնջման
գործը շարունակելու համար
լեգեոներները ստիպված էին
անցնել դիակների կոլյտերի
վրայով» (Միլման, Յրեաների
պատմութիւնը, գիրք 16):

Տաճարի ավերումից շատ
չանցած՝ ողջ քաղաքն ընկավ
հռոմեա-ցիների ձեռքը: Յրեա
առաջնորդները լքել էին իրենց
անառիկ աշտա-րակները, և
Տիտոսը դրանք դատարկ
գտավ: Նա ցնցված նայեց
դրանց և հայտարարեց, որ
Աստված է այդ ամենն իր ձեռքը

մատնել, քանզի ուտիշ ոչ մի
ուժ, որքան էլ հզոր լիներ, չէր
կարող հաղթահարել այդ
վիթխարի ատամնավոր
պարիսպները: Քաղաքն ու
տաճարը հիմնահատակ
արվեցին, և հողը, որի վրա
կանգնած էր եղել սուրբ
տաճարը, հերկվեց «իբրև
ագարակ» (Երեմիա 26.18):
Պաշարման և դրան հետևած
ջարդի ժամանակ ավելի քան
մեկ միլիոն մարդ զոհվեց, իսկ
ողջ մնացածները գերի
տարվեցին, վաճառվեցին
որպես ստրուկներ, քշվեցին
Յոնմ` զարդարելու նվաճողների

հաղթարշավը, կեր դարձան
վայրի գազանների
ամֆիթատրոններում կամ էլ
ցրվեցին ողջ երկրով մեկ՝
որպես անտուն
թափառականներ:

Ջրեաներն իրենք կռեցին իրենց
շղթաները, իրենք լցրեցին
վրեժխնդրության բաժակը:
Ազգի լիակատար կործանումն
ու աշխարհով մեկ ցրվելուց
հետո նրանց վրա հասած
աղետները իրենց իսկ ցանած
սերմերի պտուղներն էին:
Մարգարեն ասում է. «Դու քեզ
կործանեցիր, ով իսրայել»,

«որովհետև դու գլորվել ես քո
անօրենությունների պատճառով»
(Ովսե 13.9, 14.1): Հրեաների
տառապանքները հաճախ
ներկայացվում են որպես
պաստիժ՝ ուղարկված նրանց
վրա Աստծո ուղղակի
հրամանով: Հենց այսպես է մեծ
խաբեքան ջանում քողարկել իր
գործը: Համառորեն մերժելով
Աստծո սերն ու ողորմությունը՝
իսրայելցիները զրկվեցին Նրա
պաշտպանությունից, և
սատանային թույլ տրվեց իր
կամքով ղեկավարել նրանց:
Երուսաղեմի ավերման
ժամանակ [36] կատարված

զարհուրելի դաժանությունները
ցույց են տալիս, թե ինչպես է
սատանան վրեժ առնում
Նրանցից, ովքեր հանձնվում են
Նրա հսկողությանը:

Մենք չենք կարող
պատկերացնել, թե որքան ենք
պարտական Քրիստոսին այն
խաղաղության ու
պաշտպանության համար, որ
վայելում ենք: Միայն Աստծո
զսպող զորությունն է, որ թույլ
չի տալիս մարդկությանը
ամբողջապես ընկնել
սատանայի հսկողության տակ:
Անհնազանդներն ու

երախտամուռները շատ
պատճառներ ունեն Աստուծոց
շնորհակալ լինելու՝ չարագործի
դատան, ոխակալ ուժը սանձող
Նրա տրտմության ու
երկայնամտության համար:
Բայց երբ մարդիկ անցնում են
աստվածային համբերության
սահմանը, այդ զսպող ուժը
հեռացվում է: Աստված դահիճ
չէ, որ կանգնած սպասում է, թե
երբ է իրականացնելու
մեղավորի դատավճիռը: Նա
պարզապես իր տրտմությունը
մերժողներին թողնում է իրենց
կամքին՝ հնձելու այն, ինչ
սերմել են: Մերժված լույսի

ամեն մի շող, արհամարհված
կամ չընդունված
յուրաքանչյուր
նախազգուշացում,
բավարարված ամեն մի կիրք,
Աստծո օրենքի ամեն մի
ոտնահարում՝ ցանված սերմ է,
որն անպայման պտուղ է
բերում: Աստծո Յոգին,
մշտապես հանդիպելով համառ
դիմադրության, ի վերջո
հեռանում է մեղավորից, և
այլևս ոչ մի ուժ չի զսպում
հոգու չար կրքերն ու չի
պաշտպանում սատանայի
նենգությունից ու
թշամությունից: Երու-սաղեմի

Կործանուամը սարսափելի և
հանդիսավոր
Նախագգուշացում է բոլորին,
ովքեր թեթևամտորեն մերժում
են առաջարկվող աստվածային
շնորհը և հակառակվում
աստվածային ողորմության
աղերսներին: Երբեք չի տրվել
ավելի հաստատ վկայություն
մեղքի հանդեպ Աստծո
ատելության և անխուսափելի
պատժի մասին, որը վրա է
հասնելու հան-ցավորին:

Երուսաղեմին բաժին ընկած
պատուհասների վերաբերյալ
Փրկչի մարգարեությունը մեկ

այլ իրականացում էլ պիտի
ունենա, որի համեմատ այդ
սոսկալի ավերումը թույլ ստվեր
եր միայն: Ընտրյալ քաղաքի
ճակատագրի մեջ մենք կարող
ենք տեսնել աշխարհի բախտը,
որ մերժում է Աստծո
տրտմությունն ու ոտնահարում
Նրա օրենքը: Մութ են էջերը
մարդկային թշվառության ու
հանցանքի, որոնց երկիրն
ականատես է եղել դարերի
ընթացքում: Այդ մասին
մտածելիս սիրտդ ցավում և
միտքդ նվաղում է: Սոսկալի են
եղել երկնքի հեղինակությունը
մերժելու հետևանքները:

Սակայն ապագայի
հայտնություններում պատկերը
Էլ ավելի մռայլ է: Անցյալի
պատմությունը
խռովությունների, [37]
պայքարի և
հեղափոխությունների շարք է,
մարտնչող «զինվորների
ճակատամարտ... և
արևաթաթախ հանդերձներ»
(Եսայիա 9.5): Բայց ի՞նչ է դա
այն օրվա սարսափների
համեմատ, երբ Աստծո զսպող
Յոզիան բռնորոպին կվերցվի
ամբարիշտներից, որպեսզի
այլևս երբեք չսանձի
մարդկային կրքերն ու

սատանայի զայրույթը: Այդ
ժամանակ, ինչպես երբեք
Նախկինում, աշխարհը կտեսնի
սատանայի կառավարման
հետևանքները:

Բայց այդ օրը, ինչպես
Երուսաղեմի կործանման
ժամանակ, Աստծո ժողովրդից
պիտի փրկվեն «ամենքը, որ
գրված են կյանքի համար»
(Եսայիա 4.3): Քրիստոսը
խոստացել է, որ գալու է
երկրորդ անգամ՝ իր մոտ
առնելու իր հավատարիմ
ժողովրդին: «Եվ այն ժամանակ
կո՛ծ կանեն երկրի բոլոր ազգերը

և կտեսնեն մարդու Որդուն
գալիս երկնքի ամպերի վրա՝
զորությամբ և մեծ փառքով: Եվ
նա կուղարկի իր
հրեշտակներին Մեծաձայն
փողով, և նրանք կժողովեն նրա
ընտրյալներին չորս հողմից՝
երկնքի մի ծայրից մինչև մյուս
ծայրը» (Մատթեոս 24.30, 31):
Այն ժամանակ ավետարանին
չհնազանդվողները պիտի
սպանվեն նրա բե-րանի հոգով
և պիտի կործանվեն նրա
գալստյան պայծառությունից (Բ
Թեսաղոնիկեցիս 2.8): Հին
հարայելի նման՝
ամբարիշտներն իրենք են

կործանում իրենց: Նրանք
ընկնում են իրենց իսկ
անօրենությունից: Մեղավոր
կյանքն այնքան է նրանց
օտարացրել Աստծուց, նրանց
եռ-թյունն այնքան է
այլասերվել չարից, որ Նրա
փառքի դրսևորումը նրանց
համար լափող կրակ կլինի:
Թող մարդիկ զգուշանան, որ
հանկարծ չարհամարիեն իրենց
ուղղված Քրիստոսի
խրատները: Ինչպես Նա իր
աշակերտներին
Նախազգուշացրեց Երուսաղեմի
կործանման մասին՝ նշան
տալով վերահաս

ավերածուծության վերաբերյալ,
որպեսզի նրանք կարողանային
փախչել, այնպես էլ
նախազգուշացրել է աշխարհին
վերջնական կործանման օրվա
մասին և տվել դրա մոտեցման
նշանները, որպեսզի բոլոր
ցանկացողները խուսափեն
գալիք բարկությունից: Հիսուսն
ասել է. «Եվ նշաններ կլինեն
արեգակի, լուսնի և աստղերի
վրա, և երկրի վրա
հեթանոսները խռովությամբ
կտազնապեն» (Ղուկաս 21.25,
Մատթեոս 24.29, Մարկոս
13.24-26, Հայտնություն
6.12-17): Նրա գալստյան այս

նշանները տեսնողները պետք է
իմանան, «որ մոտ է՝ [38]

դռներին» (Մատթեոս 24.33):

«Արթուն

կացե՛ք»,՝—զգուշացնում է Տերը
(Մարկոս 13.35):

Նախազգուշացումն

ընդունողները չեն թողնվի

խավարի մեջ, որպեսզի այդ օրը

հանկարծակի չգա նրանց

համար: Մինչդեռ արթուն

չլինողների համար «Տիրոջ օրը

ինչպես գիշերվա գող՝ այնպես

կհասնի» (Ա Թեսաղոնիկեցիս

5.2-5):

Աշխարհն այսօր ավելի
պատրաստակամ չէ՝
ընդունելու ներկա ժամանակի
լուրը, քան հրեաները՝
Երուսաղեմի կործանման
վերաբերյալ Փրկչի
Նախագգուշացումը: Աստճո
օրը, երբ էլ որ գա, անսպասելի
է լինելու ամբարիշտների
համար: Երբ կյանքը կընթանա
իր սովորական հունով, երբ
մարդիկ կլանված կլինեն
հաճույքներով, գործերով,
դրամաշահությամբ ու
առուճախով, երբ կրոնական
առաջնորդները կմեծարեն
աշխարհի առաջընթացն ու

լուսավորութիւնը՝ քննենելով
ժո-ղովրդին կեղծ
ապահովութեան
զգացողութեամբ, այն
ժամանակ, ինչպես գողն է
կեսգիշերին սողոսկում չհսկվող
բնակարանը, այնպես էլ
անսպասելի կործանումը վրա
կհասնի անհոգներին ու
անաստվածներին, և «նրանք
չեն պրծնի» (Ա Թեսաղոնիկեցիս
5.3):

ԳԼՈՒԽ 2—ՅԱԼԱՃԱՆՔ ԱՌԱՋԻՆ ԴԱՐՆՐՈՒՄ

Աշակերտներին հայտնելով
երուսաղեմի ճակատագիրն ու
իր երկրորդ գալստյան հետ
կապված իրադարձությունները՝
Յիսուսը կանխասաց նաև իր
ժողովրդի փորձառությունը՝
սկսած այն օրից, երբ
համբարձվելու էր, մինչև այն
օրը, երբ պիտի վերադառնար
գորությունամբ ու փառքով՝
ազատագրելու նրանց:
Ձիթենյաց սարից
ներթափանցելով ապագայի
խորքը՝ Փրկիչը տեսավ այն

փոթորիկները, որ շուտով
պայթելու էին առաքյալների
եկեղեցու վրա, ինչպես նաև
այն կատաղի, ավերիչ
մրրիկները, որոնք թափվելու
էին իր հետևորդների գլխին՝
խավարի ու հալածանքի գալիք
դարերում: Մի քանի կարճ, բայց
սարսափազդու խոսքերով Նա
կանխասաց, թե ինչ վիճակի
էին հասցնելու Աստծո
եկեղեցին այս աշխարհի
տիրակալները (Մատթեոս
24.9,21,22): Քրիստոսի
հետևորդները պետք է անցնեին
ստորացման, նախատիկի և
տառապանքի այն նույն

ճանապարհով, որով անցել էր
իրենց Տերը: Աշխարհի Փրկչի
Նկատմամբ բորբոքված
թշնամությունը դրսևորվելու էր
Նաև բոլոր Նրանց հանդեպ,
ովքեր հավատալու էին Նրան:

Վաղ եկեղեցու պատմությունը
վկայում է Փրկչի խոսքերի
իրականացման մասին: Երկրի
ուղծոխքի ուժերը դուրս եկան
Քրիստոսի դեմ՝ հանձինս Նրա
հետևորդների: Յեթանոսները
կանխազգում էին, որ եթե
ավետարանը հաղթանակի,
ապա իրենց տաճարներն ու
զոհա-սեղանները կոչնչացվեն,

ուստի հավաքեցին իրենց
ուժերը՝ վերջ դնելու
քրիստոնեությանը: Բռնկվեցին
հալածանքի հրդեհները:
Քրիստոնյաներից խլում էին
իրենց ունեցվածքը և դուրս
քշում իրենց տներից: Նրանք
«շատ չարչարանքների
ճիգերին» համբերեցին
(Եբրայեցիս 10.32),
ենթարկվեցին դաժան [40]
«նախատիևքների ու ծեծերի,
կապանքների ու բանտի »
(Եբրայեցիս 11.36): Շատերն
իրենց վկայութունը կնքեցին
արյունով: Ազնվական ու
ստրուկ, հարուստ և աղքատ,

ՈՒՆՅԱԼ ՈՒ ՍՈՉԵՍ՝ ԲՈՒՆՈՐՆ
ԱՆԽԱՏԻՐ ԱՆՈՂՈՔԱԲԱՐ
ՍԱԿԱՆՎՈՒՄ ԷԻՆ:

Այս հալածանքները, որ սկսվել
էին դեռևս Ներոնի օրոք՝
Պողոսի նահատակության
ժամանակ, ավելի կամ պակաս
կատաղությանբ
շարունակվեցին երկար դարեր:
Քրիստոնյաներին կեղծորեն
մեղադրում էին ամենազազրեչի
հանցանքների մեջ և
հայտարարում, որ հենց նրանք
են մեծ աղետների՝ սովի,
ժանտախտի ու երկրաշարժերի
պատճառը: Երբ նրանք

համընդհանուր ատելության ու
կասկածանքի առարկա
դարձան, գտնվեցին լրտեսներ,
ովքեր պատրաստ էին հանուն
շահի մատնել անմեղներին:
Նրանք դատապարտվում էին
որպես կայսրության
խռովարարներ, որպես կրոնի
թշնամիներ և հասարակության
վնասատուներ: Շատերին
գցում էին վայրի գազանների
երախը կամ ողջ-ողջ այրում
ամֆիթատրոններում: Ոմանց
խաչում էին, մյուսներին վայրի
կենդանիների մորթիներ էին
հազցնում ու նետում
ասպարեզ, որպեսզի շները

պատառոտեն նրանց: Նրանց
պատիժը հաճախ
հրապարակային
տոնախմբությունների
գլխավոր զվարճությունն էր
դառնում: Հոժ բազմություններ
էին հավաքվում՝ դիտելու այդ
տեսարանները, և նրանց
մահվան հոգեվարքը ողջանում
էին ծափահարություններով ու
ծիծաղով:

Որտեղ էլ որ պատսպարվեին
Քրիստոսի հետևորդները,
նրանց հալածում էին, ինչպես
գազաններին՝ որսի ժամանակ:
Նրանք ստիպված էին

թաքստոց որոնել ամայի և
մեկուսի վայրերում:

«Կարոտություն քա-շելով,
նեղված, չարչարված, որ
աշխարհը նրանց արժանի չէր.
անա-պատներում մոլորվեցին և
սարերում, և այրերում, և երկրի
խռռոչներում» (Եբրայեցիս
11.37. 38): Հազարավորներն
ապաստարան գտան
ստոր-գետնյա այրերում:
Հռոմից դուրս՝ բլուրների տակ,
հուլի ու քարի միջով երկար
միջանցքներ էին վարվել, որոնց
մութ ու խճճված ցանցը
տարած-վում էր քաղաքի
պարիսպներից շատ մղոններ

այն կողմ: Ստորգետնյա այս
անձավներում Քրիստոսի
հետևորդները թաղում էին
իրենց մեռյալներին, և հենց
այստեղ էլ հալածանքների
ժամանակ նրանք
պատսպարան էին գտնում: Երբ
Կյանք Տվողն արթնացնի
նրանց, ովքեր պատերազմել են
բարի պատերազմը, Քրիստոսի
համար նահատակվածներից
շատերը դուրս կգան այդ մռայլ
քարանձավներից: [41]

Ամենավայրագ հալածանքների
ժամանակ Քրիստոսի այս
վկաներն անբիժ են պահել

իրենց հավատը: Չրկված ամեն
հարմարությունից և նույնիսկ
արևի լույսից, ապաստանելով
երկրի մութ, բայց հյուրընկալ
գրկում՝ նրանք երբեք չեն
տրտնջացել: Հավատի,
համբերության և հույսի
խոսքերով նրանք խրախուսել
են միմյանց՝ դիմանալու
գրկանքներին ու վշտերին:
Երկրային ամեն մի օրհնության
կորուստն անգամ անկարող էր
ստիպել նրանց ուրանալու
իրենց հավատն առ Քրիստոս:
Փորձություններն ու
հալածանքները միայն ավելի
էին մոտեցնում նրանց

ցանկալի հանգստին ու
պարգևատրմանը:

Ինչպես և Աստծո ծառաներն
անցյալում, շատերը
«չարչարվեցին՝ ազատությունը
չընդունելով, որ լավագույն
հարության հասնեն»

(Եբ-րայեցիս 11.35): Նրանք
հիշում էին իրենց Տիրոջ այն
խոսքերը, որ երբ հալածվեն
հանուն Քրիստոսի, պետք է
ուրախանան ու ցնձան, քանզի
մեծ է լինելու նրանց վարձքը
երկնքում, և քանի որ իրենցից
առաջ այդպես հալածել էին
մարգարեներին: Նրանք

ուրախանում էին, որ արժանի
են գտնվել չարչարվելու
հանուն ճշմարտության, և
կրակի ճայթյունների միջից
լսվում էին նրանց հաղթական
երգերը: Հավատով նայելով
դեպի երկինք՝ նրանք տեսնում
էին Քրիստոսին ու
հրեշտակներին, ովքեր երկնքի
պարիսպներից խորին
հետաքրքրությամբ ներքև էին
նայում և հավանություն տալիս
իրենց հաստատակամությանը:
Աստժո գահից ձայն էր հասնում
նրանց. «Հավատարիմ եղիր
մինչև մահ, և կյանքի պսակը

Կտամ քեզ » (Յայտնություն
2.10):

Չուր էին Քրիստոսի եկեղեցին
բռնությամբ ոչնչացնելու
սատանայի ջանքերը: Մեծ
պայքարը, որի ընթացքում
Յիսուսի հետևորդները
զոհաբերեցին իրենց կյանքը,
չդադարեց, երբ այդ
հավատարիմ դրոշակիրներն
ընկան իրենց դիրքերում:
Պարտվելով՝ նրանք հաղթեցին:
Աստծո պատգամաբերները
սպանվում էին, բայց Նրա
գործը համառորեն առաջ էր
ընթանում: Ավետարանի

տարածումը շարունակվում էր,
նրա համախոհների թիվը՝
աճում: Այն ներթափանցում էր
այնպիսի տեղեր, որոնք
անմատչելի էին անգամ Յոզովի
արծիվների համար: Մի
քրիստոնյա, դիմելով
հալածանքներ կազմակերպող
հեթանոս ղեկավարներին, ասել
է. «Դուք կարող եք սպանել,
տանջել, դատապարտել մեզ...
Ձեր անարդարությունն
ապացուցում է, որ մենք անմեղ
ենք...[42] Ձեր դաժանությունն
...անօգուտ է»: Դա ընդամենն
ավելի ուժեղ էր դրդում
մյուսներին՝ ընդունելու նրանց

համոզմունքները: «Որքան
ավելի շատ մեզ հնձեք, այնքան
մեր թիվն աճելու է.

քրիստոնյաների արյունը սերմ
է» (Տերտուլիանոս,
Ջատագովություն, պարբ. 50):

Չազարավորները
բանտարկվում ու սպանվում
էին, բայց հայտնվում էին
ուրիշները՝ գրավելու նրանց
տեղը: Իսկ նրանք, ովքեր
Նա-հատակվեցին իրենց
հավատի համար, ապահով
ննջել են քրիստոսում՝ որպես
հաղթողներ: Նրանք
պատերազմել են բարի

պատերազմը և Բրիտոսի
գալստյան ժամանակ
ստանալու են փառքի պսակը:
Նրանց տառապանքները
քրիստոնյաներին ավելի էին
մոտեցնում միմյանց և իրենց
Փրկչին: Նրանց կենդանի
օրինակն ու մահվան
վկայությունը մշտապես
խոսում էին ճշմարտության
օգտին, և ամենաանսպասելի
տեղերում սատանայի
հպատակները թողնում էին
իրենց ծառայությունն ու
անցնում Բրիտոսի
դրոշակիրների շարքը:

Դրա համար էլ սատանան
որոշեց իր դրոշը մխրճել
քրիստոնեական եկեղեցու մեջ՝
Աստծո կառավարության դեմ
ավելի հաջող պատերազմելու
նպատակով: Եթե հնարավոր
լիներ Քրիստոսի
հետևորդներին մոլո-րեցնել ու
դրդել նրանց բարկացնելու
Աստծուն, ապա նրանք
կկորցնեին իրենց ուժը,
տոկոսությունն ու
հաստատակամությունը և
հեշտությամբ նրա ավարը
կդառնային:

Մեծ հակառակորդն այժմ
ջանում է խորամանկությամբ
ձեռք բերել այն. ինչին չէր
կարողացել ուժով հասնել:
Չալաճանքը դադարեց՝ իր տեղը
գիջելով աշխարհիկ
բարեկեցության ու փառքի
վտանգավոր հրա-պույրների:
Կռապաշտներն ընդունեցին
քրիստոնեական հավատի մի
մասը, մինչդեռ մերժեցին մյուս
Էական ճշմարտությունները:
Չայտա-րարելով, թե ընդունում
են Չիսուսին որպես Աստծո
Որդի և հավատում են Նրա
մահվանն ու հարությանը,
նրանք չէին գիտակցում իրենց

մեղքը և ապաշխարութեան ու
սրտի վերավախման կարիք
չէին զգում: Գնալով որոշ
զիջումների՝ նրանք
առաջարկեցին
քրիստոնյաներին նույնը անել,
որպեսզի բոլորը միավորվեն
քրիստոնեական հավատի
հիմքի վրա:

Չիմա եկեղեցին հայտնվեց
սարսափելի վտանգի մեջ:
Բանտը, կտտանքները, կրակն
ու սուրը օրհնություններ էին
դրա համեմատ: Բրոշ
քրիստոնյաներ մնացին
անկոտորում՝ հայտարարելով,

որ [43] փոխզիջման չեն գնա:
Մյուսները պատրաստ էին
զիջել կամ փոխել իրենց
ուսմունքի որոշ կետեր և
միանալ նրանց հետ, ովքեր
մասամբ էին ընդունել
քրիստոնեությունը՝ պնդելով,
թե դա կնպաստի նրան, որ
նրանք լիովին դարձի գան: Սա
խոր մաքառումների
ժամանակաշրջան էր քրիստոսի
հավատարիմ հետևորդների
համար: Կեղծ քրիստոնեության
քողի տակ սատանան
խորամանկորեն սողոսկում էր
եկեղեցի՝ ապականելով
մարդկանց հավատն ու շեղելով

Նրանց միտքը ճշմարտության
խոսքից:

Քրիստոնյաների մեծ մասն, ի
վերջո, համաձայնեց
ցածրացնել իր չափանիշը, և
միություն ստեղծվեց
քրիստոնեության ու
հեթանոսության միջև: Թեև
կռապաշտները հայտարարում
էին, թե ապաշխարել են և
հարում էին եկեղեցուն, նրանք
դեռ շարունակում էին կառչել
իրենց կուռ-քերին՝
պաշտամանքի նախկին
առարկաները փոխարինելով
Հիսուսի և անգամ Մարիամի ու

սրբերի պատկերներով:
Կռապաշտության գարշելի
թթխմորը, այսպես ներմուծված
եկեղեցի, շարունակեց իր
կործանիչ գործը: Անառողջ
ասմունքներ, սնահավատ
ծեսեր ու կռապաշտական
արարողություններ
միախառնվեցին եկեղեցու
հավատին ու պաշտամունքին:
Երբ Քրիստոսի հետևորդները
միավորվեցին կռապաշտների
հետ, քրիստոնեական կրոնն
ապականվեց, և եկեղեցին
կորցրեց իր մաքրությունն ու
զորությունը: Կային այնպիսիք,
սակայն, ովքեր չընդունեցին

այդ մուրրությունները: Նրանք
շարունակում էին հավատարիմ
մնալ ճշմարտության
Յեղիևակին և երկրպագել
միմիայն Աստծուն:

Քրիստոսի հետևորդները միշտ
ել բաժանվել են երկու
դասակարգի: Մինչ մի դասը,
Փրկչի կյանքը
ուսումնասիրելով,
ջերմեռանդորեն ձգտում է
ուղղել իր թերություններն ու
համապատասխանել
Չափանիշին, մյուսը
խուսափում է հստակ և
գործնական

ճշմարտություններից, որոնք
մերկացնում են նրա սխալները:
Նույնիսկ իր լավագույն
ժամանակներում եկեղեցին
կազմված չի եղել միայն
մաքուր, հավատարիմ ու
անկեղծ անդամներից: Փրկիչը
սովորեցնում էր, որ
գիտակցաբար մեղքի մեջ
ապրողները չպետք է
ընդունվեն եկեղեցի, և սակայն,
Նա կապվեց այնպիսի
մարդկանց հետ, ովքեր
արատավոր բնավորություն
ունեին, և իր ուսմունքով ու
անձնական օրինակով
հնարավորություն տվեց նրանց

տեսնել իրենց սխալները և
ուղղել դրանք: Տասներկու
առաքյալների մեջ դավաճան էլ
կար: Հուդան ընդունվեց՝
չնայած[44] իր բնավորության
արատներին: Նա ընդունվեց
աշակերտների շարքը, որպեսզի
Քրիստոսի խրատների և
օրինակի միջոցով
պատկերացում կազմեր
քրիստոնեական բնավորության
մասին, դրդվեր տեսնելու իր
սխալները, ապաշխարեր և
աստվածային շնորհի
օգնությամբ սրբեր իր անձը՝
«ճշմարտությանը
հնազանդվելով»: Բայց Հուդան

չքայլաց այն լույսի մեջ, որն
այդքան ողորմաճաբար թուլլ էր
տրվել հորդել նրա վրա:
Փայփայելով իր մեղքը՝ նա իր
վրա հրավիրեց սատանայի
փորձությունները: Նրա
բնավորության չար գծերը
դարձան գերիշխող: Նա իր
միտքը հանձնեց խավարի
ուժերի վերահսկողությանը և
զայրանում էր, երբ իր
թերությունները
հանդիմանվում էին, և այդպես
նա դրդվեց գործելու իր Տիրոջ
մատնության սուկալի ոճիրը:
Նմանապես էլ բոլոր նրանք,
ովքեր բարեպաշտության քողի

տակ մեղք են փայփայում,
ատում են նրանց, ովքեր
խախտում են իրենց անդորրը՝
դատապարտելով իրենց
մեղավոր վարքը: Բայց հենց որ
պատեի առիթ ներկայանա,
նրանք, Յուդայի նման,
կմատնեն նրանց, ովքեր իրենց
օգնելու համար փորձել են
հանդիմանել իրենց:

Եկեղեցում առաքյալները
բախվում էին այնպիսի
մարդկանց, ովքեր գաղտնի
մեղք էին փայփայում:
Անանիան ու Սապֆիրան
փորձեցին խաբելով ձևացնել,

Թե իրենց ամբողջ ունեցվածքը
նվիրաբերում են Աստծուն,
մինչդեռ մի մասն ագահաբար
իրենց էին պահել: Ճշմարտու-
թյան Յոզիան առաքյալների
հայտնեց այս կեղծավորների
իսկական էութունը, և Աստծո
դատաստանները մաքրեցին
եկեղեցին այդ արատավոր
բժից: Եկեղեցում Քրիստոսի
Յոզու ամենատեսության այս
վառ ապացույցը սարսափ
ներշնչեցեց կեղծավորներին ու
չարագործներին: Նրանք երկար
չէին կարող կապված մնալ
նրանց հետ, ովքեր իրենց
բնավորությամբ ու

սովորութիւններով մշտապես
ներկայացնում էին Քրիստոսին:
Ու երբ Նրա հետևորդները
նեղութեան ու հալածանքների
ենթարկվեցին, միայն Նրանք
էին կամենում Քրիստոսի
հետևորդներ դառնալ, ովքեր
հանուն ճշմարտութեան
պատրաստ էին զոհաբերել
ամեն ինչ: Այսպիսով, քանի դեռ
հալածանքը շարունակվում էր,
եկեղեցին համեմատաբար
մաքուր էր մնում: Բայց երբ այն
դադարեց, եկեղեցի մուտք
գործեցին նորադարձներ, ովքեր
պակաս անկեղծ ու նվիրված

Էին, և սատանան հենարան
գտավ եկեղեցում:[45]

Բայց քանի որ լույսի իշխանն
ու խավարի իշխանը չեն կարող
միաբանվել, հետևաբար, չեն
կարող միաբանվել նաև նրանց
հետևորդները: Երբ
քրիստոնյաները
համաձայնեցին միություն
կազմել կիսով չափ դարձի
եկած հեթանոսների հետ,
նրանք ոտք դրին մի
ճանապարհի, որն ավելի ու
ավելի էր հեռացնում
ճշմարտութունից: Սատանան
ցնծում էր, որ իրեն հաջողվեց

մուլորեցնել Քրիստոսի այդքան
մեծաթիվ հետևորդների: Յետո
նա ավելի մեծ իշխանության
ձեռք բերեց այդպիսիների վրա՝
դրդելով նրանց հալածել
բոլորին, ովքեր հավատարիմ
էին Աստծուն: Ոչ ոք ավելի լավ
չէր հասկանում, թե ինչպես
պետք է պայքարել իսկական
քրիստոնեական հավատի դեմ,
որքան նրանք, ովքեր մի
ժամանակ դրա ջատագովներն
էին: Եվ այս ուխտադրուժ
քրիստոնյաները, միանալով
իրենց կիսահեթանոս
ընկերների հետ, իրենց զենքերն
ուղղեցին Քրիստոսի ուսմունքի

ամենակարևոր դրույթների
դեմ:

Յուսահատ պայքար էր
պահանջվում նրանցից, ովքեր
կամենում էին հավատարիմ
մնալ և հաստատ կանգնել այն
մոլորությունների ու
պղծությունների դեմ, որոնք
քահանայական հանդերձների
քողի տակ ներթափանցել էին
եկեղեցի: Աստվածաշունչը չէր
ընդունվում որպես հավատի
չափանիշ: Կրոնական
ազատության ուսմունքը
պիտակվեց որպես
հերձվածողութուն, որի

ջատագրվներին ատում ու
հալածում էին:

Երկարատև ու դաժան
պայքարից հետո փոքրաթիվ
նվիրյալներ վճռեցին խզել
բոլոր կապերը նահանջած
եկեղեցու հետ, եթե վերջինս
համառորեն հրաժարվի
ազատվել կեղծիքից ու
կռապաշտությունից: Նրանք
տեսան, որ բաժանումն
անհրաժեշտություն է, եթե
միայն ուզում են հավատարիմ
մնալ Աստծո խոսքին: Նրանք
չհամարձակվեցին հան- դուրժել
իրենց համար բախտորոշ այդ

մուլտրությունները և այնպիսի
օրինակ թողնել, որը կվտանգեր
իրենց զավակների և գալիք
սերունդների հավատը:
Խաղաղություն ու
միաբանություն ապահովելու
համար նրանք պատրաստ էին
գնալ ցանկացած փոխզիջման՝
Աստծուն հավատարիմ մնալու
սահմաններում: Բայց նրանք
զգացին, որ սկզբունքը
զոհաբերելու դեպքում նույնիսկ
խաղաղությունը, չափազանց
թանկ էր նստելու իրենց վրա:
Եթե միաբանությունը
հնարավոր էր պահպանել
միայն ճշմարտությունն ու

արդարությունը զոհաբերելու
հաշվին, ուրեմն՝ թող լինի
բաժանություն, և նույնիսկ՝
պայքար:

[46] Որքա՛ն լավ կլիներ թե՛
եկեղեցու, և թե՛ աշխարհի
համար, եթե Աստծո ժողովրդի
սրտում վերածնվեին այն
սկզբունքները, որոնցով
առաջնորդվում էին այդ
անկոտորում մարդիկ:

Տագնապալի

անտարբերություն է նկատվում
ուսմունքի այն կետերի
նկատմամբ, որոնք
քրիստոնեական հավատի

այոՒներն են: Սկսել է գերիշխել
այն կարծիքը, թե դրանք, ի
վերջո, կենսական
կարևորություն չունեն: Այս
քայքայիչ գաղափարն այնպես
է ամրացնում սատանայի
գործակալների ձեռքերը, որ
կեղծ տեսություններն ու
ճակատագրական
մոլորությունները, որոնց
դիմակայելու և մերկացնելու
համար հավատացյալները
նախկինում վտանգում էին
իրենց կյանքը, այժմ սիրով
ընդունվում են հազարավոր
կարծեցյալ քրիստոնյաների
կողմից:

Առաջին քրիստոնյաները
հիրավի յուրահատուկ
ժողովուրդ էին: Նրանց
անբասիր վարքն ու աներեր
հավատը մշտական
հանդիմանու-թյուն էին, որ
խախտում էին մեղավորների
անդորրը: Թեև սակավաթիվ,
առանց հարստության,
պաշտոնի կամ պատվավոր
տիտղոսների՝ նրանք,
այդուհանդերձ, իրենց
բնավորությամբ և ուսմունքով
սարսափ էին ներշնչում
չարագործներին:
Ամբարիշտները նրանց ատում

Էին ճիշտ այնպես, ինչպես
անաստված Կայենն Էր ատում
Չաբելին: Ինչի համար որ
Կայենը սպանեց Չաբելին, նույն
բանի համար Էլ նրանք,
հակառակվելով Սուրբ Չոգու
զսպող ուժին, սպանում էին
Աստծո ժողովրդին: Եվ հենց
նույն պատճառով էր, որ
հրեաները մերժեցին ու
խաչեցին Փրկչին: Նրա Էության
սրբությունն ու մաքրությունը
մշտական հանդիմանություն
էին նրանց եսամոլությանն ու
անբարոյությանը: Քրիստոսի
օրերից մինչև այժմ Նրա
հավատարիմ աշակերտները

գրգռել են նրանց ասելությունն ու թշնամությունը, ովքեր սիրում են մեղքը և փայփայում այն:

Այդ դեպքում ինչպե՞ս կարող է ավետարանը խաղաղության լուր կոչվել: Եսայիան, մարգարեանալով Մեսիայի ծննդյան մասին, Նրան անվանում է խաղաղության Իշխան: Երբ հրեշտակները հովիվներին հայտնեցին Քրիստոսի ծննդյան լուրը, նրանք երգում էին Բեթլեհեմի դաշտերի վրա. «Փա՛ռք Աստծուն բարձունքում, երկրի

վրա՝ խաղա-ղուծյուն, և
մարդկանց մեջ՝ հաճուծյուն»
(Ղուկաս 2.14): Թվում է, թե
հակասուծյուն կա այս
մարգարեության և Քրիստոսի
հետևյալ խոսքերի միջև. «Մի
կարծեք, թե ես եկա երկրի վրա
խաղաղուծյուն գցելու, ես չեկա
խաղաղուծյուն գցելու, այլ
սուր» (Մատթեոս 10.34): Բայց,
ճիշտ հասկացվելու դեպքում,
դրանք[47] կատարելապես
ներդաշնակ են: Ավետարանը
խաղաղության լուր է:
Քրիստոնեությունը մի
համակարգ է, որն, ընդունվելու
և կիրառվելու դեպքում,

Խաղաղություն,
Ներ-դաշնակություն ու
երջանակություն կսփռեր ամբողջ
երկրով մեկ: Քրիստոսի կրոնը
եղբայրության սերտ կապերով
կմիավորեր բոլորին, ովքեր
ընդունում են դրա ուսմունքը:
Չիտևսի առաքելությունն էր՝
հաշտեցնել մարդկանց Ասածո
հետ և, այդպիսով, մեկը մյուսի
հետ: Բայց աշխարհն
ակնհայտորեն գտնվում է
սատանայի՝ Քրիստոսի ոխերիմ
թշնամու իշ-խանության տակ:
Ավետարանը ներկայացնում է
կյանքի այնպիսի սկզբունքներ,
որոնք ամբողջովին հակասում

Են մարդկանց սովորույթ-ներին
ու ցանկություններին, և նրանք
ըմբոստանում են նրա դեմ:
Նրանք ասում են իրենց
մեղքերը բացահայտող ու
դատապարտող մաքրությունը
և հալածում ու կործանում են
նրանց, ովքեր իրենց ցույց են
տալիս ավետարանի
արդարացի և սուրբ
պահանջները: Քանի որ նրա
վեհ ճշմարտությունները
ատելություն ու պայքար են
բորբոքում, այդ իմաստով էլ
հենց այն սուր է կոչվում:

Խորհրդավոր
Նախախնամութիւնը, որը թույլ
է տալիս արդարների
հալածանքը ամբարիշտների
կողմից, մեծ շվարութիւն է
պատճառել շատերին, ովքեր
թույլ են հավատի մեջ: Ոմանք,
Նույնիսկ, պատրաստ են թողնել
իրենց վստահութիւնն առ
Աստված՝ տեսնելով, որ Նա
թույլ է տալիս բարգավաճել
ամենաստոր մարդկանց,
մինչդեռ լավագույններն ու
մաքուրները տանջվում ու
չարչարվում են նրանց
դաժանութիւնից: Շատերը
հարցնում են. ինչպե՞ս կարող է

Նա, ով արդար է, գթասիրտ և
զորությամբ անսահման,
հանդուրժել նման
անարդարություն և կեղեքում:
Այս հարցը մեզ չպետք է
անհանգստացնի: Աստված
բավական ապացույցներ է
տվել իր սիրո մասին, և մենք
չպետք է կասկածենք Նրա
բարությանն այն պատճառով,
որ չենք կարողանում
հասկանալ Նրա
նախախնամության
գործողությունները:
Կանխատեսելով այն
կասկածները, որոնք
փորձության խավար օրերին

Ճնշելու էին իր աշա-կերտների
հոգիները, Փրկիչն ասաց.
«Չիշեցեք այն խոսքը, որ ես ձեզ
ասացի, թե ծառան իր Տիրոջից
մեծ չէ. եթե ինձ հալածեցին, ձեզ
ել են հալածելու» (Յովհաննես
15.20): Չիսուսն ավելի շատ է
չարչարվել հանուն մեզ, քան
Նրա հետևորդներից որևէ մեկը
կարող է տառապել
ամբարիշտների
դաժանությունից: Նրանք,
ովքեր կոչված են չարչարվելու
և նահատակվելու, միայն
գնում են Աստծո սիրելի Որդու
հետքերով: [48]

«Տերը չի ուշացնի իր
խոստումը» (Բ Պետրոս 3.9): Նա
ոչ թե մոռանում կամ անտեսում
է իր զավակներին, այլ թույլ է
տալիս ամբարիշտներին
դրսևորելու իրենց իսկական
էությունը, որպեսզի ոչ մեկը, ով
ուզում է Նրա կամքը կատարել,
չխաբվի նրանց հարցում: Բացի
այդ, արդարներն անցնում են
տառապանքի հնոցով, որպեսզի
հենց իրենք էլ մաքրվեն,
որպեսզի նրանց օրինակը
մյուսներին ևս դրդի հավատի
ու բարեպաշտության և,
վերջապես, որպեսզի նրանց
հետևողական կյանքը

դատապարտի
անաստվածներին ու
անհավատներին:

Աստված թույլ է տալիս, որ
ամբարիշտները բարգավաճեն,
և բացահայավի նրանց
թշնամությունն իր հանդեպ,
որպեսզի, երբ նրանք լցնեն
իրենց անօրենսության բաժակը,
նրանց ոչնչացման մեջ բոլորը
տեսնեն իր
արդարադատությունն ու
ողորմածությունը: Արագորեն
մո-տենում է Աստծո
վրիժառության օրը, երբ բոլոր
նրանք, ովքեր խախտել են Նրա

օրենքն ու հարստահարել Նրա
ժողովրդին, արդարացի
հատուցում կատանան իրենց
գործերի համար, երբ Աստծո
Նվիրյալ զավակների հանդեպ
դրսևորած յուրաքանչյուր
դաժանություն կամ
անարդարություն կպատժվի
այնպես, կարծես այդ ամենն
ուղղված է եղել անձամբ
Քրիստոսի դեմ:

Կա մեկ այլ և ավելի կարևոր
հարց, որը պետք է գրավի
այսօրվա եկեղեցիների
ուշադրությունը: Պողոս
առաքյալը հայտարարում է, որ

«բոլոր նրանք, ովքեր ուզում են
աստվածապաշտությամբ
ապրել Բրիս-տոս Յիսուսում,
հալածանք պիտի կրեն» (Բ
Տիմոթեոս 3.12): Այդ դեպքում
ինչո՞ւ են հալածանքները
մեծապես դադարել: Միակ
պատճառն այն է, որ եկեղեցին
այնքան է հարմարվել
աշխարհի չափանիշներին, որ
այլևս ընդդիմության չի
հանդիպում: Մեր օրերի կրոնն
աչքի չի ընկնում այն
մաքրությամբ ու սրբությամբ,
որ բնորոշ էին քրիստոնեական
հավատին Փրկչի և Նրա
առաքյալների

Ժամանակներում: Պատճառը,
թե ինչու է քրիստոնեությունն
այսպիսի ժողովրդականություն
վայելում աշխարհում, մեղքի
հետ փոխզիջման ոգին է,
Աստծո խոսքի մեծ
ճշմարտությունների
նկատմամբ անտարբեր
վերաբերմունքն ու կենդանի
բարեպաշտության պակասը
եկեղեցում: Եթե վերածնվելին
վաղ եկեղեցու հավատն ու
զորությունը, ապա նորից
կբռնկվեր հալածանքների
ոգին, և կբորբոքվեր
հետապնդումների կրակը:

ԳԼՈՒԽ 3—ՅՈԳԵՎՈՐ ԽԱՎԱՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆ

Թեսաղոնիկեցիներին ուղղված իր երկրորդ նամակում Պողոսը կանխագուշակել է այն մեծ ապստամբությունը, որ հանգեցնելու էր պապական իշխանության հաստատմանը: Նա հայտարարել է, որ Քրիստոսի օրը չի գա, «եթե նախ չգա ապստամբությունը, և հայտնվի անօրենսության մարդը՝ կորստի որդին, այն հակառակորդը, որ գոռո-զացած է այն ամենի վրա, որ Աստված կամ Աստծո պաշտոնյա է

ան-վանված, մինչև որ նա
Աստծո տաճարի մեջ իբրև
Աստված նստի, և իր անձը ցույց
տա, թե Աստված է»: Դեռ
ավելին, առաքյալը
զգուշացնում է իր
եղբայրներին, որ
«անօրենության խորհուրդն
արդեն զորանում է » (Բ
Թեսաղոնիկեցիս 2.3, 4,7):
Նույնիսկ այդ վաղ օրերին նա
տեսավ եկեղեցի սողոսկող այն
մոլորությունները, որոնք
ճանապարհ էին հարթելու
պապության զարգացման
համար: Սկզբում լուռ և
գաղտագողի, իսկ հետո ավելի

բացահայտ, գորանալով և
իշխանութիւնն ձեռք բերելով
մարդկանց մտքերի վրա,
«անօրենութեան խորհուրդը»
աստիճանաբար առաջ էր
տանում իր մոլորեցուցիչ և
հայհոյիչ գործը: Յեթանասական
սովորույթները գրեթե
աննկատելիորեն
ներթափանցեցին
քրիստոնեական եկեղեցի:
Փոխզիջման և
համաձայնութեան ոգին որոշ
ժամանակ կասեցվում էր
կատաղի հալածանքներով, որ
եկեղեցին կրում էր
հեթանոսներից: Բայց երբ

հսդածանքը դադարեց, և
քրիստոնեությունը մուտք
գործեց արքայական
ապարանքներն ու
պալատները, Քրիստոսի և Նրա
առաքյալների խոնարհությունն
ու պարզությունը
փոխարինվեցին հեթանոս
քահանաների և առաջնորդների
ցուցամուլությամբ ու
հպարտությամբ, իսկ Աստծո
պահանջները՝ մարդկային
տեսություններով ու
ավանդությամբ: Կոնստանտին
կայսեր ճակատ
դավանափոխությունը [50]
չորըորդ դարի սկզբին մեծ

ուրախություն առաջացրեց, և
աշխարհն արդարության քողի
տակ ներխուժեց եկեղեցի: Այդ
ապականիչ գործն արագորեն
թափ ստացավ:

Չեթանոսությունը, որն
արտաքուստ պարտված էր
թվում, իրականում հաղթող
դուրս եկավ, և եկեղեցում սկսեց
գերիշխել նրա ոգին:

Չեթանոսական ուսմունքները,
ծեսերն ու

սնտիապաշտությունը
միախառնվեցին Քրիստոսի
կոչեցյալ հետևորդների
հավատին ու պաշտամունքին:

Յեթանոսութեան ու
քրիստոնէութեան այս
միաձուլվածքից ձևավորվեց
«անօրէնութեան մարդը». ըստ
մարգարէութեան՝ Նա պիտի
հակառակվեր Աստծուն և իրեն
Նրանից վեր դասեր: Կեղծ
կրոնի այդ վիթխարի
համակարգը սատանայի
իշխանութեան գլուխգործոցն է,
գահակալելու և երկիրն իր
կամքով կառավարելու նրա
ջանքերի հուշարձանը:

Մի անգամ սատանան արդէն
փորձել է դաշինքի մեջ մտնել
Քրիստոսի հետ: Նա եկավ

փորձութեան անապատ՝ Աստուծո
Որդու մոտ, և ցույց տալով
Նրան աշխարհի բոլոր
թագավորութիւններն ու
Նրանց փառքը՝ խոստացավ
այդ ամենը Նրան տալ, եթե
միայն Նա ճանաչէր խավարի
իշխանի գերիշխանութիւնը:
Քրիստոսը կշտամբեց
ամբարտաւան փորձչին և
ստիպեց Նրան հեռանալ: Բայց
Նույն փորձութիւնները
մար-դուն ներկայացնելիս
սատանան մեծ հաջողութեան է
հասնում: Հանուն աշխարհիկ
շահի և պատվի՝ եկեղեցին
սկսեց որոնել երկրի

մեծամեծերի բարեհաճությունն
ու աջակցությունը, և այդպիսով
մերժելով Քրիստոսին՝ այն
ստիպված եղավ հպատակվել
սատանայի ներկայացուցչին՝
Յոզովի եպիսկոպոսին:

Կաթափկ ուսմունքի
կարևորագույն կետերից մեկն
այն է, որ պապը Քրիստոսի
համաշխարհային եկեղեցու
տեսանելի գլուխն է՝ օժտված
գերագույն իշխանությամբ
բոլոր եպիսկոպոսների ու
հովիվների վրա երկրի բոլոր
կողմերում: Դեռ ավելին,
պապին վերագրել են

Աստվածու-թյան տիտղոսները:
Նրան կոչել են «Տեր Աստված
Պապ» և հռչակել
անսխալական: Նա պահանջում
է բոլոր մարդկանց
երկրպագությունը: Հռոմի
եկեղեցու միջոցով սատանան
շարունակում է պնդել այն
նույն պահանջը, որ
ներկայացրել էր փորձության
անապատում, և
հազարա-վորները պատրաստ
են խոնարհվել նրա առջև: [51]

Բայց նրանք, ովքեր երկյուղում
ու պատկառում են Աստծուց,
այդ ըմբոստ ու հանդուգն

մեծամտությանը դիմավորում են այնպես, ինչպես Քրիստոսը պատասխանեց նենգ թշնամուն. «Քո Տեր Աստծուն պետք է երկրպագես և միայն նրան պաշտես» (Ղուկաս 4.8): Աստված իր խոսքում ակնարկ անգամ չի արել, թե ինչ-որ մարդու կարգել է եկեղեցու գլուխ: Պապական գերիշխանության գաղափարն ուղղակիորեն հակասում է Սուրբ Գրքի ուսմունքին: Պապը ոչ մի իշխանություն չի կարող ունենալ Քրիստոսի եկեղեցու վրա, եթե ոչ՝ զավթելով:

Կաթուղիկները համառորեն
մեղադրում են
բողոքականներին հերձ-
վածողության և ճշմարիտ
եկեղեցուց ինքնակամորեն
առանձնանալու մեջ: Բայց այս
մեղադրանքներն ավելի շուտ
իրենց են վերաբերում, քանզի
հենց իրենք են վայր դրել
Քրիստոսի դրոշն ու հեռացել
«հավատից՝ մեկ անգամ
ավանդված սուրբերին» (Յուդա
3):

Սատանան լավ գիտեր, որ
Սուրբ Գրքի շնորհիվ մարդիկ
կկարողանան զանազանել իր

խաբեություններն ու
դիմագրավել իր ատին: Այդ
խոսքով էր հենց, որ նույնիսկ
աշխարհի Փրկիչը դիմակայեց
սատանայի գրոհներին: Նրա
ամեն մի հարձակմանը
Քրիստոսը դեմ տվեց
հավերժա-կան ճշմարտության
վահանն՝ ասելով. «Գրված է»:
Թշնամու յուրաքան-չյուր
ատաջարկին Նա հակադրեց
խոսքի իմաստությունն ու
զորությունը: Եվ սատանան
տեսավ, որ մարդկանց տիրելու
և պապական զավթողա-կան
բռնատիրությանը նրանց վրա
հաստատելու համար

անհրաժեշտ է ժողովրդին
տգիտության մեջ պահել
Աստվածաշնչի հարցում:
Աստծո խոսքը մեծարում է
Աստծուն և սահմանափակ
մարդկանց ցույց է տալիս
իրենց իսկական վիճակը, ուստի
Նրա սրբազան
ճշմարտությունները հարկավոր
էր թաքցնել և լռության
մատնել: Կաթոլիկ եկեղեցին
որդեգրեց այս
տրամաբանությունը: Դարեր
շարունակ Աստվածաշնչի
տարածումն արգելված էր:
Մարդկանց թույլ չէր տրվում
կարդալ այն կամ պահել իրենց

տներում, իսկ անսկզբունքային
քահանաներն ու
կղերականները մեկնաբանում
էին այն՝ պաշտպանելով իրենց
հավակնությունները:
Այսպիսով՝ գրեթե ողջ
աշխարհի կողմից պապը
ճանաչվեց որպես Աստծո
փոխանորդ երկրում՝ օժտված
իշխանությամբ եկեղեցու և
պետության վրա:

Մոլորությունների
բացահայտիչը հեռացնելով՝
սատանան սկսեց գործել իր
կամքի համաձայն:
Մարգարեությունը հայտնել էր,

որ պա-պությունը «խորհելու է,
որ ժամանակներն ու
օրենքները փոխի» (Դանիել
7.25): Եվ նա [52] չհետաձգեց
այդ փորձը: Մարդկանց
հեթանոսությունից
ձևականորեն քրիստոնեության
բերելու նպատակով կոտքերի
պաշտամունքի փոխարեն
քրիստոնեական
երկրպագության մեջ
աստիճանաբար ներմուծվեց
սրբապատկերների և
մասունքների պաշտամունքը:
Տիեզերական ժողովը
վերջնականապես հաստատեց
կռապաշտության այս

համակարգը: Այդ սրբապիղծ
գործը ավարտին հասցնելու
համար Յռոմը հանդգնեց
Աստծո օրենքից հանել երկրորդ
պատվիրանը, որն արգելում է
երկրպագությունը
պատկերների, իսկ
տասներորդը՝ բաժանել երկու
մասի՝ պատվիրանների թիվը
պահպանելու համար:

Յեթանոսությանը զիջելու ոգին
նպաստեց նրան, որ երկնքի
իշխանությունը գնալով էլ
ավելի արհամարիվեց:
Գործելով եկեղեցու ան- սուրբ
առաջնորդների միջոցով՝

սատանան ոտնակոխ արեց
նաև չորըորդ պատվիրանը՝
փորձելով վերացնել հնագույն
շաբաթը, օր, որն Աստված
օրհնել ու սրբել էր (Ճննդոց 2.2,
3), և դրա փոխարեն մեծարել
հեթանոսական տոներ՝
«արեգակի պատվարժան օրը»:
Այս փոփոխության փորձը
սկզբում բացահայտ չէր:
Առաջին դարերում ճշմարիտ
շաբաթը պահում էին բոլոր
քրիստոնյաները: Նրանք
ջերմեռանդորեն պատվում էին
Աստծուն և, հավատալով Նրա
օրենքի անփոփոխելիությանը,
ջանասիրաբար պահում էին

պատվիրանների սրբությունը:
Բայց սա-տանան գործում էր
մեծագույն խորամանկությամբ
և զգուշությամբ՝ ջանալով իր
գործակալների միջոցով հասնել
իր նպատակին: Մարդկանց
ուշադրությունը կիրակիի վրա
հրավիրելու նպատակով այն
տոնական օր հայտարարվեց՝ ի
պատիվ Քրիստոսի հարության:
Այդ օրը պաշտամունքներ էին
անցկացվում, ու թեև այն
հանգստի օր էր հա-մարվում,
շաբաթը դեռևս սրբությամբ
պահում էին:

Իր մտադրությունն
իրականացնելու համար
սատանան, մինչև Քրիստոսի
գալը, հրեաներին դրդել էր
շաբաթը ծանրաբեռնել
ամենա-խիստ
սահմանափակումներով՝
անտանելի բեռ դարձնելով այն
պահելը: Եվ հիմա, երբ նրան
հաջողվեց կեղծ պատկերացում
ստեղծել շաբաթի մասին, նա
նախատինք բերեց դրա վրա՝
ներկայացնելով այն որպես
հրեական հաստատություն:
Մինչ քրիստոնյաների մեծ
մասը շարունակում էր
կիրակին նշել որպես ուրախալի

տոն, սատանան նրանց դրդեց,
հուդաիզմի հանդեպ իրենց
ատելությունը ցույց տալու [53]
համար, շաբաթը դարձնել ծոմի,
վշտի և տրտմության օր:

Չորըորդ դարի սկզբին
Կոնստանտին կայսրը հրաման
արձակեց, ըստ որի՝ կիրակին
ժողովրդական տոն հռչակվեց
Յոթնեական ողջ կայսրության
տարածքում: Արեգակի օրը
պաշտվում էր նրա հեթանոս
հպատակների և մեծարվում՝
քրիստոնյաների կողմից, և
կայսեր քաղա-քականությունն
էր՝ միավորել հեթանոսության

ու քրիստոնեության
իրա-րամերժ շահերը: Նրան
այդ քայլին մղեցին եկեղեցու
եպիսկոպոսները, ովքեր, լցված
փառամոլությամբ և
իշխանության տենչով,
հասկանում էին, որ եթե
քրիստոնյաներն ու
հեթանոսները տոնեն նույն օրը,
դա կնպաստի հեթանոսների
կողմից քրիստոնեության
ձևական ընդունմանը և,
այդպիսով, կնպաստի եկեղեցու
իշխանության ու փառքի աճին:
Բայց մինչ շատ աստվածավախ
քրիստոնյաներ աստիճանաբար
սկսեցին որոշ սրբություն

վերագրել կիրակի օրվան,
Նրանք, այնուհանդերձ, դեռևս
շարունակում էին իսկական
շաբաթը Տիրոջ սուրբ օրը
համարել և պահել այն՝
հնազանդվելով չորրորդ
պատվիրանին:

Մեծ խաբեքան դրանով
չավարտեց իր գործը: Նա վճռեց
քրիստոնեական ողջ աշխարհը
հավաքել իր դրոշի ներքո և իր
իշխանությունը բանեցնել իր
փոխանորդի՝ հպարտ պապի
միջոցով, ով իրեն Քրիստոսի
ներկայացուցիչն էր հռչակել:
Կիսադարձ հեթանոսների,

սնապարծ կղերականների և
աշխարհասեր կրոնավորների
միջոցով սատանան իրագործեց
իր մտադրութիւնը: Ժամանակ
առ ժամանակ մեծ
տիեզերածողովներ էին
գումարվում, որոնց
մասնակցում էին
բարձ-րաստիճան
հոգևորականներ ամբողջ
աշխարհից: Աստծո սահմանած
շաբաթը գրեթէ յուրաքանչյուր
ժողովում ավելի էր
նվաստացվում, մինչդեռ
կիրակին գնալով մեծարվում
էր: Այսպիսով, հեթանոսական
տոնն, ի վերջո, սկսեցին

պատվել որպես աստվածային
պատվիրան, բիբլիական
շաբաթը հայտարարվեց որպես
հուդաիզմի մնացուկ, իսկ
շաբաթապահներին նզովյալ
հռչակեցին:

Մեծ խռովարարին հաջողվեց
բարձրացնել իրեն «այն ամենի
վրա, որ Աստված կամ Աստծո
պաշտոնյա է անվանված» (Բ
Թեսաղոնիկեցիս 2.4): Նա
հանդգնեց փոխել
աստվածային օրենքի միակ
պատվիրանը, որն ամբողջ
մարդկությանը անսխալ
կերպով մատնացուլց է անում

ճշմարիտ և կենդանի Աստծուն:
Չորըորդ պատվիրանում
Աստված [54] ներկայանում է
որպես երկնքի և երկրի Արարիչ,
և հենց դրանով է Նա
տարբերվում կեղծ
աստվածներից: Յոթերորդ օրը
սրբվել և հանգստյան օր է
սահմանվել մարդու համար՝
որպես արարչագործության
հուշարձան: Այն միշտ պիտի
մարդկանց հիշեցնի կենդանի
Աստծուն՝ որպես գոյության
աղբյուրի և ակնածանքի ու
երկրպագության առարկայի:
Սատանան ձգտում է հետ
պահել մարդկանց Աստծուն

հավատարիմ լինելուց և Նրա
օրենքը պահելուց, ուստի և իր
ջանքերը հատկապես այն
պատվիրանի դեմ է ուղղում,
որն Աստծուն որպես Արարիչ է
Ներկայացնում:

Ներկայումս բողոքականները
պնդում են, թե Քրիստոսի
հարուժյունը կիրակի օրը
դարձրել է քրիստոնեական
շաբաթ, բայց առանց
սուրբգրային հիմնավորման:
Ո՛չ Քրիստոսը, ո՛չ էլ Նրա
առաքյալները կիրակին չեն
արժանացրել այդ պատվին:
Կիրակի օրը պահելը՝ որպես

քրիստոնեական
հաստատություն, իր ծագումով
պարտական է հենց
«անօրենության խորհրդին» (Բ
Թեսաղոնիկեցիս 2.7), որն իր
գործը սկսել էր դեռ Պողոսի
օրերում: Սրտե՞ղ և և՞րբ է Տերը
որդեգրել պապության այս
զավակին: Ի՞նչ իրավունքով է
կատարվել այն
փոփոխությունը, որը
վավերացված չէ Սուրբ Գրքում:

Պապությունը
վերջնականապես հաստատվեց
վեցերորդ դարում: Նրա
իշխանության գահը հիմնվեց

կայսերական քաղաքում, և Յո-
մի եպիսկոպոսը
քրիստոնեական ողջ եկեղեցու
գլուխ հռչակվեց:
Յեթանոսությունն իր տեղը
զիջեց պապությանը: Վիշապը
գազանին տվեց «իր
զորությունը, աթոռը և մեծ
իշխանություն» (Յայտնություն
13.2): Եվ սկսվեցին պապական
հալածանքների 1260
տարիները, որոնք կանխասված
էին Դանիելի և Յայտնության
մարգարեություններում
(Դանիել 7.25, Յայտնություն
13.5-7): Քրիստոնյաները
կանգնեցին ընտրության առջև:

Նրանք կամ պետք է
հրաժարվեին իրենց
համոզմունքներից և ընդունեին
պապական ծեսերն ու
պաշտամունքը, կամ էլ պիտի
իրենց կյանքը մաշեին
զնդաններում, կախաղան
բարձրացվեին, այրվեին
խարույկների վրա և
գլխատվեին: Իրականացան
Յիսուսի խոսքերը. «Դուք պիտի
մատնվեք և ծնողներից, և
եղբայրներից, և
ազգականներից, և
բարեկամներից, ու ձեզանից
ոմանց կսպանեն: Եվ բոլորին
ատելի կլինեք իմ անունի

համար» (Ղուկաս 21.16,17):
Չալածանքներն այժմ ավելի
կատաղորեն բորբոքվեցին,
քան երբեք նախկինում, [55] և
աշխարհը մի հսկայական
մարտադաշտի վերածվեց:
Դարեր շարունակ Քրիստոսի
եկեղեցին ապաստարան էր
գտել մեկուսացման ու
անհայտության մեջ:
Մարգարեն ասում է. «Եվ կինը
փախավ անապատ, ուր նրան
տեղ էր պատրաստվել
Աստծուց, որպեսզի այնտեղ
կերակրվի հազար երկու
հարյուր վաթսուև օր»
(Չայտնություն 12.6):

Երբ Յոնի եկեղեցին
իշխանության եկավ, սկիզբ
դրվեց խավար Միջնադարին:
Ու երբ նա գորացավ, խավարը
գնալով սկսեց ավելի
թանձրանալ: Հավատը
Քրիստոսից՝ ճշմարիտ
հիմնաքարից, ուղղվեց դեպի
Յոնի պապը: Մեղքերի ներման
և հավիտենական փրկության
համար Աստծո Որդուն դիմելու
փոխարեն ժողովուրդը սկսեց
նայել պապին, ինչպես նաև
քահանաներին ու
պրելատներին, ում պապը
լիազորում էր: Նրանց

սովորեցնում էին, որ պապն
իրենց երկրային միջնորդն է, և
առանց նրա ոչ ոք չի կարող
մոտենալ Աստծուն, ու դեռ
ավելին՝ որ նա նրանց համար
փոխարինում է Աստծուն,
ուստի և նրան պետք է
անվերապահորեն
հնազանդվել: Բավական էր
միայն շեղվել նրա
պահանջներից, որպեսզի
մեղավորների մարմիններն ու
հոգիները ենթարկվեին
ամենադաժան պատիժների:
Այսպիսով՝ ժողովրդի միտքը
շեղվում էր Աստծուց դեպի
սխալական, մոլորյալ ու դաժան

մարդիկ, և ավելին՝ դեպի
անձամբ խավարի իշխանը, ով
նրանց միջոցով դրսևորում էր
իր ուժը: Մեղքը ծածկվեց
սրբության քողով: Երբ
Աստվածաշունչն արգելվում է,
և մարդն իրեն ամենից վեր է
դասում, արդյունքում կլինեն
միայն խարդախություն,
խաբեություն և քայքայիչ
անօրենություն: Մարդկային
օրենքների և ավանդույթների
մեծարումը հանգեցրեց
ապականության, ինչը միշտ
հետևում է Աստծո օրենքի
ոտնահարմանը:

Դրանք վտանգավոր օրեր էին
Քրիստոսի եկեղեցու համար:
Չավատարիմ դրոշակիրները
շատ սակավաթիվ էին: Թեև
ճշմարտությունը երբեք չի
թողնվել առանց վկաների,
երբեմն թվացել է, թե
մոլորությունն ու
սնահավատությունը լիովին
կհաղթանակեն, և ճշմարիտ
կրոնը կջնջվի երկրից:
Ավետարանը մոռացության էր
տրվել, կրոնական ծեսերը
բազմապատկվել էին, և
ժողովուրդը ճնշվում էր դաժան
սահմանափակումների բեռան
տակ:

Մարդկանց սովորեցնում էին ոչ
միայն պապին իրենց միջնորդ
համարել, այլև հավատալ, որ
իրենց գործերով կարող են
քավել իրենց մեղքերը: Երկար
ու հոգնեցուցիչ
ուխտագնացություններ,
զղջումներ, երկրպագություն
մասունքներիս, [56]
եկեղեցիների, տաճարների,
զոհասեղանների կառուցում,
մեծ գումարների վճարում
եկեղեցուն՝ այս և շատ այլ
նման բաներ էին պահանջվում
Աստծո ցասումը մեղմացնելու
կամ Նրա բարեհաճության

արժանանալու համար, կարծես
Աստված մարդ էր, որ աննշան
բաներից զայրանար և
հանդարտվեր նվերներից ու
զղջումից:

Չնայած համատարած
անօրենուլթյանը, որ տիրում էր
Նույնիսկ Յոնի եկեղեցու
առաջնորդների մեջ, նրա
ազդեցությունն, ասես,
անընդհատ աճում էր: Մոտ
ութերորդ դարի վերջում
պապականները սկսեցին
պնդել, թե եկեղեցու ստեղծման
առաջին իսկ դարերում Յոնի
եպիսկոպոսներն ունեցել են

Նույն հոգևոր իշխանությունը,
ինչը որ հիմա իրենց էին
վերապահում: Այս պնդումը
հիմնավորելու համար
անհրաժեշտ էր որոշ միջոցներ
ձեռնարկել, և ստության հայրը
սիրով օգնության եկավ:
Վանականները կեղծեցին հին
ձեռագրերը: Հայտնաբերվեցին
տիեզերածողովների մինչ այդ
անհայտ որոշումներ, որոնք,
իբր թե, հաստատում էին
պապի համաշխարհային
գերիշխանությունն
ամեն-նավադ ժամանակներից:
Եվ եկեղեցին, որ մերժել էր

ճշմարտությունը, ազահորեն
ընդունեց այդ խաբեությունը:

Երբ կեղծ ուսմունքի աղբը
սկսեց խանգարել գործին, ճիշտ
հիմքի վրա կանգնած մի քանի
նվիրյալ շինարարներ (Ա
Կորնթացիս 3.10,11)

շփոթվեցին ու կանգ առան:

Ոմանք, Նենմիայի օրերում

երուսաղեմի պարիսպը

կառուցողների նման,

պատրաստ էին ասել.

«Բեռնակիրների ուժը թուլացել

է, աղբն էլ շատ է, և մենք չենք

կարողանում պարիսպը

կառուցել» (Նենմիա 4.10):

Յոգնած հալածանքների դեմ
մշտական պայքարից,
խաբեությունից,
անօրենսությունից և բոլոր մյուս
արգելք-ներից, որ սատանան
դնում էր՝ կասեցնելու նրանց
առաջընթացը, որոշ
հավատարիմ շինարարներ
հուսահատվեցին և, հանուն
իրենց կյանքի խաղաղության
ու իրենց ունեցվածքի
ապահովության, թողեցին
հավատի ճշմարիտ հիմքը:
Մյուսները, չվախենալով
թշնամիների դիմադրությունից,
աներկյուղ հայտարարեցին՝
«Նրանց երեսից մի վախեցեք,

հիշեք մեծ և ահեղ Տիրոջը»
(Նենմիա 4.14) և շարունակեցին
իրենց գործը՝ գոտևորված
ճշմարտության սրով
(Եփեսացիս 6.17):

Ճշմարտության նկատմամբ
ատելության և ընդդիմության
նույն ոգով են ներշնչված եղել
Աստծո թշնամիները բոլոր
դարերում, և Նրա [57]
ծառաներից պահանջվել է
պահպանել մինևույն
զգոնությունն ու
հավատարմությունը: Առաջին
աշակերտներին ասված
Քրիստոսի խոսքերը

վերաբերում են Նրա բոլոր
հետևորդներին՝ մինչև
աշխարհի վերջը. «Ինչ որ ձեզ
եմ ասում, ամենքին եմ ասում՝
արթուն կացեք» (Մարկոս
13.37):

Խավարը գնալով ասես ավելի
էր թանձրանում:

Սրբապատկերներին
երկրպագելը համատարած
երևույթ դարձավ: Պատկերների
առաջ մոմեր էին վառում և
աղոթում դրանց: Գերիշխում
էին ամենաանհեթեթ ու
սնահավատ սովորություններ:
Մարդկանց միտքն այնպես էր

գերված սնահավատությամբ,
որ թվում էր, թե կորցրել են
բանականությունը: Եթե
ժողովրդի առաջնորդները՝
քահանաներն ու
եպիսկոպոսները, իրենք իսկ
զվարճասեր էին ու
այլատերված, էլ ի՞նչ կարելի էր
սպասել ժողովրդից, որը,
տգիտության ու արատների մեջ
թաղված, նրանց էր նայում՝
առաջ-նորդվելու համար:

Պապությունը մի մեծամիտ քայլ
ևս արեց, երբ տասնմեկերորդ
դա-րում Գրիգորի VII պապը
Յռոմի եկեղեցին հռչակեց

անսխալական: Ի թիվս այլ
պնդումների, նա հայտարարեց
Նաև, որ եկեղեցին, ըստ Սուրբ
Գրքի, երբեք չի սխալվել ու
երբեք չի սխալվելու: Բայց այդ
պնդումը չէր հաստատվում
Աստվածաշնչով: Հպարտ
պապը հավակնում էր, որ
իշխանություն ունի գահընկեց
անելու կայսրերին՝
հայտարարելով, թե իր
վճիռները ոչ ոք իրավասու չէ
բեկերու, և որ իր բացառիկ
իրավունքն է՝ անվավեր
դարձնելու բոլոր մյուսների
որոշումները:

Անսխալականութեան այս
ջատագրովի բռնատիրական
բնավորութիւնը ցայտուն
կերպով դրսևորվել է
Գերմանիայի կայսր Յենրիխ
IV-ի հանդեպ: Հանդգնելով
արհամարհել պապի
հեղինակութիւնը՝ այդ
միապետը հեռացվեց եկեղեցուց
և գահընկեց արվեց: Պապի
որոշումից քաջալերված՝ նրա
իշխանները ապստամբել էին
նրա դեմ, և Յենրիխ կայսրը,
սարսափած իր իշխանների
խռովութիւննից ու սպառ-
նալիքներից, հասկացաւ, որ
պետք է հաշտվի Յոնմի հետ: Իր

կնոջ և հավատարիմ ծառայի
ուղեկցութեամբ նա ձմեռվա
կեսին անցավ Ալպերը՝
խոնարհվելու պապի առաջ:
Չասնելով ամրոցը, որտեղ
գտնվում էր Գրիգորին, նա
առանց իր պահապանների
բերվեց արտաքին բակ, որտեղ
ձմեռվա դաժան
սառնամանիքին բաց գլխով,
[58] ոտաբոբիկ և խղճուկ
հագուստով սպասում էր
պապին ներկայանալու
թույլտվութեանը: Պապը
բարեհաճեց ներել նրան միայն
այն բանից հետո, երբ նա երեք
օր ծով պահեց ու խոստովանեց

իր մեղքերը: Եվ նույնիսկ
դրանից հետո՝ նախքան
կվերադարձներ իր օրդենը և
կվերադառնար իր արքայական
իշխանությանը, Յենրիխը
պիտի սպասեր պապի
հրամանին: Ցնծալով այս
հաղթանակից՝ Գրիգորին
պարծենում էր, որ իր գործը
թագավորների հպարտությունը
կոտրելն է:

Ի՞նչ ապշեցուցիչ
հակադրություն այս
ամբարտավան պապի չլսված
գոռոզության և Քրիստոսի
հեզության ու խոնարհության

միջև, ով թակում է սրտի դուռն՝
աղաչելով, որ իրեն ներս
թողնեն, որպեսզի ներում և
խաղաղություն բերի, և ով իր
աշակերտներին ասել է.

«Ձեզանից ով որ կամենա մեծ
լինել, թող ձեր ծառան լինի»
(Մատթեոս 20.27):

Չետագա դարերը
նշանավորվեցին Յոհանի
առաջարկած կեղծ
ուսմունքների մշտական աճով:
Նույնիսկ մինչև պապության
հաստատու-մը հեթանոս
փիլիսոփաների ուսմունքները
ուշադրության են արժանացել

Եկեղեցում՝ իրենց
ազդեցութեանը թողնելով նրա
վրա: Շատերը, թեև իրենց
քրիստոնյա էին համարում, դեռ
շարունակում էին կառչել
հեթանոսական
փիլիսոփայութեան
գաղափարներից, և ոչ միայն
իրենք էին ուսումնասիրում
դրանք, այլ ուրիշներին էլ էին
դրո՞ղում այդ անել՝ իրենց
ազդեցութեանը հեթանոսների
մեջ տարածելու համար:
Այդպես քրիստոնեական
հավատի մեջ լուրջ
մոլորութեաններ
ներմուծվեցին: Դրանցից

առաջնայինը հավատն էր
մարդու բնածին
անմահությանը և մահվան մեջ
նրա գիտակից վիճակին: Այս
ուսմունքի վրա Յոնանը հիմնեց
սուրբերի բարեխոսությունն ու
երկրպագությունը կույս
Մարիամին: Դրանից ծագեց
նաև անգեղջների
հավիտենական տանջանքների
մասին հերձվածողությունը,
որն ամենավաղ
ժամանակներում ներմուծվեց
պապական հավատի մեջ:

Այնուհետև ճանապարհ
հարթվեց մեկ այլ

հեթանոսական հորին-վածքի
համար, որը Յոնմն անվանեց
քավարան և ղրանով սկսեց
ահաբե-կել Էլյուրահավատ ու
սնոտիապաշտ ամբոխին: Այս
հերձվածողության համաձայն՝
գոյություն ունի տանջանքի մի
վայր, ուր նրանց հոգիները,
ովքեր չեն արժանացել
հավիտենական անեծքի, պետք
է պատժվեն իրենց մեղքերի
համար, [59] և ապա այնտեղից,
արատներից մաքրված,
ընդունվեն երկինք:

Իր հպատակների վախից ու
արատներից օգուտ քաղելու

համար Յոռմը ևս մի կեղծիքի
կարիք ուներ՝
ինդուլգենցիաների մասին
ուսմունքը: Անցյալ, ներկա և
ապագա մեղքերի լիակատար
թողութուն և բոլոր ցավերից ու
պատիժներից ազատում էր
խոստացվում նրանց, ովքեր
կմասնակցեին պապի վարած
պատերազմներին, որոնց
նպատակն էր՝ տարածել նրա
աշխարհիկ տիրապետությունը,
պատժել նրա թշնամիներին
կամ ոչնչացնել նրա հոգևոր
գերիշխանությունը
մերժողներին: Մարդկանց
սովորեցնում էին նաև, որ,

Եկեղեցուն գումար վճարելով,
կարող են իրենք ազատվել
մեղքից, ինչպես նաև ազատել
բոցերի մեջ տանջվող իրենց
հանգուցյալ մերձավորների
հոգիները: Այսպես Էր Յոնմը
լցնում իր գանձարանը՝
նպաստելով Նրա ինքնակոչ
ներկայացուցիչների շքեղ, ցոփ
ու շվայտ կյանքին, ով իր
գլուխը դնելու տեղ չունեն:

Տիրոջ Ընթրիքի սուրբգրային
դրվածքին փոխարինեց
պատարագի կռապաշտական
զոհաբերությունը: Պապական
քահանաները պնդում էին, թե

իրենց անհեթեթ մնչախաղով
կարող են սովորական հացն ու
գինին փոխակերպել Քրիստոսի
«իսկական մարմնի և արյան»
(Կարդինալ Ուայզման, Մեր Տեր
Չիտու Քրիստոսի իսկական
մարմնի և արյան
ներկայութիւնը երանելի
Եվխարիստիայում՝
ապացուցված Սուրբ Գրքից,
դասախոսութիւն 8, մաս 3,
պարբ. 26): Չայիոյիչ
մեծամտութեամբ նրանք
բացեիբաց պնդում էին, որ
գորութիւնն ունեն ստեղծելու
Աստծուն՝ ամեն ինչի Արարչին:
Մահվան սպառնալիքի տակ

քրիստոնյաներից պահանջվում
էր հավատալ այդ զարհուրելի,
երկնքի դեմ ըմբոստացող
հերձվածողությանը:
Ջրաժարվողները հազարներով
կրակի էին մատնվում:

Տասներեքերորդ դարում
ստեղծվեց պապության բոլոր
զենքերից ամենասուսկալին՝
Ջավատաքննությունը
(ինկվիզիցիա): Պապական
նվիրապետության
առաջնորդներին գործակցում
էր ինքը՝ խավարի իշ-խանը:
Նրանց գաղտնի ժողովներում
սատանան և նրա

հրեշտակները վերահսկում էին
չար մարդկանց միտքը, մինչ
Աստծո անտեսանելի հրեշտակն
արձանագրում էր նրանց
ամբարիշտ հրամանագրերն ու
արարքները, որոնք չափազանց
զարհուրելի էին մարդկանց
աչքերին երևալու համար: «Մեծ
Բաբելոնը» հարբած էր
«սուրբերի արյունով»:
Միլիոնավոր նահատակների
խեղված դիերն [60]
աղաղակում էին Աստծուն՝
վրեժ առնելու այդ ուխտադրուժ
իշխանությունից:

Պապութիւնը դարձել էր
աշխարհի բռնակալը:
Թագավորներն ու կայսրերը
ենթարկվում էին Յոզեփի
քրմապետի հրամաններին:
Թվում էր, թէ մարդկանց
ժամանակավոր ու
հավիտենական ճակատագրերը
նրա իշխանութեան տակ են:
Հարյուրամյակներ շարունակ
շատերն աննկատելիորեն
ընդունում էին Յոզեփի
ուսմունքը, ակնածանքով
կա-տարում էին նրա ծեսերը և
նշում տոները:
Հոգևորականութեանը
պատ-վում էին և ամեն կերպ

աջակցում: Այդ ժամանակից ի վեր Յռոմի եկեղեցին այլևս նման փառքի, շքեղության և իշխանության չի հասել:

Բայց «պապության կեսօրն աշխարհի կեսգիշերն էր» (Ջ. Ա. Ուայլի, Բողոքականության պատմությունը, և. 1, գլ. 4): Սուրբ Գիրքը գրեթե անձանոթ էր ոչ միայն ժողովրդին, այլև քահանաներին: Յին օրերի փարիսեցիների նման՝ պապական առաջնորդներն ատում էին իրենց մեղքերը բացահայտող լույսը: Ոտնահարելով Աստծո օրենքը՝

արդարութեան չափանիշը,
նրանք առանց
սահմանափակման սկսեցին
բանեցնել իրենց
իշխանութիւնը և անարգել
տրվեցին անառակութեան:
Ամենուրեք ծաղկում էին
խաբեութիւնը, ագահութիւնը
ու անբարոյականութիւնը:
Մարդիկ չէին խորշում ոչ մի
հանցանքից, որով կարող էին
հարստութիւն կամ պաշտոն
ձեռք բերել: Պապերի և
կղերականների պալատներն
ամենագարշելի
խրախճանքների տեսարան էին
ներկայացնում: Իշխող

պապերից ոմանք հանցավոր
էին այնպիսի նողկալի մեղքերի
մեջ, որ աշխարհիկ
իշխանավորները ջանում էին
պաշտոնանկ անել նրանց՝
որպես պիղծ հրեշների, որոնց
այլևս հնարավոր չէր
հանդուրժել: Եվրոպան ամբողջ
դարեր առաջընթաց չունեցավ
գիտութեան,
քաղաքակրթութեան կամ
արվեստի ոլորտներում:
Քրիստոնյա աշխարհը
բարոյապես ու մտավորապես
կաթվածահար էր ելել:

Յոռմի իշխանության տակ
գտնվող աշխարհի վիճակը
Ովսե մար-գարեի այս խոսքերի
սուկալի և ապշեցուցիչ
իրականացումն էր. «Իմ
ժողովուրդը բնաջինջ եղավ
գիտություն չունենալու
համար: Որովհետև դու
մերժեցիր գիտությունը, ես էլ
քեզ եմ մերժելու... Դու
մոռացար քո Աստծո օրենքը, ես
էլ քո որդիներին եմ
մոռանալու»: «Ճշմարտություն
չկա, ողորմություն չկա, և
Աստծո գիտություն չկա երկրի
մեջ: Երդվելն ու ստելը,
սպանելը, գողանալն ու

պոռնկանալը դուրս են թափվել,
և արյուններն արյունների են
հասնում» (Ովսե 4.6, 1, 2):
Այսպիսին էին Աստծո խոսքը
մերժելու հետևանքները:

ԳԼՈՒԽ 4—ՎԱԼԴԵՆՍՆԵՐԸ

Խավարի մեջ, որով պատված
Էր երկիրը պապական
գերիշխանության երկար
դարերի ընթացքում,
ճշմարտության լույսը չէր
կարող լիովին մարել: Բոլոր
դարերում էլ եղել են Աստծո
վկաներ, մարդիկ, ովքեր
հավատացել են Քրիստոսին՝
որպես Աստծո և մարդու միջև
միակ միջնորդի, ովքեր
Աստվածաշունչը համարել են
կյանքի միակ չափանիշը և
պահել ճշմարիտ շաբաթը:
Սերունդները երբեք չեն

իմանա, թե որքան է աշխարհը
պարտական այդ մարդկանց:
Նրանց հերետիկոսներ են կոչել,
նրանց դրդումները կասկածի
տակ առել, բնավորությունը
վարկաբեկել, գրվածքներն
արգելել, սխալ ներկայացրել և
խեղաթյուրել: Սակայն նրանք
մնացել են անսասան և դարերի
ընթացքում անաղարտ են
պահել իրենց հավատը՝ որպես
սրբազան ժառանգություն
գալիք սերունդների համար:

Աստծո զավակների
պատմությունն այն խավար
դարերի ընթացքում, որ

հետևեցին Յոնի
գերիշխանությանը, գրված է
երկնքում, բայց մարդիկ նրանց
քիչ տեղ են հատկացրել իրենց
տարեգրություններում: Նրանց
գոյության մասին ընդամենը
որոշ հետքեր են պահպանվել,
այն էլ՝ նրանց հալածողների
մեղադրական ակտերում:
Յոնի քաղաքականությունն
էր՝ ջնջել իր ուսմունքների կամ
հրամանագրերի հետ
տարածայնության բոլոր
հետքերը: Նա ջանում էր
ոչնչացնել թե՛
հերետիկոսներին, թե՛ նրանց
գրվածքները: Կասկած

արտահայտելը կամ պապական
դոգմաների հեղինակության
վիճարկումը բավական էր, որ
կյանքից զրկեին հարուստին թե
աղքատին, պաշտոնյային թե
աշխատավորին: Յոռմը ջանում
էր նաև ոչնչացնել
այլախոհների հանդեպ
ցուցաբերած իր դաժանության
ամեն մի արձանագրություն:
Պապական ժողովները
հռչակում էին, որ այդպիսի
բովանդակություն ունեցող
գրքերն ու գրությունները [62]
պետք է այրվեն: Նախքան
տպագրության
հայտնագործումը՝ գրքերը

սակավաթիվ էին և անհարմար՝
պահպանելու համար: Ուստի
գրեթե ոչինչ չէր խանգարում
պապականներին՝
իրականացնելու իրենց
մտադրությունը:

Յոմի տիրապետության
սահմաններում գտնվող ոչ մի
եկեղեցի չէր կարող երկար
ժամանակ անարգել խղճի
ազատություն վայելել:
Իշխանության գալուց
անմիջապես հետո
պապությունն իր ձեռքը մեկնեց՝
ջախջախելու բոլորին, ովքեր
հրաժարվում էին ճանաչել իր

գերիշխանությունը, և
եկեղեցիները մեկը մյուսի
հետևից հնազանդվեցին նրան:

Մեծ Բրիտանիայում
Նախասկզբնական
քրիստոնեությունը շատ
վաղուց էր արմատներ գցել:
Ավետարանը, որը
բրիտանացիների կողմից
ընդունվել էր դեռևս առաջին
դարերում, այդ ժամանակ դեռ
աղավաղված չէր Յոզովի
ուրացությունը: Հեթանոս
կայսրերի հալածանքները,
որոնք հասան նույնիսկ այս
հեռավոր ափերը, միակ նվերն

Էին, որ Բրիտանիայի առաջին
եկեղեցիները ստացան Յոզմից:
Յալաճանքների պատճառով
շատ քրիստոնյաներ,
փախչելով Անգլիայից,
ապաստանեցին
Ճոտլանդիայում, որտեղից էլ
ճշմարտությունը թափանցեց
Իռլանդիա, և այս բոլոր
երկրներում այն ուրախությամբ
էր ընդունվում:

Երբ սաքսոնները ներխուժեցին
Բրիտանիա, հեթանոսությունն
այն-տեղ գլուխ բարձրացրեց:
Չավթիչներն իրենց
արժանապատվությունից ցածր

Էին համարում իրենց
ծառաներից սովորելը, և
քրիստոնյաները ստիպված էին
հեռանալ լեռներն ու վայրի
ճահճուտները: Սակայն, որոշ
ժամանակով թաքցված լույսը
շարունակում էր շողալ:
Շոտլանդիայում այն մեկ դար
անց բոցավառվեց այնպիսի
պայծառությամբ, որ հասավ
մինչև հեռավոր երկրները:
Իռլանդացի բարեպաշտ
Կոլոմբան ու նրա
գործակիցները, իրենց շուրջը
հավաքելով ցրված
հավատացյալներին մեկուսի
հոնա կղզում, այն իրենց

ավետարանչական
գործունեության կենտրոնը
դարձրին: Այդ
ավետարանիչների մեջ կար
մեկը, ով պահում էր
աստվածաշնչյան շաբաթը, և
նրա միջոցով այս
ճշմարտությունը տարածվեց
ժողովրդի մեջ: Իոնայում մի
դպրոց բացվեց, որն իր
ավետարանիչներին ուղարկում
էր ոչ միայն Շոտլանդիա և
Անգլիա, այլև Գերմանիա,
Շվեյցարիա և Նոլյնիսկ
Իտալիա:

Բայց Յոնմի աչքը Բրիտանիայի
վրա էր, և նա վճռեց
հնազանդեցնել նրան իր
իշխանությանը: Վեցերորդ
դարում կաթոլիկ
ավետարանիչները
նախաձեռնեցին հեթանոս
սաքսոններին դարձի բերելու
գործը: [63] Նրանք
բարեհաճությամբ ընդունվեցին
հպարտ բարբարոսների
կողմից, և հազարավորներին
համոզեցին դավանել Յոնմի
եկեղեցու հավատը: Այդ
ընթացքում պատահում էր, որ
պապական առաջնորդներն ու
նրանց նորադարձները

հանդիպում էին ճշմարիտ
քրիստոնյաների:
Տարբերությունը նրանց միջև
ապշեցուցիչ էր: Վերջինները
պարզ էին, խոնարհ, և նրանց
բնավորությունը, ուսմունքն ու
վարքը կրում էին Սուրբ Գրքի
ագդեցության կնիքը, մինչդեռ
առաջիններն արտացոլում էին
պապության
սնահավատությունը,
հպարտությունն ու
ամբարտավանությունը: Հռոմի
գործակալը պահանջեց, որ
քրիստոնեական այս
եկեղեցիները ճանաչեն պապի
գերիշխանությունը:

Բրիտանացիները հեզությամբ
պատասխանեցին, որ
փափագում են սիրել բոլոր
մարդկանց և ամենքի հետ
ապրել խաղաղությամբ,
սակայն պապը լիազորված չէ
իշխելու եկեղեցու վրա, ուստի
իրենք կարող են հնազանդվել
Նրան այնքանով միայն,
որքանով կհնազանդվեին
Քրիստոսի ցանկացած
հետևորդի: Անդադար փորձեր
էին արվում՝ ապահովելու
Նրանց հա-վատարմությունը
Յռոմին, բայց այս խոնարհ
քրիստոնյաները, զարմացած
Յռոմի գործակալների

հպարտութեան վրա,
հաստատակամորեն
պատասխանեցին, թե
Քրիստոսից բացի ուրիշ տեր չեն
ճանաչում: Այդ ժամանակ
դրսևորվեց պապութեան
իսկական ոգին: Հռոմեական
առաջ-նորդն ասաց. «Եթե դուք
չեք կամենում ընդունել
եղբայրների, ովքեր ձեզ
խաղաղություն են բերում,
ապա կընդունեք թշնամիների,
ովքեր ձեզ պատերազմ կբերեն:
Եթե դուք չեք ուզում միանալ
մեզ՝ սաքսոններին՝ կյանքի
ճանապարհը ցույց տալու
համար, ապա նրանցից

մահացու հարված կստանաք»
(Ջ. Ա. Դ՝Օբինյե, XVI դարի
Բարենորոգման
պատմությանը, Ա. 17, գլ. 2):
Սրանք լույ դատարկ
սպառնալիքներ չէին:
Պատերազմներ,
դավադրություններ ու
խաբեություն գործադրվեցին
աստվածաշնչյան հավատի այս
վկաների դեմ, մինչև որ
բրիտանական եկեղեցիները
ոչնչացվեցին կամ ստիպված
եղան հնազանդվել պապի
իշխանությանը:

Յոռմի իրավասությունից դուրս
գտնվող երկրներում երկար
դարերի ընթացքում եղել են
քրիստոնեական համայնքներ,
որոնք կատարելապես զերծ էին
մնացել պապության
այլասերումից: Նրանք
շրջապատված են եղել
հեթանոսներով և ժամանակի
ընթացքում ընկել են նրանց
մոլորությունների
ազդեցության տակ, սակայն
շարունակել են
Աստվածաշունչը համարել
հավատի միակ չափանիշը և
պահել շատ
ճշմարտություններ: Այս

քրիստոնյաները հավատացել են, որ Աստծո օրենքն անփոփոխ է և պահել են չորըորդ պատվիրանի շաբաթը: Եկե-ղեցիներ, որոնք պահել ու կիրառել են այս հավատը, գոյութայուն են ունեցել Կենտրոնական Աֆրիկայում և Ասիայի հայերի մեջ: [64]

Նրանց մեջ, ովքեր դիմակայել են պապական իշխանության ոտնձգություններին, առաջինը եղել են վալդեսները: Յենց այն երկրում, որտեղ պապը հաստատել էր իր գահը, կեղծիքն ու ապականությունը

հանդիպեցին ամենավճռական
դիմադրության: Դարեր
շարունակ Պյեմոնտի
եկեղեցիները պահպանում էին
իրենց անկախությունը, բայց
վերջապես եկավ ժամանակը,
երբ Յոնմը նրանց ևս
հնազանդեցրեց իրեն: Նրա
բռնապետության դեմ
ապարդյուն պայքարից հետո
այս եկեղեցիների
ղեկավարները դժկամությամբ
ճանաչեցին նրա
գերիշխանությունը, ում առջև,
թվում էր, խոնարհվում է ողջ
աշխարհը: Սակայն գտնվեցին
մարդիկ, ովքեր հրաժարվեցին

տեղի տալ պապի կամ
պրելատների
հեղինակությանը: Նրանք վճռել
էին հավատարիմ մնալ
Աստծուն և պահպանել իրենց
հավատի մաքրությունն ու
պարզությունը: Բաժանումն
անխուսափելի էր: Հին
հավատի ջատագովները
հեռացան, նրանցից ոմանք
լքեցին հարազատ Ալպերը և
ճշմարտության դրոշը
բարձրացրին օտար
երկրներում, մյուսներն
ապաստարան գտան մեկուսի
հովիտներում և լեռնային
ժայռոտ ամրոցներում և

այնտեղ պահ վանեցին իրենց
ազատութիւնը՝ երկրպագելու
Աստծուն:

Հավատը, որ դարերով պահոււմ
և սովորեցնոււմ էին վալդէնս
քրիստոնյաները, խիստ
տարբերվում էր Յռոմի կեղծ
ուսմունքներից: Նրանց
հավատը հիմնված էր Աստծո
գրավոր խոսքի՝
քրիստոնեութեան ճշմարիտ
համակարգի վրա: Բայց այդ
համեստ գլուղացիները,
ապաստանած աշխարհից
կտրված իրենց խղճուկ
կացարաններում, զբաղված

իրենց ամենօրյա չարքաշ
աշխատանքով՝
անասնապահությամբ և
այգեգործությամբ, իրենք չէին
բացահայտել այն
ճշմարտությունը, որը
հակառակ էր նահանջած
եկեղեցու դոգմաներին ու
հերձվածքներին: Նրանցը նոր
ընդունված հավատ չէր: Նրանք
դա ժառանգել էին իրենց
հայրերից: Նրանք պայքարում
էին առաքյալների եկեղեցու
հավատի՝ «մեկ անգամ
սուրբերին ավանդված
հավատի» համար (Յուդեա 3): Ոչ
թե հպարտ

Նվիրապետութիւնը՝
գահակալած աշխարհի մեծ
մայրաքաղաքում, այլ
«անապատի եկեղեցին» էր
Քրիստոսի իսկական եկեղեցին՝
պահապանը ճշմարտութեան
այն գանձերի, որ Աստված
վստահել էր իր ժողովրդին՝
աշխարհին տալու համար: [65]

Գլխավոր պատճառներից մեկը,
որ դրդել էր ճշմարիտ
եկեղեցուն առանձնանալ
Յռոմից, վերջինիս
ատելութիւնն էր
աստվածաշնչյան շաբաթի
Նկատմամբ: Պապական

իշխանութիւնը, ինչպէս
կանխատես-ված էր
մարգարեութեան մեջ,
ճշմարտութիւնը գցել էր
գետնին: Աստճո օրէնքը
ոտնակոխ էր արվել, մինչդեռ
մարդկային ավանդաթիւններն
ու սովորույթները բարձրացվել
էին: Պապութեան
տիրապետութեան տակ գտնվող
եկեղեցիները ստիպված էին
հենց սկզբից առնել կիրակին
որպէս սուրբ օր: Համատարած
մոլորութեան ու
սնահավատութեան մեջ Աստճո
ժողովրդից շատերն այնպէս
էին շփոթված, որ, պահելով

շաբաթը, չէին աշխատում նաև
կիրակի օրը: Բայց սա
չբավարարեց պապական
առաջնորդներին: Նրանք
պահանջեցին, որ ոչ միայն
կիրակին սուրբ պահվի, այլ որ
շաբաթը պղծվի, և ամենախիստ
խոսքերով դա-տապարտեցին
նրանց, ովքեր համարձակվում
էին պատվել այն: Միայն Յոհաննիս
Իշխանությունից փախչելով
մարդը կարող էր ազատ պահել
Աստ-ծո օրենքը:

Վալդենսները Եվրոպայի
ժողովուրդների մեջ
առաջիններից էին, որ

Թարգմանեցին Սուրբ Գիրքը:
Բարենորոգումից
հարյուրամյակներ առաջ
Նրանք արդեն ձեռագիր
Աստվածաշունչ ունեին իրենց
մայրենի լեզվով: Նրանք
հետևում էին անխարդախ
ճշմարտությանը, և դա նրանց
դարձրել էր ասելության ու
հալածանքի հատուկ առարկա:
Նրանք հայտարարեցին, որ
Յոնի եկեղեցին Յայտնություն
գրքում պատկերված
ուխտադրուժ Բաբելոնն է, և
վտանգելով իրենց կյանքը՝
Նրանք կանգնեցին՝
ղիմադրելու նրա ապականիչ

ագդեցութեանը: Մինչ ոմանք
երկարա-տև հալածանքների
ճնշման տակ զիջեցին իրենց
հավատը՝ աստիճանա-բար
հեռանալով նրա տարբերիչ
սկզբունքներից, մյուսներն
ավելի ամուր բռնեցին
ճշմարտությունը: Խավարի և
ուրացութեան դարերի
ընթացքում եղել են
վալդենսներ, ովքեր մերժել են
Յոհանի գերիշխանությունը,
ժխտել երկրպագությունը
պատկերներին՝ որպես
կռապաշտություն, և պահել են
ճշմարիտ շաբաթը:
Ընդդիմութեան ամենակատաղի

փոթորիկների ժամանակ
անգամ նրանք պահել են իրենց
հավատը: Թեև խոցվելով
սավոյական նիզակով ու
այրվելով հռոմեական
խարույկների մեջ՝ նրանք
անվախորեն պահել են Աստծո
խոսքն ու պատիվը:

Լեռնային բարձր պատնեշների
հետևում, ուր բոլոր դարերում
ապաստանել են
հալածվողներն ու
հետապնդվողները,
վալդենսները [66]
ապաստարան գտան: Այստեղ
ճշմարտության լույսը վառ

մնաց խավար Միջնադարի ողջ
ընթացքում: Այստեղ, հազար
տարի շարունակ,
ճշմարտության վկաները
պահպանել են հին հավատը:

Աստված իր ժողովրդի համար
ահարկու վեհության մի
սրբարան էր պատրաստել՝
խիստ համապատասխան
Նրանց վստահված վսեմ
ճշմարտություններին: Այդ
հավատարիմ աքսորյալների
համար լեռները եհովայի
անքակտելի արդարության
խորհրդանիշն էին: Նրանք
իրենց երեխաներին ցույց էին

տալիս անփոփոխ վեհությամբ
վեր խոյացող լեռները և
պատմում էին Նրա մասին, «ում
մեջ բնավ փոփոխում կամ
դարձվածքի շուք չկա», ում
խոսքը հարատւ է,
հավերժական բլուրների պես
աներեր: Աստված է հաստատել
լեռներն ու զորությամբ
գոտնորել դրանք, և ոչ մի ձեռք,
Անսահման Չորությունից բացի,
չի կարող տեղաշարժել դրանք:
Այդպես էլ Նա հաստատել է իր
օրենքը՝ իր կառավարման
հիմքը երկնքում և երկրի վրա:
Մարդու ձեռքը կարող է հասնել
իր մերձավորներին և խլել

Նրանց կյանքը: Բայց այդ ձեռքն
այնքանով է կարող փոխել
Եհովայի օրենքի գեթ մեկ
պատվիրանը կամ ջնջել Նրա
կամքը կատարողներին տրված
խոստումներից մեկը, որքանով
ի վիճակի է տեղահան անել
սարերն ու գցել դրանք ծովը:
Աստծո ծառաների
հավատարմությունը Նրա
օրենքին պետք է նույնքան
հաս-տատուն լինի, որքան
հավիտենական լեռները:

Սարերը, որոնցով
շրջապատված էին նրանց
ցածրադիր հովիտները,

մշտապես վկայում էին Աստծո
արարչագործ զորութեան ու
Նրա մշտարթուն
պաշտպանութեան մասին: Այդ
պանդուխտները սովորում էին
սիրել Եհովայի ներկայութեան
այս անձայն խորհրդանիշները:
Նրանք չէին գանգատվում
իրենց կյանքի
դժվարութիւններից և երբեք
իրենց միայնակ չէին զգում
մեկուսի լեռներում: Նրանք
փառք էին տալիս Աստծուն
իրենց ապաստարան
ապահովելու համար, ուր
կարող էին թաքնվել մարդկանց
կատաղութիւնից ու

դաժանությունից: Նրանք
ուրախանում էին, որ կարող են
ազատ երկրպագել Նրան:
Չաճախ այդ հզոր լեռները
պաշտպանում էին նրանց
թշնամու հետապնդումներից:
Բարձր ժայռերից նրանք
գովերգում էին Աստծուն, և
Չռոմի բանակներն անզոր էին
լռեցնելու նրանց գովասանքի
օրհներգերը: [67]

Մաքուր, անխարդախ ու
բոցաշունչ էր Քրիստոսի այս
հետևորդների
բարեպաշտութունը:
Ճշմարտության սկզբունքներն

ապելի թանկ էին նրանց
համար, քան տները, հողերը,
ընկերները, ազգականները և
նույնիսկ՝ կյանքը: Նրանք
եռանդագին ձգտում էին այդ
սկզբունքները սեր-մանել
երիտասարդների սրտերում:
Ամենավաղ մանկութունից
նրանց Սուրբ Գրքի դասեր էին
տալիս և սովորեցնում
սրբությամբ վերաբերվել
Աստծո օրենքի պահանջներին:
Աստվածաշնչի օրինակները
քիչ էին, ուստի դրա թանկագին
խոսքերն անգիր էին անում:
Շատերը կարող էին անգիր
ասել թե՛ Հին, թե՛ Նոր

Կտակարանի մեծ հատվածներ:
Խոհերն Աստծո մասին
գուգորդվում էին ինչպես
բնության վսեմ տեսարանների,
այնպես էլ առօրյա կյանքի
համեստ օրինությունների հետ:
Փոքր երե-խաները սովորում
էին երախտագիտությամբ
Նայել Աստծուն՝ Նրա մեջ
տեսնելով ամեն մի օրինության
ու շնորհի Տվողին:

Քնքուշ ու գորովագութ
ծնողները չափից ավելի
իմաստությամբ էին սիրում
իրենց գավակներին՝ նրանց
ինքնաբավարարման

ընտելացնելու համար: Նրանց
սպասվում էր
փորձություններով ու
դժվարություններով լի կյանք
կամ էլ, թերևս,
նահատակություն: Նրանք
մանկությունից սովորում էին
հաղթահարել
դժվարություններ,
հնազանդվել ծնողներին, բայց
նաև մտածելու գործել
ինքնուրույն: Ամենավաղ
հասակից նրանց սովորեցնում
էին պատասխանատվություն
կրել, զգույշ լինել խոսքի մեջ և
հասկանալ լռելու
իմաստությունը: Մեկ անգույշ

Խոսքը կարող էր վտանգի տակ
դնել ոչ միայն արտասանողի,
այլև նրա հարյուրավոր
եղբայրների կյանքը, քանի որ
ճշմարտության թշնամիները
սոված գայլերի պես
հետապնդում էին նրանց,
ովքեր հավակնում էին խղճի
ազատության:

Չանուն ճշմարտության՝
վալդենասները զոհաբերել էին
իրենց աշխարհային
բարօրությունը և տոկուն
համբերությամբ աշխատում
էին իրենց հացի համար:
Սարերի մեջ յուրաքանչյուր

հողակտոր խնամքով
օգտագործվում էր, բերք էին
ստանում և՛ հովիտներից, և՛ ոչ
այնքան պարարտ
սարալանջերից:
Խնայողութունը և խիստ
ինքնուրազութունն այն
դաստիարակության մասն էին
կազմում, որ երեխաները
ստանում էին որպես միակ
ժառանգութուն: Նրանց
սովորեցնում էին, որ
համաձայն Աստծո ծրագրի՝
կյանքը դպրոց է, և իրենց
կարիքները կարող էին
բավարարվել միայն
անձնական աշխատանքի,

խոհեմության,
ջերմեռանդության ու հավատի
միջոցով: Ուսուցման ընթացքը
աշխատատար և հոգնեցուցիչ
էր, բայց՝ [68] օգտավետ: Այն,
ինչ անհրաժեշտ էր մարդուն իր
ընկած վիճակում, հենց այդ
դպրոցն էր, որն Աստված
Նախատեսել էր Նրա
դաստիարակության ու
զարգացման համար: Մինչ
երիտասարդներին վարժեցնում
էին զրկանքների ու
դժվարությունների, աչքաթող
չէր արվում նաև Նրանց
մտավոր զարգացումը: Նրանց
սովորեցնում էին, որ իրենց

բոլոր ունակութիւնները
պատկանում են Աստծուն և
պետք է օգտագործվեն ու
զարգացվեն Նրան ծառայելու
համար:

Վալդոյական եկեղեցիներն
իրենց անադարտութեամբ ու
պարզութեամբ հիշեցնում էին
առաքյալների ժամանակվա
եկեղեցին: Յերթելով պապի և
պրելատների իշխանութիւնը՝
Նրանք Աստվածաշունչը
համա-րում էին միակ
գերագույն, անսխալական
հեղինակութիւնը: Նրանց
հո-գևոր հովիվներն, ի

տարբերութիւնն Յռոմի գոռոզ
քահանաների, հետևում էին
իրենց Տիրոջ օրինակին, ով եկել
էր ոչ թէ նրա համար, «որ իրեն
ծառայեն, այլ որ ինքը
ծառայի»: Նրանք արածեցնում
էին Աստծո հոտը՝ տանելով
Նրանց Նրա սուրբ խոսքի
կանաչ դաշտերն ու կենդանի
ջրի աղբյուրները: Մարդկային
ցուցամոլութեան ու
հպարտութեան կոթողներից
հեռու՝ ժողովուրդը հավաքվում
էր ճշմարտութեան խոսքը
Քրիստոսի ծառաներից լսելու ոչ
թէ վեհաշուք եկեղեցիներում
կամ հոյակերտ տաճարներում,

այլ լեռների շուքի տակ, Ալայան
հովիտներում կամ էլ, վտանգի
ժամանակ, քարայրներում:
Յովիվները ոչ միայն քարոզում
էին Ավետարանը, այլև
այցելում էին հիվանդներին,
խրատում երեխաներին,
հորդորում մեղանջողներին,
ջանում հարթեցնել վեճերը և
նպաստել միաբանությանն ու
եղբայրական սիրուն: Խաղաղ
ժամանակներում նրանք
ապրում էին ժողովրդի
կամավոր ընծաների շնորհիվ,
սակայն վրանագործ Պողոսի
նման յուրաքանչյուրը որևէ
արհեստ էր սովորում, որպեսզի

անհրաժեշտության դեպքում
ինքնուրույն վաստակեր իր
ապրուստը:

Երիտասարդները խրատներ
էին առնում հովիվներից: Թեև
ուշադրություն էր դարձվում
նաև ընդհանուր կրթությանը,
նրանց ուսումնասիրության
հիմնական առարկան
Աստվածաշունչն էր:

Մատթեոսի և Յովհաննեսի
Ավետարանները մի շարք
Թղթերի հետ միասին անգիր
էին արվում: Նրանք զբաղվում
էին նաև Աստվածաշնչի
արտագրությամբ: Որոշ

ձեռագրեր պարունակում էին
ամբողջ Սուրբ Գիրքը,
մյուսները՝ համառոտ
հատվածներ, որոնց կցում էին
նրանց հասարակ ու բոլորին
մատչելի
մեկնաբանությունները, ովքեր
կարող էին պարզաբանել Սուրբ
Գիրքը: Այսպես բացահայտվում
էին ճշմարտության գանձերը՝
այնքա՛ն երկար [69] թաքցված
նրանց կողմից, ովքեր իրենց
Աստծուց վեր էին դասում:

Համբերատար, անխոնջ
ջանքերով, երբեմն խոր ու մութ
քարայր-ներում, առկայծող

մարխի լույսի տակ, տեքստ
տեքստի, գլուխ գլխի հե-տևից
արտագրվում էր Սուրբ Գիրքը:
Այսպես գործն առաջ էր գնում,
և Աստծո բացահայտված
կամքը շողում էր մաքուր ոսկու
պես: Դժվարու-թյուններն ու
նեղությունները այդ ցուքը շատ
ավելի վառ և ակներև էին
դարձնում նրանց համար,
ովքեր մասնակցում էին այս
գործին: Երկնային
հրեշտակներն այդ
հավատարիմ մշակների
մշտական ուղեկիցներն էին:

Սատանան դրդել էր կաթուղիկ
քահանաներին ու եկեղեցական
առաջնորդներին
ճշմարտության խոսքը թաղել
մոլորության,
հերձվածողության և
անհավատության աղբի տակ,
բայց ամենահրաշալի կերպով
այն անաղարտ պահպանվեց
խավար միջնադարի ողջ
ընթացքում, քանզի կրում էր ոչ
թե մարդու, այլ Աստծո կնիքը:
Մարդիկ անդուլ ջանքեր էին
թափում՝ անհասկանալի
դարձնելու Սուրբ Գրքի պարզ,
ըմբռնելի նշանակությունը,
որպեսզի այն հակասի իր իսկ

վկայութիւններին, բայց
ալեկոծ, անեզր օվկիանոսում
լողացող տապանի պես՝ Աստծո
խոսքը հաղթահարում է
սպառնացող կորստաբեր
փոթորիկները: Ինչպես հանքը
ոսկու և արծաթի հարուստ
երակներ ունի՝ թաքնված
մակերեսի տակ, որոնք
հայտնաբերելու համար
հարկավոր է փորել, այնպես էլ
Սուրբ Գիրքը պարունակում է
ճշմարտութեան գանձեր, որոնք
բա- ցահայտվում են միայն
անկեղծ, խոնարհ և աղոթքով
որոնողին: Աստված ծրագրել է,
որ Աստվածաշունչը դասագիրք

լինի համայն մարդկության
համար մանկության,
պատանեկության և
հասունության տարիներին և
ուսումնասիրվի ամեն
ժամանակ: Նա տվել է
մարդկանց իր խոսքը որպես
հայտնություն իր մասին: Ամեն
մի նոր ընկալված
ճշմարտություն դրա Յեղիևակի
բնավորության նոր
բացահայտում է: Սուրբ Գրքի
ուսումնասիրությունը Աստծո
կողմից սահմանվել է որպես
մարդու և իր Արարչի միջև
ավելի սերտ շփման միջոց,
որով Նա հայտնում է իր

Կամքը: Այն հաղորդակցութեան
միջոց է Աստծո և մարդու միջև:

Աստծո երկյուղը համարելով
իմաստութեան սկիզբ՝
վալդենասները չէին անտեսում
Նաև աշխարհի հետ շփման,
մարդկանց ճանաչելու և [70]
գործուն կյանքի
կարևորութիւնը՝ իրենց
մտահորիզոնն ընդլայնելու և
հասկացողութիւնը
կենդանացնելու համար:
Սարերում գտնվող նրանց
դպրոցների
շրջանավարտներից ոմանք
ուղարկվում էին Ֆրանսիայի

կամ Իտալիայի ուսումնական
հաստատություններ, որտեղ
կար ուսումնասիրության և
դիտումների ավելի լայն դաշտ,
քան իրենց հարազատ
Ալպերում: Այս
երիտասարդները ենթարկվում
էին փորձությունների,
ականատես էին լինում
անառակության, հանդիպում
էին սատանայի նենգավոր
գործիչների, ովքեր փորձում
էին նրանց գցել ամենանուրբ
հերձվածողությունների ու
ամենավտանգավոր
մոլորությունների մեջ: Բայց
նրանք մանկաց այնպես էին

դաստիարակվել, որ պատրաստ
էին այս ամենին:

Ուսումնական
հաստատություններն, ուր
ուղարկվում էին, նրանք չպետք
է իրենց գաղտնիքը հայտնեին
որևէ մեկին: Նրանց հագուստն
այնպես էր կարված, որպեսզի
հնարավոր լիներ թաքցնել
իրենց ամե-նամեծ գանձը՝
Սուրբ Գրքի թանկագին
ձեռագրերը: Ամիսների և
տա-րիների տքնաջան
աշխատանքի այդ պտուղը
նրանք կրում էին իրենց հետ, և
դրանց մի մասը զգուշորեն

դնում էին նրանց
ճանապարհին, ում սիրտը,
թվում էր, պատրաստ է
ճշմարտությունն ընդունելու,
երբ առիթ էր ստեղծվում
առանց կասկած հարուցելու
այդ անել: Դեռ իրենց մոր գրկից
վալդենս երիտասարդները
դաստիարակվում էին այս
նպատակի համար: Նրանք
հասկանում էին իրենց
պարտականությունը և մեծ
նվիր-վածությամբ կատարում
էին այն: Այս կրթօջախներում
ոմանք դարձի էին գալիս դեպի
ճշմարիտ հավատը, և դրա
սկզբունքները հաճախ

տարածվում էին ամբողջ
դպրոցով մեկ: Իսկ պապական
առաջնորդները, որքան էլ
զգուշորեն հարցաքննեին, ոչ մի
կերպ չէին կարողանում
հայտնաբերել այդ «քայքայիչ
հերձվածողության»
սկզբնաղբյուրը:

Քրիստոսի հոգին
ավետարանչական հոգի է:
Նորոգված սրտի
ամենաառաջին մղումն է՝
ուրիշներին նույնպես բերել
Փրկչի մոտ: Այսպիսին էր
վալդենս քրիստոնյաների
հոգին: Նրանք գիտակցում էին,

որ Աստված իրենցից
պահանջում է ավելին, քան
պարզապես ճշմարտությունն
իր մաքրությամբ պահպանելը
իրենց եկեղեցիներում, որ
իրենց վրա հանդիսավոր
պատասխանատվություն է
դրված լուսավորելու
խավարում գտնվողներին:
Աստծո խոսքի հզոր ուժով
նրանք ջանում էին փշրել Յոզովի
շղթաները: Վալդենս
ծառայողներին պատրաստում
էին որպես ավետարանիչներ:
Ծառայության անցնելուց առաջ
յուրաքանչյուրը պետք է նախ
ավետարանչի փորձառություն

ձեռք բերեր: Նախքան
հայրենիքում եկեղեցու հովիվ
դառնալը՝ ծառայողը [71] պետք
է երեք տարի աշխատեր
ավետարանչական որևէ
դաշտում: Այս ծառայությունը,
որ անձնուրացություն և
զոհողություն էր պահանջում
հենց սկզբից, լավ
նախապատրաստություն էր
հովվի կյանքի համար
մարդկանց հոգիները փորձող
այդ ժամանակներում:
Երիտասարդները, ովքեր
ձեռնադրվում էին սրբազան
պաշտոնի համար, իրենց առջև
ոչ թե երկրային հարստություն

ու փառք էին տեսնում, այլ
չարչարանքով ու վտանգներով
լի կյանք, գուցե նաև՝

Նահատակութիւն:

Ավետարանիչները դուրս էին
գալիս երկու-երկու, ինչպես
Յիսուսն էր ուղարկում իր
աշակերտներին:

Յուրաքանչյուր երիտասարդի
սովորաբար ուղեկցում էր
ավելի տարեց և փորձառու
ընկեր, ով պետք է ղեկավարեր
ու սովորեցներ նրան, և ում
խրատները երիտասարդը
պետք է ընդուներ: Այս
աշխատակիցները միշտ չէ, որ
միասին էին լինում, բայց

հաճախ հանդիպում էին աղոթք
անելու և խորհրդակցելու՝
այսպես միմյանց
ամրապնդելով հավատի մեջ:

Եթե ուրիշներին հայտնեին
իրենց առաքելության
նպատակը, նրանք
անխուսափելիորեն
կձախողեին գործը, այդ իսկ
պատճառով էլ զգուշորեն
թաքցնում էին իրենց ով լինելը:
Յուրաքանչյուր ծառայող
տիրապետում էր որևէ
արհեստի կամ
մասնագիտության, և
ավետարանիչն իր

աշխատանքը կատարում էր
աշխարհիկ կոչման քողի տակ:
Սովորաբար նրանք ընտրում
էին առևտրականի կամ շրջիկ
մանրավաճառի գործը: «Նրանք
վաճառում էին մետաքս,
ոսկերչական և այլ իրեր, որոնք
այդ ժամանակ հնարավոր էր
ձեռք բերել միայն հեռավոր
առևտրական կենտրոններում,
և նրանք՝ որպես
վաճառականներ, գրկաբաց
ընդունվում էին այնտեղ, ուր
որպես ավետարանիչներ
արհամարհանքով կմերժվեին»
(Ուայլի, Ա. 1, գլ. 7): Նրանք
մտովի իրենց սրտերն

անդադար բարձրացնում էին
Աստծուն՝ իմաստություն
խնդրելով Նրանից
Ներկայացնել այն գանձը, որ
ոսկուց ու գոհարներից ավելի
թանկ էր: Նր- անք իրենց հետ
գաղտնաբար կրում էին ամբողջ
Աստվածաշունչը կամ Նրա որոշ
մասերը և հարմար առիթի
դեպքում իրենց
հաճախորդների
ուշադրությունը հրավիրում էին
այդ ձեռագրերի վրա: Հաճախ
մարդկանց մոտ
հետաքրքրություն էր
առաջանում կարդալու Աստծո
խոսքը, և նրանք

ցանկացողներին
ուրախութեամբ տալիս էին դրա
առանձին մասերը:

Այս ավետարանիչների
գործունեությունը սկսվեց
իրենց հարազատ լեռների
ստորոտներում ընկած
հարթավայրերում և
հովիտներում, բայց հետո
տարածվեց այդ սահմաններից
շատ հեռու: Իրենց Տիրոջ նման՝
ոտաբոբիկ, ճամփորդությունից
փոշոտված, կոպիտ
հանդերձներով, [72] նրանք
անցնում էին մեծ քաղաքների
միջով և թափանցում հեռավոր

երկրները: Ամենուրեք նրանք
ցանում էին թանկագին սերմը:
Նրանց ճանապարհին
եկեղեցիներ էին առաջանում, և
Նահատակների արյունը
վկայում էր հանուն
ճշմարտության: Տիրոջ
գալստյան օրը կբացահայտի
հոգիների այն առատ հունձքը,
որ այս հավատարիմ այրերի
աշխատանքի արդյունքն է:
Աննկատ ու լուռ՝ Աստծո խոսքն
իր համար ճանապարհ էր
հարթում քրիստոնեական
աշխարհում՝ ուրախությամբ
ընդունվելով մարդկանց
տներում ու սրտերում:

Վալդենսների համար
Աստվածաշունչը ոչ թե սոսկ
գրութիւնն էր այն մասին, թե
ինչպէս էր Աստված մարդկանց
հետ վարվել անցյալում, կամ էլ
հայտնութիւնն ներկա
պատասխանատվութեան ու
պար-տականութիւնների
վերաբերյալ, այն
բացահայտում էր նաև
ապագայի վտանգներն ու
փառքը: Նրանք հավատում էին
ամեն բանի մոտալուտ
վախճանին և ուսումնասիրելով
Աստվածաշունչը աղոթքով ու
արցունքներով՝ ավելի խորն

Էին ներթափանցում դրա
թանկագին խոսքերի մեջ և
գիտակցում այդ փրկարար
ճշմարտությունները
ուրիշներին ևս հայտնելու
իրենց պարտքը: Նրանք
տեսնում էին փրկության
ծրագիրը՝ պարզորոշ
բացահայտված սրբազան
Էջերում, և հավատալով
Յիսուսին՝ մխիթարություն,
հույս և խաղաղություն էին
գտնում: Երբ լույսը
պայծառացնում էր նրանց
միտքը և ուրախացնում սիրտը,
նրանք փափագում էին նրա
շողերով ողողել նաև

պապական մոլորութեան
խավարի մեջ գտնվողներին:

Վալդենասները տեսնում էին, թե
ինչպես մարդիկ պապի և
քահանաների
ղեկավարութեամբ իզուր
ջանում էին մեղքերի
թողութիւն ստանալ՝ ճնշելով
իրենց մարմինները: Սովորած
լինելով, որ իրենց բարի
գործերով կարող են փրկութեան
հասնել, նրանք կենտրոնանում
էին իրենց վրա՝ անդադար
մտածելով իրենց մեղավոր
վիճակի մասին, զարհուրելով
Աստծո ցասումից, տանջելով

իրենց մարմինն ու հոգին և,
սակայն, չգտնելով հանգիստ:
Այսպես անկեղծ հոգիները
շղթայվում էին Յոնմի
ուսմունքներով:
Յազարավորները լքում էին
իրենց ընկերներին ու
ազգականներին և իրենց
կյանքն անցկացնում վանական
խցերում: Նրանք իզուր ջանում
էին հանգստացնել իրենց
խիղճը հաճախակի ծոմերով ու
խարազանումներով,
գիշերային հսկումներով, իրենց
մռայլ օթևանների սառն ու
խոնավ քարերին ժամերով
պառկելով, երկար

ուխտագնացութիւններով,
ստորացուցիչ
ապաշխարանքներով ու
սուկա-լի կտտանքներով:
Իրենց մեղավորութեան
գիտակցումից ճնշված և
զառանցելով Աստծո
վրեժխնդիր ցասման [73] ահից՝
շատերը շարու-նակում էին
տանջվել այնքան, մինչև որ
նրանց հյուճված մարմինն
այլևս չէր դիմանում, և նրանք
գերեզման էին իջնում՝ առանց
լույսի կամ հոլյսի գեթ մեկ
շալի:

Վալդենասները տենչում էին այդ
սովահար հոգիներին տալ
Կյանքի Չացը, հայտնել նրանց
Աստծո խոստումներում
թաքցված խաղաղության
պատգամները և ցույց տալ, որ
Քրիստոսն է նրանց փրկության
միակ հույսը: Նրանք կեղծիք
էին համարում այն ուսմունքը,
որ բարի գործերով կարելի է
քավել Աստծո օրենքի
խախտումը: Մարդկային
արժանիքներին ապավինելը
թույլ չի տալիս տեսնել
Քրիստոսի անսահման սերը:
Չիտունն իրեն զոհաբերեց
հանուն մարդու, քանի որ

ընկած ցեղը ոչինչ չէր կարող
անել Աստծո բարեհաճութեանն
արժանանալու համար: Խաչյալ
և հարուցյալ Փրկչի
արժանիքներն են կազմում
քրիստոնեական հավատի
հիմքը: Մարդու
կախվածությունը քրիստոսից
նույնքան իրական է, և նրա
կապը Փրկչի հետ նույնքան
սերտ պետք է լինի, որքան
վերջույթներից մարմնի, կամ
ճյուղից որթի հետ:

Պապերի և քահանաների
ուսմունքը շատերին դրդել էր
մտածել, որ Աստծո և, նույնիսկ,

Քրիստոսի բնավորութունը
խիստ է, մռայլ և վանող:
Փրկչին ներկայացրել էին
մեղավորի հանդեպ
կարեկցանքից այնքան զուրկ,
որ պետք էր աղերսել
քահանաների և սրբերի
միջնորդությունը: Նրանք, ում
մտքերը լուսավորված էին
Աստծո խոսքով, փափագում
էին մարդկանց մատնացույց
անել Չիսուսին՝ որպես իրենց
կարեկից, սիրող Փրկչի, որ
ձեռքերը պարզած՝ բռնորին
հրավիրում է իր մոտ գալ՝
իրենց մեղքի բեռով, հոգսերով
ու հոգնածությամբ: Նրանք

ջանում էին հեռացնել այն
բոլոր արգելքները, որ
սատանան կանգնեցրել էր.
որպեսզի մարդիկ
չկարողանային տեսնել
խոստումները և
անմիջականորեն Աստծո մոտ
չգային՝ խոստովանելու իրենց
մեղքերը և ներում ու
խաղաղություն ստանալու:

Վալդենս ավետարանիչը
հետաքրքրվողներին
ջերմեռանդորեն հայտնում էր
ավետարանի թանկագին
ճշմարտությունները: Նա
գգուշորեն ներկայացնում էր

Սուրբ Գրքի խնամքով գրված
հատվածները: Նրա մեծագույն
ուրախությունն էր՝ հույս տալ
անկեղծ, մեղքից խոցված
հոգուն, ով Աստծո մեջ մինչ այդ
տեսնում էր միայն մեղավորին
պատժելու պատրաստ
վրիժառու դատավորի:
Դողդոջուն շուրթերով,
արցունքոտ աչքերով և հաճախ
ծնկի եկած՝ նա իր
եղբայրներին [74] հայտնում էր
այն թանկագին խոստումները,
որոնք մատնանշում էին
մեղավորի միակ հույսը:
Այսպես ճշմարտության լույսը,
ցրելով մռայլ ամպերը,

Թափանցում էր շատերի
խավարած միտքը, մինչև որ
Արդարության Արեգակն իր
բուժիչ ճառագայթներով
լուսավորեր նրանց սրտերը:
Չաճախ լսողի խնդրանքով
Աստվածաշնչի որևէ հատված
կարդացվում էր նորից ու
նորից, ասես մարդն ուզում էր
համոզվել, որ ճիշտ է լսել:
Ամենից շատ այս խոսքերն էին
խնդրում կրկնել. «Նրա Արդի
Չիտու Բրիստոսի արյունը մեզ
սրբում է ամեն մեղքից» (Ա
Չովհաննես 1.7): «Ինչպես
Մովսեսն օձը բարձրացրեց
անապատում, այնպես էլ պետք

Է մարդու Որդին բարձրացվի,
որ ամեն Նրան հավատացողը
չկորչի, այլ հավիտենական
կյանքն ունենա» (Յովհաննես
3.14,15):

Ճատերի աչքերը բացվում էին
Յոնի հավակնությունների
Նկատ-մամբ: Նրանք սկսում
էին հասկանալ, թե որքան
անիմաստ է մարդկանց կամ
հրեշտակների միջնորդությունը
մեղավորի համար: Երբ
ճշմարտությունը լուսավորում
էր Նրանց միտքը, Նրանք
ցնձագին բա-ցականչում էին.
«Քրիստոսն է իմ քահանան, իմ

գոհաբերութիւնը Նրա արյունն է, իմ խոստովանութեան վայրը Նրա գոհասեղանն է»: Նրանք ամբողջապէս ապավինում էին Յիսուսի արժանիքներին՝ կրկնելով այս խոսքերը.

«Առանց հավատի անկարելի է հաճո լինել Նրան» (Եբրայեցիս 11.6): «Ուրիշ անուն էլ չկա երկնքի տակ՝ մարդկանց տրված, որով կարելի լինի մեզ փրկվել» (Գործք 4.12):

Փրկչի սիրո հավաստիացումը չափից ավելի անընդգրկելի էր թվում այդ թշվառ, փոթորկածեճ մարդկանցից

ոմանց: Դա այնքան մեծ
թերթևություն էր բերել, լույսի
այնպիսի առատություն էր
հեղել նրանց վրա, որ նրանց
թվում էր, թե երկինք են
տեղափոխվել: Նրանց ձեռքերն
ապահով դրված էին քրիստոսի
ձեռքում, նրանց ոտքերը՝
հաստատված Դարերի Վեմի
վրա: Մահվան վախը չքացել
էր: Նրանք պատրաստ էին
բանտ ընկնելու և կախաղան
բարձրացվելու, եթե դրանով
կփառավորվեր իրենց Փրկչի
անունը:

Այսպիսով, Աստծո խոսքը
բերվում էր գաղտնի վայրեր և
կարդացվում երբեմն մի հոգու,
երբեմն էլ մի խումբ մարդկանց
համար, ովքեր ծարավ էին
լույսի և ճշմարտության:
Հաճախ այսպես անցնում էր
ամբողջ գիշերը: Ունկնդիրների
զարմանքն ու հիացմունքն
այնքան մեծ էր լինում, որ
գթության պատգամաբերը
ժամանակ առ ժամանակ
ստիպված էր լինում
դադարեցնել ընթերցումը, [75]
որպեսզի մարդիկ
կարողանային ըմբռնել
փրկության լուրը: Հաճախ

այսպիսի հարցեր էին հնչում.
«Մի՞թե Աստված իսկապես
կընդունի իմ
զոհաբերությունը», «Նա ինձ
կժպտա՞ իրոք», «Կների՞
արդյոք ինձ»: Ի պատասխան՝
կարդում էին խոսքը. «Ինձ մոտ
եկեք, ամեն վաստակածներ և
բեռնավորվածներ, և ես
հանգիստ կտամ ձեզ»
(Մատթեոս 11.28):

Մարդկանց հավատը կառչում
էր խոստումից, և լսվում էր
ուրախ արձագանքը. «Այլևս ոչ
մի երկար ուխտագնացություն,
ոչ մի տանջալի ուղևորություն

դեպի սրբավայրերը: Ես կարող
եմ գալ Յիսուսի մոտ այնպիսին,
ինչպիսին կամ՝ մեղավոր և
անսուրբ, և Նա չի մերժի
ապաշխարության աղոթքը.
«Թողված են քեզ քո մեղքերը»:
Իմ, նույնիսկ իմ մեղքերը կարող
են ներվել»:

Սրբազան ուրախությամբ էին
լցվում նրանց սրտերը, և
Յիսուսի անունը մեծարվում էր
շնորհակալությամբ ու
գովասանքով: Այս երջանիկ
մարդիկ իրենց տներն էին
վերադառնում՝ լույս և
ուրախություն սփռելու,

մյուսներին պատմելու, ինչպես
կարող էին, իրենց նոր
փորձառությունը, որ գտել են
ճշմարիտ և կենդանի
ճանապարհը: Տարօրինակ և
հան-դիսավոր ուժ կար Սուրբ
Գրքի խոսքերում, որոնք
ուղղակիորեն դիպչում էին
ճշմարտությանը ծարավ
սրտերին: Դա Աստծո ձայնն էր,
որ համոզում էր լսողներին:

ճշմարտության լրաբերը
շարունակում էր իր
ճանապարհը, բայց նրա
խոնարհ տեսքի,
անկեղծության, լրբության ու

Խանդավառության մասին
մարդիկ հաճախ շարունակում
էին խոսել: Շատ դեպքերում
Նրա ունկնդիրները չէին
հարցնում, թե որտեղից է նա
եկել և ուր է գնում: Նրանք
այնպես էին ցնցվում, սկզբում
զարմանքից, իսկ հետո
երախտագիտությունից և
ուրախությունից, որ չէին էլ
մտածում հարցուփորձ անել
Նրան: Երբ նրանց հրավիրում
էին իրենց տները, նա
պատասխանում էր, որ պետք է
այցելի հոտի կորած գառներին:
«Գուցե նա հրեշտա՞կ էր՝

երկնքից իջած», — զարմացած
հարցնում էին մարդիկ:

Շատ դեպքերում
ճշմարտության ավետաբերին
այլևս չէին տեսնում: Գնալով
այլ երկրներ՝ նա կամ իր
կյանքն անց էր կացնում որևէ
անհայտ զնդանում, կամ էլ
սպանվում հենց այնտեղ, ուր
վկայել էր [76] ճշմարտությանը:
Բայց նրա թողած խոսքերը չէին
կարող կորչել: Դրանք իրենց
գործն էին անում մարդկանց
սրտերում, և օրինյալ
արդյունքը

լիովին հայտնի կդառնա միայն
դատաստանի օրը:

Վալդենս ավետարանիչները
ներխուժում էին սատանայի
թագավորութունը, և դա ավելի
զգոն էր դարձնում խավարի
ուժերին: Ճշմարտութունն
առաջ տանելու ոչ մի ջանք չէր
վրիպում չարի իշխանի
հայացքից, և նա իր
գործակալներին դրդում էր
աչալուրջ լինել: Պապական
առաջնորդներն իրենց գործին
սպառնացող վտանգ էին
տեսնում այդ խոնարհ
թափառաշրջիկների

գործունեության մեջ: Եթե
ճշմարտությանը թույլ տրվեր
անարգել շողալ, ապա այն
կցրեր մարդկանց պարուրող
մոլորության ծանր ամպերը:
Մարդկանց մտքերը այն
կուղղեր միայն Աստծուն և, ի
վերջո, կկործաներ Յռոմի
գերիշխանությունը:

Վաղ եկեղեցու հավատը
դավանող այս ժողովրդի
գոյությունն իսկ վկայում էր
Յռոմի ուխտադրժության
մասին, դրա համար էլ դառն
ատելություն և հալածանք էր
բորբոքում: Սուրբ Գրքից հետո

Կանգնելու նրանց
հրաժարականն էլ
վիրավորանք էր, որ Յոնմը չէր
կարող հանդուրժել: Եվ նա
որոշեց ջնջել նրանց երկրի
երեսից: Ամենասուկալի
արշավանքներ սկսվեցին
լեռներում ապաստան գտած
Աստծո ժողովրդի դեմ: Դրանք
գլխավորում էին
հավատաքննիչները, և հաճախ
կրկնվում էր մարդասպան
Կայենի կողմից անմեղ Յաբելի
սպանութթյան տեսարանը:

Կրկին ու կրկին նրանց
պարարտ հողերը ոտնակոխ

Էին արվում, տներն ու
եկեղեցիները՝ հողին
հավասարեցվում, երբեմնի
ծաղկող դաշ-տերն ու այդ
անմեղ, աշխատավոր ժողովրդի
բնակավայրերը վերածվում էին
անապատի: Ինչպես գիշատիչ
գազանն ավելի է գազազում
արյան համից, այնպես էլ
պապականների զայրույթն
ավելի էր մոլեգնում իրենց
զոհերի չարչարանքներից:
Չալածելով սարից սար՝ մաքուր
հավատի այս վկաներից
շատերին որսում էին
հովիտներում, ուր նրանք
թաքնված էին լինում՝

շրջապատված թավ
անտառներով ու բարձր
ժայռագագաթներով:

Այս աքսորյալ ժողովրդի
բարոյական եռթյունն
անբասիր էր: Նրանց
թշնամիներն անգամ
հայտարարում էին, որ նրանք
խաղաղասեր, հանդարտ ու
բարեպաշտ մարդիկ են: Նրանց
մեծագույն հանցանքն այն էր,
որ չէին ուզում երկրպագել
Աստծուն այնպես, ինչպես [77]
պապն էր պահանջում: Այդ
հանցանքի համար նրանց
ենթարկում էին ամեն տեսակ

ստորացման, անարգանքի ու
տանջանքի, որ մարդիկ կամ
դևերը կարող էին հորինել:

Երբ Յոնան վերջապես որոշեց
ոչնչացնել ատելի աղանդը,
պապը հրամանագիր արձակեց,
որ նրանց՝ որպես
հերետիկոսների,
դատապարտում էր մահվան:
Նրանք չէին մեղադրվում
ծուլութան, խարդախութան
կամ անկարգութան համար:
Յայտարարվեց, որ նրանք
իրենց բարեպաշտ ու սուրբ
կերպարանքով
գայթակղեցնում են « ճշմարիտ

հոտի ոչխարներին » : Եվ
պապը կարգադրեց, որ եթե
«այդ չարամիտ ու գարշելի
աղանդավորները չուրանան
իրենց հավատը, ապա պետք է
ոչնչացվեն թուևավոր օձերի
նման» (Ուայլի, Ա.16, գլ.1):
Գիտե՞ր, արդյոք, այդ
ամբարտավան տիրակալը, որ
նորից է հանդիպելու իր ասած
խոսքերին, որ դրանք
արձանագրվել են երկնային
գրքերում, որպեսզի
դատաստանի օրը վկայեն իր
դեմ: «Որովհետև իմ այս փոքր
եղբայրներից մեկին արիք, ինձ
արիք» (Մատթեոս 25.40):

Այդ հրովարտակը եկեղեցու
բոլոր անդամներին կոչ էր
անում միանալու
հերետիկոսների դեմ
կազմակերպվող արշավանքին:
Որպես խայծ՝ ներքաշելու
մարդկանց այս դաժան գործի
մեջ, այն «ազատում էր
եկեղեցական բոլոր
տուգանքներից ու
պատիժներից՝ թե՛ ընդհանուր,
թե՛ անհատական, ինչպես նաև
երբևէ արված երդումներից,
օրինականաց-նում էր անօրեն
կերպով ձեռք բերած
սեփականության իրավունքը,

իսկ հերետիկոս սպանողին
խոստանում էր բոլոր մեղքերի
թողութուն: Հրովարտակը
չեղյալ էր հայտարարում
վաղեմանների օգտին կնքված
բո-լոր պայմանագրերը,
ընտանիքի անդամներին կոչ էր
անում լքել նրանց, արգելում էր
նրանց որևէ օգնություն ցույց
տալ և բոլորին լիազորում էր
տիրանալ նրանց ունեցվածքին
» (Ուայլի, և.16, գլ.1): Այս
փաստաթուղթը հստակորեն
բացահայտում է իր հեղինակի
ոգին: Նրանում հնչում է ոչ թե
Քրիստոսի ձայնը, այլ վիշապի
մռնչյունը:

Պապական առաջնորդները
չկամեցան իրենց
բնավորութիւնը
համաձայնեցնել Աստծո օրենքի
մեծ չափանիշին, այլ իրենց
հարմար մի չափանիշ
կանգնեցրին և վճռեցին
բոլորին ստիպողաբար
հնազանդեցնել դրան,
որովհետև Յոհան Էր այդպես
կամենում: Սարսափելի
ողբերգութիւններ էին տեղի
ունենում: Այլասերված,
հայհոյիչ քահանաներն ու
պապերը կատարում էին այն
գործը, որ սատանան

հանձնարարել էր նրանց:
Նրանք բուրրովին գուրկ էին
[78] գթությունից: Նույն ոգին,
որը խաչեց Քրիստոսին և
սպանեց առաքյալներին, որը
քրիստոնյաների դեմ հանեց
արյունարբու Ներոնին, գործում
էր հիմա, որպեսզի երկրի
երեսից ջնջեր Աստծո
սիրելիներին:

Դարեր շարունակ այս
աստվածավախ ժողովուրդը
հալածանքներին դիմանում էր
այնպիսի համբերությամբ ու
հաստատակամությամբ, որ
պատիվ էր բերում իրենց

Փրկչին: Չնայած իրենց դեմ
կազմակերպվող
արշավանքներին ու
անմարդկային կոտորածներին՝
վալդենսները շարունակում էին
ուղարկել իրենց
ավետարանիչներին՝
տարածելու թանկագին
ճշմարտությունը: Նրանց
որսում ու սպանում էին, բայց
ցանած սերմը ջրվում էր նրանց
արյունով և պտուղ տալիս:
Այսպես՝ Լյութերի ծննդից
հարյուրամյակներ առաջ
վալդենսները վկայում էին
Աստծո մասին: Ցրվելով շատ
երկրներում՝ նրանք ցանում էին

Բարենո-րոզման սերմերը, որը սկսվեց Ուիկլիֆի օրոք, լայն տարածում գտավ ու խորացավ Լյութերի ժամանակ և պետք է շարունակվի մինչև աշխարհի վերջը նրանց միջոցով, ովքեր ևս պատրաստ են ամեն բան կրել «Աստծո խոսքի և Յիսուս Քրիստոսի վկայության համար» (Չայտնություն 1.9):

ԳԼՈՒԽ 5—ՁՈՆ ՈՒԻԿԼԻՑ

Մինչև Բարենորոգումը Սուրբ
Գրքի շատ քիչ օրինակներ էին
պահ-պանվել, բայց Աստված
թույլ չէր տա, որ Իր խոսքն
ամբողջապես ոչնչացվեր: Դրա
ճշմարտությունները չպետք է
առհասարակ թաքցված մնային:
Նա կարող էր նույն
հեշտությամբ շղթայագերծ
անել կյանքի խոսքերը, ինչպես
բացեց բանտի դռներն ու
երկաթյա դարպասները՝ Իր
ծառաներին ազատելու համար:
Եվրոպայի տարբեր երկրներում
կային մարդիկ, ովքեր Աստծո

Չոգու ազդեցութեամբ
ճշմարտութիւնը որոնում էին
այնպէս, ինչպէս կորոնէին
թաքցված գանձը:
Նախախնամութիւնը մղում էր
դիմելու Սուրբ Գրքին, և Նրանք
մեծ հետաքրքրութեամբ
ուսումնասիրում էին սրբազան
էջերը: Նրանք պատրաստ էին
ընդունելու լույսը ցանկացած
գնով: Ու թէն Նրանք ամեն ինչ
պարզ չէին տեսնում,
այնուամենայնիվ, կարողացան
ըմբռնել շատ
ճշմարտութիւններ, որոնք
երկար ժամանակ ծածկված
էին: Որպէս երկնքի

պատգամավորներ՝ նրանք
գնում էին առաջ՝ փշրելով
մոլորության ու
սնահավատության շղթաները և
կոչ անում նրանց՝
պաշտպանելու իրենց
ազատությունը, ովքեր այդքան
երկար ժամանակ ստրկացված
էին:

Դարեր շարունակ Աստծո
խոսքը անմատչելի էր
հասարակ ժողովրդին՝ բացի
վաղեմասներից, քանի որ գրված
էր միայն ուսյալներին ծանոթ
լեզուներով: Բայց եկել էր
ժամանակը, որպեսզի Սուրբ

Գիրքը թարգմանվեր, և մարդիկ
կարողանային կարդալ այն
իրենց մայրենի լեզվով:
Աշխարհի կեսգիշերն անցել էր:
Խավարի ժամերը լրանում էին,
և շատ երկրներում
հայտնվեցին բացվող
արշալույսի նշանները: [80]

Տասնչորսերորդ դարում
Անգլիայում ծագեց
«Բարենորոգման լուսաբացի
աստղը»: Ջոն Ուիկլիֆը
բարեփոխման պատգամաբեր
էր ոչ միայն Անգլիայի, այլև
համայն քրիստոնեական
աշխարհի համար: Հռոմի դեմ

ուղղված բողոքի հզոր ձայնը,
որը նրան թույլ տրվեց
բարձրացնել այլևս երբեք
չպետք է լռեր: Այդ բողոքը
սկիզբ դրեց մի պայքարի, որը
պետք է հանգեցներ
անհատների, եկեղեցիների և
ազգերի ազատագրմանը:

Ուիկլիֆն ազատամիտ
կրթութուն էր ստացել, և նրա
համար Տիրոջ երկյուղն
իմաստության սկիզբն էր:
Քուլեջում նա հայտնի էր իր
ջերմեռանդ
բարեպաշտությամբ, ինչպես
նաև աչքի ընկնող

տաղանդներով և հիմնավոր
գիտելիքներով: Նա այնքան
ծարավ էր գիտելիքների, որ
ձգտում էր ծանոթանալ
գիտության բոլոր ճյուղերին:
Նա ուսումնասիրել էր
գիտական փիլիսոփայություն,
քաջ ծանոթ էր եկեղեցական
կանոն-ներին ու
քաղաքացիական իրավունքին,
հատկապես իր երկրի
օրենք-ներին: Այս կրթությունը
հետագայում մեծ դեր խաղաց
Նրա գործունեության մեջ: Իր
ժամանակի մտահայեցողական
փիլիսոփայությանը
քաջատեղյակ լինելը

հնարավորություն տվեց նրան
բացահայտելու դրա
մոլորությունները, իսկ
ազգային ու եկեղեցական
օրենքի ուսումնասիրությունը
պատրաստեց նրան
պայքարելու քաղաքացիական
և կրոնական ազատության
համար: Աստճո խոսքի զենքի
հետ մեկտեղ նա տիրապետում
էր մտավոր կարգապահության,
որը ձեռք էր բերել գիտական
օջախներում, և հասկանում էր
գիտնականների
ռազմավարությունը: Նրա
հանճարի ուժը և գիտելիքների
խորությունն ու ծավալը նվաճել

Էին թե՛ ընկերների, և թե՛
թշնամիների հարգանքը: Նրա
հետևորդները հիացած էին, որ
իրենց առաջնորդը մի գլուխ
բարձր էր ազգի
ամենահանճարեղ դեմքերից,
այդ իսկ պատճառով նրա
թշնամիները չէին կարող
նախատինք բերել
Բարենորոգման գործին՝
վկայակոչելով նրա ջատագովի
տգիտությունը կամ
թուլությունը:

Ուիկլիֆը դեռևս քուեջի
ուսանող էր, երբ սկսեց
ուսումնասիրել Սուրբ Գիրքը:

Այդ վաղ ժամանակներում, երբ
Աստվածաշունչը գոյություն
ունեի միայն հին լեզուներով,
գիտնականները
հնարավորություն ունեին
գտնելու ճշմարտության
աղբյուրը, ինչից զրկված էր
անկիրթ ժողովուրդը:
Այսպիսով՝ ճանապարհն արդեն
պատրաստ էր Ուիկլիֆի
ապագա գործունեության
համար՝ որպես Բարենորոգչի:
Ուսյալ [81] մարդիկ
ուսումնասիրել էին Աստծո
խոսքը և գտել այնտեղ
բացահայտված մեծ
ճշմարտությունը Տիրոջ ձրի

շնորհի վերաբերյալ: Իրենց
դասավանդում-ների միջոցով
նրանք տարածում էին այս
ճշմարտությունը և ուրիշներին
առաջնորդում դեպի կենդանի
պատգամները:

Երբ Ուիկլիֆի ուշադրությունն
ուղղվեց դեպի
Աստվածաշունչը, նա
ձեռնամուխ եղավ իր
ուսումնասիրությանը նույն
բժախնդրությամբ, որի շնորհիվ
տիրապետել էր
փիլիսոփայական
գիտություններին: Մինչ այդ
նա մեծ ծարավ էր ունեցել, որը

չէին կարող հագեցնել ոչ նրա
գիտական
ուսումնասիրությունները, ոչ էլ
եկեղեցու վարդապետությունը:
Աստժո խոսքում նա գտավ այն,
ինչ նախկինում ապարդյուն
փնտրել էր: Այս- տեղ նրան
բացահայտվեց փրկության
ծրագիրը, և նա հասկացավ, որ
Քրիստոսն է մարդու միակ
բարեխոսը: Նա վճռեց ծառայել
Քրիստոսին՝ ամենուրեք
հռչակելով իր հայտնաբերած
ճշմարտությունները:

Ապագա բարեփոխիչների
նման՝ Ուիկլիֆը ևս իր

աշխատանքի սկզբում չէր
կանխատեսում դրա
հետևանքները: Նա նախապես
չէր տրամադրվել դուրս գալ
Ջոնի դեմ: Բայց
նվիրվածությունը
ճշմարտության գործին չէր
կարող ընդհարման չբերել
կեղծիքի հետ: Որքան ավելի
պարզ էր նա տեսնում
պապական մոլորությունները,
այնքան ավելի եռանդուն էր
ներկայացնում Աստվածաշնչի
ուսմունքը: Նա տեսնում էր, որ
Ջոնը թողել է Աստծո խոսքը
հանուն մարդկային
ավանդույթների,

համարձակորեն մեղադրում էր
քահանայությանը
Աստ-վաճաշունչն անտեսելու
մեջ՝ պահանջելով, որ այն
վերադարձվի ժողովրդին, և
Նրա հեղինակությունը
վերահաստատվի եկեղեցում:
Նա ընդունակ, լուրջ ուսուցիչ էր
և պերճախոս քարոզիչ» և Նրա
առօրյա կյանքն իր քարոզած
ճշմարտությունների
արտացոլումն էր: Սուրբ Գրքի
Նրա իմացությունը,
դատողության ուժը, կյանքի
մաքրությունը, աներեր
համարձակությունն ու
ազնվությունը Նրան

արժանացրել էին
համընդհանուր հարգանքի և
վստահության: Յոռմի
եկեղեցուսմ` տիրող
անօրենությունը տեսնելով`
շատերը հիասթափվել էին
իրենց նախկին հավատից և
անթաքույց ուրախությամբ
ողջունում էին Ուիկլիֆի
Ներ-կայացրած
ճշմարտությունները: Սակայն
պապական առաջնորդները
կատաղությամբ լցվեցին, երբ
հասկացան, որ այդ
Բարենորոգիչն ավելի մեծ
ազդեցություն է ձեռք բերում,
քան իրենք: [82]

Ուիկլիֆը հեշտությամբ էր
բացահայտում
մոլորությունները՝ աներ-կյուղ
պայքարելով այն
չարաշահումների դեմ, որ
վավերացվել էին Յռոմի
կողմից: Լինելով թագավորի
պալատական քահանան՝ նա
համար-ձակորեն
դատապարտեց հարկերի
վճարումը, որ պապը
պահանջում էր Անգլիայի
միապետից, և ցույց տվեց, որ
պապի իշխանությունը
աշ-խարհիկ ղեկավարների վրա
հակասում է թե՛

բանականությանը, թե՛ Աստծո
խոսքին: Պապի պահանջները
մեծ վրդովմունք էին
առաջացրել, և Ուիկլիֆի
ուսմունքը ազդեցություն
ունեցավ ազգի առաջնորդների
վրա: Թագավորն ու
ազնվականները միավորված
հանդես եկան աշխարհիկ
իշխանության ունենալու՝
պապի հավակնության դեմ և
հրաժարվեցին հարկ վճարել
Նրան: Այսպիսով՝ պապի
գերիշխանությունն Անգլիայում
ուժգին հարված ստացավ:

Մյուս չարիքը, որի դեմ
Բարենորոգիչը երկար ու
վճռական պայքար էր մղում,
մուրացիկ վանականների
միաբանական հիմնումն էր:
Այս վանականները վխտում
էին Անգլիայում՝ վնասելով
ազգի մեծությանն ու
բարեկեցությանը:
Արդյունաբերությունը,
կրթությունը, մարդկային
բարքերը՝ ամենը վնասվել էր
Նրանց քայքայիչ
ազդեցությունից:
Վա-նականների պարապ և
մուրացիկ կյանքը ոչ միայն
քամում էր ժողովրդի

միջոցները, այլև
արհամարհանք էր
առաջացնում օգտակար
աշխատանքի հանդեպ:
Երիտասարդությունը
բարոյագրկվում էր և
այլասերվում: Վանականների
ագդեցություն տակ շատերը
փակվում էին վանքերում՝
նվիրվելով վանական կյանքին,
և դա անում էին ոչ միայն
առանց ծնողների
համաձայնության, այլև առանց
տեղյակ պահելու և հակառակ
նրանց կամքի: Հռոմի եկեղեցու
հայրերից մեկը, վանականների
միաբանության պահանջները

վեր դասելով որդիական
պարտականութիւններից,
հայտարարել է. «Եթե անգամ
հայրդ ողբով ու լացով պսակի
դռանդ առաջ, իսկ մայրդ ցույց
տա իր մարմինը, որը կրել է
քեզ, և իր կուրծքը, որ քեզ սնել
է, իմացիր, որ պետք է
ոտնակոխ անես նրանց և
շտապես Քրիստոսի մոտ»:
Լյութերի խոսքերով ասած՝ այս
«հրեշավոր
անմարդկայնության» միջոցով,
«որն ավելի բնորոշ է գայլին
կամ բռնակալին, քան
քրիստոնյային և մարդուն»,
զավակների սրտերը

Կարծրացնում էին ծնողների
հանդեպ (Բարնաս Սիարզ,
Լյութերի կյանքը, էջ 69,70):
Պապական առաջնորդները, [83]
հին փարիսեցիների նման,
այսպես ոտնահարում էին
Աստծո պատվիրաններն իրենց
ավանդություններով: Տները
դատարկվում էին, և ծնողները
զրկվում էին իրենց որդիների ու
դուստրերի
ընկերակցությունից:

Համալսարանների
ուսանողներն անգամ խաբվում
էին վանական-ների կեղծ
խոսքերից և ստիպված

անցնում նրանց շարքերը:
Շատերը հետագայում զղջում
էին այդ քայլի համար՝
տեսնելով, որ խորտակել են
իրենց կյանքը և վշտացրել
իրենց ծնողներին, բայց մեկ
անգամ ծուղակն ընկնելուց
հետո անհնար էր գտնել
նախկին ազատությունը: Շատ
ծնողներ, վախենալով
վանականների
ազդեցությունից, հրաժարվում
էին իրենց որդիներին
համալսարան ուղարկելուց:
Կրթական խոշոր
կենտրոններում սովորող
ուսանողների թիվը զգալիորեն

Նվազել էր: Գիտութեան
օջախները թուլացել էին,
ամենուրեք տգիտութիւնն էր
տիրում:

Պապն այս վանականներին
օժտել էր
խոստովանութիւններ լսելու և
թողութիւն շնորհելու
իրավունքով: Եվ դա մեծագույն
չարիքի աղբյուր դարձավ:
Ձգտելով հարստանալ՝
վանականներն այնպիսի
պատրաստակամութեամբ էին
մեղքեր ներում, որ նրանց
դիմում էին ամեն տեսակ
հանցագործներ, և որպէս

հետևանք՝ ամենազազրելի
մեղքերն արագորեն աճում էին:
Յիվանդներն ու աղքատները
մատնված էին տառապանքի,
մինչդեռ ընծաները, որ
կթեթևացնեին նրանց
կարիքները, բաժին էին
հասնում վանականների:
Վերջիններս սպառնալով
մարդկանցից տուրք էին
պահանջում՝ դատապարտելով
նրանց ամբարշտությունը,
ովքեր հրաժարվում էին տալ:
Թեև վանականներն իրենց
մուրացիկ էին անվանում,
նրանց հարստությունն
անդադար աճում էր, և նրանց

հոյակերտ շենքերն ու ճոխ
սեղաններն ավելի ակնհայտ
էին դարձնում ժողովրդի աճող
չքավորութունը: Իրենց
ժամանակն անց կացնելով
ճոխության ու հաճույքների
մեջ՝ նրանք իրենց փոխարեն
ուղարկում էին տգետ
մարդկանց, ովքեր ժողովրդին
զվարճացնելու հա-մար միայն
զարմանալի հեքիաթներ,
առասպելներ ու կատակներ էին
պատմում՝ էլ ավելի
հիմարացնելով նրանց և
դարձնելով վանականների
խաբեության զոհը:
Բայցևայնպես, վանականները

շարունակում էին իշխել
սնոտիապաշտ ամբոխի վրա՝
դրդելով հավատալ, որ մարդու
կրո-նական ողջ պարտքը
պապի գերիշխանությունը
ճանաչելու, սուրբերին
երկրպագելու և
վանականներին ընծաներ
մատուցելու մեջ է, և որ դա
բավական է երկնքում տեղ
ապահովելու համար: [84]

Ուսյալ և բարեպաշտ մարդիկ
զուր էին ջանացել
բարեփոխումներ մտցնել
վանական միաբանությունների
մեջ: Սակայն Ուիկլիֆը, լինելով

ավելի խորաթափանց,
մատնացույց արեց չարիքի
արմատը՝ հայտարարելով, որ
ամբողջ համակարգն իսկ կեղծ
է, և որ այն պետք է վերացվի:
Խնդրի շուրջ հետաքրքրություն
առաջացավ և սկսեցին
հարցուփորձ անել: Տեսնելով
երկրով մեկ թափառող և պապի
ներումը վաճառող
վանականներին՝ շատերը
սկսեցին կասկածել դրամով
մեղքերի թողություն ստանալու
հնարավորությանը և հարց էին
տալիս, թե չպե՞տք է, արդյոք,
թողություն խնդրեն Աստծուց, և
ոչ թե Յոնի պապից: Շատերը

տագնապած էին
վանականների
ընչաքաղցությունից, որը,
թվում էր, երբեք չի
բավարարվի: «Վանականներն
ու Յոնմի քահանաները,—
ասում էին նրանք,— քաղցկեղի
պես ուտում են մեզ: Եթե
Աստված չմիջամտի,
ժողովուրդը կկործանվի»
(Դ՛Օբինյե, ա. 17, գլ. 7): Իրենց
ագահությունը թաքցնելու
համար մուրացիկ
վանականները պնդում էին, թե
հետևում են Փրկչի օրինակին՝
հայտարարելով, որ Յիսուսն ու
Նրա աշակերտներն օգտվել են

Ժողովրդի ողորմությունից: Այս պնդումը վնաս հասցրեց նրանց գործին, քանի որ շատերին դրդեց դիմելու Աստվածաշնչին՝ ճշմարտությանն ինքնուրույն հասկանալու համար, մի բան, որ Յոնան ամենից ավելի քիչ էր ցանկանում: Մարդկանց ուշադրությունն ուղղվեց դեպի ճշմարտության աղբյուրը, ինչը Յոնան նպատակ ուներ թաքցնել:

Ուիկլիֆը սկսեց վանականների դեմ հողվածներ գրել և հրապարակել, սակայն ոչ այնքան նրանց հակաճառելու,

որքան ժողովրդի
ուշադ-րությունը
Աստվածաշնչի և նրա
Յեղիճակի վրա հրավիրելու
նպատակով: Նա հայտարարեց,
որ ոչ պապը, ոչ էլ սովորական
քահանաներն իրավունք չունեն
մեղքեր ներելու և եկեղեցուց
վտարելու, և որ ոչ ոք չպետք է
հեռացվի եկեղեցուց, եթե իր
վրա չի բերել Աստծո
դատապարտությունը: Ավելի
արդյունավետ քայլ նա չէր
կարող նախաձեռնել հոգևոր ու
աշխարհիկ իշխանության այդ
վիթխարի մեքենան
տապալելու համար, որը

Կանգնեցրել էր պապը, և որի
մեջ գերված էին միլիոնավոր
մարդկանց հոգիներն ու
մարմինները:

Ուիկլիֆին դարձյալ կանչեցին՝
պաշտպանելու անգլիական
գահի իրավունքները Յոզոմի
ոտնձգություններից:

Նշանակվելով որպես
թագավորական դեսպան՝ նա
երկու տարի անցկացրեց
Նիդեռլանդներում՝ պապի
ներկայացուցիչների հետ
մասնակցելով
խորհրդակցությունների:
Այստեղ նա ծանոթացավ [85]

Ֆրանսիայի, Իտալիայի և
Իսպանիայի հոգևորականների
հետ՝ հնարավորություն
ստանալով ծանոթանալ
եկեղեցու ներքին կյանքին և
իմանալու այն, ինչ Անգլիայում
ներա համար անհայտ կմնար:
Նա շատ բան սովորեց, որ
պիտի նպաստեր իր հետագա
գործունեությանը: Պապական
պալատի այդ
ներկայացուցիչների մեջ նա
տեսավ նվիրապետության
իսկական եությունն ու
նպատակները: Վերադառնալով
Անգլիա՝ նա շարունակեց ավելի
բացահայտորեն ու եռանդագին

քարոզելի՜ր գաղափարները՝
հայտարարելով, որ Յռոմի
իսկական աստվածները
ագահությունը,
հպարտությունն ու
խաբեությունն են:

Իր գրքույկներից մեկում նա
հետևյալն է ասում պապի և
Նրա հարկահավաքների մասին.
«Նրանք մեր երկրից դուրս են
տանում աղքատների
ապրուստը, և ամեն տարի
հազարավոր մարկ՝
արքայական գանձարանից
եկեղեցական
արարողությունների և այդ

անիծյալ հերձվածողության՝
սիմոնիայի
(շնորհավաճառության) համար,
և ստիպում են ողջ
քրիստոնեական աշխարհին
համաձայնել և աջակցել դրան:
Յի-րավի, եթե մեր երկիրն
ունենար ոսկու մի վիթխարի
սար, և ոչ ոք չօգտվեր դրանից,
բացի այդ հպարտ աշխարհիկ
քահանայի հարկահավաքից,
որոշ ժամանակ անց այդ սարը
գոյությունն չէր ունենա,
որովհետև նա անդադար մեր
երկրից փող է դուրս բերում,
իսկ փոխարենը ոչինչ չի
ուղարկում՝ բացի Աստծո

անեծքից, իր
շնորհավաճառության համար»
(Ջոն Լյուիս, Ջ. Ուիկլիֆի կյանքի
ու տառապանքների
պատմությունը, էջ 37):

Անգլիա վերադառնալուց շատ
չանցած՝ Ուիկլիֆը թագավորի
կողմից նշանակվեց որպես
Լուծերվորթի ծխական
քահանա: Սա հավաստիացնում
էր, որ թագավորը, համենայն
դեպս, դժգոհ չէր նրա
համարձակ խոսքերից:
Ուիկլիֆի ազդեցությունը
զգացվում էր ինչպես պալատի
գործունեության, այնպես էլ

ողջ ազգի հավաստի ձևավորման
մեջ:

Պապական որոտները շուտով
ճայթեցին նրա գլխին: Անգլիա
ուղարկվեց պապական երեք
կոնդակ՝ մեկը համալսարան,
մյուսը թագավորին, երրորդը՝
պրելատներին, և երեքում էլ
կարգադրվում էր անհապաղ ու
վճռական միջոցներով լռեցնել
հերձվածողության ուսուցչին
(Ավգուստոս Նեանդր,
Քրիստոնեական կրոնի և
եկեղեցու ընդհանուր
պատմություն, և. 6, բաժին 2,
կետ 1, պրբ. 8): Մինչ

պապական կոնդակները տեղ
կհասնեին, եպիսկոպոսներն,
իրենց մուլուցքի մեջ, արդեն իսկ
Ուիկլիֆին կանչել էին
դատավարության: Բայց նա
այնտեղ հայտնվեց
թագավորության ամենահզոր
իշխաններից երկուսի
ուղեկցությամբ, իսկ
ժողովուրդը, շրջապատելով
շենքն ու ներխուժելով
դատարան, այնպես վախեցրեց
դատավորներին, որ [86]
քննությունը միառժամանակ
հետաձգվեց, և Ուիկլիֆին թույլ
տրվեց խաղաղությամբ
հեռանալ: Շատ չանցած՝

Էդվարդ III-ը, ում ծերությունից
օգտվելով՝ եկեղեցական
առաջնորդները փորձում էին
տրամադրել նրան
Բարենորոգչի դեմ, մահացավ, և
Ուիկլիֆի նախկին
հովանավորը դարձավ երկրի
ժամանակավոր կառավարիչ:

Սակայն տեղ հասած
պապական կոնդակներն
անառարկելիորեն
պարտադրում էին ողջ
Անգլիային ձերբակալել ու
բանտարկել հերետիկոսին: Դա
նշանակում էր, որ Ուիկլիֆին
հաստատ խարույկ էր

սպասվում: Թվում էր, թե նրան
այլևս ոչինչ չի փրկի Յոնմի
վրիժառուլթյունից: Բայց Նա, ով
հնում ասել էր մեկին. «Մի
վախեցիր... ես քեզ համար
վահան եմ» (Ճննդոց 15.1),
դարձյալ պարզեց իր ձեռքը՝
պաշտպանելու իր ծառային:
Մահը վրա հասավ ոչ թե
Բարենորոգչին, այլ պապին, ով
հրամայել էր կործանել նրան:
Գրիգորի XI—ը մահացավ, և
եկեղեցականները, որ
հավաքվել էին դատելու
Ուիկլիֆին, ցրվեցին:

Աստճո նախախնամությունը
շարունակում էր վերահսկել
իրադարձությունները՝
նպաստելով Բարենորոգման
հետագա զարգացմանը:
Գրիգորիի մահվանը հաջորդեց
երկու ախոյան պապերի
ընտրությունը: Այդ երկու
ընդդիմադիր
իշխանությունները, որ
հավակնում էին
անսխալականության, այժմ
իրարից հնազանդության էին
պահանջում: Յուրաքանչյուր
կողմը կոչ էր անում
հավատացյալներին միանալ
իրեն՝ պատերազմելու մյուսի

դեմ՝ սարսափելի անեծքներ
ուղղելով հակառակորդների
հասցեին, իսկ աջակիցներին
խոստանալով երկնային հա-
տուցում: Այս դեպքերը
զգալիորեն թուլացրին
պապուլթյան իշխանությունը:
Մինչ ախոյան
խմբավորումներն
ամբողջապես տարված էին
կռիվներով, Ուիկլիֆը որոշ
ժամանակ հանգիստ էր:
Պապերն իրար վրա փոխադարձ
մեղադրանքներ ու անեծքներ
էին տեղում, իսկ նրանց
իրարամերժ պահանջները
պաշտպանելու համար արյան

հորձանքներ էին թափվում:
Չանցանքներն ու
խայտառակությունները
հեղեղել էին եկեղեցին: Իսկ
Բարենորոգիչը, առանձնացած
Լուծերվորթի իր եկեղեցում,
ջանում էր մարդկանց
ուշադրությունը կռվող
պապերից դարձնել դեպի
Չիսուսը՝ խաղաղության
հշիսանը:

Իր բերած թշնամությամբ ու
ապականությամբ
պառակտումը ճանապարհ
պատրաստեց Բարենորոգման
համար՝ հնարավորություն

տալով մարդկանց տեսելու
պապության իրական դեմքը:
«Պապերի հերձվածողության
մասին» իր հրատարակած
գրքուկի մեջ Ուիկլիֆը կոչ
արեց [87] ժողովրդին մտածել,
թե արդյո՞ք այդ երկու
քահանաները ճիշտ չէին, երբ
իրար հակաքրիստոս էին
անվանում: «Աստված,— ասաց
նա,— այլևս թույլ չտվեց, որ
դևը տիրի միայն մեկ այդպիսի
քահանայի, այլ...
բաժանություն մտցրեց երկուսի
միջև, որպեսզի մարդիկ
Քրիստոսի անունով
կարողանան երկուսին էլ

հեշտությամբ հաղթել» (Ռ.
Վառլզ— հան, Ջոն Ուիկլիֆի
կյանքն ու հայացքները, Ա. 2, էջ
6):

Իր ուսուցչի նման՝ Ուիկլիֆն
Ավետարանը քարոզում էր
աղքատ-ներիս: Նա
չբավարարվեց՝ լույսը
տարածելով միայն
Լութերվորթի եկե-ղեցու
անդամների համեստ տներում,
այլ վճռեց հասցնել այն
Անգլիայի բոլոր անկյունները:
Այս նպատակին հասնելու
համար նա քարոզիչների մի
խումբ հավաքեց՝ կազմված

հասարակ նվիրյալներից,
ովքեր սիրում էին
ճշմարտությունը և ուրիշ ոչինչ
այնպես չէին ցանկանում,
ինչպես դրա տարածումը: Այս
մարդիկ գնում էին ամենուր՝
սովորեցնելով շուկայական
հրապարակներում, մեծ
քաղաքների փողոցներում ու
գյուղական արահետներում:
Նրանք որոնում, գտնում էին
տարեցներիս, հիվանդներիս ու
աղքատներիս և հայտնում
նրանց Աստծո շնորհի
ավետիսը:

Լինելով աստվածաբանության
պրոֆեսոր Օքսֆորդում՝
Ուիլյուհիֆը քարոզում էր Աստծո
խոսքը համալսարանի
լսարաններում: Նա այնքան
հավատարմորեն էր
ներկայացնում
ճշմարտությունը
ուսանողներին, որ ստացել էր
«Ավետարանի Դոկտոր»
անունը: Բայց նրա կյանքի
մեծագույն գործը Սուրբ Գրքի
անգլերեն թարգմանությունը
պետք է լիներ: «Սուրբ Գրքի
ճշմարտությունն ու
նշանակությունը» իր
աշխատության մեջ նա գրում է,

որ մտադիր է թարգմանել
Աստվածաշունչը, որպես- զի
յուրաքանչյուր ոք Անգլիայում
կարողանա իր մայրենի լեզվով
կարդալ Աստծո հրաշալի
գործերի մասին:

Բայց նրա աշխատանքն
անսպասելիորեն ընդհատվեց:
Նա դեռ վաթսուև տարեկան
չկար, սակայն անընդմեջ ծանր
աշխատանքը,
ուսումնասիրություններն ու
թշնամիների հարձակումները
հյուժե՛լ էին նրա առողջությունը
և վաղաժամ ծերացրել նրան:
Նա հիվանդացավ վտանգավոր

հիվանդութեամբ: Այդ լուրը մեծ
ուրախութիւն պատճառեց
վանականներին: Կարծեյով, թե
Ուիկլիֆը հիմա դառնագին
զղջում է այն չարիքի համար,
որ գործել է եկեղեցու դէմ,
նրանք շտապեցին նրա մոտ՝
լսելու նրա
խոստովանութիւնը:
Ներկայացուցիչներ կրօնական
չորս միաբանութիւններից,
չորս քաղաքացիական
պաշտոնյաների հետ միասին
հավաքվեցին, իրենց կարծիքով,
մեռնող բարենորոգչի մահճի
շուրջ: [88] «Քո շուրթերին մահ
կա,— ասացին նրանք,—

ընդունիր քո մեղ-քերը և մեր ներկայութեամբ ուրացիր այն ամենը, ինչ ասել ես ի վնաս մեզ»: Բարենորոգիչը լուռ լսում էր, այնտիկտն իր սպասավորին խնդրեց բարձրացնել իրեն մահճի մեջ և, հանդարտ նայելով իր խոստովանութեանը սպասող մարդկանց, վճռական ու բարձր ձայնով, որն այնքան հաճախ ստիպել էր նրանց դողալ, ասաց. «Ես չեմ մեռնելու, այլ ապրելու եմ և էլի մերկացնելու եմ վանականների չարագործութիւնները» (ԴՕբիւյե, և.17, գլ.7): Ապշած ու

Չիվանդությունից հյուճված՝
Ուիկլիֆը գիտեր, որ ընդամենը
մի քանի տարվա աշխատանք է
մնացել իրեն, նա հասկանում
էր նաև, թե ինչ ընդդիմության
է հանդիպելու, սակայն,
քաջալերված Աստվածաշնչի
խոստումներով, առաջ գնաց, և
ոչինչ չէր կասեցնելու նրան: Իր
մտավոր ուժերի ողջ
գործությամբ ու հարուստ
փորձառությանմբ նա Աստծո
հատուկ նախախնամությամբ
պահպանվել և պատրաստվել
էր իր բոլոր գործերից այս
մեծագույնի համար: Մինչ
քրիստոնեական ողջ աշխարհն

իրարանցման մեջ էր,
Բարենորոգիչը Լուսերվորթի իր
եկեղեցում անձնատուր էր եղել
իր ընտրած խնդրի
իրականացմանը՝ չնայած
դրսում մուլեգնող փոթորկին:

Վերջապես գործն ավարտված
էր. Աստվածաշնչի երբևէ
արված առաջին անգլերեն
թարգմանությունը պատրաստ
էր: Աստծո խոսքն ար- դեն
հասանելի էր ողջ Անգլիային:
Բարենորոգիչն այլևս չէր
վախենում ոչ բանտից, ոչ էլ
խարույկից: Նա մի լույս էր դրել
անգլիացիների ձեռքում, որը

երբեք չէր մարելու: Իր
հայրենակիցներին տալով
Աստվածաշունչը՝ տգիտության
ու մեղքի կապանքներից իր
երկիրն ազատագրելու և
վեհացնելու համար նա արեց
ավելին, քան ռազմի դաշտում
ձեռք բերված ամենափայլուն
հաղթանակներն են:

Քանի որ այն ժամանակ դեռևս
անհայտ էր տպագրությունը,
Աստվածաշնչի բազմացումը
երկարատև ու հոգնեցուցիչ
աշխատանք էր: Այնքան մեծ էր
գիրքը ձեռք բերելու
ցանկությունը, որ [89] շատերը

սիրով զբաղվում էին դրա
արտագրութեամբ, բայց նրանց
համար շատ դժվար էր
բավարարել պահանջարկը:
Ավելի հարուստ գևորդներից
ոմանք ձեռք էին բերում ողջ
Աստվածաշունչը, մյուսները՝
միայն դրա առանձին մասերը:
Շատ դեպքերում մի քանի
ընտանիքներ միանում էին՝
գնելու ամբողջ գիրքը:
Այսպիսով՝ Ուիկլիֆի
Աստվածաշունչը շուտով
ճանապարհ գտավ դեպի
մարդկանց տները:

Մարդկանց գիտակցությանն
ուղղված կոչը դուրս բերեց
Նրանց պապական
դոգմաներին կուրորեն
հնազանդվելուց: Ուիկլիֆն
այժմ սովորեցնում էր
Բողոքականության տարբերիչ
դրույթները՝ փրկությունը
հավատով առ Քրիստոս և Սուրբ
Գրքի բացառիկ
անսխալականությունը: Նրա
ուղարկած քարոզիչները
Բարենորոգչի
աշխատությունների հետ
միասին Աստվածաշունչը
տարածում էին այնպիսի
հաջողությամբ, որ Անգլիայի

բնակչության գրեթե կեսն
ընդունեց նոր հավատը:

Սուրբ Գրքի հայտնվելը
շփոթեցրեց եկեղեցու
դեկավարությանը: Յի-մա
նրանք պիտի դիմադրեին մի
ավելի հզոր ուժի, քան Ուիկլիֆն
էր, ուժ, որի դեմ նրանց
զենքերը գրեթե անուժ էին: Այդ
ժամանակ Անգլիայում
Աստվածաշունչն արգելող
օրենք չկար, քանի որ այն
նախկինում երբեք չէր
հրատարակվել ժողովրդի
լեզվով: Ավելի ուշ այդպիսի
օրենքներ ընդունվեցին և

Խստորեն պարտադրվեցին,
բայց մինչ այդ, չնայած
քահանաների ջանքերին, որոշ
ժամանակ դեռ
հնարավորություն կար
տարածելու Աստծո խոսքը:

Պապական առաջնորդները
դարձյալ սկսեցին դավեր
նյութել՝ լռեցնելու
բարենորոգչի ձայնը: Իրար
հետևից երեք անգամ նա
կանչվեց դատարան, բայց
ապարդյուն: Նախ
եպիսկոպոսների ժողովը
հայ-տարարեց, որ նրա
գրվածքները հերձվածողական

են, և ապա, իրենց կողմը
շահելով երիտասարդ թագավոր
Ռիչարդ II-ին, նրանից
կորզեցին արքայական
հրամանագիր, որը
բանտարկութուն էր
խոստանում դատապարտված
ուսմունքի բոլոր
հետևորդներին:

Եպիսկոպոսների ժողովից հետո
Ուիկլիֆը բողոքարկեց
խորհրդարանին: Նա ազգային
ժողովի առաջ համարձակորեն
մեղադրեց
հոգևորականությանը և
պահանջեց բարեփոխել

Եկեղեցին իր ահռելի
չարաշահումներից: Նա
համոզիչ կերպով նկարագրեց
պապական գահի կողմից
իշխանության զավթումն ու
Նրա այլասերվածությունը:
Ոհկլիֆի թշնամիները շփոթված
էին: Նրա ընկերներն ու
աջակիցները ստիպված էին
եղել գիջել, ուստի բոլորը [90]
վստահաբար սպասում էին, թե
ձերացած, միայնակ ու
ընկերներից զրկված
Բարենորոգիչն ինքն էլ գլուխ
կխոնարհի արքայական ու
Եկեղեցական միացյալ
իշխանության առաջ: Բայց դրա

փոխարեն պապականներն
իրենք պարտվեցին: Ուիկլիֆի
հուզիչ կոչերից վրդովված՝
խորհրդարանը չեղյալ
հայտարարեց հետապնդման
հրամանագիրը, և
Բարենորոգիչը նորից
ազատության մեջ էր:

Երրորդ անգամ նա բերվեց
դատարան, այս անգամ արդեն՝
կանգնելու թագավորության
բարձրագույն եկեղեցական
ատյանի առաջ: Այստեղ
հերձվածողությանը բարեհաճ
չէին վերաբերվելու: Այստեղ
Ջոնն, ի վերջո, հաղթանակելու

Էր, և Բարենորոգչի
գործունեությանը վերջ էր
դրվելու: Այսպես էին կարծում
պապականները: Եթե նրանց
հաջողվեր իրականացնել իրենց
մտադրությունները, ապա
Ուիկլիֆը պետք է հրաժարվեր
իր ուսմունքից կամ էլ
դատարանից գնար ուղիղ դեպի
խարույկ:

Բայց Ուիկլիֆը չուրացավ: Նա
չէր պատրաստվում
կեղծավորություն անել: Նա
անվեհեր պաշտպանեց իր
ուսմունքը և հետ մղեց իրեն
հալածողների

մեղադրանքները: Մոռանալով
իրեն, իր դիրքն ու
պարագաները՝ նա իր
ունկնդիրներին կանգնեցրեց
աստվածային ատյանի առաջ՝
հավիտենական ճշմարտության
կշեռքի վրա կշռելով նրանց
սուտանուն գիտությունն ու
մոլորությունները: Դատարանի
դահլիճում զգացվում էր Սուրբ
Յոզու ներկայությունը: Աստծո
զորությունը հմայել էր
ներկաներին: Թվում էր՝ նրանք
անզոր էին հեռանալ
այնտեղից: Տիրոջ կապարճից
հանված նետերի նման՝
Բարենորոգչի խոսքերը խոցում

Էին նրանց սրտերը:
Չերձվածողության
մեղադրանքը, որ նրանք
հարուցել էին իր դեմ, նա
համոզիչ ուժով հետ նետեց
նրանց վրա: «Ինչո՞ւ են նրանք
համարձակվում տարածել
իրենց մոլորությունները,—
հարցնում էր նա,— հանուն
չափի Աստծո շնորհը վաճառելու
համար»:

«Ի՞նչ եք կարծում, ո՞ւմ դեմ եք
դուք պայքարում,— վերջապես
հարցրեց նա,— գերեզմանի
շեմին կանգնած մի ծերունո՞ւ:
Ոչ: Դուք պայքարում եք

ճշմարտության դեմ, որը
ձեզանից գորեղ է և հաղթելու է
ձեզ» (Ուայլի, և. 2, գլ. 13): Այս
ասելով՝ նա լքեց ժողովը, և նրա
թշնամիներից ոչ ոք չփորձեց
կանգնեցնել նրան:

Ուիկլիֆի գործը գրեթե
ավարտված էր: Ճշմարտության
դրոշը, որ նա այդքան երկար
կրել էր, շուտով պիտի ընկներ
նրա ձեռքից: Բայց մինչ այդ նա
պետք է մեկ անգամ ևս վկայեր
Ավետարանի մասին: [91]
Ճշմարտությունը պետք է
հռչակվեր հենց մոլորության
թագավորության ամրոցից:

Ուկլիֆին կանչեցին Յոնմի
պապական դատարան, որն
այդ-քան հաճախ թափել էր
սուրբերի արյունը: Չնայած նա
գիտակցում էր, թե ինչ վտանգ է
իրեն սպառնում,
այնուամենայնիվ,
կհնազանդվեր այդ պահանջին,
եթե կաթվածի հարվածն
անհնարին չդարձներ նրա
ճանապարհորդութունը: Ու
թեև նրա ձայնը չէր լսվելու
Յոնմում, նա կարող էր խոսել
նամակի միջոցով, և վճռեց
այդպես էլ անել: Իր եկեղեցուց
Բարենորոգիչը նամակ
ուղարկեց պապին, որը, թեև

գրված էր հարգալից տոնով և
քրիստոնեական ոգով,
խստորեն հանդիմանում էր
պապականների
ցուցամոլությունն ու
հպարտությունը:

«Ես շատ ուրախ եմ,— ասաց
Նա,— որ կարող եմ ամեն
մարդու, և հատկապես Յոզովի
Եպիսկոպոսին, պատմել իմ
հավատի մասին: Կարծում եմ,
որ այն ողջամիտ և ճշմարիտ է,
ինչը Նա սիրով կհաստատի,
կամ, եթե ես սխալ եմ, ինձ
ուղիղ ճանապարհի վրա կդնի:

Նախ՝ ես կարծում եմ, որ
Քրիստոսի Ավետարանն Աստծո
օրենքի ամբողջական
մարմնավորումն է: ...Ուստի
համոզված եմ, որ Հռոմի
եպիսկոպոսը, հանդիսանալով
Քրիստոսի փոխանորդը երկրի
վրա, պետք է հնազանդվի
Ավետարանի այդ օրենքին
ավելի, քան մնացած բոլոր
մարդիկ: Քանզի Քրիստոսի
աշակերտների մեծությունը ոչ
թե աշխարհիկ մեծության ու
պատվի, այլ Քրիստոսի կյանքն
ու վարքը ճշտորեն
ընդօրինակելու մեջ էր: ...
Քրիստոսն իր երկրային

պանդխտութեան ժամանակ
ամենաաղքատ մարդկանցից
էր, ով խուսափում էր
աշխարհային իշխանութիւնից
և պատվից...

Ոչ մի հավատացյալ չպետք է
հետևի անգամ պապին կամ
սուրբերից որևէ մեկին, այլ
միայն մեր Տեր Յիսուս
Քրիստոսին, որովհետև
Պետրոսը և Չեբեդեոսի
որդիները, փափագելով
աշխարհային փառքի՝
հակառակ Քրիստոսի թողած
օրինակի, գայթակղվեցին,
հետևապես նրանց այդ

սխալները չպետք է
ընդօրինակվեն...

Պապը պետք է երկրային ողջ
տիրապետությունն ու
կառավարու-թյունը հանձնի
աշխարհիկ իշխանությանը և
դրան մղի ամբողջ
կղե-րականությանը, քանզի
այդպես էին վարվում
Քրիստոսը և իր առա-քյալները:
Եթե այս հարցերից որևէ մեկում
ես սխալվում եմ, ապա
պատրաստ եմ ամենայն
խոնարհությամբ ուղղվել՝ [92]
Նույնիսկ մահվան գնով: Եթե ես
կարողանայի գործել ըստ իմ

կամքի կամ ցանկութեան, ապա
անպայման կներկայանայի
Յոռմի եպիսկոպոսին: Սակայն
Տերը հակառակ որոշում
կայացրեց՝ սովորեցնելով ինձ
ավելի հնազանդ լինել
Աստծուն, քան մարդկանց»:

Վերջում նա ասաց. «Աղոթենք
մեր Աստծուն, որ նա այնպես
ազդի մեր նորընտիր պապ
Ուրբան VI—ի վրա, որ նա, իր
կղերականների հետ միասին,
ընդօրինակի Տեր Յիսուս
Քրիստոսի կյանքն ու վարքը, և
որպեսզի նրանք հաջողութեամբ
սովորեցնեն ժողովրդին

հետևելու իրենց այդ նույն
բանում» (Ջոն Տոքս, Գործեր և
հուշարձաններ, և. 3, էջ 49, 50):

Այսպես Ուիկլիֆը պապին և
կարդինալներին ներկայացրեց
Քրիստոսի հեզությունն ու
խոնարհությունը՝ ցույց տալով
հակադրությունը նրանց և
Տիրոջ միջև ոչ միայն իրենց,
այլև ողջ քրիստոնեությանը,
ով ներկայացուցիչներն էին
նրանք իրենց համարում:

Ուիկլիֆը համոզված էր, որ իր
հավատարմության համար
վճարելու է կյանքի գնով:

Թագավորը, պապն ու
եպիսկոպոսները միավորվել
էին՝ կործանելու նրան, և թվում
էր, թե ամենաշատը մի քանի
ամսից նրան խարույկ էր
սպասվում: Բայց նրա
արիությունն անսասան էր:
«Ինչո՞ւ եք խոսում
Նահատակության պսակը
հեռվում փնտրելու մասին,—
ասում էր նա,— Քրիստոսի
Ավետարանը քարոզեք
ամբարտավան պրելատներին,
և չեք խուսափի
Նահատակությունից: Ի՞նչ: Ես
պետք է ապրեմ և լռե՞մ...
Երբեք: Թող հարվածը գա, ես

սպասում եմ դրան» (Դ՝Օբիևյե,
և.17, գլ. 8):

Բայց Աստծո

Նախախնամությունը դեռևս
պահպանում էր իր ծա-ռային:
Այրը, ով իր ողջ կյանքի
ընթացքում համարձակորեն
պաշտպանել էր
ճշմարտությունը՝ ամեն օր
վտանգի ենթարկելով իր
կյանքը, չպետք է դառնար իր
թշնամիների ատելության
զոհը: ՈւհիկիՖը երբեք չէր
ձգտել ինքն իրեն պաշտպանել,
նրա պահապանը եղել էր Տերը,
և հիմա, երբ նրա թշնամիները

համոզված էին, որ որսն իրենց
ձեռքում է, Աստծո ձեռքը
հեռացրեց նրան: Այն պահին,
երբ Լութերվորթի իր եկեղեցում
Ուիկլիֆը պատրաստվում էր
հաղորդութուն կատարել,
կաթվածահար վայր ընկավ և
շուտով մահացավ:

Աստված Ուիկլիֆին որոշակի
գործ էր հանձնարարել: Նա
ճշմարտության խոսքը դրել [93]
էր նրա շուրթերին և
պաշտպանութուն էր դրել նրա
շուրջը, որպեսզի այդ խոսքը
հասներ մարդկանց: Նրա
կյանքը պահպանվեց, և

աշխատանքը շարունակվեց
այնքան, մինչև որ հիմք գրվեց
Բարենորոգման մեծ գործի
համար:

Ուիկլիֆը դուրս եկավ
միջնադարյան խավարից:
Նրանից առաջ չէր եղել մեկը,
ուսմ աշխատությունից ելնելով՝
նա կարողանար ձևավորել
Բարենորոգման իր
համակարգը: Հովհաննես
Մկրտչի նման կանչված
հատուկ առաքելության
համար՝ նա նոր դարաշրջանի
պատգամաբեր էր: Սակայն
նրա ներկայացրած

ճշմարտության համակարգն
այնքան ամբողջական ու
ավարտված էր, որ նրանից
հետո եկած բարե-նորոգիչները
չգերազանցեցին այն, իսկ
ոմանք էլ չհասան դրան
նույնիսկ հարյուրամյակներ
անց: Դրված հիմքն այնքան
ընդարձակ ու խորն էր, իսկ
կառուցվածքն այնքան
հաստատուն ու անթերի, որ
նրանից հետո եկողները կարիք
չունեին վերակառուցելու այն:

Ուիկլիֆի սկսած մեծ շարժումը,
որ պիտի ազատեր մարդկանց
խիղճն ու միտքը և ազատ

արձակեր դարեր շարունակ
Յռոմի հաղթական մեքենային
շղթայված ազգերը, սկիզբ էր
առնում Աստվածաշնչից:
Այստեղ էր օրհնության
հորձանքի այն աղբյուրը, որը
դարեդար հոսեց կյանքի ջրի
պես՝ սկսած տասնչորսերորդ
դարից: Ուիկլիֆ
անվերապահորեն հավատում
էր, որ Սուրբ Գիրքը Աստծո
կամքի ներշնչյալ
հայտնությունն է, հավատի և
կյանքի կատարյալ չափանիշը:
Նրան սովորեցրել էին Յռոմի
եկեղեցին դիտել որպես
աստվածային անսխալական

հեղինակութուն,
անառարկեփորեն և
ակնածանքով ընդունել հազար
տարվա ընթացքում
հաստատված ուսմունքն ու
ավանդութունները, բայց նա
շրջվեց այդ ամենից՝ Աստծո
սուրբ խոսքը լսելու համար: Սա
էր այն հեղինակութունը, որը
նա կոչ էր անում ժողովրդին
ճանաչել: Նա հայտարարեց, որ
միակ ճշմարիտ
հեղինակութունը Աստծո ձայնն
է, որը հնչում է Նրա խոսքում,
այլ ոչ թե եկեղեցին, որը
խոսում է պապի միջոցով: Նա
ոչ միայն սովորեցնում էր, որ

Աստվածաշունչը Աստծո կամքի
կատարյալ հայտնությունն է,
այլ նաև այն, որ նրա միակ
մեկնաբանը Սուրբ Հոգին է, և
որ ուսումնասիրելով այն,
յուրաքանչյուր մարդ
պարտավոր է անձամբ
հասկանալ իր
պարտականությունները:
Այսպես նա մարդկանց մտքերը
պապից և Հռոմի եկեղեցուց
դարձնում էր դեպի Աստծո
խոսքը: [94]

Ուիկլիֆը մեծագույն
Բարենորոգիչներից մեկն էր:
Նրանից հետո եկողներից

միայն քչերն են ունեցել նրա
մտքի լայնությունը,
մտածողու-թյան
պարզությունը,
ճշմարտությանը հետևելու
վճռականությունն ու այն
պաշտպանելու
համարձակությունը: Չնայած
իր դարաշրջանի մտավոր
խավարին ու բարոյական
քայքայմանը՝
բարենորոգիչներից առաջինն
աչքի էր ընկնում կյանքի
մաքրությանը, անխոնջ
ջերմեռանդությամբ՝
ուսումնասիրությունների և
աշխատանքի մեջ, անբիծ

ազնվութեամբ և
քրիստոսանման սիրով ու
հավատարմութեամբ՝
ծառայութեան մեջ:

Ուիկլիֆի բնավորութիւնը
վկայում է Սուրբ Գրքի
դաստիարակող, վերափոխող
զորութեան մասին: Նրան
Աստվածաշունչն էր այդպիսին
դարձրել: Սուրբգրային
հայտնութեան մեծ
ճշմարտութիւններն ըմբռնելու
ջանքը թարմացնում և
զորացնում է մարդու բոլոր
ունակութիւնները: Այն
ընդլայնում է միտքը, սրում

ըմբռնողութիւնը և
հասունացնում
դատողութիւնը:
Աստվածաշնչի
ուսումնասիրութիւնն այնպէս
է վեհացնում յուրաքանչյուր
միտք, զգացմունք և ձգտում,
ինչպէս չի կարող անել ուրիշ ոչ
մի ուսումնասիրութիւն: Այն
օժտում է նպատակի
կա-յունությամբ,
համբերությամբ,
խիզախությամբ ու
տոկունությամբ, հղկում է
բնավորութիւնը և սրբացնում
հոգին: Սուրբ Գրքի լրջախոհ,
ակնածալից

ՈԼՍՈԼՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԸ, որ
քննողի միտքն անմիջական
շփման մեջ է դնում
Անսահմանի մտքի հետ,
աշխարհին կտա ավելի հզոր ու
գործուն մտքի, ինչպես նաև
ավելի ազնիվ սկզբունքների
տեր մարդիկ, քան երբևէ տվել է
մարդկային փիլիսոփայության
ամենահանճարեղ ուսուցումը:
«Խոսքերիդ հայտնությունը
լույս է տալիս և իմաստուն է
անում պարզամիտներին»
(Սաղմոս 119.130):

Ուիկլիֆի ուսմունքը դեռ որոշ
ժամանակ շարունակեց

տարածվել: Բարենորոգչի
հետևորդները, որ հայտնի էին
որպես Ուիկլիֆյաններ և
լուլարդներ, շրջելով անցան ոչ
միայն Անգլիան, այլ նաև մյուս
երկրները՝ ամենուրեք սփռելով
Ավետարանի գիտությունը:
Չիմա, երբ նրանց առաջնորդն
այլևս չկար, քարոզիչներն
աշխատում էին էլ ավելի մեծ
եռանդով, քան առաջ, և
ամբոխները հավաքվում էին՝
լսելու նրանց ուսմունքը: Դարձի
էին եկել ազնվականներից
ոմանք, և անգամ թագավորի
կինը: Շատ տեղերում զգալի
բարեփոխումներ էին

կատարվել ժողովրդի կյանքում,
և պապության կռապաշտական
խորհրդանիշները հեռացվել
էին եկեղեցիներից: Բայց
շուտով հալածանքի անողորմ
փոթորիկ մոլեգնեց նրանց դեմ,
ովքեր համարձակվել էին
Աստվածաշունչն ընդունել
որպես իրենց [95] ուղեցույց:
Անգլիացի միապետները,
փափագելով հզորացնել իրենց
իշխանությունը Յոնմի
աջակցության միջոցով,
չերկմտեցին զոհաբերել
բարենորոգիչներին: Առաջին
անգամ Անգլիայի պատմության
մեջ հրաման տրվեց

Ավետարանի հետևորդներին
խարույկի մատնել:
Նահատակությունը հաջորդում
էր նահատակությանը:
Ճշմարտության ջատագովները,
ենթարկվելով հալածանքի ու
կտտանքի, կարող էին միայն
աղաղակել դեպի Չորաց Տերը:
Չետապնդվելով որպես
եկեղեցու թշնամիներ և
հայրենիքի դավաճաններ՝
Նրանք շարունակում էին
քարոզել գաղտնի տեղերում՝
ապաստանելով աղքատների
համեստ տներում, հաճախ նաև
թաքնվելով քարայրներում և
ստորգետնյա անցքերում:

Չնայած կատաղի
հալածանքներին՝ դարեր
շարունակ հանդարտ,
բարեպաշտ, անկեղծ ու
համբերատար բողոք էր հնչում
կրոնական հա-վատի գերիշխող
այլասերման դեմ: Այդ վաղ
ժամանակվա քրիստոնյա-ները,
որ միայն մասամբ գիտեին
ճշմարտությունը, հանուն
Աստծո խոսքի, որին սովոր էին
սիրով հնազանվել,
համբերությամբ կրում էին
ցանկացած չարչարանք:
Ինչպես աշակերտներն
առաքյալների օրերում՝ շատերը

Քրիստոսի գործի համար
զոհաբերում էին իրենց
երկրային ունեցվածքը: Նրանց,
ուն թույլ էր տրվում ապրել
սեփական տներում,
ուրախությամբ հյուրընկալում
էին վտարված եղբայրներին,
իսկ երբ իրենց էին դուրս քշում,
նրանք սիրով էին ընդունում
աքսորյալի ճակատագիրը:
Ճիշտ է, որ հազարավոր
մարդիկ, ահաբեկված իրենց
հալածողների զայրույթից,
ազատություն էին ձեռք բերում
իրենց հավատի
զոհաբերության գնով և դուրս
գալիս բանտերից զղջացողի

հանդերձ հագած՝ ցույց տալու
բուրրին, որ հրաժարվել են
Նախկին հայացքներից:
Սակայն քիչ չէր և հավատարիմ
մարդկանց թիվը,
ազնվականներ և խոնարհ ու
հասարակ մարդիկ աներկյուղ
վկայում էին ճշմարտութունը
զնդաններում, «Լուլարդի
աշտարակներում», տանջանքի
և խարույկի մեջ՝ ցնծալով, որ
արժանի են համարվել
«մասնակից լինելու նրա
չարչարանքներին»:

Պապականներին չէր հաջողվել
Ուիկլիֆի դատաստանը տեսնել

Նրա կենդանության օրոք, և
Նրանց ատելությունը չէր
կարող հագենալ, քանի դեռ
Նրա մարմինը հանգիստ
հանգչում էր գերեզմանում:
Ուկլիֆի մահից ավելի քան
քառասուն տարի անց,
Կոնստանցի ժողովի որոշման
համաձայն, Նրա ոսկորները
հանվեցին և
հրապարակայնորեն այրվեցին,
իսկ մոխիրը թափվեց մոտակա
առվի մեջ: «Այդ առուն,— ասում
է [96] մի հին գրող,— Նրա
մոխիրը տարավ էյվոն, էյվոնը
տարավ Սեվերն, Սեվերնը՝
փոքր ծովեր, իսկ դրանք էլ՝ մեծ

օվկիանոս: Այդպես Ուիկլիֆի մոխիրը դարձավ իր ուսմունքի խորհրդանիշը, որն այժմ տարածվում է ամբողջ աշխարհում» (Թ. Ֆուլլեր, Բրիտանիայի եկեղեցու պատմությունը, և. 4, մաս 2, պար. 54): Ուիկլիֆի թշնամիները հազիվ թե գիտակցեին իրենց չար արարքի նշանակությունը:

Ուիկլիֆի աշխատությունների միջոցով էր, որ բռնեմացի Յան Ջոնսը մերժեց պապական բազմաթիվ մոլորություններ և ոտք դրեց Բարենորոգման

Ճանապարհին: Այդպես՝
միմյանցից բավական հեռու
գտնվող այդ երկու երկրներամ
ցանվեց ճշմարտության սերմը:
Բոհեմիայից գործը տարածվեց
նաև այլ երկրներում:
Մարդկանց ուշադրությունն
ուղղվեց դեպի վաղուց
մոռացված Աստծո խոսքը:
Աստվածային ձեռքը
ճանապարհ էր հարթում Մեծ
Բարենորոգման համար:

ԳԼՈՒԽ 6—ՅՈՒՍ ԵՎ ՅԵՐՈՆՆԻՄՈՍ

Ավետարանը Բոհեմիայում
սերմանվել էր դեռևս իններորդ
դարում: Աստվածաշունչը
թարգմանվել էր, և հանրային
երկրպագությունները
կատարվում էին ժողովրդի
մայրենի լեզվով: Բայց որքան
ավելի էր աճում պապի
իշխանությունը, այնքան
Աստծո խոսքն ավելի
անհասկանալի էր դառնում:
Գրիգորի VII—ը, ով որոշել էր
կոտրել թագավորների
հպարտությունը, նպատակ

ուներ նաև ստրկացնել
ժողովրդին, կոնդակ արձակեց,
որն արգելում էր
հասարակական
պաշտամունքներն անց-կացնել
չեխերեն լեզվով: Պապը
հայտարարեց, որ
«Ամենակարողը կամեցավ, որ
Իր ծառայությունները
կատարվեն անձանոթ լեզվով, և
որ այս օրենքը խախտելու
հետևանքով շատ չարիքներ և
հերձվածողու-թյուններ են
ծնվել» (Ուայլի, Ա. 3, գլ.1):
Այսպիսով՝ Յոհաննես որոշեց
հանգցնել Աստծո խոսքի լույսը
և ժողովրդին թողնել խավարի

մեջ: Սակայն Երկինքն այլ
միջոցներ Էր նախատեսել
եկեղեցու պահպանման
համար: Վալդենսներից և
ալբիգոյցիներից շատերը,
հալածվելով իրենց հայրենի
Ֆրանսիայում և Իտալիայում,
եկան Բոհեմիա:

Չհամարձակվելով բւււււււււււ
քարոզել՝ նրանք գաղտնաբար
եռանդագին աշխատում էին:
Այդպես դարեր շարունակ
պահպանվեց ճշմարիտ
հավատը:

Դեռ մինչև Յուսի օրերը
Բոհեմիայում կային մարդիկ,

ովքեր բացահայտորեն
դատապարտում էին եկեղեցու
ապականվածությունն ու
ժողովրդի արատավորությունը:
Նրանց գործունեությունն
ամենուրեք մեծ
հետաքրքրություն էր
առաջացրել: Ահաբեկված
հոգևորականությունը
հալածանք սկսեց Ավետարանի
հետևորդների դեմ: [98]
Չինվորները որսում էին նրանց
անտառներում և սարերում, ուր
նրանք քշվել էին իրենց
հավատի համար, և շատերը
սպանվում էին: Որոշ ժամանակ
անց հրաման դուրս եկավ, որ

բոլոր նրանք, ովքեր չեն
ընդունում Յոնի
պաշտամունքը, պետք է
այրվեն: Բայց զոհաբերելով
իրենց կյանքը՝ քրիստոնյաները
նայում էին առաջ՝ իրենց գործի
հաղթությանը: Նրանցից մեկը,
ով «սովորեցնում էր, որ
փրկությանը ձեռք է բերվում
միայն հավատով խաչյալ
Փրկչի հանդեպ», մեռնելուց
առաջ հայտարարեց.

«Ճմարտության թշնամիների
կատաղությունն այժմ հաղթում
է մեզ, բայց միշտ այդպես չի
լինելու: Հասարակ ժողովրդից
դուրս է գալու մեկը՝ առանց սրի

և իշխանության, ում նրանք
անգոր կլինեն հաղթելու»
(Նույն տեղում, Ա. 3, գլ. 1):
Լյութերի ժամանակը դեռ հեռու
էր, բայց արդեն գալիս էր մեկը,
ու՛մ վկայությունն ընդդեմ
Յոնի ցնցելու էր ազգերը:

Ցան Յուսը համեստ ծագում
ունեի և վաղաժամ որբացել էր՝
կորցնելով հորը: Նրա
բարեպաշտ մայրը,
կրթությունն ու Աստծո երկյուղը
հա-մարելով
ամենաթանկարժեք գանձերը,
ջանում էր ապահովել այդ
ժա-ռանգությունն իր որդու

համար: Հուսը սովորեց
գավառական դպրոցում, հետո
գնաց սովորելու Պրահայի
համալսարանում՝ ընդունվելով
բարե-գործական
հիմունքներով: Պրահա գնալիս
Նրան ուղեկցում էր մայրը:
Չքավոր որբեայրին երկրային
հարստութուն չուներ՝ տալու
իր որդուն, բայց երբ մոտեցան
մեծ քաղաքին, նա ծնկի իջավ
անհայր պատանու կողքին՝
Նրա համար աղաչելով
երկնային Հոր օրհնութունը:
Հազիվ թե գիտակցեր այդ
մայրը, թե ինչպես էր լսվելու իր
աղոթքը:

Համալսարանում Հոսը շուտով
աչքի ընկավ իր անխոնջ
ջանասիրությամբ ու փայլուն
առաջադիմությամբ, իսկ նրա
անբիծ կյանքն ու
քաղաքավարի, գրավիչ վարքը
համընդհանուր հարգանքի
արժա-նացրին նրան: Նա Հռոմի
Եկեղեցու անկեղծ
հետևորդներից էր և
ան-կեղծորեն ձգտում էր
ստանալ հոգևոր
օրհնությունները, որ այն
խոս-տանում էր: Եկեղեցական
տոներին նա գնում էր
խոստովանության, իր խղճուկ

պահուստից վճարում վերջին
մի քանի գրոշները և միանում
թափորին՝ ստանալու մեղքերի
խոստացված թողութունը:
Ավարտելով համալսարանը՝ նա
դարձավ քահանա, և արագորեն
հասնելով եկեղեցական բարձր
աստիճանի՝ [99] շուտով
հրավիրվեց արքայական
պալատ: Չետո հրավիրվեց
դասախոսելու այն
համալսարանում, ուր
կրթութուն էր ստացել, իսկ
ավելի ուշ դարձավ տնօրեն: Մի
քանի տարվա ընթացքում
բարեգործական հիմունքներով
կրթութուն ստացած ու-սանողը

դարձավ իր երկրի
հպարտութիւնը, և նրա անունը
հռչակվեց ամբողջ
Եվրոպայում:

Սակայն քարենորոգման իր
գործը Յուսը սկսեց մեկ այլ
ոլորտում: Քահանայի
աստիճան ստանալուց մի քանի
տարի անց նա նշանակվեց
Բեթղեհեմ կոչվող եկեղեցու
քարոզիչ: Այս եկեղեցու
հիմնադիրը մեծապես կարևորել
էր Սուրբ Գրքի քարոզչութիւնը
ժողովրդի լեզվով: Չնայած
Յոնի ընդդիմութեանը՝
այդպիսի քարոզները

Բոհեմիայում դեռ բոլորովին
չէին վերացել: Սակայն շատերը
գաղափար չունեին
Աստվածաշնչից, և
հասարակության բոլոր
խավերում ծաղկում էին
ամենաստոր արատները: Հոսը
անխնա դատապարտում էր
դրանք՝ վկայակոչելով Աստծո
խոսքը և սերմանելով
ճշմարտության ու սրբության
սկզբունքները:

Պրահայի քաղաքացի
Հերոնիմոսը, ով հետագայում
դարձավ Հոսի մտերիմ
գործակիցը, վերադառնալով

Անգլիայից՝ իր հետ բերել էր
Ուիկլիֆի աշխատությունները,
որոնք լայնորեն տարածվեցին
իր հա-րազատ երկրում նաև
Անգլիայի թագուհու
ագդեցութեամբ, ով եղել էր
Բոհեմիայի արքայադուստրը:
Չոտը մեծ հետաքրքրությամբ
էր կարդում դրանք: Նա
հավատում էր, որ դրանց
հեղինակն անկեղծ քրիստոնյա
է եղել, և բարեհաճությամբ
ընդունեց նրա առաջարկած
բարեփոխումները: Այդ մասին
չկասկածելով անգամ՝ Չոլսն
արդեն ոտք էր դրել այն

ճանապարհին, որը խիստ
հեռացնելու էր նրան Յոնմից:

Յենց այդ օրերին Անգլիայից
Պրահա ժամանեցին երկու
օտարա-կաններ՝ ուսյալ
մարդիկ, ովքեր, ընդունելով
լույսը, եկել էին այն
տա-րածելու հեռավոր այս
երկրում: Նրանք սկսեցին
բացեիբաց բողոքել պապի
գերիշխանության դեմ, սակայն
իշխանությունները շուտով
լռեցրին նրանց, չկամենալով
հրաժարվել իրենց նպատակից՝
նրանք դիմեցին այլ միջոցների:
Լինելով ինչպես քարոզիչներ,

այնպես էլ նկարիչներ՝ նրանք
որոշեցին գործի դնել իրենց
վարպետությունը: Մարդաշատ
մի տեղում նրանք
քաղաքացիներին երկու նկար
ներկայացրին: Մեկը
պատկերում էր Քրիստոսի
մուտքը Երուսաղեմ՝ [100] «հեզ
և էշի վրա նստած» (Մատթեոս
21.5). Հիսուսի ետևից գնում էին
աշակերտները՝
ճամփորդությունից մաշված
հագուստներով և ոտաբոբիկ:
Մյուս նկարը պատկերում էր
պապական թափորը. պապն՝ իր
թանկարժեք զգեստով և
եռահարկ թագը գլխին, նստած

Էր շքեղորեն զարդարված ձիու
վրա, նրա առջևից գնում էին
շեփորահարները, իսկ հետևից՝
շլացուցիչ հանդերձներով
կարդինալներն ու
պրելատները:

Սա մի քարոզ էր, որը գրավեց
բոլոր խավերի ուշադրությունը:
Բազմաթիվ մարդիկ գալիս էին
նկարները դիտելու: Չկար մեկը,
որ չհասկանար դասը: Շատերի
վրա խոր տպավորություն էր
գործել Տեր Քրիստոսի
հեզություն ու խոնարհության և
պապի՝ Նրա կոչեցյալ ծառայի,
հպարտության ու

մեծամտության հակադրումը:
Պրահայում մեծ իրարանցում
սկսվեց, և օտարականները
որոշ ժամանակ անց իրենց իսկ
անվտանգության համար հարկ
համարեցին հեռանալ: Սակայն
նրանց տված դասը չմոռացվեց:
Նկարները մեծ ազդեցություն
թողեցին Յուսի վրա՝ դրդելով
նրան ավելի խորությամբ
սերտել Աստվածաշունչն ու
Ուիկլիֆի աշխատությունները:
Թեև նա դեռ պատրաստ չէր
ընդունելու Ուիկլիֆի
առաջարկած բոլոր
բարեփոխումները, բայց սկսեց
ավելի պարզ տեսնել

պապութեան իսկական
եռութիւնը և ավելի մեծ
եռանդով դատապարտել
հոգևորականութեան
հպարտութիւնը,
ամբարտապանութիւնն ու
քայքայվածութիւնը:

Բոհեմիայից լույսը թափանցեց
Գերմանիա, քանի որ Պրահայի
համալսարանում տեղի
ունեցած խռովութիւնների
պատճառով հարյուրավոր
գերմանացի ուսանողներ
մեկնեցին տուն: Նրանցից
շատերը Հոլսից էին ընդունել
Աստվածաշնչի առաջին

գիտելիքները և
վերադառնալով՝ այժմ սկսեցին
Ավետարանը տարածել իրենց
հայրենիքում:

Պրահայում տեղի ունեցած
դեպքերի լուրը հասավ Յոնմ, և
Յոնսը շուտով կարգադրություն
ստացավ ներկայանալ պապին:
Յնազանդվել՝ կնշանակեր իր
անձն անտարակույս մահվան
ենթարկել: Բոհեմիայի
թագավորն ու թագուհին,
համալսարանը,
ազնվականության
ներկայացուցիչներն ու
կառավարական

պաշտոնյաները միասին
դիմեցին պապին՝ խնդրելով, որ
նա թույլ տա Հուսին մնալ
Պրահայում և նրա հարցերին
պատասխանել պատգամավորի
միջոցով: Այս խնդրանքը
բավարարելու փոխարեն
պապը դատական գործ
հարուցեց, դատապարտեց
Հուսին և ապա բանադրանք
հռչակեց Պրահայի վրա: [101]

Այդ ժամանակներում նման
դատավճիռը որտեղ էլ որ
հռչակվեր, ամենուրեք
տագնապ էր առաջացնում:
Արարողությունները, որոնցով

այն ուղեկցվում էր, նպատակ
ունեին ահաբեկել ժողովրդին,
որն Աստծո ներկայացուցիչն էր
համարում պապին, ով ուներ
դրախտի ու դժոխքի
բանալիները և իշխանություն՝
ինչպես աշխարհիկ, այնպես էլ
հոգևոր դատաստաններ
տեսնելու: Մարդիկ հավատում
էին, որ երկնքի դարպասները
փակ են բանադրված
շրջանների առաջ, ու մինչև
պապը չբարեհաճի հանել
արգելքը, մեռյալների
անմատչելի կլինի դրախտի
երանությունը: Ի նշան այս
սոսկալի աղետի՝ կրոնական

բոլոր ծառայութիւնները
դադարեցվում էին,
եկեղեցիները՝ փակվում:
Պսակադրութիւնները
կատարվում էին եկեղեցական
բակերում: Մեռյալներին հողին
էին հանձնում առուներում,
դաշտերում և այլուր՝ առանց
թաղման ծեսերի: Նման
ազդեցիկ միջոցներով Հռոմը
փորձում էր հսկողութեան տակ
պահել մարդկանց խիղճը:

Ողջ Պրահան խուճապի մեջ էր:
Շատերն իրենց
դժբախտութիւնների մեջ
մեղադրում էին Հուսին և

պահանջում, որ նրան մատնեն
Հռոմի դատաստանին:
Փոթորիկը հանդարտեցնելու
նպատակով Բարենորոգիչը
միառժամանակ հեռացավ իր
հայրենի գյուղը: Այստեղից նա
Պրահայում թողած իր
ընկերներին գրում էր. «Ես ձեր
միջից հեռացա՝ պարզա- պես
հետևելով Հիսուս Քրիստոսի
խրատին ու օրինակին,
որպեսզի առիթ չտամ
հիվանդամիտներին՝ իրենց
վրա հավիտենական
դատապարտություն բերելու, և
որպեսզի բարեպաշտների
համար տառապանքի ու

հալածանքի պատճառ չլինեմ:
Ես հեռացա նաև՝ գիտակցելով,
որ ան-աստված քահանաները
դեռ երկար ժամանակ կարող են
արգելել Աստծո խոսքի քարոզը
ձեր շրջանում, բայց ես չեմ լքել
ձեզ՝ ուրանալու աստվա-ծային
ճշմարտությունը, հանուն որի,
Աստծո օգնությամբ,
պատրաստ եմ մեռնել»
(Բռննեխոս, Բարենորոգիչները
մինչև Բարենորոգումը, հ. 1, էջ
87): Յուսը չդադարեցրեց իր
գործունեությունը, այլ շրջեց
մերձակայքում՝ քարոզելով
ծարավ բազմությանը:
Այսպիսով, ավետարանի գործն

արգելելու պապի ձեռնարկած
միջոցները պատճառ դարձան
դրա ավելի լայն տարածմանը:
«Ոչինչ չենք կարող անել
ճշմարտության դեմ, բայց՝
ճշմարտության համար» (Բ
Կորնթացիս 13.8): [102]

«Թվում էր, թե Յոսն իր
գործունեության այս շրջանում
մտատանջությունների ու
մաքառումների մեջ է: Թեև
եկեղեցին ձգտում էր
շանթահարել նրան, բայց նա
չէր արհամարհում նրա
իշխանությունը: Յոսն
եկեղեցին նրա համար

տակավին Քրիստոսի
հարսնացուն էր, իսկ պապը՝
Աստծո ներկայացուցիչն ու
փոխանորդը: Հուն, ըստ
Էության, պայքարում էր ոչ թե
իշխանության սկզբունքի, այլ
դրա չարաշահումների դեմ: Դա
սուկալի պայքար առաջացրեց
Նրա մտքի համոզումների և
խղճի պահանջների միջև: Եթե
այդ իշխանությունն արդար ու
անսխալական էր, ինչպես ինքը
հավատում էր, ապա ինչո՞ւ էր
բացատրվում Նրան
չինազանդվելու իր դրդումը:
Նա տեսնում էր, որ
ինազանդվել՝ նշանակում է

մեղանչել, բայց ինչո՞ւ պետք է
անսխալական եկեղեցուն
հնազանդվելը հանգեցնել
նման եզրակացութեան: Սա
նրա համար անլուծելի մի
խնդիր էր: Այդ կասկածները
շարունակ տանջում էին նրան:
Խնդրի մոտավոր լուծումը, որ
նա կարողացավ գտնել, այն էր,
որ այդպիսի բան արդեն եղել է,
երբ Փրկչի օրերում եկեղեցու
քահանաներն այնքան էին
ապականվել, որ իրենց
օրինական իշխանությունը
գործածում էին անօրեն
նպատակների համար: Սա
դրդեց նրան որդեգրելու մի

սկզբունք, ինչը նա առաջարկեց
ընդունել նաև մյուսներին, այն
է՝ գիտակցաբար ընկալված
Սուրբ Գրքի պատվիրանները
պետք է վերահսկեն մարդու
խիղճը, այսինքն՝ միակ
անսխալական առաջնորդը
Աստված է, որ խոսում է Սուրբ
Գրքի միջոցով, ոչ թե եկեղեցին,
որ խոսում է քահանայության
միջոցով» (Ուայլի, Ա. 3, գլ. 2):

Երբ որոշ ժամանակ անց
խռովությունները Պրահայում
հանդարտվեցին, Յուսը
վերադարձավ իր Բեթղեհեմ
եկեղեցին՝ ավելի եռանդով ու

Խիզախութեամբ շարունակելու
Աստծո խոսքի քարոզչությունը:
Նրա թշնամիները գործուն ու
գորեղ էին, բայց թագուհին ու
ազնվականներից շատերը նրա
բարեկամներն էին, և ժողովրդի
մեծ մասն էլ աջակցում էր
նրան: Համեմատելով նրա
մաքուր ու վեհացնող ուսմունքն
ու սուրբ կյանքը Հռոմի
այլասերող դոգմաների և
հոգևորականության
ազահության ու
անբարոյականության հետ՝
շատերը պատիվ էին համարում
լինել նրա կողմնակիցները:

Մինչ այժմ Յուսը միայնակ էր
գործում, բայց շուտով
Բարենորոգման գործին
միացավ Յերոնիմոսը, ով դեռևս
Անգլիայում ընդունել էր
Ուիկլիֆի ուսմունքը: Այդ
ժամանակից ի վեր նրանց [103]
ճակատագրերը միահյուսվեցին
և մեռնելուց էլ անբաժան պիտի
լինեին: Յերոնիմոսը
չափազանց տաղանդավոր ու
հանճարեղ, պերճախոս և ուսյալ
անձնավորություն էր, ինչի
շնորհիվ վայելում էր ժողովրդի
համակրանքը, բայց այն
որակներով, որ կազմում են
բնավորության իրական ուժը,

Յուսն ավելի բարձր էր: Նրա
հանդարտ դատողությունը
զսպիչ ուժ էր Յերոնիմոսի
պոռթկուն հոգու համար, ով
անկեղծ խոնարհությամբ
հետևում էր Յուսի
խորհուրդներին՝ գիտակցելով
Նրա արժեքը: Նրանց միացյալ
ջանքերի շնորհիվ
Բարենորոգման գործն ավելի
մեծ թափ ստացավ:

Աստված մեծապես լուսավորել
էր այս ընտրյալ մարդկանց
միտքը՝ բացահայտելով նրանց
Յոնի մոլորություններից
շատերը, սակայն նրանք

չընդունեցին ողջ լույսը, որ
պետք է արվեր աշխարհին: Իր
այս ծառաների միջոցով
Աստված ժողովրդին դուրս էր
բերում պապուկթյան խավարից,
բայց նրանք բազում արգելքներ
պիտի հաղթահարեին, ուստի
Նա առաջնորդում էր նրանց
քայլ առ քայլ, որքան որ նրանք
ի վիճակի էին ընդունելու
լույսը: Նրանք պատրաստ չէին
միանգամից ընդունելու
ամբողջ լույսը և կմերժեին այն,
ինչպես խավարում երկար
ժամանակ մնացածներն են
շրջվում կեսօրվա արևից, ուստի
Նա քիչ-քիչ հայտնում էր այն

առաջնորդներին այնքան,
որքան որ ժողովուրդը կարող
էր ընդունել: Դարերի
ընթացքում նոր հավատարիմ
աշխատողներ էին վեր կենալու՝
ժողովրդին էլ ավելի առաջ
տանելու Բարենորոգման
ուղիով:

Պառակտումը եկեղեցում
շարունակվում էր: Հիմա արդեն
երեք պապեր էին պայքարում
գերիշխանության համար, և
նրանց կռիվը հանցանքներով
ու խռովութեամբ էր լցրել
քրիստոնեական ողջ աշխարհը:
Չբավարարվելով միմյանց

Նզովելով՝ պապերը դիմեցին
աշխարհիկ գեներալին:
Յուրաքանչյուրը ջանում էր
գինամթերք ու գինվորներ ձեռք
բերել: Բայց դրա համար դրամ
եր պետք, և սկսեցին վաճառքի
հանել եկեղեցու պարզաները,
պաշտոններն ու
օրհնությունները: Ընդօրի-
նակելով իրենց
դեկավարներին՝ քահանաները
նույնպես դիմեցին
պաշտոնավաճառության ու
պատերազմի՝ մրցակիցներին
ճնշելու և իրենց իշխանությունն
ուժեղացնելու համար: Օրեցօր
աճող համարձակությամբ Հուսը

կրակոտ կերպով բողոքում էր
կրոնի անուսով կատարվող
պղծությունների դեմ, և
ժողովուրդն էլ Յռոմի
առաջնորդներին բացեիբաց
մեղադրում էր այն աղետների
մեջ, որոնք ցնցում էին
քրիստոնեական աշխարհը:
[104]

Թվում էր՝ Պրահան դարձյալ
հայտնվեց արյունահեղ
ընդհարման եզրին: Ինչպես
անցյալ դարերում՝ Աստծո
ծառան մեղադրվեց որպես
«Իսրայելի խանգարող» (Գ
Թագավորաց 18.17): Քաղաքը

Նորից բա-Նադրանքի տակ
ընկավ, իսկ Յուսը հեռացավ իր
հարազատ գյուղը:

Վկայությունը, որ Նա այնքան
հավատարմորեն տալիս էր իր
սիրելի Բեթղեհեմ եկեղեցուց,
ավարտվեց: Նա պիտի խոսեր
ավելի լայն բեմահարթակից՝
դիմելով ողջ քրիստոնեական
աշխարհին՝ Նախքան կզոհեր
իր կյանքն իբրև ճշմարտության
վկա:

Եվրոպան քայքայող
չարիքներին վերջ դնելու
համար Կոնստանցուլմ
ընդհանուր ժողով գումարվեց:

Դա արվեց կայսր Սիզիզմունդի
և երեք ախոյան պապերից
մեկի՝ Յովհաննես XXIII—ի
ցանկությամբ: Յովհաննես
պապի համար, ում
քնավորությունն ու
քաղաքականությունը հազիվ
թե դիմանային անգամ այն
ժամանակների այլասերված
հոգևորականների
քննադատությանը, ժողով
գումարելու պահանջն ամենևին
ողջունելի չէր: Բայց նա,
այնուամենայնիվ,
չհամարձակվեց հակառակվել
Սիզիզմունդի կամքին:

Ժողովի հիմնական
նպատակներն էին՝ վերացնել
պառակտությունը եկեղեցում և
արմատախիլ անել
հերձվածությունը: Այսպիսով՝
երկու հակապապերի հետ
միասին հրավիրվեց նաև նոր
հայացքների գլխավոր քարոզիչ
Ցան Յուսը: Յիշյալ պապերն
իրենց ապահովության համար
անձամբ չէին եկել, այլ
ուղարկել էին իրենց
ներկայացուցիչներին:
Յովհաննես պապը՝ ժողովի
թվացյալ նախաձեռնողը,
ներկայացավ վատ
կանխազգացումներով՝

ենթադրելով, թե միապետն
իրեն գահընկեց անելու
գաղտնի մտադրություն ունի, և
վախենալով, որ իրենից հաշիվ
կպահանջեն պապական թագը
խայտառակող մեղքերի,
ինչպես նաև այն ոճիրների
համար, որոնցով այն ձեռք էր
բերվել: Բայցևայնպես, նա
Կոնստանց ժամանեց մեծ
շքեղությամբ,
ամենաբարձրաստիճան
եկեղեցականների
ուղեկցությամբ, որոնց հետևում
էր պալատականների թափորը:
Քաղաքի ողջ
հոգևորականությունն ու

իշխանավորները բնա-կիչների
ահռելի բազմութեան հետ
միասին դուրս եկան նրան
ողջունե- լու Նրա գլխավերևում
ոսկե ամպիովանի էր, որը կրում
էին գլխավոր պաշտոնյաներից
չորսը: Նրա առջևից գնում էր
զորքը, իսկ կարդինալների և
ազնվականների ճոխ
հանդերձները տեսարանն
ավելի տպավորիչ էին
դարձնում:

Այդ միջոցին մեկ այլ
ճանապարհորդ էր մոտենում
Կոնստանցին: Հոսընը քաջ
գիտակցում էր իրեն

սպառնացող վտանգը: [105] Նա
հրաժեշտ էր տվել իր
ընկերներին, կարծես այլևս
երբեք չէր հանդիպելու նրանց,
և ճանապարհ էր ընկել՝ զգալով,
որ այն իրեն դեպի խարույկ է
տանում: Թեև պահպանագիր
էր ստացել Բոհեմիայի
թագավորից, իսկ
ճամփորդութեան ընթացքում՝
Նան Սիգիզմունդ կայսրից, նա,
այնուամենայնիվ,
պատրաստվել էր մահվան:

Պրահայի իր ընկերներին
հասցեագրված նամակում նա
ասել է. «Իմ եղբայրներ ...ես

մեկնում եմ՝ թագավորից
ստացած պահպանագիրը
ձեռքիս, որպեսզի կանգնեմ իմ
բազմաթիվ և կատաղի
թշնամիների առջև ...բայց ես
լիովին ապավինում եմ
ամենագոր Աստծուն՝ իմ
Փրկչին: Ես հավատում եմ, որ
Նա կլսի ձեր ջերմեռանդ
աղոթքները և կշնորհի ինձ Իր
ողջամտությունն ու
իմաստությունը, որպեսզի
կարողանամ դիմադրել նրանց,
և որ կտա Իր Սուրբ Հոգին՝
հաստատելու ինձ Իր
ճշմարտության մեջ, որ ես
կարողանամ արհաբար

դիմավորել փորձությունները,
բանտը, և եթե հարկ չի՛նի՝ նաև
դաժան մահը: Հիսուս
Քրիստոսը չարչարվեց հանուն
Իր սիրեցյալների, ուստի պե՞տք
է արդյոք զարմանալ, որ Նա
մեզ թողել է Իր օրինակը,
որպեսզի մենք էլ
համբերությամբ կրենք բոլորը՝
մեր իսկ փրկության համար:
Նա Աստված է, իսկ մենք՝ Նրա
արարածները, Նա Տերն է, իսկ
մենք՝ Նրա ծառաները, Նա
աշխարհի Տիրակալն է, իսկ
մենք՝ թշվառ մահկանացուներ,
և սակայն՝ Նա չարչարվեց:
Ինչո՞ւ, ուրեմն, մենք էլ

չչարչարվենք, հատկապես երբ
տառապանքը մաքրագործում է
մեզ: Ուստի, սիրելիներ, եթե իմ
մահը պետք է փառավորի
Նրան, աղոթեք, որ այն շուտ
գա, և որ Նա ուժ տա ինձ
անսասան մնալու իմ բոլոր
դժբախտություններում: Բայց
եթե ավելի լավ է, որ ես
վերադառնամ ձեզ մոտ,
աղոթեք Աստծուն, որ
վերադառնամ անբիժ, այսինքն՝
չթաքցնեմ Ավետարանի ոչ մի
ճշմարտություն, որպեսզի
եղբայրներին գերազանց
օրինակ թողնեմ՝ հետևելու
արժանի: Թերևս ինձ այլևս

երբեք չտեսնեք Պրահայում,
բայց եթե ամենազոր Աստված
բարեհաճի վերադարձնել ինձ
ձեզ մոտ, եկեք ավելի
հաստատուն սրտով աճենք
Նրա օրենքի և սիրո մեջ»
(Բոննեխոս, Ա.1, էջ 147,148):

Սեկ այլ նամակում՝ ուղղված
Ավետարանի աշակերտ
դարձած մի քահանայի, Յոսեփ
մեծ խոնարհությամբ խոսում է
սեփական սխալների մասին՝
դատապարտելով իրեն «ճոխ
հանդերձ հագնելուց հաճույք
զգալու [106] և թեթևամիտ
զբաղմունքների վրա ժամեր

վատնելու համար»: Յետո նա
ավելացնում է հետևյալ հուզիչ
հորդորները. «Թող Աստծո
փառքը և հոգիների
փրկությունը զբաղեցնեն
միտքդ, ոչ թե շահամոլություն
ու ունեցվածքը: Չգուշացիր, որ
տունդ ավելի չզարդարես, քան
հոգիդ, և ամենից ավելի հոգ
տար հոգևոր շինության մասին:
Աղքատների հետ եղիր
բարեպաշտ ու խոնարհ, և
կարողությունդ մի՛ վատնիր
խնջույքների վրա: Եթե դու
չշտկես կյանքդ և չխուսափես
ավելորդություններից,
վախենում եմ, որ ինձ նման

դաժանորեն կպատժես ... Դու գիտես իմ ուսմունքը, քանի որ դեռ մանկությունից դասեր ես առել ինձանից, ուստի ավելորդ եմ համարում դարձյալ գրել քեզ այդ մասին: Բայց աղաչում եմ քեզ Տիրոջ ողորմությամբ, ինձ չընդօրինակես այն բոլոր ունայն բաներում, որոնց ես երբևէ տրվել եմ»: Ծրարի վրասա ավելացնում է. «Աղերսում եմ քեզ, բարեկամս, նամակը չբացես, մինչև որ հաստատ չիմանաս, որ ես մահացել եմ» (Նույն տեղում, և. 1, էջ 148, 149):

Ճամփորդության ընթացքում
Յուսն ամենուրեք տեսնում էր
իր ուսմունքի տարածման
նշանները և բարեհաճ
վերաբերմունքն իր գործի
հանդեպ: Ամբոխները գալիս
էին դիմավորելու նրան, իսկ
որոշ քաղաք-ներում նրան
փողոցներով ուղեկցում էին
քաղաքային իշխանավորները:
Կոնստանց հասնելուն պես
Յուսին լիակատար
ազատութիւն շնորհվեց:
Կայսեր պահտպանագրին
ավելացավ նաև Յուսի
անվտանգության վե-րաբերյալ
պապի անձնական

հավաստիացումը: Բայց
դրժելով այս հանդիսավոր և
բազմիցս արված
հայտարարությունները՝ պապի
և կարդինալների հրամանով
Բարենորոգչին շուտով
ձերբակալեցին և նետեցին մի
նողկալի գնդան: Ավելի ուշ
Նրան տեղափոխեցին Ռեյն
գետից այն կողմ գտնվող մի
ամրոց և այնտեղ
բանտարկեցին: Օգուտ
չքաղելով իր
դավաճանությունից՝ պապն
ինքն էլ շուտով հայտնվեց Նույն
բանտում (Նույն տեղում, Ա. 1,
Էջ 247): Ժողովի առջև,

սպանութիւննից,
պաշտոնավաճառութիւննից ու
շնութիւննից բացի, նա մեղավոր
էր ճանաչվել ամենաստոր
հանցանքների մեջ, այնպիսի
մեղքերի, «որոնց մասին
խոսելն էլ ամոթ է»: Այսպես
հայտարարեց հենց ժողովը և
գրկեց նրան թագից ու գցեց
բանտ: Հակապապերը
նույնպես հեռացվեցին, և
ընտրվեց նոր պապ: [107]

Թեև պապի հանցանքները շատ
ավելի ծանր էին, քան նրանք,
որոնցում Հուսը երբևէ
մեղադրել էր քահանաներին և

որոնց պատճառով
բարեփոխում էր պահանջել,
այնուամենայնիվ, նույն
ժողովը, որ պաշտոնանկ արեց
պապին, վճռեց ջախջախել նաև
Բարենորոգչին: Յու-

սի բանտարկությունը մեծ
վրդովմունք առաջացրեց
Բոհեմիայում: Ազդեցիկ
ազնվականները ժողովին լուրջ
բողոքներ ներկայացրին այդ
բռնության դեմ: Կայսրը, ով
հակված չէր թույլատրել
պահպանագրի խախտումը,
ընդդիմացավ Յուսի դեմ
հարուցված գործին: Բայց

Բարենորոգչի թշնամիները
ոխակալ ու վճռական էին:
Նրանք օգտվեցին միապետի
նախապաշարումներից,
վախերից ու եկեղեցու համար
նրա նախանձախնդրութունից:
Նրանք բազմաթիվ
փաստարկներ բերեցին՝
ապացուցելու, որ
«հերետիկոսներին կամ
հերձվածողության մեջ
կասկածվող անձանց տրված
խոստումը չպետք է պահվի,
նույնիսկ եթե նրանք ստացած
լինեն կայսեր և թագավորների
պահպանագրերը» (Ժակ
Լենֆանթ, Կոնստանցի ժողովի

պատմութիւնը, Ա.1, Էջ 516):
Այդպէս նրանք հաղթեցին:

Հիվանդութիւննից ու
բանտարկութիւննից հյուճված
(գնդանի խոնավ ու կեղտոտ
օդից տենդ էր բռնկվել, որ քիչ
էր մնացել վերջ տար նրա
կյանքին) Հուսին բերեցին
ժողով: Նա շղթայակապ
կանգնած էր կայսեր առջև, ով
իր հեղինակութեամբ ու խոսքով
երաշխավորել էր նրա
պաշտպանութիւնը:
Երկարատև դատավարութեան
ընթացքում նա վճռականորեն
պաշտպանեց ճշմարտութիւնը՝

Եկեղեցական և պետական
պաշտոնյաների
ներկայութեամբ հանդիսավոր և
ճշմարիտ բողոք ուղղելով
նվիրապետութեան
ապականվածութեան դէմ: Երբ
նրանից պահանջեցին կամ
հրաժարվել իր ուսմունքից, կամ
ել մեռնել, նա ընտրեց
նահատակի ճակատագիրը:

Աստծո շնորհը գորացնում էր
նրան: Վերջնական
դատավճռին նախորդած
տառապալից շաբաթների
ընթացքում նրա հոգին լցված
էր երկնային խաղաղութեամբ:

«Ես գրում եմ այս նամակը
բանտից,- ասել էր նա իր
ընկերոջը,— շղթայակապ
ձեռքով՝ սպասելով վաղվա իմ
մահապատժին ...Երբ Յիսուս
Քրիստոսի շնորհիվ դարձյալ
հանդիպենք ապագա կյանքի
երանելի խաղաղության մեջ,
դու կիմանաս, թե որքան
ողորմած է եղել Աստված իմ
հանդեպ, որքան է զորացրել
ինձ իմ փորձությունների և
նեղությունների մեջ»

(Բռննեխոս, և. 2, էջ 67): [108]

Իր զնդանի մռայլության մեջ
նա տեսնում էր ճշմարիտ

հավատի հաղթանակը: Իր
երազներում վերադառնալով
Պրահայի այն եկեղեցին, ուր
ինքը քարոզել էր ավետարանը,
նա տեսավ, որ պապն ու նրա
եպիսկոպոսները պատերի
վրայից ջնջում են իր նկարած
Քրիստոսի պատկերները: «Սա
շատ վշտացրեց նրան: Բայց
հաջորդ օրվա երազում նա
տեսավ շատ նկարիչների,
ովքեր վերականգնում էին այդ
պատկերներն ավելի մեծ
քանակությամբ և ավելի վառ
գույներով: Ավարտելով իրենց
աշխատանքը՝ մեծ
բազմությամբ շրջապատված

Նկարիչները բացականչեցին.
«Չիմա թող պապերն ու
եպիսկոպոսները գան: Նրանց
այլևս երբեք չի հաջողվի ջնջել
դրանք»: Պատմելով իր երազը՝
Բարենորոգիչն ասաց. «Ես
համոզված եմ, որ Քրիստոսի
պատկերը երբեք չի ջնջվի:
Նրանք ուզում էին ոչնչացնել
այն, բայց այն նորից
կվերածնվի բոլորի սրտերում
ինձանից շատ ավելի հմուտ
քարոզիչների կողմից »
(Դ՛Օբիևյե, և.1, գլ. 6):

Չուսին վերջին անգամ բերեցին
ժողովի առջև: Դա մի

հսկայական և շքեղ հավաք էր,
որին ներկա էին կայսրը,
կայսրուհւթյան իշխանները,
աբբայական պալատի
ներկայացուցիչները,
կարդինալները,
եպիսկոպոսներն ու
քահանաները, ինչպես նաև
ներկաների մի հոծ
բազմութիւն: Քրիստոնեական
աշխարհի բոլոր ծայրերից
հավաքվել էին վկաներ՝
ականատես լինելու առաջին
մեծ զոհաբերութեանը այն
երկարատև պայքարում, որով
պիտի ձեռք բերվեր խղճի
ազատութիւնը:

Երբ Յուսին առաջարկեցին ասել
իր վերջին խոսքը, նա
հայտարարեց, որ հրաժարվում
է ուրանալ իր համոզումները և,
իր խորաթափանց հայացքը
սևեռելով միապետի վրա, ում
խոստումն այդքան
անամոթաբար դրժվել էր,
ասաց. «Ես վճռեցի իմ հոժար
կամքով ներկայանալ այս
ժողովին՝ ապավինելով
ժողովրդի պաշտպանությանը և
այստեղ ներկա գտնվող կայսեր
խոստմանը»: Սիգիզմունդի
դեմքը կարմրեց, երբ բոլորի
աչքերն ուղղվեցին նրա վրա:

Դատավճռի հռչակումից
անմիջապես հետո սկսվեց
պաշտոնագրկման
արարողությունը: Երբ
եպիսկոպոսները
բանտարկյալին
քահանայական հանդերձներ
հագցրին, նա ասաց. «Մեր Տեր
Ջիսուս Քրիստոսին նույնպես
խայտառակելով՝ սպիտակ
պատմուճան հագցրին, [109]
երբ Ջերովդեսը հրամայեց
Նրան Պիղատոսի մոտ տանել»
(Նույն տեղում, և. 2, էջ 86):
Նրան դարձյալ կոչ արեցին
ուրանալ, իսկ նա, շրջվելով

դեպի ժողովուրդը,
պատասխանեց. «Ի՞նչ երեսով
այդ դեպքում ես նայեմ
երկնքին: Ինչպե՞ս նայեմ
հազարավոր մարդկանց, ում
քարոզել եմ մաքուր
ավետարանը: Ո՛չ: Ինձ համար
նրանց փրկությունն ավելի
թանկ է, քան մահվան
դատապարտված այս խղճուկ
մարմինը»: Այնուհետև նրա
հանդերձները մեկ առ մեկ
հանեցին, և յուրաքանչյուր
եպիսկոպոս արարողության իր
մասը կատարելիս անեծք էր
արտասանում: Վերջում «Նրա
գլխին դրին բրգածն թղթյա

Խույր, որի վրա նկարված էին
դևերի ահասարսուռ
պատկերներ, իսկ ճակատային
մասում գրված էր.

«Արքերեստիկոս»: «Մեծ
ուրախությամբ ես կկրեմ
անարգանքի այս թագը հանուն
Քեզ,— ասաց Յուսը,— ո՛վ
Յիսուս, որ ինձ համար փշե
պսակ կրեցիր»:

Այնուհետև պրեզատներն
արտասանեցին. «Այժմ մենք քո
հոգին հանձնում ենք
սատանային»: «Իսկ ես,—
ասաց Յան Յուսը՝ իր հայացքն
ուղղելով դեպի երկինք,—

հոգիս հանձնում եմ Քո ձեռքը,
ո՛վ Տեր Յիսուս, քանզի Դու
փրկագնեւ ես ինձ» (Ուայլի, Ա. 3,
գլ. 7):

Այնուհետև Յուսին հանձնեցին
աշխարհիկ
իշխանություններին և տարան
մահապատժի վայրը: Նրան մի
վիթխարի թափոր էր հետևում՝
հարյուրավոր զինվորներ,
թանկարժեք հանդերձներ
հագած քահանաներ ու
եպիսկոպոսներ և Կոնստանցի
բնակիչները: Երբ նրան
կապեցին գերանին, և ամեն ինչ
պատրաստ էր կրակը վառելու

համար, նահատակին կրկին
առաջարկեցին փրկել իր
կյանքը՝ հրաժարվելով իր
մոլորություններից: «Ո՞ր
մոլորությունից ես պետք է
հրաժարվեմ,- հարցրեց Յուսը,—
ես ինձ հանցավոր չեմ
ճանաչում: Աստծուն վկա եմ
կանչում, որ այն ամենն, ինչ ես
գրել ու քարոզել եմ, մարդկանց
մեղքից և կործանումից փրկելու
համար եմ արել, ուստի մեծ
ուրախությամբ իմ արյունով
կկնքեմ այն ճշմարտությունը,
որ գրել ու քարոզել եմ» (Նույն
տեղում, և. 3, գլ.7): Երբ կրակը
բորբոքվեց նրա շուրջ, նա

սկսեց երգել. «Յիսուս, Դավթի
Որդի, ողորմիր ինձ», և այդպես
շարունակեց, մինչև որ
րնդմիշտ լռեց նրա ձայնը:

Յուսի թշնամիներն անգամ
ցնցված էին նրա հերոսական
վարքից: Մի ջերմեռանդ
պապական, նկարագրելով
Յուսի նահատակութունը, և
[110] նաև Յերոնիմոսինը, ով
մահացավ քիչ ավելի ուշ, ասել
է. «Երկուսն էլ իրենց անվրդով
էին պահում, երբ մոտեցավ
նրանց վերջին ժամը: Նրանք
պատրաստվում էին խարույկին
այնպես, ասես հարսանյաց

Խնջուլքի էին գնում: Նրանք
ցավի ոչ մի ճիչ չարձակեցին:
Երբ կրակը բարձրացավ,
սկսեցին օրհներգել, և
բորբոքվող բոցն անգամ անգոր
եր լռեցնել նրանց երգը» (Նույն
տեղում, Ա. 3, գլ.7):

Երբ Յուսի մարմինն
ամբողջովին այրվեց, նրա
մոխիրը հողի հետ միասին
հավաքվեց ու լցվեց Ռեյնը, և
գետն այն տարավ օվկիանոս:
Յուսի հալածիչները զուր էին
կարծում, թե արմատախիլ են
արել նրա քարոզած
ճշմարտությունները: Նրանք

հազիվ թե պատկերացնեին, որ
այդ օրը դեպի ծով քշված
մոխիրը սերմի պես էր լինելու՝
ցանված աշխարհի բոլոր
երկրներում, որ դեռևս անհայտ
երկրներում ճշմարտության
վկաների առատ պտուղ էր
բերելու: Ձայնը, որ հնչել էր
Կոնստանցի ժողովի դահլիճում,
իր արձագանքն էր գտնելու
գալիք բոլոր դարերում: Հուսն
այլևս չկար, բայց
ճշմարտությունը, հանուն որի
նա մեռավ, երբեք չի կարող
կորչել: Նրա հավատի և
հավատարմության օրինակը
խրախուս-սելու էր շատերին՝

հաստատ կանգնելու հանուն
ճշմարտության՝ չնայած
տանջանքներին ու մահվանը:
Նրա սպանությունը համայն
աշխարհին ցուցադրեց Յոզեֆի
ուխտադրուժ դաժանությունը:
Ճշմարտության թշնամիներն
անգիտակցաբար առաջ էին
տանում հենց այն գործը, որին
ապարդյուն ջանում էին վերջ
դնել:

Բայց դեռ մի խարույկ էլ պետք
է վառվեր Կոնստանցում: Մեկ
այլ նահատակի արյունն էլ
պետք է վկայեր հանուն
ճշմարտության: Յերոնիմոսը,

հրաժեշտ տալով Յուսիւն, երբ
նա մեկնում էր
դատավարութեան, հորդորել էր
նրան լինել քաջ և աներեր՝
ասելով, որ վտանգի դեպքում
ինքն անմիջապէս օգնութեան
կհասնի: Լսելով Բարենորոգչի
բանտարկութեան լարը՝
հավատարիմ աշակերտն
անհապաղ պատրաստվեց
կատարել իր խոստումը: Առանց
պահպանագրի և միայն մեկ
ընկերոջ ուղեկցութեամբ նա
մեկնեց Կոնստանց: Յասնելով
այնտեղ՝ նա համոզվեց, որ
իրեն միայն վտանգի էր
ենթարկել՝ Յուսի փրկութեան

համար ինչ—որ բան անելու
հնարավորություն չունենալով:
Նա փախավ քաղաքից, սակայն
ճանապարհին բռնվեց և մի
խումբ զինվորների
ուղեկցությամբ շղթայակապ
եստ բերվեց: Երբ նա առաջին
անգամ հայտնվեց [111]
ատյանում, իր դեմ հարուցած
մեղադրանքներին
պատասխանելու նրա վարձերը
դիմավորեցին «Կրակի՛ տալ
Նրան, այրե՛լ Նրան»
գոչյուններով (Բռննեխոս. և. 1,
Էջ 234): Նրան զնդան նետեցին՝
շղթայակապ անելով այնպիսի
դիրքով, որ մեծ տառապանք էր

պատճառում նրան, և
կերակ-րում էին միայն հացով
ու ջրով: Մի քանի ամիս անց
բանտարկության դաժան
պայմաններից Յերոնիմոսն
այնպես հիվանդացավ, որ նրա
կյանքը սպառնալիքի տակ էր, և
վախենալով, որ նա դուրս
կպրծնի իրենց ձեռքից, նրա
թշնամիները սկսեցին նրա հետ
պակաս խստութեամբ վարվել,
թեև նա բանտում մնաց մի
ամբողջ տարի:

Յուսի մահը չտվեց
պապականների սպասած
արդյունքը: Նրա

պահպանագրի խախտումը
վրդովմունքի փոթորիկ էր
առաջացրել, Յերոնիմոսին
այրելու փոխարեն՝ ժողովը
որոշեց դիմել ավելի անվտանգ
քայլի՝ ստիպել Նրան ուրանալ,
եթե հնարավոր է: Նրան
բերեցին ժողովի առջև և
առաջարկեցին ընտրել կամ
ուրացում, կամ մահ խարույկի
վրա: Բանտարկությունից
առաջ մահը տրտմություն
կլիներ այն սարսափելի
տառապանքների
համեմատությամբ, որ նա կրել
էր, բայց հիմա
հիվանդությունից, զնդանի

դաժան պայմաններից և
անհանգստության ու
անորոշության տանջանքներից
թուլացած, ընկերներից
բաժանված և Յուսի մահից
վհատված՝ Յերոնիմոսը
սասանվեց և համաձայնեց
հնա-զանդվել ատյանին: Նա
խոստացավ հավատարիմ լինել
կաթոլիկական հավատին և
արդարացի ճանաչեց Ուիկլիֆի
և Յուսի ուսմունքի
դատապարտությունը ատյանի
կողմից՝ բացառությամբ նրանց
սովորեցրած «սուրբ
ճշմարտությունների» (Նույն,
տեղում, հ. 2, էջ 141):

Այդ քայլով Յերոնիմոսը փորձեց
լռեցնել խղճի ձայնը և
խուսափել մահից: Սակայն իր
զնդանի միայնության մեջ նա
ավելի պարզորոշ տե-սավ, թե
ինչ էր արել: Նա մտածում էր
Յուսի արիության և
հավատար-մության մասին,
հետո խորհում ճշմարտության
իր ուրացման շուրջ: Նա
մտածում էր աստվածային
Ուսուցչի մասին, ում խոստացել
էր ծառայել, և ով իր համար
խաչի մահ էր կրել: Մինչև իր
ուրացումը՝ նա իր բոլոր
տառապանքներում

մխիթարվում էր Աստծո
բարեհաճութեան
հավաստիացմամբ, բայց հիմա
խղճի խայթոցներն ու
կասկածները տան-ջում էին
Նրա հոգին: Նա գիտեր, որ դեռ
ստիպված էր լինելու շատ բան
ուրանալ Նախքան Յոռմը
կհաշտվեր իր հետ:
ճանապարհը, որին [112] նա
ոտք էր դրել, կարող էր
ավարտվել միայն լիակատար
ուխտադրժութեամբ: Եվ նա
կայացրեց իր վճիռը, որ երբեք
չի ուրանա իր Տիրոջը՝
կարճատև տառապանքներից
խուսափելու համար:

Ճուտով նրան նորից բերեցին
ատյան: Նրա
հնազանդությունը չէր
բավարարել դատավորներին:
Արյան նրանց ծարավը՝ Յուսի
մահից գրգռված, նոր զոհեր էր
պահանջում: Միայն
ճշմարտությունից
բացարձակապես
հրաժարվելով՝ Յերոնիմոսը
կարող էր պահպանել իր
կյանքը: Բայց նա վճռել էր
բացեիբաց հռչակել իր հավատը
և իր նահատակ եղբոր նման
գնալ դեպի խարույկ:

Նա հրաժարվեց իր նախկին
ուրացումից և որպես մահվան
դատապարտված անձ՝
հանդիսավոր կերպով ինքն
իրեն պաշտպանելու
հնարավորություն պահանջեց:
Վախենալով նրա խոսքերի
ազդեցություն-նից՝ պրելատները
պնդեցին, որ նա պարզապես
հաստատի կամ ժխտի իր դեմ
հարուցված մեղադրանքների
ճշմարտացիությունը:
Չերոնիմոսը բողոքեց այդ
դաժանության և
անարդարության դեմ: «Դուք
ինձ երեք հարյուր քառասուն օր
պահեցիք գարշելի զնդանում,—

ասաց նա,- ապականութեան,
կեղտի, գարշահոտութեան և
ծայրագույն կարիքի մեջ, հետո
բերեցիք այստեղ և, լսելով իմ
ոխտերիմ թշնամիներին,
հրաժարվում եք լսել ինձ ...Եթե
դուք իսկապես իմաստուն եք և
ուզում եք լինել աշխարհի
լույսը, ապա զգուշացեք
արդարութեան դեմ
մեղանջելուց: Ինչ վերաբերում
է ինձ, ես միայն մի տկար
մահկանացու եմ, իմ կյանքը
քիչ կարևորություն ունի, ու
երբ ես հորդորում եմ ձեզ
խուսափելու անարդարացի
վճիռ կայացնելուց, ավելի շատ

ձեզ համար եմ անում, քան թե
ինձ հա-մար» (Նույն տեղում, Ա.
2, Էջ 146, 147):

Նրա պահանջն ի վերջո
բավարարվեց: Իր
դատավորների ներկա-
յությամբ Յերոնիմոսը ծնկի
իջավ և աղոթք արեց, որպեսզի
աստվածային Յոզիև ղեկավարի
իր մտքերն ու բառերը, որպեսզի
ինքը ճշմարտության հակառակ
կամ իր Տիրոջն անարժան
ոչինչ չասի: Նրա համար այդ
օրն իրականացավ առաջին
աշակերտներին տրված Աստծո
հետևյալ խոստումը. «Ձեզ

պիտի տանեն կուսակալների ու
թագավորների առաջ իմ
պատճառով... Բայց երբ ձեզ
մատնեն, հոգ մի՛ արեք, թե
ինչպես կամ ինչ պիտի խոսեք,
քանի որ ոչ թե դուք եք, որ
պիտի խոսեք, այլ ձեր Յոր
Յոզիև, որ պիտի խոսի ձեր մեջ»
(Մատթեոս 10.18-20):

Յերոնիմոսի խոսքերը զարմանք
և հիացմունք առաջացրին
Նույնիսկ Նրա թշնամիների մեջ:
Մի ամբողջ տարի Նա [113]
փակված էր եղել մի սուկայի
զնդանում՝ գրկված կարդալու և
Նույնիսկ տեսնելու

հնարավորութիւնից,
անտանելի ֆիզիկական
տանջանքների և հոգեկան
տառապանքների մեջ: Բայց
չնայած դրան՝ նրա
փաստարկները ներկայացվում
էին այնպիսի հստակությամբ և
զորությամբ, կարծես նա այդ
ամբողջ ժամանակն
ուսումնասիրության մեջ էր
անցկացրել: Նա իր
ունկնդիրների առջև
հիշատակեց սուրբ մարդկանց
այն երկար շարքը, ովքեր
դատապարտվել էին անարդար
դատավորների կողմից: Գրեթե
յուրաքանչյուր սերնդում եղել

Են մարդիկ, որ, ջանալով
վեհացնել իրենց
ժամանակակիցներին,
Նախատվել և վտարվել են, իսկ
հետո պարզվել է, որ նրանք
արժանի են պատվի: Քրիստոսն
Ինքը անարդար ատյանի
կողմից դատապարտվեց որպես
հանցագործ:

Իր ուրացման ժամանակ
Չերոնիմոսը հաստատել էր
Չոլսի դատավճռի
արդարությունը, իսկ հիմա
հայտարարեց, որ զղջում է դրա
համար, և վկայեց մարտիրոսի
անմեղությունն ու սրբությունը:

«Ես նրան ճանաչել եմ
մանկությունից,— ասաց
Ջերոնիմոսը,— Նա գերազանց
մարդ էր՝ արդար և սուրբ: Նա
դատապարտվեց, չնայած
անմեղ էր... Ես նույնպես
պատրաստ եմ մեռնել: Ես չեմ
Նահանջի այն տանջանքների
առաջ, որ ինձ համար
պատրաստել են իմ
թշնամիներն ու կեղծ վկաները,
ովքեր մի օր իրենց
խարդախության համար հաշիվ
են տալու մեծ Աստծուն, ում ոչ
մի կերպ հնարավոր չէ խաբել»
(Բռննեխոս, և. 2, էջ 151):

Ինքն իրեն նախատելով
ճշմարտությունն ուրանալու
համար՝ Յերոնիմոսը
շարունակեց. «Բոլոր մեղրերից,
որ գործել են
պատանեկությունից ի վեր, ոչ
մեկն այնքան չի ճնշում հոգիս և
այնպիսի ցավ չի պատճառում,
որքան այն, որ ես գործեցի այս
բախտորոշ տեղում, երբ
հավանություն տվեցի այն
անօրեն դատավճռին, որ
կայացվել էր Ուիկլիֆի, ինչպես
նաև սուրբ Նահատակի՝ Յան
Յուսի՝ իմ ուսուցչի և ընկերոջ
դեմ: Այո, ես սրտանց
խոստովանում եմ և սուկումով

հայտարարում, որ ամոթալի
կերպով վախեցա, երբ մահվան
սարսափից դրդված՝
դատապարտեցի նրանց
ուսմունքը: Ուստի աղաչում
եմ... ամենակարող Աստծուն՝
ներել իմ մեղքերը, հատկապես
այս մեկը՝ ամենից նողկալին»:
Մատնացույց անելով իր
դատավորներին՝ նա
վճռականորեն ասաց. «Դուք
դատապարտեցիք Ուիկլիֆին և
Յան Յուսին ոչ թե եկեղեցու
ուսմունքն աղավաղելու, այլ
այն պատճառով, որ նրանք
հանդիմանում էին
կղերականների խայտառակ

արարքները՝ նրանց
ցուցամոլութիւնը,
ագահութիւնը,
հպարտութիւնը և
պրելատների ու քահանաների
բոլոր մյուս մեղքերը: [114] Այն,
ինչ նրանք ասել են, անհերքելի
է, և ես համամիտ եմ դրան»:

Նրա խոսքն ընդհատեցին:
Կատաղութիւնից դողացող
պրելատները բղավեցին, «Էլ
ի՞նչ ապացույցներ են ձեզ
պետք: Մեր առջև կանգնած է
ամենահամար հերետիկոսը»:

Այդ փոթորկից ամենևին էլ
չխռովված՝ Յերոնիմոսը
բացականչեց. «Կարծում եք, թե
ես վախենո՞ւմ եմ մեռնելուց:
Դուք ինձ մի տարի պա-հեցիք
սոսկալի զնդանում, ինչն ավելի
ահավոր էր, քան մահը: Դուք
ինձ հետ ավելի դաժանաբար
վարվեցիք, քան թուրքի, հրեայի
կամ հեթանոսի հետ, և իմ
մարմինը բառացիորեն
քայքայվեց, բայց ես չեմ
գանգատվում, որովհետև
լացուկո՞ճն անվայել է հոգևոր
մարդուն: Սակայն ես չեմ
կարող չարտահայտել իմ
զարմանքը քրիստոնյայի

հանդեպ նման
բարբարոսության վերաբերյալ»
(Նույն տեղում, Ա. 2, էջ
151-153):

Դարձյալ կատաղության
փոթորիկ բարձրացավ, և
Ջերոնիմոսին շտապ բանտ
տարան: Սակայն ժողովին
ներկա գտնվողներից ոմանք
խորապես ազդվել էին նրա
խոսքերից և փափագում էին
փրկել նրա կյանքը: Եկեղեցու
բարձրաստիճան
պաշտոնյաներն այցելեցին
նրան՝ փորձելով համոզել, որ
հնազանդվի ժողովին: Նրան

առաջարկեցին ամենափայլուն
հեռանկարները, եթե դադարեր
ընդդիմանալ Յոնմին: Բայց իր
Տիրոջ նման, ում առաջարկվեց
աշխարհի փառքը, Յերոնիմոսը
հաստատ մնաց:

-Ապացուցեք ինձ Սուրբ Գրքով,
որ մոլորության մեջ եմ, և ես
կիրաժարվեմ դրանից,— ասաց
նա:

-Սուրբ Գի՛րքը,— բացականչեց
նրա փորձիչներից մեկը,—
մի՞թե այն ամեն ինչի չափանիշ
է: Ո՞վ կարող է հասկանալ այն՝

առանց եկեղեցու
մեկնաբանութեան:

-Մի՞թե մարդկային
ավանդութիւններն ավելի
արժանահավատ են, քան մեր
Փրկչի Ավետարանը,—
պատասխանեց Յերոնիմոսը:—
Պողոսը նրանց, ում գրել է իր
Նամակները, կոչ չի արել
հետևել մարդկային
ավանդութեան, այլ ասել է.
«Քննեցեք գրքերը»:

-Յերետիկո՛ս,— եղավ
պատասխանը,— իզուր եմ
այսքան ժամանակ կորցնում

քեզ համոզելու համար:
Տեսնում եմ, որ դևի
իշխանության տակ ես (Ուայլի,
և. 3. գլ.10):

Շատ չանցած՝ դատավճիռը
կայացվեց, և նրան տարան այն
նույն տեղը, որտեղ [115]
Նահատակվել էր Յոսը:
Ճանապարհին Նա երգում էր, և
Նրա դեմքը շողում էր
ուրախությունից ու
խաղաղությունից: Նա իր
հայացքը հառել էր Քրիստոսին,
և մահն այլևս սարսափելի չէր:
Երբ դահիճն ուզում էր վառել
կրակը նրա հետևում,

Նահատակը ռացականչեց.
«Համարձակ առա՛ջ արի:
Կրակը վառիր աչքերիս առաջ:
Եթե ես վախենալի, այստեղ չեի
լինի»:

Երբ կրակը բորբոքվեց նրա
շուրջը, նա արտասանեց իր
վերջին աղոթքը. «Տեր,
Ամենակարող Հայր,—
աղաղակեց նա,— ողորմիր ինձ
և ներիր իմ մեղքերը, քանզի
գիտես, որ ես միշտ սիրել եմ Քո
ճշմարտու-թյունը» (Բոննեխոս,
և. 2, էջ 168): Նրա ձայնը լռեց,
սակայն շրթունքները
շարունակում էին աղոթք

ՀՀնչալ: Երբ կրակն ավարտեց
իր գործը, նահատակի մոխիրը
հոգի հետ միասին հավաքվեց և
Յուսի մոխրի պես գցվեց Ռեյնը:

Այսպես վախճանվեցին Աստծո
հավատարիմ ջահակիրները:
Բայց նրանց հռչակած
ճշմարտության լույսը՝ իրենց
հերոսական օրինակի լույսը,
չէր կարող մարել: Ինչպես որ
մարդիկ անկարող են վախել
արևի ընթացքը, այնպես էլ չէին
կարող խափանել այդ օրվա
արշալույսը, որն արդեն
բացվում էր աշխարհի վրա:

Յուսի մահապատիժը
վրդովմունքի և սարսափի կրակ
եր բորբոքել Բոհեմիայում: Ողջ
ազգը գիտակցում էր, որ նա
դարձել էր քահանաների
չարամտության և կայսեր
ուխտադրության զոհը:
Յայտարարվեց, որ նա
ճշմարտության նվիրյալ
ուսուցիչ էր, իսկ ատյանը, որ
նրան դատա-պարտել էր
մահվան, մեղադրվեց
սպանության մեջ: Նրա
ուսմունքն այժմ ավելի մեծ
ուշադրության արժանացավ,
քան երբևէ: Պապի հրամանով
Ուիկլիֆի գրվածքներն այրվել

Էին: Իսկ որոնք որ պահպանվել
Էին, հիմա դուրս էին բերվում
թաքստոցներից և
ուսումնասիրվում
Աստվածաշնչի կամ դրա այն
մասերի հետ. որոնք մարդիկ
կարողանում էին ձեռք բերել, և
այսպես շատերն ընդունեցին
բարեփոխված հավատը:

Յուսին սպանողները մի կողմ
չքաշվեցին՝ հանգիստ նայելու,
թե ինչ-պես է հաղթանակում
Նրա գործը: Պապն ու կայսրը
միացան՝ ճնշելու այդ
շարժումը, և Սիգիզմունդի

գորքերը նետվեցին Բոհեմիայի
վրա: [116]

Բայց մի ազատարար վեր
կացավ: Բոհեմացիներին
առաջնորդում էր ժիշկան, ով
պատերազմը սկսվելուց քիչ
անց բռնորոպին կուրացավ, նա
իր ժամանակվա
ամենահռչակավոր
գեներալներից մեկն էր:
Ապավինելով Աստծո
օգնությանն ու իր գործի
արդարությանը՝ ժողովուրդը
դիմադրում էր թշնամու
ամենահզոր բանակներին:
Կայսրը, կրկին ու կրկին թարմ

աժեր հավաքելով, ներխուժում
էր Բոհեմիա՝ միայն
խայտառակ կերպով ետ
մղվելու համար: Հուսյանները
հաղթահարել էին մահվան
սարսափը, և ոչինչ չէր կարող
ընկճել նրանց: Պատերազմը
սկսվելուց մի քանի տարի անց
քաջարի ժիժկան մահացավ,
բայց նրա տեղը գրավեց
Պրոկոպը, ով նույնքան խիզախ
ու հմուտ գեներալ էր, իսկ որոշ
առումներով՝ ավելի ունակ
առաջնորդ:

Բոհեմացիների թշնամիները,
լսելով կուլյր գորավարի

մահվան մասին, մտածեցին, որ
պատեհ առիթ է ներկայացել
կորցրածը հետ վերադարձնելու
համար: Պապը խաչակրաց
արշավանք հայտարարեց
հուսյանների դեմ, և դարձյալ մի
ահռելի բանակ ուղղվեց դեպի
Բոհեմիա, բայց միայն
ջախջախիչ պարտութուն
կրելու համար: Մեկ այլ
արշավանք ազդարարվեց:
Պապական գահին
հավատարիմ եվրոպական
բոլոր երկրներում սկսեցին
զորք, դրամ և ռազմամթերք
հավաքել: Հազարավոր մարդիկ
կանգնեցին պապի դրոշի

ներքո՝ հավատալով, որ ի վերջո
հուսյան հերետիկոսների վերջը
գալու է: Վստահ հաղթանակի
մեջ՝ վիթխարի զորքը մտավ
Բոհեմիա: Ժողովուրդը
միավորվեց՝ հետ մղելու նրանց:
Երկու բանակներն այնքան
մոտեցան իրար, որ նրանց
միայն գետն էր բաժանում:
«Խաչակիրների ուժերը շատ
ավելի գերազանց էին, բայց
գետն անցնելու և հուսյանների
վրա գրոհելու փոխարեն, ինչի
համար այդքան երկար
ճանապարհ էին անցել, նրանք
կանգնել և լուռ դիտում էին այդ
ռազմիկներին» (Ուայլի, Ա. 3,

գլ.17): Յետո՞ հանկարծակի մի
խորհրդավոր խուճապ տիրեց
գորքին: Առանց գեթ մեկ
հարված հասցնելու՝ այդ հզոր
բանակը բաժան-բաժան եղավ,
և կարծես մի ինչ-որ
անտեսանելի ուժով սկսեց
ցրվել: Յետապնդելով
փախստականներին՝
հուսյանները թշնամու
բանակից շատերին սպանեցին,
և հսկայական ավար մնաց
հաղթողներին, այնպես որ,
սնանկացնելու փոխարեն՝
պատերազմը հարստացրեց
Բոհեմիան:

Մի քանի տարի անց նոր պապի
ղեկավարութեամբ մեկ այլ
արշավանք կազմակերպվեց:
Առաջվա պես՝ Եվրոպայի
պապական [117] բոլոր
երկրներից զորք և միջոցներ
հավաքվեցին: Այս վտանգավոր
նախաձեռնության
մասնակիցներին մեծ ու
գայթակղիչ խոստումներ էին
տրվում: Յուրաքանչյուր
խաչակրի, նույնիսկ
ամենանողկալի ոճիրների
համար, լիակատար ներում էր
երաշխավորվում: Պատերազմի
ընթացքում զոհվածներին
խոստանում էին հարուստ

պարզաներ երկնքում, իսկ
կենդանի մնացածներին՝
պատիվ ու հարստություն
մարտի դաշտում: Դարձյալ մի
ահռելի բանակ հավաքվեց և,
անցնելով սահմանը, մտավ
Բոհեմիա: Յուսյանների զորքը
սկսեց նահանջել՝ այդպիսով
զավթիչներին ավելի ու ավելի
ներքաշելով երկրի խորքը՝
դրդելով նրանց մտածել, թե
հաղթանակն արդեն
ապահովված է: Ի վերջո
Պրոկոպի բանակը կանգ առավ
և շրջվելով դեպի թշնամին՝
անցավ գրոհի: Գիտակցելով
իրենց սխալը՝ խաչակիրները

մնացին ճամբարում՝ սպասելով
հարձակմանը: Երբ լսվեց
մոտեցող զորքի ձայնը, դեռ
նախքան հուսյանների երևալը՝
խաչակիրների բանակում
դարձյալ խուճապ սկսվեց:
Իշխանները, զորավարներն ու
շարքային զինվորները, դեն
նետելով իրենց զենքերը,
փախան բոլոր
ուղղություններով: Պապական
դեսպանը, ով ներխուժման
առաջնորդն էր, զուր էր ջանում
հավաքել իր ահաբեկված ու
կազմալուծված ուժերը:
Չնայած իր գերագույն ճիգերին՝
նա ինքն էլ քշվեց փախչող

ամբոխի հորձանքով:
Պարտությունը լիակատար էր,
և նորից հաղթողները հարուստ
ավարի տեր դարձան:

Այսպիսով՝ երկրորդ անգամ
Եվրոպայի ամենահզոր ազգերի
կողմից ուղարկված
հսկայական բանակը, որ
կազմված էր խիզախ,
ռազմատենչ, զինավարժ ու
սպառազեն մարդկանցից,
առանց պատերազմելու՝
փախավ փոքր և մինչ այդ թույլ
ազգի պաշտպաններից: Դա
աստվածային զորության
դրսևորում էր: Չավթիչներն

ահաբեկվեցին գերբնական
սարսափով: Նա, ով կործանեց
փարավոնի զորքերը Կարմիր
ծովում, ով փախցրեց
մադիանացիների բանակը
Գեդեոնից և նրա երեք հարյուր
զինվորներից, ով մի գիշերվա
մեջ տապալեց հպարտ
ասորիների զորքը, դարձյալ
մեկնեց իր ձեռքը՝ պատժելու
զավթիչներին: «Այնտեղ
վախենում են վախով, ուր որ
վախ չկա, որովհետև Աստված
քեզ պատողների ոսկորները
ցրում է: Դու ամաչեցնում ես
նրանց, որովհետև Աստված

Նրանց դէն է գցում» (Սաղմոս
53.5): [118]

Կորցնելով ուժով հաղթելու
հույսերը՝ պապական
առաջնորդներն, ի վերջո,
որոշեցին դիմել
դիվանագիտության:
Համաձայնության եկան, ըստ
որի բոհեմացիներին
ձևականորեն խղճի
ազատություն էր շնորհվում,
բայց իրականում հանձնում էր
Նրանց Հռոմի իշխանության
ձեռքը: Որպես պայման Հռոմի
հետ հաշտության՝
բոհեմացիներն առաջ էին

քաշել չորս կետ. Աստվածաշնչի
ազատ քարոզչություն, ամբողջ
եկեղեցու մասնակցությունը
Տիրոջ Ընթրիքին և
երկրպագության անցկացումը
մայրենի լեզվով, աշխարհիկ
բոլոր պաշտոններից և
իշխանությունից
հոգևորականների ազատում,
իսկ հանցանքի դեպքում՝
քաղաքացիական դատարանի
իրավագործություն՝ ինչպես
եկեղեցու հասարակ
անդամների, այնպես էլ
հոգևորականության հանդեպ:
Պապությունն ի վերջո
«համաձայնեց ընդունել

հուսյանների առաջ քաշած չորս
կետերն այն վերապահությամբ,
որ դրանց ստույգ
մեկնաբանության իրավունքը
պատկանի ժողովին, այլ
խոսքերով՝ պապին և կայսրին»
(Ուայլի, և. 3, գլ. 18): Սրա հիման
վրա կնքվեց պայմանագիր, և
Յռոմը կեղծիքով ու
խարդախությամբ շահեց այն,
ինչ չէր կարողացել
պատերազմով, որովհետև, իր
մեկնաբանությունը տալով
հուսյանների առաջ քաշած
դրույթներին, ինչպես վարվում
էր Աստվածաշնչի հետ, նա
կկարողանար աղավաղել

դրանց իմաստն՝ իր
նպատակներին
հարմարեցնելու համար:

Բոհեմիայում բազմաթիվ
մարդիկ չհամաձայնեցին
պայմանագրի հետ՝ տեսնելով,
որ այն սպառնում է իրենց
ազատությանը: Նրանց միջև
ծագած տարաձայնություններն
ու պառակտումները
հանգեցրին պայքարի և
արյունահեղության: Այս
պայքարում ընկավ վեհանձն
Պրոկոպը, և Բոհեմիան կորցրեց
իր ազատությունը:

Սիգիզմունդը՝ Յուսի և
Յերոնիմոսի մատնիչը, դարձավ
Բոհեմիայի թագավոր, և
չնայած բոհեմացիների
իրավունքները պաշտպանելու
իր երդմանը՝ նա շարունակեց
ամրապնդել պապությունը:
Բայց Յոնի հանդեպ իր
քծնանքով նա քիչ բան չահեց:
Քսան տարի շարունակ նրա
կյանքը լի էր չարչարանքներով
ու վտանգներով: Նրա զորքերը
ցրվել էին, ու նրա
գանձարանները դատարկվել
երկարատև ու անպտուղ
պատերազմներից, և հիմա՝ մեկ
տարի թագավորելուց հետո, նա

մեռավ՝ իր թագավորութունը
թողնելով քաղաքացիական
պատերազմի եզրին և իր
հետնորդներին ժառանգություն
թողնելով անփառունակ մի
անուն:

Յուզումները, պայքարն ու
արյունահեղությունը
շարունակվեցին: Նորից
օտարերկրյա բանակներ
ներխուժեցին Բոհեմիա, և
ներքին գժտությունները [119]
շարունակում էին բզկտել
ազգը: Նրանք, ովքեր
հավատարիմ էին
Ավետարանին, ենթարկվում

Էին արյունահեղ
հալածանքների:

Երբ նրանց նախկին
եղբայրները, համաձայնության
մեջ մտնելով Յոզովի հետ,
ընդունեցին նրա
մոլորությունները, հին
հավատին հարողները
կազմեցին առանձին եկեղեցի,
որը կոչվեց «Միացյալ
եղբայրություն»: Այս քայլը
նրանց վրա ուղղեց բոլոր
խավերի անեծքը: Սակայն
նրանք մնացին անսասան:
Ստիպված ապաստան գտնելով
անտառներում ու

քարայրներում՝ նրանք դեռ
հավաքվում էին Աստծո խոսքը
կարդալու և միասին
երկրպագելու համար:

Լրաբերների միջոցով, որ
գաղտնաբար ուղարկվել էին
տարբեր երկրներ, նրանք
իմացան, որ տեղ-տեղ կային
«Ճշմարտության առանձին
դավանողներ՝ մի քանիսն այս
քաղաքում, մյուսներն՝ այն,
ովքեր իրենց պես հալածվում
էին, և որ Ալպյան լեռներում
կար մի հին եկեղեցի, որը
հիմնվում էր Աստվածաշնչի
վրա և բողոքում Յոնմի

կռապաշտութեան ու
քայքայվածութեան դէմ»
(Ուայլի, և. 3, գլ. 19): Այս լուրն
ընդունվեց մեծ ուրախութեամբ,
և կապ հաստատվեց վալդէնս
քրիստոնյաների հետ:

Չավատարիմ մնալով
Ավետարանին՝ բռնեմացիներն
իրենց հալածանքի ողջ
գիշերվա ընթացքում,
ամենախավար ժամերին
անգամ, իրենց հայացքն
ուղղելով դեպի հորիզոնը,
համբերութեամբ սպասում էին
արշալույսին: «Նրանց չար օրեր
էին բաժին հասել, բայց...

Նրանք հիշում էին Յուսի և
Յերոնիմոսի այն խոսքերը, որ
մեկ դար անց ծագելու էր արևը:
Դրանք հուսյանների համար
Նույնն էին, ինչ որ Յովսեփի
խոսքերը ստրկության մեջ
գտնվող Իսրայելի ցեղերի
համար. «Ես մեռնում եմ, բայց
Աստված անպատճառ
այցելություն է անելու ձեզ և
այս երկրից հանելու է» (Նույն
տեղում, Ա. 3, գլ. 19):
«Տասնհինգերորդ դարի
վերջում եղբայրության
եկեղեցիների թիվը դանդաղ,
բայց հաստատուն կերպով
սկսեց աճել: Ու թեև նրանց

վիճակը հեռու էր անվտանգ
լինելուց, նրանք
համեմատաբար հանգիստ էին:
Տասնվեցերորդ դարի սկզբին
նրանք երկու հարյուր
եկեղեցիներ ունեին
Բոհեմիայում և Մորավիայում»
(Եզրա Յուլ Զիլլեր, Յան Յուսի
կյանքն ու ժամանակները, և. 2,
Էջ 570): «Մնացորդը,
խուսափելով հրի ու սրի
կործանիչ կատաղությունից,
այնքան սքանչելի էր, որ նրան
թույլ տրվեց տեսնել Յուսի
կանխատեսած արշալույսը»
(Ուայլի, և. 3, գլ. 19):

ԳԼՈՒԽ 7—ԼՅՈՒԹԵՐԻ ԱՆՁԱՏՈՒՄԸ ՅՈՒՄԻՑ

Նրանցից, ովքեր կոչված են
եղել եկեղեցին պապության
խավարից դուրս բերելու դեպի
ավելի մաքուր հավատի լույսը,
ամենաականավորը Մարտին
Լյութերն էր: Ջերմեռանդ,
կրակոտ և նվիրված, ուրիշ որևէ
վախ չունեցող, բացի Աստծո
վախից, և կրոնական հավատի
համար բացի Սուրբ Գրքից
ոուրիշ ոչ մի հիմք չճանաչող
Լյութերը ճիշտ իր ժամանակի
լրաբերն էր, և հենց նրա
միջոցով էլ Աստված

իրականացրեց եկեղեցու
բարեփոխման և աշխարհի
լուսավորության մեծ գործը:

Ավետարանի առաջին
լրաբերների նման՝ Լյութերը
ծնվել է աղքատ ընտանիքում:
Նրա վաղ տարիներն անցել են
գերմանացի գյուղացու համեստ
տանը: Հանքափորի իր
ամենօրյա չարչարանքով
հայրը մի-ջոցներ էր
վաստակում նրա կրթության
համար և կամենում էր, որ նա
իրավաբան դառնա, բայց
Աստված մտադիր էր նրան
շինարար դարձնել այն մեծ

տաճարում, որն այնքան
դանդաղ բարձրանում էր
դարերի ընթացքում:

Նեղությունները, գրկանքն ու
խիստ կարգապահությունն էին
այն դպրոցը, որտեղ Անսահման
Իմաստությունը պատրաստում
էր նյութերին նրա կյանքի
կարևոր առաքելության
համար:

Լյութերի հայրը հզոր, գործուն
մտքի և շատ ուժեղ
բնավորության տեր, ազնիվ,
վճռական, շիտակ մարդ էր: Նա
հավատարիմ էր իր
համոզմունքներին՝ անկախ

հետևանքներից: Նրա ողջամիտ
բանականությունն
անվստահություն էր ներշնչել
Նրան վանական համակարգի
նկատմամբ: Նա ծայրաստիճան
վրդովված էր, երբ Լյութերն
առանց իր համաձայնության
հեռացավ վանք: Միայն երկու
տարի անց հայրը հաշտվեց
որդու հետ, բայց նույնիսկ այդ
ժամանակ էլ նա չփոխեց իր
կարծիքը: [121]

Լյութերի ծնողներն
առանձնահատուկ
ուշադրություն էին դարձնում
իրենց զավակների կրթությանն

ու դաստիարակութեանը:
Նրանք ջանում էին սովորեցնել
Նրանց ճանաչել Աստծուն և
դրսևորել քրիստոնեական
առաքինություններ: Հաճախ
հայրն աղոթք էր բարձրացնում
որդու ներկայութեամբ,
որպեսզի երեխան միշտ հիշի
Տիրոջ անունը և մի օր նպաստի
Նրա ճշմարտության
առաջընթացին: Այս ծնողներն
ամեն հնարավորությու
նով օգտագործում էին իրենց
զավակների բարոյական և
մտավոր զարգացման համար,
որքանով որ Նրանց չարքաշ
կյանքը թույլ կտար: Նրանք

լուրջ և համառ ջանքեր էին
թափում՝ իրենց երեխաներին
բարեպաշտ և օգտակար
կյանքի պատրաստելու համար:
Իրենց վճռականությամբ և
ուժեղ բնավորությամբ նրանք
երբեմն չափազանց խիստ էին
լինում, բայց ինքը՝
Բարենորոգիչը, թեև
գիտակցելով, որ նրանք որոշ
դեպքերում սխալվում էին,
այնուհանդերձ գտնում էր, որ
նրանց տված
դաստիարակությունն ավելի
շատ հավանության է արժանի,
քան՝ դատապարտության:

Դպրոցում, ուր Լյութերն
ուղարկվեց սովորելու վաղ
հասակում, նրա հետ շատ
կոպիտ և նույնիսկ բռնությամբ
էին վարվում: Նրա ծնողներն
այնքան աղքատ էին, որ նա,
սովորելով այլ քաղաքում,
դպրոց գնալիս հաճախ
ստիպված էր լինում դռնից դուռ
երգել՝ իր հացը վաստակելու
համար, հաճախ էլ պարզապես
քաղցած էր մնում: Այն
ժամանակ տիրող մռայլ,
սնահավատ
պատկերացումները կրոնի
մասին սարսափով էին լցնում
նրա սիրտը: Գիշերը նա տխուր

անկողին էր մտնում՝ դալալով
մոայլ ապագայից և մշտապես
սոսկալով այն մտքից, որ
Աստված խիստ ու անողոք
դատավոր է և մի դաժան
բռնակալ այլ ոչ թե բարի
երկնային Յայր:

Այնքան շատ և խոր
հիսսութավտւթյունների մեջ
Լյաթերը վճռակա-նորեն առաջ
էր շարժվում դեպի բարոյական
ու մտավոր կատարելության
բարձրակետը, որին
վափագում էր նրա հոգին: Նա
գիտության մեծ ծարավ ուներ:
Նրա լուրջ ու գործուն միտքը,

ցուցադրականի ու
մակերես-սայիսի փոխարեն,
դրդեց նրան որոնել հիմնավորն
ու օգտակարը:

Երբ նա տասնութ տարեկանում
ընդունվեց Էրֆուրտի
համալսարանը, նրա վիճակն
ավելի բարվոք էր, և
հեռանկարներն՝ ավելի
պայծառ, քան նախկինում:
Նրա ծնողները տնտեսման ու
խնայողության շնորհիվ որոշ
միջոցներ էին ձեռք բերել և
կարող էին անհրաժեշտության
դեպքում օգնել իրենց որդուն:
Իսկ ողջամիտ ընկերների

ազդեցութիւնն [122] ինչ-որ
չափով նվազեցրեց նրա
նախկին ուսուցման մռայլ
ներգործութիւնը: Նա իրեն
նվիրեց լավագոյն
հեղինակների գործերի
ուսումնասիրութեանը՝ իր
հիշողութեան մեջ
ջանասիրութեամբ պահելով
նրանց ամենաարժեքավոր
մտքերն ու իրենը դարձնելով
իմաստունների
իմաստութիւնը: Չնայած իր
նախկին ուսուցիչների կոպիտ
վերաբերմունքին՝ նա դեռ
դպրոցում էր աչքի ընկել, և
բարերար ազդեցութիւնների

Ներքո նրա միտքն արագորեն
զարգանում էր: Փայլուն
հիշողության, վառ
երևակայության, մտավոր հզոր
ուժերի ու անխոնջ
ջանասիրության շնորհիվ նա
շուտով առաջ անցավ իր բոլոր
ընկերներից: Մտավոր
կարգապահությունը
հասունացրել էր նրա
հասկացողությունը և
զարգացրել մտքի
գործունեությունն ու ընկալման
սրություն, որոնք
պատրաստում էին նրան իր
կյանքի պայքարի համար:

Տիրոջ երկյուղն էր Լյութերի սրտում, որ նրան ընդունակ էր դարձնում հավատարիմ մնալ իր նպատակին՝ դրդելով նրան խորապես խոնարհվել Աստծո առաջ: Նա մշտապես զգում էր իր կախվածությունն աստվածային օգնությունից և չէր զլանում ամեն մի օրը սկսել աղոթքով, և նրա հոգին անդադար աղոթք էր շնչում դեկավարության ու աջակցության համար: «Լավ աղոթքը,— հաճախ ասում էր նա,— ուսումնասիրության լավագույն կեսն է» (Դ՝Օբինյե, և. 2, գլ. 2):

Մի անգամ համալսարանի
գրադարանի գրքերը նայելիս
Լյութերը լատիներեն
Աստվածաշունչ գտավ: Նման
գիրք նա երբեք չէր տեսել և
Նրա գոյության մասին անգամ
գաղափար չուներ: Նա լսել էր
հատվածներ ավետարաններից
և առաքելական թղթերից,
որոնք կարդացվում էին
հասարակական
պաշտամունքների ժամանակ,
և ենթադրում էր, թե հենց
դրանք են ողջ
Աստվածաշունչը: Հիմա
առաջին անգամ նա տեսավ

Աստ-ծո ամբողջ խոսքը:
Երկյուղով ու զարմանքով Նա
թերթում էր սրբազան Էջերը և
սրտատրոփ կարդում կյանքի
խոսքերը՝ մերթընդմերթ
ընդհա-տելով ու
բացականչելով. «Երանի՛ թե
Աստված ինձ մի այսպիսի գիրք
տար» (Նույն տեղում, և. 2, գլ.
2): Երկնային հրեշտակները
Նրա կողքին էին, և Աստծո
գահից ճառագող լույսի շողերը
Նրա հասկացողությանը
բացահայտում էին
ճշմարտության գանձերը: Նա
միշտ վախեցել էր վի-րավորել
Աստծուն, բայց հիմա, ավելի

քան երբեք, նրան համակեց իր
մեղավորության խոր
գիտակցումը: [123]

Մեղքից ազատվելու և Աստծո
հետ խաղաղություն գտնելու
անկեղծ ձգտումն ի վերջո դրդեց
նրան հեռանալ վանք և ապրել
ճգնավորի կյանքով: Այնտեղ
նրանից պահանջում էին
կատարել
ամենանվաստացուցիչ
աշխատանքը և տնից տուն
գնալ՝ ողորմություն խնդրելու:
Նա այն տա-րիքում էր, երբ
մարդիկ հատկապես
փափագում են հարգանքի ու

հավա-նության, և այս
ստորացուցիչ ծառայութիւնը
խիստ վիրավորական էր նրա
արժանապատվութեան համար,
բայց նա համբերութեամբ
տանում էր այդ նվաստացումը՝
հավատալով, որ դա պատիժ է
իր մեղքերի համար:

Յուրաքանչյուր պահ, որ
կարելի էր խնայել առօրյա
պարտականութիւններից, նա
նվիրում էր
ուսումնասիրութեանը՝ քնելու և
նույնիսկ իր աղքատիկ սննդի
ընդունման ժամանակի
հաշվին: Ամենից շատ նրան

բավականութիւնն էր
պատճառում Աստծո խոսքի
ուսումնասիրութիւնը: Նա
վանքի պատին շղթայով
ամրացված մի Աստվածաշունչ
գտավ և հաճախ էր դիմում
դրան: Երբ նրա
մեղավորութեան գիտակցումը
խորա-ցավ, նա վարձեց իր
գործերով ներում և
խաղաղութիւնն ձեռք բերել: Նա
խստագույն կյանք էր վարում՝
ձգտելով ծովապահութեամբ,
հսկումներով և խարազանմամբ
ենթարկեցնել իր բնութեան չար
հակումները, որոնցից չէր
ազատել նրան վանական

կյանքը: Նա չէր խոսափում ոչ մի զոհաբերությունից, որով կարող էր հասնել սրտի այնպիսի մաքրության, որը կարժանացներ նրան Աստծո հավանությանը: «Ես իրոք բարեպաշտ վանական էի,— ասել է նա ավելի ուշ,— և իմ միաբանության կանոններին հետևում էի ավելի խստորեն, քան կարող եմ արտահայտել: Եթե որևէ վանական կարողանաք իր գործերով երկինք մտնել, ապա ես հաստատ կունենայի այդ իրավունքը: ...Եթե այդպես երկար շարունակվեր, ես ինձ

գերեզման կհասցնեի» (Նույն տեղում, Ա. 2, գլ. 3): Եվ որպես հետևանք այդ ցավոտ կարգավարժության՝ նա հյուճվեց և տառապում էր ջղաձիգ ուշագնացություններից, որոնցից երբեք այլևս լիովին չկարողացավ ազատվել: Բայց չնայած իր բոլոր ջանքերին՝ նրա ծանրաբեռնված հոգին հանգիստ չէր գտնում: Ի վերջո, նա հայտնվեց հուսահատության եզրին:

Երբ Լյութերին թվաց, թե արդեն ամեն ինչ կորած է, Աստված

Նրան մի ընկեր ու օգնական
ուղարկեց: Բարեպաշտ
Շտաուլպիցը Լյութերին
բացատրեց Աստծո խոսքը և
պատվիրեց Նրան շեղել
հայացքը ինքն իրենից,
դադարել անողոք պատժի
մասին մտածելուց՝ Աստծո
օրենքի խախտման
պատճառով, և Նայել Հիսուսին՝
իր մեղքերը Ներող Փրկչին:
«Մեղքերիդ պատճառով քեզ
տանջելու [124] փոխարեն՝
Նետվիր Փրկչի գիրկը:
Վստահիր Նրան, Նրա արդար
կյանքին ու քավչարար
մահվանը... Լսի՛ր Աստծո

Որդուն: Նա մարդ դարձավ,
որպեսզի քեզ Աստծո
բարեհաճության հավաստիքը
տա»: «Սիրի՛ր Նրան, քանզի
Նա առաջինը սիրեց քեզ» (Նույն
տեղում, Ա. 2, գլ. 4): Ահա թե ինչ
ասաց տրտմության
պատգամաբերը: Նրա խոսքերը
խոր տպավորություն թողեցին
Նյութերի վրա: Երկար
փայփայած մոլորությունների
դեմ պայքարելուց հետո նա
կարողացավ ըմբռնել
ճշմարտությունը, և նրա
խռովված հոգին
խաղաղություն գտավ:

Լյութերը ձեռնադրվեց քահանա
և վանքից կանչվեց
Վիտենբերգի համալսարան՝
դասախոսելու: Այստեղ նա
ձեռնամուխ եղավ
Աստվածաշնչի
ոտումնասիրությանը բնագրի
լեզուներով: Նա սկսեց աստվա-
ծաշնչյան դասեր տալ, և
սաղմոսները, ավետարաններն
ու առաքելական թղթերը
սկսեցին բացահայտվել
հիացած ունկնդիրներին:
Շտաուպիցը՝ նրա ընկերն ու
ուսուցիչը, համոզում էր նրան
բարձրանալ ամբիոն և քարոզել
Աստծո խոսքը: Լյութերը

տատանվում էր՝ իրեն
անարժան համարելով դիմելու
ժողովրդին Քրիստոսի անունից:
Միայն երկարատև մաքառումից
հետո նա զիջեց իր ընկերների
համառ խնդրանքներին: Նա
արդեն զորավոր էր Գրքերով, և
Աստծո շնորհը հանգչում էր
Նրա վրա: Նրա
ճարտարախոսությունը գերում
էր ունկնդիրներին, և
պարզությունն ու զորությունը,
որոնցով նա ներկայացնում էր
ճշմարտությունը, համոզում էր
Նրանց, նրա
խանդավառությունը՝ հուզում
Նրանց սրտերը:

Լյութերը դեռևս պապական
եկեղեցու նվիրյալ զավակն էր,
և նրա մտքով անգամ չէր
անցնում, որ ինքն այլ մարդ է
դառնալու: Աստժո
Նախախնամությամբ Նա
դրդում ունեցավ այցելելու
Ջոնմ: Նա ճանապարհ ընկավ
ոտքով՝ գիշերներն օթևանելով
վանքերում: Իտալիայում մի
կու-սանոց ապշեցրեց նրան իր
հարստությամբ, փառքով ու
շքեղությամբ: Արքայական
եկամուտ ունենալով՝
վանականներն ապրում էին
հոյակերտ բնակարաններում,

շքեղ ու թանկարժեք զգեստներ
էին հագնում և քեֆ էին անում
ճոխ սեղանների շուրջ: Դառը
կանխազգացումներով
Լյութերը համեմատեց այդ
տեսարանն իր անձնուրաց և
ծանր կյանքի հետ: Նա
լիակատար շփոթության մեջ
ընկավ:

Վերջապես նա հեռվում տեսավ
յոթ բլուրների քաղաքը: [125]
Խորին հուզմունքով նա փռվեց
գետնին՝ բացականչելով.

«Սուրբ Հռոմ, ես ողջունում եմ
քեզ» (Նույն տեղում, և. 2, գլ. 6):
Մտնելով քաղաք՝ նա այցելեց

Եկեղեցիները, լսեց
քահանաների ու
վանականների պատմած
զար-մանալի առասպելները և
կատարեց բոլոր պահանջվող
ծեսերը: Ամենուրեք նա
տեսնում էր պատկերներ, որոնք
ապշեցնում և սարսափեցնում
էին նրան: Նա տեսավ, որ
հոգևորական բոլոր խավերում
անօրենություն էր տիրում: Նա
լսում էր պրելատների
անվայելուչ կատակները և
սոսկում նրանց ահասարսուռ
հայհոյությունից, որ
դրսևորվում էր նույնիսկ
պատարագի ժամանակ:

Վանականների և քաղաքի
բնակիչների հետ շփվելիս նա
հանդիպում էր շվայտության և
անառակության: Որ կողմ որ
նա շրջվեր՝ սրբության
փոխարեն պղծություն էր
տիրում: «Ոչ ոք չի կարող
պատկերացնել,— գրել է նա,—
թե Յոզումում ինչպիսի մեղքեր և
խայտառակ արարքներ են
կատարվում: Հավատալու
համար՝ այդ բոլորը պետք է
տեսնել և լսել: Այնպես որ,
նույնիսկ ասում են. «Եթե
գոյություն ունի դժոխք, ապա
Յոզումը կառուցված է նրա վրա:
Դա մի անդունդ է, որից սկիզբ է

առնուամբ ամեն մի մեղք» (Նույն,
տեղում , և. 2, գլ. 6):

Պապի նոր հրամանագիրը
մեղքերի թողութունն էր
խոստանում բոլորին, ովքեր
ծնկաչոք կբարձրանային
«Պիղատոսի աստիճաններով»,
որոնցով, ինչպես կարծում էին,
իջել էր Փրկիչը՝ դուրս գալով
հռոմեական դատական
դահլիճից, և որոնք հրաշքով
երուսաղեմից տեղափոխվել
էին Յուդա: Մի օր Լյութերն
ակնածանքով բարձրանում էր
այդ աստիճաններով, երբ
հանկարծ մի որոտանման ձայն

ասես դիմեց նրան. «Արդարը
հավատով կապրի» (Յոնմեացիս
1.17): Նա արագ ոտքի կանգնեց
և, ամոթահար ու զարհուրած,
շտապ հեռացավ այդտեղից:
Աստվածաշնչյան այդ տեքստը
երբեք չկորցրեց իր
ազդեցությունը նրա վրա: Այդ
ժամանակից ի վեր նա ավելի
պարզ, քան երբևէ, գիտակցեց
մարդկային ջանքերով
փրկության հասնելու
անմտությունն ու մշտական
հավատով Քրիստոսի
արժանիքներին ապավինելու
անհրաժեշտությունը: Նրա
աչքերը բացվեցին և այլևս

երբեք չպետք է փակվեին
պապուլթյան մոլորութունների
հանդեպ: Երես թեքելով Յոնմից՝
Նա «շրջվեց» նրանից Նաև
սրտով և, սկսած այդ պահից,
գնալով ավելի հեռացավ
պապական եկեղեցուց, մինչև
որ խզեց բոլոր կապերը նրա
հետ:

Յոնմից վերադառնալուց հետո
Լյութերն աստվածաբանության
դոկտորի աստիճան ստացավ
Վիտենբերգի համալսարանում:
Ավելի, քան երբևէ, հիմա Նա
ազատ էր՝ նվիրվելու [126]
Սուրբ Գրքի

ՈԼՍՈԼՄՆԱՍԻՐՈԼԹՅԱՆՆՐ, որն
այդքան սիրում էր: Նա
հանդիսավոր խոստում տվեց՝
իր ողջ կյանքի ընթացքում
խորոլթյամբ ոԼՍՈԼՄՆԱՍԻՐԵԼ և
հավատարմոլթյամբ քարոզել
Աստծո խոսքը, ոչ թե պապերի
ասուլթներն ոԼ ոԼՍՄՈԼՆՔՆԵՐԸ:
Նա այլևս ոչ վանական էր, ոչ էլ
դասախոս, այլ Աստվածաշնչի
լիազորված պատգամաբեր: Նա
կանչվել էր որպես հովիվ՝
արածեցնելու Աստծո հոտը, որ
ծարավ և սոված էր
ճշմարտոլթյան: Նա
վճռականորեն հայտարարեց,
որ քրիստոնյաները չպետք է

ընդունեն այլ ուսմունքներ,
բացի նրանցից, որոնք հիմնված
են Սրբազան Գրքի
հեղինակության վրա: Այս
խոսքերը հարված հասցրին
պապական գերիշխանության
հենց հիմքին: Դրանք
արտահայտում էին
Բարենորոգման կենսական
սկզբունքը:

Լյութերը տեսնում էր
մարդկային տեսությունները
Աստծո խոսքից վեր դասելու
վտանգը: Նա անվախորեն
քննադատում էր
գիտնականների

մտահայեցողական
անհավատությունը և
դիմակայում
փիլիսոփայությանն ու
աստվածաբանությանը, որոնք
այդքան երկար ժամանակ
իշխել էին ժողովրդի վրա: Նա
դատապարտում էր դրանք ոչ
միայն որպես արժեք չունեցող,
այլև որպես կործանարար, և
ջանում էր իր ունկնդիրների
ուշադրությունը
փիլիսոփաների ու
աստվածաբանների
սուտանուն գիտությունից
ուղղել դեպի հավերժական
ճշմարտությունները՝ տրված

մարգարեների և առաքյալների
միջոցով:

Շատ թանկ էր նրա հաղորդած
լուրը ծարավ ամբոխների
համար, որոնք կառչում էին
նրա խոսքերից: Այդպիսի
ուսմունք նրանք երբեք չէին
լսել: Փրկչի սիրո ավետիսը,
նրա քավչարար արյան
շնորհիվ մեղքերի թողության ու
հաշտության հավաստիացումը
ցնծությամբ էր լցնում նրանց
սրտերը և անմար հույս
արթնացնում նրանց
հոգիներում: Վիտենբերգում մի
լույս էր վառվել, որի շողերը

հասնելու էին երկրի
ամենահեռավոր մասերը՝
ավելի ու ավելի
պայծառանալով մինչև
Ժամանակի վերջը:

Բայց լույսն ու խավարը չեն
կարող ներդաշնակվել:
Ճշմարտության և մոլորության
միջև անզսպելի պայքար է
ընթանում: Աջակցել դրանցից
մեկին և պաշտպանել՝
նշանակում է հարձակվել
մյուսի վրա և տապալել այն:
Փրկիչն ինքն է ասել. «Ես եկա
ոչ թե խաղաղություն բերելու,
այլ սուր» (Մատթեոս 10.34):

Բարենորոգումը սկսելուց մի քանի տարի անց Լյութերն ասել է. «Աստված ինձ չի առաջնորդում, Նա ինձ հրում է առաջ: Նա ինձ տանում է: Ես ինքս իմ տերը չեմ: Ես ուզում եմ հանգիստ ապրել, սակայն հայտնվում եմ [127] խռովությունների և հեղափոխությունների մեջ» (Դ» Օբինյե, և. 5, գլ. 2): Հիմա նա պատրաստ էր մտնելու պայքարի մեջ:

Հռոմի եկեղեցին Աստծո շնորհը վաճառքի առարկա էր դարձրել: Նրա զոհասեղանների կողքին

դրված էին դրամափոխների
սեղանները (Մատթեոս 21.12),
և օդը լցված էր վաճառողների
ու գնողների աղաղակով:
Յոնան Սուրբ Պետրոսի
տաճարի կառուցման համար
գումար հավաքելու
պատրվակով մարդկանց պապի
հեղինակությունը
ինդուլ-գենցիաներ էին
առաջարկվում գնելու:
Յանցանքի գնով պետք է
տաճար կառուցվեր Աստծուն
երկրպագելու համար, որի
անկյունաքարը պիտի դրվեր
անօրենություն վարձով: Բայց
հենց նույն միջոցները, որոնք

պիտի ծառայելն Յոռմի
մեծացմանը, ամենամահացու
հարվածը հասցրին նրա
զորութեանն ու իշխանութեանը:
Յենց սա էր, որ կանգնեցրեց
պապութեան սւմենավճռական
ու հաջողակ թշնամուն և
հանգեցրեց մի պայքարի, որը
ցնցեց պապական գահն ու
հռոմեական նվիրապետութեան
եռահարկ թագը:

Գերմանիայում
ինդուլգենցիաների վաճառքն
իրականացնում էր Տեցել
անունով մի պաշտոնյա, ով
դատապարտվել էր

հասարակութեան և Աստուծո
օրենքի դէմ գործած
ամենաստոր հանցանքների
համար, սակայն խուսափելով
արժանի պատժից՝ աշխատում
էր առաջ տանել պապի
շահադիտական ու անազնիվ
մտադրութիւնները: Ամոթը
կորցրած՝ նա ստեր էր փչում և
զարմանալի հեքիաթներ
պատմում՝ տգետ,
դժուրահավատ ու սնահավատ
ժողովրդին խաբելու համար:
Եթէ նրանք ունենային Աստուծո
խոսքը, այդպէս չէին խաբվի:
Ժողովրդին պա-պութեան
հսկողութեան տակ պահելու և

Եկեղեցու փառատենչ
առաջ-նորդների
իշխանությունն ու
հարստությունը մեծացնելու
համար էր հենց, որ նրանից
պահում էին Աստվածաշունչը
(Տես՝ Ջոն Ս. Լ. Գիզեր,
Եկեղեցական պատմության
ձեռնարկ 4, մաս 1, պարբ. 5):

Երբ Տեցելը մտնում էր որևէ
քաղաք, նրանից առաջ
մունետիկ էր գնում՝
ազդարարելով. «Աստծո և սուրբ
հոր շնորհը ձեր դռներին է»
(Դ՝Օբիսյե, և. 3, գլ. 1): Եվ
մարդիկ ողջունում էին այդ

հայիոյիչ խաբեքային այնպես,
ասես Աստված Ինքն Էր
երկնքից իջել նրանց մոտ:
Տխրահռչակ այս առետուրը
հաստատվել էր եկեղեցում, և
Տեցելը, քարձրանալով [128]
ամբիոն, մեծարում էր
ինդուլգենցիան՝ որպես Աստծո
ամենաթանկագին պարգևը:
Նա հայտարարում էր, որ
ներման այդ թղթերի շնորհիվ
բոլոր մեղքերը, որ գնորդը
ապագայում կցանկանա
գործել, կներվեն նրան, և որ
«նույնիսկ ապաշխարության
կարիք չկա» (Նույն տեղում, և.
3, գլ. 1): Դեռ ավելին, նա

հավաստիացնում էր իր
ունկնդիրներին, որ
ինդուլգենցիան ուժ ունի
փրկելու ոչ միայն ողջերին,
այլև մեռածներին, և որ հենց
այն պահին, երբ դրամը
կգրնգա իր արկղի մեջ, հոգին,
ուն համար այն վճարվել է,
կազատվի քավարանից և կթռչի
դեպի դրախտ (Տես Կ. Ր.
Չագենբախ. Բարենորոգման
պատմությունը, և. 1, էջ 96):

Երբ Սիմոն մոզն
առաքյալներին առաջարկեց
հրաշագործ զորու-թյունը
վաճառել իրեն, Պետրոսը

պատասխանեց նրան. «Քո արծաթը թող քեզ հետ կորչի, քանի որ կարծեցիր, թե Աստծո պարգևները փողով կստանաս» (Գործք 8.20): Բայց Տեցելի առաջարկին անմիջապես կառչեցին ծարավ ամբոխները: Ոսկին ու արծաթը հոսում էին նրա արկղի մեջ: Փողով գնվող փրկությունն ավելի հեշտ էր ձեռք բերել, քան այն, որը պահանջում էր ապաշխարություն, հավատ և լուրջ ջանքեր՝ դիմադրելու մեղքին և հաղթելու այն:

Յոմեական եկեղեցու ուսյալ և
բարեպաշտ այրերը դեմ էին
դուրս եկել ինդուլգենցիաների
մասին ուսմունքին, և շատերը
չէին հավատում այդ կեղծիքին,
որն այնքան հակասում էր թե
առողջ դատողութեանը, թե
Աստծո խոսքին: Ոչ մի պրելատ
չէր համարձակվում իր ձայնը
բարձ-րացնել ընդդեմ այդ
անօրեն առևտրի, բայց մարդիկ
անհանգիստ ու տագնապած
էին, և շատերը հուզված հարց
էին տալիս, թե մի՞թե Աստված
միջոցներ չի ձեռնարկի իր
եկեղեցին մաքրելու համար:

Երբ դեռ պապության
խստագույն հետևորդ էր,
Լյութերը սարսափով լցվեց՝
տեսնելով ինդուլգենցիաներ
վաճառողների հայիոյիչ
ամբարտավանությունը: Յենց
Նրա համայնքում շատերը
Ներման թղթեր էին գնել և
շուտով եկան իրենց հովվի մոտ՝
խոստովանելով իրենց մեղքերը
և թողություն ակնկալելով ոչ թե
Նրա համար, որ ապաշխարել
էին և ցանկանում էին
վերափոխվել, այլ որ ձեռք էին
բերել ինդուլգենցիաներ:
Լյութերը հրաժարվեց
թողություն տալ՝

զգուշացնելով, որ եթե նրանք
[129] չապաշխարեն և չփոխեն
իրենց կյանքը, ապա կորչելու
են իրենց մեղքերի մեջ: Մեծ
շփոթության մեջ՝ նրանք
գնացին Տեցելի մոտ և
բողոքեցին, որ իրենց
խոստովանահայրը չի
ընդունում նրա
ինդուլգենցիաները, իսկ ոմանք
համարձակորեն ետ
պահանջեցին իրենց դրամը:
Դա կատաղեցրեց վանականին:
Նա ամենասուկալի անեծքների
տարափ տեղաց և հրամայեց
խարույկներ վառել
հրապարակներում՝

հայտարարելով, թե «հրաման է
ստացել պապից այրելու բոլոր
հերետիկոսներին, ովքեր
կհանդգնեն ըմբոստանալ նրա
ամենասուրբ
ինդուլգենցիաների դեմ»
(Դ՝Օբինյե, և. 3, գլ. 4):

Լյութերն այժմ համարձակորեն
ստանձնեց ճշմարտության
առաջատարի իր գործը: Նա
սկսեց ամբիոնից լուրջ ու
հանդիսավոր
նախազգուշացումներ անել:
Նա ժողովրդին ներկայացրեց
մեղքի նողկալի բնույթը՝
սովորեցնելով նրանց, որ

մարդն անկարող է սեփական
գործերով փոքրացնել իր
հանցանքը կամ խուսափել
պատժից: Մեղավորին կարող է
փրկել միայն
ապաշխարությունն Աստծո
առջև և հավատն առ Քրիստոս:
Չնարավոր չէ գնել Քրիստոսի
չնորհը, այն ձրի պարգև է: Նա
խորհուրդ տվեց ժողովրդին ոչ
թե ինդուլգենցիաներ գնել, այլ
հավատով նայել խաչյալ
Փրկչին: Նա պատմեց իր
ցավալի փորձառությունը, երբ
զուր ջանում էր
ինքնանվաստացման և
ինքնապատժման միջոցով

փրկութիւնն ձեռք բերել՝
հավաստիացնելով իր
ունկնդիրներին, որ իր հայացքն
իրենից շեղելով և Քրիստոսին
հավատալով միայն նա
խաղաղութիւնն և
ուրախութիւնն գտավ:

Մինչ Տեցելը շարունակում էր
իր առևտուրն ու ամբարիշտ
հավակնութիւնները, Լյութերը
վճռեց ավելի ազդեցիկ բողոք
բարձրացնել այդ աղաղակող
չարաշահումների դեմ: Առիթը
դրա համար շուտով
ներկայացավ: Վիտենբերգի
ամրոց-եկեղեցում կային

բազմաթիվ մասունքներ, որոնք
եկեղեցական որոշ սուրբ
օրերին ցուցադրում էին
ժողովրդին՝ մեղքերի
լիակատար թողութուն
խոստանալով բոլոր նրանց,
ովքեր այդ ժամանակ այցելում
էին եկեղեցի՝
խոստովանության: Այդպի-

սի օրերին հատկապես շատ
ժողովուրդ էր հավաքվում
այնտեղ: Մոտենում էր
ամենակարևոր տոներից մեկը՝
«բոլոր սրբերի» տոնը: Նախորդ
օրը, միանալով եկեղեցի
գնացող բազմությանը,

Լյուրթերը նրա դռան վրա մի
թուղթ կպցրեց՝ վրան գրված 95
թեզիսներ ինդուլգենցիաների
դեմ: Նա հայտարարեց, որ
պատրաստ է [130] հաջորդ օրը
համալսարանում պաշտպանել
այդ թեզիսները բոլոր նրանց
առջև, ովքեր հարկ կհամարեն
բողոքել դրանց դեմ:

Նրա թեզիսները բոլորի
ուշադրությունը գրավեցին:
Դրանք նորից ու նորից
կարդացվում էին և կրկնվում
ամենուրեք: Համալսարանում և
ամբողջ քաղաքում մեծ հուզում
առաջացավ: Այս թեզիսները

ցույց էին տալիս, որ մեղք
ներելու կամ նրա պատժից
ազատելու իրավունքը երբեք չի
տրվել ոչ պապին, ոչ էլ որևէ այլ
մարդու, որ դա մի կեղծիք է՝
սնահավատ մարդկանցից
դրամ կորզելու խորամանկ
միջոց, դիվական մի հնարք՝
կործանելու բոլոր նրանց
հոգիները, ովքեր կհավատան
այդ խաբեությանը: Պարզորոշ
բացատրվում էր նաև, որ
եկեղեցու ամենաթանկ գանձը
Քրիստոսի Ավետարանն է, որ
նրանում բացահայտված
Աստծո շնորհն անվճար է
տրվում բոլոր նրանց, ովքեր

ապաշխարութեամբ ու
հավատով խնդրում են այն:

Լյութերի թեզիսները
հրավիրում էին բանավեճի,
սակայն ոչ ոք չհամաձայնեց
ընդունել մարտահրավերը:
Նրա բարձրացրած հարցերը մի
քանի օրվա ընթացքում
տարածվեցին ամբողջ
Գերմանիայում, իսկ մի քանի
շաբաթ անց դրանք արդեն
թնդում էին քրիստոնեական
ողջ աշխարհում: Շատ նվիրյալ
կաթոլիկներ, ովքեր տեսել էին
եկեղեցում տիրող
անօրենությունը և այրացել,

չիմանալով սակայն, թե ինչպես
կանխեն դրա զարգացումը, մեծ
ուրախությամբ կարդացին
Լյութերի դրույթները՝ դրանց
մեջ ճանաչելով Աստծո ձայնը:
Նրանք զգացին, որ Տերը
ողորմաճաբար մեկնել էր իր
ձեռքը՝ կասեցնելու
ապականության արագորեն
աճող ալիքը, որ բխում էր
պապական գահից: Իշխաններն
ու պետական այրերը
գաղտնիորեն ցնծում էին, որ
ինչ-որ հսկողություն է դրվելու
այն ամբարտավան
իշխանության վրա, որը

մերժում էր իր որոշումները
բողոքարկելու իրավունքը:

Բայց մեղք սիրող սնահավաստ
բազմությունները
սարսափեցին, երբ իրենց
վախերը քնեցնող
մոլորությունները սկսեցին
բացահայտվել: Տեսնելով, որ
մեղքեր խրախուսելու իրենց
գործն ընդհատվել է, և որ իրենց
շահերին վտանգ է սպառնում,
խորամանկ հոգևորականները
կատաղեցին և
համախմբվեցին՝
պաշտպանելու իրենց
հավակնությունները:

Բարենորոգիչը ստիպված էր
պատասխանելու դառը
մեղադրանքների: Ոմանք նրան
մեղադրում էին հապճեպ և
հանկարծական մղումով
գործելու համար, մյուսները՝
ինքնավստահ լինելու մեջ՝
հայտարարելով, որ նա
ղեկավարվում է ոչ թե Աստծո
կամքով, այլ հպարտությամբ ու
հանդգնությամբ: «Ո՞վ
չգիտի,— [131] պատասխանում
էր նա,— որ նոր գաղափար
առաջ քաշող մարդուն գրեթե
միշտ մեծամիտի տեղ են դնում՝
մեղադրելով
վիճաբանություններ

առաջացնելու մեջ... Ինչո՞ւ
սպանվեցին Քրիստոսն ու բոլոր
Նահատակները: Որովհետև
Նրանց համարում էին
ժամանակի իմաստությունն
արհամարհող գոռոզամիտներ,
ովքեր նոր գաղափարներ էին
առաջարկում՝ առանց
խոնարհությամբ խորհուրդ
հարցնելու հին կարծիքների
բանախոսների հետ»:

Նա կրկին հայտարարեց. «Ինչ
որ ես անում եմ, կատարվելու է
ոչ թե մարդկային
խելամտությամբ, այլ Աստծո
մտադրությամբ: Եթե այս գործը

Աստճունն է, ո՞վ կարող է
կանգնեցնել այն, իսկ եթե ոչ,
ո՞վ կարող է առաջ տանել այն:
Ո՛չ թե իմ, նրանց, կամ էլ մեր
կամքը, այլ Քոնը թող լինի, ով
Սուրբ Չայր, որ երկնքում ես»
(Նույն տեղում, և. 3, գլ. 6):

Թեև Աստճո Չոգին էր դրդել
Լյութերին սկսելու իր գործը, դա
նրան չէր հաջողվելու առանց
դաժան պայքարի: Իր
թշնամիների նախատիևքը,
նրանց կողմից իր
նպատակների խեղաթյուրումը,
նրանց անարդարացի ու չար
պատկերացումներն իր

բնավորութեան ու դրոշմների
մասին՝ այս ամենը ամենակուլ
հեղեղի պես թափվեց նրա
գլխին, ինչն անհետևանք
չմնաց: Նա համոզված էր, որ
ժողովրդի առաջնորդները թե՛
եկեղեցում, թե՛
հանրակրթարաններում
ուրախութեամբ կմիանան իրեն
բարենորոգման գործում:
Բարձրաստիճան անձանց
քաջալերական խոսքերն
ուրախություն և հույս էին
ներշնչել նրան: Նա ակնկալում
էր, որ եկեղեցու համար շուտով
ավելի պայծառ արշալույս էր
բացվելու: Սակայն

Խրախուսանքը վերածվեց
Նախատիկնքի ու
դատապարտության: Թե՛
եկեղեցական, և թե՛ պետական
պաշտոնյաները համոզված էին
Նրա թեզիսների
ճշմարտացիության մեջ, բայց
Նրանք շուտով հասկացան, որ
այդ ճշմարտությունների
ընդունումը մեծ
փոփոխություններ է
պահան-ջելու: Լուսավորել և
բարեփոխել ժողովրդին, ըստ
Էության, կնշանակեր փլուզել
Յոզովի իշխանությունը,
կասեցնել Նրա գանձարանը
հոսող հա-զարավոր

հորձանքները՝ վնասելով
պապական առաջնորդների
շռայ-լուծյանն ու շքեղությանը:
Ավելին՝ սովորեցնել ժողովրդին
մտածել և գործել որպես
պատասխանատու եակներ,
ովքեր իրենց փրկության հույսը
կապում են միայն Քրիստոսի
հետ, նշանակում էր տապալել
պապական գահը և, ի վերջո,
իրենց իսկ իշխանությունը: Այդ
պատճառով նրանք մերժեցին
Աստծո կողմից իրենց
առաջարկվող գիտությունը և
հակառակվեցին [132]
Քրիստոսին ու ճշմարտությանը՝
ընդդիմանալով այն մարդուն,

ու՛մ Նա ուղարկելը
լուսավորելու նրանց:

Նայելով իրեն՝ միայնակ մի
մարդու, ով դուրս է եկել երկրի
ամենահզոր ուժերի դեմ,
Լյութերը դողաց: Երբեմն նա
կասկածում էր, որ իրեն
իսկապես Աստված է
առաջնորդել՝ ընդդիմանալու
եկեղեցու իշխանությանը: «Ո՞վ
էի ես,— գրում է նա,— որ դեմ
կանգնեի պապի
մեծափառությանը, ու՛մ առաջ
...դողում են երկրի
թագավորներն ու ամբողջ
աշխարհը ...Ոչ ոք չի կարող

պատկերացնել, թե ինչպիսի հոգեկան տառապանքներ են կրել այս երկու տարիների ընթացքում և ինչ վիատություն, ես կասեի՝ ինչ հուսալքություն մեջ էի ընկած» (Նույն տեղում, Ա. 3, գլ. 6): Բայց նա չթողնվեց լիակատար հուսալքության մեջ: Չրկվելով մարդկային աջակցությունից՝ նա նայեց միայն Աստծուն և համոզվեց, որ կատարյալ ապահովությամբ կարող է ապավինել Նրա ամենազոր բազկին:

Բարենորոգման գործում իր ընկերներից մեկին Լյութերը

գրել է. «Մենք չենք կարող
հասկանալ Սուրբ Գիրքը ո՛չ
ուսումնասիրությամբ, ո՛չ էլ
մտքով: Քո առաջին
պարտականությունն է՝ սկսել
աղոթքով: Աղաչիր Տիրոջը, որ
Նա իր մեծ գթասրտությամբ
օգնի քեզ՝ ճիշտ ըմբռնելու իր
խոսքը: Աստծո խոսքի ուրիշ
մեկնաբան չկա, բացի այդ
խոսքի Յեղիևակից, ինչպես Նա
հնքն է ասել. «Նրանք բոլորը
Աստծուց սովորած կլինեն»:
Յույս մի դիր քո ջանքերի, քո
հասկացողության վրա, լիովին
ապավինիր Աստծուն և Նրա
Յոգու ազդեցությանը:

Չավատա մի մարդու խոսքին,
ով փորձառություն է ունեցել»
(Նույն տեղում, և. 3, գլ. 7): Ահա
կենսական կարևորություն
ունեցող մի դաս նրանց համար,
ովքեր զգում են, որ Աստված
կանչել է իրենց՝
ներկայացնելու մյուսների
ներկա ժամանակվա
հանդիսավոր
ճշմարտությունները: Այդ
ճշմարտությունները կգրգռեն
ինչպես սատանայի, այնպես էլ
այն մարդկանց թշնամությունը,
ովքեր սիրում են նրա հորինած
առասպելները: Չար ուժերի դեմ
պայքարում ավելին է պետք,

քան մտքի ուժն է և մարդկային
իմաստությունը:

Երբ Լյութերի թշնամիները
վկայակոմ էին
ավանդությունները կամ պապի
պնդումներն ու
հեղինակությունը, նա
դիմավորում էր նրանց միայն ու
միայն Աստվածաշնչով: Այդ
փաստարկներին նրանք
անկարող էին պատասխանել,
ուստի ձևապաշտության ու
սնահավատության
ստրուկները պահանջեցին նրա
արյունը, ինչպես որ հրեաներն
էին պահանջում Քրիստոսի

արյունը: «Նա հերետիկո՛ս
է»,— [133] բղավում էին Յոննի
կրոնամուկները: «Մեծագույն
դավաճանություն է եկեղեցու
հանդեպ այդ սուկալի
հերետիկոսին թույլ տալ
նույնիսկ մեկ ժամ ապրել:
Նրան պետք է անմիջապես
կառափնարան ուղարկել»
(Նույն տեղում, և. 3, գլ. 9): Բայց
Լյութերը չդարձավ նրանց
կատաղության զոհը: Աստված
գործ ուներ նրա համար, և
երկնային հրեշտակներ
ուղարկվեցին պաշտպանելու
նրան: Շատերը, սակայն, ովքեր
Լյութերից ընդունել էին

թանկագին լույսը, սատանայի
ատելության թիրախը դարձան
և հանուն ճշմարտության՝
անվեհեր գնացին
տանջանքների ու մահվան:

Լյութերի ուսմունքը գրավեց
մտավորականների
ուշադրությունն ամբողջ
Գերմանիայով մեկ: Նրա
քարոզներից և
աշխատություններից լույսի
շողեր էին ճառագում, որոնք
արթնացնում ու լուսավորում
էին հա-զարավոր մարդկանց:
Կենդանի հավատը զբաղեցնում
էր մեռած ձև-կանության

տեղը, որի մեջ գտնվել էր
եկեղեցին այդքան երկար
ժամա-նակ: Ժողովուրդն
օրեցօր կորցնում էր հավատը
հռոմեական եկեղեցու
սնահավատության հանդեպ:
Նախապաշարման արգելքները
փլուզվում էին: Աստծո խոսքը,
որով նյութերը ստուգում էր
ամեն մի ուսմունք և
հավակնություն, երկսայրի սրի
պես ճամփա էր բացում իր
համար դեպի մարդկանց
սրտերը: Ամենուրեք հոգևոր
վերելքի ցանկություն էր
արթնանում, և արդարության
այնպիսի ծարավ ու սով էր,

որպիսին չէր նկատվել դարերի
ընթացքում: Ժողովրդի
հայացքը, որն այնքան երկար
ողդված էր եղել մարդկային
ծեսերին ու երկրային
միջնորդներին, այժմ
ապաշխարութեամբ ու
հավատով շրջվում էր դեպի
խաչյալ Քրիստոսը:

Այս լայնատարած
հետաքրքրությունն էլ ավելի
վախեցրեց պապա-կան
իշխանություններին: Լյութերը
կանչվեց Յոնմ`
պատասխանելու
հերձվածողության

մեղադրանքին: Այդ
հրամանագիրը սարսափով
լցրեց նրա ընկերներին: Նրանք
քաջ գիտեին, թե ինչ վտանգ էր
սպառնում նրան այդ
ապականված քաղաքում, որն
արդեն արբած էր
նահատակների արյունով:
Նրանք բողոքեցին նրա՝ Յոն
մեկնելու դեմ և պահանջեցին
նրան քննել Գերմանիայում:

Այդ պահանջն ի վերջո
բավարարվեց, և պապի կողմից
դեսպան ուղարկվեց՝ լսելու
Լյութերի գործը: Այս
պաշտոնյային տված իր

ցուցումներում պապն ասել էր,
որ Լյութերն արդեն
հայտարարվել է հերետիկոս:
Ուստի դեսպանին
հանձնարարված էր [134]
«անհապաղ գործ հարուցել և
բանտարկել»: Եթե Լյութերը
չհնազանդվեր, և դեսպանին
չհաջողվեր կալանավորել
Նրան, ապա նա լիազորված էր
«օրենքից դուրս հայտարարել
Նրան ամբողջ Գերմանիայով
մեկ, արտաքսել, անիծել և
եկեղեցուց հեռացնել նրա բոլոր
համախոհներին» (Նույն
տեղում, և. 4, գլ. 2): Եվ ավելին՝
այդ թունավոր

հերձվածողութունն
արմատախիլ անելու
նպատակով պապն իր
դեսպանին պատվիրել էր
եկեղեցուց վտարել բուրրին,
կայսրից բացի, ինչ պաշտոն էլ
զբաղեցնեն եկեղեցում և
պետության մեջ, ովքեր
կիրաժարվեն բռնել Լյութերին
ու նրա համախոհներին և
նրանց հանձնել Յոնմի
վրիժառությանը:

Ահա թե ինչպիսին է
պապության իսկական ոգին:
Ամբողջ փաստաթղթում
քրիստոնեական սկզբունքի

Կամ նույնիսկ սովորական
արդարութեան հետք անգամ
չկար: Լյութերը շատ հեռու էր
Յռոմից և հնարավորութիւնն չէր
ունեցել բացատրել կամ
պաշտպանել իր
գաղափարները, սակայն
նախքան նրա գործը
քննութեան կառնվել, նա
արդէն հայտարարվել էր
հերետիկոս, և նույն օրն էլ
նրան նզովել, մեղադրել ու
դատապարտել էին: Եվ այս
ամենն արել էր ինքնակոչ սուրբ
հայրը՝ եկեղեցու և պետութեան
միակ գերագույն,

անսխալական
հե-ղինակությո՛ւնը:

Յենց այդ ժամանակ, երբ
նյութերն այնքան կարիք ունեն
իսկական ընկերոջ
կարեկցանքի և խորհրդի,
Աստծո նախախնամությամբ
Վիտենբերգ եկավ Մելանքթոնը:
Երիտասարդ, համեստ ու
ամաչկոտ Մելանքթոնն իր
առողջ դատողությամբ, խոր
գիտելիքներով ու գրավիչ
պերճախոսությամբ՝ մաքուր և
վեհանձն բնավորության հետ
մեկտեղ, շահել էր բոլորի
հիացմունքն ու համակրանքը:

Նրա հանճարն ավելի ակնհայտ
չէր, քան նրա բնավորության
մեղմությունը: Նա շուտով
դարձավ Ավետարանի
ջերմեռանդ աշակերտ և
Լյութերի ամենավստահելի
ընկերն ու թանկագին
օգնականը: Նրա հեզությունը,
շրջահայացությունն ու
ճշտապահությունը լրացնում
էին Լյութերի խիզախությունն
ու եռանդը: Նրանց
համագործակցությունը նոր
թափ հաղորդեց
Բարենորոգման գործին և
Լյութերի համար դարձավ
խրախուսանքի աղբյուր:

ԴատավարուԹյունը պետք է
կայանար Աուգսբուրգում, և
Բարենորոգիչը ոտքով
ուղևորվեց այնտեղ: Շատերը
լրջորեն վախեցած էին նրա
համար: Նրան սպառնում էին
ճանապարհին բռնել և սպանել,
և նրա ընկերներն աղաչեցին,
որ ռիսկի չդիմի: Նրան [135]
նույնիսկ խնդրեցին որոշ
ժամանակով հեռանալ
Վիտենբերգից և ապաստանել
Նրանց մոտ, ովքեր սիրով
կընդունեին իրեն: Բայց նա
չկամեցավ լքել այն տեղը,
որտեղ Աստված էր նրան դրել:

Նա պետք է շարունակի
հավատարմորեն պաշտպանել
ճշմարտությունը՝ անկախ իրեն
հար-վաճող փոթորիկներից:
Ահա նրա խոսքը. «Ես Երեմիայի
պես «կռվի և վեճի մարդ» եմ,
բայց որքան ավելի շատ են
Նրանք սպառնում, այնքան ես
ավելի եմ ուրախանում...
Նրանք արդեն ոտնահարել են
իմ պատիվն ու բարի անունը:
Միակ բանը, որ մնացել է ինձ,
թշվառ մարմինս է. թող այն էլ
վերցնեն: Դրանով կյանքս մի
քանի ժամով կկրճատեն: Բայց
հոգիս Նրանք չեն կարող
կոտրել: Նա, ով կամենում է

աշխարհին հռչա- կել
Քրիստոսի խոսքը, պետք է
ամեն բոլոր պատրաստ լինի
մեռնել» (Նույն տեղում, Ա. 4, գլ.
4):

Լսելով, որ Լյութերը ժամանել է
Աուգսբուրգ, պապական
դեսպանը մեծապես
ուրախացավ: Թվում էր, թե
խռովարար հերետիկոսը, ով
գրավել էր համայն աշխարհի
ուշադրութունը, այժմ Յոննի
ձեռքում է, և դեսպանը վճռեց
բաց չթողնել նրան:
Բարենորոգիչն իր համար
պահպանագիր չէր ապահովել:

Նրա ընկերները փորձեցին
համոզել նրան առանց դրա
չներկայանալ դեսպանին, և
հենց իրենք էլ որոշեցին
կայսրից պաշտոնագիր
վերցնել: Դեսպանը մտադիր էր,
հնարավորության դեպքում,
Լյութերին ստիպել ուրանալու,
կամ էլ, եթե դա չհաջողվի,
տեղափոխել նրան Յոնմ`
կիսելու Յուսի և Յերոնիմոսի
ճակատագիրը: Դրա համար նա
իր գործակալների միջոցով
փորձեց համոզել Լյութերին գալ
առանց պահպանագրի`
ապավինելով իր
ողորմածությանը:

Բարենորոգիչը կտրականապես
հրաժարվեց այդ անել: Նա
չներկայացավ պապի
դեսպանին, մինչև չստացավ
կայսրի պաշտպանությունը
երաշխավորող փաստաթուղթը:

Պապականները որոշեցին
դիմել քաղաքականության՝
փորձելով թվացյալ
մեղմությամբ շահել Լյութերին:
Նրա հետ հարցազրույցում
դեսպանն իրեն շատ
բարեհամբույր պահեց՝
պահանջելով, սակայն, որ
Լյութերն անվերապահորեն
ենթարկվի եկեղեցու

իշխանությանը և զիջի բոլոր
կենտրոն՝ առանց որևէ
փաստարկի կամ հարցի: Նա
ճիշտ չէր գնահատել այն
մարդու բնավորությունը, ում
հետ գործ ուներ: Ի
պատասխան՝ Լյութերն
արտահայտեց եկեղեցու
հանդեպ իր հարգանքը,
ճշմարտության իր [136]
փափագը, իր
պատրաստակամությունը՝
պատասխանելու բոլոր
առարկումներին իր ուսմունքի
դեմ և ներկայացնելու այդ
ուսմունքը որոշ առաջատար
համալսարանների

քննութեանը: Բայց միննույն
ժամանակ նա բողոքեց
կարդինալին, որ նա
պահանջում է իրեն ուրանալ՝
առանց ապացուցելու իր
սխալը:

Ի պատասխան միայն հնչեց.
«Ուրացի՛ր, ուրացի՛ր»:
Բարենորոգիչը ցույց տվեց, որ
իր ուսմունքը հիմնվում է Սուրբ
Գրքի վրա, և վճռականորեն
հայտարարեց, որ չի հրաժարվի
ճշմարտութունից: Դեսպանը,
անկարող լինելով
պատասխանել Լյութերի
փաստարկներին,

կշտամբանքների, հեգնանքի ու
շողոքորթության հեղեղ էր
տեղում նրա վրա՝
մերթընդմերթ մեջբերելով
եկեղեցու ավանդություններն
ու հայրերի ասույթները՝
հնարավորություն չտալով
Բարենորոգչին խոսել:
Տեսնելով, որ զրույցը, այդպես
շարունակվելու դեպքում,
լիովին ապարդյուն է լինելու,
Լյութերն ի վերջո դժկամորեն
տված թույլտվություն ստացավ
իր պատասխանը գրավոր
կերպով ներկայացնելու
համար:

«Այդպիսով,— գրել է նա իր
ընկերոջը,— մեղադրյալը
երկակի օգուտ է ստանում:
Նախ՝ գրվածը կարելի է
հանձնել մյուսների
քննարկմանը, և երկրորդ՝
հավանականությունն ավելի է
մեծանում արթնացնելու
ամբարտավան ու շատախոս
բռնակալի վախերը, եթե ոչ
խիղճը, ով այլա-պես կհաղթեր
իր հրամայական լեզվով»
(Մարտին, Լյութերի կյանքն ու
ժամանակները, էջ 271, 272):

Չաջորդ հարցազրույցին
Լյութերը ներկայացրեց իր

հայացքների հստակ, համառոտ
և համոզիչ բացատրությանը՝
ամբողջովին հիմնա-վորված
սուրբգրային բազմաթիվ
մեջբերումներով: Բարձրաձայն
կար-դալուց հետո նա այդ
թուղթը հանձնեց կարդինալին,
ով արհամարհանքով մի կողմ
նետեց այն՝ հայտարարելով, որ
դա պարզապես դատարկ
խոսքերի և անտեղի
մեջբերումների հավաքածու է:
Լյութերն այժմ խորին
համոզվածությամբ գորոզ
դեսպանին պատասխանեց իր
իսկ լեզվով՝ եկեղեցու
ուսմունքով ու

ապանդություններով, և
ամբողջովին հերքեց նրա
պնդումները:

Տեսնելով, որ Լյութերի
ապացույցներն անհերքելի են,
դեսպանը կորցրեց
ինքնատիրապետումը և
զայրացած բղավեց. «Ուրացի՛ր,
թե չէ քեզ կուղարկեմ Յռոմ՝
կանգնելու դատավորների
առջև, որոնց հանձ-նարարված
է քննել քո գործը: Ես
կբանադրեմ քեզ, քո բոլոր
կողմնա-կիցներին ու բոլոր
նրանց, [137] ովքեր երբևէ
կօժանդակեն քեզ, և դուրս

կանեմ նրանց եկեղեցուց»: Եվ
Նա ի վերջո ամբարտավան ու
գրգռված տոնով հայտարարեց.
«Ուրացի՛ր, կամ ել աչքիս
չերևաս» (Դ՛Օբիևյե, Լոնդոնի
հր., Ա. 4, գլ. 8):

Բարենորոգիչն իր ընկերների
հետ արագորեն հեռացավ՝
դրանով պարզ հասկացնելով,
որ երբեք չի պատրաստվում
ուրանալ: Կարդինալի
ծրագրերը ձախողվեցին: Նա
իրեն շողոքորթել էր այն
մտքով, որ բռնությամբ կարող է
ստիպել Լյութերին
հնազանդվել: Բայց հիմա,

միայ-նակ մնալով իր
համախոհների հետ, նա մեկից
մյուսին էր նայում՝
ծայ-րաստիճան հիասթափված
իր ծրագրերի անսպասելի
ձախողումից:

Լյութերի ջանքերն այս
պարագայում անհետևանք
չմնացին: Ներկաների մեծ
բազմությունը
հնարավորություն ունեցավ
համեմատելու այդ երկու
մարդկանց և կարծիք կազմելու
Նրանցից յուրաքանչյուրի
բնավորության, ինչպես նաև
դիրքորոշման ամրության ու

ճշմարտացիության մասին:
Ի՞նչ ապշեցուցիչ
տարբերություն:
Բարենորոգիչը՝ համեստ,
խոնարհ ու աներեր, կանգնած
էր Աստծո զորությամբ՝
պաշտպանելու
ճշմարտությունը: Իսկ պապի
ներկայացուցիչը՝
ինքնահավան, մեծամիտ,
ամբարտավան ու անմիտ, ոչ մի
փաստարկ չուներ Աստծո
խոսքից, սակայն մոլեգին ճշում
էր. «Ուրացիր, թե չէ
կուղարկվես Յոնմ՝
պատժվելու»:

Չնայած որ Լյութերը
պահպանագիր ուներ,
պապականները նրան բռնելու
և բանտարկելու դավեր էին
նյութում: Լյութերի ընկերները
համոզեցին նրան անհապաղ
վերադառնալ Վիտենբերգ,
քանի որ մնալն այլևս
անիմաստ էր: Անհրաժեշտ էր
չափազանց զգուշ լինել,
որպեսզի ոչ ոք չիմանար այդ
մտադրության մասին:
Չետևելով ընկերների
խորհրդին՝ նա արևածագից
առաջ ձիով դուրս եկավ
Աուգսբուրգից՝ միայն
քաղաքագլխի տրամադրած

պահապանի ուղեկցութեամբ:
Մնայլ կանխազգացումներից
տանջվելով՝ նա գաղտնի
անցավ քաղաքի մութ և լուռ
փողոցներով: Աչալուրջ ու
դաժան թշնամիները ծրագրում
էին կործանել նրան:
Կխուսափի՞ նա, արդյոք, իր
համար պատրաստված
ծուղակից: Դրանք տագնապի և
ջերմեռանդ աղոթքի պահեր
էին: Ահա նա մոտենում է մի
փոքրիկ դռան՝ քաղաքի
պարսպի մեջ: Այն բացվում է, և
նա իր ուղեկցի հետ անարգել
անցնում է: Դուրս գալով
քաղաքից՝ փախստականներն

արագացնում են իրենց
ընթացքը, և [138] նախքան
պապի դեսպանը կիմանար
Լյութերի մեկնելու մասին,
վերջինս արդեն հեռու էր իր
հալածողներից: Սատանան և
Նրա գործակալները պարտված
էին: Մարդը, ով Նրանց
կարծիքով արդեն իրենց
ձեռքում էր, դուրս պրծավ,
ինչպես թռչունը որսորդի
թակարդից:

Լսելով Լյութերի փախուստի
լուրը՝ դեսպանը խիստ
զարմացավ ու զայրացավ: Նա
հույս ուներ մեծ պատվի

արժանանալ եկեղեցու
անդորրը խանգարող այդ
մարդուն իմաստուն ու
վճռական հակահարված տալու
համար, բայց նրա
ակնկալիքները խորտակվեցին:
Նա իր ցատկուն արտահայտեց
մի նամակում՝ հասցեագրված
Սաքսոնիայի իշխան
Ֆրիդրիխին՝ սաստիկ
մեղադրելով Լյութերին և
պահանջելով, որ Ֆրիդրիխը
նրան ուղարկի Յոնն կամ
վտարի Սաքսոնիայից:

Ի պաշտպանություն՝ Լյութերը
պնդեց, որ դեսպանը կամ

պապը հիմնավորեն իր սխալը
Սուրբ Գրքով՝
ամենահանդիսավոր կերպով
խոստում տալով հրաժարվել իր
ուսմունքից, եթե ապացուցեն,
որ այն հակասում է Աստծո
խոսքին: Եվ նա իր
երախտագիտութունը
հայտնեց Աստծուն, որ
արժանացել էր հալածվելու
հանուն այդ սուրբ գործի:

Տրիդիիտը դեռ լավ ծանոթ չէր
Բարենորոգման ուսմունքին,
սակայն խորապես ազդվել էր
Լյութերի փայլուն, հզոր և
պարզ խոսքերից, և որոշեց

պաշտպանել Բարենորոգչին,
մինչև չապացուցվեր նրա
սխալը: Դեսպանի նամակին նա
պատասխանեց. «Դուք պետք է
բավարարված լինեք, որ
դուկտոր Մարտինը ներկայացել
է ձեզ Աուգսբուրգում: Մենք
չէինք սպասում, որ դուք
փորձելու եք ստիպել նրան
ուրանալ՝ առանց համոզելու, որ
նա մոլորության մեջ է: Մեր
տերության ուսյալ
մարդկանցից ոչ մեկն ինձ չի
տեղեկացրել, թե Մարտինի
ուսմունքը ամբարիշտ,
հակաքրիստոնեական կամ
հերձվածողական է»: Ավելին՝

իշխանը հրաժարվեց Լյութերին
Յո՛ւմ ուղարկելուց կամ նրան իր
տերությունից արտաքսելուց»
(Դ՝Օբիևյե, և. 4, գլ. 10):

Տրիդիխը տեսնում էր, որ
հասարակության բարոյական
վիճակը գնալով վատթարանում
է: Բարենորոգման մեծ գործի
կարիքն ակնհայտ էր: Եթե
մարդիկ ընդունեին Աստծո
պահանջներն ու հնազանդվեին
լուսավորված խղճի
թելադրանքին, ապա հարկ չէր
լինի բարոյ և թանկար-ժեք
միջոցներ ձեռնարկել
հանցանքը կանխելու և

պատժելու համար: Նա տեսավ,
որ [139] Լյութերը ջանում է
հասնել այդ նպատակին, և
ծածուկ ուրախանում էր, որ
եկեղեցում գգացվում է
բարեփոխումների
ազդեցութունը:

Նա չէր կարող չնկատել և այն,
որ Լյութերը՝ որպես
համալսարանի պրոֆեսոր, մեծ
հաջողութունների էր հասել:
Ընդամենը մեկ տարի էր անցել
այն բանից, երբ Բարենորոգիչն
ամրոց-եկեղեցու դռանը
փակցրել էր իր թեզիսները,
բայց արդեն զգալիորեն նվազել

Էր «Բուր սրբերի» տոնին
Եկեղեցի այցելող
Ուխտագնացների թիվը: Յոմը
գրկվել էր երկրպագուներից ու
ընծաներից, և նրանց տեղը
հիմա զբաղեցրել էին
ուրիշները, բայց արդեն ոչ թե
Եկեղեցու մասունքները
պաշտող ուխտագնացներ, այլ
համալսարանական
ուսանողներ: Լյութերի
աշխատություններն
ամենուրեք նոր
հետաքրքրություն էին
առաջացրել Սուրբ Գրքի
նկատմամբ, և ուսանողներ էին
գալիս սովորելու

համալ-սարանում ոչ միայն
Գերմանիայի բոլոր կողմերից,
այլ նաև ուրիշ երկրներից:
Առաջին անգամ տեսնելով
Վիտենբերգը՝ երիտասարդներն
«իրենց ձեռքերը բարձրացնում
էին դեպի երկինք՝
փառաբանելով Աստ-ծուն, որ
այս քաղաքից, ինչպես հին
Ժամանակներում Սիոնից,
ճշմարտու-թյան լույս շողաց,
որտեղից էլ տարածվեց մինչև
երկրի ամենահեռավոր
ծայրերը» (Նույն տեղում, և. 4,
գլ. 10):

Մինչ այժմ Լյութերը միայն
մասամբ էր թողել
կաթոլիկության մո—
լպտությունները: Բայց
համեմատե ով սուրբ
պատգամները պապական
հրամանագրերի և օրենքների
հետ՝ զարմանքով էր
համակվում: «Ես կարդում եմ
պապի հրամանագրերը,— գրել
է նա,— և չգիտեմ ...պապը
հակաքրիստոսն ի՞նքն է հենց,
թե՞ նրա առաքյալը. քրիստոսն
այնպե՛ս է աղավաղված ու
խաչված դրանցում» (Նույն
տեղում, և. 5, գլ. 1): Բայց այդ
ժամանակ Լյութերը դեռ Յոննի

Եկեղեցու կողմնակիցն էր և չէր
Էլ պատկերացնում, թե երբևէ
կարող է հեռանալ նրանից:

Բարենորոգչի գրվածքները և
նրա ուսմունքը տարածվում
էին քրիստոնեական աշխարհի
բոլոր երկրներում: Գործը
հասավ մինչև Շվեյցարիա և
Յուլանդիա, նրա գրվածքների
օրինակները հայտնվեցին
Ֆրանսիայում և Իսպանիայում:
Անգլիայում նրա ուսմունքն
ընդունվեց որպես կյանքի
խոսք: Ճշմարտութունը
թափանցեց նաև Բելգիա և
Իտալիա: Հազարավոր մարդիկ

արթնանում էին իրենց
մահաբեր թմրու-թյունից՝
հավատը դարձնելով իրենց
կյանքի ուրախությունն ու
հույսը: [140]

Չռոմն ավելի ու ավելի էր
զայրանում Լյութերի
գրոհներից, և նրա մուլեռանդ
հակառակորդներից ոմանք,
անգամ կաթոլիկ
համալսարանների որոշ
դոկտորներ, հայտարարեցին,
թե այդ խռովարար
վանականին սպանողը մեղք չի
գործի: Մի օր մի անձանոթ,
ատրճանակը թաքցրած

թիկնոցի տակ, մոտեցավ
բարենորոգչին ու հարցրեց, թե
ինչու է նա միայնակ շրջում:
«Ես Աստծո ձեռքերում եմ,—
պատասխանեց Լյութերը,- Նա է
իմ ուժն ու իմ վահանը: Մարդն
ի՞նչ կարող է անել ինձ» (Նույն
տեղում, Ա. 6, գլ. 2): Լսելով այս
խոսքերը՝ անձանոթը
գունատվեց ու փախավ, ասես
տեսավ երկնային
հրեշտակների:

Պապն ամեն կերպ ջանում էր
ոչնչացնել Լյութերին, բայց
Աստված նրա պաշտպանն էր:
Նրա ուսմունքը թնդում էր

ամենուրեք՝ «խրճիթներ-րում և
վանքերում ...ազնվականների
դոյակներում,
համալսարաններում ու
արքայական պալատներում», և
ամեն կողմից վեհանձն մարդիկ
էին վեր կենում՝ աջակցելու
նրան:

Մոտավորապես այդ ժամանակ
էր հենց, որ կարդալով Յուսի
աշխատությունները՝ Լյութերը
գտավ, որ Բոհեմիայի
Բարենորոգիչն էլ դավանել է
հավատով արդարացման մեծ
ճշմարտությունը, որն ինքը
ջանում էր պաշտպանել և

սովորեցնել: «Մենք բոլորս,—
ասել է Լյութերը,- Պողոսը,
Օգոստինոսը և ես, հուսյաններ
ենք եղել՝ առանց այդ մասին
իմանալու»: «Աստված
իսկապես դատապարտելու է
աշխարհը,— ավել-լացրել է
Նա,— քանզի Նա այրել է
ճշմարտությունը, որը քարոզվել
է Նրան դեռևս հարյուր տարի
առաջ » (Ուայլի, Ա. 6, գլ. 1):

Դիմելով Գերմանիայի կայսրին
ու ազնվականությանը՝ ի
պաշտպանություն
քրիստոնեության
բարենորոգման, Լյութերը

պապի մասին գրել է. «Սոսկալի
է տեսնել, թե ինչպես մարդը, ով
իրեն քրիստոսի փոխանորդ է
կոչում, ցուցադրում է այնպիսի
շքեղութուն, որին չի կարող
հասնել և ոչ մի կայսր: Նմա՞ն է
արդյոք նա աղքատ Յիսուսին
կամ հա- մեստ Պետրոսին:
Ասում են, թե պապն աշխարհի
տերն է: Բայց քրիստոսը, ում
փոխանորդն է նա իրեն
երևակայում, ասել է. «Իմ
թագավորութունն այս
աշխարհից չէ»: Հնարավո՞ր է
արդյոք, որ փոխանորդն ավելի
ընդարձակ տիրույթներ ունենա,

քան նրա գերիշխանը»
(Դ՛Օբիւյե, և. 6, գլ. 3):

Իսկ համալսարանների մասին
նա այսպես է գրել. «Ես խիստ
վախենում եմ, որ
համալսարանները դժոխքի մեծ
դռներ կդառնան, [141] եթե
լուրջ ջանքեր չգործադրեն՝
բացատրելու
երիտասարդներին Սուրբ Գիրքը
և գրելու այն նրանց սրտերի
վրա: Ես ոչ ոքի խորհուրդ չեմ
տալիս իր զավակին ուսման
ուղարկել այնտեղ, ուր Սուրբ
Գիրքը գլխավոր տեղը չի
զբաղեցնում: Յուրաքանչյուր

հաստատութիւն, որտեղ
ուշադրութեամբ չի
ուսուցանվում Աստծո խոսքը,
շուտով կապականվի» (Նույն
տեղում, և. 6, գլ. 3):

Այս կոչն արագորեն տարածվեց
ամբողջ Գերմանիայում և հզոր
ագդեցութիւն ունեցավ
ժողովրդի վրա: Ողջ ազգը
հուզումների մեջ էր, և
հազարավորները վեր էին
կենում՝ միավորվելով
Բարենորոգման դրոշի շուրջը:
Լյութերի հակառակորդները՝
բորբոքված վրիժառութեան
տենչով, պապին մղում էին

վճռական միջոցներ
ձեռնարկելու նրա դեմ: Յրաման
արձակվեց, որ նրա ուսմունքը
պետք է անմիջապես
դատապարտել: Բարենորոգչին
և նրա համախոհներին տվեցին
վաթսուև օր՝ պայմանով, որ
եթե նրանք չուրանային իրենց
գաղափարները, բոլորն էլ
կհեռացվեն եկեղեցուց:

Դա սարսափելի ճգնաժամ էր
Բարենորոգման համար:
Եկեղեցուց հեռացնելու Յռոմի
դատավճիռը դարեր շարունակ
սարսափահար էր արել հզոր
միապետներին: Այն

թշվառութեան ու ամայութեան
Էր հասցրել մեծ
կայսրութիւնները: Ամենուրեք
սոսկումով ու զարհուրանքով
Էին նայում նրանց, ովքեր
այդպէս դատապարտվում էին:
Նրանց զրկում էին իրենց
մերձավորների հետ
հաղորդակցվելուց,
հայտարարում էին օրենքից
դուրս և հալածում մինչև մահ:
Լյութերն անտեղյակ չէր, որ իր
գլխին շուտով փոթորիկ էր
ճայթելու, բայց կանգնած էր
ամուր՝ ապավինելով Քրիստոսի
աջակցութեանն ու
պաշտպանութեանը:

Նահատակի հավատով ու
արիությամբ նա գրել է. «Ես
չգիտեմ՝ ինչ է պատահելու, և
չեմ ել ուզում իմանալ.. .Թող
զարկի հարվածը, ես չեմ
վախենում: Եթե ոչ մի տերև
ցած չի ընկնում առանց մեր Հոր
կամքի, ուրեմն որքա՛ն ավելի
Նա կհոգա մեր մասին: Աստծո
խոսքի համար մեռնելը ծանր
չէ, քանզի Բանը, որ մարմին
դարձավ, ինքն էլ մեռավ: Եթե
մեռնենք Նրա հետ, Նրա հետ էլ
կապրենք: Եվ կրելով այն
ամենն, ինչ Նա կրեց մեզնից
առաջ, մենք կլինենք այնտեղ,
ուր Նա է, և Նրա հետ կապրենք

հավիտյան» (Նույն տեղում,
Լոնդոնյան 3-րդ հրատ.,
Ուալդեր, 1840 թ., և. 6, գլ. 9):

Երբ պապի կոնդակը հասավ
Լյութերին, նա ասաց. «Ես
արհամար-հում և մերժում եմ
այն՝ որպես հայհոյիչ և կեղծ...
Դրանում քրիստոսն ինքն է
դատապարտված [142]... Ես
ուրախ եմ, որ կարող եմ
տառապել հանուն ամենավեհ
գործի: Ես ինձ արդեն ավելի
ազատ եմ զգում, որովհետև
վերջապես գիտեմ, որ պապը
հակաքրիստոսն է, և որ նրա

արթուրդ հենց սատանայի գահն
է» (Դ՛Օբիւյե, Ա. 6, գլ. 9):

Սակայն Յռոմի որոշումն
անհետևանք չմնաց: Բանտը,
կտտանքն ու սուրն էին այն
միջոցները, որոնցով ստիպում
էին ենթարկվել: Թույլ ու
սնահավատ մարդիկ դողում
էին պապի հրամանից, ու թեև
Լյութերը համընդհանուր
համակրանք էր վայելում,
շատերին թվաց, թե կյանքը
չափազանց թանկ է, որպեսզի
վտանգվի հանուն
Բարենորոգման: Ամեն ինչ
ասես վկայում էր, որ

Բարենորոգչի գործին շուտով
վերջ կտրվի:

Բայց Լյութերն առաջվա պես
աներկյուղ էր: Յոռմն նզովյալ
էր հռչակել նրան, և աշխարհը
կասկած չուներ, որ նա
ստիպված կա՛մ պետք է զիջի»
կա՛մ էլ կորչի: Բայց նա
ահագդու գորությամբ Յոռմի
դատավճիռը հետ մղեց հենց
նրա դեմ և հրապարակավ
հայտարարեց, որ ընդմիշտ
լքում է եկեղեցին: Բազմաթիվ
ուսանողների, դասախոսների
և բոլոր խավերի
քաղաքացիների

Ներկայութեամբ նա այրեց
պապի կոնդակը՝ նրա
իշխանութիւնը հաստատող
օրենքների, հրամանագրերի ու
որոշ գրվածքների հետ միասին:
«Այրելով իմ գրքերը,— ասաց
նա,— իմ թշնամիները
կարողացան վնաս հասցնել
ճշմարտութեան գործին
հա-սարակ մարդկանց
գիտակցութեան մեջ և կործանել
նրանց հոգիները: Դրա համար
էլ, ի պատասխան, ես այրում
եմ նրանց գրքերը: Լուրջ
պայքար է սկսվել: Մինչև հիմա
ես միայն խաղում էի պապի
հետ: Ես սկսել եմ այս գործը

Աստժո անուկոյ: Այն
կապարտովի առանց ինձ, բայց
Նրա գորությամբ» (Նույն
տեղում, ա. 6, գլ.10):

Իր թշնամիների
կշտամբանքներին, որ ծաղրում
էին նրան՝ ասելով, թե նրա
գործն անհուսալի է, Լյութերը
պատասխանեց. «Իսկ եթե իրոք
Աստված է ընտրել և կանչել
ինձ, մի՞թե չեն վախենում
նրանք, որ ար-համարիելով
ինձ՝ արհամարիում են անձամբ
Աստժուն: Մովսեսը մենակ էր
Եգիպտոսից դուրս գալիս,
Եղիան մենակ էր Աքաաբի

Թագավորութեան օրոք,
Եսայիան մենակ էր
Երուսաղեմում, Եզեկիելը՝
Բաբելոնում... Աստված երբեք
որպես մարգարե չի ընտրել
քահանայապետերին կամ որևէ
այլ բարձրաստիճան անձի: Նա
սովորաբար կանչել է հասարակ
և արհամարհված անձանց, մեկ
անգամ էլ՝ [143] նույնիսկ հովիվ
Ամոսին: Բոլոր դարերում
սուրբերը կանչվել են՝
հանդիմանելու մեծավորներին,
թագավորներին, իշխաններին,
քահանաներին և
իմաստուհներին՝ վտանգի
ենթարկելով իրենց կյանքը ..

.Ես չեմ ասում, թե մարգարե եմ,
այլ ասում եմ, որ նրանք պետք
է խիստ վախենան, որովհետև
ես մենակ եմ, իսկ իրենք՝ շատ:
Բայց ես համոզված եմ, որ
Աստծո խոսքը ինձ հետ է, ոչ թե
նրանց» (Նույն տեղում, և. 6, գլ.
10):

Սակայն եկեղեցուց
վերջնականապես
առանձնանալու վճիռը Լյութերը
կայացրեց ոչ առանց ներքին
ահավոր պայքարի:
Մոտավորապես այդ ժամանակ
էր, որ նա գրեց. «Ամեն օր
ավելի ու ավելի եմ զգում, թե

որքան դժվար է ազատվել
Նրանից, ինչո՞վ ներծծվել ես
մանկուլթյունից: Թեև Սուրբ
Գիրքն իմ կողմն է, բայց որքան
տառապանք եմ կրել, մինչև
կարողացել եմ արդարացնել
ինքս ինձ այն բանի համար, որ
պետք է համարձակվեի
միայնակ դուրս գալ պապի դեմ
և մերկացնել Նրան որպես
հակաքրիստոս: Սրտի ի՞նչ
տառապանքներ եմ ես ունեցել:
Քանի՞ անգամ եմ դառնորեն
ինքս ինձ տվել այն հարցը, որ
հաճախ հնչում էր
պապականների շուրթերից.
«Ի՞նչ է, միայն դո՞ւ ես

իմաստուն, իսկ բոլոր մյուսները
սխա՞լ: Ի՞նչ ես անելու, եթե այդ
ամենից հետո պարզվի. որ դու
ինքդ ես սխալվել և
մոլորության մեջ քաշել շատ
հոգիների, ովքեր հավիտյան
պիտի կորչեն»: Այսպես ես
պայքարում էի ինքս իմ և
սատանայի դեմ, մինչև որ
Քրիստոսն իր անսխալական
խոսքով ամրացրեց իմ սիրտն
այդ կասկածների դեմ»
(Մարտին, 372, 373):

Պապը սպառնացել էր, որ
Լյութերին կհեռացնի
եկեղեցուց, եթե նա չուրանա, և

հիմա նա իրականացրեց
սպառնալիքը: Մի նոր կոնդակ
հայտնվեց՝ հռչակելով
Բարենորոգչի վերջնական
բաժանումը հռոմեական
եկեղեցուց, նզովյալ
հայտարարելով նրան և
դատապարտելով բոլորին,
ովքեր կընդունեն նրա
գաղափարները: Մեծ պայքարն
արդեն բորբոքվել էր ողջ ուժով:

Բախումն ընդդիմության հետ
բոլոր նրանց բաժինն է, ում
Աստված օգտագործում է այն
ճշմարտությունները
ներկայացնելու համար, որոնք

հատկապես վերաբերում են
իրենց ժամանակին: Ինչպես որ
ներկա ճշմարտություն կար
Լյութերի օրերում`
ճշմարտություն, որը
հատկապես կարևոր էր այդ
ժամանակ, այնպես էլ այսօրվա
եկեղեցու համար կա ներ-կա
ճշմարտություն: [144] Նա, ով
ամեն բան անում է իր կամքի
խորհրդի համաձայն,
բարեհաճել է մարդկանց դնել
տարբեր պարագաների մեջ և
նրանց տալ իրենց
ժամանակաշրջանին և
պայմաններին
համապատասխան

պարտականություններ: Եթե
Նրանք գնահատեն իրենց
տրված լույսը, ճշմարտություն
ավելի խորությամբ
կբացահայտվի նրանց:

Բայց մարդկանց
մեծամասնությունն այսօր էլ չի
սիրում ճշմարտությունն ավելի,
քան Լյութերին ընդդիմացող
պապականները: Ինչպես հին
դարերում, այսօր էլ նկատվում
է Աստծո խոսքի փոխարեն
մարդկային տեսություններն ու
ավանդույթներն ընդունելու
միևնույն հակումը: Նրանք,
ովքեր քարոզում են

ճշմարտությունը ներկա
ժամանակի համար, չպետք է
սպասեն, որ իրենց ավելի
բարեհաճորեն են ընդունելու,
քան վաղ բարենորոգիչներին:
Մեծ պայքարը ճշմարտության և
կեղծիքի, Քրիստոսի ու
սատանայի միջև գնալով
սաստկանալու է մինչև այս
աշխարհի պատմության վերջը:

Հիսուսն իր աշակերտներին
ասաց. «Եթե այս աշխարհից
լինեիք, ապա աշխարհն իրենը
կսիրեր, բայց որովհետև
աշխարհից չեք, այլ ես ձեզ
ընտրեցի աշխարհից, դրա

համար աշխարհը ձեզ ատում է:
Չիշեք այն խոսքը, որ ես ձեզ
ասացի, թե ծառան ավելի մեծ
չէ, քան իր տերը, եթե ինձ
հալածեցին, ձեզ էլ են
հալածելու, եթե իմ խոսքը
պահեցին, ձերն էլ կպահեն»
(Յովհաննես 15.19,20): Մյուս
կողմից՝ մեր Տերը պարզորոշ
ասել է. «Վա՛յ ձեզ, երբ բոլոր
մարդիկ լավ խոսեն ձեր մասին,
որովհետև նրանց հայրերն
այդպես էին անում սուտ
մարգարեներին» (Ղուկաս
6.26): Այսօր աշխարհի ոգին
ավելի ներդաշնակ չէ Քրիստոսի
ոգուն, քան անցյալում, և

Նրանք, ովքեր քարոզում են
Աստծո խոսքն իր
մաքրությանմբ, ավելի բարեհաճ
վերաբերմունքի չեն
արժանանա, քան այն
ժամանակ: Ճշմարտությանն
ընդդիմանալու ձևերը կարող են
փոխվել, թշնամությունը կարող
է նրբորեն քողարկվել, սակայն
միևնույն հակամարտությունը
դեռ գոյություն ունի և
դրսևորվելու է մինչև
ժամանակի վերջը [145]:

ԳԼՈՒԽ 8—ԼՅՈՒԹԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՌԱՋ

Գերմանիայի գահին
բարձրացավ մի նոր կայսր՝
Չսերյզ V—ը, և Յռոմի
գործակալները շտապեցին
շնորհավորել միապետին և
համոզել, որ նա իր
իշխանությամբ կասեցնի
Բարենորոգումը: Մյուս կողմից՝
Սաքսոնիայի ընտրողը, ում
Չարլզը մեծապես պարտական
էր իր գահով, խնդրեց նրան
քայլեր չձեռնարկել Լյութերի
դեմ, մինչև որ անձամբ չլսեն
նրան: Կայսրը այսպիսով

հայտնվեց շփոթության ու
տարակուսանքի մեջ: Լյութերին
մահվան դատապարտող
կայսերական հրամանագրից
բացի՝ ոչինչ չէր կարող
բավարարել պապականներին:
Իշխանը վճռականորեն
հայտարարել էր, որ «ո՛չ ինքը՝
կայսրը, ո՛չ էլ որըիշ մեկը չեն
հերքել Լյութերի գրվածքները»,
ուստի նա պահանջում էր, «որ
դոկտոր Լյութերը,
պահպանագիր ստանալով,
կարողանար ներկայանալ
կրթված, բարեպաշտ և
անաչառ դատավորների

քննութեանը» (Դ՛Օբիւյե, Ա. 6,
ԳԼ. 11):

Բոլորի ուշադրութեան
կենտրոնում այժմ
գերմանական
իշխանութիւնների
համաժողովն էր, որը
գումարվեց Վորմսում Չարլզի
գահակալումից անմիջապէս
հետո: Ազգային այս խորհուրդը
պետք է քննարկեր կարևոր
քաղաքական հարցեր:
Գերմանիայի իշխաններն
առաջին անգամ պիտի
հանդիպէին իրենց երիտասարդ
կայսրի հետ խորհրդակցութեան

համար, և այդ երկրի բոլոր
կողմերից այստեղ էին
ժամանել եկեղեցու և
պետության բարձրաստիճան
պաշտոնյաները: Վորմս էին
եկել ազնվականներ՝
Նախանձախնդիր իրենց
ժառանգական իրավունքների
համար, հզոր աշխարհիկ
տիրակալներ, բարձրաստիճան
հոգևորականներ՝ փքված
իրենց իշխանության ու
գերազանցության
գիտակցումից, պալատական
ասպետներ՝ իրենց
զինակիրների ուղեկցությամբ,
և դեսպաններ՝ օտար ու

հեռավոր երկրներից: Սակայն
այդ վիթխարի համաժողովում
ամենախոր հետաքրքրություն
առաջացրեց այն հարցը, որ
վերաբերում էր սաքսոնացի
Բարենորոգչին:

Չարլզը ընտրողին նախապես
պատվիրել էր Լյութերին իր
հետ բերել խորհրդարանի
նիստին՝ երաշխավորելով նրա
պաշտպանությունը և
խոստանալով ազատ քննարկել
խնդիրը իրազեկ անձանց հետ:
Լյութերը հուզմունքով էր
սպասում կայսրի հետ
հանդիպմանը: Նրա

առողջական վիճակն այդ
ժամանակ խիստ վատթարացել
էր, բայց նա գրեց ընտրողին.
«Եթե անգամ ինձ չհաջողվի
առողջ վիճակում ժամանել
Վորմս, ինձ այնտեղ կտանեն
հիվանդ: Քանզի եթե կայսրը
կանչում է ինձ, ես չեմ կարող
կասկածել, որ դա հենց Աստծո
կանչն է: Եթե նրանք ուզում են
բռնի ուժ գործադրել իմ
նկատմամբ, ինչը շատ
հավանական է (որովհետև
ինձնից խորհուրդ հարցնելու
համար չէ, որ կարգադրում են
ներկայանալ), ես այդ հարցը
հանձնում եմ Տիրոջ ձեռքը: Նա,

ով երեք երիտասարդ
հրեաներին պահպանեց
կրակով բորբոքված հնոցի մեջ,
առաջվա պես ապրում և
թագավորում է: Եթե նա ինձ
չփրկի, նշանակում է՝ իմ
ապրելն արդեն իմաստ չունի:
Միայն թե եկեք ավետարանը
պաշտպանենք ամբարիշտների
ծաղրանքից և հանուն նրա
թափենք մեր արյունը, որպեսզի
նրանք չհաղթեն: Ես չեմ
որոշողը, թե ինչն ավելի
կնպաստի մարդկանց
փրկությանը՝ իմ կյանքը, թե՞
մահը... Ինձնից ամեն ինչ
կարող եք սպասել... բացի

փախուստից և ուրացումից:
Փախչել ես չեմ կարող,
ուրանալ՝ առավել ևս» (Նույն
տեղում, և. 7, գլ. 1):

Երբ Վորմսում լուրեր
տարածվեցին, որ Լյութերը
պետք է ներկայանա
խորհրդարանի առջև,
համընդհանուր իրարանցում
սկսվեց: Ալեանդրը՝ պապական
դեսպանը, ում հատուկ
հանձնարարված էր Լյութերի
գործը, տագնապած ու
զայրացած էր: Նա հասկանում
էր, որ հետևանքներն աղետալի
են լինելու պապական գահի

համար: Վերանայել այն գործը,
որը պապն արդեն
դատապարտել էր, կնշանակեր
արհամարհել նրա գերագույն
հեղինակությունը: Բացի այդ՝
նա հասկանում էր, որ Լյութերի
պերճախոս և հզոր
փաստարկները կարող են դրդել
իշխաններից շատերին երես
թեքել պապից: Ուստի
դեսպանը վճռականապես [147]
բողոքարկեց Չարլզին Լյութերի՝
Վորմս ժամանելու դեմ:
Մոտավորապես այդ ժամանակ
հրատարակվեց Լյութերի
բանադրության կոնդակը, և
դա, լեզատի պնդումների հետ

միասին, ստիպեց կայսրին
զիջել: Նա գրեց ընտրողին, որ
եթե Լյութերը չի ուրանալու,
ապա պետք է մնա
Վիտենբերգում:

Չբավարարված այդ
հաղթանակով՝ Ալեանդրը
գործի դրեց իր ողջ
իշխանությունն ու
խորամանկությունը՝ Լյութերին
դատապարտելու հա-մար:
Չտեսնված համառությանմբ, որն
արժանի էր ավելի լավ
նպատակ-ների, նա այդ հարցը
ներկայացրեց իշխանների,
հոգևորականների և ժողովի

մյուս անդամների
ուշադրությանը՝ մեղադրելով
Բարենորոգչին «սադրանքի,
ապստամբության,
անբարեպաշտության ու
հայհոյության մեջ»: Բայց
դեսպանի գրգռվածությունն ու
զայրույթը պարզորոշ ցույց
տվին, թե ինչ ոգի էր իշխում
նրան: Բոլորն էլ նկատեցին, որ
«նա առաջ-նորդվում էր ոչ թե
նախանձախնդրությամբ ու
բարեպաշտությամբ, այլ
ատելությամբ ու
վրեժխնդրությամբ» (Նույն
տեղում, Ա.7, գլ. 1): Լյութերի
գործն, ավելի քան երբեք,

արժանացավ խորհրդարանի
անդամների մեծամասնության
բարեհաճությանը:

Կրկնակի եռանդով Ալեանդրը
պահանջեց, որ կայսրը
իրականացնի պապի
դատավճիռը: Սակայն
Գերմանիայի օրենքներով դա
չէր կարելի անել՝ առանց
իշխանների համաձայնության,
և Չարլզը, տեղի տալով
դեսպանի համառությանը,
պատվիրեց նրան գործը
ներկայացնել խորհրդարանին:
«Դա ցնծության օր էր պապի
դիվանագետի համար: Ժողովը

շատ մեծ էր, գործը՝ էլ ավելի
մեծ: Ալեանդրը պետք է
պաշտպաներ Յոզմի՝ բոլոր
եկեղեցիների մոր և տիրուհու
հեղինակությունը»:
Քրիստոնեական աշխարհի
մեծավորների առաջ նա պիտի
արդարացներ Պետրոսի
իշխանությունը: «Նա
ճարտարախոս մարդ էր, և
առիթը բաց չթողեց դրսևորելու
իր ողջ տաղանդը: Աստժո
Նախախնամություններ էր, որ
Յոզմի եկեղեցին, նախքան
կդատապարտվեր,
ներկայանար ամենաբարձր
ատյանի առաջ իր ամենաուսակ

հռետորի միջոցով» (Ուայլի, Ա.
6, գլ. 4): Բարենորոգչին
համակրողները
մտավախությամբ էին
սպասում Ալեանդրի խոսքի
ազդեցությանը: Սաքսոնիայի
իշխանը ներկա չէր, բայց նրա
կարգադրությամբ նրա
խորհրդատուներից ոմանք եկել
էին՝ գրի առնելու պապի
դիվանագետի ճառը: [148]

Գիտելիքների և
պերճախոսության իր ողջ ուժով
Ալեանդրը վճռեց տապալել
ճշմարտությունը: Նա
մեղադրանքների տարափ

տեղաց Լյութերի հասցեին՝
որպես եկեղեցու և պետութեան,
ողջերի և մեռածների,
հոգևորականութեան ու
ծխականների,
տիեզերածողովների և անհատ
քրիստոնյաների թշնամու:
«Լյութերի մոլորութեաններում
բավականաչափ բաներ կան,—
հայտարարեց նա,— որոնցով
կարելի է արդարացնել հարյուր
հազար հերետիկոսների
այրումը»:

Եզրափակիչ խոսքում նա
փորձեց արհամարհանքի
ստվեր գցել բարենորոգված

հավատի համախոհների վրա:
«Ուլքե՞ր են այդ բոլոր
լուծերականները: Գոռոզամիտ
ուսուցիչների, այլասերված
քահանա-ների, ցոփ
վանականների, տգետ
փաստաբանների և քայքայված
ազնվականների մի խումբ՝
հասարակ ժողովրդի հետ
միասին, ում նրանք մոլորեցրել
և ապականել են: Որքա՞ն շատ
են կաթոլիկները գերազանցում
նրանց թվով,
ունակություններով և
իշխանությամբ: Այս փայլուն
ժողովի միաձայն որոշումը
կլուսավորի պարզամիտներին,

Կնախազգուշացնի
անխոհեմներին, կհաստատի
երկմիտներին և ուժ կտա
ակարներին» (Դ՝Օբինյե, Ա. 7,
ԳԼ. 3):

Բոլոր դարերում այսպիսի
զենքով են հարձակվել
ճշմարտության ջատագույների
վրա: Մինչ օրս նույն
փաստարկներն են բերվում
Նրանց դեմ, ովքեր
համարձակվում են քարացած
մոլորություններին հակադրել
Աստծո խոսքի պարզ ու հստակ
ուսմունքը: «Ովքե՞ր են այդ նոր
ուսմունքների քարոզիչները»,—

բացականչում են
հանրաճանաչ կրոնի
հետևորդները: «Անկիրթ,
սակավաթիվ և աղքատ
մարդիկ: Եվ դեռ
հա-մարձակվում են հավակնել
տիրապետելու ճշմարտությանն
ու լինելու Աստծո ընտրալ
ժողովուրդը: Նրանք տգետ ու
խաբված են: Որքա՛ն ավելի
բազմանդամ է և ազդեցիկ մեր
եկեղեցին: Որքա՛ն շատ
ճանաչված ու կրթված մարդիկ
կան մեր շարքերում: Որքա՛ն և
ավելի մեծ իշխանություն
ունենք մենք»: Նման
փաստարկները մեծ

ագդեցութիւնն ունեն աշխարհի
վրա, սակայն դրանք այսօր
ավելի համոզիչ չեն, քան
Լյութերի օրերում:

Բարենորոգումը չավարտվեց
Լյութերի մահով, ինչպես
ենթադրում են շատերը: Այն
շարունակվելու է մինչ այս
աշխարհի պատմութեան
ավարտը: Լյութերը մեծ գործ
կատարվեց՝ մարդկանց տալով
այն լույսը, որ Աստված
շողացրել էր իր վրա, սակայն
Նրան չէր շնորհվել ամբողջ
լույսը, որ տրվելու էր
աշխարհին: Այն ժամանակից

մինչև այսօր Սուրբ Գիրքը
շարունակ ողողվում է նոր
լույսով, և մշտապես նորանոր
ճշմարտություններ են
բացահայտվում:

Պապական դեսպանի ճառը խոր
տպավորություն էր թողել
խորհրդարանի վրա: Լյութերը
ներկա չէր եղել այնտեղ,
որպեսզի Աստծո խոսքի հստակ
ու համոզիչ
ճշմարտություններով
տապալեր պապի
ներկայացուցչին: Ոչ մի փորձ
չարվեց պաշտպանելու
Բարենորոգչին: Համընդհանուր

հակվածություն կար ոչ միայն
դատապարտելու, նրան և նրա
ուսմունքը, այլև
հնարավորության դեպքում
նաև արմատախիլ անելու այն՝
որպես հերձվածողություն:
Չռոմին իր գործը
պաշտպանելու հիանալի առիթ
եր ընձեռվել: Այն ամենն, ինչ
կարելի էր ասել իրեն
ար-դարացնելու համար, ասվել
էր: Բայց այդ թվացյալ
հաղթանակը պար-տության
ազդանշան էր: Այսուհետև
հակադրությունը
ճշմարտության ու մոլորության
միջև էլ ավելի հստակ կերևար,

երբ դրանք բացահայտորեն
ընդհարվեին: Այդ օրից սկսած՝
Յոնան այլևս երբեք այնքան
ապահով չէր լինելու, որքան
Նախկինում:

Ու թեև խորհրդարանի
անդամների
մեծամասնությունը չէր հապա-
ղի Լյութերին մատնել Յոնանի
վրեժխնդրությանը, նրանցից
շատերը տեսնում և
դատապարտում էին եկեղեցում
տիրող բարոյական անկումը՝
կամենալով վերջ դնել
ապականված ու ազաի
հոգևորականության

չա-րաշահումներին, ինչի
հետևանքով տառապում էր
Գերմանիայի ժո-ղովուրդը:
Դեսպանը պապական
կառավարությունը
ներկայացրել էր ամենագրավիչ
լույսի ներքո: Իսկ այժմ Տերը
դրդեց խորհրդարանի
անդամներից մեկին պարզորոշ
նկարագրելու պապական
բռնատի-րություն
հետևանքները: Դուքս Գեորգ
Սաքսոնացին վեհանձն
արժա-նապատվությամբ
կանգնեց իշխանների այդ
ժողովում և ապշեցուցիչ
ճշտությամբ պատկերեց

պապության խաբեություններն
ու պղծությունները և դրանց
զարհուրելի հետևանքները:
Ավարտելով իր խոսքը՝ նա
ասաց. «Սա Յոնմի դեմ
աղաղակող չարաշահումների
մի մասն է: Ամոթը մի կողմ
դրած՝ նրանք միայն մեկ
նպատակ են հետապնդում
...դրամ, դրամ, դրամ... Եվ
քարոզիչները, որ պետք է
ճշմարտությունը սովորեցնեին,
ստից բացի ոչինչ չեն
արտասանում, և նրանց ոչ
միայն հանդուրժում են, այլև
վարձատրում, որովհետև
որքան մեծ է նրանց սուտը,

այնքան ավելի մեծ է շահույթը:
Այս գարշելի աղբյուրից է, որ
բխում են վարակված ջրերը:
Անառակությանը ձեռք է
մեկնում ազահությանը. ..
Ավա՛ղ, հոգևորականության
այս խայտառակ վարքն է հենց,
որ շատ թշվառ հոգիների
տանում է հավերժական
կորստյան: Անհրաժեշտ են
համընդհանուր
բարեփոխումներ» (Նույն
տեղում, և. 7, գլ. 4):

[150] Ավելի համոզիչ կերպով
դատապարտել պապական
չարաշահումները ինքը

Կուժերը, թերևս, չէր կարող, իսկ
այն փասաը, որ խոսողը
Բարենորոգչի բացահայտ
թշնամին էր, Էլ ավելի ազդեցիկ
դարձրեց նրա խոսքերը:

Եթե հավաքվածների աչքերը
բաց լինեին, նրանք իրենց մեջ
կտեսնեին Աստծո
հրեշտակներին, որ լույսի
շողերով ցրում էին
մոլորության խավարը՝
բացելով մարդկանց մտքերն ու
սրտերը ճշմարտության
ընդունելու համար:
Ճշմարտության և
իմաստության Աստծո

գորությունն էր, որ վերահսկում
էր անգամ Բարենորոգման
հակառակորդներին՝
ճա-նապարհ պատրաստելով
այն մեծ գործի համար, որը
շուտով պիտի կա-տարվեր:
Մարտին Լյութերը ներկա չէր
ժողովին, բայց այնտեղ լսվեց
Նրա ձայնը, ով Լյութերից ավելի
մեծ էր:

Խորհրդարանի կողմից մի
հանձնաժողով նշանակվեց՝
կազմելու պապության
չարաշահումների հաշիվը,
որոնք ծանր բեռի պես ճնշում
էին Գերմանիայի ժողովրդին:

Չարյուր մեկ կետերից
բաղկացած այդ ցուցակը
ներկայացվեց կայսրին՝ այդ
չարաշահումները վերացնելու
նպատակով շտապ միջոցներ
ձեռնարկելու խնդրանքով:
«Քրիստոնյա հոգիների
ինչպիսի՛ կորուստ,— գրում էին
դիմորդները,— ի՛նչ թալան,
ի՛նչ շորթում այն բոլոր
խայտառակությունների
պատճառով, որոնցով
շրջապատված է
քրիստոնեության հոգևոր
գլուխը: Մեր պարտքն է՝
կանխել մեր ժողովրդի
անպատվությունն ու

կործանումը: Այդ պատ-ճառով մենք խոնարհուլթյամբ, բայց թախանձագին խնդրում ենք ձեզ կարգադրել սկսելու համընդհանուր բարենորոգում և ձեռնամուխ լինել դրա իրականացմանը» (Նույն տեղում, և.7, գլ. 4):

Խորհուրդն այժմ պահանջեց, որ Բարենորոգիչը ներկայանա իր առջև: Չնայած Ալեանդրի աղերսների, բողոքների ու սպառնալիքների՝ կայսրը վերջապես համաձայնեց, և Լյութերին կանչեցին խորհրդարան: Յրավերի հետ

միասին ուղարկեցին նաև
պահպանագիր՝
հավաս-տիացնելով, որ նա
ապահով հետ կվերադառնա:
Այս լուրը հասցվեց Վիտենբերգ
սուրհանդակի միջոցով, ում
հանձնարարվել էր Լյուլթերին
ուղեկցել Վորմս:

Լյուլթերի ընկերները վախեցած
ու վհատված էին: Իմանալով
Նրա հանդեպ կանխակալ ու
թշնամական վերաբերմունքի
մասին՝ նրանք վախենում էին,
որ նույնիսկ պահպանագիրը չի
հարգվի, և խնդրում էին նրան
վտանգի չենթարկել իր կյանքը:

Բայց նա պատասխանեց.
«Պապականներին պետք է ոչ
թե իմ ժամանուամբ Վորմս, այլ
իմ [151] դատապարտությունն
ու մահը: Սակայն ի՞նչ
տարբերություն: Աղոթեք ոչ թե
ինձ համար, այլ Աստծո
խոսքի... Քրիստոսն ինձ կտա իր
Յոզիս՝ հաղթելու մոլորության
այս ծառայողներին: Ես
արհամարհում եմ նրանց, քանի
ողջ եմ կյանքիս ընթացքում,
իսկ մահովս պիտի հաղթեմ
նրանց: Նրանք Վորմսում
մտածում են, թե ինչպես են
ստիպելու ինձ ուրանալ, բայց
ահա իմ ուրացումը, առաջ ես

ասում էի, թե պապը Քրիստոսի փոխանորդն է, բայց հիմա պնդում եմ, որ նա մեր Տիրոջ թշնամին է և սատանայի առաքյալը» (Նույն տեղում, Ա.7, գլ. 6):

Լյութերը միայնակ չէր կատարելու այդ վտանգավոր ճամփորդությունը: Բացի կայսեր սուրհանդակից՝ նրան վճռեցին ուղեկցել իր ամենանվիրված ընկերներից երեքը: Մելանքթոնը խիստ փափագում էր միանալ նրանց: Նրա սիրտն այնքան էր կապված Նյուլթերի հետ, որ

պատրաստ էր նրա հետ
Նույնիսկ բանտ և մահվան
գնալ: Բայց նրա թախանձանքը
մերժվեց: Եթե նյութերը մեռներ,
Բարենորոգման գործը պիտի
շարունակեր նրա երիտասարդ
գործակիցը: Բաժանվելով
Մելանքթոնից՝ Լյութերն ասաց.
«Եթե ես չվերադառնամ, ու
թշնամիներս ինձ մահվան
մատնեն, շարունակիր
սովորեցնել և հաստատ եղիր
ճղշ- մարտության մեջ:
Աշխատիր իմ փոխարեն... Եթե
դու ողջ մնաս, իմ մա-հը Էական
նշանակությունն չի ունենա»
(Նույն, տեղում, և.7, գլ.7):

Լյութերին ճանապարհելու
եկած ուսանողներն ու
քաղաքացիները խորապես
հուզվեցին: Շատերն, ովքեր
սրտանց ընդունել էին
Ավետարանը, հրաժեշտ տալիս
լաց էին լինում: Այսպես
Բարենորոգիչն իր ընկերների
հետ մեկնեց Վիտենբերգից:

Ճանապարհին նրանք
նկատեցին, որ մարդիկ ճնշված
են մռայլ
կանխազգացումներից: Որոշ
քաղաքներում նրանց
անհրաժեշտ ուշադրության
չէին արժանանում: Մի

բարյացակամ քահանա, ում
տանը նրանք կանգ առան
գիշերելու, իր երկյուղը
հայտնեց՝ Լյութերին ցույց
տալով իտալացի մի
բարենորոգչի նկարը, ով
նահատակվել էր: Չաջորդ օրը
նրանք իմացան, որ Լյութերի
գրվածքները դատապարտվել
են Վորմսում: Կայսերական
բանբերներն ազդարարում էին
կայսրի հրա-մանագիրը և կոչ
անում ժողովրդին արգելված
ստեղծագործությունները
հանձնել տեղական
իշխանություններին:
Սուրհանդակը, վախենալով

Լյութերի անվտանգության համար և կարծելով, թե նրա վճռականությունն արդեն սասանված կլինի, հարցրեց, թե նա կամենո՞ւմ է արդյոք շարունակել ճանապարհը: Նա պատասխանեց. «Թեկուզ ամեն քաղաքում ինձ բանադրված հայտարարեն, ես առաջ պիտի գնամ» (Նույն տեղում, Ա.7, գլ.7):

[152] Էրֆուրտում Լյութերին պատվով ընդունեցին: Շրջապատված հիացած բազմություններով՝ նա անցավ այն փողոցներով, որոնցում

հաճախ ողորմություն էր
հավաքել: Նա այցելեց իր
վանական խուցը՝ մտաբերելով
իր մաքառումները, որոնց
արդյունքում նրա հոգու վրա
շողացել էր այն լույսը, որ հիմա
ողողում էր ողջ Գերմանիան:
Նրան խնդրեցին քարոզել:
Նրան արգելված էր այդ անել,
սակայն սուրհանդակը թույլ
տվեց, և նա, ով մի ժամանակ
վանքի սևագործն էր, այժմ
բարձրացավ ամբիոն:

Նա հավաքված բազմությանը
ողջունեց Քրիստոսի խոսքերով.
«Խաղաղությո՛ւն ձեզ»:

«Իմաստունները,
գիտնականներն ու
գրողները,— ասաց նա,—
վարձել են մարդկանց
սովորեցնել, թե ինչպես գտնեն
հավիտենական կյանքի ուղին:
Հիմա ես այն ցույց կտամ ձեզ...
Աստված մեռյալներից
հարուժյուն տվեց մի Մարդու՝
Տեր Հիսուս Քրիստոսին,
որպեսզի նա խորտակեր մահը,
արմատախիլ աներ մեղքը և
փակեր դժոխքի դռները: Սա է
փրկության գործը... Քրիստոսը
հաղթել է: Սա ուրախալի լուր է,
և մենք փրկվում ենք ոչ թե մեր,
այլևրա գործով... Մեր Տեր

Հիսուս Բրիստոսն ասել է.
«Խաղաղությո՞ւնն ձեզ. նայեք իմ
ձեռքերին», այսինքն՝ «Ո՛վ
մարդ, այդ ես, միայն ես եմ
վերցրել քո մեղքը և փրկագնել
քեզ, և հիմա դու
խաղաղությունն ունես, ասում է
Տերը»:

Շարունակելով՝ նա ցույց տվեց,
որ իսկական հավատը
կդրսևորվի սուրբ կյանքի
միջոցով: «Քանի որ Աստված
փրկել է մեզ, ուստի եկեք
այնպես կարգավորենք մեր
գործերը, որ դրանք հաճելի
լինեն Նրան: Հարո՞ւստ ես՝ քո

ունեցվածքով հոգա աղքատի
կարիքները: Աղքա՞տ ես՝ թող
քո ծառայությունն ընդունելի
լինի հարուստի համար: Եթե
աշխատում ես միայն քեզ
համար՝ ասելով, թե ծառայում
ես Աստծուն, դա խաբեություն
է» (Նույն տեղում, Ա.7, գլ.7):

Ժողովուրդը հմայված լսում էր:
Այս քաղցած հոգիներին
մատուցվեց կյանքի հացը:
Նրանց առաջ քրիստոսը
բարձրացվեց պապերից,
դեսպաններից, կայսրերից ու
թագավորներից վեր: Լյուծերը
ոչինչ չասաց իր վտանգավոր

վիճակի մասին: Նա չէր ուզում
դառնալ մտածումների կամ
կարեկցանքի առարկա:
Խորհելով Քրիստոսի մասին՝
Նա մոռացել էր իր անձը:
Թաքնված Գողգոթայի Այրի
ետևում՝ նա միայն ձգտում էր
ցույց տալ, որ Յիսուսն է
մեղավորի միակ Փրկիչը:

[153] Բարենորոգիչը
շարունակեց իր ճանապարհը:
Նրա հայտնվելն ամենուրեք
մեծ հետաքրքրություն էր
առաջացնում: Անհամբեր մի
ամբոխ հավաքվեց նրա շուրջը,
և բարյացակամ ձայները

Նախագգուշացրին Նրան
պապականների մտադրության
մասին: «Նրանք կայրեն քեզ,—
ասացին ոմանք,— և մոխիր
կդարձնեն մարմինդ, ինչպես
վարվեցին Յան Յուսի հետ»:
Լյութերը պատասխանեց. «Եթե
Նույնիսկ Նրանք Վորմսից դեպի
Վիտենբերգ տանող ամբողջ
ճանապարհին կրակ վառեին,
որի բոցը հասներ մինչև
երկինք, ես Տիրոջ անուսով
կանցնեի դրա միջով, կկանգնեի
Նրանց առջև, և մտնելով այդ
հրեշի երախը՝ կփշրեի Նրա
ատամները՝ դավանելով Տեր

Յիսուս Բրիստոսին» (Նույն տեղում, Ա.7, գլ.7):

Լյութերի մոտենալու լուրը մեծ հրարանցում առաջացրեց Վորմսում: Ընկերները վախենում էին նրա անվտանգության համար, իսկ նրա թշնամիները՝ իրենց գործի ձախողման: Եռանդուն ջանքեր էին գործադրվել՝ համոզելու նրան չմտնել քաղաք: Պապականների հրահրմամբ նրան փորձեցին համոզել հանգիստ առնել մի բարյացակամ ասպետի ամրոցում, որտեղ, նրանց

ասելով, կարելի էր հարթել
բոլոր բարդութիւնները:
Ընկերները փորձեցին հետ
պահել՝ հիշեցնելով նրան
սպառնացող վտանգները, բայց
բոլոր ջանքերն ապարդիւն
էին: Առաջվա պես անսասան՝
Լյութերը հայտարարեց. «Եթե
Նույնիսկ Վորմսում այնքան դև
լինի, որքան կղմինդր կա
տների կտուրներին, ես,
միևնույնն է, պիտի մտնեմ
այնտեղ» (Նույն, տեղում, Ա.7,
ԳԼ.7):

Երբ նա հասավ Վորմս, քաղաքի
դարպասների մոտ մի

հսկայական ամբոխ էր
հավաքվել՝ ողջունելու նրան:
Այդպիսի բազմութունն չէր
հավաքվում նույնիսկ կայսրին
դիմավորելու համար:
Յուզմունքն աննկարագրելի էր:
Ամբոխի միջից լսվեց ինչ-որ
մեկի սուր ու լալագին ձայնը, որ
թաղման եղանակ էր երգում՝
Նախագգուշացնելով Լյութերին
սպասվող ճակատագրի մասին:
«Աստված է լինելու իմ
պաշտպանը», — ասաց նա՝
դուրս գալով կառքից:

Պապականները չէին
հավատացել, որ Լյութերն

իսկապես կհամարձակվեր
հայտնվել Վորմսում, և նրա
ժամանումը սարսափեցրեց
նրանց: Կայսրը անմիջապես
կանչեց իր խորհրդականներին՝
ծրագրելու իրենց հետագա
անելիքը: Եպիսկոպոսներից
մեկը՝ մի մոլի պապական,
հայտարարեց. «Մենք երկար
ենք խորհրդակցել այս հարցի
շուրջ: Թող ձերդ կայսերական
գերազանցությունն
անմիջապես ազատվի այս
մար-դուց: Սիգիզմունդը Յան
Ջուսին չմատնե՞ց այրվելու:
Մենք պարտավոր չենք
հերետիկոսին պահպանագիր

տալ կամ [154] հետեւ
տվածին»: «Ոչ,— ասաց
կայսրը,— մենք պիտի պահենք
մեր խոստումը» (Նույն տեղում,
և.7, գլ. 8): Ուստի որոշվեց, որ
պետք է լսեն Բարենորոգչին:

Ողջ քաղաքը փափագում էր
տեսնել այդ նշանավոր
մարդուն, և շուտով նրա
բնակարանը լցվեց բազմաթիվ
այցելուներով: Լյութերը հազիվ
էր ապաքինվել վերջերս
տարած հիվանդությունից: Նա
հոգևած էր ճամփորդությունից,
որը տևել էր երկու շաբաթ: Նա
պետք է պատրաստ-վեր

հաջորդ օրվա մեծ
իրադարձություններին, և
հանգստի ու խաղաղու-թյան
կարիք ուներ: Բայց այնքան
մեծ էր նրան տեսնելու
ցանկությունը, որ նա դեռ
հազիվ էր հասցրել մի քանի
ժամ հանգստանալ, երբ մի
խումբ ազնվականներ,
ասպետներ, քահանաներ ու
քաղաքի բնակիչներ
հավաքվեցին նրա շուրջը:
Նրանց մեջ կային շատ
ազնվականներ, ովքեր
համարձակորեն կայսրից
պահանջել էին
բարեփոխումներ կատարել

եկեղեցում, և ուլքեր, Լյութերի
խոսքերով, «ազատվել էին իր
ավե-տարանով» (Մարտին,
393): Անվեհեր վանականին
տեսնելու էին եկել ինչպես
ընկերներ, այնպես էլ
թշնամիներ, որոնց նա
ընդունեց աներեր
հանդարտությամբ՝ բոլորին
պատասխանելով
արժանապատվությամբ ու
իմաստությամբ: Նրա
պահվածքը հաստատուն էր և
աներկյուղ: Նրա գունատ,
նիհար դեմքը, որի վրա երեում
էին չարչարանքի ու
հիվան-դության հետքերը,

բարություն և նույնիսկ
ուրախություն էր
արտահայտում: Նրա խոսքերի
հանդիսավորությունն ու
լրջությունը նրան այնպիսի ուժ
էին տվել, որին անգամ նրա
թշնամիներն էին անզոր լիովին
դիմակայել: Ընկերներն ու
թշնամիները զարմանքով էին
լցված: Ոմանք համոզվեցին, որ
նա օժտված է աստվածային
զորությամբ, մյուսներն էլ,
ինչպես փարիսեցիները
Քրիստոսի մասին,
հայտարարեցին. «Նրա մեջ դև
կա»:

Չաջորդ օրը Լյութերին
հրավիրեցին խորհրդարան:
Կայսերական մի սպա էր
նշանակված՝ ուղեկցելու նրան
մինչև դահլիճ, բայց նայնպես,
նա մեծ դժվարությամբ տեղ
հասավ: Բոլոր փողոցները
լեփ-լեցուն էին մարդկանցով,
ովքեր ցանկանում էին տեսնել
այն վանականին, ով
հա-մարձակվել էր հակառակվել
պապի իշխանությանը:

Նախքան նա կհայտնվեր իր
դատավորների առջև, մի ծեր
գեներալ՝ շատ մարտերի հերոս,
բարյացակամորեն ասաց նրան.

«ԽԵ՛ղճ վանական, խԵ՛ղճ
վանական, դու հիմա
պատրաստվում ես ավելի
հերոսական քայլ կատարել,
քան ես կամ որևէ այլ
հրամանատար երբևէ արել ենք
մեր ամենաարյունահեղ
մարտերում: Բայց եթե քո
գործն արդար է, և դու
համոզված ես դրանում, գնա
առաջ հանուն Աստծո և [155]
ոչնչից մի՛ վախեցիր: Աստված
քեզ չի թողնելու» (Դ՝Օբիևյե,
և.7, գլ. 8):

Վերջապես Լյութերը կանգնեց
խորհրդի առջև: Կայսրը նստեց

իր գահին: Նրան շրջապատում
էին կայսրության
ամենանշանավոր անձինք:
Երբեք ոչ մի մարդ չէր
հայտնվել ավելի փայլուն
ժողովում, քան սա էր, որի առջև
Մարտին Լյութերը պիտի
պատասխան տար իր հավատի
համար: «Նրա ներկայությունն
իսկ արդեն մեծ հաղթանակ էր
պապության նկատմամբ:
Պապը դատապարտել էր այդ
մարդուն, և հիմա նա կանգնած
էր մի դատարանի առաջ, որը
հենց այս գործողությամբ իրեն
պապից բարձր էր դասել: Պապը
բանադրանքի էր ենթարկել

Նրան՝ կտրելով մարդկային ողջ
հասարակութունից, բայց նա
հարգալից կերպով կանչվել և
ընդունվել էր աշխարհի
ամենափայլուն ժողովում:
Պապը նրան դատապարտել էր
հավերժական լռության, բայց
նա հիմա պատրաստվում էր
խոսել քրիստոնեական
աշխարհի ամենահեռավոր
անկյուններից ժամանած
հազարավոր ուշադիր
ունկնդիրների առջև: Այսպես
Լյութերի միջոցով ահռելի
հեղաշրջում էր տեղի ունեցել:
Հռոմն արդեն տապալվում էր
իր գահից, և մի վանականի

ձայնն էր, որ պատճառ դարձավ
Նրա անկմանը»:

Այդ հեղինակավոր ու
բարձրաստիճան անձանց
Ներկայությամբ համեստ
Բարենորոգիչը վախեցած ու
շփոթված էր թվում: Նկատելով
Նրա հուզմունքը՝ իշխաններից
ոմանք մոտեցան Նրան, և
Նրանցից մեկը շշնջաց. «Մի՛
վախեցեք Նրանցից, որ
մարմինն են սպանում, բայց
հոգին չեն կարող սպանել»: Իսկ
մյուսն ասաց. «Երբ որ
կուսակալների ու
թագավորների առաջ տարվեք

իմ պատճառով, նույն ժամին
ձեր Յոր Յոգու միջոցով կտրվի
այն, ինչ որ պիտի խոսեք»:
Այսպես՝ փորձության պահին
աշխարհի մեծ մարդիկ
Քրիստոսի խոսքերով
քաջալերեցին Նրա ծառային:

Լյութերին առաջարկեցին
կանգնել ուղիղ կայսեր գահի
առջև: Խոր լռություն իջավ
դահլիճում հավաքվածների
վրա: Յետո վեր կացավ
կայսերական մի պաշտոնյա և
ցույց տալով Լյութերի
գրվածքների հավաքածուն՝
պահանջեց, որ Բարենորոգիչը

պատասխանի երկու հարցի,
ընդունո՞ւմ է նա, որ դրանք
իրենն են, և պատրաստվո՞ւմ է
արդյոք հրաժարվել իր
շարադրած գաղափարներից:
Երբ կարդացին գրքերի
վերնագրերը, [156] ԼյուԹերը,
պատասխանելով առաջին
հարցին, ասաց, որ դրանց
հեղինակն ինքն է: «Ինչ
վերաբերում է երկրորդ
հարցին,- շարունակեց նա,—
որն, ինչպես տեսնում եք,
վերաբերում է հավատին ու
հոգիների փրկությանը, և որը
ներառում է Աստծո խոսքը՝
մեծագույն և ամենաթանկ

գանձը թե՛ երկրում, և թե՛
երկնքում, ես անխոհեմ կլինեի,
եթե պատասխանեի առանց
մտածելու: Քանզի գուցե ավելի
քիչ ասեմ, քան
հանգամանքներն են
պահանջում, կամ էլ ասեմ
ավելին, քան պահանջում է
ճշմարտությունը և այդպես
մեղանջեմ Քրիստոսի այս
խոսքի դեմ. «Ով որ ուրանա ինձ
մարդկանց առջև, ես էլ նրան
կուրանամ իմ Յոր առջև, որ
երկնքում է» (Մատթեոս 10.33):
Ուստի ամենայն
խոնարհությամբ խնդրում եմ
Ձերդ կայսերական

գերազանցութեանն ինձ
ժամանակ տալ, որպեսզի ես
կարողանամ պատասխանել
առանց Աստծո խոսքի դեմ
մեղանջելու» (Դ՝Օբիևյե, ա. 7, գլ.
8):

Լյութերն իմաստութեամբ
վարվեց՝ դիմելով այդ
խնդրանքով: Նրա վարքը
համոզեց ժողովին, որ նա չէր
գործում զգացմունքների կամ
հանկարծական մղումների
ազդեցութեամբ: Նման
հանդարտութիւնն ու
ինքնատիրապետումը, որ չէին
սպասում մեկի կողմից, ով իրեն

դրսևորել էր որպես հանդուգն
ու անզիջում, նրան ավելի
զորացրին՝ օգնելով
պատասխանել այնպիսի
խելամտությամբ,
վճռականությամբ,
իմաստությամբ ու
արժանապատվությամբ, որ
զարմացրին ու հիասթափեցրին
նրա հակառակորդներին՝
հանդիմանելով նրանց
ամբարտավանությունն ու
հպարտությունը:

Չաջորդ օրը Լյութերը պետք է
ներկայանար՝ տալու իր
վերջնական պատասխանը:

Խորհելով այն մասին, թե ինչ
ուժեր են միավորվել
ճշմարտության դեմ, նրա
սիրտը նվաղեց: Նրա հավատը
երերաց, ահ ու դող պատեց
նրան, և նա սար սափով լցվեց:
Վտանգները շատացան նրա
մտքում և թվաց, թե խավարի
աժերն ուր որ է հաղթանակ
կտոնեն: Թվաց, թե նրա շուրջը
կուտակվող մռայլ ամպերը
բաժանում են նրան Աստծուց:
Նա տենչում էր
հավաստիանալ, որ Չորաց
Տերն իր հետ է լինելու:
Հոգեկան անտանելի
տառապանքի մեջ նա

երեսնիվայր փռվեց գետնին, և
Նրա դողդոջուն շուրթերից
սրտաճմլիկ աղաղակներ
պոկվեցին, որոնք միայն
Աստված կարող էր լիովին
հասկանալ:

«Ո՛վ ամենակարող և
հավիտենական Աստված,—
աղաչեց Նա,— ի՛նչ ահավոր է
այս աշխարհը: Ահա Նա բացել է
իր բերանը, որպեսզի կուլ տա
ինձ, իսկ ես այնքա՛ն քիչ եմ
վստահում Քեզ... Եթե ես պիտի
հուսամ միայն [157] այս
աշխարհի գորությանը, ապա
ամեն ինչ կորած է: ...Իմ վերջին

Ժամը եկաւ, իմ դատավճիռը
կայացված է... Ո՛րվ Աստված,
օգնիր ինձ դիմակայելու
աշխարհի ողջ իմաստութեանը:
Արա այս բանը... միայն Դու...
քանզի սա ոչ թե իմ գործն է, այլ
Քո: Ես այստեղ անելիք չունեմ,
ոչինչ չունեմ կիսելու աշխարհի
այս մեծամեծերի հետ... Գործը
Քոնն է ...և դա արդար ու
հավիտենական գործ է: Ո՛րվ
Տեր, օգնիր ինձ: Հավատարիմ
ու անփոփոխ Աստված, ոչ մի
մարդու ես չեմ ապավինում:
...Մարդկային ամեն բան
անհաստատ է և անհուսալի...
Դու ես ինձ ընտրել այս գործի

համար... Ինձ հետ եղիր հանուն
Քո սիրելի Յիսուս Քրիստոսի, ով
իմ պաշտպանն է, վահանն ու
ամրոցը» (Նույն տեղում, Ա.7, գլ.
8):

Ամենաիմաստուն
Նախախնամությունը թույլ
տվեց, որ Լյութերը գիտակցի
իրեն սպառնացող վտանգը,
որպեսզի չապավինի իր
ուժերին ու չընկնի փորձության
մեջ: Սակայն իրեն սպառնացող
տառապանքները,
կտտանքների կամ մահվան
զարհուրանքը չէ, որ
սարսափեցնում էին նրան: Նա

ճգնաժամի մեջ էր հայտնվել և
զգում էր, որ անկարող է
հաղթահարել այն: Իր
թուլութեան պատճառով
ճշմարտության գործը կարող էր
տուժել: Ոչ թե իր անձնական
անվտանգության, այլ
Ավետա-րանի հաղթանակի
համար էր նա «գոտեմարտում»
Աստծո հետ: Իսրայելի պես՝
գիշերային իր պայքարում այն
ամայի գետակի մոտ, նա
նույնպես տառապում ու
պայքարում էր հոգով: Եվ նա
հաղթեց, ինչպես Իսրայելը: Իր
ծայրաստիճան
անօգնականության մեջ նա

հավատով կառչեց Քրիստոսին՝
հզոր Ազատարարին: Նրան
զորացրեց այն
հա-վաստիացումը, որ միայնակ
չի ներկայանալու խորհրդին:
Նրա հոգուն կրկին
խաղաղություն իջավ, և նա
ցնծաց, որ իրեն թույլ էր տրվել
բարձրացնել Աստծո խոսքը
ազգերի իշխանների առաջ:

Իր միտքն Աստծո վրա
կենտրոնացնելով՝ Լյութերը
պատրաստվեց առաջիկա
պայքարին: Նա կշռադատեց իր
ասելիքը, քննեց իր
ստեղծագործությունների որոշ

հատվածներ և Սուրբ Գրքից իր
դիրքորոշու- մը հաստատող
ապացույցներ վերցրեց:
Այնուհետև, ձախ ձեռքը դնելով
բացված Աստվածաշնչի վրա՝
նա իր աջ ձեռքը բարձրացրեց
դեպի երկինք ու երդվեց
«հավատարիմ մնալ
Ավետարանին և [158] ազատ
դավանել իր հավատը, եթե
Նույնիսկ ստիպված լինի
արյունով կնքել իր
վկայութունը» (Նույն տեղում,
և.7, գլ. 8):

Երբ նա նորից կանչվեց՝
ներկայանալու խորհրդի առաջ,

Նրա դեմքին վախի կամ
շփոթութեան հետք անգամ
չկար: Յանդարտ ու խաղաղ,
բայց շատ անվեհեր ու վեհանձն
Նա կանգնած էր երկրի
մեծավորների առաջ՝ որպես
Աստծո վկա: Ահա կայսերական
պաշտոնյան պահանջեց, որ Նա
վճռական պատասխան տա, թե
չի՞ ուզում արդյոք հրաժարվել
իր ուսմունքից: Լյութերը
պատասխանեց հնազանդ և
խոնարհ տոնով, առանց
կրքոտութեան կամ
բորբոքվածութեան: Թեև Նրա
պահվածքը համեստ էր ու
հարգալից, Նրա

վատահոլթյունն ու
ուրախությունը ապ-շեցրին
ներկաներին:

«Ամենապատվարժան կայսր,
անվանի իշխաններ և
բարեսիրտ պարոններ,— ասաց
Լյութերը,— այսօր ես
ներկայացա ձեզ ձեր երեկվա
կարգադրության համաձայն, և
Աստծո ողորմությամբ
թախանձում եմ Ձերդ
գերազանցությանն ու
մեծապատիվ իշխաններին
բարեհաճել լսել այն գործի
պաշտպանությունը, որն իմ
համոզմամբ արդար է և

ճշմարիտ: Եթե
անգիտակցաբար խախտեմ
պալատական սովորույթներն
ու կարգը, խնդրում եմ ներեք
ինձ, քանզի ես մեծացել եմ ոչ
թե արքայական պալատներում,
այլ վանքի մենուժյան մեջ»
(Նույն տեղում, և.7, գլ. 8):

Այնուհետև դառնալով իրեն
տրված հարցին՝ նա ասաց, որ
իր հրատարակած
աշխատություններն իրենց
բնույթով տարբեր են: Մի
քանիսը, որ վերաբերում են
հավատին ու բարի գործերին,
նայնիսկ իր թշնամիներն

անվանել են ոչ միայն անվնաս,
այլ նաև օգտակար: Ուրանալ
դրանք՝ նշանակում է
դատապարտել այն
ճշմարտությունները, որ
դավանում են բոլորը: Դրանց
երկրորդ մասը մերկացնում է
պապության
քայքայվածությունն ու
չարաշահումները: Յերբել
դրանք՝ կնշանակեր զորացնել
Յռոմի բռնատիրությունն ու
ավելի լայն դուռ բացել
բազմաթիվ ու մեծ
անիրավությունների համար:
Իսկ իր գրվածքների երրորդ
մասը քննադատում է այն

անհատներին, ովքեր
պաշտպանել են գոյություն
ունեցող չարիքները: Դրանց
վերաբերյալ նա բացեիբաց
խոստովանեց, որ հաճախ
չափից ավելի անզուսպ է եղել:
Նա չպնդեց, թե ազատ է
սխալներից, սակայն նույնիսկ
այդ գրքերը չէր կարող
ուրանալ, քանի որ դա
հանդուգն կդարձներ
ճշմարտության թշնամիներին,
և նրանք, առիթից օգտվելով,
ավելի դաժանորեն կճնշեին
Աստծո ժողովրդին: [159]

«Բայց ես ընդամենը մարդ եմ,
ոչ թե Աստված,— շարունակեց
նա,— ուստի պետք է քրիստոսի
նման պաշտպանեմ ինձ. «Եթե
չար խոսեցի, վկայիր չարի
մասին»... Աստծո
տրտմությամբ աղաչում եմ ձեզ,
ամենապատվարժան կայսր,
մեծանուն իշխաններ և բոլոր
ներկաներ, մարգարեների և
առաքյալների գրվածքների
հիման վրա ապացուցել, որ ես
սխալվում եմ: Յենց որ ես
համոզվեմ դրանում, կուրանամ
ամեն մի սխալը, և իմ գրքերն
առաջինը ինքս կրակի մեջ
կզգեմ»:

«Յուսով եմ, որ իմ խոսքերը
հստակորեն ցույց են տալիս, որ
ես ամեն ինչ կշռադատել եմ և
գիտակցում եմ, թե ինչ վտանգի
եմ ենթարկում ինքս ինձ: Բայց
դա ինձ բուրորովին չի
վախեցնում, ես ուրախ եմ
տեսնելու, որ Ավետարանը մեր
օրերում էլ, ինչպես անցյալում,
անհանգստության ու
տարածայնության պատճառ է
դարձել: Սա է Աստծո խոսքի
բնույթը և ճակատագիրը: «Ես
չեկա խաղաղություն բերելու
երկրի վրա, այլ սուր»,— ասաց
Յիսուս Քրիստոսը: Աստված

հրաշալի և ահարկու է իր
խորհուրդներում: Չգուշացեք,
ուրեմն, որ հանկարծ, ջանալով
կարգավորել
տարածայնությունները,
չհալածեք Աստծո սուրբ խոսքը՝
դրանով ձեր վրա բերելով
անդիմակայելի աղետների ու
դժբախտությունների, ինչպես
Նաև հավիտենական կորստյան
զարհուրելի հեղեղը... Ես կարող
եմ շատ օրինակներ բերել
Աստծո խոսքից: Կարող եմ
պատմել փարավոնների,
Բաբելոնի և Իսրայելի
թագավորների մասին, ովքեր
ամենահաջող կերպով

Նպաստել են իրենց իսկ
կործանմանը, երբ հետևելով
չափազանց իմաստուն թվացող
խորհուրդներին՝ ձգտել են
ամրացնել իրենց
տիրապետությունը: Աստված
«տեղափոխում է լեռները, և
Նրանք չգիտեն» (Նույն,
տեղում, ա.7, գլ. 8):

Լյութերը խոսում էր
գերմաներեն, բայց Նրան հիմա
խնդրեցին կրկնել իր ասածը
լատիներեն: Չնայած նա խիստ
հյուճված էր, սակայն
համաձայնեց և խոսեց նախկին
հստակությամբ ու եռանդով:

Սա տեղի ունեցավ Աստծո
Նախախնամությանը:
Իշխաններից շատերի միտքն
այնքան կուրացած էր
մոլորությանը ու
սնահավատությանը, որ
Լյութերի առաջին
ունկնդրության ժամանակ
Նրանք չէին զգացել Նրա
դատողության ուժը, բայց
կրկնությունը Նրանց
հնարավորությունն տվեց
հստակ կերպով ըմբռնելու
Ներկայացվող հարցերը: [160]

Նրանք, ովքեր համառորեն
մերժում էին լույսը՝ վճռելով

չընդունել ճշմարտությունդ
Լյութերի խոսքերի
զորությունից կատաղեցին: Երբ
նա դադարեց խոսել,
խորհրդարանի խոսնակը
բարկացած ասաց. «Դուք
չպատասխանեցիք ձեզ տրված
հարցին: ...Ձեզանից
պահանջվում է ստույգ և
ուղղակի պատասխան...
Ուրանո՞ւմ եք, թե՞ ոչ»:

Բարենորոգիչը պատասխանեց.
«Քանի որ Ձերդ
գերազանցությունը և
մեծապատիվ իշխաններն
ինձնից պահանջում են հստակ,

ստույգ և ուղղակի
պատասխան, ես կտամ այն: Ես
չեմ կարող իմ հավատը
վստահել ո՛չ պապին, ո՛չ էլ
ժողովներին, քանզի ցերեկվա
լույսի պես պարզ է, որ նրանք
հաճախ սխալվել են և հակասել
իրենք իրենց: Ուստի մինչև ինձ
չհամոզեն Սուրբ Գրքի
վկայութեամբ կամ պարզ
դատողութեամբ, քանի դեռ չեն
հերքվել իմ մեջբերումները, և
խիղճս դեռ կապված է Աստծո
խոսքին, ես չեմ կարող և չեմ
ուրանա, քանզի քրիստոնյայի
համար անվտանգ չէ խոսել իր
խղճի դեմ: Ահա իմ որոշումը,

այլ կերպ վարվել չեմ կարող:
Աստված ինձ օգնական: Ամեն»
(Նույն տեղում, և.7, գլ. 8):

Այսպես այս արդար մարդը
մարտնչեց՝ կանգնելով Աստծո
խոսքի հաստատուն հիմքի
վրա: Երկնային լույսը
լուսավորեց նրա դեմքը: Նրա
բնավորության վեհությունն ու
մաքրությունը, նրա սրտի
խաղաղությունն ու
ուրախությունը
բացահայտվեցին բոլորին, երբ
նա վկայում էր մոլո-րության
դեմ՝ ցույց տալով այն հավատի

գերազանցութիւնը, որը
հաղթում է աշխարհին:

Չավաքվածները
միառժամանակ զարմանքից
պապանձվել էին: Առաջին
պատասխանի ժամանակ
Լյութերը խոսել էր ցածր
տոնով, հարգալից և գրեթե
հնազանդ կեցվածքով:
Պապականները դա
մեկնա-բանել էին որպէս
ապացույց, որ նա սկսել էր
կորցնել իր խիզախութիւնը:
Պատասխանը հետաձգելու նրա
խնդրանքը նրանք գնահատել
էին որպէս ուրացման

Նախաբան: Կարլն ինքը
կիսաարհամարհաբար,
Նկատելով Լյութերի հյուճված
տեսքը, պարզ հագուստը և
անպաճույճ խոսելաձևը,
հայտարարել էր. «Այս
վանականը ինձ երբեք
հերետիկոս չի դարձնի»: Նրա
արիությունն ու
հաստատակամությունը,
ինչպես նաև նրա
դատողության ուժն ու
պարզությունը ապշեցրել էին
բոլորին: [161] Կայսրը
հիացմունքից բացականչեց.
«Այս վանականը խոսում է
աներկյուղ սրտով և անսասան

քաջությամբ»։ Գերմանացի
իշխաններից շատերը
հպարտությամբ և ցնծությամբ
էին նայում իրենց
հայրենակցին։

Յռոմի նվիրյալները
հայտնվեցին վատթարագույն
վիճակում, նրանց գործը
բոլորին երևաց
ամենաանբարենպաստ լույսի
ներքո։ Նրանք ջանում էին
պահպանել իրենց
իշխանությունը՝ դիմելով ոչ թե
Սուրբ Գրքին, այլ
սպառնալիքների՝ Յռոմի այդ
անփոփոխ զենքի միջոցով։

Խորհրդարանի խոսնակն
ասաց. «Եթե դու չես ուրանում,
ապա կայսրը և կայսրության
նահանգների իշխանները
պիտի խորհրդակցեն, թե
ինչպես վարվեն անուղղելի
հերետիկոսի հետ»:

Լյութերի բարեկամը, ով մեծ
ցնծությամբ էր լսել նրա
բացատրությունը, ցնցվեց այդ
խոսքերից, սակայն
Բարենորոգիչը հանգիստ
ասաց. «Աստված ինձ
օգնական, քանզի ես ուրանալու
ոչինչ չունեմ» (Նույն տեղում,
և.7, գլ. 8):

Մինչ իշխանները
խորհրդակցում էին, նյութերին
խորհրդարանից դուրս
հրավիրեցին: Երևում էր, որ մեծ
ճգնաժամ է սկսվել: Լյութերի
համառ հրաժարականը կարող
էր դարեր շարունակ ազդել
եկեղեցու պատմության վրա:
Որոշվեց նրան ուրանալու ևս մի
հնարավորություն տալ: Նրան
վերջին անգամ բերեցին ժողով
և դարձյալ հարց հնչեց, թե
հրաժարվո՞ւմ է արդյոք իր
ուսմունքից: «Ես ուրիշ
պատասխան չունեմ,- ասաց
նա,— բացի նրանից, որն

արդեն տվել եմ»։ Ակնհայտ էր,
որ ո՛չ խոստումները, ո՛չ էլ
սպանալիքները չէին կարող
ստիպել Նրան զիջելու Յռոմի
պահանջներին։

Պապական ղեկավարները
վրդովված էին, որ մի հասարակ
վա-նական այսպես
արհամարիում է իրենց
իշխանութունը, որից դողում
էին թագավորներն ու
ազնվականները։ Նրանք
տենչում էին տանջամահ անել
Նրան՝ բավարարելու համար
իրենց ցասումը։ Բայց Լյութերը,
գիտակցելով իրեն սպառնացող

վտանգը, խոսել էր
քրիստոնեական
արժանապատվութեամբ և
հանդարտութեամբ: Նրա
պատասխանի մեջ
հպարտութեան, կրքոտութեան
ու կեղծիքի նշույլ անգամ չկար:
Մոռանալով իր անձն ու իրեն
շրջապատող անվանի
մարդկանց՝ նա զգացել էր
միայն, որ գտնվում է Մեկի
Ներկայութեամբ, ով
անսահմանորեն ավելի բարձր
էր պապերից, իշխաններից,
թագավորներից ու կայսրերից:
Քրիստոսն ինքն էր խոսել
Լյութերի շուրթերով այնպիսի

գորութեամբ ու պատվով, որ
[162] միառժամանակ թե՛ նրա
բարեկամները, և թե՛
թշնամիները սարսափով ու
զարմանքով էին լցվել: Աստճո
Յոզիս, անտեսանելիորեն
ներկա լինելով հավաքվածների
մեջ, շարժել էր կայսրութեան
առաջնորդների սրտերը:
Իշխաններից ոմանք
համարձակորեն ճանաչեցին
Լյութերի գործի
արդարացիութունը: Շատերը
համոզվել էին ճշմարտութեան
մեջ, սակայն ոմանց
տպավորութունները տևական
չեղան: Կային նաև այնպիսիք,

ովքեր այդ պահին
չարտահայտեցին իրենց
համոզմունքները, սակայն,
ինքնուրույն ուսումնասիրելով
Աստվածաշունչը, ապագայում
դարձան Բարենորոգման
անվեհեր ջատագույներ:

Իշխան Ֆրիդրիխը, ով մեծ
տազնապով էր սպասել
Լյութերի խորհրդարան
ներկայանալուն, խորապես
հուզվել էր նրա ելույթից: Նա
ուրախությամբ և
հպարտությամբ վկայեց
դոկտորի խիզախությունը,
անսասանությունն ու

ինքնատիրապետումը և որոշեց
Էլ ավելի վճռականորեն
պաշտպանել նրան:
Համեմատելով հակամարտող
կողմերը՝ նա տեսել էր, թե
ինչպես է ճշմարտության ուժն ի
չիք դարձնում պապերի,
թագավորների և պրելատների
իմաստությունը: Պապությունն
այնպիսի պարտություն կրեց,
որի արձագանքները հնչեցին
բոլոր ազգերի մեջ և գալիք
բոլոր դարերում:

Տեսնելով, թե ինչ
տպավորություն էր թողել
Լյութերի ճառը, դեսպանն,

ինչպես երբեք, վախեցավ
հռոմեական իշխանության
անվտանգության համար և
վճռեց իրեն հասու բոլոր
միջոցներով տապալել
Բարենորոգչին: Գործի դնելով
իր ողջ պերճախոսությունն ու
դիվանագիտական
վարպետությանը, որոնցով նա
մեծապես աչքի էր ընկել, նա
երիտասարդ կայսրին
ներկայացրեց աննշան մի
վանականի գործի պատճառով
Յռոմի հզոր գահի
բարեկամությունն ու
աջակցությունը զոհաբերելու
հիմարությունն ու վտանգը:

Նրա խոսքերն ապարդյուն
չեղան: Լյութերի ելույթի
հաջորդ օրը Կարլոսը
պատվիրեց հարցը քննարկել
խորհրդարանում՝
հայտարարելով, որ
վճռականորեն շարունակելու է
իր նախորդների
քաղաքականությունը՝
սատարելու և պաշտպանելու
Կաթոլիկ կրոնը: Քանի որ
Լյութերը հրաժարվել էր
ուրանալ իր ուսմունքը, նրա և
Նրա հերձվածողության դեմ
պետք է կիրառվեին
ամենախիստ միջոցները: «Մի

վանական՝ մոլորված իր իսկ
անմտությամբ, դուրս է եկել
քրիստոնեական աշխարհի
հավատի դեմ: Նման
ամբարշտության դեմն առնելու
համար ես կզոհաբերեմ իմ
տիրույթները, գանձերը, [163]
իմ ընկերներին, իմ մարմինը,
արյունը և կյանքը: Ես
պատրաստվում եմ հեռացնել
այդ օգոստինեոսական
նյութերին՝ արգելելով նրան
փոքրագույն անկարգություն
անգամ հրահրել ժողովրդի մեջ:
Իսկ հետո ես հետապնդելու եմ
նրան և նրա հա-մախոհներին՝
որպես անհնազանդ

հերետիկոսների՝
բանադրությամբ,
հասարակությունից վտարելով
և ցանկացած այլ միջոցներով,
մինչև որ ոչնչացնեմ նրանց: Ես
կոչ եմ անում նահանգների
ներկայացուցիչներին՝ վարվել
որպես հավատարիմ
քրիստոնյաներ» (Նույն տեղում,
և.7, գլ. 9): Բայց չնայած դրան՝
կայսրը հայտարարեց, որ
Լյութերի պահպանագիրը
պետք է հարգվի, և նախքան
նրա դեմ գործ հարուցելը՝ նա
պետք է անվտանգ տուն
վերադառնա:

Այժմ խորհրդարանը բաժանվեց
երկու հակադիր ճամբարների:
Պապի գործակալներն ու
ներկայացուցիչները կրկին
պահանջեցին չեղյալ համարել
Լյութերի պահպանագիրը:
«Նրա մոխիրը նույնպես պետք
է Ռեյնը տանի,— ասացին
նրանք,— ինչպես հարյուր
տարի առաջ քշեց-տարավ Ցան
Յուսի մոխիրը» (Նույն տեղամ,
և.7, գլ. 9): Բայց Գերմանիայի
իշխանները, պապության
համախոհներն ու Լյութերի
երդպյալ թշնամիները լինելով
հանդերձ, բողոքեցին հանրային
հավատի մեջ նման ճեղքվածք

առաջացնելու դեմ, ինչը
կպատվագրվեր իրենց ազգը:
Նրանք հիշեցրին այն
աղետները, որ հետևել էին
Յուսի մահվանը՝
հայտարարելով, որ չեն
համարձակվի կրկին այդ
չարիքները բերել Գերմանիայի
և իրենց երիտասարդ կայսեր
գլխին:

Կարլոսն ինքը, մերժելով այդ
ստոր առաջարկը, ասաց. «Եթե
պատիվն ու հավատը
հալածվեին ամբողջ
աշխարհից, պետք է
ապաստարան գտնեին

իշխանների սրտերում» (Նույն տեղում, Ա.7, գլ. 9): Լյութերի ամենատխտիմ թշնամիները շարունակեցին համոզել կայսրին՝ Բարենորոգչի հետ վարվել այնպես, ինչպես Սիզիզմունդը՝ Յուսի հետ, այսինքն՝ մատնել նրան եկեղեցու տրտմությանը: Բայց հիշելով թե ինչ-պես Յուսը բաց ժողովում ցույց տվեց իր շղթաները և միապետին հիշեցրել նրա տված խոսքը, Կարլոս V—ը պատասխանեց. «Ես չեմ ուզում Սիզիզմունդի պես կարմրել» (Լենֆանթ, Ա.1, էջ 422):

Բայց նայնպես, Կարլոսը
գիտակցաբար մերժեց Լյութերի
ներկա-յացրած
ճշմարտությունները: «Ես
հաստատ վճռել եմ հետևել իմ
Նա-խորդների օրինակին»,—
գրել է Նա (ԴՕբինյե, Ա.7, գլ. 9):
Նա որոշել էր չզեղվել
ընդունված [164] ավանդույթից՝
անգամ հանուն ճշմարտության
և արդարության: Նա կսատարի
պապությանը՝ իր ողջ
դաժանությամբ և
ապականությամբ, քանի որ
այդպես են վարվել իր հայրերը:
Այսպիսով՝ Նա վճռեց կուրորեն

հետևել իր հայրերի
օրինակներին և որևէ լույս
չընդունել, բացի նրանից, որ
ունեցել են նրանք և չկատարել
որևէ պարտականություն, որը
նրանք չէին կատարել:

Այսօր էլ շատերը կառչում են
իրենց հայրերի սովորույթներին
ու ավանդույթներին: Երբ Տերը
նրանց լրացուցիչ լույս է
ուղարկում, նրանք
հրաժարվում են ընդունել այն,
և մերժում են, քանի որ այն չի
շնորհվել իրենց հայրերին:
Մենք գտնվում ենք այլ
հրավիճակում, քան մեր

հայրերը, հետևաբար, մեր
պարտականություններն ու
պատասխանատվությունն էլ
այլ են: Աստված մեզ
հավանություն չի տա, եթե
ճշմարտության խոսքը
ինքնուրույն քննելու փոխարեն
մեր պարտքը որոշենք մեր
հայրերի օրինակով: Մեր
պարտականությունն ավելի
մեծ է, քան մեր նախնիներինը:
Մենք պատասխանատու ենք
ինչպես նրանց ստացած և
ժառանգաբար մեզ
փոխանցված լույսի, այնպես էլ
այն լրացուցիչ լույսի համար,

որն այժմ շողում է մեզ վրա
Աստծո խոսքից:

Քրիստոսն անհավաստ
հրեաների մասին ասաց. «Եթե
ես չեի եկել Նրանց հետ խոսել,
Նրանք մեղք չեին ունենա, բայց
հիմա պատճառանք չունեն
իրենց մեղքի համար»

(Յովհաննես 15.22):

Աստվածային նույն
զորությունը Լյութերի միջոցով
դիմում էր Գերմանիայի
կայսրին և իշխաններին: Եվ
քանի որ լույսը շողում էր
Աստծո խոսքից, Նրա Յոզիև
վերջին անգամ էր դիմում

շատերին այդ ժողովում:
Ինչպես Պիղատոսը դարեր
առաջ թույլ տվեց, որ
հպարտութունն ու մարդկային
փառքը փակեն իր սիրտը
աշխարհի Փրկչի առաջ, ինչպես
դողացող Ֆելիքսը հրամայեց
ճշմարտության լրաբերին՝ «Դու
հիմա գնա, երբ որ ժամանակ
ունենամ, կկանչեմ քեզ», և
ինչպես հպարտ Ագրիպասը
խոստովանեց՝ «Քիչ է մնում՝
ինձ համոզես, որ քրիստոնյա
դառնամ» (Գործք 24.25, 26.28),
սակայն արհամարհեց
երկնային լուրը, այնպես էլ
Կարլոս V—ը, ենթարկվելով

աշխարհիկ հպարտության ու
քաղաքականության
թե-լադրանքին, վճռեց մերժել
ճշմարտության լույսը:

Լյութերի դեմ նյութած դավերի
լուրը շուտով լայնորեն
տարածվեց՝ մեծ հուզմունք
առաջացնելով քաղաքում: [165]
Բարենորոգիչը բազմաթիվ
ընկերներ էր ձեռք բերել,
գիտենալով Յոհաննի ուխտադրուժ
դաժանությունը նրանց
հանդեպ, ովքեր
կհամարձակվեն մերկացնել
նրա փչացածությունը, նրանք
վճռեցին, որ Լյութերը չպետք է

գոհաբերվի: Յարյուրավոր
ազնվականներ երդվեցին
պաշտպանել նրան: Քիչ չէր և
նրանց թիվը, ովքեր
բացահայտորեն
դատապարտեցին
թագավորական որոշումը՝
որպես թուլակամ
հնազանդություն Յռոմի
վերահսկիչ իշխանությանը:
Տների դարպասներին և
հասարակական վայրերում
ցուցապաստառներ
հայտնվեցին, որոնց մի մասը
մեղադրում, մյուս մասը
պաշտպանում էր Լյութերին:
Դրանցից մեկի վրա գրված էր

Սողոմոնի խորիմաստ խոսքը.
«Վա՛յ քեզ երկիր, որ
թագավորո՞ւ տղա է»: (Ժողովող
10.16): Ողջ Գերմանիայում
Լյութերի օգտին
հասարակական
խանդավառությունը համոզեց
կայսրին և խորհրդարանին, որ
Նրա հանդեպ ցանկացած
անարդարություն կարող է
վտանգի ենթարկել ոչ միայն
կայսրության խաղաղությունը,
այլև գահի կայունությունը:

Տրիդրիխ Սաքսոնացին իրեն
շատ զգուշ էր պահում՝
թաքցնելով իր իսկական

զգացմունքները Բարենորոգչի
Նկատմամբ, մինչդեռ
միաժամանակ աչալրջորեն
հսկում էր Նրան՝ հետևելով Նրա
և Նրա թշնամիների բոլոր
շարժումներին: Սակայն
շատերը չէին ել վարձում
թաքցնել իրենց համակրանքը
Լյութերի հանդեպ: Նրան
այցելում էին իշխաններ,
կոմսեր, բարոններ և այլ
նշանավոր անձինք՝ թե՛
աշխարհիկ, թե՛ եկեղեցական:
«Դոկտորի փոքր սենյակը,—
գրել է Սպալատինը,—
անկարող էր տեղավորել բոլոր
այցելուներին» (Մարտին, Ա.1,

Էջ 404): Ժողովուրդն այնպես էր
նայում նրան, ասես նա
գերմարդ լիներ: Նույնիսկ
նրանք, ովքեր չէին հավատում
նրա ուսմունքին, չէին կարող
չհիանալ այն վսեմ
ազնվությամբ, որը դրդել էր
նրան ընտրել մահը, քան իր
խղճի դեմ գնալ:

Լյութերին համառորեն ջանում
էին համոզել փոխզիջման գնալ
Յոնի հետ: Ազնվականներն ու
իշխանները ներշնչում էին
նրան, որ եթե նա շարունակի
իր դատողությունը վեր դասել
եկեղեցու և խորհրդարանի

որոշումներից, ապա շուտով
կարտաքսվի կայսրությունից և
կմնա անպաշտպան: Դրան
Լյութերը պատասխանեց.
«Քրիստոսի Ավետարանը չի
կարող քարոզվել առանց
զրկանքների ...Ուրեմն ինչո՞ւ
պետք է վախը կամ վտանգի
կանխազգացումն ինձ
բաժանեն Տիրոջից և
աստվածային այն խոսքից, որը
միակ ճշմարտությունն է: Ոչ, ես
[166] ավելի շուտ կգոհեմ
մարմինս, արյունս և կյանքս»
(Դ՝Օբինյե, և.7, գլ. 10):

Նրան դարձյալ համոզեցին
հնազանդվել կայսրին՝
հավատացնելով, որ նա արդեն
վախենալու ոչինչ չի ունենա:
«Ես ամբողջ սրտով համաձայն
եմ,— պատասխանեց
Լյութերը,— որ կայսրը,
իշխանները և նույնիսկ
ամենահամեստ քրիստոնյան
կարդան և քննադատեն իմ
գործերը, բայց միայն մեկ
պայմանով՝ իրենց համար իբրև
չափանիշ վերցնելով Աստծո
խոսքը: Մարդկանց ոչինչ չի
մտում անել, քան հնազանդվել
դրան: Մի՛ բռնացեք խղճիս
վրա, որը կապված և շղթայված

Է Սուրբ Գրքով» (Նույն տեղում,
և.7, գլ.10):

Մեկ այլ առաջարկության նա
պատասխանել է. «Ես
համաձայն եմ հրաժարվել իմ
պաշտպանագրից: Ես կայսեր
ձեռքն եմ հանձնում իմ անձը և
իմ կյանքը, բայց Աստծո խոսքը՝
բնավ երբեք» (Նույն տեղում,
և.7, գլ.10): Նա ասաց, որ
պատրաստ է ենթարկվել
ընդհանուր ժողովի որոշմանը,
բայց միայն այն պայմանով, որ
այդ որոշումը կայացվի
Աստվածաշնչի համաձայն:
«Ինչ վերաբերում է Աստծո

խոսքին ու հավատին,
յուրաքանչյուր քրիստոնյա
կարող է նույնքան լավ
դատավոր լինել իր համար,
որքան պապը, թեկուզև նրան
աջակցեն միլիոնավոր
ժողովներ» (Մարտին, Ա.1, էջ
410): Ի վերջո, նրա ընկերներն
ու թշնամիները համոզվեցին,
որ հաշտեցման հետագա
ջանքերն անօգուտ են:

Եթե բարոնորոգիչը զիջեր
թեկուզ մի կետում, սատանան
և նրա զորքը հաղթանակ
կտոնեին: Բայց նրա աներեր
հաստատակամությունը

Նպաստեց եկեղեցու
ազատագրմանը և սկիզբ դրեց
Նոր, ավելի լավ դարաշրջանի:
Այս մեկ մարդը, ով
համարձակվեց կրոնական
հարցերում ինքնուրույն
մտածել և գործել, իր
ազդեցությունը թողեց եկեղեցու
և աշխարհի վրա ոչ միայն իր
կյանքի օրոք, այլ նաև գալիք
բոլոր դարերում: Նրա
անսասան հավատարմությունը
մինչև ժամանակների վերջը
զորացնելու էր նրանց, ովքեր
պիտի անցնեին նման
փորձություններով: Աստծո
զորությունն ու մեծությունը

վեր դասվեցին մարդկանց
որոշող-ներից, սատանայի հզոր
ուժից:

Ճուտով կայսեր
հեղինակությամբ Լյութերին
կարգադրեցին վերադառնալ
տուն, բայց նա գիտեր, որ դրան
արագորեն հետևելու է իր
դատապարտումը: Նրա
ճանապարհին փոթորկաբեր
ամպեր էին կախվել, բայց նա
հեռացավ Վորմսից [167]
ուրախությամբ ու
փառաբանության խոսքերով:
«Սատանան ինքն էր հսկում
պապի ամրոցը,— ասաց նա,—

բայց քրիստոսը ճեղքեց այն, և սատանան ստիպված էր խոստովանել, որ Տերն իրենից զորեղ է» (Դ՛Օբիևյե, և.7, գլ.11):

Իր հեռանալուց հետո, դեռ մտահոգված, որ իր վճռականությունը սխալմամբ ըմբոստություն չհամարեն, Լյութերը կայսրին գրեց.

«Սրտեր քննող Աստված է իմ վկան, որ ես սիրով պատրաստ եմ հնազանդվել Ձերդ մեծությանը թե՛ պատվի կամ անպատվության, թե՛ կյանքի կամ մահվան մեջ, ամեն ինչում, բայց միայն Աստծո

խոսքով, որով և մարդ ապրում
Է: Ներկա կյանքի բոլոր
հարցերում իմ
հավատարմությունը կլինի
աներեր, քանզի այս երկրում
կորցնելը կամ ձեռք բերելը ոչ
մի նշանակություն չունի
փրկության համար: Բայց երբ
խոսքը վերաբերում է
հավերժական շահերին,
Աստված չի կամենում, որ
մարդը ենթարկվի մարդուն:
Քանզի նման
հնազանդությունը հոգևոր
հարցերում իսկական
երկրպագություն է, և դրան

արժանի է միմիայն Արարիչը»
(Նույն տեղում, Ա.7, գլ.11):

Վորմսից վերադառնալիս
Լյութերն ավելի ջերմ
ընդունելություն գտավ, քան
այնտեղ մեկնելիս:
Բարձրաստիճան
հոգևորականները ողջունեցին
բանադրված վանականին, և
իշխանները պատվեցին նրան,
ու՛մ կայսրը դատապարտել էր:
Նրան խնդրեցին քարոզել, և
չնայած կայսերական
արգելքին՝ նա դարձյալ
բարձրացավ ամբիոն: «Ես
երբեք չեմ խոստացել շղթայել

Աստճո խոսքը,— ասաց նա,—
ոչ էլ կխոստանամ» (Մարտին,
և. 1, էջ 420):

Վորմսից Լյութերի հեռանալուց
կարճ ժամանակ անց
պապական-ները կայսրին
համոզեցին հրաման արձակել
նրա դեմ: Այդ հրամանա-գրում
Լյութերը դատապարտված էր
որպես «սատանան ինքը՝
մարդկային կերպարանքով ու
վանականի հանդերձով»
(Դ՛Օբինյե, և.7, գլ.11):

Կարգադրված էր
պաշտպանագրի ժամկետը
լրանալուն պես միջոցներ

ձեռնարկել՝ նրա
գործունեությանը կասեցնելու
համար: Արգելված էր նրան
հյուրընկալել, ուտելիք և ջուր
տալ կամ էլ խոսքով ու գործով
օգնել կամ մխիթարել: Որտեղ
էլ որ գտնվեր, նրան պետք է
բռնեին ու հանձ- նեին
իշխանությաններին: Նրա
համախոհները ևս պիտի
բանտարկվեին, իսկ նրանց
ունեցվածքը՝ բռնագրավվեր:
Նրա գրվածքները պետք է
ոչնչացվեին և, վերջապես,
բոլորին, ովքեր
կհամարձակվեին հակառակվել

այդ հրամանագրին, սպասվում
էր նույն ճակատագիրը: [168]

Սաքսոնիայի իշխանը Լյութերի
մյուս համակիր իշխանների
հետ նրա հեռանալուց կարճ
ժամանակ անց լքել էին
Վորմսը, և խորհրդարանը
վավերացրել էր կայսեր
հրամանը: Պապականները
ցնծում էին՝ մտածելով, թե
Բարենորոգման բախտը
որոշված էր:

Սակայն Աստված այս
վտանգավոր պահին ելք էր
պատրաստել իր ծառայի

համար: Մի զգոն աչք հետևում
Էր Լյութերի յուրաքանչյուր
շարժմանը, և մի հավատարիմ
ու ազնիվ սիրտ վճռել էր փրկել
Նրան: Ակնհայտ էր, որ Յոնմին
Նրա մահից բացի ոչինչ չէր
բավարարի, և միայն
քողարկությամբ կարելի էր
փրկել Նրան առյուծի երախից:
Աստված իմաստություն տվեց
Ֆրիդրիխ Սաքսոնացուն՝
ծրագրելու Բարենորոգչի
ազատագրումը: Հավատարիմ
ընկերների
համագործակցությամբ
իշխանի մտադրությունն
իրականացվեց, և Լյութերը

հաջողութեամբ թաքցվեց թե՛
ընկերներից, թե՛ թշնամիներից:
Տուն վերադառնալու
ճանա-պարհին նրան բռնեցին,
բաժանեցին իր ուղեկիցներից և
անտառի միջով շտապ տարան
Վարթբուրգի մեկուսի լեռնային
ամրոցը: Այս ամենն ար-վեց
այնքան գաղտնաբար, որ
Նույնիսկ Ֆրիդրիխն ինքը
երկար ժամանակ չգիտեր
Լյութերի գտնվելու վայրը:
Նրան այդ մասին դիտավորյալ
չէին տեղեկացրել, քանի որ
ոչինչ չիմանալով՝ Նա ոչինչ էլ
չէր կարող հայտնել: Նա
միանգամայն գոհ էր, որ

Բարենորոգիչն
անվտանգութեան մեջ է, և
այդքանով բավարարված էր:

Անցան գարունը, ամառն ու
աշունը, և եկավ ձմեռը, իսկ
Լյութերը դեռ բանտարկութեան
մեջ էր: Ալեանդրն ու Նրա
կողմնակիցները ցնծում էին՝
կարծելով, թե Ավետարանի
լույսը շուտով մարելու է: Բայց
հակառակ Նրանց
սպասումներին՝ Բարենորոգիչն
իր լապտերը լցնում էր
ճշմարտութեան գանձարանից,
և Նրա լույսը էլ ավելի պայծառ
պիտի շողար:

Վարթաբուրգի բարեկամական
մթնոլորտում Լյութերը
միառժամա-նակ ուրախ էր, որ
ազատվել է թեժ ու աղմկալի
պայքարից: Բայց նա չէր կարող
երկար վայեքել անդորրն ու
հանգիստը: Գործուն կյանքի և
խստաշունչ պայքարի սովոր՝
նա չէր դիմանում
անգործությանը: Միայնության
մեջ նրան պատկերվեց
եկեղեցու վիճակը, և նա [169]
հոլ-սահատ բացականչեց.
«Ավա՛ղ, չկա մեկը, որ Նրա
բարկության այս վերջին օրը
պատի պես կանգնի Տիրոջ

առաջ և փրկի Իսրայելը» (Նույն տեղում, և. 9, գլ. 2): Խորհելով արդեն իր մասին՝ նա վախեցավ, որ իրեն կմեղադրեն պայքարից խուսափելու մեջ, և ինքն իրեն կշտամբում էր ծուլության և հանգստության համար, մինչդեռ ամեն օր անում էր ավելին, քան ի վիճակի էր անել մեկ մարդը: Նրա գրիչը երբեք ցած չէր դրվում: Իրենց շողոքորթելով, թե լռեցրել են նրան, Լյութերի թշնամիներն ապշեցին ու շփոթվեցին՝ տեսնելով նրա շարունակվող գործունեության ապացույցները: Նրա գրած մի

շարք գրքույկներ տարածվում
էին ամբողջ Գերմանիայով մեկ:
Նա մի կարևորագույն
ծառայություն ևս մատուցեց իր
հայրենակիցներին՝ Նոր
Կտակարանը թարգմանելով
գերմաներեն: Իր ժայռոտ
Պատմուսից ևա գրեթե մի
ամբողջ տարի շարունակեց
հռչակել Ավետարանը և
հանդիմանել իր ժամանակի
մեղքերն ու մոլո-րությունները:

Բայց Աստված իր ծառային
հասարակական կյանքից
հեռացրեց ոչ միայն այն
պատճառով, որ նրան հետ

պահի իր թշնամիների
զայրույթից կամ այդ կարևոր
աշխատանքների համար
հանգիստ ժամանակ
տրամադրի նրան: Աստված
հետապնդում էր առավել հեռու
գնացող և վեհ նպատակներ: Իր
լեռնային ապաստարանի
միայնություն ու
անհայտության մեջ Լյութերը
հեռու էր երկրային
աջակցությունից և մարդկանց
գովեստից, որպեսզի հանկարծ
չընկնի հպարտության ու
ինքնավստահության մեջ,
որոնք այնքան հաճախ
հետևում են հաջողությանը:

Տառապանքն ու նվաստացումը
նրան դարձյալ պատրաստեցին
ապահով քայլելու այն
գլխապտույտ բարձունքներով,
որոնց վրա նա այդքան
անսպասելիորեն հայտնվել էր:

Ցնձալով ազատության մեջ, որ
ճշմարտությունն է բերում՝
մարդիկ հակում ունեն
մեծարելու նրանց, ում Աստված
օգտագործել է մոլորութան ու
սնահավատության շղթաները
փշրելու համար: Սատանան
ջանում է մարդկանց մտքերն ու
զգացմունքները շեղել Աստծուց
և ուղղել մարդկային էակների

վրա: Նա դրդում է նրանց
փառաբանել գործիքը և
անտեսել նախախնամության
Ձեռքը, որ ղեկավարում է բոլոր
իրադարձությունները: Շատ
հաճախ կրոնական
առաջնորդները, ում այդպես
մեծարում և գովաբանում են,
դադարում են զգալ իրենց
կախ-վածությունն Աստուծոց և
սկսում են ապավինել իրենց
ուժերին: Եվ ար-դյունքում՝
[170] նրանք ձգտում են
վերահսկել մարդկանց միտքն
ու խիղճը, ովքեր
առաջնորդվելու համար
հակված են ավելի շուտ

վատահեղու նրանց, քան Աստծո
խոսքին: Բարենորոգման գործը
հաճախ կասեցվում է, երբ նրա
ջատագրվներն այդ ոգին են
փայփայում: Աստված հենց այս
վտանգից էր ուզում
պաշտպանել Բարենորոգման
գործը: Նա կամե- էր, որ այդ
գործը կրեր ոչ թե մարդու, այլ
Աստծո կնիքը: Մարդիկ սկսել
էին Լյութերին նայել որպես
ճշմարտության մեկնաբանի,
բայց նա հեռացվեց
ասպարեզից, որպեսզի բոլորի
հայացքն ուղղվի դեպի
ճշմարտության հավիտենական
Ջեղիսակը:

ԳԼՈՒԽ 9—ՇՎԵՅՑԱՐԱՑԻ ԲԱՐԵՆՈՐՈԳԻՉԸ

Եկեղեցու բարենորոգման
համար մարդկանց ընտրության
մեջ երևում է աստվածային այն
նույն ծրագիրը, ինչ որ
եկեղեցին հիմնադրելիս:
Երկնային Ուսուցիչը շրջանցեց
երկրի մեծավորներին՝
տիտղոսավոր ու հարուստ
մարդկանց, ովքեր սովոր էին
գովեստի ու մեծարանքի՝
որպես ժողովրդի
առաջնորդներ: Նրանք այնքան
հպարտ ու ինքնավստահ էին
իրենց պարծենկոտ

գերազանցութեամբ, որ չէին
կամենում վերափոխվել՝
կարեկցելու իրենց
մերձավորներին և դառնալու
խոնարհ Նազովրեցու
համագործակիցները: Կոչն
ուղղվեց Գալիլեայի անկիրթ ու
հասարակ ձկնորսներին. «Իմ
հետևից եկեք, և ես ձեզ
մարդկանց որսորդներ
կդարձնեմ» (Մատթեոս 4.19):
Այս աշակերտները համեստ էին
և սովորելու պատրաստ: Որքան
ավելի քիչ նրանք կրած լինեին
իրենց ժամանակի կեղծ
ուսմունքների ազդեցութիւնը,
այնքան ավելի հաջողութեամբ

Քրիստոսը կարող էր
սովորեցնել և դաստիարակել
Նրանց իր ծառայութեան
համար: Այդպես էր նաև Մեծ
Բարենորոգման օրերին:
Առաջատար բարենորոգիչները
հասարակ խավի մարդիկ էին՝
զերծ պաշտոնի
հպարտութիւնից և
հոգևորականների ու
Նախապաշա-րումների
ազդեցութիւնից: Աստժո
ծրագիրն է՝ մեծ արդյունքների
հաս-նելու համար օգտագործել
հասարակ մարդկանց, որպեսզի
փառքը տրվի ոչ թե Նրանց, այլ
Նրան, ով ներգործում է

Նրանցում «կամենալն էլ, անելն
էլ՝ իր բարեհաճության պես»:

Մի քանի շաբաթ անց այն
քանից հետո, երբ
Սաքսոնիայում հանքափորի
խրճիթում ծնվեց Լյութերը,
Ալպերում հովվի տնակում լույս
աշխարհ եկավ Ռւրիխ
Յվինգլին: Յվինգլիի
շրջապատն ու նրա [172] վաղ
դաստիարակությունն
այնպիսին էին, որ
պատրաստեցին նրան իր
ապագա առաքելությանը:
Մեծանալով բնության
հիասքանչ, գեղեցիկ ու

ակնածալից վեհության մեջ՝
Նրա միտքը վաղ հասակից
տպավորվել էր Աստծո
մեծութեան, զորութեան ու
վեհափառութեան զգացումով:
Իր հարազատ լեռները հասած
այրերի հերոսական
սխրանքների արարքների
պատմությունը բորբոքել էր
Նրա պատանեկան
երևակայությունը: Եվ իր
բարեպաշտ տատիկից Նա լսել
էր մի քանի թանկարժեք
աստվածաշնչյան
պատմություն՝ քաղված
եկեղեցական առասպելներից
ու ավանդություններից: Նա

Խոր հետաքրքրությամբ էր
լսում նահապետների և
մարգարեների անձնվեր
արարքների, ինչպես նաև այն
հովիվների մասին, ովքեր
իրենց հոտն էին արածեցնում
Պաղեստինի բլուրներում,
որտեղ հրեշտակները նրանց
հռչակեցին Բեթլեհեմի
Ման-կան և Գողգոթայի Մարդու
մասին լուրը:

Ջոն Լյութերի նման՝ Ցվինգլիի
հայրը նույնպես փափագում էր
կրթություն տալ իր որդուն, և
վաղ տարիքում պատանին
թողեց իր հայ-րենի լեռներն ու

հովիտները: Նրա միտքն
արագորեն զարգանում էր, և
շուտով խնդիր առաջացավ, թե
որտեղ մասնագետ ուսուցիչներ
գտնել նրան կրթելու համար:
Տասներեք տարեկանում նա
մեկնեց Բեռն, ուր սովորեց
Շվեյցարիայի՝ այն
ժամանակվա ամենանշանավոր
դպրոցներից մեկում: Սակայն
այստեղ վտանգ առաջացավ,
որը սպառնում էր խորտակել
Նրա խոստումնալից կյանքը:
Վանականները վճռական
ջան-քեր գործադրեցին
համոզելու նրան վանք գնալ:
Դոմինիկյան և Ֆրանցիսկյան

վանականները մրցակցում էին
ժողովրդի սերը շահելու
հա-մար, և այդ նպատակին
նրանք ձգտում էին հասնել
իրենց եկեղեցիների
ցուցադրական զարդարանքով,
ծեսերի շքեղությամբ և
հանրաճանաչ մասունքների ու
հրաշագործ սրբապատկերների
գրավչությամբ:

Բեռնի դոմինիկյան
վանականները հասկանում
էին, որ եթե կարողանան իրենց
կողմը գրավել այս շնորհալի
երիտասարդ գիտնակա-նին,
ապա կապահովեն թե՛ շահ, թե՛

պատիվ: Նրա
երիտասարդական ավյուհը,
հռետորի և գրողի նրա բնածին
ուհնակութիւնը, նրա
երաժշտա-կան ու
բանաստեղծական հանճարը
շատ ավելի արդիւնավետ
կլինեին իրենց
պատարագներին մարդկանց
հրապուրելու և միաբանութեան
եկամուտը մեծացնելու համար,
քան իրենց ողջ
ցուցամուտութիւնն ու
շքեղութիւնը խաբեութեամբ ու
շողոքորթութեամբ նրանք
ջանում էին համոզել
Յվինգլիին՝ ընդունուելու իրենց

վանքը: Իր ուսանողական
տա-րիներին Լյութերն իրեն
թաղեց վանական խցում, ու
եթե Աստծո
Նախախնամությունը
չազատեր նրան, նա կորած
կլիներ աշխարհի համար:
Ցվինգլիին թույլ չտրվեց
ենթարկվելու [173] նույն
վտանգին: Աստվածային
Նախախնամությամբ նրա
հայրը տեղեկացավ
վանականների ծրագրերի
մասին: Նա մտադրություն
չունեի թույլ տալու իր որդուն՝
վարելու վանականի պարապ ու
անօգուտ կյանքը: Տեսնելով, որ

որդու ապագան վտանգի տակ
է, նա պատվիրեց նրան
անհապաղ վերադառնալ տուն:

Նա ենթարկվեց հոր
կարգադրութեանը, բայց չէր
կարող երկար մնալ հարազատ
հովտում, և որոշ ժամանակ անց
մեկնեց Բագել՝ շարունակելու
իր ուսումը: Հենց այստեղ էր, որ
Յվինգլին առաջին անգամ լսեց
Աստծո ձրի շնորհի ավետիսը:
Հին լեզուների ուսուցիչ
Վիտենբախը, հունարեն ու
եբրայերեն ուսումնասիրելիս,
դիմել էր Սուրբ Գրքին, և
այդպես նրա միջոցով

աստվածային լույսի շողերը
հասան նրա ուսանողներին:
Նա երիտասարդներին
ներշնչում էր, որ գոյություն
ունի ավելի հին ու
անսահմանորեն ավելի
արժեքավոր ճշմարտություն,
քան այն տեսությունները, որ
սովորեցնում էին
գիտնականներն ու
փի-լիսոփաները: Այդ հին
ճշմարտությունն այն էր, որ
մեղավորի միակ փըր— կագինը
Քրիստոսի մահն է: Տվինգլիի
համար այս խոսքերը նման էին
այգալույսի առաջին շողին:

Ցվինգլիին շատով կանչեցին
Բագելից՝ սկսելու իր կյանքի
գործը: Նրա առաջին
աշխատավայրը Ալպյան մի
եկեղեցում էր՝ ոչ հեռու իր
հայրենի հովտից: Ստանալով
քահանայի ձեռնադրութուն՝
նա «իր ամբողջ հոգով նվիրվեց
աստվածային ճշմարտության
ուսումնասիրմանը, քանզի լավ
գիտեր,— ասում է նրա ընկեր
Բարենորոգիչը,— թե որքան
շատ պետք է իմանա նա, ում
վստահված է Քրիստոսի հոտը»
(Ուայլի, Ա. 8, գլ. 5): Որքան
ավելի էր նա քննում Սուրբ
Գիրքը, այնքան ավելի

հատակորեն էր տեսնում
տարբերությունը խոսքի
ճշմարտության և Յոնմի
հերձվածքների միջև: Նա
հնազանդվեց Սուրբ Գրքին՝
ընդունելով այն որպես Աստծո
խոսքը՝ միակ հիմնավոր,
անսխալական ուղեցույցը: Նա
հասկացավ, որ հենց Գիրքը
պետք է լինի իր իսկ
մեկնաբանը: Նա չէր
համարձակվում բացատրել
Գիրքը՝ հաստատելու որևէ
կանխակալ տեսություն կամ
ուսմունք, այլ իր պարտքն էր
համարում քննել, թե որն է նրա
ուղղակի և բացահայտ

ուսմունքը: Նա ջանում էր
օգտվել այն ամենից, ինչը
կարող էր օգնել լիարժեք ու
ճիշտ հասկանալու դրա
նշանակությունը, և դիմեց
Սուրբ Հոգու օգնությանը՝
համոզված, որ Նա այն
կլուսաբանի բոլոր անկեղծ
սրտով և աղոթքով
որոնողներին: [174]

«Սուրբ Գիրքը,— ասում էր
Ցվինգլին,— տվել է Աստված,
ոչ թե մարդը, և հենց նույն
Աստվածն էլ, ով լուսավորում է,
կհասկացնի քեզ, որ այդ խոսքն
իրենից է: Աստծո խոսքը... չի

Կարող սխալվել: Այն
լուսարձակում է, մեկնաբանում
և բացահայտում է իրեն
մարդկանց, լուսավորում է
հոգին փրկութեամբ ու շնորհով,
մխիթարում և խոնարհեցնում է
Նրան Աստծով, այնպես որ
մարդը, մոռանալով և նույնիսկ
ուրանալով իրեն, նետվում է
Աստծո գիրկը»: Այս խոսքերի
ճշմարտացիության մեջ
Ցվինգլին համոզվել էր
անձամբ: Այդ օրերի իր
փորձառության մասին նա
հետա- գայում գրել է. «Երբ ես
սկսեցի ամբողջովին տրվել
Սուրբ Գրքին,

փիլիսոփայությունն ու
գիտական
աստվածաբանությունը անվերջ
խնդիրներ էին հարուցում իմ
մեջ: Ի վերջո, ես եկա այս
եզրակացությանը. «Դու պետք
է թողնես այդ ամբողջ կեղծիքը
և հասկանաս Աստծո կամքը
միմիայն Իր իսկ պարզ
խոսքից»: Այնուհետև ես
խնդրեցի Աստծուն լուսավորել
ինձ, և Սուրբ Գիրքն ինձ համար
շատ ավելի պարզ դարձավ»
(Նույն տեղում, և. 8, գլ. 6):

Ցվինգլին իր ուսմունքը չէր
ընդունել Լյութերից: Դա

Քրիստոսի ուսմունքն էր: «Եթե
Լյութերը քարոզում է
Քրիստոսին,— ասել է
շվեյցա-րացի Բարենորոգիչը,—
Նա անում է այն, ինչ ես եմ
անում: Նա ավելի շատերին է
առաջնորդել Քրիստոսի մոտ,
քան ես, բայց դա կարևոր չէ:
Բացի Քրիստոսի անունից՝ ես
ուրիշ ոչ մի անուն չեմ կրի: Ես
Նրա զինվորն եմ, Նա՝ իմ միակ
Առաջնորդը: Լյութերն ինձ
երբեք ոչ մի բառ չի գրել, ոչ էլ
ես՝ Նրան: Իսկ ինչո՞ւ...»

Որպեսզի երևա, թե որքան
ներդաշնակ է Աստծո Յոզիս
ինքն իրեն, քանզի մենք

երկուսս էլ, առանց որևէ
պայմանավորվածության,
միանման ենք սովորեցնում
Քրիստոսի ուսմունքը»
(Դ՛Օբինյե, Ա. 8, գլ. 9):

1516 թվականին Ցվինգլիին
հրավիրեցին քարոզիչ
դառնալու Էյնսիդելնի վանքում:
Այստեղ նա ավելի մոտիկից
պիտի տեսներ Յոհանի
ապականությունը և, որպես
բարենորոգիչ, այնպիսի
ազդեցություն պիտի թողներ,
որը կզգացվեր իր հայրենի
Ալպերից շատ հեռու:
Էյնսիդելնում ամենաուշագրավ

բաներից մեկը Կոլյսի սրբապատկերն էր, որը, մարդկանց կարծիքով, հրաշագործ գորություն ուներ: Վանքի դարպասի վերևում գրություն կար. «Այստեղ կարելի է ձեռք բերել մեղքերի լիակատար [175] թողություն» (Նույն տեղում, ն. 8, գլ. 5): Տարին բոլոր այստեղ էին գալիս ուխտագնացներ, բայց Կոլյսի սրբապատկերի նվի-րաբերման ամենամյա տոնակատարությանը հազարավոր մարդիկ էին գալիս ոչ միայն Շվեյցարիայի բոլոր կողմերից, այլ նույնիսկ

Ֆրանսիայից ու Գերմանիայից:
Այդ տեսարանից խիստ
վշտացած՝ Ցվինգլին առիթը
չկորցրեց սնահավատության
այս գերիներին հռչակելու այն
ազատությանը, որ շնորհվում է
Ավետարանի միջոցով:

«Մի կարծեք,— ասաց նա,— թե
Աստված ներկա է այս
տաճարում ավելի, քան
արարչության որևէ այլ
մասում: Որ երկրում էլ որ
ապրեք, Աստվա ծ ձեզ մոտ է և
ասում է ձեզ... Կարո՞ղ եմ
արդյոք անօգուտ գործերը,
երկար

ուխտագնացութիւնները,
նվիրատվութիւնները,
սրբապատկերները, Կուլյսի կամ
սուրբերի բարեխոսութիւնը
ձեզ համար ապահովել Աստծո
շնորհը... Ի՞նչ օգուտ ունեն այն
բազմաթիվ խոսքերը, որոնցով
մենք կազմում ենք մեր
աղոթքները: Ի՞նչ օգուտ ունեն
փայլուն քահանայական
գլխաշորը, լավ հարդարված
մազերը, երկար պատմուճանը
կամ ոսկեզարդ
ոտնամանները... Աստված
սրտին է նայում, իսկ մեր
սրտերը հեռու են Նրանից»: «Քրիստոսը, որ մեկ անգամ

զոհաբերվեց խաչին, այն զոհն
ու պատարագն է, ով ընդմիջտ
քավեց հավատացյալների
մեղքերը» (Նույն տեղում, Ա. 8,
ԳԼ. 5):

Ճատ ունկնդիրների այս
խոսքերը դուր չեկան: Նրանք
դառնազին հիասթափվեցին՝
լսելով, որ իրենց հոգնեցուցիչ
ճամփորդութունը զուր է եղել:
Նրանք չկարողացան ըմբռնել
Քրիստոսի միջոցով
առաջարկվող ճրի ներումը:
Դեպի երկինք տանող հին
ուղին, որ Յոնան նշել էր նրանց
համար, բավարարում էր

Նրանց: Նրանք չկամեցան
իրենց նեղությունն տալ՝ ինչ-որ
ավելի լավ բան փնտրելու:
Ավելի հեշտ էր իրենց
փրկությունը վստահել
քահանաներին ու պապին, քան
ձգտել սրտի մաքրության:

Բայց մյուսներն ուրախությամբ
ընդունեցին Քրիստոսի միջոցով
փրկության լուրը: Հռոմի
եկեղեցու պարտադրած ծեսերը
չէին կարող խաղաղություն
բերել հոգուն, և նրանք
հավատով ընդունեցին Փրկչի
արյունը՝ որպես իրենց մեղքերի
քավություն: Նրանք տուն

վերադարձան՝ ուրիշներին
հայտնելու այն թանկարժեք
լույսը, որ ընդունել էին: Այսպես
ճշմարտարյունը տարածվեց
գյուղից գյուղ, քաղաքից
քաղաք, և Կուլյսի տաճար
այցելող ուխտագնացների
թիվը զգալիորեն նվազեց:
Պակասեցին [176] նաև
նվիրատվությունները,
հետևաբար և Ցվինգլիի
աշխատավարձը, որ տրվում էր
դրանցից: Բայց դրանից նա
միայն ուրախացավ՝ տեսնելով,
թե ինչպես են
մոլեռանդությունն ու

սնահավատութիւնը կորցնում
իրենց ուժը:

Եկեղեցու ղեկավարներն
անտեղյակ չէին այն գործից, որ
Ցվինգլին կատարում էր, բայց
չէին շտապում միջամտել: Մինչ
Նրանք դեռ հույս էին
փայփայում շողոքորթաթյամբ
իրենց կողմը գրավել Նրան,
ճշմարտութիւնը շահում էր
մարդկանց սրտերը:

Ցվինգլիի գործունեութիւնն
էյնսիդելնում Նրան
պատրաստեց ավելի լայն
ասպարեզի համար, որը Նա

շուտով մտնելու էր: Երեք տարի
անց նրան առաջարկեցին
քարոզչի պաշտոն Ցյուրիխի
մայր տաճարում: Այն
ժամանակ դա շվեյցարական
դաշնության կարևորագույն
քաղաքն էր, և այստեղից նրա
ազդեցությունը լայնորեն
տարածվելու էր: Սակայն
եկեղեցականները, ում
հրավերով նա ժամանել էր
Ցյուրիխ, ցանկանալով կանխել
ցանկացած նորամուծություն,
որոշեցին ցուցումներ տալ
նրան իր
պարտականությունների
վերաբերյալ:

«Դու պետք է ամեն ջանք
անես,— ասացին նրանք,—
որպեսզի ապահովես եկեղեցու
եկամուտն առանց նվազագույն
կորստի: Դու պետք է հորդորես
հավատացյալներին, ամբիոնից
թե խոստովանություն
ընդունելիս, վճարել բոլոր
տասանորդներն ու հարկերը և
ընծաներով ցույց տալ իրենց
հավատարմությունը
եկեղեցուն: Դու պիտի ջանաս
բազմապատկել հիվանդներից,
պատարագներից և,
ընդհանրապես, եկեղեցական
ամեն մի արարողությունից

ստացվող եկամուտը»: «Ինչ
վերաբերում է սրբազան
ծեսերին, քարոզչությանը և
հոտի մասին հոգ տանելուն,—
ավելացրին նրա
վերակացուները,— սրանք ես
մտնում են կապելանի
պարտականությունների մեջ:
Բայց դրանք, հատկապես
քարոզչությունը, դու կարող ես
հանձնարարել ուրիշին:
Սրբազան ծե— սերը պիտի
անես միայն նշանավոր
անձանց համար և միայն այն
ժա-մանակ, երբ քեզ կանչեն,
քեզ արգելված է դրանք անել
բոլորի համար՝ առանց

ընտրութեան» (Նույն տեղում, Ա.
8, գլ. 6):

Յվինգլին լուռ լսեց նրանց
ցուցումները և, իրեն այդ
կարևոր պաշտոնը
զբաղեցնելու պատվին
արժանացնելու համար իր
շնորհակալութիւնը
հայտնելուց հետո, ի
պատասխան՝ բացատրեց, թե
ինչ մոտեցումներ է [177]
առաջարկում որդեգրել:
«Քրիստոսի կյանքը,— ասաց
նա,— շատ երկար ժամանակ
թաքցվել է ժողովրդից: Ես
քարոզելու եմ սուրբ Մատթեոսի

ամբողջ Ավետարանը...
օգտվելով միայն Սուրբ Գրքից,
հայտնելով նրա
խորությունները,
համեմատելով տեքստը
տեքստի հետ և որոնելով
դրանց իմաստը անընդհատ ու
ջերմեռանդ աղոթքներով: Ես
ինձ նվիրաբերելու եմ
ծառայելու Աստծո փառքի, Նրա
միաձին Որդու պատվի,
հոգիների փրկության և
ճշմարիտ հավատի մեջ նրանց
հաստատման համար» (Նույն
տեղում, և. 8, գլ. 6): Թեև
հոգևորականներից ոմանք
հավանություն չտվին Ցվինգլիի

ծրագրին ու փորձեցին
տարհամոզել նրան, նա մնաց
անսասան՝ հայտարարելով, որ
պատրաստվում է ոչ թե
նորամուծութունն անել, այլ
կիրառել այն հին մեթոդը, որով
առաջնորդվել է եկեղեցին իր
ավելի վաղ ու մաքուր
ժամանակներում:

Արդեն հետաքրքրություն էր
առաջացել այն
ճշմարտությունների հանդեպ,
որ նա սովորեցնում էր, և
բազմաթիվ մարդիկ
հավաքվում էին՝ լսելու նրա
քարոզները: Նրան ունկնդրելու

Էին գալիս նույնիսկ այնպիսիք,
ովքեր վաղուց դադարել էին
հաճախել եկեղեցի: Նա սկսեց
իր ծառայութիւնը՝ բացելով
Ավետարանը և կարդալով ու
բացատրելով իր
ունկնդիրներին ներշնչյալ
պատմութիւնը Քրիստոսի
կյանքի, ուսմունքի և մահվան
մասին: Այստեղ, ինչպէս և
Էյնսիդելնում, նա Աստծո
խոսքը ներկայացրեց որպէս
միակ անսխալական
հեղինակութիւնը, և Քրիստոսի
մահը՝ որպէս միակ կատարյալ
զոհաբերութիւնը: «Ես
ցանկանում եմ,— ասում էր

Նա,— ձեզ առաջնորդել
Քրիստոսի՝ փրկութեան
ճշմարիտ աղբյուրի մոտ» (Նույն
տեղում, և. 8, գլ. 6): Քարոզչի
շուրջ էին հավաքվում մարդիկ
բոլոր խավերից՝ պետական
այրերից ու գիտնականներից
մինչև ռամիկն ու գյուղացին:
Նրանք խոր հետաքրքրությամբ
էին լսում նրան: Նա ոչ միայն
հռչակում էր ձրի փրկութեան
առաջարկը, այլև անվախորեն
հանդիմանում էր իր
ժամանակի չարիքներն ու
ապականությունը: Շատերը
տաճարից տուն էին
վերադառնում՝ փառաբանելով

Աստճուն: Այս մարդը,— ասում էին նրանք,— ճշմարտության քարոզիչ է: Նա մեր Մովսեսը կլինի, ով մեզ դուրս կբերի այս եգիպտական խավարից »(Նույն տեղում, և. 8, գլ. 6):

Թեև Յվինգլիի գործը սկզբում ընդունվեց մեծ խանդավառությամբ, որոշ ժամանակ անց այն հանդիպեց ընդդիմության: Վանականները վճռեցին խանգարել նրա գործունեությունը և դատապարտել նրա ուս-մունքը: [178] Շատերը ծաղրով ճանաչեցին էին ենթարկում

Նրան, մյուսները դիմում էին
վիրավորանքների ու
սպառնալիքի: Բայց Ցվինգլին
համբերությամբ էր տանում
այդ բոլորն՝ ասելով. «Եթե
ուզում ենք ամ-բարիշտներին
շահել Յիսուս Քրիստոսի
համար, ապա պետք է շատ
բաների վրա աչք փակենք»
(Նույն տեղում, և. 8, գլ. 6):

Մոտավորապես այդ ժամանակ
անսպասելի աջակցություն
գտավ Բարենորոգման գործն:
Բարենորոգման հետևորդներից
մեկն իր հավատակից ընկերոջ՝
ոմն Լուկիանի միջոցով

Բազելից Տյուրիիս ուղարկեց
Լյութերի որոշ գրվածքներ՝
համոզված, որ այդ գրքերի
վաճառքը կարող էր լույսը
տարածելու հզոր միջոց
հանդիսանալ: «Պարզեք,— գրել
է նա Յվինգլիին,— թե արդյոք
այս մարդը բավականաչափ
խոհեմ և հմուտ է: Եթե այո,
ապա թող նա ճվեյցարիայում
քաղաքից քաղաք, գյուղից
գյուղ և նույնիսկ տնից տուն
տանի Լյութերի գործերը և
հատկապես Տիրոջ աղոթքի
վերաբերյալ նրա
մեկնաբանությունը: Որքան
դրանք ավելի հանրաճանաչ

դառնան, այնքան ավելի շատ
գնորդներ կգտնվեն»։ (Նույն
տեղում, և. 8, գլ. 6)։ Այսպես
լույսը ներթափանցեց երկիր։

Երբ Աստված պատրաստվում է
փշրել տգիտության ու
սնահավատության շղթաները,
այդ ժամանակ է հենց, որ
սատանան գործում է
մեծագույն ուժով՝ մարդկանց
խավարով պատելու և նրանց
շղթաներն էլ ավելի
ամրացնելու համար։ Երբ
տարբեր երկրներում ելնում էին
մարդիկ՝ ժողովրդին
ներկայացնելու ներումն ու

արդարացումը Քրիստոսի
արյունով, Յոննը նոր ուժերով
Էր գործի անցնում՝ բացելու իր
շուկան քրիստոնեական ողջ
աշխարհում՝ առաջարկելով
մեղքերի թողություն դրամով:

Յուրաքանչյուր մեղք ուներ իր
գինը, և մարդկանց հանցանք
գործելու ազատ իրավունք էր
շնորհվում, եթե այդպիսով
լցվում էր եկեղեցու
գանձարանը: Եվ այսպես՝
առաջացավ երկու շարժում,
մեկն առաջարկում էր
թողություն դրամով, մյուսը՝
ներում Քրիստոսի միջոցով:

Յոռմը հովանավորում էր
մեղքը՝ դարձնելով այն իր
եկամտի աղբյուրը, իսկ
բա-րենորոգիչները
դատապարտում էին մեղքը՝
ցույց տալով Քրիստոսին՝
որպես երաշխավորի և
ազատարարի:

Գերմանիայում
ինդուլգենցիաների վաճառքը
հանձնարարված էր
դոմինիկյան վանականներին և
իրականացվում էր
տխրահոջակ Տեցելի միջոցով:
Շվեյցարիայում այդ առևտուրը
արված էր ֆրանցիսկյան

միաբանութեան ձեռքը՝
իտալացի մի վանականի՝
Սամսոնի [179]
դեկավարութեամբ: Սամսոնն
արդէն լավ ծառայութիւնն էր
մատուցել եկեղեցուն՝
պապական գանձարանը
լցնելով Գերմանիայում ու
Շվեյցարիայում հավաքած
ահռելի գումարներով: Յիմա էլ
նա շրջում էր Շվեյցարիայում՝
գրավելով մեծ ամբոխներ,
շորթելով աղքատ
գյուղացի-ների խղճուկ
միջոցները և ճոխ ընծաներ
պահանջելով հարուստ
խավերից: Ու թեև

բարեվախճան ազդեցությունն
արդէն զգալիորեն կրճատել էր
այդ առևտուրը, բայց լիովին չէր
կարողացել դադարացնել:
Ցվինգլին դեռ էյնսիդելնում էր,
երբ Սամսոնը, Շվեյցարիա
մտնելուց շատ չանցած, իր
«ապրանքով» ժամանեց
հարևան քաղաքը: Լսելով նրա
առաքելության մասին՝
Բարենորոգիչն անմիջապես
ճամփա է ընկնում՝
դիմակայելու նրան: Նրանք
այդպես էլ չհանդիպեցին իրար,
բայց այդ վանականի
հավակնությունները
մերկացնելու՝ Ցվինգլիի ջանքերն

այնպիսի հաջողութուն
ունեցան, որ նա ստիպված էր
հեռանալ այդտեղից:

Ցյուրիխում Յվինգլին
շարունակեց կրակոտ
քարոզները ներում
վաճառողների դեմ, ու երբ
Սամսոնը մոտեցավ քաղաքին,
նրան դիմավորեց մի լրաբեր՝
ուղարկված խորհրդի կողմից՝
հաղորդելու նրան շրջանցել
քաղաքը: Ու թեև նա վերջապես
խորամանկությամբ քաղաք
մտավ, սակայն վտարվեց՝
առանց նույնիսկ մեկ
ինդուլգենցիա վաճառելու, և

շուտով հեռացավ
ճվեյցարիայից:

Բարենորոգմանը նոր թափ
հաղորդեց ժանտախտը կամ
Մեծ Մահը, որը տարածվեց
ճվեյցարիայում 1519-ին: Դեմ
առ դեմ հանդիպելով
ժանտամահին՝ շատերը
հասկացան, թե որքան իզուր ու
անիմաստ էր ներումը, որն
իրենք վերջերս գնել էին: Եվ
նրանք փափագեցին ավելի
հաստատուն հիմք գտնել իրենց
հավատի համար: Ցվինգլին
Ցյուրիխում հիվանդացավ, և
նրա վիճակն այնքան ծանր ու

անհուլյս էր, որ ամենուրեք
սկսեցին լուրեր տարածել, թե
նա մահացել է: Փորձության
այդ ժամին, սակայն, նա
չկորցրեց իր հույսն ու
արիությունը: Նա հավատով
նայեց Գողգոթայի խաչին՝
ապավինելով մեղքի համար
արված լիակատար
քավությանը: Յետ դառնալով
մահվան դռնից՝ նա էլ ավելի
եռանդագին քարոզեց
Ավետարանը, և նրա խոսքերը
հնչեցին արտասովոր
զորությամբ: Ժողովուրդը
ցնծությամբ ողջունեց իր սիրելի
հովվին, ով ար-դեն եղել էր

գերեզմանի շէմին: Նրանք
իրենք էլ եկել էին
հիվանդներին ու [180]
մեռնողներին խնամելուց և,
ինչպես երբեք, զգացին
Ավետարանի արժեքը:

Ցվինգլին հասել էր
աստվածաշնչական
ճշմարտությունների ավելի
պարզ ընկալմանը, և ավելի
խորն էր վերապրել դրա
նորոգող ուժը: Մարդու
մեղանչումը և փրկության
ծրագիրը նրա մշտական
մտորումների առարկան էին:
«Ադամով բոլորս մեռած ենք,—

ասում էր նա,—
ապականության մեջ թաղված
և դատապարտված» (Ուայլի, Ա.
8, գլ. 9): «Քրիստոսը մեզ
համար հավիտենական
փրկություն է գնել... Նրա
չարչարանքը մշտնջենական
զոհաբերություն է և հավերժ ի
զորու է բժշկել: Այն առհավետ
բավարարում է աստվածային
արդարադատությունը նրանց
համար, ովքեր հաստատ ու
աներեր հավատով ապավինում
են նրան»: Բայց նա
միաժամանակ պարզորոշ
սովորեցնում էր, որ Քրիստոսի
շնորհը մարդուն մեղանջելու

ազատութիւն չի տալիս:
«Որտեղ որ կա հավատ առ
Աստված, այնտեղ ներկա է
Աստված, իսկ որտեղ Աստված
է, այնտեղ կա եռանդ, որը
մարդկանց դրդում է բարի
գործերի» (ԴՕբիւնյե, Ա. 8, գլ. 9):

Յվինգլիի քարոզներն այնպիսի
հետաքրքրութիւն էին
առաջացրել, որ տաճարը
լեփ-լեցուն էր լինում
բազմութիւններով, որոնք
գալիս էին լսելու նրան:
Աստիճանաբար, որքան որ
կարող էին ընդունել, նա
բացահայտում էր

ճշմարտությունն իր
ունկնդիրներին: Նա
զգուշանում էր, որպեսզի հենց
սկզբում չներկայացնի
այնպիսի հարցեր, որոնք
կվախեցնեին ու
նախապաշարումներ
կարթնացնեին: Նրա գործն էր՝
գերել մարդկանց սրտերը
Քրիստոսի ուսմունքով,
փափկեցնել դրանք Նրա սիրով
և մշտապես նրանց առջև
պահել Նրա օրինակը: Ու երբ
նրանք ընդունեին Ավետարանի
սկզբունքները, նրանց
սնահավատ հայացքներն ու
սովորույթները

անխոլտսփելիորեն
կանհետանային:

Քայլ առ քայլ Բարենորոգումն
առաջ էր ընթանում
Ցյուրիխում, և դրա
թշնամիները տագնապահար
վեր ելան գործուն
ընդդիմության: Մեկ տարի
առաջ Վիտենբերգի վանականը
Վորմսում իր «ոչ»—ն էր ասել
պապին ու կայսրի ն, և հիմա
ամեն ինչից երևում էր, որ
պապի պա-հանջները նույն
մերժումն էին ստանալու նաև
Ցյուրիխում: Ցվինգլիի դեմ
շարունակ հարձակումներ էին

գործում: Շվեյցարիայի
պապական գավառներում
Ավետարանի հետևորդներին
ժամանակ առ ժամանակ
խարույկ էին բարձրացնում,
բայց սա երևի բավական չէր.
հարկավոր էր լռեցնել
հերձվածողության ուսուցչին:
Կոնստանցիայի եպիսկոպոսը
երեք պատվիրակ ուղարկեց
Ցյուրիխի խորհուրդ՝
մեղադրելով Ցվինգլիին, որ
ժողովրդին սովորեցնում է [181]
խախտել եկեղեցու օրենքները՝
այդպես վտանգելով
հասարակության անդորրն ու
կարգուկանոնը: «Եթե եկեղեցու

հեղինակութունն
արհամարհվի,— պնդեց նա,—
ամենուրեք անիշխանութուն
կտիրի»։ Տվինգլին
պատասխանեց, որ երբ ինքը
չորս տարի Ավետարանն էր
քարոզում Ցյուրիխում, «այն
ավելի հանդարտ ու խաղաղ էր,
քան դաշնության մեջ որևէ այլ
քաղաք»։ «Ուրեմն՝
քրիստոնեությունը չէ՞
արդյոք,— ասաց նա,—
համընդհանուր
ապահովության լավագույն
գրավականը» (Ուայլի, և. 8,
գլ. 11)։

Պատվիրակները հորդորեցին
խորհրդականներին մնալ
Եկեղեցում՝ հայտարարելով, որ
Նրանից դուրս փրկություն չկա:
Ցվինգլին պատասխանեց.

«Թող այդ մեղադրանքը
չմտափոխի ձեզ: Եկեղեցու
հիմքը նույն Վեմն է, նույն
Քրիստոսը, ով Սիմոնին տվեց
Պետրոսին անունը, որովհետև
նա հավատարմորեն դավանեց
Նրան: Ամեն ազգի մեջ
ցանկացած մարդ, ով ամբողջ
սրտով հավատա Տեր Հիսուսին,
ընդունելի է Աստծուն: Հենց սա
է Եկեղեցին, որից դուրս,
հիրավի, ոչ ոք չի կարող

փրկվել» (Դ՛Օրինյե, Լոնդոնի
հրտ., և. 8, գլ. 11): Այս խորհրդի
արդյունքում եպիսկոպոսի
պատվիրակներից մեկն
ընդունեց բարենորոգված
հավատը:

Խորհուրդը հրաժարվեց
միջոցներ ձեռնարկել Ցվինգլիի
դեմ, և Յոննը պատրաստվեց
նոր գրոհի: Տեղեկանալով իր
թշնամիների դավերի մասին՝
բարենորոգիչը բացականչեց.
«Թող գան: Ես նրանցից
վախենում եմ այնքանով,
որքանով որ ծովափնյա ժայռն
է վախենում իրեն բախվող

ոռնացող ալիքներից» (Ուայլի,
և. 8, գլ. 11): Յոգևորականների
ջանքերը միայն նպաստեցին
այն գործի առաջընթացին, որը
նրանք ձգտում էին տապալել:
Ճշմարտությունը շարունակեց
տարածվել: Գերմանիայում
դրա կողմնակիցները, որ
ընկճվել էին Լյութերի
անհետանալով, նորից սիրտ
առան՝ տեսնելով Ավետարանի
առաջընթացը ճվեյցարիայում:

Երբ Բարենորոգումը
հաստատվեց Ցյուրիխում,
մարդկանց կյանքում դրա
պտուղներն ավելի ակնհայտ

դարձան, ճնշվեց պղծութունը,
և տիրեց կարգուկանոն ու
ներդաշնակութուն:
«Խաղաղութուն է տիրում մեր
քաղաքում,— գրել է
Ցվինգլին,— ոչ վեճեր կան, ոչ
կեղծավորություն, ոչ նախանձ,
ոչ էլ կռիվ: Որտեղի՞ց կարող է
գալ նման միաբանությունը,
եթե ոչ Տիրոջից և մեր
ուսմունքից, որ լցնում է մեր
սրտերը խաղաղության ու
բարեպաշտության
պտուղներով» (Նույն տեղում,
և. 8, գլ. 15):

Բարենորոգման միջոցով ձեռք
բերված հաղթանակները
պապականներին դրդեցին
ավելի վճռական քայլերի՝ այն
տապալելու նպատակով: [182]
Տեսնելով, թե որքան քիչ
արդյունք տվեց հալածանքը
Գերմանիայում Լյութերի գործը
ճնշելու հարցում, նրանք
որոշեցին բարեփոխման դեմ
պայքարել նրա իսկ զենքերով:
Նրանք բանավեճ
կկազմակերպեն Ցվինգլիի հետ
և, օգտվելով առավելությունից,
կհաղթեն՝ ընտրելով ոչ միայն
դրա անցկացման վայրը, այլ
նաև դատավորներին, ովքեր

պետք է վճիռ կայացնեին: Ու
եթե Ցվինգլին մի օր իրենց
ձեռքն ընկնի, նրանք հոգ
կտանեն, որ նա չխուսափի
իրենցից: Առաջնորդին
լռեցնելով՝ կարելի է արագորեն
ճնշել շարժումը: Այս
դիտավորությունը, սակայն,
զգուշորեն քողարկվեց:

Բանավեճի անցկացման վայր
ընտրվեց Բադենը, բայց
Ցվինգլին չեկավ այնտեղ:
Ցյուրիխի իտրիուրդը, գլխի
ընկնելով պապականների նենգ
ծրագրի մասին և զգուշանալով
պապական գավառներում

Ավետա-րանի ջատագովների
համար վառվող խարույկներից,
արգելեց իրենց հովվին՝ այդ
վտանգին ենթարկելու իր
կյանքը: Տյուրիխում նա
պատրաստ էր հանդիպելու
Ջոնի ցանկացած
ներկայացուցչի հետ, բայց
մեկնել Բադեն, որտեղ հենց
վերջերս թափվել էր
ճշմարտության համար
նահատակվածների արյունը,
կնշանակեր՝ գնալ
անխուսափելի մահվան:
Բարենորոգիչների
ներկայացուցիչներ ընտրվեցին
Օեկոլամպադիոսն ու Ջալլերը,

իսկ Յոնմի առաջատարն էր
անվանի դոկտոր Էկը՝ մի խումբ
աստվածաբանների ու
հոգևորականների
ուղեկցությամբ:

Թեև Ցվինգլին ներկա չէր
բանավեճին, նրա
ազդեցությունը զգացվում էր:
Բոլոր քարտուղարներն
ընտրվել էին պապականների
կողմից, իսկ մյուսներին
մահվան սպառնալիքի տակ
արգելված էր գրառումներ
անել: Եվ չնայած դրան՝
Ցվինգլին ամեն օր ճշգրիտ
գեկուլյց էր ստանում այն

մասին, թե ինչ էր ասվում
Բարենում: Բանավեճին ներկա
մի ուսանող ամեն երեկո
գրառում էր տվյալ օրվա
ներկայացված փաստարկները:
Երկու այլ ուսանողներ այդ
թղթերը և Օեկոլամպադիոսի
նամակները ամեն օր Ցյուրիխ
էին հասցնում՝ Ցվինգլիին:
Բարենորոգիչը
պատասխանում էր՝
խորհուրդներ և
առաջարկություններ տալով:
Նա իր նա-մակները գրում էր
գիշերը, իսկ արդեն
առավոտյան ուսանողները
դրանք իրենց հետ տանում էին

Բադէն: Քաղաքի դարպասների
մոտ կանգնած պահակախմբի
մոտ կասկած չհարուցելու
համար այս լրաբերները
տնա-յին թռչուններով
զամբոյուղներ էին կրում իրենց
գլուխներին, և նրանց անարգել
թողնում էին քաղաք: [183]

Այսպես Յվինգլին պայքարում
էր իր նենգ թշնամիների դեմ:
Նա ավելի շատ էր
աշխատում,— ասել է
Մայկոնիուսը,— իր
մտորումներով անքուն
գիշերներին, Բադէն ուղարկած
իր խորհուրդներով, քան կարող

Էր անել, եթե անձամբ
բանավիճեր իր թշնամիների
հետ» (Դ՛Օբիւյե, և-11, գԼ-13):

Կանխաճաշակելով իրենց
սպասվող մոտալուտ
հաղթանակը՝ պապականները
եկել էին Բադեն իրենց
ամենաշքեղ հանդերձներով ու
փայտե զարդարանքներով:
Նրանց ճոխութեամբ էին
սպասարկում, նրանց
սեղանները լեփ-լեցուն էին
ամենաթանկ խորտիկներով ու
ընտիր գինիներով: Իրենց
եկեղեցական գործերի բեռը
նրանք թեթևացնում էին

Խնջույքներով ու
խրախճանքներով:
Բարենորոգիչները
կտրականապես տարբերվում
էին նրանցից՝ ժողովրդի
աչքում երևալով քիչ ավելի
լավ, քան մի խումբ
մուրացկաններ, և ում համեստ
սնունդը շատ կարճ էր պահում
նրանց սեղանի շուրջը:
Օեկոլամպադիոսի տանտերը,
նրա սենյակ մտնելով, նրան
միշտ գտնում էր գրքերով
տարված կամ աղոթելիս և
խիստ զարմացած ասում էր, որ
այդ հերետիկոսն, առնվազն,
«շատ բարեպաշտ է»:

Երբ սկսվեց հանդիպումը, Էկը
գոռոզաբար բարձրացավ
շքեղորեն զարդարված ամբիոն,
մինչ համեստ

Օեկոլամպադիոնը՝ հասարակ
հագնված, ստիպված տեղ
զբաղեցրեց իր ընդդիմախոսի
դիմաց՝ կոպիտ աթոռի վրա
(Նույն, տեղում, Ա. 11, գլ. 13):

Էկի խրոխտ ձայնն ու անսանձ
ինքնավստահուլթյունը երբեք
չէին դավաճանել նրան: Նրա
եռանդը պայմանավորված էր
ինչպես ոսկի, այնպես էլ
համբավ ձեռք բերելու հույսով,
քանզի հավատի պաշտպանին

խոստացված էր առատ
վարձրատրություն: Երբ
սպառվեցին նրա պերճախոս
փաստարկները, նա դիմեց
վիրավորանքների և նույնիսկ
անեծքի:

Չամեստ ու անինքնավստահ
Օեկոլամպադիոսը խուսափեց
բա-խոլմից և իր ելույթն սկսեց
հանդիսավոր երդումով. «Ես
դատաստանի ոչ մի ուրիշ
չափանիշ չեմ ճանաչում՝ բացի
Աստծո խոսքից» (Նույն տեղում,
և.. 11, գլ.13): Թեև մեղմ ու
քաղաքավարի՝ նա իրեն
դրսևորեց որպես ունակ ու

վճռական բանախոս: Մինչ
պապականներն, իրենց
սովորության համաձայն,
վկայակոչում էին եկեղեցու
հեղինակությունն ու
ավանդույթները,
Բարենորոգիչն ամուր կառչում
էր Սուրբ Գրքին:
«Ավանդույթը,— ասաց նա,—
ուժ չունի մեր ճվեյցարիայում,
եթե ամրա-գրված չէ
սահմանադրությամբ: Իսկ
հավատի հարցերում մեր
սահ-մանադրությունն
Աստվածաշունչն է» (Նույն
տեղում, և. 11, գլ. 13): [184]

Տարբերությունը երկու
բանավիճողների միջև աննկատ
ու ապար- Դյուն չեղավ:
Բարենորոգչի հանդարտ,
հստակ դատողությունը, որ
ներ-կայացվեց այդքան մեղմ ու
համեստորեն, խոր
ազդեցություն թողեց
մարդկանց վրա, ովքեր
զգվանքով շրջվեցին էկի
պարծենկոտ ու վայրագ
ելույթից:

Բանավեճը շարունակվեց
տասնութ օր, ու նրա ավարտին
պապականներն
ինքնավստահորեն հավակնում

Էին հաղթանակի:
Պատվիրակների
մեծամասնությունը Յոզմի
կողմից էր, և խորհուրդը
հայտարարեց, որ
բարենորոգիչները պարտված
են ու իրենց առաջնորդ
Ցվինգլիի հետ միասին
եկեղեցուց վտարվում են: Բայց
բանավեճի պտուղներն ի հայտ
բերեցին, թե ում կողմն էր
առավելությունը:
Հակամարտությունն ուժեղ
թափ հաղորդեց
բողոքականության գործին, և
շատ չանցած՝ Բեռն և Բադել

Կարևոր քաղաքներն անցան
Բարենորոգման կողմը:

ԳԼՈՒԽ 10—ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՅԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

ԼյուԹերի խորհրդավոր
անհետացումը սարսափի ալիք
բարձրացրեց ողջ
Գերմանիայում: Ամենուրեք
հարցուփորձ էին անում նրա
մասին: Ամենաանհավանական
լուրեր էին պտտվում, և շատերը
կարծում էին, թե նա սպանվել
է: Խորապես սգում էին ոչ
միայն նրա նվիրյալ ընկերները,
այլ նաև հազարավոր ուրիշներ,
ովքեր դեռևս բացահայտ
կերպով չէին անցել

Բարենորոգման կողմը:
Ճատերը երդվել էին վրեժ
առնել նրա մահվան համար:

Յոռմի առաջնորդները սուկում
էին՝ տեսնելով, թե ինչ
խորության էր հասել
ատելությունն իրենց հանդեպ:
Թեև սկզբում նրանք ցնծում էին
Լյութերի թվացյալ մահով, բայց
շատ չանցած՝ որոշեցին
թաքնվել ժողովրդի
բարկությունից: Նրա
ամենահամարձակ գործերն
անգամ այդպես չէին
տագնապեցրել նրանց, որքան
նրա անհետացումը: Նրանք,

ովքեր իրենց կատաղության
մեջ փորձել էին կործանել
խիզախ բարենորոգչին, հիմա
ահով էին լցված, երբ նա
ընդամենը մի անօգնական
գերի էր: «Մեկ բան է մնացել,
որ փրկենք ինքներս մեզ,—
ասել է նրանցից մեկը.— պետք
է ջահեր վառել ու ամբողջ
աշխարհով մեկ որոնել
Լյութերին, որպեսզի նրան
վերադարձնենք այն ազգին,
որը պահանջում է նրան»
(Դ՝Օբիևյե, և. 9, գլ.1): Կայսեր
հրամանագիրն ասես անուժ էր:
Պապական դեսպանները
վրդովված էին՝ տեսնելով, որ

այն շատ ավելի քիչ
ուշադրության է արժանանում,
քան Լյութերի ճակատագիրը:

Այն լուրը, որ նա
անվտանգության մեջ է՝
անառիկ ամրոցում, ցրեց
ժողովրդի երկյուղը՝
միաժամանակ
խանդավառություն բորբոքելով
հօ-գուտ Լյութերի: Նրա
գրվածքներն էլ ավելի
եռանդուն սկսեցին կարդալ,
[186] քան երբևէ: Անընդհատ
աճում էր նրանց թիվը, ովքեր
միանում էին այդ հերոսական
մարդու գործին, ով իրեն

ենթարկելով ահավոր վտանգ-
ների՝ պաշտպանում էր Աստծո
խոսքը: Բարենորոգումը
գնալով գորանում էր: Լյութերի
ցանած սերմը ծլում էր
ամենուրեք: Այն գործը, որ
արվեց նրա բացակայությամբ,
նրա ներկայությամբ չէր կարող
իրականացվել: Յիմա, երբ չկար
իրենց մեծ առաջնորդը, մյուս
աշխատողները
առանձնահատուկ
պատասխանատվություն
զգացին: Նորոգված հավատով
ու եռանդով նրանք շարժվեցին
առաջ՝ անելու այն ամենն, ինչ
կարող էին, որպեսզի այդպես

վեհանձնորեն սկսված գործը
չկասեցվեր:

Բայց սատանան պարապ չէր:
Չիմա նա ձգտեց անել այն, ինչ
արել էր բոլոր մյուս
բարեփոխիչ շարժումների
ժամանակ, խաբել ու կործանել
ժողովրդին՝ նրա վզին
փաթաթելով կեղծիք՝ ճշմարիտ
գործի փոխարեն: Ինչպես որ
սուտ քրիստոսներ հայտնվեցին
առաջին դարի քրիստոնեական
եկեղեցում, այնպես էլ սուտ
մարգարեներ վեր կացան այժմ՝
տասնվեցերորդ դարում:

Որոշ մարդիկ, խորապես
հափշտակված կրոնական
աշխարհի հուզումներով,
երևակայեցին, թե երկնքից
հատուկ հայտնություններ են
ստացել, և որ Աստված
հանձնարարել է իրենց մինչև
վերջ հասցնել Լյութերի սկսած
Բարենորոգումը: Իրականում,
սակայն, Նրանք քանդում էին
Լյութերի արածը: Նրանք
անտեսեցին հենց այն
սկզբունքը, որ Բարենորոգման
հիմքն էր հանդիսանում,
այսինքն՝ որ Աստծո խոսքը
հավատի և վարքի լիովին
բավարար չափանիշ է. այդ

անսխալական կանոնը նրանք
փոխարինեցին իրենց
զգացմունքների ու
տպավորությունների
փոփոխական ու անստույգ
չափանիշով: Երբ մի կողմ
դրվեց մոլորությունն ու
կեղծիքը բացահայտող խոսքը,
սատանայի համար ճանապարհ
բացվեց վերահսկելու
մարդկանց միտքը իր կամքի
համաձայն:

Այս մարգարեներից մեկը
պնդում էր, թե ցուցումներ է
ստանում Գաբրիել հրեշտակից:
Նրան միացած մի ուսանող,

թողնեյով իր ու— սումր,
հայտարարեց, թե Աստված
Ինքն է իրեն իմաստութեամբ
օժտել՝ մեկնաբանելու իր
խոսքը: Նրանց հարեցին նաև
բնութեամբ մոլեռանդութեան
հակում ունեցող այլ անձինք:
Այս մոլագարների
գործունեությունը քիչ
հուզումներ չառաջացրեց: [187]
Լյութերի քարոզներն
ամենուրեք մարդկանց մեջ
բարեփոխումների
անհրաժեշտութեան զգա-ցում
էին արթնացրել, և հիմա որոշ
իրապես անկեղծ անձինք

մուռորվեցին նոր մարգարեների
հավակնություններով:

Ճարժման ղեկավարներն
ուղևորվեցին Վիտենբերգ ու
սկսեցին պնդել իրենց կարծիքը
Մելանքթոնի ու նրա
գործակիցների առաջ՝ ասելով.
«Մեզ ուղարկել է Աստված՝
խրատելու ժողովրդին: Մենք
սերտ հա- ղորդակցություն ենք
ունեցել Տիրոջ հետ և գիտենք,
թե ինչ է տեղի ունենալու: Մի
խոսքով՝ մենք առաքյալներ ու
մարգարեներ ենք և
վկայակոչում ենք դուկտոր

Լյուրթերին» (Նույն տեղում, Ա. 9, գլ.7):

Բարենորոգիչները զարմացան ու շփոթվեցին: Մինչ այդ նրանք երբեք չէին բախվել նման երևույթի և չգիտեին ինչ անել: Մելանքթոնն ասաց. «Այս մարդկանցում իրոք արտասովոր հոգի կա, բայց ի՞նչ հոգի է դա ...Մի կողմից՝ պետք է զգուշանալ, որ չհանգցնենք Աստծո Յոզիան, իսկ մյուս կողմից՝ որպեսզի չմոլորվենք սատանայի հոգուց» (Նույն տեղում, Ա. 9, գլ.7):

Նոր ուսմունքի պտուղները
շուտով երևացին: Մարդկանց
դրդեցին անտեսել
Աստվածաշունչը կամ
բուրրովին մի կողմ դնել այն:
Դպրոցները
խառնաշփոթության մեջ
ընկան: Արհամարհելով իրենց
պարտքը՝ ուսանողները
սկսեցին թողնել
պարապմունքները և դուրս գալ
համալսարանից: Մարդիկ,
ովքեր իրենց
պատասխանատու էին
համա-րում թարմացնելու և
վերահսկելու Բարենորոգման

գործը, այն հասցրին
կործանման եզրին:
Պապականները վերագտան
իրենց վատահոլթյունը և
ցնծագին բացականչեցին. «Եվս
մի մարտ, և ամեն ինչ մեր
ձեռքում կլինի» (Նույն տեղում,
և. 9, գ.7):

Երբ այս լուրերը հասան
Վարտքուրգ, Լյութերը,
խորապես մտա-հոգված, ասաց.
«Ես միշտ սպասում էի, որ
սատանան կոլդարկի մեզ այս
պատուհասը» (Նույն տեղում, և.
9, գլ.7): Նա հասկացավ այս
ինքնակոչ մարգարեների

իսկական եռթյունը և տեսավ
ճշմարտության գործին
սպառնացող վտանգը: Պապի և
կայսրի ընդդիմությունն անգամ
այդքան խորապես չէր
շփոթեցրել ու վշտացրել նրան:
Բարենորոգման թվացյալ
բարեկամներից են դուրս եկել
նրա ամենաոխերիմ
թշնամիները: Յենց այն
ճշմարտությունները, որ
այդքան մեծ ուրախություն
[188] ու սփռփանք էին բերել
նրան, այժմ օգտագործվում էին
եկեղեցում գժտություն և
շվաթություն ստեղծելու
համար:

Բարեփոխման գործում
Լյութերին առաջնորդում էր
Աստծո Յոզիև, և նա արեց
ավելին: Նա մտադիր չէր նման
դիրք զբաղեցնել կամ այդպիսի
արմատական
փոփոխություններ կատարել:
Նա լույ գործիք էր Անսահման
Չորության ձեռքում: Եվ
սակայն, նա հաճախ սարսուռում
էր՝ մտածելով իր գործի
արդյունքի մասին: Մի անգամ
նա ասել է. «Եթե ես իմանայի,
որ իմ ուսմունքը վնասել է
թեկուզ մեկ, գեթ մեկ մարդու,
որքան էլ նա հասարակ ու

Խղճուկ լինի, ես ավելի շուտ
տասն անգամ կմեռնեի: Թեև
գիտեմ, որ այն չի կարող
վնասել, քանզի հենց իսկ
Ավետարանն է» (Նույն տեղում,
և. 9, գլ.7):

Եվ հիմա Վիտենբերգը՝
Բարենորոգման կենտրոնը,
արագորեն ընկնում էր
մոլեռանդության ու
անօրենության իշխանության
տակ: Այս սոսկալի իրավիճակը
Լյութերի ուսմունքի հետևանքը
չէր, բայց նրա թշնամիներն
ամբողջ Գերմանիայով մեկ
մեղադրում էին նրան: Յոգու

դառնությամբ նա երբեմն
հարցնում էր. «Կարո՞ղ է
արդյոք այսպիսին լինել
Բարենորոգման մեծ գործի
վախճանը» (Նույն տեղում, Ա. 9,
գլ.7): Եվ դարձյալ, Աստծո հետ
աղոթքում մարտնչելուց հետո,
Նրա սիրտը լցվում էր
խաղաղությամբ: «Սա ոչ թե իմ,
այլ Քո գործն է,— ասում էր
Նա,— Դու չես թողնի, որ
սնահավատությունն ու
մոլեռանդությունը ապականեն
այն»: Սակայն այդ ճգնաժամի
մեջ պայքարից հեռու մնալու
միտքն արդեն անտանելի

դարձավ, և նա վճռեց
վերադառնալ Վիտենբերգ:

Վտանգելով իրեն՝ նա
անհապաղ ճանապարհ ընկավ:
Կայսրության մեջ նա օրենքից
դուրս էր հայտարարված:
Թշնամիներն ազատ կարող էին
խլել նրա կյանքը, իսկ
ընկերներին արգելված էր
օգնել կամ ապաստարան տալ
նրան: Կայսերական
կառավարությունն
ամենախիստ միջոցներն էր
կիրառում նրա համախոհների
դեմ: Բայց տեսնելով, որ
Ավետարանի գործը վտանգված

Էր, նա Տիրոջ անունով
աներկյուղ դուրս եկավ՝
պայքարելու հանուն
ճշմարտության:

Դեսպանին ուղղված իր
նամակում շարադրելով
Վարտքուրգը լքելու իր
դրդապատճառները՝ Լյութերը
գրել է. «Թող հայտնի լինի Ձերդ
մեծությանը, որ ես մեկնում եմ
Վիտենբերգ՝ գտնվելով շատ
ավելի հզոր պաշտպանության
ներքո, քան իշխանինն է կամ
դեսպանինը: Ես մտադիր չեմ
խնդրելու Ձերդ
գերազանցության

աջակցութիւնը, և չկամենալով
ձեր պաշտպանութիւնը՝ [189]
ես ավելի շուտ ինքս
կպաշտպանեմ ձեզ: Եթէ ես
իմանայի, որ Ձերդ
գերազանցութիւնը
կկարողանար կամ կկամենար
պաշտպանել ինձ, ապա երբեք
չէի գնա Վիտենբերգ: Ոչ մի
սուր չի կարող առաջ տանել
այս գործը: Միայն Աստված
պետք է անի ամեն բան՝ առանց
մարդու օժանդակութեան կամ
միջամտութեան: Ամենից
առավել կարող է պաշտպանել
նա, ով ունի ամենամեծ

հավատը» (Նույն տեղում, Ա. 9,
ԳԼ. 8):

Իր երկրորդ նամակում՝ գրված
Վիտենբերգի ճանապարհին,
Լյութերն ավելացրել է. «Ես
պատրաստ եմ ինձ վրա
հրավիրելու Ձերդ
գերազանցության
դժգոհությունն ու ողջ
աշխարհի զայրույթը: Մի՞թե
Վիտենբերգի բնակիչներն իմ
հոտի գառները չեն: Մի՞թե
Աստված չէ նրանց վստահել
ինձ: Եվ չպե՞տք է արդյոք
հանուն նրանց մահվան
վտանգեմ կյանքս, եթե

անհրաժեշտ լինի: Բացի այդ՝
ես վախենում եմ, որ
Գերմանիայում սոսկալի
խռովություն կբռնկվի, որով
Աստված կպատժի մեր ազգը»
(Նույն տեղում, և. 9, գլ.7):

Մեծ զգուշությամբ և
խոնարհությամբ, բայց նաև
վճռականորեն ու
հաստատակամ, Լյութերը սկսեց
իր գործը: «Խոսքով,— ասաց
նա,— մենք պետք է տապալենք
ու կործանենք այն, ինչ
ստեղծվել է բռնությամբ: Ես ուժ
չեմ գործադրի սնահավատների
և անաստվածների դեմ... Ոչ ոքի

չպետք է հարկադրել:
Ազատութիւնը հենց հավաստի
եութիւնն է» (Նույն տեղում, Ա.
9, գլ. 8):

Շուտով Վիտենբերգում թնդաց
լուրը, որ Լյութերը վերադարձել
է և պետք է քարոզի
ժողովուրդը հավաքվեց բոլոր
կողմերից, և շուտով եկեղեցին
լեփ-լեցուն էր: Բարձրանալով
ամբիոն՝ նա մեծ
իմաստությամբ ու ջերմությամբ
սկսեց խրատել, հորդորել և
հանդիմանել:
Անդրա-դառնալով ոմանց
վարքին, ովքեր դիմել էին բռնի

միջոցների, փորձելով վերացնել
պատարագը՝ նա ասաց.
«Պատարագը վատ բան է:
Աստված դեմ է դրան, և այն
պետք է վերացվի, և ես
կկամենայի, որ ամբողջ
աշխարհում այն փոխարինվեր
Տիրոջ Ընթրիքով՝ ըստ
Ավետարանի: Բայց ոչ ոք
չպետք է դրանից բաժանվի
ստիպողաբար: Այդ հարցը
պետք է հանձնել Աստծուն:
Նրա խոսքը պետք է գործի, ոչ
թե մենք: «Իսկ ինչո՞ւ», -
կհարցնեք դուք: Որովհետև ես
մարդկանց սրտերն իմ ձեռքում
չեմ պահում, ինչպես որ

բրուտն է պահում կապը: Մենք
իրավունք ունենք խոսելու,
բայց իրավունք չունենք
գործելու: Եկեք քարոզենք, իսկ
մնացածը թողնենք Աստծուն:
Ի՞նչ կշահեի ես, եթե ուժ
գործադրեի. մի դիմակ,
ձևա-կանուխություն, նմանակում,
մարդկային ծեսեր ու
կեղծավորություն, բայց ոչ
երբեք՝ [190] սրտի
անկեղծության, հավատ կամ
սեր: Իսկ որտեղ չկան այս երեք
առաքինությունները, ուրեմն
չկա ոչինչ, և ես գրոշ անգամ
չեմ տա նման արդյունքի
համար ... Իր խոսքով Աստված

անում է ավելին, քան դուք, ես
կամ ամբողջ աշխարհը՝ մեր
միացյալ ուժերով: Աստված
տիրում է սրտին, ու երբ սիրտը
նվաճված է, ամեն ինչ Նրանն
է...

Ես պիտի քարոզեմ, բանավիճեմ
ու գրեմ, բայց չեմ պարտագրի
ոչ մեկին, քանզի հավատը
կամավոր ընտրությունն է:
Տեսեք, թե ես ինչ եմ արել: Ես
դուրս եմ եկել պապի,
ինդուլգենցիաների և
պապականների դեմ, սակայն
առանց բռնության կամ
խռովության: Ես առաջ եմ

տարել Աստծո խոսքը, քարոզել
և գրել եմ. ահա այն ամենը, ինչ
ես արել եմ: Եվ սակայն, երբ ես
քնած էի ...իմ քարոզած խոսքն
այնպես տապալեց
պապուլթյունը ինչպես չեն
կարողացել վնասել նրան ոչ
իշխանները, ոչ էլ կայսրը:
Բայցևայնպես, ես ոչինչ
չարեցի, խոսքն արեց ամենը:
Եթե ես կամենայի ուժի դիմել,
ողջ Գերմանիան, թերևս,
արյունով կհեղեղվեր: Բայց
ի՞նչ կլիներ արդյունքը:
Կորուստ և ավերում թե՛
մարմնին, թե՛ հոգուն: Դրա
համար ես հանգիստ մնացի՝

թողնելով, որ միայն խոսքը
տարածվի աշխարհում» (Նույն,
տեղում, և. 9, գլ. 8):

Օր օրի՝ մի ամբողջ շաբաթ,
Լյութերը շարունակեց քարոզել
ծարավ ամբոխներին: Աստծո
խոսքը ցրեց մուեռանդ
գրգռվածության
կախարդանքը: Ավետարանի
զորությունը մոլորյալ
ժողովրդին վերա-դարձրեց
դեպի ճշմարտության
ճանապարհը:

Լյութերը ցանկություն չունեի
հանդիպելու այդ մուեռանդների

հետ, ուլքեր աշոքան չարիք էին
ծնել: Նա գիտեր, որ նրանք
անառողջ դատողության ու
անսանձ կրքերի տեր մարդիկ
են, ուլքեր կարծում են, թե
երկնքից հատուկ լույս են
ստացել, սակայն չէին
հանդուրժի ամենաթեթև
անհամաձայնությունը կամ էլ,
նույնիսկ, ամենասիրալիք
հանդիմանությունը և
խորհուրդը:
Ամբարտավանորեն իրենց
վերագրելով բարձրագույն
իշխանություն՝ նրանք
պահանջում էին, որպեսզի
յուրաքանչյուր ոք, առանց

առարկութեան, ընդունի իրենց
հավակ-նութիւնները: Սակայն
երբ նրանք Լյութերի հետ
տեսակցութիւն պահանջեցին,
նա համաձայնեց հանդիպել և
այնպիսի հաջողութեամբ
մերկացրեց նրանց կեղծիքը, որ
այդ ինքնակոչներն
անմիջապէս հեռացան
Վիտենբերգից:

Մոլեռանդութիւնը
միառժամանակ կասեցվեց,
բայց տարիներ անց ավելի
ուժգնորեն բռնկվեց և ավելի
ահավոր հետևանքներ
ունեցաւ: Այդ շարժման

առաջնորդների վերաբերյալ
Լյուբերն ասել է. [191] «Նրանց
համար Սուրբ Գիրքը լոկ մեռած
տառ էր, և նրանք բոլորը
սկսեցին չճալ. «Յոզի՛ն,
Յոզի՛ն»: Բայց ես բնավ
մտադիր չեմ գնալ այնտեղ, ուր
Նրանց տանում է իրենց հոգին:
Թող Աստված իր ողորմությամբ
պահպանի ինձ այն եկեղեցուց,
որտեղ սուրբերից բացի ուրիշ
ոչ ոք չկա: Ես ցանկանում եմ
լինել խոնարհ, տկար ու
հիվանդ մարդկանց հետ, ովքեր
գիտեն ու զգում են իրենց
մեղքերը և հոգու խորքից
անդադար հառաչում և

աղաղակում Աստծուն՝ Նրանից
խնդրելով մխիթարություն և
օգնություն» (Նույն տեղում,
և.10, գլ. 10):

Թոմաս Մյունցերը՝
մուլեռանդներից
ամենաակտիվը, օժտված էր
զգալի տաղանդներով, որոնք,
ճիշտ օգտագործվելու դեպքում,
Նրան ունակ կդարձնեին բարիք
գործելու: Բայց նա դեռ չէր
սովորել ճշմարիտ կրոնի
տարրական սկզբունքները:
«Նա տոգորված էր աշխարհը
բա-րեփոխելու ցանկությամբ,
սակայն, մյուս

խանդավառվածների պես,
մոռացել էր, որ բարեփոխումը
պետք է սկսվի իրենից» (Նույն
տեղում, և. 9, գլ. 8): Նա ձգտում
էր բարձր դիրքի և
իշխանության՝ չկամենալով
լինել երկրորդը Նույնիսկ՝
Լյութերից հետո: Նա
հայտարարեց, որ բա-
րենորոգիչները, պապի
հեղինակության փոխարեն
ընդունելով Աստվածաշնչինը,
ընդամենը հաստատել էին
պապության մեկ այլ ձև: Իսկ
ինքը, իր իսկ հավակնությամբ,
Աստծո կողմից իրական
բարեփոխում մտցնելու

հանձնարարություն էր ստացել:
«Նա, ով ունի այս ոգին,— ասել
է Մյունցերը,— ունի իսկական
հավատ, թեև ամբողջ կյանքում
Աստվածաշունչը չտեսնի»
(Նույն տեղում, և. 10, գլ. 10):

Մուեռանդ ուսուցիչները
հանձնվել էին
տպավորությունների
իշխանությանը՝ ամեն մի միտք
և մղում համարելով Աստծո
ձայն և, որպես հետևանք,
հասնելով մեծագույն
ծայրահեղությունների: Ոմանք
նույնիսկ այրում էին իրենց
Աստվածաշնչերը՝

բացականչելով. «Տառը
սպանում է, իսկ Յոզիս կյանք է
տալիս»: Մյուսների ուսմունքը
գրգռում էր զգայացունց
փորձառությունների
ցանկություն՝ միաժամանակ
գոհացնելով նրանց
հպարտությունը՝ մարդկային
գաղափարներն ու կարծիքները
վեր դասելով Աստծո խոսքից:
Նրա ուսմունքն ընդունվեց
հազարավորների կողմից: Նա
շուտով դատապարտեց
հանրային երկրպագության
ամեն մի կարգ և հայտարարեց,
որ հնազանդվել իշխաններին՝

Նշանակում է փորձել ծառայել
և՛ Աստծուն, և՛ Բելիարին:

Ժողովուրդը, որ արդեն սկսել էր
թոթափել պապության լուծը,
դժգոհությամբ էր տանում
քաղաքացիական
իշխանությունների
սահմանափակումները:
Մյուսների հեղափոխական
[192] ուսմունքը, իբրև թե
օրինված Աստծուց, մղեց
մարդկանց մերժելու ամեն մի
վերահսկում և հանձնվելու
իրենց նախապաշարումների ու
կրքերի իշխանությանը: Դրան
հետևեցին ամենասարսափելի

խռովութիւններ ու կռիւներ, և
Գերմանիայի դաշտերը
ողողվեցին արյունով:

Յոգու տառապանքը, որ
Լյութերը վաղուց ունեցել էր
էրֆուրտում, հիմա ճնշում էր
Նրան կրկնակի ուժով, երբ Նա
տեսնում էր, թե ինչպես են
մոլեռանդութեան
հետևանքները վերագրում
Բարենորոգմանը: Պապա-կան
իշխանները հայտարարեցին, և
շատերը վստահում էին Նրանց
խոս-քին, որ
ապստամբութիւնը Լյութերի
ուսմունքի բնական հետևանքն

Էր: Թեև այս մեղադրանքը
միանգամայն անհիմն էր, այն
մեծ վիշտ պատճառեց
Բարենորոգչին: Այն, որ
ճշմարտության գործն այսպես
պիտի խայտառակվեր՝
նույնացվելով ամենանսեմ
մոլեռանդության հետ, նրան
անտանելի էր թվում: Մյուս
կողմից՝ ապստամբության
առաջնորդներն ատում էին
Լյութերին նրա համար, որ նա
ոչ միայն ընդդիմացել էր իրենց
ուսմունքին ու մեծժել Աստծուց
ներշնչված լինելու իրենց
հավակնություն-նը, այլ նաև
նրանց կոչել էր խռովարարներ

քաղաքացիական
իշխանու-թյան դեմ: Եվ ի
պատասխան՝ նրանք մեղադրել
էին Լյութերին որպես նենգ
կեղծավորի: Թվում էր, թե նա
իր վրա է հրավիրել ինչպես
իշխան-ների, այնպես էլ
ժողովրդի ատելությանը:

Պապականները ցնծում էին՝
ակնկալելով տեսնել
Բարենորոգման արագընթաց
անկումը, և մեղադրում էին
Լյութերին անգամ այն
սխալների համար, որոնք նա
ամենատանդուն կերպով
ջանացել էր ուղղել:

Մուլեռանդների կուսակցության
անդամները, կեղծորեն
պնդելով, թե իրենց հետ խիստ
անարդարացի են վարվել,
կարողացան շահել ժողովրդի
մի մեծ խմբի համակրանքը և,
ինչպես հաճախ է պատահում,
նրանց, ովքեր սխալ կողմն էին
բռնել, սկսեցին համարել
նահատակներ: Այսպիսով,
նրանց, ովքեր ոչ մի ջանք չէին
խնայել՝ ընդդիմանալու
Բարենորոգմանը, խղճացին ու
գովաբանեցին՝ որպես
դաժանաթյան ու բռնության
գոհերի: Սա սատանայի գործն
էր՝ ներշնչված խռովության

այն նույն ոգով, որն առաջին
անգամ դրսևորվեց երկնքում:

Սատանան մշտապես ձգտում է
խաբել մարդկանց՝ դրդելով
նրանց մեղքը կոչելու
արդարություն, իսկ
արդարությունը՝ մեղք: Եվ ի՞նչ
հաջողության է հասել նա այդ
գործում: Որքա՞ն հաճախ են
Աստծո հավատարիմ
ծառաներին մեղադրում ու
նախատում այն բանի համար,
որ [193] նրանք անվեհերաբար
պաշտպանում են
ճշմարտությունը: Սատանայի
գործակալներին գովաբանում,

շողոքորթում և անգամ
համարում են նահատակներ,
մինչդեռ նրանց, ում պետք է
հարգելու աջակցել իրենց
հավատարմության համար,
արհամարիում են՝ կասկածելով
ու չվստահելով նրանց:.

Կեղծ սրբությունը, շինծու
սրբագործությունը դեռ
շարունակում են իրենց
մոլորեցուցիչ գործը: Տարբեր
ձևեր ընդունելով՝ դրանք ի
հայտ են բերում նույն ոգին,
ինչպես նյութերի օրերում՝
շեղելով մարդկանց միտքը
Աստվածաշնչից և դրդելով

ապելի շուտ հետևել իրենց
զգացմունքներին ու
տպավորություններին, քան
հնազանդվել Աստծո օրենքին:
Սա մաք-րության ու
ճշմարտության վրա
նախատինք բերելու
սատանայի ամենահաջող
հնարքներից մեկն է:

Լյութերն աներկյուղ
պաշտպանում էր Ավետարանը
հարձակումներից, որ վրա էին
հասնում ամեն կողմից: Աստծո
խոսքը հզոր զենք էր
ցանկացած պայքարում: Այդ
խոսքով էր նա պատերազմում

պապի զավթիչ իշխանության,
ինչպես նաև գիտունների
ռացիոնալ փիլիսոփայության
դեմ՝ միաժամանակ ժայռի
նման կանգնելով
մոլեռանդության դեմ, որը
ձգտում էր միանալ
Բարենորոգմանը:

Այս ընդդիմադիր ուժերից
յուրաքանչյուրն իր ձևով
հերքում էր Սուրբ Գիրքը և
մեծարում մարդկային
իմաստությունը որպես
կրոնական ճշմարտության ու
գիտության աղբյուր:
Ռացիոնալիզմը

աստվածացնում է
բանականութունը և դարձնում
այն կրոնի չափանիշ: Կաթոլիկ
եկեղեցին, իր գերագույն
պոնտիֆեքսին վերագրելով
Ներշնչվածություն, որն
անընդմեջ փոխանցվել է նրան
առաքյալներից և անփոփոխ է
բոլոր դարերում, լիովին
հնարավորություն է տալիս,
որպեսզի առաքելական կոչման
սրբության քողի տակ ծածկվի
ամեն տեսակի պճնանք ու
ապականություն:
Ներշնչվածությունը, որին
հավանում էին Մյունցերը և
Նրա համախոհները, չէր բխում

ապելի վեհ աղբյուրից, քան
երևակայության քմահաճույքն
է, և դրա ազդեցութիւնը
քայքայիչ էր ամեն մի
իշխանութեան համար՝ թե՛
մարդկային, թե՛ աստվածային:
Իսկական քրիստոնէութիւնն
ընդունում է Աստծո խոսքը
որպէս ներշնչյալ
ճշմարտութեան մեծ գանձարան
և ամեն մի ներշնչման
չափանիշ:

Վարտքուրդից վերադառնալուց
հետո Լյութերն ավարտեց Նոր
Կտակարանի իր
թարգմանութիւնը, և շուտով

Ավետարանը տրվեց
Գերմանիայի ժողովրդին իրենց
մայրենի [194] լեզվով: Այս
թարգմանությունը մեծ
ուրախությամբ ընդունեցին
բոլոր նրանք, ովքեր սիրում էին
ճշմարտությունը, սակայն
արհամարհանքով մերժվեց
նրանց կողմից, ովքեր ընտրել
էին մարդկային
ավանդությունն ու մարդկանց
պատվիրանները:

Քահանաներն
անհանգստացան այն մտքից,
որ հասարակ ժողովուրդը
հիմա կկարողանա իրենց

հավասար քննարկել Աստծո
խոսքի պատվերները, և
այդպիսով իրենց
տգիտությունը կբացահայտվի:
Նրանց մարմնավոր մտքի
զենքերն անզոր էին Յոզու սրի
դեմ: Յոնանը գործադրեց իր ողջ
հեղինակությունը՝ կանխելու
Աստվածաշնչի տարածումը,
բայց հրամանագրերը,
նզովքներն ու կտտանքները
ապարդյուն եղան: Որքան նա
դատապարտում և արգելում էր
Աստվածաշունչը, այնքան
ավելի էր աճում ժողովրդի
ցանկությունն՝ իմանալու, թե
ինչ է այն իրականում

սովորեցնում: Բոլոր գրաճանաչ
մարդիկ ձգտում էին
ինքնուրույն ուսումնասիրել
Աստծո խոսքը: Նրանք կրում
էին այն իրենց հետ, կարդում ու
վերընթերցում էին և չէին
բավարարվում, մինչև անգիր
չանեին երկար հատվածներ:
Տեսնելով, թե ինչ
խանդավառությամբ ընդունվեց
Նոր Կտակարանը, Լյութերն
անմիջապես ձեռնարկեց Յնի
թարգմանությունը և սկսեց
մաս-մաս հրատարակել այն:

Լյութերի
ստեղծագործությունները

հավասարապես ողջունվում
էին թե՛ քաղաքներում, և թե՛
գյուղերում: «Այն, ինչ գրում էին
Լյութերն ու Նրա ընկերները,
մյուսները տարածում էին:
Վանականները, համոզված
վանական
պարտավորութայանների
անօրինականութայան մեջ և
ցանկանալով երկարատև ծուլ
կյանքից անցնել եռանդուն
գործու-նեութայան, սակայն
չափազանց անկիրթ՝ Աստծո
խոսքը քարոզելու հա-մար,
շրջում էին գավառներով՝
գյուղերում ու ավաններում
վաճառելով Լյութերի և Նրա

ընկերների գրքերը: Շուտով
Գերմանիան լցվեց այս
համարձակ գրավաճառներով
(Նույն տեղում, ս. 9 գլ. 11):

Հարուստ թե աղքատ, գրագետ
թե անկիրթ՝ բոլորն էլ մեծ
հետաքրքրությամբ
ուսումնասիրում էին այդ
աշխատությունների Գիշերները
գյուղական դպրոցների
ուսուցիչները բարձրաձայն
կարդում էին դրանք խարույկի
մոտ հավաքված փոքր խմբերի
համար: Ամեն անգամ մի
քանիսը համոզվում էին
ճշմարտության մեջ, և

ուրախությամբ ընդունելով
խոսքը՝ իրենց հերթին բարի
լուրը պատմում էին
ուրիշներին: [195]

Հաստատվում էին Ներշնչյալ
Գրքի խոսքերը. «խոսքերիդ
հայտնությունը լույս է տալիս և
իմաստուն է դարձնում
պարզամիտներին» (Սաղմոս
119.130): Սուրբ Գրքի
սերտողությունը հզոր
հեղաշրջում էր կատարում
ժողովրդի մտքի և սրտի մեջ:
Պապական իշխանությունն իր
հպատակների վրա երկաթե
լուծ էր դրել, որը նրանց

պահում էր տգիտության ու
այլասերման մեջ: Մարդիկ
բժախնդրորեն հետևում էին
սնահավատ
ձևապաշտությանը, բայց
նրանց միտքն ու սիրտը
անմասն էին մնում այդ ողջ
ծառայությանը: Լյութերի
քարոզն իր մեջ ներառում էր
Աստծո խոսքի պարզ
ճշմարտությունները և
հասարակ ժողովրդի ձեռքը
տրված այդ խոսքն արթնացրեց
մարդկանց նիրհող ուժերը՝ ոչ
միայն մաքրելով ու
ազնվացնելով նրանց հոգևոր

Էռւթյունը այլև գորացնելով ու
թարմացնով միտքը:

Ամենուրեք կարելի էր տեսնել
մարդկանց՝ բոլոր խավերից, որ
Աստվածաշունչն իրենց ձեռքին՝
պաշտպանում էին

Բարենորոգման ուսմունքը:

Պապականները, որ Սուրբ Գրքի
ուսումնասիրությունը վստահել
էին քահանաներին ու

վանականներին, այժմ նրանց
կոչ էին անում հանդես գալ նոր
ուսմունքի դեմ: Սակայն,

չիմանալով ոչ Սուրբ Գիրքը, ոչ
էլ Աստծո գորությունը
քահանաներն ու

վանականները լիակատար
պարտություն կրեցին
Նրանցից, ում անկիրթ ու
հերետիկոս էին անվանում:
«Ցավոք,— ասել է մի կաթուղիկ
գրող,— Լյութերը համոզել է իր
հետնորդներին ոչնչի
չհավատալ, բացի
Ասավածաշնչից» (Դ՝Օբինյե, Ա.
9. գլ. 11): Յո՞ժ բազմություններ
էին հավաքվում՝ լսելու, թե
ինչպես են կիսագրագետ
մարդիկ պաշտպանում
ճշմարտությունը և նույնիսկ
բա-նավիճում նրա շուրջ ուսյալ
ու պերճախոս
աստվածաբանների հետ: Այս

ճանաչված մարդկանց
ամոթալի տգիտությանն
ակնհայտ էր դառնում, երբ
նրանց փաստարկներին
պատասխանում էին Աստծո
խոսքի պարզ
ճշմարտություններով:
Աշխատավորները,
զինվորները, կանայք և
նույնիսկ երեխաներն ավելի
տեղյակ էին Աստվածաշնչի
ուսմունքին, քան քահանաներն
ու կրթված դոկտորները:

Տարբերությունն Ավետարանի
աշակերտների և պապական
սնահավատության

ջատագրվների միջև
գիտնականների շարքերում
ավելի պակաս ակնհայտ չէր,
քան հասարակ ժողովրդի մեջ:
Նվիրապետ-տուժյան հին
առաջատարների դեմ, ովքեր
անտեսել էին լեզուների
ուսումնասիրությունն ու
գրականությունը, [196] հանդես
էին գալիս ազնվամիտ
երիտասարդներ, ովքեր
նվիրվել էին սերտողությանը՝
քննելով Սուրբ Գիրքն ու
ծանոթանալով հնության
գլուխգործոցներին: Գործուն
մտքի, վեհ հոգու և աներկյուղ
սրտի տեր այդ

երիտասարդները շուտով
այնպիսի գիտելիքներ ձեռք
բերեցին, որ երկար ժամանակ
ոչ մեկն ի վիճակի չէր
բանավիճել նրանց հետ... Ու
երբ Բարենորոգման այս
երիտասարդ ջատագույները
հանդիպում էին կաթոլիկ
դոկտորների հետ որևէ
ժողովում, նրանք այնպիսի
հեշտությամբ և վստահուժյամբ
էին գրոհում, որ այդ տգետ
մարդիկ կմկմում և շփոթվում
էին՝ արժանանալով բոլորի
արհամարհանքին (Նույն
տեղում, և. 9, գլ. 11`):

Տեսնելով, որ իրենց
եկեղեցիները դատարկվում են,
կաթոլիկ կղերականները
դիմեցին իշխանավորների
օգնությանը՝ գործադրելով
բոլոր ջանքերն՝ իրենց
ուսկնդիրներին վերադարձնելու
համար: Բայց նոր ուսմունքի
մեջ գտնելով այն, ինչը
բավարարում էր հոգու կարիքը,
ժողովուրդը երես թեքեց
Նրանցից, ովքեր այդքան
երկար ժամանակ սնել էին իրեն
սնահավատ ծեսերի ու
մարդկային ավանդույթների
անպիտան մնացուկներով:

Երբ ճշմարտության
ուսուցիչների դեմ հալածանք
բռնկվեց, նրանք հետևեցին
Քրիստոսի խոսքերին. «Երբ ձեզ
հալածեն մի քաղաքում,
փախեք ուրիշը» (Մատթեոս
10.23): Լույսը թափանցում էր
ամենուրեք: Փախստականների
առջև ինչ-որ տեղ բացվում էին
հյուրընկալ դռները, և մնալով
այնտեղ՝ նրանք քարոզում էին
Քրիստոսին կամ տեղի
եկեղեցում, կամ էլ, եթե
այդպիսի հնարավորություն չէր
ընձեռնվում, մասնավոր
տներում և դրսում: Ուր էլ որ
նրանք լսողներ գտնեին, այդ

տեղը դառնում էր սրբազան
տաճար: Ճշմարտությունը, որ
հռչակվում էր այդպիսի
եռանդով ու վստահությամբ,
տարածվում էր անդիմադրելի
ուժով:

Չուր էին եկեղեցական և
քաղաքական
իշխանությունները ջանում
վերջ դնել այդ
հերձվածողությանը: Չուր էին
նրանք դիմում բանտերի,
տանջանքների, հրի և սրի:
Չազարավոր հավատացյալներ
իրենց վկայությունը կնքում էին
արյունով, սակայն գործն առաջ

Էր գնում: Յալաճան- քը միայն
նպաստում էր ճշմարտության
տարածմանը, և
մոլեռանդությունը, որը
սատանան փորձում էր
համակցել ճշմարտությանը,
ավելի հստակ դարձրեց
հակադրությունը սատանայի
գործի և Աստծո գործի միջև:
[197]

ԳԼՈՒԽ 11—ԻՇԽԱՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԸ

Բարենորոգման օգտին երբևէ
տրված ամենավեհ
վկայություններից մեկը
դարձավ 1529 թ. Գերմանիայի
քրիստոնյա իշխանների
բողոքը՝ ներկայացված
Շպեյերի խորհրդարանում:
Աստճո այս մարդկանց
քաջության, հավատի ու
հաստատակամության շնորհիվ
մտքի և խղճի ազատություն
ձեռք բերվեց հետագա բոլոր
դարերի համար: Նրանց բողոքը
բարենորոգված եկեղեցուն

տվեց Բողոքական անունը, դրա
սկզբունքները
«բողոքականության բուն
էությունը» դարձան (ԴՕբինյե,
և.13, գլ. 6):

Մութ և սպառնալի օրեր էին
սկսվել Բարենորոգման համար:
Չնայած Վորմսի
հրամանագրին, որը Լյութերին
օրենքից դուրս էր հայտարարել
և արգելել էր քարոզել կամ
ընդունել նրա ուսմունքը,
կայսրության մեջ դեռ
կրոնական
հանդուրժողականություն էր
տիրում: Աստծո

Նախախնամութիւնը զսպել էր
ճշմարտութեանն ընդդիմացող
ուժերը: Կարլ V—ը վճռել էր
տապալել Բարենորոգումը,
բայց հաճախ, պատրաստվելով
հարված հասցնել, նա
ստիպված էր եղել շեղել
հարվածը: Նորից ու նորից
թվում էր, թէ անխուսափելի է
բոլոր նրանց կործանումը,
ովքեր համարձակվել էին
ընդդիմանալ Յոզմին, բայց
օրհասական պահին
թուրքական զորքերը մոտեցան
կայսրութեան արևելյան
սահմանին, և Տրանսիայի
թագավորը և նույնիսկ ինքը՝

պապը, ով նախանձում էր
կայսեր աճող հզորութեանը,
պատերազմեցին նրա դեմ, և
այսպես, ազգամիջյան
կռիվների ու իրարանցման մեջ
Բարենորոգումը մոռացվել էր՝
թողնվելով զորանալու և
տարածվելու:

Ի վերջո, սակայն, պապական
տիրակալները խեղդեցին
նրանց թշնամութունը և
միավորվեցին, որպեսզի
միասնական ուժերով
պայքա-րեն բարենորոգիչների
դեմ: 1526 թ. Շպեյերի
խորհրդարանը կրոնի

հարցերում յուրաքանչյուր
Նահանգի լիակատար
ազատութիւնն էր տվել մինչև
վեհաժողովի [198]
հանրագումարը, բայց հազիվ
էր անցել վտանգը, որի
պատճառով արվել էր այս
գիշումը, երբ կայսրը ճպտեցրում
1529 թ. խորհրդարանի
երկրորդ նիստ հրավիրեց՝
հերձվածութիւնները
ջախջախելու նպատակով:
Որոշվեց իշխաններին համոզել,
եթէ հնա-րավոր լինի, խաղաղ
միջոցներով հանդես գալ
Բարենորոգման դէմ, բայց եթէ
դրանք չօգնեին, Կարլը

պատրաստ էր դիմել սրի
օգնութեանը:

Պապականները ցնծում էին:
Շպեյեր ուղարկելով մեծ
պատգամավորութուն՝ նրանք
բացահայտորեն ցույց տվեցին
իրենց ատելությունը
բարենորոգիչների և նրանց
բոլոր համակիրների
նկատմամբ: Մելանքթոնն ասել
է. «Մենք աշխարհի անեծքն ու
աղբն ենք դարձել, բայց
Քրիստոսը կգթա իր խեղճ
ժողովրդին և կպահպանի
նրան» (Նույն տեղում, և. 13, գլ.
5): Խորհրդին մասնակցող

բողոքական իշխաններին
արգելված էր ավետարանը
քարոզել անգամ իրենց
բնակարաններում, սակայն
Աստծո խոսքին ծարավ
ճպեյերի ժողովուրդը, չնայած
արգելքին, հազարներով գալիս
էր մասնակցելու
ծառայություններին, որ անց
էին կացվում Սաքսոնիայի
իշխանի աղոթատանը:

Սա արագացրեց ճգնաժամը:
Կայսրը խորհրդարանում
պահանջեց, որ պետք է չեղյալ
հայտարարել խղճի
ազատությունն ապահովող

որոշումը, քանի որ այն մեծ
անկարգություններ էր
առաջացրել: Այս
կամայականությունը բորբոքեց
ավետարանական
քրիստոնյաների վրդովմունքն
ու տագնապը: Նրանցից մեկի
ասելով՝ «Քրիստոսը դարձյալ
մատնվեց Կեսիափայի և
Պիղատոսի ձեռքը»:
Պապականները դարձան ավելի
հարձակողական: Նրանցից մի
մուլեռանդ հայտարարեց.
«Թուրքերը լուծերականներից
լավն են, քանի որ նրանք ծովի
օրեր են պահում, իսկ
լուծերականները խախտում

են դրանք: Եթե մենք պետք է
ընտրություն կատարենք
Աստծո Սուրբ Գրքի և եկեղեցու
Նախկին սխալների միջև, ապա
պետք է մերժել առաջինը»:
Մելանքթոնն ասել է. «Ամեն օր
ողջ ժողովի ներկայությամբ
Ֆաբերը մի նոր քար է նետում
մեր՝ ավետարանականներիս
վրա» (Նույն տեղում, և.13, գլ.
5):

Կրոնական
հանդուրժողականությունը
հաստատվել էր օրենքով, և
ավետարանական
իշխանությունները վճռել էին

պայքարել իրենց
իրավունքների ոտնահարման
դեմ: Լյութերին, ով դեռ
արգելքի տակ էր ըստ Վորմսի
հրամանագրի, թույլ չտրվեց
ներկայանալ Շպեյեր, բայց նրա
փոխարեն եկել էին նրա
համախոհները և այն
իշխանները, ում Աստված ոտքի
էր հանել՝ պաշտպանելու իր
գործը այդ ծայրահեղ պահին:
Վեհանձն Տրիդրիխ
Սաքսոնացին՝ Լյութերի [199]
նախկին պաշտպանը, սպանվել
էր, սակայն դուքս Յովհաննեսը՝
նրա եղբայրն ու հետնորդը,
ցնծությամբ ողջունել էր

Բարենորոգումը, և լինելով
խաղաղության կողմնակից՝
մեծ եռանդ ու խիզախություն
եր դրսևորել բոլոր այն հար-
ցերում, որ վերաբերում էին
հավաստի շահերին:

Քահանաները պահանջեցին, որ
Բարենորոգումն ընդունած
երկրներն անվերապահորեն
ենթարկվեն Յոզմի
իրավասությանը: Մյուս
կողմից՝ բարենորոգիչները
պահանջում էին մինչ այդ
իրենց շնորհված
ազատությունը: Նրանք չէին
կարող համսւճայնել, որ Յոզմը

Նորից իր հսկողութեան տակ
առնի այն երկրները, որոնք մեծ
ուրախութեամբ ընդունել էին
Աստծո խոսքը:

Որպես փոխգիշում՝ վերջապես
առաջարկվեց, որ այն
տեղերում, ուր Բարենորոգումը
չէր հաստատվել, խստորեն
կիրառվի Վորմսի
հրամանագիրը իսկ «այնտեղ,
ուր ժողովուրդը շեղվել էր
դրանից և առանց
ապստամբութեան վտանգի չէր
կարող հարմարվել դրան,
առնվազն չպետք է նոր
բարեփոխումներ մտցնեին,

շոշափեին վիճելի հարցեր կամ
ընդդիմանային պատարագի
անցկացմանդ իսկ
կաթուղիկներին չպետք է թույլ
տրվեր լյութերականություն
ընդունել» (Նույն տեղում, և.13,
գլ. 5): Խորհրդարանն ընդունեց
այս առաջարկը՝ ի մեծ
բավականություն պապական
քահանաների և
պաշտոնյաների:

Եթե այս որոշումը
հարկադրվեր, «Բարենորոգումը
ոչ կարող էր տարածվել... նոր
տեղերում, ոչ էլ կարող էր
ամուր հիմքի վրա դրվել...

այնտեղ, ուր արդեն գոյութիւն ունենալը» (Նույն տեղում, և.13, գլ. 5): Խոսքի ազատութիւնը կարգելվել, հավատափոխութիւն թույլ չէր տրվի: Եվ բարենորոգման կողմնակիցներից պահանջվում էր անմիջապես են-թարկվել այս սահմանափակումներին ու արգելքներին: Թվում էր, թե աշխարհի հոլյսը շուտով մարելու է: «Յոթնական նվիրապետութեան վերականգնումը... անխուսափելիորեն վերադարձնելու էր նախկին չարաշահումները», և շուտով

առիթ կգտնվեր «կործանելու
այն գործը, որն արդեն
ջախջախիչ հարված էր
ստացել» մոլեռանդության ու
պա-ռակտության հետևանքով (Նույն տեղում,
և.13, գլ. 5):

Երբ ավետարանականները
հանդիպեցին
խորհրդակցության համար,
մեկը մյուսին էին նայում
խորին հուզմունքով: «Ի՞նչ
անել»,— հարցնում էին նրանք
միմյանց: Վտանգի տակ էին
աշխարհի համար բախտորոշ
հարցերը: «Ձիջե՞ն

Բարենորոգման ղեկավարները
և ընդունեն այդ որոշումը:
Որքա՛ն հեշտ կարող էին
բարենորոգիչներն այդ
ճգնաժամին, որն իրոք
ճակատագրական էր, սխալ
դիրքորոշում ընդունել: Որքա՛ն
շատ պատրվակներ ու լուրջ
պատճառներ կարող էին գտնել
դրան ենթարկվելու համար:
Լյութերական իշխաններին
երաշխավորված էր իրենց
կրոնի ազատ դավանումը: Այդ
արտոնուլթյունը տարածվում էր
նաև նրանց այն հպատակների
վրա, ովքեր մինչև
համաձայնագիրն արդեն

ընդունել էին բարեփոխման
գաղափարները: Մի՞թե սա
բավական չէր: Որըա՞ն
վտանգներից կխուսափեին
հնազանդվելու դեպքում: Ի՞նչ
աննախադեպ վտանգների ու
ընդհարումների կհասցնեն
ընդդիմությունը: Ո՞վ գիտի, թե
ապագան իր հետ ինչ
հնարավորություններ կբերի:
Եկեք ընտրենք
խաղաղությունը, բռնենք Յռոմի
մեկնած ձիթենու ճյուղը և
բուժենք Գերմանիայի վերքերը:
Նմանատիպ փաստարկներով
բարենորոգիչները կարող էին
արդարացնել իրենց այն

ընտրութիւնը, որն
անխուսափելիորեն կարճ
ժամանակում կտապալեր
իրենց գործը:

«Բարեբախտաբար, նրանք
նկատեցին այն սկզբունքը, որն
ընկած էր հրամանագրի
հիմքում, և գործեցին
հավատով: Ո՞րն էր այդ
սկզբունքը: Դա խղճին
բռնանալու և մտքի
ազատութիւնն արգելելու
Յռոմի իրավունքն էր: Բայց
չպե՞տք է իրենք և իրենց
բողոքական հպատակները
վայելեին կրոնի

ազատութիւնը: Այո, բայց
որպէս զիջում հատուկ կերպով
նախանշված հրամանագրում,
այլ ոչ թէ որպէս իրավունք: Իսկ
այն ամենն, ինչ մտում էր
համաձայնագրից դուրս, պիտի
ենթարկվեր հեղինակութեան
մեծ սկզբունքին, խիղճը հաշվից
դուրս էր: Յռոմն էր այն
անսխալ դատավորը, որին
պետք էր հնազանդել:
Ընդունել առաջարկված
հրամանագիրն, ըստ էութեան,
կնշանակէր համաձայնվել, որ
կրօնական ազատութիւնը
սահմանափակվի միայն
բողոքական Սաքսոնիայի

տարածքով, իսկ մնացած բոլոր
քրիստոնեական երկրներում
մտքի ազատությունն ու
բարենորոգված հավատի
դավանումը հանցանք են, և
պետք է պատժվեն զնդանով ու
խարույկով: Կարո՞ղ էին
արդյոք նրանք համաձայնել
խղճի ազատության
տեղայնացման հետ, թույլ տալ
հայտարարել, որ
Բարենորոգումն արդեն գտել է
իր վերջին դավանափոխին, որ
այն նվաճել է իր վերջին
հողակտորը, և այնտեղ, ուր
Յոնն այդ պահին իշխում էր,
նրա տիրապետությանը պիտի

հավերժացվի: Ի՞նչ իրավունքով
կարող էին բարենորոգիչներն
իրենց անմեղ համարել
հարյուրավոր ու հազարավոր
մարդկանց արյան մեջ, ովքեր
այդ հրամանագրի հետևանքով
պիտի զրկվեին իրենց [201]
կյանքից պապական
երկրներում: Դա կնշանակեր
այդ վճռորոշ պահին
դավաճանել Ավետարանին և
քրիստոնեական ազատության
բարձրագույն նպատակներին»
(Ուայլի, և. 9, գլ. 15): Նրանք
ավելի շուտ «կգոհաբերեին
ամեն ինչ՝ նույնիսկ իրենց

ունեցվածքը, թագն ու կյանքը»
(Դ՛Օբիւյե, և.13, գլ.5):

«Եկեք մերժենք այս
հրամանագիրը,— ասացին
իշխանները,— խղճին
վերաբերող հարցերում
մեծամասնությունը ուժ չունի»:
Պատգամավորներ-ը
հռչակեցին. «Խաղաղության
համար, որը վայելում է
կայսրությունը, մենք
պարտական ենք 1526
թվականի հրամանագրին, և
դրա վերացումը խռովությանմբ
ու երկպառակությանմբ կլցնի
Գերմանիան: Խորհրդարանն

իրավասու չէ անել ավելին,
քան պահպանել կրոնի
ազատությունը մինչև խորհրդի
նիստը» (Նույն տեղում, և.13, գլ.
5): Խղճի ազատության
պաշտպանությունը
պետության պարտքն է, և
սրանով սահմանափակ-վում է
Նրա իշխանությունը կրոնի
գործերում: Ցանկացած
աշխարհիկ կառավարություն,
որը փորձում է
քաղաքացիական
իշխանությամբ կարգավորել
կամ պարտադրել կրոնական
արարողություններ,
զոհաբերում է հենց այն

սկզբունքը, որի համար այդքան
վեհանձնորեն պայքարել են
ավետարանական
քրիստոնյաները:

Պապականները վճռեցին ճնշել
այն, ինչ իրենք կոչել էին
«հանդուգն համառուլթյուն»:
Նրանք սկսեցին
պառակտություն մտցնել
Բարենորոգման ջատագույների
մեջ և վախեցնել բոլորին,
ովքեր դեռ ակնհայտորեն չէին
ընդունել այն: Վերջապես
ազատ քաղաքների
ներ-կայացուցիչները
կանչվեցին՝ ներկայանալու

խորհրդարանի առջև և
հայտարարելու, թե համաձայն
են արդյոք իրենք առաջարկի
պայ-մաններին: Նրանք
մտածելու ժամանակ
խնդրեցին, բայց՝ ապարդյուն:
Երբ քննության ենթարկվեցին,
պարզվեց, որ նրանց գրեթե
կեսը միացել է
բարենորոգիչներին: Նրանք,
ովքեր հրաժարվեցին
զոհաբերել խղճի
ազատությունը և անձնական
կարծիք ունենալու իրավունքը,
քաջ գիտեին, որ այդ
դիրքորոշման պատճառով
ապագայում իրենց սպասվում է

միայն քննադատություն,
դատապարտություն և
հալածանք:

Պատգամավորներից մեկն
ասաց. «Մենք պիտի կամ
ուրանանք Աստծո խոսքը, կամ
այրվենք խարույկի վրա» (Նույն
տեղում, և. 13, գլ. 5):

Տերդինանդ թագավորը՝ կայսրի
ներկայացուցիչը
խորհրդարանում, տեսավ, որ
եթե չհաջողվի իշխաններին
համոզել՝ ընդունելու և
պաշտպանելու հրամանագիրը,
ապա դա լուրջ
բաժանություններ

կառաջացնի: Դրա համար
օգտագործեց համոզելու իր ողջ
արվեստը՝ քաջ գիտակցելով, որ
ուժի գործադրումը նման
մարդկանց դեմ նրանց միայն
ավելի վճռական կդարձներ: Նա
«աղաչեց իշխաններին
ընդունել հրամանագիրը՝
հավաստիացնելով, որ դրանով
նրանք չափազանց
կուրախացնեն կայսրին»: Բայց
այդ հավատարիմ այրերը
հպատակներն էին մի
իշխանության, որը վեր էր
երկրային տիրակալների
իշխանություն-նից, և նրանք
հանգիստ պատասխանեցին.

«Մենք կհնազանդվենք
կայսրին այն ամենում, ինչը
կնպաստի խաղաղության
պահպանմանը և Աստծո
պատվին» (Նույն տեղում, և. 13,
գլ. 5):

Ի վերջո, թագավորը
խորհրդարանի ներկայությամբ
կայսերական պատգամավորին
և նրա ընկերներին
հայտարարեց, որ
հրամանագիրը «շուտով դուրս է
գալու կայսերական
հրովարտակի տեսքով», և
«իրենց մտում է միայն
ենթարկվել

մեծամասնությանը»: Այս
ասելով՝ նա հեռացավ ժողովից՝
հնարավորություն չտալով
բարենորոգիչներին մտածելու
կամ պատասխանելու: «Իզուր
նրանք պատգամավորներ
ուղարկեցին՝ խնդրելու
թագավորին վերադառնալ»:
Նրանց առարկումներին նա
միայն պատասխանեց.
«Որոշումն ընդունված է, ձեզ
մնում է միայն ենթարկվել»
(Նույն տեղում, և. 13, գլ. 5):

Կայսեր կողմնակիցները
համոզված էին, որ քրիստոնյա
իշխանները կառչելու են Սուրբ

Գրքից՝ այն վեր դասելով
մարդկային ուսմունքներից ու
պահանջներից: Նրանք նաև
գիտեին, որ որտեղ էլ որ այս
սկզբունքն ընդունվեր,
պապուժյունն, ի վերջո,
կտապալվեր: Բայց ինչպես
հազարավորներն իրենցից
հետո եկող դարերում, նայելով
միայն «տեսանելի բաներին»,
նրանք իրենց համոզեցին, որ
պապի ու կայսրի գործն ավելի
հզոր է, քան
բարենորոգիչներինը: Եթե
բարենորոգիչներն ապավինեին
լոկ մարդկային օգնությանը,
նրանք այնքան անզոր կլինեին,

որքան պապականները
ենթադրում էին: Բայց թեև
սակավաթիվ էին ու անհաշտ
Ջոնմի հետ, նրանք ուժեղ էին:
Նրանք դիմեցին
«խորհրդարանի որոշումից՝
Աստծո խոսքին և Կարլ
կայսրից՝ Ջիսուս Բրիստոսին՝
թագավորների թագավորին և
տերերի Տիրոջը» (Նույն
տեղում, ա.13, գլ. 6):

Երբ Ֆերդինանդը հրաժարվեց
հաշվի առնել նրանց խղճի
համոզմունքները, իշխանները
որոշեցին ուշադրություն
չդարձնել նրա

բացակայութեանը և անհապաղ
ազգային ժողովին
ներկայացնել իրենց բողոքը:
Կազմվեց մի հանդիսավոր
հայտարարագիր և
ներկայացվեց խորհրդարանին.

«Սույն հայտարարագրով
Աստծո՝ մեր միակ Արարչի,
Պահապանի և Փրկչի առաջ, ով
մի օր լինելու է մեր Դատավորը,
ինչպես նաև բոլոր մարդկանց և
արարածների առաջ, մենք
բողոքարկում ենք, որ հանուն
մեզ և հանուն ժողովրդի՝ [203]
համաձայն չենք առաջարկված
հրամանագրի հետ և ոչ մի

կերպ չենք ենթարկվի դրան
այն ամենում, ինչը դեմ է
Աստծուն, Նրա սուրբ խոսքին,
մեր բարի խղճմտանքին և մեր
հոգիների փրկութեան»:

Ինչպե՞ս կարելի է վավերացնել
այս հրամանագիրը,
հաստատել, որ երբ
Ամենակարող Աստված
մարդուն կանչում է ճանաչելու
Իրեն, այդ մարդն,
այնուամենայնիվ, չկարողանա
ընդունել Աստծո գիտութունը»:
«Չկա մի այլ ճշմարիտ
ուսմունք՝ բացի այն, որ բխում
է Աստծո խոսքից ...Տերն

արգելում է որևէ այլ ուսմունքի
ուսուցումը ...Աստվածաշունչը
պետք է բացատրվի իր մյուս և
ավելի պարզ տեքստերով
...Սուրբ Գիրքն ամեն բանով
անհրաժեշտ է քրիստոնյային,
դյուրըմբռնելի է և նպատակ
ունի ցրելու խավարը: Աստծո
շնորհիվ մենք վճռել ենք
շարունակել քարոզել Նրա
միակ խոսքը, որը
պարունակվում է Հին և Նոր
Կտակարանների
աստվածաշնչյան գրքերում՝
չավելացնելով ոչինչ, ինչը
կարող է հակասել դրան: Այս
խոսքը միակ ճշմարտութունն

Է, այն ցանկացած ուսմունքի ու կյանքի վստահելի չափանիշն է և երբեք չի կարող հուսախաբանել կամ մոլորեցնել մեզ: Նա, ով կառուցում է այս հիմքի վրա, կկանգնի դժոխքի բոլոր ուժերի դեմ, իսկ դրա դեմ ըմբոստացող մարդկային ողջ սնափառությունը կխորտակվի Աստծո երեսի առաջ:

Այս պատճառով մենք թոթափում ենք մեր վրա դրված լուծը: Միաժամանակ հուսով ենք, որ նորին կայսերական մեծությունը մեզ հետ կվարվի քրիստոնյա իշխանին վայել

կերպով, ով ամենից ավելի սիրում է Աստծուն: Եվ մենք պատրաստ ենք ցույց տալ նրան, ինչպես նաև ձեզ, գթասիրտ պարոնայք, ամենայն սեր և հնազանդություն, որ մեր արդա-րացի և օրինական պարտքն է» (Նույն տեղում, Ա.13, գլ. 6):

Սա խորը տպավորություն գործեց խորհրդարանի վրա: Մեծամասնությունն ապշած և տազնապած էր բողոքարկուների համարձակությունից: Ապագան նրանց թվաց փոթորկոտ ու

անորոշ: Երկպառակությունը,
պայքարն ու
արյունահեղությունը կարծես
անխուսափելի էին: Բայց
բարենորոգիչները, համոզված
իրենց գործի արդարացիության
մեջ և ապավինելով
Ամենակարողի բազկին, «լի էին
խիզախությամբ ու
վճռականությամբ»:

«Այս հայտնի բողոքի մեջ
շարադրված սկզբունքները...
կազմում են Բողոքականության
բուն եղթյունը: Բողոքն
ուղղված էր կրոնի հարցում
մարդու հանդեպ երկու

չարաշահումների՝ [204]
քաղաքացիական իշխանավորի
միջամտության և եկեղեցու
բռնի հեղինակության դեմ: Այս
չարաշահումներին հակառակ՝
Բողոքականությունը խղճի
իշխանությունն ավելի բարձր է
դասում աշխարհիկ դատավորի
իշխանությունից, իսկ Աստծո
խոսքի հեղինակությունը՝
տեսանելի եկեղեցու
հեղինակությունից: Նախ՝ այն
մերժում է աշխարհիկ
իշխանությունը հոգևոր
հարցերում և մարգարեների ու
առաքյալների հետ միասին
հռչակում. «Աստծուն պետք է

ավելի հնազանդվել, քան մարդկանց»: Կարլ V-ի թագից ավելի այն բարձրացնում է Յիսուս Բրիստոսի թագը: Եվ դեռ ավելին՝ հաստատում է այն սկզբունքը, որ Աստծո պատգամները գերազանց են մարդկային բոլոր ուսմունքներից» (Նույն տեղում, Ա.13, գլ. 6): Բացի այդ՝ բողոքարկուները պնդեցին ճշմարտության ընկալումներն ազատ արտահայտելու իրենց իրավունքը: Իրենք ոչ միայն հավատալու և հնազանդվելու են, այլև սովորեցնելու են այն, ինչ Աստծո խոսքն է ասում՝

մերժելով քահանայի կամ
իշխանավորի միջամտության
իրավունքը: Շպեյերում
ներկայացված Բողոքը ոչ
միայն հանդիսավոր
վկայություն էր կրոնական
անհանդուրժողականության
դեմ, այլ նաև պնդում, որ բոլոր
մարդիկ իրավունք ունեն
երկրպագելու Աստծուն
համաձայն իրենց խղճի
թելադրանքի:

Բողոքն ազդարարվեց: Այն
դրոշմվեց հազարավոր
մարդկանց հիշողության մեջ և
արձանագրվեց երկնային

գրքերում, որոնցից մարդկային
ոչ մի ուժ չի կարող ջնջել:
Ամբողջ ավետարանական
Գերմանիան բողոքն ընդունեց
որպես իր հավատի
արտահայտում: Այս
հռչակագրի մեջ ամենուրեք
մարդիկ նոր և ավելի լուսավոր
դարաշրջանի նախանշան
տեսան: Իշխաններից մեկը
Շպեյերի բողոքականներին
ասաց. «Ամենագորը, ով ձեզ
շնորհ տվեց եռանդագին,
ազատ ու անվախորեն
արտահայտելու ձեր հավատը,
թող պահպանի ձեզ այդ
քրիստոնեական աներերուԹյան

մեջ մինչև հավերժության օրը»
(Նույն տեղում, ա. 13, գլ. 6):

Եթե որոշակի հաջողության
հասնելուց հետո
Բարենորոգումը դանդաղեր՝
աշխարհի բարեհաճությունը
շահելու համար, դա
անհավատարմություն կլիներ
Աստծո և հենց իր հանդեպ, և
այդպիսով իրեն կմատներ
կործանման: Այս վեհանձն
բարենորոգիչների
փորձառությունը խրատ է
գալիք բոլոր սերունդների
համար: Սատանայի
վերաբերմունքն ընդդեմ Աստծո

և Նրա Խոսքի չի փոխվել: Նա
այժմ էլ նույնքան դեմ է, որ
Աստվածաշունչը լինի կյանքի
ուղեցույց, որքան
տասնվեցերորդ դարում: Մեր
օրերում մարդիկ մեծապես
շեղվել են Սուրբ Գրքի
ուսմունքից ու սկզբունքներից,
և կարիք կա վերադառնալու
Բողոքականության [205] մեծ
սկզբունքին՝ Աստվածաշունչը և
միայն Աստվածաշունչն է
հավատի և վարքի չափանիշը:
Սատանան շարունակում է
գործել իր հսկողության տակ
գտնվող բոլոր միջոցներով՝
կործանելու կրոնական

ազատութիւնը:
Չակաքրիստոնեական
իշխանութիւնը, որը Շպեյերի
բողոքականները մերժեցին,
այժմ նորոգված ուժով ձգտում է
վերահաստատել կորցրած
գերիշխանութիւնը: Նույն
անսասան հավատարմութիւնն
Աստծո խոսքին, որ դրսևորվեց
Բարենորոգման ճգնաժամային
պահին, այս օրվա
բարեփոխման միակ հույսն է:

Երբ բողոքականներին վտանգ
էր սպառնում, նշաններ
երևացին, որ Աստված մեկնել է
իր ձեռքը՝ պաշտպանելու

հավատարիմներին: Յենց այդ
ժամանակ էր, որ «Մելանքթոնը
Շպեյերի փողոցներով արագ
դեպի Ռեյն ուղեկցեց իր ընկեր
Սիմոն Գրենաուսին՝
շտապեցնելով նրան գետի
մյուս ափն անցնել: Վերջինս
զարմացել էր այդ
շտապողականության վրա:
«Ինձ հայտնվեց պատկառելի
տեսքով, բայց անձանոթ մի
ծերունի,- բացատրեց
Մելանքթոնը,— և ասաց, որ մեկ
րոպեից Ֆերդինանդն իր
ոս-տիկաններին կարգադրելու
է ձերբակալել Գրենաուսին»:

Այդ օրը պապական
առաջատար աստվածաբան
Ֆաբերն իր քա-րոզում
խայտառակել էր Գրենատուսին,
ով նրան վերջում մեղադրել էր
«որոշ գարշելի
մոլորություններ»
պաշտպանելու մեջ: «Ֆաբերը
թաքցրել էր իր զայրույթը, բայց
հետո անմիջապես գնացել էր
թագավորի մոտ և նրանից
հրաման կորզել՝ ձերբակալելու
Ջեյդելբերգի այդ համառ
դասա-խոսին: Մելանքթոնը
կասկած չունեի, որ Աստված
փրկեց իր ընկերոջը՝
ուղարկելով իր սուրբ

հրեշտակներից մեկին՝
Նախագգուշացնելու իրեն:

Ռեյնի ափին Նա անշարժ
սպասեց, մինչև ջրի հոսանքը
հեռացրեց Գրենաուսին՝
փրկելով իր հետապնդողներից:

«Վերջապես,— գոչեց
Մելանքթոնը՝ տեսնելով Նրան
գետի հակառակ կողմում,—
վերջապես Նա դուրս պրծավ
այդ դաժան մարդկանց
երախից, ովքեր ծարավ են
անմեղ արյան»:

Վերադառնալով տուն՝
Մելանքթոնը տեղեկացավ, որ
Գրե-Նաուսին փնտրող

ոստիկաններն ամբողջ տունը
տակնուկրա են արել» (Նույն
տեղում, և.13, գլ. 6):

Բարենորոգումը պիտի էլ ավելի
բարձրացվեր այս աշխարհի
մեծերի առաջ: Ֆերդինանդ
Թագավորը հրաժարվել էր լսել
ավետարանական
իշխաններին, բայց նրանց
հնարավորություն էր տրվելու
ներկայացնել իրենց հարցը
[206] կայսեր և պետության ու
եկեղեցու բարձրաստիճան
պաշտոնյաների ժողովի առաջ:
Կայսրությունը հուզող
գժտություններին վերջ տալու

համար Կարլ V—ը, Շպեյերի
բողոքից մեկ տարի անց,
խորհուրդ հրավիրեց
Առևտրաբուրգում՝ հայտնելով
անձամբ նախագահելու իր
մտադրությունը: Այնտեղ
հրավիրվեցին Բողոքական
իշխանները:

Բարենորոգմանը մեծ վտանգ
էր սպառնում, բայց նրա
ջատագրվ-ներն առաջվա պես
իրենց գործը վստահեցին
Աստծուն և հանդիսավո-րապես
խոստացան հավատարիմ մնալ
ավետարանին: Սաքսոնիայի
իշ-խանին իր

խորհրդականները համոզեցին
չներկայանալ խորհրդարան:
Նրանք ասացին, որ կայսրը
պահանջել է իշխանների
ներկայութիւնը՝ նրանց
ծուղակը գցելու համար: Արժե՞
վտանգել ամեն բան՝ գնալով ու
փակվելով քաղաքի պատերի
մեջ հզոր թշնամու հետ
միասին: Բայց մյուսները
վեհանձնորեն հայտարարեցին.
«Թող իշխանները միայն
քա-ջաքար պահեն իրենց, և
Աստծո գործը փրկված կլինի»:
«Աստված հա- վատարիմ է, Նա
մեզ չի թողնի»,— ասաց
Լյութերը (Նույն տեղում, և.14.

գլ. 2): Սաքսոնիայի իշխանն իր
շքախմբով մեկնեց Աուգսբուրգ:
Բոլորին հայտնի էր նրան
սպառնացող վտանգը, և
շատերը ճանապարհ ընկան
մռայլ դեմքով ու անհանգիստ
սրտով: Լյութերը, սակայն,
նրանց ուղեկ-ցելով մինչև
Կոբուրգ, բոցավառեց նրանց
մարող հավատը՝ երգելով «Մեր
Աստվածը ամուր աշտարակ է»
օրհներգը՝ գրված այդ
ճամփորդության ժամանակ:
Ոգեշունչ օրհներգի ձայնը ցրեց
մռայլ կանխատեսումներն ու
թեթևացրեց ծանրացած
սրտերը:

Բարենորոգման
առաջնորդները որոշել էին
համակարգված ձևով շարադրել
իրենց հայացքները՝
հիմնավորված
աստվածաշնչյան տեքստերով,
և ներկայացնել
խորհրդարանին:
Չանձնարարությունը
վստահվեց Լյութերին,
Մելանքթոնին և նրանց
ընկերներին: Այս դավանանքը
բողոքականների կողմից
ընդունվեց որպես իրենց
հավատի հանգանակ, և նրանք
հավաքվեցին՝ իրենց

ստորագրութիւնները դնելու
այդ կարևոր փաստաթղթի
տակ: Դա մի հանդիսավոր և
դժվարին պահ էր:
Բարենորոգիչները ձգտում էին
սահմանազատել
քաղաքական հարցե-րից:
Նրանք հասկանում էին, որ
Բարենորոգումը չպետք է որևէ
այլ ազդեցութիւն գործի՝ բացի
Նրանից, որ բխում է Աստծո
խոսքից: [207]

Երբ քրիստոնյա իշխանները
մոտեցան՝ ստորագրելու
փաստաթուղ-թը, Մելանքթոնը
միջամտեց՝ ասելով. «Նման

առաջարկներ անելը
աստվածաբանների և
ծառայողների գործն է: Եկեք
երկրի զորավորների
հեղինակությունը թողնենք այլ
հարցերի համար»: «Աստված
մի արասցե,- պատասխանեց
Յովհաննես Սաքսունացին,— որ
դուք ինձ բացառեք: Ես վճռել եմ
անել այն, ինչը ճիշտ է՝ առանց
անհանգստանալու իմ գահի
համար: Ես ուզում եմ դավանել
Տիրոջը: Իմ իշխանական
գլխարկն ու պատմուճանն
ավելի թանկ չեն ինձ համար,
քան Յիսուս Քրիստոսի խաչը»:
Այս ասելով՝ նա գրեց իր

անունը: Մեկ այլ իշխան,
վերցնելով գրիչն՝ ասաց. «Եթե
իմ Տեր Յիսուս Քրիստոսի
պատիվը պահանջում է դա, ես
պատրաստ եմ... զոհաբերել իմ
ունեցվածքը և կյանքը»: «Ես
ավելի շուտ կիրաժարվեմ իմ
հպատակներից ու
կալվածքներից և կլքեմ իմ
հայրերի երկիրը՝ գավազանը
ձեռքիս,— շարունակեց նա,—
քան կընդունեմ որևէ այլ
ունամունք, բացի նրանից, որ
արձանագրված է այս
Դավանության մեջ» (Նույն
տեղում, և. 14, գլ. 6): Ահա թե
ինչպիսին էր Աստծո այս

այրերի հավատն ու
արիությունը:

Եկա՛վ նշված ժամանակը՝
կանգնելու կայսեր առաջ: Կարլ
V-ը՝ նստած իր գահին և
շրջապատված իշխաններով ու
ազնվականներով, ընդունեց
բողոքական
բարենորոգիչներին:
Ընթերցվեց նրանց հավատի
հանգանակը: Այդ հանդիսավոր
ժողովին հստակորեն
ներկայացվեցին Ավետարանի
ճշմարտությունները և
պապական եկեղեցու
մոլորությունները: Այդ օրն

իրավացիորեն կոչեցին
«Բարենորոգման մեծագույն
օրը և քրիստոնեության ու
մարդկության պատմության
ամենափառավոր օրերից մեկը»
(Նույն տեղում, Ա. 14, գլ.7):

Ընդամենը մի քանի տարի
առաջ էր, որ Վիտենբերգի
վանականը Վորմսում միայնակ
կանգնել էր ազգային խորհրդի
առաջ: Հիմա նրա փոխարեն
կանգնած էին կայսրության
ամենավեհանձն ու հզոր
իշխանները: Լյութերին
արգելել էին երևալ
Առկսբուրգում, սակայն նա

ներկա էր իր խոսքերով ու
աղոթքներով: «Ես ցնծում եմ,—
գրել է Նա,— որ ապրել եմ
մինչև այս ժամը, երբ Քրիստոսը
հրապարակավ մեծարվեց
այսպիսի ականավոր
դավանողների կողմից և նման
փայլուն ժողովում» (Նույն
տեղում, և.14, գլ.7): Այսպես
կատարվեց Սուրբ Գրքի խոսքը.
«Քո վկայութունների մասին
կխոսեմ թագավորների առաջ»
(Սաղմոս 119.46):

[208] Պողոսի օրերում էլ
Ավետարանը, որի համար Նա
բանտարկվել էր, այդպես

քարոզվեց կայսրության
մայրաքաղաքի իշխաններին ու
ազնվականներին: Այս դեպքում
էլ՝ այն, ինչ կայսրը արգելել էր
քարոզել ամբիոնից, հռչակվեց
պալատից, և այն, ինչը շատերի
կարծիքով վայել չէր լսել
նույնիսկ ծառաներին,
զարմանքով լսեցին
կայսրության իշխաններն ու
տիրակալները: Ունկնդիրներն
արքաներ ու ականավոր
անձինք էին, քարոզիչները՝
թագադրված իշխաններ, իսկ
քարոզը՝ Աստծո արքայական
ճշմարտությունը:
«Առաքելական դարաշրջանից ի

վեր,— ասում է մի գրող,—
երբեք չի եղել ավելի մեծ գործ
կամ ավելի վսեմ
դավանություն»։ (Դ՝Օբինյե, Ա.
14, գլ.7)

«Այն, ինչ ասացին
լութերականները,
ճշմարտություն է, և մենք չենք
կարող ժխտել դա»,—
հայտարարեց պապական մի
եպիսկոպոս։ «Կարո՞ղ եք
հիմնավոր փաստարկներով
հերքել իշխանի և նրա
դաշնակիցների
Դավանությունը»,— հարցրեց
մեկ ուրիշը դոկտոր Էկին։

«Առաքյալների և մարգարեների գրվածքներով՝ ոչ,— եղավ պատասխանը,— բայց հայրերի ավանդույթյամբ ու ժողովների որոշումներով՝ այո»:

«Հասկանում եմ,— նկատեց հարցատուն,— որ լուծերականներն, ըստ ձեզ, հիմնվում են Սուրբ Գրքի վրա, իսկ մենք՝ ոչ» (Նույն տեղում, Ա.14, գլ. 8):

Գերմանիայի իշխաններից ոմանք ընդունեցին բարեփոխված հավատը: Ինքը՝ կայսրն էլ հայտարարեց, որ բողոքականների

փաստարկները ճշմարիտ են:
Դավանանքը թարգմանվեց
բազմաթիվ լեզուներով ու
տարածվեց ողջ եվրոպայում, և
գալիք դարերում այն
ընդունվեց միլիոնավոր
մարդկանց կողմից որպես
իրենց հավատի
արտահայտություն:

Աստծո հավատարիմ
ծառաները միայնակ չէին
չարչարվում: Մինչ
«իշխանությունները,
պետություններն ու երկնքի
տակ գտնվող չար ոգիները»
համախմբված էին նրանց դեմ,

Աստված չլքեց իր ժողովրդին:
Եթե միայն նրանց աչքերը
բացվեին, նրանք էլ կտեսնեին
աստվածային ներկայության և
օգնության նույն վկայությունը,
որը շնորհվեց հին մարգարեին:
Երբ Եղիսեի ծառան իր տիրոջը
ցույց տվեց թշնամու բանակը,
որ շրջապատել էր իրենց՝
զրկելով փախուստի ամեն
հնարավորությունից,
մարգարեն աղոթեց. «Տեր,
խնդրում եմ, բաց արա նրա
աչքերը, որ տեսնի» (Դ
Թագավորաց 6.17, անգլ.
թարգմ.): Եվ ահա սարը
ծածկված էր հրեղեն ձիերով ու

կառքերով, երկնային զորքը
դիրքավորվել էր՝
պաշտպանելու Աստծո
ծառային: Այսպես էլ
հրեշտակները պահպանեցին
Բարենորոգման գործիչներին:
[209]

Սկզբունքներից մեկը, որն
ամենից ավելի էր պնդում
Լյութերը, այն էր, որ
Բարենորոգումը պաշտպանելու
համար չպետք է դիմել ոչ
աշխարհիկ իշխանության, ոչ էլ
զենքի օգնությանը: Նա ցնծաց,
որ կայսրության իշխանները
հավատարիմ մնացին

ավետարանին, բայց երբ
նրանք առաջարկեցին ստեղծել
պաշտպանական դաշինք, նա
հայտարարեց, որ «միայն
Աստված պիտի պաշտպանի
ավետարանի ուսմունքը...
Որքան ավելի քիչ մարդը
միջամտի այդ գործին, այնքան
ավելի ակնհայտ կլինի Աստծո
միջամտությունը Առաջարկված
բոլոր քաղաքական
նախազգուշական միջոցները,
նրա կարծիքով, անիմաստ
վախի և մեղավոր
անվստահության հետևանք
էին» (Դ՝Օբինյե, Լոնդոնի հր.,
և.10, գլ.14):

Երբ զորեղ թշնամիները
միավորվում էին՝ տապալելու
բարենորոգ-ված հավատը, և
թվում էր, թե նրա դեմ
հազարավոր սրեր են
մերկացվում, Լյութերը գրեց.
«Սատանան իր ցատումն է
գործադրում, անաստված
պապերը դավեր են նյութում և
մեզ սպառնում պատերազմով:
Հորդորեք ժողովրդին
հավատով ու աղոթքով
անկախորեն պայքարել Տիրոջ
գահի առաջ, որպեսզի մեր
թշնամիները, Աստծո Հոգուց
հաղթված, ստիպված լինեն

Խաղաղության դաշինք կնքել:
Մեր գլխավոր կարիքը, մեր
գլխավոր գործը աղոթքն է: Թող
ժողովուրդն իմանա, որ իրեն
սպառնում է սրի և սատանայի
կատաղության վտանգը, և թող
աղոթք անեն» (Դ՛Օբինյե, և.10,
գլ.14):

Ավելի ուշ անդրադառնալով
բողոքական իշխանների
դաշինքին՝ Լյութերը նորից
հայտարարեց, որ այս
պայքարում միակ զենքը պետք
է լինի «Ջոզու սուրը»: Նա գրեց
Սաքսոնիայի իշխանին. «Մեր
Խիղճը թույլ չի տալիս

հավանություն տալ
առաջարկվող դաշինքին: Մենք
կգերադասեինք տասն անգամ
մեռնել, քան տեսնել, որ մեր
Ավետարանի պատճառով
թափվել է գեթ մի կաթիլ
արյուն: Մեր բաժինն է՝ լինել
ինչպես մորթվող գառներ:
Պետք է կրել Քրիստոսի խաչը:
Թող Ձերդ բարձրությունը
չվախենա: Մեր աղոթքներով
մենք պիտի ավելին անենք,
քան մեր բոլոր թշնամիներն՝
իրենց պարծենալով: Միայն թե
թող ձեր ձեռքերին չմնա ձեր
եղբայրների արյան բիծը: Եթե
կայսրը պահանջում է, որ մենք

Կանգնենք իր դատարանի
առաջ, մենք պատրաստ ենք
ներկայանալ: Դուք չեք կարող
պաշտպանել մեր հավատը,
ամեն ոք պիտի հավատա՝
անձամբ դիմելով ռիսկի ու
ենթարկվելով վտանգի» (Նույն
տեղում, և.14, գլ. 1): [210]

Աղոթքի ծածուկ անկյունից
դուրս եկավ այն զորությունը,
որ ցնցեց աշխարհը մեծ
Բարենորոգման ժամանակ:
Այնտեղ սրբազան
հանդարտությամբ Տիրոջ
ծառաները կանգնեցին Նրա
խոստումների ժայռի վրա:

Առւգսբուրգում ընթացող
պայքարում Լյութերը «ոչ մի օր
չէր անցկացնում՝ առանց
առնվազն երեք ժամ աղոթելու,
և դրանք ամենանպաստավոր
ժամերն էին
ուսումնասիրության համար»:
Իր սենյակի միայնության մեջ
Նա բացում էր իր սիրտը Աստծո
առաջ «փառաբանությամբ,
երկյուղով ու հույսով, ինչպես
մեկը կխոսեր իր ընկերոջ հետ»:
«Ես գիտեմ, որ Դու մեր Յայրն
ես և մեր Աստվածը,- ասում էր
Նա,— և որ Դու կցրես Քո
զավակների հալածողներին,
քանզի Ինքդ էլ մեզ հետ ես

վտանգի մեջ: Այս ողջ գործը
Քոնն է, և միայն Քո
հանձնարարությամբ է, որ մենք
ձեռնամուխ ենք եղել դրան:
Ուրեմն պաշտպանիր մեզ, ո՛վ
Յայր» (Նույն տեղում, Ա.14, գլ.
6):

Մելանքթոնին, ով ընկճված էր
անհանգստությունից ու
վախից, նա գրել է. «Շնորհ և
խաղաղություն Քրիստոսում,
ասում եմ «Քրիստոսում», ոչ թե
աշխարհում: Ամեն: Ես ատելով
ասում եմ քեզ ուստղ ծայրահեղ
անհանգստությանը: Եթե այս
գործն անարդար է, թողնենք

այն, իսկ եթե արդար է, ապա
ինչո՞ւ պիտի աղավաղենք Նրա
խոստումները, ով պատվիրում
է մեզ քնել առանց վախի...

Քրիստոսը չի լքի արդար և
ճշմարիտ գործը: Նա կենդանի
է, Նա թագավորում է, ուրեմն
ինչի՞ց պիտի վախենանք»
(Նույն տեղում, և.14, գլ. 6):

Եվ Աստված լսեց Իր ծառաների
աղոթքը: Նա իշխաններին և
եկե-ղեցու ծառայողներին
շնորհ և խիզախություն
պարգևեց, որպեսզի նրանք
պաշտպանեին
ճշմարտությունն այս աշխարհի

Խավարի տիրակալներից: Տերն
ասում է. «Ահա Սիոնում
անկյունի գլուխ՝ ընտիր պատ-
վական քար եմ դնում, և նրան
հավատացողը չի ամաչի» (Ա
Պետրոս 2.6): Բողոքական
բարենորոգիչները կառուցեցին
Քրիստոսի վրա, և դժոխքի
դռները չէին կարող հաղթել
նրանց:

ԳԼՈՒԽ

12—ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄԸ

ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Շպեյերի բողոքին և
Առևգսբուրգյան
դավանութեանը, որ
նշանավորեցին
Բարենորոգման հաղթանակը
Գերմանիայում, հետևեցին
բախումների ու խավարի
երկար տարիներ: Իր
աջակիցների
երկպառակութունից թուլացած
և զորեղ թշնամիների
հարձակումներից տուժած
բողոքականությունն ասես

դատապարտված էր
լիակատար կործանման:
Չազարավորներն արյունով
կնքեցին իրենց վկայութունը:
Քաղաքա-ցիական պատերազմ
բռնկվեց, բողոքական շարժման
առաջատար ջա-տագուկներից
մեկը դավաճանեց այն,
բարենորոգված հավատն
ընդունած իշխաններից
ազնվագույններն ընկան
կայսեր ձեռքը, և նրանց
գերիների պես քարշ էին տալիս
քաղաքից քաղաք: Սակայն իր
թվացյալ հաղթանակի պահին
կայսրը ջախջախիչ հարված
ստացավ: Տեսնելով, որ զոհը

դուրս է արձնում իր ձեռքից, նա
ի վերջո ստիպված եղավ
հանդուրժել այն ուսմունքը, որի
ոչնչացումը նրա կյանքի
փափագն էր: Յերձվածքը
կործանելու համար նա
վտանգի էր ենթարկել իր
թագավորությունը, գանձերը և
նույնիսկ կյանքը: Յիմա նա
տեսավ, որ իր զորքերն
ուժասպառ են եղել կռվից, իր
գանձերը՝ սպառվել, իր
բազմաթիվ տիրությունները
ապստամբության վտանգի
առջև են, մինչդեռ այն
հավատը, որը նա զուր ջանում
էր ճնշել, տարածվում էր

ամենուրեք: Կարլ V—ը կռվում
էր ամենագոր ուժի դեմ:
Աստված ասել էր՝ «Թող լույս
լինի», իսկ կայսրը չէր ուզում,
որ խավարը ցրվի: Նրա
ծրագրերը ձախողվեցին:
Վաղաժամ ծերացած ու
երկարատև պայքարից
հյուճկված՝ նա հրաժարվեց
գահից և փակվեց վանքում:

Գերմանիայի նման՝
Շվեյցարիայում նույնպես
տխրամած օրեր եկան
Բարենորոգման համար: Մինչ
շատ գավառներ ընդունեցին
բարե-նորոգված [212] հավատը,

մյուսները կույր համառությամբ
կառչեցին Յռոմի դավանանքին:
Նրանք հալածում էին
ճշմարտությունն
ընդունող-ներին, ինչի
հետևանքով քաղաքացիական
պատերազմ բռնկվեց: Ցվինգլին
և բարեփոխմանը միացած նրա
համախոհներից շատերն
ընկան Կապելի արյունալի
ճակատամարտում:
Էկոլամպադիոսը, չդիմանալով
այս սոսկալի աղետներին,
շուտով մեռավ: Յռոմը ցնծում
էր, և թվում էր, թե շատ
տեղերում նա ուր որ է
կվերականգնի կորցրածը: Բայց

Նա, ում խորհուրդները
հաստատված են հավիտենից
առաջ, չէր թողել իր գործը կամ
իր ժողովրդին: Նրա բազուկը
ազատութիւն էր բերելու
Նրանց: Նա գործավորներ
կանգնեցրեց այլ երկրներում՝
շարունակելու Բարենորոգման
գործը:

Ֆրանսիայում, երբ դեռ
Լյութերի մասին չէին լսել
որպես բարենորոգչի,
արշալույսն արդեն սկսել էր
բացվել: Առաջիններից մեկը, ով
ընդունել էր լույսը, տարեց
Լեֆարն էր՝ Փարիզի

համալսարանի խորապես
կրթված մի դասախոս և
անկեղծ ու ջերմեռանդ մի
պապական: Անտիկ
գրականության իր
հետազոտությունների
ժամանակ նրա ուշադրությունը
գրավեց Աստվածաշունչը և
դրա ուսումնասիրությունը նա
ներմուծեց իր ուսանողների
շրջանում:

Լեֆևրը սրբերի ջերմեռանդ
երկրպագու էր, և նա որոշել էր
եկեղեցու առասպելների հիման
վրա գրել սրբերի և
նահատակների

պատմութիւնը: Սա խիստ
ծավալուն մի աշխատանք էր,
բայց նա արդէն զգալիորեն
առաջ էր գնացել, երբ
կարծելով, թէ Աստվածաշունչը
կարող է իրեն մեծապես օգնել,
սկսեց այն այդ նպատակով
ուսումնասիրել: Այստեղ
իսկապես նա ի հայտ բերեց
սրբերին, բայց ոչ նրանց, ում
մասին նշված էր հռոմեական
օրացույցում: Աստվածային
լույսի մի հեղեղ պայծառացրեց
նրա միտքը: Չարմանքով ու
նողկանքով նա դադարեցրեց
իր աշխատանքը և նվիրվեց
Աստծո խոսքի

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆՆԵՐ: Նա
շուտով սկսեց դասավանդել
այն թանկարժեք
ճշմարտությունները, որոնք
հայտնաբերեց այնտեղ:

1512 թվականին, երբ դեռ ո՛չ
Լյութերը, ո՛չ էլ Ցվինգլին չէին
սկսել բարենորոգման իրենց
գործը, Լեֆևրը գրել է.

«Աստված Ինքն է հավատի
միջոցով պարգևում այն
արդարությունը որը միայն
շնորհով է արդարացնում
հավիտենական կյանքի
համար» (Ուայլի, հ.13, գլ. 1):
Խորհելով փրկության

գաղտնիքների շուրջ՝ նա
բացականչել է. «Օ՛ր,
ան-պատմելի փոխարինման
ինչպիսի՛ մեծություն. Անմեղը
դատապարտ-վում է, իսկ
հանցավորն՝ ազատ
արձակվում, Օրինյալը կրում է
անեծքի իսկ անիծյալն՝
օրինվում, Կյանքը մեռնում է,
մեռյալը՝ ապրում, Փառքը
պարուրվում է խավարով, իսկ
նա, ով բացի ամոթից՝ ոչինչ
չունի, պսակ-վում է փառքով»
(Դ՛Օբինյե, Լոնդոնի հրտ., հ. 12,
գլ. 2):

Սովորեցնելով, որ փրկության
փառքը պատկանում է
բացառապես Աստծուն, նա նաև
հռչակեց, որ հնազանդությունն
էլ մարդու պարտականությունն
է: «Եթե դու Քրիստոսի
եկեղեցու անդամ ես,— ասել է
Նա,- ուրեմն Նրա մարմնի
անդամ ես, իսկ եթե Նրա
մարմնից ես, ապա կրում ես
աստվածային բնության
լիությունը ... Օ՛ր, եթե մարդիկ
միայն պատկերացնեին այս
մեծ արտոնությունը, որքա՛ն
սուրբ, անբիծ ու ան-աղարտ
կյանք կվարեին, և որքա՛ն
արհամարհելի կթվար Նրանց

այս աշխարհի ողջ փառքը
իրենցում եղած փառքի
համեմատ, որը մարմնա-վոր ոչ
մի աչք չի կարող տեսնել»
(Նույն տեղում, հ. 12, գլ. 2):

Լեֆևրի ուսանողների մեջ
կային այնպիսիք, ովքեր
խանդավառված լսում էին նրա
խոսքերը և, իրենց ուսուցչի
ձայնը լռելուց տարիներ անց,
նրանք պիտի շարունակեին
հռչակել ճշմարտությունը:
Նրանցից մեկը Ուիլյամ Ֆարելն
էր: Լինելով բարեպաշտ
ծնողների գավակ և
դաստիարակված

անվերապահորեն հավատալու
եկեղեցու ուսմունքին՝ նա իր
մասին, Պողոս առաքյալի պես,
կարող էր ասել. «Ես մեր կրոնի
ճշմարտագույն կուսակցության
համեմատ Փարիսեցի եմ
ապրել» (Գործք 26.5): Այս
նվիրյալ կաթոլիկը վառվում էր
բոլոր նրանց ոչնչացնելու
ցանկությամբ, ովքեր
կհամարձակվեին ընդդիմանալ
եկեղեցուն: «Ես գայլի պես
կրճտացնում էի ատամներս,—
ավելի ուշ ասել է նա՝
անդրադառնալով իր կյանքի
այդ հատվածին,— երբ լսում էի՝
ինչ-որ մեկը խոսում էր պապի

դեմ» (Ուայլի, հ.13, գլ. 2): Նա սրբերի անխոնջ երկրպագու էր և Լեֆևրի հետ այցելում էր Փարիզի բոլոր եկեղեցիները՝ աղոթելով զոհասեղանների առաջ և ընծաներով զարդարելով սրբավայրերը: Բայց այս ամենը չէր կարող խաղաղություն բերել նրա հոգուն: Իր մեղավորության գիտակցումն այնպես էր ճնշում նրան, որ ապաշխարանքի բոլոր գործողություններն անկարող էին ազատել դրանից: Ասես երկնքից եկող ձայն՝ նրա ականջին հնչեցին բարենորոգչի խոսքերը.

«Փրկութիւնը ձրի պարգև է»:
«Անմեղը դատապարտվում է,
հանցագործը՝ արդարացվում»:
«Միայն Քրիստոսի խաչն է [214]
բացում երկնքի դարպասները և
փակում դժոխքի դռները»
(Նույն տեղում, հ.13, գլ. 2):

Տարելն ուրախությամբ
ընդունեց ճշմարտութիւնը:
Պողոսի նման դարձի գալով՝ նա
շրջվեց ավանդության
գերութիւնից դեպի Աստծո
որդիների ազատութիւնը:
«Գիշատիչ գայլի արյունարբու
սրտի փոխարեն, իր իսկ
խոսքերով, նրան արվեց հեզ ու

անվնաս գառան սիրտ, որն
ամբողջովին բաժանվեց
պապից և նվիրվեց Յիսուս
Քրիստոսին» (Դ՛Օբինյե, հ.12, գլ.
3):

Մինչ Լեֆևրը շարունակում էր
տարածել լայսր իր
ուսանողների շրջանում,
Ֆարելը, ով նույնքան
ջերմեռանդ էր Քրիստոսի
գործում, որքան պապին
ծառայելու մեջ, հրապարակավ
սկսեց հռչակել
ճշմարտությունը: Շատ
չանցած՝ նրան միացավ Մո
քաղաքի եպիսկոպոսը՝

Եկեղեցու բարձրաստիճան մի
պաշտոնյա: Իրենց
տաղանդներով ու
գիտելիքներով հայտնի այլ
ուսուցիչներ ևս միացան
Նրանց՝ հռչակելու բարի լուրը,
որը հետևորդներ շահեց բոլոր
խավերի մեջ՝
արհեստավորների ու
գյուղացիների տներից մինչև
թագավորի պալատը: Այդ
ժամանակ իշխող Տրանցիսկ I
միապետի քույրն ընդունեց
բարենորոգված հավատը:
Միառժամանակ թվում էր, թե
թագավորն ինքը և
թագուհի-մայրը բարե-հաճ են

Նոր հավատի նկատմամբ, և
բարենորոգիչները մեծ հույսով
էին նայում դեպի ապագան,
երբ Ավետարանը կնվաճեր
Տրանսիան:

Բայց նրանց հույսերը չէին
իրականացվելու: Փորձություն
և հա-լածանք էր սպասվում
Քրիստոսի աշակերտներին: Դա,
սակայն, ողոր-մաճաբար
թաքցվել էր նրանցից: Նրանց
խաղաղության ժամանակ
շնորհվեց, որպեսզի ուժ
հավաքեին՝ դիմակայելու
փոթորկին: Եվ Բարե-նորոգումն
արագորեն առաջ ընթացավ: Մո

քաղաքի եպիսկոպոսն ամեն
ինչ անում էր՝ իր թեմում
ուսուցանելու թե՛
հոգևորականությանը, թե՛
ժողովրդին: Տգետ ու
անբարոյական քահանաները
հեռացվեցին և, որքան
հնարավոր է, փոխարինվեցին
ուսյալ ու բարեպաշտ
մարդկանցով: Եպիսկոպոսը
շատ էր ցանկանում, որ իր
ժողովրդին մատչելի լինի
Աստծո խոսքը, և շուտով
այդպես էլ եղավ: Լեֆևրը
ձեռնարկեց Նոր Կտակարանի
թարգմանությունը, և հենց այն
ժամանակ, երբ Վիտենբերգում

լույս տեսավ Լյութերի
գերմաներեն Սուրբ Գիրքը, Մո
քաղաքում հրատարակվեց
Ֆրանսերեն Նոր Կտակարանը:
Եպիսկոպոսը ջանք և միջոց չէր
խնայում այն իր
համայնքներում տարածելու
համար, և շուտով [215] Մոյի
գեղջուկները Սուրբ Գիրք
ունեցան:

Ինչպես ծարավից մեռնող
ճամփորդներն են ցնծում հոսող
ջրի աղ-բյուր գտնելիս, այնպես
էլ այս մարդիկ ընդունեցին
երկնքի լուրը: Գոր-ծավորները,
դաշտերում թե

արհեստանոցներում, իրենց
առօրյա գործը հաճելի էին
դարձնում՝ զրուցելով
Աստվածաշնչի թանկագին
ճշմար-տությունների մասին:
Երեկները գիտենտներում
անցկացնելու փոխարեն՝
Նրանք հավաքվում էին որևէ
մեկի տանը՝ միասին կարդալու
Աստծո խոսքը, աղոթելու և
փառաբանելու Տիրոջը: Այս
համայնքներում շուտով մեծ
փոփոխություն նկատվեց: Այդ
հասարակ, անկիրթ և չարքաշ
աշխատող գյուղացիների
կյանքում դրսևորվեց
աստվածային շնորհի

բարեփոխիչ, վեհացնող ուժը:
Այս խոնարհ, սիրող և սուրբ
մարդիկ կենդանի վկաներ էին
այն բանի, թե ինչ կարող է անել
ավետարանը նրանց համար,
ովքեր անկեղծ սրտով
ընդունում են այն:

Մոյուն վառված լույսի շողերը
հասան հեռավոր վայրեր: Ամեն
օր նորադարձների թիվն աճում
էր: Նվիրապետության
կատաղությունը
միառժամանակ զսպում էր
թագավորը՝ արհամարհելով
վանականների նեղմիտ
մոլեռանդությունը, բայց, ի

վերջո, պապական
առաջնորդները հաղթեցին:
Խարույկը վառվեց: Մոյի
եպիսկոպոսը՝ ստիպված
ընտրելու խարույկը կամ
ուրացումը, գերադասեց հեշտ
ուղին, բայց չնայած
առաջնորդի անկմանը՝ նրա
հոտը մնաց անսասան:
Շատերն իրենց վկայութունը
կնքեցին բոցերի մեջ: Իրենց
խիզախությամբ ու
հավա-տարմությամբ այս
խոնարհ քրիստոնյաները
խարույկի միջից վկայեցին
հազարավոր մարդկանց, ովքեր

Խաղաղ օրերին երբեք չէին լսել
նրանց խոսքը:

Միայն հասարակ ու աղքատ
մարդիկ չէ, որ ենթարկվելով
տանջանքի ու ծաղրի,
համարձակվում էին վկայել
Քրիստոսի մասին:

Իշխանական ամրոցներում ու
պալատներում գտնվեցին
ազնվականներ, ում համար
ճշմարտությունն ավելի թանկ
էր, քան հարստությունը, դիրքը
և նույնիսկ կյանքը:

Արքայական սաղավարտը
քողարկում էր ավելի վեհ ու
աներեր ոգի, քան եպիսկոպոսի

հանդերձն ու խուլորը: Լուի դե
Բերքինը ազնվական ծագում
ուներ: Այդ խիզախ ու
ազնվաբարո ապետը, ով իրեն
նվիրել էր գիտությանը, հղկված
շարժումն ու անբիծ վարք
ուներ: «Նա պապական
համակարգի մոլի կողմնակից
էր,— ասում է մի հեղինակ,—
պա-տարագների ու քարոզների
մշտական ունկնդիր ...և նա իր
առաքինու-թյունները պսակեց
լութերականության հանդեպ
[216] հատուկ նողկանքով»:
Բայց ինչպես շատ ուրիշները,
նախախնամությամբ
ծանոթանալով

Աստվածաշնչին՝ նա ապշեց,
երբ այնտեղ գտավ «ոչ թե
Յոնի, այլ Լյութերի ուսմունքը»
(Ուայլի, հ.13, գլ. 9): Այդ պահից
ի վեր նա անմնացորդ նվիրվեց
Ավետարանի գործին:

«Ֆրանսիայի ազնվականներից
ամենատեսալիկը», ում հանճարն
ու պերճախոսությունը,
անզուսպ արիությունն ու
հերոսական եռանդը, նրա
ազդեցությունն արքունիքում,
քանզի թագավորի սիրելին էր,
շատերին դրդել էին հավատալ,
որ նրան վիճակված էր իր
երկրի բարենորոգիչը լինելու:

«Բերքինը կդառնար երկրորդ
Լյութերը, եթե հանձին
Ֆրանցիսկ 1-ի գտներ
կայսերական երկրորդ
իշխանին»,— ասել է Բեզան:
«Նա Լյութերից ավելի վատն
է»,— ճշում էին պապականները
(Նույն տեղում, հ.13, գլ. 9):
Ֆրանսիայի պապականները
հիրավի ամենից շատ էին
վախենում նրանից: Ու թեև
նրան բանտ նետեցին որպես
հերետիկոսի, թագավորն
ազատեց նրան: Պայքարը տևեց
տարիներ: Ֆրանցիսկը,
տատանվելով Յոնմի և
Բարենորոգման միջև, մեկ

հանդուրժում էր, մեկ՝ սանձում
վանականների մուլուցքը:
Բերքինը երեք անգամ
քանտարկվեց պապական
իշխանությունների կողմից, և
ամեն անգամ նրան ազատեց
միապետը, ով հիանալով նրա
հանճարով ու բնավորության
վեհությանը՝ հրաժարվեց
զոհաբերել նրան
նվիրապետության
չարամտությանը:

Բերքինին մի քանի անգամ
զգուշացրին այն վտանգի
մասին, որ սպառնում էր նրան
Տրանսիայում, և համոզեցին

հետևել նրանց օրինա-կին,
ովքեր վտանգից խուսափել
էին՝ հոժարակամ հեռանալով
երկրից: Երկչոտ ու զիջողամիտ
Էրազմուսը, ով, չնայած իր
փայլուն գիտելիքներին, զուրկ
էր բարոյական այն
վեհությունից, որ
ճշմարտությանն է
են-թարկեցնում կյանքն ու
պատիվը, գրել է Բերքինին.
«Խնդիր, որ քեզ ուղարկեն
որևէ օտար երկիր որպես
դեսպան: Գնա և շրջագայիր
Գերմանիայում: Դու գիտես
Բեդային ու նրա նմաններին:
Նա հազար գլխանի հրեշ է, որը

թույն է արձակում ամեն կողմի վրա: Քո թշնամիների անունը լեզբոն է: Եթե նույնիսկ քո գործն ավելի արդար լիներ, քան Յիսուս Քրիստոսինը, նրանք, միևնույնն է, բաց չէին թողնի քեզ, մինչև ստորաբար չկործանեին: Չափից ավելի մի՛ ապավինիր թագավորի պաշտպանու-թյանը: Ինչ էլ որ լինի, ինձ մի՛ հեղինակագրկիր աստվածաբանության «Ֆակուլտետում» (Նույն տեղում, հ.13, գլ. 9):

Բայց որքան վտանգն ավելի մեծացավ, Բերքինի եռանդը

միայն ավելի աճեց: Ամենևին էլ
չընդունելով Էրազմուսի
քաղաքականությունն ու
շահադիտական խորհուրդը՝
[217] նա վճռեց դիմել էլ ավելի
համարձակ քայլի: Նա ոչ միայն
պաշտպան կկանգնի
ճշմարտությանը, այլ նաև
կգրոհի մոլորության վրա:
Չերեսիկոսության
մեղադրանքը, որ
պապականները ջանում էին
բարդել իր վրա, նա կուղղի
նրանց դեմ: Նրա ամենադառն
ա կատաղի հակառակորդները
Փարիզի մեծ համալսարանի
աստվածաբանական

Ֆակուլտետի ուսյալ
դասախոսներն ու
վա-նականներն էին՝ քաղաքի և
ազգի բարձրագույն
եկեղեցական
հեղի-նակությունները: Այս
դասախոսների գրվածքներից
Բերքինը դուրս գրեց
տասներկու դրույթ, որոնք ի
լուր բոլորի հռչակեց
«Ասավածաշնչին հա-կասող ու
հերձվածողական», և դիմեց
թագավորին՝ գործելու որպես
վիճաբանության դատավոր:

Միապետը, հակված
հակադրելու ընդդիմադիր

Կողմերի ուժն ու
խորաթափանցութիւնը և
ուրախանալով, որ առիթ է
ներկայացել խոնարհեցնելու
այդ ամբարտավան
վանականների
հպարտութիւնը կարգադրեց
պապականներին իրենց գործը
պաշտպանել Աստվածաշնչով:
Նրանք քաջ գիտակցում էին, որ
այդ զենքը իրենց հաջողութիւն
չի բերի: Բանտարկութիւնը,
տանջանքներն ու խարույկն
էին այն զենքը, որոնց նրանք
շատ ավելի լավ էին
տիրապետում: Այժմ դերերը
փոխվեցին, և նրանք

հասկացան, որ ընկնելու են այն
փոսը, որի մեջ հույս ունեին
զցել Բերքինին: Նրանք
ապշահար չորս կողմը
նայեցին՝ որևէ ելք գտնելու:

«Չենց այդ ժամանակ քաղաքի
փողոցներից մեկի անկյունում
ապականել էին կույս Մարիամի
սրբապատկերը», ինչը մեծ
իրարանցում էր առաջացրել
քաղաքում: Դեպքի վայրում
սգացող ու վրդովված
մարդ-կանց ամբոխներ էին
հավաքվել: Թագավորն ինքն էլ
խորապես հուզված էր: Սա մի
շատ հարմար առիթ էր, որից

Նրանք շտապեցին օգտվել:
«Ահա Բերքինի ուսմունքի
հետևանքը», — ճշացին նրանք:
Լյութերական այս
դավադրութունը շուտով
կտապալի ամեն ինչ՝ կրոնը,
օրենքները և նույնիսկ՝ գահը:

Բերքինը նորից ձերբակալվեց:
Թագավորը հեռացավ
Փարիզից, և վանականներն
ազատ մնացին՝ կատարելու
իրենց կամքը: Բարենորոգչին
դատեցին և դատապարտեցին
մահվան, և որպեսզի
Ֆրանցիսկը այս անգամ էլ
չմիջամտի փրկելու նրան,

դատավճիռն ի կատար ածվեց
հենց կայացման օրը: Կեսօրին
[218] Բերքինին տարան
մահապատժի վայրը:
Յսկայական ամբոխ էր
հավաքվել՝ ականատես լինելու
իրադարձությանը, և շատերը
զարմանքով ու տագնապով
տեսան, որ զոհն ընտրվել էր
Ֆրանսիայի ազնվականության
ամենախիզախ ու լավագույն
ընտանիքից: Այդ ալեկոծ
ամբոխի մեջ բոլորի դեմքերը
մռայլված էին զարմանքից,
վրդովմունքից,
արհամարհանքից ու դառն
ատելութունից: Մեկ դեմքի

վրա, սակայն, ստվեր անգամ
չկար: Նահատակի մտքերը
հեռու էին այդ իրարանցումից,
նա զգում էր միայն իր Տիրոջ
ներկայութիւնը:

Նա ուշադրութիւն չէր
դարձնում այն խղճուկ երկանիվ
սայլին, որով իրեն բերում էին,
կամ իր դահիճների խոժոռ
դեմքերին, ոչ էլ մտածում էր
այն զարհուրելի մահվան
մասին, որին պիտի
ենթարկվեր: Նրա կողքին էր
Ապրողը, ով մեռած էր, և ահա
կենդանի է հավիտյանս
հավիտենից և ունի մահվան ու

դժոխքի բանալիները: Բերքինի
դեմքը փայլում էր երկնային
լույսով ու խաղաղությամբ:
Նրա հագին գեղեցիկ հագուստ
էր՝ «թավշյա թիկնոց, ատլասե
և մետաքսե բաճկոնակ ու
ոսկեգույն տաբատ» (Դ՝Օբինյե,
Բարենորոգման պատմությունը
Եվրոպայում Կալվինի
ժամանակ, հ. 2, գլ.16): Ահա նա
պատրաստ է վկայելու իր
հավատը թագավորների
Թագավորի ու ողջ ականատես
տիեզերքի առաջ, և սգո ոչ մի
նշան չպետք է մթագնի նրա
ուրախությունը:

Երբ թափորը դանդաղ առաջ
շարժվեց լեփ-լեցուն
փողոցներով, մարդիկ
զարմանքով նկատեցին նրա
խաղաղ և հաղթական
ցնծությամբ լի դեմքն ու
պահվածքը: «Նա նման է
մեկին,— ասում էին նրանք,—
ով կարծես նստած է տաճարում
և խորհում է սուրբ բաների
մասին» (Ուայլի, հ.13, գլ. 9):

Խարույկի վրա Բերքինը
փորձեց մի քանի խոսք ասել
ժողովրդին, բայց
վանականները, վախենալով
դրա ազդեցությունից, սկսեցին

բղավել, զինվորներն էլ
շաչեցրին իրենց զենքերը, և
նրանց աղմուկը խլացրեց
Նահատակի ձայնը: Այսպիսով,
1529-ին քաղաքակիրթ Փարիզի
բարձրագույն գրական ու
եկեղեցական
հեղինակությունները,
«խլացնելով խարույկի վրա
մեռնող Նահատակի մահառաջի
սրբազան խոսքերը,
խայտառակ օրինակ թողեցին
1793-ի ժողովրդին» (Նույն
տեղում, հ.13, գլ. 9):

Բերքինը խեղդվեց ծխից, և նրա
մարմինն այրվեց բոցերի մեջ:

Նրա մահվան լուրը խորապես
վշտացրեց Բարենորոգման
կողմնակիցներին ամբողջ
Ֆրանսիայում: Բայց նրա
օրինակը [219] իզուր չեղավ:
«Մենք ևս սիրով կդիմավորենք
մահը,— ասացին
ճշմարտության վկաները,— մեր
հայացքները սևեռելով ապագա
կյանքի վրա» (Դ՛Օբինյե,
Բարենորոգման պատմությունը
Եվրոպայում Կալվինի
ժամանակ, հ. 2, գլ. 16):

Մոյի հալածանքների ժամանակ
բարենորոգված հավատի
ուսուցիչ-ները զրկվեցին

քարոզելու իրավունքից և
հեռացան այլ վայրեր: Լեֆևրը
որոշ ժամանակ անց մեկնեց
Գերմանիա: Ֆարելը
վերադարձավ իր հարազատ
քաղաքը Ֆրանսիայի
արևելքում՝ լույսը տարածելու
այնտեղ, ուր անցել էր իր
մանկութունը: Մոյուն տեղի
ունեցող դեպքերի լուրերն
արդեն հասել էին այդտեղ, և
ճշմարտութունը, որը նա
անվեհերաբար քարոզում էր,
ունկնդիրներ գտավ: Շուտով
իշխանութունները ոտքի ելան՝
լռեցնելու նրան, և նա վտարվեց
քաղաքից: Չկարողանալով

այլևս ազատ գործել՝ նա
ճամփորդում էր
հարթավայրերով ու գյուղերով՝
քարոզելով մասնավոր տներում
և մեկուսի
մարգագետիններում՝
ապաստարան գտնելով
անտառներում ու
քարայրներում, ուր հաճախ
եղել էր պատանի ժամանակ:
Աստված նրան պատրաստում
էր ավելի մեծ փորձությունների:
«Խաչը, հալածանքն ու
սատանայի դավերը, ինչի
մասին ինձ նախազգուշացրել
էին, անպակաս են ինձանից,—
ասել է նա,— դրանք նույնիսկ

շատ ավելի զարհուրելի են,
քան ես կարող եմ դիմանալ:
Բայց Աստված իմ Չայրն է, և Նա
ինձ միշտ տվել է ու կտա այն
ուժը, որ ես խնդրում եմ»
(Դ՛Օբիևյե, Տասնվեցերորդ
դարի Բարենորոգման
պատմությունը, հ.12, գլ.9):

Ինչպես առաքյալների օրերում,
հալածանքն «ավելի շուտ
Ավե-տարանի
առաջադիմության համար
հաջողվեց» (Փիլպպեցիս 1.12):
Վտարված Փարիզից և Մոյից՝
«ցրվածները ման էին գալիս՝
խոսքն ավետարանելով»

(Գործք 8.4): Եվ այսպես լույսը
ներթափանցեց Ֆրանսիայի
հեռավոր գավառները:

Աստված շարունակում էր
գործիչներ պատրաստել իր
գործի առաջընթացի համար:
Փարիզի դպրոցներից մեկում
սովորում էր մի խոհուն,
հանդարտ պատանի, ով արդեն
աչքի էր ընկել իր հզոր ու
խորաթափանց մտքով, ում
անարատ կյանքը նկատելի էր
ոչ պակաս, քան նրա մտավոր
եռանդն ու կրոնական
նվիրվածությունը: Նրա
հանճարն ու ջանասիրությունը

շուտով նրան դարձրին քուէջի
հպարտութիւնը, և շատերը
վատահորէն սպասում էին, որ
Ժան Կալվինը կդառնա [220]
եկեղեցու ամենաուսակ ու
ամենահարգված
պաշտպաններից մեկը:
Սակայն աստվածային լույսի
շողը ներթափանցեց նույնիսկ
գիտափիլիսոփայութեան ու
սնահավատութեան միջով,
որոնցով շրջապատված էր
Կալվինը: Նա ցնցվեց՝ լսելով
նոր ուսմունքի մասին՝
չկասկածելով անգամ, որ
հերետիկոսներն արժանի են
խարույկի: Սակայն, բոլորովին

անսպասելիորեն, նա
դեմառդեմ հանդիպեց
հերձվածողությանը և
ստիպված եղավ փորձել
կաթոլիկ աստվածաբանության
ուժը՝ պայքարելու բողոքական
ուսմունքի դեմ:

Կալվինի ազգականներից մեկը,
ով հարել էր Բարենորոգմանը,
գտնվում էր Փարիզում: Երկու
բարեկամները հաճախ
հանդիպում էին և միասին
քննարկում հարցեր, որ հուզել
էին քրիստոնեական ողջ
աշխարհը: «Աշխարհում կա
միայն երկու կրոն»,— ասում էր

բողոքական Օլիվետանը:
«Մեկը մարդկանց հորինած
կրոնների համակարգն է, որով
մարդը փորձում է իրեն փրկել
ձեսերով ու բարի գործերով,
մյուսն այն միակ կրոնն է, որը
բացահայտված է Սուրբ Գրքում,
և որը մարդուն սովորեցնում է,
որ փրկութունը բացառապես
Աստծո ձրի պարզնն է»:

«Ես չեմ ընդունի քո նոր
ուսմունքի և ոչ մի կետ,—
բացականչեց Կալվինը,—
կարծում ես, թե ես սխալ եմ
ասրել ամբողջ կյանքում»
(Ուայլի, հ.13, գլ.7):

Բայց մտքերը հանգիստ չէին
տալիս նրան, և նա անզոր էր իր
կամքով ազատվելու դրանցից:
Փակվելով իր
առանձնասենյակում՝ նա
վերլուծում էր իր ազգականի
խոսքերը: Նա սկսեց գիտակցել
իր մեղավորությունը, և
հանկարծ տեսավ իրեն սուրբ և
արդար Դատավորի առջև՝
առանց բարեխոսի: Սրբերի
միջնորդությունը, բարի
գործերը, եկեղեցու ծեսերը՝
բոլորն անզոր էին քավելու
մեղքը: Առջևում, հավերժական
հոլ-սահաստության խավարից

բացի, նա ոչինչ չէր տեսնում:
Չուր էին ջանում եկեղեցու
ասավաճաբանները թեթևացնել
նրա վիշտը:

Խոստովանու-թյունն ու
ապաշխարանքը անօգուտ
եղան, դրանք չէին կարող
հաշտեց- նել հոգին Աստծո
հետ:

Շարունակելով այս անպտուղ
պայքարը՝ Կալվինը մի օր
անսպասելիորեն հայտնվեց
քաղաքի հրապարակներից
մեկում, որտեղ ականատես
եղավ հերետիկոսի այրմանը:
Նա ցնցվեց՝ տեսնելով

Նահատակի դէմքի խաղաղ
արտահայտութիւնը: Այդ
զարհուրելի մահվան
տանջանքների մեջ և եկեղեցու
էլ ավելի սուկալի
դատապարտութեան ներքո նա
[221] դրսևորեց հավատ և
արիութիւն, որոնց
հակադրութիւնն իր
վհատութեանն ու խավարին
խիստ ցավալի էր երիտասարդ
ուսանողի համար, թեև նա
խստորեն հնազանդվում էր
եկեղեցուն: Կալվինը գիտեր, որ
հերետիկոսներն իրենց
հավատը հիմնում են
Աստվածաշնչի վրա, և որոշեց

ուսումնասիրել այն ու
հայտնաբերել, եթե կարողանա,
Նրանց ուրախության
գաղտնիքը:

Աստվածաշնչում նա գտավ
Քրիստոսին: «Ո՛վ Յայր,— գոչեց
Նա,— Նրա զոհը մեղմացրեց Քո
զայրույթը, Նրա արյունը լվաց
իմ ան-մաքրությունները, Նրա
խաչը կրեց իմ անեծքը, Նրա
մահը քավեց իմ մեղքը: Մենք
մեզ համար բազմաթիվ
անօգուտ հիմարություններ ենք
հո-րինել, բայց դու Քո խոսքը
ջահի պես դրիր իմ առջև և
դիպար իմ սրտին, որպեսզի ես,

բացի Յիսուսի արժանիքներից,
բոլոր մյուսները նողկանք
համարեմ» (Մարտին, հ. 3, գլ.
13):

Կալվինը կրթություն էր ստացել
քահանայության համար: Դեռ
տասներկու տարեկանում նա
կապելան նշանակվեց մի
փոքրիկ եկեղեցում, և
եպիսկոպոսը խուզեց նրա
մազերը՝ եկեղեցու կարգի
համա-ձայն: Նա չէր
նվիրաբերվել, ոչ էլ քահանայի
պարտականությունն էր
կատարում, բայց արդեն
դարձել էր կղերականության

անդամ՝ կրելով իր պաշտոնի
տիտղոսը և դրա դիմաց
աշխատավարձ ստանալով:

Բայց հիմա, զգալով, որ երբեք
չի վճռի քահանա դառնալ, նա
միառժամանակ սկսեց
իրավագիտություն
ուսումնասիրել, բայց ի վերջո
հրաժարվեց դրանից և որոշեց
իր կյանքը նվիրել
Ավետարանին: Սակայն նա դեռ
չէր համարձակվում հանրային
ուսուցիչ դառնալ, քանզի
բնա-վորությամբ երկչոտ էր ու
վախենում էր այդ պաշտոնի
պատասխանատվության

ծանրությունից: Եվ նա որոշեց
կրկին նվիրվել գիտական
հետազոտություններին: Բայց
ընկերների համառ
խնդրանքներն ի վերջո
շահեցին նրա
համաձայնությունը:
«Չարմանալի է,— ասել է նա,—
որ այսքան ցածր ծագումով
մեկը նման մեծ պատվի
արժանանա» (Ուայլի. հ.13, գլ.
9):

Կալվինը հանգիստ իր
աշխատանքին անցավ, և նրա
խոսքերն ասես ցող լինեին, որ
թարմացնում են հողը: Նա լքել

Էր Փարիզը, և հիմա գտնվում էր
գավառական մի քաղաքում՝
Մարգարետ արքայադստեր
պաշտպանության ներքո, ով,
ինքն էլ սիրելով Ավետարանը,
պաշտպանում էր դրա
աշակերտներին: Կալվինը դեռ
երիտասարդ էր՝ [222] ազնիվ ու
համեստ պահվածքով: Նա իր
գործը մարդկանց հետ սկսեց
Նրանց տներում: Ընտանիքի
անդամներով շրջապատված՝
Նա կարդում էր Սուրբ Գիրքը և
բացատրում փրկության
ճշմարտությունները: Լսողները
բարի լուրը փոխանցում էին
ուրիշներին, և շուտով ուսուցիչը

քաղաքից անցավ շրջակա
գյուղերն ու ավանները: Նրան
ողջունում էին թե՛ ամրոցում,
թե՛ խրճիթում, և նա
հաստատորեն առաջ գնաց՝
հիմնադրելով եկեղեցիներ,
որոնք պիտի ճշմարտության
անվեհեր վկաները լինեին:

Մի քանի ամիս անց Կալվինը
Նորից Փարիզում էր:
Գիտնականների շրջանում
անսովոր հուզում էր տիրում:
Չին լեզուների
ուսումնասիրու-թյան միջոցով
մարդիկ ծանոթացել էին
Աստվածաշնչին, և շատերը, ում

սրտերին նրա
ճշմարտությունները չէին
դիպել, եռանդագին քննարկում
էին դրանք և անգամ
վիճաբանում պապական
առաջնորդների հետ: Կալվինը,
թեև վարպետ էր
աստվածաբանական
բանավեճերի ոլորտում, ավելի
բարձր առաքելություն ուներ
իրականացնելու, քան այդ
աղմկոտ դասախոսները:
Մարդկանց միտքը արթնացել
էր, և հիմա ժամանակն էր՝
նրանց հայտնելու
ճշմարտությունը: Մինչ
համալսարանների

դահլիճներում աղմկալից
աստվածաբանական
բանավեճեր էին ընթանում,
Կալվինը տնից տուն էր գնում՝
մարդկանց բացատրելով
Աստվածաշունչը և պատմելով
Նրանց խաչյալ Քրիստոսի
մասին:

Աստծո նախախնամությամբ
Փարիզը պետք է մեկ այլ
հրավեր ստա-նար՝ ընդունելու
Ավետարանը: Լեֆևրի և Տարելի
կոչերը մերժվել էին, բայց լուրը
պետք է նորից հռչակվեր այդ
մեծ մայրաքաղաքի բոլոր
խավերին: Քաղաքական

Նկատառումներից դրդված՝
թագավորը դեռ լիովին չէր
անցել Յոնի կողմը
Բարենորոգման դեմ
պայքարում: Մարգարետը դեռ
հույս ուներ, որ
բողոքականությունը կհաղթի
Տրանսիայում: Նա վճռեց, որ
բարենորոգված հավատը պիտի
քարոզվի Փարիզում:
Թագավորի բացակայությամբ
Նա կարգադրեց բողոքական մի
ծառայողի քարոզել քաղաքի
եկեղեցիներում: Երբ
պապական պաշտոնյաներն
արգելեցին այդ անել,
արքայադուստրը տրամադրեց

պալատը: Սրահներից մեկը
առանձնացրին որպես եկեղեցի՝
հայտարարելով, որ ամեն օր,
որոշակի ժամի այդտեղ քարոզ
է լինելու, և բոլորը, անկախ
բնակավայրից ու խավից,
հրավիրվում են մասնակցելու:
[223]

Ծառայությանը հավաքվում էին
ամբոխներով: Լեփ-լեցուն էին
լինում ոչ միայն եկեղեցին, այլև
դրան կից սրահներն ու
դահլիճները: Ամեն օր
հավաքվում էին հազարավոր
մարդիկ՝ ազնվականներ,
պետական այրեր,

իրավաբաններ,
վաճառականներ ու
արհեստավորներ: Այդ
ժողովներն արգելելու
փոխարեն՝ թագավորը
կարգադրեց, որ Փարիզում
բացվի ևս երկու եկեղեցի:
Քաղաքը երբեք այսպես չէր
ալոկոծվել Աստծո խոսքից:
Թվում էր, թե երկնքից
մարդկանց վրա կյանքի շունչ է
իջնում: Հարբեցողությունը,
սանձարձակությունը, կռիվներն
ու ծուլությունը իրենց տեղը
զիջում էին զսպվածությանը,
սրբությանը, կարգուկանոնին
ու աշխատասիրությանը:

Սակայն հոգևորականությունը
քնած չէր: Թագավորը դեռ
հրա-ժարվում էր միջամտել՝
դադարեցնելու քարոզները, և
պապականները դիմեցին
ժողովրդին: Ոչ մի միջոց չէր
խնայվում տգետ և սնահավատ
ամբոխի վախը,
նախապաշարումներն ու
մոլեռանդությունը գրգռելու
համար: Կուրորեն զիջելով իր
կեղծ ուսուցիչներին՝ Փարիզը,
հին երուսաղեմի նման,
չիմացավ իր այցելության
ժամանակը և այն, ինչ
կնպաստեր իր

Խաղաղությանը: Երկու տարի
Աստծո խոսքը քարոզվեց
մայրաքաղաքում, բայց մինչ
շատերն ընդունեցին
Ավետարանը, ժողովրդի
մեծամասնությունը մերժեց
այն: Տրանցիսկը միայն
արտաքուստ էր
հանդուրժողական, այն էլ
որոշակի նպատակով, և
պապականներին հաջողվեց
վերագտնել իրենց
հեղինակությունը:
Եկեղեցիները դարձյալ
փակվեցին, նորից բորբոքվեց
խարույկը:

Կալվինը դեռ Փարիզում էր.
Ծանրաբեռնված
ուսումնասիրությամբ,
մտորումներով ու աղոթքով՝ նա
պատրաստվում էր իր ապագա
գործունեությանը՝
շարունակելով տարածել լույսը:
Սակայն, ի վերջո, նա կասկածի
տակ ընկավ:
Իշխանությունները վճռեցին
կրակի մատնել նրան:
Համարելով, որ ապահով է իր
մենության մեջ, նա չէր
մտածում վտանգի մասին, երբ
մի օր ընկերները շտապ ներս
մտան նրա սենյակ և
հայտնեցին, որ ոստիկանները

գալիս են նրան ձերբակալելու:
Նույն պահին դրսի դուռը
ուժգնորեն թակեցին: Ոչ մի
ակնթարթ չէր կարելի կորցնել:
Մինչ ընկերներից մի քանիսը
ոստիկաններին ուշացրին դռան
մոտ, մյուսներն օգնեցին
բարենորոգչին պատուհանից
ցած իջնել, և նա արագորեն
անհետացավ քաղաքի
արվարձաններում:
Պատսպարվելով մի
արհեստավորի տնակում, ով
Բարենորոգման կողմնակից էր,
նա հագավ տանտիրոջ
հագուստը և [224] թոխրը
դնելով ուսին՝ ճանապարհ

ընկավ: Ուղևորվելով դեպի
հարավ՝ նա դարձյալ
ապաստարան գտավ
Մարգարետի կալվածքներում
(Տես Դ՛Օբինյե, Բարենորոգման
պատմությունը Եվրոպայամ
Կալվինի ժամանակ, հ. 2, գլ.
30):

Այստեղ նա մնաց մի քանի
ամիս՝ ապահով ու
պաշտպանված զո-րեղ
ընկերների կողմից, և առաջվա
պես նվիրվեց
ուսումնասիրությանը: Բայց նա
տենչում էր բարի լուրը
հասցնել ողջ Ֆրանսիային և չէր

Կարող երկար անգործ մնալ:
Յենց որ փոթորիկը փոքր-ինչ
մեղմացավ, նա
գործունեության նոր դաշտ
գտավ Պուատյեում, որտեղ կար
համալսարան, և որտեղ նոր
գաղափարներն արդեն
ընդունվել էին
բարեհաճությամբ: Բոլոր
խավերի ներկայացուցիչներն
ուրախությամբ լսում էին բարի
լուրը: Յրապարակային
քարոզչությունն չկար, բայց
գլխավոր դատավորի տանը, իր
իսկ բնակարանում և երբեմն էլ
որևէ զբոսայգում Կալվինը
հայտնում էր հավիտենական

կյանքի խոսքերը բոլորին,
ովքեր կամենում էին լսել: Որոշ
ժամանակ անց, երբ
ուսկնդիրների թիվն
ավելացավ, մտածեցին, որ
ավելի անվտանգ է հավաքվել
քաղաքից դուրս: Մի քարայր՝
խոր ու նեղ կիրճի լանջին, որը
կատարելապես քողարկված էր
ծառերի և կախվող ժայռերի
մեջ, ընտրվեց որպես
հավաքատեղի: Այստեղ գալիս
էին փոքր խմբերով՝ լքելով
քաղաքը տարբեր ուղիներով:
Այս մեկուսի վայրում
Աստվածաշունչը բարձրաձայն
ընթերցվում և բացատրվում էր:

Տրանսսիայի բողոքականներն
առաջին անգամ այստեղ են
նշել Տիրոջ Ընթրիքը: Այս
փոքրիկ եկեղեցին մի քանի
հավատարիմ ավետարանիչներ
է տվել:

Կալվինը դարձյալ
վերադարձավ Փարիզ: Նրան ոչ
մի կերպ չէր լքում այն հույսը,
որ Տրանսսիան ազգովին
կընդունի Բարենորոգումը:
Բայց նա փակ գտավ գրեթե
բոլոր դռները: Քարոզել
Ավետարանը՝ կնշանակեր գնալ
ուղիղ դեպի խարույկ, և նա ի
վերջո որոշեց մեկնել

Գերմանիա: Յագիվ Էր Նա Լքել
Ֆրանսիան, երբ
բողոքականների գլխին ճայթեց
մի փոթորիկ, որն
անխուսափելիորեն բուրրի հետ
նրան էլ կկործաներ, եթե Նա
մնար:

Ֆրանսիացի բարենորոգիչները,
ջանալով տեսնել, որ իրենց
երկիրը հետ չի մտում
Գերմանիայից ու
Շվեյցարիայից, վճռեցին Յռոմի
Նախապաշարումներին մի
այնպիսի հանդուգն հարված
հասցնել, որը կարթնացներ ողջ
ազգը: Մի գիշերվա մեջ

կաթոփկներփի պատարագը
քննադատող պատարառներ [225]
փակցվեցին ողջ Տրանսիայով
մեկ: Սա-կայն Բարենորոգմանը
նպաստելու փոխարեն՝ այս
նախանձախնդիր, բայց
անխոհեմ շարժումը կորուստ
բերեց ոչ միայն իր
ջատագովներին, այլև
Բարենորոգման բոլոր
բարեկամներին ամբողջ
Տրանսիայում: Դա հենց այն էր,
ինչ պապականները երկար
փափագել էին. պատրվակ, որը
կպահանջեր հերետիկոսների
լիակատար ոչնչացումը՝ որպես
գահի կայունության և ազգի

Խաղաղության վտանգավոր
թշնամիների:

Անհայտ մի ձեռք՝
Բարենորոգման անխոհեմ
բարեկամի, թե նենգա-
վոր թշնամու, այդպես էլ անհայտ
մնաց, պաստառներից մեկը
փակցրել էր թագավորի
առանձնասենյակի դռանը:
Միապետը սարսափով լցվեց:
Այդ պաստառի վրա անխնա
հարված էր հասցված դարերով
մեծարված
Նախապաշարումների: Եվ այդ
հստակ ու ցնցող խոսքերը
թագավորի աչքերի առաջ

Ներկայացնելու անօրինակ
հանդգնությունը բորբոքեց նրա
զայրույթը: Չարմանքից
ցնցված՝ նա լուռ կանգնած
դողում էր: Բայց քիչ հետո նրա
ցատումն արտահայտվեց
զարհուրելի խոսքերով. «Թող
անխտիր բռնեն ամենքին, ում
կասկածում են Լյութերի
հերձվածողության մեջ: Ես
նրանց բոլորին վերջ կտամ»
(Նույն տեղում, հ. 4, գլ. 10):
Վճիռը կայացված էր:
Թագավորը որոշեց վերջնական
կերպով անցնել Յոնի կողմը:

Անհապաղ միջոցներ
ձեռնարկվեցին՝ ձերբակալելու
Փարիզի բոլոր
լուսթերականներին:
Բարենորոգված հավաստի
կողմնակից մի խեղճ
արհեստավորի, ով նշանակված
էր կանչելու
հավատացյալներին իրենց
գաղտնի ժողովներին, բռնեցին,
և սպառնալով անմիջապես ցցի
վրա նրան կրակին տալ
հրամայեցին պապական
գործակալին ցույց տալ բոլոր
բողոքականների տները: Նա
զարհուրանքով մերժեց այդ
ստոր առաջարկը, բայց ի վերջո

բոցերի մեջ մեռնելու վախը
հաղթեց, և նա համաձայնեց
դառնալ իր եղբայրների
մատնիչը: Ամբոխի
ուղեկցութեամբ և
քահանաների, խուկ
կրողների, վանականների և
զինվորների թափորով
շրջապատված՝ Մորինը՝
թագավորական խուզարկուն,
մատնիչի հետ միասին դանդաղ
ու անխոս անցավ քաղաքի
փողոցներով: Այս երթը
կազմակերպվել էր իբր թե
«սրբազան խորհրդի» սրտովին՝
որպես քավութուն
բողոքականների կողմից

պատարագին հասցված
վիրավորանքների դիմաց:
Սակայն այս շքեղ
արարողության հետևում
մահացու ծրագիր էր [226]
թաքնված: Հասնելով որևէ
ընթացակետի տա-նը՝
մատնիչը նշան էր անում՝
առանց խոսք ասելու: Թավուրը
կանգ էր առնում, ներխուժում
էին տուն, ամբողջ ընտանիքին
դուրս էին քաշում ու
շղթաներով կապում, և սուկալի
երթը առաջ էր շարժվում՝ նոր
գոհեր որոնելու: «Ոչ մի տուն
բաց չէին թողում՝ մեծ, թե
փոքր, նույնիսկ Փարիզի

համալսարանի քոլեջները... Ողջ
քաղաքը դողում էր Մորիսի
առաջ... Եկել էր սարսափի
իշխանությունը» (Նույն
տեղում, հ. 4, գլ. 10):

Չոհերին դաժանաբար
տանջամահ էին անում՝
հատուկ հրամանով կրակը
թուլացնելով, որպեսզի
երկարացնեն նրանց
հոգեվարքը: Բայց նրանք
մեռնում էին որպես
հաղթողներ: Նրանց հավատն
անկոտրում էր, նրանց
խաղաղությունն՝ անխռով:
Անզոր լինելով սասանել նրանց

աներեր վճռականութիւնը՝
հալածիչներն իրենց պարտված
էին զգում: «Փա-
րիզի բոլոր
թաղամասերում
կառափնարաններ էին
կանգնեցվել, և ամեն օր
խարույկներ էին վառվում՝
սարսափ ներշնչելով
հերետիկոսութեան նկատմամբ:
Բայց առավելութիւնը, վերջին
հաշվով, Ավետարանի կողմն
էր: Ողջ Փարիզը
հնարավորութիւն ունեցավ
տեսնելու, թե ինչ մարդիկ են
ծնում նոր գաղափարները:
Լավագույն ամբիոնը
նահատակի ցիցն էր: Անխռով

ուրախությունը, որ փայլում էր
այդ մարդկանց դեմքին, երբ
գալիս էին ...մահապատժի
վայրը, նրանց հերոսությունը,
երբ այրվում էին կատաղի
բոցերի մեջ, անարգանքի մեջ
նրանց հեզ ներողամտությունը
հաճախ բարկությունը
վերածում էին
խղճահարության,
ատելությունը՝ սիրո, և
անդիմադրելի
պերճախոսությամբ խոսում էին
ավետարանի օգտին» (Ուայլի,
հ.13, գլ. 20):

Քահանաները, ջանալով
գագաթնակետին հասցնել
հասարակության զայրույթը,
սարսափելի մեղադրանքներ
էին տարածում
բողոքականների դեմ: Նրանց
մեղադրում էին կաթոլիկներին
կոտորելու, կառավարությունը
տապալելու և թագավորին
սպանելու դավադրության մեջ:
Բայց այդ պնդումները
հիմնավորող ապացույցի
ստվեր անգամ չկար: Այս չար
գուշակությունները, սակայն,
պետք է իրականացվեին, բայց
միանգամայն այլ
պարագաներում և եռթյամբ

հակադիր պատճառներով:
Անմեղ բողոքականների
հանդեպ կաթոլիկների
դաժանուլթյունները
կուտակվեցին, որպեսզի
հատուցում ստանան՝ գալիք
դարերում իրականացնելու
հենց այն դատաստանը, որն
ըստ նրանց
կանխատեսումների՝ վրա էր
հասնելու թագավորին, նրա
կառավարու-թյանն ու նրա
[227] հպատակներին: Բայց դա
իրականացրին հենց իրենք՝
պապականներն ու
անհավատները:
Բողոքականուլթյան ճնշումն էր,

ոչ թե դրա հիմնադրումը, որ
երեք հարյուր տարի անց
Ֆրանսիայի վրա պիտի բերեր
այդ սարսափելի աղետները:

Հասարակութեան բոլոր
խավերում հիմա կասկածանք,
անվստահութիւն ու սարսափ
եր տիրում: Համընդհանուր
տագնապի մեջ երևաց, թե
Լյութերի ուսմունքը որքան
խորն արմատներ է գցել
ամենատուայալ, ամենաազդեցիկ
և բնավորութեամբ
ամենազերազանց մարդկանց
մտքե-րում: Պատասխանատու
և պատվավոր պաշտոնները

հանկարծ թափուր գտնվեցին:
Չքացել էին արհեստավորներ,
տպագրողներ, գիտնականներ,
համալսարանների
դասախոսներ, գրողներ և
նույնիսկ պալատականներ:
Չարյուրավոր մարդիկ փախել
էին Փարիզից՝ իրենց
աքսորելով հայրենի երկրից՝
շատ դեպքերում դրանով իրենց
համակրանքի առաջին նշանը
ցույց տալով բարեփոխված
հավատի հանդեպ:
Պապականներն իրենց շուրջն
էին նայում՝ զարմացած այն
մտքից, որ առանց կասկածելու՝
այդքան հերետիկոսների են

հանդուրժել իրենց մեջ: Նրանց
ցասումը բորբոքվեց այն
բազմաթիվ խեղճ զոհերի վրա,
ովքեր իրենց իշխանության
տակ էին: Բանտերում տեղ
չկար, օղն անգամ կարծես
խավարած էր ավետարանի
հետևորդների համար վառված
խարույկների ծխից:

Ֆրանցիսկ I-ը պարծեցել էր, որ
ինքն է առաջնորդել գիտության
վերածննդի այն մեծ շարժումը,
որով նշանավորվել էր
տասնվեցերորդ դարի սկիզբը:
Նա հաճույքով իր պալատում
հավաքում էր

գիտնա-կաններին աշխարհի
տարբեր երկրներից:
Գիտութեան հաղթա նրա սիրով
ու քահանաների տգիտութեան
ու սնահավատութեան հանդեպ
նրա նողկանքով էր մասամբ
պայմանավորված
Բարենորոգմանը ցույց տրված
որոշ
հանդուրժողականութիւնը:
Սակայն, հերձվածողութեանը
վերջ դնելու տենդով
համակված՝ լուսավորութեան
այս հովանավորը հրաման
արձակեց, ըստ որի
տպագրութիւնն արգելվում էր
ամբողջ Ֆրանսիայում:

Ֆրանցիսկո I-ի օրինակը, որ
մեկն է բազմաթիվ գրառված
օրինակներից, ցույց է տալիս,
որ մտավոր զարգացումը
երաշխիք չէ կրոնական
անհանդուրժողականության և
հալածանքի դեմ:

Չանդիսավոր ու
հրապարակային մի
արարողությամբ Ֆրանսիան
պիտի իրեն լիովին նվիրաբերեր
Բողոքականության
կործանմանը: Քա-հանաները
պահանջեցին, որ պատարագն
անարգելու պատճառով
երկնքին հասցված

վիրավորանքը քավվի
արյունով, և որ թագավորը
ժողովրդի անունից
հրապարակավ իր
հավանությունը տա այդ
զարհուլ-րելի գործին: [228]

Այդ հրեշավոր արարողությունը
որոշվեց անցկացնել 1535
թվականի հունվարի 21-ին: Ողջ
ազգի սնահավատ վախ՛ն ու
մոլեռանդ ատելությունը հասել
էր գագաթնակետին: Փարիզի
փողոցները լեփ-լեցուն էին
երկրի բոլոր կողմերից
հավաքված ամբոխներով: Օրը
պիտի սկսվեր վիթխարի և

տպավորիչ երթով: «Սգո
կտավներ էին կախված տների
վրա, որոնց կողքով պիտի
անցներ թափորը, իսկ դրանց
միջև զոհասեղաններ էին
կանգնեցված»: Ամեն դռան
առջև ջահ էր վառվում՝ ի
պատիվ «սուրբ խորհրդի»:
Երթը սկսվեց նախքան
արշալույսը, թագավորի
պալատից: «Առաջինը
շարժվեցին որոշ եկեղեցիների
ներկայացուցիչներ՝ իրենց
դրոշներով ու խաչերով, հետո
երևացին զույգերով քայլող
քաղաքացիներ՝ վառվող
ջահերը ձեռքներին»: Նրանց

հետևում էին վանականներ
չորս միաբանություններից՝
յուրաքանչյուրն իր հատուկ
հագուստով: Նրանց հետևից
տանում էին մասունքների
հսկայական հավաքածու:
Չաջորդը կառքերով գնացող
հպարտ հոգևորականներն էին՝
ոսկեգույն ու ալ հանդերձներով
և թանկարժեք զարդերով՝ շքեղ
ու շողշողուն մի շարք:

«Թափորը գլխավորում էր
Փարիզի եպիսկոպոսը, որի
գլխավերևում չորս
ազնվականներ մի սքանչելի
ամպիոլանի էին պահում...

Բազմու-թյան ետևից քայլում էր
թագավորը... Այդ օրը
Ֆրանցիսկ I-ը ո՛չ թագ էր կրում,
ո՛չ էլ արքայական հանդերձ»:
«Գլխաբաց, աչքերը գետնին
հառած և վառվող մոմը
ձեռքին»՝ Ֆրանսիայի
թագավորն «ապաշխարողի
տեսք ուներ» (Նույն տեղում
հ.13, գլ. 21): Ամեն մի
գոհասեղանի առաջ նա
նսեմաբար խոնարհվում էր,
բայց ոչ թե իր հոգին պղծող
արատների կամ իր թափած
անմեղների արյան համար, այլ
իր հպատակների մահացու
մեղքի, ռո հանդգնել էին

անարգել պատարագը: Նրա
հետևից քայլում էին թագուհին
և պետական գործիչները՝
նույնպես զույգ-զույգ և ամեն
մեկի ձեռքին՝ վառվող ջահ:

Որպես օրվա ծառայության
մաս՝ միապետն ինքը դիմեց իր
տիրու-թյան բարձրաստիճան
պաշտոնյաներին եպիսկոպոսի
պալատի մեծ սրահում: Նա
հայտնվեց նրանց առջև
թախճոտ դեմքով և հուզիչ
պեր-ճախոսությամբ ողբաց
«այն հանցանքը,
հայհոյությունը և վշտի ու
անարգանքի օրը», որ վրա էր

հասել ազգին: Եվ նա կոչ արեց
իր բոլոր հավատարիմ
հպատակներին օգնել՝ իսպառ
արմատախիլ անելու մա-հաբեր
հերձվածողաթյունը, որ
սպառնում էր կործանել
Ֆրանսիան: «Պարոնայք,
որքան ստույգ է այն, որ ես ձեր
թագավորն եմ,— ասաց նա,—
նույնքան էլ հաստատ է, որ եթե
ես իմանայի, թե այս նողկալի
վարակը դիպչելու է իմ
վերջույթներից մեկին, ես այն
ձեզ կտայի կտրելու... Ավելին,
եթե տեսնեի, որ իմ
զավակներից մեկը պղծվել է
դրանով, ես նրան չէի խնայի...

Ես ինքս կմատնեի նրան և
կզոհաբերեի Աստծուն»:
Արցունքները խեղդեցին նրա
խոսքը, և բոլոր ներկաներն
արտասվեցին՝ միաձայն
բացականչելով. «Մենք պիտի
ապրենք և մեռնենք կաթոլիկ
կրոնի համար» (Դ՝Օբինյե,
Բարենորոգման պատմությունը
Եվրոպայում Կալվինի
ժամանակ, հ. 4, գլ.12):

Ակնակույր խավարը պատեց
ժողովրդին, որը մերժել էր
ճշմարտու-թյան լույսը:
Հայտնվել էր «փրկարար
շնորհը», բայց Ֆրանսիան, դրա

ուժն ու սրբությունը տեսնելուց
հետո, երբ հազարավորները
գերվել էին դրա աստվածային
գեղեցկությամբ, երբ
քաղաքներն ու գյուղերը
լուսավորվել էին դրա շողերով,
երես էր թեքել՝ խավարը
նախընտրելով լույսից: Նրանք
մերժեցին իրենց առաջարկված
երկնային պարգևը: Նրանք
չարն անվանեցին բարի, իսկ
բարին՝ չար, մինչև որ զոհ
գնացին իրենց իսկ կամավոր
ինքնախաբեությանը: Յիմա,
թեև նրանք իրոք կարող էին
հավատալ, որ Աստծուն
ծառայություն են մատուցում՝

հալածելով Նրա ժողովրդին,
այդ անկեղծությունը նրանց
անմեղ չէր դարձնում: Նրանք
հոժարակամ մերժել էին լույսը,
որն իրենց կփրկեր
խաբեությունից և իրենց հոգին
արյունով պղծելուց:

Չերձվածողությունն
արմատախիլ անելու
հանդիսավոր երդում տրվեց
մեծ տաճարում, որտեղ, գրեթե
երեք հարյուր տարի անց,
«բա-նականության
աստվածուհին» պիտի գահ
բարձրացվեր մի ազգի կողմից,
որը մոռացել էր կենդանի

Աստճուն: Կրկին երթ
կազմակերպվեց, և Ֆրանսիայի
ներկայացուցիչները
պատրաստվեցին սկսել այն
գործը, որը երդվել էին
կատարել: «Իրարից քիչ հեռու
ցցեր կանգնեցրին, որոնց վրա
պիտի կենդանի այրեին մի
քանի բողոքական
քրիստոնյաների, և
կարգադրվեց, որ խարույկները
վառվեն հենց այն պահին, երբ
թագավորը մոտենա, և որ
թափորը կանգ առնի՝ տեսնելու
մահապատիժը» (Ուայլի, հ.13,
գլ. 21): Քրիստոսի այս վկաների
տանջանքների մանրամասները

չափազանց սրտաճմլիկ են
նկարագրելու համար, կարելի է
միայն ասել, որ զոհերն աներեր
մնացին: Երբ համոզում էին
ուրանալ, նրանցից մեկն ասաց.
«Ես միայն նրան եմ հավատում,
ինչ անցյալում քարոզել են
մարգարեներն ու
առաքյալները, և ինչին [230]
հավատացել են բոլոր սրբերը:
Իմ հավատը, որով ապավինում
եմ Աստծուն, կոփմակայի
դժոխքի բոլոր ուժերին»
(Դ՛Օբինյե, Բարենորոգման
պատմությունը Եվրոպայում
Կալվինի ժամանակ, հ. 4, գլ.12):

Կրկին ու կրկին թափորը կանգ
էր առնում՝ դիտելու
Նահատակների կտտանքները:
Վերադառնալով արքայական
պալատ, որտեղից շարժվել էին,
ամբոխը ցրվեց, թագավորն ու
պրելատները հեռացան՝ գոհ ու
բավարարված օրվա
իրադարձություններով և
շնորհավորելով իրար, որ
սկսված գործը շարունակվելու
էր մինչև հերձվածողության
լիակատար ոչնչացումը:

Խաղաղության Ավետարանը,
որը Ֆրանսիան մերժել էր,
հաստատապես արմատախիլ

Էր արվելու, բայց
հետևանքներն ահավոր էին
լի-նելու: 1793-ի հունվարի
21-ին՝ երկու հարյուր հիսունութ
տարի անց հենց այն օրից, որ
Ֆրանսիան որոշեց հալածել
բարենորոգիչներին, մեկ այլ
թափոր, բայց բոլորովին այլ
նպատակով, անցավ Փարիզի
փողոցներով: «Գլխավոր դեմքը
կրկին թագավորն էր, նորից
իրարանցում և աղմուկ էր
տիրում, կրկին նոր զոհեր
պահանջող աղաղակներ էին
լսվում, նորից երևացին սև
կառափնարանները, և օրվա
դեպքերը նորից ավարտվեցին

սոսկալի մահապատիժներով:
Լուի XVI—ին, ով
հոսահատությամբ պայքարում
էր իր բանտապահների և
դահիճների դեմ, քարշ տալով
հասցրին մինչև
կառափնատեղի և բռնի ուժով
կռացրին, մինչև որ կա-
ցինը
վայր ընկավ, և նրա գլուխը
գլորվեց կառափնարանի վրա»
(Ուայլի, հ.13, գլ. 21): Եվ
թագավորը միակ գոհը չէր:
Գրեթե նույն տեղում երկու
հազար ութ հարյուր մարդիկ
գլխատվեցին Սարսափի
Իշխանության արյունալի
օրերին:

Բարենորոգումն աշխարհին
ներկայացրեց բաց
Աստվածաշունչը՝ հայտնելով
Աստծո օրենքի
պատվիրանները և դրա
պահանջները դրոշմելով
ժողովրդի խղճի վրա:
Անսահման Սերը մարդկանց
հայտնեց երկնքի օրենքներն ու
սկզբունքները: Աստված ասել
էր. «Չիմա պահե ք և արեք,
որովհետև սա է ձեր
իմաստությունը և հանճարը
ազգերի առաջ, որոնք այս բոլոր
կանոնները լսելով՝ պիտի
ասեն. «Իրավ այս մեծ ազգը մի

իմաստուն և հանճարեղ
ժողովուրդ է» (Երկրորդ
Օրինաց 4.6): Մերժելով երկնքի
շնորհը՝ Ֆրանսիան
անիշխանության ու կորստյան
սերմեր ցանեց, և պատճառ ու
հետևանք կապի արդյունքն
անխուսափելիորեն հանգեցրեց
Յեղափոխությանը և Սարսափի
Իշխանությանը: [231]

Պատառների պատճառով
բռնկված հալածանքից շատ
առաջ քաջ ու կրակոտ Ֆարելը
ստիպված էր եղել փախչել իր
ծննդավայրից: Նա մեկնել էր
Շվեյցարիա և իր ծառայությանը

օգնել Յվհնգլիին՝
հա-սարակութեան կարծիքը
շեղելով Բարենորոգման
օգտին: Թեև նրա կյանքի
վերջին տարիներն այստեղ
պիտի անցնեին, նա
շարունակում էր մեծ
ազդեցութիւն ունենալ
Ֆրանսիայի Բարենորոգման
վրա: Իր պանդխտութեան
առաջին տարիներին նրա
ջանքերը հատկապես ուղղված
էին Ավետարանի տարածմանը
իր հայրենիքում: Նա զգայի
ժամանակ էր տրամադրում
քարոզչութեանը սահմանի մոտ
ապրող իր հայրենակիցների

շրջանում, որտեղ անխոնջ
աչալրջությամբ հետևում էր
պայքարին և օգնում իր
քաջալերանքի խոսքերով ու
խորհրդով: Ուրիշ
աքսորյալների օգնությամբ
գերմանացի բարենորոգիչների
գրվածքները թարգմանվում
էին հրանսերեն և հրանսերեն
Աստվածաշնչի հետ միասին
հրատարակվում մեծ
տպաքանակով:
Գրավաճառների միջոցով
դրանք գլխավորապես
վաճառվում էին հրանսիայում:
Գրավաճառներին այդ գիրքը
տրվում էին ցածր գներով,

որպեսզի ստացված շահույթով
Նրանք կարողանային
շարունակել գործը:

Տարելն իր գործը
Շվեյցարիայում սկսեց որպես
դպրոցական համեստ ուսուցիչ:
Փակվելով մի առանձին
վանքում՝ նա իրեն նվիրեց
երեխաների դասավանդմանը:
Բացի սովորական դպրոցական
առարկաներից՝ նա զգուշորեն
ներկայացրեց նաև Սուրբ Գրքի
ճշմարտությունները՝ հուսալով
երեխաների միջոցով հասնել
ծնողներին: Նրանցից ոմանք
հավատացին, բայց

քահանաները վեր կացան՝
կասեցնելու այդ գործը, և
Գյուղի սնահավատ ժողովրդը
դուրս եկավ նրա դեմ: «Դա չի
կարող Քրիստոսի ավետարանը
լինել,— պնդում էին
քահանաները,— քանզի դրա
քարոզչությունը ոչ թե
խաղաղության է բերում, այլ
պատերազմ» ((Ուայլի, հ.14, գլ.
3: Չետևելով առաջին
աշակերտների օրինակին՝ նա
մի քաղաքից մյուսն էր
փախչում, երբ իրեն
հետապնդում էին: Գյուղից
Գյուղ, քաղաքից քաղաք նա
ճամփորդում էր ոտքով՝

դիմանալով սովին, ցրտին,
հոգնածութեանը և ամենուրեք
վտանգելով իր կյանքը: Նա
քարոզում էր շուկաներում,
եկեղեցիներում, երբեմն էլ`
տաճարների ամբիոններից:
Երբեմն եկեղեցին նա դատարկ
էր գտնում, երբեմն էլ նրա
քարոզն ընդհատում էին
գոչյուններով ու ծաղրանքով:
Նորից ու նորից նրան բռնի
կերպով իջեցնում էին
ամբիոնից: Մի քանի անգամ
ամբոխը նրան բռնել և ծեծել էր
մերձիմահ: Սակայն նա [232]
շարժվում էր առաջ: Թեև
հաճախ նահանջելով` նա

անկոտրում համառությամբ
նորից անցնում էր գրոհի, և
տեսնում էր, թե ինչպես մեկը
մյուսի հետևից քաղաքներն ու
ավանները, որոնք մինչ այդ
պապության ամրոցներն էին
եղել, բացում էին իրենց
դարպասները ավետարանի
առջև: Ոչ մեծ համայնքը, ուր
Ֆարելը սկզբում աշխատել էր,
շուտով ընդունեց
բարենորոգված հավատը:
Մորատ և Նյուշաթել
քաղաքները նույնպես
հրաժարվեցին պապական
ծեսերից և իրենց եկեղեցիներից

հեռացրին կռապաշտական
պատկերները:

Տարելը վաղուց փափագում էր
ժնկում կանգնեցնել
բողոքակա-նության դրոշը: Եթե
այդ քաղաքը նվաճվեր, այն
Բարենորոգման կենտրոն
կդառնար Ֆրանսիայի,
Շվեյցարիայի և Իտալիայի
համար: Այս նպատակով էր
հենց, որ նա շարունակեց իր
աշխատանքը, մինչև որ
շրջապատող քաղաքներից ու
ավաններից շատերն
ընդունեցին բարի լուրը: Հետո
միակ ուղեկցի հետ նա մտավ

Ժնն: Բայց նրան թույլ տվին
միայն երկու քարոզ ասել:
Քահանաները, իզուր ջանալով
քաղաքացիական
իշխանություններին դրդել՝
դատապարտելու նրան,
կանչեցին Տարելին
եկեղեցական խորհուրդ, որին
իրենք եկան զենքերով՝
թաքցված թիկնոցների տակ,
հատկապես որոշելով վերջ տալ
նրա կյանքին: Դահլիճից դուրս
կատաղի ամբոխը,
մահակներով ու սրերով
զինված, եկել էր նրան
սպանելու, եթե նրան հաջողվեր
խույս տալ խորհրդից: Բայց

Տարելին փրկեց դատավորների
և զինվորականների
ներկայութունը: Հաջորդ օրը
վաղ առավոտյան նրան իր
ուղեկցի հետ տեղափոխեցին
ապահով մի տեղ՝ լճի այն
կողմում: Այսպես ավարտվեց
Ժնևն ավետարանելու նրա
առաջին փորձը:

Հաջորդ փորձի համար ավելի
համեստ «գործիք» ընտրվեց՝ մի
երիտասարդ՝ այնքան անշուք
արտաքինով, որ սառնորեն
ընդունվեց անգամ
Բարենորոգման՝ կոչեցյալ
հետևորդների կողմից: Բայց

Ի՞նչ կարող էր այսպիսի մեկն
անել այնտեղ, ուր մերժվել էր
Ֆարելը: Ինչպե՞ս կարող էր
երկչոտ ու անփորձ մեկը
դիմանալ այն փոթորկին, որից
ստիպված փախել էր
ամենաուժեղն ու ամենաքաջը:
«Ոչ թե զորութունով և ոչ թե
ուժով, այլ իմ Հոգով, ասում է
Չորաց Տերը» (Չաքարիա 4.6):
«Աշխարհիս տկարներին
Աստված ընտրեց, որ ամաչեցնի
զորավորներին»: «Քանզի
Աստծո հիմարն ավելի
իմաստուն է, քան թե մարդիկ, և
Աստծո տկարն ավելի զորավոր

Է, քան թե մարդիկ» (Ա
Կորնթացիս 1.27,25):

Ֆրոմենտն իր աշխատանքը
սկսեց որպես դպրոցական
ուսուցիչ: Ճշմարտությունները,
որ նա երեխաներին
սովորեցնում էր դպրոցում,
նրանք կրկնում էին [233] իրենց
տներում: Շուտով ծնողները
սկսեցին գալ՝ լսելու
Աստվածաշնչի
բացատրությունը,
աստիճանաբար դասարանը
լցվեց ուշիմ ուսկնդիրներով:
Ազատ բաժանվում էին Նոր
Կտակարան-ներ ու գրքույկներ,

և դրանք հասնում էին
շատերին, ովքեր չէին
համար-ձակվում հայտնապես
գալ և լսել նոր ուսմունքը: Որոշ
ժամանակ անց այս գործիչը ևս
ստիպված եղավ փախչել, բայց
նրա սովորեցրած
ճշմարտությունները դրոշմվել
էին ժողովրդի մտքում:
Բարենորոգումը սերմանված
էր, և այն շարունակեց զորանալ
ու տարածվել: Քարոզիչները
վերադարձան, և նրանց
աշխատանքի շնորհիվ ժնկում
վերջնականապես հաստատվեց
բողոքական պաշտամունքը:

Քաղաքն արդեն ընդունել էր
Բարենորոգումը, երբ որոշ
թափառումներից ու
պատահարներից հետո
Կալվինը մտավ այնտեղ:
Վերջին անգամ իր ծննդավայրն
այցելելուց հետո նա
վերադառնում էր Բագել, բայց
պարզվեց, որ Կարլ V—ի գործը
փակել է ուղիղ ճանապարհը, և
նա ստիպված եղավ շրջանցող
ճանապարհ ընտրել ժնկով:

Այս այցի մեջ Ֆարելը տեսավ
Աստծո ձեռքը: Թեև ժնկն
ընդունել էր բարեփոխված
հավատը, բայց և այնպես,

այնտեղ շատ գործ կար անելու:
Մարդիկ Աստծուն են գալիս ոչ
թե համայնքներով, այլ
անհատապես: Սրտի և խղճի
վերածնունդը կատարվում է
Սուրբ Հոգու զորությամբ, ոչ թե
տիեզերածողովների
որոշումներով: Ու թեև ժնկի
բնակիչները մերժել էին Հռոմի
հեղինակությունը, նրանք
այնքան էլ պատրաստ չէին
հրաժարվելու այն արատերից,
որ ծաղկել էին նրա
տիրապետության ներքո:
Այնքան էլ հեշտ չէր այստեղ
ավետարանի սուրբ
սկզբունքները հաստատելն ու

այս ժողովրդին պատրաստելը՝
նախախնամութեամբ իր
համար որոշված դիրքը
արժանիորեն զբաղեցնելու
համար:

Տարելը վստահ էր, որ Կալվինը
հենց նա է, ում հետ կարող էր
միանալ իր գործում: Աստծո
անունով նա երիտասարդ
ավետարանչին
հանդիսավորապես խնդրեց
մնալ և աշխատեք այդտեղ:
Կալվինը վախից ընկրկեց:
Խառնվածքով երկչոտ ու
խաղաղասեր՝ նա խուսափում
էր շփվել հանդուգն, անկախ ու

երբեմն վայրագ ժնևցիների
հետ: Թույլ առողջութունը և
ուսումնաստենչ ոգին դրդել էին
նրան հանգստություն
փնտրելու: Մտածելով, որ իր
գրչով կարող էր լավագույնս
ծառայել Բարենորոգման
գործին, նա ուզում էր
ուսումնասիրության համար
[234] մի հանգիստ տեղ գտնել և
այնտեղ մամուլի միջոցով
հորդորել ու զորաց-նել
եկեղեցիները: Բայց Տարելի
հանդիսավոր խորհուրդը նրան
հասավ ասես իբրև կոչ
երկնքից, և նա չհամարձակվեց
մերժել այն: Իրեն թվաց, ասել է

Նա, թե «Աստված երկնքից
իջեցրեց իր ձեռքը, բռնեց իրեն
և անդամնալիորեն հաստատեց
այնտեղ, որտեղից նա այդպես
փափագում էր հեռանալ»
(Դ՛Օբիւյե, Բարենորոգման,
պատմութեանը Եվրոպայում
Կալվինի ժամանակ, հ. 9, գլ.17):

Այդ ժամանակ
բողոքականութիւնը լուրջ
վտանգի տակ հայտնվեց:
Պապի նզովքները տեղացին
ժննդի վրա, և հզոր
պետութիւնները սպառնացին
կործանել այն: Ինչպե՞ս էր այս
փոքրիկ քաղաքը դիմակայելու

հզոր նվիրապետութեանը, որն
այնքան հաճախ ծնկի էր բերել
թագավորներին ու կայսրերին:
Ինչպե՞ս նա կարող էր ետ մղել
աշխարհի մեծ նվաճողների
գորքերը:

Բողոքականութեանը կատաղի
թշնամիներ էին սպառնում ողջ
քրիստոնեական աշխարհով
մեկ: Բարենորոգման առաջին
հաղթանակ-ներն անցել էին, և
Ջոնը նոր ուժեր հավաքեց՝
հուսալով կործանել այն: Այդ
ժամանակ ստեղծվել էր
ճիզվիտների միաբանությունը՝
պապութեան ամենադաժան,

ոչնչի առաջ կանգ չառնող և
ամենահզոր պաշապանները:
Արհամարիելով երկրային
կապերն ու մարդկային
հետաքրքրությունները,
մեռցնելով սիրո բնական
պահանջները, լռեցնելով
բանականության և խղճի
ձայնը՝ նրանք չգիտեին ուրիշ
օրենք կամ կապվածություն՝
իրենց միաբանությունից բացի,
և ուրիշ պարտականություն՝
բացի իրենց իշխանության
տարածումից: Քրիստոսի
ավետարանն իր
ջատագրվներին ունակ էր
դարձրել դիմանալու

վտանգների և նեղութունների,
չընկճվելու ցրտից, սովից,
չարչարանքից ու
աղքատությունից, բարձր
պահելու ճշմարտության դրոշը,
անկախ կախադանից,
զնդանից և խարույկից: Այդ
ուժերի դեմ կռվելու համար
ճիզվիտների ուսմունքն իր
հետևորդներին ներշնչում էր
մոլեռանդություն, որը նրանց
ունակ էր դարձնում դիմանալու
նույն վտանգներին և
ճշմարտության ուժի դեմ
հանելու խաբեության բոլոր
զենքերը: Չկար ոճիր՝
չափազանց մեծ նրանց համար,

որ անկարող լինեին գործել,
կեղծիք՝ չափազանց ստոր,
որին նրանք չդիմեին, կամ
կերպարանք՝ չափազանց
ամոթալի, որ չընդունեին:
Մշտական աղքատության ու
նվաստության երդում տալով՝
նրանք կանխամտածված
նպատակ ունեին հասնելու
հարստության և իշխանության,
որոնց միջոցով մտադիր էին
կործանել բողոքականությունը
և վերականգնել պապության
գերիշխանությունը: [235]

Չանդես գալով որպես իրենց
միաբանության անդամներ՝

Նրանք սրբութեան հանդերձ էին
հազնում՝ այցելելով բանտեր ու
հիվանդանոցներ, ծառայելով
հիվանդներին ու աղքատներին,
հայտարարելով, թե ուրացել են
աշխարհը և կրելով Յիսուսի
սրբազան անունը, ով շրջում էր՝
բարիք անելով: Բայց այս
անբիժ արտաքինի տակ
հաճախ ամենահանցավոր ու
մահացու նպատակներ էին
թաքնված: Միաբանութեան
գլխավոր սկզբունքն էր՝
նպատակն արդարացնում է
միջոցները: Ըստ այդ
սկզբունքի՝ սուտը,
գողութիւնը,

երդմնագանցությունը,
սպանությունը ոչ միայն
ներվում էին, այլև՝
խրախուսվում, եթե դրանք
ծառայում էին եկեղեցու
շահերին: Տարբեր քողերի տակ՝
ճիզվիտներն իրենց ճամփան
էին հարթում դեպի պետական
պաշտոններ՝ վեր մագլցելով,
մինչև դառ-նում էին
թագավորների
խորհրդականներ, և ձևավորում
ազգերի քա-ղաքականությունը:
Իրենց տերերին լրտեսելու
համար նրանք դառնում էին
ծառաներ, իշխանների և
ազնվականների երեխաների

համար բացում էին քուլեջներ,
իսկ հասարակ ժողովրդի
համար՝ դպրոցներ, և
բողոքական ծնողների
երեխաներին դրդում էին
մասնակցելու պապական
ծեսերին: Կաթուղիկ
պաշտամունքի արտաքին ողջ
ճոխությունն ու փայլը
նպատակ ունեն շփոթեցնելու
միտքը, ապշեցնելու և գերելու
երևակայությունը: Այդպիսով՝
որդիներն ուրանում են այն
ազատությունը, որ հայրերը
ձեռք են բերել տանջանքի ու
արյան գնով: Ճիզվիտներն
արագորեն տարածվեցին

Եվրոպայում և ամենուրեք
նպաստեցին պապության
վերածննդին:

Որպեսզի նրանց ավելի մեծ
իշխանություն տրվի,
հավատաքննու-թյունը
վերահաստատող կոնդակ
հրատարակվեց: Չնայած
համընդհա-նուր նողկանքին, որ
տաճում էին դրա հանդեպ
նույնիսկ կաթոլիկ երկրներում,
պապականները դարձյալ
վերականգնեցին այն, և
գաղտնի զնդաններում նորից
կրկնվեցին այն
գազանությունները, որ

չափազանց զարհուրելի էին
օրը ցերեկով արվելու համար:
Շատ երկրներում հա-զարավոր
մարդիկ, որ ազգերի փայլն էին,
ամենահանճարեղ ու ազնիվ,
ամենատույալ ու բարեկիրթ,
բարեպաշտ ու նվիրյալ
հովիվներ, աշխա-տավոր ու
հայրենասեր քաղաքացիներ,
փայլուն գիտնականներ, տա-
ղանդավոր նկարիչներ և հմուտ
վարպետներ, սպանվեցին կամ
էլ ստիպված եղան փախչել
ուրիշ երկրներ:

Ահա այն միջոցները, որոնց
դիմել է Ջոնմը Բարենորոգման

լույսը հանգցնելու, մարդկանց
Աստվածաշնչից զրկելու և
Խավար Միջնադարի
տգիտությունն ու [236]
սնահավատությունը
վերականգնելու համար: Բայց
շնորհիվ Աստծո օրհնության և
ազնիվ մարդկանց ջանքերի,
ում Նա կանգնեցնում էր՝
Լյութերին հաջորդելու համար,
բողոքականությանը
չտապալվեց: Իշխանների
բարեհաճությանը կամ զենքին
չէ, որ այն պարտական էր իր
ուժով: Ամանափոքր երկրները,
ամենահամեստ և թույլ ազգերը
դարձան նրա ամրոցները:

Փոքրիկ ժնկն էր՝ իր հզոր
թշնամիների մեջ, որոնք դավեր
էին նյութում՝ կործանելու այն,
Յուլանդիան՝ Յյուսիսային ծովի
իր ավազոտ ափերին,
մարտնչելով Իսպանիայի՝ այդ
ժամանակվա մեծագույն ու
ամենաբարգավաճ
թագավորության
բռնատիրության դեմ, ինչպես
նաև քամոտ ու անբերրի
Շվեդիան, որ հաղթանակներ
տարան Բարենորդման
համար:

Շուրջ երեսուկ տարի Կալվինն
աշխատեց ժնկում՝ նախ

այնտեղ եկեղեցի հիմնելու
համար, որը կհետևեր
աստվածաշնչյան
բարոյականությանը, և ապա
ամբողջ եվրոպայում
Բարենորոգումն առաջ տանելու
համար: Որպես
հասարակական գործիչ՝ նա
անբիծ չէր, ոչ էլ նրա ուսմունքն
էր զերծ սխալներից: Բայց նա
գործիք էր՝ ճշմարտություններ
հռչակելու համար, որոնք
հատուկ կարևորություն ունեին
նրա օրերում՝
բողոքականության
սկզբունքները պապության՝
արագորեն վերադարձող

ալիքին հակադրելու և
պապական ուսմունքի
ազդեցութեան ներքո ծաղկող
հպարտութեան ու
ապականութեան փոխարեն
բարեփոխված եկեղեցիներում
պարզ ու խոնարհ կյանք
սերմանելու համար:

Ժնևից գրքեր և ուսուցիչներ էին
ուղարկվում բարեփոխված
ուսմունքը տարածելու համար:
Մինչ այդ բոլոր երկրների
հալածվողները խրատ,
խորհուրդ և քաջալերանք էին
սպասում: Կալվինի քաղաքը
ապաստարան դարձավ

հետապնդվող
բարենորոգիչների համար
ամբողջ Արևմտյան
Եվրոպայում: Փրկվելով
ահավոր փոթորիկներից, որ
շարունակվում էին ամբողջ
դարեր, փախստականները
գալիս էին ժնկի դարպասների
մոտ: Սովահար, վիրավոր,
տնից ու հարազատներից
զրկված՝ նրանք այստեղ ջերմ
ընդունելություն ու քնքուշ
հոգատարություն էին գտնում:
Եվ այստեղ ձեռք բերելով իրենց
երկրորդ տունը՝ նրանք իրենց
տաղանդներով, գիտելիքներով
ու բարեպաշտությամբ

օրհնությունն էին բերում իրենց
որդեգրած քաղաքին: Շատերը,
ովքեր այստեղ ապաստարան
էին փնտ-
րում, վերադառնալով
իրենց երկրները՝ սկսում էին
պայքարել Յոզմի
բռնատիրության դեմ: Ջոն
Նոքսը՝ շոտլանդացի խիզախ
բարենորոգիչը բազմաթիվ
անգլիացի պուրիտաններ,
Յոլանդիայի և Իսպանիայի
բողոքականներն ու Տրանսիայի
հոլգենոտները ժնկից են տարել
ճշմարտության ջահը՝ իրենց
հայրենիքներում խավարը
ցրելու համար:

ԳԼՈՒԽ 13—ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐ ԵՎ ՍԿԱՆԴԻՆԱՎԻԱ

Պապական բռնատիրությունը
շատ վաղ վճռական բողոք
առաջացրեց Նիդերլանդներում:
Դեռևս յոթ հարյուր տարի
առաջ՝ Նախքան Լյութերի
ժամանակը, երկու
եպիսկոպոսներ, ովքեր
ուղարկված էին Յոնո որպես
դեսպաններ, այսպես
անվախորեն դատապարտեցին
Յոնոյի պապին՝ հասկանալով
«սրբազան գահի» իսկական
բնույթը. «Աստված Իր
թագուհին և կինն է դարձրել

եկեղեցին՝ ազնիվ ու
հավիտենական պահուստ
տալով նրան՝ մի օժիտ, որը ո՛չ
թառամում է, ո՛չ էլ փչանում, և
հավիտենական պսակ ու
գավազան... այս ամենը դու
զավթել ես գողի պես: Դու
նստել ես Աստծո տաճարում և
հովվի փոխարեն դարձել ես
գայլ ոչխարների համար... Մեզ
հավատացնելով, թե գերագույն
եպիսկոպոսն ես, դու քեզ
բռնակալի պես ես պահում...
Ծառաների ծառա լինելու
փոխարեն, ինչպես ինքդ ես քեզ
անվանում, դու ջանում ես
դառնալ տերերի տեր... Դու

արհամարհում ես Աստծո
պատվերները... Սուրբ Հոգին է
շինում բոլոր եկեղեցիները
ամբողջ երկրով մեկ... Աստծո
քաղաքը, որի քաղաքացիներն
ենք մենք, տարածվում է
երկնքի բոլոր մասերը, և այն
ավելի մեծ է, քան քաղաքը, որը
սուրբ մարգարեները Բաբելոն
են կոչել, որն իրեն
աստվածային է ճանաչում՝
բարձրացնելով իրեն մինչև
երկինք՝ պարծենալով, թե իր
իմաստութունն անմահ է, և
վերջապես, թեև անհիմն, որ
ինքը երբեք չի սխալվել, ոչ էլ
երբևէ կսխալվի» (Ջերարդ

Բրանդթ, Բարենորոգման
պատմությունը թույլ
երկրներում և նրանց շուրջը,
հ.1, էջ. 6): [238]

Դարեդար ուրիշներն են
կանգնել՝ արձագանքելու այս
բողոքին: Եվ այն վաղ օրերի
ուսուցիչները, որ անցել են
տարբեր երկրներով ու հայտնի
են եղել կեղծ անուններով,
վալդենս ապետարանիչների
պես ամենուրեք սվտել են
ապետարանի գիտությունը, որը
ներթափանցել էր նաև
Նիդերլանդներ: Նրանց
ուսմունքն արագորեն

տարածվեց: Վալդենսների
Սուրբ 4-իրքը նրանք
թարգմանեցին հուլանդերեն՝
հայտարարելով, «որ մեծ
առավերություն կա դրանում,
որ ճշմարտության խոսքերից
բացի՝ այնտեղ ո՛չ կատակներ
կան, ո՛չ առասպելներ, ո՛չ
անհեթեթություններ, ոչ էլ
խաբեություն, որ այնտեղ,
իրոք, որոշ դժվարիմաց տեղեր
կան, բայց այն ամենի
եությունն ու քաղցրությունը,
ինչը բարի է և սուրբ, կարող է
դրանում հեշտությամբ
բացահայտվել» (Նույն տեղում,
հ. 1, էջ 14): Ահա թե ինչ են գրել

հին հավատի բարեկամները
տասներկուերորդ դարում:

Այժմ սկսվեցին Յոնի
հալածանքները, և, չնայած
խարույկին ու տանջանքներին՝
հավատացյալները գնալով
շատանում էին՝ շարունակելով
հռչակել, որ կրոնի հարցերում
Աստվածաշունչը միակ
անսխալա-կան
հեղինակությունն է, և որ «ոչ
մեկին չպետք է ստիպել
հավատալ, այլ պետք է շահել՝
քարոզելով» (Մարտին, հ. 2, էջ
87):

Լյութերի ուսմունքը պարարտ
հող գտավ Նիդերլանդներում, և
լուրջ ու նվիրյալ մարդիկ վեր
ելան՝ քարոզելու ավետարանը:
Մենո Սիմոնսը Հոլանդիայի
գավառներից էր: Նա,
դաստիարակված որպես
կաթոլիկ և ձեռնադրված
քահանա, բուրրովին
անտեղյակ էր Սուրբ Գրքից և
չէր ուզում այն կարդալ՝
վախենալով ընկնել
հերձվածողության մեջ: Երբ
Նրա մոտ կասկածները
խորացան գոյափոխության
մասին ուսմունքի վե-րաբերյալ,
Նա կարճեց, թե դա

փորձությունն է սատանայից և
աղոթքով ու
խոստովանությամբ փորձեց
ագատվել դրանից, բայց
ապարդյուն: Տրվելով
թեթևամիտ զվարճությունների՝
ևս ջանաց լռեցնել խղճի
մեղադրող ձայնը, սակայն էփ
անօգուտ: Շատ չանցած՝ ևս
սկսեց ուսումնասիրել Նոր
Կտակարանը, որը, Լյութերի
գրվածքների հետ միասին,
դրդեց նրան ընդունել
բարենորոգված հավատը:
Շուտով ևս հարևան գյուղում
ականատես եղավ մի մարդու
գլխատմանը, ով մահվան էր

դա-տապարտվել
վերամկրտվելու համար: Այս
դեպքը նրան դրդեց
Աստվածաշնչում քննելու
մանուկների մկրտության
հարցը: Նա Սուրբ Գրքում ոչ մի
վկայություն չգտավ այդ
մասին, և նկատեց, որ ամեն
տեղ ապաշխարությունն ու
հավատը [239] մկրտվելու
համար անհրաժեշտ
պայմաններ են:

Մենոն հեռացավ Յուդի
եկեղեցուց և իր կյանքը նվիրեց
իր ընդունած
ճշմարտությունների

ուսուցմանը: Այդ ժամանակ
Գերմանիայում և
Նիդերլանդներում հայտնվեցին
մուլեռանդներ, ովքեր անհեթեթ
ու աստամբ ուսմունքներ էին
քարոզում, խախտում էին
հասարակական կարգն ու
պատշաճության կանոնները և
բռնությունն ու խռովությունն
հրահրում: Կանխատեսելով
այն սոսկայի հետևանքները,
որոնց անխու-սափելիորեն
հանգեցնելու էին այդ
շարժումները, Մենոն իր ողջ
եռանդով ընդդիմացավ
մուլեռանդների ուսմունքին ու
խելահեղ ծրագրերին: Կային

շատերը, սակայն, ովքեր շեղվել
էին, բայց հետո մերժել
մոլեռանդներ- թի կորստաբեր
ուսմունքը: Եվ դես մտում էին
հին քրիստոնյաների շատ
հետնորդներ, ովքեր
Վալդենսների ուսմունքի
պտուղն էին: Այս մարդկանց
մեջ էլ հենց Մենոն աշխատեց
մեծ եռանդով ու
հաջողությամբ:

Քսանհինգ տարի նա
շրջագայեց իր կնոջ ու
երեխաների հետ՝ կրելով մեծ
նեղություններ ու գրկանքներ,
հաճախ վտանգի ենթարկելով

իր կյանքը: Նա անցավ ողջ
Նիդերլանդներն ու հյուսիսային
Գերմանիան՝ աշխատելով
գլխավորապես ցածր խավերի
մեջ, բայց հեռահար
ազդեցություն թողնելով:
Լինելով բնականից պերճախոս՝
թեև թերի կրթու-թյամբ՝ նա
անսասան անկեղծության,
խոնարհ հոգու և ազնվաբարո
վարքի, անբիծ և ջերմեռանդ
բարեպաշտության տեր մարդ
էր, ով իր կյանքում
մարմնավորում էր իր
սովորեցրած սկզբունքները, և
այդպիսով վայելում էր
ժողովրդի վստահությունը: Նրա

հետևորդները ցրվել էին ամեն
տեղ և մեծ դժվարություններ
էին կրում: Նրանց մեծ վնաս
էին հասցրել՝ շփոթելով
մոլեռանդ մյուսնցերականների
հետ: Բայցևայնպես, շատերը
դարձի եկան նրա ջանքերի
շնորհիվ:

Ոչ մի տեղ Բարենորոգումն
այնպես միաբանորեն չէր
ընդունվել, ինչպես
Նիդերլանդներում: Եվ միայն
քիչ երկրներում են դրա
ջատագրվ-ներն ավելի
սարսափելի հալածանքներ
կրել: Կարլ V—ը Գերմանիայում

արգէյել էր Բարենորոգումը և
ուրախութեամբ կրակին կտար
Նրա բոլոր համախոհներին,
եթէ իշխանները պատնեշի պես
չկանգնեին Նրա
բռնա-կալութեան դէմ:
Նիդերլանդներում Նրա
իշխանութիւնն ավելի մեծ էր, և
շուտով արագորէն իրար
հաջորդեցին հալածանքի
հրամանագրերը: Կարդալ
Սուրբ Գիրքը, լսել կամ քարոզել
[240] այն և նույնիսկ խոսել Նրա
մասին՝ նշանակում էր գնալ
մահապատժի խարույկի վրա:
Գաղտնի աղոթելն Աստծուն,
սրբապատկերների առաջ

Ճիտնարիվելը կամ սաղմոս
երգելը նույնպես պատժվում
էին մահով: Դատապարտվում
էին անգամ նրանք, ովքեր
ուրանում էին իրենց
մոլորությունը: Տղամարդկանց
սպանում էին սրով, իսկ
կանանց՝ կենդանի թաղում:
Հազարավորները մեռան Կարլ
V—ի և Ֆիլիպ II-ի
թագավորության օրոք:

Մի անգամ հավատաքննիչների
առաջ բերեցին մի ամբողջ
ընտանիք, որը մեղադրվում էր
պատարագին չմասնակցելու և
տանը երկրպագելու մեջ: Այն

հարցին, թե ինչպես են գաղտնի
երկրպագում, կրտսեր տղան
ասաց. «Մենք ծնկի ենք իջնում
և աղոթում Աստծուն, որ Նա
լուսավորի մեր միտքն ու ների
մեր մեղքերը, աղոթում ենք մեր
միապետի համար, որպեսզի
Նրա կառավարումը հաջող
լինի, և Նրա կյանքը՝ երջանիկ,
աղոթում ենք մեր
դատավորների համար, որ
Աստված պահպանի Նրանց»
(Ուայլի, հ. 18, գլ. 6):
Դատավորներից մի քանիսը
խորապես հուզվել էին, և
չնայած դրան՝ հայրն ու

որդիներից մեկը մատնվեցին
խարույկի:

Նահատակների հավատը
համեմատական էր
հալածողների կատաղությանը:
Ոչ միայն տղամարդիկ, այլև
քնքուշ կանայք ու երիտա-սարդ
օրիորդներն աներեր
քաջություն էին ցուցաբերում:
«Կանայք կանգնում էին իրենց
ամուսինների խարույկների
մոտ և սփոփանքի խոս-քեր
շնչում կամ սաղմոսներ
երգում՝ նրանց քաջալերելու
համար, մինչ նրանք այրվում
էին բոցերի մեջ»: «Երիտասարդ

օրիորդներն այնպես էին
ողջ-ողջ գերեզման իջնում,
ասես մտնում էին իրենց
ննջասենյակը, և այնպես էին
գնում գլխատվելու կամ
խարույկի՝ իրենց լավագույն
զգեստները հագած, ասես
պսակադրության էին գնում»
(Նույն տեղում, հ.18,գլ. 6):

Ինչպես հնում, երբ
հեթանոսները ձգտում էին
ոչնչացնել ավետարանը,
այնպես էլ հիմա
քրիստոնյաների թափված
արյունը սրբազան սերմ էր
դառնում (Տես Տերտուլիան,

Ապոլոգիա, պրբ. 50):
Հալածանքներից
ճշմարտության վկաների թիվը
միայն աճում էր: Ժողովրդի
անհաղթելի վճռականությունից
խելքը կորցրած՝ միապետը
տարեցտարի շարունակում էր
իր դաժան գործը, բայց իզուր:
Ազնվական Վիլիելմ Օրանստեյն
օրոք, վերջապես,
հեղափոխությունը Աստծուն
երկրպագելու ազատություն
բերեց Հոլանդիային:

Պիեմոնտի լեռներում,
Ֆրանսիայի հարթավայրերում
և Հոլանդիայի ափերին [241]

ապետարանի սերմերը ջրվեցին
Նրա հետևորդների արյունով:
Սակայն հյուսիսային երկրներ
այն խաղաղ մուտք ունեցավ:
Տուն վերադառնալով
Վիտենբերգից՝ ուսանողները
բարենորոգված հա-վատը
բերեցին Սկանդինավիա:
Լյութերի գրվածքների
հրատարակումը նույնպես
նպաստեց լույսի տարածմանը:
Հյուսիսի պարզ, տոկուն
ժողովուրդը Հռոմի
ապականությունից,
ցուցադրական շքեղությունից
ու սնահավատությունից
շրջվեց՝ ողջունելու

Աստվածաշնչի մաքրութիւնը,
պարզութիւնն ու կենսատու
ճշմարտութիւնները:

Թաուզենը՝ «Դանիայի
բարենորոգիչը», գլուղացու
որդի էր: Դեռ վաղ հասակից
տղան մտավոր մեծ
ունակութիւններ դրսևորեց:
Նա ուսման ծարավ էր, բայց
կրթութիւն ստանալ նրան
չհաջողվեց իր ծնողների
չքավորութեան պատճառով, և
նա գնաց վանք: Այստեղ նա իր
անբասիր կյանքով,
ջանասիրութեամբ ու
հավատարմութեամբ

արժանացա՛վ վերադասի
բարեհաճութեանը: Քննութեանը
պարզեց, որ նա այնպիսի
տաղանդներ ուներ, որոնք
խոստանում էին մոտ
ապագայում եկեղեցուն մեծ
ծառայութեան մատուցել:
Որոշվեց, որ նա պիտի
կրթութեան ստանար
Գերմանիայի կամ
Նիդերլանդների
համալսարաններից մեկում:
Երի-տասարդ ուսանողին թույլ
տրվեց իր համար ընտրել որևէ
համալսարան, բայց մեկ
վերապահումով՝ նա չպետք է
մեկնե՛ր Վիտենբերգ: Եկեղեցու

աստվածաբանը պետք է
խուսափեր հերձվածողութեան
թուլնից: Այսպես ասացին
վանականները:

Թաուզենը մեկնեց Քյոլն, որն
այն ժամանակ, ինչպես այսօր,
պա-պութեան ամրոցներից մեկն
էր: Այստեղ աստվածաբանների
խորհրդա-պաշտութիւնը
շուտով նրա մոտ նողկանք
առաջացրեց: Գրեթէ միևնույն
ժամանակ նա ձեռք բերեց
Լյութերի գրվածքները: Նա
դրանք կարդում էր զարմանքով
ու հիացմունքով և մեծ փափագ
ուներ իր ուսումը ստանալ

անձամբ բարենորոգչից: Բայց
այդ դեպքում նա վիրավորանք
կհասցնե՞ր վանահորը և
կգրկվե՞ր նրա աջակցութ՞յունից:
Ընտրութ՞յունն,
այնուամենայնիվ, կատարվեց,
և նա շուտով Վիտենբերգի
համալսարանի ուսանող
դարձավ:

Վերադառնալով Դանիա՝ նա
նորից գնաց իր վանքը: Ոչ ոք
դեռ չէր կասկածում, որ նա
ընտրության է: Չհայտնելով իր
գաղտնիքը՝ նա իր ընկերներին
ջանում էր առաջնորդել ավելի
մաքուր հավատի և սուրբ

կյանքի՝ առանց գրգռելու
նրանց նախապաշարումները:
Նա բացում էր Աստվածաշունչը
և բացատրում դրա իսկական
նշանակությունը, հետո,
վերջապես, նրանց
ներկայացնում էր Քրիստոսին՝
որպես մեղավորի
արդարության և նրա
փրկության միակ հույսը:
Սաստիկ էր [242] վանահոր
զայրույթը, ով մեծ հույսեր էր
կապել նրա հետ՝ որպես Յոնմի
անվեհեր պաշտպանի: Իր
վանքից նրան անմիջապես
տեղափոխեցին մեկ ուրիշը և

այնտեղ փակեցին իր խցում՝
խիստ հսկողության տակ:

Ի սարսափ նրա նոր
պահապանների՝
վանականներից մի քանիսն
իրենց հայտարարեցին
բողոքականներ: Իր
բանտախցի ձողերի միջով
Թաուզենն ընկերներին
հաղորդել էր ճշմարտության
գիտությունը: Եթե այդ
դանիացի հայրերը տեղյակ
լինեին հերձվածողության հետ
վարվելու եկեղեցու ծրագրերին,
Թաուզենի ձայնն այլևս երբեք
չէր լսվի, բայց նրան

ստորգետնյա գնդաններից
մեկում ցմահ բանտարկելու
փոխարեն վանքից վտարեցին:
Չիմա նրանք անգոր էին:
Թագավորական
հրամանագիրը, որ հենց նոր էր
արձակվել, պաշտպանութուն
էր խոստանում նոր ուսմունքի
ուսուցիչներին: Թաուզենը
սկսեց քարոզել: Եկեղեցիները
բացվեցին նրա առջև, և
բազմություններ հավաքվեցին՝
լսելու նրան: Ուրիշները ևս
քարոզում էին Աստծո խոսքը:
Ամենուրեք տարածվում էր նոր
Կտակարանը, որ թարգմանվել
էր դանիերեն: Այս գործը

տապալելու պա-պականների
ջանքերը հանգեցրին նրա
առաջընթացին, և Դանիան շու-
տով հռչակեց բարենորոգված
հավատն ընդունելու մասին:

Ճվեդիայում նույնպես
երիտասարդները, ովքեր խմել
էին վիտեն— բերգի աղբյուրից,
կյանքի ջուրը տանում էին
իրենց հայրենակիցներին:
Ճվեդական Բարենորոգման
առաջնորդներից երկուսը՝ Օլաֆ
և Լավ— թենտիոու Պետրի
եդրայրները՝ դարբնի որդիները
Օրեբրոյից, ուսանել էին
Լյուբերի և Սելանքթոնի մոտ և

ջանասիրաբար դասավանդում
էին իրենց յուրացրած
ճշմարտությունները: Մեծ
բարենորոգչի նման Օլաֆն
արթնացնում էր ժողովրդին իր
եռանդով ու
պերճախոսությամբ, մինչ
Լավրենտիուսը Սելանքթոնի
պես կիրթ էր, խոհուն ու
հանդարտ: Երկուսն էլ կրակոտ
ու բարեպաշտ մարդիկ էին՝
աստվածաբանության մեջ
բարձրագույն գիտելիքների
տեր, և վճռական՝ անսասան
արիությամբ առաջ տանելու
ճշմարտությունը:
Պապականների

ընդդիմությունն անպակաս էր:
Կաթուղիկ քահանաները
գրգռում էին տգետ ու
սնահավատ ժողովրդին: Օլաֆ
Պետրին հաճախ էր
ենթարկվում ամբոխի
հարձակումներին և մի քանի
անգամ հազիվ է փրկել իր
կյանքը: Այս բարենորոգիչները,
սակայն, պաշտպանվել են
թագավորի կողմից՝
արժանանալով նրա
բարեհաճությանը: [243]

Յո՞ւմի եկեղեցու կառավարման
ներքո ժողովուրդը թաղվել էր
աղքատ-տության մեջ և կքվել

Նրա լծի տակ: Մարդիկ գրկված
Էին Աստվածաշնչից, և
ուկենալով միայն նշանների ու
ծեսերի կրոն, որը չէր
լուսավորում միտքը, նրանք
վերադառնում էին իրենց
հեթանոս նախահայրերի
սնահավատությանն ու
բարքերին: Ազգը բաժանված էր
ընդդիմադիր խմբավորումների,
որոնց մշտական կռիվներն
ավելի էին խորացնում բոլորի
թշվառությունը: Թագավորը
վճռել էր բարեփոխումներ
մտցնել պետական ու
եկեղեցական համակարգերի
մեջ, և նա ողջունեց այս հմուտ

օգնականներին՝ Յռոմի դեմ
պայքարում:

Շվեդիայի միապետի և
իշխանների ներկայությամբ
Օլաֆ Պետրին մեծ
իմաստությամբ պաշտպանեց
բարենորոգված հավատի
ուսմունքն ընդդեմ Յռոմի
առաջնորդների: Նա
հայտարարեց, որ հայրերի
ուսմունքը պետք է ընդունվի
միայն այն դեպքում, երբ
ներդաշնակ է Սուրբ Գրքին, որ
հավատի գլխավոր
սկզբունքներն այնքան
պարզորոշ ու հստակորեն են

Ներկայացված
Աստվածաշնչում, որ բուրրը
կկարողանան հասկանալ:
Քրիստոսն ասել է. «Իմ
վարդապետությունն իմը չէ, այլ
ինձ ուղարկողինը» (Յովհաննես
7.16): Եվ Պողոսն էլ հռչակել է,
որ եթե ինքը այլ ավետարան
քարոզեր նրա փոխարեն, որն
ընդունել էր, ապա անիծյալ
կլիներ (Գաղատացիս 1.8):
«Ուրեմն ինչպե՞ս են մարդիկ
հանդգնում,- ասել է
բարենորոգիչը,— քմահաճորեն
դոգմաներ սահմանել և
հրամցնել որպես փրկության
համար անհրաժեշտ բաներ»

(Ուայլի, հ.10, գլ. 4): Նա ցույց տվեց, որ եկեղեցու հրամանագրերը ոչ մի ուժ չունեն, երբ հակառակ են Աստծո հրամաններին, և պաշտպանեց բողոքական մեծ սկզբունքը, որ «Աստվածաշունչը և միայն Աստվածաշունչն է» հավատի և կյանքի չափանիշը:

Այս պայքարը, որը թեև մղվել է համեմատաբար անհայտ մարտե-րում, մեզ ցույց է տալիս, թե «ովքեր են կազմել բարենորոգիչների բանակի շարքերը: Նրանք անկիրթ,

աղանդավոր ու աղմկոտ
խռովարարներ չեն եղել,
բոլորովին հակառակը՝ նրանք
Աստծո խոսքի ջերմեռանդ
ու-սուսմասիրողներ էին և լավ
գիտեին՝ ինչպես գործածել
Աստվածաշնչի գինանոցի
սպառագինությունը:
Կրթվածության առումով
նրանք զգալիորեն առաջ են
եղել իրենց
ժամանակակիցներից: Մեր
հայացքը սևեռելով այնպիսի
փայլուն կենտրոնների,
ինչպիսիք են Վիտենբերգն ու
Ցյուրիխը, և այնպիսի
հռչակավոր [244] դեմքերի,

ինչպես Լյութերն ու
Մելանքթոնն են, Ցվինգլին ու
Էկոլամպադիուսը, կարող ենք
ասել, որ նրանք շարժման
առաջնորդներն են եղել, և
մենք, բնականաբար, նրանցից
կակնկալեինք ահռելի ուժ և մեծ
նվաճումներ: Բայց
շարքայինները նրանց նման
չեն եղել: Եկեք մի պահ մեր
հայացքը դարձնենք դեպի ոչ
այնքան հայտնի պայքարը
Շվեդիայում և Օլաֆ ու
Լավրենտիուս Պետրի
եղբայրներին, ուսուցիչներից
դառնանք աշակերտներին:
Ի՞նչ կտեսնենք...

Գիտնականների և
աստվածաբանների, ովքեր
լիովին տիրապետում էին
ավետարանական
ճշմարտության ողջ
համակարգին և հեշտությամբ
հաղթում էին
համալսարանների
դասախոսներին ու Յռոմի
պաշտոնյաներին» (Նույն
տեղում, հ. 10 , գլ. 4):

Այս բանավեճի արդյունքում
Շվեդիայի թագավորն ընդունեց
բողո-քական հավատը, և շատ
չանցած՝ ազգային ժողովը
քվեարկեց դրա օգտին: Օլաֆ

Պետրին Նոր Կտակարանը
թարգմանել էր շվեդերեն, և
հիմա թագավորի ցանկությամբ
եղբայրները ձեռնարկեցին ողջ
Աստվա-ծաշնչի
թարգմանությունը: Այսպես
Շվեդիայի ժողովուրդն առաջին
անգամ Աստծո խոսքը
ստացավ իր մայրենի լեզվով:
Խորհրդարանի որոշմամբ
եկեղեցու ծառայողներն
ամբողջ թագավորության մեջ
պետք է պարզաբանեին Սուրբ
Գիրքը, և երեխաները դպրոցում
պիտի սովորեին կարդալ այն:

Ավետարանի օրհնյալ լույսն
անշեղորեն ու հաստատապես
ցրում էր տգիտության ու
սնահավատության խավարը:
Ազատվելով Յոնմի լծից՝ ազգը
հասավ աննախընթաց
զարթոնքի ու մեծության:
Շվեդիան դարձավ
Բողոքականության
ամրոցներից մեկը: Մեկ դար
անց՝ ծայրագույն վտանգի
պահին, այս փոքր և մինչ այդ
թույլ ազգը միակն էր
Եվրոպայում, որ համարձակվեց
օգնության ձեռք մեկնել
Գերմանիային Երեսնամյա
սոսկալի պատերազմի

Ժամանակ: Թվում էր, թե ողջ
Յոուսիսային Եվրոպան, ուր որ
է, նորից կհայտնվի Յոմի
բռնապետության տակ: Եվ
շվեդական բանակն էր հենց, որ
օգնեց Գերմանիային՝
կասեցնելու պապության
հաղթարշավը,
հանդուրժողականություն
շահելու բողոքա-կանների
համար՝ ինչպես
կալվինիստների, այնպես էլ
լութերականների, և
վերականգնելու խղճի
ազատությունն այն
երկրներում, որոնք ընդունել
էին Բարենորոգումը:

ԳԼՈՒԽ 14—ԱՎԵԼԻ ՈՒՇ ՇՐՋԱՆԻ ԱՆԳԼԻԱՑԻ ԲԱՐԵՆՈՐՈԳԻՉՆԵՐԸ

Մինչ Լյութերը Գերմանիայի
ժողովրդի առջև բացում էր փակ
Աստվածաշունչը, Թինդալն
Աստծո Յոգուց դրդվեց նույնն
անել Անգլիայի համար:
Ուիկլիֆի Աստվածաշունչը
թարգմանվել էր լատիներեն
տեքստից, որում բազմաթիվ
սխալներ կային: Այն երբեք չէր
տպագրվել, իսկ ձեռագիր
օրինակներն այնքան թանկ
էին, որ միայն հարուստներն ու
ազնվականները կարող էին

դրանք ձեռք բերել: Բացի այդ,
խստորեն արգելված լինելով
եկեղեցու կողմից՝ այն
համեմատաբար նեղ
շրջա-նակներում էր տարածվել:
1516-ին՝ Լյութերի թեզիսների
հայտնվելուց մեկ տարի առաջ,
Էրազմը հրատարակեց Նոր
Կտակարանի իր հոլնարեն ու
լատիներեն տարբերակը:
Վերջապես առաջին անգամ
Աստծո խոսքը տպագրվեց
բնագրի լեզվով: Այս
աշխատանքում ուղղվել էին
Նախկին թարգմանությունների
բազմաթիվ սխալներ, և միտքն
ավելի պարզ էր շարադրված:

Մտավորականներից շատերին
այն դրդեց ավելի հստակորեն
ըմբռնել ճշմարտությունը և նոր
թափ հաղորդեց

Բարենորոգման գործին: Բայց
հասարակ ժողովրդին Աստծո
խոսքը հիմ-նականում մնում էր
անհասանելի: Թինդալը պիտի
ավարտեր Ուիկլիֆի գործը՝ իր
հայրենակիցներին հասցնելով
Աստվածաշունչը:

Լինելով ճշմարտության ուշիմ
ու ջերմեռանդ որոնող՝ նա
բարի լուրն ընդունել էր Էրազմի
հոլնարեն Նոր Կտակարանից :
Նա աներկյուղ քարոզում էր իր

համոզմունքները՝ պնդելով, որ
ցանկացած ուսմունք պետք է
ստուգվի Սուրբ Գրքով:
Պապական այն
հավակնությունը, թե՛ եկեղեցին
է տվել Աստվածաշունչը, և
միայն եկեղեցին էլ կարող է
մեկ-նաբանել այն, թինդալը
պատասխանել է. «Գիտե՞ք, թե
ով է [246] ար-ծիվների
սովորեցնում որս գտնել: Յենց
այդ նույն Աստվածն էլ իր
կարոտ զավակներին
սովորեցնում է՝ գտնել իրենց
Յորը Նրա խոսքում: Դուք ոչ
միայն մեզ չեք տվել Սուրբ
Գիրքը, այլ հակառակը՝ այն

թաքցրել եք մեզնից: Այդ դուք
եք այրել Աստծո խոսքի
քարոզիչներին, ու եթե
կարողանայիք, կայրեիք նաև
Սուրբ Գիրքը» (Դ՝Օբիևյե,
Տասնվեցերորդ դարի
Բարենորոգման
պատմությունը, հ.18, գլ. 4):

Թինդալի քարոզչությունը մեծ
հետաքրքրություն առաջացրեց,
և շա-տերն ընդունեցին
ճշմարտությունը: Բայց
քահանաները զգոն էին, և նա
դեռ չէր հասցրել ավարտել իր
գործը, երբ նրանք իրենց
սպառնալիքներով ու

կեղծիքներով ջանացին
կործանել այն: Շատ հաճախ
նրանք հա-ջողության էին
հասնում: «Ի՞նչ կարելի է
անել,— բացականչում էր
Թինդալը,— մինչ ես սերմում եմ
մի դաշտում, թշնամին ավերում
է մյուսը, որից հենց նոր եմ
հեռացել: Ես չեմ կարող լինել
ամենուրեք: Օ՛, եթե
քրիստոնյաները Սուրբ Գիրքն
ունենային իրենց մայրենի
լեզվով, նրանք կկա-րողանային
ինքնուրույն դիմակայել այդ
ստաբաններին: Առանց
Ասավաճաշնչի հնարավոր չէ
համայնքին հաստատել

ճշմարտության մեջ» (Նույն տեղում, հ. 18, գլ. 4):

Ահա մի նոր գաղափար է ծնվում նրա մտքում: «Եհովայի տաճարում սաղմոսները երգվում էին Իսրայելի լեզվով,— ասաց նա,— և մի՞թե ավետարանը չպետք է անգլերեն հնչի այստեղ... Մի՞թե եկեղեցին կեսօրին ավելի քիչ լույս պիտի ունենա, քան արշալույսին... Քրիստոնյաները պետք է Նոր Կտակարանը կարդան իրենց մայրենի լեզվով»: Եկեղեցու աստվածաբաններն ու

ՈՒՍՈՒՑԻՋՆԵՐԸ հակասում էին միմյանց: Միայն Աստվածաշնչի միջոցով մարդիկ կարող էին հասնել ճշմարտությանը: «Մեկը այս աստվածաբանին է լսում, մյուսը՝ այն... Եվ այդ հեղինակներից յուրաքանչյուրը հակասում է մյուսին: Ուրեմն ինչպե՞ս տարբերենք ճիշտը սխալից... Ինչպե՞ս... Միայն Աստծո խոսքով» (ՆՈՒՅՆ տեղում, հ.18, գլ. 4):

Որոշ ժամանակ անց մի ուսյալ կաթոլիկ աստվածաբան նրա հետ վիճաբանելիս բացականչեց. «Մենք

գերադասում ենք ապրել
առանց Աստծո օրենքի, քան
առանց պապի օրենքների»:
Թինդալը պատասխանեց. «Ես
արհամարհում եմ պապին և
Նրա օրենքները: Ու եթե
Աստված խնայի իմ կյանքը, մի
քանի ասորի անց ես այնպես
կանեմ, որ գուժանով հերկող
տղան ավելի շատ քան կիմանա
Սուրբ Գրքից, քան դուք»
(Անդերսոն, Անգլերեն
Ատրվածաշնչի
տարեգրություններ, էջ 19):

Ժողովրդին իր լեզվով Նոր
Կտակարանը տալու՝ [247]

Թինդալի մտադրութիւնը, որ
Նա սկսել էր փայփայել, այժմ
ավելի վճռական դարձավ, և Նա
անմիջապէս անցավ գործի:
Չալածանքի պատճառով իր
տնից քշված՝ Նա գնաց Լոնդոն
և այնտեղ միառժամանակ
անարգել աշխատեց: Բայց
պապականները կրկին
դաժանորեն ստիպեցին Նրան
փախ- չել: Ողջ Անգլիան ասես
փակ էր Նրա առջև, և Նա որոշեց
ապաստարան փնտրել
Գերմանիայում: Այնտեղ Նա
սկսեց անգլերեն Նոր
Կտակարանի տպագրութիւնը:
Երկու անգամ աշխատանքը

դադարեցվեց, բայց երբ
արգելում էին տպագրել մի
քաղաքում, նա գնում էր մյուսը:
Ի վերջո, նա մեկնեց Վորմս,
որտեղ մի քանի տարի առաջ
Լյութերը խորհրդարանի առջև
պաշտպանել էր ավետարանը:
Այդ հին քաղաքում
Բարենորոգման բազմաթիվ
կողմնակիցներ կային, և
Թինդալն այնտեղ շարունակեց
իր գործը՝ առանց հետագա
արգելքների: Շուտով
տպագրվեց Նոր Կտակարանի
երեք հազար օրինակ, և նույն
տարում հետևեց ևս մեկ
հրատարակություն:

Նա մեծ եռանդով ու
համառությամբ շարունակեց իր
գործը: Չնայած որ Անգլիայի
իշխանություններն իրենց
նավահանգիստները հսկում
էին խստագույն
աջալրջությամբ, Աստծո խոսքը
տարբեր ճանապարհներով
թաքուն հասցվում էր Լոնդոն,
իսկ այնտեղից՝ ցրվում երկրով
մեկ: Ճմարտությանը
դիմակայելու պապականների
վարձերն ապարդյուն էին: Մի
անգամ Դարիեմի եպիսկոպոսը
մի գրավաճառից, ով Թինդալի
ընկերն էր, գնեց նրա

Աստվածաշնչերի ողջ կապոցը՝
դրանք ոչնչացնելու
նպատակով՝ կարծելով, թե մեծ
վնաս կհասցնի գործին: Բայց
ստացվեց հակառակը, ձեռք
բերված դրամով նյութեր
գնեցին նոր և ավելի որակյալ
հրատարակության համար, որն
այլ կերպ չէր կարող լույս
տեսնել: Երբ հետագայում
Թինդալը բանտարկվեց, նրան
խոստացան ազատ արձակել
այն պայմանով, որ նա
հայտներ նրանց անուկները,
ովքեր օգնել էին իրեն՝ հոգալու
Աստվածաշնչի տպագրման
ծախսերը: Նա պատասխանեց,

որ Դարհեմի եպիսկոպոսն արել
է ավելին, քան ուրիշ որևէ մեկը,
քանզի մեծ գումար վճարելով
իր մոտ եղած Աստվածաշնչերի
համար՝ նա իրեն
հնարավորութիւնն է տվել
համարձակ առաջ գնալու:

Թինդալը մատնվեց իր
թշնամիների ձեռքը և այս
անգամ շատ ամիսներ
անցկացրեց բանտում: Ի վերջո
նա իր հավատը կնքեց
Նահա-տակութեամբ, բայց նրա
պատրաստած զենքերը մյուս
զինվորներին [248]
հնարավորութիւնն տվեցին

պայքարելու գալիք բոլոր
դարերի ընթացքում՝ մինչև իսկ
մեր օրերը:

Լաթիմերն ամբիոնից քարոզում
էր, որ Աստվածաշունչը պետք է
կարդացվի ժողովրդի լեզվով:
Սուրբ Գրքի Յեղիևակը, ասում
էր նա, «Ինքն Աստված է», և
այս Գիրքն իր մեջ կրում է իր
Յեղիևակի զորությունն ու
հավերժությունը: «Չկա մի
թագավոր, կայսր, դատավոր
կամ տիրակալ... որ պարտավոր
չլինի հնազանդվել... Նրա սուրբ
խոսքին»: «Եկեք չքայլենք շեղ
ճանապարհներով, թույլ Աստծո

խոսքը առաջնորդի մեզ: Եկեք
չհետևենք... մեր նախնիների
օրինակին՝ վարվելով այնպես,
ինչպես նրանք են վարվել, այլ
անենք այն, ինչ նրանք պետք է
անեին» (Յոու Լատիմեր,
«Առաջին քարոզը, որ հնչել է
արքա Էդվարդ VI-ի առաջ»):

Ճշմարտությունը
պաշտպանելու համար վեր
ելան Բարնսը և Ֆրայթը՝
Թինդալի հավատարիմ
ընկերները: Նրանց հետևեցին
Ռիդլիզը և Քրանմերը:
Անգլիայի Բարենորոգման այդ
առաջնորդները ուսյալ մարդիկ

են եղել, և նրանցից շատերը
մեծ հարգանք են վայելել Յոնայի
համայնքում: Նրանք
պապությանն ընդդիմացել են
«սուրբ գահի»
մոլորություններն իմանալու
արդյունքում: Նրանց
ծանոթությունը Բաբելոնի
գաղտնիքներին ավելի մեծ ուժ
է հաղորդել իրենց
վկայությանն ընդդեմ նրա:

«Յիմա ես մի տարօրինակ հարց
տամ.— ասել է Լաթիմերը: Ո՞վ
է ամենաջանասեր
եպիսկոպոսն ու պրելատը
ամբողջ Անգլիայում... Տես-նում

Եմ, որ սպասում եք ինձնից լսել
Նրա անունը.... Ես կասեմ ձեզ.
դա սատանան է... Նա երբեք չի
լքում իր թեմը: Երբ էլ կանչեք
Նրան, նա միշտ տանն է... միշտ
զբաղված է գործով... Դուք
Նրան երբեք պարապ չեք գտնի,
հավաստիացնում եմ ձեզ...
Այնտեղ, ուր բնակվում է
սատանան... գրքերի համար
տեղ չկա, իսկ փոխարենը՝
մոմեր են, Աստվածաշնչի
կարիքը չկա, Նրա տեղ՝
տերողորմյաներ են,
ավետարանի լույսը պետք չէ,
փոխարենը՝ մոմերի լույսն է:
Այո, օրը ցերեկով... Քրիստոսի

Խաչը մի կողմ են դնում և
բացում քավարանի քակը
...մերկին, աղքատին ու
տկարին զրկում են հագուստից,
իսկ սրբապատկերները
զարդարում են, զուգում փայտն
ու քարը, մեծարում մարդու
ավանդություններն ու
օրենքները՝ արհամարհելով
Աստծո պատվերներն ու Նրա
ամենասուրբ խոսքը... Օ՛հ, եթե
միայն մեր քահանաները
Նույնքան եռանդուն լինեին
բարի ուսմունքի սերմը ցանելու
մեջ, որքան սատանան է՝ որով
ու մոլախոտ սերմելու մեջ»

(Նույն տեղում, «Քարոզ
գութանի մասին»): [249]

Գլխավոր սկզբունքը, որն առաջ
էին տանում այս
բարենորոգիչները, նույնն էր,
որին հետևել են վաղդեսները,
Ուիկլիֆը, Յան Յուսը, Լյութերը,
Ցվինգլին և Նրանց
համախոհները, այսինքն՝ Սուրբ
Գրքի անսխալական
հեղինակությունը՝ որպես
հավատի և վարքի չափանիշ:
Նրանք մերժում էին կրոնի
հարցերում խղճին բռնանալու՝
պապերի, տիեզերաժողովների,
եկեղեցու հայրերի և

Թագավորների իրավունքը:
Աստվածաշունչն էր նրանց
հեղինակությունը, և դրանով
էին նրանք ստուգում բոլոր
ունամունքներն ու պնդումները:
Այս սուրբ այրերին զորացնում
էր հավատն Աստծո և Նրա
խոսքի հանդեպ, երբ նրանք
զոհում էին իրենց կյանքը
խարույկի վրա: «Քաջացի՛ր,—
բացականչեց Լաթիմերը՝
դիմելով նահատակվող իր
ընկերոջը, երբ կրակի բոցն ուր
որ է լռեցնելու էր նրանց
ձայները,— այսօր Աստծո
շնորհիվ մենք այնպիսի ջահ
ենք վառելու Անգլիայում, որը,

համոզված եմ, երբեք չի մարի»
(Ջյուլ Լատիմերի գործերը, հ.1,
գլ. 13):

Ճոտլանդիայում Կոլումբայի և
Նրա համագործակիցների
ցանած ճշմարտության սերմերը
երբեք ամբողջովին չեն
ոչնչացել: Անգլիայի
եկեղեցիները Յոնմին
ենթարկվելուց հարյուրավոր
տարիներ անց Ճոտլանդիայի
եկեղեցիները դեռ պահպանում
էին իրենց ազատությունը:
Տասներկուերորդ դարում,
սակայն, պապությունը
հաստատվեց այստեղ, և ուրիշ

ոչ մի երկրում նրա
իշխանութիւնն այդքան
բացարձակ չի եղել: Ոչ մի տեղ
ավելի թանձր չի եղել խավարը,
բայց լույսի շողերը
թափանցեցին նաև այստեղ՝
խոստանալով պայծառ
արշալույս: Լուարդները, գալով
Անգլիայից և բերելով
Աստվածաշունչն ու Ռւիկլիֆի
ուսմունքը, շատ բան արեցին
ավետարանի գիտութիւնը
պահպանելու համար, և ամեն
դարում վկաներ ու
նահատակներ եղան:

Բարենորոգումն իր հետ բերեց
Լյութերի գրվածքները, և ապա
Թինդալի անգլերեննոր
Կտակարանը:

Յոգևորականության կողմից
աննկատ՝ այս լրաբերները լուռ
անցան սարերն ու հովիտները՝
կրկին բորբոքելով
ճշմարտության ջահը, որն
արդեն մարում էր
Շոտլանդիայում, քանդելով այն
գործը, որ Յոնան արել էր
կեղեքման չորս դարերի
ընթացքում:

Կրկին նահատակների արյունը
նոր թափ հաղորդեց

շարժմանը: Անսպասելիորեն
սթափվելով իրենց գործին
սպառնացող վտանգից՝
պապական առաջնորդները
խարույկի մատնեցին [250]
Շոտլանդիայի ամենավեհանձն
ու պատվավոր զավակներից մի
քանիսին: Բայց դրանով նրանք
միայն ամբիոն կանգնեցրին,
որից այդ մեռնող վկաների
խոսքերը հնչում էին ամբողջ
երկրով մեկ՝ անհազ տենչ
առաջացնելով մարդկանց
հոգիներում՝ թոթափելու Յռոմի
շղթաները:

Ծագումով ու բնավորությամբ
ազնվականներ Յամիլթոնն ու
Ուիշարթը մի երկար շարք
ավելի հասարակ
աշակերտների հետ միասին
իրենց կյանքը զոհեցին
խարույկի վրա: Բայց
Ուիշարթին այրող կրակը
կյանքի կոչեց մեկին, ում բոցը
չէր կարող լռեցնել, մեկին, ով
Աստծո զորությամբ
պապության մահազանգն էր
խփելու ճոտլանդիայում:

Ջոն Նոքսը երես էր թեքել
եկեղեցու ավանդություններից
ու խորհրդապաշտությունից՝

սնվելու Աստծո խոսքի
ճշմարտություններով, և
Ուիշարթի ուսմունքը
հաստատել էր Յոնմի հետ իր
կապերը խզելու և հալածվող
քարենորոգիչներին միանալու
Նրա որոշումը:

Երբ ընկերներն առաջարկեցին
Նրան քարոզիչ դառնալ, նա
սահմնկելով ընկրկեց՝
վախենալով
պատասխանատվությունից, և
միայն մեկուսանալուց ու ինքն
իր հետ ցավոտ պայքարից օրեր
անց նա վերջա-պես
համաձայնեց: Բայց ընդունելով

այդ պաշտոնը՝ նա մինչև իր
կյանքի վերջը գնաց առաջ՝
աներեր վճռականությամբ ու
անվեհեր քաջությամբ: Այս
անկեղծ բարենորոգիչը ահ
չուներ: Նահատակության
խարույկները, որ բոցավառվում
էին նրա շուրջը, միայն էլ ավելի
էին բորբոքում նրա եռանդը:
Բռնակալի սպառնացող
կացինը կախված իր
գլխավերևում՝ նա աջ ու ձախ
ջախջախիչ հարվածներ էր
հասցնում կռապաշտությանը:

Դեմառդեմ հանդիպելով
ճոտլանդիայի թագուհուն, ում

Ներկայու-թյամբ բողոքական
առաջնորդներից շատերի
եռանդը նվազել էր, Ջոն Նոքսը
անվեհեր վկայեց
ճշմարտությունը: Նրան
հնարավոր չէր շահել
փաղաքշանքով, և նա չէր
սարսռում սպառնալիքներից:
Թագուհին մե-ղադրեց նրան
հերձվածողության մեջ՝ ասելով,
որ նա, ժողովրդին
սովո-րեցնելով ընդունել
պետության կողմից արգելված
կրոնը, այդպիսով խախտել է
Աստծո պատվերը, ըստ որի՝
հպատակները պիտի
ենթարկվեն իրենց

իշխաններին: Նոքար
վճռականորեն պատասխանեց.

«Ինչպես որ ճշմարիտ կրոնն իր
սկզբնական ուժն ու
հեղինակությունը ստացել է ոչ
թե այս աշխարհի իշխաններից,
այլ բացառապես
հա-վերժական Աստծուց,
այնպես էլ հպատակները
պարտավոր չեն իրենց կրոնը
[251] ձևավորելու իրենց
իշխանների ցանկությունը:
Քանզի հա-ճախ իշխանները
բոլորից ավելի տգետ են Աստծո
ճշմարիտ կրոնի հար-ցերում...
Եթե Աբրահամի ողջ սերունդը

փարավոնի կրոնն ընդունելը,
ում հպատակներն էին նրանք
այդքան երկար ժամանակ,
ասացեք, խնդրեմ, տիկին, ի՞նչ
կրոն կլինեք աշխարհում: Կամ
էլ, եթե առաքյալների օրերում
բոլոր մարդիկ ընդունեին Հռոմի
կայսրերի կրոնը, ապա ի՞նչ
կրոն կլինեք երկրի երեսին... Եվ
այսպես, տիկին, կարող եք
նկատել, որ հպատակները
պարտավոր չեն դավանել
իրենց իշխանների կրոնը, թեև
նրանց կարգադրված է
հնազանդվել»:

Մարիամն ասաց. «Դուք Սուրբ
Գիրքը մեկնաբանում եք մի
ձևով, կաթոլիկ ուսուցիչները՝
մեկ այլ: Ո՞ւմ պետք է ես
հավատամ, և ո՞վ պիտի լինի
դատավորը»:

«Դուք պիտի հավատաք
Աստծուն, ով պարզորոշ խոսում
է իր խոս-քում,—
պատասխանեց
բարենորոգիչը,— իսկ այն
ամենում, ինչ այդ խոսքը չի
սովորեցնում, դուք պիտի
հավատաք ոչ մեկին, ոչ էլ
մյուսին: Աստծո խոսքն ինքնին
պարզ է, ու եթե ինչ-որ բան

անհասկանալի է մի տեղում,
Սուրբ Յոզիս, ով ինքն իրեն
երբեք չի հակասում,
պարզաբանում է դա մյուս
տեղերում, այնպես որ կասկած
չի մնում, եթե միայն մարդը
չհա- մառի իր տգիտության
մեջ» (Դեյվիդ Լեինգ, Ջոն Նոքսի
հավաքածուն, հ. 2, էջ 281, 284):
,

Ահա այն ճշմարտությունները,
որ անվախ բարենորոգիչն
ասաց թագուհուն՝ վտանգելով
իր կյանքը: Նույն աներկյուղ
քաջությամբ էլ նա հետամուտ
եղավ իր նպատակին՝

աղոթելով ու վարելով Տիրոջ
մարտերը, մինչև որ
ճոտլանդիան ազատվեց
պապությունից:

Բողոքականության
հաստատումը Անգլիայում՝
որպես ազգային կրոն,
նվազեցրեց, բայց լիովին
չվերացրեց հալածանքը: Մինչ
Յոնի ուսմունքից շատ կեսեր
մերժվեցին, որոշ կաթոլիկական
ծեսերի ձևեր, այնուամենայնիվ,
պահպանվեցին: Պապի
գերիշխանությունը մերժվեց,
բայց նրա փոխարեն միապետը
գահակալեց՝ որպես եկեղեցու

գլուխ: Եկեղեցու ծառայության
մեջ ավետարանի
մաքրությանից ու
պարզու-թյունից լուրջ
շեղումներ կային: Խղճի
ազատության մեծ սկզբունքը
դեռ չէր հասկացվել: Թեև
բողոքական իշխանավորները
հազվադեպ էին դիմում այն
սուկալի դաժանություններին,
[252] որ Յոնան գործադրում էր
հերձվածողության դեմ,
Աստծուն իր խղճի
թելադրանքով երկրպագելու՝
յուրաքանչյուր մարդու
իրավունքը չէր ճանաչվում:
Բոլորից պահանջվում էր

դավանել հաստատված
եկեղեցու ուսմունքն ու պահել
պաշտամունքի ընդունված
ձևերը: Այլախոհները, շատ թե
քիչ չափով, հարյուրամյակներ
շարունակ ենթարկվում էին
հալածանքների:

Տասնյոթերորդ դարում
հազարավոր քարոզիչներ
զրկվեցին իրենց
պաշտոններից: Մեծ
տուգանքների,
բանտարկության ու աքսորի
սպառնալիքով արգելված էր
մասնակցել որևէ կրոնական
ժողովի, բացի պաշտոնական

Եկեղեցու պաշտամունքից:
Չավատարիմ հոգիները, ովքեր
չէին կարող չհավաքվել՝
միասին երկրպագելու
Աստծուն, ստիպված էին լինում
հանդիպել մութ
նրբանցքներում, Լքված տների
տանիքներում, իսկ
բարենպաստ եղանակին՝
անտառում, կեսգիշերին:
Անտառի գողտրիկ խորքերում՝
աստվածաշեն տաճարում,
Տիրոջ այդ ցրված ու հալածվող
զավակները հավաքվում էին՝
իրենց աղերսներն ու
շնորհակալությունը հայտնելու
Աստծուն: Եվ չնայած

զգուշավորութեանը՝ շատերը
չար-չարվում էին իրենց
հավատի համար: Բանտերը
լեփ-լեցուն էին, ընտանիքները՝
քայքայված: Շատերն աքսորվել
էին օտար երկրներ: Սակայն
Աստված իր ժողովրդի հետ էր,
և հարսձանքներն անգոր էին
լռեցնել նրանց վկայաթյու նը:
Շատերը քշվեցին օվկիանոսից
այն կողմ՝ Ամերիկա, և այստեղ
հիմք դրեցին քաղաքացիական
ու կրոնական ազատութեանը,
որը դարձավ այս երկրի
խորհրդանիշն ու փառքը:

Ինչպես առաքյալների օրերում,
հալածանքները կրկին
Նպաստեցին ավետարանի
առաջընթացին: Անառակ և
ոճրագործ մարդկանցով լեցուն
գաւրշելի զնդանում Ջոն
Բունիանն ասես շնչում էր
երկնքի մաքուր օդը, և հենց
այնտեղ նա գրեց կորուսյալ
երկրից դեպի երկնային
քաղաքը ճամփորդող
ուխտագնացի մասին իր
զարմանահրաշ
այլաբանությունը: Ավելի քան
երկու հարյուր տարի Բեդֆորդի
բանտից հնչող այդ ձայնը
ցնցող զորությամբ դիմել է

մարդկանց սրտերին: ԲուՆիանի
«Ուխտագնացի
ճամփորդությունը» և
«Գերառատ շնորհ
մեղավորներից մեծագույնին»
գրքերը շատերին ուղղել են
դեպի կյանքի ճանապարհը:

Բաքստերը, Ֆլավելը, Ալեինը և
տաղանդավոր, ուսյալ ու
քրիստոնեական խոր
փորձառության տեր այլ
մարդիկ խիզախորեն
կանգնեցին՝ [253]
պաշտպանելու «մեկ անգամ
սրբերին ավանդված»
հավատը: Այս մարդկանց արած

գործը՝ դատապարտված և
օրենքից դուրս հայտարարված
այս աշխարհի տիրակալների
կողմից, երբեք չի կարող
կորչել: Տլավելի «Կյանքի
աղբյուրն» ու «Շնորհի
ընդունումը»
հազարավորներին սովորեցրել
են, թե ինչպես իրենց հոգու
պահ-պանությունը վստահեն
Քրիստոսին: Բաքստերի
«Վերածնված հովիվն»
օրհնություն է եղել շատերի
համար, ովքեր փափագել են
Աստծո գործի վերածնունդը,
իսկ նրա «Սրբերի
հավիտենական հանգիստը»

մարդկանց առաջնորդել է դեպի
այն «հանգիստը», որ դեռ մտում
է Աստծո ժողովրդի համար:

Հարյուր տարի անց՝ հոգևոր
մեծ խավարի օրերին, որպես
Աստծո ջահակիրներ հանդես
եկան Ուայթֆիլդը և
Ուեսլիները: Հաստատված
եկեղեցու իշխանության ներքո
Անգլիայի ժողովուրդը
կրոնական խոր անկում
ունեցավ, որը գրեթե չէր
տարբերվում
հեթանոսությունից:
Հոգևորականությունը տարված
էր բնական կրոնի

ուսումնասիրությամբ, որի վրա
էլ մեծապես հիմնել էին իրենց
աստվածաբանությունը: Բարձր
խավերը ծաղրում էին
բարեպաշտությունը՝
պարծենալով, որ վեր են այդ
մուլեռանդությունից: Ցածր
խավերը տգիտության ու
արատների մեջ էին, մինչդեռ
եկեղեցին ո՛չ քաջություն ուներ,
ո՛չ էլ հավատ՝ օժանդակելու
ճշմարտության փլուզվող
գործին:

Չավատով արդարացման մեծ
սկզբունքը, որն այդքան
հստակորեն սովորեցրել էր

Լյուրթերը, գրեթե ամբողջովին
մոռացվել էր, և դրա տեղը
զբաղեցրել էր փրկութեան
համար բարի գործերին
վստահելու՝ Յոնի ուսմունքը:
Ուայթֆիլդը և Ուեսլիները,
լինելով պետական եկեղեցու
անդամներ, անկեղծորեն
որոնում էին Աստծո
բարեհաճությունը, որն,
ինչ-պես նրանց սովորեցրել
էին, ձեռք էր բերվում առաքինի
կյանքով ու կրո-նական ծեսերը
պահելով:

Մի անգամ, երբ Չարլզ Ուեսլին
ծանր հիվանդացել էր և

Կարծում էր, թե մեռնելու է,
Նրան հարցրին, թե ինչի վրա է
Նա դնում հավիտենական
կյանքի իր հույսը: Նա
պատասխանեց. «Ես ջանք չեմ
խնայել Աստծուն ծառայելու
համար»: Երբ թվաց, թե հարց
տվող իր ընկերը լիովին
բա-վարարված չէր
պատասխանով, Ուեսլին
մտածեց. «Մի՞թե իմ ջանքերը
բավարար հիմք չեն հուսալու
համար: Նա ինձ ուզում է զրկե՞լ
իմ ջանքերից: Ես ուրիշ ոչինչ
չունեմ՝ հույսս վրան դնելու»
(Ջոն Ուայթհեդ, Պատվեյի
Չարլզ Ուեսլիի կյանքը, Էջ 102):

Այսպիսին էր թանձր խավարը,
[254] որ պատել էր եկեղեցին՝
թաքցնելով քավությունը,
զրկելով Քրիստոսին իր
փառքից և մարդկանց մտքերը
շեղելով իրենց փրկության
միակ հույսից՝ խաչյալ
Քրիստոսի արյունից:

Ուեսլին ու նրա համախոհները
հասկացել էին, որ իսկական
կրոնը սրտից է բխում, և որ
Աստծո օրենքը տարածվում է
ինչպես խոսքերի ու
արարքների, այնպես էլ մտքերի
վրա: Համոզվելով սուրբ սիրտ,
ինչպես նաև ճիշտ վարք

ՈՒՆԵՆԱԼՈՒ ԱՆԻՐԱԺԵԶՏՈՒԹՅԱՆ
ՄԵՃ՝ ՆՐԱՆՔ ԼՐՉՈՐԵՆ ՆՈՐ ԿՅԱՆՔ
ՍԿՍԵԳԻՆ: ԱՂՈՔՔՆԵՐՈՎ ՈՒ
ԱՄԵՆԱՋԵՐՄԵՌԱՆՈՎ ՋԱՆՔԵՐՈՎ
ՆՐԱՆՔ ՍԿՍԵԳԻՆ ՃՆՉԵԼ ԻՐԵՆԳ
ՄԱՐՄՆԱՎՈՐ ՍՐՈՒԻ ՃԱՐ
ԽԱԿՈՒՄՆԵՐԸ: ՆՐԱՆԳ
ԱՆՃ-ՆՈՒՐԱԳ ԿՅԱՆՔՆ ԱՋՔԻ ԷՐ
ՂՆԿՆՈՒՄ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՄԲ ՈՒ
ԽՈՆԱՐԻՈՒԹՅԱՄԲ ՆՐԱՆՔ
ԽԱՏՈՐԵՆ ՈՒ ՃՉԳՐՈՒԹՅԱՄԲ
ԿԱՏԱՐՈՒՄ ԷԻՆ ԱՅՆ ԱՄԵՆԸ,
ԻՆՃՆ, ԻՐԵՆԳ ԿԱՐԾԻՔՈՎ, ԿԱՐՈՂ
ԷՐ ՕԳՆԵԼ՝ ԱՎԱԽՈՎԵԼՈՒ
ԱՄԵՆԱԳԱՆԿԱԼԻՆ՝ ՍՐԲՈՒԹՅԱՆ,
ՈՐՆ ԵԼ ԿԱՐԺԱՆԱԳՆԵՐ ԱՍՏԾՈ
ԲԱՐԵԽԱԾՈՒԹՅԱՆԸ: ԲԱՅԳ ՆՐԱՆՔ

չհասան իրենց նպատակին:
Չուր էին մեղքի
դատապարտությունից և նրա
իշխանությունից ազատվելու
նրանց ջանքերը: Դա նույն
պայքարն էր, որը Լյուծերն
ունեցել էր Էրֆուրտի իր խցում:
Նրա հոգին տանջել էր միևնույն
հարցը. «Մարդն ինչպե՞ս
կարդարանա Աստծո առաջ»
(Յոբ 9.2):

Աստվածային ճշմարտության
կրակը, որը գրեթե մարել էր
Բողոքականության
զոհասեղաններին, պետք է
նորից բռնկվեր այն հին ջահից,

որ դարերի խորքից փոխանցել
էին Բոհեմիայի
քրիստոնյաները:
Բարենորոգումից հետո
բողոքականությունը
Բոհեմիայում ոտնահար էր եղել
Ջոնի հորդանների կողմից:
Բոլորն, ովքեր հրաժարվել էին
ուրանալ ճշմարտությունը,
ստիպված փախել էին:
Նրանցից ոմանք,
պատսպարվելով
Սաքսոնիայում, այնտեղ
պահպանեցին հին հավատը:
Չենց այս քրիստոնյաների
հետնորդներից էր, որ լույսը

հասավ Ուեսլիին և նրա
համախոհներին:

Ջոն և Չարլզ Ուեսլիները,
ձեռնադրվելով ծառայության,
ուղարկվեցին Ամերիկա՝
ավետարանչության: Նավում
մորավիացիների մի խումբ
կար: Երբ նավարկության
ընթացքում սաստիկ
փոթորիկներ էին բարձրանում,
Ջոն Ուեսլին, դեմառդեմ
հանդիպելով մահվանը, զգում
էր, որ Աստծո հետ հաշտության
վստահությունն չունի:
Գերմանացիներն,
ընդհակառակը, այնպիսի

հանդարտություն ու
վստահություն էին դրսևո-րում,
որ նրան բոլորովին օտար էին:

[255] «Ես վաղուց նկատել էի,—
ասում է նա,— նրանց
պահվածքի անօրինակ
լրջությունը: Նրանք անդադար
վկայում էին իրենց
խոնարհությունը՝ մյուս
ուղևորների համար
ծառայություններ անելով, որ
անգլիացիներից ոչ ոք չէր անի,
և դրա դիմաց նրանք վճար չէին
պահանջում կամ ընդունում՝
ասելով, որ դա օգտակար է
իրենց հպարտ սրտերը

Խոնարհեցնելու համար, և որ
իրենց սիրող Փրկիչը ավելին է
արել իրենց համար: Եվ ամեն
օր նրանց առիթ էր տրվում
ցույց տալու հեզուսթյուն, որը
հնարավոր չէր սասանել: Երբ
նրանց հրում էին, հարվածում
կամ վայր գցում, նրանք վեր
էին կենում ու անտրտունջ
հեռանում: Չիմա առիթ եղավ
ստուգելու, թե արդյո՞ք նրանք
ազատ են վախից,
հպարտութունից,
բարկութունից ու
վրեժխնդրութունից: Երգելու
պահին, որով սկսվել էր նրանց
պաշտամունքը, մի ահռելի

ալիք բարձրացավ, և փշրվելով
Նավի վրա՝ պատառոտեց մեծ
առագաստը և այնպես ծածկեց
Նավը, որ թվաց, թե մեծ
անդունդն արդեն կլանեց
բոլորիս: Անգլիացիները
սարսափելի վայնասուն
բարձրացրին: Իսկ
գերմանացիները հանգիստ
շարունակեցին երգել: Նրանցից
մեկին ես հետո հարցրի. «Դուք
չվախեցա՞ք»: «Շնորհակալ եմ
Աստծուց, ոչ»,—
պատասխանեց Նա: «Իսկ ձեր
կանայք ու երեխանե՞րը»,—
հարցրի ես: Նա մեղմորեն
պատասխանեց. «Մեր կանայք

և երեխաները չեն վախենում
մահից» (Ջոն Ուայթհեդ,
Պատվելի Չարլզ Ուեսլիի
կյանքը, էջ 10):

Հասնելով Սավաննա՝ Ուեսլին
կարճ ժամանակ ապրեց
մորավիացիների հետ: Նրա
վրա խոր տպավորություն էր
թողել նրանց քրիստոնեական
վարքը: Նրանց
պաշտամունքներից մեկի
մասին, որն ապշեցուցիչ
կերպով տարբերվում էր
Անգլիայի եկեղեցու անշունչ
ձևա-պաշտությունից, նա գրել
է. «Այդ ամենի մեծագույն

պարզութիւնը և
հանդիսավորութիւնն ինձ
ասես տասնյոթ դար հետ
փոխադրեցին, և թվաց, թէ ես
մասնակցում եմ այն
ժողովներից մեկին, որոնցում
բացակա-յում էր արտաքին
ձևականութիւնը, և այն վարում
էր վրանակար Պողոսը կամ
ձկնորս Պետրոսը՝ Յոզու և
զորութեան դրսևորմամբ»
(Նույն տեղում, էջ 11,12):

Վերադառնալով Անգլիա՝
Ուեսլին մորավիացի մի
քարոզչի օգնու-թյամբ սկսեց
ավելի պարզորոշ հասկանալ

աստվածաշնչյան հավատը: Նա
համոզվեց, որ պետք է
հրաժարվի փրկվելու համար իր
գործերին ապավինելուց և
ամբողջովին վստահի [256]
«Աստծո Գառին, որ վեր է
առնում աշխարհի մեղքը»:
Լոնդոնում մորավիական
համայնքի ժողովներից մեկում
ընթերցվեց Լյութերի
գրվածքներից մի հատված,
որտեղ նկարագրվում էր այն
փոփոխութունը, որ Սուրբ
Յոզիան գործում է
հավատացյալի սրտում: Երբ
Ուեսլին լսեց այդ խոսքերը, նրա
սրտում հավատ արթնացավ:

«Ես տարօրինակ ջերմություն
զգացի իմ սրտում,- ասել է
Նա,— զգացի, որ փրկվելու
համար իրոք ապավինում եմ
Քրիստոսին, միայն Նրան, և
ինձ հավաստիացում տրվեց, որ
Նա վեր է առել իմ մեղքը,
Նույնիսկ իմը, և ազատել է ինձ
մեղքի ու մահվան օրենքից»
(Նույն տեղում, էջ 52):

Հոգևեցուցիչ ու անդադրում
պայքարի, խստագույն
անձնուրացու-թյան,
Նախատինքի ու նվաստացման
երկար տարիների ընթացքում
Ուեսլին համառորեն հետամուտ

Էր եղել Աստծուն որոնելու իր
Նպատակին: Հիմա նա գտել էր
Նրան: Նա հասկացել էր, որ
շնորհ գտնելու համար իր
տանջալի ջանքերը՝
աղոթքներն ու ծոմերը,
գթության գործերն ու
ինքնուրացությունը, լոկ պարզև
էր, որը տրվում է «առանց
փողի, առանց վճարի»:

Հաստատվելով Քրիստոսի
հավատի մեջ՝ նա ամբողջ
հոգով վառվեց Աստծո ձրի
շնորհի փառավոր ավետարանի
գիտությունն ամենուրեք
տարածելու ցանկությամբ:

«Ողջ աշխարհը ես իմ
համայնքն եմ հա-մարում,—
ասում էր Նա.— դրա որ մասում
էլ լինեմ, ես հարմար և ճիշտ եմ
գտնում և պարտքս եմ
համարում հռչակել փրկության
բարի լուրը բոլորին, ովքեր
պատրաստ են լսել» (Նույն
տեղում, էջ 74):

Նա շարունակեց իր խստակյաց
ու ինքնուրաց կյանքը, բայց
հիմա արդեն ոչ թե որպես
հավատի հիմքը, այլ արդյունքը,
ոչ թե որպես սրբության
արմատը, այլ պտուղը:
Քրիստոնյայի հավատի հիմքը

Աստճո շնորհն Է Քրիստոսում, և
այդ շնորհը նրան կդրդի
հնազանդության: Ուեսլին իր
կյանքը նվիրեց այն մեծ
ճշմարտությունների
քարոզչությանը, որ ընդունել
էր. արդարացում հավատով
Քրիստոսի քավչարար արյանը
և սրտի վրա Սուրբ Հոգու
նորոգող ուժը, որի պտուղը
քրիստոսանման կյանքն է:

Ուայթֆիլդը և Ուեսլի
եղբայրներն իրենց
ծառայությանը պատ-րաստվել
էին իրենց խղճուկ վիճակի
տևական ու տանջալի

գիտակցմամբ՝ համոզված, որ
իրենք կորած են, և որպեսզի
ուսակ լինեին նեղություններ
կրելու՝ [257] որպես քրիստոսի
քաջ զինվորներ, Աստված
Նրանց անցկացրեց
արհամարհանքի, ծաղրի ու
կատաղի հալածանքների
քուրայով՝ թե՛ համալսարանի
տարիներին և թե՛ իրենց
ծառայության սկզբում: Իրենց
անաստված ուսանող
ընկերները Նրանց և մի քանի
ուրիշների, ովքեր համակրում
էին Նրանց, արհամարհանքով
անվանում էին մեթոդիստներ՝
մի անուն, որն այսօր պատվով

Է կրում Անգլիայի և Ամերիկայի
մեծագույն
հարանվանություններից մեկը:

Որպես Անգլիկան եկեղեցու
անդամներ՝ նրանք խստորեն
հետևում էին այդ եկեղեցու
երկրպագության ձևերին, բայց
Տերն իր խոսքում նրանց առջև
ավելի բարձր չափանիշ դրեց:
Սուրբ Յոզիմ դրդեց նրանց
քարոզել խաչյալ Քրիստոսին:
Նրանց աշխատանքն
ուղեկցվում էր Բարձրյալի
զորությամբ: Հազարավորները
համոզվում էին նրանց
իրավացի լինելու մեջ ու

իսկապես վերափոխվում:
Անհրաժեշտ էր այդ գառներին
պաշտպանել ոռնացող
գայլերից: Ուեսլին միտք չուներ
ևոր հարանվանություն
ստեղծելու, նա Ավետարանը
ընդունածներին պար-զապես
համախմբեց այսպես կոչված
«Մեթոդիստների միության»
մեջ:

Խորհրդավոր ու ուժասպառիչ
էր պայքարը, որ մղում էր այս
քարոզիչների դեմ
պաշտոնական եկեղեցին, բայց
Աստված Իր իմաստությունը
իրադարձություններն այնպես

շրջեց, որ բարենորոգման գործը
սկսվի հենց եկեղեցու ներսում:
Եթե այն ամբողջովին դրսից
գար, չէր կարող թափանցել
այնտեղ, ուր ամենից շատ էր
հարկավոր: Բայց քանի որ
վերածննդի քարոզիչները
եկեղեցու անդամներ էին և
գործում էին եկեղեցու
լիազորութայան սահմաններում,
որտեղ որ հնարավորություն էր
ընձեռվում, ճշմարտությունը
մուտք էր գործում այնտեղ, ուր
այլ պա-րագաներում դռները
փակ կմնային:
Յոգևորականներից ոմանք,
արթ-նանալով իրենց

բարոյական թմրությունից,
ջերմեռանդ քարոզիչներ
դարձան իրենց
համայնքներում:
Ձևապաշտությունից քարացած
եկեղեցիները սկսում էին
կենդանանալ:

Ուեսլիի օրերում, ինչպես և
եկեղեցու պատմության բոլոր
դարերում, զանազան
շնորհների տեր մարդիկ
կատարել են իրենց համար
նշա-նակված աշխատանքը:
Միգուցե նրանք ուսմունքի որոշ
կետերում
տարածայնություններ են

ունեցել, սակայն բոլորն էլ
առաջնորդվել են Աստծո Յոգով
և միավորվել են Քրիստոսի
համար հոգիներ շահելու
գերագույն և նպատակի շուրջը:
Ուայթֆիլդի և Ուեսլիների միջև
տարածայնությունը մի անգամ
սպառնացել էր օտարացում
ստեղծել, [258] բայց քանի որ
Նրանք հեզուսյուն էին սովորել
Քրիստոսի դպրոցում,
փոխադարձ սերն ու
երկայնամտությունը
հաշտեցրեց Նրանց: Նրանք
վիճաբանելու ժամանակ
չունեին, երբ ամենուրեք
գերիշխում էին կեղծիքն ու

անիրավությունը, իսկ
մեղավորները՝ կորչում:

Աստծո ծառաները քայլում էին
փշոտ ճանապարհով: Ազդեցիկ
ու կրթված մարդիկ իրենց բոլոր
ուժերով ընդդիմանում էին
Նրանց: Որոշ ժամանակ անց
հոգևորականներից շատերը
վճռական թշնամություն
ցուցաբերեցին, և եկեղեցիների
դռները փակվեցին մաքուր
հավատի և այն հռչակողների
առջև: Եկեղեցական ամբիոնից
Նրանց դատապարտելու՝
հոգևորականների ջանքերը
բորբոքեցին խավարի,

տգիտութեան ու անօրենութեան
տարերքը: Կրկին ու կրկին Ձոն
Ուեսլին Աստճո տրտ-մութեամբ
հրաշքով փրկվում էր մահից:
Երբ ամբոխի զայրույթը
բորբոքվում էր նրա դէմ, և
թվում էր, թէ որևէ ելք չկա
փրկվելու, մի հրեշտակ՝
մարդկային կերպարանքով,
կանգնում էր նրա կողքին,
ամբոխը ընկրկում էր, և
—Քրիստոսի ծառան անվնաս
դուրս էր գալիս վտանգավոր
տեղից:

Կատաղած ամբոխից
ազատվելու այդ դեպքերից

մեկի մասին Ուեսլին ասել է.
«Շատերը ջանում էին ինձ վայր
զցել, երբ մենք մի սայթաքուն
ճանապարհով բլրից իջնում
էինք քաղաք՝ կարծելով, որ եթե
ընկնեմ, այլևս վեր չեմ կենա:
Բայց ես ոչ մի անգամ
չսայթաքեցի և չսահեցի, մինչև
որ լիովին ազատվեցի նրանց
ձեռքից... Շատերն ապարդյուն
ջանում էին բռնել օձիքիցս կամ
շորերիցս, բայց միայն մեկին
հաջողվեց բռնել բաճկոնակիս
ծայրից, որի կտորը հետո մնաց
նրա ձեռքում, իսկ մյուս կտորը,
որի գրպանում դրամս էր,
պատռվեց միայն կիսով չափ...

Մի ուժեղ մարդ հետևիցս մի
քանի անգամ փորձեց խփել ինձ
կաղնե մահակով, որի մի
հարվածը, եթե դիպչեր գլխիս
հետևամասին, նրան կազատեր
հետագա բոլոր ջանքերից: Բայց
ամեն անգամ հարվածք,
չգիտեմ ինչպես, շեղ էր
անցնում, թեև ես չէի կարող
շարժվել ո՛չ աջ, ո՛չ ձախ... Մեկ
ուրիշը, ճեղքելով ամբոխը,
ձեռքը բարձրացրեց
հարվածելու, բայց հանկարծ
անսպասելիորեն իջեցրեց՝
միայն շոյելով գլուխս, և ասաց.
«Ի՞նչ փափուկ մազեր ունի»:
Ամենաառաջին մարդիկ, որոնց

սրտերը փոխվեցին, քաղաքի
հերոսներն էին, ամբոխի
հրամանատարները բոլոր [259]
բախումներում, որոնցից մեկը
աղմկոտ հրապարակներում
նույնիսկ դրամով կռվող էր ...

«Որքա՛ն մեղմորեն ու
աստիճանաբար է Աստված մեզ
պատրաստում՝ կատարելու էր
կամքը: Երկու տարի առաջ
աղյուսի կտորով հարվածեցին
ուսերիս: Մեկ տարի չէր անցել,
որ քարով խփեցին
քթարմատիս: Անցյալ ամիս
ստացա մեկ հարված, իսկ այս
երեկո՝ երկուսը, մեկը՝ քաղաք

գալուց առաջ, մյուսն այնտեղից
դուրս գալուց հետո, բայց
երկուսն էլ կարծես դատարկ
բան լինեին: Թեև մի տղամարդ
ամբողջ ուժով խփեց կրծքիս,
իսկ մյուսը՝ բերանիս այնպիսի
թափով, որ անմիջապես արյուն
դուրս ցայտեց, բայց ես
ամենևին ցավ չզգացի, ասես
ինձ դիպել էին ծղոտով» (Ջոն
Ուեսլի, Աշխատություններ, հ. 3,
Էջ 297, 298):

Այդ վաղ օրերի մեթոդիստները,
ինչպես քարոզիչները, այնպես
էլ ժողովուրդը, ծաղրանք ու
հալածանք էին կրում և

Եկեղեցու անդամների և Նրանց
թյուր խոսքերից բորբոքված
բացահայտ անհավատների
կողմից: Նրանց բերում էին
դատարաններ՝ ներկայացնելով
այսպես կոչված
արդարադատությանը, քանզի
արդարադատությունը
հազվադեպ երևույթ էր այն
ժամանակվա
դատարաններում: Նրանք
հաճախ բռնության էին
ենթարկվում իրենց
հալածիչներից: Գռեհիկ
ամբոխը ներխուժում էր տնից
տուն, ջարդուփշուր անում
կահ-կարասին՝ կողոպտելով

ինչ— որ կամենար,
գազանաբար բռնանում
տղամարդկանց, կանանց և
երե-խաների վրա: Երբեմն
նույնիսկ հայտարարություններ
էին փակցվում՝ հրավիրելով
բոլորին, ովքեր կցանկանային
օգնել՝ փշրելու մեթոդիստների
պատուհանները և թալանելու
նրանց տները, նշված ժամին
հավաքվելու տվյալ վայրում:
Մարդկային ու աստվածային
օրենքների նման բացահայտ
խախտումները որևէ պատժի
չէին արժանանում:
Պարբերաբար հալածանքների
էին ենթարկում այս մարդկանց,

ոււմ միակ մեղքը մեղավորին
կորստյան ճանապարհից դեպի
սրբութեան ուղին դարձնելու
ձգտումն էր:

Իր և իր համախոհների դեմ
ներկայացվող մեղադրանքների
վերա-բերյալ Ջոն Ուեսլին ասել
է. «Ոմանք պնդում են, թե այդ
մարդկանց ուսմունքը կեղծ է,
սխալ և մոլի, թե այն նոր է և
չլսված մինչև վերջերս, թե այդ
ամենը կվակերություն,
մոլեռանդություն և
պապություն է: Այդ
մեղադրանքն արդեն
ամբողջովին հերքված է, քանզի

պարզորոշ ցույց է տրվել, որ այս ուսմունքի յուրաքանչյուր կետը հիմնված է Սուրբ գրքի վրա և մեկնաբանված [260] մեր իսկ եկեղեցու կողմից: Իսկ եթե Սուրբ Գիրքը ճիշտ է, տրեմն այս ուսմունքը չի կարող կեղծ կամ սխալ լինել»: Մյուսներն ասում են. «Նրանց ուսմունքը չափազանց խիստ է: Նրանք շատ նեղ են դարձնում երկինք տանող ճանապարհը»: Սա է ճշմարտապես բուն (և որոշ ժամանակ գրեթե միակ) առարկությունը, որն ընկած է հազարավոր մյուսների հիմքում, որոնք ներկայացվում

են տարբեր ձևերով: Բայց մի՞թե
Նրանք ավելի են նեղացնում
երկինք տանող ճանապարհը,
քան Տերը և Նրա
առաքյալները: Մի՞թե Նրանց
ուսմունքն ավելի խիստ է, քան
Աստվածաշնչինը: Դիտարկենք
միայն մի քանի պարզ
տեքստեր. «Սիրիր քո Տեր
Աստծուն քո բոլոր սրտով, քո
բոլոր անձով և քո բոլոր
մտքով»: «Ամեն դատարկ
խոսքի համար, որ մարդիկ
խոսեն՝ դատաստանի օրը
հաշիվ պիտի տան»: «Թե
ուտեք, թե խմեք, և ինչ գործ էլ

որ անեք, ամեն բան Աստծո
փառքի համար արեք»:

«Եթե նրանց ուսմունքը սրանից
ավելի խիստ է, ապա նրանք
մեղադրելի են: Բայց ձեր խիղճն
ել վկայում է, որ դա այդպես չէ:
Եվ ո՞վ կա-րող է չնչին չափով
անգամ պակաս խիստ լինել՝
առանց Աստծո խոսքն
աղավաղելու: Կարո՞ղ է արդյոք
Աստծո խորհուրդների որևէ
տևտես հավատարիմ գտնվել,
եթե նա փոխի այդ սրբազան
գանձարանի որևէ մասը: Ոչ:
Նա ոչինչ չի կարող
պակասեցնել, ոչինչ չի կարող

մեղմացնել, նա պարտավոր է
հայտարարել բոլորին. «Ես չեմ
կարող Սուրբ Գիրքը
հարմարեցնել ձեր ճաշակին:
Դուք պիտի հարմարվեք դրան,
կամ հավերժ կորչեք»: Ահա սա
է «այս մարդկանց
անգթության» վերաբերող այն
մյուս հանրահայտ բողոքի
պատճառը: Բայց իրո՞ք նրանք
անգութ են: Ի՞նչ առումով: Չե՞ն
կերակրում նրանք սովածներին
և չե՞ն հագցնում մերկերին:
«Ոչ, բանն այդ չէ, նրանք երբեք
չեն դադարել այդ անելուց:
Բայց նրանք այնքան անողորմ
են դատաստանում՝ կարծելով,

թե բացի իրենց նմաններից ոչ ոք չի կարող փրկվել» (Նույն տեղում, հ. 3, էջ 152,153):

Չոգևոր անկումը, որ տեղի ունեցավ Անգլիայում Ուեսլիի օրերից անմիջապես առաջ, գլխավորապես այն ուսմունքի հետևանքն էր, թե մարդն ազատ է օրենքից: Շատերը պնդում էին, թե քրիստոսը խափանել է բարոյական օրենքը, և քրիստոնյաներն այլևս պարտավոր չեն պահել այն, թե հավատացյալն ազատված է «բարի գործերի ստրկությունից »: Մյուսները

թեև ընդունում էին [261]
օրենքի մշտնջենականութունը,
հայտարարում էին, որ
քարոզիչները կարիք չունեն
հորդորել ժողովրդին՝
հնազանդվելու դրա
պահանջներին, քանզի նրանք,
ուն Աստված ընտրել է
փրկության համար,
«աստվածային շնորհի
անդիմադրելի ներգործությամբ
կդրդվեն բարեպաշտ ու
առաքինի կյանքի», մինչդեռ
մյուսները, ովքեր մատնված են
հավիտենական
դատապարտության, «ուժ

չունեն հնազանդվելու
աստվածային օրենքին»:

Ուրիշներն էլ, որ նույնպես
համարում էին, թե
«ընտրյալները չեն կարող
Աստծո շնորհից կամ
բարեհաճությունից ընկնել», էլ
ավելի նող-կալի
եզրակացության եկան, թե
«նրանց գործած անօրեն
արարքներն իրականում
մեղսավոր չեն և չպետք է
որպես աստվածային օրենքի
խախտում դիտվեն, ուստի
նրանք կարիք չունեն
խոստվանելու իրենց մեղքերը

կամ էլ թողնելու դրանք
ապաշխարութեամբ» (Մաք
Քլինթոք և Սթրոնգ,
Ջանրագիտարան,, հոդվ.
«Ջակատրինականներ»):
Ջետաբար, նրանք
հայտարարում էին, թե
ամենանողկալի մեղքերից մեկն
անգամ, «որ բոլորը համարում
են աստվածային օրենքի
ամենակոպիտ ոտնա-հարում,
մեղք չէ Աստծո աչքին», եթե
գործվել է որևէ ընտրյալի
կողմից, «քանի որ
ընտրյալների տարբերիչ ու
էական հատկանիշներից մեկն
այն է, որ նրանք չեն կարող

անել որևէ բան, ինչը տիաճ է Աստծուն կամ արգելված է օրենքով»:

Այս հրեշավոր ուսմունքն ըստ էության նույնն է, ինչ հետագայում սովորեցնելու էին հանրահայտ ուսուցիչներն ու աստվածաբանները, այսինքն՝ որ չկա աստվածային անփոփոխ օրենք՝ որպես ճշտության չափանիշ, որ բարոյականության չափանիշը հասարակությունն ինքն է որոշում, և որ դա մշտապես ենթակա է եղել փոփոխության: Այս բոլոր գաղափարների

Ներշնչողը այն նույն ճարպիկ
հոգին է, ով Աստծո օրենքի
արդարացի
սահմանափակումները
վերացնելու իր գործը սկսեց
նույնիսկ երկնքի անմեղ
բնակիչների մեջ:

Այն ուսմունքը, թե Աստված
անփոփոխելիորեն կանխորոշել
է մարդու ճակատագիրը, ըստ
Էռլթյան, շատերին դրդել է
մերժելու Նրա օրենքը: Ուեսլին
համառորեն ընդդիմացել է այս
կեղծ ուսմունքի ուսուցիչներին՝
ցույց տալով, որ այն հակասում
է Սուրբ Գրքին: «Աստծո շնորհը

[262] երևաց, որ փրկարար է ամեն մարդկանց համար»: «Սա բարի և ընդունելի է մեր Փրկիչ Աստծո առաջ, ով կամենում է, որ բոլոր մարդիկ փրկվեն և ճշմարտության գիտությանը գան, որովհետև մեկ Աստված կա և մեկ միջնորդ Աստծո և մարդկանց միջև՝ Քրիստոս Յիսուս մարդը, որ իր անձը ամենքի համար փրկանք տվեց » (Տիտոս 2.11, և Տիմոթեոս 2.3-6): Աստծո Յոզիև տրվում է բոլորին՝ յուրաքանչյուր մարդու առաջարկելով ազատ օգտվել փրկության միջոցներից: Այսպես

Քրիստոսը՝ «ճշմարիտ Լույս—
սր», «լուսավորում է ամեն
մարդու, ով գալիս է աշխարհ»
(Յովհաննես 1.9): Մարդիկ
փրկությունից զրկվում են՝
կյանքի պարզեր հոժարակամ
մերժելու պատճառով:

Ի պատասխան այն պնդմանը,
թե Քրիստոսի մահը ծիսական
օրենքի հետ միասին վերջ է
դրել նաև Տասնաբանյաչի
պատվիրաններին, Ուեսլին
ասել է. «Տասը
պատվիրաններում
պարունակվող բարոյական
օրենքը, որ մարգարեները

պարտադիր են համարել,
Քրիստոսը չի վերացրել: Նա չի
եկել՝ վերացնելու դրա որևէ
մասը: Սա օրենք է, որը երբեք
չի կարող վերացվել, այն
«հաստատված է որպես
հավատարիմ վկա երկնքում...»
(Սաղմոս 89.37): Այն գոյություն
է ունեցել աշխարհի սկզբից՝
գրված ոչ թե քարե սալիկների
վրա, այլ մարդկանց սրտերում,
երբ նրանց կյանքի կոչեց
Արարչի ձեռքը: Ու թեև մեղքն
այսօր մեծապես վնասել է
Աստծո մատույ գրված
խոսքերը, դրանք, սակայն, չեն
կարող վերջնականապես

ջնջվել, քանի դեռ մենք ինչ-որ
չափով գիտակցում ենք չարն ու
բարին: Այս օրենքի ամեն մի
պատվիրանը պետք է ուժի մեջ
լինի ողջ մարդկության համար
և բոլոր դարերում, քանզի
կախված չէ ո՛չ տեղից, ու
ժամանա- կից, ո՛չ էլ
փոփոխման ենթակա որևէ այլ
հանգամանքից, այլ միայն
Աստծո բնությունից, մարդու
բնությունից և միմյանց հետ
դրանց անփոփոխ կապից:

«Ես չեկա քանդելու, այլ
կատարելու»... Նա այստեղ,
անկասկած, նկատի ունի

հետևյալը (ներդաշնակ այն
ամենին, ինչ ասվել է մինչ այդ
և դրանից հետո). Ես եկա՝
հաստատելու այն իր ողջ
լիությամբ, անկախ մարդկային
բոլոր ձևակերպումներից, Ես
եկա՝ ամենապայծառ և մաքուր
լույսի տակ դնելու այն, ինչ
խամրել և աղավաղվել է, Ես
եկա՝ հռչակելու օրենքի ամեն
մի պատվիրանի ճշմարիտ և
ամբողջական
նշա-նակությունը, ցույց տալու
նրա երկայնությունն ու
լայնությունը, [263]
բարձրությունն ու խորությունը
և աներևակայելի սրբությունն

ու հոգևո-րությունը բոլոր
առումներով» (Ուեսլի, քարոզ
25):

Ուեսլին հռչակում էր օրենքի և
ավետարանի կատարյալ
ներդաշնակութունը: « Օրենքի
և ավետարանի միջև,
հետևաբար, գոյութուն ունի
ամենասերտ կապ, որը կարելի
է ըմբռնել: Մի կողմից՝ օրենքը
մշտապես ճամփա է
պատրաստում ավետարանի
համար և մեզ առաջնորդում
դեպի այն, մյուս կողմից
ավետարանը մեզ մշտապես
մղում է ավելի ճշտորեն

պահելու օրենքը: Օրենքը,
օրինակ, պահանջում է սիրել
Աստծուն, սիրել մեր
մերձավորներին, լինել հեզ,
խոնարհ և սուրբ: Մենք զգում
ենք, որ անզոր ենք՝
բավարարելու այս պահանջը, և
իսկապես, «մարդու համար դա
անկարելի է», բայց տեսնելով
այդ սերը մեզ տալու և մեզ
խոնարհ, հեզ ու սուրբ
դարձնելու Աստծո խոստումը՝
մենք կառչում ենք այդ բարի
լուրին՝ ավետարանին: Դա մեզ
համար արվում է մեր հավատի
համաձայն, և «օրենքի
արդարութունը կատարվում է

մեր մեջ» այն հավատով, որ
Քրիստոս Յիսուսում է:

«Քրիստոսի Ավետարանի
մեծագույն թշնամիները նրանք
են,— ասել է Ուեսլին,— ովքեր
բացահայտ և աներկբա կերպով
«դատում են օրենքն» ու
«չարախոսում նրա մասին»,
ովքեր սովորեցնում են
մարդկանց խախտել,
վերացնել, ազատվել պահելու
պարտավորութունից ոչ միայն
մեկ՝ ամենափոքր կամ
ամենամեծ, այլ բոլոր
պատվիրանները միասին ...Այս
մեծ մոլորությանն ուղեկցող

բոլոր պարագաներից
ամենազարմանալին այն է, որ
դրան հետևող մարդիկ
իսկապես հավատում են, թե
պատվում են Քրիստոսին՝
վերացնելով Նրա օրենքը, և թե
մեծարում են Նրա պաշտոնը՝
կործանելով Նրա ուսմունքը:
Այո, նրանք պատվում են Նրան
ճիշտ այնպես, ինչպես Հուդան,
երբ ասաց. «Ողջո՛ւյն,
վարդապետ, և համբուրեց
Նրան»: Եվ Նա հիրավի կարող
էր ասել նրանցից
յուրաքանչյուրին.
«Համբուրո՞ւ՛մ ես մատնում
մարդու Որդուն»: Դա ուրիշ բան

չէ, եթէ ոչ՝ մատնել Նրան
համբույրով, երբ խոսում ենք
Նրա արյան մասին, բայց
զրկում Նրան պսակից,
անտեսում Նրա օրենքի որևէ
մասը՝ ձևացնելով, թէ առաջ
ենք տանում ավետարանի
գործը: Ոչ էլ կարող է որևէ մեկը
խուսափել այս մեղադրանքից,
ով այնպիսի հավատ է
քա-րոզում, որն, ուղղակի, թէ
անուղղակի, վերացնում է
հնազանդության
անհրաժեշտությունը, ով
Քրիստոս է քարոզում այնպես,
որ չեզոքացնի կամ ինչ-որ
կերպ թուլացնի Աստծո

պատվիրաններից
փոքրագույնը» (Նույն տեղում):
[264]

Նրանց, ովքեր պնդում էին, թե
«Ավետարանի քարոզչությունը
բավարարում է օրենքի բոլոր
պահանջները», Ուեսլին
պատասխանում էր. «Մենք
ամբողջությամբ հերքում ենք
դա: Դրանով չի կատարվում
օրենքի ամենաառաջին
պահանջն իսկ, այն է՝
մարդկանց համոզել, որ
մեղավոր են, արթնացնել
նրանց, ովքեր դեռ քնած են
դժոխքի եզրին»: Պողոս

առաքյալն ասում է, որ
«օրենքով է ճանաչվում մեղքը»,
և մինչև մարդը չգիտակցի իր
մեղավորությունը, նա իրապես
չի զգա Քրիստոսի քավչարար
արյան կարիքը... «Առողջները
բժշկի կարիք չունեն,— ասել է
Տերն Ինքը,— այլ
հիվանդները»: Ուրեմն
անհեթեթ է բժիշկ առաջարկել
Նրանց, ովքեր առողջ են կամ
առնվազն իրենց այդպիսին են
երևակայում: Նախ պետք է
Նրանց համոզեք, որ իրենք
հիվանդ են, այլապես Նրանք
չնորհակալ չեն լինի ձեր
ծառայությունից համար:

Նույնքան անհեթեթ է քրիստոս առաջարկել նրանց, ում սրտերն առողջ են ու դեռ երբեք չեն փշրվել» (Նույն տեղում, քարոզ 35):

Այսպիսով, իր Ուսուցչի նման քարոզելով Աստծո շնորհի ավետա-րանը՝ Ուեսլին ջանում էր «մեծարել և փառավորել օրենքը» (Եսայիա 42.21): Նա հավատարմորեն կատարեց Աստծուց իրեն տրված գործը, և փառավոր էր արդյունքը, որ նրան թույլ տրվեց տեսնել: Իր երկարատև՝ ավելի քան ութսունամյա կյանքի վերջում

(Կես դարից ավելի
անց-կացնելով
ճամփորդություններում) նա
ունեւր կես միլիոնից ավելի
բա-ցահայտ հետևորդներ: Բայց
թե իրականում քանիսն են նրա
ջանքերի շնորհիվ մեղքի
անդունդից ու քայքայումից
ավելի վեհ ու սուրբ կյանքի
բարձրացել, և թե քանիսն են
նրա ուսմունքի միջոցով ավելի
խոր և հարուստ հոգևոր
փորձառությունն ձեռք բերել,
երբեք չի իմացվի, մինչև որ
փրկվածների ողջ ընտանիքը
հավաքվի Աստծո արքայության
մեջ: Ուեսլիի կյանքն անգին

օրինակ է ամեն մի
քրիստոնյայի համար: Երանի՛
թե Քրիստոսի այս ծառայի
հավատն ու խոնարհությունը,
անխոնջ եռանդը,
անձնազոհությունն ու
նվիրվածությունը
արտացոլվեին այսօրվա
եկեղեցիներում:

ԳԼՈՒԽ

15—ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ԵՎ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Տասնվեցերորդ դարում
Բարենորոգումը, ժողովրդին
տալով բաց Աստվածաշունչը,
մոտոք էր փնտրում դեպի
Եվրոպայի բոլոր երկրները:
Որոշ ազգեր ուրախությամբ
ողջունեցին այն՝ որպես լրաբեր
երկնքից: Մյուս երկրներում
պապությանը մեծապես
հաջողվեց արգելել նրա
մոտոքը, և Աստվածաշնչի
գիտության լույսն՝ իր

վեհացնող ազդեցությամբ,
գրեթե ամբողջովին մերժվեց:
Մի երկրում, ուր թեև լույսը
կարողացավ ներթափանցել,
խավարը չըմբռնեց այն: Դարեր
շարունակ ճշմարտությունն ու
մոլորությունը պայքարում էին
գերիշխանության համար:
Վերջապես չարը հաղթեց՝ դուրս
գցելով երկնային
ճշմարտությունը: «Սա է
դատաստանը, որ լույսը եկավ
աշխարհ, սակայն մարդիկ
խավարն ավելի սիրեցին, քան
թե լույսը» (Յովհաննես 3.19):
Այդ ազգը թողնվեց՝ կրելու իր
ընտրության հետևանքները:

Աստճո Յոգու զսպող ուժը վեր
առնվեց ժողովրդից, որն
արհամարհել էր Նրա շնորհի
պարգևը: Թույլ տրվեց, որ
չարիքը հասունանա: Եվ
ամբողջ աշխարհը տեսավ
լույսը քմահաճորեն մերժելու
արդյունքը:

Աստվածաշնչի դեմ
պատերազմը, որ այդքան
երկար դարեր մղվեց
Ֆրանսիայում, իր
գագաթնակետին հասավ
հեղափոխության ժամանակ:
Այդ սոսկալի պայթյունը Յոնմի
կողմից Սուրբ Գիրքն արգելելու

արդարացի հետևանքն էր: Դա
պապական
քաղաքականության
կիրառման ամենացնցող
օրինակն էր, որ երբևէ տեսել էր
աշխարհը, այն հետևանքների
լուսաբանումը, որոնց
հասցնելու էր [266] Յոնի
եկեղեցու ուսմունքը ավելի քան
հազար տարիների ընթացքում:

Սուրբ Գրքի արգելումը
պապական գերիշխանության
ընթացքում կանխատեսվել էր
դեռևս մարգարեների կողմից, և
Հայտնության հեղի-նակը ևս
մատնանշել է այն սարսափելի

հետևանքները, որոնց
հանգեց-նելու էր «մեղքի
մարդու» տիրապետութունը
հատկապես Ֆրանսիայում:

Տիրոջ հրեշտակն ասել է. «Եվ
սուրբ քաղաքը կոխ կտան
քառա-սուներկու ամիս: Եվ իմ
երկու վկաներին կտամ, և
հազար երկու հարյուր վաթսու
օր կմարգարեանան քուրճ
հազած... Եվ երբ որ իրենց
վկայու-թյունը կավարտեն, այն
ժամանակ անդունդից դուրս
եկող գազանը կռիվ կտա նրանց
հետ, կհաղթի նրանց և կսպանի
նրանց: Եվ նրանց դիերը ընկած

կմնան այն մեծ քաղաքի
հրապարակում, որի անունը
հոգևորա-պես Սողոմ և
Եգիպտոս է կոչվում, որտեղ մեր
Տերն էլ խաչվեց... Եվ երկրի
վրա բնակվողները
կուրախանան ու կխնդան և
իրար ընծաներ կուղարկեն, որ
այս երկու մարգարեները
չարչարեցին երկրի վրա
բնակվողներին: Եվ երեք ու կես
օրից հետո Աստծուց կենդանի
հոգի եկավ մտավ նրանց մեջ, և
նրանք իրենց ոտքերի վրա
կանգնեցին, և մեծ վախ ընկավ
նրանց տեսողների վրա»
(Ջայտնություն 11.2-11):

Այստեղ նշված
ժամանակահատվածները՝
«քառասուներկու ամիսը» և
«հազար երկու հարյուր
վաթսուն օրերը»,
հավասարապես վերաբերում
են այն ժամանակահատվածին,
որի ընթացքում Քրիստոսի
եկեղեցին պիտի հալածվեր
Յոննի կողմից: Պապական
գերիշխանության 1260
տարիները սկսվեցին Ք.հ. 538
թվականին և պիտի
ավարտվեին 1798-ին, երբ
Ֆրանսիական բանակը մտավ
Յոնն և գերի վերցնելով

պապին՝ բանտարկեց
աքսորավայրում, որտեղ էլ նա
մահացավ: Թեև շուտով նոր
պապ ընտրվեց, սակայն այդ
պահից ի վեր պապական
նվիրապետությունը երբեք
այլևս չկարողացավ հասնել իր
նախկին իշխանությանը:

Եկեղեցու հալածանքը, սակայն,
չտևեց ամբողջ 1260 տարիներ:
Գթալով իր ժողովրդին՝
Աստված կրճատեց նրանց
կրակե փորձության
ժամանակը: Կանխասելով
եկեղեցուն [267] սպասվող «մեծ
նեղությունը»՝ Փրկիչը նշեց. «Ու

եթե այն օրերը չկարճացվեին,
ոչ մի մարմին չէր փրկվի, բայց
ընտրյալների համար այն
օրերը կկարճացվեն»

(Մատթեոս 24. 22):

Բարենորոգման ազդեցության
շնորհիվ հալածանքներին վերջ
դրվեց մինչ 1798 թվականը:

Երկու վկաների վերաբերյալ
մարգարեն շարունակում է.

«Սրանք այն երկու ձիթենիներն
են ու երկու ճրագակալները, որ
երկրի Աստծո առաջին

կանգնած են»: «Քո

խոսքը,-ասում է

սաղմոսերգուն,— ճրագ է իմ

ոտքերի համար և լույս՝ իմ
ճանապարհին» (Ջայտնություն
11.4, Սաղմոս 119.105): Երկու
վկաները խորհրդանշում են
Ջին և Նոր Կտակարանները:
Երկուսն էլ Աստծո օրենքի
ծագման ու
հավերժականության կարևոր
վկաներ են: Երկուսն էլ վկայում
են փրկության ծրագրի մասին:
Ջին Կտակարանի
Նախապատկերները,
զոհաբերություններն ու
մարգա-րեությունները
մատնացույց են անում Փրկչին,
ով պիտի գար, իսկ Նոր
Կտակարանի Ավետարաններն

ու առաքելական ուղերձները
պատմում են Փրկչի մասին, ով
եկավ ճիշտ այնպես, ինչպես
կանխասվել էր
Նա-խապատկերներում ու
մարգարեություններում:

«Հազար երկու հարյուր
վաթսուն օր կմարգարեանան
քուրճ հազած»: Այս ժամանակի
մեծ հատվածի ընթացքում
Աստծո վկաներն ասես
աննկատ էին: Պապական
իշխանությունը ձգտում էր
ժողովրդից թաքցնել
ճշմարտության խոսքը և նրան
ներկայացնել կեղծ վկաներ,

որոնք կհակասեին ճշմարիտ
վկայութեանը: Երբ կրոնական
ու աշխարհիկ
իշխանութիւնները օրենքից
դուրս հայտարարեցին
Աստվածաշունչը, երբ նրա
վկայութիւնն աղավաղվեց, և
մարդիկ ու դները ոչ մի ջանք
չխնայեցին ժողովրդի միտքը
նրանից շեղելու համար, երբ
նրանց, ովքեր կհամարձակվեին
հռչակել նրա սրբազան
ճշմարտութիւնները, որսում,
մատնում, տանջում ու թաղում
էին բանտախցերում, երբ
նրանք նահատակվում էին
հավատի համար կամ

ստիպված փախչում՝
պատսպարվելու լեռներում,
երկրի խռոչներում ու
քարայրներում, այդ ժամանակ
հավատարիմ վկաները
մարգարեանում էին քուրճ
հագած: Բայցևայնպես, նրանք
շարունակեցին իրենց
վկայությունը 1260 տա-րիների
ողջ ընթացքում: Ամենախավար
ժամանակներում կային
հավատարիմ մարդիկ, ովքեր
սիրում էին Աստծո խոսքը և
եռանդագին պաշտպանում
Նրա պատիվը: Այս նվիրյալ
ծառաներին իմաստություն,
[268] գորություն և

իշխանութիւնն տրվեց՝
հռչակելու Նրա
ճշմարտութիւնը այդ
ժամանակվա ողջ ընթացքում:

«Ու եթէ մեկը կամենա նրանց
վնասել, կրակ է դուրս գալիս
նրանց բերանից և լափում
իրենց թշնամիներին, և եթէ
մեկը կամենա վնասել նրանց,
այսպէս պիտի սատկի»

(Յայտնութիւն 11.5): Մարդիկ
չեն կարող անպատիժ կերպով
ոտնահարել Աստծո խոսքը: Այս
ահասարսուն

Նախագգուշացման իմաստը
գտնում ենք Յայտնութեան

վերջին գլխում. «Որովհետև ես
վկայում եմ ամենքին, ով լսում
է այս գրքի մարգարեության
խոսքերը, եթե մեկը բան
ավելացնի սրանց վրա,
Աստված կավելացնի նրա վրա
այն պատուհասները, որ այս
գրքում գրված են: Եվ եթե մեկն
այս գրքի մարգարեության
խոսքերից բան պակասեցնի,
Աստված էլ կպակասեցնի նրա
բաժինը կյանքի գրքից, սուրբ
քաղաքից և այս գրքում
գրվածներից» (Ջայտնություն
22.18,19):

Այսպիսին են
Նախագգուշացումները, որ
Աստված տվել է՝ մարդ-կանց
հետ պահելու փորձերից՝ որևէ
կերպ փոխելու այն, ինչ ինքը
հայտ-նել կամ պատվիրել է:
Մեղադրանքի այս հանդիսավոր
խոսքերը վերա-բերում են
բոլորին, ովքեր իրենց
ազդեցությամբ մարդկանց
մղում են թեթևորեն նայելու
Աստծո օրենքին: Դրանք պետք
է ահ ու դող ներշնչեն նրանց,
ովքեր թեթևամտորեն
հայտարարում են, թե Աստծո
օրենքին հնազանդվելը էական
նշանակություն չունի: Նրանք,

ովքեր իրենց անձնական
կարծիքը աստվածային
հայտնությունից վեր են
դասում, ովքեր աղավաղում են
Սուրբ Գրքի պարզ
նշանակությունը՝ իրենց
հա-մոզմունքների
հարմարեցնելու կամ
աշխարհին համակերպվելու
հա-մար, ահավոր
պատասխանատվություն են
վերցնում իրենց վրա: Գրված
խոսքը, Աստծո օրենքը
չափանիշն են կշռելու
յուրաքանչյուր մարդու
բնավորությունը և
դատապարտելու բոլոր նրանց,

ում այս անսխալական
չափանիշը թեթև կգտնի:

«Ու երբ իրենց վկայությունը...
[ավարտում են] կավարտեն»:
Ժամանակաշրջանը, երբ երկու
վկաները պիտի
մարգարեանային՝ քուրճ
հագած, ավարտվեց 1798
թվականին: Երբ նրանք
մոտենային իրենց աննկատելի
գործի ավարտին, նրանց հետ
պիտի պատերազմեր այն
իշխանությունը, որ
պատկերված է որպես
«անդունդից դուրս եկող
գազան»:
Եվրոպայի շատ

ազգերում եկեղեցու և
պետութեան իշխող ուժերը
դարեր շարունակ վերահսկվել
են սատանայի կողմից՝ [269]
պապութեան միջնորդութեամբ:
Բայց այստեղ մենք տեսնում
ենք սատանայական ուժի մի
նոր դրսևորում:

Չռոմի քաղաքականությունն
էր՝ Աստվածաշնչի հանդեպ
ակնա-ծանքի քողի տակ
կողպել նրա իմաստը
անհասկանալի լեզվով և այն
թաքցնել մարդկանցից: Նրա
իշխանութեան օրոք վկաները
մարգարեա-նում էին «քուրճ

հազած»: Բայց մեկ այլ ուժ՝
«անդունդից դուրս եկող
գազանը», պիտի ելներ՝ բաց և
ակնհայտ պատերազմ մղելու
Աստծո խոսքի դեմ:

«Մեծ քաղաքը», որի
փողոցներում սպանվեցին
վկաները, և որտեղ ընկած են
Նրանց դիակները, «հոգևոր»
Եգիպտոս է: Աստվածաշնչյան
պատմության մեջ
Ներկայացված բոլոր ազգերից
Եգիպտոսն ամենահանդուգն
կերպով մերժեց կենդանի
Աստծո գոյությունը և
ընդդիմացավ Նրա

հրամաններին: Ոչ մի միապետ
երբևէ չէր համարձակվել ավելի
բացահայտ ու մեծամտորեն
ըմբոստանալ Երկնքի
հեղինակության դեմ, ինչպես
Եգիպտոսի թագավորը: Երբ
Մովսեսը Տիրոջ անուկով նրան
լուր բերեց, նա հպարտորեն
պատասխանեց. «Ո՞վ է
Եհովան, որ նրա խոսքը լսեմ և
Իսրայելին թողնեմ. Եհովային
չեմ ճանաչում և Իսրայելին էլ
չեմ թողնում» (Ելից 5.2): Սա
արթեիզմն է, և այն ազգը, որ
խորհրդանշված է որպես
Եգիպտոս, նմանապես պիտի
մերժեր կենդանի Աստծո պա-

հանջները և դրսևորեր
անհավատության ու
ըմբոստության միևնույն ոգին:
«Մեծ քաղաքը» նաև
«հոգևորապես» է
համեմատվում Սողոմի հետ:
Ապականյալ Սողոմի կողմից
Աստծո օրենքի ոտնահարումը
դրսևորվեց հատկապես
անառակության մեջ: Եվ այս
մեղքը պիտի նաև դառնար այն
ազդին բնորոշ հատկանիշը, որի
ճակատագրում իրականացան
այս մարգարեության
մանրամասները:

Ըստ մարգարեի խոսքերի՝ այդ
ժամանակ, 1798-ից քիչ առաջ,
սատանայական ծագում և
բնավորություն ունեցող մի
իշխանություն պիտի ելներ՝
պատերազմելու Աստվածաշնչի
դեմ: Եվ այն երկրում, որտեղ
այս կերպ պիտի լռեցվեր
Աստծո երկու լրաբերների
վկայությունը, դրսևորվելու էր
փարավոնի աթեիզմն ու
Սողոմի անառակությունը:

Այս մարգարեությունն իր
ամենաստույգ ու ցայտուն
իրականացումը գտավ
Ֆրանսիայի պատմության մեջ:

1793-ի հեղափոխության
ժամանակ «աշխարհն առաջին
անգամ լսեց մարդկանց՝ ծնված
և դաստիարակված
քաղաքակիրթ
հասարակության մեջ, ովքեր
իրենց իրավունք
վերապահեցին կառավարելու
Եվրոպայի ազնվագույն
ազգերից մեկին և իրենց
միասնական ձայնը
բարձրացրին՝ ժխտելու
ամենահանդիսավոր
ճշմարտությունը, որ մարդու
հոգին կարող է ընդունել, և
հրաժարվելու Աստծո հավատից
ու պաշտամունքից» (Ուալթեր

Աքոթ, Նապոլեոնի կյանքը, հ. 1, գլ. 17): «Ֆրանսիան միակ երկիրն է աշխարհում, որն ըստ պահպանված ճշգրիտ արձանագրության՝ իր ձեռքն ըմբոստությանը բարձրացրեց տիեզերքի Արարչի դեմ: Բազմաթիվ հայհոյիչներ ու անհավատներ կային և հիմա էլ կան Անգլիայում, Գերմանիայում, Իսպանիայում և այլուր, բայց Ֆրանսիան հատուկ տեղ է գրավում աշխարհի պատմության մեջ՝ որպես միակ պետությունը, որն իր Սահմանադրական ժողովի որոշմամբ հռչակեց, որ

Աստված չկա, և լսելով այս՝
մայրաքսպաքում ապրողները,
ինչպես նաև երկրի
բնակչության ճնշող
մեծամասնությունը՝
տղամարդիկ և կանայք,
ուրախությունից երգում ու
պարում էին» (Բլեքվուդի
ամսագիր, Նոյեմբեր, 1870):

Ֆրանսիային նաև բնորոշ են
այն հատկանիշները, որոնցով
հատ-կապես տարբերվում էր
Սողոմը: Հեղափոխության
ընթացքում բարո-յական
ապականության այնպիսի
վիճակ էր տիրում, որը

Ժամանակին կործանում բերեց
հարթավայրի քաղաքներին: Եվ
պատմաբանը Ֆրանսիայի
անաստվածությունն ու
անառակությունը
ներկայացնում է միասին,
ինչպես վկայում է
մարգարեությունը. «Կրոնին
վերաբերող օրենքի հետ էր
սերտորեն կապված նաև այն
մեկը, որով թուլացվում էր
ամուսնական կապը՝ այն
ամենասրբազան միությունը,
որ մարդկային էակները կարող
են ձևավորել, և որի
ամրությունն ամենից ավելի է
նպաստում հասարակության

համախմբմանը՝ վերածելով
այն ընդամենը ժամանակավոր
բնույթ կրող քաղաքացիական
պայմանագրի, որը ցանկացած
երկու անձ կարող էին կապել
կամ քանդել՝ երբ որ
կա-մենային... Եթե դները
ջանային մի միջոց
հայտնաբերել, որն
ամենաարդյունավետ կերպով
կործաներ այն, ինչը պատվելի
է, սքանչելի և անփոփոխ
ընտանեկան կյանքում, և
միաժամանակ երաշխավորեր,
որ իրենց ստեղծած չարիքը
կշարունակվի սերնդից
սերունդ, նրանք ավելի գործուն

ծրագիր չէին կարող հնարել,
քան ամուսնության
քայքայումն է... Սոֆի Առնոն՝
[271] իր սրամտությամբ
հայտնի մի դերասանուհի,
քաղաքացիական
ամուսնությունը ներկայացնում
էր որպես «շնության
խորհուրդ» (Ուալթեր Սքոթ, հ.1,
գլ.17):

«Որտեղ մեր Տերն էլ խաչվեց»:
Մարգարեության այս
մանրամասն էլ իրականացրեց
Ֆրանսիան: Ոչ մի այլ երկրում
Քրիստոսի հանդեպ
թշնամությունն ավելի ցայտուն

կերպով չի դրսևորվել, որքան
այստեղ: Որևէ այլ երկրում
ճշմարտությունն ավելի
կատաղի ու դաժան
դիմադ-րության չի հանդիպել:
Չալաճելով ավետարանի
հետևորդներին՝ Ֆրանսիան
խաչեց Քրիստոսին՝ հանձինս
Նրա աշակերտների:

Դարեր շարունակ հեղվում էր
սրբերի արյունը: Մինչ
վաղդենասները Պիեմոնտի
լեռներում իրենց կյանքն էին
զոհում «Աստծո խոսքի և Չիսուս
Քրիստոսի վկայության
համար», նրանց եղբայրները՝

Ֆրանսիայի ալբիգոյցիները,
սմանապես վկայում էին
ճշմարտության մասին:
Բարենորոգման ընթացքում
Նրա ջատագովները
զարհուրելի կերպով
տանջամահ էին արվում:
Թագավորն ու
արիստոկրատները, ազնվական
կանայք և նրբագեղ
օրհորդները՝ ազգի
հպարտութունն ու պատիվը,
ցնծում էին՝ նայելով Յիսուսի
Նահատակների
տանջանքներին: Խիզախ
հուզենոտները, պայքարելով
այն իրավունքների համար,

որոնք ամենասրբազանն են
մարդկային սրտի համար,
իրենց արյունն են թափել
կատաղի մարտերում:
Բողոքականներն օրենքից
դուրս էին հայտարարված,
նրանց գլխի համար գին էր
նշանակված, և նրանք
հալածվում էին վայրի
գազանների նման:

«Եկեղեցին անապատում»՝ հին
քրիստոնյաների սակավաթիվ
հետևորդները, որ XVIII դարում
դեռ մնացել էին Ֆրանսիայում՝
թաքնվե-լով հարավի
լեռներում, շարունակում էին

փայփայել իրենց հայրերի
հավատը: Երբ նրանք
համարձակվում էին գիշերով
հավաքվել սարա-լանջին կամ
մեկուսի եղեգնուտում,
դրագուկները որսում էին
նրանց ու ստրկության
հանձնում՝ մինչև կյանքի վերջը
նավերում թիավարելու համար:
Տրանսիայի ամենաազնիվ,
ամենահղկված ու
ամենատույալ զավակներին
շղթայում էին և զարհուրելի
կտտանքների ենթարկում
ավազակների ու
մարդասպանների հետ միասին
(Տես Ուայլի, հ. 22, գլ. 6):

Մյուսների հետ քիչ ավելի
մեղմորեն վարվելով՝
սասնասրտորեն սպանում էին,
երբ նրանք անգն ու
անօգնական [272] ծնկի էին
իջնում աղոթելու: Հարյուրավոր
տարեց մարդիկ, անպաշտպան
կանայք և անմեղ երեխաներ
սպանված թողնվում էին հողի
վրա՝ իրենց հանդիպման
վայրում: Անցնելով
լեռնալանջով կամ անտառով,
ուր նրանք սովորաբար
հավաքվում էին, ամեն
քայլավախի կարելի էր գտնել
«դիակներ՝ խոտերի մեջ ու
ծառերից կախված»: Նրանց

երկիրը՝ ամայացած սրով,
կացնով ու խարույկով,
«վերածվել էր մի ընդարձակ,
մռայլ անապատի»: «Այս
վայրագություններն արվում
էին... ոչ թե խավար
միջնադարում, այլ Լյուդովիկոս
XIV-ի փայլուն դարաշրջանում,
երբ գիտությունը զարգանում
էր, կրթությունը՝ ծաղկում, երբ
պալատի և մայրաքաղաքի
հո-գևորականները ուսյալ ու
ճարտարախոս մարդիկ էին՝
մեծապես օժտված հեզության
ու գթասրտության
շնորհներով» (Նույն տեղում, հ.
22, գլ.7):

Բայց ոճրագործությունների սև
ցանկում ամենասեր՝ բոլոր
սոսկալի դարերի դիվական
արարքներից
ամենազարհուրելին
Բարթողոմեոսյան կոտորածն
էր: Աշխարհն այսօր էլ
սահմուկումով է հիշում այդ
ստոր ու դաժան հարձակումը:
Յռոմի քահանաների ու
պրելատների դրդմամբ
Ֆրանսիայի թագավորն իր
համաձայնությունը տվեց Լայդ
հրեշավոր սպանդին:
Կեսգիշերային զանգի ղողանջն
ազդարարեց կոտորածի

սկիզբը: Չազարավոր
բողոքականների, որ խաղաղ
քնած էին իրենց տներում՝
վատահելով իրենց թագավորի
պատվավոր խոստմանը,
առանց նախազգուշացման
քարշ տվեցին փողոց և
սառնասրտորեն սպանեցին:

Ինչպես որ Քրիստոսն էր
անտեսանելիորեն
առաջնորդում իր ժողովրդին
Եգիպտոսի գերությունից,
այնպես էլ սատանան էր իր
հպատակների անտեսանելի
առաջնորդն այս զարհուրելի
գործում: Յոթ օր Փարիզում

շարունակվում էր սպանող,
որոնցից առաջին երեքը՝
աներևակայելի
կատաղությամբ:
Արյունահեղությունը
չսահմանափակվեց միայն
մայրաքաղաքով, այլ
թագավորի հատուկ հրամանով
տարածվեց բոլոր այն
գավառներում ու
քաղաքներում, որտեղ
բողոքականներ կային: Հաշվի
չէր առնվում ոչ տարիքը, ոչ
սեռը: Չէին խնայում ոչ անմեղ
երեխային, ոչ ալեհեր
ծերանան: Ազնվական ու
գյուղացի, ծեր և երիտա-սարդ,

մայր ու երեխա՝ բոլորին
մորթում էին միասին: Երկու
ամիս շարու- նակ ամբողջ
Ֆրանսիան վերածվել էր
սպանդանոցի: Յոթանասուն
հազար հոգի, որ ազգի
պարծանքն էին, կոտորվեցին:

«Երբ կոտորածի լուրը հասավ
Ջոնմ, [273] կղերականների
ցնծու-թյանը չափ չկար:
Լոթարինգիայի կարդինալը
լրաբերին պարգևատրեց
հազար կրոնով, սուրբ Անջելոյի
հրանոթը հաղթական ողջույնի
համազարկ թնդացրեց, ամեն
զանգակատնից զանգերի

դողանջ հնչեց, և խարույկները
գիշերը ցերեկ դարձրին:
Գրիգորի XIII-ը, կարդինալների
և եկեղեցական այլ
պաշտոնյաների
ուղեկցութեամբ, երկար
շքերթով շարժվեց դեպի սուրբ
Լուիսի եկեղեցին, որտեղ
Լոթարինգիայի կարդինալը
երգեց «Te Deum...»: Ի
հիշատակ կոտորածի՝ շքանշան
պատրաստեցին, և
Վատիկանում մինչև հիմա
պահպանվել են Վասարիի երեք
որմնանկարներ, որոնք
պատկերում են հարձակումը
ադմիրալի վրա, թագավորին՝

Կոտորածը ծրագրող խորհրդի
ժամանակ և հենց սպանդի
տեսարանը: Գրիգորին ոսկե
վարդ ուղարկեց Կարլին, իսկ
Կոտորածից չորս ամիս անց...
Նա ինքնագոհ լսում էր մի
ֆրանսիացի քահանայի
քարոզը... «Երջանկությանը և
ցնծությանը լի այն օրվա
մասին, երբ լուրը լսելով՝
ամենասուրբ հայրը
հանդիսավորապես գնաց
Երախտագիտության տուրք
մատուցելու Աստծուն և սուրբ
Լուիսին» (Ջենրի Ուայթ, Սուրբ
Բարթողոմեոսի Կոտորածը,
գլ. 14, պարբ. 34):

Նույն խորամանկ ոգին, որը
հրահրեց Բարթողոմեոսյան
կոտորածը, նաև գլխավորում
էր հեղափոխության ընթացքը:
Հիսուս Բրիստոսը հռչակվեց
ինքնակոչ, և Տրանսիայի
անհավատների միասնական
կոչն էր՝ «Ճգմեք Թշվառին»,
այսինքն՝ Բրիստոսին:
Հանդուգն հայիոյությունն ու
նողկալի ամբարշտությունը
գնում էին ձեռք ձեռքի, և
ամենաստոր մարդիկ՝
դաժանության ու պղծության
ամենակրթոտ հրեշները,
ամենից ավելի էին մեծարվում:

Այս ամենում գերագույն
պատիվ էր տրվում
սատանային, իսկ Քրիստոսն՝
Իր ճշմարտությամբ,
մաքրությամբ և անձնուրաց
սիրով, խաչվում էր:

«Անդունդից դուրս եկող
գազանը կռիվ կտա նրանց հետ,
և կհաղթի նրանց, և կսպանի
նրանց»: Աթեիստական
կառավարությունը, որ տիրեց
Ֆրանսիայում հեղափոխության
և Սարսափի իշխանության
ժամանակ, այնպիսի
պատերազմ էր մղում Աստծո և
Նրա խոսքի դեմ, ինչպիսին

աշխարհը երբեք չէր տեսել:
Ազգային ժողովը վերացրեց
Աստծո երկրպագութիւնը:
Ասավաճաշնչերը հավաքվեցին
և ամենասուկալի
ծաղրանքներով
հրապարակայնորեն այրվեցին:
Աստծո օրենքը [274] ոտնակոխ
արվեց: Աստվաճաշնչյան
դրվածքները նույնպես
վերացրին: Շաբաթական
հանգստի օրը մի կողմ դրվեց,
իսկ դրա փոխարեն ամեն
տասներորդ օրը նվիրվեց
խրախճանքներին ու
հայհոյութեանը: Արգելված էին
մկրտութիւնն ու

հաղորդությունը:
Գերեզմանների վրա երևացող
տեղերում հայտնված
պատարները հայտարարում
էին, որ մահը հավիտենական
քուն է:

Ասում էին, որ Աստծո երկյուղը
ոչ թե իմաստության, այլ
հիմարու-թյան սկիզբն է: Բացի
ազատությանը և երկրին
ծառայելուց, կրոնական ամեն
մի ծառայություն արգելված էր:
«Փարիզի սահմանադրական
Եպիսկոպոսին առաջ բերեցին՝
գլխավոր դերը խաղալու
ամենալկտի և խայտառակ

զավեշտախաղում, որը երբևէ
ներկայացվել է ազգային որևէ
ժողովի... Նա իր ամբողջ
շքախմբով հայտնվեց
Խորհրդարանում՝
հայտարարելու, որ այդքան
երկար տարիներ իր
սովորեցրած կրոնը ընդամենը
քահանայական խաբեությունն է
եղել և որևէ կապ չի ունեցել
պատմության կամ սրբազան
ճշմարտության հետ: Նա
հանդիսավոր և պարզ
խոսքերով ժխտեց Աստծո
գոյությունը, ում ծառայությանը
նվիրված էր եղել, և երդվեց
ապագայում ծառայել

ազատութեանը,
հա-վասարութեանը,
առաքինութեանն ու
բարոյականութեանը: Յետո
սեղանին դնելով իր
եպիսկոպոսական
հանդերձանքը՝ նա
եղբայրաբար գրկեց
Խորհրդարանի նախագահին:
Մի քանի ուխտադրուժ
քահանաներ հետևեցին այս
կղերականի օրինակին»
(Ուալթեր Սքոթ, հ.1, գլ.17):

«Եվ երկրի վրա բնակվողները
կուրախանան ու կխնդան և
իրար ընծաներ ու նվերներ

կուղարկեն, որ այս երկու
մարգարեները չարչարեցին
երկրի բնակվողներին»:
Անհավատ Ֆրանսիան լռեցրեց
Աստծո երկու վկաների
հանդիմանող ձայնը:
Ճշմարտության խոսքը մեռած
ընկած էր նրա փողոցներում,
իսկ Աստծո օրենքի
սահմանափակումներն ու
պահանջները ասող
բազմությունը ցնծամ էր:
Մարդիկ բացահայտորեն
մարտահրավեր էին նետում
երկնքի Թագավորին: Հին օրերի
մեղավորների պես նրանք
գոչում էին. «Աստված ինչպե՞ս

գիտի, և գիտությունն կա՞
Բարձրյալի մոտ» (Սաղմոս
73.11):

Գրեթե անհավատալի հայիոյիչ
հանդգնությամբ նոր
իշխանության քահանաներից
մեկն ասաց. «Աստված, եթե դու
կաս, լուծիր Քո անարգված
անվան վրեժը: Ես մարտակոչ
եմ նետում Քեզ: Լռո՞ւմ ես, չե՞ս
համարձակվում դիրդացնել Քո
որոտմունքը: Սրանից հետո էլ
ո՞վ [275] կհավատա քո
գոյությանը» (Լակրետել,
Պատմություն, հ. 11, էջ. 309,
Արչիբալդ Էլիսոն, Եվրոպայի

պատմութիւնը, հ.1, գլ.10):
Մի՞թէ սա արձագանքը չէ
փարավոնի հանդգնութեան.
«Եհովան ո՛վ է, որ նրա խոսքը
լսեմ... Եհովային չեմ
ճանաչում»:

«Անզգամն ասաց իր սրտում.
Աստված չկա» (Սաղմոս 14.1):
Իսկ ճշմարտութիւնը
խեղաթիւրդուկների վերաբերյալ
Տերն ասում է. «Նրանց
անմտութիւնը հայտնի կլինի
ամենքին» (Բ Տիմոթեոս 3.9):
Այն բանից հետո, երբ
Ֆրանսիան հրաժարվեց
Կենդանի Աստծո՝ «Բարձրի և

Բարձրյալի՝
հավիտենականության մեջ
բնակվողի» պաշտամունքից,
կարճ ժամանակ անց նա ընկավ
քայքայիչ կռապաշտության
մեջ՝ երկրպագելով
Բանականության
աստվածուհուն՝ հանձին մի
անբարոյական կնոջ: Եվ սա
արվեց ազգի
ներկայացուցիչների
պալատում՝ քաղաքացիական և
օրենսդրական
հեղինակությունների կողմից:
Պատմաբանն ասում է. «Այդ
խելահեղ ժամանակվա
արարողություններից մեկն

անգերազանցելի է մտում իր
անհեթեթությունք ու
ամբարշտությունք:
Ժողովարանի դռները
բացվեցին մի խումբ
երաժիշտների առջև, որին
հետևում էր տեղական
իշխանության
ներկայացուցիչների
հանդիսավոր թափորը՝
գովերգելով ազատությունը և
ուղեկցելով իրենց ապագա
երկրպագության առարկային՝
քողով ծածկված մի կնոջ, ում
նրանք «Բանականության
աստվածուհի» էին կոչում:
Ներս մտնելով՝ նրա վրայից մեծ

շուքով վերցրին քողը և
նստեցրին նախագահի աջ
կողմը: Դա բոլորին հայտնի
օպերային պարուհի էր... Այս
կնոջը՝ այն բանականության
ամենատիպիկ
ներկայացուցչին, որին նրանք
երկրպագում էին, Ֆրանսիայի
Ազգային համաժողովը
հրապարակայնորեն պատիվ
տվեց »:

«Այս անսուրբ և ծիծաղելի
դիմակահանդեսը միջոցառման
վերածվեց, և Բանականության
Աստվածուհու մեծարման
արարողությունը սկսեցին

կրկնել ամբողջ երկրով մեկ
այնպիսի վայրերում, ուր
բնակիչներն ուզում էին ցույց
տալ, որ իրենք էլ են հասել
հեղափոխության
բարձունքներին» (Ուալթեր
Սքոթ, հ.1, գլ.17):

Բանականության
պաշտամունքը ներկայացնող
հռետորն ասաց.
«Օրենսդիրներ,
մոլեռանդությունն իր տեղը
զիջեց բանականությանը: Նրա
մշուշոտ աչքերը չկարողացան
տանել լույսի պայծառությունը:
Այսօր մի հսկայական

բազմութիւնն է հավաքվել այս
գործական կամարների ներքո,
որոնք առաջին անգամ
արձագանքեցին
ճշմարտությանը: Այստեղ [276]
Ֆրանսիացիները նշում են
միակ ճշմարիտ պաշտամունքը՝
Ազատության և
Բանականության
պաշտամունքը: Այստեղ մենք
բարեմաղթանքներն ենք հղում
Չանրապետության զինուժի
բարգավաճմանը: Այստեղ
հանուն Բանականության մենք
հրաժարվում ենք անշունչ
կուռքերից՝ ընդունելով
շնչավոր պատկերը՝ բնության

գլուխագործոցը» (Մ. Ա. Թիեզ,
Ֆրանսիական
հեղափոխության
պատմությունը, հ. 2, էջ 371):

Երբ աստվածուհուն բերեցին
ժողովարան, հռետորը բռնեց
Նրա ձեռքից և, դառնալով
ժողովրդին, ասաց.

«Մահկանացուներ՝, դադարեք
դողալ մի Աստծո անզոր
որոտմունքի առաջ, ում ձեր
վախն է ստեղծել: Այսուհետև ոչ
մի աստված մի՛ ճանաչեք,
բացի Բանականությունից: Ես
ձեզ եմ ներկայացնում Նրա
ազնվագույն և սրբագույն

պատկերը: Եթե դուք պետք է
կուռքեր ունենաք, ապա զոհեր
մատուցեք միայն սրա
նմաններին... Ընկի՛ր
Ազատության վեհափառ
Սենատի առջև, օ՛ր,
Բանականության քո՛ղ»:

«Այն բանից հետո, երբ
Նախագահը գրկեց
աստվածուհուն, նրան
նստեցրին մի հիասքանչ կառք
և վիթխարի ամբոխի
ուղեկցությամբ տա-րան Նոտր
Դամ տաճարը՝ զբաղեցնելու
աստվածության տեղը: Այնտեղ
նա բարձրացվեց զոհասեղանի

վրա և ընդունեց բոլոր
ներկաների երկրպագութիւնը»
(Էլիսոն, հ.1, գլ.10):

Շատ չանցած՝ սրան հաջորդեց
Աստվածաշնչի
հրապարակային այրումը: Մի
անգամ «Թանգարանների
ժողովրդական ընկերության
անդամները մտան
քաղաքապետարանի դահլիճ՝
բացականչելով՝ «Կեցցե՛
Բանականութիւնը, և մի ձողի
ծայրին կրելով որոշ
կիսաայրված գրքերի
մնացորդներ, այդ թվում
սաղմոսներ, աղոթագրքեր և

Հին ու Նոր Կտակարանները,
որոնք, նախագահի խոսքերով,
«մեծ կրակի մեջ քավեցին այն
բոլոր հիմարությունները, որ
մարդկային ցեղին ստիպել էին
կատարել» (Փարիզյան
ամսագիր, 1793, N318:
Սեջբերված է՝ Բուշե—Ռու,
Պառլամենտական
պատմության հավաքածու, հ.
30, էջ 200, 201):

Պապությունն էր սկսել այն
գործը, որ արեհիզմն ավարտում
էր: Հռոմի
քաղաքականությունն էր
ստեղծել այն հասարակական,

քաղաքական և կրոնական
պայմանները, որոնք
Ֆրանսիային արագորեն
կորստյան էին տանում:
Անդրադառնալով
հեղափոխության
սարսափներին՝ գրողներն
ասում էին, որ այդ ամենի մեջ
պետք է մեղադրվեն գահն ու
եկեղեցին: Ավելի ստույգ՝
մեղավորը հենց եկեղեցին էր:
Պապությանը թունավորել էր
թագավորների միտքն ընդդեմ
Բարենորոգման՝ որպես գահի
թշնամու, որպես մի
խռովության, որը
ճակատագրական կլիներ ազգի

Խաղաղությանն ու
ներդաշնակությանը: Յռոմի
հանճարն էր, որ այս
մի-ջոցներով գահակալներին
դրդել էր ամենասուկալի
դաժանությանն ու
ամենաստորացուցիչ
կեղեքմանը:

Աստվածաշունչն իր
ազատության շունչն էր բերում:
Որտեղ որ ավետարանն
ընդունվեր, մարդկանց միտքը
արթնանում էր: Նրանք սկսում
էին թոթափել իրենց
տգիտության, արատների և
սնահավատու-թյան ստրկական

շղթաները: Նրանք սկսում էին
մտածել և գործել
ինքնուրույնաբար: Այս
տեսանելով՝ միապետները
դողում էին իրենց
բռնակալության համար:

Յոմն անհապաղ սկսեց
բորբոքել նրանց նախանձն ու
երկյուղը: 1525-ին պապն ասել
է Ֆրանսիայի վարչապետին.
«Այս մոլուցքը
(Բողոքականությունը)
կխեղաթյուրի և կկործանի ոչ
միայն կրոնը, այլև բոլոր
պետությունները,
ազնվականությանը,

օրենքները, կարգերն ու
դասակարգերը» (Գ. դե Ֆելիս,
Ֆրանսիայի բողոքականների
պատմությունը, հ.1, գլ. 2,
պարբ. 8): Մի քանի տարի անց
պապական դեսպանը
զգուշացրեց թագավորին.
«Ձերդ Մեծություն, մի՛
խաբվեք: Բողոքականները
խախտելու են ինչպես
կրոնական, այնպես էլ
քաղաքացիական կարգը...
Վտանգը գահին սպառնում է
նույնքան, որքան
զոհասեղանին... Նոր կրոնի
ներմուծումն իր հետ կբերի նաև
նոր կառավարություն»

(Դ՛Օբինյե, Բարենորոգման պատմութիւնը Եվրոպայում Կալվինի ժամանակ, հ. 2, գլ. 36): Աստվածաբաններն էլ գրգռում էին ժողովրդի նախապաշարումները՝ հայտարարելով, որ բողոքական ուսմունքը «մարդկանց նորոյթների և հիմարության մեջ է ներքաշում՝ թագավորին զրկելով իր հպատակների սիրուց ու նվիրվածութիւնից և կործանելով եկեղեցին ու պետութիւնը»: Այսպիսով, Յոնան հաջողվեց Տրանսիլանիան տրամադրել Բարենորոգման դէմ: «Գահը պահպանելու,

ագնվականներին
պաշտպանելու և օրենքները
պահելու համար էր, որ
Ֆրանսիայում առաջին անգամ
մերկացվեց հալածանքի սուրը»
(Ուայլի, հ.13, գլ. 4):

Երկրի ղեկավարները հազիվ թե
կանխատեսեին այդ
չարագուշակ
քաղաքականության
հետևանքները: Աստվածաշնչի
ուսմունքը ժողովրդի մտքում և
սրտում կսերմաներ
արդարության, զսպվածության,
ճշմարտության,
հավասարության ու գթության

այն սկզբունքները, որոնք ազգի բարգավաճման անկյունաքարն են: «Արդարությունը կբարձրացնի ազգը», և «աթոռն արդարությամբ կհաստատվի» [278] (Առակաց 14.34, 16.12) : «Արդարության գործը կլինի խաղաղություն, և արդարության արդյունքը՝ հանգիստ ու ապահովություն հավիտյան» (Եսայիա 32.17): Նա, ով հնազանդվում է Աստծո օրենքին, իրապես կհարգի ու կպահի նաև իր երկրի օրենքները: Նա, ով երկյուղում է Աստծուց, կպատվի նաև թա-գավորին՝ իր արդար ու

օրինական կառավարման մեջ:
Բայց դժբախտ Ֆրանսիան
արգելեց Աստծո խոսքը և
վտարեց Նրա աշակերտներին:
Դարեր շարունակ
սկզբունքային ու ազնիվ,
խորաթափանց մտքի և
բա-րոյական ուժի տեր մարդիկ,
ովքեր արհուլթյուն ունեին՝
բարձրաձայներս իրենց
համոզմունքները և հավատ՝
չարչարվելու հանուն
ճշմարտության, տանջվում էին
թիանավերում որպես
ստրուկներ, մեռնում էին
խարույկ-ների վրա կամ
կենդանի փտում ստորգետնյա

խցերում: Յազարավոր- ներն
փախչելով ազատվում էին, և
այս ամենը շարունակվում էր
երկու հարյուր հիսուն տարի՝
Բարենորոգման սկսվելուց
հետո:

«Դժվար թե այդ երկարատև
ժամանակահատվածում
Ֆրանսիա-ցիների մի սերունդ
լիներ, որը տեսած չլիներ՝
ինչպես են ավետարանի
ջատագրվները փախչում
հալածիչների խելահեղ
վայրագությունից՝ իրենց հետ
տանելով այն գիտելիքները,
արվեստը, կարգապահությունը,

հմտությունը, ինչում նրանք
գերազանցում էին բոլորին,
որպեսզի հարստացնեն այն
երկրները, ուր ապաստան էին
գտնում: Եվ որքան որ նրանք
իրենց շնորհներով ծաղկեցնում
էին մյուս երկրները, նույնքան
ել իրենցը զրկվում էր դրանցից:
Եթե այդ ամենը, ինչ հանվում
էր երկրից, մնար Ֆրանսիայում,
եթե այդ երեք հարյուր
տարիների ընթացքում
վտարանդիների
աշխատանքային հմտությունը
ծառայեր իրենց երկրի
բարգավաճմանը, եթե այդ երեք
հարյուր տարիների ընթացքում

Նրանց գեղարվեստական
հակումները զարգացնելին
երկրի արտադրանքը, եթե այդ
երեք հարյուր տարիների
ընթացքում նրանց
ստեղծագործ հանճարն ու
վերլուծական տաղանդը
հարստացնելին
գրականությունն ու
զարգացնելին գիտությունը, եթե
նրանց իմաստությամբ
ուղեկցվելին երկրի ժողովները,
նրանց խիզախությամբ՝ նրա
մարտերը, նրանց
ար-դարությամբ ձևավորվելին
նրա օրենքները, իսկ
Աստվածաշնչի կրոնը

գորացներ նրա ժողովրդի
միտքը և վերահսկեր խիղճը,
ինչպիսի՛ փառքով այսօր
կպսակվեր Ֆրանսիան: Ի՞նչ
հզոր, բարգավաճ ու երջանիկ
երկիր կլիներ նա՝ օրինակելի
բոլոր ազգերի համար:

[279] «Բայց կույր և անողոք
մոլեռանդությունը նրա
տարածքից վտարեց
առաքինության ամեն մի
ուսուցչի, կարգուկանոնի ամեն
մի պահապանի, գահի ամեն մի
ազնիվ պաշտպանի: Նրանց,
ովքեր իրենց երկիրն ուզում էին
աշխարհի «փառքն ու

պարծանքը» դարձնել, ասում էին. «Ընտրեք, որն ուզում եք. խարույկ կամ աքսոր»:

Վերջապես երկիրն ամբողջովին ավերվեց, այլևս խիղճ չմնաց, որը հալածեին, մի կրոն, հանուն որի խարույկ բարձրացնեին, հայրենասիրություն, որի համար վտարեին» (Ուայլի, հ.13, գլ. 20): Եվ այդ ամենի հետևանքն, իր բոլոր սարսափներով, դարձավ Յեղափոխությունը:

«Յուզենոտների փածուստից հետո Տրանսիան

համընդհանուր անկում
ապրեց: Ճաղկող
արդյունաբերական
քաղաքներն ավերվեցին, բերրի
տարածքներն ամայացան,
մտավոր բթուությանն ու
բարոյական անկումը
հաջորդեցին չտեսնված
առաջընթացին: Փարիզը
դարձավ մի հսկայական
անկելանոց, և հաշվել են, որ
հեղափոխության բռնկման
ժամանակ երկու հարյուր
հազար չքավոր ողորմություն
էր խնդրում թագավորից:
Միայն ճիզվիտներն էին
բարգավաճում քայքայվող

երկրում՝ զարհուրելի
բռնությունամբ իշխելով
եկեղեցիների ու դպրոցների,
բանտերի ու թիապարտների
վրա»:

Ավետարանը լուծում կբերեր
Ֆրանսիայի այս քաղաքական
ու սոցիալական խնդիրներին,
որոնք փակուղու առջև
կանգնեցրին
կղերականությանը,
թագավորին ու օրենսդիրներին՝
անարխիայի և կորստյան
մատնելով ազգը: Բայց Յոզեֆի
տիրապետության ներքո
ժողովուրդը կորցրել էր

անձնագոհության ու
անշահախնդիր սիրո
վերաբերյալ Փրկչի օրհնյալ
դասերը: Նրանք այլևս սովոր
չէին ինքնուրացություն
դրսևորել հանուն ուրիշների:
Չարուստները
հանդիմանություն չէին
ստանում աղքատներին ճնշելու
համար, իսկ աղքատները՝
վարձատրություն իրենց
ստրկական աշխատանքի
դիմաց: Ունևորների և
ուժեղների եսասիրությունը
գնալով ավելի ու ավելի
ակնհայտ ու ճնշող էր դառնում:
Դարեր շարունակ ազահ ու

անառակ ազնվականները
հարստահարելու ճնշել էին
գյուղացուն: Չարուստները
շահագործում էին
աղքատներին, և աղքատներն
ատում էին հարուստներին:

Շատ գավառներում
կալվածքներն
ազնվականներին էին
պատ-կանում, իսկ
աշխատավոր խավերը
նրանցից վարձում էին:
Չանձնված իրենց տերերի
ողորմությանը՝ նրանք
ստիպված [280] ենթարկվում
էին նրանց անմարդկային

պահանջներին: Եկեղեցու և
պետութեան ծախսերի բեռն
ընկած էր միջին և ցածր
խավերի վրա, որոնցից մեծ
հարկեր էին պահանջում
քաղաքացիական
իշխանություններն ու
կղերականները:
«Ազնվականների քմահաճույքը
գերագույն օրենք էր
համարվում: Կեղեքիչների հոգը
չէր, որ գյուղացիներն ու
հողագործները կարող էին
սովամահ լինել... Ժողովուրդը
ստիպված էր ամեն ինչում
հաշվի առնել բացառապես
հողատիրոջ շահերը:

Յողագործների կյանքը լի էր
չարքաշ աշխատանքով ու
անհույս թշվառությամբ: Նրանց
գանգատներին, եթե երբևէ
համարձակվեին գանգատվել,
պատասխանում էին
ամբարտավան
արհամարհանքով:
Դատարանները միշտ
պաշտպանում էին
ազնվականին՝ ի վնաս
գյուղացու: Դատավորներն
անամոթաբար կաշառք էին
վերցնում, և արիստոկրատիայի
քմահաճույքն անգամ օրենքի
ուժ էր ստանում համատարած
այդ ապականության շնորհիվ:

Մի կողմից աշխարհիկ
իշխանավորները, մյուս կողմից
կղերականները ցածր խավերից
հարկեր էին կորզում, բայց
դրանց կեսն անգամ չէին
մտցնում արքայական կամ
եկեղեցական գանձարան, իսկ
մնացածը վատնում էին
անառակ կրթերի բավարարման
մեջ: Եվ այդ մարդիկ, ովքեր
չքա-վորության էին հասցնում
էին իրենց հպատակներին,
ազատված էին հարկերից և
օրենքով կամ ըստ
սովորության՝ կարող էին
զբաղեցնել պետական
ցանկացած պաշտոն:

Արտոնյալ խապը շուրջ հարյուր
հիսուն հազար մարդ էր
հաշվվում, իսկ միլիոնավոր
մարդիկ դատապարտված էին
թշվառության ու քայքայման,
նրանց քմահաճույքների
պատճառով»:

Արքունիքը թաղված էր
ճոխության ու անառակության
մեջ: Ժողովրդի և ղեկավարների
միջև գրեթե վատահուլթյուն
չկար: Կառավարության
ձեռնարկած բոլոր միջոցները
կասկածելի էին թվում՝ որպես
նենգ ու եսասիրական:
Նախքան Յեղավախուլթյունը՝

ապելի քան կես դար,
գահակալում էր Լյուդովիկոս
XV—ը, ով նույնիսկ այն չար
ժամանակներում հայտնի էր
որպես ծուլ, թեթևամիտ ու
ցանկամուլ միապետ:
Ունենալով անառակ ու դաժան
արիստոկրատիա և չքավոր ու
տգետ ցածր խավ, երկիրը
գտնվում էր ֆինանսական
ճգնաժամի մեջ, ժողովուրդը՝
զայրացած վիճակում: Պետք
չէր մարգարեի աչք ունենալ՝
կանխատեսելու համար
վերահաս սոսկալի պայթյունը:
Իր խորհրդականների
նախազգուշացումների

Թագավորը սովորաբար
պատասխանում էր.
«Ձանացեք, [281] ամեն բան
լավ լինի, քանի դեռ ես
կենդանի եմ, իսկ մահիցս հետո
ինչ լինելու է՝ թող լինի»։ Չուր
էին բարեփոխման
անհրաժեշտության մասին
պնդումները։ Նա տեսնում էր
չարիքը, բայց ոչ
խիզախություն, ոչ էլ ուժ աներ
այն կասեցնելու համար։
Ֆրանսիային սպասվող
ճակատագիրը չափազանց
ճշգրտորեն արտահայտված է
Նրա ծուլը ու եսասիրական

պատասխանի մեջ. «Ինձանից
հետո՝ թեկուզ ջրհեղեղ»:

Բորբոքելով թագավորների և
իշխող խավերի նախանձը՝
Յոնանը նրանց դրդել էր
գերության մեջ պահել
ժողովրդին՝ լավ իմանալով, որ
դա կթուլացնի պետութունը, և
այդպիսով իշխաններն ու
ժողովուրդը իր ծառաները
կդառնան: Իր հեռատես
քաղաքականությամբ նա
հասկացել էր, որ մարդկանց
ստրկացնելու համար պետք է
կապանքներ դնել նրանց
հոգիների վրա, որ եթե նրանք

զրկվեն ազատութիւնից, ապա
հաստա-տապես ի վիճակի չեն
լինի խուսափելու
գերութիւնից: Բարոյական
քայ-քայունը, որ նրա
քաղաքականութեան պտուղն
էր, հազար անգամ ավելի
սարսափելի էր, քան
Ֆիզիկական տանջանքները:
Ասավաճաշնչից զրկված և
մատնված մոլեռանդ ու
եսակենտրոն ուսմունքների
գերութեանը՝ ժողովուրդն
այնպես էր թաղվել
տգիտութեան,
սնահավատութեան ու
արատների մեջ, որ բոլորովին

անընդունակ էր
ինքնակառավարման:

Բայց այս ամենը միանգամայն
այլ ելք ունեցավ, քան Յոզմը
ծրագրել էր: Չանգվածներին
կուրորեն իր դոգմաների
ստրկության մեջ պա- հելու
փոխարեն՝ նա, ըստ էության,
Նրանց անհավատներ ու
հեղափո-խականներ դարձրեց:
Նրանք արհամարհեցին Յոզմի
կրոնը՝ որպես քահանայական
խարդավանք, իսկ
հոգևորականությանը դիտում
էին որպես իրենց կեղեքիչների:
Միակ աստվածը, ում նրանք

գիտեին, Յոնմի աստվածն էր,
Նրանց միակ կրոնը՝ նրա
ուսմունքը: Ըստ նրանց՝ Յոնմի
ագահությունն ու
դաժանությունը Աստվածաշնչի
օրինական պտուղն էր, և
նրանք հրաժարվեցին դրանից:

Յոնմը կեղծել էր Աստծո
բնավորությունը և աղավաղել
Նրա պահանջները, և այժմ
մարդիկ մերժեցին թե՛
Աստվածաշունչը, թե՛ նրա
Յեղիևակին: Պապությունը
պահանջել էր կուրորեն
հավատալ իր դոգմաներին՝
ձևացնելով, թե

Աստվածաշունչն է այդպես
սովորեցնում: Դրան ի
պատասխան՝ Վոլտերն ու Նրա
համախոհները բոլորովին
հրաժարվեցին Աստծո խոսքից՝
ամենուրեք տարածելով
անհավատության թույնը:
Չռոմը ժողովրդին ճգմել էր իր
երկաթե կրունկով, և հիմա
ապականված ու գազանացած
ամբոխները, նողկանքով
մերժելով Նրա [282]
բռնակալութիւնը, դեն
նետեցին բոլոր
սահմանափակումները:
Չայրացած այն փայլուն
խաբեության վրա, որն այնքան

երկար ժամանակ մեծարել էին,
նրանք մերժեցին կեղծիքն ու
ճշմարտությունը միասին: Եվ
կտրելով բոլոր սանձերը՝ մեղքի
ստրուկները ցնծում էին իրենց
երևա-կայական
ազատությամբ:

Երբ սկսվեց Յեղափոխությունը,
թագավորի զիջման շնորհիվ
ժողո-վուրդն ավելի մեծաթիվ
ներկայացուցիչներ ունեցավ
խորհրդարանում, քան
ազնվականներն ու
կղերականությունը միասին:
Այսպիսով, իշխա-նության
նժարը թեքվեց նրա կողմը,

բայց նրանք պատրաստ չէին
այն օգ-տագործել
իմաստությամբ և
խելամտորեն: Ձգտելով ուղղել
չարիքները, որոնցից իրենք
տուժել էին, նրանք որոշեցին
ստանձնել հասարակության
վերակառուցումը: Մոլեգնած
ժողովուրդը, ում միտքը երկար
ժամանակ համակված էր եղել
դառնազին հիշողություններով,
վճռեց հեղափոխել այն թշվառ
վիճակը, որն արդեն անտանելի
էր դարձել, և վրեժ առնել
նրանցից, ովքեր իրենց
տառապանքների պատճառն
էին: Յուրացնելով այն դասը,

որը սովորել էին
բռնակալութեան ներքո,
նեղյալներն իրենց ճնշողների
կեղեքիչները դարձան:

Դժբախտ Ֆրանսիան արյան
մեջ հնձեց այն, ինչ սերմել էր:
Սոսկալի էին Յոռմի
հսկողութեանը ենթարկվելու
հետևանքները: Որտեղ որ
Ֆրանսիան Բարենորոգման
սկզբում առաջին խարույկն էր
վառել պա-պութեան
ազդեցութեամբ, այնտեղ
հեղափոխութիւնը
կանգնեցրեց իր առաջին
գլխատիչ սարքը: Այն նույն

վայրում, որտեղ
տասնվեցերորդ դա-
րում վառել
էին առաջին բողոքական
նահատակներին,
տասնութերորդ դարում
գլխատվեցին առաջին զոհերը:
Մերժելով ավետարանը, որը
բժշկություն կբերեր իրեն,
Ֆրանսիան բացեց
անհավատության ու կորստյան
դուռը: Երբ Աստծո օրենքի
սահմանափակումները մի կողմ
դրվեցին, պարզվեց, որ
մարդկանց օրենքներն ի զորու
չեն զսպելու մարդկային
կրքերի ահեղ հոսքը, և ազգը
հայտնվեց ապստամբության ու

անարխիայի հորձանուտում:
Աստվածաշնչի դեմ
պատերազմը սկիզբ դրեց մի
դարաշրջանի, որն աշխարհի
պատմության մեջ հայտնի է
որպես Սարսափի
իշխանություն:
Խաղաղությունն ու
երջանկությունը դուրս էին
մղվել մարդկանց տներից ու
սրտերից: Ոչ ոք ապահով չէր:
Նա, ով այսօր ցնծում էր, վաղը
կարող էր կասկածի ենթարկվել
ու դատապարտվել:
Բռնությունն ու կրքերը
աննախադեպ թափ առան:

[283] Թագավորը,
կղերականութունն ու
ազնվականները ստիպված էին
ենթարկվել գրգռված ու
խելացնոր ժողովրդի
գազանությանը: Թագավորի
մահապատիժը միայն ավելի
բորբոքեց նրանց
վրիժառության տենչը, և նրա
դատավճիռը կայացնողները
շուտով հետևեցին նրան դեպի
կառափնարան: Որոշված էր
կոտորել բոլորին, ում
կասկածում էին
հեղափոխության հանդեպ
թշնամության մեջ: Բանտերում
տեղ չկար, և կալանավորների

թիվը մի անգամ հասել էր երկու
հարյուր հազարի:
Քա-ղաքներում ահասարսուռ
դեպքեր էին տեղի ունենում:
Չեղափոխական մեկ
կուսակցութիւնն դուրս էր եկել
մյուսի դէմ, և հակամարտող
այդ ամբոխների համար
Տրանսիան վերածվել էր մի
ընդարձակ մարտա-դաշտի՝
բռնկված նրանց կատաղի
կրքերով: «Փարիզում մի
խռովութիւննը հետևում էր
մյուսին, բնակիչները
բաժանվել էին տարբեր
խմբա-վորումների, որոնք,
թվում էր, բացի իրար

ոչնչացնելուց ուրիշ նպատակ
չունեին»։ Եվ համընդհանուր
այդ թշվառությունը ավելացավ
նաև այն, որ երկիրը ներքաշվեց
երկարատև ու ավերիչ
պատերազմի մեջ Եվրոպայի
մեծ տերությունների դեմ։
«Երկիրը գրեթե սնանկացել էր,
բանակը վարձ էր պահանջում,
Փարիզի բնակիչները սովամահ
էին լինում, ավազակախմբերը
թալանել էին գավառները, և
քաղաքակրթությունը գրեթե
կուլ էր գնացել անարխիային ու
ամենաթողությունը»։

Ժողովուրդը չափազանց լավ էր
յուրացրել դաժանության ու
տան-ջանքի այն դասերը, որ
Յոնան այդքան ջանասիրաբար
սովորեցրել էր: Վերջապես
եկավ հատուցման օրը: Յիմա
արդեն Յիսուսի աշակերտները
չէ, որ գցվում էին գնդաններն
ու քարշ տրվում
կառափնարան: Նրանք վաղուց
մահացել էին կամ աքսորվել:
Անողորմ Յոնան այժմ զգաց
Նրանց մահացու ուժը, ում
սովորեցրել էր հաճույք ստանալ
արյուն թափելուց:

«Յալաճանքները, որ դարեր
շարունակ իրականացրել էր
Ֆրանսիայի
կղերականությանը, այժմ
անասելի ուժով տեղացին հենց
Նրա գլխին:
Կառափնարանները ողողվեցին
քահանաների արյունով:
Թիանավերն ու բանտերը, որ
մի ժամանակ լեցուն էին
հուգենոտներով, հիմա լցվեցին
Նրանց հալածիչներով: Աթոռին
շղթայված ու տանջահար
թիավարելով՝ կաթուղիկ
կղերականները վերապրեցին
այն բոլոր տառապանքները,
որոնցով իրենց եկեղեցին

այդպես անխնա պատժում էր
վեհանձն հերե-տիկոսներին»:
[284]

«Չեսոտ եկան օրեր, երբ ուժի մեջ
մտավ բոլոր օրենքներից
ամենաբարբարոսականը՝
սահմանված ամենավայրենի
դատարանի կողմից, երբ ոչ ոք
չէր կարող ողջունել իր
հարեաններին կամ աղոթել...
առանց հանցանք գործելու
վտանգի ենթարկվելու, երբ
ամեն անկյունում լրտեսներ
էին թաքնված, երբ գլխատիչ
սարքը ամեն առավոտ սկսում
էր իր երկարատև ու ծանր

աշխատանքը, երբ բանտերը
լեցուն էին, ինչպես ստրուկներ
տեղափոխող նավերը, երբ
արյունով փրփրած առունները
լցվում էին Սենա գետը... Մինչ
ամեն օր Փարիզի փողոցներով
զոհերին սայլերով տանում էին
մահապատժի, գերագույն
խորհրդի կողմից շրջաններ
ուղարկված
պատգամավորներն այնպիսի
դաժան խրախ-ճանքներ էին
սարքում, որ լսված չէր
նույնիսկ մայրաքաղաքում:
Մա-հացու սարքի դանակը
չափից ավելի դանդաղ էր
իջնում՝ կատարելու

սպանութեան իր գործը:
Գերիների երկար շարքերը
հնձվում էին արկերի
պայթյունից: Մարդկանցով լի
լաստերի վրա անցքեր էին
բացվում: Լիոնն անապատի եր
վերածվել: Արասում
կալանավորներին զրկում էին
նույնիսկ արագահաս մահվան
դաժան տրտմությունից: Լուար
գետի ամբողջ երկայնքով՝
Մոմյարից մինչև ծովը,
ագռավների և ուրուրների մեծ
երամները խնջույք էին անում
զարհուրելի կերպով իրար
կապված մերկ դիակներով:
Հաշվի չէին առնում ոչ սեռ, ոչ

տարիք: Մինչև տասնյոթ
տարեկան սպանված
պատանիների և աղջիկների
թիվը հարյուրներով էր
հաշվվում: Մայրական կրծքից
պոկված մանուկներին մի
նիզակից մյուսն էին նետում
Յակոբինյանների շարքերի
երկայնքով»: Տասը տարվա
կարճ ժամանակահատվածում
բյուրավոր մարդիկ մեռան:

Ամեն ինչ եղավ այնպես,
ինչպես սատանան կկամենար:
Սա հենց այն էր, ինչին նա
ձգտել էր հասնել դարեր
շարունակ: Նրա

քաղաքա-կանությունը սկզբից մինչև վերջ խաբեություն է, և նրա անփոփոխ նպատակն է՝ վիշտ ու թշվառություն բերել մարդկանց, դիմազրկել ու փչացնել Աստծո ձեռքի գործը, խափանել գթության ու սիրո աստվածային նպատակները՝ այդպիսով վիշտ պատճառելով երկնքին: Չեստո իր խաբուսիկ հնարքներով նա կուրացնում է մարդկանց միտքը՝ դրդելով նրանց իր արածների մեղքը Աստծո վրա գցել կարծես թե այս բոլոր թշվառություններն Արարչի ծրագրի հետևանքն են: Նմանապես էլ երբ [285] նրանք,

ովքեր քայքայվել ու
գազանացել են նրա դաժան
իշ-խանությունից, հանկարծ
ազատություն են ստանում, նա
մղում է նրանց
ծայրահեղությունների և
վայրագությունների: Իսկ հետո
բռնակալներն ու կեղեքիչները
այդ անսանձ
գազանությունները
ազատության արդյունքն են
համարում:

Երբ մոլորությունը մի քողի
տակ մերկացվում է, սատանան
նրան ընդամենը մեկ այլ դիմակ
է հագցնում, և մարդիկ այն

ընդունում են նույն եռանդով,
որքան առաջինը: Երբ մարդիկ
հասկացան, որ պապությունը
խաբեություն է, և սատանան
այլևս չէր կարող նրա միջոցով
դրդել նրանց խախտելու
Աստծո օրենքը, նա նրանց
ներշնչեց ամբողջ կրոնը կեղծիք
համարել, իսկ Աստվածաշունչը՝
առասպել: Եվ մի կողմ գցելով
աստվածային
պատվիրանները՝ նրանք
անձնատուր եղան անսանձ
ան-օրենսությանը:

Բախտորոշ սխալը, որն
այդպիսի աղետ բերեց

Ֆրանսիայի բնակիչներին, այս մեկ մեծ ճշմարտության անտեսումն էր, որ իսկական ազատությունը Աստծո օրենքը պահելու մեջ է: «Երանի՛ր թե ուշադրություն դարձնեիր իմ պատվիրաններին, այն ժամանակ գետի պես պիտի լիներ քո խաղաղությունը, և քո արդարությունը՝ ծովի ալիքների պես»:

«Խաղաղությունն չունեն ամբարիշտները, ասում է Տերը»: «Բայց ինձ լսողը՝ ապահով կբնակվի, և հանդարտ կլինի չարիքի վախից» (Եսայիա 48.18,22, Առակաց 1.33):

Աթեիստները, անհավատները և
ուխտադրուժներն
ընդդիմանում են Աստծո
օրենքին ու արհամարհում այն,
բայց նրանց ազդեցութեան
ար-դյունքը ցույց է տալիս, որ
մարդու բարօրությունը
կախված է աստվածա-յին
կանոններից հնազանդվելուց:
Նրանք, ովքեր չեն կամենում
դասեր առնել Աստծո Գրքից,
կարող են կարդալ դրանք
ազգերի պատմության մեջ:

Յոռմի եկեղեցու միջոցով
մարդկանց հեռացնելով

հնազանդութեան ուղուց՝
սատանան այնքան ծածուկ էր
գործում, որ նրա բերած
այլասե-րումն ու
թշվառութիւնը չէին դիտվում
որպէս անօրէնութեան պտուղ:
Եվ Աստծո Յոգին այնպէս էր
հակազդում սատանայի
զորութեանը, որ նա չհասնի իր
ծրագրերի լիարժէք
իրականացմանը: Ժողովուրդը
չէր կարողանում նկատել
պատճառ - հետևանք կապը և
հայտնաբերել իր թշվառութեան
աղբյուրը: Բայց
հեղափոխութեան [286]
ժամանակ ազգային ժողովը

բացահայտորեն մերժեց Աստծո
օրենքը, և արդյունքում
Սարսափի իշխանության օրոք
բոլորը պարզորոշ տեսան
պատճառն ու հետևանքը:

Երբ Ֆրանսիան հրապարակավ
հրաժարվեց Աստծուց և
Աստվածաշնչից, ամբարիշտ
մարդիկ ու խավարի հոգիները
ցնծում էին, որ հասել են իրենց
այդքան երկար փափագած
նպատակին՝ թագավորու-թյան,
որն ազատ է Աստծո օրենքի
սահմանափակումներից: Քանի
որ «չար գործի վճիռը շուտով չի
կատարվում», «մարդկանց

որդիների սիրտը» հանդգնում է
«չարություն անելու» (Ժողովող
8.11): Բայց արդար ու ճշմարիտ
օրենքի խախտումն
անխուսափելիորեն
դժբախտության ու կործանման
է հասցնում: Թեև մարդիկ
անմիջապես չեն պատժվում,
բայց նայնպես նրանց
ամբարշտությունը հաստատ
նրանց կորստյան կտանի:
Դարեր շարունակ նահանջն ու
հանցագործությունը
մոտեցնում էին հատուցման
օրը, ու երբ նրանք լցրին իրենց
անօրենության գավաթը,
Աստծուն արհամարհողները

չափազանց ուշ հասկացան, որ
սարսափելի բան է
աստվածային համբերության
չարաշահումը: Աստծո զսպիչ
Յոզիւն, որ դիմակայում է
սատանայի դաժան
զորությանը, գրեթե լիովին
հեռացավ, և նրան, ում միակ
հաճույքը մարդկանց
տառապանքն է, թույլ տրվեց իր
կամքը կատարել: Նրանք,
ովքեր ընտրել էին
ապստամբության ուղին,
թողնվեցին քաղելու դրա
պտուղները, մինչև որ երկիրը
լցվեց ոճիրներով, որոնք չափից
ավելի զարհուրելի էին

Նկարագրելու համար:
Ամայացած գավառներից ու
ավերված քաղաքներից
սոսկալի աղաղակ, դառնագուլյն
տառապանքի ճիչ էր լսվում:
Ֆրանսիան ասես ցնցվում էր
երկրաշարժից: Կրոնը, օրենքը,
հասարակական կարգը,
ընտանիքը, պե-տությունն ու
եկեղեցին` այս ամենն ավերվել
էր մի ամբարիշտ ձեռքով, որը
բարձրացել էր Աստծո օրենքի
դեմ: Յիրավի, ճշմարիտ են
իմաստունի խոսքերը.
«Անզգամը կընկնի իր
անզգամությամբ»: «Թեև
մեղավորը հարյուր անգամ

մեղք գործի, և երկարատև էլ
լինի, այնուամենայնիվ, ես
գիտեմ, որ բարիք կլինի
Աստծուց վախեցողներին, որ
վախենում են նրա երեսից:
Բայց ամբարշտին բարություն
չի լինի» (Առակաց 11.5,
Ժողովող 8.12,13): «Որովհետև
գիտությունն ասեցին և Տիրոջ
վախը չընտրեցին», «ուրեմն
նրանք իրենց ճանապարհների
պտղից կուտեն և իրենց
խորհուրդներից կկշտանան»
(Առակաց 1.29, 31):

[287] Աստծո հավատարիմ
վկաները, որոնց սպանել էր

«անդունդից դուրս եկող»
հայհոյիչ իշխանությունը,
երկար չէին լռելու: «Երեքուկես
օրից հետո Աստծուց կենդանի
հոգի եկավ մտավ նրանց մեջ, և
նրանք իրենց ոտքերի վրա
կանգնեցին, և մեծ վախ ընկավ
նրանց տեսողների վրա»

(Յայտնություն 11.11): 1793

թվականն էր, երբ Ֆրանսիայի
խորհրդարանը հրամանագրեր
արձակեց՝ օրենքից դուրս
հռչակելով քրիստոնեական
կրոնն ու Սուրբ Գիրքը:

Երեքուկես տարի անց նույն
ժողովը չեղյալ հայտարարեց
այդ հրամանագրերը, ըստ

որոնց՝ Աստվածաշնչի հանդեպ
հանդուրժողականությունն էր
շնորհվում: Աշխարհը
զարհուրած էր այն մեղրի
հրեշավորությունից, որը
Սրբազան պատգամները
մերժելու հետևանքն էր, և
մարդիկ գիտակցեցին Աստծո և
Նրա խոսքի հանդեպ հավատի
անհրաժեշտությունը որպես
առաքինության ու
բարոյականության հիմքի:
«Ո՞ւմ նախատեցիր և
հայհոյեցիր, և ո՞ւմ վրա ձայն
բարձրացրիր, և աչքերդ վեր
հանեցիր Իսրայելի Սուրբի՞
վրա» (Եսայիա 37.23): «Սրա

համար ահա ես նրանց պիտի
իմացնեմ այս անգամ, պիտի
իմացնեմ նրանց իմ ձեռքը և իմ
ուժը, և պիտի գիտենան, որ իմ
անունը եհովա է» (Երեմիա 16.
21):

Երկու վկաների վերաբերյալ
մարգարեն շարունակում է. «Եվ
մեծ ձայն լսեցին, որ ասում էր
նրանց. Վեր ելեք այստեղ: Եվ
վեր ելան երկինքն ամպով, և
նրանց թշնամիները տեսան
նրանց» (Յայտնություն 11.12):
Աստճո երկու վկաների դեմ
Ֆրանսիայի մղած
պատերազմից հետո նրանք

աննախադեպ պատվի
արժանացան: 1804 թվականին
կազմավորվեցին
Բրիտանական և Օտարերկրյա
աստվածաշնչյան
ընկերությունները: 1816-ին
հիմնադրվեց ամերիկյան
աստվածաշնչյան
ընկերությունը: Երբ ստեղծվեց
բրիտանական ընկերությունը,
Աստվա-ծաշունչը
հրատարակվեց և տարածվեց
հիսուն լեզուներով: Այդ
ժամա-նակից ի վեր այն
թարգմանվել է հարյուրավոր
լեզուներով ու բարբառ-ներով:

1792-ին նախորդած հիսուն տարիների ընթացքում քիչ ուշադրություն էր դարձվել օտարերկրյա առաքելություններին: Ոչ մի նոր ընկերություն չէր կազմավորվել, և միայն մի քանի եկեղեցիներ էին ջանում [288] քրիստոնեությունը տարածել հեթանոսական երկրներում: Սակայն տասնութերորդ դարի վերջում մեծ վավախություն կատարվեց: Ռացիոնալիզմի արդյունքն այլևս չէր գոհացնում մարդկանց, և նրանք սկսեցին գիտակցել

աստվածային հայտնության ու
գործնական կրոնի
անհրաժեշտութիւնը: Այդ
ժամանակից ի վեր
օտարերկրյա
առաքելութիւնների
գործունեութիւնը
աննախադէպ թափ ստացավ:

Տպագրության գարգացման
նոր ուժ հաղորդեց
Աստվածաշնչի տարածման
գործին: Տարբեր երկրների միջև
կապի միջոցների
կատարելագործումը, հին
նախապաշարումների և
ազգային բացառիկության

պատնեշների փլուզումը,
ինչպես նաև Յոնմի պապի՝
աշխարհիկ իշխա- նությունից
զրկվելը ճանապարհ հարթեցին
Աստծո խոսքի համար: Մի
քանի տարի Աստվածաշունչն
անարգել վաճառվում էր Յոնմի
փողոցներում և տարվում էր
երկրագնդի բոլոր բնակեցված
մասերը:

Անհավատ Վոլտերը մի անգամ
պարծենալով ասել է. «Ես
հոգնել եմ լսելուց, թե ինչպես է
ժողովուրդն անվերջ կրկնում,
որ տասներկու հոգի հիմնել են
քրիստոնեական կրոնը: Ես

կապացուցեմ, որ մի հոգին էլ
բա-վական է՝ այն տապալելու
համար»։ Նրա մահից հետո
սերունդներ են անցել։
Միլիոնավոր մարդիկ
պատերազմել են
Աստվածաշնչի դեմ։ Բայց այն
ոչ միայն չի ոչնչացվել, այլ
այնտեղ, ուր Վոլտերի օրերում
գոյություն ուներ հարյուրը,
այսօր կա Աստծո Գրքի տասը
հազար և նույնիսկ հարյուր
հազար օրինակ։
Քրիստոնեական եկեղեցու
վերաբերյալ վաղ
բարենորոգիչներից մեկը նշել է.
«Աստվածաշունչը մի սալ է, որը

շատ մուրճեր է մաշել»։ Տերն
ասում է. «Քեզ դեմ շինած բոլոր
գործիքները պիտի չհաջողվեն,
և ամեն լեզու, որ վեր կենա քեզ
դեմ դատաստանի, պիտի
դատապարտվի» (Եսայիա
54.17)։

«Մեր Աստծո խոսքը կմնա
հավիտյան»։ «Նրա բոլոր
պատվիրանները հավատարիմ
են, հաստատված են
հավիտյանս հավիտենից և
շինված են ճշմարտությունով և
ուղղությունով» (Եսայիա 40.8,
Սաղմոս 111.7,8)։ Այն, ինչ
շինված է մարդկային

հեղինակութեան վրա, պիտի
փլուզի, բայց ինչը որ հիմնված
է Աստծո անփափոխ խոսքի
ժայռի վրա, մնալու է
հավիտյան:

ԳԼՈՒԽ 16—ՈԼԽՏԱՎՈՐ ՅԱՅՐԵՐԸ

Յրաժարվելով Յռոմի եկեղեցու
ուսմունքից՝ անգլիացի
բարենորոգիչները, սակայն,
պահպանեցին նրա ձևերից
շատերը: Այսպիսով, թեև Յռոմի
հեղինակությունն ու
դավանանքը մերժվեցին, նրա
բազմաթիվ ավանդույթներ ու
ծեսեր ներմուծվեցին Անգլիայի
եկեղեցու պաշտամանքի մեջ:
Ասվում էր, թե այդ հարցերը
խղճի հետ կապ չունեն, որ թեև
Սուրբ Գրքում չկան այդ
պատվերները, հետևապես

Էական չեն, և քանի որ
արգելված էլ չեն, պետք չէ
դրանք չարիք համարել:
Կարծիք կար, թե դրանց
պահումը կարող էր նեղացնել
բարեփոխված եկեղեցիները
Յռոմից բաժանող անդունդը՝
նպաստելով նրան, որ
կաթափկներն ընդունեն
բողոքական հավատը:

Պահպանողականներին ու
զիջողամիտներին այս
փաստարկները համոզիչ էին
թվում: Բայց կային նաև
ուրիշները, ովքեր այդպես չէին
դատում: Այն փաստը, որ այդ

ավանդայթները «կամուրջ են
զցում ճեղքվածքի վրայով
Յոնի և Բարենորոգման միջև»
(Մարտին, հ. 5, էջ 22), նրանց
կարծիքով սպառնիչ փաստարկ
եր դրանք պահպանելու դեմ:
Նրանք դիտում էին դրանք
որպես ստրկության նշաններ,
որոնցից իրենք ազատվել էին և
մտադիր չէին վերադառնալու
դրանց: Նրանք համարում էին,
որ Աստված իր խոսքում
սահմանել է իր
երկրպագության կանոնները, և
մարդիկ իրավունք չունեն
դրանց որևէ բան ավելացնելու
կամ դրանցից պակասեցնելու:

Մեծ ուրացութիւնը սկսվեց
հենց նրանից, որ Աստծո
հեղինակութիւնը [290]
փորձեցին փոխարինել
եկեղեցու հեղինակութեամբ:
Յռոմը սկսեց պարտագրելով
այն, ինչ Աստված չէր արգելել,
և վերջացրեց նրանով, որ
արգելեց այն, ինչ Տերը
հստակորէն պատվիրել էր
պահել:

Շատերը եռանդագին
փափագում էին վերադառնալ
վաղ եկեղեցուն բնորոշ
մաքրութեանն ու
պարզութեանը: Անգլիկան

Եկեղեցու սովորություններից
շատերը նրանք
կռապաշտության
հուշարձաններ էին համարում,
և նրանց խղճին դեմ էր նրա
պաշտամունքների
մասնակցելը: Բայց եկեղեցին,
քապաքացիական
իշխանության աջակցությամբ,
ոչ մի շեղում թույլ չէր տալիս իր
պաշտամունքից: Եկեղեցու
ծառայություններին
մասնակցելը պարտադրվում էր
օրենքով, իսկ չարտոնված
կրոնական ժողովներն
արգելված էին

բանտարկության, աքսորի և մահվան սպառնալիքներով:

Միապետը, ով տասնյոթերորդ դարի սկզբին հենց նոր էր բարձրացել Անգլիայի գահին, հայտարարեց, որ վճռել է ստիպել պուրիտաններին «ենթարկվել, այլապես կամ... դուրս կքշի նրանց երկրից, կամ էլ՝ ավելի վատ» (Ջորջ Բենքրոֆթ, Ամերիկայի Միացյալ Նահանգների պատմությունը, հ.1, գլ. 12, պարբ. 6): Հետապնդված, հալածված ու բանտարկված՝ նրանք ապագայում լավ օրերի

հեռանկար չէին տեսնում, և
շատերը տեղի տվեցին այն
համոզմանը, որ ովքեր ուզում
են ծառայել Աստծուն իրենց
խղճի թելադրանքով, նրանց
համար «Անգլիան այլևս երբեք
չի կարող բնակելի վայր լինել»
(Չ. Գ. Փալֆրեյ, Նոր Անգլիայի
պատմությունը, գլ. 3, պարբ.
43): Ոմանք, ի վերջո, որոշեցին
ապաստարան գտնել
Յոլանդիայում, բայց
հանդիպեցին
դժվարությունների,
գրկանքների ու
բանտարկության: Նրանց
ծրագրերը խափանվեցին, և

Նրանց մատնեցին թշնամիների
ձեռքը: Բայց անկոտորում կամքը
վերջապես հաղթեց, և նրանք
ապաստարան գտան
Հոլանդական
Հանրապետության հյուրընկալ
ափերին:

Թողնելով իրենց տները,
ունեցվածքը և ապրուստի
միջոցները՝ նրանք փախուստի
էին դիմում: Նրանք պանդուխտ
էին օտար երկրում՝ անձանոթ
լեզու և սովորություններ
ունեցող ժողովրդի մեջ, և
ստիպված էին նոր ու անձանոթ
զբաղմունք գտնել իրենց հացը

վաստակելու համար: Միջին
տարիքի մարդիկ, ովքեր իրենց
կյանքը հողագործությամբ էին
անցկացրել, հիմա ստիպված
էին մեխանիկական
արհեստներ սովորել: Բայց
նրանք սիրով ընդունեցին
իրավիճակը և ժամանակ
չունեին ծուլության ու
տրտունջների համար: Հաճախ
կարիքից ճնշված՝ [291] նրանք
գոհանում էին Աստծուց այն
օրհնությունների համար,
որոնք շարունակ տրվում էին
իրենց, և ուրախություն էին
գտնում հոգևոր ազատ
հաղորդակցության մեջ:

«Նրանք գիտեին, որ պանդուխտներ են, և ուշադրություն չէին դարձնում այդ ամենին, այլ նայում էին երկինք՝ իրենց թանկագին հայրենիքին, և հանգիստ գտնում իրենց հոգուն» (Ջորջ Բենքրոֆթ, Ամերիկայի Միացյալ Նահանգների պատմությունը, հ. 1, գլ.12, պարբ. 15):

Աքսորի ու նեղությունների մեջ նրանց սերն ու հավաան ավելի էին զորանում: Նրանք ապավինում էին Տիրոջ խոստումներին, և Նա չէր

հապաղում ժամանակին
օգնության հասնել: Նրա
հրեշտակները նրանց կողքին
էին, որպեսզի քաջալերեին ու
օգնեին: Ու երբ Աստծո ձեռքը
ցույց տվեց նրանց օվկիանոսից
այն կողմ՝ դեպի այն երկիրը,
որտեղ նրանք կարող էին
հիմնել պետություն և իրենց
զավակներին թողնել կրոնի
ազատության թանկագին
ժառանգությունը, նրանք,
առանց վարանելու, առաջ
գնացին նախախնամության
ճանապարհով:

Աստված թույլ տվեց Իր
ժողովրդին անցնել
փորձությունների միջով,
որպեսզի նրանց պատրաստի
Իր բարի մտադրության
իրականացմանը: Եկեղեցին
խոնարհվեց, որպեսզի
կարողանար բարձրանալ:
Աստված պատրաստվում էր Իր
զորությունը ցույց տալ հանուն
Նրա՝ աշխարհին մեկ այլ
ապացույց տալու համար, որ
Ինքը չի լքի Իրեն
հուսացողներին: Նա
իրադարձություններն այնպես
էր դասավորել, որ սատանայի
բարկությունն ու չար

մարդկանց դավերը ծառայեն
Իր փառքին և Իր ժողովրդին մի
ապահով տեղ բերեն:

Չալածանքն ու արտաքսումը
ճանապարհ բացեցին
ազատության համար:

Առաջին անգամ ստիպված
լինելով բաժանվել Անգլիկան
եկեղեցուց՝ պուրիտաններն
իրար հետ հանդիսավոր ուխտ
կապեցին՝ որպես Տիրոջ ազատ
ժողովուրդ, «միասին քայլել
Նրա բոլոր ճանապարհներով՝
արդեն հայտնի, կամ էլ որ դեռ
պետք է բացահայտվեին» (Ջ.
Բրաուն, Ուխտավոր հայրերը,

Էջ 74): Ահա իսկական
բարեփոխման ոգին՝
բողոքականության կենսական
սկզբունքը: Յենց այս
նպատակով էր, որ
ուխտավորները Յուլանդիայից
մեկնեցին՝ տուն գտնելու Նոր
Աշխարհում: Ջոն Ռոբինսոնը՝
նրանց հովիվը, ով
նախախնամության կամքով
չպիտի ուղեկցեր նրանց,
ուխտավորներին ուղղված իր
հրաժեշտի խոսքում ասաց.
«Եղբայրներ, ահա մենք շուտով
բաժանվելու ենք, և Տերը գիտի՝
ապրելո՞ւ եմ արդյոք ես, որ
նորից տեսնեմ ձեր դեմքերը:

Բայց կլինի դա թե ոչ, ես [292]
կոչ եմ անում ձեզ Աստծո և Նրա
օրհնյալ հրեշտակների առաջ՝
հետևել ինձ ոչ ավելի, քան ես
հետեւել եմ Քրիստոսին: Եթե
Աստված ձեզ որևէ բան հայտնի
իր մեկ այլ ծառայի միջոցով,
պատրաստ եղեք ընդունելու
այն նույնքան սիրով, որքան
կընդունեիք իմ
ծառայությունից, քանզի ես
վստահ եմ, որ Տերը շատ
ճշմարտություններ և լույս ունի,
որոնք դեռ պիտի
բացահայտվին Նրա խոսքում»
(Մարտին, հ. 5, էջ 70):

«Ինչ վերաբերում է ինձ, ես չեմ կարող չողբալ բարեփոխված եկեղեցիների վիճակը, որոնք իրենց կրոնում հասել են մի վաւի. և այլևս Բարենորոգման հիմնադիրներից առաջ չեն կամենում գնալ:

Լյութերականներին անհնար է օգնել՝ տեսնելու ավելին, քան տեսել է Լյութերը... և կալվինիստներն, ինչպես տեսնամ եք, ամուր կանգնել են այնտեղ, ուր նրանց թողել է Աստծո այդ մեծ մարդը, ով, սակայն, չգիտեր ճշմարտութունը լիակատար չափով: Սա շատ ողբալի

իրավիճակ է, քանզի թեև
Նրանք վառվող պայծառ լույսեր
են եղել իրենց օրերում, սակայն
չեն թափանցել Աստծո ամբողջ
խորհրդի մեջ, ու եթե հիմա
կենդանի լինեին, նույնքան
սիրով կընդունեին նորաբաց
լույսը, որքան այն, որ ընդունել
էին սկզբում» (Դ. Նիլ,
Պուրիտանների պատմությունը,
հ.1, էջ 269):

«Չիշե՛ք ձեր ուխտը եկեղեցում,
որով խոստացել եք քայլել
Տիրոջ բոլոր ճանապարհներում,
որոնք արդեն հայտնի են կամ
դեռ պիտի բացահայտվեն:

Յիշեք Աստծուն և իրար տված
ձեր խոստումը, որ կընդունեք
ցանկացած լույսե
ճշմարտություն, որոնք
կբացահայտվեն ձեզ Նրա
գրավոր խոսքից: Բայց
զգուշացեք, աղաչում եմ, և
հանգամանորեն ստուգեք այն,
ինչն ընդունում եք որպես
ճշմարտություն, և համեմատեք
այն ու քննեք մյուս տեքստերի
հետ, քանզի անհնար է, որ
քրիստոնեական աշխարհը
այսքան ուշ դուրս գա այդքան
թանձր հակաքրիստոնեական
խավարից, և գիտության ողջ
կատարելությունը միանգամից

արտացոլվի» (Մարտին, հ. 5, էջ 70, 71):

Խղճի ազատության հասնելու տենչն էր, որ ոգեշնչեց այդ պանդուխտներին՝ խիզախորեն անցնելու ծովային երկարատև ճամփորդության վտանգների միջով, կրելու ամայի երկրի դժվարություններն ու վտանգները և Աստծո օրհնությամբ Ամերիկայի ափերին հիմնադրելու մի զորավոր ազգ: Սակայն լինելով ազնիվ ու աստվածավախ՝ [293] ուխտավորները դեռ չէին ըմբռնում կրոնական

ագատութեան մեծ սկզբունքը:
Ագատութիւնը, որն
ապահովելու համար այդքան
մեծ զոհաբերութեան էին
գնացել, նրանք պատրաստ
չէին նույն կերպ շնորհելու
ուրիշներին: «Անգամ
տասնյոթերորդ դարի
մեծագույն մտածողներից ու
բարոյագետներից շատ քչերը
միայն ինչ-որ պատկերացում
ունեին Նոր Կտակարանի այն
հիմնարար սկզբունքի մասին,
ըստ որի՝ մարդու հավատի
միակ դատավորն Աստված է»
(Նույն տեղում, հ. 5, էջ 297): Այն
ուսմունքը, թե Աստված

Եկեղեցուն իրավունք է տվել
վերահսկելու խիղճը կամ
որոշելու և պատժելու
հերձվածողներին, պապության
ամենախոր արմատներ գցած
մոլորություններից մեկն է:
Մերժելով Յոնի դավանանքը՝
բարենորոգիչները, սակայն,
լիովին չէին ազատվել նրա
անհանդուրժող ոգուց: Թանձր
խավարը, որով իր
իշխանության երկարատև
դարերի ընթացքում
պապությունը պատել էր
քրիստոնեական ողջ աշխարհը,
դեռ լիովին չէր ցրվել:
Մասաչուսեթսի ծովածոցի

Գաղութներից մեկի
առաջատար ծառայողներից
մեկն ասել է.

«Յանդուրժողականությունն էր,
որ աշխարհը դարձրեց
հակաքրիստոնեական, և
եկեղեցին հերետիկոսներին
պատժելուց դեռ երբեք վնաս չի
կրել» (Նույն, տեղում, հ. 5, էջ
335): Գաղութատերերը կարգ
սահմանեցին, ըստ որի՝
քաղաքացիական
կառավարության մեջ միայն
եկեղեցու անդամները ձայնի
իրավունք ունեին: Մի տեսակ
պետական եկեղեցի ստեղծվեց,
ամբողջ ժողովրդից

պահանջվում էր ընծաներ
հավաքել կղերականներին
օգնելու համար, իսկ
դատավորները լիազորված էին
ճնշելու հերետիկոսությունը:
Այսպես աշխարհիկ
իշխանությունը հայտնվեց
եկեղեցու ձեռքում, և շատ
չանցած՝ այդ հանգամանքը
հասցրեց անխուսափելի
հետևանքի՝ հալածանքների:

Առաջին գաղութի
կազմավորումից տասնմեկ
տարի անց Ռոջեր Ուիլյամսը
եկավ Նոր երկիր: Առաջին
ուխտավորների նման նա եկավ

կրոնական ազատութիւն
վայելելու, բայց, ի
տարբերութիւն նրանց, տեսավ
այն, ինչ շատ քչերն էին տեսել
իր օրերում, այդ ազատութիւնը
բոլորի անքակտելի իրավունքն
էր՝ անկախ իրենց
դավանանքից: Նա
ճշմարտութեան անկեղծ որոնող
էր, և Ռոբինսոնի հետ կիսում էր
այն կարծիքը, թե հնարավոր չէ,
որ Աստծո խոսքի ամբողջ լույսն
արդէն ընդունված լինի:
Ուիլյամսը «առաջին մարդն էր
ժամանակակից
քրիստոնեական աշխարհում,
ով քաղաքացիական

կառավարության հիմքում դրեց
խղճի ազատության սկզբունքը
և օրենքի առջև [294]
համոզմունքների
հավասարությունը» (Ջորջ
Բենքրոֆթ, Ամերիկայի
Միացյալ Նահանգների
պատմությունը, հ.1, գլ.15,
պարբ.16): Նա հայտարարեց,
որ տեղական
իշխանությունների
պարտականությունն է
կասեցնել
հանցագործությունները, բայց
ոչ երբեք՝ վերահսկել խիղճը:
«Չասարակությունը կամ
տեղական իշխանությունը

Կարող են որոշել,- ասել է Նա,—
թե որն է մարդու պարտքը
մարդու հանդեպ, բայց երբ
Նրանք վարձում են սահմանել
մարդու պարտավորությունն
Աստծո հանդեպ, Նրանք չափն
անցնում են և վտանգավոր
իրավիճակ ստեղծում, քանզի
պարզ է, որ եթե դատավորն
իշխանություն ունի, Նա կարող
է այսօր մի համոզմունք կամ
դավանանք պարտագրել,
վաղը՝ մեկ ուրիշը, ինչպես
Անգլիայում արել են տարբեր
թագավորներ ու թագուհիներ,
կամ Յռոմի եկեղեցում՝
պապերն ու ժողովները:

Այդպես հավատը կվերածվի
խառնաշփոթության»
(Մարտին, հ. 5, էջ 340):

Այցելությունը պաշտոնական
եկեղեցու ծառայություններին
պահանջվում էր տուգանքի
կամ բանտարկության
սպառնալիքով: «Ուիլյամսը
դատապարտեց այդ օրենքը:
Անգլիական օրենսգրքի
ամենավատ դրույթն այն էր,
որը պարտադրում էր
այցելությունը ծխական
եկեղեցի: Մարդկանց ստիպելը՝
միանալու այլհավատ
ունեցողների հետ, նա

համարում էր նրանց
իրավունքների բացահայտ
ոտնահարում: Իսկ
անհավատներին ու կրոնից
հեռու մարդկանց հանրային
ծառայութեան քաշելը
նշանակում էր պահանջել
կեղծավորութուն... «Ոչ ոքի
չպետք է պարտադրել
երկրպագել կամ,— ավելացրեց
Նա,— աջակցել
երկրպագութեանը իր կամքին
հակառակ»: «Ի՞նչ,—
բացականչեցին նրա
ընդդիմախոսները՝
զարմանալով նրա
սկզբունքների վրա,— մի՞թե

աշխատողն արժանի չէ իր վարձքին»: «Այո.— պատասխանեց նա,— բայց նրանցից, ովքեր վարձել են նրան» (Ջորջ Բենքրոֆթ, Ամերիկայի Միացյալ Նահանգների պատմությունը, հ. 1, գլ. 15, պարբ. 2):

Ռոջեր Ուիլյամսը հարգված և սիրված էր՝ որպես նվիրված ծառայող, որպես հազվագյուտ շնորհների, անսասան ազնվության տեր և իսկապես բարյացակամ մարդ: Սակայն նրան չէին հանդուրժում, քանի որ նա համառորեն մերժում էր

դատավորների իրավունքը՝
միջամտելու եկեղեցու
գործերին, և կրոնական
ազատութիւնն էր պահանջում:
Պնդում էին, թէ այդ նոր
ունմունքի ներմուծումը
«կտապալի պետութեան
հիմքերն ու երկրի
կառավարութիւնը» (Նույն
տեղում, և. 1, գլ. 15, պարբ. 10):
Դատարանը վճռեց նրան
վտարել գաղութից, և նա ի
վերջո ձերբակալութիւնից
խուսափելու համար քամոտ ու
ցուրտ ձմռանը ստիպված էր
փախչել խուլ անտառը:

«Տասնչորս շաբաթ,— ասել է
Նա,— ես ցավագին թափառեցի
ամենադաժան եղանակին՝
սոված ու անքուն»։ [295] Բայց
«ագռավները կերակրում էին
ինձ անապատում», և ծառի
փչակը հաճախ ծառայում էր
որպես ապաստարան
(Մարտին, հ. 5, էջ 349, 350):
Այդպես Նա շարունակեց իր
տանջալի փախուստը ձյան և
անանցանելի անտառների
միջով, մինչև որ հանգրվան
գտավ հնդկացիների մի ցեղի
մոտ, որի վստահությունն ու
սերը շահել էր, երբ ջանացել էր
սովորեցնել նրանց

ապետարանի
ճշմարտությունները:

Երկար ամիսներ թափառելուց
հետո նա վերջապես հասավ
Նարագանսեթ ծովածոցի
ափերը, որտեղ դրեց առաջին
ժամանակակից պետության
հիմքը, որը բառիս բուն
իմաստով ընդունեց կրոնական
ազատության իրավունքը:
Ռոջեր Ուիլյամսի գաղութի
հիմնական սկզբունքն էր, «որ
յուրաքանչյուր մարդ պետք է
ազատություն ունենա
ծառայելու Աստծուն իր խղճի
համաձայն» (Նուլյն տեղում, հ.

5, Էջ 354): Նրա փոքրիկ
Նահանգը՝ Ռոդ Այլենդը,
հալածվողների ապաստարան
դարձավ, և այն մեծացավ ու
բարգավաճեց, մինչև որ Նրա
հիմնարար սկզբունքները՝
քաղաքացիական ու կրոնական
ազատությունը, Ամերի-

կյան Չանրապետության
անկյունաքարերը դարձան:

Այն մեծ հին փաստաթղթում՝
Անկախության Չռչակագրում,
որը մեր հայրերն առաջ
քաշեցին որպես իրենց
իրավունքների ցուցակ, նրանք

հայտարարեցին. «Մենք
համարում ենք, որ այդ
ճշմարտություններն
ապացույցի կարիք չունեն, որ
բոլոր մարդիկ ստեղծված են
հավասար, որ նրանք Արարչի
կողմից օժտված են որոշակի
անքակտելի իրավունքներով,
որոնց թվում են՝ կյանքը,
ազատությունը և
երջանկության ձգտումը»: Եվ
սահմանադրությունն
ամենապարզ խոսքերով
երաշխավորում է խղճի
անձեռնմխելիությունը.
«Կրոնական որևէ քննություն
երբեք չի պահանջվի որպես

որակավորում Միացյալ
Նահանգներում պետական
ցանկացած պաշտոն
զբաղեցնելու համար»:
«Կոնգրեսը ոչ մի օրենք չի
ընդունի որևէ կրոնի
հաստատման կամ դրա ազատ
դավանումն արգելելու
վերաբերյալ»:

«Սահմանադրության
հեղինակները ընդունեցին այն
հավիտենական սկզբունքը, որ
անձի հարաբերություններն իր
Աստծո հետ վեր են մարդկային
օրենսդրությունից, իսկ նրա
խղճի իրավունքները`

անձեռնմխելի: Այս
ճշմարտությունը հաստատելու
համար երկար մտածելու
կարիք չկա, մենք գիտակցում
ենք դա մեր հոգու խորքում: Եվ
հենց այդ գիտակցումն է, որ
մարդկային օրենքներին
հակառակ՝ բազմաթիվ
նահատակների ուժ է տվել՝
դիմանալու տանջանքների ու
կրակի մեջ: Նրանք զգում էին,
որ իրենց պարտքն Աստծո
հանդեպ վեր է մարդկային
օրենքներից, և որ մարդը որևէ
[296] իշխանություն չունի
իրենց խղճի վրա: Ոչ մի բան չի
կարող արմատախիլ անել այդ

բնածին սկզբունքը» (ԱՍՆ
Կոնգրեսի փաստաթղթեր,
սերիա 200, N 271):

Երբ Եվրոպայի երկրներում
լարեր տարածվեցին այն երկրի
մասին, ուր ամեն մարդ կարող
է վայելել իր աշխատանքի
պտուղը և հետևել իր խղճի
համոզմունքին, հազարավոր
մարդիկ ուղևորվեցին դեպի Նոր
Աշխարհի ափերը: Գաղութներն
արագորեն բազմանում էին:
«Մասաչուսեթս նահանգը
հատուկ օրենքով ժողովրդի
հաշվին ապաստարան և
օգնություն էր առաջարկում

ցանկացած ազգի
քրիստոնյաներին, ովքեր
փախչում էին Ատլանտյան
օվկիանոսից այն կողմ՝
«Խուճափելով
պատերազմներից, սովից կամ
հալածանքներից»: Այսպիսով,
փախստականներն ու
հարստահարվածները օրենքով
դարձան պետութայան հյուրերը»
(Մարտին, հ. 5, էջ 417): Քսան
տարի անց այն բանից, երբ
առաջին նավը կանգ առավ
Պլիմուտի ափերին,
հազարավոր ուխտավորներ
էին արդեն բնակվում Նոր
Անգլիայում:

Ցանկալի ազատության համար
«Նրանք համաձայն էին
վաստակել միայն գոյատևելու
համար՝ համեստ ու չարքաշ
կյանքով ապրելով: Նրանք
հողից ուզում էին ստանալ ոչ
ավելին, քան իրենց
աշխատանքի արդյունքը:
Հարստության գայթակղիչ
հեռանկարները չէին շողշողում
Նրանց ճանապարհին... Նրանք
բավարարվում էին իրենց
պետության դանդաղ, բայց
կայուն առաջընթացով: Նրանք
համբերությամբ տանում էին
անապատի զրկանքները՝ իրենց

արցունքներով ու ճակատի
քրտինքով ջրելով ազատության
ծառը, մինչև որ այն խոր
արմատներ գցեց երկրում»:

Աստվածաշունչը նրանց
հավատի հիմքն էր,
իմաստության աղբյուրը և
ազատության
կանոնադրությունը: Նրա
սկզբունքները ջանասիրաբար
ուսուցանվում էին տանը,
դպրոցում և եկեղեցում, իսկ
Նրա պտուղները երևում էին
խնայողության,
խելամտության, սրբության ու
զսպվածության մեջ: Մեկը

կարող էր տարիներով ապրել պուրիտանների բնակավայրում և «չտեսնել ոչ մի հարբեցողի, չլսել որևէ հայհոյություն և չհանդիպել մուրացկանի» (Ջորջ Բենքրոֆթ, Ամերիկայի Միացյալ Նահանգների պատմությունը, հ.1, գլ. 19, պարբ. 25): Այդպես ցույց տրվեց, որ Աստվածաշնչի սկզբունքները ազգի մեծության լավագույն երաշխիքն են: Թույլ և մեկուսացած գաղութները վերաճեցին հզոր նահանգների միության, և աշխարհը զարմանքով ականատես եղավ «առանց պապի՝ եկեղեցու և

առանց թագավորի՝
պետութեան» խաղաղութեանն
ու բարգաւաճմանը:

Սակայն Ամերիկայի ասֆերն էին
ձգտում նաև շատ ուրիշներ,
[297] ում շարժառիթներդ
միանգամայն այլ էին, քան
առաջին ուխտավորներինը:
Թեև սկզբնական հավատն ու
մաքրութիւնը ամենուրեք
վերափոխիչ ազդեցութիւն էին
թողնում, այն գնալով սկսեց
ավելի թուլանալ, որքանով որ
ավելանում էր նրանց թիվը,
ովքեր միայն աշխարհիկ շահ
էին որոնում:

Առաջին գաղութատերերի
ընդունած օրենքը, որը միայն
եկեղեցու անդամներին էր
ձայնի կամ պետական
պաշտոններ զբաղեցնելու
իրավունք տալիս,
ամենակործանիչ հետևանքներ
ունեցավ: Այս միջոցները
ձեռնարկվել էին արդար
պետութուն կերտելու համար,
բայց արդյունքում դրանք
ապականեցին եկեղեցին: Քանի
որ կրոնի դավանութունը ձայ
նի և պաշտոն զբաղեց նելու
իրավունք էր ապահովում,
շատերը միայնաշխարհիկ

ձգտումներով դրդված էին
միանում եկեղեցուն՝ առանց
սրտի վերափոխման: Այդպիսով
եկեղեցիները գլխավորապես
կազմում էին չվերածնված
անձինք, և անգամ
ծառայողների մեջ կային
այնպիսիք, ովքեր ոչ միայն
կեղծ ուսմունք էին դավանում,
այլև անձանոթ էին Սուրբ Հոգու
վերավտխիչ աժին: Կրկին ցայց
տրվեցին այն չար
հետևանքները, որոնք հաճախ
կրկնվել են եկեղեցու
պատմության ընթացքում՝
Կոնստանտինոսի
ժամանակներից մինչև մեր

օրերը, երբ վարձում էին
եկեղեցին կառուցել
պետության օգնությամբ՝
դիմելով աշխարհիկ
իշխանությանը Նրա
ավետարանին աջակցելու
համար, ով ասել է. «Իմ
թագավորությունն այս
աշխարհից չէ» (Յովհաննես 18.
36): Եկեղեցու և պետության
միությունը, որքան էլ աննկատ
լինի, իրականում ոչ թե
աշխարհն է մոտեցնում
եկեղեցուն, այլ եկեղեցին է
մոտեցնում աշխարհին:

Ռոբինսոնի և Ռոջեր Ուիլյամսի
պաշտպանած այն մեծ
սկզբունքը, որի համաձայն՝
ճշմարտությունը զարգացող
բնույթ ունի, և որ
քրիստոնյաները պիտի
պատրաստ լինեն ընդունելու
այն ամբողջ լույսը, որը կարող
է շողալ Աստծո սուրբ խոսքից,
մոռացվել էր նրանց
հետնորդների կողմից:
Ամերիկայի, ինչպես նաև
Եվրոպայի բողոքական
եկեղեցիները, որոնք այդքան
շատ էին ընդունել
Բարենորոգման
օրհնությունները, թերացան

առաջ շարժվել բարեփոխման
ճանապարհով: Թեև ժամանակ
առ ժամանակ մի քանի
հավատարիմ մարդիկ էին
ելևում՝ հռչակելու նոր
ճշմարտությունը և
բացահայտելու քրաացած
մոլորությունները,
մեծամասնությունը, Քրիստոսի
օրերի հրեաների կամ Լյութերի
ժամանակվա պապականների
նման, բավարարվում էին
իրենց հայրերի հավատով [298]
և շարունակում ապրել նրանց
պես: Կրոնը նորից վերածվեց
ձևականության, և
մոլորություններն ու

Նախապաշարումները, որոնք
կվերանային, եթե եկեղեցին
շարունակեք առաջնորդել
Աստծո խոսքի լույսով, մնացին
ու փայփայվեցին: Այսպիսով,
Բարենորոգման ոգին գնալով
մարեց, մինչև որ բողոքական
եկեղեցիներում բարեփոխման
նույնքան մեծ
անհրաժեշտություն եղավ,
որքան Յոզմի եկեղեցում
Լյութերի ժամանակ: Այստեղ
տիրում էր նույն
աշխարհասիրությունն ու
հոգևոր թմրությունը, նույն
ակնածանքը մարդկանց
կարծիքների հանդեպ և Աստծո

Խոսքի փոխարինումը
մարդկային տեսություններով:

Աստվածաշնչի լայն
շրջանառությանը
տասնիններորդ դարի սկզբին և
աշխարհի վրա շողացող մեծ
լույսին չհետևեց պատասխան
առաջընթաց՝ բացահայտված
ճշմարտության գիտության
կամ հոգևոր փորձառության
ձեռքբերման մեջ: Սատանան
չէր կարող, ինչպես Նախկին
դարերում, ժողովրդից թաքցնել
Աստծո խոսքը, այն արդեն
հասանելի էր բոլորին: Բայց իր
Նպատակն իրականացնելու

համար նա շատերին դրդեց
անլուրջ վերաբերվելու նրան:
Մարդիկ անտեսեցին Սուրբ
Գրքի ուսումնասիրությունը՝
շարունակելով ընդունել կեղծ
մեկնաբանություններ և
փայփայել ուսմունքներ, որոնք
Աստվածաշնչում ոչ մի հիմք
չունեին:

Տեսնելով, որ ճշմարտությունը
հալածանքներով խափանելու
իր ջանքերը ձախողվեցին,
սատանան նորից դիմեց
փոխզիջման ծրագրի
օգնությամբ, որը հասցրել էր
մեծ ուրացությանը և Յոնմի

Եկեղեցու կազմավորմանը:
Չիմա նա գայթակղեցրեց
քրիստոնյաներին միավորվել ոչ
թե հեթանոսների, այլ նրանց
հետ, ովքեր աշխարհի հանդեպ
իրենց սիրով ապացուցել էին,
որ նույնքան կռապաշտ են,
որքան քանդակած կուռքերի
երկրպագուները: Եվ այս
միության հետևանքները
պակաս կորստաբեր չէին, քան
անցյալ դարերում: Կրոնի
դիմակի տակ հպարտություն ու
ճոխություն էին փայփայվում, և
արդյունքում եկեղեցիներն
ապականվեցին: Սատանան
շարունակում էր խեղաթյուրել

Աստվածաշնչի ուսմունքը, և
ավանդույթները, որոնք
կործանելու էին
միլիոնավորներին, խոր
արմատներ գցեցին: Եկեղեցին
մեծարում ու պաշտպանում էր
այդ ավանդույթյունները՝ «մեկ
անգամ սրբերին ավանդված
հավատի» համար պայքարելու
փոխարեն: Այսպես վերացան
այն սկզբունքները, որոնց
համար այդքան պայքարել և
տառապել էին
բարենորոգիչները:

ԳԼՈՒԽ 17—ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ԱՎԵՏԱԲԵՐՆԵՐԸ

Աստվածաշնչում
բացահայտված
ամենահանդիսավոր ու
փառահեղ
ճշմարտություններից մեկը
Քրիստոսի երկրորդ գալուստն
է, որով ավարտվելու է
փրկագնման մեծ գործը: Ատոճո
պանդուխտ ժողովրդի համար,
որ այդքան երկար թափառում է
«խավարի ու մահվան ստվերի
երկրում», թանկագին և
երանելի հույս է Նրա
հայտնության խոստումը, ով

«հարուժյունն է և կյանքը»,
որպեսզի «իր աքսորածին հետ
դարձնի»: Երկրորդ գալստյան
մասին ուսմունքը Սուրբ Գրքի
հիմնական թեման է: Այն
օրվանից, երբ առաջին զույգը
վշտահար դուրս եկավ Եդեմից,
հավատի որդիները սպասել են
Խոստացյալի գալստյանը, ով
պիտի տապալեր կործանիչի
իշխանությունն ու իրենց
վերադարձներ կորսված
դրախտը: Հին օրերի սուրբերն
անհամբեր սպասել են Մեսիայի
փառավոր գալստյանը՝ իրենց
հույսերի իրականացմանը:
Ենդեմի, որ ընդամենը

յութերորդն էր նրանցից, ովքեր
բնակվել են դրախտում, ով
երեք հարյուր տարի երկրում
քայլաց իր Աստծո հետ, թույլ
տրվեց հեռվից տեսնել
Ազատարարի գալուստը: «Ահա
Տերը եկավ իր բյուրավոր
սուրբերով,— հռչակել է նա,—
որ դատաստան անի ամենքին»
(Յուդեա 14, 15): Յոբ նահապետն
իր տառապանքների գիշերը
աներեր հավատով
բացականչեց. «Իսկ ես գիտեմ,
որ Փրկիչս կենդանի է, և նա
վերջում սփտի կանգնի հողի
վրա... Իմ մարմնից տեսնելու եմ
Աստծուն, ում ես ինքս եմ

տեսնելու, և իմ աչքերն են
մտիկ տալու նրան, ոչ թե
ուրիշը» (Յոբ 19.25—27): [300]

Քրիստոսի գալուստը, որով
սկսվելու է արդարության
իշխանությունը, ամենավսեմ ու
ոգեշունչ
արտահայտություններ է
ներշնչել Սուրբ Գրքի
հեղինակներին: Աստվածաշնչի
բանաստեղծներն ու
մարգարեները այդ մասին գրել
են երկնային կրակով վառվող
խոսքերով: Սաղմոսերգուն
գովերգել է Իսրայելի
Թագավորի ուժն ու

մեծությունը. «Սիոնի միջից՝
գեղեցկության
կատարելությունից, Աստված
փայլում է: Մեր Աստվածը կգա
և լուռ չի կենա... Նա կանչում է
երկնքին վերևից և երկրիս, որ
իր ժո- դովրդին դատի»

(Սաղմոս 50. 2-4): «Երկնքը
թող ուրախ լինի, և երկիրը
ցնծա... Տիրոջ առաջին, որ նա
գալիս է, գալիս է, որ երկիրը
դատի, նա աշխարհը կդատի
արդարությանբ, և ժողովրդին՝
իր ճշմարտությունով» (Սաղմոս
96.11 -13):

Եսայիա մարգարեն ասում է.
«Վեր կացեք և ցնծացեք, ով
հողի բնակիչներ, որովհետև
լույսերի ցող է քո ցողը, և
երկիրը դուրս պիտի գցի
ուրվականներիս»: «Քո
մեռելները պիտի
կենդանանան, իմ մեռած
մարմնի հետ պիտի կանգնեն»
(բնագրի թարգմ.): «Նա պիտի
կլանի մահը հավիտյան, և
Եհովա՛ Տերը պիտի ջնջի
արտասուքը ամեն երեսից, և իր
ազգի ամոթը պիտի հեռացնի
բոլոր երկրի վրայից, որովհետև
Տերն է ասում: Եվ այն օրն
ասելու են. Ահա մեր Աստվածը,

որին մենք հուսացել ենք, և նա
մեզ փրկեց. եհովան է սա, ում
հուսացել ենք, ուրախանալու և
ցնծալու ենք նրա
փրկութիւնով» (Եսայիա
26.19,25. 8,9):

Եվ Ամբակումն էլ՝
հափշտակված սուրբ
տեսիլքում, տեսել է Նրա
հայտնութիւնը. «Աստված
Թեմանից եկավ, և Սուրբը՝
Փարան սարից: Նրա փառքը
ծածկեց երկինքը, և նրա
գովաբանութեամբ լցվեց
երկիրը: Եվ նրա
պայծառութիւնը լույսի պես

Էր»։ «Նա կանգնեց և չափեց
երկիրը, նայեց ու դողացրեց
ազգերը, և պատառոտվեցին
վաղեմի սարերը,
խոնարհվեցին մշտական
բլուրները։ Հավիտենական
ընթացք ունի նա»։ «Հեծար
ձիերիդ՝ փրկության
կառքերիդ»։ «Քեզ տեսան
սարերը և դողացին... անդունդը
տվեց իր ձայնը, դեպի վեր
բարձրացրեց իր ձեռքերը։
Արեգակն ու լուսինը կանգնում
են իրենց [301] կայանում,
նրանք ընթանում են քո
նետերի լույսով, քո նիզակի
փայլուն պայծառությունով»։

«Դու դուրս եկար քո ժողովրդի փրկութեան համար, քո օծյալի փրկութեան համար» (Ամրակում 3.3,4, 6, 8,10,11,13):

Պատրաստվելով բաժանվել իր աշակերտներից՝ Փրկիչը մխիթարեց նրանց իրենց վշտի մեջ՝ հավաստիացնելով, որ վերադառնալու է. «Ձեր սրտերը թալ չխռովեն,— ասաց Նա,— ... Իմ Հոր տանը շատ բնակարաններ կան... Ես գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու: Եվ եթե գնամ ու ձեզ համար տեղ պատրաստեմ, դարձյալ կգամ և

ձեզ ինձ մոտ կառնեմ»
(Յովհաննես 14.1-3): «Երբ
մարդի Որդին իր փառքով կգա,
և ամեն սուրբ հրեշտակները՝
Նրա հետ, այն ժամանակ
կնստի իր փառաց աթոռի վրա,
և ամեն ազգերը կժողովվեն
Նրա առջև» (Մատթեոս 25.
31,32):

Հրեշտակները, որ Քրիստոսի
համբարձվելուց հետո մնացել
էին Ձիթենյաց սարի վրա,
աշակերտներին կրկնեցին Նրա
վերադարձի խոստումը. «Այս
Հիսուսը, որ ձեզանից վերացավ
երկինք, այսպես կգա, ինչպես

Նրան տեսաք երկինք գնալիս»
(Գործք 1.11): Եվ Պողոս
առաքյալը, Սուրբ Յոզով
Ներշնչված, վկայել է. «Ինքը՝
Տերը հրամանով,
հրեշտակա-պետի ձայնով և
Աստծո փողով վայր կգա
երկնքից» (Ա Թեսաղոնիկեցիս
4.15): Պատմոսի մարգարեն
ասում է. «Ահա նա գալիս է
ամպերով, և ամեն աչք կտեսնի
Նրան» (ՋայտնուԹյուն 1.7):

Նրա գալստյան շուրջ է
ամփոփված «ամեն բաների
հաստատվելու» փառքը, «որոնց
մասին խոսեց Աստված իր

բոլոր սուրբ մարգարեների
բերանով» (Գործք 3. 21):
Դրանից հետո կտապալվի չարի
երկարատև իշխանությունը,
«աշխարհի
թագավորությունները» կտրվեն
«մեր Տիրոջը և Նրա Քրիստոսին,
և Նա կթագավորի հավիտյանս
հավիտենից» (Յայտ-նություն
11.15): «Եվ պիտի հայտնվի
Տիրոջ փառքը, և ամեն մարմին
միասին պիտի տեսնեն»: «Տեր
Եհովան բուսցնելու է
արդարությունը և
օրինաբանությունը բոլոր
ազգերի առաջին»: Նա լինելու է
«զարդի պսակ և շքեղ թագ՝ իր

ժողովրդի մնացորդի համար»
(Եսայիա 40. 5, 61.11, 28.5):

[302] Այդ ժամանակ է, որ ողջ
երկնքի տակ կհաստատվի
Մեսիայի խաղաղ ու երկար
սպասված թագավորությունը:
«Տերը պիտի մխիթարի Սիոնին,
պիտի մխիթարի նրա բոլոր
ավերակները, և նրա
անապատը դրախտի նման
պիտի շինի, և նրա ամայի
տեղը՝ Տիրոջ պարտեզի պես»:
«Լիբանանի փառքը նրան
կտրվի՝ Կարմեղոսի և Սարոնի
վայելչությունը»: «Այլևս քեզ
չեն ասի Թողնված, և քո երկրին

այլևս չեն ասի Ավերակ, այլ քեզ
պիտի ասեն իմ հավանածը, և
քո երկրին՝ Ամուսին ունեցող»:
« Փեսան հարսի վրա
ուրախանալու պես պետք է քեզ
վրա ուրախանա քո Աստվածը»
(Եսայիա 51.3, 35. 2,62.4, 5):

Տիրոջ գալուստը Նրա ճշմարիտ
հետևորդների հույսն է եղել
բոլոր դարերում: Ձիթենյաց
սարի վրա տված Փրկչի
հրաժեշտի խոստումն այն
մասին, որ ինքը նորից պիտի
գա, իր աշակերտների համար
լուսավորել է ապագան՝ նրանց
սրտերը լցնելով ուրախությամբ

և հույսով, որ ոչ թախիծը, Ոչ էլ
վտրճությունները չէին կարող
մարել: Տառապանքի ու
հալածանքների մեջ «մեծ
Աստծո և մեր Փրկիչ Հիսուս
Քրիստոսի հայտ-նությունը»
«երանելի հույս» էր: Երբ
թեսաղոնիկեցի
քրիստոնյաները սրտի կսկիծով
թաղում էին իրենց
սիրելիներին, ովքեր հույս
ունեին ապրելու մինչև Տիրոջ
գալուստը, Պողոսը՝ նրանց
ուսուցիչը, հրավիրում է նրանց
ուշադրությունը հարուստ
վրա, որը տեղի կունենա Փրկչի
գալստյան ժամանակ: Հետո

Քրիստոսում ննջածները
հարուժյուն կառնեն և,
կենդանի մնացածների հետ
միասին, կհափշտակվեն՝ օդում
դիմավորելու Տիրոջը: «Եվ
այդպես,— ասում է նա,— ամեն
ժամանակ Տիրոջ հետ կլինենք:
Ուրեմն իրար մխիթարեք այս
խոսքերով» (Ա Թեսաղոնիկեցիս
4.16,17):

Ժայռոտ Պատմոսում սիրելի
աշակերտը լսում է «Ահա
շուտով գալիս եմ» խոստումը, և
նրա բուռն պատասխանն
արտահայտում է եկեղեցու
աղոթքն իր ողջ

պանդխտութեան ընթացքում.
«Եկ, Տեր Յիսուս»
(Յայտնութիւն 22.20):

Չնդաններից, խարույկների
միջից ու կառափնարաններից,
որտեղ նահատակներն ու
սուրբերը վկայել են
ճշմարտութիւնը, դարերի
խորքից մեզ է հասել նրանց
հավատի և հույսի խոսքը:
«Յամոզված լինելով Նրա
անձնական, իսկ հետո նաև
իրենց հարութեան մեջ՝ Նրա
գալստյան ժամանակ,— այդ
քրիստոնյաներից մեկն ասում
է,— նրանք արհամարիում էին

մահը և վեր էին դրանից»
(Դանիել Թ. Թեյլոր, Քրիստոսի
իշխանությառնը երկրում կամ
Եկեղեցու ձայնը բոլոր
դարերում, էջ 33): [303] Նրանք
պատրաստ էին գերեզման
իջնել, որպեսզի այնտեղից
«ելնեն ազատված» (Նույն
տեղում, էջ 54): Նրանք
սպասում էին «Տիրոջ
գալուստին երկնքից՝ ամպերով
ու իր Յոր փառքով»՝
«արդարներին բերելու իր
արքայությունը»: Վաղդենասները
այս նույն հավատն էին
փայփայել (Նույն տեղում, էջ
129-132): Ուհիկիֆը եկեղեցու

հույսն էր համարում Փրկչի
հայտնությունը (Նույն տեղում,
Էջ 132-134):

Լյութերը հայտարարել է. «Ես
ինձ իրոք համոզում եմ, որ
դատաս-տանի օրը երեք
հարյուր լրիվ տարուց չի
ուշանա: Աստված ավելի երկար
չի կարող և չի հանդուրժի այս
ամբարիշտ աշխարհը»:
«Մոտենում է այն մեծ օրը,
որում նողկանքների
թագավորությունը կտապալվի»
(Նույն տեղում, Էջ 158, 134):

«Յեռու չէ այս հին աշխարհի
վերջը»,— ասել է Մելանքթոնը:
Կալվինը քրիստոնյաներին
հորդորում է «չկասկածել՝
եռանդագին փափագելով
Քրիստոսի գալստյան օրը՝
որպես բոլոր
իրադարձություններից
ամենա-հրաշալին», և
հայտարարում է, որ
«հավատացյալների ողջ
ընտանիքը փափագելու է այդ
օրվան»: «Մենք պիտի
ծարավենք Քրիստոսին, պիտի
որոնենք, խորհենք,— ասում է
Նա,— մինչև այն մեծ օրվա
արշալույսը, երբ մեր Տերը

լիովին կհայտնի իր
արքայութեան փառքը» (Նույն
տեղում, էջ 134):

«Մի՞թե Տեր Յիսուսը
մարդկային մարմնով չի
երկինք համբարձվել,— ասել է
Նոքսը՝ շոտլանդացի
բարենորոգիչը,— և մի՞թե Նա
չի վերադառնա-լու: Մենք
գիտենք, որ Նա վերադառնալու
է, և այն էլ՝ շուտով»: Ռիդլին ու
Լաթիմերը, ովքեր իրենց
կյանքը զոհաբերեցին հանուն
ճշմարտութեան, հավատով
սպասել են Տիրոջ գալստյանը:
Ռիդլին գրել է. «Աշխարհն,

անկասկած, մոտենամ է իր
վախճանին: Ես իրոք
հավատում եմ դրան, ուստի և
ասում եմ: Եկեք Հովհաննեսի՝
Աստժո ծառայի հետ մեր սրտի
կանչն ուղղենք դեպի մեր
Փրկիչ Քրիստոսը.«Եկ, Տեր
Հիսուս, եկ» (Նույն տեղում, էջ
151,145):

«Տիրոջ գալստյան մասին
մտորումները,— ասել է
Բաքստերը,— ինձ համար
ամենաքաղցրն ու ուրախալիս
են» (Ռիչարդ Բաքստեր,
Աշխատություններ, հ.17, էջ
555): «Հավատի և Նրա սրբերի

բնավորության դրսևորումն է՝
սիրել Նրա հայտնությունը և
սպասել այդ երանելի հույսին»:
«Եթե մահը վերջին թշնամին է,
որ պիտի կործանվի հարության
ժամանակ, ապա ինչպիսի՞
եռանդով պետք է
հավատացյալները աղոթեն ու
փափագեն Քրիստոսի երկրորդ
գալստյանը, երբ այս [304]
լիակատար ու վերջնական
հաղթանակը կտարվի» (Նույն
տեղում, հ.17, էջ 500): «Դա այն
օրն է, որին բոլոր
հավատացյալները պիտի
հույսով սպասեն, երբ
կավարտվի իրենց փրկագնման,

ինչպես նաև իրենց բոլոր
իղձերի ու ձգտումների
իրականացման ողջ
գործընթացը»: «Մոտեցրու, ո՛վ
Տեր, այս երանելի օրը» (Նույն
տեղում, հ.17, էջ 182,183): Սա
էր առաքյալների եկեղեցու՝
«անապատի եկեղեցու» և
բարենորոգիչների հույսը:

Մարգարեությունը ոչ միայն
կանխատեսում է Քրիստոսի
գալստյան ձևն ու նպատակը,
այլև ներկայացնում է այն
նշանները, որոնցով մարդիկ
կիմանան, որ դա մոտ է:
Հիսուսն ասել է. «Եվ նշաններ

կլինեն արեգակում, լուսնում և
աստղերում» (Ղուկաս 21. 25):
«Արեգակը կխավարի, լուսինն
իր լույսը չի տա, երկնքի
աստղերը կթափվեն, և
երկնքում լինող
զորությունները կշարժվեն: Եվ
այն ժամանակ կտեսնեն մարդի
Որդին ամպերով գալիս շատ
զորությամբ և փառքով»
(Մարկոս 13.24-26):
Հայտնության հեղինակը
այսպես է նկարագրում
Երկրորդ գալստյանը
Նախորդող նշաններից
առաջինը. «Մեծ երկրաշարժ
եղավ, արեգակը սևացավ

մագեղեն քուրձի պես, և լուսինն
արյունի պես եղավ»
(Չայտնություն 6.12):

Այս նշանները երևացել են
մինչև տասնիններորդ դարի
սկիզբը: Ի կատարումն այս
մարգարեության՝ 1755
թվականին տեղի ունեցավ
երբևէ արձանագրված
ամենասոսկալի երկրաշարժը:
Թեև հայտնի որպես
լիսաբոնյան երկրաշարժ՝ այն
ցնցել է նաև Եվրոպայի մեծ
մասը, Աֆրիկան ու Ամերիկան:
Այն զգացվել է
Գրենլանդիայում,

Ուեսթ-Ինդիայում, Մադեյրա
կղզում, Նորվեգիայում ու
Շվեդիայում, Մեծ
Բրիտանիայում և
Իռլանդիայում: Այն ընդգրկել է
ոչ պակաս, քան չորս միլիոն
քառակուսի մղոն: Աֆրիկայում
ցնցումը գրեթե նույնքան
ուժգին է եղել, որքան
Եվրոպայում: Ավերվել է Ալժիրի
մեծ մասը, և Մարոկկոյից քիչ
հեռու՝ ութից տասը հազար
բնակչություն ունեցող մի գյուղ
գետնի տակ է անցել: Մի
վիթխարի ալիք՝ Իսպանիայի և
Աֆրիկայի ափերից սրբեց

ամբողջ քաղաքներ՝ մեծ
ավերածություն գործելով:

Բայց ամենահուժկու ցնցումը
եղել է Իսպանիայում և
Պորտուգալիայում: Ասում են՝
Կադիսի վրա փշրվել է
տասնվեց \$ուտ բարձրությամբ
մի ալիք: Սարերը՝
«ամենաբարձրերը
Պորտուգալիայում, ասես [305]
հիմքից ուժգին ցնցվում էին,
դրանցից մի քանիսի
գագաթները ճեղքվեցին ու լայն
բացվեցին զարմանալի
կերպով՝ վիթխարի
ժայռաբեկորներ նետելով

մոտակա հովիտները: Պատմում են, որ այդ լեռներից բոց էր ժայթքում» (Չարլզ Լիել, Երկրաբանության սկզբունքները, էջ 495):

Լիսաբոնում «ստորգետնյա որոտի ձայն լսվեց, որից անմիջապես հետո հզոր ցնցումն ավերեց քաղաքի մեծ մասը: Մոտ վեց թույնի ընթացքում վաթսուն հազար մարդ զոհվեց: Ծովը սկզբում նահանջեց՝ մերկաց-նելով ափը, հետո ալիքը բարձրացավ իր սովորական մակարդակից տասնհինգ մետր

ավելի»: «Պատմում են, որ
լիսաբոնյան աղետի
ընթաց-քում տեղի ունեցած
արտասովոր դեպքերից էր նաև
մարմարյա առափի փլուզումը՝
կառուցված հսկայական
ծախսերով: Այնտեղ մարդկանց
հոծ խմբեր էին հավաքվել՝
կարծելով, թե վայր ընկնող
բեկորները իրենց չեն հասնի,
երբ հանկարծ առափն ամբողջ
ժողովրդի հետ ծովն ընկղմվեց,
և ոչ մեկի դիակն այդպես էլ ջրի
երես դուրս չեկավ» (Նույն
տեղում, էջ 495):

Երկրաշարժի «ցնցումից
անմիջապես հետո փլվեցին
բոլոր եկեղեցիներն ու
վանքերը, գրեթե բոլոր մեծ
շինությունները և տների ավելի
քան մեկ քառորդը: Ցնցումից
մոտ երկու ժամ անց տարբեր
թաղամասերում կրակ բռնկվեց
և այնքան սաստիկ բորբոքվեց,
որ երեք օրում քաղաքն
ամբողջովին ամայացավ:
Տոնական օր էր, երբ
երկրաշարժ եղավ,
եկեղեցիներն ու վանքերը
լեցուն էին մարդկանցով,
որոնցից շատ քչերը միայն
փրկվեցին» (Էնցիկլոպեդիա

Ամերիկանա, հողվ. «Լիսաբոն»,
հրտ. 1831): «Ժողովրդի
սարսափն աննկարագրելի էր:
Այնքան զարհուրած էին, որ ոչ
ոք չէր արտասվում: Նրանք այս
ու այն կողմ էին վազում՝
սոսկումից ապշած ու ցնորված,
և իրենց կուրծքն ու երեսը
ծեծելով՝ ճչում էին.

«Միսերիկորդի՛ա... Աշխարհի
վե՛րջն է»: Խաչելության
սրբապատկերներն իրենց
ձեռքներին՝ մայրերը վազում
էին՝ մոռացած իրենց
երեխաներին: Դժբախտաբար,
չատերը նետվեցին դեպի
եկեղեցիները՝ պաշտպանվելու,

բայց իզուր էին բարձրացվում
մասունքները, զուր էին այդ
թշվառ արարածները գրկում
գոհասեղանները:

Սրբապատկերները,
քահանաներն ու ժողովուրդը
թաղվեցին ավերակների տակ»:

Չաշվել են, որ

ճակատագրական այդ օրը 90
հազար հոգի է զոհվել: [306]

Քսանհինգ տարի անց

հայտնվեց մարգարետության մեջ
հիշատակված հաջորդ նշանը՝
արևի և լուսնի խավարումը:

Ամենազարմանալիս այն
փաստն է, որ այս

իրադարձության կատարման
ժամանակը հստակորեն նշված
էր: Ձիթենյաց սարի վրա
աշակերտների հետ իր
զրույցում Յիսուսը նկարագրեց
եկեղեցուն սպասվող
նեղության երկարատև
ժամա-նակահատվածը՝
պապական հալածանքների
1260 տարիները՝ ասելով, որ
այդ օրերը կկրճատվեն: Նա
նաև հիշատակեց իր
գալստյանը նա-խորդող որոշ
իրադարձություններ և նշեց այն
ժամանակը, երբ դրանցից
առաջինը պետք է կատարվի.
«Այն օրերում՝ այն

Նեղությունից հետո, արեգակը
կխավարի, և լուսինն իր լույսը
չի տա» (Մարկոս 13.24): 1260
օրերը կամ տարիներն
ավարտվեցին 1798-ին: Դրանից
քառորդ դար առաջ հալածանքը
գրեթե ամբողջովին դադարել
էր: Այս հալածանքից հետո,
Քրիստոսի խոսքերի համաձայն,
արեգակը պիտի խավարեր:
1780 թվականի մայիսի 19-ին
մարգարեությանը կատարվեց:

«1780 թվականի մայիսի 19-ի
խավար օրը՝ Նոր Անգլիայի
երկնքում ու մթնոլորտում տեղի
ունեցած ամենաանբացատրելի

Խավարումը, այդ կարգի թերևս միակ ամենախորհրդավոր ու դեռևս չբացահայտված երևույթն է» (Ռ. Մ. Դևենս, Մեր առաջին դարը, էջ 89):

Մասաչուսեթսում ապրող մի ականատես այսպես է նկարագրում այդ իրադարձությունը.
«Առավոտյան արևը ծագեց պայծառ, բայց շուտով խամրեց: Ամպերը խտացան՝ դառնալով սև ու չարագուշակ: Դրանց միջից փայլատակեց կայծակը, դդրդեսց որոտը, և մի քիչ անձրև եկավ: Ժամը իննի

մոտ ամպերը բրոնզի և պղնձի
գույն ընդունեցին, և երկիրը,
ժայռերը, ծառերը, շենքերը,
ջուրն ու մարդիկ ասես
ողողվեցին այդ տարօրինակ,
անբնական լույսով: Մի քանի
րոպե անց մի ծանր սև ամպ
պատեց ողջ երկինքը՝ միայն մի
նեղ բացվածք թողնելով
հորիզոնում, և այնքան մուգ էր,
ասես ամառվա երեկոյան ժամը
իննը փնտր...»:

«Մարդիկ աստիճանաբար
սկսեցին համակվել վախով,
տազնապով ու սարսուռով:
Դռների մոտ կանգնած՝ կանայք

Նայում էին այդ մութ
բնապատկերին, տղամարդիկ
վերադարձան դաշտի իրենց
աշխատանքից, [307] հյուսնը
թողեց իր գործիքները,
դարբինն՝ իր հնոցը,
առևտրականն՝ իր
վաճառասեղանը: Դպրոցները
փակվեցին, և սարսափած
երեխաները վազեցին դեպի
տուն: Ճամփորդները կանգ
առան մոտակա
ագարակներում: «Ի՞նչ է
լինելու», — հարցնում էր ամեն
մեկն իր մտքում: Թվում էր, թե
վտթորիկ է անցնելու երկրով

մեկ կամ եկեղ է ամեն ինչի
վախճանը»:

« Մոմերը վառվեցին,
օջախների կրակն այնքան
պայծառ էր, ինչպես
աշնանային անլուսին գիշերը...
Չավերը նստեցին թառերի վրա՝
քնելու, անասունները
բառաչելով հավաքվեցին
արոտավայրերի փարախները,
գորտերը կոկոռւմ էին,
թռչունները երգում էին իրենց
երեկոյան երգերը, և չղջիկներն
այս ու այն կողմ էին թռչում:
Բայց մարդիկ գիտեին, որ դեռ
գիշեր չէ...

«Դոկտոր Նաթանայել
Ուիթեյքերը՝ Սալեմի
խորան-եկեղեցա հովիվը,
պաշտամունք էր անցկացնում
և իր քարոզում ասաց, որ այդ
խավարը գերբնական էր: Ուրիշ
տեղերում էլ մարդիկ
հավաքվեցին եկեղեցիներում:
Չանպատրաստից քարոզների
գրեթե բոլոր տեքստերը ցույց
էին տալիս, որ այդ խավարը
համահունչ էր
մարգարեությանը...
Ամենամուտք պահը եկավ ժամը
տասնմեկից քիչ անց» (The
Essex Antiquarian, Ապրիլ, 1899,

հ. 3,4, Էջ 53, 54): «Երկրի շատ մասերում օրը ցերեկով այնքան մութ էր, որ մարդիկ չէին կարող ոչ ժամն ասել, ոչ ճաշել, ոչ էլ տնային գործերով զբաղվել՝ առանց մոմի լույսի...

«Խավարի տարածումն արտասովոր էր: Այն նկատվել էր հեռու արևելքում՝ Ֆալմուլթում, իսկ դեպի արևմուտք հասել էր մինչև Քնեքթիքուլթի հեռավոր մասերը և մինչև Այրանի: Դեպի հարավ այն տա-րածվել էր ծովափի երկայնքով, իսկ դեպի հյուսիս՝ մինչև ամերիկյան

բնակավայրերի սահմանները»
(Ուիլյամ Գորդոն, ԱՄՆ
անկախութեան ծագման,
զարգացման ու հաստատման
պատմությունը, հ. 3, էջ 57):

Թանձր խավարը ցրվեց միայն
մայրամուտից մեկ կամ երկու
ժամ առաջ, երբ երկինքը
մասամբ պարզվեց, և երևաց
արեգակը, թեև դեռ ծածկված էր
սև, ծանր մեգուլ: «Արևամուտից
հետո ամպերը նորից
կուտակվեցին, և [308]
արագորեն մթնեց »: «Գիշերվա
խավարը պակաս ան-սովոր ու
սարսափեցնող չէր, քան

ցերեկվանը: Թեև գրեթե
փալասին էր, ոչ մի առարկա
չէր երևում՝ առանց
արհեստական լույսի, որը
մոտակա տներից կամ ավելի
հեռվից երևում էր ասես
եգիպտական անթափանցելի
խավարի միջով» (Այգեիա
Թոմաս, Մասաչուսեթսի լրաբեր
կամ Ազատության ամերիկյան
ազդարար, հ. 10, N 472, 25
մայիսի, 1780): Այդ տեսարանի
ականատեսներից մեկն ասել է.
«Այդ պահին ես համոզվեցի, որ
եթե անգամ տիեզերքի բոլոր
լուսատուները ծածկվեին
անթափանցելի խավարով կամ

բուրորովին վերանային, ապա
ավելի մութ չէր լինի» (Դոկտոր
Սամուել Թենիի նամակը, Նյու
Յեմփշիր, դեկտեմբեր, 1785,
Մասաչուսեթսի Պատմական
Ընկերության հավաքածու,
1792, 1 սերիա, հ.1, էջ 97): Թեև
այդ գիշեր ժամը իննին ծագեց
լիալուսինը, «այն մի թեթև
անգամ չցրեց այդ մահացու
մթությունը»: Կեսգիշերից հետո
խավարն անհետացավ, և
լուսինը, երբ սկզբում երևաց,
արյան գույն ուներ:

1780-ի մայիսի 19-ը
պատմության մեջ հայտնի է

որպես «խավար օր»: Մովսեսի
օրերից ի վեր նման թանձր,
լայնատարած ու երկարատև
մթություն չի արձանագրվել:
Ականատեսների
նկարագրությունն ընդամենը
Տիրոջ այս խոսքերի
արձագանքն է՝ գրառված Յովել
մարգարեի կողմից դրանց
իրականացումից քսանհինգ
դար առաջ. «Արեգակը պիտի
փոխվի խավարի, և լուսինը՝
արյան, Տիրոջ մեծ և ահեղ օրը
գալուց առաջ» (Յովել 2.31):

Քրիստոսն իր ժողովրդին
պատվիրել է հետևել

Ժամանակի նշան-ներին և
ցնծալ՝ տեսնելով իրենց Արքայի
գալստյան մոտիկութունը:
«Երբ սկսվի այս բանը լինել,
վեր նայեք և ձեր գլուխները
բարձրացրեք, որովհետև մոտ է
ձեր փրկությունը»: Նա իր
հետևորդներին ցույց տվեց
գարնանը բողբոջող ծառերը և
ասաց. «Երբ որ արդեն
բողբոջած են, տեսնելով՝
ինքներդ իմանում եք, թե
ամառը մոտ է: Այնպես էլ դուք,
երբ որ այս բոլոր բաները [308]
եղած տեսնեք, իմացեք, որ
Աստծո արքայությունը մոտ է»
(Ղուկաս 21. 28,30, 31):

Բայց երբ խոնարհության ու
նվիրվածության ոգին
եկեղեցում տեղի տվեց
հպարտությանն ու
ձևապաշտությանը, սերը
Քրիստոսի հանդեպ և հավատը
Նրա գալստյան նկատմամբ
սառեցին: Տարված աշխարհով
ու հաճույքներ փնտրելով՝
Աստծո ժողովուրդ կոչեցյալը
մոռացավ Փրկչի ցուցումներն
իր գազստյան նշանների
վերաբերյալ: Երկրորդ
գալստյան մասին ուսմունքն
անտեսվեց, դրան վերաբերող
սուրբգրային տեքստերը սխալ

մեկնաբանվեցին, մինչև որ այն
գրեթե ամբողջովին մոռացվեց:
Սա վերաբերում է հատկապես
Ամերիկայի եկեղեցիներին:
Ազատությունն ու
հարմարավետությունը, որ
վայելում էին հասարակության
բոլոր խավերը, հարստության
ու ճոխության սնապարծ
տենչը՝ դրդելով նվիրվել կլանիչ
դրամաշահությանը, ճանաչման
ու իշխանության հասնելու
ծարավը, որ այդքան հասանելի
էր թվում բոլորին, մարդկանց
մղեցին իրենց շահերն ու
հույսերը կենտրոնացնելու
միայն այս աշխարհի բաների

վրա, և նրանք կարծեցին, որ
դեռ շատ հեռու է այն փառավոր
օրը, երբ իրերի ներկա
ընթացքին վերջ կդրվի:

Ցուցումներ տալով իր
վերադարձի նշանների մասին՝
Փրկիչն իր հետևորդներին
նախազգուշացրեց այն
հավատուրացության մասին,
որը պիտի տեղի ունենար իր
երկրորդ գալուստից
անմիջապես առաջ: Այն
ժամանակ էլ, ինչպես Նոյի
օրերում, մարդիկ կլանված
կլինեն աշխարհիկ գործերով ու
հաճույքներ որոնելով՝

առուճախով, տնկելով, շինելով,
մարդու գնալով ու կին
առնելով՝ չմտածելով Աստծո և
գալիք կյանքի մասին: Նրանց,
ովքեր ապրելու էին այդ
ժամանակներում. Քրիստոսը
Նախագգուշացրել է. «Չգուշ
կացեք անձերիդ, միգուցե ձեր
սրտերը ծանրանան
շատակերությունով,
հարբեցությամբ և ապրուստի
հոգսերով, և այն օրը հանկարծ
հասնի ձեզ վրա»: «Ուրեմն
արթուն կացեք և ամեն
ժամանակ աղոթք արեք, որ
արժանի լինեք ազատվել այն
բոլոր բաներից, որ պիտի լինեն,

և կանգնել մարդի Որդու
առաջին» (Ղուկաս 21. 34, 36):

Եկեղեցու վիճակն այդ օրերին
Նկարագրված է Փրկչի
խոսքերում՝ նշված
Չայտնության մեջ. «Անուն
ունես, [310] թե կենդանի ես,
բայց մեռած ես»: Իսկ նրանց,
ովքեր հրաժարվում են
զարթնել իրենց անհոգ
հանգստությունից,
հանդիսավոր
Նախազգուշացում է տրված.
«Ապա թե չարթնանաս՝ ես գողի
պես կգամ քեզ վրա, և չես

իմանա, թե որ ժամին քեզ մոտ
կգամ» (Ջայտնություն 3.1,3):

Անհրաժեշտ էր, որ մարդիկ
գիտակցեին իրենց սպառնացող
վտանգը՝ սթափվելու ու
պատրաստվելու այն
հանդիսավոր
իրադարձություններին, որոնք
կապված են փորձնական
ժամանակի ավարտի հետ:
Աստճո մարգարեն
հայտարարում է. «Մեծ է Տիրոջ
օրը և շատ ահեղ, ո՞վ կարող է
դիմանալ նրան»: Ո՞վ կկանգնի,
երբ հայտնվի Նա, ում աչքերը
«մաքուր են չարություն

տեսնելուց» և «անհրապուրթյան
նայել» չեն կարող (Յովել 2.11,
Ամրակում 1.13): Նրանց
համար, ովքեր բացականչում
են. «Իմ Աստվա՛ծ, մենք
ճանաչում ենք քեզ», բայց
ոտնահարել են Նրա ուխտը և
շտապել օտար աստծո հետեից՝
իրենց սրտերում թաքցնելով
անօրենություն և սիրելով
անհրապուրթյան
ճանապարհները, Տիրոջ օրը
«խավար է, և ոչ թե լույս,
մառախուղ, ոչ թե
պայծառություն ունի նա»
(Ովսե 8.2,1, Մաղմռա 16.4,
Ամռվա 5.20): «Եվ պիտի փնիայն

Ժամանակ,- ասում է Տերը,— որ
ես երուսաղեմը պիտի քննեմ
ճրագներով, և պիտի պատժեմ
իրենց մրուրի վրա նստող
մարդկանց, որոնք ասում են
իրենց սրտում. Տերը ոչ բարիք է
անում, ոչ չարիք» (Սոփոնիա
1.12): «Ես պիտի պատժեմ
աշխարհը չարության համար, և
ամբարիշտներին՝ իրենց
անօրենությունների համար, և պիտի
դադարեցնեմ հպարտների
ամբարտավանությունը, և
բռնավորների գոռոզությունը
պիտի ցածրացնեմ» (Եսայիա
13.11): «Նրանց արձաթն էլ,
նրանց ոսկին էլ չի կարող

Նրանց ազատել», «Նրանց ստացվածքը ավար պիտի դառնա, և նրանց տները՝ ավերակներ» (Սոփոնիա 1.18,13):

Երեմիա մարգարեն,
կանխատեսելով այդ ահավոր
ժամանակը, բացականչում է.
«Ցավով բռնված եմ... ես չեմ
լռի, որովհետև փողի ձայնը
լսում ես, ով իմ անձը, այն
պատերազմի աղաղակը:
Կոտորած կոտորածի վրա է
կանչվում» (Երեմիա 4.19,20):

«Բարկության օր է այն օրը,
նեղության ու տառապանքի օր,
կոր-ճանման ու ավերման օր,
խավարի և մեզի օր, ամպի և
մառախուղի օր, վաղի և
աղաղակի օր» (Սոփոնիա
1.15,16): «Ահա գալիս է [311]
Տիրոջ օրը... որ երկիրն ավերակ
անի և նրա մեղավորներին
բնաջինջ անի նրանից»
(Եսայիա 13.9):

Ի տես այդ մեծ օրվա՝ Աստծո
խոսքը ամենահանդիսավոր ու
տպա-վորիչ բառերով նրա
ժողովրդին կոչ է անում
զարթնել հոգևոր թմրություն-նից

և խոնարհվելով ու
ապաշխարութեամբ փնտրել
Տիրոջ երեսը. «Փող հնչեցրեք
Սիոնում, և ազդ աղաղակեցեք
իմ սուրբ սարի վրա, դողան
երկրի բոլոր բնակիչները, որ
Տիրոջ օրը եկել է, որ մոտ է
նա»: «Ծով սրբեցեք, հանդես
հրավիրեցեք: Ժողովուրդ
հավաքեցեք, ժողովքը սրբեցեք,
ծերերին ժողովեցեք,
երեխաներին ու մանուկներին
հավաքեցեք... փեսան դուրս գա
իր սենյակից, և հարսն՝ իր
առագաստից: Սրահի և սեղանի
մեջտեղը լաց լինեն
քահանաները՝ Տիրոջ

ծառաները»: «Դեպի ինձ
դարձեք ձեր բոլոր սրտով,
ծոմով ու լացով և սգով: Եվ
պատառեք ձեր սրտերը, ու չէ
թե ձեր հանդերձները, և ետ
դարձեք դեպի ձեր Տեր
Աստվածը, քանի որ նա
ողորմած և գթած է,
երկայնամիտ և բազումողորմ»
(Յովել 2.1, 15-17, 12, 13):

Ժողովրդին պատրաստելու
համար, որպեսզի նա
կարողանա կանգ-նել Աստծո
մեծ օրը. բարեփոխման մեծ
աշխատանք պիտի տարվեր:
Տեսնելով, որ իր ժողովրդից

շատերը չէին կառուցում
հավերժության համար, Նա
ողորմաճաբար պատրաստվում
էր նախազգուշացման լուր
ու-ղարկել՝ նրանց իրենց
թմրությունից արթնացնելու և
Տիրոջ գալստյանը
նախապատրաստվելու համար:

Այս նախազգուշացումը
ներկայացված է Հայտնության
14-րդ գլխում: Այստեղ եռակի
պատգամը հռչակում են
երկնային էակները, որից
անմիջապես հետո գալիս է
մարդու Որդին՝ հավաքելու
«երկրի հունձքը»: Այս

Նախագգուշացումներից
առաջինն ազդարարում է
մոտեցող դա-տաստանի
մասին: Մարգարեն տեսավ մի
հրեշտակ՝ թռչելիս «երկնքի
մեջ, որ հավիտենական
ավետիք ուներ՝ ավետարանելու
երկրի վրա բնակվողներին, և
ամեն ազգի, և ցեղի, և լեզվի, և
ժողովրդի: Եվ մեծ ձայնով
ասում էր. «Վախեցեք Աստծուց
և փառք տվեք նրան, որովհետև
նրա դատաստանի ժամը եկավ,
և երկրպագեցեք երկինքը, և
երկիրը, և ծովը, և ջրերի
աղբյուրները Ստեղծողին»
(Հայտնություն 14. 6,7): [312]

Չռչակվում է, որ այս լուրը
«հավիտենական ավետիսի» մի
մասն է: Ավետարանի
քարոզչության գործը չի
հանձնարարվել
հրեշտակներին, այլ վստահվել
է մարդկանց: Այդ գործը պիտի
կատարվեր սուրբ հրեշ-
տակների հսկողությամբ,
նրանց պարտականությունն է
եղել ուղղորդել մեծ
շարժումները հանուն
մարդկանց փրկության, բայց
ավետարանի գործնական
հռչակումն իրականացվում է

երկրում ապրող քրիստոսի
ծաասների կողմից:

Հավատարիմ մարդիկ՝
հնազանդ Աստծո Հոգու
դրդումներին և Նրա խոսքի
ուսմունքին, պիտի այս
Նախազգուշացումը հռչակեն
աշխարհին: Այդ նրանք են,
ովքեր ուշադրություն են
դարձրել «մարգարեական
հաստատ խոսքին», այն
«ճրագին, որը լույս է տալիս
մութ տեղում, մինչև որ ցերեկը
լուսանա, և լուսաբերը ծագի...»
(Բ Պետրոս 1.19): Նրանք որոնել
են Աստծո գիտությունն ավելի,

քան թաքնված բոլոր գանձերը՝
համարելով, որ « նրա շահը լավ
է արձաթի շահից, և նրա
արդյունքը՝ մա-քուր ոսկուց»
(Առակաց 3.14): Եվ Տերը նրանց
հայտնեց իր արքայութեան մեծ
խորհուրդները: «Տիրոջ
գաղտնիքը նրանց հետ է, ովքեր
վախենում են նրանից, և իր
ուխտը սովորեցնում է նրանց»
(Սաղմոս 25.14, անգլ. թարգմ.):

Գիտակ աստվածաբանները չէ,
որ ըմբռնել են այս
ճշմարտությունը և հռչակել
այն: Եթե նրանք հավատարիմ
պահապաններ փնտիս՝

ջերմե-ռանդ աղոթքով
ուսումնասիրելով Սուրբ Գիրքը,
ապա կիմանային գիշեր-վա
ժամանակը, և
մարգարեությունները
կբացահայտեին նրանց
վերահաս
իրադարձությունները: Բայց
նրանք իրենց դիրքերում չէին,
ուստի լուրը հռչակեցին ավելի
խոնարհ մարդիկ: Յիսուսն ասել
է. «Գնացեք, քանի դեռ լույս
ունեք, որ խավարը ձեզ
չհասնի» (Յովհաննես 12. 35):
Ովքեր որ երես են շրջում
Աստծո տված լույսից կամ էլ
չեն կամենում որոնել այն, երբ

այն հասանեփ է իրենց,
թողնվում են խավարի մեջ:
Բայց Փրկիչն ասում է. «Ով որ
իմ ետեից գա, նա խավարի մեջ
չի քայփ, այլ կընդունի կյանքի
լույսը» (Յովհաննես 8.12): Նա,
ով նպատակամղված է
կատարելու Աստծո կամքը՝
ըլջորեն հետեելով
բացահայտված լույսին, ավելի
մեծ լույս կստանա: Այդ հոգուն
երկնային պայծառության շող
կուղարկվի՝ առաջնորդելու
նրան ամբողջ ճշմարտության
մեջ: [313]

Քրիստոսի առաջին գալստյան
ժամանակ սուրբ քաղաքի
քահանա-ներն ու դպիրները,
ու՛մ վստահված էին Աստծո
պատգամները, կարող էին
նկատել ժամանակի նշանները
և հռչակել Խոստացյալի
գալուստը: Միքիայի
մարգարեուժյուհունը մատնանշել
էր Նրա ծննդավայրը, Դանիելը
կանխասել էր Նրա գալստյան
ժամանակը (Միքիա 5. 2,
Դանիել 9. 25): Աստված այս
մարգարեուժյուհունները վստահել
էր հրեա առաջնորդներին, և
նրանք արդարացում չունեին,
որ չհասկացան Մեսիայի

գալստյան մոտիկությունը և
չհայտնեցին ժողովրդին:
Նրանց տգիտությունը հան-
ցավոր արհամարհման
հետևանք էր: Հրեաները
հուշարձաններ էին
կանգնեցնում Աստծո սպանված
մարգարեների համար, մինչդեռ
մեծարելով այս աշխարհի
մեծամեծերին՝ նրանք պատիվ
էին մատուցում սատանայի
ծառաներին: Մարդկանց մեջ
բարձր դիրքի և իշխանության
հասնելու փառատենչ
պայքարով կլանված՝ նրանք
անտեսեցին այն աստվածային
պատիվները, որ իրենց

առաջարկվել էր Երկնքի
Արքայի կողմից:

Իսրայելի առաջնորդները խոր
ու ակնածալից
հետաքրքրությամբ պիտի
ուսումնասիրեին աշխարհի
պատմության մեծագույն
իրադար-ձության՝ մարդու
փրկագնումն իրականացնելու
համար Աստծո Որդու
գալստյան վայրը, ժամանակը և
հանգամանքները: Ողջ
ժողովուրդը պետք է արթուն
լիներ ու սպասեր՝ առաջինը
ողջունելու աշխարհի Փրկչին:
Բայց, տեսե՛ք, Նազարեթի

բլուրներից եկած երկու հոգևած
ճամփորդներ Բեթղեհեմի նեղ
փողոցի ողջ երկայնքով իզուր
անցնում են մինչև քաղաքի
արևելյան ծայրամասը՝
գիշերելու տեղ որոնելով: Ոչ
մեկն իր դուռը չի բացում՝
ընդունելու նրանց: Ի վերջո,
նրանք ապաստարան են
գտնում մի խղճուկ գոմում,
որտեղ և ծնվում է աշխարհի
Փրկիչը:

Երկնային հրեշտակները տեսել
էին այն փառքը, որ Աստծո
Որդին կհսում էր Յոր հետ
աշխարհի լինելուց առաջ, և

Նրանք լարված
հետաքրքրությամբ էին հետևել
Նրա հայտնվելուն երկրում՝
որպես բոլոր ժողովուրդների
համար Լսնասեփ
ուրախությամբ լի մի
իրադարձության:
Չրեշտակներին
հանձնարարված էր բարի լուրը
հասցնել նրանց, ովքեր
պատրաստ էին ընդունել այն և
ուրախությամբ պատմել երկրի
բնա-կիչներին: Քրիստոսը
խոնարհվել էր՝ իր վրա առնելու
մարդու բնությունը: Նա պիտի
կրեր թշվառության անտանելի
[314] բեռը, երբ իր հոգին

գոհաբերեր որպես մեղքի
պատարագ, բայց
հրեշտակներն ուզում էին, որ
Բարձրյալի Որդին, նույնիսկ իր
նվաստացման մեջ, մարդկանց
առջև հայտնվեր իր էությանը
վայել արժանապատվությամբ
ու փստքով: Կհավաքվե՞ն
արդյոք աշխարհի մեծամեծերը
Իսրայելի մայրաքաղաքում՝
ողջունելու Նրա գալուստը:
Անհամբեր կսպասե՞ն արդյոք,
որ հրեշտակների լեգեոնները
Նրան ներկայացնեն իրենց:

Մի հրեշտակ երկիր է իջնում՝
տեսնելու, թե ովքեր են

պատրաստ ողջունելու
Հիսուսին: Բայց նա սպասման
նշաններ չի նկատում: Նա չի
լսում ցնծության ու
հաղթության ոչ մի ձայն, որ
հռչակեր Մեսիայի գալստյան
մոտիկությունը: Հրեշտակը
միառժամանակ ճախրում է
ընտրյալ քաղաքի ու տաճարի
վրա, որտեղ դարեր շարունակ
հայտնվել էր աստվածային
ներկայությունը, բայց նույնիսկ
այստեղ էլ նույն
անտարբերությունն է տիրում:
Քահանաներն իրենց
ցուցամոլությամբ ու
գոռոզությամբ իրենց պղծված

զոհերն են մատուցում
տաճարում: Փարիսեցիները
բարձրաձայն խոսում են
ժողովրդի հետ կամ ինքնագոհ
աղոթք են անում փողոցների
անկյուններում: Ո՛չ
արքայական պալատներում,
ո՛չ փիլիսոփաների
ժողովներում, ո՛չ ռաբբիների
դպրոցներում ոչ մեկին հայտնի
չէր այն հրաշալի փաստը, որ
ուր որ է ծնվելու էր մարդկանց
Փրկիչը, մի փաստ, որն
ուրախուժյամբ էր լցրել ողջ
երկինքը:

Ոչինչ չէր վկայում, որ
Քրիստոսին սպասում են,
կյանքի Իշխանին դիմավորելու
ոչ մի նախապատրաստություն:
Չարմացած՝ երկնային լրաբերն
արդեն պատրաստվում էր
երկինք վերադառնալ՝ տանելու
ամո-թալի լուրը, երբ նկատում
է հովիվների մի խումբ, ովքեր
գիշերով հսկում էին իրենց
հոտերը և, զննելով աստղափյց
երկինքը, խորհում էին Սեսիայի
երկիր գալու վերաբերյալ
մարգարեության շուրջ՝
փափագելով աշխարհի Փրկչի
գալուստը: Այս մարդիկ էին
պատրաստ ընդունելու

Երկնային լուրը: Եվ
հանկարծակի հայտնվում է
Տիրոջ հրեշտակը՝ մեծ
ուրախությունն ավետելով
Նրանց: Երկնային փառքը
ողողում է ամբողջ
հարթավայրը, հայտնվում է
հրեշտակների անթիվ
բազմություն, ասես
ուրախությունը չափից ավելի
մեծ էր մի հրեշտակի համար՝
հռչակելու երկրի բնակիչներին:
Անհամար ձայներ ցնծագին մի
օրհներգ են երգում, որը մի օր
պիտի երգեն բոլոր ազգերի
փրկվածները. «Փա՛ռք Աստծուն
բարձունքում, և երկրի վրա՝

խաղաղություն, և մարդկանց
մեջ՝ հաճություն» (Ղուկաս
2.14): [315]

Օ՛ր, ի՛նչ ուշագրավ դաս է
բերդեհեմյան այս
զարմանահրաշ
պատ-մությունը: Ինչպե՛ս է այն
հանդիմանում մեր
անհավատությունը,
հպար-տությունը և
ինքնագոհությունը: Ինչպե՛ս է
մեզ նախազգուշացնում,
որ-պեսզի մեր հանցավոր
անտարբերությամբ մենք
նույնպես չթերանանք տեսնել
Ժամանակի նշանները և

այդպիսով՝ չիմանանք մեր
այցելութեան օրը:

Միայն Յրեաստանի բլուրների
վրա չէր, ոչ էլ միայն հասարակ
հո-վիվների մեջ, որ
հրեշտակները գտան Մեսիայի
գալստյանը սպասող-ներին:
Յեթանոսների երկրում էլ կային
մարդիկ, ովքեր սպասում էին
Նրան: Դրանք իմաստուն,
հարուստ և ազնվական մարդիկ
էին՝ Արևելքի փիփսոփաները:
Ուսումնասիրելով բնությունը՝
մոգերն Աստծուն տեսել էին իր
արարչագործութեան մեջ:
Յրեական Սուրբ Գրքից Նրանք

իմացել էին Յակոբից ծագող
Աստղի մասին, և բոտն
վււտիագով սպասում էին Նրա
գալստյանը, ով պետք է ոչ
միայն «Իսրայելի
մխիթարությունը» փներ, այլև
«Լույս՝ հեթանոսներին
լուսավորելու» և
«փրկություն՝... մինչև երկրի
ծայրերը» (Ղուկաս 2. 25, 32,
Գործք 13. 47): Նրանք լույս էին
փնտրում, և լույսն Աստծո
գահից լուսավորեց նրանց
ճանապարհը: Մինչ
երուսաղեմի քահանաներն ու
ռաբբիները՝ նշանակված
որպես ճշմարտության

պահապաններ ու
մեկնաբաններ, պարուրված էին
խա-վարով, երկնքից
ուղարկված աստղը այս
հեթանոս օտարականներին
առաջնորդեց դեպի Նորածին
Արքայի ծննդավայրը:

«Իրեն սպասողների փրկության
համար» է, որ Քրիստոսը
«երկրորդ անգամ կհայտնվի
առանց մեղքի» (Եբրայեցիս 9.
28): Ինչպես Փրկչի ծննդյան
լուրը, այնպես էլ Նրա երկրորդ
գալստյան հռչակումը
չհանձ-նարարվեց ժողովրդի
կրոնական առաջնորդներին:

Նրանք խզել էին իրենց կապն
Աստծո հետ ու մեյլժել
երկնային լույսը, և նրանց
թվամ չեն, ում մասին Պողոս
առաքյայն ասել է. «Իսկ դուք,
եղբայրներ, խավարի մեջ չեք,
որ այն օրը գափ պես վրա
հասնի: Դուք թուլուդ լույսի
որդիներ եք և ցերեկվա
որդիներ: Գիշերինը չենք, ոչ էլ
խավարինը» (Ա
Թեսաղոնիկեցիս 5.4,5):

Սիոնի պարիսպների վրա
հսկող պահապանները պիտի
առաջինն ընդունեն Փրկչի
գալստյան լուրը, առաջինը

բարձրացնեին իրենց ձայնը՝
հռչակելու, որ Նա արդեն մոտ է,
ատաջինը նախազգուշացնեին
ժողովրդին՝ պատրաստվելու
Նրա գալստյանը: Բայց նրանք
անհոգ էին՝ երագելով
խաղաղության ու
անվտանգության մասին,
մինչդեռ ժողովուրդը քնած էր
իր մեղքերի մեջ: Հիտարը
տեսավ, որ իր եկեղեցին նման է
անպտուղ թզենուն՝ ծածկված
փարթամ սաղարթով, սակայն
զարկ թանկագին պտղից:
Կրոնական ծեսերը
սնապարծորեն պահվում էին,
մինչդեռ իսկական

Խոնարհության, զղջումի և
հավատի ոգին՝ միակ բանը, որ
կարող էր ծառայությունն
բնդունեցի դարձնել Աստծուն,
բացակայում էր: Հոգու
շնորհնեցի տեղը զբաղեցրել
էին հպարտությանը,
ձևամոլությունը,
փառասիրությունը,
եսասիրությունն ու կեղեքումը:
Նահանջող եկեղեցին իր
աչքերը փակել էր. որ չտեսնի
Ժամանակի նշանները:
Աստված չէր յթել Նրան, և Նրա
հավատարմությունն
անփոփոխ էր: Եկեղեցին էր
բաժանվել Նրանից և հեռացել

Նրա սիրուց: Քանի որ նրանք
հրաժարվեցին
համաձայնել պայմաններին,
Նրա խոստումները նրանց
համար չիրականացան:

Ահա սա է Աստծո տված լույսն
ու արտոնությունները
չգնահատելու և չզարգացնելու
անխուսապելի հետևանքը:
Մինչև եկեղեցին չգնա Նրա
նախախնամությունները բացվող
ուղիով՝ ընդունելով լույսի ամեն
մի շող, ամեն ինչում
կատարելով իր
պարտականությունը, կրոնն
անխուս-սափելիորեն

ձևապաշտության կվերածվի,
իսկ գործնական բարեպաշ-
տության ոգին կչքանա: Այս
ճշմարտությունը բազմիցս
լուսաբանվել է եկեղեցու
պատմության մեջ: Աստված էր
ժողովրդից հավատի ու
հնազանդության գործեր է
պահանջում՝ իրենց տրված
օրհնություններին և
առավելություններին
համապատասխան:
Չհնազանդությունը
զոհաբերու-թյուն է պահանջում
և դրդում է խաչ կրել: Սա է
պատճառը, որ Քրիստոսի
կոչեցյալ հետևորդներից

այդքան շատերը հրաժարվեցին
ընդունել երկնային լույսը և հին
հրեաների պես չիմացան իրենց
այցելության ժա-մանակը
(Ղուկաս 19. 44): Նրանց
հպարտության ու
անհավատության պատճառով
Տերը շրջանցեց նրանց և իր
ճշմարտությունը հայտնեց
մարդկանց, ովքեր Բեթղեհեմի
հովիվների և արևելքից եկած
մոզերի նման հետևեցին այն
ամբողջ լույսին, որ տրվել էր
իրենց:

ԳԼՈՒԽ 18—ԱՄԵՐԻԿԱՅԻ ԲԱՐԵՆՈՐՈԳԻՉԸ

Վեհանձն ու ազնիվ մի
ազարակատեր, ով, թեև
կասկածելով Սուրբ Գրքի
աստվածային
հեղինակությանը, անկեղծորեն
փափագում էր իմանալ
ճշմարտությունը, հատուկ
ընտրված էր Աստծո կողմից՝
հռչակելու Քրիստոսի Երկրորդ
գալստյան լուրը: Ինչպես
բարենորոգիչներից շատե-րը,
Ուիլյամ Միլլերն իր վաղ
տարիներին պայքարել էր
աղքատության դեմ և

այդպիսով յուրացրել
ջանասիրության ու
ինքնուրացության թանկարժեք
դասերը: Նրա ընտանիքի
անդամներն աչքի էին ընկնում
անկախ, ազատասեր ոգով,
տոկոսությունք և բոցաշունչ
հայրենասիրությամբ, որակներ,
որոնք առկա էին նաև նրա
բնավորության մեջ: Նրա հայրը
հեղափոխական բանակի
հրամանատար էր, և պայքարի
ու տառապանքի այդ
փոթորկալից ժամանակներում
արված նրա
զոհողություններով էին

բացատրվում Միլլերի վաղ
կյանքի սուղ պայմանները:

Նա ամուր կազմվածք ուներ, և
դեռ մանկուց արտասովոր
մտավոր ունակություններ էր
դրսևորել: Երբ նա մեծացավ,
դա ավելի ցայտուն երևաց: Նա
գործուն և լավ զարգացած
միտք աներ և գիտելիքների
սուր ծարավ էր զգում: Թեև
Նրան չէր հաջողվել
համալսարանական կրթություն
ստանալ, ուսման հանդեպ Նրա
սերը, խորապես մտորելու և
Նրբորեն քննադատելու
սովորությունը Նրան առողջ

դատողութեամբ և
բազմակողմանիորեն
զարգացած մարդ էին դարձրել:
Նա բարոյապես անբասիր
բնավորութիւն և նախանձելի
հեղինակութիւն ուներ՝ բոլորի
կողմից հարգված իր
ազնվութեան, խնայողութեան և
բարյացակամութեան համար:
Իր եռանդի ու ջանասիրութեան
շնորհիվ նա արագորեն [318]
կարողութիւն էր ձեռք բերել,
թեև դեռ պահպանում էր
ուսանելու իր սովորութիւնը:
Նա հաջողութեամբ
քաղաքացիական ու
ռազմական տարբեր

պաշտոններ էր զբաղեցրել, և
թվում էր, թե հարստության ու
փառքի ծառուղիները լայնորեն
բաց են նրա առջև:

Նրա մայրը խիստ բարեպաշտ
կին էր, և նա դեռ մանկուց
կրոնական
դաստիարակություն էր
ստացել: Վաղ
երիտասարդության
տարիներին, սակայն,
հայտնվել էր դեիստների մեջ,
ուսմ տոպոթյունը մեծ էր, քանի
որ նրանք հիմնականում
օրինակելի քաղաքացիներ և
գթասիրտ ու բարի մարդիկ էին:

Նրանք ապրում էին
քրիստոնեական
հաստատությունների
միջավայրում, և նրանց
բնավորությունը որոշ չափով
ձեավորվել էր այդ շրջապատի
ազդեցությամբ: Այն որակների
համար, որոնց շնորհիվ
հարգանք ու պատիվ էին
վայելում, նրանք պարտական
էին Աստվածաշնչին: Այդ բարի
պարգևները, սակայն, այնպես
էին աղավաղվել, որ ավելի
շուտ Աստծո խոսքին հակառակ
ազդեցություն էին գործում:
Ընկերանալով այս մարդկանց
հետ՝ Միլլերը սկսեց կիսել

Նրանց հայացքները: Այդ
ժամանակ Սուրբ Գրքի
մեկնաբանություններն այնքան
խճճված էին, որ նրան
անըմբռնելի էին թվում,
սակայն նրա նոր հավատը, որ
մերժում էր Աստվածաշունչը,
ավելի լավ այլընտրանք չէր
առաջարկում, և նա հեռու էր
գոհ լինելուց: Բայցևայնպես,
շուրջ տասներկու տարի նա
հետևեց այդ հայացքներին:
Բայց երեսունչորս
տարեկանում, Սուրբ Հոգու
ազդեցության տակ, նա
գիտակցեց իր
մեղավորությունը: Ապագան

Խավար ու մռայլ էր թվում:
Ավելի ուշ վերհիշելով այդ
ժամանակվա իր ապրումները՝
Նա ասել է. «Կործանվելու
մասին միտքը սառն ու սոսկալի
էր, և բոլորին կորուստ էր
սպասվում, եթե
պատասխանատվության
կանչվեին: Երկինքը պղնձի պես
էր իմ գլխավերևում, իսկ
երկիրը ոտքերիս տակ՝ երկաթի
պես: Չավերժություն, ի՞նչ էր
դա: Եվ մահ. ինչի՞ համար է
այն: Որքան ավելի շատ էի
խորհում, այնքան ավելի էի
հեռանում պատասխանից:
Որքան ավելի շատ էի

մտածում, այնքան ավելի էին
խճճվում իմ եզրահանգումները:
Փորձում էի այլևս չմտածել,
բայց չէի կարողանում մտքերս
կառավարել: Ես իրոք թշվառ էի,
բայց չգիտեի դրա պատճառը:
Ես տրտնջում ու գանգատվում
էի՝ չիմանալով, թե ումից:
Չգում էի, որ ինչ-որ բան սխալ է,
բայց չգիտեի՝ ինչպես կամ
որտեղ գտնել ճիշտը: Ես ողբում
էի, բայց անհույս»։ [319]

Այս վիճակում նա մնաց մի
քանի ամիս: «Չանկարծ,—
ասում է նա,— ես պարզորոշ
գիտակցեցի, թե ինչպիսին է

Փրկիչն իրականում: Թվաց, թե
պետք է որ մի էակ լինի՝
այնքան բարի և կարեկից, որ իր
կյանքով քաղի մեր մեղքերը և
փրկի մեզ մեղքի պատիժը
կրելուց: Ես անմիջապես
զգացի, թե որքան սիրալիր
պիտի լինի նման էակը և
պատկերացրի, որ կարող էի
նետվել նրա գիրկը և
ապավինել նրա
գթասրտությանը: Բայց հարց
ծագեց, ինչպե՞ս կարելի է
ապացուցել, որ նման էակ իրոք
գոյություն ունի: Ես հասկացա,
որ Աստվածաշնչից դուրս չեմ
կարող որևէ ապացույց գտնել

այդպիսի Փրկչի գոյութեան կամ
նույնիսկ ապագա կյանքի
վերաբերյալ...

Ես տեսա, որ Աստվածաշունչն
իսկապես հենց այնպիսի Փրկիչ
է ներկայացնում, ում կարիքը
ես զգում էի, և շփաթվեցի՝
մտածելով, թե ինչպե՞ս կարող է
չներշնչված գիրքն առաջարկել
սկզբունքներ, որոնք
կատարելապես հարմարեցված
են ընկած աշխարհի
կարիքներին: Ես ստիպված էի
ընդունել, որ Սուրբ Գիրքն
Աստծո հայտնությունն է: Այն
իմ ուրախությունը դարձավ,

իսկ Յիսուան՝ իմ ընկերը: Փրկիչը
«բյուրերից գերազանց»
դարձավ ինձ համար, իսկ Սուրբ
Գիրքը՝ մինչ այդ մուտք ու
հակասական, դարձավ «ճրագ
ոտքերիս համար և լույս՝
ճանապարհիս»: Միտքս
հանգստացավ ու
բավարարվեց: Ես տեսա, որ
Տեր Աստվածը ժայռ է կյանքի
օվկիանոսի մեջ:
Աստվածաշունչն իմ
ոտումնասիրության գլխավոր
նյութը դարձավ, և իրապես
կարող եմ ասել, որ այն քննում
էի մեծ հաճությամբ: Ես
հասկացա, որ երբեք ինձ դրա

Կեսն էլ չէին պատմել:
Չարմանալի էր, որ նախկինում
չէի նկատել դրա
գեղեցկությունն ու փառքը, և
ապշեցի, թե ինչպես եմ
կարողացել մերժել այն:
Այնտեղ ես գտա այ ն ամենն,
ինչ սիրտս կփափագեր, և դեզ
ա միջոց հոգու ցանկացած
հիվանդության համար: Այլ
գրքերի ընթերցումն ինձ համար
կորցրեց իր հաճույքը, ու ես
որոշեցի իմաստություն
որոնել Աստուծուց (Ս. Բլիս,
Ուիլյամ Միլլերի
հուշագրությունները, էջ 65-67):

Միլլերը հրապարակավ
դավանեց իր հավատն այն
կրոնի հանդեպ, որն
արհամարհել էր: Բայց նրա
անհավատ ընկերները
չհապաղեցին ներկայացնելու
բոլոր այն փաստարկները,
որոնք ինքն էր հաճախ բերել
ընդդեմ Սուրբ Գրքի
աստվածային հեղինակության:
Նա այդ ժամանակ պատրաստ
չէր պատասխանել նրանց,
բայց խորհում էր, որ եթե
Աստվածաշունչը Աստծո
հայտնությունն է, ապա չպետք
է հակասի ինքն իրեն, և քանի
որ տրված է մարդուն

Խրատելու համար, ուրեմն
պիտի որ [320] հասկանափ լինի
Նրան: Նա որոշեց ինքնուրույն
ուսումնասիրել Սուրբ Գիրքը և
պարզել, թե արդյո՞ք հնարավոր
է ներդաշնակեցնել թվացյալ
բոլոր հակասությունները:

Ջանալով մի կողմ դնել բոլոր
կանխակալ կարծիքներն ու
մեկնաբանությունները՝ նա
տեքստը համեմատում էր
տեքստի հետ՝ զուգահեռ
տեղերի և համաբարբառի
օգնությամբ: Նա
ուսումնասիրում էր կանոնավոր
ու համակարգված ձևով՝

սկսելով ճննդոցից և կարդալով
Նախադասութիւնն առ
Նախադասութիւն, և առաջ չէր
շտապում, մինչև որ հատվածի
իմաստը բացահայտվեր
այնպէս, որ էլ հարցեր
չառաջանային: Ինչ-որ
անհասկանալի բան գտնելիս
Նա սովորութիւն ուներ
համեմատել դա մյուս այն
տեքստերի հետ, որոնք
վերաբերում էին տվյալ
հարցին: Տեքստի իմաստը
պարզելու համար հաշվի էր
առնվում յուրաքանչյուր բառ,
ու եթէ նրա կարծիքն այդ
մասին ներդաշնակում էր մյուս

գուգահեռ հատվածներին, դա
այլևս դժվարություն չէր
ներկայացնում: Այսպիսով,
որևէ բարդ հատվածի
հանդիպելիս նա դրա
բացատրությունը գտնում էր
Աստվածաշնչի մեկ այլ մասում:
Ուսումնասիրելու նա աղոթում
էր աստվածային
լուսավորության համար, և ինչ
որ առաջ մոլթ էր թվում նրա
հասկացողությանը, պարզ էր
դառնում: Նա վերապրեց
սաղմոսերգուհի խոսքերի
ճշմարտացիությունը.
«Խոսքերիդ հայտնությունը
լույս է տալիս և իմաստուն է

անում պարզամիտներին»
(Սաղմոս 119.130):

Նա լարված հետաքրքրությամբ
ուսումնասիրում էր Դանիելի
գիրքն ու Չայտնությունը՝
գործածելով մեկնաբանության
միտնույն սկզբունքները,
ինչպես և մյուս գրքերում, և
պարզեց, ի մեծ ուրախություն
իրեն, որ մարգարեական
խորհրդանիշները կարելի է
հասկանալ: Նա տեսավ, որ
մարգարեությունները,
որքանով որ կատարվել էին,
կատարվել էին տառացիորեն,
որ բպոր զանազան

պատկերները,
փոխաբերութիւնները,
առակներն ու նմանութիւնները
բացատրված էին կա մ
մոտակա համատեքստում, կամ
սուրբգրային այլ
հատվածներում, ու երբ
այդպիսով պարզաբանվում
էին, ուրեմն պիտի հասկացվէին
բառացիորէն: «Ես խիստ
բավարարված էի,— ասում է
Նա,— որ Աստվածաշունչը
բացահայտված
ճշմարտութիւնների
համակարգ է՝ տրված այնքան
պարզ ու հասարակ ձեռք, որ
Նույնիսկ անմիտ [321] մարդը

չմոլորվի» (Ս. Բլիս, Ուիլյամ Միլլերի հուշագրությունները, էջ 70): Երբ նա կեստ ստ կեստ քննում էր մարգարեական շղթաները՝ ուշադիր ուսումնասիրելով ամեն մի օղակը, նրա ջանքերը պարզեատրվում էին: Երկնային հրեշտակներն ուղղորդում էին նրա միտքը՝ հասկացնելով նրան Սուրբ Գիրքը:

Ընդունելով որպես չափանիշ, թե ինչպես են անցյալում կատարվել մարգարեությունները, կարելի էր դատել դեռ

չկատարվածների
իրակա-նացման մասին, նա
ուրախ էր, որ Աստծո խոսքը չի
հաստատում այն համատարած
կարծիքը, թե հազարամյա
հոգևոր թագավորությունն է
լինելու երկրի վրա՝ նախքան
Քրիստոսի երկրորդ գալուստը:
Այս ուս-մունքը, ըստ որի՝ Տիրոջ
գալստյանը նախորդելու է
արդարության ու
խա-ղաղության
հազարամյակը, հեռացնում է
Աստծո ահեղ դատաստանի
օրը: Բայց որքան էլ գրավիչ
լինի այս տեսությունը, այն
հակասում է Քրիստոսի և Նրա

առաքյալների այն ուսմունքին,
որ ցորենն ու որոմը պիտի
միասին աճեն մինչև հունձքը՝
աշխարհի վերջը, որ «չար և
խաբեբա մարդիկ առաջ կգնան
չարության մեջ», որ «վերջին
օրերում չար ժամանակներ
կգան», որ խավարի
իշխանությունը,
չարունակվելով մինչև Տիրոջ
գալուստը, կխափանվի Նրա
բերանի հոգով ու կկործանվի
Նրա գալստյան հայտնությամբ:
(Մատթեոս 13. 30, 38-41, Բ
Տիմոթեոս 3.13,1, Բ
Թեսաղոնիկեցիս 2. 8):

Առաքյալների եկեղեցին
ասմունք չի քարոզել աշխարհի
դարձի գալու և Քրիստոսի
հոգևոր արքայության մասին:
Այն ընդունված չի եղել
քրիստոնյաների կողմից մինչև
տասնութերորդ դարի սկիզբը:
Ինչպես ցանկացած այլ
մոլորություն, սա էլ չար
հետևանքներ ունեցավ: Այն
դրդեց մարդկանց Տիրոջ
գալստյանը սպասել շատ
հեռավոր ապագայում և
խանգարեց ուշադրություն
դարձնել Նրա գաղտատն
ազդարարող նշաններին: Այն
վստահության ու

անվտանգության կեղծ
զգացում ներ-շնչեց և շատերին
դրդեց անտեսել Տիրոջը
դիմավորելու համար
անհրա-ժեշտ
նախապատրաստությունը:

Միլլերը գտավ, որ Սուրբ Գիրքը
պարզորոշ վկայում է Քրիստոսի
բառացի և անձնական
գալստյան մասին: Պողոսն
ասում է. «Ինքը՝ Տերը,
հրամանով, հրեշտակապետի
[322] ձայնով և Աստծո փողով
վայր կգա երկնքից» (Ա
Թեսաղոնիկեցիս 4.15): Եվ
Փրկիչն էլ հայտարարում է.

«Կտեսնեն մարդի Որդին գալիս
երկնքի ամպերի վրա
զորությամբ և շատ փառքով»:
«Որովհետև, ինչպես կայծակը
դուրս է գալիս արևելքից և
երևում մինչև արևմուտք,
այնպես էլ կլինի մարդի Որդու
գալուստը» (Մատթեոս
24.30,27): Նրան կուղեկցեն
երկնքի բոլոր զորքերը:
«Մարդու Որդին իր փառքով
կգա, և բոլոր սուրբ
հրեշտակները՝ նրա հետ»
(Մատթեոս 25.31): «Եվ նա
կուղարկի իր հրեշտակներին
մեծաձայն փալով, և կժողովեն

Նրա ընտրյալներին»
(Մատթեոս 24. 31)

Նրա գալստյան ժամանակ
մեռած արդարները հարուժյուն
կառնեն, իսկ ողջ մնացած
արդարները՝
կկերպարանափոխվեն: «Ոչ թե
ամենքս կննջենք,— ասում է
Պողոսը,— այլ ամենքս
կփոխվենք: Հանկարծ՝ մի
ակնթարթում, վերջին փողի
ժամանակ, որովհետև փողը
կհնչի, և մեռելները հարուժյուն
կառնեն անապականելի, և
մենք կփոխվենք: Քանզի պետք
է, որ այս ապականացուն

հագնի անապականությունը, և այս մահկանացուն հագնի անմահությունը» (Ա Կորնթացիս 15.51-53):

Թեսաղոնիկեցիներին ուղղված իր նամակում նա այսպես է նկարագրում իրադարձությունները Տիրոջ գալուստից հետո. «Քրիստոսով մեռելներն առաջ հարություն կառնեն: Եվ հետո մենք, որ կենդանի ենք մնացել, նրանց հետ մեկտեղ ամպերով օդի մեջ կհափշտակվենք՝ Տիրոջը դիմավորելու և այդպես ամեն ժամանակ Տիրոջ հետ կլինենք» (Ա Թեսաղոնիկեցիս 4.16,17):

Քրիստոսի անձնական
գալուստից ավելի շատ Նրա
ժողովուրդը չի կարող
ժառանգել թագավորութունը:
Փրկիչն ասել է. «Երբ մարդու
Որդին գա իր փառքով և բոլոր
հրեշտակներն՝ իր հետ, այն
ժամանակ կնստի իր փառքի
աթոռին, նրա առջև
կհավաքվեն բոլոր ազգերը, և
նա նրանց կբաժանի իրարից,
ինչպես հովիվն է ոչխարներին
բաժանում այծերից: Եվ
ոչխարներն իր սւջ կողմը
կկանգնեցնի, իսկ այծերը՝ ձախ:
Այն ժամանակ թագավորը

կասի իր աջ կողմիններին.
«Եկեք, ով իմ Յոր օրհնածները,
ժառանգեք աշխարհի սկզբից
ձեզ համար պատրաստված
թագավորությունը» (Սատթեոս
25.31-34): Սուրբգրային այս
խոսքերում մենք տեսնում ենք,
որ երբ մարդու Որդին գա.
մեռյալները հարություն
կառնեն անապականեփ, իսկ
ողջերը կայլակերպվեն: Այս մեծ
[323] փոփոխությամբ է, որ
նրանք պատրաստվում են
ժառանգելու
թագավորությունը, քանզի
Պարան ասում է. «Մարմին և
արյուն չեն կարող Աստծո

արքայությունը ժառանգել, ոչ էլ
ապականությունը ժառանգում
է անապականություն» (Ա
Կորնթացիս 15.50): Իր ներկա
վիճակում մարդը մահկանացու
է և ապականյալ, բայց Աստծո
թագավորությունն անապական
կլիների և հավերժական: Դրա
համար էլ մարդն իր ներկա
վիճակում չի կարող մտնել
Աստծո արքայություն նը: Բայց
երբ Հիսուսը գա, Նա իր
ժողովրդին անմահություն
կշնորհի, և ապա կհրավիրի
Նրանց ժառանգելու
թագավորությունը, որի միակ

Ժստանգորդներն են եղել մինչ
այդ:

Այս և մյուս գրվածքները
Միլլերին ապացուցեցին, որ
այնպիսի իրա-դարձություններ,
ինչպիսիք են խաղաղության
համաշխարհային
իշխա-նությունը և Աստծո
արքայության հաստատումը
երկրի վրա, որոնք բոլորի
կարծիքով պետք է տեւի
ունենային Քրիստոսի երկրորդ
գալուստից առաջ, իրականում
հաջորդելու են երկրորդ
գալստյանը: Ավելին,
Ժամա-նակների բոլոր

Նշանները և աշխարհի վիճակը
համապատասխանում էին
վերջին օրերի մարգարեական
նկարագրությանը: Միայն
Աստվածաշնչի
ուսումնասիրությունից Միլլերը
եկավ այն եզրակացության, որ
իր ներկա վիճակում երկրի
համար հատկացված
ժամանակը մոտենում է
ավարտին:

«Մեկ այլ վկայություն, որն
էական ազդեցություն թողեց
ինձ վրա,— ասում է նա,—
Սուրբ Գրքի
ժամանակագրությունն էր... Ես

Նկատեցի, որ
կանխագուշակված
իրադարձությունները, որոնք
տեւի էին ունեցել ան-ցյալում,
կատարվել էին տրված
ժամանակի սահմաններում:
Հարյուր քսան տարի մինչև
ջրհեղեղը (Ճննդոց 6.3), դրան
նախորդող յոթ օրերը՝
կանխասված քառասուն
անձրևային օրերի հետ (Ճննդոց
7.4), Աբրահամի սերնդի չորս
հարյուր տարվա
պանդխտությունը (Ճննդոց
15.13), մատուցակապետի և
հացագործի երազների երեք
օրերը (Ճննդոց 40.12— 20),

փարավոնի յոթ տարիները
(Ճննդոց 41.28-54), քառասուն
տարիներն անապատում (Թվոց
14.34), սովի երեքուկես
տարիները (Գ Թագավորաց
17.1, տես Ղուկաս 4.25)...
գերության յոթանասուն
տարիները (Երեմիա 25.11),
Նաբուգոդոնոսորի յոթ
ժամանակները (Դանիել
4.13-16), հրեաների համար
վճռված յոթ շաբաթը,
վաթսուներկու շաբաթը և մեկ
շաբաթը, որոնք կազմում են
յոթանասուն շաբաթ (Դանիել
9.24-27). բոլոր այս
ժամանակներով

սահմանափակված
իրադարձությունները, որ մի
ժամանակ մարգարեություն
էին եղել, ճշտորեն իրականացել
են» (Ս. Բլիս, Ուիլյամ Միլլերի
հուշագրությունները, Էջ 74,75):

[324] Այդպես, երբ
Աստվածաշունչն
ուսումնասիրելիս նա գտավ
ժամանակահատվածներ,
որոնք, նրա կարծիքով, ձգվում
էին մինչև Քրիստոսի երկրորդ
գալուստը, նա չէր կարող
դրանք «նախապես որոշված
ժամանակներ» չհամարել, որ
Աստված հայտնել է իր

ծառաներին: «Ճա-ծուկ
բաները,— ասում է Մովսեսը,—
մեր Եհովա Աստծո համար է,
բայց հայտնված բաները՝ մեզ և
մեր որդկանց համար՝
հավիտյան»: Եվ Ամովս
մարգարտի միջոցով Տերն
ասում է, որ Ինքը «ոչ մի բան չի
անի, եթե իր խորհուրդը
չհայտնի իր ծառաներին՝
մարգարեներին» (Երկրորդ
Օրինաց 29.29, Ամովս 3.7):
Ուստի Աստծո խոսքի
ուսանողները կարող են վստահ
լինել, որ ճշմարտության
Գրքում մարդկությանը
սպասվող պատմական

մեծագույն իրադարձությունը
հստակորեն նշված է:

«Երբ ես ամբողջապես
համոզվեցի,— ասում է
Միլլերը,— որ Աստծո
ներշնչմամբ տրված ողջ Գիրքը
օգտակար է (Բ Տիմոթեոս 3.16),
որ այն երբեք չի տրվել մարդու
կամքով, այլ «Սուրբ Հոգուց
շարժված» գրել են սուրբ
մարդիկ (Բ Պետրոս 1.21), և որ
այն նախատեսված է «մեր
սովորեալ համար... որ
համբերությամբ ու գրքերի
մխիթարությամբ հույս
ունենանք» (Հռոմեացիս 15.4),

ես այլևս չէի կարող չհամարել,
որ Աստվածաշնչի
ժամանակագրական
հատվածները նույնպես Աստծո
խոսքի մասն են, և պիտի
նույնքան լրջորեն քննվեն,
որքան Սուրբ Գրքի մյուս
մասերը: Ուստի գիտակցեցի, որ
ջանալով ըմբռնել այն, ինչ
Աստված էր տրտմությամբ
հարմար էր գտել հայտնել մեզ՝
ես իրավունք չունեի անտեսել
մարգարեական
ժամանակաշրջանները» (Ս.
Բլիս, Ուիլյամ Միլլերի
հոլշագրությունները, էջ 75):

Մարգարեությունը, որը, թվում էր՝ ամենապարզ կերպով հայանում է երկրորդ գալստյան ժամանակը, Դանիել 8.14-ն էր: «Մինչև երկու հազար երեք հարյուր իրիկուն-առավոտ, հետո սբբաբանր պիտի արդարանա»: Չետևելով ինքն իրեն մեկնաբանելու՝ Սուրբ Գրքի կանոնին, Միլլերը գտավ, որ խորհրդանշական մարգարեության մեջ օրը ներկայացնում է տարի (Թվոց 14.34, Եզեկիել4.6): Նա տեսավ, որ 2300 մարգարեական օրերի կամ բառացի տարիների ժամանակահատվածը

տարածվում էր հրեաներին
հատկացված ժամանակից շատ
այն կողմ, ուստի չէր կարող
վերաբերել հին ախտի
սրբարանին: Միլլերն
ընդունում էր այն համատարած
կարծիքը, թե քրիստոնեական
դարաշրջանում [325]
սրբարանը երկիրն է, այդ
պատճառով էլ եզրակացրեց, որ
Դանիել 8.14-ում կանխասված
սրբարանի արդարացումը
խորհրդանշում է երկրի
մաքրումը կրակով Քրիստոսի
երկրորդ գալստյան ժամանակ:
Ուրեմն, եթե հնարավոր լիներ
պարզել 2300 օրերի

սկզբնակետը, ապա, Նրա
կարծիքով, հեշտությամբ
կարելի էր գտնել երկրորդ
գալստյան ժամանակը: Այսպես
կբացահայտվի այն մեծ
վախճանի ժամը, երբ Ներկա
աշխարհին՝ «իր ողջ
հպարտությամբ, հզորությամբ,
ցուցամոլությամբ,
ուսայնությամբ,
ամբարշտությամբ ու
կեղեքմամբ», վերջ կդրվի, երբ
անեծքը «կհեռացվի երկրից,
մահը կվերանա, Աստծո
ծառաները՝ մարգարեները,
սրբերը և Նրա անուսից բոլոր
վախեցողները կստանան

իրենց վարձը, իսկ երկիրն
ավերողները կկործանվեն» (Ս.
Բփս, Ուիլյամ Միլլերի
հուշագրությունները, էջ 76):

Միլլերը շարունակեց նորոպի և
ավելի եռանդուն քննել
մարգարեությունները՝
գիշերուզօր կլանված այն
ճշմարտությունների
ուսումնասիրությամբ, որ այժմ
Նրան չափազանց կարևոր էին
թվում և խիստ հետաքրքիր:
Դանիելի ութերորդ գլխամ նա
ոչինչ չգտավ 2300 օրերի սկզբի
մասին: Գաբրիել հրեշտակը,
ուն հրամայված էր Դանիելին

հասկացնել տեսիլքը, միայն
մասամբ բացատրեց նրան: Երբ
մարգարեին տեսիլքում
բացահայտվեց եկեղեցուն
սպասվող զարհուրեփ
հալածանքը, ուժերը կբեցին
նրան: Նա չդիմացավ, և
հրեշտակը միառժամանակ
թողեց նրան: Դանիելը
«նվաղեց և հիվանդացավ մի
քանի օր»: «Ես զարմացած էի
տեսիլքի մասին,— ասում է
նա,— և մեկ հասկացնող
չկար»:

Բայց Աստված պատվիրել էր իր
ղևաբերին. «Չհասկացրու նրան

տեսիլքը»: Եվ այդ
հանձնարարությունը պիտի
կատարվեր: Յնազանդ-վելով՝
հրեշտակը որոշ ժամանակ անց
Դանիելի մոտ վերադարձավ՝
ասելով. «Յիմա դուրս եկա, որ
քեզ իմաստություն
սովորեցնեմ», «ուրեմն
հասկացիր խոսքը և իմացիր
տեսիլքը» (Դանիել 8.27, 16,
9.22, 23, 25—26): Ութերորդ
գլխի տեսիլքում մի կարևոր
կետ՝ 2300 օրերի
ժամա-նակահատվածը, չէր
բացատրվել, դրա համար էլ
հրեշտակը, վերսկսելով իր
բացատրությունը,

հիմնականում կանգ է առնում
ժամանակին վերաբերող հարցի
վրա. [326]

«Յոթանասուն յոթնյակ է
վճռված քո ժողովրդի և քո
սուրբ քաղաքի վրա... Եվ
իմացիր ու հասկացիր, որ
երուսաղեմը դարձյալ շինելու
համար հրամանը դուրս գալուց
մինչև Մեսիա իշխանը յոթ
յոթնյակ և վաթսուներկու
յոթնյակ կա, որ դարձյալ պիտի
շինվի հրապարակը և
պարիսպը, այն էլ նեղ
ժամանակներում: Եվ
վաթսուներկու յոթնյակից հետո

Մեսիան պիտի մահով
դատապարտվի, բայց ոչ թե իր
համար... Եվ նա պիտի զորացնի
ուխտը շատերի համար մեկ
յոթնյակ, և յոթնյակի կեսին
պիտի դադարեցնի զոիր և
պատարագը»:

Յրեշտակը Դանիելի մոտ էր
ուղարկվել հստակ նպատակով՝
բացատրելու նրան այն ինչ, նա
չէր կարողացել հասկանալ
ութերորդ գլխի տեսիլքում՝
Ժամանակին վերաբերող
խոսքը՝ «մինչև երկու հազար
երեք հարյուր
իրիկուն-առափոս, հետո

սրբարանը պիտի արդարանա»:
Դանիելին «Չասկացիո խոսքը և
իմացիո տեսիլքը» ասելուց
հետո՝ հրեշտակի առաջին
խոսքերն էին. «Յոթանասուն
յոթնյակ է վճռված քո ժողովրդի
և քո սուրբ քաղաքի համար»:
Բառը, որն այստեղ
թարգմանված է «վճռված»,
տառացիորեն նշանակում է
«կտրված»: Յոթանասուն
յոթնյակը կամ 490 տարիները,
հրեշտակի խոսքերով, կտրված
են հատուկ հրեաների համար:
Բայց ինչի՞ց են կտրված: Քանի
որ 2300 օրերը ութերորդ գլխում
նշված միակ

Ժամանակահատվածն է, ուստի
յոթանասուն շաբաթները պիտի
որ կտրված լինեն դրանից և,
հետևաբար, 2300 օրերի մասն
են կազմում, և երկու
Ժամանակահատվածները
պետք է միևնույն սկիզբն
ունենան: Ըստ հրեշտակի
խոսքերի՝ յոթանասուն
շաբաթները սկսվում են
Եբոաադեմը վերականգնելու և
շինելու համար հրամանը դուրս
գալուց: Եթե հնարավոր լիներ
գտնել այս հրամանի
տարեթիվը, ապա կպարզվեր
2300 օրվա մեծ

Ժամանակահատվածի
սկզբնակետը:

Այդ հրամանը հիշատակվում է
Եզրասի յոթերորդ գլխում
(7.12— 26): Վերջնական
տեսքով այն հրատարակվել է
Արտաշեսի՝ պարսից
թագավորի կողմից Ք.ա. 457
թ.—ին: Բայց Եզրաս 6.14-ում
ասվում է, որ Տիրոջ տունը
երոասաղեմում կառուցվեց
«Իսրայելի Աստծո հրամանով և
պարսից Կյուևրոս. Դարեհ ու
Արտաշես թագավորների
հրամանով»: Այս երեք
թագավորները, [327] կազմելով,

վերահաստատելով ու
ավարտելով հրամանը՝
հաստատեցին ժամանակը, որը
պահանջվում էր
մար-գարեությամբ՝ 2300
տարիների սկիզբը նշելու
համար: Ընդունելով Բ.ա. 457-ը
որպես վերջնական հրամանի
սկզբնակետ՝ տեսնում ենք, որ
յո-թանասուն շաբաթների
վերաբերող մարգարեությունը
կատարվել է իր բոլոր
մանրամասնություններով:

«Երուսաղեմը դարձյալ շինելու
համար հրամանը դուրս գալուց
մինչև Մեսիա իշխանը յոթ

յոթնյակ և վաթսուներկու
յոթնյակ կա», այսինքն՝
վաթսուներկու շաբաթ կամ 483
տարի: Արտաշեսի հրամանը
ուժի մեջ մտավ Ք.ա. 457-ի
աշնանը: Հաշվելով այս թվից՝
483 տարիներն ավարտվում են
Ք.ա. 27-ի աշնանը: Այդ
ժամանակ կատարվեց հիշյալ
մարգարեությունը: «Սեսիա»
բառը նշանակում է «Օծյալ»:
Ք.հ. 27-ի աշնանը Քրիստոսը
մկրտվեց Հովհաննեսի կողմից և
օծվեց Սուրբ Հոգով: Պետրոս
առաքյալը վկայում է, որ
«Հիսուսին, որ Նազարեթից է...
Աստված Սուրբ Հոգով և

գորությունով օձեց» (Գործք
10.38): Եվ Փրկիչն ինքն էլ
ասաց. «Տիրոջ Յոզիս ինձ վրա
է, որի համար էլ օձեց ինձ, նա
ինձ ուղարկել է աղքատներին
ավետարանելու» (Ղուկաս
4.18): Սկրտվելուց հետո նա
գնաց Գալիլեա՝ «քարոզելով
Աստծո թագավորության
ավետարանը և ասելով, թե
ժամանակը կատարվել է»
(Մարկոս 1.14,15):

«Եվ նա պիտի գորացնի ուխտը
շատերի համար մեկ յոթնյակ»:
Այստեղ նշված «յոթնյակը»
յոթանասուկից վերջինն է: Դա

հրեաներին հատկացված
վերջին յոթ տարիներն են: Բ.հ.
27-ից մինչև 34-ը տևող այս
ժամանակաշրջանի ընթացքում
Քրիստոսը՝ սկզբում անձամբ,
իսկ հետո իր աշակերտների
միջոցով, ավետարանի
հրավերն ուղղեց հատկապես
հրեաներին: Երբ առաքյալները
դուրս եկան հռչակելու
արքայության բարի լուրը,
Փրկիչը նրանց պատվիրեց.
«Յեթանոսների ճանապարհը
չգնաք և սամարիացիների
քաղաքը չմտնեք, այլ ավելի
շուտ գնացեք Իսրայելի տան

կորած ոչխարների մոտ»
(Մատթեոս 10.5, 6):

« Յոթնյակի կեսին պիտի
դադարեց նի զոհը և
պատարագը»: Բ.հ. 31 - ին՝ իր
մկրտությունից երեքուկես
տարի անց, մեր Տերը խաչվեց:
Գող-գոթայի վրա բերված մեծ
զոհը [328] վերջ դրեց
զոհաբերությունների
համակարգին, որը չորս հազար
տարի մատնացույց էր արել
Աստծո Գառանը: Խորհրդանիշը
հանդիպեց իրականությանը,
որից հետո ծի-սական
համակարգի բոլոր

գոհաբերություններն ու
պատարագները պետք է
դադարեին:

Յոթանասուն շաբաթները կամ
490 տարիները, որ տրված էին
հա-տուկ հրեաների համար,
ավարտվեցին, ինչպես
տեսանք, Բ.հ. 34-ին: Այդ
ժամանակ, հրեական ատյանի
որոշմամբ, ազգը կնքեց
ավետարանի իր մերժումը՝
Նահատակելով Ստեփանոսին և
հալածելով Բրիստոսի
հետևորդներին: Փրկության
լուրը, որն այլևս չպիտի
սահամանափակվեր ընտրյալ

ազգոյ, դրանից հետո
հռչակվեց աշխարհին:
Յալաճանքի պատճառով
աշակերտները ստիպված
փախան Երուսաղեմից և «ման
էին գալիս՝ խոսքն
ավետարանելով»: «Փիփպպոսն
իջավ Եամարիայի մի քաղաք և
Քրիստոս քարոզեց նրանց»:
Աստճո առաջնորդությամբ
Պետրոսը բարի լուրը հայտնեց
Կեսարիայի հարյուրապետին՝
աստվա- ծավախ Կոռնելիոսին,
իսկ կրակոտ Պողոսը,
հավատալով Քրիստոսին,
պատվեր ստացավ բարի լուրը
տանելու «հեռու

հեթանոսների» (Գործք 8.4, 5, 22.21):

Մինչև այստեղ
մարգարեությունն իր բոլոր
մանրամասներով
զարմանալիորեն կատարվել է,
և այլևս կասկած չկա, որ
յոթանասուն շաբաթների
սկիզբը Ք.ա. 457-ն է, իսկ դրանց
վերջը՝ Ք.հ. 34-ը: Ունենալով
սկզբնակետը՝ դժվար չէ որոշել
նաև, թե երբ են վերջանում
2300 օրերը: Երբ յոթանասուն
յոթնյակը՝ 490 օրերը, կտրում
ենք 2300 օրերից, դեռևս մնում
են 1810 օրեր: 490 օրերի

վերջնակետից պետք է հաշվել
1810 օրերը: 1810 տարիները՝
սկսած ք.հ. 34-ից, ձգվում են
մինչև 1844 թվականը:
Չետեաբար, Դանիել 8.14-ի 2300
օրերն ավարտվում են 1844-ին:
Մար-գարեական այս մեծ
ժամանակահատվածի
ավարտից հետո, Աստծո
հրեշտակի վկայութան
համաձայն, «սրբարանը պիտի
արդարանա»: Այսպիսով,
հստակորեն նշվել է սրբարանի
մաքրման ժամանակը, որը
գրեթե բոլորի կարծիքով պիտի
տեղի ունենար երկրորդ
գալստյան պահին:

Միլլերն ու նրա համախոհները սկզբում կարծում էին, թե 2300 օրերն ավարտվելու են 1844-ի գարնանը, մինչդեռ մարգարեությունը [329] նշում է այդ տարվա աշունը: Այս սխալ պատկերացումը հիասթափեցրեց ու շփոթեցրեց նրանց, ովքեր ավելի շուտ էին սպասում Տիրոջ գալստյանը: Բայց սա ոչ մի կերպ չի նվազեցնում այն փաստարկի ուժը, որի համաձայն 2300 օրերն ավարտվել են 1844-ին, և որ այդ թվականին սրբարանի մաքրմամբ խորհրդանշված մեծ

իրադարձութիւնը պետք է
տեղի ունենար:

Քննելով Սուրբ Գրքը՝
ապացուցելու համար, որ այն
Աստծո հայտ-նութիւնն է,
Միլլերը սկզբում
պատկերացում անգամ չունէր,
որ կգա այդպիսի
եզրակացութեան: Նա անձամբ
դժվարանում էր հավատալ իր
իսկ հետազոտութեան
արդիւնքին: Բայց Սուրբ Գրքի
վկայութիւնը չափից ավելի
հստակ ու ծանրակշիռ էր
անտեսելու համար:

Նա երկու տարի նվիրել էր
Աստվածաշնչի
ուսումնասիրությանը, երբ 1818
թվականին եկավ այն
հանդիսավոր համոզմանը, որ
մոտ քսանհինգ տարի հետո
Քրիստոսը գաղու է՝ փրկելու իր
ժողովրդին: «Կարիք չկա,—
ասում է Միլլերը,— խոսելու այն
ուրախության մասին, որով
լցվում է սիրտս, երբ խորհում
եմ այն հրաշ ափ ապագայի
կամ փրկվածների ցնծությանը
մասնակից լինելու՝ հոգուս
այրող փափագի մասին:
Աստվա-ծաշունչն ինձ համար
նոր գիրք էր հիմա: Դա իրոք

մտքի տոն էր. այն ամենն, ինչ
մութ էր, խորհրդավոր ու
անհասկանալի Սուրբ Գրքում,
իմ մտքից չքացավ այն ջինջ
լույսի ներքո, որ հիմա շողում
էր նրա սրբազան էջերից: Օ՛,
ի՛նչ պայծառ ու փառավոր էր
ճշմարտությունը: Բոլոր
հակասությունները, որ
նախկինում տեսնում էի խոսքի
մեջ, չքացել էին, ու թեև կային
շատ տեղեր, որոնց
նշանակությունը դեռ լիովին
չէի հասկացել, սուրբ էջերից
այնքան լույս էր ճառագում՝
լուսավորելով մինչ այդ
խավարած իմ միտքը, որ ես

սկսեցի Սուրբ Գիրքն
ուսումնասիրել շատ ավելի մեծ
հաճույքով» (Ս. Բլիս, Ուիլյամ
Միլլերի հուշագրությունները,
Էջ 76, 77):

«Չանդիսավոր այն
համոզմունքով, որ Սուրբ
Գրքում կանխասված այդպիսի
կարևոր իրադարձությունները
կարճ ժամանակամիջոցում
կատարվելու են, ես խորապես
գիտակցեցի իմ [330] պարտքը
աշխարհի առջև» (Նույն տեղում
Էջ 81): Նա չէր կարող
չհասկանալ, որ պարտավոր էր
ուրիշներին վտխանցել իր

ստացած լույսը: Նա գիտեր, որ
ամբարիշտներն ընդդիմանալու
են իրեն, բայց համոզված էր, որ
Փրկչին հանդիպելու հույսը
ցնծությամբ կլցնի բոլոր
քրիստոնյաներին, ովքեր
սիրում են Նրան: Նա միայն
վախենում էր, որ իրենց ստջե
ռենենալով այդ վերահաս
փառավոր փրկությունը,
շատերը կընդունեն ուսմունքը՝
ստանց Աստվածաշունչը
բավականաչափ քննելու և այդ
ճշմարտության ապացույցները
գտնելու: Ուստի նա
տատանվում էր ներկայացնել
այն, որպեսզի հանկարծ

սխալված չփնի և մոլորեցնի
Նաև ուրիշներին: Այսպիսով, Նա
դրդվեց կրկին վերանայելու այն
վկայությունները, որոնք
հաստատում էին իր
եզրակացությունները, և
զգուշորեն վերլուծելու
դժվարըմբռնեփ տեղերը: Նա
համոզվեց, որ բոլոր
հակասություններն
անհետանում են Աստծո խոսքի
լույսի ներքո, ինչպես մշուշն՝
արեփ շողերից: Այսպես անցած
հինգ տարիները նրան փոփին
համոզեցին, որ իր
դիրքորոշումը ճիշտ է:

Եվ հիմա նա նոր ուժով զգաց իր պարտքը՝ ուրիշներին հայտնելու այն, ինչի մասին, իր կարծիքով, այդպես հստակորեն վկայում էր Սուրբ Գիրքը: «Երբ ես զբաղված էի իմ գործով,— ասել է նա,— ականջներիս մեջ շարունակ զրնգում էր. «Գնա և աշխարհին պատմիր, որ նրան վտանգ է սպստնում»: Այս խոսքերն անդադար մտքիս մեջ էին. «Երբ ես ամբարշտին ասեմ. Ով ամբարիշտ, դու անպատճառ պիտի մեռնես, և դու չասես ամբարշտին՝ իր ճանապարհից զգուշացնելու համար, այն ամբարիշտը

Կմեռնի իր անօրենություն
համար, բայց նրա արյունը քո
ձեռքից կպահանջեմ: Իսկ եթե
դու զգուշացնես ամբարշտին,
որ իր ճանապարհից հետ
դառնա, բայց նա հետ չդառնա,
նա իր անօրենություն համար
կմեռնի, իսկ դու ազատած
կլինես քո անձը» (Եզեկիել
33.8,9): Ես զգում էի, որ եթե
ամբարիշտներն ինչպես հարկն
է զգուշացվեն, նրանցից
շատերը կապաշխարեն, իսկ
եթե չզգուշացվեն, նրանց
արյունն ինձնից կպահանջվի»
(Ս. Բլիս, Ուիլյամ Միլլերի
հուշագրությունները, Էջ 92):

Նա սկսեց իր հայացքները
ծածուկ ներկայացնել
մարդկանց՝ աղոթելով, որ
եկեղեցու որևէ ծառայող դրանց
կարևորությունը գիտակցեր ու
տարածեր դրանք: Սակայն նա
[331] չկարողացավ վանել այն
միտքը, որ անձամբ է
պարտավոր նախազգուշացնել
մարդկանց: Նրա մտքում
շարունակ կրկնվում էին այս
խոսքերը. «Գնա և այդ մասին
պատմիր աշխարհին, եթե ոչ՝
Նրանց արյունը քո ձեռքից եմ
պահանջելու»: Նա սպասեց ինը
տարի՝ այդ ծանր բեռն իր հոգու

վրա, մինչև որ 1831 թվականին
առաջին անգամ հրապարակավ
ներկայացրեց իր
համոզմունքները:

Ինչպես եղիսեն կանչվեց
մարգարեական ծառայության,
երբ դաշ-տում եզներով վար էր
անում, այնպես էլ Ուիլյամ
Միլլերը կանչվեց՝ թողնելու իր
գութանը և մարդկանց
հայտնելու Աստծո
արքայության գաղտնիքները:
Նա սարսուռով անցավ գործի՝
իր ունկնդիրներին
մար-գարեական
ժամանակահատվածներով

քայլ առ քայլ առաջնորդելով
մինչև Քրիստոսի երկրորդ
գալուստը: Ամեն մի ջանքը
նրան ուժ ու քաջություն էր
հաղորդում, երբ նա տեսնում
էր, թե իր խոսքերն ինչ մեծ
հե-տաքրքրություն են
առաջացնում ամենուրեք:

Միայն իր եղբայրների
խնդրանքով էր, ում խոսքերում
լսելով Աստծո կոչը՝ Միլլերը
համաձայնեց հրապարակավ
ներկայացնել իր հայացքները:
Այդ ժամանակ նա հիսուն
տարեկան էր, հրապարակային
ելույթներին անսովոր, և

Ճնշվում էր այն մտքից, որ
պիտանի չէ իրենց սպասվող
գործի համար: Բայց հենց
սկզբից նրա ջանքերը
զարմանալիորեն օրհնը—
վեցին՝ ի փրկություն հոգիների:
Նրա առաջին
դասախոսությանը հետևեց
կրոնական մի զարթոնք, որում
տասներեք ընտանիք,
բացառությամբ երկու հոգու,
դարձի եկան: Նրան
անմիջապես խնդրեցին այլ
տեղերում էլ քարոզել, և գրեթե
ամենուրեք նրա ջանքերը
պսակվում էին Աստծո գործի
վերածնունդով: Սեղավորները

դարձի էին գալիս,
քրիստոնյաներն ավելի
նվիրված էին դառնում, իսկ
դեիստներն ու անհավատները
սկսում էին ընդունել
Աստվածաշնչի և
քրիստոնեական կրոնի
ճշմարտացիությունը: Ահա թե
ինչ էին վկայում մարդիկ, ում
հետ Միլլերն աշխատում էր.
«ՆԼԱ շահում է այնպիսիների,
ովքեր ուրիշների
ազդեցությանը չեն
ենթարկվում» (ՆՈԼՅՆ տեղում, Էջ
138): Նրա քարոզչությունը
նպատակ ուներ արթնացնելու
հասարակության միտքն`

ընկալելու կրոնի մեծ
սկզբունքները և կանխելու
դարաշրջանի աճող
աշխարհայնությունն ու
ցանկասիրությունը: Գրեթե
ամեն քաղաքում տասնյակ,
որոշներում էլ հարյուրավոր,
մարդիկ էին դարձի գալիս Նրա
քարոզչության արդյունքում:
Շատ տեղերում համարյա [332]
բոլոր հարանվանությունների
բողոքական եկեղեցիներն
իրենց դռները բացում էին Նրա
առջև, և սովորաբար մի քանի
համայնքների ծառայողներ
Նրան հրավիրում էին
աշխատանքի: Նրա անփոփոխ

սկզբունքն էր՝ չաշխատել
այնտեղ, ուր իրեն չէին
հրավիրի, սակայն նա շուտով
տեսավ, որ անկարող էր
բավարարել իր վրա տեղացող
խնդրանքների կեսն անգամ:
Ճատերը, ովքեր չէին ընդունում
նրա հայացքները երկրորդ
գալստյան ճշգրիտ ժամանակի
վերաբերյալ, հա-մոզվեցին, որ
Քրիստոսի գալուստը շատ մոտ
է, և որ իրենք կարիք ունեն
պատրաստվելու: Որոշ մեծ
քաղաքներում նրա
ծառայությունը խոր
տպավորություն թողեց:
Գինեվաճառները թողնում էին

առևտուրը և իրենց
խանութները վերածում
ժողովարանների, խաղատները
փակվում էին, վերափոխվում
էին անհավատները,
դեհատները, ունիվերսափաստ—
ները և նույնիսկ ամենալկտի
անառակները, որոնցից ոմանք
երկար տարիներ եկեղեցի չէին
մտել: Գրեթե ժամը մեկ շատ
հարանվանություններ աղոթքի
ժողովներ էին անցկացնում
քաղաքի տարբեր
թաղամասերում,
գործարարները կեսօրին
հավաքվում էին աղոթելու և
փառաբանելու Աստծուն:

Մուլեռանդ գրգռվածության
հետք անգամ չկար, ամենուրեք
հանդիսավոր մթնոլորտ էր
տիրում: Նրա գռռոճը, ինչպես և
վաղ բարե— նորոգիչներինը,
ավելի շուտ նախատեսված էր
միտքը համոզելու և խիղճը
աբթնաց նելու համար, քան
պարզապես զգացմունքներ
գրգռելու:

1833-ին Միլլերը քարոզելու
թույլտվություն ստացավ
բապտիստա-կան եկեղեցուց,
որի անդամն էր ինքը: Իր
հարանվանության շատ
ծա-ռայողներ են հավանություն

տվեցի ն նրա գործին, և նրանց
փազորությամբ էր հենց, որ նա
շարունակեց իր գործը: Նա
անդադար ճանապարհորդում
էր և քարոզում, թեև նրա
անձնական գործունեությունը
հիմնականում
սահմանափակվում էր Նոր
Անգլիայով և հյուսիս-արեելյան
Նահանգներով: Մի քանի տարի
իր ծախսերը նա հոգում էր
անձնական միջոցներով, և
հետագայում էլ երբեք
բավականաչափ գումար
չստացավ իր ծախսերի համար՝
ճամփորդելու այն վայրերը, ուր
իրեն հրավիրում էին:

Այսպիսով, նրա
հասարակական
գործունեությունը՝ շատ հեռու
դրամական շահույթ բերելուց,
մեծ բեռ էր նրա ունեցվածքի
վրա, որը նրա կյանքի այս
ժամանակաշրջանում
աստիճանաբար նվազում էր:
Նա մեծ ընտանիքի հայր էր,
բայց քանի որ նրա անդամները
խնայող և աշխատասեր էին,
նրա ագարակն ապահովում էր
ինչպես ընտանիքի, այնպես էլ
իր ծախսերը: [333]

1833-ին՝ երկու տարի անց այն
բանից, երբ Միլլերը սկսեց

հռչակել Քրիստոսի մոտալուստ գալստյան վկայությունները, երևաց Փրկչի խոս-տացած նշաններից վերջինը: Հիսուսն ասել էր. «Աստղերը վայր կընկնեն երկնքից» (Մատթեոս 24.29): Եվ Հովհաննեսը, երբ նրան տեսիլքում ցույց արվեցին Աստծո օրն ազդարարող տեսարանները, Հայտնության մեջ գրում է. «Եվ երկնքի աստղերը թափվեցին երկրի վրա, ինչպես թզենին իր խակ պտուղն է թափում՝ սաստիկ քամուց շարժված» (Հայտնություն 6.13): Այս մարգարեությունն ապշեցուցիչ

և տպավորիչ ճշգրտությամբ
իրականացավ 1833 թ.
Նոյեմբերի 13-ի երկնաքարային
անձրևի ժամանակ: Դա ընկնող
աստղերի երբևէ
արձանագրված
ամենալայնատարած և
զարմանահրաշ տեսարանն էր:
«Սիացյալ Նահանգների
ամբողջ երկինքը ժամեր
շարանակ լուսավորված էր
բոցեղեն հրավառությամբ: Այս
երկրում իր հիմնավորման օրից
ի վեր նման երկնային երևույթ
դեռ երբեք չէր եղել, որը ոմանք
դիտեին մեծագույն
հիացմունքով, մյուսներն՝

անասեփ սարսավապտ
տագնապով»։ Դրա
վեհությունն ու ահագո՞ւ
գեղեցկությունը դեռ մնացել են
շատերի հիշողության մեջ...
Երբեք անձրեն այդքան
հորդառատ չի եղել, որքան
Երկնաքարերի այդ տարափը։
Արևելքում, արևմուտքում,
հյուսիսում և հարավում՝
ամենուրեք նույնն էր։ Մի
խոսքով՝ ողջ երկինքն ասես
շարժման մեջ էր... Այս
երևույթն, ինչպես
Նկարագրված է պրոֆեսոր
Սիլվիմանի «Ջորնալ»
ամսագրում, տեսել են ամբողջ

Յյուսիսային Ամերիկայում...
Կատարելապես ջինջ ու անամպ
երկնքում գիշերվա ժամը
երկուսից մինչև լուսաբաց
Նկատվել է շլացնող ու
բոցավառ լուսատուների
չընդհատվող խաղը» (Ռ. Մ.
Դևենս, Ամերիկյան
առաջընթաց կամ Մեծագույն
դարաշրջանի մեծ
իրադարձությունները, գլ. 28.
պարբ. 1-5):

«Ոչ մի լեզու, հիրավի, չի կարող
պատկերել այդ վեհաշուք
տեսա-րանը... ոչ ոք, եթե
ականատես չի եղել դրան, չի

կարող պատկերացնել անգամ
դրա փառքը: Ամբողջ
աստղային երկինքն ասես
հավաքված լիներ մի կետում՝
զենիթի մոտ, որտեղից
հազարավոր աստղեր
միաժամանակ, իրար հետևից,
կայծակի արագությամբ
կրակում էին դեպի հորիզոնի
բոլոր կողմերը, բայց չէին
սպառվում, ասես ստեղծված
փնեին այդ դեպքի համար» (§.
Ռիդ, «Christian Advocate and
Journal»—ում, 13 դեկտեմբերի,
1833 թ.): «Ավելի [334] դիպուկ
պատկեր, քան սաստիկ քամուց
իր պտուղները թափող թզենին,

հնարավոր չէր գտնել»
(Փորթլենդի երեկոյան գովազդ,
26 նոյեմբերի, 1833 թ.):

Նյու-Յորքի «Journal of
Commerce»—ի 1833 թ.
նոյեմբերի 14-ի համարում այս
արտասովոր երևույթի
վերաբերյալ մի մեծ հոդված
տպա- գրվեց, որում գրված էր.
«Ոչ մի փիլիսոփա կամ
գիտնական, իմ կարծիքով,
երբևէ չի պատմել կամ գրել մի
դեպքի մասին, ինչպիսին տեղի
ունեցավ երեկ առավոտյան:
Բայց տասնութ դար առաջ
մարգարեն ճշտորեն կանխասել

Է դա, եթե, իհարկե, աստղերի
թափուկը հասկանանք
տառացիորեն՝ բուն իմաստով»:

Այսպես կատարվեց Յիսուսի
գալստյան նշաններից վերջինը,
որի վերաբերյալ Նա իր
աշակերտներին պաավիրել էր.
«Երբ որ այս ամենը տեսնեք,
իմացեք, որ մոտ է՝ դռներին»
(Մատթեոս 24.33): Այս
նշաններից հետո Յովհաննեսը
տեսավ հաջորդ մեծ
իրադարձությունը. «Երկինքը
տեղից քաշվում էր գալարվող
գրքի պես», հետո «մեծ
երկրաշարժ եղավ», «բոլոր

լեռներն ու կղզիները
շարժվեցին իրենց տեղից», և
ամբարիշտները սարսափահար
փախան մարդու Որդու
ներկայությունից
(Յայտնություն 6.12-17):

Աստղային անձրևի
ականատեսներից շատերը դա
վերահաս դա-տաստանի
ազդանշան համարեցին, որպես
Տիրոջ «մեծ և ահավոր օրվա
սուկալի նախապատկեր,
անկասկածելի
նախազգուշացում և գթության
նշան» (Փորթլենդի Երեկոյան
գովազդ, 26 նոյեմբերի, 1833

թ.): Այսպիսով, մարդկանց
ուշադրությունն ուղղվեց դեպի
մարգարեության
իրականացումը, և շատերն
ընդունեցին երկրորդ գալստյան
վերաբերյալ
նախազգուշացումը:

1840 թ. մի ուրիշ ցնցող
մարգարեություն կատարվեց՝
առաջացնելով մեծ
հետաքրքրություն: Երկու տարի
առաջ Ջոսայա Լիթչը՝ երկրորդ
գալստյան մասին առաջատար
քարոզիչներից մեկը.
Հայտնություն 9-րդ գլխի՝ իր
մեկնաբանության մեջ

կանխատեսել էր Օսմանյան
կայսրության անկումը: Ըստ
Նրա հաշվարկների՝ այդ
իշխանությունը պետք է
տա-պալվեր «մոտավորապես
Ք.հ. 1840 թ. օգոստոս ամսին»,
իսկ մի քանի օր առաջ՝
Նախքան դա կկատարվեր, Նա
գրել է. «Ընդունելով, որ
առաջին ժամանակահատվածը՝
150 տարիները, ստույգորեն
լրացել են մինչև Դրագագեսի
գահակալելը՝ թուրքերի
թուլլտվությունամբ, ուրեմն 391
տարիներն ու տասնհինգ
օրերը, որ սկսվել են առաջին
ժամա-նակահատվածի

վերջում, կավարտվեն 1840 թ.
օգոստոսի 11-ին, երբ կարելի է
սպասել Օսմանյան
իշխանության [335]
տապալումը
Կոստանդնուպոլսում: Եվ ես
հավատում եմ, որ հենց այդպես
էլ կլինի» (Ջոսայա Լիթչ,
«Ժամանակի նշաններ կամ
Մարգարեության մեկնաբան»,
1 օգոստոսի, 1840):

Ճիշտ ժամանակին, ինչպես
նշվել էր, Թուրքիան իր
դեսպանների միջոցով
ընդունեց Եվրոպայի դաշնակից
տերությունների պաշտպանու-

թյունը և հանձնվեց
քրիստոնեական ազգերի
վերահսկողութեանը: Այդ
իրադարձութիւնը հաստատեց
կանխատեսումը: Երբ սա
հայտնի դարձավ, շատերը
համոզվեցին, որ Միլլերի ու
Նրա համախոհների որդեգրած
մարգարեական
մեկնաբանութեան
սկզբունքները ճիշտ են, և
ադվենտիստական շարժումը
մեծ թափ սաավ: Ուսյալ ու
պաշտոնյա մարդիկ միացան
Միլլերին՝ քարոզելով ու
տպագրելով Նրա հայացքները,

և 1840-ից մինչև 1844-ը գործն
արագորեն ընդլայնվեց:

Ուիլյամ Միլլերը մտավոր մեծ
ունակություն ուներ՝
վարժեցված մտորումներով և
ուսումնասիրությամբ, և նա
դրանց ավելացրեց նաև երկնքի
իմաստությունը՝ միանալով
իմաստության Աղբյուրի հետ:
Նա բացառիկ արժևնիքների
տեր մարդ էր. և պարզապես չէր
կարող հարգանք չներշնչել
այնտեղ, ուր գնահատվում էին
բնավորության ազնվությունն
ու ստաքինությանը: Սրտի
անկեղծ բարությունը

զուգակցելով քրիստոնեական
խոնարհության ու
ինքնատիրապետման հետ՝ նա
ուշադիր ու սիրալիր էր բոլորի
հանդեպ և պատրաստ՝ լսելու
այլոց կարծիքներն ու
կշռադատելու նրանց
փաստարկները: Առանց
մոլուցքի և հուզմունքի՝ նա
բոլոր տեսություններն ու
ուսմունքները ստուգում էր
Աստծո խոսքով, և նրա առողջ
դատողությունն ու Սուրբ Գրքի
խոր իմացությունը օգնում էին
նրան՝ հերքելու մոլորությունը
և մերկացնելու կեղծիքը:

Չնայած դրան՝ նրա
գործունեությունը ծավալվում
էր ոչ առանց կա-տաղի
ընդդիմության: Ինչպես վաղ
շրջանի բարենորոգիչների
ժամանակ, նրա ներկայացրած
ճշմարտությունները նույնպես
չընդունվեցին կրոնի
ճանաչված ուսուցիչների
կողմից: Եվ քանի որ անկարող
էին իրենց կարծիքները
հաստատել Աստվածաշնչով,
նրանք ստիպված դիմում էին
մարդկանց ասույթներին և
ուսմունքներին, հայրերի
ավանդություններին: Սակայն
միակ վկայությունը, որն

ընդունում էին ադվենտիստ
քարոզիչները, Աստծո խոսքն
էր: «Աստվածաշունչը, և միայն
Աստվածաշունչը», սա էր
Նրանց նշանաբանը: Նրանց
հակառակորդներն
աստվածաշնչյան
փաստարկների պակասը
լրացնում էին ծաղրով ու
ծիծաղով: Ժամանակ, միջոցներ
ու տաղանդներ չէին խնայում
Նրանց զրպարտելու համար,
ուն [336] միակ հանցանքն այն
էր, որ ուրախու-թյամբ
սպասում էին իրենց Տիրոջ
վերադարձին՝ ջանալով սուրբ
կյանք վարելե ուրիշներին

հորդորել՝ պատրաստվելու Նրա
գալստյանը:

Լուրջ ջանքեր էին թափվում
մարդկանց մտքերը երկրորդ
գալստյան թեմայից շեղելու
համար: Այնպես արին, որ
Քրիստոսի գալստյան և
աշ-խարհի վախճանի
վերաբերյալ
մարգարեությունների
ուսումնասիրու-թյունը մեղք
թվա, ինչից մարդիկ պիտի
ամաչեն: Այսպես հանրաճանաչ
հոգևորականները խորտակում
էին հավատն Աստծո խոսքի
հանդեպ: Նրանց ուսմունքը

մարդկանց անհավատ էր
դարձնում, և շատերն
ազատութիւն ստացան
հետևելու իրենց ամբարիշտ
կրքերին: Իսկ հետո չարիքի
հեղինակներն այդ ամենի
մեղքը բարդեցին
ադպենախսաների վրա:

Խելամիտ և ուշադիր
ուսկնդիրներ գրավելով
բազմամարդ տներում՝ Միլլերի
անունը, սակայն, հազվադեպ
էր հիշատակվում կրոնական
մա-մուլում, այն էլ՝ միայն
ծաղրանքով ու մեղադրանքով:
Անհոգներն ու

ան-աստվածները, կրոնական
ուսուցիչների բռնած դիրքից
քաջացած, դիմում էին
վիրավորական պիտակների,
ստոր ու հայիոյից կատակների՝
ջանալով վարկաբեկել նրան և
նրա գործը: ճերմակահեր այրը,
ով թալել էր իր հարմարավետ
տունը՝ ճամվտրդելու քաղաքից
քաղաք և գյուղից գյուղ,
անդադար չարչարվելով,
որպեսզի հայտնի աշխարհին
մոտալուստ դատաստանի
հանդիսավոր
նախազգուշացումը,
արհամարհաբար մեղադրվեց

որպես մուլեռանդ, մուլորեցուցիչ
և խաբեբա:

Նրա վրա տեղացող ծաղրանքը,
կեղծիքն ու վիրավորանքը
վրդով-մուկնքի և բողոքի ալիք
բարձրացրին նույնիսկ
աշխարհիկ մամուլում:
«Սոսկալի հետևանքներ
ունեցող նման վեհ ու
փառապանծ թեմային»
վերաբերվել թեթևամտորեն ու
լկտիաբար՝ աշխարհիկ
մարդկանց
հայ-տարարությամբ
նշանակում էր՝ «ծաղրելուց
միայն նրա ջատագովների ու

պաշտպանների զգացումները»,
այլև կատակի վերածել
«դատաստանի օրը, ծաղրել
հենց իրեն՝ Աստծուն և Նրա
դատաստանի
ահավորությունը» (Ս. Բլիս,
Ուիլյամ Միլլերի
հուշագրությունները, էջ 183):

Ամեն չարիքի սադրիչը ջանում
էր ոչ միայն չեզոքացնել
գալստյան լուրի
ագդեցությունը, այլ նաև
ոչնչացնել անձամբ լրաբերին:
Սիրերն աշխատում էր իր
ունկնդիրների մտքում դրոշմել
սուրբգրային ճշմար-տության

գործնական կիրառությունը՝
հանդիմանելով նրանց մեղքերն
ու [337] ցնցելով նրանց
ինքնագոհությունը, և նրա
պարզ ու կտրուկ խոսքերը
բորբոքում էին նրանց
թշնամությունը: Եկեղեցու
անդամների ընդ-դիմությունը
Նրա պատգամի հանդեպ ստոր
մարդկանց հանդուգն դարձ-րեց
ավելի հեռուն գնալու, և
թշնամիները դավեր նյութեցին
սպանելու նրան, երբ նա
հեռանար ժողովարանից: Բայց
սուրբ հրեշտակներ կային
ամբոխի մեջ, և նրանցից մեկը
տղամարդու կերպարանքով

բռնեց Տիրոջ այս ծառայի ձեռքը
և նրան անվտանգ դուրս բերեց
զայրացած ամբոխի միջից:
Նրա գործը դեռ ավարտված
չէր, և սատանան ու նրա
գործակալները հիսաթափված
էին, որ իրենց ծրագիրը
խափանվեց:

Չնայած այդ ողջ
ընդդիմութեանը՝
հետաքրքրութունն
ադվենտիստական շարժման
նկատմամբ շարունակում էր
աճել: Տասնյակ կամ
հարյուրավոր անդամներից
համայնքներն աճում էին մինչև

հազարներ: Տարբեր
եկեղեցիներ բազմաթիվ
մարդկանցով համալրվեցին,
բայց որոշ ժամանակ անց
ընդդիմութեան ոգին դրսևորվեց
անգամ այդ նորադարձ ների
դեմ, և եկեղեցիները սկսեցին
պատժամիջոցներ կիրառել
Նրանց նկատմամբ, ովքեր
ընդունել էին Միլլերի
հայացքները: Ի պատասխան՝
Նա նամակներ ուղարկեց բոլոր
հարանվանությունների
քրիստոնյաներին՝
պահանջելով, որ եթե իր
ուսմունքը կեղծ է, թող իր

սխալը հիմնավորեն
Աստվածաշնչով:

«Այն, ինչին որ մենք
հավատացել ենք,— ասել է նա,—
մեզ չի պատվիրել հավատալ
Աստծո խոսքին, որը ինքներդ էլ
համարում էք մեր հավատի ու
վարքի միակ կանոնը: Ինչո՞վ
ենք մենք արժանացել այդչափ
թուևոտ մեղադրանքների
ամբիոններից ու մամուլից, և
ի՞նչ առիթ ենք տվել ձեզ, որ
մեզ՝ ադվենտիստներին,
վտարում էք ձեր եկեղեցիներից
և ընկերակցությունից»: «Եթե
մենք սխալվում ենք, խնդրեմ,

ցույց տվեք մեր սխալները:
Աստծո խոսքից մեզ ցույց տվեք,
որ մենք մոլորված ենք: Սեզ
արդեն բավականաչափ ծաղրել
են, բայց դա երբեք չի համոզի
մեզ, որ սխալ ենք: Միայն
Աստծո խոսքը կարող է փոխել
մեր հայացքները: Մեր
եզրակացությունները մենք
արել ենք մտածված կերպով և
աղոթքով՝ տեսնելով
ապացույցները Սուրբ Գրքում»
(Նույն տեղում, էջ 250,252):

Դարեր ի վեր իր ծատաների
միջոցով ուղարկված Աստծո
Նախազգուշացումներն

ընդունվել են Նայն
կասկածամտությամբ ու
անհավատությամբ: Երբ մինչ
ջրհեղեղյան աշխարհի
անօրենությունը [338] Նրան
դրո՞ւց ջրհեղեղով սրբել երկիրը,
մինչ այդ Նա մարդկանց
հայտնեց իր մտադրությունը՝
հնարավորություն տալով
Նրանց հետ դառնալ իրենց չար
ճանապարհներից: Հարյուր
քսան տարի շարունակ Նրանց
ականջներում հնչում էր
ապաշխարության կոչը,
որպեսզի Աստծո զայրույթը
չկործանի Նրանց: Բայց այդ
լուրը Նրանց անմիտ հեքիաթ էր

թվում, և նրանք չհավատացին
դրան: Ամբարիշտ
հանդգնությամբ նրանք
ծաղրեցին Աստծո լրաբերին,
նրա խնդրանքներն
արհամարհեցին և նույ-նիսկ
մեղադրեցին նրան
մեծամտության մեջ: Ինչպե՞ս է
մի մարդ հա-մարձակվում
հակառակվել երկրի բոլոր մեծ
մարդկանց: Եթե Նոյի լուրը
ճիշտ է, ինչո՞ւ ամբողջ
աշխարհը չի տեսնամ դա և չի
հավատում դրան: Մեկ մարդու
կարծիքն ընդդեմ
հազարավորների
իմաստությա՞ն: Նրանք

չկամեցան հավատալ
Նախագգուշացմանը, ոչ էլ
ուզեցին ապաստարան գտնել
տապանում:

Ճաղրողները ցույց էին տալիս
բնության երևույթները՝ տարվա
եղանակների անփոփոխ
հաջորդականությունը,
կապույտ երկինքը, որից երբեք
անձրև չէր տեղացել, գիշերային
նուրբ ցողով թարմացող կանաչ
դաշտերը՝ բացականչելով.

«Յեքիաթ չէ՞ նրա պատմածը»:

Նրանք արդարության
քարոզչին արհամարհանքով
խելացնող մուեռանդ կոչեցին և

առաջվանից ավելի մեծ
եռանդով, շարունակեցին իրենց
չար ճանապարհները՝ կուլ
գնալով զվարճություններիս:
Բայց նրանց
անհավատությունը հետ
չպահեց կանխասված
դատաստանը: Աստված երկար
հանդուրժեց նրանց
ամբարշտությունը՝ բավարար
հնարավորություն տալով
ապաշխարելու, և նշանակված
Ժամին Նրա դատաստաններն
այցելեցին իր ողորմությունը
մերժողներին:

Քրիստոսն ասում է, որ նույն
անհավատությունն էլ
դրսևորվելու է իր երկրորդ
գալստյան նկատմամբ: Ինչպես
Նոյի օրերում մարդիկ
«չիմացան, մինչև որ ջրհեղեղն
եկավ և ամենքին վեր առավ,
այնպես կլինի և մարդի Որդու
գալուստը» (Մատթեոս 24.39):
Երբ իրենց Աստծո ժողովուրդ
համարողները միանան
աշխարհին՝ ապրելով նրանց
կյանքով և նրանց հետ
մասնակցելով արգելված
զվարճություններին, երբ
աշխարհի ճոխությունը
ներթափանցի եկեղեցի, երբ

դողանջեն հար-սանյաց
զանգերը, և բոլորն
աշխարհային բարեկեցության
երկար տա-րիների սպասեն,
այդ ժամանակ հանկարծակի,
[339] երկնքից ճայթող կայծակի
պես, կգա նրանց վառ
երազանքների և խաբուսիկ
հույսերի վերջը:

Ինչպես Աստված Իր ծառային
ուղարկեց՝ նախազգուշացնելու
աշխարհը վերահաս ջրհեղեղից,
այնպես էլ Նա ընտրյալ
լրաբերներ ուղարկեց՝
հռչակելու վերջին
դատաստանի մոտիկությունը:

Եվ ինչպես Նոյի
ժամանակակիցները
ծաղրանքով մերժեցին
արդարության քարոզչի
կանխագուշակումները,
այնպես էլ Միլլերի օրերում
քրիստոնյա կոչեցյալներից
շատերը ծաղրեցին նրա
նախագուշացումները:

Իսկ ինչո՞ւ էր Քրիստոսի
երկրորդ գալստյան մասին
ուսմունքը և քարոզչությունն
այդքան անցանկալի
եկեղեցիների համար: Մինչ
Տիրոջ գալուստը
ամբարիշտներին աղետ ու

կորուստ կբերի, արդարների
հա-մար այն փ է հույսով և
ուրախությամբ: Այս մեծ
ճշմարտությունը բոլոր
դարերում Աստծո նվիրյալ
զավակների տիտիանքն է եղել,
բայց ինչո՞ւ էր այն իր
Յեղիևակի պես «գլորման քար»
և «գայթակղության վեմ»
դարձել Նրա այսպես կոչված
ժողովրդի համար: Տերն ինքն է
խոստացել իր աշակերտներին.
«Եվ եթե գնամ ու ձեզ համար
տեղ պատրաստեմ, դարձյալ
կգամ և ձեզ ինձ մոտ կառնեմ»
(Յովհաննես 14.3): Կարեկից
Փրկիչը, կանխատեսելով իր

հետևորդների միայնությունն
ու վիշտը, հրեշտակներին
հանձնարարեց մխիթարել
Նրանց՝ հավաստիացնելով, որ
Ինքն անձամբ վերադառնալու է
այնպես, ինչպես համբարձվել
էր երկինք: Երբ աշակերտները
սևեռուն հայացքով վեր էին
Նայում՝ վերջին անգամ
տեսնելու Նրան, ում սիրամ էին,
Նրանց ուշադրությունը շեղեցին
հետևյալ խոսքերը. «Ով
գալիլեացի մարդիկ, ի՞նչ եք
կանգնել և մտիկ եք անում
դեպի երկինքը, այս Չիսուսը, որ
ձեզանից վերացավ երկինք,
այսպես կգա ինչպես Նրան

տեսաք երկինք գնալիս» (Գործք
1.11): Յրեշ-տակների լուրը
կրկին բոցավառեց Նրանց
հոլյսը: Աշակերտները «մեծ
ուրախությունով ետ դառան
երուսաղեմ: Եվ ամեն
ժամանակ տաճարամ էին՝
գովելով և օրհնելով Աստծուն»
(Ղուկաս 24.52, 53): Նրանք
ուրախ էին ոչ թե նրա համար,
որ Յիսուս բաժանվել էր
իրենցից, և իրենք պետք է
ինքնուրույն պայքարեին
աշխարհի նեղությունների և
փորձությունների դեմ, այլ
որովհետև, ինչպես

հավաստիացրել էր հրեշտակը,
Նա դարձյալ պիտի գար:

Քրիստոսի գալստյան
հռչակումն այսօր էլ պետք է
ուրախալի բարի լուր լինի,
ինչպես անցյալում, երբ
հրեշտակներն [340] ավետեցին
Բեթղեհեմի հովիվներին:
Նրանք, ովքեր իսկապես սիրում
են Փրկչին, պարզապես չեն
կարող ուրախությամբ
չողջունել Աստծո խոսքի վրա
հիմնված պատգամն այն
մասին, որ Նա, ում մեջ է
կենտրոնացած հա-վիտենական
կյանքի՝ իրենց հույսը, նորից

գալիս է ոչ թե անարգվելու,
արհամարհվելու և մերժվելու,
ինչպես իր առաջին գալստյան
ժամանակ, այլ գալիս է
զորությամբ և փառքով՝ իր
ժողովրդին ազատագրելու:
Միայն նրանք չեն կամենա
Փրկչի գալուստը, ովքեր Նրան
չեն Լիրամ, և չկա ավելի
համոզիչ ապացույց, որ
Եկեղեցիները հեռացել են
Աստծուց, քան այն զայրույթն
ու թշնամությունը, որ
բորբոքվում է երկնային այս
պատգամի դեմ:

Ադվենտիստական ուսմունքն
ընդունողները գիտակցեցին
ապաշ-խարելու և Աստծո առջև
խոնարհվելու
անհրաժեշտությունը: Շատերը
երկար տատանումների մեջ էին
Քրիստոսի և աշխարհի միջև,
իսկ հիմա զգացին, որ
ժամանակն է կողմնորոշվելու:
«Հավերժությունը նրանց
արտասովոր իրականություն էր
թվում: Երկինքը մոտեցել էր
նրանց, և նրանք գիտակցեցին
իրենց մեղավորությունն Աստծո
առջև» (Ս. Բլիս, Ուիլյամ
Միլլերի հուշագրությունները,
Էջ 146): Քրիստոնյաներն

արթնացան նոր հոգևոր կյանքի
համար: Նրանք զգացին, որ
ժամանակը կարճ է, և այն, ինչ
պետք է անեին իրենց
մերձավորների համար,
հարկավոր էր անել արագ:
Երկիրը կորավ տեսադաշտից,
հավերժությունն ասես բացվեց
Նրանց առջև, և ժամանակավոր
ամեն բան, ինչը չէր
վերաբերում հոգու
հավերժական բարօրությանը
կամ կորստյանը, կորց-
րեց իր
փայլը: Աստծո Յոգին իջավ
Նրանց վրա, և նրանք մեծ
զորությամբ դիմեցին ինչպես
իրենց եղբայրներին, այնպես էլ

մեղավորներին՝
պատրաստվելու Աստծո օրվան:
Նրանց ստորյա կյանքի լրա
վկայութիւնը մշտական
հանդիմանութիւն էր եկեղեցու
ձեապաշտ ու անհավատարիմ
անդամներին, ովքեր չէին
կամենում հրաժարվել իրենց
հաճույքներից,
դրամաշահութիւնից ու
աշխարհիկ փառքի ձգտումից:
Սա էր գալստական հավատի և
Նրա քարոզիչների հանդէպ
բորբոքվող թշնամութեան ու
ընդդիմութեան պատճառը:

Երբ պարզվեց, որ
մարգարեական
ժամանակահատվածներից
բխող փաստարկներն
անհերքելի են,
հակառակորդները ջանացին
խանգարել այդ նյութի
ոտումնասիրությունը՝
սովորեցնելով, թե
մարգարեությունները կնքված
են: Այսպես բողոքականները
գնացին կաթոլիկների
հետքերով: Մինչ պապական
եկեղեցին Աստվածաշունչը
թաքցնում է ժողովրդից,
բողոքական եկեղեցիները
պնդում են, թե Սրբազան

Խոսքի մի կարևոր [341] մասը՝
հենց այն մասը, որն ի հայտ է
բերում ճշմարտություններ
հատկապես մեր օրերի
վերաբերյալ, հնարավոր չէ
հասկանալ:

Ճառայողներն ու ժողովուրդը
հայտարարեցին, թե Դանիելի և
Ջայտնության
մարգարեություններն
անհասկանալի գաղտնիքներ
են: Բայց քրիստոսն իր
աշակերտների ուշադրությունն
ուղղեց Դանիել մարգարեի այն
խոսքերի վրա, որոնք
վերաբերում էին իրենց օրերում

սպասվող
իրադարձություններին՝
ասելով. «Կարդացողը թող
հասկանա» (Մատթեոս 24.15):
Իսկ այն պնդումը, թե
Չայտնությունն անբացատրելի
գաղտնիք է, հակասում է հենց
գրքի անվանմանը. «Չիտու
Քրիստոսի հայտնությունը, որ
Աստված տվեց իր ծառաներին՝
ցույց տալու, ինչ որ շուտով
պիտի լինի... Երանելի են այս
մարգարեության խոսքերը
Կարդացողը և լսողները, և
սրանում գրվածները
պահողները, որովհետև

Ժամանակը մոտեցել է»
(Չայտնաթյուն 1.1-3):

Մարգարեն ասում է. «Երանելի է նա, ով կարդում է», ուրեմն կլինեն այնպիսիք, որ չեն կարդա, և այս օրհնությունը նրանց համար չէ: «Եվ նրանք, որ լսում են», նշանակում է՝ կան և այնպիսիք, ովքեր հրաժարվում են որևէ բան լսել մարգարեությունների մասին, և նրանց նույնպես չի վերաբերում օրհնությունը: «Եվ պահում են սրա մեջ գրվածները». շատերը չեն ուզում ընդունել Չայտնության

Նախագգուշացումներն ու
խրատները: Նման
մարդկանցից և ոչ մեկը չի
կարող հավակնել խոստացված
օրհնությանը: Բոլոր նրանք,
ովքեր ծաղրում են
հանդիսավոր կերպով արված
մարգարեություններն ու
խորհրդանիշները, ովքեր
հրաժարվում են բարեփոխել
իրենց կյանքը և պատրաստվել
մարդու Որդու գալստյանը,
կզրկվեն օրհնությունից:

Ի տես այս ներշնչյալ
վկայության՝ ինչպե՞ս են
մարդիկ համարձակ-վում

ՈԼՍՈԼԳԱՆԵԼ, թե Չայտնությունը
մարդկային հասկացողությանն
ան-մատչելի գաղտնիք է: Այն
բացահայտված գաղտնիք է,
բացված գիրք: Չայտնության
ՈԼՍՈԼՄԱՍԻՐՈԼԹՅՈՒՆԸ միտքն
ՈԼՈՂՈՒՄ Է Դանիելի
մարգա-րեություններին, և
երկունսն էլ պարունակում են
կարևորագույն խրատներ.
Աստված հայտնում է
մարդկանց աշխարհի
պատմության վերջում
սպասվող դեպքերի մասին:

Չովհաննեսին բացատրվեցին
եկեղեցու վարձառությանը

վերա-բերող խոր և ցնցող
հետաքրքրության
տեսարաններ: Նա տեսավ
Աստծո ժողովրդի վիճակը,
Նրան սպառնացող
վտանգները, Նրա պայքարն ու
վերջնական ազատագրումը:
Նա [342] գրի է առել վերջին
լուրերը, որոնք պետք է
հասունացնեն երկրի հունձքը՝
կամ որպես ցորենի խուրձեր
երկնային ամբարների, կամ էլ
որպես ցախ՝ կրակին տալու
համար: Հովհաննեսին
հայտնվել են կարևորագույն
պատգամներ՝ հատկապես
վերջին եկեղեցու համար,

որպեսզի նրանք, ովքեր
մոլորությունից կդառնան դեպի
ճշմարտությունը, տեղյակ լինեն
իրենց սպասող վտանգների և
պայքարի մասին: Ոչ ոք չպետք
է խավարում լինի երկրին
սպասվող իրադարձությունների
վերաբերյալ:

Ուրեմն ինչպե՞ս կարելի է
բացատրել այս համատարած
տգիտու-թյունը Սուրբ Գրքի այս
կարևոր մասի նկատմամբ:
Ինչո՞ւ են մարդիկ վարանում
քննել դրա ուսմունքը: Դա
խավարի իշխանի համառ
ջանքերի հետևանքն է՝

մարդկանցից թաքցնել այն,
ինչը մերկացնում է նրա
խաբեությունները: Դրա համար
էլ Քրիստոսը՝ Յայտնության
հեղինակը, կանխատեսելով
այս գրքի ուսումնասիրության
դեմ մղվող պայքարը,
օրհնություն է խոստացել
բոլորին, ովքեր կկարդան,
կլսեն և կկատարեն
մարգարեության խոսքերը:

ԳԼՈՒԽ 19—ԼՈՒՅՍ՝ ԽԱՎԱՐԻ ՄԵՉ

լկատված զարմանալիորեն
միակերպ է գործում երկրում
դարեդար ընթացող ամեն մի
մեծ բարեփոխման կամ
կրոնական շարժման
ժա-մանակ: Նա մարդկանց հետ
միշտ միևնույն սկզբունքներով
է վարվում: Ներկայիս կարևոր
շարժումներն իրենց
զուգահեռներն ունեն
անցյալում, իսկ եկեղեցու
անցյալ դարերի
փորձառությունը շատ
արժեքավոր դասեր է

պարունակում մեր օրերի
համար:

Ոչ մի ճշմարտություն այնքան
հստակորեն ներկայացված չէ
Աստվածաշնչում, որքան այն,
որ Աստված է իր Սուրբ Հոգով
հատուկ կերպով ղեկավարում
իր ծառաներին երկրային մեծ
շարժումների ժամանակ՝
փրկության մեծ գործն առաջ
տանելու համար: Մարդիկ
գործիք են Աստծո ձեռքում, և
Նա նրանց օգտագործում է իր
բարի ու գթառատ
նպատակներն իրականացնելու
համար: Ամեն մեկն իր բաժինն

ունի այդ գործում,
յուրաքանչյուրին լույս է
շնորհվում իր ժամանակի
պահանջներին
համապատասխան, որը
բավարար է, որպեսզի նա
կա-րողանա կատարել Աստծո
տված գործը: Բայց ոչ մի մարդ,
որքան էլ պատվական լինի
երկնքի աչքերում, երբեք չի
հասել փրկության մեծ ծրագրի
լիարժեք հասկացողությանը
կամ կատարելապես գնահատել
Աստծո նպատակներն այդ
գործում: Մարդիկ լիովին չեն
պատկերացնում, թե Աստված
ինչեր կարող է անել իրենց

վստահված գործի միջոցով,
Նրանք չեն հասկանում այն
պատգամի խորությունը, որը
հռչակում են Նրա անունով:

«Կարո՞ղ ես Աստծո խորհուրդը
գտնել կամ Ամենակարողի
Եությանը հասնել»: «Իմ
խորհուրդները ձեր
խորհուրդները չեն, և ձեր
ճա-նապարհներն իմ
ճանապարհները չեն, ասում է
[344] Տերը: Այլ ինչպես որ
երկինքը բարձր է երկրից,
նույնպես էլ բարձր են իմ
ճանապարհները ձեր
ճանապարհներից, և իմ

խորհուրդները՝ ձեր
խորհուրդներից»: «Ես եմ
Աստված, և ուրիշը չկա, և ինձ
պես մի ջուկը չկա, որ պատմում
եմ վերջը սկզբից, և վաղուց
այն, որ եղած չէ» (Յոբ 11.7,
Եսայիա 55.8,9,46.9,10):

Նույնիսկ մարգարեները, ովքեր
Յոզուց հատուկ
լուսավորությամբ են օժտվել,
լիովին չեն ըմբռնել իրենց
տրված հայտնությունների
իմաստը: Այն պիտի
բացահայտվեր դարերի
ընթացքում, երբ Աստծո

Ժողովուրդը գգար գրանցում
եղած ցուցումների կարիքը:

Խոսելով փրկության մասին,
որն ի լույս բերվեց
ավետարանի մի-ջոցով,
Պետրոսն ասում է. «Այն
փրկության համար որոնեցին և
քննեցին մարգարեները, որ
մարգարեանում էին այն
շնորհի մասին, որ լինելու էր
ձեզանում: Քննելով, թե որ և
ինչպիսի ժամանակի համար էր
գուշակում Քրիստոսի Յոգին, որ
նրանցում էր՝ առաջուց
վկայելով Քրիստոսի
չարչարանքները և դրանից

հետո լինելու փառքը: Որոնց
հայտնվեց, որ ոչ թե իրենց
անձերին, այլ մեզ էին
մատակարարում» (Ա Պետրոս
1.10-12):

Թեև մարգարեներին տրված
չէր ամբողջապես հասկանալ
իրենց հայտնվածը, նրանք,
սակայն, անկեղծորեն ձգտում
էին ստանալ այն ամբողջ
լույսը, որ Աստված բարեհաճել
էր ցույց տալ նրանց: Նրանք
«որոնեցին և քննեցին», «... թե
որ և ինչպիսի ժամանակի
մասին էր գուշակում Քրիստոսի
Յոգին, որ իրենց մեջ էր»: Ի՞նչ

դաս է սա քրիստոնեական
դարաշրջանի Աստծո ժողովրդի
համար: Հանուն նրա
բա-րօրության են այս
մարգարեությունները տրվել
Նրա ծառաներին: Այդ նրանց
«հայտնվեց, որ ոչ թե իրենց
անձերի, այլ մեզ համար էին
մա-տակարարում»: Տեսեք
Աստծո այս սուրբ այրերին,
ովքեր «որոնեցին և քննեցին»
իրենց տրված
հայտնությունները դեռ
աշխարհ չեկած սերունդների
համար: Համեմատեք նրանց
սուրբ եռանդն այն ծուլ
ան-հոգության հետ. որ վերջին

դարերի քրիստոնյաները
ցուցաբերում են երկնային այս
պարզևի նկատմամբ: Ի՞նչ
հանդիմանություն է սա
հեշ-տասեր ու աշխարհիկ
քրիստոնյաների
անտարբերությանը, ովքեր գոհ
հայտարարում են, թե
մարգարեությունները
հնարավոր չէ հասկանալ:

Թեև մարդկանց սահմանափակ
միտքն անկարող է [345]
թափանցել Անսահմանի
խորհարդների մեջ կամ մինչև
վերջ ըմբռնել Նրա ծրագրերը,
այդուհանդերձ, հաճախ նրանց

որևէ վրիպումը կամ սխալն է
պատճառը, որ նրանք այդքան
աղոտ են հասկանում երկնքի
լուրը: Երբեմն էլ ժողովրդի, և
Նույնիսկ Աստծո ծառաների
միտքն այնպես է կուրանամ
մարդկային կարծիքներով,
ավանդույթներով ու կեղծ
ուսմունքով, որ նրանք ի
վիճակի են լինում միայն
մասամբ ըմբռնել այն մեծ
ճշմարտությունները, որոնք Նա
բացահայտել է իր խոսքում:
Չենց այդպես էր Քրիստոսի
աշակերտների հետ, նույնիսկ
երբ Փրկիչն անձամբ նրանց
կողքին էր: Նրանց միտքն

այնպես էր ներծծվել Մեսիայի
մասին համատարած
պատկերացմամբ՝ որպես
աշխարհային իշխանի, ով
պիտի իսրայելը բարձրացնել
համաշխարհային կայսրության
գահին, որ նրանք չէին
կարողանում ըմբռնել նրա
տառապանքներն ու մահը
կանխասող խոսքերի
նշանակությունը:

Քրիստոսն ինքն էր նրանց
ուղարկել՝ հռչակելու,
«Ժամանակը կատարվել է, և
Աստծո թագավորությունը
մոտեցել է. ապաշխարեք և

հավատացեք ավետարանին»
(Մարկոս 1.15): Այս լուրը
հիմնված էր Դանիելի 9-րդ գլխի
մարգարեության վրա:
Վաթսուհիները շաբաթները,
հրեշտակի խոսքերով, պիտի
ձգվեին մինչև «Մեսիա
Իշխանը», և աշա-կերտները
մեծ հույսերով ու
խանդավառությամբ սպասում
էին, որ Մե-սիայի
թագավորությունը
հաստատվեր երուսաղեմում և
տիրեր ամբողջ երկրին:

Նրանք քարոզում էին այն
լուրը, որ Քրիստոսը վստահել էր

իրենց, թեև ինք ներն էլ սխալ
էին ընկալում դրա իմաստը:
Նրանց լուրը հիմնը— վաճ էր
Դանիել 9.25-ի վրա, սակայն
նրանք այդ նույն գլխի հաջորդ
տեքստում չէին նկատում, որ
Մեսիան պիտի դատապարտվի
մահվան: Ծնված օրից նրանց
ներշնչել էին գափք երկրային
կայսրության փառքի հույսը, և
դա նրանց միտքը կուրացրել էր
ինչպես մարգարեության,
այնպես էլ Քրիստոսի խոսքերի
հանդեպ:

Հրեա ազգին ուղղելով
գթության հրավերը՝ նրանք

իրենց պարտքը կատարեցին, և
ապա, հենց այն պահին, երբ
ակնկալում էին իրենց Տիրոջը
տեսնել Դավթի գահին
բարձրանալիս, նրանք տեսան,
թե ինչպես Նրան բռնեցին՝
որպես հանցագործի,
մտրակեցին, ծաղրեցին,
դատապարտեցին և Գողգոթայի
խաչը [346] բարձրացրին:
Ինչպիսի՞ հուսահատություն և
տառապանք ապրեցին
աշակերտներն այն օրերին, երբ
իրենց Տերը քնած էր
գերեզմանում:

Քրիստոսը եկել էր
մարգարեութեամբ
կանխատեսված ճիշտ
Ժամա-նակին և ճիշտ ձևով:
Սուրբ Գրքի վկայությունը
կատարվել էր Նրա
ծառայության բոլոր
մանրամասներով: Նա քարոզել
էր փրկության լուրը, և «Նրա
խոսքը իշխանութեամբ էր»
(Ղուկաս 4.32): Նրա
ունկնդիրներն իրենց սրտերում
համոզվել էին, որ այն երկնքից
է: Աստված իր խոսքով և Հոգով
հաստատել էր իր Որդու
աստվածային առաքելությունը:

Աշակերտներն առաջվա պես
անհուն սիրով կառչել էին
իրենց սիրելի Ուսուցչին, բայց
նրանց միտքը մթագնած էր
տարակուսանքով ու
կասկածներով: Իրենց վշտի մեջ
նրանք չէին հիշում Քրիստոսի
խոսքերն իր չարչարանքի և
մահվան մասին: Եթե Յիսուս
Նազովրեցին իրոք Մե-սիան
լիներ, իրենք այդպես
կհայտնվեի՞ն արդյոք վշտի և
հիասթափության մեջ: Ահա այն
հարցը, որ կրճում էր նրանց
հոգին, մինչ Փրկիչը ննջում էր
գերեզմանում շաբաթ օրվա այն
անհուն ժամերի ընթացքում,

որ ընկած էին Նրա մահվան և
հարուժյան միջև:

Թեև տրտմության գիշերը
խավարով էր պարուրել
Չիտուսի այս հետևորդներին,
նրանք թողնված չէին:

Մարգարեն ասում է. «Թեև
խա-վարի մեջ նստեմ, Տերը ինձ
լույս կլինի... Նա ինձ կհանի
լույսը, որ Նրա արդարությունը
տեսնեմ»: «Մութն էլ քեզ
համար խավար չէ, գիշերն էլ
ցերեկի պես լույս է, խավարն էլ
լույսի պես է քեզ համար»:
Աստված ասել է. «Խավարի մեջ
լույս է ծագում ուղիղների

համար»։ «Եվ կույրերին պիտի ման ածեմ իրենց չգիտեցած ճանապարհով, նրանց չգիտեցած շավիղներով առաջնորդելու եմ նրանց, խավարը նրանց առաջին լույս եմ դարձնելու, դարուկիտերը՝ հավասար, այս բաները պիտի անեմ նրանց և նրանց պիտի չձգեմ» (Միքիա 7.8, 9, Սաղմոս 139.12, 112.4, Եսայիա 42.16)։

Լուրը, որն աշակերտները հռչակել էին Տիրոջ անուկով, ճիշտ էր բոլոր մանրամասներով, և իրադարձությունները, որոնց

այն մատնանշում էր, արդեն
կատարվում էին: «Ժամանակը
լրացել է, և Աստծո
արքայութունը մոտեցել է»,
ագդարարել [347] էին նրանք:
Չենց որ լրանար
«Ժա-մանակը»՝ Դանիել 9-ի
վաթսուհիններ շաբաթները,
որոնք պիտի ձգվեին մինչև
Մեսիան՝ «Օծյալը», Քրիստոսը
Չորդանանում Չովհաննեսից
մկրտվելուց հետո ընդունեց
Չոգա, օծությանը: Իսկ «Աստծո
արքայութ-թյունը»«, որն ըստ
նրանց ագդարարության՝
մոտեցել էր, հաստատվեց
Քրիստոսի մահով: Սա

երկրային թագավորություն
չէր, ինչպես նրանց սովորեցրել
էին հավատալ, ոչ էլ այն
ապագա հավիտենական
արքայու-թյունն էր, որը
հաստատվելու է, երբ
«թագավորությունն ու
իշխանությունը և բոլոր երկնքի
տակ եղող
թագավորությունների
մեծությունը պիտի տրվի
Բարձրյալի սուրբերի
ժողովրդին», դա այն
«հավիտենական
թա-գավորությունը» չէր,
որտեղ «բոլոր
իշխանությունները պիտի նրան

ծառայեն ու հնազանդվեն»
(Դանիել 7.27): Սուրբգրային
«Աստծո թա-գավորություն»
արտահայտությունը կարող է
նշանակել և՛ շնորհի
ար-քայություն, և՛ փառքի
արքայություն: Շնորհի
թագավորության մասին
հայտնում է Պողոս առաքյալը
Եբրայեցիներին ուղղված իր
թղթում: Քրիստոսին՝ «մեր
տկարություններին կարեկից»
գթասիրտ Բարեխոսին
մատնացույց անելով՝
առաքյալն ասում է. «Ուրեմն,
համարձակությամբ մոտենանք
շնորհի արթուին, որպեսզի

ողորմություն ընդունենք և
շնորհ գանենք» (Եբրայեցիս
4.15,16): Շնորհի աթոռը
ներկայացնում է շնորհի
թագավորությանը, քանզի եթե
գոյություն ունի գահ, ուրեմն
կա նաև թագավորություն: Իր
առականերից շատերում
Քրիստոսն օգտագործում է
«երկնքի թագավորություն»
արտահայտությունը, որ
ենթադրում է աստվածային
շնորհի ազդեցությունը
մարդկանց սրտերի վրա:

Այդպես էլ փառքի աթոռը
ներկայացնում է փառքի

թագավորությունը, որի մասին հիշատակված է Փրկչի հետևյալ խոսքերում. «Երբ որ մարդի Որդին իր փառքով կգա, և ամեն սուրբ հրեշտակները նրա հետ, այն ժամանակ կնստի իր փառաց աթոռի վրա, և ամեն ազգերը կժողովվեն նրա առաջը» (Մատթեոս 25.31,32): Այս թագավորությունը դեռ ապագայում է. այն չի հաստատվելու մինչև Քրիստոսի երկրորդ գալուստը:

Ճնորհի թագավորությունը հիմնվեց մարդու մեղանչումից անմիջա-պես հետո, երբ ուժի

մեջ մտալ մեղավոր ցեղի
փրկութեան ծրագիրը: Այն,
Աստուծո խոստման համաձայն,
գոյութեան կոչվեց հատուկ
նպատակով, և մարդիկ
հավատի միջոցով կարող էին
դառնալ դրա հպատակները:
Սակայն իրականում այն
հաստատված չէր մինչև
Քրիստոսի [348] մահը:
Նույնիսկ իր երկրային
առաքելութեանն անցնելուց
հետո էլ Փրկիչը, մարդկանց
համառությունից ու
ապերախտությունից հոգնած,
կարող էր հրաժարվել
Գողգոթայի զոհաբերությունից:

Գեթսեմանում տառապանքի
բաժակը ցնցվում էր Նրա
ձեռքին: Նա անգամ այդ
ժամանակ կարող էր սրբել իր
ճակատի արնախառն քրտինքը
և մեղավոր ցեղին թողնել
կորչելու իր անօրենությունների մեջ:
Եթե Նա այդպես վարվեր,
ընկած մարդկության
փրկագնումը կխափանվեր:
Բայց երբ Փրկիչն իր կյանքը
տալով՝ վերջին շնչում
աղաղակեց «Կատարված է»,
այնժամ իրա-կանացապ
փրկագնման ծրագիրը:
Վավերացվեց փրկության
խոստումը, որ տրվել էր

Եդեմու՛մ մեղավոր գու՛յգին:
Ճնորհի թագավորութ՞յունը, որ
մինչ այդ գոյութ՞յուն էր ունեցել
Աստճո խոստումով,
հաստատվեց:

Այսպիսով, Քրիստոսի մահը՝
հենց այն իրադարձութ՞յունը,
որն աշակերտների համար
իրենց հույսի վերջնական
կործանումն էր, իրականում
ընդմիշտ հաստատեց այն: Թեև
այն դաժան հիասթափութ՞յուն
բերեց Նրանց,
այնուամենայնիվ, դա գորեղ
ապացույց էր, որ իրենց
հավատը ճիշտ է: Նրանց ողբ ու

վիատուրժուն բերած
իրադարձությունը հույսի դուռ
բացեց Ադամի յուրաքանչյուր
զավակի առջև, և դրանում է
կենտրոնացած բոլոր դարերի
Աստծո հավատարիմ
զավակների ապագա կյանքն ու
հավիտենական
երջանկությունը:

Անսահման գթություն
նպատակներն իրենց
իրականացումն էին գտնում
նույնիսկ աշակերտների
հիասթափության միջոցով: Թեև
Նրանց սրտերը շահվել էին
աստվածային շնորհով և Նրա

ուսմունքի զորությամբ, ում
նման «երբեք մի մարդ չի
խոսել», Փրկչի հանդեպ նրանց
սիրո մաքուր ոսկուն
միաձուլված էր աշխարհիկ
հպարտության ու եսա-
սիրական ձգտումների
ցածրորակ խառնուրդը:
Նույնիսկ Չատիկը տոնելիս՝
այն հանդիսավոր պահին, երբ
նրանց Ուսուցիչն արդեն
մտնում էր Գեթսեմանի
խավարը, նրանց մեջ «վեճ
եղավ, թե իրենցից ո՞վ պիտի
մեժ համարվի» (Ղուկաս 22.24):
Նրանք երագում էին գահի,
թագի և փառքի մասին,

մինչդեռ նրանց սպասվում էր
անարգանք, պարտեզի
հոգեվարքը, դատարանի
դահլիճը, Գողգոթայի խաչը:
Նրանց սրտի հպարտությունը և
աշխարհային փառքի ծարավն
էին, որ նրանց դրդեցին
այդպես ամուր կառչել իրենց
ժամանակվա կեղծ ուսմունքին
և անուշադրության մատնել իր
արքայության իրական բնույթը
և իր հոգեվարքն ու մահը
մատնանշող Փրկչի խոսքերը:
Եվ այդ մոլորությունները
հանգեցրին սուր, բայց
անհրաժեշտ փորձության, ինչը
թույլ տրվեց նրանց ուղղելու

Նպատակով: Թեև
աշակերտները սխալ էին
ըմբռնել իրենց լուրի իմաստը և
թերացել էին գիտակցել իրենց
սպասվող հեռանկարները,
բայց նայնպես, նրանք քարոզել
էին Աստծուց տրված
Նախազգա շացո¹ մը, և Տերը
պարզևատրեց նրանց հավատն
ու պատվեց նրանց
հնազանդութիւնը: Նրանց
վստահելու էր բոլոր ազգերին
իրենց հարուցյալ Փրկչի
փառավոր ավետարանը
հռչակելու առաքելութիւնը:
Այս գործին նրանց
պատրաստելու նպատակով

հենց թույլ տրվեց
փորձությունը, որը նրանց
այդքան դառը թվաց:

Հարություն առնելուց հետո
Հիստան իր աշակերտներին
երևաց Էմմաուսի
ճանապարհին, և «սկսած
Մովսեսից ու բոլոր
մարգարեներից՝ մեկնաբանում
էր նրանց այն ամենն, ինչ
գրված էր իր մասին գրքերում»
(Ղուկաս 24.27): Աշակերտների
սրտերը հուզվեցին, նրանց
հավատն արթնացավ: Նրանք
վերստին ծնվել էին «դեպի
Կենդանի հույսը», նախքան

Յիսուսն իրեն կհայտներ
Նրանց: Նրա նպատակն էր՝
լուսավորել նրանց միտքը և
Նրանց հավատը հաստատել
«մարգարեական հաստատ
խոսքի» վրա: Նա կամենում էր
ճշմարտությունը խորապես
արմատավորել նրանց հոգում,
քանզի այն հաստատվում էր ոչ
միայն իր անձնական
վկայությունամբ, այլ նաև
ճիսական օրենքի
նախապատկերների ու
ստվերների անհերքելի
ապացույցներով ու Յին
Կտակարանի
մարգարեություններով:

Անհրաժեշտ էր, որ Քրիստոսի
հետևորդների հավատը
ողջամիտ փներ ոչ միայն իրենց
համար, այլ որպեսզի նրանք
կարողանային Քրիստոսի
գիտությունը տանել
աշխարհին: Եվ Հիսուսն
աշակերտների ուշադրությունն
ուղղեց դեպի «Մովսեսն ու
մարգարեները»՝ իբրև
ամենաառաջին քայլն այդ
գործում: Այսպիսին էր
վկայությունը, որով հարուցյալ
Փրկիչը փաստեց Հին
Կտակարանի գրքերի
արժեքա-վորությանն ու
կարևորությունը:

Ինչպիսի՞ փոփոխությունն տեղի
ունեցավ աշակերտների
սրտերում, երբ նրանք կրկին
տեսան իրենց [350] Ուսուցչի
սիրելի դեմքը (Ղուկաս 24.32) :
Ավելի լիարժեք ու կատարյալ
իմաստով, քան երբևէ
նախկինում, նրանք գտան
Նրան, «ունմ մասին գրեց
Միվսեսն օրենքում, և
մար-գարեներն էլ»:
Անորոշությունը, վիշտն ու
հուսահատությունը տեղի
տվեցին լիակատար
վստահությանը, անմշուշ
հավատին: Եվ զարմանալի չէ,

որ Նրա համբարձումից հետո
Նրանք «միշտ տաճարում էին,
գովաբանում և օրհնաբանում
էին Աստծուն»: Մարդիկ,
տեղյակ լինելով միայն Փրկչի
ամոթափ մահվան մասին,
սպասում էին Նրանց ղեմքերին
թախծի, շվտթուլթյան ու
պարտոլթյան
արտահայտություն տեսնել,
բայց փոխարենը տեսան
ցնծություն և հաղթություն:
Ի՞նչ հրաշալի
Նախա-պատրաստություն
անցան աշակերտներն իրենց
սպասվող գործի համար:
Նրանք անցել էին ամենասուր

փորձութեան միջով, որ
հնարավոր էր կրել, և տեսել
էին, թե ինչպես էր Աստծո
խոսքը հաղթականորեն
կատարվել, երբ մարդկային
տեսանկյունից ամեն ինչ կորած
էր թվում: Սրանից հետո ի՞նչը
կարող էր սասանել Նրանց
հավատը կամ հանգցնել Նրանց
սիրո կրակը: Ամենախոր վշտի
մեջ Նրանք «հաստատուն
մխիթարություն» ունեցան, մի
հույս, որը «հաստատ և անշարժ
խարսխի պես» էր Նրանց հոգու
համար (Եբրայեցիս 6.18,19):
Նրանք ականատես էին եղել
Աստծո իմաստութեանն ու

զորությանը և համոզվել, որ
«ո՛չ մահը, ո՛չ կյանքը, ո՛չ
հրեշտակները, ո՛չ
իշխանությունները, ո՛չ
զորությունները, ո՛չ ներկա
քաները, ո՛չ գալիք քաները, ո՛չ
բարձրություն, ո՛չ էլ
խորություն, և ո՛չ մի ուրիշ
ստեղծված քան» չեն կարող
բաժանել իրենց «Աստծո
սիրուց, որ մեր Տեր Հիսուս
Քրիստոսում է»: «Այս բոլորի
մեջ,— ասում են նրանք,— մենք
ավելի քան հաղթող ենք Նրա
միջոցով, ով սիրեց մեզ»
(Հռոմեացիս 8.38,39,37): «Տիրոջ
խոսքը մնում է հավիտյան» (Ա

Պետրոս 1.25) : Եվ «ո՞վ է, որ դատապարտի. Քրիստոսն է, որ մեռավ, և ավելին, որ հարուժյուն, էլ առավ և Աստծո աջ կողմն է, որ մեզ համար բարեխոս էլ է» (Յոհաննես 8.34):

Տերն ասում է. «Իմ ժողովուրդը պիտի չամաչի հավիտյան» (Յովել 2.26) : «Իրիկունը լաց է գալիս, իսկ առավոտը՝ ցնծություն» (Սաղմոս 30.5): Երբ հարուժյան օրը աշակերտները հանդիպեցին Փրկչին, և նրանց սրտերը բորբոքվեցին իրենցում, երբ

լսեցին Նրա խոսքերը, երբ
Նայեցին Նրա գլխին, ձեռքերին
ու ոտքերին, որ խոցվել էին
իրենց համար, երբ իր
համբարձումից առաջ Յիսուսը
Նրանց առաջնորդեց [351]
մինչև Բեթանիա, և
բարձրացնելով իր ձեռքերը՝
օրհնեց ու պատվիրեց.

«Գնացեք բոլոր աշխարհը և
ավետարանը քարոզեցեք ամեն
արա-րածի»՝ ավելացնելով.

«Ահա ես ձեզ հետ եմ ամեն օր՝
մինչև աշխարհի վերջը»

(Մարկոս 16.15, Մատթեոս
28.20): Երբ Պենտեկոստի օրը
խոստացված Մխիթարիչը

եկա՛վ, և արվեց երկնային
զորութ՞յունը, երբ
հավատացյալների սրտերը
թրթռացին իրենց համբարձված
Տիրոջ ներ-կայութ՞յան
գիտակցումից, այն ժամանակ,
թեև իրենք էլ Նրա նման պիտի
անցնեին զոհաբերութ՞յան ու
նահատակութ՞յան ուղիով,
կփոխեի՞ն արդյոք Նրա շնորհի
ավետարանի ծառայութ՞յունն ու
«արդարութ՞յան պսակը», որը
ստանալու էին Նրա գալստյան
ժամանակ, երկրային գահի
փառքի հետ, որն իրենց վաղ
աշակերտութ՞յան հույսն էր:
Նա, ով «կարող է

առատությամբ անել ավելին,
քան այն ամենն, ինչ մենք
խնդրում ենք և մտածում», իր
չարչարանքներին մասնակից
դարձնելու հետ միասին նրանց
մասնակից արեց նաև «բազում
որդիների փառքի մեջ
առաջնորդելու» իր
ուրախությանը, անպատմելի
մի ուրախություն,
«հավիտենական փառքի
մեծություն», որի հետ, Պողոսի
խոսքերով, «մեր այժմյան թեթե
նեղությունը» «արժանի չէ
բաղդատվելու»:

Աշակերտների
փորձառութիւնը, որ
«արքայութեան ավետարանը»
հռչակեցին Քրիստոսի առաջին
գալստյան ժամանակ, Նրա
երկրորդ գալստյան լուրը
քարոզողների փորձառութեան
Նախապատկերն է: Ինչ-պէս
աշակերտները դուրս եկան՝
քարոզելով, որ «ժամանակը
լրացել է, և մոտեցել է Աստուծո
արքայութիւնը», այնպէս էլ
Միլլերն ու Նրա հա-մախոհները
հռչակեցին, որ Աստվածաշնչի
ամենատեղաւոր ու վերջին
մարգարեական
ժամանակահատվածը մոտ է իր

ավարտին, որ մոտեցել է
դատաստանի ժամի, և գալիս է
հավիտենական
թագավորությունը:
Ժամանակին վերաբերող
աշակերտների քարոզը
հիմնված էր Դանիելի 9-ի
յոթանասուն շաբաթների վրա:
Իսկ Միլլերի և նրա
գործակիցների լուրն
ազդարարում է Դանիել 8.14-ի
2300 օրերի ավարտը, որոնց
մասն էին կազմում
յոթանասուն շաբաթները:
Երկու լուրերի քարոզչությունն
էլ հիմնված էր միևնույն
մարգարեական մեծ

Ժամանակաշրջանի տարբեր
մասերի իրականացման վրա:

Առաջին աշակերտների պես
Ուիլյամ Միլլերն ու նրա
գործակիցներն էլ
ամբողջությամբ չէին
հասկանում իրենց հռչակած
պատգամի իմաստը: Վաղուց
եկեղեցում հաստատված [352]
մոլորությունները նրանց
խանգարում էին ճիշտ
մեկնաբանել մարգարեության
կարևորագույն կե-տը: Ու թեև
նրանք հռչակեցին լուրը, որ
Աստված նրանց ավել էր՝
հռչա-կելու աշխարհին, սակայն

Նրա իմաստը սխալ
հասկանալու պատճառով
Նրանք հիասթափություն
ապրեցին:

Բացատրելով Դանիել 8.14-ը՝
«Մինչև երկու հազար երեք
հարյուր իրիկուն-առավոտ, և
սրբարանը պիտի արդարանա»,
Միլլերն, ինչպես արդեն նշվեց,
առաջնորդվում էր այն
ընդունված կարծիքով, թե
սրբարանը երկիրն է, և
հավատում էր, որ սրբարանի
մաքրումը խորհրդանշում է
երկրի մաքրումը կրակով՝
Տիրոջ գալստյան ժամանակ:

Ուստի երբ հայտ-նաբերեց, որ
2300 օրերի վերջը որոշակիորեն
կանխասված է, նա
եզրա-կացրեց, թե հենց այդ
ժամանակ էլկփնի երկրորդ
գալուստը: Նրա սխալը
սրբարանի վերաբերյալ
ընդունված պատկերացման
հետևանքն էր:

Խորհրդանշական
համակարգում, որը Քրիստոսի
գոհաբերության և
քահանայության ստվերն էր,
սրբարանի մաքրումը վերջին
գործողությունն էր, որով
քահանայապետն ավարտում

Էր ծառայութեան տարեկան
շրջանը: Դա քաղութեան
եզրափակիչ գործն էր՝ մեղքի
ջնջումը կամ հեռացումն
Իսրայելից: Այն խորհրդանշում
էր մեր Քահանայապետի
երկ-նային ծառայութեան
վերջին վտւը, երբ հեռացվում
կամ ջնջվում են Նրա ժողովրդի
մեղքերը, որոնք արձանագրված
են երկնային գրքերում: Այս
ծառայութիւնը ներառում է
դատական նախաքննութիւն, և
անմիջապէս նախորդում է
Քրիստոսի գալստյանը երկնքի
ամպերով՝ զորութեամբ և մեծ
փառքով, քանզի երբ Նա գա,

յուրաքանչյուրի ճակատագիրը վճռված կլինի: Յիսուսն ասում է. «Իմ վարձն ինձ հետ է, որ ամեն մեկին հատուցեմ՝ ինչպես իր գործը կլինի» (Յայտնություն 22.12): Երկրորդ գալստյանն անմիջապես նախորդող այս դատաքննությունն է հենց, որ հռչակվում է Յայտնություն 14.7-ում՝ առաջին հրեշտակի պատգամով. «Վախեցեք Աստծուց և փառք տվեք նրան, որովհետև նրա դատաստանի ժամը եկավ»:

Այս նախազգուշացումն ազդարարողները ճիշտ

Ժամանակին հայտնեցին
ճշմարիտ լուրը: Բայց ինչպես
առաջին աշակերտները,
հիմնվելով Դանիելի 9-րդ գլխի
վրա, հռչակեցին՝ «Ժամանակը
լրացել է, և մոտեցել է Աստծո
արքայությունը»՝ [353]
չնկատելով, սակայն, որ նույն
այդ տեքստում ասվում է նաև
Մեսիայի մահվան մասին,
այնպես էլ Միլլերն ու նրա
համախոհները, հռչակելով
Դանիել 8.14-ի և Չայտնության
14.7-ի վրա հիմնված
պատգամը, չկարողացան
տեսնել, որ Չայտնություն 14-րդ
գլխում կան նաև այլ լուրեր,

որոնք նույնպես պիտի
ազդարարվեին նախքան Տիրոջ
գալուստը: Ինչպես
աշակերտները սխալվեցին այն
թագավորության հարցում, որը
պետք է հաստատվեր
յոթանասուն շաբաթների
վերջում, այնպես էլ
ադվենտիստները սխալվեցին
այն իրադարձության հարցում,
որը տեղի էր ունենալու 2300
օրերից հետո: Երկու դեպքում էլ
ընդունված մոլորությանը
հետևելը կամ, ավելի շուտ,
կառչելն էր, որ կուրացրեց
միտքը ճշմարտության
հանդեպ: Երկու խմբերն էլ

Աստճո կԼԱմրր կատարեցին՝
մարդկանց հայտնելով Տիրոջ
լուրը, և երկուսն էլ իրենց իսկ
լուրը սխալ հասկանալու
պատճառով հիասթափություն
ապրեցին:

Բայցևայնպես, Աստված իր
բարի նպատակն իրագործեց՝
թույլ տալով, որ դատաստանի
նախազգուշացումը տրվի հենց
այդ կերպ: Մեծ օրը մոտ էր, և
Նրա նախախնամությամբ
մարդիկ ենթարկվեցին որոշված
ժամանակի փորձությանը,
որպեսզի տեսնեին, թե ինչ կար
իրենց սրտերում: Լուրը

Նախատեսված էր եկեղեցին
փորձելու և մաքրագործելու
համար: Նրանց պիտի ցույց
տրվեր, թե ինչն են իրենք
սիրում՝ աշխատօրհը, թե՞
Քրիստոսին և երկինքը: Իրենց
ասելով՝ նրանք սիրում էին
Փրկչին, հիմա պետք էր
ապացուցել այդ սերը:
Պատրա՞ստ էին արդյոք թողնել
իրենց աշխարհային հույսերն
ու փառասիրությունը և
ցնձագին ողջունել իրենց Տիրոջ
գալուստը: Լուրը պետք է
ընդունակ դարձներ նրանց՝
տեսնելու իրենց իրական
հոգևոր վիճակը: Այն

գթասրտորեն ուղարկվեց,
որպեսզի արթնացնեի նրանց՝
մղելով փնտրելու Տիրոջը
ապաշխարութեամբ և
խոնարհութեամբ:

Չհասթափութիւնը, որը թեև
նրանց կողմից լուրը սխալ
ըմբռնելու հետևանք էր,
նույնպես պիտի ծառայէր ի
բարին: Այն պիտի քննէր
նրանց սրտերը, ովքեր կարծում
էին, թէ ընդունել են
նախազգուշացումը: Իրենց խոր
հիասթափութեան մեջ
կթողնէի՞ն արդյոք նրանք
իրենց փորձառութիւնը՝

կորցնելով վատահոլթյունն
Աստճո խոսքի հանդեպ: Թե՞
Նրանք աղոթքով ու [354]
խոնարհությամբ կվարձեին
պարզել, թե որտեղ են թերացել
հասկանալու մարգարեության
նշանակությունը: Նրանցից
քանի՞սն են դրդված եղել
վախից կամ պահի
ազդեցությունից ու
պոռթկումից: Քանի՞սն էին
երկմիտ ու անհավատ:
Չազարավորները ցույց էին
տալիս, թե փափագում են
Տիրոջ գալուստը: Ենթարկվելով
աշխարհի ծաղրանքին ու
նախատինքին, հետաձգման ու

հիասթափության
վտրճությանը՝ կուրանա՞ն
արդյոք նրանք իրենց հավատը:
Անմիջապես չհասկանալով
Աստծո ծրագրերն իրենց
նկատմամբ՝ կթողնե՞ն նրանք
Նրա խոսքի պարզագույն
վկայությունները:

Այս փորձությունն ի հայտ
կբերեր նրանց
վճռականությունը, ովքեր
անկեղծ հավատով հետևել էին
Աստծո խոսքի և Յոզու
ուսմունքին: Ուրիշ ոչ մի
փորձառություն ցույց չէր տա
նրանց մարդկային

տեսութիւնները և
մեկնաբանութիւններն
ընդունելու վտանգը՝
Աստվածաշունչը իր իսկ
մեկնաբանը դարձնելու
փոխարէն: Յավատի
զավակների համար
շփոթութիւնն ու վիշտը, որ
իրենց իսկ սխալմունքի
հետևանքն էին, անհրաժեշտ
ուղղումներ կբերեին: Դա
Նրանց կդրդէր ավելի խորն
ուսումնասիրելու
մարգարեական խոսքը: Նրանք
կսովորեին ավելի զգուշորեն
քննել իրենց հավատի հիմքը և
մերժել ամեն բան, ինչը, որքան

Էլ լայնորեն ընդունված լինի
քրիստոնեական աշխարհում,
հիմնված չէր ճշմարտության
խոսքի վրա:

Այն, ինչը փորձության ժամին
մոլթ էր թվում իրենց
հասկացողության-նը,
հետագայում կպարզվեր այս
հավատացյալներին, ինչպես
եղավ առաջին աշակերտների
հետ: Տեսնելով «Տիրոջ
վախճանը»՝ նրանք
կհաս-կանային, որ չնայած
փորձությունն իրենց սխալների
հետևանքն էր, Նրա սիրառատ
նպատակներն իրենց հանդեպ

անշեղորեն կատարվում էին:
Անձնական օրհնյալ
փորձառությամբ նրանք
կտրվորեին, որ Նա
«բազմագութ է և ողորմած», որ
Նրա «բոլոր ճանապարհները
տրտմություն և ճշմարտություն
են Նրա ուխտն ու վկայությունը
պահողների համար»:

ԳԼՈՒԽ 20—ԿՐՈՆԱԿԱՆ ՄԵՃ ԱՐԹՆՈՒԹՅՈՒՆ

Կրոնական մեծ արթնությունը,
որն առաջանալու էր քրիստոսի
մո-տալուտ գալստյան
քարոզչության արդյունքում,
կանխասված է Չայտ-նություն
14-րդ գլխում՝ առաջին
հրեշտակի պատգամում:
Չովհաննեսը տեսնում է «մի
ուրիշ հրեշտակ թռչեյիս երկնքի
մեջ, որ հավիտենական
ավետիք ուներ՝ ավետարանելու
երկրի վրա բնակվողներին՝
ամեն ազգի, և ցեղի, և լեզվի, և
ժողովրդի»: Նա «մեծ ձայնով»

ագդարարում է. «Վախեցե՛ք
Աստծուց և փառք տվեք նրան,
որովհետև նրա դատաստանի
ժամը եկավ, և երկրպագեցեք
երկինքն ու երկիրը, ծովը և
ջրերի աղբյուրները
Ստեղծողին» (Յայտնություն
14.6,7):

Յատկանշական է այն փաստը,
որ նախագգուշացումը
հռչակում է հրեշտակը:
Աստված իր իմաստությամբ
բարեհաճեց երկնային լրաբերի
սրբությամբ, փառով ու
զորությամբ ներկայացնել այդ
գործի վսեմ բնույթը և դրան

ուղեկցող զորութիւնն ու
փետքը: Եվ հրեշտակի թռիչքը
«երկնքի մեջտեղում», նրա
«բարձր ձայնը», որով տրվում է
Նախագգուշացումը, և դրա
ազդարարումը «երկրի վրա
բոլոր բնակվողներին՝ ամեն
ազգի, ցեղի, լեզվի և
ժողովրդի», վկայում են այդ
շարժման արագութեան և
հա-մաշխարհային տարածման
մասին:

Լուրն ինքնին լուսաբանում է
ժամանակը, երբ պիտի սկսվեր
այդ շարժումը: Ասվում է, որ
այն «հավիտենական

ավետիքի» մի մասն է և
ազդարարում է դատաստանի
[356] սկիզբը: Փրկութեան լուրը
քարոզվել է բոլոր դարերում,
բայց այս պատգամը
ավետարանի մի մասն է, որը
պիտի հռչակվեր միայն վերջին
օրերում, քանզի միայն այդ
ժամանակ ճիշտ կփնտրես
որ դատաստանի ժամը
«եկավ»: Մարգարեություններն
իրենցից ներկայացնում են
իրադարձությունների
հաջորդականություն, որոնք
տանում են դեպի դատաստանի
սկիզբը: Սա հատկապես
վերաբերում է Դանիելի գրքին:

Բայց նրա մարգարեության այն
մասը, որ վերաբերում էր
վերջին օրերին, Դանիելին
հրամայված էր փակել «մինչև
վերջին ժամանակը»: Մինչև
չգար այդ ժամանակը,
դատաստանի մասին լուրը՝
հիմնված մարգարեությունների
իրականացման վրա, չէր
կարող հռչակվել: Բայց երբ գա
վերջին ժամանակը, մարգարեն
ասում է, որ «շաատերո պիտի
քննեն, և գիտությունը պիտի
շատանա» (Դանիել 12.4):

Պողոս առաքյալը եկեղեցուն
զգուշացրել է իր օրերում

չսպասել Քրիստոսի
գալստյանը: «Այն օրը չի գա,—
ասում է նա,— եթե նախ չգա
ապստամբությունը, և հայտնվի
անօրենության մարդը՝ կորստի
որդին» (Բ Թեսաղոնիկեցիս
2.3): Մարդիկ, նախքան մեծ
ապստամբությունը և
«անօրենության մարդը»
իշխանության երկար
ժամանակահատվածի
ավարտը, չպետք է սպասեին
Տիրոջ գալստյանը:
«Անօրենության մարդ»,
ինչպես նաև «անօրենության
խորհուրդ», «կորստյան որդի»
և «այն ան-օրենը»

արտահայտութիւնները
խորհրդանշում են
պապութիւնը, որի
գերիշխանութիւնը,
մարգարեութեան համաձայն,
պիտի տեսնուի 1260 տարի: Այս
ժամանակահատվածն
ավարտվեց 1798-ին: Մինչև այդ
ժամանակը Քրիստոսի
գալուստը չէր կարող տեգի
ունենալ: Պողոսի
Նա-խազգուշացումը
վերաբերում է քրիստոնեական
ողջ դարաշրջանին մինչև 1798
թվականը: Դրանից հետո
միայն պիտի հռչակվեր

Քրիստոսի երկրորդ գալստյան
լուրը:

Անցյալ դարերում երբեք
այդպիսի լուր չի ազդարարվել:
Պողոսն, ինչպես տեսանք, այդ
մասին չի քարոզել: Տիրոջ
գալստյանը սպասելու համար
նա իր եղբայրներին
մատնացույց է արել այն
ժամանակ դեռ հեռավոր
ապագան: Այդ լարը չեն
հռչակել բարենորոգիչները:
Մարտին Լյութերի կարծիքով
դատաստանդ պիտի կայանար
իր օրերից 300 տարի հետո:
Բայց 1798 թվականից հետո

Դանիելի գիրքը բացվեց,
մար-գարեություններն
աստիճանաբար
բացահայտվեցին, և շատերը
սկսեցին քարոզել վերահաս
դատաստանի հանդիսավոր
լուրը:

[357] Տասնվեցերորդ դարի
Բարենորոգման նման
ադվենտիստական շարժումը
միաժամանակ սկսվեց
քրիստոնեական տարբեր
երկրներում: Թե՛ Եվրոպայում,
թե՛ Ամերիկայամ հավատի և
աղոթքի մարդիկ դրդվեցին
ուսումնասիրելու

մարգարեությունները, և
քննելով ներշնչյալ խոսքերը՝
նրանք համոզիչ ապացույցներ
գտան, որ աշխարհի վերջը մոտ
է: Տարբեր երկրներում կային
քրիստոնյաների առանձին
խմբեր, որոնք միայն
Աստվածաշնչի
ուսումնասիրությամբ գալիս
էին այն համոզման, որ Փրկչի
գալուստը մոտեցել է:

1821 թվականին՝ երեք տարի
անց այն բանից, երբ Միլլերին
բացահայտվեցին դատաստանի
ժամանակը մատնանշող
մարգարեությունները, դոկտոր

Ջոզեֆ Ուոլֆը՝ «աշխարհի
ավետարանիչը», սկսեց
հռչակել Տիրոջ մոտալուստ
գալուստը: Ուոլֆը ծնվել է
Գերմանիայում՝ հրեական
ընտանիքում: Նրա հայրը
ռաբբի էր: Դեռ վաղ տարիքում
Նա համոզվել էր, որ
քրիստոնեական կրոնը
ճշմարիտ է: Լինելով գործուն և
պրպտուն մտքի տեր՝ Նա խոր
հետաքրքրությամբ էր լսում
այն ամենը, որ նվիրյալ
հրեաներն ամեն օր հավաքվում
էին ու պատմում իրենց
ժողովրդի հույսերի և
սպասելիքների, գալիք Մեսիայի

փառքի և Իսրայելի
վերականգնման մասին: Մի օր,
լսելով Յիսուս Նազովրեցու
մասին, տղան հարցրեց, թե ով է
Նա: «Մի հանճարեղ հրեա,—
եղավ պատասխանը,— ում
հրեական ատյանը
դատապարտեց մահվան, քանի
որ ձևացրել էր, թե Մեսիան է»:
«Իսկ ինչո՞ւ է
ավերվել Երուսաղեմը,— նորից
հարցրեց տղան,— և ինչո՞ւ ենք
մենք գերության մեջ»:
«Ավա՛ղ,— պատասխանեց նրա
հայրը,— որովհետև հրեաները
սպանել են մարգարեներին»:
Երեխայի գլխով անմիջապես

միտք անցավ. «Երևի Յիսուսը
նույնպես մարգարե էր, և
հրեաները սպանել են նրան,
երբ նա անմեղ էր» (Պատվելի
Ջոզեֆ Ուոլֆի
ուղևորություններն ու
արկածները, հ. 1, էջ 6): Այնքան
ուժեղ էր այդ զգացումը, որ թեև
նրան արգելում էին
քրիստոնեական եկեղեցի
այցելել, նա հաճախ կանգնում
էր դրսում՝ լսելու քարոզը:

Երբ ընդամենը յոթ տարեկան
էր, նա մի անգամ իր տարեց
քրիստոնյա հարևանի առաջ
պարծեցավ Մեսիայի գալստյան

Ժամանակ Իսրայելին սպասվող
հաղթական ապագայով: Տարեց
մարդը սիրալիր ասաց.

«Թանկագի՛ն տղա, ես քեզ
կասեմ, թե ով էր իսկական
Մեսիան, դա Յիսուս

Նազովրեցին էր... [358] ում քո
Նախահայրերը խաչեցին ճիշտ
այնպես, ինչպես հին

մարգարեներին: Գնա տուն և
կարդա Եսայիայի
հիսուսներեքերորդ գլուխը, և

կհամոզվես, որ Յիսուս
Քրիստոսն Աստծո Որդին է»

(Նույն տեղում, հ.1, գլ.7): Դա
խորապես ազդեց նրա վրա: Նա
գնաց տուն, և կարդալով նշված

գլուխը՝ զարմացավ, թե ինչպես
են այդ խոսքերը ճշգրտությամբ
կատարվել Յիսուս Նազովրեցու
կյանքում: Ուրեմն ճիշտ էին
քրիստոնյայի խոսքերը: Տղան
իր հորը խնդրեց բացատրել
մարգարեությունը, բայց մի
այնպիսի խիստ ու համառ
լռության դեմ առավ, որ այլևս
երբեք չհամարձակվեց շոշափել
այդ թեման: Սակայն, դա միայն
ավելի սաստկացրեց նրա
ցանկությունը՝ ավելին
իմանալու քրիստոնեական
կրոնի մասին:

Ճշմարտությունը, որը նա
որոնում էր, նրանից խնամքով
թաքցնում էին իր հրեական
ընտանիքում, բայց ընդամենը
տասնմեկ տարեկանում նա
լքեց իր հայրական սաւնը և
գնաց՝ աշխարհում իր համար
կրթություն ստանալու,
ընտրելու իր կրոնն ու կյանքի
գործը: Նա միառժամանակ
բնակվեց իր ազգականների
մոտ, բայց շուտով վտարվեց
նրանցից որպես ազգի
դավաճան, և մնալով մենակ ու
առանց միջոցների՝ ստիպված
էր ինքնուրույն հարթել իր
կյանքի ուղին օտարության

մեջ: Նա շրջում էր տեղից տեղ՝
ջանալով գիտելիքներ ձեռք
բերել և իր գոյությունը
պահելով եբրայերենի դասեր
տալով: Մի կաթոլիկ ուսուցչի
ագդեցությամբ նա ընդունեց
Յոզմի հավատը և վճռեց
ավետարանիչ դառնալ իր
ժողովրդի մեջ: Այս նպատակով
նա մի քանի տարի անց գնաց
կրթությունը ստանալու Յոզմի
ավետարանչական քոլեջում:
Այստեղ անկախ մտածելու և
ուղիղ խոսելու իր սովորության
պատճառով նա մեղադրվեց
հերձվածո-դության մեջ: Նա
բացահայտորեն քննադատում

Էր եկեղեցու չարաշահ-հոլմները
և պնդում բարեփոխման
անհրաժեշտութունը: Թեև
սկզբում պապական
պաշտոնյաները հատուկ
բարեհաճությամբ էին վարվում
Նրա հետ, որոշ ժամանակ անց
Նրան վտարեցին Յոնմից:
Եկեղեցու հսկո-ղության տակ
Նա թափառում էր տեղից տեղ,
մինչև վերջապես պարզվեց, որ
Նա երբեք չի ենթարկվի Յոնմի
գերությանը: Նրան
հայտարարեցին անուղղելի և
ազատ արձակեցին: Նա հիմա
ուղեորվում է Անգլիա, և
դավանելով բողոքական

հավատը՝ միանում է Անգլիկան
եկեղեցուն: Երկու տարի
սովորելուց հետո, 1821-ին, Նա
անցավ իր ավետարանչական
գործունեությանը:

Ընդունելով այն մեծ
ճշմարտությունը, որ Քրիստոսն
ատաշին [359] անգամ եկել է
որպես «վշտերի մարդ՝ ցավի
տեղյակ», Նա տեսավ, որ
մարգարեությունները Նույն
պարզությամբ էլ պատկերում
են Նրա երկ-րորդ գալուստը՝
գորությամբ և փառքով: Մինչ
Նա ջանում էր իր ժողովուրդի
ուշադրությունը հրավիրել

Խոստացյալ Յիսուս
Նազովրեցու վրա և ցույց տալ,
որ Նա առաջին անգամ եկել է
Նվաստանալու և զոհ դառնալու
մարդկանց մեղքերի համար,
նա միեւնույն ժամանակ
սովորեցնում էր, որ Նա գալու է
երկրորդ անգամ՝ որպէս
թագավոր և ազատարար:

«Յիսուս Նազովրեցին՝
իսկական Մեսիան,— ասել է
Նա,— ում ձեռքերն ու ոտքերը
խոցեցին և գառան պէս տարան
մորթելու, ով վշտերի Մարդ էր՝
ցավի տեղյակ, ով առաջին
անգամ եկավ այն բանից հետո,

երբ գավազանը խլվեց
«Յուդայից և օրենսդրական
իշխանությունը՝ նրա ոտքերի
մեջտեղից», երկրորդ անգամ
գալու է երկնքի ամպերով ու
հրեշտակապետի վաղով»
(Ջոզեֆ Ուոլֆ,
Յետագոտություններ և
ավետարանչական գործեր, Էջ
62) «և կանգնելու է Ձիթենյաց
սարի վրա, և իշխանությունը,
որը երբևէ տրվել էր Ադամին
ամբողջ արարչագործության
վրա, և որը նա կորցրել էր
(Ծննդոց 1.26, 3.17), տրվելու է
Յիսուսին: Նա թագավոր է
լինելու ողջ երկրի վրա:

Ստեղծվածների
հառաչանքներն ու ցավը
դադարելու են, վտխաբերը
լսվելու են գովասանքի և
շնորհակալական երգեր... Երբ
Յիսուսը գա Իր Յոր փառքով և
սուրբ հրեշտակների հետ, նախ
հարություն կառնեն մեռած
հավատացյալները: (Ա
Թեսաղոնիկեցիս 4.16, Ա
Կորնթացիս 15.32): Սա է, որ
մենք՝ քրիստոնյաներս,
անվանում ենք առաջին
հարություն: Յետո
կենդանական աշխարհն
ամբողջովին կվափոխվի
(Եսայիա 11.6-9) և կինազանդվի

Չհստեսին (Սաղմոս 8):
Աշ-խարհում կգերիշխի
խաղաղությունը» (Պատվելի
Ջոզեֆ Ուոլֆի օրագիրը, էջ 378,
379): «Նայելով երկրին՝ Տերը
նորից կասի. «Ահա շատ բարի
է» (Նույն տեղում, էջ 294):

Ուոլֆը հավատում էր, որ Տիրոջ
գալուստը մոտ է:
Մարգարեական
ժամանակաշրջանների
մեծագույն եզրափակման
ժամանակը, նրա
մեկնաբանությամբ, միայն մի
քանի տարով էր տարբերվում
Միլլերի նշած ժամանակից:

Նրանց, ովքեր պնդում էին
սուրբգրային այս խոսքը՝ «Այդ
օրվա և ժամի մասին ոչ ոք
չգիտի», թե մարդիկ ոչինչ չեն
կարող իմանալ Նրա գալստյան
մոտիկության վերաբերյալ,
Ուղիքը պատասխանում էր.
«Մեր Տերն ասե՞լ է արդյոք, որ
այդ օրն ու ժամը երբեք չեն
իմացվելու: Մի՞թե Նա մեզ չի
տվել ժամանակի նշաններ,
որպեսզի [360] մենք, առնվազն,
իմանանք Նրա գալստյան
մոտիկությանը, ինչպես թզենու
տերևների բացվելուց իմանում
ենք, որ ամառն արդեն մոտ է
(Մատթեոս 24.32): Մի՞թե

այդպես երբեք էլ չպիտի
իմանանք այդ ժամանակը, երբ
Նա Ինքն է հորդորում մեզ ոչ
միայն կարդալ Դանիել
մարգարտի գիրքը, այլև
հասկանալ այն: Եվ հենց Նույն
Դանիելի գիրքը, որն, ինչպես
գրված է, կնքված է մնալու
մինչև վերջին ժամանակը (հենց
այդպես էր Նրա օրերին),
վերջին ժամանակներում
«շատերը կքնեն (եբրայերեն
տեքստը խոսում է ժամանակին
հետևելու և դրա շուրջը
խորհելու մասին), և
«գիտությունը (ժամանակի
վերաբերյալ) պիտի շատանա»

(Դանիել 12.4): Բացի այդ՝ մեր
Տերը դրանով նկատի չի
ուներցել, որ այդ ժամանակի
մոտիկութունը չի իմացվելու,
այլ որ ճշգրիտ «օրն ու ժամը ոչ
ոք չգիտի»: Նա ասում է, որ
ժամանակի նշաններից
բավարար բան կաբեի է
իմանալ, որպեսզի դրդվենք
պատրաստվելու Նրա
գալստյանը, նման նրան,
ինչպես Նոյը ինչ-որ ժամանակ
պատրաստեց տապանը»
(ՁոզեՖ Ուոլֆ,
Յետազոտություններ և
ավետարանչական գործեր, էջ
404,405):

Սուրբ Գրքի մեկնաբանության
կամ սխալ մեկնաբանության
ամենուրեք ընդունված
համակարգի վերաբերյալ
Ուոլֆը գրել է.

«Քրիստոնեական եկեղեցու
մեծ մասն Աստվածաշնչի
պարզությունից շեղվել է դեպի
բուդդայականների ցնորական
համակարգը, ովքեր հավատում
են, թե մարդկության ապագա
երջանկությունն օղում անվերջ
ճախրելու մեջ է, և կարծում են,
թե կարդալով «հրեա»՝ պետք է
հասկանան «հեթանոս», և
կարդալով «Երուսաղեմ»՝ պիտի

հասկանան «Եկեղեցի», թե «Երկիրը» նշանակում է «Երկինք», որ «Տիրոջ գալուստ» ասելով՝ պետք է հասկանալ «ավետարանչական ընկերությունների առաջընթաց», իսկ Տիրոջ տան սարը բարձրանալ՝ նշանակում է «մեթոդիստների մեծ ժողովը» (Պատվելի Ջոզեֆ Ուոլֆի օրագիրը, էջ 96):

Քսանչորս տարվա ընթացքում՝ 1821-ից մինչև 1845-ը, Ուոլֆը անդա-դար ճամփորդում էր: Աֆրիկայում նա այցելեց Եգիպտոս և Եթովպիա,

Ասիայում՝ Պաղեստին, Սիրիա,
Պարսկաստան, Բուխարա և
Ջնդկաս-տան: Նա այցելեց նաև
Միացյալ Նահանգներ՝
ճանապարհին քարոզելով
Սուրբ Յեղիևե կղզում: 1837 թ.
ժամանելով Նյու-Յորք՝ նա այդ
քաղաքում խոսեց, այնուհետե
քարոզեց նաև Ֆիլադելֆիայում
ու Բալթի— մորում և, ի վերջո,
հասավ Ուոշինգթոն: Այստեղ,
ասում է նա, «Նախկին
Նախագահ [361] Ջոն Բուլինսի
Ադամսի առաջարկությամբ
Կոնգրեսի պալատներից մեկում
ինձ հնարավորություն տրվեց
դասախոսություն անցկացնել,

և ես ելույթ ունեցա շաբաթ օրը
Կոնգրեսի բոլոր անդամների,
ինչպես նաև Վիրջինիայի
Եպիսկոպոսի և Ուոշինգթոնի
կղերականների ու
քաղաքացիների
ներկայությամբ: Նույն
պատիվն ինձ շնորհվեց նաև
Նյու Ջերսիի և Փենսիլվանիայի
կառավարության անդամների
կողմից, ում ներկայությամբ ես
դասախոսություններ կարդացի
Ասիայում արված իմ
հետազոտությունների, ինչպես
նաև Ջիսուս Բրիստոսի
անձնական իշխանության

մասին» (Նույն տեղում, էջ
398,399):

Դոկտոր Ուոլֆը
ճանապարհորդեց
ամենաբարբարոսական
երկրներով՝ առանց որևէ
եվրոպական իշխանության
պաշտպանության, կրելով շատ
դժվարություններ ու
ենթարկվելով բազմաթիվ
վտանգների: Նրան փայտով
ծեծել են, սովահար են արել,
վաճառել են որպես ստրուկ և
երեք անգամ դատապարտել
մահվան: Նա ենթարկվել է
ավազակային հարձակումների

և երբեմն գրեթե մեռնելիս է
եղել ծարավից: Մի անգամ խլել
են նրա ամբողջ ունեցվածքը, և
նա ստիպված՝ սարերով
հա-րյուրավոր մղոններ անցավ
ոտքով, երբ ձյունը խփում էր
նրա դեմքին, և բոբիկ ոտքերը
փայտացել էին սառած գետնին
հավելուց:

Երբ նրան նախազգուշացնում
էին անզեն չգնալ վայրի և
թշնամական ցեղերի մոտ, նա
պատասխանում էր. որ ինքը
«սպառազինված է» «աղոթքով,
եռանդով՝ հանուն Քրիստոսի և
Նրա օգնության

վատահուլ-թյամբ»: «Ես նաև,—
ասում էր նա,— զինված եմ
սիրով Աստծո և մերձավոր-րիս
հանդեպ, և ինձ հետ է իմ
Աստված աշունչը» (Ու. Յ. Դ.
Ադամս, Յաճախ վտանգների
մեջ, էջ 192): Ուր որ գնար, նա
իր հետ ուներ Աստվածաշունչ՝
երբայերես և անգլերես
լեզուներով: Իր վերջին
ճամփորդություններից մեկի
մասին նա ասել է. «Ես միշտ
Աստվածաշունչը բաց էի
պահում իմ ձեռքում: Ես զգում
էի, որ իմ ամն այդ Գրքի մեջ է, և
որ նրա զորությունն է ինձ

պահում» (Նույն տեղում, Էջ 201):

Այսպես նա համառորեն
աշխատեց, մինչև որ
դատաստանի լուրը հնչեց
բնակեցված մոլորակի մեծ
մասում: Հրեաների, թուրքերի,
պար-սիկների, հնդիկների և
շատ ուրիշ ազգերի ու
ռասաների մեջ նա այդ
լեզուներով տարածում էր
Աստծո խոսքը՝ ամենուրեք
ազդարարելով Մե-սիայի
մոտեցող արքայութունը:

Իր ուղևորությունների
ժամանակ նա Բուխարայում
գտավ մի առանձնացված
ժողովուրդ, որը հավատում էր
Տիրոջ մոտալուտ երկրորդ
գալստյանը: [362] «Յեմենի
արաբները,— ասում է նա,— մի
գիրք ունեն, որը կոչվում է
«Սեերա», և որում ասվում է
Քրիստոսի երկրորդ գալստյան
ու Նրա փառավոր
թագավորության մասին: Եվ
նրանք մեծ
իրադար-ձությունների են
սպասում 1840 թվականին»
(Պատվելի Ջոզեֆ Ուոլֆի
օրագիրը, էջ 377): «Յեմենում...

ես վեց օր անցկացրի Ռեքաբի որդիների հետ: Նրանք գինի չեն խմում, խաղող չեն տնկում ու սերմ չեն ցանում, ապրում են վրաններում և հիշում են հին բարի Յովնադաբին՝ Ռեքաբի որդուն: Նրանց մեջ ես գտա Իսրայելի զավակներից մի խումբ՝ Դանի ցեղից ...ովքեր Ռեքաբի որդիների հետ միասին սպասում են Մեսիայի շուտափուլթ գալստյանը՝ երկնքի ամպերով» (Նույն տեղում, Էջ 389):

Մեկ այլ ավետարանիչ նման ուսմունք է հայտնաբերել

Թաթարստա-նում: Թաթար
քահանան հարցրել է
ավետարանչին, թե երբ է
Քրիստոսը գալու երկրորդ
անգամ: Երբ ավետարանիչը
պատասխանել է, որ այդ մասին
ոչինչ չգիտի, քահանան խիստ
զարմացել է մեկի տգիտության
վրա, ով իրեն Աստվածաշնչի
ուսուցիչ էր համարում, և իր
համոզմունքն է արտահայտել՝
հիմնվելով մարգարեության
վրա, որ Քրիստոսը կգա մոտ
1844 թվականին:

Անգլիայում ադվենտիստական
լուրը սկսեց քարոզվել վաղուց՝

1826 թվականից: Այստեղ
շարժումն այնպիսի որոշակի ձև
չընդունեց, ինչպես
Ամերիկայում: Ընդհանուր
առմամբ, այդպես համատարած
չէր նշվում գալստյան ստույգ
ժամանակը, բայց ամենուրեք
հռչակվում էր գորությամբ և
փառքով ուղեկցվող Քրիստոսի
մոտալուտ գալստյան մեծ
ճշմարտությունը, և ոչ միայն
այլախոհներին և
այլադավաններին: Անգլիացի
գրող Մուրան Բրոքը նշում է, որ
Անգլիկան եկեղեցու շուրջ յոթ
հարյուր ծառայողներ քարոզել
են «արքայության այս

ավետարանը»: Այն, որ Տերը
գալու է 1844-ին, նույնպես
ագդարարվել է Մեծ
Բրիտանիայում: Ամենուրեք
տարածվում էին
ադվենտիստական
հրատարակություններ՝
բերված Միացյալ
Նահանգներից: Գրքերն ու
ամսագրերը վերատպվում էին
Անգլիայում: Եվ 1842-ին
Ռոբերտ Ուիլսթերը, ծագումով
անգլիացի, ով ընդունել էր
ադվենտիստական հավասար
Ամերիկայամ, վերադարձավ
հայրենիք՝ ագդարարելու Տիրոջ
գալուստը: Շատերը միացան

Նրան այդ գործում, և
դատաստանի լուրը հռչակվեց
Անգլիայի տարբեր մասերում:
[363]

Հարավային Ամերիկայում,
բարբարոսության ու
քահանայական դավերի մեջ,
իսպանացի ճիզվիտ
Լակոլնզան, կարդալով
Աստվածա-շունչը՝ ընդունել էր
Քրիստոսի շուտափուլյթ
գալստյան ճշմարտությունը:
Դրդում զգալով հռչակելու
նախազգուշացումը և
միաժամանակ կամե-նալով
խուսափել Հռոմի

դժգոհությունից՝ նա իր
հայացքները հրապա-րակեց
«Ռաբբի բեն Էզրա»
կեղծանվան տակ՝
ներկայանալով որպես դարձի
եկած հրեա: Լակոնզան ապրել
է տասնութերորդ դարում, բայց
միայն 1825 թվականին է այդ
գիրքը Լոնդոնում թարգմանվել
անգլերեն: Դրա
հրապարակումն ավելի
խորացրեց Անգլիայում արդեն
առաջացած հետաքրքրությունը
Երկրորդ գալստյան թեմայի
հանդեպ:

Գերմանիայում այս ուսմունքը
հռչակվել է տասնութերորդ
դարում՝ լութերական եկեղեցու
ծառայող, ականավոր
աստվածաբան ու քննա-դատ
Բենգելի կողմից: Իր ուսումն
ավարտելուց հետո Բենգելը
«նվիրվեց
աստվածաբանության
ուսումնասիրությանը, ինչի
նկատմամբ բնական հակում
ունեի նրա կայուն ու կրոնասեր
միտքը՝ խորացված նրա վաղ
կյանքի կարգապահությամբ ու
դաստիարակությամբ: Ուրիշ
խելամիտ երիտասարդների
պես՝ նա վաղ տարիքում արդեն

ստիպված էր պայքարել իր
կասկածների և
բարդությունների դեմ կրոնի
հարցերում, և հուզմունքով է
հիշում «այն բազմաթիվ
նետերի մասին, որոնք խոցել
են իր խեղճ սիրտն ու
անաանեփ դարձրել իր
երիտասարդությունը»:
Դառնալով վուրթեմբերգի
կարդինալների խորհրդի
անդամ նա սկսեց պայքարել
կրոնական ազատության
համար: «Պաշտպանելով
եկեղեցու իրավունքներն ու
արտոնություններդ՝ նա
միաժամանակ պաշտպանեց

բանական ազատության
սկզբունքը նրանց համար,
ովքեր կցանկանան դուրս գալ
եկեղեցու անդամությունից,
եթե այդպես թելադրում է
նրանց խիղճը» (Encyclopedia
Britannica, 9-րդ հրտ., հոդված
«Բենգել»): Այս
քաղաքականության բարերար
ազդեցությունն այսօր էլ դեռ
զգացվում է նրա հայրենի
գավառում:

Չայտնություն 21-րդ գլխից
«ապագա կիրակիի» մասին
քարոզ պատրաստելու
ժամանակ էր, որ Քրիստոսի

երկրորդ գալստյան լայսր
ներթափանցեց Բենգելի միտքը:
Չայտնության
մարգարեությունները, ինչպես
երբեք նախկինում,
բացահայտվեցին նրա
հասկացողությանը: Մարգարեի
պատկերած ահռելի
կարևորության ու
անգերազանցելի փառքի
տեսարաններից ցնցված՝ նա
ստիպված էր միառժամանակ
դա-դարել այդ մասին
խորհելուց: Ամբիոնի վրա.
սակայն, [364] այդ ամենը
կրկին նրան պատկերվեց իր
ողջ փայլով ու զորությամբ: Այդ

պահից նա նվիրվեց
մարգարեությունների,
հատկապես Չայտնության
ուսում-նասիրությանը, և
շուտով եկավ այն համոզման,
որ դրանք վկայում էին
Քրիստոսի շուտափույթ
գալստյան մասին: Նրա նշած
ժամանակը, թե երբ պետք է
լիներ երկրորդ գալուստը,
ընդամենը մի քանի տարով էր
տարբերվում նրանից, որը
հետագայում նշելու էր Միլլերը:

Բենգելի գրվածքները
տարածվեցին քրիստոնեական
ողջ աշխարհով մեկ:

Մարգարեութեան մասին նրա
հայացքները գրեթե
ամբողջովին ընդունվեցին իր
հայրենի Վուրթեմբերգում, որոշ
չափով էլ Գերմանիայի այլ
մասերում: Շարժումը
շարունակվեց նաև նրա սահից
հետո, և գալստյան լուրը
գուգահեռ հնչեց
Գերմանիայում՝ մյուս երկրների
հետ միասին: Ավելի վաղ
հավատացյալներից ոմանք
մեկնեցին Ռուսաստան և
այնտեղ հիմնեցին գաղութներ,
և այդ երկրի գերմանական
եկեղեցիները մինչև այսօր էլ

հավատում են քրիստոսի
մոտալուստ գալստյանը:

Լույսը ծագեց նաև
Ֆրանսիայում և
Շվեյցարիայում: Ժնևում, որտեղ
Ֆարեյն ու Կալվինը տարածել
էին Բարենորոգման
ճշմարտությունը, Գոսենը
քարոզեց երկրորդ գալստյան
լուրը: Ուսանողական
տարիներին Գոսենը բախվել էր
ռացիոնալիզմի հետ, որի ոգով
տոգորված էր ամբողջ
Եվրոպան տասնութերորդ դարի
վերջին և տասնիններորդի
սկզբին: Ու երբ անցավ հոգևոր

ծառայութեան, ոչ միայն ծանոթ
չէր ճշմարիտ հավատին, այլև
կասկածամտութեան հակում
ունէր: Դեռ երիտասարդ
տարիներին նա հետաքրքրվել
էր մարգարեութիւնների
ուսումնասիրութեամբ: Ռուլինի
«Յնադարյան պատմութիւնը»
կարդալիս նրա ուշադրութիւնը
հրավիրվեց Դանիելի երկրորդ
գլխի վրա, և նա ցնցվեց՝
տեսնելով, թէ ինչ զարմանալի
ճշտութեամբ էր կատարվել
մարգարեութիւնը, ինչն
արտահայտված էր նաև
պատմական տարեգրութեան
մեջ: Սա վկայում էր մի Գրքի

Ներշնչվածության մասին, որը
Նրա խարիսխը դարձավ իր
հետագա կյանքի վտանգների
մեջ: Նա չէր կարող
բավարարվել ռացիոնալիզմի
ուսմունքով, ու էր սկսեց Սուրբ
Գիրքն ուսումնասիրել ավելի
պարզ լույս ստանալու համար,
Նրա հավատը գորացավ:

Շարունակելով քննել
մարգարեությունները՝ նա
համոզվեց, որ Տիրոջ գալուստը
մոտ է: Այս մեծ ճշմարտության
հանդիսավորությունից ու
կարևորությունից [365]
ազդված՝ նա կամեցավ

տեղեկացնել մարդկանց այդ
մասին, բայց ընդունված այն
կարծիքը, ըստ որի՝ Դանիելի
մար- գարեուլթյունները
գաղտնիք են և չեն կարող
հասկացվել, լուրջ խոչընդոտ էր
Նրա ճանապարհին: Ի վերջո,
Նա վճռեց սկսել երեխաներից,
ուսմ միջոցով հույս ուներ
հետաքրքրել ծնողներին,
ինչպես Ֆարելն էր նրանից
առաջ արել ժննս
ավետարանելիս:

«Կուզենայի հասկանալի
լինել,— ասել է Նա՝ ավելի ուշ
խոսելով իր Նախաձեռնուլթյան

Նպատակի մասին,— որ ես
կամեցա ճշմարտութիւնը
ներկայացնել այս պարզ ձևով և
դիմեցի երեխաներին ոչ թե դրա
նվազ կարևորութեան
պատճառով, այլ
ընդհակառակը, որովհետև շատ
կարևոր է: Ես վախենում էի, որ
ինձ չեն լսի, եթե նախ դիմեմ
մեծահասակ մարդկանց»:
«Դրա համար էլ որոշեցի գնալ
երեխաների մոտ: Ես
հա-վաքում եմ երեխաներին, ու
եթե խումբը մեծանում է, եթե
նրանք լսում են, ուրախանում,
հետաքրքրվում և հասկանում
խոսքը, ես համոզված եմ, որ

շուտով երկրորդ խումբը
կունենամ, իսկ
մեծահասակներն, իրենց
հերթին, տեսնում են, որ արժե
Նրանց հետ նստել և
ուսումնասիրել: Երբ դա արվում
է, ես հասնում եմ նպատակիս»
(Լ. Գոսեն, Դանիել մարգարեն,
հ. 2, Նախաբան):

Նրա ջանքերը պսակվեցին
հաջողությամբ: Երբ նա դիմեց
երեխա-ներին, նրանց հետ
եկան լսելու նաև
մեծահասակները: Նրա
եկեղեցու սրահները լցվեցին
ուսկնդիրներով: Նրանց մեջ

Կային պաշտոնյաներ և
կրթված մարդիկ, ժնև այցելող
եկվորներ ու օտարականներ, և
Նրանց միջոցով լուրը հասավ
տարբեր վայրեր:

Այս հաջողութեամբ ոգևորված՝
Գոսենը հրատարակեց իր
դասերը՝ հուսալով նպաստել
մարգարեական գրքերի
ուսումնասիրութեանը
Ֆրանսիականների
եկեղեցիներում: «Դասեր
տպագրել երեխաների համար,-
ասում է Գոսենը,— նշանակում
է դիմել մեծերին, ովքեր շատ
հաճախ անտեսում են այս

գրքերը՝ ձևացնելով, թե դրանք
անհականալի են: «Ինչպե՞ս են
դրանք անհասկանալի, երբ ձեր
երեխաները հասկանում են»:
«Ես մեծ փափագ ունեի,—
ավելացնում է նա,— օգնելու
մեր հոտին՝ հասկանալու
մարգարեությունները, եթե
հնարավոր է»: «Յիրավի, չկա
մի ավելի կարևոր
ուսումնասիրություն, որն, իմ
կարծիքով, ամենաառույգն է
պատասխանում ժամանակի
պահանջներին»: «Յենց դրանով
մենք պիտի պատրաստվենք
գալիք նեղություններին,

արթուն փնենք և սպասենք
Յիսուս Բրիստոսին»։ [366]

Թեև Գոսենն ամենաականավոր
և սիրված ֆրանսերեն խոսող
քարոզիչներից մեկն էր, որոշ
ժամանակ անց նրան
հեռացրին ծառայութունից՝
նրա ամենաձանր մեղքը
համարելով այն, որ եկեղեցու
կատեխիզիսի՝ անշունչ ու
ռացիոնալիստական ձեռնարկի
փոխարեն, որը գրեթե զուրկ էր
դրական հավատից, նա,
երեխաներին սովորեցնելու
համար օգտագործել էր
Աստվածաշունչը։ Յետագայում

Նա դարձավ
աստվա-ծաբանության
ուսուցիչ, և կիրակի օրը
շարունակում էր դաստիարակի
իր գործը՝ Սուրբ Գրքից դասեր
տալով երեխաներին: Նրա
գրվածքները մարգարեության
մասին նույնպես մեծ
հետաքրքրություն
առաջացրին: Պրոֆեսորական
ամբիոնից, ուսուցչի աթոռից և
մամուլի միջոցով նրա
ագդեցությունը տարիներ
շարունակ աճում էր: Եվ
այդպիսով, նա շատերի
ուշադրությունը հրավիրում էր
մարգարեությունների

ՈԼՍՈԼՄՆԱՍԻՐՈՒ-ԹՅԱՆՆԸ՝ ԳՈԼՅԳ
ՄԱԼՈՎ, ՈՐ ՏԻՐՈՋ ԳԱԼՈՒՍՏՐ
ՄՈՒ Է:

Գալստյան լուրը հռչակվեց նաև
Սկանդինավիայում՝ ամենուրեք
առաջացնելով խոր
հետաքրքրություն: Շատերն
իրենց անհոգ
հանգստությունից արթնացան՝
խոստովանելու և թողնելու
իրենց մեղքերը և ներում
փնտրելու Քրիստոսի անունով:
Սակայն պետական եկեղեցու
կղերականներն ընդդիմացան
այդ շարժմանը, և նրանց
ազդեցությամբ ոմանք, ովքեր

քարոզում էին լուրը, բանտ
նետվեցին: Շատ վայրերում,
որտեղ Տիրոջ մոտալուստ
գալուստն ազդարարողներին
այսպես լռեցրել էին, Աստված
բարեհաճեց իր լուրն ուղարկել
հրաշալի կերպով՝ երե-խաների
միջոցով: Քանի որ նրանք
անչափահաս էին, պետական
օրենքը չէր կարող արգելել
նրանց ազատ խոսելու:

Շարժումն իր մեջ ընդգրկում էր
գլխավորապես ստորին
խավերը, և աշխատավորների
համեստ բնակարաններում էր,
որ մարդիկ հավաքվում էին՝

լսելու նախազգուշացումը: Այդ
մանուկ քարոզիչներն իրենք էլ
հաճախ աղքատ
ընտանիքներից էին: Նրանցից
ոմանք տարիքով վեց կամ ութ
տարեկան էին, ոչ ավելի: Եվ
չնայած նրանց կյանքը վկայում
էր, որ սիրում են Փրկչին և
ջանում են ապրել՝
հնազանդվելով Աստծո սուրբ
պահանջներին, նրանք
իրականում դրսևորում էին
միայն իրենց մանկական
տարիքին բնորոշ
դատողություն և
ունակություններ: Բայց երբ
կանգնում էին ժողովրդի առջև,

[367] ակնհայտ էր դառնում, որ
Նրանք լցված էին մի
զորությամբ, որը վեր էր Նրանց
բնական շնորհներից: Նրանց
ձայնի տոնն ու շարժումը
վախվում էին, և հանդիսավոր
զորությամբ Նրանք
Նախազգուշացնում էին
դատաստանի մասին՝
վկայակոչելով ասրբգրային
տեքստը. «Վախեցեք Աստծուց և
փառք տվեք Նրան, որովհետև
Նրա դատաստանի ժամը
եկավ»: Նրանք հանդիմանում
էին ժողովրդի մեղքերը՝
դատապարտելով ոչ միայն
անբարոյականությունն ու

արատը, այլև ուրացութեանն ու
աշխարհասիրութեանը՝ իրենց
ունկնդիրներին
նախազգուշացնելով
անհապաղ խուսափել գափք
բարկութիւնից:

Ժողովուրդը սարսուռով էր
լսում: Աստճո Յոզիւն խոսում էր՝
փափկացնելով նրանց սրտերը:
Ճատերը դրդվում էին
ուսումնասիրելու Սուրբ Գիրքը
նոր և ավելի խորը
հետաքրքրութեամբ,
անզուսպներն ու անառակները
վերափոխվում էին, ուրիշները
թողնում էին իրենց ան-ազնիվ

արարքները, և բարեփոխումն
այնքան հստակ էր, որ նույնիսկ
պաշտոնական եկեղեցու
ծառայողները ստիպված
խոստովանում էին, որ Աստծո
ձեռքն էր այդ շարժման մեջ:

Աստծո կամքն էր, որ Փրկչի
գալստյան լուրը հնչի
Սկանդինավյան երկրներում, ու
երբ Նրա ծառաների ձայները
լռեցին, Նա իր Հոգին դրեց
երեխաների վրա, որպեսզի
գործը կանգ չառնի: Երբ
Հիսուսը մոտենում էր
Երուսաղեմին ցնձացող
ամբոխի ուղեկցությամբ, որը

հաղթական գոչյուններով և
արմավենու ճյուղեր
թափահարելով՝ Նրան Դավթի
Որդի Էր հռչակում, նախանձ
փարիսեցիները պահանջեցին,
որ Նա լռեցնի մարդկանց, բայց
Չհսուսը պատասխանեց, որ այդ
ամենը մարգարեության
հրականացում էր, և եթե նրանք
լռեին, ապա քարերը պիտի
աղաղակեին: Քահանաների և
իշխանների սպառնափոքներից
վախեցած՝ ժողովուրդը
դադարեցրեց իր ցնձագին
բացականչությունը, երբ ներս
Էր մտնում Երուսաղեմի
դարպասներից, բայց

երեխաները, տաճարի
Դավիթներում արձագանքելով
մեծերի ձայնին, թափահարում
էին արմավենու ճյուղերն ու
բացականչում. «Օվսա՛ննա
Դավթի Որդուն» (Մատթեոս
21.8-16): Երբ խիստ զայրացած
փարիսեցիները հարցրին.
«Լսո՞ւմ ես՝ դրանք ինչ են
ասում», Չիսուսը
պատասխանեց. «Այո, դուք չե՞ք
կարդացել, թե՛ երեխաների և
ծճկերների բերանով
օրհնություն արեցիր»: Ինչպես
Աստված երեխաների միջոցով
[368] գործեց Քրիստոսի
առաջին գալստյան ժամանակ,

այնպես էլ նրանց միջոցով
հռչակեց Նրա երկրորդ
գալուստը: Տիրոջ այն խոսքը,
որ իր գալստյան լուրը հնչելու է
բոլոր ազգերին, ցեղերին,
ժողովուրդներին և լեզուներին,
պետք է իրականացվի:

Ուհյամ Միլլերն ու Նրա
գործակիցները կանչվեցին
քարոզելու Նախագգուշացումը
Ամերիկայում: Այս երկիրը
դարձավ ադվենտիստական մեծ
շարժման կենտրոն: Այստեղ էր,
որ առաջին հրեշտակի
պատգամն իր ուղղակի
իրականացումը գտավ: Միլլերի

և նրա համախոհների
գրվածքները հասան հեռավոր
երկրները: Աշխարհի որ երկիրն
էլ որ ներթափանցեին
ավետարանիչները, նրանք
իրենց հետ տանում էին
Քրիստոսի մոտալուստ
վերադարձի բարի լուրը:
Ամենուրեք հնչում էր
հավիտենական ավետիսը.
«Վախեցե՛ք Աստծուց և փառք
տվեք նրան, որովհետև նրա
դատաստանի ժամը եկավ»:

Մարգարեությունների մասին
վկայությունդ որն իբր
մատնանշում էր, թե Քրիստոսի

գալուստը պետք է լինի 1844 թ.
գարնանը, խորապես
արմատավորվեց ժողովրդի
մտքում: Լուրը, անցնելով
Նահանգից Նահանգ,
ամենուրեք լայն
հետաքրքրություն առաջացրեց:
Շատերը համոզված էին, որ
փաստարկները մարգարեական
ժամանակահատվածների
վերաբերյալ ճիշտ էին, և
զոհաբերելով իրենց կարծիքն
ունենալու հպարտությունը՝
ուրախությամբ ընդունեցին
ճշմարտությունը: Որոշ
ծառայողներ մի կողմ դրեցին
իրենց առանձին հայացքներն

ու համոզմունքները թողեցին
իրենց աշխատավարձն ու
եկեղեցիները և միացան
Յիսուսի գալստյան հռչակման
գործին: Սակայն
համեմատաբար փոքրաթիվ
ծառայողներ ընդունեցին լուրը,
ուստի այն վատահվեց
հիմնականում հասարակ
անդամներին:
Ագարակատերերը թողնում էին
իրենց դաշտերը,
արհեստավորներն՝ իրենց
գործիքները,
վաճառականներն՝ իրենց
առևտուրը, մասնագետներն՝
իրենց պաշտոնները,

բայցնայնպես, աշխատողների
թիվը փոքր էր այն գործի
համար, որ պետք է կատարվեր:
Անաստված եկեղեցու և
ամբարշտութայան մեջ թաղված
աշխարհի վիճակը ճնշում էր
իսկական պահապանների
ոգին, և նրանք հոժարակամ
դժվարություններ էին կրում,
զրկանքներ ու տառապանք,
որպեսզի կարողանային
մարդկանց ապաշխարութայան
կոչ անել և ցույց տալ
փրկութայան տանող
ճանապարհը: Չնայած
սատանայի դիմադրութանը՝
գործն արագորեն առաջ էր

գնում, և գալլետյան լուրն
ընդունվում էր
հազարավորների կողմից: [369]

Ամենուրեք հնչում էր սրտեր
քննող վկայություն, որը
մեղավորներին՝ աշխարհիկ, թե
եկեղեցու անդամ,
Նախագգուշացնում էր վախճել
գլխիք բարկությունից:
Հովհաննես Մկրտչի՝ Քրիստոսի
Նախակարապետի նման,
քարոզիչները կացինը դնում
էին ծառի արմատին՝ բորտին
կոչ ա նեյով Լսպաշխարության
արժանի պտուղներ բերել:
Նրանց ցնցող կոչե— որ

Եկեղեցական ամբիոններից
հնչող խաղաղության ու
անվտանգության
հավաստիացումների կտրուկ
հակադրությունն էին, և որտեղ
որ հնչեր լուրր, ամենուրեք
արթնացնում էր ժողովրդին:
Սուրբ Գրքի պարզ, ուղ-ղակի
վկայությունդ Սուրբ Հոգու
զորությամբ թափանցելով
մինչև հոգու խորքը, այնպիսի
ուժով էր համոզում, որ քչերն
էին կարողանում
ընդդի-մանալ: Իրենց
հավատացյալ համարողներն
արթնացան ապահովության
կեղծ զգացումից՝ գիտակցելով

իրենց նահանջը, իրենց
աշխարհասի-րությունն ու
անհավատությունը, իրենց
հպարտությունն ու
եսասիրությունը: Շատերն
ապաշխարությամբ ու
խոնարհությամբ որոնում էին
Տիրոջը: Երկրային բաներով
այդքան երկար կլանված
զգացումներն այժմ ուղղվեցին
դեպի երկինք: Աստծո Յոզիս
իջավ նրանց վրա, և նրանք
փափկած ու հնազանդ
սրտերով միավորվեցին՝
բարձրաձայներ» կոչը.
«Վախեցե՛ք Աստծուց և վառք

տվեք նրան, որովհետև նրա
դատաստանի ժամը եկավ»:

Մեղավոր մարդիկ արտասպելով
հարցնում էին. «Ի՞նչ անեմ, որ
փրկվեմ»: Նրանք, ովքեր
անազնիվ կյանք էին վարել,
ձգտում էին փոխհատուցել
վնասը: Բոլորը, ովքեր
խաղաղություն էին գտել
Քրիստոսում, փափագում էին
այդ օրհնությունը կիսել այլոց
հետ: Ծնողների սրտերը
դարձան դեպի իրենց
զավակները, իսկ
զավակներինը՝ դեպի իրենց
ծնողները: Հպարտության ու

ծանրամտութեան պատնէշները
քանդվեցին: Անկեղծ
խոստովանութիւններ էին
արվում, ընտանիքի
անդամներն աշխատում էին
փրկել իրենց սիրելիներին ու
հարազատներին: Յաճախ
կարելի էր ջերմեռանդ
միջնորդական աղոթք լսել:
Ամենուրեք հոգիներ էին, ովքեր
թախանձագին աղոթում էին
Աստծուն: Շատերն ամբողջ
գիշեր աղոթքով պայքարում
էին՝ համոզվելու, որ իրենց
մեղքերը ներված են, կամ էլ
խնդրում էին իրենց

ազգականների և հարևանների
դարձի գալու համար:

Բոլոր խավերից մարդիկ
հավաքվում էին
ադվենտիստական
ժողովներին: Չարուստ և
սպքատ, բարձր կամ ցածր՝
մարդիկ տարբեր
պատճառներով փափագում էին
անձամբ լսել երկրորդ
գալստյան մասին ուսմունքը:
Տերը զսպում էր ընդդիմության
ոգին, մինչև որ իր ծառաները
[370] բացատրեն, թե ինչի վրա
է հիմնված իրենց հավատը:
Երբեմն անոթը թույլ էր լինում,

բայց Աստծո Յոգին ուժ էր
հաղորդում իր
ճշմարտությանը: Այս
ժողովներում զգացվում էր
սուրբ հրեշտակների
ներկայութունը, և
հավատացյալների թիվն
օրեցօր աճում էր: Երբ կրկնվում
էին Քրիստոսի շուտափույթ
գալստյան վկայութունները,
մեծ ամբոխները շունչները
պահած լսում էին այդ
հանդիսավոր խոսքերը: Թվում
էր, թե երկինք ու երկիր
մոտեցել են միմյանց: Աստծո
զորութունը զգացվում էր
տարեցների, երիտասարդների

և միջին տարիքի մարդկանց
վրա: Շատերը տուն էին
վերադառնում՝
փառաբանությունն իրենց
շարթերին, և գիշերային
լռության մեջ զրնգում էին
ցնծության ձայները: Ոչ ոք, ով
այցելել է այդ ժողովներին,
երբեք չի մոռանա այդ
չափազանց հետաքրքիր
տեսարանները:

Քրիստոսի գալստյան ճշգրիտ
ժամանակի հռչակումը մեծ
ընդհմությունն առաջացրեց
բոլոր խավերի մեջ՝ սկսած
եկեղեցու քարոզիչներից մինչև

ամենահանդուզն ու ըմբոստ
մեղավորը: Իրականացան այս
մարգարեության խոսքերը.
«Վերջին օրերում ծաղր
անողներ կգան, որ իրենց
ցանկությունների պես
կվարվեն և կասեն. «Ո՞ր է նրա
գալստ-յան խոստումը, քանզի
այնուհետև, որ հայրերը
վախճանվեցին, ամեն բան
նույնպես կենում մնում է
աշխարհի
ստեղծագործությունից հետո»
(Բ Պետրոս 3.3, 4): Շատերը,
ովքեր պնդում էին, թե սիրում
են Փրկչին, հայտարարեցին, որ
իրենք դեմ չեն երկրորդ

գալստյան ուսմունքին,
պարզապես համաձայն չեն, որ
ստույգ ժամանակ է նշվում:
Բայց Աստծո ամենատես աչքը
կարդում էր նրանց սրտերը:
Նրանք չէին ցանկանում լսել,
որ Քրիստոսը գալիս է՝
արդարությամբ դատելու
աշխարհը: Այդպիսիք
անհավատարիմ ծառաներ էին,
ուսմ գործերը չէին դիմանա
սրտեր քննող Աստծո զննմանը,
և նրանք վախենում էին
հանդիպել իրենց Տիրոջը:
Ինչպես իրեաները Քրիստոսի
առաջին գալստյան ժամանակ,
նրանք են պատրաստ չէին

ողջունելու Յիսուսին: Նրանք ոչ
միայն հրա-ժարվեցին լսել
Աստվածաշնչի պարզ
վաստարկները, այլև
ծաղբեցին Տիրոջ
սպասողներին: Սատանան և
Նրա հրեշտակները ցնծում էին՝
կծու խոսքեր նետելով
Քրիստոսի և սուրբ
հրեշտակների երեսին, որ Նրա
ժողովուրդ կոչեցյալն այնքան
քիչ է սիրում Նրան, որ չի
ցանկանում Նրա գալուստը:

«Ոչ ոք չգիտի ոչ օրը և ոչ
ժամը», ահա այս փաստարկն
էին ամենից հաճախ բերում

ադվենտիստների հավատը
մերժողները: Սուրբ Գիրքն
ասում է. «Բայց այդ օրվա և
ժամի մասին [371] ոչ ոք չգիտի,
ոչ երկնքի հրեշտակներդ ոչ էլ
Որդին, այլ միայն Հայրը»
(Մատթեոս 24.36): Այս տեքստի
հստակ ու ներդաշնակ
բացատրությունը տրվեց
Նրանց կողմից, ովքեր սպասում
էին Տիրոջը, և ակնհայտ
դարձավ դրա կեղծումը նրանց
հակառակորդների կողմից: Այս
խոսքերը Քրիստոսն ասել էր իր
աշակերտներին՝ այն
անմոռանալի զրույցի
ժամանակ՝ վերջին անգամ

տաճարից հեռանալուց հետո:
Երբ աշակերտները հարցրին,
թե «Ո՞րն է քո գալստյան և
աշխարհի վերջի նշանը»,
Հիսուսը նրանց նշաններ տվեց՝
ասելով. «Երբ այս բոլորը
տեսնեք, իմացեք, որ մոտ է՝
դրոներին» (Մատթեոս 24.3,33):
Չի կարելի Փրկչի մի
արտահայտութունը
ներկայացնել այնպես, որ
հակասի մյուսին: Թեև ոչ ոք
չգիտի Նրա գալստյան օրը կամ
ժամը, մեզանից պահանջվում է
իմանալ, թե երբ է այն
մոտենալու, քանի որ այդ
մասին պարզ ցուցում է տրված:

Ասված է նաև, որ Նրա
Նախագգուշացումը մերժելը և
հրաժարվելն իմանալ, թե երբ
կմոտենա Նրա գալուստը,
Նույնքան բախտորոշ կարող է
փնտ մեզ համար, ինչպես եղավ
Նրանց համար, ովքեր ապրում
էին Նոյի օրերին և անտեսեցին
գալիք ջրհեղեղի մասին
Նախագգուշացումը: Եվ առական
էլ, նույն գլխում, հակադրելով
հավատարիմ ու
անհավատարիմ ծառաներին և
նշելով Նրա ճակատագիրը, ով
իր սրտում ասաց՝ «Իմ տերը
գալն ուշացնում է», ցույց է
տալիս, թե ինչպես է Քրիստոսը

հատուցելու նրանց, ովքեր
արթուն են գտնվել ու
սովորեցրել են Նրա գալստյան
մասին, և նրանց, ովքեր ժխտել
են այն: «Արդ՝ արթուն
կացեք,— ասում է Նա,— երանի
այն ծառային, ում նրա տերը,
երբ որ գա, այնպես անելիս
կգտնի» (Մատթեոս 24.42,46):
«Իսկ եթե արթուն չլինես, կգամ
ինչպես գող, և չես իմանա, թե
որ ժամին կգամ քեզ մոտ»
(Հայտնություն 3.3):

Պողոսը խոսում է նրանց
մասին, ում համար Տիրոջ
գալուստն ան-սպասելի է

լինելու: «Տիրոջ օրն այնպես է
հասնելու, ինչպես գողը՝
գիշերով: Երբ որ ասեն, թե
խաղաղությունն և
ապահովությունն է, այն
ժամանակ հանկարծակի նրանց
վրա կհասնի կորուստը... և չեն
պրծնի»: Յետո նրանց մասին,
ովքեր ընդունել են Փրկչի
նախազգուշացումը, ա—
վելացնում է. «Դուք,
եղբայրներ, խավարի մեջ չեք,
որ այն օրը գողի պես ձեզ վրա
հասնի: Դուք բոլորդ լույսի
որդիներ եք և ցերեկվա
որդիներ, գիշերինը չենք, ոչ էլ

Խավարինը» (Ա
Թեսաղոնիկեցիս 5.2-5): [372]

Այսպես ցույց է արված, որ
Սուրբ Գիրքը ոչ մի կերպ չի
արդարացնում Քրիստոսի
գալստյան մոտիկության
վերաբերյալ մարդկանց
կամավոր տգիտությունը: Բայց
նրանք, ում միայն պատճառ էր
պետք՝ մերժելու
ճշմարտությունը, չկամեցան
լսել այս բացատրությունը, և
այս խոսքերը. «Ոչ ոք չգիտի
օրը կամ ժամը», շարունակ
կրկնվում էին հանդուգն
ծաղրողների և անգամ

Քրիստոսի ծառայողներ
կոչեցյալների կողմից: Երբ
ժողովուրդն արթանացավ և
սկսեց որոնել փրկության
ուղին, կրոնի ուսուցիչները
կանգնեցին նրա և
ճշմարտության միջև՝ ջանալով
ցրել նրանց երկյուղը Աստծո
խոսքի սխալ
մեկնաբանությամբ:
Անհավատարիմ
պահապանները միացան մեծ
խաբեբային՝ ճշալով.
«Խաղաղությո՛ւն,
խաղաղությո՛ւն», թեև Աստված
խաղաղության մասին չէր
խոսել: Քրիստոսի օրերի

փարիսեցիների նման՝ շատերը
ոչ միայն իրենք չէին ուզում
մանել երկնքի արքայությունը,
այլև մտնողներին էլ
խանգարում էին: Եվ այդ
մարդկանց արյունը նրանցից է
պահանջվելու:

Մովորաբար եկեղեցու
ամենախոնարհ ու նվիրված
անդամներն առաջինն էին
ընդունում լուրը: Նրանք, ովքեր
ինքնուրույն էին
ուսումնասիրում Սուրբ Գիրքը,
չէին կարող չտեսնել
մարգարեության հանրահայտ
պատկերացումների

հակաասավածաշնչյան
բնույթը, և ուր էլ որ մարդիկ
չէին արվում կղերականների
ագդեցութեանը և ինքնուրույն
քննում էին Աստծո խոսքը,
բավական էր լինում միայն
գալստյան ուսմունք-քը
համեմատել Սուրբ Գրքի հետ՝
նրա աստվածային
հեղինակությունը հաստատելու
համար:

Շատերը հալածվում էին իրենց
անհավատ եղբայրների
կողմից: Եկեղեցում իրենց
ղիրքը պահելու համար ոմանք
գերադասում էին չխոսել իրենց

հույսի վերաբերյալ, բայց
մյուսները զգում էին, որ
հավա-տարմությունն առ
Աստված իրենց թույլ չի տալիս
այդպես թաքցնել այն
ճշմարտությունները, որոնք Նա
վառահել էր իրենց: —Քիչ չէր
Նրանց թիվը, ում հեռացնում
էին եկեղեցու
ընկերակցությունից միայն այն
պատճառով, որ Նրանք
հավատում էին Քրիստոսի
գալստյանը: Այս փորձությանը
ենթարկվողների համար շատ
թանկ էին մարգարեի հետեյալ
խոռքերը. «Ասում են ձեր
եղբայրները, որ ձեզ ասում և

անարգում են իմ անունի
համար՝ Թող Տերը փառավորվի,
և մենք տեսնենք ձեզ
ուրախության մեջ, բայց նրանք
պիտի ամաչեն» (Եսայիա 66.5):

Աստծո հրեշտակները
մեծագույն հետաքրքրությամբ
էին հետևում
Նախագգուշացման [373]
արդյունքին: Երբ եկեղեցիներն
ամբողջովին մերժեցին լարը,
հրեշտակները տխուր
շրջվեցին: Բայց կային շատերը,
ովքեր դեռ չէին վարձվել
ադվենտիստական
ճշմարտությամբ: Շատերին

մուրթեցրել էին իրենց
ամուսինները, կանայք,
ծնողները կամ երեխաները՝
դրդելով հավատալ, թե
ադվենտիստների
հերձվածքները լսելն անգամ
մեղք է: Յրեշտակներին
հրամայված էր ուշադիր հսկել
այո հոգիներին, քանզի Աստծո
գահից նրանց վրա մի ուրիշ
լույս պիտի շողար:

Նրանք, ովքեր ընդունել էին
լարը, անասելի փափագով
սպասում էին իրենց Փրկչի
գալստյանը: Մոտենում էր
ժամանակը, երբ նրանք հույս

անեին հանդիպելու Նրան:
Նրանք պատրաստվում էին
դրան հանդարտ
հանդիսավորությամբ: Նրանք
քաղցր հաղորդակցության մեջ
էին Աստծո հետ, որ երաշխիքն
էր պայծառ ապագայում իրենց
սպասվող խաղաղության: Ով
որ ճաշակել էր այդ հույսն ու
վստահությունը, երբեք չէր
կարող մոռանալ սպասման այդ
թանկագին ժամերը: Նշված
ժամանակից մի քանի շաբաթ
առաջ աշխարհային գործերը
շատ տեղերում մի կողմ
դրվեցին: Անկեղծ
հավատացյալները զգուշորեն

քննում էին իրենց ամեն մի
զգացմունքն ու միտքը, ասես
մահվան մահճում էին և մի
քանի ժամից արդեն պիտի
ննջեին: Ոչ ոք «համբարձման
հագուստ» չէր պատրաստում,
բայց բոլորը ներքին
վկայության կարիք էին զգում՝
համոզվելու, որ պատրառտ են
դիմավորելու Փրկչին: Նրանց
սպիտակ հանդերձը հոգա
որբությունն էր՝ քրիստոսի
քավչարար արյամբ մեղքից
սրբված բնավորությանը:
Երանի՛ իրենց Աստծո
ժողովուրդ համարողներն
այսօր էլ ունենային սիրտ

քննելու նույն ոգին, նույն
ջերմեռանդ, աներեր հավատը:
Եթե նրանք շարունակեին
այդպես խոնարհվել Աստծո
առաջ և իրենց թախանձագին
աղերսներն ուղղել դեպի
շնորհի արթուր, ապա շատ
ավելի հարուստ
փորձառություն կունենային:
Բայց որքա՛ն քիչ են
աղոթքները, որքա՛ն քիչ է
մեղքի խոր գիտակցումը, և
կենդանի հավատի
բացակայությունը շատերին
գրկում է այն շնորհից, որ
Փրկիչն առատությամբ հեղել է:

Աստված որոշել էր փորձել իր
ժողովրդին: Նրա ձեռքն էր
ծածկել սխալը մարգարեական
ժամանակների հաշվարկի մեջ:
Ո՛չ ադվենտիստներն [374] էին
հայտնաբերել սխալը, ո՛չ էլ
նրանց ամենաուսյալ
հակառակորդները: Այս
վերջիններն ասում էին.
«Մարգարեական
ժամանակների ձեր
հաշվարկները ճիշտ են: Շուտով
ինչ-որ մեծ իրադարձություն է
տեղի ունենալու, բայց ոչ այն,
ինչ կանխասել է պ-ն Միլլերը.
դա կլինի ոչ թե Քրիստոսի

Երկրորդ գալուստը, այլ
աշխարհի դարձր Աստծուն»:

Սպասման ժամանակն անցավ,
բայց Քրիստոսը չհայտնվեց՝
փրկելու իր ժողովրդին: Նրանք,
ովքեր անկեղծ հավատով ու
սիրով սպասել էին իրենց
Փրկչին, դառն
հիասթափուլթյուն ապրեցին:
Սակայն այդպես իրականանում
էին Աստծո նպատակները: Նա
քննում էր նրանց սրտերը,
ովքեր հայտարարում էին, թե
սպասում են Նրա հայտնվելուն:
Նրանցից շատերն
առաջնորդվել էին ոչ թե վեհ

դրդումներով, այլ միայն
վախից: Նրանց դավանանքը
չէր ազդել իրենց սրտի կամ
կյանքի վրա: Երբ սպասված
իրադարձությունը տեղի
չունեցավ, այս անձինք
հայ-տարարեցին, որ իրենք չեն
հիսաթափվել, որ իրականում
երբեք չեն հա-վատացել, թե
Քրիստոսը պիտի գա: Այսպիսիք
առաջինը սկսեցին ծիծաղել
ճշմարիտ հավատացյալների
հիսաթափության վրա:

Բայց Յիսուսն ու երկնային
ամբողջ զորքը սիրով ու
կարեկցանքով էին նայում այս

հավատարիմ, բայց
հիասթափված մարդկանց: Եթե
մի պահ ետ քաշվեր չարի քողը,
որը տեսանելի աշխարհը
բաժանում էր անտեսանելիից,
ապա կերևար, թե ինչպես էին
հրեշտակները մոտենում այս
աներեր հոգիներին և
պաշտպանում նրանց
սատանայի նետերից:

ԳԼՈՒԽ 21—ՄԵՐԺՎԱՅ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Քարոզելով երկրորդ գայստյան
ուսմունքը՝ Ուիլյամ Միլլերն ու
Նրա ընկերները միայն մեկ
նպատակ էին հետապնդում՝
արթնացնել մարդ-կանց՝
պատրաստվելու

դատաստանին: Նրանք ջանում
էին հավա-տացյալ կոչվողների
ուշադրութունը հրավիրել
եկեղեցու ճշմարիտ հույսի և
քրիստոնեական ավելի խորը
փորձառութունն ձեռք բերելու
անհրաժեշտության վրա, և
Նրանք նաև աշխատում էին

չվերածնվածներին դրդել
անմիջապես ապաշխարելու և
դառնալու Աստծուն: «Նրանք
չէին փորձում մարդկանց
ներգրավել ինչ-որ աղանդի
կամ կրոնական ուղղության
մեջ: Յենց այդ պատճառով էլ
Նրանք աշխատում էին բոլոր
եկեղեցիների և
հարանվանությունների մեջ՝
առանց միջամտելու նրանց
ներքին եկեղեցական կամ
կազմակերպչական գործերին»:

«Իմ բոլոր գործերում,— ասել է
Միլլերը,— ես երբեք
ցանկություն կամ միտք չեմ

ունեցել որևէ նոր
հարանվանութիւն ստեղծելու
կամ մեկին մյուսից ավելի
պաշտպանելու: Ես մտածում էի
օգնել բոլորին: Ենթադրելով,
թե բոլոր քրիստոնյաները
ցնծութեամբ կը նդունեն
Քրիստոսի գաղստյան
հեռանկարը, և որ նրանք, ովքեր
չէին համաձայնակի ինձ հետ, չեն
սկսի ավելի քիչ սիրել այս
ուսմունքն ընդունուլներին, ես
չէի պատ-կերացնում, որ երբևէ
կարիք կլինի առանձին
ժողովների: Իմ միակ
նպատակն էր՝ մարդկանց կոչ
անել դառնալու Աստծուն,

տեղեկացնել աշ-խարհին գափք
դատաստանի մասին և դրդել
իմ մերձավորներին սրտի
այնպիսի պատրաստության,
որը նրանց ունակ կդարձներ
խաղաղու-թյամբ դիմավորել
իրենց Աստծուն: Նրանց
մեծամասնությունը, ովքեր
դարձի էին եկել իմ ջանքերի
շնորհիվ, միացան այս կամ այն
եկեղեցուն» (Ս. Բլիս, Ուիլյամ
Միլլերի հուշագրությունները,
Էջ 328): [376]

Քանի որ նրա գործը նպաստում
էր եկեղեցիների աճին, որոշ
ժամա-նակ ծառայողներն ու

կղերականները բարեհաճորեն
էին նայում դրան: Բայց երբ
նրանք մերժեցին
ադվենտիստական ուսմունքը և
որոշեցին ճնշել դրա
քարոզչութունը, նրանք ոչ
միայն ամբիոններից
ընդդիմացան դրան, այլև իրենց
անդամներին արգելեցին
մասնակցել այն (ժողովներին,
որոնցում քարոզում էին
երկրորդ գալստյան մասին,
կամ նույնիսկ իրենց հույսի
մասին խոսել եկեղեցու
պաշտամունքի ժամանակ:
Այսպես, հավատացյալները
հայտնվեցին մեծ փորձության և

շփոթութեան մեջ: Նրանք
սիրում էին իրենց եկեղեցիները
և որևէ ցանկութիւն չունեին
առանձնանալու նրանցից, բայց
տեսնելով, որ Աստօն խոսքի
վկայութիւնը թաքցվում է, և
իրենց զրկում են
մարգարեութիւնները քննելու
իրավունքից, զգացին, որ
հավատարմութիւնն Աստօն
հանդէպ արգելում էր իրենց՝
ենթարկվելու նրանց
պահանջներին: Նրանց, ովքեր
ձգտում էին մերժել Աստօն
խոսքի վկայութիւնը, նրանք
այլևս չէին կարող համարել
Քրիստոսի եկեղեցին՝

«ճշմարտության սյունն ու
հաստատությունը»: Ուստի,
առանձնանալով իրենց
Նախկին եկեղեցուց, նրանք
իրենց արդա-րացված զգացին:
1844-ի ամռանը շուրջ հիսուն
հազար հոգի լքեցին իրենց
եկեղեցիները:

Մոտավորապես այդ ժամանակ
Միացյալ Նահանգների
եկեղեցի-ներից շատերում
զգալի փոփոխություններ
կատարվեցին: Տարիներ
շա-րունակ դրանք
աստիճանաբար, բայց
հաստատուն կերպով

աշխարհիկ սովորութիւններ ու
ավանդույթներ էին ներմուծել,
և արդյունքում՝ նրանց հոգևոր
կյանքը անկում էր ապրել, բայց
այդ տարի երկրի գրեթէ բոլոր
եկեղեցիները հանկարծակի և
կտրուկ անկում ունեցան: Թեև
թվում էր, թէ ոչ ոք ի վիճակի չէ
բացատրել պատճառը, փաստն
ինքնին ակնհայտ էր և
լայնորեն քննարկվում էր թե՛
մամուլում, թե՛ եկեղեցիներում:

Տիլադելֆիայի երեցականների
ժողովում պ-ն Բարնսը՝ մի
հայտնի մեկնաբանութեան
հեղինակն ու քաղաքի

առաջավոր եկեղեցիներից մեկի
հովիվը, «ասաց, որ ինքը շուրջ
քսան տարի ծառայության մեջ
է եղել, և մինչև վերջին
հաղորդությունը երբեք չի եղել,
որ այդ արայադության
ժամանակ եկեղեցուն չմիանան
մի քանի նորադարձներ: Իսկ
հիմա ոչ արթնացում կա, ո՛չ
վերածնունդ, ո՛չ տեսանելի աճ
շնորհի մեջ, և ոչ ոք չի գալիս իր
դասերին՝ զրուցելու հոգու
փրկության մասին:
Ձեռներեցության, առևտրի և
արտադրության [377]
զարգացման փայլուն
հեռանկարների հետ միասին

աճել է նաև
աշխարհիկությունը:
Իրավիճակը նույնն է բոլոր
հարանվանություններում»
(Ջամայնքային օրագիր, 23
մայիսի, 1844):

Նույն տարվա փետրվարին
Օբերլինի քոլեջի դասախոս
Ֆիննին ասել է. «Անհերքելի
փաստ է, որ մեր երկրի
բողոքական եկեղեցիներն,
ընդհանուր առմամբ, կա՛մ
հակակրանք, կա՛մ
թշնամություն են ցուցաբերել
դարի գրեթե բոլոր բարոյական
բարեփոխումների հանդեպ:

Կան առանձին
բացառություններ, որոնք,
սակայն, բավական չեն
ընդհանուր պատկերը փոխելու
համար: Ահա ես մի փաստարկ:
Եկեղեցիներում նկատվում է
վերածննդի գրեթե
համատարած
բացակայություն: Ամբողջ
երկրի կրոնական մամուլի
վկայությամբ՝ ամենուրեք
սարսափելիորեն խորը հոգևոր
անտարբերության է տիրում...
Գնալով եկեղեցու ավելի շատ
անդամներ են նորածնության
գերիները դառնում,
ամբարիշտների հետ միասին

տրվում են անվայել
հաճույքների, պարերի,
խնջույքների և այլն... Բայց
կարիք չկա երկարացնելու այս
ցավոտ թեման: Բավական է, որ
ապացույցները շատանում և
ծանրանում են մեր վրա՝ ցույց
տալով, որ եկեղեցիներն,
ընդհանուր առմամբ,
ցավալիորեն այլասերվում են:
Նրանք շատ են հեռացել
Փրկչից, Նա էլ նրանցից հետ է
քաշվել»:

Մի հեղինակ «Կրոնական
հեռադիտակ» ամսագրում
վկայել է. «Մենք երբեք

ականատես չենք եղել
կրոնական այնպիսի
համատարած անկման, ինչպես
այսօր: Եկեղեցին պետք է
արթնանա և փնտրի այս
դժբախտության պատճառը,
քանզի յուրաքանչյուրի համար,
ով սիրում է Սիոնը, սա իրոք
դժբախտություն է:

Մտաբերելով, թե որքան «քիչ և
հազվագյուտ» են իսկապես
դարձի գալու դեպքերը, ինչպես
նաև մեղավորների գրեթե
աննախադեպ հանդգնությունն
ու գռեհկությունը, մենք ակամա
բացականչում ենք. «Մոռացե՞լ
է Աստված իր տրտմություն-նը,

կամ փակվե՞լ է արդյոք շնորհի
դոստ»:

Եկեղեցում առանց պատճառի
այսպիսի իրավիճակ երբեք չի
ստեղծվում: Հոգևոր խավարը,
որ պատել է ազգերին,
եկեղեցիներին և անհատներին,
ոչ թե նրանից է, որ Աստված
քմահաճորեն նրանց գրկել է իր
շնորհից, այլ որ մարդիկ
արհամարհում կամ մերժում են
աստվածային լույսը: Այս [378]
ճշմարտության ցայտուն
լուսաբանումն է հրեա
ժողովրդի պատմությունը
Քրիստոսի օրերում: Նվիրվելով

աշխարհին և մոռանալով
Աստծուն ու Նրա Խոսքը՝ նրանց
հասկացողությունը մթազնել
էր, սրտերը՝ դարձել երկրային
ու ցանկասեր: Տգիտությունն էր
պատճառը, որ նրանք
մոլորվեցին Մեսիայի գալստյան
հարցում, և իրենց
հպարտությամբ ու
անհավատությամբ էլ մերժեցին
Փրկչին: Նույնիսկ այդ
ժամանակ էլ Աստված հրեա
ազգին չգրկեց փրկության
օրհնությունները ճանաչելու
կամ դրանց մասնակից լինելու
առավելությունից: Բայց
ճշմարտությունը մերժողները

Կորցրին երկնային պարգևը
ստանալու ամեն ցանկություն:
Նրանք «խավարը լույս
անվանեցին, իսկ լույսը՝
խավար», մինչև որ լույսը, որ
նրանցում էր, դարձավ
խավար... և որքա՛ն թանձր էր
այդ խավարը:

Երբ բացակայում է կենդանի
բարեպաշտության ոգին,
սատանան միշտ նպատակ է
հետապնդում, որ մարդիկ
հետևեն կրոնի ձևերին:
Ավետարանը մերժելուց հետո
հրեաները եռանդագին
շարունակում էին պահել իրենց

հին արարողութիւնները,
խստորեն պաշտպանել իրենց
ազգային բացառիկութիւնը,
մինչդեռ հենց իրենք էլ չէին
կարող չընդունել, որ արդէն
զրկվել են Աստծո
ներկայութիւնից: Դանիելի
մարգարեութիւնն այնքան
հստակորեն էր մատնանշում
Մեսիայի գալստյան ժամանակը
և այնքան ուղղակիորեն
կանխատում Նրա մահը, որ
Նրանք արգելեցին դրա
ուսումնասիրութիւնը, և
ռաբբիներն, ի վերջո, նզովեցին
բոլորին, ովքեր կփորձեն
հաշվարկել այդ ժամանակը:

Իսրայելի ժողովուրդն իր
կուրուքյամբ ու
անզեղջությամբ հետագա
դարերի ընթացքում անտարբեր
մնաց փրկության շնորհառատ
առաջարկների հանդեպ՝
մերժելով երկնային լույսը,
ավետարանի օրհնություններն
ու հանդիսավոր, սուկալի
Նախագգուշացումը:

Որտեղ էլ որ այս իրավիճակը
կրկնվի, նույն հետևանքները
կունենա: Նա, ով ինքնակամ
խեղդում է իր պարտքի
զգացումը, որովհետև այն դեմ է
իր հակումներին, ի վերջո

կկորցնի ճիշտը սխալից
տարբերելու ունակութիւնը:
Բանականութիւնը մթազնում
է, խիղճը՝ անզգայանում, ու
սիրտը՝ կկարծրանամ, և հոգին
բաժանվում է Աստուծոց: Որտեղ
որ աստվածային
ճշմարտութեան լուրն
արհամարհվում կամ մերժվում
է, այնտեղ եկեղեցին պատվում
է խավարով, հավատն ու սերը
սառչում են, [379] և
տարածայնութիւններն ու
օտարացում են առաջանում:
Եկեղեցու անդամներն իրենց
հետաքրքրութիւնն ու ջանքերը
կենտրոնացնում են

աշխարհային բաների վրա, իսկ
մեղավորներն ավելի են
խստանում իրենց
անզեղջուլթյան մեջ:

Չայտնություն 14-րդ գլխի
առաջին հրեշտակի պատգամը,
ագդարարելով Աստծո
դատաստանի ժամը և
մարդկանց կոչ անելով
վախենալ Նրանից և
երկրպագել Նրան, նպատակ
ունենալով Աստծո ժողովրդին հետ
պահել աշխարհի ապականիչ
ագդեցությունից և արթնացնել
Նրան՝ տեսնելու իր
աշխարհասիրությունն ու

Նահանջը: Այս լուրն Աստծո
Նախագգուշացումն էր՝
ուղարկված եկեղեցուն, որը,
եթե ընդունվեր, կվերացներ
այն չարիքը, որ բաժանում էր
Նրան իրենից: Եթե Նրանք
ընդունեին երկնային լուրը՝
խոնարհեցնելով իրենց սրտերը
Տիրոջ առաջ և անկեղծորեն
ձգտելով պատրաստվել
հանդիպելու Նրան, Աստծո
Ջոզին և զորությունը
կդրսևորվեին Նրանցում:
Եկեղեցին դարձյալ կհասներ
միաբանության, հավատի և
սիրո այն օրինյալ վիճակին, որը
գոյություն ուներ առաքյալների

օրերին, երբ հավատացյալները
«մեկ սիրտ ու մեկ հոգի» ունեին
և «համարձակությամբ խոսում
էին Աստծո խոսքը», երբ «Տերն
ամեն օր փրկվողներին
ավելացնում էր եկեղեցուն»
(Գործք 4.32,31,2.47):

Եթե Աստծո ժողովուրդն
ընդուներ այն լույսը, որ շողում
էր իր վրա Նրա խոսքից, նա
ձեռք կբերեր այն
միաբանությունը, որի համար
Քրիստոսն աղոթել էր, և որն
առաքյալը ներկայացնում է
որպես «Յոգու միաբանություն՝
խաղաղության կապով»: «.Մեկ

մարմին և մեկ Յոզի,— ասում է
Նա,— ինչպես որ կանչվեցիք
ձեր կոչման մեկ հույսի մեջ:
Մեկ Տեր, մեկ հավատ, մեկ
մկրտություն» (Եփեսացիս
4.3-5):

Նրանք էին այն
օրհնությունները, որ ստացան
ադվենտիստական լուրն
ընդունողները: Նրանք դուրս
էին եկել տարբեր
հարանվանու-թյուններից, և
Նրանց միջե եղած
պատնեշները հափն էին
հավասարվել,
դավանաբանական

հակասությունները՝ վերացել,
երկրային հազա-րամյակի
հակասատվածաշնչյան հույսը՝
թողնվել, երկրորդ գալստյանը
վերաբերող սխալ
պատկերացումներն ուղղվեցին,
հպարտությունն ու
աշխարհայնությունը
անհետացան, սրտերը
միաբանվեցին քաղցր
ընկերակցության մեջ, և
գերիշխեցին սերն ու
ցնծությունը: Եթե այս
ուսմունքի [380] շնորհիվ
կատարվեցին նման
վափոխաթյուններ այն
վտքրաթիվ մարդկանց մեջ,

ովքեր ընդունել էին այն, ապա
նույնն էլ տեղի կունենար
բոլորի հետ, եթե բոլորն էլ
ընդունեին այն:

Բայց եկեղեցիներն, ընդհանուր
առմամբ, չընդունեցին
նախազգուշացումը: Նրանց
ծառայողները՝ որպես
«Իսրայելի տան»
պահապաններ, առաջինը
պիտի նկատեին Յիսուսի
գալստյան նշանները, սակայն
թերացան սովորել
ճշմարտությունը կամ
մարգարեների վկայությունից,
կամ էլ ժամանակների

նշաններից: Երբ նրանց սրտերը
լցվեցին աշխարհիկ հույսերով
ու ձգտումներով, սերն առ
Աստված և հավատը Նրա
խոսքի հանդեպ սառեցին, ու
երբ ներկայացվեց ուսմունքը
գալստյան մասին, դա միայն
արթնացրեց նրանց
նախապաշարումներն ու
անհավատութիւնը: Այն
փաստը, որ լուրը հիմնականում
քարոզվում էր շարքային
անդամների կողմից,
ներկայացվեց որպես
փաստարկ նրա դեմ: Ինչպես
անցյալում, Աստծո խոսքի
պարզ վկայութեանն

ընդդիմացան այս հարցով.
«Իշխաններից կամ
փարիսեցիներից որևէ մեկը
հավատա՞ց նրան»: Տեսնելով,
թե որքան դժվար է հերքել
ապացույցները մարգարեական
ժամանակաշրջաններից,
շատերը հետ պահեցին
մարդկանց մարգարեության
ուսումնասիրումից՝
սովորեցնելով, թե
մար-գարեական գրքերը
կնքված են և չեն կարող
հասկացվել: Հազարավոր
մարդիկ, ամբողջովին
ապավինելով իրենց
հովիվներին, հրաժարվեցին

լսել նախագգուշացումը, իսկ
մյուսները, որ թեև համոզվել
էին ճշմարտության մեջ,
չհամարձակվեցին բացնիբաց
դավանել այն, որպեսզի
«ժողովարանից դուրս
չհանվեն»: Լուրը, որն Աստված
ուղարկել էր եկեղեցին
վարձելու և մաքրելու համար,
շատ հստակ կերպով ցույց
տվեց բոլորին, թե որքան շատ
էր նրանց թիվը, ովքեր սրտով
ավելի կապված էին այս
աշխարհի հետ, քան Քրիստոսի:
Երկիրն ավելի գրավիչ էր
նրանց համար, քան երկնքի
երանությունը: Նրանք

գերադասեցին լսել աշխարհիկ
իմաստության ձայնը և երես
թեքեցին սրտեր քննող
ճշմարտության պատգամից:

Մերժելով առաջին հրեշտակի
Նախագգտչացամբ՝ Նրանք
հրաժար-վեցին այն
միջոցներից, որոնք երկինքը
Նախատեսել էր իրենց
վերածննդի համար: Նրանք
արհամարհեցին շնորհափ
պատգամաբերին, ով կօգներ
թողնելու Աստծուց իրենց
բաժանող չարիք ները, և
սկսեցին ավելի եռանդագին
փնտրել աշխարհի

րնկերակցաթյունը: Ահա սա էր
աշխարհասիրութեան, նահանջի
և հոգևոր մահվան այն ահավոր
վիճակի պատճառը, որ տիրում
էր եկեղեցիներում 1844
թվականին: [381]

Չայտնություն 14-րդ գլխում
առաջին հրեշտակին հետևում է
երկրորդը՝ ազդարարելով.
«Ընկա՛վ, ընկա՛վ Բաբելոն մեծ
քաղաքը, որով-հետև իր
պռնկութեան բարկութեան
գինուց խմեցրեց բոլոր
ազգերին» (Չայտնություն 14.8):
«Բաբելոն» բառը ծագում է
«բաբել»—ից, որ նշա-նակում է

Խառնաշփոթութիւն: Սուրբ
Գրքում այն գործածվում է կեղծ
կամ նահանջած կրոնական
մարմինները նկարագրելու
համար: Հայտ-նութիւն 17-րդ
գլխում Բաբելոնը
ներկայացված է որպես կին՝ մի
կերպար, որով Աստվածաշնչում
խորհրդանշվում է եկեղեցին:
Առաքինի կինը ներկայացնում է
մաքուր եկեղեցին, անառակ
կինը՝ ուխտադրուժ եկեղեցին:

Քրիստոսի և Նրա եկեղեցու
միջև գոյութիւն ունեցող
հարաբերութիւնների
սրբազան ու տևական բնույթը

Աստվածաշնչում
Ներկայացված է ամուսնական
կապի միջոցով: Տերն իր
ժողովրդին կապել է իր հետ
հանդիսավոր ուխտի միջոցով,
ըստ որի՝ Նա խոստանում է
լինել Նրանց Աստվածը, իսկ
Նրանք խոստանում են լինել
միմիայն Նրանը: Նա ասում է.
«Ես քեզ պիտի նշանեմ ինձ
հավիտյան, և քեզ պիտի
նշանեմ ինձ արդարությամբ և
իրավունքով, ողորմությամբ և
գթությունով» (Ովսե 2.19): Եվ
կրկին. «Ես ամուսնացել եմ քեզ
հետ» (Երեմիա 3.14): Պողոսը
նույնպես այդ խորհրդանիշն է

օգտագործում Նոր
Կտակարանում, երբ ասում է.
«Ձեզ նշանեցի մի ամուսնու՝
որպես մի սուրբ կույս
Քրիստոսին ներկայացնելու
համար» (Բ Կորնթացիս 11.2):

Եկեղեցու
անհավատարմությունը
Քրիստոսի հանդեպ, որ
դադարեց վստահելու սիրել
Նրան՝ թույլ տալով
աշխարհասիրությունը՝
գրավելու իր սիրտը,
նմանեցվում է ամուսնական
խոստումի դրժմանը: Իսրայելի
մեղքը, որ Տիրոջից բաժանվեց,

պատկերված է հենց այս
խորհրդանիշով, իսկ Աստծո
զարմանափ սերը, որը նրանք
արհամարհել էին,
ներկայացված է հուզիչ
խոսքերով. «Երդում անելով՝
քեզ հետ ուխտ կապեցի, և դու
իմը եղար»: «Դու շատ ու շատ
գեղեցկացար և
թագավորության հասար: Եվ քո
գեղեցկության համբավը դուրս
եկավ ազգերի մեջ, որովհետև
նա կատարյալ եղավ իմ՝ քեզ
վրա դրած վայելչությանմբ...
Բայց դու վստահեցիր քո
գեղեցկությանը և շնացար քո
անվան պատճառով»: «Ինչպես

որ մի կին անհավատարիմ
կլինի իր [382] ամուսնուն, դուք
նույնպես անհավատարիմ
եղաք ինձ, ով Իսրայելի տուն,
ասում է Տերը», ինչպես
«շնացող կինը», որ «իր մարդու
փոխարեն ուրիշին է
ընդունում» (Եզեկիել
16.8, 13-15, 32, Երեմիա 3.20):

Նոր Կտակարանը նույն լեզվով
է դիմում քրիստոնյա
կոչեցյալներին, ովքեր ավելի
շատ աշխարհի
ընկերակցությունն են որոնում,
քան Աստծո բարեհաճությանը:
Հակոբոս առաքյալն ասում է.

«Շնացողներ, չգիտե՞ք, որ սերն
աշխարհի հանդեպ
թշնամուծյուն է Աստծո դեմ:
Արդ ով որ կամենա աշխարհին
բարեկամ լինել, իր անձն
Աստծուն թշնամի կդարձնի»
(Յակոբոս 4.4):

Յայտնուծյուն 17-րդ գլխի կինը՝
Բաբելոնը, «ծիրանի և կարմիր
էր հագած, և զարդարված էր
ոսկով, մարգարիտներով ու
թանկարժեք քարերով, իր
ձեռքին՝ ոսկե բաժակ, որը փ էր
գարշուծյուններով ու իր պիղծ
պռռնկուծյամբ: Եվ նրա
ճակատին մի անուն կար

գրված. Խորհուրդ մեծ Բաբելոն՝
երկրի պռոշնիկների և
գարշելիների մայրը»:

Մարգարեն ասում է. «Տեսա
կնոջը՝ հարբած սրբերի
արյունով և Յիսուսի վկաների
արյունով»: Այնուհետև ասվում
է, որ Բաբելոնը «մեծ քաղաք է,
որ թագավորում է երկրի
թագավորների վրա»

(Յայտնություն 17.4-6, 8):

Իշխանությունը, որը դարեր
շարունակ բռնացել է
քրիստոնեական աշխարհի
միապետների վրա, Յռոմն է:
Ծիրանին ու կարմիրը, ոսկին,
մարգարիտներն ու թանկարժեք

քարերը ցայտուն կերպով
պատկերում են Յոնմի
ամբարտազան աթոռի ավելի
քան արքայական շքեղութունն
ու ճոխութունը: Եվ ուրիշ ոչ մի
իշխանութուն հնարավոր չէ
այդպիսի ճշտությամբ
նկարագրել՝ որպես «հարբած
սրբերի արյունով», ինչպես այն
եկեղեցին, որն այնքան
դաժանորեն հալածել է
Քրիստոսի հետևորդներին:
Բաբելոնը մեղադրվում է նաև
«երկրի թագավորների» հետ իր
անօրինական կապի մեջ:
Տիրոջից հեռանալով և
հեթանոսներին դաշնակցելով

Էր, որ հրեական եկեղեցին
դարձավ պոռնիկ: Եվ Յոնան,
նույն ձևով իրեն ապականելով
աշխարհիկ իշխանությունների
օգնությանը դիմելու միջոցով,
նույն դատապարտությունն է
ընդունում:

Բաբելոնը նկարագրված է
որպես «երկրի պոռնիկների ու
գարշելի-ների մայր»: Նրա
դուստրերը պիտի որ այն
եկեղեցիները լինեն, որոնք
հարում են նրա ուսմունքին ու
ավանդույթներին, հետեում են
նրա օրի-նակին՝ զոհաբերելով
[383] ճշմարտությունն ու

Աստճո հապանությունը՝
ապօրինի դաշինքի մեջ մտնելու
աշխարհի հետ: Յայտնություն
14-րդ գլխի լուրը, որն
ազդարարում է Բաբելոնի
անկումը, պետք է վերաբերի
կրոնական այն մարմիններին,
որոնք մի ժամանակ մաքուր են
եղել, իսկ հետո՝ ապականվել:
Քանի որ այս լուրը հետեում է
դատաստանի մասին
Նախագգուշացմանը, այն
պետք է հռչակվի վերջին
օրերին, դրա համար էլ չի
կարող վերաբերել միայն Յոթմի
եկեղեցուն, քանզի այդ
եկեղեցին դարեր շարունակ

ընկած վիճակում է եղել: Բացի
այդ, Հայտնություն 18-րդ
գլխում Աստծո ժողովրդին կոչ է
արվում դուրս գալ Բաբելոնից:
Այս տեքստի համաձայն՝ Աստծո
ժողովրդի մեծ մասը դեռ
Բաբելոնում է: Եվ կրոնական
ո՞ր մարմիններում հիմա պետք
է գտնվի Քրիստոսի
հետևորդների մեծ մասը:
Անկասկած, բողոքական
հավատը դավանող տարբեր
եկեղեցիներում: Իրենց
ստեղծման ժամանակ այս
եկեղեցիներն անձնվիրաբար
կանգնեցին հանուն Աստծո և
ճշմարտության, և Նրա

օրհնութիւնը նրանց հետ էր:
Նույնիսկ անհավատ աշխարհը
ստիպված էր ճանաչել
ավետարանի սկզբունքներն
ընդունելու բարերար
արդյունքը: Իսրայելին ուղղված
մարգարեի խոսքով՝ «Քո
գեղեցկության համբավը դուրս
եկավ ազգերի մեջ, որովհետև
այն կատարյալ եղավ իմ՝ քեզ
վրա դրած վայելչությամբ,
առում է Տերը»: Բայց այս
եկեղեցիները քայքայվեցին այն
նույն մեղսավոր հակումների
հետևանքով, որ Իսրա—յելի
անեծքն ու կործանումը
դարձան՝ ամբարիշտներիս

ընդօրինակելը և նրանց
մտերմությունը շահելը: «Դու
վատահեցիք քո գեղեցկությանը
և շնացար քո անվան
պատճառով» (Եզեկիել
16.14,15):

Բողոքական շատ եկեղեցիներ
հետևում են Յոնի օրինակին և
ապօրինի դաշինքի մեջ են
մտնում «երկրի թագավորների»
հետ և աշ-խարհիկ
կառավարությունների հետ
իրենց հարաբերություններով
ստեղծում են պետական
եկեղեցիներ ու այլ
հարանվանություններ՝

որոնելով աշխարհի
բարեհաճությունը: Եվ
«Բաբելոն» կամ
«Խառնաշփոթություն» բառը
շատ տեղին է վերագրել այդ
եկեղեցիներին, որոնք պնդում
են, թե իրենց ուսմունքը
հիմնված է Աստվածաշնչի վրա,
բայց բաժանված են գրեթե
անթիվ աղանդների՝ իրար
խիստ հակասող
դավանանքներով ու
տեսություններով:

Բացի աշխարհի հետ
հանցավոր կապից, Յռոմից
առանձնացած եկեղեցիներին

բնորոշ են նաև նրա մյուս
հատկանիշները: [384]

Կաթուղիկ մի հեղինակ իր
աշխատության մեջ պնդում է,
որ «Եթե Յոմի եկեղեցին
սրբերի իր պաշտամունքով,
երբևէ մեղավոր լիներ
կռապաշտության մեջ, ապա
նրա դուստրը՝ անգլիկան
եկեղեցին, նույն մեղքի մեջ է,
քանի որ Մարիամին նվիրված
տասը եկեղեցիներ ունի և
ընդամենը մեկ եկեղեցի՝
նվիրված Քրիստոսին» (Ռիչարդ
Չալոներ, Խրատ կաթուղիկ

քրիստոնյային, Նախաբան, Էջ 21,22):

Դոկտոր Յոպկիսան իր «Յազարամյայի մասին» տրակտատում հայտարարում է. «Որևէ հիմք չկա ենթադրելու, թե հակաքրիստոնեական ոգին ու գործերը բնորոշ են միայն Յոմի եկեղեցուն: Նեոի ոգին մեծապես իշխում է նաև բողոքական եկեղեցիներում, որոնք լիովին բարեփոխված չեն... ապականությունից ու ամբարշտությունից» (Սամուել Յոպկիսա, Աշխատություններ, հ. 2, Էջ 328):

Յոռմից եքեցական եկեղեցու
տարանջատման վերաբերյալ
դոկտոր Գաթրին գրում է. «Երեք
հարյուր տարի առաջ մեր
եկեղեցին դուրս եկավ Յոռմի
դարպասներից՝ բացված
Աստվածաշունչն իր դրոշի վրա
և «Քննեցեք Գրքերը»
նշանաբանով»: Այնուհետև նա
մի խորհմաստ հարց է տալիս.
«Արդյո՞ք նա մաքուրդուրս
եկավ Բաբելոնից »(Թոմաս
Գաթրի, Ավետարանը Եզեկիելի
գրքում, էջ 237):

«Անգլիկան եկեղեցին,— ասում
է Սփերջենը,— կարծես
ամբողջովին կուլ է գնացել
ծեսերին, բայց նրանից
առանձնացածներն էլ լիովին
ազատ չեն փիլիսոփայական
անհավատությունից: Ումից որ
մենք շատ բան էինք սպասում,
մեկը մյուսի ետևից երես են
թեքում հավատի հիմքերից:
Նորից ու նորից ես տեսնում եմ,
որ Անգլիայի սիրտն
ամբողջովին ծակծկված է
դատապարտելի
անհավատությամբ, որը դեռ
համարձակվում է ամբիոն

բարձրանալ և իրեն քրիստոնյա կոչել»:

Ինչի՞ց ծագեց այս մեծ ուխտադրժությունը: Ինչպե՞ս եկեղեցին առաջին անգամ հեռացավ ավետարանի պարզութունից: Պատասխանը մեկն է՝ հեթանոսների սովորությունները ներմուծելով, որպեսզի նրանք ավելի հեշտ ընդունեն քրիստոնեությունը: Պողոս առաքյալը գրել է, որ նույնիսկ իր օրերում «Անօրենության խորհուրդն արդեն զորանում է» (ԲԹեսաղոնիկեցիս 2.7): Քանի

դեռ կային առաքյալները,
Եկեղեցին պահպանում էր
համեմատական մաքրություն:
Բայց «երկրորդ դարի վերջին
Եկեղեցիների մեծ մասը նոր ձև
ընդունեց, սկզբնական
պարզու-թյունն [385]
անհետացավ, և ծեր
աշակերտների մահից հետո
նրանց զա-վակները,
նորադարձների հետ միասին...
աննկատելի փոփոխություն-
ներ մտցրին» (Ռոբերտ
Ռոբինսոն, Եկեղեցական
հետազոտություններ, գլ. 6,
պարբ. 17, էջ 51): Անդամների
թիվն աճեցնելու նպատակով

քրիստոնեական հավատի վեհ
չափանիշն իջեցվեց, և
արդյունքում «հեթանոսական
հեղեղը ներխուժեց եկեղեցի՝ իր
հետ բերելով իր սովորույթները,
ծեսերն ու կուռքերը»

(Գավազցի,

Դասախոսություններ, էջ 278):

Երբ քրիստոնեական կրոնը

ձեռք բերեց աշխարհի

բարեհաճությունն ու

աջակցությունը, այն

ձևականորեն ընդունվեց

հազարավորների կողմից, բայց

արտաքուստ երևալով

քրիստոնյա՝ շատերն

«Էությունամբ հեթանոսներ

մնացին և գաղտնաբար
երկրպագում էին իրենց
կուռքերին» (Նույն տեղում, էջ
278):

Չկրկնվե՞ց արդյոք նույն բանը
իրենց բողոքական համարող
գրեթե բոլոր եկեղեցիներում:
Երբ ճշմարիտ բարենորոգման
ոգով լցված հիմնադիրները
մահացան, նրանց
հետնորդները ելան և
«փոփոխություններ մտցրին»:
Կուրորեն կառչելով իրենց
հայրերի դավանանքին և
հրաժարվելով ընդունել որևէ
այլ ճշմարտություն, բացի

Նրանից, որ իրենց արդեն
հայտնի էր, բարենորոգիչների
զավակները զգալիորեն
հեռացան իրենց հայրերի
թողած խոնարհության,
անձնուրացության ու
բարեպաշտության օրինակից:
Այսպիսի ճանապարհով
«սկզբնական պարզությունն
անհետանում է»: Աշխարհիկ
հեղեղը լցվում է եկեղեցի՝ «իր
հետ բերելով իր սովորույթները,
ծեսերն ու կուռքերը»:

Ավա՛ղ, ի՞նչ ահավոր չափերի է
հասել Քրիստոսի այսպես
կոչված հետնորդների

բարեկամութիւնն աշխարհի
հետ, որը «թշնամութիւն է
Աստճո դեմ»: Որքա՛ն են
հեռացել քրիստոնեական
աշխարհի ճանաչված
եկեղեցիները խոնարհության,
ինքնուրացության,
պարզության ու
բարեպաշտության
աստվածաշնչյան չափանիշից:
Խոսելով դրամի ճիշտ
օգտագործման մասին՝ Ջոն
Ուեսլին ասել է. «Այդ
թանկագին պարզևի ոչ մի
մասը մի վատնեք աչքի
ցանկութիւնը բավարարելու
համար՝ ավելորդ կամ

թանկարժեք հագուստով և
անիմաստ զարդերով: Դրա ոչ
մի մասը մի՛ վատնեք ձեր
տներն արտասովոր ձևով
զարդարելու, ավելորդ կամ
թանկարժեք կահույքի,
արժեքավոր նկարների և
ոսկեզօծման վրա... Ոչ մի ծախս
մի՛ արեք կյանքի
հպարտությունը բավարարելու
և մարդկանց հիացմունքին կամ
գովասանքին արժանանալու
նպատակով... Քանի դեռ
ծառայում ես ինքդ քեզ, մարդիկ
քո մասին լավ կարծիք
կունենան: Քանի դեռ «ազնիվ
ծիրանի ու քեֆեր» ես հագնում

և ամեն օր «ճոխ քեֆեր» [386]
ես անում, շատերն, անկասկած,
կգովեն քո
նրբաճաշակությունը,
առատաձեռնությունն ու
հյուրասիրությունը: Բայց
նրանց ծափահարությունը մի
գնիր այդքան թանկ գնով:
Ավելի ձգտիր այն պատվին, որն
Աստուծոց է» (Ջոն Ուեսլի,
Աշխատություններ, Քարոզ 50,
«Դրամի օգտագործումը»):
Բայց մեր օրերի շատ
եկեղեցիներում այս խրատն
անտեսվում է:

Կրոնի դավանումը լայնորեն
տարածված է աշխարհում:
Իշխանավորները, քաղաքական
գործիչները, իրավաբանները,
գիտնականներն ու
առևտրականները միանում են
եկեղեցուն՝ ձեռք բերելու
հասարակության հարգանքն ու
վստահությունը, և առաջ են
տանում իրենց աշխարհիկ
շահերը: Այսպես, իրենց
քրիստոնյա ձևացնելով՝ նրանք
փորձում են թաքցնել իրենց
բոլոր անարդար գործերը:
Կրոնական տարբեր
մարմիններ, զորացած այս
մկրտված աշխարհայինների

հարստութեամբ և
ազդեցութեամբ, ձգտում են
ավելի մեծ ճանաչում ու
հովանավորութիւնն ձեռք բերել:
Գլխավոր փողոցների վրա
կանգնեցվում են հոյակերտ,
շքեղորեն զարդարված
եկեղեցիներ, իսկ
երկրպագուները թանկարժեք ու
նորաձև զգեստներ են կրում:
Բարձր աշխատավարձ է
վճարվում տաղանդավոր
ծառայողին՝ ժողովրդին
զվարճացնելու և գրավելու
համար: Նրա քարոզները
չպետք է դիպչեն մարդկանց
հայտնի մեղքերին, այլ պիտի

փափուկ ու հաճելի լինեն
աշխարհասեր ականջների
համար: Այսպես
բարձրաշխարհիկ
մեղավորները գրանցվում են
եկեղեցական գրքերում, և
նրանց բարձրաշխարհիկ
մեղքերը քողարկվում են
բարեպաշտության քողի տակ:

Մեկնաբանելով քրիստոնյա
կոչեցյալների ներկա
վերաբերմունքը աշխարհի
հանդեպ՝ մի հայտնի
աշխարհիկ ամսագիր գրում է.
«Աննկատելիորեն եկեղեցին
զիջել է ժամանակի ոգուն՝

ընդունելով ժամանակակից
կարիքներին հարմարեցված
երկրպագության ձևեր»:
«Եկեղեցին այժմ օգտագործում
է բոլոր միջոցները, որոնցով
կրոնը կարելի է իրոք գրավիչ
դարձնել»: Նյա Յորքի
«Ինդիփենդենթը» մեթոդիզմի
մասին այսպես է գրում.
«Բարեպաշտներին
անհավատներից բաժանող
սահմանագիծը
աստիճանաբար ջնջվում է, և
երկու կողմից էլ եռանդուն
մարդիկ ամեն ինչ անում են
իրենց գործելաոճի և
հաճույքների միջև եղած ամեն

տարբերութեան վերացնելու
համար»: «Կրոնի
ժողովրդականութիւնը գնալով
ավելի է մեծացնում նրանց
թիվը, ովքեր փափագում են
դրա արտոնութիւնները՝
առանց ուղղակիորեն
կատարելու դրա
պահանջ-ները»: [387]

Հովարդ Քրոսբին ասում է.
«Մենք խորապես
անհանգստացած ենք, որ
Քրիստոսի եկեղեցին այդպես
քիչ է արդարացնում իր Տիրոջ
մտադրութիւնները: Ինչպես
անցյալում հրեաները թույլ

տվեցին, որ մտերմութիւնը
կռապաշտ ազգերի հետ
Աստուծոց գողանա իրենց սրտե-
րը... այնպես էլ այսօր
Քրիստոսի եկեղեցին անհավաստ
աշխարհի հետ իր կեղծ
ընկերակցութեամբ
հրաժարվում է բարեպաշտ
կյանքի աստվածային
սկզբունքներից և հանձնվում է
աստվածամերժ
հասարակութեան հաճախ
բարետես, բայց քայքայիչ
սովորութիւններին՝
օգտագործելով փաստարկներ և
գալով եզրահանգումների,
որոնք օտար են Աստծո

հայտնությանը և թշնամի
շնորհի մեջ աճելուն» (Առողջ
քրիստոնյա, Կոչ եկեղեցուն, էջ
141,142):

Աշխարհիկության և
զվարճասիրության այս
հոսանքի մեջ
ինքնուրացությունն ու
անձնագոհությունը հանուն
Քրիստոսի գրեթե ամբողջովին
կորել է: «Որոշ տղամարդիկ և
կանայք, ովքեր հիմա ակտիվ
են մեր եկեղեցիներում,
մանկության տարիներին
սովորել են որոշ բաներից
զրկվել, որպեսզի կարողանան

ինչ-որ բան տալ կամ անել
հանուն Քրիստոսի»: Բայց «Եթե
միջոցների պակաս զգացվի
այսօր... ոչ ոքի կոչ չես անի
ընծայելու: Օ՛ր, ոչ: Միայն
տոնավաճառներ,
պատկերասրահներ,
կատակերգություններ, հնաոճ
ընթրիքներ, ցանկացած բան
ժողովրդին զվարճացնելու
համար»:

Ուիսքոնզինի Նահանգապետ
Ուոշբորնը իր ամենամյա
ոպերձում 1873 թ. հունվարի
9-ին ասել է. «Երևի պետք է
ինչ-որ օրենք ընդունել այն

հաստատությունները փակելու
համար, որտեղ թղթախաղ են
սո-վորեցնում: Դրանք
ամենուրեք են: Նույնիսկ
եկեղեցին էլ, թեև հաճախ
անգիտակցաբար, երբեմն
կատարում է սատանայի
գործը: Բարեգործական
համերգները, վիճակախաղերը
և այլ միջոցառումներ, որոնք
կազմակերպվում են երբեմն
բարի, բայց ավելի հաճախ ոչ
այնքան ազնիվ
նպատակներով, խորամանկ
հնարքներ են դրամ շահելու՝
առանց որևէ ջանքի: Ոչինչ
այնքան այլասերալ ու

ապականիչ ազդեցութիւնն չի
թողնում, հատկապէս
երիտասարդների վրա, որքան
առանց աշխատանքի դրամ
կամ ունեցվածք ձեռք բերելը:
Եթէ այս բախտախաղերի մեջ
ներգրավված հարգարժան
մարդիկ իրենց խիղճը
հանգստացնում են այն մտքով,
որ դրամը բարի նպատակների
է ծառայելու, ապա զարմանալի
չէ, որ նահանգի
երիտասարդութիւնը հաճախ
ընկնում է սովորութիւնների
մեջ, որոնք, անկասկած, այդ
վտանգավոր մոլախաղերի

անխուսափելի հետևանքն են:
[388]

Աշխարհին նմանվելու ոգին
ներխուժում է եկեղեցիները
քրիստո-նեական ողջ
աշխարհում: Լոնդոնում
Ռոբերթ Աթկինսն իր քարոզում
պատկերել է Անգլիայում տիրող
հոգևոր անկման մռայլ
տեսարանը. «Իսկական
արդարները չքանում են
երկրից, և ոչ մեկի հոգը չէ:
Այսօրվա հավատացյալ
կոչեցյալները, ցանկացած
եկեղեցում, աշխարհասերներ
են, աշխարհին նմանվողներ,

հարմարություն սիրողներ և
փառքի ձգտողներ: Նրանք
կանչված են Քրիստոսի հետ
տառապանքներ կրելու, բայց
խուսափում են նույնիսկ
նախատինքից... «Նահանջ,
նահանջ, նահանջ»,— գրված է
յուրաքանչյուր եկեղեցու
ճակատամասին, ու եթե նրանք
իմանային, եթե գիտակցեին
դա, կարող էին դեռ հույս
ունենալ, բայց, ավա՛ղ, նրանք
բացականչում են. «Մենք
հարուստ ենք, հարստացել ենք
և ոչ մի բանի կարիք չունենք»
(Երկրորդ գալստյան
գրադարան, տրակտատ N 39):

Մեծագույն մետքը, որի մեջ
Բաբելոնը մեղադրվում է, այն
է, որ նա «իր պոռնկության
բարկության գինուց խմեցրեց
բոլոր ազգերին»: Այս
հարբեցնող բաժակը, որը նա
աշխարհին առաջարկում է, այն
կեղծ ուս-մուսքներն են, որ նա
ընդունել է երկրի մեծամեծերի
հետ ունեցած իր ապօրինի
կապի հետևանքով:
Բարեկամությունն աշխարհի
հետ ապա-կանում է նրա
հավատը, իսկ նա էլիր հերթին
ապականիչ ազդեցություն է
գործում աշխարհի վրա`

սովորեցնելով ուսմունքներ,
որոնք հակասում են Սուրբ
Գրքի պարզ խոսքերին:

Յոմը ժողովրդից թաքցրեց
Աստվածաշունչը և պահանջեց,
որ դրա փոխարեն բոլորն
ընդունեն իր ուսմունքը:
Բարենորոգման նպատակն էր՝
մարդկանց վերադարձնել
Աստծո խոսքը: Բայց չափից
ավելի ճիշտ չէ՞ արդյոք, որ
եկեղեցիներն այսօր մարդկանց
սովորեցնում են ավելի
հավատալ իրենց դավանանքին
ու եկեղեցու ուսմունքին, քան
Սուրբ Գրքին: Չարև Բիչերը

բողոքական եկեղեցիների
մասին ասում է. «Նրանք
ընկրկում են իրենց
հավատամքի դեմ ասված ամեն
մի կտրուկ խոսքից ճիշտ
այնպես, ինչպես սուրբ հայրերը
կընկրկեին սրբերին ու
Նահատակներին պաշտելու
սովորության դեմ ասված կոշտ
խոսքից: Բողոքական
ավետարանական
հարանվանություններն
այնպես են կապվել մեկը մյուսի
հետ և հենց իրենց ձեռքերը
կապկպել, որ նրանցից և ոչ
մեկում մարդը չի կարող
քարոզիչ դառնալ, եթե

Ասավաճաշնչից բացի որևէ այլ գիրք [389] չընդունի... Որևէ չափազանցություն չկա այն խոսքում, որ դավանանքի աժն այսօր, թեև ավելի նրբորեն, սկսում է արգելել
Աստվաճաշունչը նույնքան հաստատապես, որքան արել է Ջոնմը» (Քարոզ
«Աստվաճաշունչը ինքնին հավատամք է», Ֆորթ Ուեյն, Ինդիանա, 22 փետրվարի, 1846 թ.):

Չենց որ հավատարիմ ուսուցիչները պարզաբանում են Աստծո խոսքը, հայտնվում

են ուսյալ մարդիկ՝
ծառայողներ, ուլքեր իրենց
Սուրբ Գրքի մասնագետ են
համարում և ողջամիտ
վարդապետությունը
պար-սավում են որպես
հերձվածողություն և
հետաքրքրվողներին հետ են
պա- հում ճշմարտությունից:
Եթե աշխարհն անհուսալիորեն
հարբած չլիներ Բաբելոնի
գինուց, ապա հազարավորները
կհամոզվեին ու դարձի կգային
Աստծո խոսքի պարզ, անվիճելի
ճշմարտություններից: Բայց
կրոնական հավատն այնքան
խճճված ու հակասական է

թվում, որ ժողովուրդը չի
կողմնորոշվում, թե ինչն
ընդունի ԼԼԿԵՍ
ճշմարտութուն: Աշխարհի
անզեղջության մեղքն ընկած է
եկեղեցու դռան մոտ:

Չայտնութուն 14-րդ գլխի
երկրորդ հրեշտակի լուրն
առաջին անգամ քարոզվեց
1844 թ. ամռանը: Այդ
ժամանակ այն ավելի
ուղղակիորեն վերաբերում էր
եկեղեցիներին
Միացյալ Նահանգներում,
որտեղ դատաստանի մասին
Նախագգուշացումն ամենից

ավելի լայնորեն է հնչել ու
գլխավորապես մերժվել, և
որտեղ ամենից ավելի արագ են
եկեղեցիներն անկում ապրել:
Բայց երկրորդ հրեշտակի լուրն
իր լիակատար իրականացումը
չգտավ 1844-ին: Եկեղեցիներն
այն ժամանակ բարոյա-պես
ընկան ադվենտիստական լուրը
մերժելու հետևանքով, բայց այդ
անկումը լիակատար չէր:
Շարունակելով մերժել իրենց
ժամանակի հա-մար
նախատեսված հատուկ
ճշմարտությունները՝ նրանք
ավելի ու ավելի ցած ընկան:
Բայց դեռ չի կարելի ասել, որ

«Ընկա՛վ Բաբելոնը... որովհետև
իր պռնկության բարկության
գինուց խմեցրեց բոլոր
ազգերին»: Նա դեռ չի ստիպել
բոլոր ազգերին այդ անելու:
Աշխարհին նմանվելու և սրտեր
քննող ներկա
ճշմարտությունների հանդեպ
անտարբերության ոգին դեռ
գոյություն ունի և
ներթափանցել է
քրիստոնեական բոլոր
երկրների բողոքական
եկեղեցիները: Երկրորդ
հրեշտակի հանդիսավոր և
ահագդու մեղադրանքը
վերաբերում է նաև նրանց:

Բայց ուրացութեան գործը
դեռես չի հասել իր
գագաթնակետին:

Աստվածաշունչը հայտնում է,
որ Տիրոջ գալուստից առաջ
սատանան գործելու է «ամեն
գորութեամբ և սուտ նշաններով
ու հրաշքներով [390] և
անիրավութեան ամեն
խաբեութեամբով», և նրանք,
ովքեր «չընդունեցին
ճշմարտութեան սերը, որպեսզի
փրկվեն», կթողնվեն՝
ընդունելու «մոլորութեան
ներգործութիւն, որ հավատան
ստութեան» (Բ

Թեսա-ղոնիկեցիս 2.9— 11):
Մինչև սա տեղի չունենա, և
եկեղեցին քրիստոնեական
բոլոր երկրներում ամբողջովին
չմիանա աշխարհին, Բաբելոնի
անկումը վերջնական չի լինի:
Փոփոխությունն արդեն
ընթացքի մեջ է, բայց
Չայտնություն 14.8-ի
լիակատար իրականացումը
դեռ ապագայում է:

Չնայած Բաբելոնը կազմող
եկեղեցիները հոգևոր
խավարում են և օտարացած
Աստծուց, Քրիստոսի ճշմարիտ
հետևորդների մեծ մասը դեռ

գտնվում է նրանցում: Այդ
մարդկանցից շատերը երբեք
չեն լսել հատուկ
ճշմարտությունները ներկա
ժամանակի համար: Քիչ չեն
այն- պիսիք, ովքեր դժգոհ են
իրենց ներկա վիճակից և
ծարավ են ավելի պարզ լույսի:
Նրանք իզուր նայում են
Քրիստոսի պատկերին այն
եկեղեցիներում, որոնց հարում
են: Երբ այդ եկեղեցիներն
ավելի ու ավելի հեռանան
ճշմարտությունից և ավելի
սերտորեն կապվեն աշխարհի
հետ, տարբերությունը երկու
խմբերի միջև ավելի ակնհայտ

կդառնա և ի վերջո կհասցնի
տարանջատման: Կգա
Ժամանակ, երբ նրանք, ովքեր
Աստծուն սիրում են ամենից
ավելի, այլևս չեն կարողանա
կապված մնալ նրանց հետ,
ովքեր «ավելի ցանկասեր են,
քան աստվածասեր, որ
աստվածապաշտության
կերպարանք ունեն, բայց նրա
զորությունն ու-րացել են»:

Չայտնությունն 18-րդ գըսիսը
մատնանշում է այն
Ժամանակը, երբ Չայտնությունն
14.6-12 եռակի
նախազգուշացումը մերժելու

հետևանքով եկեղեցին լիովին
կհայտնվի այն վիճակում, որ
կանխատեսված է երկրորդ
հրեշտակի կողմից, և
Բաբելոնում գտնվող Աստծո
ժողովրդին կոչ կարվի
բաժանվելու նրանից: Սա
վերջին լուրն է, որ երբևէ պետք
է տրվի աշխարհին, և այն
կկատարի իր գործը: Երբ
նրանք, ովքեր «չհավատացին
ճշմարտությանը, այլ
հավանեցին անօրենությունը»
(Բ Թեսաղոնիկեցիս 2.12),
կթողնվեն՝ ընդունելու սաստիկ
մոլորությունը և կհավատան
ստի, այդ ժամանակ

ճշմարտության լույսը կողողի
բոլորին, ում սրտերը բաց են
այն ընդունելու համար, և
Բաբելոնում մնացած Տիրոջ
բոլոր զավակները կընդունեն
այս կոչը. «Դուրս եկ դրանից,
ով իմ ժողովուրդ»
(Չայտնություն 18.4):

ԳԼՈՒԽ 22—ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անցավ այն ժամանակը, երբ
ակնկալվում էր Տիրոջ
գալուստը 1844 թ. գարնանը, և
Նրանք, ովքեր հավատով
սպասել էին Նրա հայտնվելուն,
միառժամանակ ընկան
կասկածների ու
տարակուսանքի մեջ: Մինչ
աշխարհը Նրանց լիովին
պարտված էր համարում, իսկ
Նրանց հույսը՝ մոլորութուն,
Նրանց սփոփանքի աղբյուրն
առաջվա պես Աստծո խոսքն էր:
Շատերը շարունակեցին քննել

Գիրքը՝ վերստուգելով իրենց
հավատի վկայությունը և
զգուշորեն ուսումնասիրելով
մարգարեությունները՝
լրացուցիչ լույս ստանալու
համար: Նրանց դիրքորոշումը
հաստատող Աստվածաշնչի
վկայությունը շատ պարզ ու
համոզիչ էր թվում: Նշաններն
անսխալ ցույց էին տալիս, որ
Քրիստոսի գալուստը մոտ էր:
Տիրոջ հատուկ օրհնությունը
մեղավորների
ապաշխարության և
քրիստոնյաների հոգևոր
կյանքի վերածննդի մեջ վկայել
էին, որ լուրը երկնքից էր: Ու

Թեև հավատացյալներն այն
ժամանակ չէին կարող տալ
իրենց հիասթափության
բացատրությունը, նրանք
համոզված էին, որ իրենց
Աստված էր առաջնորդել իրենց
անցյալ փորձառության մեջ:

Մարգարեությունների հետ,
որոնք, նրանց կարծիքով,
վերաբերում էին երկրորդ
գալստյան ժամանակին,
սերտորեն կապված էր այն
ցուց-ցումը, որը հատկապես
հարմար էր նրանց անորոշ,
տագնապապի վիճակին և
խրախուսում էր նրանց

համբերությամբ ու հավատով
սպասել, որ այն, ինչ այդ
պահին անհասկանալի էր
իրենց, իր ժամանակին
կպարզ— վի: [392]

Դրանցից էր Ամբակում 2.1-4
մարգարտությունը. «Իմ
պահպանության տեղը
կանգնեմ և կենամ պարսպի
վրա ու մտիկ տամ՝ տեսնեմ, թե
ի՞նչ է խոսելու ինձ հետ, և ի՞նչ
պիտի պատասխանեմ, երբ ինձ
հանդիմանի: Եվ Տերն ինձ
պատասխանեց՝ ասելով. Գրիր
տեսիլքը և պարզորոշ նշիր
տախտակների վրա, որպեսզի

վազի նրան կարդացողը:
Որովհետև տեսիլքը տակավին
որոշված ժամանակի համար է
և շտապում է վախճանին ու չի
ստի. եթե ուշանա էլ, սպասիր
նրան, որովհետև անպատճառ
պիտի գա ու չի ուշանա: Ահա
նա գորոզացել է, նրա հոգին
ուղիղ չէ իրենում, բայց
արդարև իր հավատով կապրի»
(անգլ. թարգմ):

Այո մարգարեության մեջ
տրված պատվերը՝ «Գրիր
տեսիլքը և պարզորոշ նշիր
տախտակների վրա, որպեսզի
վազի նրան կարդացողը», 1842

Թ. Չարլզ Ֆիտչին դրդեց
մարգարեական մի քարտեզ
պատրաստել պարզաբանելու
Դանիելի և Յայտնության
տեսիլքները: Այս քարտեզի
հրատարակումը Ամրակումի
միջոցով տրված պատվերի
կատարումը համարվեց: Այն
ժամանակ, սակայն, ոչ ոք
չնկատեց, որ հենց նույն
տեսիլքում ակնհայտորեն
խոսվում է հետաձգման կամ
ուշացման մասին:
Հիասթափությունից հետո շատ
նշանակալից դարձան այս
խոսքերը. «Տեսիլքը տակավին
որոշված ժամանակի համար է

և շտապում է վախճանին ու չի ստի. եթե ուշանա էլ, սպասիր նրան, որովհետև ան-պատճառ պիտի գա ու չի ուշանա...

Արդարև իր հավատով կապրի»:

Եզեկիելի մարգարեության մի հատված ևս ուժի ու սփոփանքի աղ-բյուր դարձավ հավատացյալների համար. «Եվ Տիրոջ խոսքը եղավ ինձ՝ ասելով. Մարդի որդի, այդ ի՞նչ առակ է, որ ունեք Իսրայելի երկրում, որ ասում եք. Օրերը երկարում են, և ամեն տեսիլք ոչնչանում է: Սրա համար ասիր նրանց. Այսպես է ասում Տեր

Եհովան... Օրերը մոտեցել են, և
ամեն տեսիլքի կատարումը...
Որովհետև ես եմ Տերը, խոսածս
խոսում եմ և խոսքս կատարում,
այլևս այն պիտի չուշանա»:
«Իսրայելի տունն ասում է. Այն
տեսիլքը, որ դա տեսնում է,
չատ օրերի համար է, և հեռու
ժամանակների համար է դա
մարգարեանում: Սրա համար
ասա նրանց. Այսպես է ասում
Տեր Եհովան. Այլևս իմ ոչ մի
խոսքը պիտի չուշանա, ասածս
[393] խոսքը պիտի կատարեմ»
(Եզեկիել 12.21-25,27,28):

Տիրոջը սպասողները ցնծացին՝
հավատալով, որ Նա, ով գիտի
վերջը սկզբից, նայելով դարերի
խորքից և կանխատեսելով
Նրանց հիասթափությունը,
քաջալերող ու հուսադրող
խոսքեր է տվել: Եթե չլինեին
Սուրբ Գրքի այս տողերը, որոնք
Նրանց զգուշացնում էին
համբերությամբ սպասել ու
անվերապահորեն վստահել
Աստծո խոսքին, ապա
փորձության այդ ժամին Նրանց
հավատը կխորտակվեր:

Տասը կույսերի մասին
Մատթեոս 25-ի առակը

ՆՈՒՅՆԱՎԵՍ ԼՈՒՍԱՔԱՆՈՒՄ Է
ադվենտիստների
փորձառությանը: Մատթեոս
24-րդ գլխում, պատասխանելով
Իր գալստյան նշանների
վերաբերյալ աշակերտների
հարցին, Քրիստոսը մատնանշել
էր աշխարհի և եկեղեցու
պատմության մի քանի
կարևորագույն
իրադարձություններ՝ Իր
առաջին գալուստից մինչև
երկրորդն ընկած
ժամանակամիջոցում: Դրանք
էին՝ Երուսաղեմի կործանումը,
եկեղեցու մեծ նեղությունը
հեթանոսների ու պապության

հալածանքներից, արևի ու
լուսնի խավարումը և
աստղային անձրևը: Սրանից
հետո Նա ասաց իր գալստյան
մասին և պատմեց մի առակ,
որը վերաբերում էր իր
գալստյանը սպասող ծառաների
երկու խմբի: 25-րդ գլուխը
սկսվում է այս խոսքերով. «Այն
ժամանակ երկնքի
արքայութունը կնմանվի տասը
կույսերի»: Այստեղ
ներկայացված է վերջին օրերի
եկե-ղեցին, որի մասին
հիշատակվում է նաև 24-րդ
գլխի վերջում: Այս առա-կում
եկեղեցու փորձառութունը

լուսաբանված է արևելյան
հարսանիքի օրինակով:

«Այն ժամանակ երկնքի
արքայությունը կնամանվի տասը
կույսերի, ովքեր իրենց
լապտերները վեր առան և
դուրս եկան փեսային
դիմավո-րելու: Նրանցից հինգը
իմաստուն էին, և հինգը՝
հիմար: Այն հիմարները վեր
առան իրենց լապտերները,
բայց ձեթ չվերցրին իրենց հետ:
Եվ երբ որ փեսան ուշացավ,
ամենքը թմրեցին ու քնեցին: Եվ
կեսգիշերին աղաղակ եղավ,

ահա՛ փեսան գալիս է, դուրս
եկեք նրան դիմավորելու»:

Քրիստոսի գալուստը, որ
հռչակվեց առաջին հրեշտակի
կողմից, պատկերված էր [394]
փեսայի գալուստով, իսկ
կույսերի դուրս գալը
խորհրդանշում էր Նրա
մոտալուտ գալստյան
հռչակմանը հետեող
հա-մատարած բարեփոխումը:
Այս առակում, ինչպես և
Մատթեոս 24-րդ գլխում,
պատկերված է մարդկանց
երկու խումբ: Բոլորն էլ վերցրել
են իրենց լապտերները՝

Աստվածաշունչը, և նրա լույսի
ներքո դուրս եկել փեսային
դիմավորելու: «Յիմարները վեր
առան իրենց լապտերները,
բայց ձեթ չվերցրին իրենց
հետ», իսկ «իմաստուններն
իրենց ամաններում ձեթ վեր
առան՝ իրենց լապտերների հետ
մեկտեղ»: Այս երկրորդները
ստացել էին Աստծո շնորհը՝
Սուրբ Յոզու վերափոխող,
լուսավորող զորությունը, որը
Նրա խոսքերը ճրագ է
դարձնում ոտքերի և լույս՝
ճանապարհի համար: Նրանք
Աստծո երկյուղով
ուսումնասիրել էին Սուրբ

Գիրքը ճշմարտությունն
իմանալու համար և լրջորեն
ձգտել էին սրտի ու կյանքի
մաքրության: Նրանք
անձնական փորձառություն էին
ունեցել՝ հավատ Աստծո և Նրա
խոսքի հանդեպ, որը չէր կարող
հիասափությամբ և ուշացման
պատճառով խորտակվել:
Մյուսները «վեր առան իրենց
լապտերները, բայց ձեթ
չվերցրին իրենց հետ»: Նրանք
գործել էին պահի ազդեցության
տակ: Հանդիսավոր լուրը վախ
էր առաջացրել նրանց սրտում,
բայց նրանք ապավինել էին
իրենց եղբայրների հավատին՝

բավա-րարված հաճելի
զգացմունքների առկայծող
լույսով՝ առանց խորապես
հասկանալու ճշմարտությունը
և առանց զգալու շնորհի
վերափոխող ներ-գործությունն
իրենց սրտերի վրա: Նրանք
դուրս էին եկել Տիրոջը դիմավոր-
ելու՝ անմիջապես
վարձատրվելու հույսով, բայց
պատրաստ չէին ուշացման ու
հիասթափության: Երթ եկան
փորձությունները, նրանց
հավաար մարեց, և
լապտերների լույսն
աղոտացավ:

«Երբ փեսան ուշացավ, ամենքն
Էլ թմրեցին և քնեցին»: Փեսայի
ու- շացումն այստեղ
խորհրդանշում է Տիրոջ
սպասման ժամանակը, ինչպես
Նան հիասթափությունն ու
թվացյալ հապաղումը:
Անորոշության այս պահին
չվերածնվածներն ու
երկմիտները սկսեցին
տատանվել, նրանց ջանքերը
թուլացան, իսկ նրանք, ում
հավատը հիմնված էր
Աստվածաշնչի անձնական
իմացության վրա, կանգնել էին
վեմի վրա, որը
հիասթափության ալիքը չէր

կարող սասանել: «Ամենքն էլ
թմրեցին և քնեցին», ոմանք՝
անհոգ ու իրենց հավատը
թողած, մյուսները՝
համ-բերությամբ սպասելով,
մինչև որ ավելի պարզ լույս
տրվի: Սակայն [395]
փորձության գիշերվա
ընթացքում վերջիններս
կարծես ինչ-որ չափով կորցրել
էին իրենց եռանդն ու
նվիրվածությունը: Երկմիտները
և չվերածնվածներն այլևս չէին
կարող ապավինել իրենց
եղբայրների հավատին: Ամեն
մեկն անձամբ պիտի կանգնի
կամ ընկնի:

Մոտավորապես այդ ժամանակ
մոլեռանդության նշաններ
երևացին: Ոմանք, ովքեր
արտաքուստ ջերմեռանդորեն
ընդունել էին լուրը, մերժեցին
Աստծո խոսքը՝ որպես միակ
անսխալական ուղեցույց և,
պնդելով, թե առաջնորդվում են
Սուրբ Հոգով, անձնատուր եղան
իրենց զգացմունքներին,
տպավորություններին ու
երևակայությանը: Ոմանք
կուրորեն ու մոլեռանդությամբ
դատապարտում էին բոլորին,
ովքեր հա-մաձայն չէին իրենց
հետ: Ադվենտիստների մեծ

մասը չէր կհսում նրանց
մուլեռանդ գաղափարները,
սակայն նրանց պատճառով
ճշմարտության գործը
նախատինքի արժանացավ:

Սատանան այս միջոցներով
ձգտում էր ընդդմանալ Աստծո
գործին և տապալել այն:
Ադվենտիստական շարժումը
մեծապես հուզել էր ժողովրդին,
հազարավոր մեղավորներ
դարձի էին եկել, և հավատարիմ
անձինք հռչակում էին
ճշմարտությունը նույնիսկ
ուշացման ժամանակ: Չարի
իշխանը կորցնում էր իր

հպատակներին, և Աստծո
գործը վարկաբեկելու համար
ջանում էր խաբել ոմանց ու
մղել ծայրա-հեղությունների:
Չէտո նրա գործակալները
պատրաստ էին կառչել
յու-րաքանչյուր սխափ,
ձախողման, անվայելուչ
արարքի և դրանք մարդկանց
ներկայացնել ամենակեղծ
լույսի ներքո՝
ադվենտիստներին ու նրանց
հավատը գարշեփ դարձնելու
համար: Այսպիսով, որքան
ավելի մեծ լիներ նրանց թիվը,
ովքեր գտնվում էին սատանայի
հսկողութայան տակ, և ում նա

կկարողանար խցկել
ադվենտիստների շարքերը,
այնքան ավելի մեծ
առավելության կիսաներ՝
մարդկանց դրդելով հավատալ,
թե բոլոր հավատացյալներն էլ
այդպիսին են:

Սատանան «եղբայրների
չարախոսն» է, և հենց նրա
ոգին է, որ մարդկանց
ներշնչում է հետևել Աստծո
ժողովրդի սխալներին ու
թերություններին՝ ցուցադրելով
դրանք, մինչդեռ նրանց բարի
գործերն աննկատ են մնում:
Նա միշտ ակտիվ է, երբ

Աստված գործում է հոգիների
փրկութեան համար: Երբ Աստծո
պապիները գալիս են՝
ներկայանալու Տիրոջ առջև,
[396] նրանց հետ գալիս է նաև
սատանան: Ամեն մի
վերածննդի ժամանակ նա
պատրաստ է Աստծո ժողովրդի
մեջ մտցնելու չարբագործված
սրտի և անհավասարակշիռ
մտքի տեր անձանց: Երբ
այսպիսիք ընդունում են
ճշմարտության որոշ կետեր և
տեղ են գտնում
հավատացյալների մեջ,
սատանան նրանց միջոցով
տեսություններ է ներմուծում՝

անգգուշներին խաբելու
համար: Ոչ ոք չի կարող
իսկական քրիստոնյա լինել
միայն նրա համար, որ գտնվում
է Աստծո զավակների մեջ՝
նույնիսկ աղոթատանը կամ
Տիրոջ զոհասեղանի շուրջ:
Սատանան հաճախ ներկա է
ամենահանդիսավոր
արարողություններին ի դեմս
նրանց, ում կարող է
օգտագործել որպես իր
գործակալներ:

Չարի իշխանը պայքարում է
ամեն մի թիզ հողակտորի
համար, որի վրայով Աստծո

Ժողովուրդն առաջ է շարժվում
դեպի երկնային քաղաքը:
Եկեղեցու ողջ պատմության մեջ
ոչ մի բարեփոխում չի
կատարվել՝ առանց լուրջ
արգելքների բախվելու: Այդպես
էր և Պողոսի օրերում: Որտեղ էլ
որ առաքյալը եկեղեցի
կանգնեցներ, այնտեղ
հայտնվում էին մարդիկ, ովքեր
իբր թե ընդունում էին հավատը,
բայց իրենց հետ բերում էին
հերձվածողություններ, որոնք,
ընդունվելու դեպքում, սրտերից
դուրս կմղեին սերը
ճշմարտության հանդեպ:
Լյուծերը նույնպես մեծ

տա-ռապանք ու նեղություն
կրեց մուեռանդների
պատճառով, ովքեր պնդում
էին, թե Աստված ուղղակիորեն
խոսում է իրենց միջոցով, և
ովքեր իրենց անձնական
կարծիքներն ու գաղափարները
Սուրբ Գրքի վկայությունից վեր
էին դասում: Հավատի ու
փորձառության պակաս
ունեցող շատերը, ովքեր,
սակայն, բավականին
ինքնավստահ էին և սիրում էին
որևէ նոր բան լսել կամ
պատմել, խաբվեցին նոր
ուսուցիչների
հավակնություններով և

միացան սատանայի
գործակալներին՝ քանդելով
այն, ինչ Աստված կառուցել էր
Լյա թերին միջոցով: Ե՛վ Ուեսլի
եղբայրները, և՛ ուրիշներ,
ովքեր իրենց ազդեցութեամբ ու
հավատով օրհնել էին
աշխարհը, ամեն քայլավտխի
հանդիպում էին սատանայի
նենգություններին, ով չափից
ավելի ջերմեռանդ
անհավասարակշիռ ու
չսրբագործված անձանց գցում
էր ամեն տեսակի
մոլեռանդութեան մեջ:

Ուհիլյամ Միլլերը դեմ էր այն
ազդեցություններին, որոնք
տանամ էին մուլեռանդության:
Լյութերի նման նա ասամ էր, որ
յուրաքանչյուր հոգի պետք է
ստագվի Աստծո խոսքով:
«Սատանան,— ասել է
Միլլերը.— մեր օրերում մեծ
իշխանություն անի ոմանց [397]
մտքի վրա: Իսկ ինչպե՞ս
իմանալ, թե նրանք ինչ հոգուց
են: Աստվածաշունչը
պատասխանում է. «Իրենց
պտուղներից կճանաչեք
նրանց»... Շատ հոգիներ են
դուրս եկել աշխարհ, և մեզ
պատվիրված է փորձել դրանք:

Այն հոգին, որը մեզ չի դրդում
ողջամիտ, արդար ու
բարեպաշտ կյանքի այս
աշխարհում, Քրիստոսի Հոգին
չէ: Ես ավելի ու ավելի եմ
համոզվում, որ այս վայրի
շարժումները սատանայի
գործն են... Մեզանից շատերը,
ովքեր կարծում են, թե
ամբողջապես սրբագործված
են, հետևում են մարդկային
ավանդույթներին և իրապես
նույնքան անձանոթ են
ճշմարտությանը, որքան
մյուսները, ովքեր նման
հավակնություն չունեն» (Ս.
Բլիս, Ուիլյամ Միլլերի

հուշագրութիւնները, Էջ 236, 237): «Խաբէութեան հոգին կհեռացնի ճշմարտութիւնից, իսկ Աստծո Յոգին կառաջնորդի դէպի ճշմարտութիւնը: Բայց, կասեք դուք, մարդը կարող է մոլորված լինել, և կարծել, թէ ունի ճշմարտութիւնը: Ուրեմն ի՞նչ: Պատասխանում ենք. Յոգին և խոսքը ներդաշնակ են միմյանց: Եթէ մարդը իրեն դատում է Աստծո խոսքով և լիակատար ներդաշնակութիւն է տեսնում ամբողջ խոսքում, ապա կարող է համոզված լինել, որ գտել է ճշմարտութիւնը, բայց եթէ տեսնում է, որ իրեն

առաջնորդող հոգին
ներդաշնակ չէ Աստծո օրենքի
կամ Գրքի ընդհանսոր
աղղվածությանը, ուրեմն թող
զգուշանա, որ հանկարծ չընկնի
սատանայի ծուղակը» (The
Advent Herald and Signs of the
Tames Reporter, vol. 8, N 23, 15
հունվարի, 1845 թ.): «Յաճախ
պսպղուն աչքերի, խոնավ
այտերի և խեղդող խոսքերի մեջ
ես ներքին բարեպաշտության
ավելի մեծ ապացույց եմ
տեսնում, քան քրիստոնեական
աշխարհի ողջ աղմուկի մեջ» (Ս.
Բլիս, Ուիլյամ Միլլերի
հուշագրությունները, էջ 282):

Բարենորոգման ժամանակ նրա
թշնամիները մոլեռանդության
ամ-բողջ չարիքի մեջ
մեղադրում էին հենց նրանց,
ովքեր ամենից ավելի էին
պայքարում դրա դեմ: Նույնն
արեցին նաև
ադվենտիստական շարժման
հակառակորդները:
Չբավարարված
ծայրահեղականների և
մոլե-ռանդների
մոլորությունները կեղծելով ու
չափազանցնելով՝ նրանք տիաճ
լուրեր էին տարածում, որոնց
մեջ ճշմարտության հետք

անգամ չկար: Այս անձինք
առաջնորդվում էին
Նախապաշարումներով ու
ատելությամբ: Այն լուրը, որ
Քրիստոսը դռների մոտ է,
խախտել էր նրանց անդորրը:
Նրանք վախեցան, որ դա
կարող է ճիշտ լինել, սակայն
հույս ունեին, որ այդպես չէ, և
սա էր ադվենտիստների ու
նրանց հավատի դեմ նրանց
թշնամության գաղտնիքը: [398]

Այն փաստը, որ մի քանի
մուլեռանդների հաջողվեց
մտնել ադվենտիստների
շարքերը, որևէ հիմք չէր տալիս

ենթադրելու, որ այդ շարժումն
Աստծուց չէ, ճիշտ այնպես,
ինչպես մուլեռանդների ու
խաբեքաների ներկայութիւնը
եկեղեցում Պողոսի կամ
կութերի օրերում, արդարացում
չէր նրանց գործը
դատապարտելու համար: Թող
Աստծո ժողովուրդն արթնանա
քնից և լրջորեն սկսի
ապաշխարութեան ու
բարենորոգման գործը, թող
նրանք քննեն Գրքերը՝
հասկանալու ճշմարտութիւնը,
ինչպես այն կա Յիսասում, թող
փոփին նվիրվեն Աստծուն, և
կարիք չի լինի ապացուցել, որ

սատանան հիմա էլ գործուն ու
աչալուրջ է: Ամեն հնարավոր
խաբեութեամբ նա կոխտորի իր
ուժը՝ օգնութեան կանչելով իր
տիրապետութեան բոլոր անկյալ
հրեշտակներին:

Մուեռանդութեան և
բաժանութեան պատճառը
բոլորովին էլ երկրորդ
գալստյան ազդարարումը չէր:
Դրանք ի հայտ եկան 1844 թ.
ամռանը, երբ ադվենտիստները
կասկածի ու շփոթութեան մեջ
էին իրենց իրական վիճակի
վերաբերյալ: Առաջին
հրեշտակի պատգամի

քարոզչութիւնն ու
«Կեսգիշերվա աղաղակն»
ուղղակիորեն նպատակ ունեին
ճնշելու մո-լեռանդութիւնն ու
պառակտումը: Այս
հանդիսավոր շարժումների
մաս-նակիցները համերաշխ
էին, նրանց սրտերը փ էին
սիրով միմյանց և Յիսուսի
հանդէպ, ում շուտով հույս
ունեին տեսնել: Մեկ հավատն
ու մեկ երանելի հույսը նրանց
բարձրացրել էին մարդկային
ամեն մի ազդեցու-թյան
հսկողութիւնից՝
պաշտպանելով սատանայի
հարձակումներից:

«Երբ որ փեսան ուշացավ,
ամենքը թմրեցին և քնեցին: Եվ
կեսգիշերին աղաղակ եղավ՝
ահա՛ փեսան գալիս է, դուրս
եկեք նրան դիմավորելու: Այն
ժամանակ ամեն կույսերը վեր
կացան և իրենց լապտերները
պատրաստեցին» (Մատթեոս
25.5-7): 1844-ի ամռանը՝ այն
ժամանակա-հատվածի կեսին,
որն, ինչպես սկզբում կարծում
էին, ընկած էր 2300 օրերի
վերջի և նույն տարվա աշնան
միջե, մինչև ուր, ինչպես հետո
պարզվեց, այդ օրերը ձգվում
են, լուրը հռչակվեց

աստվածաշնչյան այս նույն
խոսքերով. «Ահա՛ փեսան
գալիս է»:

Այս շարժումն առաջացավ այն
հայտնագործությունից, որ
Երուսաղեմի վերակառուցման
մասին Արտաշեսի հրամանը,
որից սկսվում էր 2300 օրերի
հաշվարկը, ուժի մեջ էր մտել ք.
ա. 457 թ. աշնանը, այլ [399] ոչ
թե տարվա սկզբին, ինչպես
մինչ այդ ենթադրում էին:
Հաշվելով 457 թ. աշունից՝ 2300
տարիներն ավարտվում էին
1844 թ. աշնանը:

Հին Կտակարանի
Նախապատկերներից վերցված
փաստարկները նույնպես
վկայում էին, որ «սրբարանի
արդարացումը» ներկայացնող
իրադարձությունը պետք է
տեղի ունենար աշնանը: Սա
շատ պարզ դարձավ, երբ
ուշադրություն դարձվեց, թե ինչ
ձեռք էին կատարվել Քրիստոսի
առաջին գալստյանը
վերաբերող
նախապատկերները :

Չատկի գառը մորթելը
Քրիստոսի մահվան ստվերն էր:
Պողոսն ասում է. «Քրիստոսը՝

մեր զատիկը, մորթվեց մեզ համար» (Ա Կորնթացիս 5.7, անգլ. թարգմ.): Հունձքի առաջին խուրձը, որը զատկի ժամանակ երերացնում էին Տիրոջ առջև, Քրիստոսի հարուժյունն էր պատկերում: Խոսելով Տիրոջ և Նրա ժողովրդի հարուժյան մասին՝ Պողոսն ասում է. «Առաջին պտուղը՝ Քրիստոսը, և հետո քրիստոսիկները՝ նրա գալու ժա-մանակ» (Ա Կորնթացիս 15.23): Երերացնելու խուրձի պես, որը հունձքից առաջ հավաքվող առաջին հասած հացահատիկն էր, Քրիստոսը

առաջին պտուղն է փրկյալների
այն անմահ բերքի, որը գալիք
հարության ժամանակ
հավաքվելու է Աստծո
շտեմարանում:

Այս նախապատկերներն
իրականացան ոչ միայն
իրադարձության, այլ նաև
ժամանակի առումով: Հրեական
առաջին ամսվա
տասնչորս-երորդ օրը, նույն
ամսվա նայն օրը, երբ
տասնհինգ երկար դարեր
մորթվել էր զատկական գատը,
Քրիստոսն, իր աշակերտների
հետ ուտելով զատիկը, հիմնեց

այն տոնը, որը պիտի հիշեցնէր
իր մահը՝ որպէս «Աստծո
Գառան, որ վեր է սանում
աշխարհի մեղքը»: Այդ նույն
գիշերը ամբարիշտները Նրան
բռնեցին և մատնեցին
խաչվելու և մորթվելու: Եվ մեր
Տերը երրորդ օրը հարուստուն
առաջ մեռելներից, ինչպէս
Նախապատկերված էր
երերացնելու խուրձով՝ որպէս
«ննջածների առաջնեկ», որպէս
օրինակ բոլոր այն արդարների,
ովքեր պիտի հարուստանան
և ունան «թշվառ մարմինները»
փոխվելու են, որպէսզի «իր
փառավոր մարմին

կերպարանակից» լինեն (Ա
Կորնթացիս 15.20, Փիլիպպեցիս
3.21):

Նույն ձեով էլ
Նախապատկերները, որոնք
վերաբերում են երկրորդ
գալստյանը, պիտի
իրականանան
խորհրդանշական
ծառայության մեջ
մատնանշված [400] ժամանակ:
Սովսեսի ծիսական օրենքով
սրբարանի մաքրումը՝
Քավության մեծ օրը, տեղի էր
ունենում հրեական յոթերորդ
ամսվա տասներորդ օրը

(Ղևտացոց 16.29-34), երբ քահանայապետը, քավություն անելով ողջ Իսրայելի համար և հեռացնելով նրանց մեղքերը սրբարանից, դուրս էր գալիս և օրհնում ժողովրդին: Դրա համար էլ կար-ծեցին, թե Քրիստոսը՝ մեր մեծ քահանայապետը, պիտի հայտնվի՝ մաքրելու երկիրը մեղքից ու մեղավորներից և իր սպասող ժողովրդին օրհնի անմահությամբ: Յոթերորդ ամսվա տասներորդ օրը՝ Քավության մեծ օրը, սրբարանի մաքրման ժամանակը, որը 1844 թ. ընկալ հոկ-տեմբերի

քսաներկուսին, համարվեց
Տիրոջ գալստյան օրը: Սա
համա-պատասխանում էր այն
հաշվարկին, ըստ որի՝ 2300
օրերը լրանում էին աշնանը, և
այս եզրակացությունն
անհերքելի էր թվում:

Մատթեոս 25-ի ստակում
սպասման և քնի ժամանակին
հաջորդում է փեսայի
գալուստը: Սա ներդաշնակ էր
հենց նոր ներկայացված
փաստարկներին թե՛
մարգարեությունից, թե՛
նախապատկերներից: Նրանք
խորապես համոզված էին, որ

ճիշտ են, և հազարավոր
լրաբերներ հռչակեցին
«Կեսգիշերվա աղաղակը»:

Այս շարժումը վիթխարի ալիքի
պես անցավ երկրով մեկ: Այն
տա-րածվեց քաղաքից քաղաք,
գյաղից գյուղ՝ հասնելով
հեռավոր բնակա-վայրերը,
մինչև որ Աստծո սպասող
ժողովուրդը լիովին
արթնացավ: Այս լուրի
զորության առաջ
մոլեռանդությունն
անհետացավ, ինչպես
վաղոր-դյան ցուրտը՝ ծագող
արևի առաջ: Չքացան

հավատացյալների
կաս-կածներն ու շփոթութիւնը,
և հույսն ու համարձակութիւնը
կենդանացրին նրանց սրտերը:
Շարժումը գերծ էր այն
ծայրահեղութիւնից, որը
մշտապէս դրսևորվում է, երբ
մարդիկ գրգռվում են՝ առանց
Աստծո խոսքի և Յոգու
վերահսկող ազդեցութեան: Իր
բնույթով այն հիշեցնում էր
խոնարհման ու Տիրոջը
դառնալու այն ժամանակները,
որոնք հին Իս-րայելում
հաջորդում էին Նրա ծառաների
հանդիմանական լուրերին:
Դրան բնորոշ էին այն

հատկանիշները, որոնցով աչքի
է ընկնում Աստծո գործը բոլոր
դարերում: Խելահեղ
ուրախություն գրեթե չկար, այլ
միայն սրտի խորը քննություն,
մեղքի խոստովանություն և
ապաշխարություն: [401] Խորը
հոգեվարքի մեջ նրանք
պատրաստվում էին՝
դիմավորելու Տիրոջը:
Աղոթքները ջերմեռանդ էին,
նվիրումն Աստծուն՝
անմնացորդ:

Նկարագրելով այս
փորձառությունը՝ Միլլերն ասել
է. «Չկա ցնձագին

ուրախութեան արտահայտում,
դա կարծես պահում են
ապագայի համար, երբ ողջ
երկինքն ու երկիրը պիտի
միասին ցնծան անպատմելի
ուրախութեամբ ու փառքի
լիութեամբ: Չկան նաև
բարձրաձայն աղաղակ-ներ:
Դրանք նույնպես պահվում են
երկնքի համար: Երգիչները լուռ
են: Նրանք սպասում են՝
միանալու հրեշտակների
զորքին, երկնային
երգչա-խմբին... Չկան
ընդհարվող զգացմունքներ,
բոլորը մեկ սիրտ և մեկ միտք
ունեն» (Ս. Բփս, Ուիլյամ

Միլլերի հուշագրությունները,
Էջ 270,271):

Ճարժման մի այլ մասնակից
վկայել է. «Այն ամենուրեք
առաջացնում էր սրտի խորը
քննություն և հոգու
խոնարհեցում Բարձրյալ Աստծո
առջև: Կապվածությունն
աշխարհի հետ թուլանում էր,
վերջ էր դրվում
հակասություններին ու
թշնամությունը, մարդիկ
խոստովանում էին իրենց
սխալները, խոնարհվում էին
Աստծո առջև և զղջման
սրտամորմոք աղոթքներ էին

հղում Նրան՝ խնդրելով ներել և
ընդունել: Նման
ինքնանվաստացում և հոգու
խոնարհեցում մենք երբեք
չէինք տեսել: Հովել մարգարեի
խոսքերով՝ Աստծո օրվա
մոտենալը մարդկանց դրդեց
պատռել իրենց սրտերը, ոչ թե
հանդերձները, և դառնալ
Աստծուն ծոմով, լացով ու
կոծով: Ինչպես Աստված խոսել
էր Չաքարիայի միջոցով, Նրա
գավակների վրա թափվեց
«շնորհի և աղոթքի հոգի»:
Նրանք նայեցին Նրան, ում
խոցել էին, և մեծ սուգ եղավ
երկրում... և Տիրոջը

սպասողները խոնարհեցրին
իրենց անձերը Նրա առջև (Ս.
Բլիս, Advent Shield and Review,
vol. 1, p. 271, հունվար, 1845
թ.):

Առաքյալների օրերից ի վեր
կրոնական մեծ շարժումներից
ոչ մեկն ավելի ազատ չի եղել
մարդկային
անկատարութունից և
սատանայի հնարքներից,
ինչպես 1844թ. աշնանային
շարժումը: Նա յ նիսկ հիմա `
չատ տարիներ անց, դրա բոլոր
մասնակիցները, ովքեր
հաստատ կանգնել են

ճշմարտութեան հիմունքի վրա,
դեռ զգում են այդ
օրինյալշարժման սուրբ
ազդեցութիւնը և վկայում, որ
այն Աստուծոց Էր: [402]

Երբ լսվեց կոչը՝ «Ահա փեսան
գալիս է, դուրս եկեք Նրան
դիմա-վորելու», սպասողները
«վեր կացան և իրենց
լապտերները կարգի
բե-րեցին»: Նրանք սկսեցին
Աստուծո խոսքն ուսումնասիրել
Նախկինում չտեսնված
հետաքրքրութեամբ:
Չրեշտակներ ուղարկվեցին
երկնքից՝ արթնացնելու

հուսալքվածներին և
պատրաստելու նրանց՝
ընդունելու լուրը: Գործն առաջ
էր տարվում ոչ թե մարդկային
իմաստությամբ և գիտությամբ,
այլ Աստծո զորությամբ: Ոչ թե
ամենահանճարեղ, այլ
ամենախոնարհ ու նվիրյալ
մարդիկ առաջինը լսեցին կոչը
և ընդունեցին այն:
Ագարակատերերն իրենց բերքը
թողեցին դաշտում,
արհեստավորները մի կողմ
դրեցին իրենց գործիքները և
ուրախության ար-ցունքներով
դուրս եկան՝ ազդարարելու
Նախազգուշացումը: Նրանք,

ովքեր սկզբում շարժման
առաջնորդներն էին,
վերջինների թվում էին, որ
միացան գործին: Եկեղեցիներն,
ընդհանուր առմամբ, փակեցին
իրենց դռներն այս լուրի առջև,
և այն ընդունող մարդկանցից
շատերը Լքեցին իրենց
համայնքները: Աստծո
Նախախնամով թյամբ այս
շարժումը միացավ երկրորդ
հրեշտակի պատգամին և Էլ
ավելի հզորացրեց այդ գործը:

«Ահա՛ փեսան գալիս է» յուրը
հիմնված էր ոչ այնքան
փաստարկների, որքան Սուրբ

Գրքի պարզ ու համոզիչ
ապացույցների վրա: Այն
ուղեկցվում էր մեծ
զորությամբ, որը հոպում էր
մարդկանց հոգիները՝ տեղ
չթողնելով կառկածների ու
հարցերի համար: Երբ
Քրիստոսը հաղ-թականորեն
մանում էր Երուսաղեմ,
ժողովուրդը, որը հավաքվել էր
այստեղ երկրի բոլոր կողմերից,
շտապեց դեպի Ձիթենյաց լեռը,
և միա-նալով Յիսուսին
ուղեկցող ամբոխին՝ պահի
ներշնչման տակ
բարձրաձայնեց. «Օրհնյա՛լ է
Տիրոջ անունով եկողը»

(Մատթեոս 21.9): Այդպես էլ
անհավատները, որ գալիս էին
մասնակցելու աղվենտիստների
ժողովներին կամ
հետաքրքրությունից, կամ էլ
պարզապես ծաղրելու համար,
զգացին «Ահա՛ փեսան գալիս
է» լուրին ուղեկցող համոզիչ
ուժը:

Այդ ժամանակ հավատն
այնպիսին էր, որ աղոթքի
պատասխան էր բերում,
հավատ, որն անվարձահատույց
չի մնում: Ծարավ հափ վրա
թափվող անձրևի շիթերի պես
շնորհի Յոզիին իջնում էր ծարավ

արտերի վրա: Նրանք, ովքեր
[403] հույս ունեին շուտով
դեմառդեմ հանդիպել իրենց
Փրկչին, հանդիսավոր
ուրախություն էին զգում, որն
անհնար է նկարագրել: Սուրբ
Յոզու փափկեցնող,
ենթարկեցնող զորությունը
հա-լեցնում էր սիրտը, երբ Նրա
օրհնությունն առատորեն
շնորհվում էր հա-վատարիմ,
վատահող անձանց:

Լուրն ընդունողները
զգուշությամբ և լրջորեն
մոտեցան այն պահին, երբ
հույս ունեին տեսնելու իրենց

Տիրոջը: Ամեն առավոտ Նրանք
զգում էին, որ իրենց առաջին
գործն է վկայություն ստանալ,
որ Աստված ընդունում է իրենց:
Նրանց սրտերը սերտորեն
կապված էին իրար, և Նրանք
հաճախ աղոթք էին անում
միմյանց հետ և մեկը մյուսի
համար: Նրանք հաճախ
հավաքվում էին մեկուսի
վայրերում՝ հաղորդակցվելու
Աստծո հետ, և դաշտերից ու
պուրակներից երկինք էին
բարձրանում բարեխոսական
աղոթքները: Փրկչի
բարեհաճության
հավաստիացումն ավելի

անհրաժեշտ էր նրանց, քան
հանապազօրյա հացը, ու եթե
նրանց միտքը պատվում էր
խավարով, նրանք չէին
հանգստանում, մինչև որ այն
չցրվեր: Ստանալով ներող
շնորհի վկայությունը՝ նրանք
փափագում էին տեսնել նրան,
ուր սրտանց սիրում էին:

Բայց կրկին նրանց
հիասթափությունն էր
սպասվում: Սպասված
ժամանակն անցավ, իսկ
Փրկիչը չհայտնվեց: Աներեր
վստահությամբ նրանք սպասել
էին նրա գալուստին, և հիմա

Նման էին Մարիամին, երբ նա,
գալով Փրկչի գերեզմանի մոտ և
այն դատարկ գտնելով,
լացակումած բացականչեց. «Իմ
Տիրոջը վեր առան, և չգիտեմ,
թե ուր դրին նրան» (Յովհաննես
20.13):

Երկյուղի զգացումը, վախը, որ
լուրը կարող է ճիշտ լինել,
միառժա-մանակ զսպել էր
անհավատ աշխարհին:
Ժամանակն անցնելուց հետո
այդ զգացմունքն անմիջապես
չանհետացավ: Սկզբում նրանք
չէին համարձակվում ցնծալ
հիասթափվածների վրա, բայց

երբ Աստծո քարկուլթյան
նշաններ չերևացին, նրանք,
կորցնելով վախը, վերսկսեցին
իրենց նախատիկներն ու ծաղրը:
Մարդկանց մի մեծ խումբ,
ովքեր հայտա-րարել էին, թե
հավատում են Տիրոջ մոտալուստ
գալստյանը, ուրացան իրենց
հավատը: Ոմանք, ովքեր շատ
վստահ էին եղել, այնքան խորն
էին վիրավորված, որ ուզում
էին փախչել աշխարհից:
Յովնանի պես նրանք դժգոհ
էին Աստծուց և կուգեին ավելի
շուտ մեռնել, քան ապրել: [404]

Նրանք, ովքեր իրենց հավատը
հիմնել էին ուրիշների
կարծիքների վրա և ոչ թե
Աստծո խոսքի, այժմ
պատրաստ էին նորից վախել
իրենց հայացքները:
Ծաղրողներն իրենց կողմը
գրավեցին տկարամիտներին ու
վախկոտներին, և նրանք
բոլորը միաձայն
հայտարարեցին, թե այլևս
հարկ չկա վախենալու կամ
սպասելու: Ժամանակն անցել
էր, Տերը չէր եկել, և աշխարհը
կարող էր նույնը մնալ
հազարավոր տարիներ:

Լուրջ ու անկեղծ
հավատացյալներն ամեն ինչ
թողել էին հանուն Քրիստոսի և,
ինչպես երբեք նախկինում,
զգացել էին Նրա
ներկայութունը: Նրանք,
ինչպես կարծում էին, իրենց
վերջին նախազգուշացումն էին
տվել աշխարհին, և հուսալուծ
շուտով ընդունվել իրենց
աստվածային Ուսուցչի և
երկնային հրեշտակների
շրջանակը՝ գրեթե լիովին
առանձնացել էին նրանցից,
ովքեր չէին ընդունել լուրը:
Մեծագույն փափագով նրանք
աղոթել էին՝ «Ե՛կ, Տեր Հիսուս,

շուտով եկ», բայց Նա չէր եկել:
Եվ հիմա կյանքի հոգսերի ու
նեղությունների բեռը կրելը և
անհավատ աշխարհի
ծաղրուծանակին ու
անարգանքին դիմանալը
հավատի ու համբերության
սարսափելի փորձություն էր:

Սակայն այս
հիասթափությունն ավելի մեծ
չէր, քան այն, որ աշակերտներն
ունեցան Քրիստոսի առաջին
գալստյան ժամանակ: Երբ
Յիսուսը հաղթականորեն մտավ
Երուսաղեմ, Նրա հետևորդները
կարծեցին, թե Նա

պատրաստվում է Դավթի գահը
բարձրանալն փրկել Իսրայելին
իր կեղեքիչներից: Վեհ
հույսերով ու ցնձագին
սպասումներով նրանք իրար
հետ մրցում էին իրենց
Թագավորին պատիվ տալու
մեջ: Շատերն իրենց
հանդերձները փռում էին Նրա
ճանապարհին և արմավենու
տերևախիտ ճյուղեր էին
թափահարում Նրա առջև: Մեծ
խանդավառությամբ նրանք
բացականչում էին. «Օվսաննա՛
Դավթի Որդուն»: Երբ այս
ուրախության պոռթկումից
տազնապած ու զայրացած

փարիսեցիները պահանջեցին,
որ Յիսուսը սաստի իր
աշակերտներին, Նա
պատասխանեց. «Եթե նրանք
լռեն, քարերը կաղաղակեն»
(Ղուկաս 19.40):

Մարգարեությունը պիտի
կատարվեր: Աշակերտներն
իրականացնում էին Աստծո
մտադրությունը, բայց նրանց
դառը եհասթավաթյուն էր
սպասում: Ընդամենը մի քանի
օր անց նրանք ականատես
եղան Փրկչի տանջալից
մահվանը և Նրա թաղմանը:
Նրանց սպասելիքներից և ոչ
մեկը [405] չիրականացավ, և

Նրանց հույսերը մեռան Յիսուսի
հետ: Միայն երբ Տերը
հաղթականորեն դուրս եկավ
գերեզմանից, նրանք
կարողացան հասկանալ, որ
այդ ամենը կանխասված էր
մարգարեության մեջ, և որ
«Քրիստոսը պետք է չարչարվեր
ու՛մեռելներից հարուժյու՛ն
առներ» (Գործք 17.3):

Դրանից հինգ հարյուր տարի
առաջ Տերը Չաքարիա
մարգարեի մի-ջոցով ասել էր.
«Մեծապես ուրախացիր, ո՛վ
Սիոնի աղջիկ, ցնծությամբ
աղաղակիր, ո՛վ Երուսաղեմի

աղջիկ, ահա քո Թագավորը
գալիս է քեզ մոտ, նա արդար ու
փրկագործ է, հեզ և էշի վրա
հեծած, այսինքն՝ էշի ձագի՝
ավանակի վրա» (Չաքարիա
9.9): Եթե աշակերտները
գիտակցեին, որ Քրիստոսը
գնում էր դատվելու և մահվան,
ապա չէին կարող
իրականացնել այս
մարգարեությունը:

Այդպես էլ Միլլերն ու նրա
համախոհները իրականացրին
մարգարեությունը՝ հռչակելով
այն լուրը, որն ըստ ներշնչյալ
խոսքի՝ պիտի տրվեր

աշխարհին, որը, սակայն,
նրանք չէին կարող հռչակել,
եթե լիովին ըմբռնեին այն
մարգարեությունները, որոնք
մատնացույց էին անում իրենց
հիասթափությունը և
ներկայացնում մեկ այլ
պատգամ, որը պիտի քարոզվեր
բոլոր ազգերին՝ նախքան
Տիրոջ գալուստը: Առաջին և
երկրորդ հրեշտակների
պատգամներն ազդարարվեցին
ճիշտ ժամանակին և
կա-տարեցին այն գործը, որն
Աստված նախատեսել էր:

Աշխարհը հետևում էր այդ
ամենին՝ ակնկալելով, որ եթե
Ժամանակն անցել է, իսկ
Քրիստոսը չի հայտնվել, ապա
ադվենտիզմի ողջ համակարգը
պիտի փլուզվի: Բայց մինչ
շատերն ուժգին փորձության
տակ թողեցին իրենց հավատը,
եղան այնպիսիք, ովքեր
մնացին ան-սասան:
Ադվենտիստական շարժման
պտուղները՝ խոնարհությունն
ու ինքնաքննումը,
ապաշխարության ու կյանքի
բարեփոխման ոգին, որն
ուղեկցել էր շարժանը,
վկայում էին, որ այն Աստուծոց

Էր: Նրանք չհամարձակվեցին
ժխտել, որ երկրորդ գալստյան
քարոզչությունն ու-ղեկցվել էր
Սուրբ Հոգու գործությամբ և
մարգարեական
ժամանակա-հատվածների՝
Նրանց հաշվարկի մեջ
չկարողացան որևէ սխալ
գտնել: Նրանց
հակառակորդներից
ամենագիտունին անգամ
չհաջողվեց քանդել
մարգարեությունների
մեկնաբանության Նրանց
համակարգը: Առանց
Աստվածաշնչի վկայության
Նրանք չէին կարող ժխտել այն

համոզմունք-ները, որոնք ձեռք
էին բերվել Սուրբ Գրքի լուրջ,
աղոթքային
ուսում-նասիրության միջոցով
այն մարդկանց կողմից, ում
միտքը լուսավորված էր [406]
Աստծո Յոզով, և ում սրտերը
վառվում էին Նրա կենդանի
զորությանը, համոզմունքներ,
որոնք դիմացել էին
հանրաճանաչ
աստվածաբանների և
աշխարհային իմաստունների
խստագույն քննադատու-
թյանն ու սաստիկ
ընդդիմությանը, հաստատ
կաքպնեյ էին գիտության ու

պերճախոսութեան միացյալ
ուժի դեմ և դիմացել ինչպես
մեծապատիվ, այնպես էլ ստոր
մարդկանց ծաղրանքին ու
վիրավորանքներին:

Ճիշտ է, սպասվող
իրադարձությունը տեղի
չունեցավ, բայց նույնիսկ դա
չէր կարող սասանել նրանց
հավասան Աստծո խոսքի
հանդեպ: Երբ Հովնանը Նինվեի
փողոցներում ազդարարեց, թե
քառասուն օրից քաղաքը
կործանվելու է, Տերն ընդունեց
Նինվեի բնակիչների
խոնարհումը և երկարացրեց

Նրանց արված փորձնական
ժամկետը: Բայցեայնպես,
Յովնանի լուրն Աստծուց էր, և
Նինվեն փորձվեց Նրա կամքի
համաձայն: Աղվենտիտոները
հավատում էին, որ Նույն ձեռով
Էլ Աստված իրենց է դրդել
Նախազգուշացնելու
դատաստանի մասին: «Այս
պատգամը,— ասում էին
Նրանք,— թափանցեց բոլոր
լսողների սրտերը և ոմանց մոտ
փափագ արթնացրեց Տիրոջ
գալստյան նկատմամբ,
մյուսների մեջ՝ քիչ թե շատ
նկատելի ատելություն, որը,
սակայն, հայտնի էր Աստծու ն:

Այն սահ-մանագիծ քաշեց...
որպեսզի իրենց սրտերը
քննողները կարողանային
իմանալ, թե դրա որ կողմում
իրենք կգտնվեին, եթե Տերն
այդ ժամանակ գար. նրանց
մե՞ջ, ովքեր կբացականչեին.
«Ահա մեր Աստվածը, ում մենք
հուսացել ենք, և նա փրկեց
մեզ», թե՞ մյուսների, ովքեր
ժայռերին ու սարերին
կկանչեին, որ իրենց վրա
ընկնեն ու իրենց ծածկեն
աթոռի վրա նստողի երեսից ու
Գառան բարկությունից: Մենք
հավատում ենք, որ Աստված
այսպիսով փորձեց իր

Ժողովրդին, ստուգեց նրա
հավատը, որպեսզի նա տեսնի՝
վորձառության ժամին կխուսափի՞
արդյոք այն վիճակից, որի մեջ
Նա հարմար կգտնի դնել իրեն,
թե՞ կուրանա աշխարհն ու
անվերապահորեն կապավիճի
Աստծո խոսքին» (The Advent
Herald and Signs of the Times
Reporter, vol. 8, N 14,13
նոյեմբերի, 1844):

Նրանց զգացմունքները, ովքեր
դեռ հավատում էին, որ իրենց ա
նցյալ փորձառության մեջ
Աստված էր իրենց առաջնորդել,
արտահայտված են Ուիլյամ

Միլլերի խոսքերում. «Եթե ես նորից ապրեի իմ կյանքը՝ ունենալով [407] նույն վկայությունները, որ այն ժամանակ ունեի, ապա Աստծո և մարդկանց առջև ազնիվ լինելու համար ես կանեի նույնը, ինչ արել եմ»: «Ես հուսով եմ, որ մաքրել եմ հանդերձներս մարդկանց արյունից: Կարծում եմ, որ իմ ուժերի ներածին չափով կարողացել եմ ազատելինձ նրանց դատապարտության հանցանքից»: «Թեև երկու անգամ հիասթափվել եմ,— գրում է Աստծո այս մարդը,—

սակայն չեմ ընկել կամ
հուսահատվել... Իմ հույոքը
Քրիստոսի գալստյան վրա
առաջվա պես հաստատուն է:
Ես արել եմ միայն այն, ինչ
երկարամյա հանդիսավոր
մտորումներից հետո պարտքս
եմ համարել: Եթե սխալվել եմ,
ապա դա եղել է իմ դրացիների
Նկատմամբ սիրո և Աստծո
առջև պարտքիս գիտակցման
պատճառով»: «Մի բան ես
հաստատ գիտեմ, որ քարոզել
եմ միայն այն, ինչին
հավա-տացել եմ, և Աստված
ինձ հետ է եղել: Նրա
զորությունը դրսևորվել է

շարժման մեջ, և շատ բարիք է արվել»։ «Չազարավորները ժամանակի վերաբերյալ մեր քարոզների շնորհիվ դրոյվել են ուսումնասիրելու Սուրբ Գիրքը և հավատով ու քրիստոսի արյան միջոցով հաշտվել են Աստծո հետ» (Ս. Բլիս, Ուիլյամ Միլլերի հուշագրությունները, էջ 256, 255, 277, 280, 281)։ «Ես երբեք չեմ ձգտել արժանանալ հպարտների հավանությանը, ոչ էլ վախեցել եմ, երբ աշխարհը խոժոռվել է։ Ես հիմա չեմ ջանա շահել նրանց բարեհաճությունը, ոչ էլ կչարաշահեմ իմ

պարտականությունը՝ նրանց
ատելությունը գրգռելու
համար: Ես երբեք իմ կյանքը
չեմ հանձնի նրանց ձեռքը, ոչ էլ,
հուսով եմ, կվախենամ այն
կորցնել, եթե Աստված Իր բարի
Նախախնամությամբ այդպես
որոշի» (Ջ. Ուայթ, Ու. Միլլերի
կյանքը, էջ 315):

Աստված չթողեց Իր
ժողովրդին: Նրա Յոզիս
առաջվա պես նրանց հետ էր,
ովքեր հապճեպորեն չմերժեցին
իրենց ընդունած լույսը և
չդա-տապարտեցին
ադվենտիստական շարժումը:

Եբրայեցիներին ուղղված
թղթում քաջալերանքի ու
նախազգուշացման խոսքեր
կան այդ ճգնաժամի մեջ
փորձվողների ու սպասողների
համար. «Դեն մի՛ գցեք ձեր
վստահությունը, որ մեծ
վարձքի հատուցում ունի:
Որովհետև համբերություն է
պետք ձեզ, որ Աստծո կամքն
անելով՝ խոստմունքը
ստանաք: Որովհետև միայն մի
քիչ ժամանակ էլ, և նա, որ
գալու է, կգա և չի ուշանա:
Բայց արդարը հավատով
կապրի, և եթե մեկը ետ քաշվի,
իմ անձը նրան չի հավանի: Իսկ

մենք ետ [408] քաշվողներից
չենք, որ կորչենք, այլ
հավատից ենք, որ մեր
հոգիները փրկվեն» (Եբրայեցիս
10.35-39):

Որ այս հորդորն ուղղված է
վերջին օրերի եկեղեցուն,
պարզորոշ երևում է Տիրոջ
մոտալուստ գալուստը
մատնանշող խոսքերից.
«Որովհետև միայն մի քիչ
ժամանակ էլ, և նա, որ գալու է,
կգա և չի ուշանա»: Այստեղ
նաև հստակ ակնարկ կա, որ
թվացյալ հապաղում է լինելու,
և որ Տերը կարծես թե

ՈՒՇԱՆԱԼՈՒ Է: Այս խրատը
հատկապես համապատասխան
է այդ ժամանակվա
ադվենտիստների
փորձառությանը: Ժողովուրդը,
ուն ուղղված են այս խոսքերը,
իր հավատի նավաբեկության
վտանգի մեջ էր: Նրանք
իրագործել էին Աստծո կամքը՝
հետևելով Նրա Յոգու և Նրա
խոսքի առաջնորդությանը,
սակայն չհասկացան Նրա
նպատակն իրենց անցյալ
փորձառության մեջ, ոչ էլ
տեսան ճանապարհն իրենց
առջև. և նրանք գայթակղվեցին
կասկածելու, թե արդյո՞ք

Աստված էր առաջնորդել
իրենց: «Արդարը հավատով
կապրի» խոսքն, ասես, հենց
այս ժամանակի համար էր: Երբ
«կեսգիշերային աղաղակի»
պայծառ լույսը շողում էր
Նրանց ճանապարհին, և Նրանք
տեսան մարգարեությունների
կնիքը բացված, երբ արագորեն
կատարվող նշանները վկայում
էին, որ Քրիստոսի գալուստը
մոտ է, Նրանք քայլում էին,
այսպես ասած, «նկատելի
լույսի մեջ»: Իսկ հիմա,
հուսախաբ ու գլխիկոր, Նրանք
կարող էին կանգնել միայն
հավատով առ Աստված և Նրա

խոսքի հանդեպ: Ծաղրող
աշխարհն ասում էր. «Դուք
խաբվել եք: Թողեք ձեր
հավատը և ասեք, որ
ադվենտիստական շարժումը
սատանայից է»: Բայց Աստծո
խոսքն ասում էր. «Եթե մեկը ետ
քաշվի, իմ հոգին նրան չի
հավանի»: Ուրանալ իրենց
հավատը և ժխտել Սուրբ Հոգու
զորությունը, որն ուղեկցել էր
պատգամին, հիմա կնշանակեր
ետ քաշվել դեպի կործանում:
Նրանց խրախուսել էին
անդրդվելի մնալ Պողոսի
խոսքերը. «Դեն մի՛ գցեք ձեր
վստահությունը»,

«համբերութեան է պետք ձեզ»,
«որովհետև, միայն մի քիչ
ժամանակ էլ, և նա, որ գալու է,
կգա և չի ուշանա»: Նրանց
միակ ապահով քայլն էր
փայփայել այն լույսը, որ արդեն
ստացել էին Աստծուց, ամուր
կառչել Նրա իսաստմներին,
շարունակել քննել Սուրբ Գիրքը
և համբերությամբ սպասելու
արթուն մնալ նոր լույս
ստանալու համար:

ԳԼՈՒԽ 23—Ի՞ՆՉ Է ՍՐԲԱՐԱՆԸ

Ավենտիստական հավատի
հիմքն ու կենտրոնական սյուղնը
եղել է աստվածաշնչյան այս
տեքստը. «Մինչև երկու հազար
երեք հարյուր
իրիկուն-առապոտ, հետո
սրբարանը պիտի արդարանա»
(Դանիել 8.14): Այս խոսքերը
ծանոթ էին բոլոր նրանց, ովքեր
հավատում էին Տիրոջ
շուտափուլյթ գալստյանը:
Չազարավոր շուրթեր
արտասանում էին այս
մարգարեությունը՝ որպես

իրենց հավատի նշանաբան:
Նրանք զգում էին, որ դրանում
կանխասված դեպքերն իրենց
ամենավառ սպասումների և
ամենանվիրական իղձերի
իրականացումն են:
Մարգարեական այդ օրերը,
ինչպես արդեն ասվեց,
լրանալու էին 1844 թ. աշնանը:
Քրիստոնեական ամբողջ
աշխարհի հետ միասին
ադվենտիստներն էլ համա-րում
էին, որ սրբարանը երկիրն է
կամ դրա մի մասը: Նրանք
եզրակացրել էին, թե սրբարանի
արդարացումը երկրի մաքրումն
է վերջին մեծ օրվա կրակով,

որը պիտի տեղի ունենա
երկրորդ գալստյան ժամանակ:
Այստեղից էր արվել այն
հետևությունը, թե Քրիստոսը
վերադառնալու է երկիր 1844
թվականին:

Սակայն նշանակված
ժամանակն անցել էր, իսկ Տերը
չէր հայտնվել:
Չավատացյալները գիտեին, որ
Աստծո խոսքը չի կարող
սխալվել, ուստի պետք է որ
մարգարեության իրենց
մեկնաբանությունը սխալ լինի:
Բայց որտե՞ղ էր թաքնված
սխալը: Շատերը շտապեցին

բարդութեան հանգույցը կտրել՝
ժխտելով, որ 2300 օրերը լրացել
են 1844-ին: Սրան որևէ
բացատրութիւն չէր կարող
տրվել, բացի նրանից, որ
Քրիստոսը չէր եկել այն
ժամանակ, երբ իրեն սպասում
էին: Նրանք պնդում էին, որ
եթէ մարգարեական օրերն
ավարտվեին 1844-ին, ապա
Քրիստոսը կվերադառնար [410]
և կմաքրեր սրբարանը,
այսինքն՝ երկիրը կմաքրեր
կրակով, իսկ եթէ Նա չի
հայտնվել, ուրեմն օրերը դեռ
չեն ավարտվել:

Ընդունել այս
եզրակացությունը՝ կնշանակել
հրաժարվել նախկին
մարգարեական
հաշվարկներից: Ինչպես վերը
նշվեց, 2300 օրերը սկսվել էին,
երբ ուժի մեջ էր մտել
Արտաշեսի հրամանը
Երուսաղեմի վերակառուցման
վերաբերյալ Բ. ա. 457
թվականի աշնանը: Այս
տարեթիվն ընդունելով որպես
հաշվարկի սկզբնակետ՝ Դանիել
9.25-27-ի այդ
ժամանակահատվածի
բացատրության մեջ
կանխասված բոլոր

իրադարձությունները
կատարելապես ներդաշնակ են:
Վաթսուհինը շաբաթները՝ 2300
տարիներից առաջին 483-ը,
պետք է հասնեին մինչև
Մեսիան՝ Օծյալը: Եվ Քրիստոսի
մկրտությունն ու օծությանը
Սուրբ Հոգուվ Ք.հ. 27 թվականին
այդ խոսքի ճշգրիտ
իրականացումն էր:
Յոթանասուն-երորդ շաբաթվա
կեսին Մեսիան պետք է
մահվան դատապարտվեր: Իր
մկրտությունից երեքուկես
տարի հետո Քրիստոսը
խաչվեց՝ Ք. հ. 31-ի գարնանը:
Յոթանասուն յոթնյակը կամ

490 տարիները հատկապես
վե-րաբերում էին հրեաներին:
Այս ժամանակահատվածի
վերջում ազգը
վերջնականապես մերժեց
Քրիստոսին ու կնքեց իր
մերժումը՝ հալածելով Նրա
աշակերտներին, և ք. հ. 34 թ.
առաքյալները դարձան
հեթանոսներին: 2300
տարիներից առաջին 490-ը
լրացան, և մնաց 1810 տարի: ք.
և. 34 թվից հաշված՝ 1810
տարիներն ավարտվում են
1844-ին: «Չետո,— ասաց
հրեշտակը,՝ սրբարանը պիտի
արդարանա»: Մարգարեուլթյան

բոլոր մանրամասներն
անհերքելիորեն կատարվեցին
ճիշտ նշված ժամանակին:

Այս հաշվարկում ամեն ինչ
պարզ էր ու ներդաշնակ, բացի
Նրանից, որ 1844 թ. սրբարանի
մաքրմանը
համապատասխանող որևէ
իրա-դարձություն տեւի
չունեցավ: Ժխտել այն, որ
մարգարեական օրերը լրացել
էին այդ ժամանակ, կնշանակեր
խստնաշվտթություն մեջ գցել
բոլորին և հրաժարվել այն
համոզմունքից, որը
հաստատվել էր

մարգա-րեության անսխալ
կատարմամբ:

Բայց Աստված էր առաջնորդել
Իր ժողովրդին
ադվենտիստական մեծ
շարժման մեջ: Նրա
գորությունն ու փառքն էին
ուղեկցել այդ գործին, և Նա
թույլ չէր սոս, որ այն
ավարտվեր խավարով ու
հիասթափությունամբ և
Նախատվեր որպես կեղծ ու
մոլեռանդ մի իրարանցում: Նա
թույլ չէր տա, որ Իր խոսքը
թաղվի կասկածանքի ու
անորոշության մեջ: [411] Թեև

շատերը հրաժարվեցին
մարգարեական ժամկետների
իրենց նախկին հաշվարկից և
ժխտեցին դրա վրա հիմնված
շարժման ճշտությունը,
մյուս-ները չէին կամենում
ուրանալ հավատի այն կետերն
ու փորձառությունը, որ
հաստատվել էին Սուրբ Գրքով և
Աստծո Չոգու վկայությամբ:
Նրանք համոզված էին, որ
մարգարեությունները քննեփս
որդեգրել են մեկնա-բանության
ողջամիտ սկզբունքներ, և որ
իրենց պարտքն է՝ ամուր
կառչել արդեն բացահայտված
ճմարտություններին և

շարունակել Գրքի
հետազոտությունը նույն
սկզբունքներով: Կրակոտ
աղոթքներով նրանք
վերանայում էին իրենց
համոզմունքը և
ուսումնասիրում Սուրը Գիրքն՝
իրենց սխալը գտնելու համար:
Մարգարեական ժամանակների
հաշ-վարկման մեջ սխալ
չգտնելով՝ նրանք սկսեցին
ավելի սերտորեն քննել
սրբարանի հարցը:

Սերտողության ժամանակ
նրանք պարզեցին, որ
սուրբգրային որևէ վկայություն

չկա այն հանրահայտ կարծիքի
օգտին, որ երկիրն է
սրբա-րանը: Դրա փոխարեն
նրանք գտան սրբարանի հարցի
լիարժեք բա-ցատրությունը՝
դրա բնույթը, տեղը և
ծառայությունները: Սրբազան
հե-ղինակների վկայությունն
այնքան հստակ ու փարժեք էր,
որ կասկածի տեղ չէր մնում:
Պողոս առաքյալը
եբրայեցիներին ուղղված
թղթում ասում է. «Առաջին
ուխտն էլ ուներ պաշտամունքի
իրավունքը՝ աշխարհական
սրբարանը: Որովհետև առաջին
խորանն այսպես

պատրաստվեց, նրա-նում էր
աշտանակը, սեղանը և հացերի
նվերը, սա կոչվում էր
Սրբություն: Իսկ երկրորդ
վարագույրի ետևում մի խորան
կար, որ Սրբություն
Սրբությանց էր կոչվում, որ
ուներ ոսկե բուրվառը, և ուխտի
տապանակը՝ ամեն կողմից
ոսկով պատած, որ նրանում էր
ոսկե սափորը՝ մանանայով,
Ահարոնի գավազանը, որ
ծաղկեց, ուխտի տախտակները
և նրանցից վեր՝ փաաքի
քերովքեները, որ հովանի էին
անում քավության վրա»
(Եբրայեցիս 9.1-5):

Սրբարանը, որն այստեղ
հիշատակում է Պողոսը, այն
խորանն էր, որ Մովսեսը շինեց
Աստծո պատվերով՝ որպես
Բարձրյալի երկրային
բնակարան: Երբ Մովսեսն
Աստծո մոտ էր՝ լեռան վրա, նա
պատվեր ստա-ցավ. «Ինձ
համար մի սրբարան շինեն, որ
իրենց մեջ բնակվեմ» (Ելից
25.8): Իսրայելացիները
շարժվում էին անապատով, և
[412] խորանը պատրաստվեց
այն նպես, որ հնարավոր լիներ
այն մի տեղից մյուսը
տեղա-փոխել: Եվ

այդուհանդերձ, դա վեհասքանչ
շինություն էր: Նրա պատերը
կազմված էին ոսկու հաստ
շերտերով պատած
տախտակներից՝ արծաթե
խարիսխներով, իսկ տանիքը մի
քանի վարագույրներից կամ
ծածկոց-ներից էր շինված,
արտաքին ծածկույթները՝
կաշվից, իսկ ներքինները՝
քաթանից, որոնց վրա
քերովբեների գեղեցիկ
պատկերներ էին հյուսված:
Արտաքին Դավիթից բացի,
որում գտնվում էր ողջակեղի
զոհասեղանը, խորանը
կազմված էր Սուրբ և

Ամենասուրբ կոչվող Երկու
սրահներից, որոնք միմյանցից
բաժանված էին ճոխ ու գեղեցիկ
վարագույրով կամ քողով, և
նման մի վարագույր էլ ծածկում
էր առաջին սրահի մուտքը:

Սուրբ սրահի հարավային
կողմում գտնվում էր
աշտանակը՝ յոթ
ճրագակալներով, որոնք ցերեկ
և գիշեր լուսավորում էին
սրբարանը: Հյուսիսային
կողմում առաջավորության
հացի սեղանն էր, իսկ Սուրբը
Ամենասուրբից բաժանող
վարագույրի առջև՝ խուկնկի

ոսկի սեղանը, որից անուշահոտ
ծուխը, Իսրայելի աղոթքների
հետ միասին, ամեն օր
բարձրանում էր Աստծո առաջ:

Ամենասուրբ սրահում
կանգնած էր տապանակը՝
թանկարժեք փայտից
պատրաստված ոսկեզօծ մի
արկղ՝ երկու քարե սափկների
պահոցը, որոնց վրա Աստված
փորագրել էր Տասր
պատվիրանները: Սրբազան
արկղի վրա կափարիչի տեղ էր
ծառայում քավությունը կամ
տրտմության աթոռը՝ արվեստի
մի հոյակերտ նմուշ, որի վրա

Երկու կողմերում երկու ոսկե
քերովբեներ էին ձուլված, և այս
ամենը պատրաստված էր ոսկու
մի ամբողջական կտորից:
Այստեղ քերովբեների միջև
փառքի ամպի տեսքով
դրսևորվում էր Աստծո
Ներկայությանը:

Երբ հրեաները բնակություն
հաստատեցին Քանանում,
խորանը փոխարինվեց
Սողոմոնի տաճարով, որը թեև
անշարժ և ավելի մեծ կա-ռույց
էր, բայց միևնույն
համեմատական չափերն ուներ
և կահավորված էր նման ձևով:

Սրբարանն այս տեսքով
գոյատևեց մինչև իր ավերումը
հռոմեացիների կողմից Ք.հ. 70
թվականին՝ բացառությամբ
այն ժամա-նակի, երբ
քարուքանդ վիճակում էր
Դանիելի օրերում:

Սա միակ սրբարանն է, որը
երբևէ գոյություն է ունեցել
երկրում, որի մասին Սուրբ
Գիրքն ինչ-որ տեղեկություն է
հայտնում: Ըստ [413] Պողոսի՝
սա առաջին ուխտի սրբարանն
էր: Բայց մի՞թե նոր ուխտը
սրբարան չունի:

Կրկին դառնալով
երբայեցիներին ուղղված
թղթին՝ ճշմարտություն
որոնողները գտան, որ երկրորդ
կամ նոր ախտի սրբարանի
գոյության մասին է ակնարկում
Պարան իր վերոհիշյալ
խոսքերում. «Առաջին ուխտն էլ
պաշտամունքի իրավունք ուներ
և երկրային սրբարան»։ «Ել»
կամ «նույնպես» բառի
օգտագործումը ցույց է տալիս,
որ Պալոսը մինչ այդ
հիշատակել է այդ սրբարանը։
Վերադառնալով նախորդ գլխի
սկզբին՝ նրանք կարդացին. «Եվ
ասածներիս

բովանդակությունը սա է. մենք
այնպիսի քահանայապետ
անենք, որ Մեծափառության
աթոռի աջ կողմը նստեց
երկնքում՝ պաշտոնյա
սրբություններին և ճշմարիտ
խորանին, որը որ Տերը
կանգնեցրեց և ոչ թե մարդ»
(Եբրայեցիս 8.1,2):

Այստեղ բացահայտված է նոր
ախտի սրբարանը: Առաջին
ուխտի սրբարանը կանգնեցվել
էր մարդու՝ Մովսեսի կողմից,
իսկ այս մեկը Տերն է
կանգնեցրել ոչ թե մարդը: Այն
սրբարանում երկրային

քահանաներն էին ծառայում,
իսկ այստեղ Քրիստոսը՝ մեր մեծ
Քահանայապետն է ծառայում
Աստծո աջ կողմում: Առաջին
սրբարանը երկրի վրա էր, իսկ
մյուսը երկնքում է:

Մովսեսը խորանը շինել էր ըստ
իրեն ցույց տրված օրինակի:
Տերը պատվիրել էր նրան.
«Բոլորը, ինչպես որ քեզ ցույց
տվի խորանի օրինակը և նրա
բոլոր կարասիքի օրինակը,
այնպես պիտի շինեք»: Յետո
կրկին պատվեր ստացավ. «Եվ
նայիր, որ սարում քեզ ցույց
տված օրինակի պես շինես»

(Ելից 25.9,40): Եվ Պողոսն Էլ
ասում է, որ առաջին խորանը
«օրինակ էր այն առաջիկա
ժամանակի համար, որ
նրանում ընծաներ և գոհեր էին
մատուցվում», որ նրա սուրբ
սրահները «երկնքում եղած
բաների օրինակներն» էին, որ
օրենքի համաձայն նվերներ
մատուցող քահանաները
«երկնավոր բաների օրինակով
և շուքով էին ծառայում», և որ
«ոչ թե ձեռագործ սրբատեղերը
մտավ Քրիստոսը, որ ճշմարտի
օրինակներն էին, այլ բուն իսկ
երկնքի մեջ, որ հիմա Աստծո
երեսի առաջին երևա մեզ

համար» (Եբրայեցիս 9.9,23,
8.5,9.24): [414]

Երկնային սրբարանը, որտեղ
Յիսուսը ծառայում է մեզ
համար, մեծ բնօրինակն է, որի
պատճենը կառուցել էր
Մովսեսը: Աստծո Յոզիս էր
Երկրային սրբարանը
կառուցողների վրա, և նրանց
գեղարվեստական հմտությունը
դրա շինության մեջ
աստվածային իմաստության
դրսևորում էր: Պատերը, որոնք
ամեն կողմի վրա արտացոլում
էին ոսկե աշտանակի յոթ
ճրագակալների լույսը, ասես

ամբողջովին ոսկուց լինեին:
Առաջավորութեան հացի
սեղանն ու խոլնկի սեղանը
պսպղում էին ողորկ ոսկու
նման: Առաստաղը կազմող ճոխ
վարագույրը, որի վրա հյուսված
էին հրեշտակների երկնագույն,
ծիրանագույն և ալ կարմիր
պատկերներ, էլ ավելի էր
գեղեցկացնում տեսարանը: Իսկ
երկրորդ վարագույրի ետեում
ճեկինան էր՝ Աստծո փստքի
տեսանելի դրսևորումը, որի
առջև ոչ ոք, բացի
քահանայապետից, չէր կարող
երևալ և մնալ կենդանի:

Երկրային խորածի
անզուգական շքեղությունն
արտացոլում էր երկնային այն
տաճարի փլտոքը, ուր
Քրիստոսը՝ մեր
Նախակարապետը, մեզ համար
ծառայում է Աստծո գահի առջև:
Արքաների Արքայի
բնակա-վայրը, որտեղ հազար
հազարներ ծառայում են Նրան,
և բյուր բյուրեր կանգնած են
Նրա առջև (Դանիել 7.10),
տաճարը՝ լցված հավերժական
գահի փառքով, որի
պահապանները՝ շողշողուն
սերովբեները, ակնա-ծանքով
ծածկում են իրենց դեմքերը,

մարդկային ձեռքերով երբևէ
կանգ-նեցված
ամենավեհապանձ շինության
մեջ կարող էր գտնել ընդամենն
իր վսեմության ու փառքի թույլ
արտացոլումը: Բայցևայնպես,
երկրային սրբարանի և Նրա
ծառայությունների միջոցով
կարևոր ճշմարտություններ էին
ոսոսցանվում երկնային
սրբարանի և մարդու
փրկության համար այնտեղ
տարվող մեծ գործի
վերաբերյալ:

Երկնային սրբարանի
սրբատեղերը խորհրդանշված

են երկրային խորանի երկու
սրահներով: Երբ Յովհաննես
առաքյալին տեսիլքում ցույց
տրվեց Աստծո տաճարը
երկնքում, նա այնտեղ տեսավ
«կրակով բորբոքված յոթ
ղամբարներ՝ աթոռի առաջին»
(Չայտնություն 4.5): Նա տեսավ
նաև մի հրեշտակ, ով «ոսկի
խնկանոց ուներ, և շատ խուճկ
տրվեց նրան, որ բոլոր
սուրբերի աղոթքների հետ
մատուցի այն ոսկի սեղանի
վրա, որ աթոռի առաջին էր»
(Չայտնություն 8.3): Այստեղ
մարգարեին թույլ տրվեց
տեսնել երկնային սրբարանի

առաջին բաժինը, [415] ուր
կային «կրակի յոթ ջահեր» և
«ոսկե սեղան», որոնք երկրային
սրբարանում ներկայացված
էին ոսկե աշտանակով ու
խնկարկման սեղանով: Հետո
«բացվեց Աստծո տաճարը»
(Հայտնություն 11.19), և նա
ներքին վարագույրից ներս
տեսավ Սուրբ Սրբոցը: Այստեղ
նա տեսավ «Նրա վկայության
տապանակը», որի
նախապատկերն էր Մովսեսի
շինած սրբազան արկղը, ուր
դրված էր Աստծո օրենքը:

Այսպիսով, այս հարցն
ուսումնասիրողները անհերքելի
ապացույց գտան երկնային
սրբարանի գոյության մասին:
Մովսեսը երկրային սրբարանը
շինեց իրեն ցույց տրված
օրինակի համեմատ: Ըստ
Պողոսի՝ այդ օրինակն
իսկական սրբարանն է, որ
երկնքում է: Եվ Ջովհաննեսն էլ
վկայում է, որ այն տեսել է
երկնքում:

Երկնային տաճարում՝ Աստծո
բնակության տեղում,
արդարությամբ և իրավունքով
հաստատված է Նրա գահը:

Սուրբ Սրբոցում Նրա օրենքն է՝
ճշմարտության մեծ չափանիշը,
որով դատվելու է ողջ
մարդկությունը: Օրենքի
տախտակները պարունակող
տապանակը ծածկում է
քավու-թյունը կամ
ողորմության աթոռը, որի առջև
Քրիստոսը ներկայացնում է իր
արյունը՝ հօգուտ մեղավորի:
Այսպես պատկերված է
արդարության և ողորմության
միությունը մարդու փրկության
ծրագրում: Այս միությունը
միայն անսահման
իմաստությունը կարող էր
ծրագրել և միայն անսահ-ման

գորությունն՝ իրականացնել,
միություն, որը զարմանքով ու
հիաց-մունքով լցրեց ողջ
երկինքը: Երկրային սրբարանի
քերովբեները, որոնք
ականածանքով նայում էին
ողորմության աթոռին,
խորհրդանշում են այն
հետաքրքրությունը, որով
երկնային զորքը հետևում է
փրկության գործին: Սա է
ողորմության խորհուրդը, որի
մեջ ցանկանում են թափանցել
հրեշտակները, որ
արդարացնելով ապաշխարող
մեղավորին և վերա-կանգնելով
իր հարաբերությունները

անկյալ ցեղի հետ՝ Աստված
կարող է արդար լինել, որ
Քրիստոսը նվաստացավ՝
կործանման անդունդից դուրս
բերելու անթիվ
բազմությունների, և նրանց
հազցնելով իր արդարության
անբիծ հանդերձները՝
միացնելու հրեշտակների հետ,
ովքեր երբեք չեն մեղանջել, և
հավիտյան բնակեցնելու Աստծո
Ներկայությամբ:

Քրիստոսի գործը՝ որպես
մարդու բարեխոսի՝
պատկերված է Չաքարիայի
գեղեցիկ մարգարեության մեջ

Նրա վերաբերյալ, ում անունն է՝ «Շառավիղ»: Մարգարեն ասում է. «Նա [416] կշի՛նի Տիրոջ տաճարը, և նա մեծափառություն է կրելու և պիտի բազմի ու իշիփի իր աթոռի վրա, և նա քահանա է լինելու իր աթոռի վրա, և խաղաղության խորհուրդ պիտի լինի երկուսի մեջտեղը» (Չաքարիա 6.12,13):

«Նա կշի՛նի Տիրոջ տաճարը»: Իր զոհաբերությամբ ու միջնորդությամբ Քրիստոսն Աստծո եկեղեցու և՛ հիմքն է, և՛ շինարարը: Պողոս առաքյալը

Նրան ներկայացնում է որպես
«անկյունաքար, որ նրանում
բոլոր շինվածքը միասին
հարմարված աճում է, որ լինի
սուրբ տաճար Տերով, որ
նրանում դուք ել,— ասում է
Նա,— նրա հետ շինվում եք
Աստծո բնակարան Յոգով»
(Եփեսացիս 2.20-22):

«Նա մեծափառություն է
կրելու»: Քրիստոսին է
պատկանում անկյալ ցեղի
փրկության փստքը:
Հավերժական դարերի
ընթացքում փրկվածները
երգելու են. «Նրան, ով մեզ

սիրեց և մեր մեղքերից լվաց
մեզ իր արյունով... նրան փառք
և զորություն հավիտյանս
հավիտենից» (Յայտնություն
1.5,6):

«Եվ պիտի բազմի ու իշխի իր
աթոռի վրա, և նա քահանա է
լինելու իր աթոռի վրա»: Խոսքը
«փառքի աթոռի» մասին չէ դեռ,
քանզի փառքի արքայությունը
դեռ չի հաստատվել: Միայն
Նրա միջնորդական
ծառա-յության ավարտից հետո
Աստված «կտա նրան իր
Դավիթ հոր աթոռը»,
թագավորություն, որին «վերջ

չի լինի» (Ղուկաս 1.32,33):
Քրիստոսն այժմ նստած է Յոր
հետ Նրա աթոռին՝ որպես
քահանա (Յայտնություն 3.21):
Յավիտենական Ինքնագոյի
հետ գահին բազմած է Նա, ով
«մեր ցավերը վեր առավ և մեր
վշտերը բեռնեց իր վրա», ով
«մեզ նման վարձված է ամեն
ինչով, բայց՝ առանց մեղքի», որ
կարողանա «օգնել
փորձվողներին»: «Եթե մեկը
մեղանչի, բարեխոս ունենք Յոր
մոտ» (Եսայիա 53.4, Եբրայեցիս
4.15, 2.18, Ա Յովհաննես 2.1):
Նրա բարեխոսությունը
խոցված ու կոտորված մարմնի,

անբիծ կյանքի
բարեխոսությունն է:
Վիրավորված ձեռքերը, խոցված
կողը, խոշտանգված ոտքերն
աղերսում են ընկած մարդու
համար, ում փրկությունը ձեռք է
բերվել այդպիսի անսահման
գնով:

«Եվ խաղաղության խորհուրդ
պիտի լինի երկուսի միջև»: Յոր
սերը ոչ պակաս, քան Որդունը,
փրկության աղբյուր է
կորուսյալ ցեղի համար:
Չամբարձվելուց առաջ Յիսուսն
ասաց իր [417] աշակերտներին.
«Չեմ ասում ձեզ, թե ես ձեզ

համար կաղաչեմ Յորը, նրա
համար, որ Յայրն ինքը սիրում է
ձեզ» (Յովհաննես 16.26, 27):

Աստված էր «Քրիստոսում, որ
աշխարհը հաշտեցրեց իր հետ»

(Բ Կորնթացիս 5.19): Եվ վերին

սրբա-րանի ծառայության մեջ

էլ «խաղաղության խորհուրդ

պիտի լինի երկուսի միջև»:

«Աստված այնպես սիրեց

աշխարհը, որ իր միածին

Որդուն տվեց, որ ամեն նրան

հավատացողը չկորչի, այլ

հավիտենական կյանքն

ունենա» (Յովհաննես 3.16):

Այն հարցին, թե ի՞նչ է սրբարանը, հստակ պատասխան է տրված Սուրբ Գրքում: «Սրբարան» բառն Աստվածաշնչում նախ վերաբերում է Մովսեսի շինած խորանին՝ որպես երկնային բաների օրինակը, և ապա՝ երկնային «ճշմարիտ խորանին», որին մատնացույց էր անում երկրային սրբարանը: Քրիստոսի մահով խորհրդանշական ծառայությունն ավարտվեց: Երկնային «ճշմարիտ խորանը» նոր ախտի սրբարանն է: Եվ քանի որ Դանիելի 8.14-ի

մարգարեությունը կատարվել է այս ուխտի ժա-մանակ, ուստի սրբարանը, սրի մասին այնտեղ ասվում է, պետք է նոր ուխտի սրբարանը լինի: Երբ 1844-ին լրացան 2300 օրերը, երկրի վրա արդեն շատ դարեր սրբարան չկար: Այսպիսով, «մինչև երկու հազար երեք հարյուր իրիկուն-առավոտ, հետո սրբարանը պիտի արդարանա» մարգարեությունն ակնհայտորեն վերաբերում է երկնային սրբարանին:

Մնում է պատասխանել ամենակարևոր հարցին, ի՞նչ է

սրբարանի մաքրումը: Որ նման
ծառայություն կար երկրային
սրբարանի հետ կապ-ված,
նշված է Յին Կտակարանում:
Բայց կարո՞ղ է արդյոք
երկնքում ինչ-որ բան
մաքրվելու կարիք ունենալ:
Եբրայեցիս 9-րդ գլխում
հստակորեն ասվում է թե՛
երկրային, թե՛ երկնային
սրբարանների մաքրման
մասին: «Եվ համարյա թե ամեն
բան արյունով է սրբվում
օրենքի համեմատ, և առանց
արյուն թափելու թողություն չի
լինում: Արդ հարկավոր էր, որ
երկնքում եղած բաների

օրինակները այսպիսի բաներով
սրբվեն (կենդանիների
արյամբ), բայց բուն
երկնավորները՝ նրանցից
ավելի ազնիվ
պատարագներով» (Եբրայեցիս
9.22, 23), այսինքն՝ Քրիստոսի
թանկագին արյամբ:

Ինչպես խորհրդանշական,
այնպես էլ իրական
ծառայության մեջ մաքրումը
պետք է կատարվի արյունով,
առաջինում [418] կենդանիների
արյունով, երկրորդում՝
Քրիստոսի: Թե ինչու պետք է
մաքրումը կատարվի արյունով,

Պողոսն ասում է, որ ատանց
արյուն թափելու՝ թողության չի
լինում: Մեղքը պետք է ներվի
կամ ջնջվի: Բայց ի՞նչ կապ
ունի մեղքը սրբարանի հետ՝
լինի դա երկնքում, թե երկրի
վրա: Պատասխանը կարող ենք
գտնել խորհրդանշական
ծառայության մեջ, քանի որ
քահանաները երկրում
«երկնավոր բաների օրինակով
և շուքով» (Եբրայեցիս 8.5) էին
ծառայում:

Երկրային սրբարանի
ծառայությունը բաղկացած էր
երկու մասից, քահանաներն

ամեն օր ծառայում էին Սուրբ
բաժնում, իսկ տարին մեկ
անգամ քահանայապետը
քավության հատուկ
արարողություն էր կատարում
Ամենասուրբ տեղում՝
սրբարանը մաքրելու համար:
Օրըստօրե ապաշխարող
մեղավորն իր զոհը բերում էր
խորանի դռան մոտ և, ձեռքը
դնելով կենդանու գլխին,
խոստովանում էր իր մեղքերը՝
խորհրդանշորեն դրանք
փոխանցելով անմեղ զոհին:
Այնուհետև կենդանին
մորթվում էր: «Առանց արյուն
թափելու,— ասում է

առաքյալը,— մեղքի թողություն
չի լինում»։ «Մարմնի հոգին
արյան մեջ է» (Ղևտացոց 17.11)։
Աստճո խախտված օրենքը
պահանջում էր օրինազանցի
կյանքը։ Արյունը, որը
խորհրդանշում էր մեղավորի
կյանքը, ում հանցանքը կրում
էր զոհը, քահանան տանում էր
Սուրբ տեղը և սրսկում
վարագույրի առջև, որի
հետևում՝ տապանակի մեջ,
գտնվում էր օրենքը, որը
մեղավորը խախտել էր։ Այս
արարողությամբ մեղքը արյան
միջոցով խորհրդանշորեն
տեղափոխվում էր սրբարան։

Որոշ դեպքերում արյունը Սուրբ տեղը չէր տարվում, բայց այդ դեպքում քահանաները պիտի ուտեին միսը, ինչպես Մովսեսը պատվիրել էր Ահարոնի որդիներին՝ ասելով. «Եհովան այն ձեզ տվեց, որ ժողովրդի անօրենությունը վեր առնեք» (Ղևտացոց 10.17): Երկու ծեսերն էլ խորհրդանշում էին մեղքի փոխանցումը ապաշխարողից՝ սրբարան:

Այս ծառայությունն արվում էր ամեն օր՝ ողջ տարվա ընթացքում: Իսրայելի մեղքերն, այսպիսով, փոխանցվում էին

սրբարան, և դրանք այնտեղից
հեռացնելու համար հատուկ
գործ էր պահանջվում: Աստված
պատվիրել էր, որ սրբազան
սրահներից յուրաքանչյուրի
[419] համար քավություն արվի:
«Եվ սրբարանի համար
քավություն անի՝ Իսրայելի
որդիների
անմաքրություններից և նրանց
բոլոր մեղքերի հանցանքներից,
և այսպես անի ժողովի խորանի
համար, որ նրանց հետ է լինում
նրանց անմաքրությունների
մեջ»: Քավություն պիտի արվեր
նաև զոհասեղանի համար՝
մաքրելու այն «Իսրայելի

որդիների
անմաքրություններից»
(Ղևտացոց 16.16,19):

Տարին մեկ անգամ՝ քավության
մեծ օրը, քահանայապետը
մտնում էր Սուրբ Սրբոց՝
սրբարանը մաքրելու համար:
Այդ արարողությունը
եզրափակում էր ծառայության
տարեկան բոլորաշրջանը:
Քավության օրը այժեռից երկու
նոխազ էին բերում խորանի
դռան մոտ, և նրանց վրա վիճակ
էր գցվում՝ «մեկ վիճակը՝
Եհովայի համար և մյուս
վիճակը՝ ազատ արձակվող

Նոխազի համար» (Ղևտացոց
16.8): Նոխազը, որի վրա
ընկնում էր Եհովայի համար
գցված վիճակը, պիտի մորթվեր
որպես մեղ- քի պատարագ
ժողովրդի համար:

Քահանայապետը նրա արյունը
պիտի տաներ վարագույրից
ներս և սրսկեր այն քավության
կամ ողորմության աթոռի վրա
և նրա առջև: Արյունը պետք է
սրսկվեր նաև իալնկի սեղանի
վրա, որ վարագույրի առջև էր:

«Եվ Ահարոնն իր երկու ձեռքերը
ողջ նոխազի գլխին դնի և
խոստո-վանի նրա վրա

Իսրայելի որդիների բոլոր
անօրենությունները և նրանց
բոլոր հանցանքներն՝ իրենց
բոլոր մեղքերով, և նրանց դևի
նոխազի գլխին և մի
պատրաստ մարդու միջոցով
ուղարկի անապատ: Եվ
նոխազը նրանց բոլոր
անօրենություններն իր վրա մի
անբնակ երկիր տանի»
(Ղևտացոց 16.21, 22):
Արձակված նոխազն այլևս
երբեք չէր վերադառնում
Իսրայելի բանակը, իսկ նրան
անապատ տանող մարդը
ճամբարը մտնելուց առաջ ջրով

պիտի լվանար իր մարմինը և
հանդերձները:

Այս ողջ արարողությունը
Նպատակ ուներ
Իսրայելացիների սրտերում
տպավորել Աստծո սրբությունը
և մեղքի հանդեպ Նրա
Նողկանքը, ինչպես նաև ցույց
տալ Նրանց, որ չեն կարող
մեղքի հետ առնչվել՝ առանց
պղծվելու: Քավության այս
ծառայության ընթացքում
յուրաքանչյուրից պահանջվում
էր խոնարհեցնել իր անձը:
Ամեն գործ պետք է մի կողմ
դրվեր, և [420] Իսրայելի ողջ

համայնքն այդ օրը պիտի
անցկացնե՛ր՝
հանդիսավորապես
խոնարհվելով Աստծո առաջ
աղոթքով, ծոմով ու սրտի խորը
քննումով:

Խորհրդանշական
ծառայութեան միջոցով կարևոր
ճշմարտություններ էին
յուրացվում քավութեան
վերաբերյալ: Մեղավորի տեղ
ընդունվում էր փոխարինողը,
բայց մեղքը չէր վերանում զոհի
արյունով: Դա պարզապես
միջոց էր, որով մեղքը
փոխանցվում էր սրբարան:

Արյուն մատուցելով՝ մեղավորը
ճանաչում էր օրենքի
հեղինակությանը,
խոստովանում էր իր մեղքը, որ
խախտել է այն, և
արտահայտում ներման իր
ցանկությունը՝ հավատալով
Փրկչին, ով պիտի գար: Բայց
նա դեռ լիովին չէր ազատվում
օրենքի դատապարտությունից:
Քավության օրը
քահանայապետը, համայնքից
ընդունելով զոհը, այդ զոհի
արյունով մտնում էր
Ամենասուրբ տեղը և սրսկում է
այն ողորմության աթոռի վրա՝
ուղիղ օրենքի վերևում,

որպեսզի դրա պահանջները
բավարարվեն: Յետո որպես
միջնորդ՝ նա մեղքերը վերցնում
էր իր վրա և դուրս հանում
դրանք սրբարանից: Ձեռքերը
դնելով ազատ արձակվող
Նոխազի գլխին՝ նա
խոստովանում էր այդ բոլոր
մեղքերը նրա վրա՝ դրանք
իրենից խորհրդանշորեն
փոխանցելով Նոխազին:
Այնուհետև Նոխազը, իր վրա
կրելով դրանք, տանում էր
հեռու, և համարվում էր, որ
ժողովուրդն ընդմիջտ
բաժանվում է դրանցից:

Ահա այսպիսին էր «երկնավոր
բաների օրինակով և շուքով»
կա-տարվող ծառայությունը: Եվ
այն, ինչ խորհրդանշորեն
արվում էր երկ-րային
սրբարանի ծառայության մեջ,
իրականում կատարվում է
երկնային սրբարանում:
Համբարձվելուց հետո մեր
Փրկիչը՝ որպես մեր
քահանայապետ, սկսեց իր
ծառայությունը: Պարան ասում
է. «Ոչ թե ձե-ռագործ
սրբատեղերը մտավ Քրիստոսը,
որ ճշմարտի օրինակներն էին,
այլ բուն իսկ երկիքի մեջ, որ
հիմա Աստծո երեսի առաջին

երևա մեզ հա-մար» (Եբրայեցիս
9.24):

Տարվա ընթացքում քահանայի
ծառայությունը սրբարանի
առաջին սրահում`
«վարագուլյրից ներս», որը
որպես դուռ էր ծառայում`
բաժանելով Սուրբ սրահի
արտաքին Դավիթից,
խորհրդանշում է այն
ծառայությունը, որին
Քրիստոսն անցավ իր
համբարձվելուց հետո:
Քահանայի գործն էր` [421]
ամենօրյա ծառայության մեջ
Աստծուն ներկայացնել մեղքի

պատարագի արյունը, ինչպես
Նաև խոնկը, որի ծուխը վեր էր
բարձրանում Իսրայելի
աղոթքների հետ միասին:
Այդպես էլ Քրիստոսն է իր
արյունով մեղավորների համար
բարեխոսում Հոր առաջ և իր
ար-դարության թանկագին
անուշահոտության հետ
միասին Նրան ներկա-յացնում
Նաև զղջացող մեղավորների
աղոթքները: Այսպիսին էր
երկնային սրբարանի առաջին
բաժնում կատարվող
ծառայությունը:

Քրիստոսի աշակերտները
հավատով Նրա հետ մտան
այնտեղ, երբ Նա համբարձվեց
երկինք: Այստեղ էր
կենտրոնացած նրանց հույսը,
որը, Պողոսի խոսքերով,
«հաստատուն և անշարժ
խարսխի պես ունենք մեր անձի
համար, որ և մտնում է
վարագույրի ներսի կողմն էլ,
ուր որ մեզ համար Առաջնորդ
մտավ Յիսուսը՝ Սելքիսեդեկի
կարգի պես հա-վիտենական
Քահանայապետ եղած»: «Ոչ թե
նոխազների և զվարակների
արյունով, այլ բուն իր արյունով
մեկ անգամ մտավ այն

սրբատեղին և հավիտենական
փրկութիւնն ձեռք բերեց մեզ
համար» (Եբրայեցիս 6.19,
20,9.12, անգլ. թարգմ.):

Տասնութ դար շարունակ այս
ծառայութիւնն ընթանում էր
սրբարանի առաջին սրահում:
Քրիստոսի արյանը
բարեխոսում էր զղջացող
հավատացյալների համար,
որպեսզի Յայրը ների և ընդունի
նրանց, բայց նրանց մեղքերը
դեռ մնում էին երկնային
գրքերում: Ինչպես
խորհրդանշական
ծառայութեան մեջ քավութեան

արարողութիւնն արվում էր
տարվա վերջում, այնպես էլ
մարդկանց փրկութեան համար
Քրիստոսի ծառայութեան
ավարտից առաջ քավութեան
գործ պիտի արվի՝ մեղքը
սրբարանից հեռացնելու
համար: Այս ծառայութիւնն է,
որը սկսվեց 2300 օրերի
լրանալուց հետո: Այդ
ժամանակ, Դանիել մարգարեի
ասելով, մեր Քահանայապետը
մտավ Սուրբ Սրբոց՝
կատարելու իր հանդիսավոր
գործի վերջին փուլը՝ սրբարանի
մաքրումը:

Ինչպես անցյալում ժողովրդի
մեղքերը հավատով դրվում էին
մեղքի զոհի վրա և նրա արյան
միջոցով խորհրդանշորեն
վտխանցվում երկրային
սրբարան, այնպես էլ Նոր
Ուխտում զղջացողների
մեղքերը հավատով դրվում են
Քրիստոսի վրա և փաստորեն
փոխանցվում երկնային
սրբաբան: Եվ ինչպես երկրային
խորանն էր խորհրդանշորեն
մաքրվում մեղքերի
հեռացմամբ, որոնցով այն
պղծվել էր, այնպես էլ
երկնայինի մաքրումը պիտի
կատարվի այնտեղ

արձանագրված մեղքերի [422]
հե-ռացմամբ կամ ջնջմամբ:
Բայց մինչև դա կատարվի,
պետք է քննվեն երկնային
գրքերը, որպեսզի վճռվի, թե
ովքեր են ապաշխարությամբ և
հավատով առ Քրիստոս
լիազորված՝ օգտվելու Նրա
քավության արտո-նությունից:
Սրբարանի մաքրումը,
հետևաբար, ներառում է
ստուգարք կամ
դատաքննություն: Այս գործը
պետք է արվի նախքան
Քրիստոսի գալը՝ փրկելու իր
ժողովրդին, քանզի երբ Նա գա,
Նրա վարձը իր հետ է լինելու՝

ամեն մեկին հատուցելու իր
գործերի համեմատ
(Յայտնություն 22.12):

Այսպիսով, նրանք, ովքեր
հետևել են մարգարեական
խոսքի լույսին, տեսան, որ 2300
օրերի լրանալուց հետո՝
1844-ին, երկիր գալու
փոխարեն՝ Զրիստոսը մտել է
երկնային սրբաբանի
Ամենասուրբ տեղը՝ իր
գալստյանը նախորդող
քավության եզրափակիչ գործը
կատարելու հա-մար:

Պարզվեց նաև, որ մինչ մեղքի պատարագը մատնացույց էր անում Քրիստոսին՝ որպես զոհի, և քահանայապետն էլ ներկայացնում էր Քրիստոսին՝ որպես միջնորդի, արձակման նոխագը խորհրդանշում էր սատանային՝ մեղքի հեղինակին, ում վրա ի վերջո դրվելու են իրապես ապաշխարածների մեղքերը: Մեղքի զոհի արյան շնորհիվ մեղքերը հեռացնելով սրբարանից՝ քահանայապետը դրանք դնում էր արձակման նոխագի վրա: Երբ Քրիստոսն իր արյան շնորհիվ իր

ծառայութեան վերջում
երկնային սրբաբանից հեռացնի
իր ժողովրդի մեղքերը, Նա
դրանք դնելու է սատանայի
վրա, ով պետք է վերջնական
պատիժը կրի՝ որպես
դատավճռի իրականացում:
Արձակման նոխազը տարվում
էր անբնակ մի վայր և այլևս
երբեք չէր վերադառնում
Իսրայելի ճամբարը: Այդպես էլ
սատանան է առհավետ
վտարվելու Աստծո և Նրա
ժողովրդի ներկայութենից, և
բնաջնջվելու է մեղքի ու
մեղավորների վերջնական
ոչնչացման ժամանակ:

ԳԼՈՒԽ 24—ՍՈՒՐԲ ՍՐԲՈՑՈՒՄ

Սրբարանի հարցը այն
բանալին էր, որը բացահայտեց
1844 թվականի
հիասթափության գաղտնիքը:
Այն ի հայտ բերեց
ճշմարտության կատարյալ մի
համակարգ՝ կապակցված ու
ներդաշնակ՝ ցույց տալով, որ
Աստծո ձեռքն էր ղեկավարել
ադվենտիստական մեծ
շարժումը և ի լույս բերել Նրա
ժողովրդի դիրքորոշումն ու
ներկա պարտականությունը:
Ինչպես Ջիսուսի աշակերտներն

իրենց հոգեվարքի ու
հիասթափութեան սուկալի
գիշերից հետո «ուրախացան,
երբ տեսան Տիրոջը», այնպես էլ
հիմա էին ցնծում նրանք, ովքեր
հավատով սպասել էին Նրա
երկրորդ գալստյանը: Նրանք
կարծում էին, թե Նա
հայտնվելու է փառքով՝
վար-ձատրելու իր ծառաներին:
Երբ նրանց սպասումները
չիրականացան, նրանք
տեսադաշտից կորցրին
Չիսուսին՝ ասես կրկնելով
գերեզմանի մոտ լացող
Մարիամի հետ. «Իմ Տիրոջը
վերցրել են, և չգիտեմ՝ նրան

ուր են դրել»։ Հիմա Սուրբ
Սրբոցում Նրանք դարձյալ
տեսան Նրան՝ իրենց գթասիրտ
Քահանայապետին, ով շուտով
հայտնվելու էր որպես իրենց
արքան ու փրկիչը։ Սրբարանից
ճառագող լույսը լուսավորեց
անցյալը, ներկան և ապագան։
Նրանք գիտեին, որ Աստված է
առաջնորդել իրենց իր
անսխալական
Նախախնամությամբ։ Թեև
առաջին աշակերտների նման
իրենք էլ չէին հասկացել իրենց
իսկ հռչակած լուրը,
բայց նայես, բոլոր
առումներով այն ճիշտ էր եղել։

Յոչակելով այն՝ նրանք
կատարել էին Աստծո կամքը, և
նրանց աշխատանքը զուր չէր
եղել Տերում: Վերստին ծնվելով
«կենդանի հույսի համար»՝
նրանք ցնծացին «անպատմելի
և փառավոր խնդրությունով»:
[424]

Եվ Դանիելի 8.14-ի
մարգարեությունը՝ «Մինչև
երկու հազար երեք հարյուր
իրիկուն-առավոտ, հետո
սրբարանը պիտի արդարանա»,
և՛ առաջին հրեշտակի
պատգամը՝ «Վախեցե՛ք
Աստծուց և փառք տվե՛ք նրան,

որովհետև, նրա դատաստանի
ժամը եկավ», մատնանշում են
Քրիստոսի ծառայությունը
Ամենասուրբ տեղում,
դատաքննությունը, այլ ոչ թե
Քրիստոսի գալուստը՝ իր
ժողովրդին փրկելու և
ամբարիշտներին կործանելու
նպատակով: Սխալը ոչ թե
մարգարեական ժամանակի
հաշվարկի մեջ էր, այլ
իրադարձության, որը պիտի
տեղի ունենար 2300 օրե-րի
վերջում: Այդ սխալն էր
հավատացյալներին
հիասթափեցրել, սակայն այն
ամենը, ինչ կանխասված էր

մարգարեութեան մեջ, և ինչին
իրենք սպասում էին ըստ Սուրբ
Գրքի, իրականացել էր: Յենց
այն ժամանակ, երբ նրանք
ողբում էին իրենց հույսերի
խորտակումը, տեղի ունեցավ
այն իրադարձությունը, որի
մասին կանխասել էր
պատգամը, և որը պետք է
կատարվի մինչև Տիրոջ գալը՝
պարզևատրելու իր
ծառաներին:

Քրիստոսը ոչ թե երկիր եկավ,
ինչպես նրանք սպասում էին,
այլ, ինչպես կանխասված էր
նախապատկերում, մտավ

Աստճո երկնային տաճարի
Սուրբ Սրբոցը: Դանիել
մարգարեն նկարագրում է, որ
Նա այդ ժամանակ մոտենում է
Հինավուրցին. «Ես տեսնում էի
գիշերվա տեսիլք-ներում, և
ահա երկնքի ամպերով մեկը՝
մարդի Որդու նման, մինչև
Հինավուրցը եկավ, և նրա
առաջին մոտեցրին նրան»
(Դանիել 7.13):

Այս գալուստի մասին
կանխասել է նաև Մաղաքիա
մարգարեն. «Հանկարծակի է
գալու իր տաճարի մոտ այն
Տերը, որին դուք որոնում եք, և

ուխտի հրեշտակը, որին դուք
հավանում եք. ահա նա գալիս
է, ասում է Չորաց Տերը»

(Մաղաքիա 3.1): Տիրոջ գալն իր
տաճարը հանկարծակի և
անսպասելի էր Նրա ժողովրդի
համար: Նրանք այնտեղ չէին
սպասում Նրան, այլ կարծում
էին, թե նա գալու է երկիր՝
«կրակի բոցով վրեժ առնելու
Նրանցից, որ Աստծուն չեն
ճանաչում և չեն հնազանդվում
մեր Տեր Հիսուսի
ավետարանին» (Բ
Թեսաղոնիկեցիս 1.8):

Սակայն ժողովուրդը դեռ
պատրաստ չէր դիմավորելու իր
Տիրոջը: Նրանց հետ դեռ
Նախապատրաստական
աշխատանք [425] պիտի
տարվեր: Նրանց լույս պիտի
տրվեր՝ իրենց միտքն ուղղելու
դեպի Աստծո տաճարը
երկնքում, ու երբ նրանք
հավատով հետևեին իրենց
Քահանայապետի
ծառայությանը այնտեղ, նոր
պարտականություններ
կրացահայտվեին: Եկեղեցու և
Նախազգուշացման ու խրատի
մեկ այլ լուր պիտի տրվեր:

Մարգարեն ասում է. «Ո՞վ է նրա գալու օրը տանողը, և ո՞վ է նրա երևալու ժամանակին կանգնողը, որովհետև նա հալեցնողի կրակի պես է և թափիչների օճառի պես: Եվ նա նստելու է իբրև արծաթ հալեցնող և մաքրող, մաքրելու է Ղևիի որդկանց և գտելու է նրանց ոսկու և արծաթի պես, և նրանք արդարությամբ ընծա մատուցողներ կլինեն Տիրոջ համար» (Մաղաքիա 3.2, 3):
Նրանք, ովքեր ապրելու են երկրում այն ժամանակ, երբ Քրիստոսի բարեխոսությունը երկնային սրբարանում

ավարտվի, սուրբ Աստծո առաջ
պիտի կանգնեն առանց
միջնորդի: Նրանց
հանդերձները պետք է անբիծ
լինեն, նրանց
բնավորությունները՝ մեղքից
սրբված Նրա արյունով: Աստծո
շնորհի և իրենց անձնական
լուրջ ջանքերի միջոցով նրանք
պետք է հաղթող դառնան չարի
դեմ պայքարում: Մինչ
երկնքում դատաքննություն է
ընթանում, մինչ զղջացող
հավատա-ցյալների մեղքերը
հեռացվում են սրբաբանից,
Աստծո ժողովուրդի շար-քերում
սրբագործման, մեղքը թողնելու

հատուկ գործ պիտի կատարվի:
Այս գործն ավելի հստակորեն
ներկայացված է Հայտնություն
14-րդ գլխի պատգամների մեջ:

Երբ այդ գործն արդեն
ավարտված լինի, Քրիստոսի
հետևորդները պատրաստ
կլինեն Նրա գալստյանը: Այդ
ժամանակ «ընդունելի կլինի
Տիրոջը Հուդայի և Երուսաղեմի
ընծան, ինչպես վաղեմի օրերին
և նախկին տարիներին»
(Մաղաքիա 3.4): Հետո Տերն իր
գալստյան ժամանակ իր մոտ
կառնի եկեղեցին, որը
«փառավոր» կլինի և «չի

ունենա մի արատ կամ
խորշոմություն կամ ուրիշ
բաներ» (Եփեսացիս 5.27): Այդ
ժամանակ նա կլինի
«արշալույսի պես, գեղեցիկ՝
լուսնի նման, մաքուր՝
արեգակի պես, ահարկու՝
դրոշակի զորքերի պես» (Երգ
երգոց 6.10):

Բացի նրանից, որ Տերն իր
տաճար եկավ, Մաղաքիան
կանխատու է նաև Նրա
երկրորդ գալուստը՝
դատավճիռն իրականացնելու
համար. «Եվ ես կմոտենամ ձեզ
[426] դատաստանի համար, և

ես ժիր վկա կլինեմ
կախարդների ու շնացողների և
սուտ երդում անողների, նաև
վարձկանի վարձը պահողների,
որբևայրուն ու որբին
զրկողների և օտարականին
ճնշողների դեմ, որոնք ինձանից
չեն վախենում, ասում է Չորաց
Տերը» (Մաղաքիա 3.5): Հուդան
նկատի ունի նայն
իրադարձությունը, երբ ասում է.
«Ահա Տերը եկավ իր բյուրավոր
սրբերով, որ դատաստան անի
ամենքին և նրանց
ամբարիշտներին հանդիմանի
իրենց արած բոլոր ամբարիշտ
գործերի համար» (Հուդա

14,15): Այս գալուստը և Տիրոջ
գալուստը իր տաճար
միանգամայն տարբեր և
առանձին իրադարձություններ
են:

Քրիստոսի՝ մեր
Քահանայապետի մուտքը
Սուրբ Սրբոց՝ սրբարանը
մաքրելու համար՝
ներկայացված Դանիել 8.14-ում,
մարդու Որդու գալուստը
Ջինավուրցի մոտ, ինչի մասին
գրված է Դանիել 7.13-ում, և
Տիրոջ գալուստը իր տաճար,
որը կանխասել է Մադաքիա ն,
նույն իրադարձու-թյան

Նկարագրությունն են: Մա
պատկերված է նաև
հարսանյաց խնջույքին փեսայի
գալուստով, որը նկարագրել է
Քրիստոսը Մատթեոս 25-ի
տասը կույսերի մասին
ստակում:

1844 թ. ամռանն ու աշնանը
հռչակվեց «Ահա՛, փեսան
գալիս է» լուրը: Այդ ժամանակ
ձևավորվեցին իմաստուն և
հիմար կույսերով
ներկա-յացված երկու խմբերը:
Մի խումբն ուրախությամբ
սպասում էր Տիրոջ
հայտնվելուն և լրջորեն

պատրաստվում էր
դիմավորելու Նրան, մյուսը՝
վախից և պահի
ազդեցությունից դրդված՝
բավարարվեց ճշմարտության
տեսությամբ, բայց զուրկ էր
Աստծո շնորհից: Առակում, երբ
փեսան եկավ, «ովքեր
պատրաստ էին, նրա հետ
հարսանիքը մտան»: Այստեղ
ներկայացված փեսայի
գալուստը տեւի է ունենում
հարսանիքից առաջ:
Չհարսանիքը խորհրդանշում է
Քրիստոսի կողմից իր
թագավորության ընդունումը:
Սուրբ քաղաքը՝ Նոր

Երուսաղեմը, որ արքայության
մայրա-քաղաքն է և
խորհրդանիշը, անվանված է
«հարս, Գառի կինը»: Հրեշտակն
ասաց Հովհաննեսին. «Եկ, ցույց
տամ քեզ այն հարսը, որ Գառի
կինն է»: «Եվ առավ տարավ ինձ
Հոգով,— ասում է մարգարեն,—
և ինձ ցույց տվեց այն մեծ
քաղաքը՝ սուրբ Երուսաղեմը, որ
վայր էր գալիս Աստծուց
երկնքից» (Հայտնություն
21.9,10): [427] Պարզ է, ուրեմն,
որ հարսը ներկայացնում է
Սուրբ Քաղաքը, իսկ կայսերը,
որ դուրս էին եկել դիմավորելու
փեսային, խորհրդանշում են

Եկեղեցին: Հայտնության մեջ
ասվում է, որ Աստծո
ժողովուրդը հյուր է հարսանյաց
ընթրիքին (Հայտնություն 19.9),
իսկ եթե հյուր է, ապա չի կարող
միաժամանակ նաև հարսը,
լինել: Քրիստոսը, ինչպես նշել է
Դանիել մարգարեն, երկնքում
Հինավուրցից ստանալու է
«իշխանություն, պատիվ ու
թագավորություն»: Նա
ստանալու է Նոր Երուսաղեմը՝
իր արքայության
մայրաքաղաքը՝
«պատրաստված ինչպես մի
զարդարված հարս իր ամուսնու
համար» (Դանիել 7.14,

Հայտնություն 21.2):
Ստանալով թագավորությունը՝
Նա գալու է իր փառքով՝ որպես
թագավորների թագավոր և
տերերի Տեր՝ փրկելու իր
ժողովրդին, որն «Աբրահամի,
Իսահակի և Հակոբի հետ» Նրա
արքայության մեջ (Մատթեոս
8.11, Ղուկաս 22.30) պիտի նստի
Նրա սեղանի շուրջ՝
մասնակցելու Գառան
հարսանյաց ընթրիքին:

1844 թ. ամռանն ազդարարված
«Ահա՛, փեսան գալիս է» լուրը
հազարավոր մարդկանց դրդեց
սպասելու Տիրոջ շուտափուլի

գալուստին: Նշանակված
ժամին փեսան եկավ, բայց ոչ
թե երկիր, ինչպես ժողովուրդը
սպասում էր, այլ Հինավուրցի
մոտ՝ երկնքում, հարսանիքի՝ իր
թագավորութունը ստանալու:
«Ովքեր պատրաստ էին, նրա
հետ հար-սանիքը մտան, և
դռները փակվեցին»: Նրանք
անձամբ ներկա չէին փ— նելու
հարսանիքին, քանզի այն տեղի
է ունենում երկնքում այն
ժամանակ, երբ նրանք երկրի
վրա են: Քրիստոսի
հետևորդները պիտի սպասեն
«իրենց տիրոջը, երբ Նա
վերադառնա հարսանիքից»

(Ղուկաս 12.36): Բայց նրանք պիտի հասկանան Նրա գործը և հավատով հետևեն Նրան, երբ Նա մտնում է՝ կանգնելու Աստծո առաջ: Այս իմաստով է ասված, որ նրանք մտնում են հարսանիքը:

Առակում «հարսանիքը մտան» նրանք, ովքեր լապտերների հետ միասին յոպ ունեին իրենց անոթներում: Նրանք, ովքեր աստվածաշնչյան ճշմարտությունն իմանալու հետ մեկտեղ ունեին նաև Աստծո Հոգին ու շնորհը, և ովքեր իրենց դառն փորձության

գիշերվա ընթացքում
համբերությամբ սպասել էին՝
քննելով Սուրբ Գրքն ավելի
պարզ լույս ստանալու համար,
ընկալեցին ճշմարտությունը
երկնային սրբարանի ու Փրկչի
ծառայության մեջ տեղի
ունեցած փոփոխության
վերաբերյալ, և հավատով
հետևեցին Նրան, երբ Նա իր
Նոր ծառայությանն անցավ
վերին սրբարանում: Եվ բոլորը,
ովքեր Սուրբ Գրքի վկայությամբ
ընդունում են [428] Նույն
ճշմարտությունները՝ հավատով
հետևելով Քրիստոսին, երբ Նա
կանգնած է Աստծո առաջ՝

Կատարելու միջնորդական իր
վերջին ծառայությունը և դրա
վերջում ստանալու իր
թագավորությունը,
ներկայացված են որպես
հարսանիքը մտնողներ:

Մատթեոս 22-ի առակում
հարսանիքի նույն պատկերն է
ներկայացված, և պարզորոշ
ասված է, որ դատաքննությունը
տեղի է ունենում հարսանիքից
առաջ: Մինչև հարսանիքը`
թագավորը ներս է մտնում`
տեսնելու հյուրերին, թե արդյոք
բոլորն են հագած հարսանյաց
հանդերձր` բնավորության

անբիծ զգեստը՝ լվացված ու
ճերմակեցված Գառան
արյունով (Մատթեոս 22.11,
Յայտնություն 7.14): Ով որ
չունի այն, դուրս է գցվում, իսկ
բոլորը, ովքեր քննության
արդյունքում գտնվում են
հար-սանյաց հանդերձով,
ընդունվում են Աստծո կողմից և
համարվում ար-ժանի՝ Նրա
արքայությունը մտնելու և Նրա
հետ բազմելու Նրա գահին:
Բնավորության այս զննումը,
որով կվճռվի, թե ովքեր են
պատրաստ Աստծո
արքայությունը մտնելու,
դատաքննության գործընթացն

Է՛ վերին սրբարանում արվող
եզրափակիչ գործը:

Երբ դատաքննությունն
ավարտվի, երբ բոլոր դարերում
իրենց Քրիստոսի հետևորդներ
համարողների գործերը
քննվեն, և նրանց
ճակատագրերը վճռվեն, այդ
ժամանակ, և ոչ ավելի շուտ,
փորձության ժամկետը
կավարտվի, և ողորմության
դուռը կփակվի: Այսպիսով,
«ովքեր պատրաստ էին, նրա
հետ հարսանիքը մտան, և դուրս
փակվեց» կարճ
արտահայտությունը մեզ Փրկչի

վերջին ծառայության միջոց
տանում է դեպի այն
ժամանակը, երբ մարդու
փրկության մեծ գործը
կավարտվի:

Երկրային սրբարանի
ծառայության մեջ, որն, ինչպես
տեսանք, երկնային
ծառայության նախապատկերն
էր, երբ քահանայապետը
քավության օրը մտնում էր
Ամենասուրբ տեղը,
ծառայությունն առաջին
սրահում դադարում էր:
Աստված պատվիրել էր. «Ոչ մի
մարդ ժողովքի խորանում

պիտի չլինի քավություն անելու
համար սրբարանը մտած
ժամանակ՝ մինչև նրա դուրս
գալը» (Ղևտացոց 16.17):
Այդպես էլ, երբ Քրիստոսը
մտավ Սուրբ Սրբոց՝ քավության
վերջին գործը կատարելու, Նա
դադարեցրեց իր
ծառայությունը սրբարանի
առաջին սրահում: Բայց երբ
ծառայությունն առաջին
սրահում [429] ավարտվեց,
սկսվեց ծառայությունը
երկրորդ սրահում: Երբ
խորհրդանշական
ծառայության մեջ
քահանայապետը քավության

օրը դուրս էր գալիս Սուրբ
սրահից, նա մտնում էր Աստծո
առջև՝ ներկայացնելու մեղքի
զոհի արյունը բոլոր այն
խրայելացիների համար, ովքեր
իսկապես ապաշխարել էին:
Այդպես էլ Քրիստոսը՝ որպես
մեր միջնորդ. Իր ծառայության
միայն մի վտււն էր ավարտել,
երբ սկսեց դրա հաջորդ փուլը՝
շարունակելով Իր արյունը
ներկայացնել Հոր առջև՝
հանուն մեղավորների:

1844 թ. ադվենտիստները
չհասկացան այս հարցը:
Ժամանակն անցնելուց հետո,

երբ սպասվում էր Փրկչի
գալուստը, Նրանք դեռ
հավատում էին, որ Նա շուտով
գալիս է: Նրանք կարծում էին,
թե եկել է վերջին ճգնաժամը, և
որ Քրիստոսի միջնորդական
ծառայությանն Աստծո առջև
ավարտվել է: Նրանց
պատկերացմամբ՝
Աստվածաշունչը սովորեցնում
էր, թե մարդու փորձնական
ժամկետը լրանալու է երկնքի
ամպերով Տիրոջ գալուստից
կարճ ժամանակ առաջ: Սա
պարզ երեւում էր այն
տեքստերից, որոնք
մատնացույց էին անում այն

Ժամանակը, երբ մարդիկ պիտի
որոնեն, թակեն և ողբան
ողորմության դռան մոտ, բայց
այն չի բացվելու: Եվ նրանց
մոտ հարց ծագեց, իսկ գուցե
այն ժամանակը, երբ իրենք
սպասել էին Քրիստոսի
գալստյանը, հենց այն
ժամանակահատվածի սկիզբն
է, որն անմիջապես
Նախորդելու է Նրա
գալստյանը:

Նախազգուշացնելով վերահաս
դատաստանի մասին՝ նրանք
կարծեցին, թե իրենց գործն
աշխարհի համար ավարտված
է, և դադարեցին

անհանգստանալ մեղավորների
փրկութեան համար, իսկ
ամբարիշտների հանդուգն ու
հայհոյիչ ծաղրանքն, ասես, ես
մեկ ապացույց էր, որ Աստծո
Յոզիսն հեռացել է Նրա
տրտմութիւնը մերժողներից:
Այս ամենը հաստատում էր
Նրանց այն կարծիքը, որ
փորձնական ժամկետն
ավարտվել է, կամ, ինչպես այն
ժամանակ ընդունված էր ասել,
«ողորմութեան դուռը փակվել
է»:

Բայց սրբարանի հարցի
հետազոտութեամբ ավելի վառ

լույս շողաց: Յիմա նրանք
հասկացան, որ ճիշտ են եղել
ենթադրելով, թե 2300 օրերի
վերջը 1844 թ. կարևոր
ճգնաժամն էր նշանավորել:
Թեև ճիշտ էր, որ հուլիսի և
ոգոստոսի ամիսների դրույթը, որով
մարդիկ տասնութ
հարյուրամյակների
ընթացքում մոտեցել էին
Աստծուն, փակվել էր, մեկ այլ
դրույթ էր բացվել դեպի Սուրբ
Սրբոցը, որտեղից Քրիստոսի
բարեխոսության շնորհիվ
մեղքերի թողություն էր [430]
առաջարկվում մարդկանց: Նրա
ծառայության մի փուլն

ավարտվել էր՝ իր տեղը
գիտելով մյուսին: Դեռ
«բացված դուռ» կար դեպի
երկնային սրբարանը, ուր
Քրիստոսը ծառայում էր հանուն
մեղավորի:

Այժմ պարզվեց Յայտնություն
գրքում հենց այդ ժամանակվա
եկեղեցուն ուղղված Քրիստոսի
խոսքերի նշանակությունը.
«Սա է ասում Սուրբը՝
ճշմարիտը, Նա, ով Դավթի
բանալիներն ունի, որ բացում է,
և ոչ ոք չի փակում, և փակում է,
և ոչ ոք չի բացում: Գիտեմ քո
գործերը, ահա քո առջև, մի

բացված դուռ դրի, և ոչ ոք այն
չի կարող փակել»
(Չայտնություն 3.7, 8):

Ուլքեր հավատով հետևում են
Չիտնսին քավության մեծ
գործում, ստանում են իրենց
համար արվող Նրա
միջնորդության
օրհնությունները, մինչդեռ
Նրանք, ուլքեր մերժում են այդ
միջնորդական ծառայությունը
բացահայտող լույսը, դրանից
ոչինչ չեն շահի: Մերժելով
Քրիստոսի առաջին գալստյան
ժամանակ արված լույսը և
հրաժարվելով հավատալ Նրան՝

աշխարհի Փրկչին, հրեաները
չէին կարող ներում ստանալ
Նրա միջոցով: Երբ Հիսուսը
համբարձվեց և իր արյունով
մտավ երկնային սրբարան՝ իր
աշակերտների վրա հեղելու իր
միջնորդության
օրհ-նությունները, հրեաները
թողնվեցին անթափանցելի
խավարի մեջ՝ շարունակելու
իրենց անօգուտ
զոհաբերություններն ու
ծեսերը: Խորհրդանշանների ու
ստվերների ծառայությունն
ավարտվել էր: Դուռը, որով
մարդիկ մինչ այդ մոտեցել էին
Աստծուն, այլևս բաց չէր:

Յրեաները հրաժարվել էին
Նբան որոնել այն միակ
ճանապարհին, որով հնարավոր
էր Նրան գտնել, այսինքն՝
երկնային սրբարանի
ծառայութեան միջոցով: Այդ իսկ
պատճառով Նրանք կորցրին
իրենց կապն Աստծո հետ:
Նրանց համար դուռը փակվել
էր: Նրանք քրիստոսին
չընդունեցին որպէս իսկա-կան
զոհի և միակ միջնորդի Աստծո
առջև, ուստի և չէին կարող
օգտվել Նրա միջնորդութունից:

Անհավատ հրեաների վիճակը
լուսաբանում է իրենց

քրիստոնյա համարող այն
անհոգ ու անհավատ
մարդկանց դրությունը, ովքեր
դիտավորյալ անհաղորդ են
մտում մեր գթասիրտ
Քահանայապետի
ծառայությանը: Ծիսական
ծառայության ժամանակ, երբ
քահանայապետը մտնում էր
Ամենասուրբ տեղը, ամբողջ
Իսրայելից պահանջվում էր
հավաքվել սրբարանի շուրջը և
ամենահանդիսավոր կերպով
խոնարհեցնել իրենց հոգիներն
Աստծո առջև, որպեսզի մեղքերի
թողութուն ստանային և
չհեռացվեին իրենց ժողովքից:

Որքա՛ն ավելի կարևոր է, որ
քավութեան այս իրական օրը
մենք հասկանանք մեր
Քահանայապետի
ծառայութիւնը և իմանանք, թե
ինչ պարտականութիւններ են
պահանջվում մեզանից:

Մարդիկ չեն կարող առանց
պատժի մերժել
Նախագգուշացումը, որն
Աստված գթասրտորեն
ուղարկում է իրենց: Նոյի
օրերում երկնքից լուր
ուղարկվեց աշխարհին, և
մարդկանց վտկութիւնը
կախված էր Նրանից, թե

ինչպես կվերաբերվեն այդ
լուրին: Քանի որ նրանք
մերժեցին նախա-զգուշացումը,
Աստծո Յոզիան լքեց մեղավոր
ցեղին, և այն կործանվեց
հե-ղեղի ջրերի մեջ: Արրահամի
օրերում Աստծո
ողորմածությունն այլևս
չաղերսեց Սողոմի հանցավոր
րնակիչների համար, և բոլորը՝
բացի Ղով-տից, նրա կնոջից ու
երկու զուստրերից, կորստի
մատնվեցին երկնքից թափված
կրակով: Նույնը կրկնվեց նաև
Քրիստոսի օրերում: Աստծո
Որդին այդ սերնդի անհավատ
հրեաներին ասաց. «Ահա ձեր

տունն ավերված կթողնվի ձեզ»
(Մատթեոս 23.38): Դարերի
խորքից նայելով վերջին
օրերին՝ նույն Անսահման
Չորությունը հռչակում է նրանց
մասին, ովքեր «չընդունեցին
ճշմարտության սերը, որպեսզի
փրկվեն», «Դրա համար
Աստված մոլորության
ներգործություն կուղարկի
նրանց, որ հավատան
ստության, որպեսզի
դատապարտվեն ամենքը,
ովքեր չհավատացին
ճշմարտությանը, բայց
հավանեցին անօրենությունը»
(Բ Թեսաղոնիկեցիս 2.10-12):

Քանի որ նրանք մերժում են
Նրա խոսքի ուսմունքը,
Աստված նրանցից վերցնում է
Իր Յոգին և հանձնում նրանց
այն մոլորությունների
իշխանությանը, որ նրանք
սիրում են:

Մակայն Քրիստոսը դեռ
բարեխոսում է մարդու համար,
և բռնորն, ովքեր լույս են
որոնում, կստանան այն: Թեև
սկզբում ադվենտիստները
չհասկացան սա, հետագայում
այն պարզվեց, երբ Սուրբ Գիրքը
սկսեց բացահայտվել նրանց`

ցույց տալով իրենց իրական
դիրքորոշումը:

1844-ի սպասման ժամանակն
անցնելուց հետո նրանց
համար, ովքեր հավատարիմ
էին մնացել ադվենտիստական
հավատին, մեծ փորձության
ժամանակաշրջան սկսվեց:
Նրանց միակ սփոփանքը, ինչ
վերաբերում էր իրենց իսկական
դրությանը, այն [432] լույսն էր,
որը նրանց միտքն ուղղեց դեպի
վերին սրբարանը: Ոմանք
դադարեցին հավատալ
մարգարեական
ժամանակաշրջանների իրենց

Նախկին հաշվարկին, և Սուրբ
Յոզու հզոր ազդեցութիւնը,
որով ուղեկցվել էր
ադվենտիստական շարժումը,
վերագրեցին մարդկային կամ
դիվական ուժերին: Իսկ
մյուսները հաստատ համոզված
էին, որ Տերն էր առաջնորդել
իրենց անցած փորձառութեան
մեջ, և սպասելով,
արթնութեամբ ու աղոթելով՝
իմանալու Աստծո կամքը,
Նրանք հասկացան, որ իրենց
մեծ Քահանայապետն անցել է
իր ծառայութեան հաջորդ
փուլին, և հավատով հետևելով
Նրան՝ հասկացան նաև

Եկեղեցու վերջնական
առաքելությունը: Նրանք ավելի
հստակորեն էին ըմբռնել
առաջին և երկրորդ
հրեշտակների լուրերը և
պատրաստ էին ընդունելու և
աշխարհին հռչակելու
Չայտնություն 14 գլխի երրորդ
հրեշտակի հանդիսավոր
Նախնազգուշացումը:

ԳԼՈՒԽ 25—ԱՍՏՃՈ ԱՆՓՈՓՈՒՄ ՕՐԵՆՔԸ

«Եվ բացվեց Աստծո տաճարը, որ երկնքում էր, ու երևաց Աստծո տապանակը իր տաճարում» (ՅայտնուԹյուն 11.19): Աստծո ուխտի տա-պանակը գտնվում է Սուրբ Սրբոցում՝ սրբարանի երկրորդ սրահում: Երկ-րային խորանի ծառայության ժամանակ, որը կատարվում էր «երկնավոր բաների օրինակով և շուքով», այս սենյակը բացվում էր միայն քավության մեծ օրը՝ սրբարանը մաքրելու համար: Ուստի

ագդարարումն այն մասին, որ Աստծո տաճարը երկնքում բացվեց, ու երևաց Նրա ուխտի տապանակը, ցույց է տալիս երկնային սրբարանի Սուրբ Սրբոցի բացումը 1844-ին, երբ Քրիստոսը մտավ այնտեղ՝ կատարելու քավության եզրափակիչ գործը: Նրանք, ովքեր հավատով իրենց Քահանայապետի հետ մտան Սուրբ Սրբոց, երբ Նա այնտեղ սկսեց իր ծառայութիւնը, տեսան Նրա ուխտի տապանակը: Ուսումնասիրելով սրբարանի հարցը՝ նրանք հասկացան, որ Փրկչի

ծառայութիւնը փոխվել է, և
տեսան, որ Նա հիմա
քարեխոսում է Աստծո
տապանակի առջև՝ իր արյունը
ներկայացնելով մեղավորների
համար:

Տապանակը երկրային
խորանում պարունակում էր
քարե երկու տախտակները,
որոնց վրա փորագրված էին
Աստծո օրենքի
պատվիրանները: Տապանակն
ընդամենը օրենքի
տախտակները պահելու
համար էր, և աստվածային
պատվիրաններն էին միայն, որ

դրան արժեք ու սրբութիւնն էին
հաղորդում: Երբ Աստծո
տաճարը երկնքում բացվեց,
երևաց Նրա ուխտի
տապանակը: Երկնային
սրբաբանի Սուրբ Սրբոցում
սրբորեն պահվում է
աստվածային օրենքը, որն
Աստված Ինքը հռչակեց Սինա
լեռան վրա որոտմունքի միջից
և Իր մատով գրեց քարե սալերի
վրա:

Երկնային սրբարանում
պահվող Աստծո օրենքն այն
մեծ բնօրինակն է, որի անսխալ
պատճենը փորագրվեց քարե

սալերի վրա և Մովսեսի կողմից
գրի առնվեց Յնգամատյանում:
Նրանք, ովքեր ըմբռնեցին այս
կարևոր հարցը, այդպիսով
հասկացան աստվածային
օրենքի սրբա- զան և
անփոփոխ բնույթը: Ինչպես
երբեք՝ նրանք ընկալեցին
Փրկչի այս բառերի ուժը.
«Մինչև որ երկինքն ու երկիրը
անց կենան, օրենքից մի կետ
կամ մեկ պատիկ նշանագիր չի
անցնի, մինչև որ բոլորը
չկատարվի» (Մատթեոս 5.18):
Աստծո օրենքը, լինելով Նրա
կամքի հայտնությունը և Նրա
բնավորության արտացոլումը,

հավերժ մնալու է որպես
«հավատարիմ վկա երկնքում»:
Ոչ մի պատվիրան չի վերացել,
ոչ մի կետ կամ փոքր նշանագիր
չի փոխվել: Սաղմոսերգուն
ասում է. «Ով Տեր, քո խոսքը
հավիտյան հաստատ է
երկնքում»: «Նրա բոլոր
պատվիրանները հավատարիմ
են, հաստատված են
հավիտյանս հավիտենից»
(Սաղմոս 119.89, 111.7, 8):

Տասնաբանյայի հենց սրտում
չորըորդ պատվիրանն է,
ինչպես այն հռչակվեց առաջին
անգամ. «Չիշիր շաբաթ օրը, որ

սուրբ պահեստ աշխատիր և քո բոլոր գործն արա, բայց յոթերորդ օրը քո էհովա Աստծո հանգստության օրն է. ո՛չ մի գործ չգործես, ո՛չ դու, ո՛չ քո որդին, ո՛չ քո աղջիկը, ո՛չ քո ծառան ու աղախինը, ո՛չ քո անասունը, ո՛չ էլ քո դռան օտարականը: Որովհետև էհովան վեց օրվա մեջ ստեղծեց երկինքն ու երկիրը, ծովն ու բոլոր նրանց մեջ եղածները, իսկ յոթերորդ օրը՝ հանգստացավ, դրա համար էհովան օրհնեց հանգստության օրը և սրբեց այն» (Ելից 20.8-11):

Աստժո Յոգին տպավորեց դա
Նրա Խոսքն
ուսումնասիրողների սրտերում:
Նրանք համոզվեցին, որ
չիմանալով խախտել են այս
պատվիրանը՝ անտեսելով
Արարչի հանգստյան օրը:
Նրանք սկսեցին քննել Աստժո
սուրբ օրվա փոխարեն
շաբաթվա առաջին օրը տոնելու
պատճառները: Գրքում նրանք
ոչ մի վկայություն [435] չգտան,
որ չորրորդ պատվիրանը
հանվել է, կամ շաբաթը՝
փոխվել: Օրհնությունը, որ
սկզբում սրբացրել էր յոթերորդ

օրը, երբեք չէր հեռացվել:
Նրանք անկեղծորեն ձգտել էին
իմանալու կատարել Աստծո
կամքը, և հիմա տեսնելով, որ
խախտել են Նրա օրենքը,
Նրանք խորապես տրտմեցին, և
հավատարիմ մնալով Աստծուն՝
որոշեցին սուրբ պահել Նրա
շաբաթը:

Բազմաթիվ և լուրջ ջանքեր
թափվեցին նրանց հավատը
սասանելու համար: Բոլորի
համար ակնհայտ էր, որ եթե
երկրային սրբարանը եղել է
երկնայինի պատկերը կամ
օրինակը, ուրեմն երկրում

տապանակի մեջ պահվող
օրենքը երկնքում գտնվող
տապանակի օրենքի ճշգրիտ
պատ-ճենն է, և որ երկնային
սրբարանի վերաբերյալ
ճշմարտության ընդունումը
ներառում էր Աստծո օրենքի
պահանջները և չորըորդ
պատվիրանի շաբաթը պահելու
պարտավորությունը: Սա էր
Սուրբ Գրքի ներդաշնակ
մեկնաբանության հանդեպ
համառ ու վճռական
ընդդիմության գաղտ- նիքը,
որը բացահայտեց Քրիստոսի
ծառայությունը երկնային
սրբարանում: Մարդիկ ջանում

Էին փակել այն դուռը, որ
Աստված բացել էր, և բացել այն
մեկը, որ Աստված փակել էր:
Բայց «Նա, որ բացում է, և ոչ ոք
չի փակում, և փակում է, և ոչ ոք
չի բացում», հռչակել էր. «Ահա
քո առաջ մի բացված դուռ դի, որը
ոչ ոք չի կարող փակել»
(Յայտնութեան 3.7, 8):
Քրիստոսը բացել էր կամ սկսել
Իր ծառայութիւնը Սուրբ
Սրբոցում, և երկնային
սրբարանի այդ բաց դռնից լույս
էր շողում՝ ցույց տալով, որ
չորրորդ պատվիրանը
ներառված է այնտեղ պահվող
օրենքում: Այն, ինչ Աստված

հաստատել էր, մարդը չէր
կարող տապալել:

Նրանք, ովքեր ընդունել էին
լույսը Քրիստոսի
միջնորդության և Աստծո
օրենքի հավերժականության
վերաբերյալ, նկատեցին, որ
այդ ճշմարտությունները
ներկայացված են
Հայտնություն 14 գլխում: Այս
գլխում նախազգուշացման
եռակի լուր է պարունակվում,
որը երկրի բնա-կիչներին պետք
է պատրաստի Տիրոջ երկրորդ
գալստյանը: «Նրա
դա-տաստանի ժամը եկավ»

լուրր մատնանշում է Զրիստոսի
եզրափակիչ ծառայությունը
մարդկանց Փրկության համար:
Այն բարձրաձայնում է մի [436]
ճշմարտություն, որը պետք է
հռչակվի մինչև Փրկչի
բարե-խոսության ավարտը և
Նրա վերադարձը երկիր՝ իր մոտ
առնելու իր ժողովրդին:
Դատաքննությունը, որը սկսվել
է 1844-ին, շարունակվելու է
այնքան, մինչև որ բոլոր ողջերի
և մեռածների ճակատագրերը
վճռվեն, այսինքն՝ այն ձգվելու է
մինչև մարդկանց տրված
փորձաշրջանի վերջը: Որպեսզի
մարդիկ պատրաստվեն՝

Կանգնելու դատի ժամանակ,
լուրր նրանց պատվիրում է
«վախենալ Աստծուց և փառք
տալ Նրան», «և երկրպագել
երկինքը, երկիրը, ծովն ու ջրերի
աղբյուրները Ստեղծողին»: Այս
պատգամներն ընդունելու
արդյունքն արտահայտված է
հետևյալ խոսքում. «Այստեղ են
Աստծո պատվիրանները և
Յիսուսի հավատը
պահողները»: Դատաստանին
պատրաստ լինելու համար
անհրաժեշտ է պահել Աստծո
օրենքը: Այդ օրենքը դատի
ժամանակ բնավորության
չա-փանիշ է լինելու: Պողոս

առաքյալն ասում է. «Նրանք, որ օրենքի տակ մեղք գործեցին, օրենքով կդատվեն... այն օրը, որ Աստված մարդկանց ծածուկ քաները կդատի Յիսուս Քրիստոսի ձեռով»: Եվ նա ասում է, որ «օրենքը կատարողները կարդարանան» (Յոնմեացիս 2.12,16): Աստծո օրենքը պահելու համար հավատ է անհրաժեշտ, քանզի «առանց հավատի անկարելի է հաճո լինելՆրան»: Եվ «ամեն ինչ, որ հավատից չէ՝ մեղք է» (Եբրայեցիս 11.6, Յոնմեացիս 14.23):

Առաջին հրեշտակը կոչ է անում
«վախենալ Աստուծոց և փառք
տալ Նրան» և երկրպագել Նրան
որպես երկինքն ու երկիրը
Ստեղծողի: Այս անելու համար
Նրանք պետք է ենթարկվեն Նրա
օրենքին: Իմաստունն ա— սում
է. «Աստուծոց վախեցիր և Նրա
պատվիրանները պահիր,
որովհետե սա է ամեն բան
մարդու համար» (Ժողովող
12.13): Առանց
պատվիրան-ների
հնազանդվելու՝ ոչ մի
երկրպագութուն չի կարող
հաճո լինել Աստուծուն: «Սա է
Աստծո սերը, որ Նրա

պատվիրանները պահենք»:
«Ով որ մերժի իր ականջը
օրենքը լսելուց, նրա աղոթքն
անգամ գարշելի է» (Ա
Յովհաննես 5.3, Առակաց 28.9):

Աստծուն երկրպագելու
պարտականությունը հիմնված
է այն փաստի վրա, որ Նա
Արարիչ է, և որ բոլոր մյուս
էակներն իրենց գոյությունը
պարտական են Նրան: Եվ
որտեղ էլ որ Աստվածաշնչում
Նա պահանջում է պաշտելու
երկրպագել իրեն, այլ ոչ թե
հեթանոսական աստված—
ներին, [437] այնտեղ

հիշատակվում է նաև Նրա
արարչագործ գորության
մասին: «Ազգերի բոլոր
աստվածները կուռքեր են, բայց
Տերը ստեղծեց երկինքը»
(Սաղմոս 96.5): «Ուրեմն ո՞ւմ եք
ինձ նմանեցնում, որ ես նման
լինեմ, ասում է Սուրբը: Վեր
բարձրացրեք ձեր աչքերը և
նայեք, ո՞վ է ստեղծել սրանք»:
«Այսպես է ասում Եհովան՝
երկինքը ստեղծողը, նա է
Աստված, որ կազմեց երկիրը...
Ես եմ Եհովան, և ուրիշը չկա»
(Եսայիա 40.25, 26, 45.18):
Սաղմոսերգուն ասում է.
«ճանաչեցեք, որ Տերն է

Աստված, նա ստեղծեց մեզ, և ոչ թե մենք»: «Եկեք երկրպագություն անենք և երեսի վրա ընկնենք, ծունկ դնենք մեզ ստեղծող Տիրոջ առջև» (Սաղմոս 100.3, 95.6): Եվ սուրբ Էակներն էլ, որ Աստծուն երկրպագում են երկըն— քում, ասում են, թե ինչու են պաշտում Նրան. «Արժանի ես Տեր, որ առնես վատքն ու պատիվը և զորությունը, որ դու ստեղծեցիր ամեն բաները և քո կամենալով կան ու ստեղծվեցին» (Ջայտնություն 4.11):

Չայտնություն 14-ում
մարդկանց կոչ է արվում
երկրպագել Արարչին, և
մարգարեությունը պատկերում
է մարդկանց մի խումբ, ովքեր
եռակի պատգամն ընդունելու
արդյունքում պահում են Աստծո
պատվիրանները: Այս
պատվիրաններից մեկն
ուղղակիորեն մատնացույց է
անում Աստծուն որպես
Արարչի: Չորըորդ պատվիրանը
հայտնում է. «Յոթերորդ օրը քո
եհովա Աստծո հանգստության
օրն է... Որովհետև եհովան վեց
օրվա մեջ ստեղծեց երկինքն ու
երկիրը, ծովն ու բոլոր նրանց

մեջ եղածները, իսկ յոթերորդ
օրը՝ հանգստացավ, դրա
համար եհովան օրհնեց
հանգստության օրը և սրբեց
այն» (Ելից 20.10.Ո): Շաբաթի
վերաբերյալ Տե-րը հետո ասում
է, որ այն «նշան է... որ
իմանաք, թե ես եմ Տերը՝ ձեր
Աստվածը» (Եզեկիել 20.20): Եվ
նշվում է պատճառը.

«Որովհետև եհովան վեց օրվա
մեջ ստեղծեց երկինքն ու
երկիրը, իսկ յոթերորդ օրը
դադարեց և հանգստացավ»
(Ելից 31.17):

«Որպես արարչագործության
հուշարձան՝ շաբաթը կարևոր է
Նրա-նով, որ այն մշտապես
ներկայացնում է իրական
պատճառը, թե ինչու է պետք
երկրպագել Աստծուն»,
որովհետև Նա Ստեղծողն է, իսկ
մենք՝ Նրա արարածները:
«Չետևաբար՝ շաբաթն ընկած է
աստվածային երկրպագության
հենց հիմքում, քանզի այն
ամենատպալորիչ կերպով
սովորեցնում է այս մեծ
ճշմարտությունը, և ուրիշ ոչ մի
պատվիրան դա չի անում: Ոչ
միայն յոթերորդ օրվա, այլ նաև
աստվածային ամեն մի

երկրպագության իրական
հիմքը [438] Արարչի և Նրա
արարածների միջև եղած
տարբերության մեջ է: Այս մեծ
փաստը երբեք չի կարող
հնանալ և երբեք չպետք է
մոռացվի» (Ջ. Ն. Էնդրյունս,
Շաբաթի պատմությունը, գլ.
27): Այս ճշմարտությունը
մարդու մտքում մշտապես վառ
պահելու համար է, որ Աստված
հաստատեց շաբաթը եղեմով,
և քանի դեռ այն փաստը, որ Նա
մեր Ստեղծողն է, Նրան
երկրպագելու պատճառն է
հանդիսանում, շաբաթը
շարունակելու է մնալ որպես

դրա նշան և հու-շարձան: Եթե
ամենուրեք պահեին շաբաթը,
մարդկանց մտքերն ու սերը
ակնածանքով ու
երկրպագութեամբ կուղղվեին
դեպի Արարիչը, և երբեք չէր
լինի ոչ մի կռապաշտ, աթեիստ
կամ անհավատ: Շաբաթը
պահերը ճշմարիտ Աստծո
հանդեպ հավատարմութեան
նշան է, Նրա, ով «ստեղծեց
երկինքն ու երկիրը, ծովն ու
ջրերի աղբյուրները»:
Յետևաբար, այն լուրը, որը
մարդկանց պատվիրում է
երկրպագել Աստծուն և պահել
Նրա պատվիրանները,

հատկապես կոչ է անում պահել
չորրորդ պատվիրանը:

Ի հակադրութիւն նրանց,
ովքեր պահում են Աստծո
պատվիրանները և ունեն
Յիսուսի հավատը, երրորդ
հրեշտակը մարդկանց մի
այլխումբ է մատնանշում, որի
մոլորութիւնների դեմ
հանդիսավոր ու ահազդու
նախազգուշացում է տրված.
«Ով որ երկրպագութիւն է
անում գազանին և նրա
պատկերին և դրոշմ ընդունում
իր ճակատի կամ աջ ձեռքի վրա,
այնպիսին Աստծո

սրտմտության գինուց պիտի
խամի» (Յայտնություն 14.9,10):
Այս լուրը հասկանալու համար
անհրաժեշտ է դրանում
օգտա-գործված
խորհրդանիշների ստույգ
մեկնաբանություն: Ի՞նչ են
խորհրդանշում գազանը,
պատկերը և դրոշմը:

Մարգարեական այն շղթան,
որում գտնվում են այս
խորհրդանշան-ները, սկսվում է
Յայտնություն 12-րդ գլխից,
որտեղ վիշապը ջանում է
կործանել Քրիստոսին Նրա
ծննդյան ժամանակ: Գրված է,

որ վիշապը սատանան է
(Ջայտնություն 12.9): Յենց նա
էր, որ դրդեց Յերովդեսին
մահվան մատնել Փրկչին: Բայց
սատանայի գլխավոր գործիքը
Քրիստոսի ու Նրա ժողովրդի
դեմ քրիստոնեական
դարաշրջանի առաջին
հարյուրամյակների ընթացքում
Յռոմեական կայսրությունն էր,
որում գերիշխող կրոնը
հեթանոսությունն էր:
Այսպիսով, մինչ վիշապը նախ և
առաջ ներկայացնում է
սատանային, մյուս կողմից նա
հեթանոսական Յռոմի
խորհրդանիշն է: [439]

Չայտնություն 13-րդ գլխում
(1-10 տեքստեր) մեկ այլ գազան
է պատկերված ընծառյուծի
նման», որին վիշապը տվեց «իր
զորությունը, աթոռը և մեծ
իշխանություն»: Այս
խորհրդանիշը,
բողոքականների մեծ մասի
կարծիքով, ներկայացնում է
պապությունը, որը ժառանգեց
հին Չռոմեական կայսրության
զորությունը, աթոռն ու
իշխանությունը: Ընծ-առյուծի
նման գազանի մասին ասված
է. «Նրան տրվեց մի բերան՝
մեծ-մեծ բաներ և հայիոյանք

խորշող... Եվ նա իր բերանը
հայիոյանքով բացեց Աստծո
դէմ, որ հայիոյի նրա անունին,
և նրա խորանին, և երկնքում
բնակվողներին: Եվ Արան
իշխանություն տրվեց, որ
սուրբերի հետ պատերազմի և
նրանց հաղթի, և իշխանություն
տրվեց նրան ամեն ցեղի և
լեզվի և ազգի վրա»: Այս
մարգարեությունը, որը շատ
նման է փոքր եղջյուրի
նկարագրությանը Դանիելի
7-րդ գլխում, անկասկած,
մատ-նացույց է անում
պապությանը:

«Նրան քառասուներկու ամիս
իշխանության տրվեց»:
Մարգարեն ասում է. «Տեսա, որ
Նրա գլուխներից մեկը մեռնելու
չափ խոցված էր»: Եվ կրկին.
«Եթե մեկը գերության տանի,
գերության պիտի տարվի, եթե
մեկը սրով սպանի, պիտի սրով
սպանվի»: «Քառասուներկու
ամիս» նույնն է, ինչ որ
«Ժամանակը, երկու
ժամանակները և կես
ժամանակը» Դանիելի 7
գլխում, այսինքն՝ երեքուկես
տարի կամ 1260 օր,
ժամանակահատված, որի
ընթացքում պապական

իշխանությունը պիտի հալածեր
Աստծո ժողովրդին: Այս
ժամանակաշրջանը, ինչպես
նշվել է նախորդ գլուխ-ներում,
սկսվել է պապական
գերիշխանության
հաստատմամբ՝ ք. հ. 538-ին. և
ավարտվել 1798-ին: Այդ
ժամանակ պապը գերի վերցվեց
Ֆրանսիական բանակի կողմից,
պապական իշխանությունը
ստացավ իր մահացու վերջը, և
կատարվեց մարգարեությունը.
«Եթե մեկը գերության տանի,
գերության պիտի տարվի»:

Սրանից հետո մեկ այլ
խորհրդանիշ է ներկայացվում:
Մարգարեն ասում է. «Ես տեսա
մի ուրիշ գազան դուրս գալիս
երկրից, և երկու եղջյուր ուներ
գառի նման, բայց խոսում էր
վիշապի պես» (Յայտնություն
13.11): Թե՛ այս գազանի տեսքը,
թե՛ նրա հայտնվելու ձեռն ցույց
են տալիս, որ այն ազգը, որին
նա խորհրդանշում է, նման չէ
մյուսներին, որոնք
ներկայացվել են մինչ այդ
պատկերված
խորհրդանիշներով: Մեծ
թագավորությունները, որ
տիրել են աշխարհին, Դանիել

մարգարեին պատկերվել են [440] գիշատիչ գազանների տեսքով, որոնք դուրս էին գալիս, երբ «երկնքի չորս հողմերը պայքարում էին մեծ ծովի վրա» (Դանիել 7.2, անգլ. թարգմ.): Հայտնություն 17-րդ գլխում հրեշտակը բացատրում է, որ ջրերը խորհրդանշում են «ժողովուրդներ, բազմություններ, ազգեր և լեզուներ» (Հայտնություն 17.15): Հողմերը պայքարի խորհրդանիշ են: Մեծ ծովի վրա պայքարող երկնքի չորս հողմերը խորհրդանշում են այն սոսկալի նվաճումներն ու

հեղաշրջումները, որոնց
միջոցով թագավորությունները
հասել են իշխանության:

Բայց գաաան եղջյուրներ
ունեցող գազանը «դուրս էր
գալիս երկրից»: Իր
իշխանությունը հաստատելու
համար ուրիշներին տապալելու
փոխարեն՝ այսպես
խորհրդանշված ազգը պիտի որ
հայտնվեր մինչ այդ
չգրադեցված տարածքի վրա և
զարգանար աստիճանաբար ու
խաղաղ: Չետևաբար, այն չէր
կարող հայտնվել Չին աշխարհի
մեծաթիվ ու իրար հետ

պատերազմող
ազգութիւնների՝
«ժողովուրդների,
բազմութիւնների, ազգերի և
լեզուների այդ փոթորկոտ
ծովում: Այն պետք է գտնել
արև-մտյան կիսագնդում:

Ո՞ր ազգն էր 1798 թ. Նոր
աշխարհում սկսում զորանալ՝
խոստանալով դառնալ հզոր ու
մեծ մի տերութիւն և գրավելով
աշխարհի ուշադրութիւնը:
Կասկած չիւնել չի կարող, որ մեկ
և միայն մեկ ազգ է
համապատասխանում այդ
մարգարեութեանը: Այն

անսխալ մատնանշում է
Ամերիկայի Միացյալ
Նահանգները: Նորից ու Նորից
հռետորները և
պատմաբաններն արձագանքել
են մարգարեի մտքին՝ այս
երկրի ստեղծումն ու
զարգացումը նկարագրելիս
ակամա օգտագործելով գրեթե
նույն բառերը: Նշված է, որ
գազանը «դուրս էր գալիս
երկրից»: Թարգմանիչների
կարծիքով՝ այստեղ
թարգմանված «դուրս էր
գալիս» արտահայտությունը
բառացիորեն նշանակում է
«աճել կամ ծլարձակել բույսի

նման»։ Եվ ինչպես տեսանք,
այդ ազգը պետք է հայտնվեր
մինչ այդ չգրադեցրած
տարածքում։ Նկարագրելով
Միացյալ Նահանգների
զարգացումը՝ մի ականավոր
հեղինակ նշել է «դատարկ
տեղում նրա ծագման
առեղծվածի» մասին՝
ավելացնելով. «Անձայն աճելով
սերմի պես՝ մենք կայսրութուն
դարձանք» (Ջ. Ա. Թառնսենդ,
Նոր աշխարհը՝ Յնի
համեմատությամբ, էջ 462)։
Եվրոպական մի ամսագիր 1850
թ. Միացյալ Նահանգներն
անվանել է հրաշափ

կայսրութիւն, որը «աճում» և «երկրի լռութեան մեջ օրեցօր զարգանում է զորութեամբ ու հպարտութեամբ» (The Dublin Nation): Էդուարդ Էվերեթը այդ ազգի ուխտագնաց հիմնադիրների [441] մասին իր ճառում ասել է. «Նրանք փնտրում էին մի գողտրիկ վա՞յր՝ իր անհայտութեամբ անվնաս և իր հեռավորութեամբ ապահով, ուր Լեյդենի փոքրիկ եկեղեցին կարող էր խղճի ազատութիւն վայելել: Ահա այդ վիթխարի տարածքները, որ նրանք նվաճեցին առանց պատերազմի և որոնց վրա...

կանգնեցրին խաչի դրոշը»
(ճառ՝ արտասանված
Պլիմուլթոն, Մասաչուսեթս, 22
դեկտեմբերի, 1824 թ., էջ 11):

«Եվ նա երկու եղջյուր ուներ՝
գառան նման»: Գառան
եղջյուրները
երիտասարդության,
անմեղության և
քաղաքավարության նշան են,
որը ճշտորեն ներկայացնում է
Սիացյալ Նահանգների
Էությունը, երբ մարգարեն այն
տեսավ «դուրս գալիս»
համաշխարհային ասպարեզ
1798-ին: Աքսորյալ

քրիստոնյաների մեջ, ովքեր
առաջինը փախան Ամերիկա՝
թագավորի հալածանքներից ու
քահանաների
անհանդուրժո-ղականությունի
ց ապաստարան գտնելու
համար, կային շատերը, ովքեր
որոշեցին կառավարություն
ստեղծել քաղաքացիական և
կլանական ազատության
հիմքի վրա: Նրանց
հայացքներն իրենց
արտացոլումը գտան
Անկախության Յոթյակագրի մեջ,
որը հաստատում է այն մեծ
ճշմարտությունը, որ «բոլոր
մարդիկ ստեղծված են

հավասար» և օժտված են
«կյանքի, ազատության և
երջանկության ձգտելու»
անքակտեփ իրա-վունքով: Եվ
Սահմանադրությունը
ժողովրդին
ինքնակառավարման
իրա-վունք է երաշխավորում,
ըստ որի՝ օրենքները պիտի
մշակվեն և կիրառվեն
քվեարկությամբ ընտրված
ներկայացուցիչների կողմից:
Այն նաև երաշխավորում է
կրոնի ազատություն, որը
յուրաքանչյուր մարդու թույլ է
տալիս Աստծուն երկրպագել իր
խղճի թելադրանքով: Ազգի

հիմնարար սկզբունքները
դարձան
հանրապետականությունն ու
բողոքականությունը: Այս
սկզբունքներն են հենց նրա
գործության ու բարգավաճման
գաղտնիքը: Քրիստոնեական ո
ղջ աշխարհի հալածվողներն ու
արհամարհվածները
հետաքրքրությամբ և հույսով
ուղղվեցին դեպի այս երկիրը:
Միլիոնավոր մարդիկ
ուղղվեցին դեպի ասիերը, և
Սիացյալ Նահանգները
զարգացավ՝ իր տեղը
զբաղեցնելով երկրի
ամենագորեղ ազգերի շարքում:

Բայց գտան եղջյուրներով
գազանը «խոսում էր վիշապի
նման: Եվ այն առաջին գազանի
բոլոր իշխանությունը
բանեցնում էր նրա առաջին, և
այնպես էր անում, որ երկիրն ու
նրա վրա բնակվողները
երկրպագեն այն առաջին
գազանին, որի մահացու վերքը
ողջացել էր... ասելով երկրի
բնակիչներին, [442] որ
պատկեր շինեն այն գազանին,
որ սրի վերք ուներ և ապրեց»
(Չայտնություն 13.11-14):

Գառան եղջյուրներն ու վիշապի ձայնը խորհրդանշում են այդ պետության սկզբունքների և գործողությունների միջև եղած կտրուկ հակասությունը: Այս երկիրը «խոսում» է իր օրենսդրական և դատական իշխանությունների միջոցով, որոնց գործունեությունը հակասելու է նրա պետական քաղաքականության հիմքում դրված ազատության և խաղաղության սկզբունքներին: Կանխագուշակումը, որ նա խոսելու է «վիշապի նման» և բանեցնելու է «առաջին գազանի ողջ իշխանությունը»,

պարզորոշ վկայում է
անհանդուրժողականության ու
հալածանքի ոգու զարգացման
մասին, որ դրսևորվել էր
վիշապի և ընձառյուծանման
գազանի իտրիդանիշներով
պատկերված ազգերի կողմից:
Իսկ այն, որ երկու եղջյուր
ունեցող գազանն ամեն ինչ
անելու է, «որ երկիրն ու նրա
բոլոր բնակիչները երկրպագեն
առաջին գազանին», ցույց է
տալիս, որ այս ազգի
իշխանությունը պարտադրելու
է մի այնպիսի դրվածք, որը
կդրդի պաշտել պապությանը:

Նման գործողությունն
ուղղակիորեն հակասելու է այս
կառավարության
սկզբունքներին, նրա
ազատասեր օրենքներին,
Անկախության հռչակագրի
պարզ ու հանդիսավոր
դրույթներին և
Սահմանադրությանը: Ազգի
հիմնադիրները խելամտորեն
ջանացին կանխել եկեղեցու
կողմից աշխարհիկ
իշխանության օգտագործումն
իր անխուսափելի հետևանքով՝
անհանդուրժողականությամբ և
հալածանքով: Ըստ
Սահմանադրության՝

«Կոնգրեսը որևէ օրենք չի
ընդունի կրոն հաստատելու
կամ էլ դրա ազատ դավանումն
արգելելու վերաբերյալ», և
«Միացյալ Նահանգներում
երբեք կրոնական քննություն
չի պահանջվի՝ որպես
որակավորում հանրային
պաշտոն զբաղեցնելու
համար»: Քաղաքացիական
իշխանության կողմից
կրոնական որևէ դրվածքի
պարտադրումը հնարավոր է
միայն ազգի ազատությունը
երաշխավորող այս
սկզբունքների ճշացող
ոտնահարմամբ: Բայց նման

գործողութիւնն ավելի
հակասական չէ, քան այն, որ
պատկերված է խորհրդանիշով:
Գազանը, որ դավանութեամբ
մաքուր է, քաղաքավարի և
անվնաս, բայց խոսում է
վիշապի պես, գառան
եղջուրներ ունի:

«Ասելով երկրի բնակիչներին,
որ [443] շինեն այն գազանի
պատկերը»: Այստեղ
հստակորէն ներկայացված է
կառավարման մի համակարգ,
որում օրենսդրական
իշխանութիւնը պատկանում է
ժողովրդին՝ ապշեցուցիչ մի

փաստարկ հոգուտ այն բանի,
որ մարգարեութեան մեջ խոսքը
Միացյալ Նահանգների մասին
է:

Բայց ի՞նչ է «գազանի
պատկերը», և ինչպե՞ս այն
պետք է ձևավորվի: Պատկերը,
որ շինվում է երկու եղջրավոր
գազանի կողմից, առաջին
գազանի պատկերն է: Որպեսզի
իմանանք, թե ինչի նման է
պատկերը, և ինչպես է այն
ձևավորվելու, պետք է
ուսումնասիրենք առաջին
գազանի՝ պապութեան
բնութագիրը:

Երբ վաղ եկեղեցին
ապականվեց՝ հեռանալով
ավետարանի պարզութունից և
որդեգրելով հեթանոսական
ծեսեր ու ավանդույթներ, այն
կորցրեց Աստծո Յոզիև և
զորութունը, և ժողովրդի
խիղճը վերահսկելու համար
այն դիմեց աշխարհիկ
իշխանության աջակցությանը:
Արդյունքում ծնվեց
պապությունը՝ եկեղեցի, որը
վերահսկեց պետական
իշխանությունը և օգտագործեց
այն իր նպատակներին
հասնելու, հատկապես

«հերետիկոսներին» պատժելու
համար: Որպեսզի Միացյալ
Նահանգները ձևավորեն
գազանի պատկերը, կրոնական
իշխանությունները պիտի
այնպես վերահսկեն
քաղաքացիական
կառավարությունը, որ
եկեղեցին կարողանա
օգտագործել պետության ուժը՝
իր նպատակներն իրա-գործելու
համար:

Երբ էլ որ եկեղեցին ձեռք է
բերել աշխարհիկ
իշխանություն, նա օգտագործել
է այն այլադավաններին

պատժելու նպատակով:
Բողո-քական եկեղեցիները,
որոնք գնացել են Յոնմի
հետքերով՝ դաշինք կնքելով
աշխարհիկ իշխանությունների
հետ, նմանապես ձգտել են
սահմանափակել խղճի
ազատությունը: Սրա վատ
օրինակն է այլադա-վանների
երկարամյա հալածանքը
Անգլիկան եկեղեցու կողմից:
Տասնվեցերորդ և
տասնյոթերորդ դարերի
ընթացքում հազարավոր
այլահավատ ծառայողներ
ստիպված են եղել փախչել
իրենց եկեղեցիներից, և

քարոզիչներից ու ժողովրդից
շատերն էլ ենթարկվել են
տուգանքի, բանտարկության,
տանջանքների ու
նահատակության:

Ուխտադրժուծյունն էր, որ վաղ
եկեղեցուն դրդեց հայցել
քաղաքացիական
իշխանության օգնությունը,
ինչը ճանապարհ պատրաստեց
պապության կամ գազանի
զարգացման համար: Պողոսը
գրել է, որ նախ պիտի գա
«ապստամբությունը», և ապա
հայտնվի «անօրենության [444]
մարդը» (Բ Թեսաղոնիկեցիս

2.3): Այդպես էք այժմյան
Եկեղեցու նահանջը ճանապարհ
կհարթի գազանի պատկերի
ստեղծման համար:

Աստվածաշունչը հայտնում է,
որ Տիրոջ գալուստից առաջ
կրոնն այնպիսի անկում է
ապրելու, ինչպիսին եղել է
առաջին դարերում: «Վերջին
օրերում չար ժամանակներ
կգան, որովհետև մարդիկ
կլինեն եասեր, արձաթասեր,
ամբարտավան, հպարտ,
հայիոյիչ, ծնողների
անհնազանդ, ապերախտ,
անսուրբ, անգուրթ, անհաշտ,

բանսարկու, անժուժկալ,
դաժան, անբարիսեր, մատնիչ,
հանդուզն, գոռոզ, ավելի
ցանկասեր, քան թե
աստվածասեր, որ
աստվածապաշտության
կերպարանք ունեն, բայց
ուրանում են նրա զորությունը»
(Բ Տիմոթեոս 3.1-5): «Եվ Յոզիս
հայտնի ասում է, թե վերջին
ժամանակներում ոմանք
հավատից կհեռանան և մտիկ
կտան մոլար ոգիների ու դևերի
վարդա- պետությունների» (Ա
Տիմոթեոս 4.1): Սատանան
գործելու է «ամեն
զորությունով, սուտ

նշաններով, հրաշքներով և
անհրապուժյան ամեն
խաբեբայություններով»: Եվ
բոլոր նրանք, ովքեր
«ճշմարտության սերը
չընդունեցին, որ ապրեն»,
կթողնվեն՝ ընդունելու
«մոլորության ներգործություն,
որ հավատան ստության» (Բ
Թեսաղոնիկեցիս 2.9-11): Երբ
անաստվածությունը հասնի
այս աստիճանին,
հետևանքները կլինեն նույնը,
ինչ որ առաջին դարերում:

Շատերի կարծիքով՝
դավանաբանական

բազմազանութիւնը
բողոքական եկեղեցիներում
վճռականորէն ապացուցում է,
որ երբեք հնարավոր չէ
ստիպողաբար հասնել
միաբանութեան: Բայց
տարիներ շարունակ
բողոքական հավատը
դավանող եկեղեցիներում
ուժգին և ան-ընդհատ աճող
ջանքեր են արվել՝ միութիւն
ստեղծելու հավատի
ընդհա-նուր կետերի հիման
վրա: Նման միութեան հասնելու
համար անհրաժեշտ կլինի
հրաժարվել այն հարցերի
քննարկումից, որոնց

վերաբերյալ համընդհանուր
համաձայնություն չկա, որքան
էլ դրանք կարևոր լինեն
Աստվածաշնչի տեսակետից:

1846 թվականին Չարլզ Բիչերն
իր քարոզում ասել է, որ
«ավետարանական-բողոքակա
ն հարանվանությունների»
ծառայությունը «ձևավորվել է
սոսկ մարդկային վախի ահռելի
ճնշման տակ, և բացի այդ՝
նրանք ապրում, շարժվում ու
շնչում են բոլորովին
ապականված իրավիճակում, և
ամեն ժամ տեղի տալով իրենց
բնության ստոր հակումներին՝

լռեցնում են [445]
ճշմարտությունն ու ծնկի
իջնում հավատուրաց
իշխանության առաջ: Մի՞թե
նույնը տեղի չունեցավ Յոզմի
հետ: Արդյոք չե՞նք
ընդօրինակում նրան: Եվ ի՞նչ է
մեզ սպասվում առջևում: Մեկ
այլ տիեզերածողո՞ւմ:
Համաշխարհային
համաձայնությո՞ւն:
Ավետարանական դաշինք և
մեկ ընդհանրական
հավատամք» (Քարոզ
«Աստվածաշունչն ինքնին
հավատամք է» թեմայով, Ֆորթ
Ուեյն, Ինդիանա, 22

փետրվարի, 1846 թ.): Երբ սա
տեղի ունենա, այն ժամանակ
կատարյալ միաբանության
հասնելու համար միայն մեկ
քայլ կմնա՝ դիմել բռնության:

Երբ Միացյալ Նահանգների
առաջատար եկեղեցիները,
միավորվելով ուսմունքի այն
կետերի շուրջ, որոնք
ընդհանուր են բոլորի համար,
պետությանը կդրո՞ւն
պարտադրել իրենց
որոշումներն ու աջակցել իրենց
կառույցներին, այդ ժամանակ
բողոքական Ամերիկյան
կճևավորի հռո-մեական

Նվիրապետութեան պատկերը, և
արդյունքում այլախոհներն
անխուսափելիորեն
կենթարկվեն քաղաքացիական
պատժամիջոցների:

Երկեղջյուր գազանը «ստիպում
(հրամայում) է բոլորին՝
փոքրերին և մեծամեծերին,
հարուստներին և
աղքատներին, ազատներին և
ծառա- ներին, որ դրոշմ
ընդունեն իրենց աջ ձեռքի կամ
ճակատի փոս: Եվ որ Ոչ ոք
չկարողանա գնել կամ
վաճառել՝ բացի նրանից, ով
ունի գազանի դրոշմը, կամ նրա

անունը, կամ նրա անվան
թիվը» (Չայտնություն 13.16,
17): Երրորդ հրեշտակը
նախագգուշացնում է. «Ով որ
երկրպագություն է տնում
գագանին ու նրա պատկերին և
դրոշմ ընդունում իր ճակասի
կամ իր ձեռքի վրա, այնպիսին
Աստծո սրտմտության գինուց
պիտի խմի»: Այստեղ
հիշատակված «գագանը», որին
երկրպագելը պարտադրվում է
երկեղջյուր գագանի կողմից,
Չայտնություն 13-րդ գլխի
առաջին կամ ընձառյուծանման
գագանն է՝ պապությունը:
«Գագանի պատկերն» իրենից

Նահանջած բողոքականության մի ձև է ներկայացնում, որը կզարգանա այն ժամանակ, երբ բողոքական եկեղեցիները դիմեն քաղաքացիական իշխանության օգնությանը՝ պարտագրելու իրենց դոգմաները: Մնում է միայն պարզել, թե ինչ է «գազանի դրոշմը»:

Նախազգուշացնելով չերկրպագել գազանին ու նրա պատկերին՝ մարգարեությունն ասում է. «Այստեղ են Աստծո պատվիրանները և Հիսուսի հավատը պահողները»: Քանի

որ Աստծո պատվիրանները
պահողներն այսպես
հակադրված են նրանց, ովքեր
երկրպագում են գազանին ու
նրա պատկերին և ընդունում
նրա դրոշմը, հետևաբար,
Աստծո օրենքը պահելը [446] մի
կողմից, և այն խախտելը մյուս
կողմից, տարբերիչ
սահմանագիծ են դնելու
Աստծուն երկրպագողների և
գազանին երկրպագողների
միջև:

Գազանի, հետևաբար և նրա
պատկերի գլխավոր
հատկանիշը Աստծո

պատվիրանները ոտնահարելու մեջ է: Դանիելը փոքր եղջյուրի՝ պապուլթյան մասին ասում է. «Խորհելու է, որ ժամանակներն ու օրենք-ները վախի» (Դանիել 7.25): Պողոսն էլ այդ նայն իշխանությունը կոչում է «անօրենության մարդ», ով իրեն Աստծուց վեր էր դասելու: Մի մարգարեությունը լրացնում է մյուսին: Միայն Աստծո օրենքը փոխելով պապուլթյունը կարող էր իրեն Աստծուց վեր դասել: Նա, ով գիտակցաբար կպահի փոխված օրենքը, գերագույն պատիվը կտա այն իշխանությանը, որի միջոցով

արվել է այդ փոփոխութիւնը:
Յնազանդութեանը պապական
օրենքներին
հավատարմութեան նշան է
պապի հանդեպ՝ Աստծո
փոխարեն:

Պապութիւնը փորձեց փոխել
Աստծո օրենքը: Երկրորդ
պատվիրանը, որն արգելում է
երկրպագել պատկերներին,
օրենքից հանվեց, իսկ չորրորդն
այնպես փոխվեց, որ
փաստորեն պատվիրում է
շաբաթը տոնել առաջին օրը՝
յոթերորդի փոխարեն: Բայց
պապականները պնդում են, թէ

երկրորդ պատվիրանը հանել են
այն պատճառով, որ դա
ավելորդ է, քա- նի որ
ներառված է առաջինի մեջ, և որ
իրենք օրենքը մատուցում են
ճիշտ այնպես, ինչպես Աստված
է կամենում, որ հասկացվի: Սա
չի կարող լինել մարգարեի
կանխասած փոփոխությունը:
Խոսքը կանխամտածված,
դի-տավորյալ փոփոխության
մասին է. «Խորհելու է, որ
ժամանակներն ու օրենքները
փոխի»: Չորրորդ
պատվիրանում արված
փոփոխությունն է
մարգարեության ճշգրիտ

իրականացումը: Միակ
հեղինակությունը, որ
պատասխանատու է սրա
համար, եկեղեցին է: Այստեղ
պապական իշխանությունն
իրեն բացահայտորեն Աստծուց
բարձր է դասում:

Մինչ Աստծուն երկրպագողները
կտարբերվեն չորրորդ
պատվիրանի հանդեպ իրենց
հատուկ հարգանքով, քանի որ
դա Նրա ստեղծագործ
գործության նշանն է, որը ցույց է
տալիս, թե ինչ իրավունքով է
Նա հա-վականում մարդու
ակնածանքին ու սրտովին,

գագանի երկրպագուները աչքի
են ընկնելու
արարչագործության
հուշարձանը տապալելու և
Յոնի օրենքը մեծարելու իրենց
ջանքերով: Յենց կիրակի օրվա
հարցում էր, որ պապությանն
առաջին անգամ [447]
հայտարարել է իր մեծամիտ
հավակնությունները (տես
Յավելումը), և առաջին անգամ
նա պետական իշխանության
օգնությանն է դիմել հենց
կիրակին որպես «Տիրոջ օր»
պարտագրելու համար: Բայց
Աստվածաշունչը ոչ թե
առաջին, այլ յոթերորդ օրն է

մատնանշում որպես «Տիրոջ
օր»: Քրիստոսն ասել է.

«Մարդու Որդին շաբաթի էլ
Տերն է»: Եվ Եսայիա մարգարեի
միջոցով Տերը այն կոչում է «Իմ
սուրբ օրը» (Մարկոս 2.28,
Եսայիա 58.13):

Հաճախ առաջ քաշվող այն
պնդումը, թե Քրիստոսն է
փոխել է շա-բաթը, հերքվում է
Նրա իսկ խոսքերով: Լեռան
վրա իր քարոզում Նա ասել է.
«Մի կարծեք, թե ես եկա օրենքը
կամ մարգարեները քանդելու,
ես չեկա քանդելու, այլ
կատարելու: Որովհետև

ճշմարիտ եմ ասում ձեզ, մինչև
որ երկինքն ու երկիրը անց
կենան, օրենքից մի կետ կամ
մեկ պատիկ նշանագիր չի
անցնի, մինչև որ բոլորը
չկատարվի: Արդ՝ ով որ այս
ամենափոքր պատվիրաններից
մեկը քանդի և մարդկանց
այնպես սովորեցնի, նա
փոքրագույն կկոչվի երկնքի
արքայութունում, բայց նա, ով
կանի և կսովորեցնի, նա մեծ
կկոչվի երկնքի
արքայութունում» (Մատթեոս
5.17-19):

Բողոքականների կողմից
հիմնականում ընդունված
փաստ է այն, որ Սուրբ Գիրքը ոչ
ոքի չի լիազորում
վտխել շաբաթը: Սա պարզորոշ
երևում է «Տրակտատների
ամերիկյան ընկերության» և
«Կիրականօրյա դպրոցների
ամերիկյան միության»
հրապարակումներում: Այս
աշխատություններից մեկը
նկատում է «Նոր Կտակարանի
կատարյալ լռությունը
կիրակին՝ շաբաթվա առաջին
օրը, որպես շաբաթ պահելու
որևէ հստակ պատվերի կամ
որոշակի օրենքի վերաբերյալ»

(Ջորջ Էլիոթ, Անփոփոխ
շաբաթը, էջ 184):

Մյուսում ասվում է. «Ընդհուպ
մինչև Քրիստոսի մահը այդ օրը
չի փոխվել», և «որքանով որ
Սուրբ Գիրքը ցույց է տալիս,
առաքյալները... որևէ հստակ
պատվեր չեն տվել յոթերորդ
օրվա շաբաթը թողնելու և դրա
փոխարեն շաբաթվա առաջին
օրը պահելու վերաբերյալ» (Ա.
Ե. Ուաֆֆլ, Տիրոջ օրը, էջ
186-188):

Հռոմակաթուղիկներն ընդունում
են, որ իրենց եկեղեցին է փոխել

շա-բաթը, և հայտ արարում են,
որ կիրակին պահելով՝
բողոքականներն [448]
լևնդունում են նրա
հեղինակությունը:
«Քրիստոնեական կրոնի
կաթոլիկ կատեխիզիս»-ը ի
պատասխան այն հարցի, թե որ
օրը պետք է պահվի չորրորդ
պատվիրանի համաձայն,
ասում է հետևյալը. «Յին
օրենքով սուրբ օրը շաբաթն էր,
սակայն եկեղեցին Յիսուսի
ցուցմունքով և Աստծո Յոգու
առաջնորդությամբ շաբաթը
փոխարինել է կիրակիով, ուստի
մենք հիմա սուրբ ենք պահում

ոչ թե յոթերորդ, այլ առաջին
օրը: Կիրակի հիմա նշանակում
է Տիրոջ օր»:

Որպես կաթուղիկ եկեղեցու
հեղինակության նշան՝
պապական գրող-ները
վկայակոչում են հենց «շաբաթը
կիրակիով փոխարինելու
գործողությունը ինչը
բուլղոքականներն ընդունում
են... քանզի պահելով
կի-րակին՝ նրանք ճանաչում են
տոներ կարգելու և դրանք
չնշելը մեղք համարելու՝
եկեղեցու հեղինակությունը»
(Ջենրի Թյուրքերվիլ,

Քրիստո-նեական ուսմունքի
աղճատումը, էջ 58): Ուրեմն էլ
ի՞նչ է շաբաթի
փո-փոխությունը, եթե ոչ Յռոմի
եկեղեցու հեղինակության
նշանը՝ «գազանի դրոշմը»:

Յռոմի եկեղեցին չի հրաժարվել
գերիշխանության իր
հավակնու-թյունից, և
ընդունելով նրա հորինած
շաբաթը՝ աշխարհն ու
բողոքական եկեղեցիները
փաստորեն կողմ են այդ
հավակնությանը: Այս
փոփոխությունը նրանք կարող
են արդարացնել ավանդության

և եկեղեցու հայրերի
հեղինակությամբ, բայց
դրանով նրանք անտեսում են
իրենց Յոզովից զատող այն
սկզբունքը, ըստ որի՝
«Աստվածաշունչը և միայն
Աստվածաշունչն է
բողոքականների կրոնը»:
Պապականները տեսնում են, որ
բողոքականները հենց իրենք
են խաբում իրենց՝ այս հարցում
հոժարակամ փակելով իրենց
աչքերը փաստերի առջև:
Նրանք ցնծում են՝ տեսներով,
որ կիրակին պարտագրելու
շարժումը բարեհաճությամբ է
ընդունվում՝ համոզված

լինելով, որ այն ի վերջո
բողոքական ողջ աշխարհը
կկանգնեցնի Յոնմի գրոշի
ներքո:

Կաթոլիկները հայտարարում
են, որ «տոնելով կիրակին՝
բողոքականներն ակամայից
պատվում են կաթոլիկ եկեղեցու
հեղինակությունը» (Մոնսենյոր
Սեգուր, Բաց զրույց
բողոքականության մասին, Էջ
213): Բողոքական
եկեղեցիները, պաշտպանելով
կիրակի օրվա պարտադրումը,
իրականում կողմ են
պապությանը՝ գազանին

երկրպագելու պարտադրմանը:
Նրանք, ովքեր հասկանալով
չորըորդ [449] պատվիրանի
պահանջները, ճշմարիտ
շաբաթի փոխարեն
Նախընտրում են պահել կեղծը,
ըստ այդմ պատիվ են տալիս
այն իշխանությանը, որի
կողմից տրվում է այդ
պահանջը: Բայց աշխարհիկ
իշխանության միջոցով
պարտադրելով կրոնական
դոգմա՝ եկեղեցիները
կճնավորեն գազանի պատկերը,
հետևաբար, կիրակին պահելու
հարկադրումը Միացյալ
Նահանգներում կլինի

գագանին և նրա պատկերին
երկրպագելու պարտադրանք:

Բայց քրիստոնյաներն
անցյալում պահել են կիրակին՝
ենթադրելով, թե այդպիսով
տոնում են աստվածաշնչյան
շաբաթը: Եվ այսօր էլ
յուրաքանչյուր եկեղեցում,
ներառյալ նաև կաթոլիկ
համայնքը, կան իս-կական
քրիստոնյաներ, ովքեր
անկեղծորեն հավատում են, թե
կիրակին է Աստծո շաբաթը:
Աստված ընդունում է նրանց
անկեղծ դրդումներն ու նրանց
ազնվությունը իր առաջ: Բայց

երբ կիրակին պահեա
պահանջվի օրենքով, և
աշխարհը լուսավորվի
ճշմարիտ շաբաթը պահելու
հարցում, այն ժամանակ նա, ով
կխախտի Աստծո պատվիրանը
և կհնազանդվի այն դրվածքին,
որը հաստատված չէ ավելի
բարձր հեղինակությունք, քան
Յոնմինն է, դրանով ավելի
կպատվի պապությունը, քան
Աստծուն: Նա պատվի տուրք է
մատուցում Յոնմին և այն
իշխանությունը, որը պիտի
պարտադրի Յոնմի որդեգրած
դրվածքը: Նա երկրպագում է
գազանին և նրա պատկերին:

Մերժելով այն պատվիրանը,
որն Աստված տվել է որպես իր
հեղինակությունն նշան, և դրա
փոխարեն պատվելով մյուսը,
որը Յոհաննիս ընտրել է որպես իր
գերիշխանության
խորհրդանիշը, նրանք
այդպիսով կընդունեն Յոհաննիս
հավատարիմ լինելու նշանը՝
«գազանի դրոշմը»: Բայց միայն
այն ժամանակ, երբ հարցը
պարզորոշ կներկայացվի
մարդկանց, և նրանք կկանգնեն
ընտրության առջև Աստծո
պատվիրանների և մարդկային
դրվածքների միջև,
օրինազանցության մեջ

համառոտները կընդունեն
«գազանի դրոշմը»:

Մահկանացու մարդկանց երբևէ
ուղղված ամենաահավոր
սպառնա-լիքը ներառված է
երրորդ հրեշտակի պատգամի
մեջ: Պետք է որ սոսկալի լինի
այն մեղքը, որը հարուցում է
Աստծո ցասումը՝ անխառն
ողորմության հետ: Այս կարևոր
հարցի վերաբերյալ մարդիկ
չպետք է թողնվեն խավարի
մեջ: Նախքան վրա կհասնեն
Աստծո դատաստանները,
աշխարհը պետք է
նախազգուշացվի այդ մեղքի

մասին, որպեսզի բոլորն
իմանան, թե ինչու պիտի
թափվեն այդ պատիժները, և
[450] հնարավորութուն
ունենան խուսափելու
դրանցից: Ըստ
մարգարեության՝ առաջին
հրեշ-տակն իր լուրն ուղղում է
«ամեն ազգի և ցեղի և
ժողովրդի և լեզվի»: Երրորդ
հրեշտակի նախազգուշացումը,
որը նույն եռակի պատգամի
մասն է կազմում, ոչ պակաս
լայնատարած կլինի:
Մարգարեությունն ասում է, որ
այն հռչակվելու է բարձր
ձայնով հրեշտակի կողմից, որը

թռչում է երկնքի միջով, և
գրավելու է ողջ աշխարհի
ուշադրութունը:

Այս պայքարում ողջ
քրիստոնեությունը բաժանվելու
է երկու մեծ խմբի, նրանք,
ովքեր պահում են Աստծո
պատվիրանները և ունեն
Չիսուսի հավատը, և մյուսները,
որ երկրպագում են գազանին ու
նրա պատկերին և ընդունում
նրա դրոշմը: Թեև եկեղեցին ու
պետությունը կմիավորեն
իրենց ուժերը, որպեսզի
ստիպեն «ամենքին՝ փոքրերին
և մեծամեծերին,

հարուստներին և
աղքատներին, ազատներին և
ծառաներին» (Յայտնություն
13.16)՝ ընդունելու «գազանի
դրոշմը», Աստծո ժողովուրդը չի
ընդունելու այն: Պատմոսի
մարգարեն տեսել է «նրանց,
ովքեր հաղթում են գազանին և
նրա պատկերին և նրա դրոշմին
և նրա անվան թվին՝ կանգնած
ապակեղեն ծովի վրա, և Աստծո
քնարներն ունեին, և երգում
էին Աստծո ծառա Մովսեսի և
Գառան երգը» (Յայտնություն
15.2.3):

ԳԼՈՒԽ 26—ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ԳՈՐԾԸ

Շաբաթին վերաբերող
բարեփոխման գործը, որը
պիտի կատարվի վերջին
օրերում, կանխասված է
Եսայիայի մարգարեության մեջ.
«Այսպես է ասում Տերը,
իրավունք պահեցեք և
արդարություն արեք,
որովհետև իմ փրկությունը մոտ
է, որ գա, և իմ արդարությունը,
որ հայտնվի: Երանի այն
մարդուն, որ կանի այս, և
շաբաթը կպահի պղծելուց, և իր
ձեռքը կպահի որևիցե

չարությունն անելուց»: «Այն օտարականների որդիքը, որ հարել են Տիրոջը՝ նրան ծառայելու և Տիրոջ անունը սիրելու և նրա ծառաները լինելու, այսինքն՝ իմ շաբաթը պղծելուց բոլոր պահողները և իմ ուխտը բռնողները: Նրանց էլ պիտի բերեմ իմ սուրբ սարը և նրանց ուրախացնեմ իմ աղոթքի տան մեջ» (Եսայիա 56.1,2, 6, 7):

Ինչպես ցույց է տրված համատեքստում, «Տեր էիովան, որ ժողովում է Իսրայելի արքայավաճներիս, ասում է. Դեռ

ուրիշներին էլ պիտի ժողովեմ
Նրա վրա, բացի Նրա վրա
ժողովվածներից» (Եսայիա
56.8) ար-տահայտությունը
վերաբերում է քրիստոնեական
դարաշրջանին: Այստեղ
կանխասված է հեթանոսների
դարձը ավետարանի լուրի
միջոցով: Եվ Նրանց, ովքեր այդ
ժամանակ կպատվեն շաբաթը,
օրհնություն է խոստացված:
Այսպիսով, չորրորդ
պատվիրանի պահանջները
ուժի մեջ պիտի լինեն
Քրիստոսի խաչելությունից,
հարությունից և համբարձումից
հետո՝ տարածվելով մինչև այն

Ժամանակները, երբ Նրա
ծառաները պիտի քարոզեն
բարի լուրը բոլոր ազգերին:
[452]

Նույն մարգարեի շուրթերով
Տերը պատվիրում է. «Կապիր
վկայու-թյունը, կնքիր օրենքը
իմ աշակերտների մեջ»
(Եսայիա 8.16): Աստծո օրենքի
կնիքը գտնվում է չորըորդ
պատվիրանում: Բոլոր տասից
միայն այս պատվիրանն է
հայտնում Օրենսդրի անունն ու
տիտղոսը: Այն Նրան երկնքի ու
երկրի Արարիչ է հռչակում՝
ցույց տալով, թե ինչի հիման

վրա է Նա պահանջում
երկրպագել ու պաշտել իրեն
ամեն ինչից առավել: Բացի այս
պատվիրանից,
Տասնաբանյայում ուրիշ ոչ մի
տեղ չի ասվում, թե ում
հեղինակությունք է տրվել
օրենքը: Երբ պապական
իշխանությունը փոխեց
շաբաթը, կնիքը հանվեց
օրենքից: Չիսուսի
հետևորդները կոչված են
վերականգնելու այն՝ չորրորդ
պատվիրանի շաբաթը՝ որպես
Արարչի սահմանած հիշատակի
օր և Նրա հեղինակության

նշան՝ բարձրացնելով իր
օրինական դիրքին:

«Օրենքին ու վկայությանը
դիմեցեք»: Իրարամերժ
ուսմունքների և
տեսությունների առատության
պայմաններում Աստծո օրենքը
միակ ան— սխալչափանիշն է,
որով պետք է ստուգվեն բոլոր
կարծիքները, ուսմունք-ները և
տեսությունները: Մարգարեն
ասում է. «Եթե նրանք չեն
խոսում այս իտսթի համեմատ,
ուրեմն նրանցում լույս չկա»
(Եսայիա 8.20, անգլ. թարգմ.):

Կրկին պատվեր է տրված.
«Կոկորդալիր գոչիր, մի
խնայիր, փողի պես
բարձրացրու ձայնդ և իմացրու
իմ ժողովրդին իրենց
հանցանքը և Յակոբի տանն՝
իրենց մեղքերը»: Ոչ թե
ամբարիշտ աշխարհը, այլ
Նրանք, ում Տերն «իմ
ժողովուրդ» է կոչում, պետք է
հանդիմանվեն իրենց
անօրենուության համար: Յետո
շարունակում է. «Բայց Նրանք
ինձ խնդրում են օրըստօրե և
ուզում են գիտենալ իմ
ճանապարհները՝ իբրև մի ազգ,
որ արդարություն է գործում և

իր Աստծո իրավունքը զանց չի
անում» (Եսայիա 58.1,2):
Այստեղ պատկերված են
այնպիսիք, ովքեր իրենց
արդար են համարում և
արտաքուստ մեծապես
հետաքրքրված են Աստծո
ծառայությամբ, բայց սրտեր
Քննողի խստաշունչ և
հանդիսավոր
հանդիմանությունը ցույց է
տալիս, որ նրանք ոտնահարում
են աստվածային
պատվիրանները:

Մարգարեն այսպիսով
մատնացույց է անում

անտեսված պատ-վիրանը. «Եվ
դու պիտի շինես մշտակա
ավերակները, և կկանգնեցնես
դարերից ի վեր ավերակ
հիմքերը, և քեզ կկոչեն
Խրամակարկատ և շեն
ճանապարհները վերանորոգող:
Եթե ետ դարձնես [453]
շաբաթից քո ոտ-քը, որ
բաղձանքի չկատարես իմ սուրբ
օրը, շաբաթը կոչես
զվարճություն, Տիրոջ
նվիրվածը՝ պատվական, և
նրան պատվես՝ քո
ճանապարհները չկատարելով
և քո բաղձանքը չլրացնելով ու
դատարկաբանություն

չա-նելով, այն ժամանակ
կզվարճանաս Տերով» (Եսայիա
58.12-14): Այս
մարգարեությունը վերաբերում
է նաև մեր օրերին: Աստծո
օրենքի մեջ ճեղք առաջացավ
այն ժամանակ, երբ Յոնմի
իշխանությունը փոխեց
շաբաթը: Բայց եկել է
աստվածային այդ դրվածքը
վերականգնելու ժամանակը:
Ճեղքվածքը պետք է փակվի և
դարերից ի վեր ավերակ
հիմքերը պիտի
վերականգնվեն:

Ադամը պահել է շաբաթը՝
որպես Արարչի կողմից սրբված
հանգստի և օրհնության օր ոչ
միայն իր անմեղության մեջ՝
սուրբ եղեմում, այլև իր
մեղանչումից և
ապաշխարելուց հետո, երբ նա
վտարվեց իր երանելի տնից:
Այն սուրբ են պահել բոլոր
Նահապետները՝ Ջաբելից մինչև
արդար Նոյը, Աբրահամը,
Ջակոբը: Երբ ընտրյալ
ժողովուրդը գերության մեջ էր
Եգիպտոսում, գերիշխող
կռապաշտության մեջ շատերը
կորցրին Աստծո օրենքի
իմացությունը, բայց երբ Տերն

ազատագրեց Իսրայելը, Նա
ահավոր վեհափառությամբ
հռչակեց Իր օրենքը հավաքված
բազմության առջև, որպեսզի
Նրանք իմանային Իր կամքը և
հնազանդվեին ու պաշտեին
Իրեն հավիտյան:

Այդ օրվանից մինչև մեր
Ժամանակները Աստծո օրենքի
իմացություն-նը պահպանվել է
երկրի վրա, և չորըորդ
պատվիրանի շաբաթը՝
պահվել: Թեև «անօրենության
մարդուն» հաջողվեց ոտնակոխ
անել Աստծո սուրբ օրը,
Նույնիսկ Նրա

գերհշխանության օրոք կային
հավատարիմ անձինք, ովքեր
գաղտնի պատվում էին այն:
Բարենորոգումից ի վեր ամեն
սերնդում եղել են այնպիսիք,
ովքեր պահել են շաբաթը:
Աստճո օրենքի
հավերժականության և
արարչության շաբաթի
սրբազան պահանջների
վերաբերյալ մշտապես
վկայությունն է տրվել՝ չնայած
նախատինքներին ու
հալածանքներին:

Չայտնություն 14-ի
«հավիտենական ավետիսի»

մեջ ներառված այս
ճշմարտությունները Քրիստոսի
եկեղեցու տարբերիչ նշաններն
են լինելու Նրա գալստյան
ժամանակ: Քանզի եռակի [454]
պատգամի արդյունքում
ազդարարվում է. «Այստեղ են
Աստճո պատվիրանները և
Հիսուսի հավատը
պահողները»: Եվ սա վերջին
լուրն է, որ պետք է տրվի Տիրոջ
գալուստից առաջ: Դրա
հռչակումից անմիջապես հետո
մարգարեն տես-նում է, որ
մարդու Որդին փառքով գալիս
է՝ երկրի բերքը հնձելու:

Ուլքեր որ ընդունեցին լույսը
սրբարանի և Աստծո օրենքի
անփոփոխության վերաբերյալ,
ուրախությամբ և զարմանքով
լցվեցին՝ տեսնելով իրենց
բացահայտված ճշմարտության
համակարգի գեղեցկությունն ու
ներդաշնակությունը: Նրանք
կամեցան, որ իրենց այդչափ
թանկագին թվացող լույսը
հասնի բոլոր քրիստոնյաներին,
և չէին կարող չհավատալ, որ
այն ուրախությամբ կընդունվի:
Բայց նրանք, ուլքեր իրենց
Քրիստոսի հետերդներ էին
համարում, չողջունեցին այն
ճշմարտությունները, որոնք

Նրանց տարբերում էին
աշխարհից: Չորրորդ
պատվիրանին հնազանդվելը
զոհ էր պահանջում, որից
մեծամասնու-թյունը
հրաժարվեց:

Երբ ներկայացվեցին շաբաթի
պահանջները, շատերն այդ
մասին դատեցին աշխարհիկ
մարդկանց տեսանկյունից՝
ասելով. «Մենք միշտ պահել
ենք կիրակին, մեր հայրերը ես
պահել են այն, և շատ ազնիվ ու
բարեպաշտ մարդիկ
ուրախությամբ ննջել են՝
պահելով այն: Եթե նրանք ճիշտ

են եղել, ուրեմն մենք էլ ենք
ճիշտ: Այս նոր շաբաթի
ընդունումը մեզ կհակադրի
աշխարհին, և մենք այլևս
ազդեցութեան չենք ունենա
նրա վրա: Ի՞նչ հույս կարող է
ունենալ յոթերորդ օրը պահող
փոքրիկ մի խումբ ամբողջ
աշխարհի դեմ, որը պահում է
կիրակին»: Այս նույն
փաստարկներով էլ հրեաներն
էին փորձել արդարացնել
իրենց՝ մերժելով Քրիստոսին:
Եթե Աստված ընդունել էր
իրենց հայրերին
զոհաբերու-թյունների միջոցով,
ինչո՞ւ նրանց զավակները չէին

Կարող փրկութիւն գտնել՝
գնալով նույն ճանապարհով:
Այդպէս էլ Լյութերի ժամանակ
պապականները մտածում էին,
թե քանի որ կաթոփկ հավատի
մեջ ննջել են իսկական
քրիստոնյաներ, ուստի այդ
հավատը բավական էր
փրկութեան համար: Նման
մտածելակերպը լուրջ
խոչընդոտ էր կրոնական
հաւատի առաջադիմութեան
համար:

Շատերը պնդում էին, թե
կիրակին պահելը դարեր
շարունակ հաստատված

ուսմունք և տարածված
սովորությունն է եղել [455]
Եկեղեց-ցում: Այս փաստարկի
դեմ ցույց տրվեց, որ շաբաթը և
շաբաթապահությունը ավելի
հին ու ավելի տարածված են
եղել, նույնքան հին, որքան
աշխարհն ինքը՝ կրեւով թև
հրեշտակների, թև Աստծո
հավանության կնիքը: Շաբաթը
հաստատվել է այն ժամանակ,
երբ դրվում էր երկրի հիմքը, երբ
առավոտյան աստղերը միասին
ցնծում էին, և Աստծո բոլոր
որդիները՝ գովաբանում: (Յոբ
38.6,7, Ծննդոց 2.1-3): Այս
դրվածքը մեր ակնածանքն է

պահանջում, քանզի այն չի
տրվել մարդկային
հեղինակութեամբ և հիմնված
չէ մարդկային ավանդույթյան
վրա, այլ հաստատվել է
Յինավուրցի կողմից, և Նրա
հավիտենական խոսքն է
պատվիրում պահել այն:

Երբ ժողովրդի ուշադրությունը
հրավիրվեց շաբաթի խնդրի
վրա, հանրաճանաչ
ծառայողներն աղավաղեցին
Աստծո խոսքը՝ այնպիսի
մեկնաբանություն տալով
դրան, որ լավագույնս լռեցնեին
մարդկանց արթնացած խիղճը:

Եվ նրանք, ովքեր ինքնուրույն
չէին քննում Սուրբ Գիրքը,
պատրաստ էին ընդունել այն
եզրակացությունները, որոնք
ներդաշնակ էին իրենց
ցանկություններին:
Փաստարկների,
փիլիսոփայության, հայրերի
ավանդության ու եկեղեցու
հեղինակության միջոցով
շատերը ջանացին խորտակել
ճշմարտությունը: Իսկ դրա
ջատագրվները դիմեցին
Աստվածաշնչի ն`
պաշտպանելու չորրորդ
պատվիրանի իրավական ուժը:
Հասարակ մարդիկ` գինված

միայն ճշմարտության խոսքով,
հետ մղեցին իրենց գիտուն
հակառակորդների գրոհները,
ովքեր զարմանքով ա
բարկությամբ նկատեցին, որ
իրենց պերճախոս
փիլիսոփայությունն անզոր է
նրանց պարզ և ուղղակի
դատողության դեմ, ովքեր
Սուրբ Գրքի իմացությունը
գերադասում էին
ճեմարանների գիտելիքներից:

Շատերը աստվածաշնչյան որևէ
վկայություն չունենալով իրենց
օգ-տին, մոռանալով, որ
Ժամանակին նույն

փաստարկներն էին
օգտագործ-վել Քրիստոսի և
Նբա առաքյալների դեմ,
համարորեն պնդեցին. «Ինչո՞ւ
մեր ճանաչված մարդիկ չեն
հասկանում շաբաթի այդ
հարցը: Միայն քչերն են
հավատում ձեզ նման:
Չնարավոր չէ, որ դուք ճիշտ
լինեք, իսկ աշխարհի բոլոր
գիտունները՝ սխալ»:

Նման փաստարկները հերքելու
համար պետք էր միայն
հիշատակել Սուրբ Գրքի
ուսմունքը և բոլոր դարերում իր
ժողովրդի հանդեպ Տիրոջ

վարվեցողութեան
պատմութիւնը: Աստված
գործում է նրանց [456] միջոցով,
ովքեր լսամ են նրա ձայնը և
հնազանդվում, ովքեր
ան-հրաժեշտութեան դեպքում
կարող են բարձրաձայնել
անցանկապի
ճշմարտութիւններ, ովքեր չեն
վախենում հանդիմանել
մարդկանց հայտ-նի մեղքերը:
Պատճառը, թե ինչու է Աստված
հազվադէպ օգտագործում
գիտուն և բարձրաստիճան
անձանց՝ առաջնորդելու
բարեփոխման շարժումները,
այն է, որ նրանք ապավինում

են իրենց հավատամքին,
տեսություններին ու
աստվածաբանական
համակարգերին, իսկ Աստուծոց
սովորելու կարիք չեն զգում:
Միայն նրանք, ովքեր
անձնական կապ ունեն
իմաստության Աղբյուրի հետ,
կարող են հասկանալ կամ
բացատրել Գիրքը: Երբեմն
ճշմարտությունը հռչակելու
համար կանչվում են
այն-պիսիք, ովքեր այնքան էլ
բարձր կրթություն չունեն, ոչ
թե նրա համար, որ
կհազրագետ են, այլ
որովհետև չափից ավելի

ինքնավստահ չեն Աստուծոց
սովորելու համար: Նրանք
կրթվում են քրիստոսի
դպրոցում, և նրանց
խոնարհությունն ու
հնազանդությունը մեծ է
դարձնում նրանց: Վստահելով
նրանց իր ճշմարտության
գիտությունը՝ Աստված
այնպիսի պատվի է
արժանացնում նրանց, որի
համեմատ երկրային պատիվն
ու մարդկային մեծությունը
կորցնում են իրենց ողջ փայլը:

Ադվենտիստների
մեծամասնությունը մերժեց

սրբարանի և Աստծո օրենքի
վերաբերյալ
ճշմարտությունները, շատերն
էլ ուրացան իրենց հավատն
ադվենտիստական շարժման
հանդեպ՝ որդեգրելով անառողջ
ու հակասական հայացքներ
այդ շարժման հետ առնչվող
մարգարեու-թյունների մասին:
Ոմանք մոլորության մեջ
ընկան՝ անդադար որոշակի
ժամանակ սահմանելով
Քրիստոսի գալստյան համար:
Լույսը, որն այժմ շողում էր
սրբարանի հարցի վրա, պիտի
ցույց տար նրանց, որ
մարգա-րեական ոչ մի

Ժամանակաշրջան չի ձգվում
մինչև երկրորդ գալուստը, որ
այդ գալստյան ճշգրիտ
ժամանակը կանխասված չէ:
Բայց շրջվելով լույսից՝ նրանք
կրկին ու կրկին ժամկետներ
էին նշանակում Տիրոջ
գալստյան համար և նույնքան
հաճախ էլ հիասթափվում էին:

Երբ Քրիստոսի գալստյան
վերաբերյալ կեղծ հայացքներ
թափանցեցին Թեսալոնիկեի
եկեղեցի, Պողոսը
հավատացյալներին խորհուրդ
տվեց իրենց հույսերն ու
սպասելիքները զգուշորեն

ստուգել Աստծո խոսքով: Նա
հիշեցրեց նրանց այ ն
մարգարեությունները, որոնք
բացահայտում էին Քրիստոսի
գալստյանը նախորդող
իրադարձությունները, և ցույց
տվեց, որ նրանք ոչ մի հիմք
չունեին սպասելու Նրան իրենց
օրերում: «Մեկը ձեզ չխաբի ոչ
մի ձևով»,— նախազգուշացնում
է նա (Բ Թե-սաղոնիկեցիս 2.3):
Եթե նրանք Սուրբ Գրքով
չհաստատված հույսեր
փայփայեին, դա նրանց կմղեր
[457] սխալ գործողությունների,
հիասթափությունը նրանց
անհավատների ծաղրի

առարկան կդարձնեք, նրանք
կընկնեին հուսահատության և
իրենց փրկության համար
Էական ճշմարտությունները
կասկածի տակ առնելու
փորձության վտանգի մեջ:
Թեսաղոնիկեցիներին ուղղված
առաքյալի հորդորը կարևոր
դաս ունի վերջին օրերում
ապրողների համար: Շատ
ադվենտիստներ կարծում են,
որ եթե իրենց հավատը
չկենտրոնացնեն Տիրոջ
գալստյան որոշակի ժամանակի
վրա, չեն կարող ջերմեռանդ ու
փութաջան լինել
պատրաստության գործում:

Բայց երբ նրանց հույսերը
կրկին ու կրկին բոցավառվում
են միայն նորից խորտակվելու
համար, նրանց հավատն
այնպես է ցնցվում, որ
մարգարեության մեծ
ճշմարտությունները գրեթե
ազդեցություն չեն թողնում
նրանց վրա:

Դատաստանի ստույգ
ժամանակի նշումը առաջին
պատգամը հռչակելիս թույլ էր
տրված Աստծո կողմից:
Մարգարեական
ժամանա-կաշրջանների
հաշվարկը, որի վրա հիմնված

Էր այդ լուրը, և ըստ որի՝ 2300
օրերն ավարտվում էին 1844-ի
աշնանը, ոչ մի կասկած չի
հարուցում: Մարգարեական
այդ ժամանակների սկզբի և
վերջի համար նորանոր
տարեթվեր նշանակելու
փորձերը և դրանք
հիմնավորելու համար
անհրաժեշտ անհեթեթ
դատողությունները ոչ միայն
մարդկանց միտքը շեղում են
ներկա ճշմարտությունից, այլև
նախատինքի են արժանացնում
մարգարեությունները
բացատրելու բոլոր ջանքերը:
Որքան ավելի հաճախ է ստույգ

Ժամանակ սահմանվում
երկրորդ գալստյան համար, և
ավելի լայնատարած է այն
քարոզվում, այնքան ավելի
ձեռնտու է դա սատանային:
Նշված ժամանակը լրանալաց
հետո նա ծաղրանք ու
արհամարհանք է առաջացնում
սպասողների հանդեպ և
այդսփսով նա-խատինք է
բերում 1843 և 1844
թվականների
ադվենտիստական մեծ
շարժման վրա: Նրանք, ովքեր
համառում են այդ մոլորության
մեջ, ի վեր- ջո քրիստոսի
գալստյան տարեթիվը

Կհետաձգեն շատ հեռավոր
ապագայի համար: Դա նրանց
ապահովության կեղծ զգացում
կներշնչի, և շատերը միայն
չափազանց ուշ կհասկանան,
որ խարված են եղել:

Չին Իսրայելի պատմությունը
ցայտուն կերպով լուսաբանում
է ադվենտիստական շարժման
անցյալ փորձառությունը:
Ինչպես Աստված Իսրայելի
որդիներին էր ազատագրել
Եգիպտոսից, այնպես էլՆա
առաջնորդեց Իր ժողովրդին
ադվենտիստական շարժման
մեջ: Մեծ հիասթափության

միջոցով նրանց հավատը
փորձվեց, ինչպես հրեաներինը՝
Կարմիր ծովի մոտ: Եթե նրանք
շարունակեին ապավինել իրենց
ուղեկցող բազկին, որն իրենց
հետ էր եղել [458] անցյալ
փորձառության մեջ, ապա
կտեսնեին Աստծո առաջարկած
փրկության ուղիները: Եթե
բոլոր նրանք, ովքեր
միասնաբար աշխատել էին
1844-ին, ընդունեին երրորդ
հրեշտակի պատգամը և
հռչակեին այն Սուրբ Յոգու
զորությանը, Տերը զորությանը
կգործեր նրանց միջոցով, և
լույսի հեղեղներ կթափվեին

աշխարհի վրա: Տարիներ առաջ
երկրի բնակիչները
Նախազգուշացված կլինեին,
եզրափակիչ գործը՝
ավարտված, և Քրիստոսը եկած
կլիներ՝ փրկելու իր ժողովրդին:

Աստծո կամքը չէր, որ Իսրայելը
քառասուն տարի թափառեր
անապատում: Նա ուզում էր
Նրանց առաջնորդել ուղիղ
Քանանի երկիրը և հաստատել
Նրանց այնտեղ՝ որպես արդար
ու երջանիկ ժողովուրդ: Բայց
Նրանք «չկարողացան մտնել՝
անհավատության պատճառով»
(Եբրայեցիս 3.19): Իրենց

Նահանջի և ուխտադրժության
պատճառով Նրանք մեռան
անապատում, և Նրանց
փոխարեն ուրիշ սերունդ մտավ
Ավետյաց երկիր: Նմանապես էլ
Աստծո կամքը չէր, որ
Քրիստոսի գալուստն այդքան
հետաձգվեր, և Նրա ժողովուրդը
երկար տարիներ մնար մեղքի
ու վշտի այս աշխարհում: Բայց
անհավատությունը Նրանց
բաժանեց Աստծուց: Քանի որ
Նրանք հրաժարվեցին
կատարել Նրա հանձնարարած
գործը, ուրիշները կանգնեցին
հռչակելու լուրը: Գթալով
աշխարհին՝ Յիսուսն ուշացնում

Է Իր գալուստը, որ
մեղավորները
հնարավորութիւն ունենան
լսելու նախազգուշացումը և
ապաստարան գտնեն Իր մեջ՝
Նախքան Աստծո ցասումը
կթափվի երկրի վրա:

Այսօր, ինչպես և անցյալ
դարերում, ժամանակի մեղքերն
ու կեղ-ծիքները հանդիմանող
ճշմարտութեան
քարոզչութիւնն ընդդիմութիւն
է առաջացնում: «Ամեն
չարագործ ատում է լույսը և չի
գալիս դեպի ըոյսը, որ նրա
գործերը չհանդիմանվեն»

(Յոսփհաննես 3.20): Տեսնելով, որ
իրենց գաղափարները չեն
կարողանում հաստատել Սուրբ
Գրքով, շատերը վճռում են
պաշտպանել դրանք ամեն
գնով և չարամտորեն հայհոյում
են նրանց վարքն ու
դրդումները, ովքեր աներեր
կերպով պաշտպանում են
անցանկալի ճշմարտությունը:
Նույնը կրկնվել է բոլոր
դարերում: Եղիային «Իսրայելի
խանգարող» համարեցին,
Երեմիային՝ մատնիչ, Պողոսին՝
տաճարը պղծող: Այն օրից ի
վեր բոլոր նրանք, ովքեր
հավատարիմ են եղել

ճշմարտությանը, մեղադրվել են
որպես խռովարարներ, [459]
հերետիկոսներ և
աղանդավորներ: Հազարավոր
մարդիկ, ովքեր չափա-զանց
անհավատ են՝ ընդունելու
մարգարեական հաստատ
խոսքը, ան-վերապահ
դյուրահավատությամբ
կընդունեն նրանց դեմ ուղղված
մե-ղադրանքը, ովքեր
համարձակվում են
հանդիմանել նորաոճ մեղքերը:
Այս ոգին ավելի ու ավելի է
զարգանալու: Աստվածաշունչը
ուղղակիորեն սովորեցնում է,
որ զալիս է ժամանակը, երբ

պետութեան օրենքներն
այնպէս են հակասելու Աստծո
օրենքին, որ աստվածային
բոլոր պատ-վիրաններին
հնազանդվողը պիտի
նախատվի ու պատժվի որպէս
չա-րագործ:

Ի տես այս ամենի՝ ո՞րն է
ճշմարտութեան լրաբերի
պարտքը: Պե՞տք է արդյոք նա
եզրակացնի, թե հարկ չկա
քարոզելու ճշմարտութիւնը,
քանզի հաճախ արդյունքում
մարդիկ դրդվում են շրջանցել
դրա պահանջները կամ
հակառակվել դրանց: Ոչ, նա

ավելի լուրջ պատճառ չունի՝
դադարեցնելու Աստծո խոսքի
վկայութիւնը միայն նրա
համար, որ այն ընդդիմութիւն
է առաջացնում, քան ունեցել են
վաղ բարենորոգիչները: Սրբերի
և նահատակների հավատի
դավանումը գրի է առնվել
հետագա սերունդների օգտի
համար: Սրբութեան և
անսասան ազնվութեան այդ
կենդանի օրինակները պետք է
խիզախութեան ներշնչեն
Նրանց, ովքեր այսօր կոչված են
Աստծո վկաները լինելու:
Նրանք շնորհ և ճշմարտութիւն
են ընդունել ոչ թե միայն իրենց

համար, այլ որպեսզի նրանց
միջոցով Աստծո գիտությունը
լուսավորի երկիրը: Մի՞թե
Աստված լույս չի տվել իր
ծառաներին այս սերնդում:
Ուրեմն նրանք պետք է թույլ
տան, որ այն շողա աշխարհի
վրա:

Չնում Տերն իր անունով խոսող
մի մարգարեի ասել է.
«Իսրայելի տունը չի ուզելու
քեզ լսել, որովհետև նրանք չեն
ուզում լսել ինձ»: Նա,
այնուամենայնիվ, պատվիրեց.
«Իմ խոսքերն ասա նրանց՝ թե
լսեն, թե զանց անեն» (Եզեկիել

3.7, 2.7): Աստծո ծառային մեր օրերում ուղղված է հետևյալ պատվերը. « Փողի պես բարձրացրու ձայնդ և իմացրու իմ ժո-ղովրդին իր հանցանքը, և Ջակոբի տանը՝ իր մեղքերը»:
(Եսայիա 58.1):

Յուրաքանչյուր ոք, ով ընդունել է ճշմարտության լույսը, իր հնարավորությունների չափով կրում է նույն հանդիսավոր և ահռելի պատասխանատվությունը, որ դրված էր Իսրայելի մարգարեի վրա, ում հա- սավ Տիրոջ խոսքը՝ ասելով. «Մարդու որդի,

ես քեզ դես դրի Իսրայելի տան
վրա, և դու պիտի խոսքը [460]
լսես բերանից և նրանց
զգուշացնես իմ կողմից: Ես
ամբարշտին ասելիս՝ «Ով
ամբարիշտ, դու անպատճառ
պիտի մեռնես», և եթե դու
չխոսես ամբարշտին՝ իր
ճանապարհից զգուշացնելու
համար, այն ամբարիշտը
կմեռնի իր անօրենսության
համար, բայց նրա արյունը ես
քո ձեռքից կպահանջեմ: Իսկ
եթե դու զգուշացնես
ամբարշտին, որ իր
ճանապարհից ետ դառնա, բայց
նա ետ չդառնա, նա իր

անօրենություն համար կմեռնի,
բայց դու ազատած կլինես քո
անձը» (Եզեկիել 33.7-9):

Ճշմարտությունն ընդունելու և
հռչակելու համար մեծ
խոչընդոտ է այն, որ դա
կապված է զրկանքների ու
նախատիների հետ: Սա միակ
փաստարկն է ճշմարտության
դեմ, որը Նրա ջատագովները
երբեք չեն կարողացել հերքել:
Բայց դա չի վախեցնում
Քրիստոսի իսկական
հե-տնորդներին: Նրանք չեն
սպասում, որ ճշմարտությունը
հանրաճանաչ դառնա: Իրենց

պարտքը գիտակցելով՝ նրանք
հոժարակամ կրում են իրենց
խաչը՝ Պողոս առաքյալի հետ
միասին կրկնելով, որ «մեր
այժմյան թեթև նեղությունը
ամենագերագանց
հավիտենական փառքի
մեծություն է գործում մեզ
համար»՝ հին անցյալ
ժամանակների մարգարեի
նման «ավելի մեծ
հարստություն համարելով
Քրիստոսի նախատիները
եկեղծացիների հարուստ
զանձերից» (Բ Կորնթացիս 4.17,
Եբրայեցիս 11.26):

Միայն այնպիսիք, ովքեր,
անկախ իրենց
դավանությունից, ծառայում են
աշխարհին, կրոնի հարցերում
կգործեն ավելի շուտ
քաղաքական
նկատառումներից ելնելով, քան
սկզբունքից: Մենք պետք է
ընտրենք ճիշտը, որովհետև դա
ճիշտ է, իսկ հետևանքները
թողնենք Աստծուն: Աշխարհն
իր մեծ բարեփոխումների
համար պարտական է հավատի
սկզբունքային և համարձակ
մարդկանց: Յենց այդպիսիք
պիտի առաջ տանեն մեր օրերի
բարեվտխման գործը:

Այսպես է ասում Տերը. «Լսեցեք
ինձ, ով արդարություն
ճանաչողներ, ով ազգ, որ իմ
օրենքն ունես սրտումդ, մի
վախեցեք մարդկանց
Նախա-տիկնքից, և նրանց
բամբասանքից մի զարհուրեք:
Որովհետև ցեցն է նրանց
ուտելու հանդերձի պես, և մեցը
ուտելու է նրանց բուրդի պես,
բայց իմ արդարությունը
հավիտյան պիտի լինի, և իմ
փրկությունը՝ հավիտյանս
հավիտենից» (Եսայիա 51 7,8):

ԳԼՈՒԽ 27—ՄԵՐ ՕՐԵՐԻ ԱՐԹԵԱՑՈՒՄՆԵՐԸ

Որտեղ էլ որ Աստծո խոսքը
անկեղծորեն քարոզվել է, այն
պտուղներ է բերել, որոնք
հաստատել են Նրա
աստվածային ծագումը: Աստծո
Յոզիան ուղեկցել է Նրա
լրաբերների քարոզչությանը, և
խոսքը հնչել է զորությամբ,
մեղավորների խիղճն
արթնացել է, «Լույսը, որ
լուսավորում է ամեն մարդու,
ով գալիս է աշխարհ»,
լուսավորել է Նրանց հոգու
գաղտնի անկյունները՝ ի հայտ

բերելով խավարի ծածուկ
գործերը: Նրանք մտքով և
սրտով խորապես գիտակցել են
իրենց մեղավորությունը,
հանդիմանվել են մեղրի,
արդարության և դատաստանի
հարցում: Գիտակցելով Եհովայի
արդարությունը՝ նրանք
զարհուրել են իրենց հանցավոր
ու անսուրբ վիճակով հայտնվել
սրտեր քննողի առաջ և սրտի
կսկիծով աղաղակել են. «Ո՞վ
կազատի ինձ այս մահի
մարմնից»: Երբ նրանց
բացահայտվել է Գողգոթայի
խաչն՝ իր անսահման
զոհաբերության մբ որը,

Կատարվել է մարդկանց
մեղքերի համար, Նրանք
հասկացել են, որ Քրիստոսի
արժանիքներից բացի՝ ոչինչ չի
կարող քավել իրենց
անօրենությունը և հաշտեցնել
իրենց Աստծո հետ: Հավատով և
խոնարհությամբ Նրանք
ընդունել են Աստծո Գառնին, որ
վեր է առնում աշխարհի մեղքը:
Հիսուսի արյան միջոցով Նրանք
ստացել են «մեղքերի
թողություն»:

Այս հոգիները
«ապաշխարության արժանի
պտուղ» են բերել: Նրանք

հավատացել և մկրտվել են՝
հարուժւոյուն առնելով նորոգված
կյանքի հա-մար և դառնալով
նոր արարածներ Քրիստոս
Հիսուսամ, որպեսզի այլևս
չտրվեն նախկին
ցանկութւոյուններին, այլ Աստծո
Որդուն [462] հա-վատալով՝
քայլեն Նրա հետքերով,
արտացոլեն Նրա
բնավորութւոյունը և սրբեն իրենց
անձերը, ինչպես որ Նա է սուրբ:
Նրանք սկսել են սիրել այն,
ինչը առաջ ատում էին, և այն,
ինչ առաջ սիրում էին, սկսել են
ատել: Հպարտներն ու
ինքնահավանները դարձել են

հեզ ու սրտով խոնարհ,
սնափառներն ու
ամբարտավանները՝ լուրջ և
համեստ, գռեհիկները՝
եր-կյուղած, հարբեցողները՝
սթափ, և անառակներն՝
առաքինի: Աշխարհի ունայն
նորածնությունը մի կողմ է
դրվել: Քրիստոնյաները
կարևորել են ոչ թե «դրսևանց
մազերի հյուսելը, ոսկեղենների
շարելը կամ շքեղ հան-դերձներ
հագնելը, այլ սրտի ծածուկ
մարդը՝ հեզ և հանդարտ հոգու
զարդարանքով, որ դա Աստծո
առաջին շատ թանկագին է» (Ա
Պետրոս 3.3,4):

Արթնացումները դրդել են սրտի
խորը քննության և
համեստության: Դրանց բնորոշ
են եղել մեղավորներին
ուղղված հանդիսավոր, լուրջ
կոչերը և գորովալից
կարեկցանքը Քրիստոսի
արյամբ փրկագնվածների
հանդեպ: Տղամարդիկ և
կանայք աղոթել են Աստծուն՝
«գոտեմարտելով» Նրա հետ
հոգիների փրկության համար:
Այդ արթնացումների
պտուղները եղել նրանք, ովքեր
չեն խուսափել
անձնուրացությունից և

զոհաբերութիւնից, այլ
ուրախացել են, որ արժանի են
համարվել նա-խատինք և
նեղութիւն կրելու հանուն
Քրիստոսի: Մարդիկ տեսել են,
թե ինչպես է վերափոխվել
Նրանց կյանքը, ովքեր դավանել
են Հիսուսի անունը: Նրանք
բարերար ազդեցութիւն են
թողել հասարակութեան վրա:
Նրանք ժողովել են Քրիստոսի
հետ՝ սերմնելով Հոգու մեջ,
որպեսզի հնձեն հավիտենական
կյանք:

Նրանց մասին կարելի էր ասել.
«Տրտմեցիք ապաշխարութեան

հա-մար»: «Որովհետև Աստծո կամեցած տրտմությունը ապաշխարություն է գործում փրկության համար՝ առանց զղջալու, բայց աշխարհի տըրտ— մությունը մահ է գործում: Որովհետև ահա հենց այն, որ դուք Աստծո ուզած կերպով տրտմեցիք, որքան ջանք գործեց ձեզանում, նաև արդա-րացում, նաև զայրույթ, նաև վախ, նաև փափագ, նաև նախանձ, նաև վրեժխնդրություն. ամեն ինչով ցույց տվեցիք ձեր անձերը, որ անմեղ եք այս բանում» (Բ Կորնթացիս 7.9-11):

Ահա սա է Աստծո Յոգու
Ներգործութեան արդյունքը:
Ապաշխարու-թյունը չի կարող
իսկական լինել, եթե դրան չի
հետևում բարեփոխումը: [463]
Եթե մեղավորը կատարի իր
տված խոստումը, վերադարձնի
գողա-ցածը, խոստովանի իր
մեղքերը և սիրի Աստծուն ու իր
մերձավորներին, ապա կարող է
համոզված լինել, որ հաշտվել է
Աստծո հետ: Այսպիսին են եղել
արդյունքները, որ հաջորդել են
անցյալի կրոնական
արթնացումներին: Դատելով
իրենց պտուղներից՝ դրանք

Աստժո օրհնությունն են
համարվել՝ հոգիներին բերելով
փրկություն և վեհացնելով
մարդկությունը:

Բայց արդի արթնացումներից
շատերը զգալիորեն
տարբերվում են աստվածային
շնորհի այն դրսևորումներից,
որ անցյալում ուղեկցել են
Աստժո ծառաների գործին:
Ճիշտ է, որ լայն
հետաքրքրություն է
առաջանում, շատերն ասում են,
թե դարձի են եկել,
եկեղեցիներն աճում են, բայց
արդյունքները չեն վկայում

իրական հոգևոր կյանքի
համա-պատասխան աճի
մասին: Միառժամանակ
բոցավառվող լույսը շուտով
մարում է՝ նախկինից ավելի
թանձր դարձնելով խավարը:

Չանրահայտ արթնացումները
շատ հաճախ բորբոքում են
մարդկանց երևակայությունն ու
գրգռում զգացմունքները՝
բավարարելով ինչ—որ նոր և
ցնցող բան վերապրելու
ցանկությունը: Այդպես ձեռք
բերված նորադարձները գրեթե
ցանկություն չեն ունենում
լսելու Աստվածաշնչի

ճշմարտությունը, նրանց քիչ է
հետաքրքրում մարգարեների և
առա-քյալների վկայությունը:
Եթե երկրպագությունը
զգայացունց ոչինչ չի
պարունակում, այն չի գրավում
նրանց: Լուրը, որն ուղղված է
առողջ դատողությանը,
արձագանք չի գտնում:
Անտեսվում են Աստծո խոսքի
պարզ նախազգուշացումները,
որոնք ուղղակիորեն բխում են
նրանց հավիտենական
շահերից:

Վերածնված յուրաքանչյուր
անձի կյանքի մեծագույն

Նպատակը Աստծո, ինչպես նաև
հավերժական իրողությունների
հետ նրա

հարաբե-րություններն են: Բայց
ո՞ր է Աստծո հանդեպ

նվիրվածության ոգին այսօրվա
հանրաճանաչ եկեղեցիներում:

Նորադարձները չեն թողնում

իրենց հպարտությունն ու

աշխարհասիրությունը: Նրանք

ավելի տրա-մադրված չեն

ուրանալու իրենց «ես»—ը,

վերցնելու խաչը և հետևելու

հեզ ու խոնարհ Ջիսուսին, քան

նախքան իրենց հավատալը:

Կրոնն անհավատների և

կասկածամիտների ծաղրի

առարկան է դարձել, քանզի
քրիստոնյա կոչեցյալներից
շատերն անձանոթ են նրա
սկզբունքներիս:

Բարեպաշտության զորությունը
գրեթե հեռացել է շատ
եկեղեցիներից:

Չբոսախնջույքները,
եկեղեցական

բեմականացումներն [464] ու
տոնա-վաճառները, շքեղ տներն
ու ցուցամուլությունը Աստծուն
վանել են մտքե-րից: Նրանց
միտքը զբաղված է
հողամասերով, ունեցվածքով ու
աշխարհիկ հոգսերով, իսկ
հավիտենական շահերը

վաղանցիկ ուշադրության
անգամ չեն արժանանում:

Չնայած հավատի և
բարեպաշտության
համատարած անկմանը՝ այս
եկեղեցիներում,
այնուամենայնիվ, կան
Քրիստոսի ճշմարիտ
հետևորդներ: Նախքան երկրի
վրա կթափվեն Աստծո վերջին
պատուհասները, Տիրոջ
ժողովրդի մեջ սկզբնական
աստվածապաշտության
այնպիսի վերածնունդ տեղի
կունենա, ինչպիսին դեռ չի եղել
առաքյալների օրերից ի վեր:

Աստժո Յոգին և գորութՅունը
կթափվեն Նրա գավակների
վրա: Այդ ժամանակ շատերը
կլքեն այն եկեղեցիները, որտեղ
աշխարհասիրութՅունը դուրս է
մղել սերն Աստժո և Նրա Խոսքի
հանդեպ: Շատ՝ ծառայողներ և
հառարակ մարդիկ
ուրախութՅամբ կընդունեն այն
մեծ ճշմարտութՅունները, որոնք
Առտված պատվիրել է հռչակել՝
Տիրոջ երկ-րորդ գալստյանը
պատրաստվելու համար:
Յոգիների թշնամին ուզում է
խանգարել այս գործին և,
Նախքան այդ շարժումը
կսկսվի, նա ջանալու է կեղծել

այն: Այն եկեղեցիներում, որոնք
նա կկարողանա գցել իր
մո-լորեցուցիչ իշխանության
տակ, կստեղծվի
տպավորություն, թե Աստծո
հատուկ օրհնությունն արդեն
թափվել է, և կրոնական
արթնացում է տեղի ունեցել:
Շատերը կցնծան, որ Աստված
հրաշքներ է գործում իրենց
համար, մինչդեռ դա բոլորովին
այլ հոգու գործը կլինի: Կրոնի
քողի տակ սատանան ջանալու
է իր ազդեցությունը տարածել
ողջ քրիստոնյա աշխարհի
վրա:

Վերջին կես գարի ընթացքում
տեղի ունեցած արթնացումների
մեծ մասում շատ թե քիչ չափով
գործել են այն նույն ուժերը,
որոնք դրսևոր-վելու են ապագա
ավելի զանգվածային
շարժումներում:
Չգացմունքային
գրգռվածությունն ու
ճշմարտության ու կեղծիքի
խառնուրդը շատ հարմար են
մոլորեցնելու համար: Բայց ոչ
ոք չպետք է խաբվի: Աստծո
խոսքի լույսի ներքո դժվար չէ
որոշել այս շարժումների
բնույթը: Որտեղ որ մարդիկ
արհամարհում են

Աստվածաշնչի վկայութիւնը՝
անտեսելով այն պարզ, սրտեր
քննող ճշմարտութիւնները,
որոնք անձի ուրացում և
ապաշխարութիւն են
պահանջում, կարող ենք
վստահ լինել, որ այնտեղ չկա
Աստծո օրհնութիւնը: [465] Եվ
հենց Քրիստոսի տված կանոնն
էլ՝ «Իրենց պտուղներից նրանց
կճանաչեք» (Մատթեոս 7.16),
ակնհայտ է դարձնում, որ այս
շարժումներն Աստծո Յոգու
գործը չեն:

Աստծո խոսքի
ճշմարտութիւնները, որոնք

բացահայտում են Նրան
մարդկանց, վահան են
սատանայի խաբեությունների
դեմ բռնորդի համար, ովքեր
ընդունում են դրանք: Այդ
ճշմարտությունների
արհամարհումն է հենց, որ դուռ
է բացել այն չարիքների առաջ,
որոնք այսօր այդքան
տարածվում են կրոնական
աշխարհում: Աստծո օրենքի
կարևորությունն ու բնույթը
մեծապես անտեսվել են:
Աստվածային օրենքի էություն,
հա-վերժականության և
պահանջների մասին սխալ
պատկերացումը վերածննդի և

սրբագործման վերաբերյալ
կեղծ կարծիքներ է ստեղծել՝
իջեցնելով բարեպաշտության
չափանիշը եկեղեցում: Հենց սա
է պատ-ճառը, որ մեր օրերի
արթնացումները զուրկ են
Աստծո ճոզուց և զորու-թյունից:

Տարբեր

հարանվանություններում կան
բարեպաշտությամբ աչքի
ընկնող մարդիկ, ովքեր
ընդունում են այս փաստը և
ողբում դրա համար: Պրոֆեսոր
Էդուարդս Ա. Փարքը, խոսելով
ընթացիկ կրոնական վտանգ-
ների մասին, իրավացիորեն

Նկատում է. «Վտանգի
ալյուրներից մեկն այն է, որ
ամբիոնից չի քարոզվում՝
պահեյուՆ աստվածային օրենքը:
Կար ժամանակ, երբ ամբիոնը
խղճի ձայնի արձագանքն էր...
Մեր ամենափայլուն
քարոզիչները հրաշալի ու վսեմ
էին դարձնում իրենց
ելույթները՝ հետևելով մեծ
Ուսուցչի օրինակին և
ընդգծելով օրենքի, դրա
պատվիրանների ու
սպառնալիքների
կարևորությունը: Նրանք
կրկնում էին այն երկու մեծ
սկզբունքները, որ օրենքը

աստվածային կատարելության
արտացոլումն է, և որ օրենքը
չսիրող մարդը չի սիրում նաև
ավետարանը, քանզի օրենքը,
ինչպես նաև ավետարանը,
հայելի է, որն արտացոլում է
Աստծո ճշմարիտ
բնավորությունը: Այս մեկ
վտանգը տանում է մյուսին՝
մեղքի չարության, խորության
և նողկալիության
թերագնահատմանը:
Պատվիրանի խախտումը նրա
իրավացիությանը համազոր
անիրավությունն է...»:

«Բացի այդ՝ գնալով աճում է
Աստծո արդարադատության
թերագնահատման վտանգը:
Ժամանակակից քարոզիչները
հակված են աստվածային
արդարադատությունը զատել
աստվածային
ողորմածությունից, և Նրա
գթածությունը [466] որպես
սկզբունք բարձրացնելու
փոխարեն՝ զգացմունքի են
վերածել այն:
Աստվածաբանության նոր
համակարգն անջատում է այն,
ինչ Աստված միավորել է:
Աստծո օրենքը բարի՞ք է, թե՞
չարիք: Իհարկե, բարիք:

Յետևաբար, արդարությունն էլ
բարիք է, քանզի այն
պահանջում է իրագործել
օրենքը: Աստվածային օրենքն
ու արդարությունը, մարդկային
անհնազանդության չափն ու
անեծքը թերագնահատելու
սովորությունից մարդիկ
հեշտությամբ ընկնում են
մեղքի քավությունն
ապահովելու համար տրված
շնորհի թերագնահատման
սովորության մեջ»: Այսպիսով,
ավետարանը կորցնում է իր
արժեքն ու կարևորությունը
մարդկանց համար, և շատ
չանցած՝ նրանք պատրաստ են

գործնականում հրաժարվել
արդեն իսկ Աստվածաշնչից:

Կրոնական շատ ուսուցիչներ
պնդում են, թե Քրիստոսն իր
մահով վերացրել է օրենքը, և
մարդիկ արդեն ազատ են դրա
պահանջներից: Ոմանք այն
ներկայացնում են որպես ծանր
լուծ, և օրենքի գերությանը
հակադրում են ավետարանի
շնորհած ազատությունը:

Բայց մարգարեներն ու
առաքյալները այդպես չէին
վերաբերվում Աստծո սուրբ
օրենքին: Դավիթն ասում է. «Ես

ազատ կքայլեմ, որովհետև քո
պատվիրանները խնդրեցի»
(Սաղմոս 119.45, անգլ.
թարգմ.): Հակոբոս առաքյալը,
գրելով Քրիստոսի մահից հետո.
Տասնաբանյան
«թագավորական օրենք» և
«ազատության կատարյալ
օրենք» է անվանել (Հակոբոս
2.8, 1.25): Հայտնության
հեղինակը խաչելությունից կես
դար անց ազդարարում է, որ
օրինյալ են «նրա
պատվիրանները պահող-ները,
որ նրանցը կլինի
իշխանությունը կյանքի ծառի

վրա, և քաղաքի դռնով ներս
կմտնեն» (Յայտնություն 22.14):

Անհիմն է այն պնդումը, թե
Քրիստոսն իր մահով վերացրել
է իր Յոր օրենքը: Եթե օրենքը
հնարավոր փնտր փոխել կամ
մի կողմ դնել, ապա Քրիստոսը
կարիք չէր ունենա մեռնելու՝
մարդուն մեղքի պատժից
փրկելու համար: Քրիստոսի
մահը ոչ թե խափանեց օրենքը,
այլ հաստատեց, որ այն
անփոփոխ է: Աստճո Որդին
եկավ «մեծացնելու և
փառավորելու օրենքը»
(Եսայիա 42.21): Նա ասել է.

«Մի կարծեք, թե ես եկա օրենքը քանդելու», «մինչև որ երկինքն ու երկիրս անց կենան, օրենքից մի կետ կամ մեկ պատիկ նշանագիր չի անցնի»

(Մատթեոս 5.17,18): Եվ իր մասին Նա ասում է. «Քո կամքը կատարել կամեցա, ով իմ Աստված, և քո օրենքն իմ սրտի մեջ է» (Սաղմոս 40.8): [467]

Աստծո օրենքն իր բուն եռթյամբ անփոփոխ է: Այն իր Յեղիևակի կամքի և բնավորության հայտնությունն է: Աստված սեր է, և Նրա օրենքն էլ սեր է: Օրենքի երկու

մեծ սկզբունքներն են՝ սեր առ Աստված և սեր մարդու հանդեպ: «Սերը օրենքի կատարումն է» (Հռոմեացիս 13.10, անգլ. թարգմ.): Աստծո բնավորությունն արդարություն և ճշմարտություն է. այդպիսին է նաև Նբա օրենքի բնույթը: Սաղմոսերգուն ասում է. «Քո օրենքը ճշմարտություն է», «Քո բոլոր պատվիրաններն արդարություն են» (Սաղմոս 119.142,172): Պողոս առաքյալն էլ ասում է. «Օրենքը սուրբ է, և պատվիրանն էլ՝ սուրբ, և արդար, և բարի» (Հռոմեացիս 7.12): Նման օրենքը, որն

Աստժո մտքի և կամքի
արտահայտությունն է, պիտի
որ իր Յեղիևակի պես
հավիտենական լինի:

Ապաշխարությունն ու
սրբագործությունը մարդկանց
հաշտեցնում են Աստժո հետ՝
Նրանց ներդաշնակ դարձնելով
Նրա օրենքի սկզբունքներին:
Սկզբում մարդը ստեղծվել է
Աստժո պատկերով: Նա
կատարելապես ներդաշնակ էր
բնությունը և Աստժո օրենքին:
Արդարության սկզբունքները
գրված էին Նրա սրտի վրա:
Բայց մեղքը բաժանեց Նրան իր

Ստեղծողից, և նա դադարեց
արտացոլել աստվածային
պատկերը: Նրա սրտում
թշնամուլթյուն ծնվեց Աստծո
օրենքի սկզբունքների դեմ:
«Մարմնի խորհուրդը
թշնամուլթյուն է Աստծո դեմ,
որովհետև Աստծո օրենքին չի
հնազանդվում և չի էլ կարող»
(Ջոնմեացիս 8.7): Բայց
«Աստված այնպես սիրեց
աշխարհը, որ իր միածին
Որդուն տվեց», որպեսզի մարդը
կարողանար հաշտվել Աստծո
հետ: Քրիստոսի արժանիքների
միջոցով նա կարող է նորից
ներդաշնակ լինել Իր Արարչի

հետ: Նրա սիրտը պետք է
նորոգվի աստվածային
շնորհով, նա պետք է նոր կյանք
ստանա վե-
րից Այս
վերափոխումը վերստին
ծնունդն է, առանց որի, ինչպես
ասաց Ջիսուսը, մարդը «չի
կարող արքայությունը
տեսնել»:

Աստծո հետ հաշտվելու առաջին
քայլը մեղքի գիտակցումն է:
«Մեղքը անօրենությունն է»:
«Օրենքով լինում է մեղքի
գիտություն» (Ա Ջովհաննես 3.4,
Ջոմեացիս 3.20): Իր
հանցանքը տեսնելու համար

մեղավորը պետք է իր
բնավորությունը ստուգի Աստծո
արդարության մեծ
չափանիշով: Այն մի հայելի է,
որը ցույց է տալիս արդար
բնավորության
կատարելությունը և օգնում է
մարդուն՝ տեսնելու իր
բնավորության արատները:

Օրենքը մարդուն միայն ցույց է
տալիս իր մեղքերը, բայց
նրանցից չի ազատում: [468]
Կյանք խոստանալով
հնազանդին՝ այն հռչակում է,
որ օրհնազանցի բաժինը մահն
է: Միայն Քրիստոսի

ավետարանը կարող է ազատել
Նրան մեղքի
դատապարտությունից կամ
պղծությունից: Նա պետք է
ապաշխարի՝ դառնալով
Աստծուն, ում օրենքը խախտել
է, և հավատա քրիստոսին, Նրա
քավչարար զոհաբերությանը:
Այսպես Նա ձեռք է բերում
«առաջուց գործած մեղքերի
թողություն» և հաղորդակից է
դառնում աստվածային
բնությանը: Ընդունելով
որդեգրության հոգին՝ նա
Աստծո զավակ է դառնում՝
աղաղակելով «Աբբա, Հայր»:

Հիմա նա ազատ կարող է
խախտե՞լ Աստծո օրենքը:
Պողոսն ասում է. «Արդ՝ մի՞թե
օրենքը խափանում ենք
հավատով, քավ լիցի, այլ
օրենքը հաստատում ենք»:
«Մենք, որ մեռանք մեղքին, էլ
ինչպե՞ս դեռ կապրենք նրա
մեջ»: Եվ Հովհաննեսն էլ ասում
է. «Սա է Աստծո սերը, որ նրա
պատվիրանները պահենք, և
նրա պատվիրանները ծանր
չեն» (Հռոմեացիս 3.31, 6.2, և
Հովհաննես 5.3): Վերստին
ծնունդը սիրտը
ներդաշնակեցնում է Աստծո և
նրա օրենքի հետ: Երբ այս

հրաշք փոփոխությանը տեղի է
ունենում մեղավորի մեջ, նա
մահից անցնում է դեպի կյանք,
մեղքից՝ դեպի սրբություն,
անօրենությունից ու
ապստամբությունից՝ դեպի
նվիրում և հնազանդություն:
Աստծուց օտարացած հին
կյանքն ավարտվում է, և
սկսվում է հաշտության,
հավատի ու սիրո նոր կյանքը:
Այդ ժամանակ «օրենքի
արդարությունը» կատարվում է
«մեր մեջ, որ մարմնով չենք
վարվում, այլ Յոզով»
(Յոզմեացիս 8.4, անգլ. թարգմ.):
Եվ մեր հոգին էլ կցնծա.

«Որքա՛ն եմ սիրում քո օրենքը,
ամեն օր նա է իմ մտածմունքը»
(Սաղմոս 119.97):

«Տիրոջ օրենքը կատարյալ է,
վերափոխում է հոգին»
(Սաղմոս 19.7, անգլ. թարգմ):
Առանց օրենքի մարդիկ ճիշտ
պատկերացում չունեն Աստծո
մաքրության և սրբության,
ինչպես նաև իրենց
հանցավորության ու
անմաքրության մասին: Նրանք
խորապես չեն գիտակցում
իրենց մեղքը և
ապաշխարության կարիք չեն
զգում: Չտեսնելով իրենց

կործանված վիճակը որպես
Աստծո օրենքի խախտողներ՝
նրանք Քրիստոսի քավչարար
արյան կարիքը չեն զգում:
Փրկության հույսն ընդունվում է
առանց սրտի արմատական
վերավտխման և կյանքի
նորոգման: Այսպիսի
մակերեսային
փոփոխությունները
համատարած են, և
հազարավորները միանում են
եկեղեցուն՝ երթեք միացած
չլինելով Քրիստոսին: [469]

Սրբագործության վերաբերյալ
սխալ տեսությունները են,

ծնունդ առնելով աստվածային
օրենքի անտեսումից կամ
մերժումից, այսօրվա
կրոնական շարժումներում
առաջնային տեղ են
զբաղեցնում: Այս
տեսությունները կեղծ են
ուսմունքի ստումով, և
վտանգավոր՝ գործնական
արդյունքներով, և այն փաստը,
որ դրանք ընդհանուր առմամբ
բարեհաճորեն են ընդունվում,
կրկին անգամ ընդգծում է այդ
հարցի վե-րաբերյալ Սուրբ Գրքի
ուսմունքի լուսաբանման
անհետաձգելի
անհրա-ժեշտությունը:

ճշմարիտ սրբագործումը
աստվածաշնչյան ուսմունք է:
Թեսաղոնիկեցիներին ուղղված
իր նամակում Պողոս առաքյալն
ասում է. «Սա է Աստծո կամքը՝
ձեր սրբությունը»: Եվ նա
աղոթում է. «Ինքը՝
խաղա-դության Աստվածը, ձեզ
բուրրովին սուրբ անի» (Ա
Թեսաղոնիկեցիս 4.3, 5.23):
Աստվածաշնչում հստակ
կերպով բացատրված է, թե ինչ
է սրբա-գործությունը, և ինչպես
է այն ձեռք բերվում: Փրկիչն
այսպես աղոթեց իր
աշակերտների համար. «Սուրբ

արա նրանց քո
ճշմարտությամբ, քո խոսքը
ճշմարտություն է» (Յովհաննես
17.17): Եվ Պողոսն էլ
սովորեցնում է, որ
հավատացյալները պետք է
«Սուրբ Հոգով սրբված» լինեն:
(Հռոմեացիս 15.16): Ո՞րն է
Սուրբ Հոգու աշխատանքը:
Հիսուսն ասաց իր
աշակերտներին. «Երբ
ճշմարտության Հոգին գա, նա
կառաջնորդի ձեզ ամեն
ճշմարտության մեջ»
(Յովհաննես 16.13):
Սաղմոսերգուն էլ ասում է. «Քո
օրենքը ճշմարտություն է»:

Աստճո խոսքն ու Յոզիս
բացահայտում են մարդկանց
արդարության մեծ
սկզբունքները՝ մարմնավորված
Նրա օրենքում: Եվ քանի որ
Աստճո օրենքը՝ «սուրբ, արդար
և բարի», աստվածային
կատարելության արտացոլումն
է, հետևաբար այդ օրենքին
հնազանդվելու միջոցով
ձևավորված բնավորությունը
կլինի սուրբ: Քրիստոսն
այդպիսի բնավորության
կատարյալ օրինակ է: Նա
ասում է. «Ես պահեցի իմ Յոր
պատվիրանները»: «Ես միշտ
Նրան հաճելի բաներն եմ

անում» (Յովհաննես 15.10,
8.29): Քրիստոսի հետևորդները
պետք է Նրան նմանվեն՝ Աստծո
շնորհի միջոցով ձևավորելով
բնավորություն, որը
ներդաշնակ կլինի Նրա սուրբ
օրենքի սկզբունքներին: Ահա
սա է աստվածաշնչյան
սրբագործումը:

Այս գործը կարող է կատարվել
միայն հավատով առ Քրիստոս
և սրտում բնակվող Աստծո
Յոզու զորությամբ: Պողոսը
հավատացյալներին հորդորում
է. «Ահով ու ղողով գործեցեք
ձեր անձերի փրկությունը:

Քանզի Աստված է, որ
ներգործում է ձեր մեջ
կամենալն էլ, անելն էլ՝ իր
բարեհաճության պես»
(Փիփապեցիս 2.12,13):
Քրիստոնյան կզգա մեղքի
դրդումները, բայց մշտապես
[470] կպայքարի դրա դեմ: Ահա
այստեղ է անհրաժեշտ
Քրիստոսի օգնությունը:
Մարդկային թուլությունը
միանում է աստվածային ուժին,
և հոգին հավատով
բացականչում է.
«Շնորհակալություն Աստծուն,
որ մեզ տալիս է հաղթությունը
մեր Տեր Հիսուս Քրիստոսի

միջոցով» (Ա Կորնթացիս
15.57):

Սուրբ Գիրքը պարզորոշ ցույց է տալիս, որ սրբագործումը անընդ-հատ, զարգացող գործընթաց է: Երբ դարձի գալով՝ մեղավորը հաշտվում է Աստծո հետ քավիչ արյան միջոցով, դա քրիստոնեական կյանքի միայն սկիզբն է: Յիմա նա պետք է «դեպի կատարյալը» գա, աճի «Քրիստոսի կատարյալ հասակի չափով»: Պողոս առաքյալն ասում է. «Մեկ բան կա, որ հետևի բաները մոռանալով՝

դեպի առջևում լինողներն են
նկրտում, հետեում են դեպի
նպատակը՝ Աստծո վերին
կոչումի մրցանակին՝ Քրիստոս
Յիսուսում» (Փիլիպպեցիս
3.13,14): Իսկ Պետրոսը մեզ է
ներկայացնում այն քայլերը,
որոնցով ձեռք է բերվում
աստվածաշնչյան
սրբագործումը. «Ամեն ջանք
անելով՝ ձեր հավատին
ավելացրեք առաքինություն,
առաքինությանը՝ գիտություն,
գիտությանը՝ ժուժկալություն,
ժուժկալությանը՝
համբերություն,
համբերությանը՝

բարեպաշտութիւն,
բարեպաշտութեանը՝
եղբայրասիրութիւն և
եղբայ-րասիրութեանը՝ սեր...
Սրանք անելով՝ երբեք չեք
սայթաքի» (Բ Պետրոս 1.5-10,
անգլ. թարգմ.):

Նրանք, ովքեր վերապրում են
աստվածաշնչյան
սրբագործումը, խոնարհութեան
ոգի կդրսևորեն: Մովսեսի պես
Նրանք պատկերացնում են
սրբութեան ահավոր
վեհափառութիւնը և
գիտակցում իրենց
անարժանութիւնն

Անսահմանի մաքրության ու
վսեմ կատարելության
համեմատ:

Դանիել մարգարեն ճշմարիտ
սրբագործության օրինակ է: Նա
իր երկարատև կյանքի
ընթացքում ազնվորեն ծառայեց
իր Տիրոջը: Նա շատ «ցանկալի
մարդ» էր (Դանիել 10.11)
Երկնքի համար: Սակայն իրեն
մաքուր և սուրբ համարելու
փոխարեն՝ այս պատվական
մարգարեն իրեն նույնացնում է
իր ժողովրդի մեղավորների
հետ՝ Աստծուն աղոթելով իր
ժողովրդի համար. «Ոչ թե մեր

արդարության համար ենք
աղաչում մենք՝ աղոթելով քո
առաջին, այլ քո շատ
տրտմությունների համար»:
«Մենք մեղանչեցինք,
անօրինացանք»: Նա ասում է.
«Ես... խոսում էի, աղո-
թում և
խոստովանում էի իմ մեղքը և
իմ ժողովրդի՝ Իսրայելի մեղքը»:
Եվ երբ ավելի ուշ հայտնվեց
Աստծո Որդին՝ ցուցումներ [471]
տալու նրան, Դանիելն ասում է.
«Իմ վայելչությունը վախժեց
ապականության, և ես այլևս
ուժ չունեցա» (Դանիել
9.18,15,20,10.8):

Փոթորկի միջից լսելով Տիրոջ ձայնը՝ Յոբը բացականչեց.
«Նվաստանում եմ և գղջում հողի և մոխրի վրա» (Յոբ 42.6):
Երբ Եսայիան տեսավ Տիրոջ փառքը և լսեց քերովբեների ձայնը, որ գոջում էին. «Սուրբ, սուրբ, սուրբ է Չորաց Տերը», նա բացականչեց. «Վա՛յ ինձ, որովհետև կորած եմ» (Եսայիա 6.3, 5): Այն բանից հետո, երբ Պողոսը հափշտակվեց երրորդ երկինք և անասելի բաներ լսեց, իր մասին ասում է. «Բոլոր սուրբերից ամենավերջինիս» (Բ Կորնթացիս 12.2-4, Եփեսացիս 3.8): Սիրելի Յովհաննեսն էր, ով

փարվում էր Յիսուսի կրծքին և տեսել էր Նրա փառքը, որ մեռածի պես ընկավ հրեշտակի ոտքերի առաջ (Յայտնություն 1.17):

Ոչ մի ինքնամեծարում, մեղքից ազատ լինելու ոչ մի պարծենկոտ հավակնություն չի նկատվի Նրանց մոտ, ովքեր քայլում են Գողգոթայի խաչի ստվերում: Նրանք գիտակցում են, որ իրենց մեղքն է հենց եղել այն հոգեվարքի պատճառը, որը փշրել է Աստծո Որդու սիրտը, և այս միտքը Նրանց կտանի ինքնանվաստացման: Ովքեր

ամենից ավելի մոտ են
Յիսուսին, ամենապարզն են
տեսնում մարդկային բնության
տկարու-թյունն ու
մեղավորությունը, և նրանց
միակ հույսը խաչյալ և
հարուցյալ Փրկչի
արժանիքներն են:

Սրբագործությունն իր այն
ըմբռնողությամբ, որ այժմ
տարածում է գտնում
կրոնական աշխարհում, իր հետ
բերում է ինքնամեծարման ոգի
և արհամարհանք Աստծո
օրենքի հանդեպ, ինչը ցույց է
տալիս, որ այն օտար է

Աստվածաշնչի կրոնին: Նրա
ջատագուկները սովորեցնում
են, թե սրբագործումն
ակնթարթային գործ է, որը
միայն հավատի միջոցով
հասցնում է կատարյալ
սրբության: «Միայն
հավատացեք,— ասում են
Նրանք,— և օրհնությունը ձերն
է»: Նրանց կարծիքով՝
օրհնությունը ստացողից
հետագա ջանքեր չեն
պահանջվում: Սիենույն
Ժամանակ Նրանք ժխտում են
Աստծո օրենքի
հեղինակությունը՝ պնդելով, թե
իրենք ազատված են

պատվիրանները պահելու
պարտականությունից: Բայց
հնարավոր է արդյոք լինել
սուրբ և ներդաշնակ Աստծո
կամքին ու բնավորությանը՝
ատանց ներդաշնակ լինելու այն
սկզբունքներին, որոնք Նրա
Էության և կամքի
արտահայտությունն են և ցույց
են տալիս, թե ինչն է Նրան
հաճելի: [472]

Չեշտ կրոնը, որը պայքար,
անձնուրացություն և աշխարհի
ցանկություններից բաժանում
չի պահանջում, հավատի և
միայն հավատի ուսմունքը շատ

հանրաճանաչ է դարձրել: Բայց
ի՞նչ է սովորեցնում Աստծո
խոսքը: Հակոբոս առաքյալն
ասում է. «Ի՞նչ օգուտ է,
եղբայրներ, եթե մեկն ասի, թե
հավատ ունի և գործեր
չունենա, մի՞թե հավատքը
կարող է ապրեցնել նրան...
Կամենո՞ւմ ես գիտենալ, ով
դատարկ մարդ, որ հավատն
սաանց գործերի մեռած է: Մեր
հայր Աբրահամը չէ՞ որ
գործերով արդարացավ՝ իր
որդի Իսահակին պատարագ
անելով սեղանի վրա: Տեսնո՞ւմ
ես, որ հավատը նրա գործերի
հետ միասին գործեց, և այն

գործերով հավատը կատարյալ
եղաւ... Տեսնո՞ւմ եք, որ մարդ
գործերով է արդարանում, և ոչ
միայն հավատով» (Յակոբոս
2.14-24):

Աստծո խոսքի վկայութիւնը
դեմ է առանց գործերի հավատի
մասին այս գայթակղիչ
ուսմունքին: Հավատը, որ
հավակնում է Երկնքի
բարեհաճությանը՝ առանց
բավաբարելու այն
պայմանները, որոնցով միայն
տրվում է շնորհը, ոչ թէ հավատ
է, այլ մեծամտութիւն, քանզի
իսկական հավատը հիմնված է

Սուրբ Գրքի խոստումների և օրհնությունների վրա:

Թող ոչ ոք չխաբի իրեն՝
կարծելով, թե կարող է սուրբ
դառնալ՝ հոժարակամ
խախտելով Աստծո
պահանջներից գեթ մեկը:
Գիտակցաբար գործված մեղքը
լռեցնում է Յոգու հանդիմանող
ձայնը և բաժանում է հոգին
Աստծուց: «Մեղքը
անօրենությունն է»: Եվ «ով որ
մեղանջում է (խախտում է
օրենքը) չի տեսել նրան և ոչ էլ
ճանաչել է նրան» (Ա
Յովհաննես 3.6): Թեև

Յովհաննեսն իր ուղերձներում
այդքան շատ է գրում սիրո
մասին, նա առանց վարանելու
բացահայտում է այն անձանց
իսկական էությունը, ովքեր
իրենց սրբագործված են
համարում՝ մշտապես
խախտելով Աստծո օրենքը:
«Ով որ ասում է, թե ճանաչեցի
Նրան, բայց Նրա
պատվիրանները չի պահում,
ստախոս է, և ճշմարտությունը
չկա Նրանում: Բայց ով որ Նրա
խոսքը պահում է, հիրավի,
Աստծո սերը Նրա մեջ
կատարյալ է» (Ա Յովհաննես
2.4, 5): Սրանով է ստուգվում

յուրաքանչյուր մարդու
հավատը: Մենք չենք կարող
սրբություն վերագրել որևէ
մարդու՝ առանց նրան
ստուգելու սրբության միակ
չափանիշով, որ Աստված ունի
երկնքում և երկրում: Եթե
մարդիկ չեղյալ են համարում
բարոյական օրենքը, եթե
անտեսում և թերագնահատում
են Աստծո դրվածքները, եթե
խախտում են [473] այդ
պատվիրաններից
փոքրագայնը և այդպես
սովորեցնում մարդկանց,
նրանք ոչ մի արժեք չունեն
երկնքի աչքում, և մենք կարող

Ենք իմանալ, որ նրանց
հավակնություններն անհիմն
են:

Եվ հենց անմեղ լինելու
պնդումը ինքնին վկայում է, որ
Նա, ով իր մասին այդպիսի
կարծիք ունի, հեռու է
սրբությունից: Դրա պատճառն
այն է, որ Նա ճիշտ
պատկերացում չունի Աստծո
անսահման մաքրության և
սրբության կամ էլ այն մասին,
թե ինչպիսին պետք է դառնալ՝
Նրա բնավորությանը
ներդաշնակ լինելու համար: Նա
ճիշտ պատկերացում չունի

Հիսուսի անաղարտութեան և
վսեմ գրավչութեան, ինչպես
Նան մեղքի չարութեան և
հրեշավորութեան մասին:
Որքան ավելի մեծ է անդունդը
Նրա և Քրիստոսի միջե, և որքան
ավելի անկատար է Նբա
պատկերացումը աստվածային
բնավորութեան ու պահանջների
վերաբերյալ, այնքան ավելի
արդար է Նա թվում իր աչքին:

Աստվածաշնչյան
սրբագործումը ներառում է
մարդու ողջ էութունը՝ շունչը,
հոգին և մարմինը: Պարան
աղոթում էր

Թեսաղոնիկեցիների համար, որ
նրանց «ամբողջ հոգին, շունչը
և մարմինը անարատ պահվի
մինչև մեր Տեր Հիսուս
Քրիստոսի գալուստը» (Ա
Թեսաղոնիկեցիս 5.23): Եվ
կրկին նա գրում է
հավատացյալներին. «Արդ,
աղաչում եմ ձեզ, եղբայրներ,
Աստժո ողորմությամբ, որ ձեր
մարմինները ներկայացնեք
որպես կենդանի, սուրբ և
Աստժո համար ընդունելի
պատարագ» (Հռոմեացիս 12.1):
Հին Իսրայելի օրերում Աստժուն
զոհաբերվող յուրաքանչյուր
կենդանի մանրագնին կերպով

ստուգվում էր: Եթե կենդանու
վրա որևէ թերութիւն էր
հայտնաբերվում, այն չէր
ընդունվում, քանզի Աստված
պատվիրել էր, որ զոհը
«անարատ» լինի: Այդպես էլ
քրիստոնյաներին է
պատվիրված իրենց
մարմինները ներկայացնել
«որպես կենդանի, սուրբ և
Աստծուն ընդունելի
պատարագ»: Սա անելու
համար նրանց բոլոր ուժերը
պետք է պահպանվեն
հնարավորինս լավագոյն
վիճակում: Ամեն մի
սովորութիւն, որը թուլացնում

Է ֆիզիկական կամ մտավոր
ուժը, մարդուն անպիտան է
դարձնում իր Արարչին
ծառայելու համար: Եվ մի՞թե
Աստված կբարեհաճի, եթե
Նրան մատուցենք լավագույնից
պակաս որևէ բան: Քրիստոսն
ասել է. «Սիրիր քո Տեր Աստծուն
քո ամբողջ սրտով»: Նրանք,
ովքեր իսկապես սիրում են
Աստծուն ամբողջ սրտով,
կփափագեն մատուցել Նրան
իրենց կյանքի լավագույն
ծառայությունը և մշտապես
կձգտեն իրենց ողջ էությունը
ներդաշնակեցնել այն
օրենքներին, որոնք

կգարգացնեն Նրա կամքը
կատարելու՝ իրենց
կարողութիւնն: Իրենց [474]
ախորժակը կամ կրքերը
բավարարելու միջոցով նրանք
չեն նսեմացնի կամ պղծի այն
ընծաները, որ ներկայացնում
են իրենց երկնային Յորը:

Պետրոսն ասում է. «Յեռու
կացեք մարմնավոր
ցանկութիւններից, որ կռվում
են հոգու դէմ» (Ա Պետրոս 2.11):
Սեղավոր ցանկութեան
յուրա-քանչյուր բավարարում
բթացնում է ունակութիւնները
և մեռցնում մտա- վոր ու

հոգևոր զգացողությունը, և Աստծո խոսքի ու Յոզու ազդեցությունը սրտի վրա խիստ թուլանում է: Պողոսը գրում է կորթնացիներին. «Մեր անձերը սրբենք հոգու և մարմնի ամեն պղծությունից, սրբությունը կատարեք Աստծո ահով» (Բ Կորնթացիս 7.1): Եվ Յոզու պտուղներին, որոնք են՝ «սեր, ուրախություն, խաղաղություն, երկայնամտություն, քաղցրություն, բարություն, հավատ, հեզություն», նա ավելացնում է նաև

«Ժուժկալուծյունը»

(Գաղատացիս 5.22,23):

Անտեսելով այս ներշնչյալ
խոսքերը՝ որքա՛ն շատ
քրիստոնյա կոչեցյալներ
թուլացնում են իրենց ուժերը՝
գոհ գնալով շահամուլությանը
կամ պաշտելով
նորաձևությունը և
խեղաթյուրելով իրենց
աստվածանման պատկերը
որկրամուլությամբ,
հարբեցողությամբ և անվայել
զվարճություններով: Եվ
եկեղեցին, հանդիմանելու
փոխարեն, շատ հաճախ

Խրախոսում է չարիքը՝
օգտվելով մարդկանց
ախորժակից,
շահամոլութունից ու
զվարճասիրութունից՝ իր
գանձարանը հարստացնելու
համար, որը լցնելու ընդունակ է
միայն սերը Քրիստոսի
հանդեպ: Եթե Յիսուսը մտներ
այսօրվա եկեղեցիները և
տեսներ այնտեղ կրոնի քողի
տակ կազմակերպվող
խնջույքներն ու անսուրբ
առևտուրը, մի՞թե այդ
սրբապիղծներին չէր վտարի,
ինչպես տաճարից վռնդեց
դրամափոխներին:

Հակոբոս առաքյալն ասում է, որ
վերին իմաստությունը «նախ՝
սուրբ է»: Եթե նա հանդիպեր
Նրանց, ովքեր Հիսուսի
թանկագին անունն
արտասանում են ծխախոտով
պղծված շուրթերով, նրանց, ում
շունչն ու հոգին ներծծված են
դրա գարշելի հոտով, ովքեր
աղտոտում են օդը և իրենց
շուրջը բոլորին ստիպում թույն
շնչել, և եթե առաքյալը բախվեր
ավետարանի մաքրությանն
այդչափ հակառակ մի
սովորության, մի՞թե չէր
դատապարտի այն որպես

«Երկրային, շնչավոր և
դիվական»։ Ծխա-խոտի
գերիները, հավակնելով
կատարյալ սրբության
օրհնությանը, երկինք մտնելու
հույս են հայտնում, մինչդեռ
Աստծո խոսքը պարզորոշ
ասում է, որ «բնավ չի մտնի
այնտեղ ոչ մի անմաքրություն»
(Չայտնություն 21.27)։ [475]

«Չգիտե՞ք, որ ձեր մարմինները
Սուրբ Յոզու տաճար են, որ
ձեզանում է, և նրան Աստծուց
ունեք և դուք ձերը չեք,
որովհետև մեծ գնով գնվեցիք,
ուստի փառավորեք Աստծուն

ձեր մարմնում և ձեր հոգում, որ
Աստծունն են» (Ա Կորնթացիս
6.19, 20): Նա, ում մարմինը
Սուրբ Հոգու տաճար է,
քայքայիչ սովորության ստղուկ
չի դառնա: Նրա ուժերը
պատկանում են Քրիստոսին, ով
Նրան գնել է իր արյունով: Նրա
ունեցվածքը Տիրոջն է: Ինչպե՞ս
Նա կարող է անմեղ համարվել՝
վատնելով իրեն վատահված
ստացվածքը: Քրիստոսյա
կոչեցյալները ամեն տարի
ահռելի գումար են ծախսում
անօգուտ և կորստաբեր
հաճույքների վրա, մինչդեռ
հոգիները կորչում են՝ կյանքի

Խոսքին ծարավ: Աստճուց
գողանում են տասանորդն ու
ընծաները, իսկ կործանիչ կրքի
գոհասեղանին այրում են
ավելին, քան հատկացնում են
աղքատներին կամ
ավետարանի տա-րածմանը:
Եթե բոլոր նրանք, ովքեր իրենց
Քրիստոսի հետևորդներ են
կոչում, իրապես սրբագործված
լինեին, նրանց միջոցները,
անօգուտ և նույնիսկ
վնասակար հաճույքների վրա
ծախսվելու փոխարեն, կլցվեին
Տիրոջ գանձարանը, իսկ
քրիստոնյաները
ժուժկալուժյան,

ինքնուրացու-թյան և
անձնագոհության օրինակ
կլինեին: Այդ ժամանակ նրանք
կդառնային աշխարհի լույսը:

Աշխարհը տրվել է
ցանկությունների
բավարարմանը: «Մարմնի
ցանկություննդ աչքերի
ցանկությունը և կյանքի
ամբարտավանությունը»
իշխում են ժողովրդական
զանգվածներին: Բայց
Քրիստոսի հետևորդներն ավելի
սուրբ կոչում ունեն: «Նրանց
միջից դուրս գնացեք և
բաժանվեցեք, ասում է Տերը, և

պիղծ բաների մի դիպչեք»:
Աստծո խոսքի լույսի ներքո
մենք լիազորված ենք
հռչակելու, որ սրբագործումը չի
կարող իսկական լինել, եթե այն
լիովին չի ազատում մարդուն
աշխարհի մեղսավոր
ձրգտումներից ու
հաճույքներից:

Նրանց, ովքեր համաձայն են
այռ պայմաններին՝ «Նրանց
միջից դողա գնացեք և
բաժանվեցեք... և պիղծ բաների
մի դիպչեք», Աստված
խոստանում է. «Ես կրնդունեմ
ձեզ, և ես ձեզ հայր կլինեմ, և

դուք ինձ որդիներ ու աղջիկներ
կլինեք, ասում է Ամենակարող
Տերը» (Բ Կորնթացիս 6.17,18):
Ամեն մի քրիստոնյայի
առավելությունն ու պարտքն է՝
հարուստ և խորը
փորձառություն ունենալ Աստծո
հետ իր
հարաբերություններում: «Ես եմ
աշխարհի լույսը», [476] ասաց
Ջիսուսը: «Ով որ իմ հետևից գա,
նա խավարի մեջ չի գնա, այլ
կյանքի լույսը կընդունի»
(Ջովհաննես 8.12): «Արդարների
ճանապարհը ծագող լույսի պես
է, որ գնալով լուսավորվում է,
մինչև որ կատարյալ օր է

դառնում» (Առակաց 4.18):
Հավատի ու հնազանդության
յուրաքանչյուր քայլ հոգին
ավելի ոերտորեն է կապում
աշխարհի Լույսի հետ, ում մեջ
«բնավ խավար չկա»:
Արդարության Արեգակի վառ
ճաճանչները լուսավորում են
Աստժո ծառաներին, և նրանք
պիտի արտացոլեն Նրա շողերը:
Ինչպես աստղերն են մեզ
հուշում, որ երկնքում կա մեծ
լույս, որի փառքն իրենց
պայծառ է դարձնում, այնպես էլ
քրիստոնյաները պետք է
արտացոլեն տիեզերքի գահին
բազմաժ Աստժո

բնավորությունդ որն արժանի է
գովեստի և ընդօրինակման:
Նրա զավակները կղրսևորեն
Սուրբ Հոգու շնորհները, Նրա
բնավորության մաքրությունն
ու սրբությունը:

Կողոսացիներին հասցեագրած
իր ուղերձում Պողոսը,
ներկայացնելով սաատ
օրհնությունները, որոնք
շնորհվում են Աստծո
զավակներին, ասում է.« Չենք
դադարում ձեզ համար աղոթք
անելուց և խնդրվածք
մա-տուցելուց, որ լցվեք Նրա
կամքի գիտությամբ, ամեն

իմաստութեամբ և հոգևոր
հանճարով, որ դուք քայլեք,
ինչպես արժանի է Տիրոջը՝
ամեն բանի մեջ հաճո լինելով
Նրան, ամեն բարի գործով
պտղաբեր լինեք և աճեք Աստծո
գիտութեան մեջ՝ ամեն
զորութիւնով զորացած իր
փառքի զորութեան համեմատ,
ամեն համբերութեան ու
երկայնամտութեան մեջ՝
ուրախութիւնով» (Կողոսացիս
1.9-11):

Նա գրում է նաև իր այն
ցանկութեան մասին, որ
Եփեսոսի եղբայրները

հասկանան քրիստոնյայի
առավելության վեհությունը:
Ամենահասկանալի լեզվով նա
բացահայտում է նրանց այն
զարմանահրաշ գորությունն ու
գիտությունը, որ նրանք կարող
են ունենալ՝ որպես Բարձրյալի
որդիներ և դուստրեր: Նրանց
առավելությունն է
«գորությամբ» հաստատվել
«նրա Յոգու միջոցով ներսի
մարդում»՝ «սիրո մեջ արմատ
գցած և հաստատված», «բոլոր
սրբերի հետ» իմանալ, «թե ի՞նչ
է լայնությունը, երկարությունը,
բարձրությունը և
խորությունը», և ճանաչել

«Քրիստոսի սերը, որ ամեն
գիտությունից գերազանց է»:
Բայց առաքյալի աղոթքն իր
առավելության
գագաթնակետին է հասնում,
երբ նա աղոթում է, որ «Աստծո
ամեն լիությունով լցվեք»
(Եփեսացիս 3.16-19): [477]

Ահա այն բարձունքները, որոնք
մենք կարող ենք նվաճել՝
հավա-տալով մեր երկնային
Յոր խոստումներին, երբ
կատարում ենք Նրա
պա-հանջները: Քրիստոսի
արժանիքների միջոցով մենք
մոտք ունենք դեպի Անսահման

Չորրության գահը: «Նա, ով իր Որդին էլ չխնայեց, այլ մեր ամենի համար մատնեց նրան, էյ ինչպե՞ս նրա հետ ամեն բան չի շնորհի մեզ» (Յոսեփ 8.32): Հայրը իր Հոգին առանց չափի տվեց իր Որդուն, և մենք նույնպես կարող ենք ստանալ նրա լիությունը: Հիտան ասում է. «Եթե դուք, որ չար եք, գիտեք բարի պարգևներ տալ ձեր որդիներին, որքա՞ն ավելի երկնավոր Հայրը Սուրբ Հոգին կտա նրանց, որ ուզում են իրենից» (Ղուկաս 11.13): «Եթե իմ անունով մի բան խնդրեք, ես կանեմ»: «Խնդրեք, և կառնեք,

որպեսզի ձեր ուրախությունը
կատարյալ լինի» (Յովհաննես
14.14, 16.24):

Թեև քրիստոնյայի կյանքն
առանձնանում է
խոնարհությամբ, այն չպետք է
լինի տրտում և
արժանապատվությունից
զուրկ: Յուրաքանչյուրի
առավելությունն է այնպես
ապրել, որ Աստված
հավանության տա և օրհնի
նրան: Երկնային Յոր կամքը չէ,
որ մենք միշտ մնանք
դատապարտության տակ և
խավարի մեջ: Գլխիկոր քայլելն

ու իր մասին մտածելը
իսկական խոնարհության
նշաններ չեն: Մենք կարող ենք
գնալ Չիսուսի մոտ, մաքրվել և
կանգնել օրենքի առաջ՝ առանց
ամոթի և խղճի խայթի: «Ուրեմն
հիմա դատապարտություն չկա
Չիսուս քրիստոսում լինողների
համար, որ մարմնով չեն
վարվում, այլ Չոգով»
(Չռոմեացիս 8.1, անգլ. թարգմ.):

Չիսուսի միջոցով Ադամի ընկած
որդիները «Աստծո որդիներ» են
դառնում: «Թե՛ սրբողը, և թե՛
սրբվողները, ամենքը մեկից են,
այդ պատճառով նա ամոթ չի

համարում նրանց եղբայր
կոչել» (Եբրայեցիս 2.11):
Քրիստոնյայի կյանքը պետք է
աչքի ընկնի հավատով առ
Աստված, հաղթությամբ և
ուրախությամբ: «Ով որ
Աստծուց է ծնված, հաղթում է
աշխարհին, և սա է այն
հաղթությունը, որ աշխարհին
հաղթեց՝ մեր հավատը» (Ա
Յովհաննես 5.4): Իրավացի էր
Աստծո ծառա Նեեմիան՝
ասելով. «Տիրոջ ուրախությունը
ձեր զորությունն է» (Նեեմիա
8.10): Պողոսն էլ ասում է.
«Ուրախ եղեք Տերում ամեն
ժամանակ, դարձյալ ասում եմ՝

ուրախ եղեք»: «Ամեն
ժամանակ ուրախ եղեք:
Անդադար աղոթք արեք: Ամեն
բանի համար [478] գոհացեք,
որովհետև սա է Աստծո կամքը
ձեզ համար քրիստոս
Հիսուսում» (Փիլիպպեցիս 4.4, Ա
Թեսաղոնիկեցիս 5.16-18):

Այսպիսին են աստվածաշնչյան
ապաշխարության և
սրբագործման պտուղները, և
դրանք հազվադեպ են
նկատվում հենց այն
պատճառով, որ
քրիստոնեական աշխարհն
այդքան անտարբեր է Աստծո

օրենքում ներկայացված
արդարության մեծ
սկզբունքների հանդեպ: Ահա
թե ինչու է այդքան քիչ
դրսևորվում Աստծո Յոզու
խորը, մնայուն
ներգործությունը, որով
նշանավորվել են
արթնացումները անցյալում:

Նայելով է, որ մենք
վերափոխվում ենք: Եվ երբ այն
սուրբ պատվիրանները,
որոնցում Աստված մարդկանց
բացահայտել է իր
բնավորության
կատարելությունն ու

սրբությունը, արհամարհվում
են, և ժողովրդի միտքն
ուղղվում է դեպի մարդկային
ուսմունքներն ու
տեսությունները, արժե՞
զարմանալ, որ կենդանի
աստվածապաշտությունն
անկում է ապրում եկեղեցում:
Տերն ասում է. «Ինձ՝ կենաց ջրի
աղբյուրիս, թողեցին, որ իրենց
համար հորեր վարեն,
ծակծակոտ հորեր, որոնք չեն
կարող ջուրը պահել» (Երեմիա
2.13):

«Երանելի է այն մարդը, որ
ամբարիշտների խորհրդի մեջ

չի գնում... այլ Նրա կամքը
Տիրոջ օրենքի մեջ է, և ցերեկ ու
գիշեր Նրա օրենքի վրա է
մտածում: Եվ նա ջրերի
առունների մոտ տնկված ծառերի
պես է, որ իր պտուղը տալիս է
իր ժամանակին, և Նրա տերևը
չի թափվում. և այն ամենն, ինչ
որ անում է, հաջողվում է
Նրան» (Սաղմոս 1.1-3): Միայն
այն ժամանակ, երբ Աստծո
օրենքը մեծարվի և դրվի
հարկավոր բարձրության վրա,
Նրա ժողովրդի մեջ կարող է
վերածնվել առաքյալների
հավատն ու
ստվածապաշտությունը:

«Այսպես է ասում Տերը,
կանգնեցեք ճանապարհներին,
և տեսեք ու հարցրեք վաղեմի
ճանապարհներից, թե արդյոք
ո՞րն է լավ ուղին, այն
ժամանակ գնացեք նրանով, և
դուք հանգստություն կգտնեք
ձեր հոգիների համար» (Երեմիա
6.16):

ԳԼՈՒԽ 28—ՅԱՆԴԻՊՈՒՄ ՃԱԿԱՏԱԳՐԻՆ

«Ես տեսնում էի,— ասում է
Դանիել մարգարեն,— մինչև որ
աթոռներ դրվեցին, և
Յինավուրցը նստեց, նրա
հագուստը՝ ձյունի պես
սպիտակ, և նրա գլխի մազերը՝
մաքուր ասրի պես, նրա աթոռը՝
կրակի բոց, նրա անիվները՝
վառված կրակ: Մի կրակի գետ
էր հոսում և գնում նրա
առաջից, հազար հազարներ
ծառայում էին նրան և բյուր
բյուրեր կանգնած էին նրա
առաջին, ատյանը նստեց, և

գործերը բացվեցին» (Դանիել
7.9,10):

Այսպես մարգարեին ցույց
տրվեց այն մեծ ու հանդիսավոր
օրը, երբ մարդկանց կյանքն ու
բնավորությունը պետք է
ներկայացվեն ողջ երկրի
Դատավորի առջև, և
յուրաքանչյուրը հատուցում
կստանա «իր գործերի
համեմատ»: Յինավուրցը Յայր
Աստվածն է: Սաղմոսերգուն
ասում է. «Դեռ որ սարերը չէին
ծնված, և երկիրն ու աշխարհը
չէիր ստեղծել, հավիտենից
մինչև հավիտյանս դու ես

Աստված» (Սաղմոս 90.2): Նա՝
գոյություն ունեցող ամեն ինչի
աղբյուրը և օրենքի հիմնադիրը,
պետք է նախագահի
դատավարության ժամանակ:
Եվ սուրբ հրեշտակները՝ թվով
«հազար հազարներ... և բյուր
բյուրեր», ներկա են այս մեծ
դատին որպես ծառայողներ ու
դիտորդներ:

«Եվ ահա երկնքի ամպերով
գալիս էր մեկը՝ մարդի Որդու
Նման, և մինչև Հինավուրցը
եկավ, և նրա առաջ մոտեցրին
Նրան: Եվ Նրան տրվեց [480]
իշխանություն, պատիվ և

թագավորութիւն, որ բոլոր
ժողովուրդները, ազգերը և
լեզուները Նրան ծառայեն, Նրա
իշխանութիւնը
հա-վիտենական իշխանութիւն
է, որ չի անցնի» (Դանիել
7.13,14): Այստեղ նկարագրված
Քրիստոսի գալուստը Նրա
երկրորդ գալուստը չէ երկիր:
Նա Յինավուրցի մոտ է գալիս
երկնքում՝ ընդունելու
իշխանութիւն, պատիվ և
թագավորութիւն, որոնք Նրան
կտրվեն Նրա միջնորդական
ծառայութեան ավարտից հետո:
Այս գալուստն էր, այլ ոչ թէ
Նրա երկրորդ գալուստը երկիր,

որն ըստ մարգարեության՝
պիտի տեղի ունենար 2300
օրերի ավարտից հետո 1844-ին:
Երկնային հրեշտակների
ուղեկցությամբ մեր մեծ
Քահանայապետը մտնում է
Սուրբ Սրբոց և այնտեղ
ներկայա- նում Աստծուն՝
սկսելու Իր ծառայության
եզրափակիչ փուլը հանուն
մարդու, այսինքն՝ կատարելու
դատաքննություն և
քավություն անելու բոլորի
համար, ովքեր իրավունք
կատանան օգտվելու դրա
օրհնություններից:

Խորհրդանշական
ծառայության մեջ միայն
նրանք կարող էին մասնակցել
Քավության օրվա
արարողությանը, ովքեր
խոստովանությամբ ու
ապաշխարությամբ էին
ներկայացել Աստծո առջև, և ում
մեղքերը մեղքի պատարագի
արյան միջոցով փոխանցվել
էին սրբարան: Այդպես էլ
վերջնական քավության և
դատաքննության մեծ օրը
միայն նրանց գործերն են
ստուգվելու, ովքեր Աստծո
ժողովուրդ են կոչվում:
Ամբարիշտների դատը ուրիշ ու

առանձին գործ է և ավելի ուշ է
լինելու: «Ժամանակն է, որ
դատաստանը սկսվի Աստծո
տնից, բայց եթե սկզբում
մեզանից, ապա ի՞նչ կլինի
նրանց վերջը, որ Աստծո
ավետարանին անհնազանդ
են» (Ա Պետրոս 4.17):

Դատավճիռները կայացվելու են
երկնային այն գրքերի
արձանագրության համաձայն,
որոնցում գրառված են
մարդկանց անուններն ու
գործերը: Դանիել մարգարեն
ասում է. «Ատյանը նստեց, և
գրքերը բացվեցին»:

Պատկերելով նույն դրվագը՝
Յայտնութեան հեղինակն
ավելացնում է. «Մի ուրիշ գիրք
էլ բացվեց՝ կյանքի գիրքը, և
մեռյալները դատվեցին այդ
գրքերում գրվածների
համաձայն՝ իրենց գործերի
համեմատ» (Յայտնութեան
20.12):

Կյանքի գրքում բոլոր նրանց
անուններն են, ովքեր երբևէ
ծառայել են Աստծուն: Յիսուսն
իր աշակերտներին ասաց.
«Ուրախացեք, [481] որ ձեր
անունները գրված են
երկնքում» (Ղուկաս 10.20):

Պողոսը խոսում է իր հավատարիմ գործակիցների մասին, «որոնց անունները կյանքի գրքում են» (Փիլիպպեցիս 4.3): Դանիելը, դարերի խորքից տեսնելով «նեղության ժամանակը, որպիսին եղած չէ», հռչակում է, որ Աստծո ժողովրդից փրկվելու է «ամեն ոք, ով որ գտնվի գրքում գրված»: Եվ Հայտնության հեղինակն էլ ասում է, որ քաղաքը կմտնեն միայն նրանք, ում անունները «գրված են Գառան կյանքի գրքի մեջ» (Դանիել 12.1, Հայտնություն 21.27):

Աստժո առջև գրվում է նաև «հիշատակի գիրք», որի մեջ արձա-նագրվում են «Տիրոջից վախեցողների... և նրա անունը պատվական համարողների» բարի գործերը: (Մադաբիա 3.16): Նրանց հավատի խոսքերն ու սիրո գործերը գրառված են երկնքում: Հենց դա նկատի ունեն Նեեմիան՝ ասելով. «Ով Աստված իմ, հիշիր ինձ... և մի ջնջիր իմ բա-րեգործությունները, որ արեցի իմ Աստժո տանը» (Նեեմիա 13.14): Աստժո հիշատակի գրքում

հավերժացված է
յուրաքանչյուր արդար գործ:
Այնտեղ ճշտորեն նշված է ամեն
մի դիմակայված փորձություն,
ամեն մի հաղթված չարիք և
քնքուշ կարեկցանքի ամեն մի
խոսք, ինչպես նաև ամեն մի
զոհաբերություն, հանուն
Քրիստոսի կրած ամեն մի
տառապանք և վիշտ:
Սաղմոսերգուն ասում է. «Իմ
թափառելը դու հաշվում ես, իմ
արտասուքները դիր քո անոթի
մեջ, ահա նրանք քո գրքում են»
(Սաղմոս 56.8):

Կա նաև մարդկանց մեղքերի
գիրք: «Որովհետև Աստված
ամեն գործ բերելու է
դատաստան, ամեն ծածուկ
բանի հետ՝ թե՛ բարի, թե՛ չար»:
«Ամեն դատարկ խոսքի համար,
որ մարդիկ խոսեն,
դատաստանի օրը հաշիվ պիտի
տան»: Փրկիչն ասում է. «Քո
խոսքից կարդարանաս և քո
խոսքից կդատապարտվես»
(Ժողովող 12.14, Մատթեոս
12.36, 37): Անսխալ
գրառումները կբացահայտեն
գաղտնի նպատակներն ու
դրդումները, քանի որ Աստված
«խավարի ծածուկ բաները ի

լույս է բերելու և հայտնելու է սրտերի խորհուրդները» (Ա Կորթնացիս 4.5): «Ահա գրված են իմ առաջ... ձեր անօրենությունները և ձեր հայրերի անօրենությունները մեկտեղ, ասում է Տերը» (Եսայիա 65.6,7): [482]

Յուրաքանչյուր մարդու գործ ստուգվում է Աստծո առջև և գրառվում որպես հավատարիմ կամ անհավատարիմ: Երկնային գրքերում ամեն մի անվան դիմաց մեծագույն ճշգրտությամբ նշված է ամեն մի վատ խոսք, եսասիրական

արարք, չկատարած
պարտականություն և ամեն մի
գաղտնի մեղք, որքան էլ
վարպետորեն այն քողարկված
լինի: Երկնքից ուղարկված
Նախագգուշացումների կամ
հանդիմանությունների
արհա-մարիումը, անիմաստ
վատնած ժամանակը,
չօգտագործված
հնարավոր-րությունները, բարի
կամ չար ազդեցությունն՝ իր
հեռահար հետևանքներով. այս
ամենը ստուգապես
ժամանակագրում է գրանցող
հրեշտակը:

Աստծո օրենքն է այն
չափանիշը, որով դատի
ժամանակ ստուգվելու են
մարդկանց բնավորությունն ու
կյանքը: Իմաստունն ասում է.
«Աստծուց վախեցիր և նրա
պատվիրանները պահիր,
որովհետեւ սա է ամեն բան
մարդու համար: Որովհետեւ
Աստված ամեն գործ բերելու է
դատաստան» (Ժողովող
12.13,14): Հակոբոս առաքյալն
իր եղբայրներին հորդորում է.
«Այնպես խոսեցեք և այնպես
գործեցեք, որպես թե
ազատության օրենքով եք
դատվելու» (Հակոբոս 2.12):

Նրանք, ովքեր դատի ժամանակ
«արժանի կհամարվեն», կելնեն
արդարների հարուժյան
ժամանակ: Հիսուսն ասել է.
«Նրանք, ովքեր արժանի լինեն
այն աշխարհին հասնելու և
մեռելներից հարուժյուն
առ-նելու... հրեշտակներին
հավասար են և Աստծո
որդիներ՝ հարուժյան որդիներ
լինելով» (Ղուկաս 20.35, 36): Եվ
դարձյալ ասում է, որ «նրանք,
ովքեր բարիք են գործել», դուրս
կգան դեպի «կյանքի
հարուժյունը» (Հովհաննես
5.29): Արդար մեռյալները

հարուժյուն չեն առնելու, մինչև
դատը չվերջանա, երբ նրանք
արժանի կհամարվեն կյանքի
հարուժյանը: Յետևաբար
նրանք անձամբ ներկա չեն լինի
դատին, երբ քննվեն նրանց
գործերը, և վճռվի նրանց
ճակատագիրը:

Յիսուսը հանդես կգա որպես
նրանց դատապաշտպան՝
բարեխոսելու նրանց համար
Աստծո առջև: «Եթե մեկը
մեղանջի, բարեխոս ունենք Յոր
մոտ՝ Յիսուս Բրիստոս
արդարին» (Ա Յովհաննես 2.1):
«Քանզի ոչ թե ձեռագործ

սրբատեղերը մտավ Քրիստոսը,
որ ճշմարտի օրինակներն էին,
այլ բուն իսկ երկինքը, որպեսզի
մեզ համար ներկայանա Աստծո
առջև»: «Ուստի և բուրորովին
կարող է փրկել նրանց, որ
նրանով մոտենում են Աստծուն,
որովհետև միշտ կենդանի է,
որպեսզի նրանց համար
բա-րեխոսի» (Եբրայեցիս 9.24,
7.25): [483]

Երբ դատի ժամանակ բացվում
են գրքերը, բուրորի կյանքը,
ովքեր հավատացել են
Հիսուսին, հայտնվում է Աստծո
առջև: Սկսած երկրի առաջին

քնակիչներից՝ մեր Բարեխոսը
սերնդից սերունդ
ներկայացնում է
յուրաքանչյուրի գործը՝ վերջում
ներկայացնելով կենդանի
արդարներիս: Հիշատակվում է
յուրաքանչյուրի անունը,
յուրաքանչյուր գործ ուշադիր
քննվում է: Ոմանց անուններն
ընդունվում են, մյուսներինը՝
մերժվում: Եթե ինչ-որ մեկի
անվան դիմաց գրքերում
չապաշխարած և չներված
մեղքեր լինեն, նրա անունը
կջնջվի կյանքի գրքից, իսկ նրա
բարի գործերի
արձանագրությունը՝ Աստծո

հիշատակի գրքից: Տերն ասաց
Մովսեսին. «Ով որ ինձ դեմ
մեղանջել է, ես նրան կջնջեմ իմ
գրքից» (Ելից 32.33): Եզեկիել
մարգարեն էլ ասում է. «Եթե
արդարը ետ դասնա իր
ար-դարությունից և
անօրենությունն անի... նրա
արած բոլոր արդարությունը
պիտի չհիշվի» (Եզեկիել 18.24):

Ովքեր իսկապես ապաշխարել
են և քրիստոսի արյունը
հավատով ընդունել՝ որպես
իրենց քավչաւրար զոհ,
երկնային գրքերում նրանց
ան-վան դիմաց նշվում է, որ

Նրանք ներված են: Քանի որ
նրանք ձեռք են բերել Քրիստոսի
արդարությունը, և նրանց
բնավորությունը ներդաշնակ է
Աստծո օրենքին, նրանց
մեղքերը կջնջվեն, և նրանք
արժանի կհամարվեն
հավիտենական կյանքի: Տերը
Եսայիա մարգարտի միջոցով
ասում է. «Ես՝ ես ինքս եմ
ջնջում քո հանցանքները իմ
պատճառով և քո մեղքերը չեմ
հիշում» (Եսայիա 43.25):
Հիսուսն ասել է. «Ով որ
հաղթում է, նա սպիտակ
հանդերձներ կհագնի, և նրա
անունը կյանքի գրքից չեմ ջնջի,

և կոփավանեմ նրա անուկը իմ
Յոր առաջ և նրա հրեշտակների
առաջ»: «Արդ՝ ով որ ինձ
մարդկանց առաջ դավանի, ես
եւ նրան կոփավանեմ իմ Յոր
առաջ, որ երկնքում է: Եվ ով որ
ինձ ուրանա մարդկանց առաջ,
ես եւ նրան կուրանամ իմ Յոր
առաջ, որ երկնքում է»
(Յայտնութիւն 3.5, Մատթ—
թեոս 10.32, 33):

Մարդկանց ամենախոր
հետաքրքրութիւնը երկրային
դատարան-ների վճիռների
հանդէպ ընդամենը թույլ
արտացոլումն է այն

հետաքրքրության, [484] որ
ցուցաբերվում է երկնային
արքունիքում, երբ կյանքի
գրքում նշված անունները
հայտնվում են ամբողջ երկրի
Դատավորի առաջ:
Աստվածային Բարեխոսը
խնդրում է, որ բոլոր նրանք,
ովքեր հաղթել են՝ հավատալով
Իր արյանը, մեղքերի
թողութուն ստանան,
վերադառնան իրենց
եդեմական տունը և
թագադրվեն՝ Իր հետ միասին
ժառանգելով «նախկին
իշխանությունը» (Միքիա 4.8):
Մարդկային ցեղը խաբելու և

գայթակղեցնելու իր ջանքերով
սատանան որոշել էր
խանգարել մարդու արարման
աստվածային ծրագիրը, բայց
Քրիստոսն այժմ խնդրում է, որ
այս ծրագիրն իրականացվի
այնպես, ասես մարդը երբեք չի
մեղանջել: Նա իր ժողովրդի
համար ոչ միայն լիակատար
ներում և արդարացում է
խնդրում, այլև իր փառքն ու իր
գահը կիսելու իրավունքը:

Մինչ Յիսուսը բարեխոսում է իր
շնորհն ընդունողների համար,
սա-տանան Աստծո առջև
չարախոսում է նրանց մասին՝

որպես օրինա-զանցների: Մեծ
խաբեքան ձգտել էր նրանց
կասկածների մեջ գցել, դրդել
նրանց կորցնել իրենց
վստահությունն առ Աստված,
բաժանվել Աստծո սիրուց և
խախտել Նրա օրենքը: Իսկ
հիմա նա ցույց է տալիս
նրրանց կյանքի
արձանագրությունը, նրանց
բնավորության արատները և
այն, որ նման չեն Քրիստոսին,
ինչը պատվազրկել է իրենց
Փրկչին, նա մատնանշում է այն
մեղքերը, որ իր իսկ
գայթակղությանը նրանք
գործել են, և պահանջում է, որ

Նրանք իրեն տրվեն որպես իր հպատակներ:

Հիսուսը չի արդարացնում
Նրանց մեղքերը, բայց ցույց է
տալիս նը-րանց
ապաշխարությունն ու
հավատը, և ներում խնդրելով
Նրանց համար՝ Նա իր վիրավոր
ձեռքերը բարձրացնում է Աստծո
և սուրբ հրեշտակների առաջ՝
ասելով. «Ես նրանց գիտեմ
անունով: Ես իմ ձեռքերի մեջ եմ
վարագրել նրանց»: «Աստծո
պատարագները կոտրված
հոգին է. կոտրված ու փշրված
սիրտը դու չես անարգի, ով

Աստված» (Սաղմոս 51.17): Իսկ
Իր ժողովրդի չարախոսին Նա
ասում է. «Տերը քեզ
հանդիմանի, ով սատանա,
Տերը քեզ հանդիմանի, որ
ընտրել է Երուսաղեմը, մի՞թե
Նա կրակից ազատված խանձող
չէ» (Չաքարիա 3.2): Բրիստոսն
Իր նվիրյալներին Իր
արդարությունն է հազցնելու՝
Նրանց Իր Յորը ներկայացնելու՝
որպես «փառավոր եկեղեցի,
որը չունենա ոչ մի արատ կամ
աղտեղու- թյուն կամ նման
բան» (Եփեսացիս 5.27): Նրանց
անունները գրված են մտում
կյանքի գրքում, և նրանց

վերաբերյալ այնտեղ գրվում է.
«Նրանք սպիտակներով ման
կգան ինձ հետ, որովհետև
արժանի են» (Յայտնություն
3.4): [485]

Այսպիսով, լիակատար չափով
կիրականանա նոր ուխտի այս
խոստումը. «Ես պիտի ներեմ
նրանց անօրենությունը և
նրանց մեղքերն այ-լևս պիտի
չհիշեմ»: «Այն օրերին և այն
ժամանակ, ասում է Տերը,
Իսրայելի անօրենությունը
կորոնվի, բայց պիտի չփնի նա,
և Յուդայի մեղքերը, բայց պիտի
չգտնվեն» (Երեմիա 31.34,

50.20): «Այն օրը Տիրոջ
շառավիղը գեղեցիկ և
փառավոր կլինի, իսկ երկրի
պտուղը պարծանք ու պատիվ
կլինի իսրայելի փրկվածների
համար: Եվ այնպես պիտի լինի,
որ Սիոնում մնացածը և
Երուսաղեմի մնացորդը սուրբ
պիտի կոչվեն, ամենքը, որ
գրված են կյանքի համար
Երուսաղեմում» (Եսայիա 4.2,3):

Դատաքննության գործը և
մեղքերի ջնջումը կատարվելու
են Տիրոջ երկրորդ գալուստից
առաջ: Քանի որ մեռյալները
դատվելու են գրքերում

գրվածների համաձայն,
անհնար է, որ մարդկանց
մեղքերը ջնջվեն նախ-քան
դատի ավարտը, որի ժամանակ
պետք է քննվեն նրանց
գործերը: Պետրոս առաքյալը
հստակորեն նշում է, որ
հավատացյալների մեղքերը
կջնջվեն, երբ «Տիրոջ երեսից
հանգստանալու ժամանակները
գան, և նա ուղարկի... Հիսուս
Քրիստոսին» (Գործք 3.19, 20):
Երբ դատաքննությունն
ավարտվի, Քրիստոսը կգա՝ իր
վարձքը իր հետ՝ հատուցելու
ամեն մեկին իր գործերի
համեմատ:

Խորհրդանշական
ծառայութեան մեջ
քահանայապետը Իսրայելի
համար քավութիւն անելուց
հետո դուրս էր գալիս և օրհնում
համայնքը: Այդպէս էլ
Քրիստոսը, ավարտելով Իր
միջնորդական ծառայութիւնը,
կհայտնվի «առանց մեղքի...
փրկութեան համար»
(Եբրայեցիս 9.28), որպէսզի Իր
ժողովրդին օրհնի
հավիտենական կյանքով:
Ինչպէս որ սրբարանից
հեռացնելով մեղքերը՝
քահանան խոստովանում էր

դրանք արձակման նոխազի գլխին, այդպես էլ Քրիստոսն այս բոլոր մեղքերը դնելու է սատանայի՝ մեղքի սկզբնաղբյուրի և սադրիչի վրա: Եվ ինչպես արձակման նոխազը, կրելով Իսրայելի մեղքերը, տարվում էր «մի անբնակ երկիր» (Ղևտացոց 16.22), այդպես էլ սատանան, կրելով այն բոլոր մեղքերի պատիժը, որոնք հենց ինքն է դրդել Աստծո ժողովրդին գործելու, հազար տարի պետք է բանտարկված մնա երկրի վրա, որն այդ ժամանակ ամայի ու անբնակ է լինելու, և վերջապես

նա [486] մեղքի լիարժեք
պատիժը կկրի այն բոցերի մեջ,
որոնք ոչնչացնելու են բոլոր
ամբարիշտներին: Այսպիսով,
փրկութեան մեծ ծրագիրն իր
վերջնական իրականացմանը
կհասնի մեղքի լիակատար
բնաջնջումով և բոլոր նրանց
ազատագրումով, ովքեր
կամեցել են հրաժարվել չարից:

Դատաստանի համար
նշանակված ժամին՝ 1844-ին.
երբ լրացան 2300 օրերը,
սկսվեց դատաքննության և
մեղքերի հեռացման գործը:
Բոլոր նրանք, ովքեր երբևէ կրել

են Քրիստոսի անունը, պետք է մանրագնին քննության ենթարկվեն: Եվ՝ ողջերը, և՛ մեռյալները դատվելու են «այն գրքերում գրվածներից՝ իրենց գործերի համեմատ»:

Չապաշխարած և չթողնված մեղքերը չեն ներվելու և չեն ջնջվելու գրքերից, այլ մնալու են, որպեսզի Աստծո օրը վկայեն մեղավորի դեմ: Անկախ նրանից՝ օրըցերեկով է նա գործելի չար արարքները, թե գիշերվա խավարում, դրանք պարզորոշ հայտնվում են Նրա առջև, ով պետք է դատի մեզ:

Աստժո հրեշտակները տեսել են
ամեն մի մեղք և ճշգրտորեն
գրանցել դրանք: Մեղքը կարելի
է թաքցնել, ժխտել, ծածկել
հորից, մորից, կնոջից,
երեխաներից և ընկերներից, և,
հնարավոր է, որ հանցավորից
բացի՝ ուրիշ ոչ մեկը չիմանա և
անգամ չկասկածի դրա մասին,
բայց այն մերկացված է
երկնաբնականների առջև: Ոչ
ամենախավար գիշերը, ոչ էլ
ամենախաբուսիկ հնարքը չեն
կարող մեկ միտք անգամ
թաքցնել Չավերժականից:
Աստժո մոտ ստույգ գրանցված
է ամեն մի անարդարութուն և

ամեն մի անազնիվ գործարք:
Նրան հնարավոր չէ խաբել
բարեպաշտ կերպարանքով:
Բնավորությունը գնահատեցիս
Նա սխալներ թույլ չի տալիս:
Սրտով ապականվածները
գուցե կարողանան խաբել
մարդկանց, բայց Աստված
պատռում է բոլոր դիմակներն
ու կարդում ներքին կյանքը:

Ինչպիսի՞ հանդիսավոր միտք:
Օրը օրին հաջորդելով
հավերժության գիրկն է
անցնում՝ տանելով իր
արձանագրությունները
երկնային գրքերի համար:

Չնարավոր չէ հետ կանչել մեկ
անգամ ասված խոսքը կամ մեկ
անգամ գործված արարքը:
Չրեշտակներն արձանագրել են
թե՛ բարին, թե՛ չարը: Երկրի
ամենահզոր նվաճողն անգամ
չի կարող փոխել գեթ մեկ օրվա
արձանագրությունը: Մեր
գործերը, խոսքերը և նույնիսկ
ամենա-գաղտնի դրոշմները
վճռելու են մեր ճակատագիրը՝
կամ ի բարին, կամ մի չարը:
Թեև մոռացած էլ փնտնեք այդ
ամենը, [487] դրանք իրենց
վկա-յությունն են տալու կամ
մեզ արդարացնելու, կամ
դատապարտելու հա-մար:

Ինչպես մարդու դիմագծերն են
ճշտորեն պատկերվում նկարչի
կտա-վի վրա, այնպես էլ
բնավորությունն է ճշգրտորեն
արտացոլվում երկնային
գրքերում: Սակայն որքա՛ն քիչ
անհանգստություն է զգացվում
այն գրառումների վերաբերյալ,
որոնց վրա կանգ է առնելու
երկնային և ակների հայացքը:
Եթե մի կողմ տարվեր
տեսանեփ աշխարհն
անտեսանելիից բաժանող
վարագույրը, և մարդկանց
որդիները տեսնեին այն
հրեշտակին, որը գրի է առնում

ամեն մի խոսք և գործ, որոնք
նրանց առջե դարձյալ կեբեան
դատաստանի օրը, որքա՛ն շատ
խոսքեր չէին արտասանվի, և
որքա՛ն արարքներ թույլ չէին
տրվի:

Դատի ժամանակ մանրագնին
քննության է ենթարկվելու
յուրա-քանչյուր տաղանդի
օգտագործումը: Ինչպե՛ս ենք
մենք տնօրինել երկնքի կողմից
մեզ վստահված ունեցվածքը:
Իր գալստյան ժամանակ Տերը
կստանա՞ արդյոք իրենը
շահույթով: Մեզ վստահված
մտավոր, ֆիզիկական և

բարոյական ուժերը գործածել
ենք արդյոք Աստծո փառքի և
աշխարհի օրհնութեան համար:
Ինչպե՞ս ենք օգտագործել մեր
ժամանակը, մեր գրիչը, մեր
ձայնը, մեր դրամն ու մեր
ազդեցութիւնը: Ի՞նչ ենք արել
Քրիստոսի համար՝ հանձնիս
աղքատների, տառապյալների,
որբերի կամ այրիների:
Աստված մեզ իր սուրբ խոսքի
պահապաններն է դարձրել,
ինչպե՞ս ենք վարվել այն լույսի
և ճշմարտութեան հետ, որոնք
մեզ են տրվել, որպեսզի
մարդկանց իմաստուն անենք
փրկութեան համար: Միայն

Խոսքով Քրիստոս դավանելուն
ոչ մի արժեք չի տրվում:
Գնահատվում է միայն
գործերով ցույց տրված սերը:
Եվ հենց սերն է միայն, որ
ցանկացած գործ արժեքավոր է
դարձնում երկնքի աչքերում:
Այն, ինչ արվում է սիրուց
դրդված, որքան էլ աննշան
թվա մարդկանց, հաճո է և
Աստծուն և վարձատրվում է
Նրա կողմից:

Մարդկանց ծածուկ
եսասիրությունը մերկացված է
երկնային գրքե-րում: Այնտեղ
նշված են նրանց չկատարած

պարտքն իրենց մերձավոր-ների
հանդեպ, Փրկչի պահանջների
մոռացությունը: Այնտեղ նրանք
կտեսնեն, թե որքան հաճախ են
սատանային նվիրել իրենց
ժամանակը, մտքերը և ուժը, որ
պատկանում են Զրիստոսին:
Տխուր է արձանագրու-թյունը,
որը հրեշտակները տանում են
երկինք: Մտավորականները,
Զրիստոսի հետևորդներ
կոչվածները կլանված են
աշխարհային բարիքներ ձեռք
բերելով կամ երկրային
հաճույքներ վայելելով: Դրամբ,
ժամանակը և ուժերը
զոհաբերվում են

ցուցամուկությանն ու [488]
ցանկամուկությանը, իսկ որքա՛ն
քիչ պահեր են նվիրվում
աղոթքին, Մուրբ Գրքի
սերտողությանը, հոգու
խոնարհեցմանն ու մեղքերի
խոստովանությանը:

Մատանան անհամար
հնարքներ է հորինում մեր
միտքը զբաղեց-նելու համար,
որպեսզի մենք ժամանակ
չունենանք խորհելու մեր
կոչումի և այն գործի մասին,
որին պետք է լավագույնս
ծանոթ փնենք: Վաղեմի
խաբեքան ասում է այն մեծ

ճշմարտությունները, որոնք
բացահայտում են քաղչարար
զոհն ու ամենագոր Միջնորդին:
Նա գիտի, որ իր համար ամեն
ինչ կախված է Յիսուսից և Նրա
ճշմարտությունից մարդկանց
մտքերը շեղելուց:

Նրանք, ովքեր կամենում են
օրհնվել Փրկչի
միջնորդությունից, չպիտի թույլ
տան, որ որևէ բան խանգարի
սրբությունը Աստծո ահով
գործելու՝ իրենց
պարտականությանը:
Յաճույքին, ցուցամուլությանը
կամ շահամուլությանը

Նվիրվելու փոխարեն՝
թանկագին ժամերը պետք է
հատկացվեն ճշմարտության
խոսքի լուրջ, աղոթքային
ուսումնասիրությանը:
Սրբարանի և դատաքնության
թեման պետք է պարզորոշ
հասկացվի Աստծո ժողովրդի
կողմից: Բոլորը կարիք ունեն
անձամբ իմանալու իրենց մեծ
Քահանայապետի դիրքն ու
ծառայությունը, այլա-պես
նրանք անկարող կլինեն
զարգացնել հավատը, որն
անհրաժեշտ է մեր օրերում,
կամ զբաղեցնել այն դիրքը, որն
Աստված նախատեսել է իրենց

համար: Ամեն մեկն անձամբ է
որոշելու՝ փրկել կամ կորցնել իր
հոգին: Ամեն մեկի գործը
սպասում է Աստծո
դատավճռին: Ամեն ոք
դեմառդեմ պիտի հանդիպի մեծ
Դատավորին: Ուրեմն որքա՛ն
կարևոր է, որ ամեն մարդ
հաճախ խորհրդածի
դատաստանի այն ահեղ
պահերի մասին, երբ ատյանը
նստում է, և գրքերը բացվում
են, երբ Դանիելի հետ միասին
ամեն անհատ պետք է ընդունի
իր վիճակը օրերի վերջում:

Բոլոր նրանք, ովքեր հասկացել են այս կենսական հարցերը, պետք է հռչակեն այն մեծ ճշմարտությունները, որ Աստված վստահել է իրենց: Երկնային սրբարանը մարդու փրկության համար Քրիստոսի ծառայության կենտրոնն է, և վերաբերում է երկրում ապրող յուրաքանչյուր անձի: Այն բացահայտում է փրկության ծրագիրը՝ մեզ բերելով ընդհուպ մինչև ժամանակի վերջը և հայտնելով արդարության ու մեղքի միջև ընթացող պայքարի հաղթական ելքը: Ծայրաստիճան կարևոր է, որ

բոլորը խորապես քննեն այս
հարցերը, որպեսզի
կարողանան պա-տասխանել
[489] բոլոր նրանց, ովքեր
կհարցնեն իրենցում եղած
հոլյսի մասին:

Քրիստոսի բարեխոսությունը
մարդու համար վերին
սրբարանում նույնքան էական
է փրկության ծրագրում, որքան
Նրա մահը խաչի վրա: Իր
մահով Նա սկսեց այն գործը,
որն իր հարությունից հետո Նա
գնաց ավարտելու երկնքում:
Մենք պետք է հավատով
մտնենք «վարագույրի ներսի

Կողմը, ուր որ մեզ համար
առաջնորդ մտավ Յիսուսը»
(Եբրայեցիս 6.20): Այնտեղ
արտացոլվում է Գողգոթայի
խաչից ճառագող լույսը:
Այն-տեղ մենք կարող ենք
ավելի խորը ներթափանցել
փրկության գաղտ-նիքների
մեջ: Մարդու փրկության
համար երկինքը անսահման
թանկ գին է վճարել, բերված
զոհը համարժեք է Աստծո
ոտնահարված օրենքի
ամենախոր պահանջներին:
Յիսուսը ճամփա է բացել դեպի
Յոր գահը, և Նրա
միջնորդությամբ բոլորի

Նվիրական ցանկությունները,
ովքեր Նրա մոտ են գալիս
հավատով, կարող են
ներկայացվել Աստծուն:

«Իր հանցանքը ծածկողը
հաջողութուն չի ունենա, բայց
խոստովանողը և թողնողը
ողորմության կգտնի» (Առակաց
28.13): Եթե նրանք, ովքեր
արդարացնում և թաքցնում են
իրենց մեղքերը, կարողանային
տեսնել, թե ինչպես է
սատանան ցնծում իրենց վրա,
ինչպես է նա ծաղ-րում
Քրիստոսին և սուրբ
հրեշտակներին իրենց

պատճառով, ապա կշտապեին
խոստովանել իրենց մեղքերն ու
թողնել դրանք: Բնավո-րության
թերությունների միջոցով
սատանան ջանում է վերահսկել
մար-դու ողջ միտքը, և նա
գիտի, որ եթե այդ արատները
փայփայվեն, ինքը
հաջողության է հասնելու: Այդ
իսկ պատճառով նա մշտապես
Քրիստոսի հետևորդներին
խաբեությամբ ձգտում է
ներշնչել, թե նրանք երբեք չեն
կարող հաղթել: Բայց Յիսուսը
հանուն նրանց պարզում է իր
վիրավոր ձեռքերը, ցույց է
տալիս իր խոցված մարմինը և

հավաստիացնում բռնորին,
ովքեր ուզում են հետեւի իրեն.
«Բավական է քեզ իմ շնորհը» (Բ
Կորնթացիս 12.9): «Ձեր վրա
սաեք իմ լուծը և ինձանից
սովորեք, որովհետեւ ես հեզ եմ և
սրտով խոնարհ, և ձեր անձերի
համար հանգիստ կգտնեք:
Որովհետև իմ լուծը քաղցր է, և
իմ բեռը՝ թեթև» (Մատթեոս
11.29, 30): Ուրեմն թող ոչ ոք
անոպղեփ չհամարի իր
արատները: Աստված հավատ և
շնորհ կտա՝ հաղթահարելու
դրանք:

Մենք հիմա ապրում ենք
քավության մեծ օրը:
Խորհրդանշական
ծառայության մեջ, մինչ
քահանայապետը [490]
քավություն էր անում Իսրայելի
համար, բոլորից պահանջվում
էր խոնարհեցնել իրենց
հոգիները՝ ապաշխարելով
մեղքից ու խոնարհվելով Տիրոջ
առաջ, որպեսզի չկորչեին
ժողովրդի միջից: Նմանապես էլ
բոլորը, ովքեր կամենում են, որ
իրենց անուկները մնան կյանքի
գրքում, պետք է հիմա՝ իրենց
փորձնական ժամկետի մնացած
մի քանի օրվա ընթացքում,

իրենց անձերը խոնարհեցնեն
Աստծո առջե՝ տրտմելով մեղքի
համար և անկեղծորեն
ապաշխարելով: Պետք է
խորապես քննել սիրտը:
Թեթևամիտ, անլուրջ ոգին, որը
փայփայվում է շատ քրիստոնյա
կոչեցյալների կողմից, մի կողմ
պետք է դրվի: Բոլորին, ովքեր
կամենում են հաղթել գլուխ
բարձրացնող չար հակումները,
լուրջ պայքար է սպասվում:
Պատրաստությունն
անհատական գործ է: Մենք
չենք փրկվում խմբերով: Մեկի
մաքրությունն ու նվիրումը չեն
կարող լրացնել հատկանիշների

պակասը մյուսի մոտ: Թեև
բոլոր ազգերը պիտի կանգնեն
Աստծո ատյանի առջև, սակայն
Նա յուրաքանչյուր անհատի
գործն այնպես է քննելու,
կարծես նրանից բացի՝ ուրիշ ոչ
ոք չի եղել երկրի վրա: Ամեն
մեկը պիտի քննվի և գտնվի
առանց բժի, արատի, կամ որևէ
նման բանի:

Հանդիսավոր են քավության
եզրափակիչ գործի հետ
կապված տեսարանները, իսկ
դրա որոշումները՝
ծայրաստիճան կարևոր: Հիմա
վե-րին սրբարանում

դատավարութեան է տեղի
ունենում: Արդէն շատ
տա-րիներ այն ընթացքի մեջ է:
Շուտով, ոչ ոք ստույգ չգիտի,
թե երբ, դատը կսկսի կենդանի
մարդկանց գործերի
քննութիւնը: Աստժո
ահասարսուռ ներկայութեամբ
պիտի ստուգվի մեր կյանքի
արձանագրութիւնը: Այժմ
ավելի քան երբեք
յուրաքանչյուր ոք պետք է
ականջ դնի Փրկչի հետևյալ
հորդորին. «Արթուն կացեք և
աղոթք արեք, որովհետև
չգիտեք, թե ժամանակը երբ է»
(Մարկոս 13.33): «Ապա թե

չարթնանաս, ես կգամ քեզ վրա
գողի պես, և չես իմանա, թե որ
ժամին քեզ մոտ կգամ»
(Հայտնություն 3.3):

Երբ դատաքննությունն
ավարտվի, յուրաքանչյուրի
ճակատագիրն արդեն վճռված
կլինի՝ կամ դեպի կյանք, կամ
դեպի մահ: Փորձնական
ժամկետն ավարտվելու է
երկնքի ամպերով Տիրոջ
գալուստից կարճ ժամանակ
առաջ: Հայտնության մեջ
Քրիստոսն այդ ժամանակի
վերաբե-րյալ ասում է.
«Անիրավություն գործողը թող

Է՛լ անհրապանա, և կեղտոտը
թող էլ կեղտոտվի, իսկ արդարը
թող էլ արդարանա, և սուրբը
[491] թող է՛լ սրբվի: Ահա
շուտով գալիս եմ, և իմ վարձն
ինձ հետ է, որ ամեն մեկին
հատուցեմ իր գործի համեմատ»
(Յայտնություն 22.11,12):

Արդարներն ու ամբարիշտները
դեռ ապրելիս կլինեն երկրի վրա
իրենց մահկանացու մարմնով,
մարդիկ կտնկեն ու կշինեն,
կուտեն ու կխամեն՝ բոլորովին
անտեղյակ, որ երկնային
սրբարանում վերջնական ու
անդառնալի որոշում է

կայացվել: Ջրհեղեղից առաջ,
երբ Նոյը մտավ տա-պան,
Աստված նրա հետևից դուռը
փակեց, իսկ ամբարիշտները
մնացին դրսում: Բայց դեռ յոթ
օր շարունակ մարդիկ,
չիմանալով, որ իրենց բախտն
արդեն վճռված է, շարունակում
էին իրենց անհոգ, զվարճասեր
կյանքը՝ ծաղրի ենթարկելով
վերահաս դատաստանի
վերաբերյալ նա-խազգուշացում
Սերը: «Այդպես էլ,— ասում է
Փրկիչը,— կլինի նաև մարդի
Որդու գալուստը» (Մատթեոս
24.39): Կեսգիշերվա գողի պես
անձայն ու աննկատ կգա այն

վճռորոշ պահը, երբ ընդմիջտ
կորոշվի յուրաքանչյուր մարդու
ճակատագիրը, և
հանցավորները
վերջնականապես կգրկվեն
իրենց առաջարկվող
տրտմությունից:

«Արդ՝ արթուն կացեք...
որպեսզի չփնի, թե հանկարծ
գալով՝ ձեզ քնած գտնի»
(Մատթեոս 13.35, 36):

Վտանգավոր է նրանց վիճակը,
ովքեր վերադառնում են
աշխարհի
գայթակղությունների՝
հոգնելով արթուն մնալուց:

Մինչ գործարար մարդը
կլանված կլինի հարստության
կուտակմամբ, զվարճասերը՝
հաճույքներ որոնելով, իսկ
նորաձևության դուստրն՝ իր
զարդերը կարգի բերելով, նույն
ժամին, հնարավոր է, որ
ամբողջ երկրի Դատավորը
հռչակի հետևյալ դատավճիռը.
«Կշռվեցիր կշեռքով և պակաս
գտնվեցիր» (Դանիել 5.27):

ԳԼՈՒԽ 29—ՉԱՐԻ ԿԱԳՈՒՄԸ

Մեղքի ծագումն ու դրա
գոյության պատճառը շատերին
տարակուսանքի մեջ են գցում:
Տեսնելով տիրող չարիքն իր
սուկալի հետևանքներով՝
աղետներով ու
ավերածությունք, նրանց մեջ
հարց է ծագում, թե ինչպե՞ս
կարող է այս ամենը գոյություն
ունենալ Մեկի
գերիշխանության ներքո, ով
անսահման է իմաստությամբ,
զորությամբ ու սիրով: Սա մի
գաղտնիք է, որը նրանք
անկարող են բացատրել:

Անորոշութեան ու կասկածների
մեջ՝ նրանք չեն տեսնում այն
ճշմարտութիւնները, որոնք
հստակորէն բացահայտված են
Աստծո խոսքում և անհրաժեշտ
են փրկութեան համար: Ոմանք
մեղքի գոյութեան վերաբերյալ
իրենց որոնումներում ջանում
են թափանցել այն հարցերի
մեջ, որոնք Աստված երբեք չի
բացահայտել, և պատասխան
չգտնելով, հակված կասկածելու
և առարկելու՝ նրանք
արդարացնում են Սուրբ Գրքի
իրենց մերժումը: Մյուսներն էլ
չեն կարողանում ինչպէս
հարկն է հասկանալ չարի

ծագման մեծ խնդիրը, քանի որ
ավանդույթն ու սխալ
մեկնաբանությունն աղավաղել
են Աստծո բնավորության, Նրա
կառավարման բնույթի և մեղքի
հանդեպ Նրա վերաբերմունքի
մասին Աստվածաշնչի
ուսմունքը:

Չնարավոր չէ այնպես
բացատրել մեղքի ծագումը, որ
պարզվի Նրա գոյության
պատճառը: Սակայն ինչպես
մեղքի ծագման, այնպես էլ Նրա
վերջնական բնաջնջման խնդրի
վերաբերյալ կարելի է
բավարար գի-տություն ձեռք

բերել, որպեսզի բացահայտվի
մեղքի հանդեպ Աստծո
վերաբերմունքի ողջ
արդարացիությունն ու
գթասրտությունը: Ոչինչ
այն-քան պարզորոշ
բացատրված [493] չէ Սուրբ
Գրքում, որքան այն, որ
Աստված ոչ մի կերպ
պատասխանատու չէ մեղքի
ծագման համար, որ Նա
քմահաճորեն չի հեռացրել Իր
շնորհը, չի եղել որևէ
թերություն Նրա կառավարման
մեջ, որ ապստամբության առիթ
ստեղծեր: Մեղքը անկոչ հյուր է,
որի ներկայությունը հնարավոր

չԷ բացատրել: Այն
խորհրդավոր է, անբացատրելի:
Արդարացնել մեղքը՝
նշանակում է պաշտպանել այն:
Եթե դրա համար արդարացում
գտնվեր կամ հնարավոր լիներ
ցույց տալ դրա գոյության
պատճառը, ապա այն
կդադարեր մեղք փնելուց:
Մեղքի միակ սահմանումը
տրված է մեզ Աստծո խոսքում,
այն «անօրենություն» է: Դա մի
սկզբունք է՝ հակառակ սիրո մեծ
օրենքին, որն աստվածային
կառավարության հիմքն է:

Նախքան չարի ծագումը
ամբողջ տիեզերքում
խաղաղություն և
ուրախություն էր տիրում: Ամեն
ինչ կատարելապես
ներդաշնակ էր Արարչի
կամքին: Սերն Աստծո հանդեպ
գերիշխող էր, սերն իրար
հան-դեպ՝ անկողմնակալ:
Քրիստոսը՝ Բանը, Աստծո
Միածինը, որ մեկ էր
հավերժական Յոր հետ՝ մեկ էր
բնությամբ, բնավորությամբ ու
նպա-տակներով, միակն էր ողջ
տիեզերքում, ով կարող էր
իմանալ Աստծո բոլոր
խորհուրդներն ու

մտահղացումները: Քրիստոսի միջոցով էր Յայրը ստեղծել երկնային բոլոր էակներին: «Նրանով ստեղծվեց այն ամենը, ինչ որ երկնքում է և երկրի վրա... թե՛ գահեր, թե՛ տիրություններ, թե պե-տություններ, թե իշխանություններ» (Կողոսացիս 1.16), և ամբողջ երկինքը հնազանդ էր Քրիստոսին, ինչպես Յորը:

Սիրո օրենքը Աստծո կառավարության հիմքն էր, և ստեղծված բոլոր էակների երջանկությունը կախված էր

այդ օրենքի մեծ սկզբ—
բռնքներին կատարելապես
հնազանդվելուց: Աստված իր
բոլոր արարածներից կամենում
է սիրո ծառայության՝
պատկառանք, որը բխում է իր
բնավորության ճիշտ
ըմբռնումից: Նրան հսկեփ չէ
բռնի հավա-տարմությունը, և
Նա բոլորին կամքի
ազատություն է շնորհում,
որպեսզի հոժարությամբ
ծառայեն իրեն:

Սակայն գտնվեց մեկը, ով
որոշեց չարաշահել այդ
ազատությունը: Մեղքը ծագեց

Նրա մեջ, ում Աստված,
Քրիստոսից հետո, ամենքից
ավելի էր պատվել և ով իր
զորությամբ ու փառքով
ամենաբարձրն էր
երկ-նաբնակաների մեջ:
Նախքան իր անկումը՝
Արուսյակն [494] առաջինն էր
ծածկող քերուկների մեջ՝
սուրբ և անարատ: «Այսպես է
ասում Տեր Եհովան. դու
կատարելության կնիքն ես՝ լի
իմաստությամբ, և
գեղեցկությամբ կատարյալ:
Եղեմում՝ Աստծո դրախտում
Էիր, բոլոր թանկագին քարերը
քո ծածկոցն էին... Դու մի

օծված քերուվբե էիր ծածկող, և
ես քեզ շինեցի: Աստծո սուրբ
սարի վրա էիր, կրակի քարերի
մեջ էիր ման գալիս: Դու
կատարյալ էիր քո
ճանապարհներում քո
ստեղծված օրից, մինչև որ
քեզանում անօրենություն
գտնվեց» (Եզեկիել28.12-18):

Արուսյակը կարող էր
շարունակել վայելել Աստծո
բարեհաճությունը,
հրեշտակների ողջ զորքի սերն
ու հարգանքը՝ իր վսեմ ուժերն
օգտա-գործելով ի օրհնություն
այլոց և ի փառս իր Արարչի:

Բայց մարգարեն ասում է.
«Սիրտդ հպարտացավ քո
գեղեցկությունից, դու
ապականեցիր քո
իմաստությունը քո
գեղեցկության պատճառով»
(Եզեկիել 28.17): Արու-սյակն
աստիճանաբար սկսեց
ինքնամեծարման ցանկություն
փայփայել: «Դու քո սիրտը
Աստծո սրտի նման շինեցիր»:
«Ինքդ ասել էիր քո սրտում...
Աստծո աստղերից բարձր կդնեմ
իմ աթոռը, կնստեմ ժողովի
սարի վրա... Վեր կելնեմ
ամպերի բարձրությունների
վրա և Բարձրյալին կնմանվեմ»

(Եզեկիել 28.6, Եսայիա
14.13,14): Ստեղծվածների
գերագույն սերն ու
նվիրվածությունը Աստծուն
ուղղելու փոխարեն՝ Արուսյակը
կամեցավ ինքը շահել նրանց
ծառայությունն ու
երկրպագությունը:
Փափագելով ձեռք բերել այն
պատիվը, որով Չայրն օժտել էր
Իր Որդուն, հրեշտակների այս
իշխանը ձգտեց տիրանալ այն
իշխանությանը, որը
բացառապես Քրիստոսի
մենաշնորհն էր:

Ամբողջ երկինքը ցնծությամբ էր
արտացոլում Արարչի փառքը և
գովաբանում Նրան: Եվ քանի
դեռ Աստծուն այսպես
պատվում էին, ամենուրեք
խաղաղություն և բերկրանք էր
տիրում: Բայց ահա մի կեղծ
հնչյուն խախտեց տիեզերքի
ներդաշնակությունը: «Ես»—ի
մեծարումն ու
ինքնաձառայությունը,
հակառակ Աստծո ծրագրի, չար
կանխազգա-ցումներ
առաջացրին Նրանց մտքում,
ուն համար Աստծո փառքը վեր
էր ամեն ինչից: Երկնային
իտրիուրդներում Արուսյակին

Խնդրում էին կանգ առնել:
Աստծո Որդին ներկայացրեց
Նրան Արարչի մեծութունը,
բարութունն ու արդարութունը
և Նրա օրենքի սրբազան ու
անփոփոխ բնույթը: Աստված
հնքն էր սահմանել երկնքի
կարգը, [495] և խախտելով այն՝
Արուսյակը կանարգեր Իր
Արարչին և կկործաներ ինքն
իրեն: Բայց
Նախազգուշացումը՝ տրված
անսահման սիրով ու
գթասրտությամբ, միայն
դիմադրություն առաջացրեց:
Արուսյակը թույլ տվեց, որ
Նախանձը Քրիստոսի հանդեպ

հաղթի իրեն, և ավելի վճռական
դարձավ:

Իր փառքից հպարտացած՝ Նա
փափագեց գերիշխանության:
Արուսյակին շնորհված բարձր
պատիվները չգնահատվեցին
որպես Աստծո պարգև և
երախտագիտություն
չառաջացրին Արարչի հանդեպ:
Նա հպարտացավ իր փառքից
ուղիորքից և կամեցավ Աստծուն
հավասար լինել: Նա սիրված ու
հարգված էր երկնային զորքի
կողմից: Հրեշտակները
հաճույքով էին կատարում նրա
հրամանները, և նա բարձր էր

ամենքից իմաստությամբ ու
փառքով: Բայց Աստծո Որդին Էր
երկնքի ճանաչված
Գերիշխանը՝ իշխանությամբ ու
զորությամբ հավասար Յորը:
Քրիստոսը մասնակցում էր
Աստծո բոլոր խորհուրդներին,
մինչդեռ Արուսյակին թույլ չէր
տրվում թափանցել
աստվածային
մտահղացումների մեջ: «Ինչո՞ւ
պետք է Քրիստոսը,—մտածում
էր այս հզոր
հրեշտակը,—Արուսյակից ավելի
գերազանց պատվի
արժանանա»:

Լքելով իր տեղը Աստծո
անմիջական ներկայութեան
մեջ՝ Արուսյակը գնաց
հրեշտակներին փոխանցելու
խռովութեան իր ոգին: Գործելով
խորհրդավոր գաղտնիութեամբ
և միառժամանակ թաքցնելով
իր իսկական նպատակը Աստծո
հանդեպ պատկառանքի քողի
տակ՝ նա փորձեց դժգոհություն
առաջացնել այն օրենքների
նկատմամբ, որոնցով
ղեկավարվում էին երկնային
էակները՝ շշնջալով, թե դրանք
անհիմն սահմանափակումներ
են: Քանի որ հրեշտակներն
եութեամբ սուրբ են, պնդում էր

Նա, ուստի պետք է
հնազանդվեն իրենց սեփական
կամքի թելադրանքին: Նա
ջանում էր կարեկցանք
առաջացնել իր նկատմամբ`
ասելով, որ Աստված անարդար
էր վարվել իր հետ` Քրիստոսին
շնորհելով գերագույն պատիվը:
Նա ասում էր, թե ավելի մեծ
իշխանության ու պատվի
ձգտելով` ինրը ոչ թե նպատակ
ունի ինքնամեծարման, այլ
փոր-ձում է ազատություն ձեռք
բերել երկնքի բոլոր
բնակիչների համար, որ-պեսզի
նրանք հասնեն գոյության
ավելի բարձր մակարդակի:

Աստված իր մեծ ողորմութեամբ
երկար հանդուրժեց
Արուսյակին: Նա իր բարձր
դիրքից չզրկվեց անմիջապես,
երբ նոր էր սկսել փայփայել
դժգոհութեան ոգին, ոչ էլ
նույնիսկ այն ժամանակ, երբ
սկսեց [496] իր կեղծ
պահանջները ներկայացնել
հավատարիմ հրեշտակներին:
Նա դեռ երկար ժամանակ մնաց
երկնքում: Նորից ու նորից
նրան ներում առաջարկվեց՝
ապաշխարութեան և
հնազանդութեան պայմանով:
Միայն անսահման սերն ու

իմաստությունը կարող էին
նման ջանքեր գործադրել նրան
իր սխալի մեջ համոզելու
համար: Երկինքը նախկինում
երբեք չէր իմացել, թե ինչ է
դժգոհությանը: Արուսյակն
ինքն էլ սկզբում չէր տեսնում,
թե ուր կհասնի, չէր հասկանում
իր զգացմունքների իրական
բնույթը: Բայց երբ պարզվեց,
որ նրա դժգոհությունն անհիմն
է, Արուսյակը համոզվեց, որ
ինքը սխալ էր, որ աստվածային
պահանջներն արդար էին, և որ
ինքը պետք է խոստովանի դա
ողջ երկնքի առաջ: Եթե նա
այսպես վարվեր, ապա կարող

Էր փրկել ինքն իրեն և շատ
հրեշտակների: Այդ ժամանակ
Նա դեռ որոշ չավտվ
հավատարիմ էր Աստծուն: Թեև
Նա լքել էր ծածկող քե-րովքեի
իր դիրքը, սակայն, եթե
կամենար վերադառնալ
Աստծուն՝ ճանա-չելով Արարչի
իմաստութունը, և
բավարարվեր Աստծո մեծ
ծրագրում իրեն հատկացված
տեղով, ապա կարող էր
վերականգնել իր
իրավունք-ները: Բայց
հպարտությանը թույլ չտվեց
Նրան հնազանդվել:
Համառորեն պաշտպանելով իր

Կարծիքը՝ նա պնդեց, որ
ապաշխարութեան կարիք
չունի, և վերջնականապես
վճռեց ապստամբել իր
Ստեղծողի դէմ:

Իրեն ենթակա հրեշտակների
կարեկցանքը շահելու համար
նա սկսեց իր հանճարեղ մտքի
ողջ կարողութեամբ մոլորեցնել
Նրանց: Նույնիսկ այն փաստը,
որ Քրիստոսը նախազգուշացրել
և խորհուրդ էր տվել Նրան,
խեղաթյուրվեց՝ հօգուտ Նրա
դավաճանական ծրագրերի:
Նրանց, ովքեր հատկապես
սիրում ու վստահում էին իրեն,

սատանան ներկայացրեց, թե
իր հետ անարդար են վարվել,
իր իրավունքը չեն հարգել և
սահմանափակել են իր
ազատությունը: Քրիստոսի
խոսքերի աղավաղումից նա
անցավ գրպարտության և
ուղղակի կեղծիքի՝ մեղադրելով
Աստծո Որդուն երկնքի
բնակիչների առաջ իրեն
ստորացնելու մտադրության
մեջ: Նա փորձեց կեղծել նաև իր
տարածայնությունը
հավատարիմ հրեշտակների
հետ: Բոլորին, ում
չկարողացավ գայթակղեցնել և
ամբողջապես իր կողմը գրավել,

Նա մեղադրեց երկնային
Էակների շահերի նկատմամբ
անտարբերության մեջ: Յենց
այն բանում, ինչ ինքն էր
անում, նա մեղադրեց [497]
Նրանց, ովքեր հավատարիմ էին
Աստծուն: Եվ իր հանդեպ
Աստծո անարդարությունը
հաստատելու համար նա կեղծ
լույսի տակ ներկայացրեց
Արարչի խոսքերն ու
գործողությունները: Նրա
քաղաքականությունն էր՝
խճճված փաստարկներով
ապակողմնորոշել
հրեշտակներին Աստծո
նպատակների վերաբերյալ:

Այն ամենն, ինչ շատ հստակ էր,
Նա մշուշով էր պատում, և
վարպետորեն կեղծելով՝
կասկածի էր ենթարկում
Յահվեի ամենապարզ
որոշումները: Նրա բարձր
դիրքը, որն այդքան սերտորեն
կապված էր աստվածային
կառավարման հետ, ավելի
ծանրակշիռ էր դարձնում նրա
խոսքերը, և շատերը ստիպված
միացան նրա
ապստամբությանը երկնքի
հեղինակության դեմ:

Աստված իր իմաստությունը
սատանային թույլ տվեց առաջ

տանելու իր գործը, մինչև որ
դժգոհությունը վերաճեց
գործուն ապստամբության:
Անհրաժեշտ էր, որ նրա
ծրագրերն ամբողջովին
զարգանային, որպեսզի բոլորը
տեսնեին դրանց իրական
բնույթն ու ուղղվածությունը:
Արուսյակը՝ որպես օձված
քերովբե, խիստ մեծարված էր
ու սիրված երկնային էակների
կողմից, և նրա ազդեցությունը
հզոր էր նրանց վրա: Աստծո
կառավարությունը ներառում
էր ոչ միայն երկնքի
բնակիչներին, այլ նաև նրա
ստեղծած բոլոր աշխարհները,

և սատանան մտածեց, որ եթե
կա-րողանա ապստամբության
մեջ ներքաշել երկնային
հրեշտակներին, ապա մյուս
աշխարհները ես կմիանան
իրեն: Նա իր տեսակետները
ներկայացնում էր
վարպետությամբ՝ դիմելով
խորամանկության ու
նեն-գության: Նրա
խաբեության ուժը շատ մեծ էր,
և թաքցնելով իր կեղծիքը՝ նա
հաջողության էր հասնում:
Նույնիսկ հավատարիմ
հրեշտակներն ամ-բողջությամբ
չկարողացան ըմբռնել նրա

բնավորութիւնը և չտեսան, թե ուր է տանում նրա ընթացքը:

Սատանան այնքան մեծարված էր, և նրա բոլոր քայլերն այնքան խորհդավոր էին, որ հրեշտակներին դժվար էր բացահայտել նրա գործունեութեան իրական բնույթը: Մինչև լիովին չզարգանար, մեղքը չարիք չէր թվա: Աստծո տիեզերքում մինչ այդ ոչ մի նման բան չէր եղել, և սուրբ էակները պատկերացում անգամ չունեին դրա մահաբեր բնույթի մասին: Նրանք անկարող էին տեսնել

աստվածային օրենքը մերժելու
զարհուրելի հետևանքները:
Սկզբում սատանան իր
դիտավորությունները
թաքցնում էր Աստծո հանդեպ
հավատարմության քողի տակ:
Նա պնդում էր, թե ամեն ինչ
անում է Աստծո պատվի, Նրա
կառավարման կայունության ու
բոլոր երկնաբնակների [498]
բարեկեցության համար:
Դժգոհություն սերմանելով
իրեն ենթակա հրեշտակների
մտքում՝ նա միաժամանակ
ճարպկորեն ձևացնում էր, թե
ջանում է վերացնել այն:
Պնդելով, որ Աստծո

Կառավարման կարգն ու
օրենքները պետք է փոխվեն,
Նա ձևացնում էր, թե դա
անհրաժեշտ է երկնքի
ներդաշնակութունը
պահպանելու համար:

Մեղքի դեմ իր պայքարում
Աստված կարող էր դիմել միայն
արդարության և
ճշմարտության: Իսկ սատանան
օգտագործում էր այն, ինչ
Աստված չէր կարող`
շողոքորթաթյուն և
խաբեություն: Նա փորձեց
կեղծել Աստծո խոսքը և
հրեշտակներին սխալ

Ներկայացրեց Նրա
կառավարման ծրագիրը՝
պնդելով, թե Աստված
անարդար էր՝ օրենքներ և
կանոններ բարդելով երկնքի
բնակիչների վրա, թե իր
ստեղծածներից պահանջելով
հնազանդություն՝ Նա
պարզապես ձգտում էր
ինքնամեծարման: Այդ իսկ
պատճառով երկնքի
բնակիչներին, ինչպես նաև
բոլոր աշխարհներին պետք է
ցույց տրվեր, որ Աստծո
կառավարությունն արդար էր,
Նրա օրենքը՝ կատարյալ: Իսկ
սատանան ձևացնում էր, թե

այդ ինքն է ձգտում նպաստել
տիեզերքի բարօրութեանը:
Բոլորը պետք է հասկանային
զավթիչի իսկական
բնավորությունն ու նրա
իրական նպատակը: Նրան
պիտի ժամանակ տրվեր՝
բացահայտելու իր էությունն իր
ամբարիշտ գործերով:

Խռովության մեջ, որը հենց
ինքն էր հրահրել երկնքում,
սատանան մեղադրեց Աստծո
օրենքն ու կառավարությունը:
Նա հայտարարեց, թե ամբողջ
չարիքն Աստծո
ղեկավարության հետևանքն է,

իսկ ինքն ուզում է
կատարելագործել Յահվեի
օրենքները: Ուստի անհրաժեշտ
էր, որ նա բացուհայտեր իր
պահանջների բնույթը և ցույց
տար աստվածային օրենքի մեջ
իր առաջարկած
փոփոխությունների ընթացքը:
Նրան պետք է դատապարտեր
իր իսկ արարքը: Սատանան
հենց սկզբից պնդել էր, թե չի
ապստամբում, դրա համար էլ
ամբողջ տիեզերքը պիտի
տեսներ խաբեբայի դիմակը:

Նույնիսկ երբ որոշվեց, որ նա
այլևս չի կարող մնալ երկնքում,

Անսահման Իմաստությունը
չոչնչացրեց Նրան: Քանի որ
Աստծուն ընդունելի է միայն
սիրո ծառայությունը, Նրա
բոլոր արարածների
հավատարմությունը պետք է
հիմնվի այն համոզման վրա, որ
Նա արդարադատ ու գթասիրտ
է: Երկնքի և մյուս աշխարհների
բնակիչները, պատրաստ
չլինելով ըմբռնել մեղքի
բնույթն ու հետևանքները, չէին
կարող հասկանալ Աստծո
արդարությունն ու [499]
գթասրտությունը, եթե Նա այդ
ժամանակ կործաներ
սատանային: Եթե Նա

անմիջապես բնաջնջվեր,
նրանք Աստծուն կծառայեին
ավելի շուտ վախից, քան
սիրուց: Խաբեքայի
ագդեցությունն
ամբողջությամբ չէր վերանա,
ոչ էլ կչքանար
ապստամբու-թյան ոգին: Պետք
է թույլ տրվեր, որ չարիքը
հասունանա: Հանուն տիեզերքի
բարօրության՝ անվախճան
դարերի ընթացքում սատանան
պետք է լիովին զարգացներ իր
սկզբունքները, որպեսզի
ստեղծված բոլոր էակներն
իրական լույսի տակ տեսնեին
նրա մեղադրանքներն

աստվածա-յին կառավարման
դեմ և Աստծո
արդարադատությունն ու
տրտմությունը, ինչպես նաև
Նրա օրենքի
անփոփոխելիությանը
առհավետ կասկածից դուրս
մնային:

Սատանայի ապստամբությունը
պետք է դաս և հավիտենական
վկայություն լիներ տիեզերքի
համար մեղքի էության ու Նրա
զարհուրելի հետևանքների
մասին գալիք բոլոր դարերի
ընթացքում: Սատանայի
կառավարությունն ու դրա

ազդեցութիւնը թե՛ մարդկանց
և թե՛ հրեշտակների վրա պետք
է ցույց տային, թե ինչի է
հանգեցնում աստ-վածային
իշխանութեան մերժումը: Դա
պիտի վկայեր, որ Աստուծո բոլոր
արարածների բարօրութիւնը
կապված է Նրա կառավարման
և օրենքի հետ: Այդպիսով՝
ապստամբութեան այս սոսկալի
պատմութիւնը պետք է
մշտնջենական
պաշտպանութիւն լիներ բոլոր
սուրբ Էակների համար,
որպեսզի Նրանք այլևս
չխաբվեին անօրենութեան

Էռւթյան հարցում, չմե-ղանչեին
նորից ու կրեին դրա պատիժը:

Ընդհուպ մինչև երկնքում
ընթացող պայքարի վերջը՝ մեծ
զավթիչը շարունակում էր
արդարացնել իրեն: Երբ
ազդարարվեց, որ նա իր բոլոր
համախոհների հետ պետք է
վտարվի երանության երկրից,
խռովության առաջնորդը
հանդգնորեն հայտարարեց, որ
արհամարիում է Արարչի
օրենքը: Նա կրկին պնդեց, որ
հրեշտակները կարիք չունեն
հսկողության, այլ պետք է
հետևեն իրենց սեփական

Կամքին, որը միշտ կոբոյի
Նրանց ճիշտ վարվել: Նա
արհամարհեց աստվածային
դրվածքները՝ հայ-տարարելով,
որ դրանք սահմանափակում են
իրենց ազատութունը, և որ իր
Նպատակն է՝ վերացնել օրենքը,
որպեսզի այդ կապանքից
ազատ- վաճ՝ երկնաբնականները
հասնեն գոյության ավելի
բարձր ու փառավոր վիճակի:

Սատանան ու նրա
կողմնակիցները միաբերան
իրենց ապստամբության
մեղքն ամբողջությամբ գցեցին
Քրիստոսի վրա՝

հայտարարելով, որ եթե իրենց
[500] չհանդիմանեին, իրենք
երբեք էլ չէին ապստամբի:
Այսպես՝ իրենց համառ ու
հանդուգն
անհնազանդությամբ, իզուր
փորձե-լով տապալել
աստվածային
կառավարությունն ու
շարունակելով իրենց
աստվածահայիոյիչ
պնդումները՝ թե բռնի
իշխանության անմեղ զոհ են
դարձել, ապստամբ առաջնորդն
ու նրա բոլոր համակիրներն ի
վերջո վտարվեցին երկնքից:

Այն նույն ոգին, որը
ապստամբութիւնն հրահրեց
երկնքում, դեռ ոգեշնչում է
խռովարարներին երկրի վրա:
Ինչպես հրեշտակների հետ,
սատանան մարդկանց հետ էլ
վարում է նույն
քաղաքականութիւնը: Նրա
ոգին է այժմ իշխում
անհնազանդութեան որդիների
մեջ: Նրա պես նրանք ես
ձգտում են վերացնել Աստծո
օրենքի սահմանափակումները
և մարդկանց ազատութիւնն են
խոստանում անօրենութեան
մեջ: Մեղքի հանդիմանութիւնն
առաջվա պես ատելութիւնն և

դիմադրություն է առաջացնում:
Երբ Աստծո
Նախազգուշացումները
հասնում են գիտակ-ցությանը,
սատանան դրդում է մարդկանց
արդարացնել իրենց և դրդել
մյուսներին՝ պաշտպանել
իրենց մեղավոր վարքը: Իրենց
սխալներն ուղ-ղելու փոխարեն՝
Նրանք զայրույթ են գրգռում
հանդիմանողի նկատմամբ,
կարծես հենց նա է
անախորժության միակ
պատճառը: Արդար Յաբելի
օրերից մինչև մեր
ժամանակներն այդ նույն ոգին
է դրսևորվում նրանց հանդեպ,

ովքեր համարձակվում են
դատապարտել մեղքը:

Սխալ ներկայացնելով Աստծո
բնավորությունն, ինչպես արել
էր երկնքում, դրդելով Նրան
նայել որպես մի դաժան
բռնակալի՝ սատանան դրդեց
մարդուն մեղանջել: Եվ
դրանում հաջողության
հասնելով՝ նա հայտարարեց,
թե ինչպես իր
ապստամբության, այնպես էլ
մարդու անկման պատճառը
Աստծո անարդարացի
սահմանափակումներն են:

Բայց Յավերժականն ինքն է
հռչակում իր էութունը.
«Եհովա, Եհովա՝ Աստված
ողորմած և գթած, Երկայնամիտ
և առատ ողորմությամբ ու
ճշմարտությամբ, որ
հազարավորներին
տրտմություն ես անում, որ
անօրենություն, հանցանք և
մեղք ես ներում, բայց
հանցավորին բնավ անպատիժ
չես թողնում» (Ելից 34.6,7):

Սատանային վտարելով
Երկնքից՝ Աստված հռչակեց իր
արդարու-թյունը և
պաշտպանեց իր գահի

պատիվը: Բայց երբ մարդը
մեղանչեց՝ տեղի տալով այդ
ուխտադրուժ ոգու
խաբեություններին, Աստված
հայտ- նեց իր սերը՝ մահվան
մատնելով իր միածին Որդուն
հանուն անկյալ ցեղի: [501]
Քավության միջոցով
բացահայտվում է Աստծո
բնավորությունը: Խաչի հզոր
փաստարկը ողջ տիեզերքին
վկայում է, որ Արուսյակի
ընտրած մեղքի ուղին ոչ մի
կապ չունի Աստծո
կառավարման հետ:

Քրիստոսի և սատանայի միջև
պայքարում, որ ընթանում էր
Փրկչի երկրային ծառայության
ժամանակ, մեծ խաբեքան
դիմակազերծ արվեց: Ոչինչ
այնպես չէր կարող զրկել
սատանային երկնային
հրեշտակների և ողջ
հավատարիմ տիեզերքի
համակրանքից, ինչպես Նրա
դաժան պատերազմն աշխարհի
Փրկչի դեմ: Նրա հանդուգն ու
հայիոյիչ պահանջը, որ
Քրիստոսը երկրպագի իրեն,
Նրա ամբարտավան
հանդգնությունը, երբ Նրան
բարձրացրեց լեռան գագաթը և

տաճարի աշտարակի վրա, նրա
չար մտադրութիւնը, որ
բացահայտվեց, երբ Փրկչին
առաջարկեց գլխապտույտ
բարձրութիւնից իրեն վայր
գցել, նրա չնվազող
չարակամութիւնը, որով
հալածում էր նրան տեղից տեղ՝
դրդելով քահանաներին ու
ժողովրդին մերժել նրա սերը և ի
վերջո աղա-ղակել՝ «Խաչի՛ր
դրան, խաչի՛ր դրան», այս
ամենն առաջացրեց տիեզերքի
զարմանքն ու վրդովմունքը:

Սատանան էր հենց, որ դրդեց
աշխարհին մերժել Քրիստոսին:

Չարի իշխանը գործի դրեց իր
ողջ ուժն ու նենգությունը՝
կործանելու Քրիստոսին, քանզի
տեսավ, որ Փրկչի գթությունն
ու սերը, Նրա կարեկցանքն ու
գորովագութ խղճահարությունը
աշխարհին ներկայացնում են
Աստծո բնավորությունը:
Սատանան վիճարկում էր
Աստծո Որդու յուրաքանչյուր
հավակնությունը՝ մարդկանց
իր գործակալները դարձնելով
Փրկչի կյանքը տառապանքով
ու վշտով լցնելու համար:
Մոլորեցուցիչ կեղծիքը, որով
Նա փորձում էր խոչընդոտել
Հիասսի գործը, ատելությունը՝

դրսեորված
անհնազանդության որդիների
միջոցով, նրա դաժան
մեղադրանքները նրա դեմ, ում
կյանքը լի էր անօրինակ
բարության, այս ամենը բխում
էր խորապես արմատացած
վրեժխնդրության տենչից: Երբ
Նախանձի ու չարակամության,
ատելության ու վրիժառության
բորբոքված հուրը դուրս
ժայթքեց Գողգոթայում Աստծո
Որդու դեմ, համայն երկինքը
լուռ զարհուրանքով դիտում էր
այդ տեսարանը:

Երբ արվեց մեծ
զոհաբերութիւնը, Քրիստոսը,
համբարձվելով երկինք,
հրաժարվեց ընդունել
հրեշտակների
երկրպագութիւնը, մինչև
չներկայացրեց Յորն այս
խնդրանքը. «Կամենում եմ, որ
նրանք էլ, ում որ ինձ տվիր, ինձ
հետ լինեն» (Յովհաննես 17.24):
Եվ [502] Յոր գահից
անպատմելի սիրով ու
զորութեամբ հնչեց
պատասխանը. «Թող
երկրպագեն նրան Աստծո բոլոր
հրեշտակները» (Եբրայեցիս
1.6): Յիսուսն անբիժ էր: Նրա

Նվաստացումն ավարտված էր,
Նրա զոհը՝ բերված, և Նրան մի
անուն տրվեց, որ ամեն
անունից վեր էր:

Չիմա սատանայի հանցանքն
արդարացում չուներ: Նա
բացահայտել էր իր իսկական
եռթյանը՝ որպես խաբեբա և
մարդասպան: Ակնհայտ
դարձավ, որ եթե Նրան թույլ
տրվեր, նա երկնքի բնակիչների
հանդեպ ես դրսևորեր նույն
ոգին, որով իշխում էր իր
հսկողության տակ գտնվող
մարդկանց որդիներին: Նա
պնդել էր, որ Աստծո օրենքի

Խախտումը կհասցնի
ազատության ու վեհության,
բայց պարզվեց, որ դրա վերջը
ստրկությունն է և այլասերում:

Սատանայի կեղծ
մեղադրանքներն աստվածային
բնավորության ու
կառավարման դեմ երևացին
իրենց իրական լույսի ներքո:
Նա մեղադրել էր Աստծուն, որ
հր արարածներից պահանջելով
իտնարիություն ու
հնազանդություն՝ Նա ձգտում է
լույ փառավորել իրեն, և
հայտարարել էր, որ բոլորից
պահանջելով

անձնուրացություն՝ Նա Ինքը չի
ուրանում իր անձը և ոչինչ չի
զոհաբերում: Հիմա պարզվեց,
որ հանուն անկյալ ու մեղավոր
ցեղի փրկութեան՝ տիեզերքի
Տիրակալը բերել էր մեծագույն
զոհաբերությունը, որ երբևէ
սերը կարող էր անել, քանզի
«Աստված էր Քրիստոսում, որ
աշխարհը հաշտեցրեց իր հետ»
(Բ Կորնթացիս 5.19): Բոլորը
տեսան նաև, որ մինչ
Արուսյակը պատվի ու
գերիշխանութեան իր տենչով
դռա բացեց մեղքի համար,
Քրիստոսն Իրեն խոնարհեցրեց

ու հնազանդ եղավ մինչև մահ,
որպեսզի վերացնի մեղքը:

Աստված ցույց տվեց, որ
գարշում է ապստամբության
սկզբունքներից: Ողջ երկինքը
տեսավ Նրա
արդարադատությունը,
որբացահայտվեց ինչպես
սատանայի դատապարտման,
այնպես էլ մարդու փրկագնման
մեջ: Արուսյակը հայտարարել
էր, որ եթե Աստծո օրենքն
անփոփոխ է և դրա պատժից
հնարավոր չէ խուսափել, ապա
յուրաքանչյուր օրինազանց
պետք է առհավետ զրկվի

Արարչի բարեհաճությունից:
Նա պնդել էր, որ մեղավոր
ցեղին հնարավոր չէ փրկագնել,
հետևաբար այն իր օրինական
ավարն է: Սակայն Քրիստոսի
մահն այնպիսի փաստարկ էր
հօգուտ մարդու, որն անհնար
էր հերքել: [503] Օրենքի
պատիժն ընկավ Նրա վրա, ով
հավասար էր Աստծուն, և
մարդն ազատ էր՝ ընդունելու
Քրիստոսի արդարությունը և
ապաշխարությամբ ու խոնարհ
կյանքով հաղթելու սատանայի
զորությունն այնպես, ինչպես
հաղթել էր Աստծո Որդին:
Այսպիսով՝ Աստված արդար է և

արդարացնող բոլորին, ովքեր
հավատում են Քրիստոսին:

Սակայն Քրիստոսը չեկավ այս
երկիր չարչարվելու և մեռնելու
միայն հանուն մարդու
փրկագնման: Նա եկավ
«մեծարելու և վառավորելու
օրենքը» ոչ միայն նրա համար,
որ այս աշխարհի բնակիչները
ինչպես հարկն է հարգեն
օրենքը: Տիեզերքի բոլոր
աշխարհներին պիտի ցույց
տրվեր, որ Աստծո օրենքն
անփոփոխելի է: Եթե դրա
պահանջները հնա-րավոր լիներ
վերացնել, ապա Աստծո Որդին

Կարիք չէր ունենա զոհելու իր
կյանքը օրինազանցությունը
քաղելու համար: Քրիստոսի
մահն ապացուցում է օրենքի
անփոփոխելիությունը: Եվ այդ
զոհաբերությունը, ինչին Յորն
ու Որդուն մղեց անսահման
սերը, որպեսզի մեղավորները
փրկվեն, ցույց է տալիս համայն
տիեզերքին, և դա քավության
ծրագրից բացի ուրիշ ոչինչ չէր
կարող անել որ արդարությունն
ու տրտմությունն են Աստծո
օրենքի և կառավարության
հիմքը:

Վերջին դատաստանի
ժամանակ կպարզվի, որ մեղքի
համար պատճառ գոյություն
չունի: Երբ ողջ երկրի
Դատավորը հարց տա
սա-տանային՝ «Ինչո՞ւ
ապստամբեցիր Իմ դեմ և
հափշտակեցիր Իմ
արքա-յության
հպատակներին», մեղքի
հեղինակը ոչ մի արդարացում
չի կարող ներկայացնել: Ոչ մի
բերան չի բացվի, և
ապստամբների ողջ
բազմությունը կպապանծվի:

Յոչակելով օրենքի
անփոփոխելիությունը՝
Գողգոթայի խաչը նաև
ազդարարում է ողջ տիեզերքին,
որ մեղքի վարձքը մահն է:
Փրկչի վերջին աղաղակը՝
«Կատարված է», սատանայի
մահազանգն էր: Երկարատև
մեծ պայքարի ելքը վճռված էր,
և հաստատվեց մեղքի
վերջնական վերացումը: Աստծո
Որդին անցավ գերեզմանի
միջով, որպեսզի «իր մահով
խափանի մահվան
իշխանությունն ունեցողին,
այսինքն՝ սատանային»
(Եբրայեցիս 2.14):

Ինքնամեծարման փափագը
Արուսյակին դրդել էր ասելու.
«Աստճո աստղերից բարձր
կդնեմ իմ աթոռը... Բարձրյալին
կնմանվեմ»: Աստված ասում է.
«Ես քեզ [504] մոխիր պիտի
շինեմ երկրի վրա ...և դու
կոչնչանաս հավիտյան»
(Եսայիա 14.13,14, Եզեկիել
28.18,19): Երբ գա «այն օրը, որ
վառված է թոնրի պես ...բոլոր
գոռոզներն ու չարագործները
հարդի պես են լինելու, և նրանց
պետք է այրի այն եկող օրը,
ասում է Չորաց Տերը, որ նրանց
համար արմատ և ոստ պիտի
չթողնի» (Մաղաքիա 4.1):

Չամայն տիեզերքը կտեսնի
մեղքի էությունը և դրա
հետևանքները: Եվ դրա
կատարյալ ոչնչացումը, որը
սկզբում կսարսափեցներ
հրեշտակներին ու անպատիվ
կաներ Աստծուն, հիմա
կարդարացնի Նրա սերը և
կհաստատի Նրա պատիվը
տիեզերքի բոլոր բնակիչների
առաջ, ովքեր հաճույքով են
կատարում Նրա կամքը, և ում
սրտերում գրված է Նրա
օրենքը: Չարն այլիս երբեք չի
լինի: Աստծո խոսքն ասում է.
«Նեղությունը երկու անգամ

վեր չի կենա» (Նաոււմ 1.9):
Աստժո օրենքը, որը սատանան
արհամարհել էր որպէս
ստրկութեան լուծ, պիտի
մեծարվի որպէս ազատութեան
օրենք: Փորձված և կոփված
արարածներն այլևս երբեք
անհավատարիմ չեն լինի
Նրան, ով իր էութեամբ Նրանց
լիովին բացահայտվելէ որպէս
անզուգական սեր և անսահման
իմաստութիւն:

ԳԼՈՒԽ

30—ԹՇՆԱՄՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴՈՒ ԵՎ ՍԱՏԱՆԱՅԻ

ՄԻՋԵՎ

«Ես թշնամությունն եմ դնում քո
և կնոջ միջև և քո սերնդի ու
նրա սերնդի միջև. նա քո
գլուխը կջախջախի, իսկ դու
նրա գարշապարը կխայթես»
(Ծննդոց 3.15): Աստվածային
դատավճիռը, որ կայացվեց
սատանայի դեմ մարդու
մեղանչումից հետո, նաև
մարգարեությունն էր այն մեծ
պայքարի վերաբերյալ, որ
մղվելու էր բոլոր դարերում

մինչև ժամանակի վերջը՝ իր
մեջ ներառելով բոլոր ազգերը,
որ ապրելու էին երկրի վրա:

Աստված ասում է. «Ես
թշնամություն եմ դնում»: Այս
թշնամությունը բնականից չի
ծագել: Խախտելով Աստծո
օրենքը՝ մարդը եռթյամբ
դար-ձավ չար, և նրա ու
սատանայի միջե ստեղծվեց
ներդաշնակություն: Մեղավոր
մարդու և մեղքի հեղինակի
միջև ոչ մի բնական թշնամանք
չկա: Երկուսն էլ չար են դարձել
ուխտադրժության պատճառով:
Ուխտադրուժը հանգիստ չունի,

մինչև համակրանք ու
աջակցութիւն չգտնի՝ դրդելով
ուրիշներին հետևել իր
օրինակին: Այդ իսկ պատճառով
ընկած հրեշտակներն ու
ամբարիշտ մարդիկ միանում
են՝ կազմելով մի հուսա-հատ
ընկերակցութիւն: Եթե
Աստված հատուկ ձևով
չմիջամտեր, սա-տանան և
մարդը դաշինք կկազմեին
երկնքի դեմ, և սատանայի
հանդեպ թշնամութիւն
տածելու փոխարեն՝
մարդկային ողջ ընտանիքը
կմիավոր-վեր ընդդեմ Աստծո:

Սատանան մարդուն էլ դրդեց
մեղանջելու, ինչպես
հրեշտակներին էր ներքաշել
ապստամբության մեջ,
դաշնակիցներ գտնելու երկնքի
դեմ իր պատերազմում:
Քրիստոսի հանդեպ
ատելության մեջ սատանայի և
անկյալ հրեշտակների միջև ոչ
մի տարածայնություն չկար:
Նրանք խիստ միաբան էին
տիեզերքի Տիրակալի
իշխանության դեմ պայքարում,
մինչդեռ մնացած բոլոր [506]
հարցերում համաձայնություն
չունեին: Բայց լսելով, որ
թշնամություն պիտի լինի իր և

Կնոջ միջև, իր սերնդի և նրա
սերնդի միջև, սատանան
հասկացավ, որ մարդկային
բնությունն այլասերելու իր
ջանքերն ընդհատվելու են, որ
ինչ-որ կերպ մարդուն
հնարավորություն է տրվելու
դիմակայելու իր ուժին:

Սատանան թշնամությամբ
լցվեց մարդկանց հանդեպ այն
պատճառով, որ Քրիստոսի
միջոցով նրանք դարձան
Աստծո սիրո և ողորմության
առարկան: Նա ցանկանում է
ձախողել մարդու փրկության
աստվածային ծրագիրը,

անպատիվ անել Աստծուն՝
դիմազրկելով ու պղծելով Նրա
ձեռքի գործը, նա կամենում է
վիշտ պատճառել երկնքին ու
երկիրը լցնել դժբախտությամբ
ու ավերածությամբ: Եվ այս
ամբողջ չարիքը նա
ներկայացնում է որպես Աստծո
կալմից մարդու ստեղծման
արդյունք:

Հոգում սերմված Քրիստոսի
շնորհն է հենց, որ մարդու մեջ
թշնա-մություն է ստեղծում
սատանայի հանդեպ: Առանց
այս վերափոխիչ շնորհի ա
նորոգող ուժի մարդը

կշարունակեք գերի մնալ
սատանային՝ միշտ պատրաստ
ծառայի պես կատարելու նրա
հրամանները: Բայց նոր
սկզբունքը բախում է
լսնաջացնում հոգում, ուր մինչ
այդ խաղաղ էր: Չորությունը,
որով քրիստոսն օժտում է
մարդուն, ի վիճակի է դարձնում
նրան դիմադրելու բռնակալին
ու զավթչին: Ով էլ որ գարշում է
մեղքից այն սիրելու փոխարեն,
և դիմակայում է իրեն իշխող
կրքերին ու հաղթում դրանք,
նա դրսևորում է այն սկզբունքի
ներգործությունը, որն
ամբողջովին վերից է:

Թշնամութիւնը Քրիստոսի ոգու
և սատանայի ոգու միջև
ամենավառ կերպով դրսևորվեց
այն բանում, թե աշխարհն
ինչպէս ընդունեց Յիսուսին:
Յրեաները մերժեցին Նրան ոչ
այնքան նրա համար, որ Նա
հայտնվեց առանց աշխարհիկ
հարստութեան, շքեղութեան ու
փառքի: Նրանք տեսան, որ Նա
զորութիւն ուներ, որն ավելի
քան լրացնում էր այդ
արտաքին առավելութիւնների
պակասը: Բայց Քրիստոսի
մաքրութիւնն ու սրբութիւնն
էր, որ ամբարիշտների

ատելութիւնը բորբոքեց իր
հանդէպ: Նրա անձնուրաց,
անմեղ նվիրվածութեան կյանքը
մշտական հանդիմանութիւնն էր
հպարտ, ցանկասեր
ժողովրդին: Յենց դա էր, որ
ատելութիւնն առաջացրեց
Աստծո Որդու դէմ: Սատանան
ու իր չար հրեշ-տակները
միավորվեցին չար մարդկանց
հետ: Ապստամբների բոլոր
դաշ-նակից ուժերը վեր ելան
ճշմարտութեան Առաջատարի
դէմ:

[507] Քրիստոսի հետևորդների
նկատմամբ ցուցաբերվում է

Նույն թշնամութիւնը, որը
դրսևորվեց նրանց Ուսուցչի
հանդէպ: Ով էլ որ տես-նում է
մեղքի գարշելի էութիւնը և
փորձում դիմակայել
փորձութիւնը վերից տրվող
զորութեամբ, անպայման
կառաջացնի սատանայի և նրա
հպատակների զայրույթը:
Քանի դեռ գոյութիւն ունեն
մեղքն ու մեղավոր-ները, միշտ
էլ ատելութիւն է լինելու
ճշմարտութեան մաքուր
սկզբունք- ների հանդէպ, և
հալածանք ու նախատիւք՝ դրա
ջատագրվների դէմ: Քրիստոսի
հետևորդները և սատանայի

ծառաները չեն կարող
միաբան-վել: Խաչի
գայթակղությունը դեռ չի
դադարել: «Բոլոր նրանք, որ
ուզում են
աստվածապաշտությամբ
ապրել Քրիստոս Յիսուսում,
հալածանք պիտի կրեն» (Բ
Տիմոթեոս 3.12):

Սատանայի գործակալներն
անդադար աշխատում են նրա
դեկավարությամբ՝
հաստատելու նրա
իշխանությունը և կառուցելու
նրա թագավորությունն ընդդեմ
Աստծո կառավարության: Դրա

համար նրանք ջանում են
մոլորեցնել Քրիստոսի
հետևորդներին և դրդել նրանց
անհավատարմության: Իրենց
առաջնորդի պես նրանք
աղավաղում են Սուրբ Գիրքը
իրենց նպատակին հասնելու
համար: Ինչպես որ սատանան
եր վարձում նախատինք բերել
Աստծո վրա, այնպես էլ նրա
ծառաները ձգտում են
զրպարտել Աստծո ժողովրդին:
Նույն ոգին, որը մահվան
մատնեց Քրիստոսին,
ամբարիշտներին մղում է
կործանելու նրա
հետևորդներին: Այս բոլորը

կանխատեսված է եղել այն
առաջին մարգա-րեուլթյան մեջ.
«Ես թշնամուլթյուն եմ դնում քո
և կնոջ միջև և քո սերնդի ու
նրա սերնդի միջև»: Եվ սա
շարունակվելու է մինչև
ժամանակի վերջը:

Սատանան հավաքում է իր
բոլոր զորքերը և իր ամբողջ
ուժով նետ-վում մարտի: Ինչո՞ւ
նա չի հանդիպում մեծ
դիմակայության: Ինչո՞ւ են
Քրիստոսի զինվորներն այդպես
քնած ու անտարբեր: Որովհետև
նրանք իրականում շատ թույլ
են կապված Քրիստոսի հետ և

որովհետև այդքան զուրկ են
Նրա Յոգուց: Մեղքը նրանց
համար վանող ու նողկալի չէ,
ինչպես իրենց Տիրոջ համար
էր: Նրանք չեն դիմակայում
դրան վճռականորեն ու
համառությամբ, ինչպես անում
էր Քրիստոսը: Նրանք չեն
գիտակցում մեղքի
ծայրաստիճան չար ու
կործանարար էությունը և կույր
են խավարի իշխանի
բնավորության ու զորության
նկատմամբ: Թշնամությունը
սատանայի և նրա գործերի
հանդեպ թույլ է, որովհետև
մարդիկ առավելապես

անտեղյակ են նրա ուժից ու
նենգութունից, ինչպես նաև
այն պատերազմից, որ նա
մղում է Քրիստոսի և նրա
եկեղեցու դեմ: Այս հարցում
հազարավորները խաբված են:
Նրանք չգիտեն, որ իրենց
թշնամին մի հզոր զորավար է,
ով իշխում է չար հրեշտակների
մտքին, [508] և որ լավ մշակված
ծրագրերի ու ճարպիկ քայլերի
օգնությամբ պատերազմում է
Քրիստոսի դեմ՝ խանգարելու
հոգիների փրկությանը:
Քրիստոսյա կոչեցյալները և
նույնիսկ Ավետարանի
ծառայողները հազ-վադեպ են

հիշատակում նրան՝
բացառությամբ, թերևս,
ամբիոնից արված
պատահական ակնարկների:
Նրանք անտեսում են նրա
մշտական գործունեությունն ու
հաջողությունը՝
արհամարհելով նրա
նենգության մասին բազմաթիվ
նախազգուշացումները, և
թվում է, թե անտեսում են
անգամ նրա գոյությունը:

Մինչ մարդիկ անտեսյակ են
նրա հնարքներին, աչալուրջ
ոտխն ամեն պահի նրանց
ճանապարհին է: Նա

Ներխուժում է բոլոր աները,
Ներկա է քաղաքի ցանկացած
փողոցում, եկեղեցիներում,
ազգային խորհուրդներում,
արդարադատության
ատյաններում՝ շփոթեցնելով,
մո-լորեցնելով,
գայթակղեցնելով, ամենուրեք
ավերելով տղամարդկանց,
կանանց և երեխաների
հոգիներն ու մարմինները,
քայքայելով ընտա-նիքները,
սերմանելով ատելութուն,
կեղծիք, կռիվ,
ապստամբութուն և
սպանություն: Իսկ
քրիստոնեական աշխարհն

այնպես է նայում այդ
երևույթներին, կարծես
Աստված է այդպես սահմանել,
և դրանք պետք է գոյություն
ունենան:

Սատանան մշտապես ջանում է
հաղթել Աստծո ժողովրդին՝
քանդե-լուծ այն պատկերները,
որ բաժանում են նրան
աշխարհից: Հին Իսրայելը
մեղքի մեջ ընկավ, երբ
համարձակվեց արգելված
հարաբերությունների մեջ
մտնել հեթանոսների հետ:
Նույն կերպ էլ շեղվեց
ժամանակակից Իսրայելը: «Այս

աշխարհի աստվածը այն
անհավատ ների սրտերը
կու-րացրեց, որպեսզի
Քրիստոսի փառավոր
Ավետարանի լուսավորությունը
չծագի նրանց վրա» (Բ
Կորնթացիս 4.4): Բոլոր նրանք,
ովքեր Քրիստոսի վճռական
հետևորդները չեն, սատանայի
ծառաներ են: Չվերածնված
սրտով սեր կա մեղքի հանդեպ
և հակում՝ փայփայելու և
արդարացնելու այն, իսկ
վերածնված սրտով մեղքի
նկատմամբ ատելություն է և
դիմադ-րություն: Երբ
քրիստոնյաներն ընտրում են

ամբարիշտների և
անհավատների
ընկերակցությունը, նրանք
իրենց փորձության են
ենթարկում: Սատանան
անտեսանելիորեն ու
գաղտագողի խաբեության քող
է գցում նրանց աչքերին:
Նրանք չեն պատկերացնում, որ
նման ընկերակցությունը
նպատակ ունի վնասելու իրենց,
և բնավորությամբ, խոսքերով
ու գործերով անդադար
նմանվելով աշխարհին՝ նրանք
ավելի ու ավելի են կուրանում:

[509] Աշխարհիկ
սովորութիւններին
հարմարվելը եկեղեցին
աշ-խարհի է վերածում, այն
երբեք աշխարհը քրիստոսին չի
բերում: Շփումը մեղքի հետ այն
անխուսափելիորեն ավելի
պակաս նողկալի կոթարձնի: Նա,
ով ընտրում է սատանայի
ծառաների ընկերակցութիւնը,
շուտով կոթարի վախենալ
նրանց Տիրոջից: Երբ մեր
պարտքը կատարելիս մենք
փորձության ենք ենթարկվում,
ինչպես Դանիելը թագավորի
պալատում, կարող ենք վստահ
լինել, որ Աստված

կպաշտպանի մեզ, բայց եթե
ինքներս ենք մեզ փորձության
ենթարկում, ապա վաղ թե ուշ
կընկնենք:

Փորձիչը հաճախ ամենամեծ
հաջողության է հասնում հենց
նրանց միջոցով, ում
ամենաքիչն են կասկածում, որ
կարող է նրա իշխանության
տակ գտնվել: Տաղանդավոր ու
կիրթ անձանց մեծարում ու
պատվում են, կարծես այդ
հատկանիշները կարող են
ըլացնել աստվածավախության
պակասը կամ մարդուն
արժանացնել Աստծո

բարեհաճությանը: Տաղանդը և
բարեկրթությունն ինքնին
Աստծո պարգևներ են, բայց երբ
փորձում են դրանցով լրացնել
բարեպաշտության
բացակայությունը, երբ
Աստծուն մոտեցնելու
փոխարեն՝ դրանք հեռացնում
են Նրանից, ապա դառնում են
անեծք և որոգայթ: Շատերն
այն կարծիքին են, թե թվացյալ
քաղաքավարությունը կամ
Նրբանկատությունը վկայում են
քրիստոնյա լինելու մասին:
Ավելի մեծ սխալ երբեք չի եղել:
Այս հատկանիշները պիտի
զարդարեն ամեն մի

քրիստոնյայի բնավորութիւնը,
քանզի հզոր ազդեցութիւն են
գործում հոգուտ ճշմարիտ
կրոնի, բայց դրանք պետք է
սրբագործվեն Աստծո կողմից,
այլապես կծառայեն ի չարը:
Չաճախ հղկված մտքի և
գրավիչ շարժուձևի տեր մարդը,
ով իրեն թույլ չի տա այն, ինչը
սովորաբար անբարոյական
արարք է համարվում, կարող է
ընդամենը մի փայլուն գործիք
լինել սատանայի ձեռքում: Նրա
ազդեցութեան և օրինակի
խորամանկ, խաբուսիկ բնույթը
Նրան ավելի վտանգավոր է
դարձնում Քրիստոսի գործի

համար, քան տգետներն ու
անբարեկիրթներն են:

Անկեղծ աղոթքով ու Աստծուն
ապավինելով՝ Սողոմոնն
այնպիսի իմաստություն ձեռք
բերեց, որն առաջացրեց
աշխարհի զարմանքն ու
հիացմունքը: Բայց երբ նա երես
թեքեց իր զորության Աղբյուրից
և սկսեց վստահել սեփական
ուժերին, փորձության զոհ
դարձավ: Եվ այն հրաշալի
կարողությունները, որ շնորհվել
էին թագավորներից
ամենաիմաստունին, միայն
ավելի հզոր գործիք դարձրին

Նրան հոգիների թշնամու
ձեռքում: [510]

Ու թեև սատանան միշտ ձգտում
է թաքցնել այդ փաստը
քրիստո-նյաներից, նրանք
երբեք չպիտի մոռանան, որ
իրենց «պատերազմը արյան և
մարմնի հետ չէ, այլ
իշխանությունների և
պետությունների, այս
աշխարհի խավարի
աշխարհակալների և այն չար
հոգիների հետ, որ
երկնավորների մեջ են»
(Եփեսացիս 6.12): Դարերի
խորքից մեզ է հասնում

ներշնչյալ նախագգուշացումը.
«Արթուն եղեք, հսկում արեք,
որովհետեւ ձեր ոտիս թշնամին՝
սատանան, գոռոզ առյուծի պես
ման է գալիս և որոնում, թե
որին կուլ տա» (Ա Պետրոս 5.8):
«Աստծո սպառազինությունը
հագեք, որ կարող լինեք
սատանայի հնարքներին
հակառակ կենալ» (Եփեսացիս
6.11):

Ադամի օրերից առաջօր մեր
մեծ թշնամին իր ողջ
կարողությունն օգտագործում է
ճնշելու և կործանելու համար:
Նա հիմա պատրաստվում է իր

վերջին արշավին եկեղեցու
դեմ: Բոլոր նրանք, ովքեր
ջանում են հե-տևել Յիսուսին,
ընդհարվելու են այս անողոք
թշնամու հետ: Որքան ավելի
քրիստոնյան նմանվի
աստվածային Օրինակին,
այնքան ավելի հաստատ է, որ
նա սատանայի
հարձակումների թիրախ
կդառնա: Բոլոր նրանք, ովքեր
ակտիվորեն ներգրավված են
Աստծո գործի մեջ, ջանալով
մերկացնել սատանայի
խաբեությունները և քրիստոսին
ներկայացնել ժողովրդին,
կարող են Պողոսի նման վկայել,

որ մտքի խոնարհությամբ, շատ
արցունքներով ու
փորձություններով են ծառայել
Տիրոջը:

Սատանան իր ամենակատաղի
ու նենգ փորձություններով
հարձակ-վում էր Քրիստոսի
վրա, բայց ամեն անգամ հետ էր
մղվում: Այդ հաղթա-նակները
մեզ համար են տարվել, և
դրանք մեզ էլ հաղթելու
հնարա-վորություն են տալիս:
Քրիստոսը ուժ կտա բոլորին,
ովքեր փնտրում են այդ ուժը:
Սատանան չի կարող հաղթել
մարդուն՝ առանց նրա

հա-մաճայնության: Փորձիչը չի
կարող բռնանալ մարդու կամքի
վրա և ստի-պել նրան մեղք
գործել: Նա կարող է հոգեպես
ճնշել, բայց չի կարող
ապականել, կարող է
տառապանք պատճառել մեզ,
բայց ոչ՝ պղծել: Այն փաստը, որ
Քրիստոսը հաղթել է, պետք է
քաջություն ներշնչի նրա
հե-տևորդներին՝ արիաբար
պայքարելու մեղքի ու
սատանայի դեմ: [511]

ԳԼՈՒԽ 31—ՉԱՐ ՈԳԻՆԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Կապը տեսանելի և
անտեսանելի աշխարհների
միջև, Աստծո հրեշ-տակների
ծառայությունն ու չար ոգիների
գործունեությունը պարզորոշ
ներկայացված են Սուրբ Գրքում
և անքակտելիորեն
միահյուսված մարդ-կային
պատմությանը: Այսօր չար
ոգիների գոյությանն արդեն
գրեթե չեն հավատում, իսկ
սուրբ հրեշտակներին՝
«ուղարկված
սպասավորություն անելու

Նրանց, որ փրկութիւնը պիտի ժառանգեն» (Եբրայեցիս 1.14),
համարում են մեռած
մարդկանց հոգիներ: Սակայն
Սուրբ Գիրքը ոչ միայն վկայում
է բարի կամ չար հրեշտակների
գոյութեան մասին, այլև
անվիճելիորեն ապացուցում է,
որ նրանք մեռած մարդկանց
անմարմին հոգիները չեն:

Հրեշտակները գոյութիւն
ունենին դեռևս մինչև մարդու
արարումը, երբ դրվում էին
երկրի հիմքերը, «առավոտյան
աստղերը միասին ցնծում էին,
և Աստծո բոլոր որդիները

գովաբանում էին» (Յոբ 38.7):
Մարդու մե-ղանջումից հետո
հրեշտակներ ուղարկվեցին
պահպանելու կենաց ծառը, թեև
այդ ժամանակ դեռ ոչ մի մարդ
չէր մեռել: Հրեշտակները
բնությամբ գերազանց են
մարդկանցից, ինչպես նշել է
սաղմոսերգուն. «Մի քիչ
ցածրացրիր նրան
հրեշտակներից» (Սաղմոս 8.5):

Սուրբ Գիրքը մեզ տեղեկացնում
է երկնային էակների
թվակազմի, զորության ու
փառքի, ինչպես նաև Աստծո
կառավարության ու

փրկագնման գործի հետ նրանց
առնչության մասին: «Տերը
երկնքում հաստատեց իր
աթոռը, և նրա
թագավորությունը տիրում է
բոլորին»: Եվ մարգարեն ասում
է. «Շատ հրեշտակների ձայն
լսեցի աթոռի... շուրջը»:
«Չորրորդամբ հզոր»՝ նրանք
կանգնած են Արքաների
Արքայի [512] ներկայությամբ,
«նրա պաշտոնյաները, որ
կատարում» են «նրա կամքը»՝
«նրա խոսքի ձայնը լսելով»
(Սաղմոս 103.19-21,
Հայտնություն 5.11): Դանիել
մարգարեն տեսել էր «հազար

հազարավոր և բյուր
բյուրավոր» երկնային
լրաբերների: Պողոս առաքյալը
Նրանց «բյուրավոր
հրեշտակների շքախումբ» է
կոչում (Դանիել 7.10,
Եբրայեցիս 12.22): Որպես
Աստծո լրաբերներ՝ նրանք
սլանում են «կայծակի
կերպարանքով» (Եզեկիել 1.14),
այնքան շլացուցիչ է նրանց
փառքը, և սրընթաց՝ նրանց
թռիչքը: Հրեշտակը՝ «տեսքով
փայլակի պես», իսկ
«հագուստը՝ ձյան պես
սպիտակ», հայտնվելով Փրկչի
գերեզմանի մոտ՝ այնպես

սարսափեցրեց
պահապաններին, որ նրանք
«մեռելի նման եղան»
(Մատթեոս 28.3,4): Երբ
Սենեքերիմը՝ ամբարտապան
ասորին, նախատեց ու
հայհոյեց Աստծուն և սպառնաց
կործանել Իսրայելը, «այն գիշեր
դուրս եկավ Տիրոջ հրեշտակը և
զարկեց ասորեստանցիների
բանակում հարյուր
ութսունհինգ հազար»:
Ջրեշտակը Սենեքերիմի
բանակից «բնաջինջ արեց
ամեն քաջ զորավորին,
զորավարին և իշխանին... և նա
ամոթով հետ դարձավ իր

երկիրը» (Դ Թագավորաց 19.35,
Բ Մնացորդաց 32.21):

Յրեշտակներն ուղարկվում են
Աստծո զավակների մոտ
ողորմության առաքելությամբ:
Նրանք եկան Աբրահամի մոտ՝
օրհնության խոստում-ներով,
գնացին Սոդոմ՝ կործանումից
փրկելու արդար Ղովտին, եկան
Եղիայի մոտ, երբ նա հոգնած ու
քաղցած մեռնում էր
անապատում, հայտնվեցին
Եղիսեին՝ հրեղեն կառքերով ու
ծիերով շրջապատելով փոքրիկ
քաղաքը, որում նա
շրջափակվել էր թշնամիների

Կողմից, օգնեցին Դանիելին,
երբ նա աստվածային
իմաստություն էր փնտրում
հեթանոս արքայի պալատում,
ու երբ գցվեց առյուծների գուբը,
եկան Յերովդեսի զնդանում
մահվան մատնված Պետրոսի
մոտ, հայտնվեցին Փիլիպպեի
բանտարկյալներին, գիշերով
այցելեցին Պարտին ու նրա
ուղեկիցներին՝ փոթորկափց
ծովի վրա, լուսավորեցին
Կռնելիոսի միտքը, որպեսզի
նա ընդուներ Ավետարանը,
Պետրոսին փրկության
պատգամով ուղարկեցին
անձանոթ հեթանոսի մոտ.

այսպես սուրբ հրեշտակները
բոլոր դարերում ծառայել են
Աստծո ժողովրդին:

Քրիստոսի յուրաքանչյուր
հետևորդի համար մի
պահապան հրեշ-տակ է
կարգված: Այս երկնային
Էակները պաշտպանում են
արդարներին [513] չարագործի
ուժից: Սատանան ինքն
ընդունեց այս փաստը, երբ
ասաց. «Մի՞թե Հոբը ձրի է
աստվածավախ: Չէ՞ որ դու
Նրան, նրա տունը և նրա
ամբողջ ունեցվածքը ցանկով
շրջապատել ես» (Հոբ 1.9,10):

Թե ինչպես է Աստված
պաշտպանում իր ժողովրդին,
ներկայացված է
սաղ-մուտերգուհի խոսքերում.
«Տիրոջ հրեշտակը բանակ է
շինում նրանից վա-խեցողների
չորս կողմով և փրկում նրանց»
(Սաղմոս 34.7): Խոսելով իրեն
հավատացողների մասին՝
Փրկիչն ասաց. «Զգույշ եղեք, որ
այս փոքրերից մեկին
չանարգեք, որովհետև ասում եմ
ձեզ, որ նրանց հրեշտակները
երկնքում միշտ տեսնում են իմ
Յոր երեսը, որ երկնքում է»
(Մատթեոս 18.10):
Հրեշտակները՝ կարգված

ծառայելու Աստծո
զավակներին, ամեն ժամանակ
ազատ մուտք ունեն Նրա մոտ:

Այսպիսով Աստծո ժողովրդին
չարի բոլոր ուժերի դեմ իր
պայքարում խավարի իշխանի
գայթակղիչ զորութեան ու
մշտարթուն չարութեան դեմ
երկնային հրեշտակների
չընդհատվող
պաշտպանութեան
հավաս-տիացում է տրված: Եվ
դրա կարիքն իսկապես կա:
Աստված իր զավակ-ներին
շնորհի և պաշտպանութեան
խոստում է տվել, քանի որ

Նրանք հանդիպելու են չարի
հզոր ուժերին, որոնք
բազմաթիվ են, վճռական ու
անխոնջ, և չիմանալով կամ
անտեսելով նրանց
չարությունն ու զորու-թյունը՝
ոչ ոք չի կարող անվտանգ
լինել:

Չար ոգիները, որ սկզբում
ստեղծվել էին անմեղ, իրենց
բնությամբ, զորությամբ ու
փառքով հավասար էին այն
սուրբ էակներին, որոնք հիմա
Աստծո լրաբերներն են: Բայց
մեղանջելով՝ նրանք միավորվել
են Աստծուն անպատվելու և

մարդկանց կործանելու համար:
Միանալով սատանայի
ապստամբությանը և նրա հետ
միասին վտարվելով երկնքից՝
նրանք հաջորդ բոլոր դարերի
ընթացքում զործակցել են նրան
աստվածային իշխանության
դեմ պատերազմում: Սուրբ
Գիրքը մեզ պատմում է նրանց
դաշնակցության ու
կառավարության, նրանց
տարբեր աստիճանների, նրանց
մտավոր կարողության ու
խորամանկության, ինչպես
նաև մարդկանց խաղաղության
ու երջանկության դեմ նրանց
չար նպատակների մասին:

Չին Կտակարանը հազվադեպ է
հիշատակում չար ոգիների
գոյության ու նրանց
գործունեության մասին, բայց
նրանք իրենց ուժն
ամենացայտուն կերպով
դրսևորեցին այն ժամանակ,
երբ Քրիստոսն այս երկրում էր:
Քրիստոսը եկել էր իրագործելու
[514] մարդու փրկության
ծրագիրը, և սատանան վճռեց
պաշտպանել աշխարհին
իշխելու իր իրա-վունքը: Նրան
հաջողվել էր կռապաշտություն
հաստատել երկրի բոլոր
մասերում, բացի Պաղեստինից:

Քրիստոսը եկավ այն միակ
երկիրը, որը դեռ ամբողջովին
չէր հանձնվել գայթակղիչի
իշխանությանը՝ երկնային
լույսով ողողելու ժողովրդին:
Այստեղ երկու ախոյան ուժերն
ընդհարվեցին
գերիշխանության համար:
Չիսուսը մեկնեց իր սիրո
ձեռքերը՝ հրավիրելով բոլոր
կամեցողներին ներում և
հանգիստ գտնելու իր մեջ:
Խավարի զորքերը տեսան, որ
իրենց իշխանությունն
անսահման չէ, և հասկացան,
որ եթե Քրիստոսի
առաքելությունը հաջողությամբ

պասկվի, իրենց կառավարմանը
շուտով վերջ կդրվի: Սատանան
զայրացավ շղթայակապ
առյուծի պես և
արհամարհանքով իր
իշխանությունը ցույց տվեց
մարդկանց մարմինների և
հոգիների վրա:

Այն փաստը, որ դևերն իշխում
էին մարդկանց, հստակորեն
նշված է Նոր Կտակարանում:
Այդ մարդիկ սովորական
հիվանդությամբ չէ, որ
տառապում էին: Քրիստոսը
հիանալի կերպով հասկանում
էր, թե ում հետ գործ ուներ, և

տեսնում էր չար ոգիների
անմիջական ներկայութունն ու
ազդեցութունը:

Գաղարայի դիվահարների
բժշկության աստվածաշնչյան
պատմութունը վառ օրինակ է
ինչպես այդ ոգիների
թվակազմի, ուժի և
չարակա-մության, այնպես էլ
Քրիստոսի զորության ու
ողորմության մասին: Այդ
թշվառ մուլագարները,
կատաղաբար փշրելով ամեն մի
շղթա և փրփրած բերաններով
ջղածգվելով՝ օդը լցնում էին
իրենց աղաղակներով՝ վերքեր

հասցնելով իրենց և սպառնալով բռնորին, ովքեր կմոտենային իրենց: Նրանց արյունոտ, այլանդակված մարմիններն ու մթագնած միտքը ներ-կայացնում էին մի տեսարան, որը մեծ հաճույք էր պատճառում խավարի իշխանին: Այս տառապյալներին իշխող դևերից մեկը հայտարարեց. «Իմ անունը Լեգեոն է, որովհետև մենք շատ ենք» (Մարկոս 5.9): Չռոմեական բանակում լեգեոնը կազմված էր երեքից հինգ հազար հոգուց: Սատանայի գործը նույնպես գործում է

Խամբերով, և խումբը, որին
պատկանում էին այդ դները,
թվով լեգեոնից պակաս չէր:

Չիսուսի հրամանով չար
ոգիները հեռացան իրենց
զոհերից՝ թողնելով նրանց
հանդարտ նստած Փրկչի
ոտքերի մոտ՝ հնազանդ,
բանական ու մեղմ: Բայց
դներին [515] թույլ տրվեց ծովը
զցել խոզերի մի ամբողջ
երամակ: Գադարացիներն այս
կորուստն ավելի մեծ
համարեցին, քան Քրիստոսի
չնորհած օրհնությունը, և
աստվածային Բժշկին

Խնդրեցին, որ հեռանա: Յենց
սա էր սատանայի նպատակը:
Նրանց կորստի մեղքը գցելով
Յիսուսի վրա՝ նա եսասիրական
վախ արթնացրեց ժողովրդի
մեջ՝ թույլ չտալով, որ լսեն Նրա
խոսքերը: Կորստի,
դժբախտության ու
տա-ռապանքի մեջ սատանան
մշտապես մեղադրում է
քրիստոնյաներին, որպեսզի
նախատինքը չընկնի իր և իր
գործակալների վրա:

Սակայն Քրիստոսի ծրագրերը
չխափանվեցին: Նա չար
ոգիներին թույլ տվեց

ոչնչացնել խոզերի երամակը՝
որպես հանդիմանութիւն այն
հրեաներին, ովքեր այս
անմաքուր կենդանիներին
պահում էին հանուն շահի: Եթե
Քրիստոսը չզսպեր դներին,
նրանք ծովը կգցեին ոչ միայն
խոզերին, այլ նաև դրանց
պահողներին ու տերերին,
ովքեր կենդանի մնացին
միմիայն հանուն նրանց
փրկութեան գթարտորեն
գործադրված Նրա զորութեան
շնորհիվ: Ավելին՝ այս
միջադեպը թույլ տրվեց,
որպեսզի աշակերտները
տեսնեն սատանայի դաժան

իշխանությունն ինչպես
մարդկանց, այնպես էլ
կենդանիների վրա: Փրկիչը
կամենում էր, որ իր
հետևորդները ճանաչեն իրենց
թշնամուն, որպեսզի նրանք
չխաբվեն ու չհաղթվեն նրա
հնարքներից: Նա կամենում էր
նաև, որ այդ շրջանի
ժողովուրդը տեսներ
սատանայի շղթաները փշրելու
և նրա գերիներին ազատելու իր
զորությունը: Ու թեև Յիսուսն
Ինքը հեռացավ, մարդիկ, որ
այդպես հրաշքով փրկվել էին,
մնացին՝ հռչակելու իրենց
Բարերարի ողորմությունը:

Սուրբ Գրքում նման ուրիշ
օրինակներ ել կան:
Փյունիկացի կնոջ դուստրը
խիստ տառապում էր դևից,
որին Յիսուսը դուրս հանեց իր
խոսքով (Մարկոս 7.26-30):
«Կույր ու համր դիվահարը»
(Մատթեա 12.22), մի
երիտասարդ՝ բռնված համր
ոգով, որը հաճախ նրան
«կրակի և ջրի մեջ էր գցում, որ
կործանի» (Մարկոս 9.17-27),
այն դիվահարը, որ «պիղծ դևի
ոգուց» (Ղուկաս 4.33-36)
տանջվելով՝ խանգարեց
ժողովարանի շաբաթօրյա

հանգիստը Կափառնայում.
բոլորն էլ [516] բժշկվեցին
կարեկից Փրկչի կողմից: Գրեթե
բոլոր դեպքերում Քրիստոսը
դիմում էր դներին՝ որպես
գիտակից էակների՝
հրամայելով նրանց թողնել
իրենց զոհերին և այլևս
չտանջել նրանց: Տեսնելով Նրա
հզոր ուժը՝ Կափառնայում
երկրպագողները ապշած
«իրար հետ խոսում էին և
ասում. «Սա ինչ բան է, որ
իշխանությունով ու
զորությունով պիղծ ոգի-ների
սաստում է, և նրանք դուրս են
գալիս» (Ղուկաս 4.36):

Դիվահարները սովորաբար
ներկայացված են որպես
մեծագույն տառապյալներ,
սակայն եղել են նաև
բացառություններ: Գերբնական
ուժ ձեռք բերելու համար ոմանք
ողջունել են սատանայական
ազդեցությունը: Այդպիսիներն,
իհարկե, չեն ընդհարվել դևերի
հետ: Դրանցից էին, օրինակ,
հարցուկ ոգի ունեցողները՝
Սիմոն մոգը, կախարդ Եղիմասը
և այն աղախինը, ով
Փիլիպպեոսը հետևում էր
Պողոսին ու Շիղային:

Ոչ ոք ավելի մեծ վտանգի մեջ
չէ չար ոգիների
ազդեցութիւնից, քան նրանք,
ովքեր, չնայած Սուրբ Գրքի
հստակ ու բազմաթիւ
վկայու-թիւններին, հերքում են
սատանայի և նրա
հրեշտակների գոյութիւնն ու
գործունեութիւնը: Քանի դեռ
անտեղյակ ենք նրանց
նենգութեանը, նրանք գրեթէ
անպատկերացելի
առավելութիւն ունեն: Շատերը
հետևում են նրանց
առաջարկներին, մինչդեռ
կարծում են, թէ իրենց
իմաստութեամբ են շարժվում:

Ահա թե ինչու է սատանան
ամենուրեք անհավատություն
տիրում իր գոյության
նկատմամբ, որքան ավելի է
մոտենում ժամանակի վերջը,
երբ նա պիտի գործի մեծագույն
ուժով՝ խաբելու և կործանելու
համար: Նրա
քաղաքականությունն է՝
թաքնվել և թաքցնել իր
գործելաձևը:

Մեծ խաբեքան ոչնչից այնքան
չի վախենում, որքան իր
խորամանկ հնարքների
մերկացումից: Իր իսկական
եությունն ու նպատակներն

ավելի լավ քողարկելու համար
Նա այնպես է իրեն
Ներկայացրել մարդկանց, որ
ծաղրից ու արհամարհանքից
բացի ուրիշ ոչ մի զգացում
չառաջացնի: Նա շատ գոհ է,
երբ իրեն պատկերում են որպես
անճոռնի ու զզվելի մի էակ՝
կեսմարդ, կես՝ կենդանի, ու երբ
լսում է, թե ինչպես են իր
անունը ծաղրով ու ծիծաղով
արտասանում նրանք, ովքեր
իրենց խելամիտ ու
լա-վատեղյակ են համարում:
[517]

Նա կատարյալ հմտությամբ
քողարկել է իրեն, և հենց դրա
համար են ամենուրեք
հարցնում. «Իրո՞ք այդպիսի
արարած գոյություն ունի»: Այն
փաստը, որ կրոնական
աշխարհն ընդունել է
տեսություններ, որոնք
հակասամ են Սուրբ Գրքի
պարզագույն վկայությանը,
խոսում է սատանայի
հաջողության մասին: Եվ քանի
որ սատանան կարող է շատ
հեշտությամբ վերահսկել այն
մարդկանց միտքը, ովքեր
անտեղյակ են նրա
ազդեցությանը, Աստծո խոսքը

Նրա նենգ գործունեության
այդքան օրինակներ է
ներկայացնում՝ բացահայտելով
մեզ նրա գաղտնի ուժերը և
դրդելով զգուշանալ նրա
հարձակումներից:

Սատանայի և նրա զորքի ուժն
ու չարամտությունը կարող էին
իրոք տազնապեցնել մեզ, եթե
հնարավորություն չունենայինք
ապաստարան ու փրկություն
գտնել Փրկչի ավելի գերազանց
զորության մեջ: Մենք մեր
տների դռները փակում ենք
սողնակներով ու
փականքներով՝ մեր

ու-նեցվածքն ու կյանքը
չարագործներից
պաշտպանելու համար, սակայն
հազվադեպ ենք մտածում չար
հրեշտակների մասին, որոնք
անդադար փորձում են
մոտենալ մեզ, և ում
հարձակումներին մենք
սեփական ուժերով անկարող
ենք դիմակայել: Եթե թույլ
տրվեր, նրանք կշեղեին մեր
միտքը, կտանջեին մեր
մարմինը, կկործանեին մեր
ուներցվածքն ու կյանքը: Նրանց
միակ հաճույքը թշվառությունն
ու ավերածությունն է:
Սարսափելի է նրանց վիճակը,

ովքեր, հակառակ Աստվածային
պա-հանջներին, հանձնվում են
սատանայի փորձություններին,
մինչև որ Աստված մատնում է
Նրանց չար ոգիների
վերահսկողությանը: Բայց
Նրանք, ովքեր հետևում են
Քրիստոսին, մշտապես
ապահով են Նրա
պահպանության ներքո:
Հրեշտակները, որ զորությամբ
գերազանց են, երկնքից
ոպարկվում են պաշտպանելու
Նրանց: Չարագործը անկարող է
ճեղքել այն պահակախումբը,
որով Աստված շրջապատել է Իր
ժողովրդին: [518]

ԳԼՈՒԽ 32—ՍԱՏԱՆԱՅԻ ՈՐՈԳԱՅԹՆԵՐԸ

Մեծ պայքարը Քրիստոսի և
սատանայի միջև, որն ընթացել
է շուրջ վեց հազար տարի,
մոտենում է իր ավարտին, և
չարագործը կրկնապատկում է
իր ջանքերը՝ տապալելու
Քրիստոսի գործը հանուն
մարդու և որսալու հոգիներն իր
որոգայթների մեջ: Նրա
նպատակն է՝ անապաշխար
մարդկանց պահել խավարի
մեջ, մինչև որ Փրկչի
բարեխոսությունն ավարտվի, և
այլևս մեղքի համար զոհ չլինի:

Երբ հատուկ ջանքեր չեն
արվում՝ դիմադրելու նրա
իշխանությանը, երբ եկեղեցում
և աշխարհում
անտարբերություն է տիրում,
սատանան հանգիստ է, քանի
որ վտանգ չկա կորցնելու
նրանց, ում նա պահում է իր
կամքի գերության մեջ: Բայց
երբ մարդկանց ուշադրությունը
հրավիրվում է հավիտենական
բաների վրա, և նրանք հարց են
տալիս՝ «Ի՞նչ անեմ, որ
փրկվեմ», նա աչալուրջ է՝
ջանալով դիմակայել Քրիստոսի

գորութեանը և չեզոքացնելել
Սուրբ Յոզու ազդեցութիւնը:

Սուրբ Գիրքն ասում է, որ մի
անգամ, երբ Աստծո
հրեշտակները եկան
Ներկայանալու Տիրոջը,
սատանան նույնպէս եկավ
նրանց հետ (Յոբ 1.6), բայց ոչ
թե խոնարհվելու
Հավիտենական Արքայի առաջ,
այլ առաջ տանելու իր չար
ծրագրերն արդարների դէմ:
Այդ նույն նպատակով էլ նա
միշտ ներկա է այնտեղ, ուր
մարդիկ հավաքվում են
երկրպագելու Աստծուն:

Մնալով անտեսանելի՝ նա ջանք
չի խնայում երկրպագողների
միտքը վերահսկելու համար:
Չմոտ զորավարի նման՝ նա իր
ծրագրերը նախօրոք է
կազմում: Տեսնելով, որ Աստծո
լրաբերն ուսումնասիրում է
Սուրբ Գիրքը, նա ուշադիր
հետևում է, թե ինչ նյութ է [519]
ներկայացվել-լու ժողովրդին, և
ապա գործի է դնում իր ողջ
հմտությունն ու նենգությունը՝
ստեղծելու այնպիսի
պարագաներ, որպեսզի լուրը
չհասնի նրանց, ում ինքը
մոլորեցնում է հենց այդ
հարցում: Եվ մարդը, ով ամենից

շատ կարիք ունի
Նախագգուշացման, ստիպված
է լինում գբաղվել որևէ գործով,
կամ էլ որոշ այլ
հանգամանքներ թույլ չեն
տալիս նրան լսելու այն խոսքը,
որ նրա համար կարող էր
կյանքի բուրմունք լինել:

Սատանան տեսնում է Տիրոջ
ծառաներին՝ մտահոգված այն
հոգևոր խավարի պատճառով,
որ պատել է ժողովրդին, լսում
է, թե ինչպես են նրանք
ջերմեռանդ աղոթում Աստծուն՝
շնորհ և գորություն ստանալու,
որպեսզի ցրեն

անտարբերության,
անհոգության ու ծուլության
կախար-դանքը, և նոր եռանդով
է գործի դնում իր
ճարակությունը: Նա մարդկանց
դրդում է ախորժակի
բավարարման կամ
ինքնաբավարարման որևէ այլ
ձևի՝ բթացնելով նրանց
զգայարաններն այնպես, որ
նրանք ի վիճակի չլինեն լսելու
այն, ինչի կարիքն ամենից շատ
ունեն:

Սատանան քաջ գիտի, որ
նրանք, ում ինքը կարող է դրդել
անտեսելու աղոթքն ու Սուրբ

Գրքի ուսումնասիրությունը,
հաղթվելու են իր
հարձակումներից, ուստի ինչ
ասես հնարում է նրանց միտքը
զբաղեցնելու համար: Միշտ էլ
եղել են իրենց աստվածապաշտ
համարող մարդիկ, ովքեր
ճշմարտության մեջ խորանալու
փոխարեն՝ իրենց կրոնն են
դարձնում բնավորության
թերություններ կամ հավատի
սխալներ փնտրելը նրանց մոտ,
ուր հետ համամիտ չեն:
Այդպիսիք սատանայի աջ
ձեռքն են: Քիչ չեն եղբայրների
չարախոսները, և նրանք միշտ
ակտիվ են, երբ Աստված

գործում է, և Նրա ծառաները
ճշմարտապես պատվում են
Նրան: Նրանք կեղծ երանգներ
են վերագրում ճշմարտութունը
սիրողների և դրան
հնազանդվողների խոսքերին ու
գործերին: Քրիստոսի
ամենաանկեղծ, եռանդուն ու
անձնուրաց ծառաներին նրանք
ներկայացնում են որպես
խաբվածներ կամ խաբեբաներ:
Նրանց գործն է՝ կեղծել ամեն
մի ճշմարիտ և ազնիվ արարքի
դրդապատճառք, տարածել
զրպարտութուններ, և կասկած
հարուցել անփորձների մտքում:
Այն ամենն, ինչ մաքուր է և

արդար, նրանք հնարավոր
բոլոր ձևերով ներկայացնում են
որպես անազնիվ ու
մոլորեցուցիչ:

Սակայն թող ոչ ոք չխաբվի
այդպիսի ների վերաբերյալ:
Դժվար չէ հասկանալ, թե ում
զավակներն են նրանք, ում
օրինակին են հետևում և ում
գործն են անում. «Իրենց
պտուղներից [520] կճանաչեք
նրանց» (Մատթեոս 7.16):
Իրենց վարքով նրանք
հիշեցնում են սատանային՝
թուևոտ զրպարտչին,

«Եղբայրների չարախոսին»
(Յայտնություն 12.10):

Մեծ խաբեքան շատ ծառաներ
ունի, ովքեր պատրաստ են
ներկայացնելու ցանկացած
կամ ամեն տեսակ
մոլորություն՝ նախատեսված
տարբեր ճաշակի և
ունակությունների տեր
անձանց համար, ում նա ուզում
է կործանել: Նրա ծրագիրն է՝
եկեղեցի բերել ոչ անկեղծ,
չվերածնված մարդկանց,
նրանց միջոցով կասկածանք ու
անհավատություն սերմանել և
խանգարել բոլորին, ովքեր

փափագում են Աստծո գործի
առաջընթացը, և իրենք էլ
ձգտում են առաջանալ դրա
հետ: Շատերը, ովքեր իրական
հավատ չունեն Աստծո կամ
Նրա Խոսքի նկատմամբ,
համաձայնվում են
ճշմարտության որոշ
սկզբունքների հետ և այդպիսով
համարվում քրիստոնյա՝
հնարավորություն ստանալով
իրենց սխալները
ներկայացնելու որպես
աստվածաշնչյան ուսմունք:

Այն կարծիքը, որ կարևոր չէ, թե
մարդ ինչպես է հավատում,

սա-տանայի ամենահաջող
խաբեություններից մեկն է: Նա
գիտի, որ սիրով ընդունված
ճշմարտությունը սրբագործում
է հոգին, ուստի անդադար
փորձում է այն փոխարինել
կեղծ տեսություններով,
առասպելներով և ուրիշ
ավետարանով: Սկզբից նեթ
Աստծո ծառաները պայքարել
են կեղծ ուսուցիչների դեմ՝ ոչ
միայն որպես անառակ
մարդկանց, այլ նաև որպես
կործանարար կեղծիքներ
տարածողների: Եղիան,
Երեմիան, Պողոսը վճռական ու
համարձակ պայքար են մղել

Նրանց դեմ, ովքեր հեռացնում
էին մարդկանց Աստծո խոսքից:
Այն մտածելակերպը, որն
անկարևոր է համարում ճիշտ
կրոնական հավատը,
ճշմարտության այս սուրբ
պաշտ-պանների մոտ ոչ մի
հավանության չի արժանացել:

Սուրբ Գրքի անստույգ ու
երևակայական
մեկնաբանաթյունները և
հավատի վերաբերյալ
բազմաթիվ իրարամերժ
տեսությունները, որ գոյություն
ունեն քրիստոնեական
աշխարհում, մեր մեծ թշնամու

գործն են: Նա ուզում է
մարդկանց այնպես շփոթեցնել,
որ չնկատեն ճշմարտությունը:
Եվ տարածայնություններն ու
պառակտումները
քրիստո-նեական եկեղեցիների
միջև գլխավորապես
պայմանավորված են որևէ
սիրված ուսմունքի օգտին
Աստվածաշունչը
խեղաթյուրելու համատա-րած
սովորությամբ: Աստծո խոսքը
խոնարհ սրտով ու զգուշորեն
ուսում-նասիրելու և Նրա կամքը
հասկանալ ձգտելու փոխարեն՝
շատերը ձգտում են միայն

արտասովոր կամ ինքնատիպ
ինչ-որ բան հայտնաբերել: [521]

Սխալ ուսմունքները կամ ոչ
քրիստոնեական սովորույթները
հաստատելու համար ոմանք
Աստվածաշնչից հատվածներ
են մեջբերում՝ երբեմն կտրելով
համատեքստից կամ նշելով
որևէ տեքստի միայն կեսը,
մինչդեռ մյուս մասը կարող է
բոլորովին այլ նշանակություն
ունենալ: Օձի նենգությամբ
նրանք թաքնվում են անկապ
խոսքերի հետևում՝
հարմարեցնելով դրանք իրենց
մարմնավոր

ցանկություններին: Այսպես
շատերը գիտակցաբար
աղավաղում են Աստծո խոսքը:
Ուրիշներն էլ, ունենալով վառ
երևակայություն, կառչում են
Սուրբ Գրքի
խորհրդանշաններից ու
պատկերներից՝ մեկնաբանելով
դրանք իրենց
պատկերացումների
համաձայն՝ հաշվի չառնելով
Աստվածաշնչի այն
վկայությունը, որ Սուրբ Գիրքը
իր իսկ մեկնաբանն է, և ապա
իրենց անհեթեթ
գաղափարները ներկայացնում

ԵՆ որպէս աստվածաշնչյան
ՈՒՍՄՈՒՆՔ:

Երբ էլ որ Սուրբ Գիրքն
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԻ առանց
աղոթքի, առանց խոնարհ ու
սովորելու պատրաստ հոգու,
ամենապարզ ու ամենահստակ,
ինչպէս նաև ամենաբարդ
հատվածները սխալ
կընկալվեն: Պապական
առաջնորդներն ընտրում են
Սուրբ Գրքի այն հատվածները,
որոնք լավագույնս կձառայեն
իրենց մտադրութիւններին,
մեկնաբանում են իրենց ուզած
ձևով և ապա ներկայացնում

Ժողովրդին՝ միաժամանակ
գրկելով նրան Գիրքն
ինքնուրույն ուսումնասիրելու և
նրա սրբագան
ճշմարտությունները
հասկանալու արտոնությունից:
Աստվածաշունչն
ամբողջությամբ պետք է տրվի
մարդկանց այնպես, ինչպես
գրված է: Ավելի լավ է նրանց
ընդհանրապես չսովորեցնել
Սուրբ Գրքից, քան այն
մատուցել այդքան
խեղաթյուրված ձևով:

Աստվածաշունչը
նախատեսված է եղել որպես

ուղեցույց բուրի համար, ովքեր
ուզում են ճանաչել իրենց
Արարչի կամքը: Աստված
մարդկանց տվել է
մարգարեական հաստատ
խոսքը: Յրեշտակները և հենց
հնքը՝ Քրիստոսը, եկան
Դանիելին ու Յովհաննեսին
հայտնելու այն, ինչը շուտով
պիտի կատարվեր: Մեր
փրկությանը վերաբերող այդ
կարևոր հարցերը չեն թողնվել
խորհրդավոր մշուշի մեջ:
Դրանք այնպես չեն տրվել,
որպեսզի շփոթեցնեն և
մոլորեցնեն ճշմարտության
անկեղծ որոնողին: Տերն ասել է

Ամբակում մարգարեի միջոցով.
«Գրիր տեսիլքը և որոշակի
նշանակիր... որպեսզի
կարդացողը հեշտ կարդա»
(Ամբակում 2.2, բնագրի
թարգմ.): Աստծո խոսքը պարզ է
բոլորի համար, ովքեր
ուսումնասիրում են այն
աղոթքի [522] հոգով: Իսկապես
ազնիվ յուրաքանչյուր անձ կգա
դեպի ճշմարտության լույսը:
«Լույս է ծագում արդարին»
(Սաղմոս 97.11): Եվ ոչ մի
եկեղեցի չի կարող աճել
սրբության մեջ, եթե նրա
անդամները ճշմարտությունը

չորոնեն այնպես, ինչպես
որոնում են թաքնված գանձը:

«Ազատամտություն» գոչելով՝
մարդիկ կուրորեն չեն տեսնում
իրենց թշնամու խոբամանակ
հնարքները, մինչդեռ նա
անդադար անխոնջ կերպով
աշխատում է իր նպատակին
հասնելու համար: Երբ նրան
հա-ջողվում է Աստվածաշունչը
փոխարինել մարդկային
տեսություններով, Աստծո
օրենքը մի կողմ է դրվում, իսկ
եկեղեցիներն ընկնում են մեղքի
գերության մեջ՝ միաժամանակ
կարծելով, թե ազատ են:

Ճատերի համար գիտական
հետազոտությունն անեծք է
դարձել: Աստված թույլ է տվել,
որ լույսի շողերը գիտության ու
արվեստի նվաճումների
միջոցով սփռվեն աշխարհի
վրա, սակայն նույնիսկ
ամենահանճարեղ մարդիկ, եթե
իրենց ուսումնասիրության մեջ
չեն ստաջնորդ- վում Աստծո
խոսքով, խճճվում են՝ փորձելով
հետազոտել գիտության և
հայտնության
փոխհարաբերությունները:

Նյութական և հոգևոր աշխարհի մասին մարդկային գիտելիքները թերի են և անկատար, այդ պատճառով էլ շատերը չեն կարողանում իրենց գիտական հայացքները ներդաշնակեցնել Սուրբ Գրքի հետ: Շատերը զանազան տեսություններն ու ենթադրությունները գիտական փաստեր են համարում՝ կարծելով, թե Աստծո խոսքը պետք է ստուգվի «սուտանուն գիտության» ուսմունքով (Ա Տիմոթեոս 6.20): Արարիչն ու Նրա գործերը նրանց հասկացողությունից վեր են, և

քանի որ ի վիճակի չեն
բացատրելու դրանք բնության
օրենքներով, Սուրբ Գրքի
պատմությունն
անարժանահավատ են
համարում: Նրանք, ովքեր
կասկածի են են-թարկում Յիսև Ա
Նոր Կտակարանների
ստույգությունը, շատ հաճախ,
անելով ևս մի քայլ, կասկածում
են Աստծո գոյությանը՝
անսահման ուժ վերագրելով
բնությանը: Կորցնելով
խարիսխը՝ նրանք բախվում են
անհավատության ժայռերին:

Այսպես խաբված սատանայից՝
շատերը հավատից շեղվում են:
Մարդիկ ձգտում են իրենց
Արարչից ավելի իմաստուն
լինել. մարդկային
փիլիսոփայությունը փորձում է
հետազոտել ու բացատրել
գաղտնիքներ, որոնք երբեք չեն
բացահայտվելու
հավերժության ընթացքում
անգամ: Եթե մարդիկ քննեին ու
հասկանային այն, ինչ Աստված
արդեն հայտնել է իր և իր
նպատակների մասին, ապա
Եհովայի փառքի, վեհության
[523] և զորության մասին
այնպիսի պատկերացում

կկազմեին, որ կգիտակցեին
իրենց ոչնչութիւնն ու
կբավարարվեին նրանով, ինչ
որ բացահայտվել է իրենց և
իրենց երեխաներին:

Սատանայի խաբեութեան
գլուխգործոցն է՝ մարդկանց
միտքը մշտապես զբաղեցնել
քննելով ու ենթադրութիւններ
անելով այն բաների մասին, ինչ
Աստված չի հայտնել և մտադիր
էլ չէ հասկացնելու: Յենց
այդպէս Արուսյակը կորցրեց իր
տեղը երկնքում: Նա դժգոհեց,
որ իրեն չեն վստահում Աստծո
մտահղացումների բոլոր

գաղտնիք ներքը և
ամ-բողջապես արհամարհեց
այն, ինչ բացահայտված էր իր
բարձր դիրքի հետ կապված
գործի վերաբերյալ: Նույն
դժգոհությունը ներշնչելով իրեն
ենթակա հրեշտակներին՝ նա
դրդեց նրանց մեղանջելու: Այժմ
նա ձգտում է այդ նույն ոգով
վարակել մարդկանց ու նրանց
ևս դրդել արհամարհելու Աստծո
ուղղակի պատվերները:

Նրանք, ովքեր չեն կամենում
ընդունել Աստվածաշնչի պարզ,
կտրուկ ճշմարտությունները,
շարունակ հաճելի առասպելներ

են որոնում՝ հանգստացնելու
իրենց խիղճը: Որքան ավելի
քիչ հոգևորություն, անձ-
նուրացություն և
խոնարհություն է պահանջում
ներկայացվող ուսմունքը,
այնքան ավելի հաճույքով է այն
ընդունվում: Այդպիսի մարդիկ
քայքայում են իրենց մտավոր
ուժերը՝ ծառայեցնելով դրանք
իրենց մարմնավոր
ցանկություններին: Լինելով
չափազանց իմաստուն իրենց
աչքերում, որպեսզի փշրված
հոգով ու ջերմեռանդ աղոթքով
ուսումնասիրեն Սուրբ Գիրքը
Աստծո կամքն իմանալու

համար, նրանք ոչ մի
պաշտպանություն չունեն
մոլորությունից: Սատանան
պատրաստ է բավարարել սրտի
ցանկությունը, և
ճշմարտության փոխարեն իր
խաբեությունն է առա-ջարկում:
Չենց այսպես պապությունը
կարողացավ իշխել մարդկանց
մտքի վրա, և մերժելով
ճշմարտությունը, քանի որ այն
պահանջում է
անձնուրացություն,
բողոքականները գնում են
նույն ճանապարհով: Բոլոր
նրանք, ովքեր, աշխարհից
չտարբերվելու համար,

արհամարհում են Աստծո
խոսքը հանուն իրենց
հարմարության, կթողնվեն
ճշմարտության փոխարեն
ընդունելու կորստաբեր
հերձվածողություն: Նրանք,
ովքեր գիտակցաբար մերժում
են ճշմարտությունը, ընդունելու
են ամեն տեսակ մոլորություն:
Նա, ով սարսափում է մեկ
խաբեությունից, սիրով
ընդունելու է մեկ ուրիշը: Պողոս
առաքյալը, խոսելով նրանց
մասին, ովքեր «չընդունեցին
ճշմարտության սերը, որպեսզի
փրկվեն», ասում է. «Դրա
համար Աստված մոլորության

Ներգործություն կուղարկի
նրանց, որ հավատան
ստության, որ դատապարտվեն
ամենքր. [524] ովքեր
չհավատացին ճշմարտությանը,
բայց հավանեցին
անօրենությունը» (Բ
Թեսաղոնիկեցիս 2.10-12):
Նման նախազգուշացում
ունենալով՝ պետք է զգուշ
լինենք, թե ինչ ուսմունք ենք
ընդունում:

Մեծ խաբեբայի ամենահաջող
հնարքներից են
ոգեհարցության սուտ
ուսմունքն ու կեղծ հրաշքերը:

Լույսի հրեշտակի տեսք ստած՝
սատանան իր ցանցը գցում է
այնտեղ, ուր ամենաքիչն են
կասկածում: Եթե մարդիկ
անկեղծ աղոթքով
ուսումնասիրեն Աստծո Գիրքը՝
այն հասկանալու համար, ապա
չէին թողնվի խավարի մեջ՝
ընդունելու կեղծ ուսմունքներ:
Բայց մերժելով
ճշմարտությունը՝ նրանք
խաբեություն զոհ են դառնում:

Մեկ այլ վտանգավոր
մոլորություն է այն ուսմունքը,
որ հերքում է Քրիստոսի
աստվածությունը՝ պնդելով, որ

Նա գոյութիւնն չի ունեցել՝
Նախքան այս երկիր գայր: Այս
տեսութիւնն ընդունված է
մարդկանց մի մեծ խմբի
կողմից, ովքեր ասում են, թէ
հավատում են Աստվածաշնչին,
սակայն դա ուղղակիորեն
հակասում է մեր Փրկչի
խոսքերին՝ Յոր հետ ունեցած
իր կապի, իր աստվածային
Էության և իր նախագոյության
վերաբերյալ: Դա հնարավոր չէ
ընդունել՝ առանց լրջորեն
աղավաղելու Սուրբ Գիրքը: Դա
ոչ միայն նսեմացնում է
փրկագնման վերաբերյալ
մարդու պատկերացումը, այլ

Նաև քայքայում է հավատն
Աստվածաշնչի հանդեպ՝ որպես
Աստծուց տրված հայտնություն:
Այն ոչ միայն դառնում է ավելի
վտանգավոր, այլ նաև դժվար
հերքելի: Եթե մարդիկ մերժում
են ներշնչված Գրքի
վկայությունը Քրիստոսի
աստվածության վերաբերյալ,
ապա նրանց հետ այդ հարցը
քննարկելն իզուր է, քանզի ոչ
մի փաստարկ, որքան էլ
ծանրակշիռ լինի, չի կարող
նրանց համոզել: «Շնչավոր
մարդն Աստծո Յոգու բաները չի
ընդունում, որովհետև դրանք
հիմարություն են նրա համար,

և չի էլ կարող գիտենալ,
որովհետև հոգևոր կերպով են
քննվում» (Ա Կորնթացիս 2.14):

Այս մոլորությունն
ընդունողներից և ոչ մեկը չի
կարող ճիշտ պատկերացում
կազմել Քրիստոսի
առաքելության կամ մարդու
փրկության Աստծո մեծ ծրագրի
մասին:

Մեկ այլ նենգ և կործանարար
մոլորություն է արագ
տարածվող այն կարծիքը, թե
սատանան որպես
անձնավորություն գոյություն
չունի, իսկ այդ անունն

Աստվածաշնչում
օգտագործված է ընդամենը
մարդկանց չար մտքերն ու
ցանկությունները
ներկայացնելու համար: [525]

Ամբիոններից հաճախ հնչող
այն հանրաճանաչ ուսմունքը,
ըստ որի՝ Քրիստոսի Երկրորդ
գալուստը Նրա հայտնվելն է
յուրաքանչյուր անհատի՝ իր
մահվան պահին, մի հնարք է՝
Նախատեսված մարդկանց
ուշադժբաթյունք շեղելու
երկնային ամպերով Նրա
անձնական գալուստ— տից:
Տարիներ շարունակ սատանան

ասել է. «Ահա նա ներսի
սենյակում է» (Մատթեոս
24.23-26), և շատ հոգիներ
կորստյան են մատնվել՝
հա-վատալով այդ
խաբեությանը:

Եվս մի բան. աշխարհիկ
իմաստությունը սովորեցնում է,
թե աղոթելն անիմաստ է:
Գիտնականները պնդում են, թե
աղոթքին ոչ մի իրական
պատասխան չի կարող լինել,
քանի որ դա բնության օրենքի
խախտում՝ հրաշք կփներ, իսկ
հրաշքներ գոյություն չունեն:
Նրանք ասում են, թե տիեզերքը

կառավարվում է հստակ
օրենքներով, և Աստված Ինքը
ոչինչ չի անում այդ
օրենքներին հակառակ:
Այսպիսով՝ նրանք պատկերում
են Աստծուն Իր իսկ
օրենքներով շղթայված, կարծես
աստվածային օրենք-ները
բացառում են Նրա
ազատութունը: Նման
ուսմունքը հակասում է Սուրբ
Գրքի վկայությանը: Մի՞թե
Քրիստոսն ու Նրա
առաքյալները հրաշքներ չեն
գործել: Այն նույն կարեկից
Փրկիչն այսօր էլ կենդանի է և
նույնքան պատրաստ՝ լսելու

հավատի աղոթքը, որքան այն
ժամանակ, երբ տեսանելիորեն
քայլում էր մարդկանց մեջ:
Բնականը համագործակցում է
գերբնականի հետ: Աստծո
ծրագրի մի մասն է՝ ի
պատասխան հավատի
աղոթքի՝ մեզ շնորհել այն, ինչը
Նա չէր շնորհի, եթե այդպես
չխնդրեինք:

Անթիվ ու անհամար են
քրիստոնեական
եկեղեցիներում տարածված
կեղծ ուսմունքներն ու անհիմն
գաղափարները: Անհնար է
պատկերացնել Աստծո խոսքում

հաստատված ուղենիշներից
գեթ մեկը վերացնելու չար
հետևանքները: Այս բանն
անողներից քչերն են
բավարարվում ճշմարտության
միայն մեկ կետը մերժելով:
Մեծամասնությունը
շարունակում է մեկը մյուսի
հետևից մերժել ճշմարտության
սկզբունքները, մինչև որ
դառնում են անհավատներ:

Չանրաճանաչ
աստվածաբանության
սխալները կասկածամտության
են մղել շատ հոգիների, ովքեր,
հակառակ դեպքում, կարող էին

հավատալ Սուրբ Գրքին: Նրանք
չեն կարող ընդունել
արդարության, գթասրտության
ու բարության իրենց
զգացումները վիրավորող
ուսմունքներ, և քանի որ դրանք
ներկայացվում են որպես
աստվածաշնչյան, նրանք
հրաժարվում են դրանք
ընդունել որպես Աստծո խոսք:
[526]

Սատանայի նպատակն էլ հենց
սա է: Նա ամեն բանից առավել
փափագում է ոչնչացնել
վստահությունը Աստծո և Նրա
խոսքի հանդեպ: Այդ նա է

գլխավորում
կասկածամիտների մեծ
բանակը և իր ողջ
կարո-ղությամբ ձգտում է իր
կողմը շահել հոգիներին:
Կասկածելը նորաձև է դառնում:
Ճատերն անվստահությամբ են
նայում Աստծո խոսքին և նրա
Յեղիևակին, որովհետև այն
հանդիմանում և
դատապարտում է մեղքը:
Նրանք, ովքեր չեն ցանկանում
հնազանդվել խոսքի
պահանջներին, ջա-նում են
հեղիևակազրկել այն: Նրանք
Աստվածաշունչը կարդում կամ
խոսքը լսում են եկեղեցու

ամբիոնից ` միայն Գրքում կամ
քարոզում սխալ-ների գտնելու
համար: Բջերը չէ, որ անհավատ
են դառնում իրենց
պար-տականության
արհամարիումն արդարացնելու
համար: Մյուսները
կաս-կածամիտներին են
հարում հպարտությանից և
ծուլությանից: Չափից ավելի
փափկասեր, որպեսզի աչքի
ընկնեն որևէ պատվավոր
գործով, որը ջանք և
անձնուրացություն է
պահանջում, նրանք ձգտում են
իմաստունի համբավ ձեռք
բերել` քննադատելով

Աստվածաշունչը: Շատ բան
կա, որ սահմանափակ միտքն,
ատանց աստվածային
իմաստության, անկարող է
ըմբռնել, և այդպես առիթ են
գտնում քննադատելու:
Շատերին թվում է, թե
անհավատ, անաստված ու
քննադատ լինելն
առաքինություն է: Բայց
առերես անկեղծության տակ
կարելի է նկատել, որ այդ
մարդիկ լցված են
ինքնավստահությամբ ու
հպարտությամբ: Շատերը
հաճույք են զգում՝ Սուրբ
Գրքում ինչ-որ բան գտնելով,

որը կշփոթեցնի մարդկանց
միտքը: Ոմանք սկզբում
քննադատում և հակառակվում
են այն պատճառով, որ
պարզապես սիլտում են
վիճաբանել՝ չգիտակցելով, որ
այդպես վարվելով՝ ընկնում են
թռչնորսի ցանցը: Սակայն
բացահայտ արտահայտելով
իրենց անհավատությունը՝
նրանք մտածում են, որ չպետք
է փոխեն իրենց միտքը: Այսպես
նրանք միանում են
ամբարիշտներին և իրենց
համար փակում Դրախտի
դարպասները:

Աստված Իր խոսքում
բավականաչափ
վկայություններ է տվել դրա
աստվածային ծագման մասին:
Այնտեղ հստակորեն
ներկայացված են մեր
փրկությանը վերաբերող մեծ
ճշմարտությունները: Սուրբ
Յոզու օգնությամբ, որ
խոստացված է բոլորին, ովքեր
անկեղծորեն կփնտրեն
ճշմարտությունը, ամեն մարդ
կարող է [527] ինքնուրույն
հասկանալ դա: Աստված
մարդկանց տվել է հաստատուն
հիմք, որի վրա նրանք կարող
են կերտել իրենց հավատը:

Սակայն մարդու սահմանափակ
միտքն ի վիճակի չէ լիակատար
չափով ըմբռնելու Անսահմանի
ծրագրերն ու նպատակները:
Մենք երբեք չենք կարող
քննելով գտնել Աստծուն և
չպետք է վարձենք
ինքնավստահ ձեռքով
բարձրացնել այն վարագույրը,
որով Նա ծածկում է իր
վեհափառությունը: Առաքյալը
գոչում է. «Ի՛նչ անքննելի են
Նրա դատաստանները, և
անհասկանալի՝ Նրա
ճանապարհները» (Յոննես 11.33): Մեզ տրված է այնքանով

ըմբռնել Նրա վերաբերմունքը
մեր նկատմամբ և Նրա
շարժառիթները, որ
կարողանանք անսահման
զորության հետ միահյուսված
տեսնել Նրա անհուն սերն ու
տրտմությունը: Մեր երկնային
Ջայրը ամեն ինչ կառավարում է
իմաստությամբ ու
արդարությամբ, և մենք, դժգոհ
ու թերահավատ լինելու
փոխարեն, պիտի ակնածանքով
ենթարկվենք Նրան: Նա իր
նպատակներից մեզ կհայտնի
այն, ինչ օգտակար է մեզ
իմանալ, իսկ դրանից այն կողմ
մենք պիտի վստահենք

ամենագոր Բագկին և սիրով լի
Սրտին:

Թեև Աստված բավարար
ապացույցներ է տվել
հավատալու համար, Նա երբեք
չի վերացնի անհավատության
բոլոր պատճառները: Ովքեր
կեռ են փնտրում իրենց
կասկածները կախելու համար,
կգտնեն այն: Եվ նրանք, ովքեր
հրաժարվում են ընդունել
Աստծո խոսքն ու հնազանդվել
դրան, մինչև որ այլևս
առարկելու կամ կասկածելու
առիթ չփնի, երբեք չեն գալու
դեպի լույսը:

Անվատահուլթյունն Աստծո
հանդեպ բնական պտուղն է
չվերածնված սրտի, որը
թշնամուլթյան մեջ է Նրա հետ:
Իսկ հավաա ներշնչում է Սուրբ
Յոզիս, և այն ծլում է միայն այն
դեպքում, եթե փայփայենք: Ոչ
ոք չի կարող հավատի մեջ
գորանալ՝ առանց վճռական
ջանքերի: Անհավատությունն
ուժեղանում է, եթե
խրախուսվի: Ու եթե մարդիկ,
ապացույցների մասին
խորհելու փոխարեն, որ
Աստված տվել է իրենց
հավատն ամրացնելու համար,

իրենց թույլ են տալիս
կասկածել և առարկել,
կտեսնեն, որ իրենց
կասկածները գնալով ավելի են
հաստատվում:

Բայց Նրանք, ովքեր կասկածում
են Աստծո խոստումներին ու
չեն վստահում Նրա շնորհի
հավաստիացմանը,
անպատվում են Նրան և
ուրիշներին դեպի Քրիստոսը
գրավելու փոխարեն՝ իրենց
ազդեցությամբ հեռացնում են
[528] Նրանից: Նրանք
անպտուղ ծառեր են, որ իրենց
մութ սաղարթները տարածում

ԵՆ ԱՅՍ ՈՒ ԱՅՆ ԿՈՂՄ` ՎԻԱԿԵԼՈՎ
ԱՐԼԻ ՉՈՂԵՐՆ ԲՅՈՒՆԱ ԲՈՒՄԵՐԻԿԵ և
ԹՈՂՆԵԼՈՎ, ՈՐ ԴՐԱՆՔ ԹԱՌԱՄԵՆ
ՈՒ ՄԵՌՆԵՆ ՍԱՌՆ ՍՏՎԵՐՈՒՄ: Այդ
անձանց ամբողջ կյանքը
անվերջ վկայութիւնն է հենց
իրենց դէմ: Նրանք
կասկածամտության ու
անհավատության սերմեր են
ցանոՒՄ, որոնք անպայման
համապատասխան բերք են
տալոՒ:

Կա միայն մեկ ուղի նրանց
համար, ովքեր անկեղծորեն
ուզոՒՄ են ազատվել
կասկածներից: Իրենց

անհասկանալի բաները
կասկածի ենթարկելու և
քննադատելու փոխարեն՝ թող
ընդունեն այն լույսը, որն
արդեն շողում է իրենց վրա, և
նրանց ավելի պայծառ լույս
կտրվի: Թող նրանք կատարեն
իրենց համար հասկանալի
ամեն մի պարտականություն,
իսկ մյուսները, որոնց
վերաբերյալ հիմա կասկածներ
ունեն, հետո կբացահայտվեն
իրենց:

Սատանան կարող է այնքան
հմտորեն կեղծել
ճշմարտությունը, որ կխաբի

բոլոր նրանց, ովքեր պատրաստ
են խաբվելու, ովքեր ուզում են
խուսափել
անձնուրացությունից ու
զոհողությունից, որ
պահանջում է ճշմարտությունը:
Սակայն նա անկարող է իր
իշխանության տակ պահել գեթ
մեկ հոգու, ով անկեղծորեն
փափագում է, ինչ գնով էլ լինի,
ճանաչել ճշմարտությունը:
Քրիստոսն է ճշմարտությունը և
« Լույսը, որ ամեն մարդու
լուսավորում է, ով գալիս է
աշխարհ» (Յովհաննես 1.9):
Ճշմարտության Յոգին
ոսկարկվել է՝ առաջնորդելու

մարդկանց ամեն
ճշմարտության մեջ: Եվ Աստծո
Որդու հեղինակությամբ ասված
Է. «Փնտրեցեք, և կգտնեք»:
«Եթե մեկը կամենում է նրա
կամքն անել, նա կիմանա այս
ուսմունքի մասին» (Մատթեոս
7.7, Հովհաննես 7.17):

Քրիստոսի հետևորդները քիչ
բան գիտեն այն դավերից, որ
սատանան ու նրա զորքը
նյութում են իրենց դեմ: Բայց
երկնքում Նստողն այդ բոլոր
հնարքներն այնպես կուղղորդի,
որ դրանք ծառայեն իր խոր
մտադրությունների

իրականացմանը: Տերը թույլ է
տալիս, որ իր ժողովուրդը
ենթարկվի հրաշունչ
փորձությունների ոչ թե նրա
համար, որ հաճույք է ստանում
վշտից ու տառապանքից, այլ
որովհետև դա անհրաժեշտ է
Նրանց վերջնական
հաղթանակի համար: Նա չէր
կարող հակասել իր իսկ
փառավոր խորհուրդներին՝
պաշտպանելով Նրանց
փորձություններից, քանզի
դրանց բուն նպատակն է՝
Նախապատրաստել Նրանց
դիմակայելու չարի բոլոր
գայթակղություններին: [529]

Ո՛չ ամբարիշտ մարդիկ, ո՛չ էլ
դևերը չեն կարող խանգարել
Աստծո գործին կամ հեռացնել
Նրան իր ժողովրդից, եթե
վերջիններս խոնարհ և փշրված
սրտով խոստովանեն ու
թողնեն իրենց մեղքերը և
հավատով ապավինեն Նրա
խոստումներին: Ցանկացած
փորձության և չար
ազդեցության՝ բացահայտ
լինի, թե ծածուկ, կարելի է
հաջողությամբ դիմադրել «ոչ թե
զորությունով և ոչ թե ուժով, այլ
իմ հոգով, ասում է Չորաց
Տերը» (Չաբարիա 4.6):

«Տիրոջ աչքերն արդարների վրա են, և Նրա ականջները՝ դեպի Նրանց աղոթքը... Եվ ով է Նա, որ չարչարի ձեզ, եթե դուք բարուն հետևող լինեք» (Ա Պետրոս 3.12,13): Երբ Բաղաամը, հարուստ վարձատրության խոստովով հրապուրված, կախարդություն օգտագործեց Իսրայելի դեմ, և Տիրոջը զոհեր մատուցելով՝ վարձեց անիծել Նրա ժողովրդին, Աստծո Յոզիև արգելեց Նրան անեծքի խոսքեր ասել և ստիպեց բացականչել. «Ինչպե՞ս անիծեմ Նրանց, ում

Աստված չի անիծում, և
ինչպե՞ս նզովեմ նրանց, ում
Եհովան չի նզովում»։ « Իմ անձը
արդարների մահով մեռնի, և իմ
վախճանը լինի նրանցից մեկի
պես»։ Երբ նորից
զոհաբերություն արվեց,
անաստված մարգարեն
հայտարարեց. «Ահա հրաման
առա օրհնելու, և ինքը օրհնեց,
և ես ետ չեմ դարձնի։ Յակոբի
վրա անօրենություն չգննեց, ոչ
էլ անզգամություն տեսավ
Իսրայելի վրա. նրա Եհովա
Աստվածն իր հետ է, և նրա մեջ
թագավորի ցնծության ձայն
կա»։ «Դրա համար Յակոբի դեմ

Կախարդութիւնն չի լինի, և
Իսրայելի դեմ՝ դժուրութիւնն.
Չակորբին և Իսրայելին կասկի
ժամանակին, թե Աստված
ինչե՛ր արեց»։ Սակայն երրորդ
անգամ էլ զոհասեղաններ
կանգնեցրին, և դարձյալ
Բաղաամը վարձեց անիծել։
Բայց մարգարեի կամքին
հակառակ՝ Աստծո Յոզիին նրա
շուրթերով հռչակեց Իր
ընտրյալների բարգաւաճումը և
հանդիմանեց նրանց
թշնամիների հիմարութիւնն ու
չարութիւնը. «Քեզ օրհնողները
օրհված են, և քեզ անիծողները՝

անիծված» (Թվոց
23.8, 10, 20, 21, 23, 24.9):

Իսրայելն այդ ժամանակ
հավատարիմ էր Աստծուն, և
քանի դեռ նրանք հնազանդ էին
Նրա օրենքին, երկրային կամ
դժոխային ոչ մի ուժ չէր կարող
հաղթել նրանց: Բայց անեծքը,
որ թույլ չտրվեց արտասանել
[530] Աստծո ժողովրդի դեմ,
Բաղաամն ի վերջո կարողացավ
բերել նրա գլխին՝ մեղքի մեջ
գցելով նրան: Խախտելով
Աստծո պատվիրանները՝
նրանք իրենց բաժանեցին

Նրանից և թողնվեցին զգալու
կործանիչի զորութունը:

Սատանան լավ գիտի, որ
Քրիստոսում ապրող
ամենաթույլ հոգին շատ ավելի
զորեղ է խավարի զորքերից, և
եթե ինքը բացահայտ կերպով
հայտնվի, ապա դիմադրության
կհանդիպի: Ուստի նա ջանում է
խսւչի զինվորներին դուրս
բերել իրենց ամրոցից, իսկ ինքն
իր զորքով դարան մտած՝
պատրաստ սպասում է
կործանելու բոլորին, ովքեր
կհամարձակվեն ոտք դնել իր
տարածքը: Միայն

Խոնարհությամբ Աստծուն
ապավինելով և Նրա բոլոր
պատվիրաններին
հնազանդվելով՝ մենք կարող
ենք ապահով լինել:

Առանց աղոթքի ոչ ոք չի կարող
ապահով լինել զեթ մեկ օր կամ
մեկ ժամ: Մենք պետք է
խնդրենք Տիրոջը, որ
հատկապես իմաստություն տա
մեզ՝ Նրա Խոսքը հասկանալու
համար: Դրանում
բացահայտված են փորձչի
նենգությունն ու այն
միջոցները, որոնցով կարող ենք
հաջողությամբ դիմակայել

Նրան: Սատանան վարպետ է
Սուրբ Գրքից մեջբերումներ
անելու՝ իր սեփական
մեկնաբանությունը տալով այն
հատվածներին, որոնցով հույս
ունի սահեցնել մեզ: Մենք
պետք է Աստվածաշունչ ն
ուսումնասիրենք խոնարհ
սրտով՝ երբեք չմոռանալով մեր
կախվածությունն Աստծուց:
Մշտապես զգուշանալով
սատանայի հնարքներից՝ մենք
պետք է անդադար հավատով
աղոթենք. «Մի տար մեզ
փորձություն»: [531]

ԳԼՈՒԽ 33—ԱՌԱՋԻՆ ՄԵՃ ԽԱԲԵՈՒԹՏՈՒՆԸ

Մարդու ամենավաղ
պատմությունից սատանան
սկսեց մեր ցեղը կործանելու իր
ջանքերը: Նա, ով խռովություն
եր հրահրել երկնքում,
կամեցավ երկրի բնակիչներին
իր կողմը գրավել՝ Աստծո
կառավարության դեմ իր
պայքարում: Ադամն ու Եվան
կատարելապես երջանիկ էին՝
հնազանդվելով Աստծո
օրենքին, և այս փաստը
մշտապես վկայում էր այն
կարծիքի դեմ, որ սատանան

պնդում էր երկնքում, թե իբր
Աստծո օրենքը ճնշող է և
հակառակ Նրա արարածների
բարօրությանը: Բացի այդ՝
Նայելով անմեղ զույգի համար
պատրաստված գեղեցիկ տանը՝
սատանայի Նախանձը
բորբոքվեց: Նա վճռեց մեղքի
մեջ գցել Նրանց, որ-պեսզի
բաժանելով Աստծուց ու
ենթարկեցնելով իր
իշխանությանը՝ կա-րողանա
տիրել երկրին և այստեղ
հաստատել իր արքայությունն՝
ընդդեմ Ամենաբարձրյալի:

Եթե սատանան ցույց տար իր
իսկական եռթյունը,
անմիջապես հետ կմղվեր,
որովհետև Ադամն ու Եվան
Նախագգուշացվել էին այդ
վտան-գավոր թշնամու մասին:
Բայց նա գործում էր գաղտնի՝
թաքցնելով իր մտադրությունը,
որպեսզի հասներ իր
նպատակին: Որպես միջևորդ
օգտագործելով օձին, որն այն
ժամանակ հմայիչ
կերպարանքով մի արա-րած էր,
նա դիմեց Եվային. «Իրա՞վ
Աստված ասաց, որ պարտեզի
ոչ մի ծառից չուտեք» (Ճննդոց
3.1): Եթե Եվան հրաժարվեր

փորձչի հետ խոսել, նրան ոչ մի
վտանգ չէր սպառնա, բայց
համարձակվելով զրույցի
բռնվել նրա հետ՝ դարձավ նրա
խորամանկութեան զոհը: [532]
Այսպես է հենց, որ շատերն
առայսօր հաղթվում են: Նրանք
կասկածի են ենթարկում Աստծո
պահանջներն ու վիճաբանում
դրանց շուրջ, և աստվածային
պատ-վերներին հնազանդվելու
փոխարեն՝ նրանք ընդունում
են մարդկային տեսություններ,
որոնք սուկ քողարկում են
սատանայի հնարքները:

«Կինն ասաց օձին. «Պարտեզի
ծառերի պտղից ուտում եմք,
բայց այն ծառի պղտից, որ
պարտեզի մեջտեղում է,
Աստված ասաց, մի ուտեք
դրանից և դրան մի դիպչեք, որ
չմեռնեք»: Եվ օձը կնոջն ասաց.
«Բնավ չեք մեռնի: Այլ Աստված
գիտի, թե այն օրը, որ նրանից
ուտեք, ձեր աչքերը կբացվեն և
Աստծո պես կլինեք՝ բարին և
չարը գիտեցող» (Ծննդոց 3.2—
5): Սատանան ասաց, թե
նրանք Աստծո պես կդառնան՝
ձեռք բերելով ավելի մեծ
իմաստություն և հասնելով
ավելի բարձր գոյավիճակի:

Եվան զիջեց փորձությանը և իր
ազդեցությամբ մեղքի դրդեց
Նան Ադամին: Նրանք
հավատացին օձի այն
խոսքերին, թե Աստված նկատի
չի ունեցել այն, ինչ ասել է:
Նրանք չվստահեցին իրենց
Արարչին՝ կարծելով, թե Նա
սահամանափակում է իրենց
ազատությունը, և որ Նրա
օրենքը խախտելով՝ իրենք մեծ
իմաստության ու վեհության
կհասնեն:

Իր մեղքից հետո Ադամի համար
ի՞նչ էին նշանակում այս
խոսքերը. «Նրանից կերածդ օրը

մահով պիտի մեռնես»:
Նշանակո՞ւմ էին դրանք
արդյոք, ինչպես սատանան էր
ներշնչել նրան հավատալու, որ
նա պիտի հասներ ավելի բարձր
գոյավիճակի: Այդ դեպքում
կատացվեր, որ
անօրե-նությունը բարիք է, իսկ
սատանան՝ մարդկային ցեղի
բարերարը: Բայց Ադամը
չգտավ, որ դա է աստվածային
դատավճռի իմաստը: Աստված
հայտարարեց, որ որպես
պատիժ իր մեղքի՝ մարդը պիտի
դառնա դեպի հողը, որից
վերցվել էր. «Յող էիր դու և
դեպի հողը դառնաս» (Ծննդոց

3.19): Սատանայի խոսքերը՝
«Ձեր աչքերը կբացվեն», ճիշտ
դուրս եկան միայն այն
առումով, որ Աստծուն
չենթարկվելուց հետո Ադամի ու
Եվայի աչքերը բացվեցին,
որպեսզի Նրանք տեսնեն իրենց
հիմարությունը: Նրանք
ճանաչեցին չարը և ճաշակեցին
անօրենության դառը պտուղը:

Եդեմի կենտրոնում աճում էր
կենաց ծառը, որի պտուղը
զորություն ուներ
հավերժացնելու կյանքը: Եթե
Ադամը հնազանդ մնար
Աստծուն, [533] կշարունակեր

ագատ մոտենալ այս ծառին ու
կապրեր հավիտյան: Բայց
մեղանջելով՝ նա կորցրեց
կյանքի ծառից ուտելու
իրավունքը և դարձավ
մահկանացու: Աստվածային
դատավճիռը՝ «Յող էիր դու և
դեպի հողը դառնաս»,
նշանակում է կյանքի
լիակատար դադարեցում:

Անօրենությունք մարդը
կորցրեց հնազանդության
պայմանով իրեն խոստացված
անմահությունը: Ադամը չէր
կարող իր սերունդներին
փոխանցել այն, ինչ ինքը

չունենք, և ընկած մարդկության
համար այլևս հույս չէր լինի,
եթե Աստված իր Որդու
զոհաբերությամբ նրանց
հասանելի չդարձներ
անմահությունը: Մինչ «մահը
բոլոր մարդկանց վրա
տա-րածվեց, ըստ որում
ամենքը մեղանչեցին»,
Քրիստոսը «լույսի մեջ բերեց
կյանքն ու անմահությունը
Ավետարանի միջոցով»
(Ջոմեացիս 5.12, Բ Տիմոթեոս
1.10): Եվ միայն Քրիստոսի
միջոցով կարելի է ձեռք բերել
անմեհաթյուն: Հիսուսն ասել
է. «Որդուն հավատացողը

հավիտենական կյանք ունի,
իսկ Որդուն չհնազանդվողը
կյանք չի տեսնի» (Յովհաննես
3.36): Յուրաքանչյուր մարդ
կարող է տիրանալ այս անգին
օրհնությանը, եթե կատարի
պայմանները: Բոլոր նրանք,
ովքեր «բարի գործերի մեջ են
հարատևում, և փառք, պատիվ
ու անմահություն են որոնում»,
կստանան «հավիտենական
կյանք» (Յոհնեացիս 2.7):

Միակը, ով Ադամին կյանք
խոստացավ
անհնազանդության մեջ, մեծ
խաբեբան էր: Եվ «Բնավ չեք

մեռնի» հայտարարութիւնը, որ
օձն արեց եվային եղեմով,
առաջին քարոզն էր հոգու
անմահութեան վերաբերյալ:
Սակայն այս
հայտարարութիւնը, հիմնված
բացառապէս սատանայի
հեղինակութեան վրա,
արձագանքում է
քրիստոնեական եկեղեցիների
ամբիոններից, և դա մարդկանց
մեծամասնութիւնն ընդունում
է նույնքան
պատրաստակամորէն, որքան
մեր նախաձեռնողները: Աստճո
դատավճիռը՝ «Այն հոգին, որ
մեղանջում է, պիտի մեռնի»

(Եզեկիել 18.20, բնագրի թարգմ.), հասկացվում է այսպես, այն հոգին, որ մեղանջում է, չի մեռնի, այլ կապրի հավիտյան: Մնում է միայն զարմանալ այն տարօրինակ կա-խարդանքի վրա, որը մարդկանց այդքան դյուրահավատ է դարձնում սա-տանայի խոսքերի նկատմամբ և այդքան անհավատ՝ Աստծո խոսքերի հանդեպ:

Եթե մարդուն իր անկումից հետո թույլ տրվեր ազատ մոտենալու կե-նաց [534]

ծառին, նա կապրեր հավիտյան,
և մեղքը կհավերժացվեր: Բայց
քերովբեներն ու բոցեղեն սուրր
պահում էին «կենաց ծառի
ճանապարհը» (Ծննդոց 3.24), և
Ադամի ընտանիքի ոչ մի
անդամի թույլ չի տրվել
անցնելու այդ արգելքը և
ճաշակելու կենսատու պտուղը:
Ուստի չկա ոչ մի անմահ
մեղավոր:

Բայց Մեղանչումից հետո
սատանան իր հրեշտակներին
պատվիրեց հատուկ ջանքեր
գործադրել՝ մարդուն
ներշնչելու այն հավատը, թե

Նա բնական անմահություն
ունի: Եվ ստիպելով մարդկանց
ընդունել այս մոլորությունը՝
Նրանք պետք է նրանց դրդեին
եզրակացնելու, թե մեղավորը
պիտի ապրի հավերժական
չարչարանքի մեջ: Հիմա
խավարի իշխանն իր
գործակալների միջոցով
Աստծուն ներկայացնում է
որպես մի վրիժառու բռնակալի՝
հայտարարելով, թե Նա դժոխք
է նետում բոլորին, ովքեր իրեն
դուր չեն գալիս, որպեսզի
Նրանք ընդմիշտ զգան իր
բարկությունը, և մինչ այդ
թշվառներն աննկարագրելի

տանջանք են կրում ու
ջղաձգվում հավիտենական
բոցերի մեջ, նրանց Ստեղծողը
հաճույք է ստանում՝ նայելով
նրանց:

Այսպես՝ դևերի իշխանն իր
հատկանիշները վերագրում է
Արարչին և մարդկության
Բարերարին: Դաժանությունը
դիվական հատկությունն է:
Աստված սեր է, և այն ամենը,
ինչ Նա ստեղծել է, անաղարտ,
սուրբ ու գեղեցիկ էր, մինչև որ
առաջին մեծ խռովարարի
միջոցով մեղքը մտավ աշխարհ:
Սատանան այն թշնամին է, ով

Նախ մեղքի է դրդում
մարդկանց և ապա՝ կործանում,
եթե կարողանում է: Եվ
կործանելով իր զոհին՝ նա
ցնծում է իր ավերածության
վրա: Եթե թույլ տրվեր, նա իր
որոգայթը կգցեր մարդկային
ողջ ցեղը: Եթե աստվածային
զորության միջամտությունը
չլիներ, Ադամի և ոչ մի որդի
կամ դուստր չէր փրկվի:

Սատանան այսօր էլ ջանում է
հաղթել մարդկանց այնպես,
ինչպես հաղթեց մեր
նախածնողներին՝ սասանելով
նրանց վստահությունն իրենց

Արարչի հանդեպ և դրդելով
կասկածել Նրա կառավարման
իմաստու-թյանն ու Նրա
օրենքների արդարությանը:
Սատանան ու Նրա
գործա-կալները Աստծուն
նույնիսկ ավելի վատն են
ներկայացնում, քան իրենք են՝
արդարացնելու իրենց
չարությունն ու
ապստամբությունը: Մեծ
խա-բեքան փորձում է իր
բնավորության սուկալի
դաժանությունը վերագրել մեր
երկնային Հորը, որպեսզի
ստեղծի տպավորություն, թե իր
նկատմամբ շատ անարդարացի

են վարվել՝ վտարելով երկնքից
այն պատճառով, որ ինքը չի
կամեցել ենթարկվել այդպիսի
անարդար տիրակապին: Նա
մարդ-կանց [535] առջև
պատկերում է այն
ազատությունը, որ նրանք
կարող էին վայելել իր
անխստապահանջ մեղմ
իշխանության ներքո՝ ի
հակադրումն այն ստրկության,
որ Եհովայի խիստ
պահանջների արդյունքն է: Այս
կերպ նրան հաջողվում է
հրապուրել մարդկանց՝ դրդելով
անհավատարմության Ատոծո
հանդեպ:

Որքա՛ն անհամատեղելի է սիրո
և գթասրտության ամեն մի
զգաց-մունքի և նույնիսկ
արդարության մեր ընկալման
հետ այն ուսմունքը, թե մեռած
ամբարիշտները տանջվում են
կրակի և ծծմբի մեջ հավերժ
վառվող դժոխքում, և թե
երկրային կարճ կյանքի
ընթացքում գործած մեղքերի
համար նրանք պիտի այնքան
տանջվեն, որքան Աստված
կապրի: Եվ սակայն այս
ուսմունքը քարոզվում է
ամենուրեք և քրիստոնեական
շատ եկեղեցիների

հավատամքի մասն է կազմում:
Աստվածաբանության մի ուսյալ
դոկտոր ասել է. «Դժոխքի
տանջանքների տեսարանը
ուժեղացնելու է արդարների
հավիտենական
երջանկությանը: Տեսնելով
մյուսներին, այդպիսի
տանջանքների մեջ, ովքեր
նույն բնությունն ունեն և ծնվել
են միևնույն պարագաներում,
երբ իրենք այդպես մեծարված
են, նրանք կզգան, թե որքան
երջանիկ են»: Սեկ ուրիշն
այսպես է ասել. «Մինչ
հավիտենապես
իրականացվում է բարկության

անոթների դատավճիռը, նրանց
տանջանքի ծուխը հավերժ
պիտի վեր բարձրանա
գթության անոթների աչքերի
առաջ, ովքեր այդ թշվառներին
կարեկցելու փոխարեն՝ ասելու
են. «Ամեն, ալելուիա՛, փառք
քեզ, Տեր»:

Աստճո խոսքի ո՞ր էջում կարելի
է նման ուսմունք գտնել: Մի՞թե
փրկվածները երկնքում զուրկ
են լինելու խղճահարության ու
կարեկցանքի զգացումից և
նույնիսկ սովորական
մարդասիրությունից: Մի՞թե
դրանք փոխարինվելու են

ստոիկի անտարբերութեամբ
կամ վայրենու դաժանութեամբ:
Ո՛չ, ոչ, դա Աստծո Գրքի
ուսմունքը չէ: Նրանք, ովքեր
իրենց տեսանկյունն են
արտահայտում վերը նշված
մեջբերումներում, կարող են
կիրթ և նույնիսկ ազնիվ
մարդիկ լինել, բայց նրանք
խաբված են սատանայի
ստաբանութեամբ: Նա դրդում է
Նրանց սխալ մեկնաբանելու
Սուրբ Գրքի խիստ
արտահայտությունները՝
դրանց տալով դաժանության և
չարության երանգներ, որոնք
բնորոշ են իրեն, բայց ոչ մեր

Արարչին: «Կենդանի եմ ես,
ասում է Տեր Եհովան, որ ես
ամբարիշտի մեռնելը չեմ
ուզում, այլ որ ամբարիշտը
դարձի գա իր ճանապարհից և
ապրի: Դարձեք, դարձեք ձեր
չար ճանապարհներից, և ինչո՞ւ
համար դուք մեռնեք»
(Եզեկիել33.11): [536]

Ի՞նչ կշահեինք Աստծո համար՝
ենթադրելով, թե Նրան հաճելի է
անվերջանալի տանջանքների
տեսարանը, թե տանջվող
արարածների ցավագին ճիչերն
ու Նզովքները, ում Նա պահում
է դժոխքի կրակի մեջ,

ուրախացնում են Նրան:
Կարո՞ղ են արդյոք նման
զարհուրելի ձայները
երաժշտության պես շոյել
Անսահման Սիրո լսողությունը:
Պնդում են, թե ամբարիշտներին
չդադարող թշվառության
մատները ցույց է տալիս Աստծո
ատելությունը մեղքի հանդեպ՝
որպես մի չարիքի, որը
կործանում է տիեզերքի
խաղաղությունն ու
կարգուկանոնիը: Ի՞նչ սուկալի
աստվածահայիոյություն:
Ատացվում է, որ մեղքի հանդեպ
Աստծո ատելությունը
հավերժացնում է այն: Հիշյալ

աստվածաբանների ուսմունքի
համաձայն՝ հավիտենական
տանջանքը՝ առանց
ողորմության հույսի,
չարացնում է իր թշվառ
զոհերին, և իրենց զայրույթը
թափելով անեծքնե-րով ու
հայհոյությամբ՝ նրանք
առհավետ ծանրացնում են
իրենց հանցան-քը: Անվախճան
դարերի ընթացքում մշտապես
աճող մեղքի հավերժա-ցումը չի
կարող փառք բերել Աստծուն:

Մարդկային միտքը չի կարող
պատկերացնել, թե ինչ չարիք է
իր հետ բերել հավիտենական

տանջանքների մասին
հերձվածողությունը:
Աստ-վածաշնչի կրոնը՝ փ սիրով
ու բարություն, և առատ
գթասրտությամբ, մթագնել է
սնահավատությամբ ու
պարուրվել սարսավտով:
Խորհելով այն մասին, թե
ինչպիսի կեղծ գույներով է
սատանան պատկերել Աստծո
բնավորությունը, կարելի՞ է
արդյոք զարմանալ, թե ինչու են
մեր ողորմած Արարչից
վախենում ու սուկում, և
նույնիսկ ատում Նրան: Աստծո
մասին այդ զարհուրելի
պատկերացումը, որ քարոզվում

Է ամբիոններից և տարածվում
աշխարհով մեկ. ոչ թե
հազարավոր, այլ միլիոնավոր
մարդ-կանց կասկածամիտներ
ու անաստվածներ է դարձրել:

Հավիտենական տանջանքի
տեսությունն այն կեղծ
ուսմունքներից մեկն է, որ
կազմում է Բաբելոնի
պղծության գինին, որով նա
հարբեցնում է բոլոր ազգերին
(Հայտնություն 14.8, 17.2): Այն,
որ Քրիստոսի ծառայողներն
րնդունել են այդ
հերձվածողությունը և հռչակել
այն սրբազան ամբիոնից,

հիրավի առեղծված է: Նրանք
դա կեղծ շաբաթի հետ միասին
ընդունել են Յոնմից: ճիշտ է, որ
այս ուսմունքը քարոզել են մեծ
և բարի մարդիկ, բայց նրանք
յուրա չեն ունեցել այս հարցում,
ինչպես մենք ունենք: Նրանք
պատասխանատու էին միայն
այն լույսի համար, որ շողում էր
իրենց ժամանակներում, իսկ
մենք հաշվետու ենք մեր
օրերում շողացող լույսի
համար: Եթե մենք, Աստծո
խոսքի վկայութունից
շեղվելով, ընդունում ենք [537]
կեղծ ուսմունքներ, քանի որ
այդպես են սովորեցրել մեր

հայրերը, ապա ընկնում ենք
Բաբելոնի դեմ կայացված
դատավճռի տակ. մենք խմում
ենք նրա պղծության գինուց:

Շատերն էլ, ովքեր նողկում են
հավիտենական տանջանքների
ուսմունքից, ընկնում են
հակառակ մոլորության մեջ:
Տեսնելով, որ Սուրբ Գրքում
Աստված պատկերված է որպես
սիրող ու կարեկից էակ, նրանք
չեն կարողանում հավատալ, որ
Նա իր արարածներին մատնելու
է դժոխքի հավիտենական
կրակին: Բայց կարծելով, թե
հոգին բնականից անմահ է.

Նրանք այլընտրանք չեն
տեսնում, բացի նրանից, որ
ամբողջ մարդկությունն, ի
վերջո, փրկվելու է: Շատերի
կարծիքով՝ Աստվածաշնչի
սպառնալիքները
Նախատեսված են միայն
մարդկանց վախեցնելով
հնազանդեցնելու համար, և
դրանք բառացիորեն չեն
կատարվելու: Ստացվում է, որ
մեղավորը կարող է ապրել
եսասիրական հաճույքների մեջ՝
անտեսելով Աստծո
պահանջները, և միաժամանակ
ակնկալել, որ կարժանանա
Նրա բարեհաճությանը:

Այսպիսի ուսմունքը, թեև
ընդունելով Աստծո
ողորմությունը, անտեսում է
Նրա արդարադատությունը՝
շոյելով մեղավոր սիրտը և
հանդուգն դարձնելով
ամբարիշտներին իրենց
անօրենության մեջ:

Ցույց տալու համար, թե ինչպես
են համընդհանուր փրկության
ջատագրվները աղավաղում
Սուրբ Գիրքը, բավական է
մեջբերել միայն նրանց իսկ
ասածները: Մի անհավատ
երիտասարդի թաղման
ժամանակ, ով վթարի էր

ենթարկվել, ունիվերսալիստ
ծառայողն ընտրել էր
աստվածաշնչյան այս տեքստը.
«Դավիթ թագավորը...
մխիթարվել էր մեռնող Ամսոնի
վրա» (Բ Թագավորաց 13.39):

«Ինձ հաճախ հարցնում են,—
ասաց քարոզիչը»— թե ի՞նչ է
լինելու նրանց ճակատագիրը,
ովքեր հեռանում են աշխարհից
մեղքի մեջ՝ մեռ-նելով, թերևս,
հարբած վիճակում,
ոճրագործության արյունոտ
բծերն իրենց հանդերձներին,
կամ էլինչպես այս
եբիտասարդը, ով երբեք չի

հավատացել և ուրախութիւն
չի գտել հավատի մեջ: Մենք
կբավարարվենք Սուրբ Գրքով,
որի պատասխանը լուծում է
այս ահավոր խնդիրը: Ամսոնը
ծայրաստիճան մեղավոր էր և
անզեղջ, նրան հարբեցրել էին և
այդ վիճակում սպանել:

Դավիթն Աստծո մարգարե էր, և
պետք է որ իմանար՝ գալիք
աշխարհում Ամսոնի համար
լա՞վ է լինելու, թե՞ վատ: Ի՞նչ
խոսքեր դուրս եկան նրա
սրտից: [538] «Եվ Դավիթ
թագավորը փափագում էր
դուրս գնալ Աբիսողոմի մոտ,
որովհետև մխիթարվել էր

մեռած Ամսոնի վրա» (տեքստ 39):

«Ի՞նչ հետևություն կարելի է անել: Մի՞թե պարզ չէ, որ Դավիթը չէր հավատում անվերջանալի տանջանքներին: Մենք ևս չենք հավատում, և այստեղ հայտնաբերում ենք մի սքանչելի ապացույց՝ հոգուս համընդ-հանուր մաքրության ու խաղաղության ավելի հաճելի, ավելի լուսավոր ու բարի գաղափարի: Նա մխիթարվեց՝ տեսնելով, որ իր որդին մեռել է: Իսկ ինչո՞ւ:

Որովհետև մարգարեական
հայացքով նա կարողացավ
թափանցել փառավոր
ապագայի խորքը և տեսնել իր
որդուն՝ փորձությունից հեռու,
ստրկությունից ազատված ու
մեղքի ապականությունից
մաքրված, և բավականաչափ
սուրբ ու լուսավոր դառնալուց
հետո՝ ընդունված երկնքում
ցնծացող հոգիների շարքը: Նրա
միակ մխիթարությունն այն էր,
որ իր սիրելի որդին, հեռու
մեղքի ու տառապանքի այս
աշխարհից, գնացել է այնտեղ,
ուր Սուրբ Հոգու վսեմ շունչը
կլուսավորի նրա խավար

հոգին, ուր նրա միտքը կբացվի
երկնային իմաստության և
անմահական սիրո քաղցր
հափշտակության համար՝
պատրաստ լինելով
սրբագործված բնությանմբ
վայելելու երկնային հայրենիքի
հանգիստը:

Այս մտքերը պարզ են
դարձնում, որ երկնային
փրկությունը կախված չէ ո՛չ
մեր արարքներից այս
կյանքում, ո՛չ սրտի ներկա
վերափոխու-թյունից, ո՛չ էլ
ներկա հավատից կամ
դավանությունից»:

Այսպես է Քրիստոսի ծառայող
կոչեցյալը կրկնում այն
կեղծիքը, որ օձն ասել էր
Եդեմում. «Բնավ չեք մեռնի»:
«Այն օրը, որ դրանից ուտեք,
ձեր աչքերը կբացվեն, և Աստծո
պես կլինեք»: Նա
հայտարարում է, թե
մեղավորներից ամենապիղծը՝
մարդասպանը, գողն ու
շնացողը, մահից հետո
պատրաստ կլինի մտնելու
անմահ երանության մեջ:

Եվ ինչի՞ հիման վրա է Սուրբ
Գրքի այս խեղաթյուրողն անում

իր եզրակացությունները, միակ
Նախադասության, որն
արտահայտում է Դավթի
հնազանդությունը
Նախախնամության կամքին:
Նրա [539] հո- գին «փափագում
էր դուրս գնալ Աբիսողոմի մոտ,
որովհետև մխիթարվել էր
մեռած Ամսոնի վրա»:
Ժամանակը մեղմացրել էր նրա
վիշտը, և նրա մտքերը մեռած
որդուց դարձան դեպի
կենդանին, ով փախել էր՝
վախենալով իր հանցանքի
արդար պատժից: Եվ սա
օգտագործվում է որպես
ապացույց այն բանի, որ

արյունապիղծ, հարբած Ամսոնը
մահից անմիջապես հետո
տեղափոխվել է երանության
կացարաններ, որպեսզի
այնտեղ մաքրվի ու
պատրաստվի ընկերակցելու
անմեղ հրեշտակներին:
Չիրավի՛ հրապուրիչ հեքիաթ՝
հարմար գոհացնելու
մարմնավոր սիրտը: Սա
սատանայի ուսմունքն է, որը
հաջողությամբ կատարում է իր
գործը: Եվ պե՞տք է արդյոք
զարմանալ, որ նման ուսմունքի
հետևանքով անօրե-նությունը
ծաղկում է:

Վերոհիշյալ կեղծ ուսուցչի պես
են վարվում և շատ ուրիշները:
Աստվածաշնչյան մի քանի
խոսք առանձնացվում է
համատեքստից, որը հաճախ
բոլորովին հակառակ
նշանակություն է ունենում,
քան մեկնաբանվում է, և այդ
անկապ հատվածներն
աղավաղվում են՝
օգտագործվելով այնպիսի
ուսմունքներ հաստատելու
համար, որոնք որևէ հիմք
չունեն Աստծո խոսքում:
Վկայությունը, որ մեջբերվել է
որպես ապացույց, թե հարբած
Ամսոնը երկնքում է, սոսկ

Ենթադրութեան է, որն
ուղղակիորէն հակասում է
Սուրբ Գրքի այն անվիճելի
պնդմանը, որ հարբեցողն
Աստծո արքայութիւնը չի
ժառանգելու (Ա Կորնթացիս
6.10): Ահա այսպէս
թերահավատները,
անհավատներն ու
կասկածամիտները
ճշմարտութիւնը վերածում են
կեղծիքի: Եվ շատերը՝ խաբված
նրանց կեղծիքով, թմրած
նիրհում են մարմնավոր
ապահովութեան գրկում:

Եթե ճիշտ լիներ այն, որ
մահվան ժամին բոլոր
մարդկանց հոգիներն
ուղղակիորեն երկինք են գնում,
մենք ավելի շուտ մահը
կփափագեինք, քան կյանքը:
Շատերին այս համոզմունքը
մղել է վերջ տալու իրենց
կյանքին: Վշտից, հոգսերից ու
հիասթափությունից ճնշված
մարդուն ավելի հեշտ է թվում
կտրել կյանքի թելն ու
հավերժական երանության
աշխարհի թռչելը:

Աստված իր խոսքում
հստակորեն ասում է, որ

կպատժի իր օրենքը
խախտողներին: Նրանք, ովքեր
շողոքորթում են [540] իրենց
այն մտքով, թե Նա չափազանց
ողորմած է, որպեսզի
դատապարտի մեղավորին, թող
միայն նայեն Գողգոթայի
խաչին: Աստժո անբիժ Որդու
մահը վկայում է, որ «մեղքի
վարձքը մահն է», որ Աստժո
օրենքի յուրաքանչյուր
խախտում պետք է ստանա իր
արժանի պատիժը: Քրիստոսը,
որ անմեղ էր, մեղք դարձավ
մարդու համար: Նա կրեց
անօրենսության հանցանքը, ու
երբ Հայրը ծածկեց Նրանից իր

դեմքը, Նրա սիրտը պայթեց, և
Նա մեռավ: Այս մեծ
գոհաբերությունն արվեց
մեղավորներին փրկվելու
համար: Ուրիշ ոչ մի կերպ
մարդը չէր կարող ազատվել
մեղքի պատժից: Եվ ամեն մի
հոգի, ով հրաժարվում է
ընդունել այսպիսի գնով ձեռք
բերված քավություն-նը, անձամբ
պետք է կրի անօրենսության
հանցանքն ու դրա պատիժը:

Տեսնենք, թե Աստվածաշունչն
էլ ինչ է ասում ամբարիշտների
ու անզեղների մասին, ովքեր,
ըստ համընդհանուր

փրկութեան ջատագովի,
երկնքում են՝ որպէս սուրբ ու
երջանիկ հրեշտակներ:

«Ես ձրի կտամ ծարավին
կյանքի աղբյուրից»

(Յայտնութիւն 21.6): Այս
խոստումը վերաբերում է միայն
նրանց, ովքեր ծարավ են:

Միմիայն նրանց կտրվի այն,
ովքեր զգում են կյանքի ջրի
կարիքը՝ պատրաստ հա-նուն
դրա զոհաբերելու ամեն ինչ:

«Ով որ հաղթի, ամենը
կժառանգի, և ես կլինեմ նրան
Աստված, և նա կլինի ինձ որդի»

(Յայտնութիւն 21.7): Այստեղ

Ես պայմաններ են նշված:
Ամենը ժառանգելու համար
պետք է դիմակայել մեղքին ու
հաղթել այն:

Եսայիա մարգարեի միջոցով
Տերն ասում է. «Ասացեք
արդարին, որ նրա բանը լավ
է»: «Վա՛յ անզգամին, նրա
բանը չար է, որովհետև իր
ձեռքի գործերի հատուցումը
պիտի լինի իրեն» (Եսայիա
3.10,11): «Թեև մեղավորը
հարյուր անգամ մեղք գործի, և
նրա կյանքը երկարատև լինի,—
ասում է իմաստունը,— ես,
այնուամենայնիվ, գիտեմ, որ

բարիք կլինի Աստծուց
վախեցողներին, որ վախենում
են նրա երեսից: Բայց
ամբարշտին բարություն չի
լինի» (Ժողովող 8.12,13): Եվ
Պողոսն էլ վկայում է, որ
մեղավորն իր համար
բարկություն է դիզում՝
«բարկության և Աստծո այն
արդար դատաստանի
հայտնության օրվա համար,
որն ամեն մեկին հատուցում
կտա՝ ըստ նրա
գործերի», «նեղություն և
տառապանք յուրա-քանչյուրին,
ով չարություն է գործում»
(Յոնմեացիս 2.5,6,9): [541]

«Ոչ մի պոռնիկ, կամ պիղծ, կամ ագահ, որ կռապաշտ է, ժառանգություն չունի Քրիստոսի և Աստծո արքայությունում» (Եփեսացիս 5.5): «Չետևեցեք խաղաղության բռնորի հետ և սրբության, առանց որի՝ ոչ ոք Տիրոջը չի տեսնի» (Եբրայեցիս 12.14): «Երանելի են նրա պատվիրանները պահողները, որովհետև նրանցը կլինի իշխանությունը կյանքի ծառի վրա, և քաղաքի դռնով ներս կմտնեն: Բայց դուրսն են շները, կախարդները, պոռնիկները,

սպանողները, կռապաշտները և
ամեն ստուգյուն սիրողն ու
գործողը» (Յայտնություն
22.14,15):

Աստված բացահայտել է
մարդկանց իր բնավորությունն
ու մեղքի հանդեպ իր
վերաբերմունքը: «Եիովա՝
Աստված ողորմած ու գթած,
երկայնամիտ և առատ
տրտմությունով ու
ճշմարտությունով, որ
հազար-ներին տրտմություն ես
անում, որ անօրենություն,
հանցանք և մեղք ես ներում,
բայց հանցավորին բնավ

անպարտ չես թողնում» (Ելից
34.6,7): «Տերը... բոլոր
ամբարիշտներին կկորցնի»:
«Անիրավներն իրար հետ
մեկտեղ կսատկեն,
ամբարիշտների վերջը կորուստ
է» (Սաղմոս 145.20, 37.38):
Աստված կգործադրի իր ուժն ու
հեղինակությունը՝ վերջ դնելու
ապստամբությանը, ընդ որում՝
պատժիչ արդարադատության
բոլոր դրսևորումները
միանգամայն հարիր կլինեն
Նրա ողորմած, երկայնամիտ ու
բարեսիրտ բնավորությանը:

Աստված ոչ ոքի կամքի կամ
դատողութեան վրա չի
բռնանում: Նրան հաճո չէ
ստրկամիտ հնազանդութիւնը:
Նա կամենում է, որ իր
ստեղծած էակները սիրեն իրեն,
քանի որ Նա արժանի է այդ
սիրուն: Նա ոպում է, որ նրանք
հնազանդվեն իրեն, որովհետև
գիտակցում և գնահատում են
Նրա իմաստութիւնը,
արդարութիւնն ու
բարութիւնը: Եվ բոլոր նրանք,
ովքեր ճիշտ պատկերացում
ունեն այս որակների մասին,
կսիրեն Նրան, քանզի Նրան են

ձգտում՝ հիացած Նրա
բնավորությանը:

Բարության, գթասրտության ու
սիրո սկզբունքները՝
ուսուցանված և
մարմնավորված մեր Փրկչի
կողմից, Աստծո կամքի և
բնավորության արտացոլումն
են: Զրիստոսն ասում էր, որ
Ինքը սովորեցնում է միայն այն,
ինչ ստացել է Իր Հորից: Աստծո
կառավարման սկզբունքները
կա-տարելապես ներդաշնակ են
Փրկչի այս պատվիրանին.
«Սիրեցեք ձեր թշնամիներին»:
Աստված [542] ամբարիշտներին

դատում է հանուն տիեզերքի
բարօրության և հենց հանուն
Նրանց, ում ուղղված են Նրա
դատաստանները: Նա
կերջանկացներ այդ մարդկանց,
եթե կարողանար, իր
կառավարության օրենքների և
իր բնավորության
արդարության համեմատ: Տերը
Նրանց շրջապատում է իր սիրո
ապացույցներով, շնորհում է իր
օրենքի գիտությունը և Նրանց
հետևից գնալով՝ առաջարկում
իր ներողամտությունը, բայց
Նրանք արհամարհում են Նրա
սերը, ոտնահարում Նրա
օրենքը և մերժում Նրա

տրտմութիւնը: Մշտապես
ստանալով Նրա պարգևները՝
Նրանք անպատվում են
Տվողին, ատում են Աստծուն,
քանզի գիտեն, որ Նա գարշում
է իրենց մեղքերից: Աստված
երկար է համբերում Նրանց
կամակորությանը, բայց
վերջապես կգա վճռորոշ ժամը,
երբ որոշվելու է Նրանց
ճակատագիրը: Այն ժամանակ
Նա իր կողմը կքաշի՞ արդյոք
այս խռովարարներին: Նրանց
կստիպի՞ արդյոք կատարել իր
կամքը:

Նրանք, ովքեր սատանային են
իրենց առաջնորդ ընտրել և
գտնվում են նրա իշխանության
տակ, պատրաստ չեն մտնելու
Աստծո արքայությունը:
Չպարտությունը,
խաբեությունը,
անառակությունն ու
դաժանությունը կարծրացել են
նրանց բնավորության մեջ:
Կարո՞ղ են այդպիսիք երկինք
մտնել ու հավերժ ապրել նրանց
հետ, ում արհամարհել ու ատել
են երկրի վրա: Ճշմարտությունը
երբեք հաճելի չի լինի
ստախոսին, և հեզությունն
անհարիր կլինի

մեծամտությանն ու
հպարտությանը, սրբու-թյունն
անընդունեփ կլինի անառակի
համար, և անշահախնդիր սերը
հրապուրիչ չի թվա եսասերին:
Չաճույքի ինչ աղբյուր կարող է
երկինքը առաջարկել նրանց,
ովքեր ամբողջովին կլանված
են աշխարհիկ ու եսա-սիրական
հետաքրքրություններով:

Նրանք, ովքեր իրենց ողջ
կյանքում ապստամբել են
Աստծո դեմ, կա-րո՞ղ են արդյոք
հանկարծ վտխադրվել երկինք
ու տեսնել այնտեղ տիրող վեհ
ու սուրբ կատարելությունը, ուր

յուրաքանչյուր սիրտ լցված է
սիրով, և ամեն մի դեմք շողում
է ուրախությունից, ուր
մեղեդային հիասքանչ
երաժշտություն է հնչում ի
փառս Աստծո և Գառան, իսկ
աթոռի վրա նստողի դեմքից
ճառագող լույսի շողերն
անդադար ողողում են
փրկվածներին: Նրանք, ում
սրտերն ատելությամբ են լցված
Աստծո, ճշմարտության ու
սրբության հանդեպ, կարո՞ղ են
արդյոք միանալ երկնային
բազմությանը և ձայնակցել նրա
գովերգին: Նրանք
կդիմանայի՞ն արդյոք Աստծո և

Գառան փառքին: Ոչ, երբեք:
Փորձութեան տարիներ [543] Էին
Նրանց շնորհվել իրենց
բնավորութիւնը կերտելու
երկնքի համար, բայց նրանք
երբեք իրենց միտքը
չվարժեցրին սրբութիւնը
սիրելու համար: Նրանք երբեք
չսովորեցին երկնքի լեզուն, իսկ
հիմա արդէն չափազանց ուշ է:
Աստճո դեմ ապստամբ կյանքը
Նրանց անպիտան է դարձրել
երկնքի համար: Այնտեղ տիրող
մաքրութիւնը, սրբութիւնն ու
խաղաղութիւնը տանջափ
կլինեին նրանց համար, իսկ
Աստճո փառքը՝ լափող կրակ:

Նրանք կփափագեին փախչել
այդ սուրբ վայրից: Նրանք
կողջունեին մահը, միայն թե
թաքնվեին Նրա երեսից, ով
մեռավ հանուն իրենց
փրկության: Ամբարիշտներն
իրենք են ընտրում իրենց
ճակատագիրը: Նրանք
կամավոր կերպով են
հրաժարվում երկնքից, իսկ
Աստված մտում է արդար ու
գթասիրտ:

Ջրհեղեղի ջրերի պես՝ մեծ օրվա
կրակը կհռչակի Աստծո
դատա-վճիռը, որ
ամբարիշտներն անբուժելի են:

Նրանք որևէ միտք չունեն
են-թարկվելու աստվածային
իշխանությանը: Նրանց կամքը
վարժվել է ապստամբելու, և
երբ ավարտվի կյանքը,
չափազանց ուշ կլինի վախելու
մտքերի ուղղությունը,
անօրենությունից դառնալու
հնազանդության և
ատելությունից՝ դեպի սեր:

Խնայելով մարդասպան Կայենի
կյանքը՝ Աստված օրինակ տվեց
աշխարհին, թե ինչ կլինեք, եթե
մեղավորին թույլ տրվեք ապրել
ու շարունակել իր անսանձ
անօրենության ուղին: Կայենի

ագդեցութեամբ ու օրինակով
Նրա սերունդներն ընկան մեղքի
մեջ, մինչև որ «շատացել էր
մարդկանց չարութիւնը երկրի
վրա, և Նրանց սրտի
խորհուրդների բոլոր
գաղափարները չար էին ամեն
օր»: «Եվ երկիրն Աստծո առաջ
ապա-կանվեց ու
անօրենութեամբ լցվեց»
(Ծննդոց 6.5,11):

Գթասրտութեամբ էր, որ
Աստված Նոյի օրերում
բնաջնջեց աշխարհի
ամբարիշտ բնակիչներին: Եվ
գթասրտութեամբ էլ Նա

Կործանեց անառակ
սողոմացիներին: Սատանայի
մոլորեցուցիչ ուժի
ազդեցութեամբ անօրեններն
արժանանում են մարդկանց
համակրանքին ու
հիացմունքին, և այդպիսով
մշտապես մղում են նրանց
ապստամբութեան: Այդպես էր
Կայենի և Նոյի, Աբրահամի և
Ղովտի օրերում, այդպես է նաև
մեր ժա-մանակներում:
Տիեզերքի հանդեպ իր
գթասրտութունից է, որ
Աստված պետք է վերջապես
ոչնչացնի իր շնորհը
մերժողներին: [544]

«Մեղքի վարձքը մահն է, բայց Աստծո շնորհը՝ հավիտենական կյանք՝ մեր Տեր Յիսուս Քրիստոսի միջոցով»

(Յոհաննես 6.23): Մինչ արդարները ժառանգում են կյանքը, ամբարիշտների բաժինը մահն է: Մովսեսը կոչ արեց Իսրայելին. «Այսօր ես քո առաջ եմ դնում կյանքը և բարին, մահը և չարը» (Երկրորդ Օրինաց 30.15): Բայց սա այն մահը չէ, որ հռչակվեց Ադամին, քանզի ողջ մարդկությունը կրում է նրա անօրենսության պատի-ժը: Խոսքը «Երկրորդ

մահվան» մասին է, որը
հակադրվում է հավիտե-նական
կյանքին:

Ադամի մեղքի հետևանքով
մահը տարածվեց մարդկային
ողջ ցեղի վրա: Բոլորն էլ
անխտիր գերեզման են իջնում:
Բայց փրկության ծրագրում
Նախատեսված է, որ բոլորը
պետք է դուրս բերվեն իրենց
գերեզմաններից: «Արդարների
և մեղավորների հարուժյուն
պիտի լինի», «քանզի ինչպես
Ադամով բոլորը մեռնում են,
այնպես էլ Քրիստոսով բոլորը
կենդանանում են» (Գործք

24.15, Ա Կորնթացիս 15.22):
Սակայն հարուժյուն առնող
երկու խմբերի միջև
տարբերություն է դրված:
«Ամենքը, որ գերեզմաններում
են, նրա ձայնը կլսեն: Եվ դուրս
կգան նրանք, որ բարիք են
գործել՝ դեպի կյանքի
հարուժյունը, իսկ նրանք, որ
չարիք են արել՝ դեպի
դատաստանի հարուժյունը»
(Յովհաննես 5.28,29): Նրանք,
որ «արժանի կհամարվեն»
կյանքի հարուժյանը, «երանելի
և սուրբ» են: «Սրանց վրա
իշխանություն չունի երկրորդ
մահը» (Յայտնություն 20.6):

Իսկ նրանք, ովքեր
ապաշխարության ու հավատի
միջոցով ներման չեն
արժանացել, պետք է ընդունեն
անօրենության պատիժը՝
«մեղքի վարձքը»: Այդ պատժի
տևողությանն ու չափը տարբեր
է լինելու՝ «իրենց գործերի
համեմատ», և ի վերջո
ավարտվելու է երկրորդ մահով:

Իր արդարության ու
ողորմության համաձայն՝
Աստված չի կարող մեղավորին
փրկել իր մեղքերի մեջ, ուստի
Նա վերջինիս զրկում է
կյանքից, որովհետև իր անօրեն

կյանքով նա վկայել է, որ
արժանի չէ դրան: Ներշնչված
հեղինակն ասում է. «Դեռ մի
քիչ ժամանակ էլ՝ և
ամբարիշտը չկա, ու երբ որ նրա
տեղին մտիկ տաս՝ նա չկա»:
Մյուսն էլ հռչակում է. «Նրանք
պիտի[545] ... չեղածի պես
դառնան» (Սաղմոս
37.10, Աբդիա 16):
Խայտառակված՝ նրանք
մատնվում են հավերժական
անգոյության:

Այսպես վերջ կդրվի մեղքին՝ իր
բերած ողջ թշվառությամբ ու
ավերածությամբ:

Սաղմոսերգուն ասում է. «Դու կորցրիր ամբարշտին. նրանց անունը ջնջեցիր հավիտյանս հավիտենից: Թշնամիները վեր-ջացան բոլորովին»

(Սաղմոս 9.5,6): Հայտնության գրքում Հովհաննեսը, տեսնելով փրկվածների վիճակը, փառքի տիեզերական օրհներգ է լսում, որին ոչ մի աններդաշնակ հնչյուն չի խանգարում: Ամեն արարած երկնքում ու երկրում փառք է տալիս Աստծուն

(Հայտնություն 5.13): Այն ժամանակ այնտեղ չեն լինի կորած հոգիներ, ովքեր հայհոյում են Աստծուն

անվերջանալի տանջանքի մեջ,
ոչ էլ թշվառ էակներ, որոնք
դժոխքում իրենց աղաղակները
կխառնեն փրկվածների
երգերին:

Բնական անմահության
հիմնովին սխալ գաղափարի
վրա է հենվում մահվան մեջ
գիտակից վիճակի, ինչպես նաև
հավերժական տան-ջանքների
մասին ուսմունքը, որը
հակասում է թե՛ Սուրբ Գրքին,
թե՛ առողջ դատողությանն ու
մարդասիրության մեր
զգացումներին: Ըստ այդ
հանրաճանաչ ուսմունքի՝

փրկվածները երկնքում տեղյակ
են այն ամենին, ինչ տեղի է
ունենում երկրի վրա, և
հատկապես իրենց այն
ընկերների կյանքին, ովքեր
մնացել են այստեղ: Բայց
ինչպե՞ս կարող են մեռյալներն
իրենց երջանիկ զգալ՝ տեսնելով
ողջերի նեղությունները, իրենց
սիրելիների գործած մեղքերը,
նրանց վշտերով,
հիասթափությանը ու
տառապանքով լի կյանքը:
Ինչպե՞ս կարող են նրանք
վայելել երկնքի բերկրանքը՝
թեաճելով երկրում գտնվող
իրենց ընկերների վերևում: Իսկ

որքա՛ն նողկալի է այն
համոզմունքը, թե հենց որ
շունչը լքում է մարմինը,
անզեղջ մարդու հոգին գցվում է
դժոխքի կրակների մեջ:
Ինչպիսի՛ խոր կսկիծ պիտի
ունենան նրանք, ովքեր
տեսնում են անպատրաստ
գերեզման իջնող և
հավերժական թշվառության ու
մեղքի մեջ ընկնող իրենց
ընկերներին: Ճատերը
խելագարվել են այդ
զարհուրելի մտքից:

Իսկ ի՞նչ է ասում Սուրբ Գիրքը
այս ամենի վերաբերյալ:

Դավիթը հայտարարում է, որ մեռյալը ոչինչ չի գիտակցում: «Նրա հոգին («շունչը», բնագրի թարգմ.) դուրս կգա, նա դեպի իր հողը կդառնա, նույն օրը [546] կկորչեն նրա խորհուրդները» (Սաղմոս 146.4): Սողոմոնը նույնն է վկայում. «Կենդանի մարդիկ գիտեն, որ մեռնելու են, բայց մեռյալները ոչ մի բան չգիտեն... Նրանց սերն էլ, ատելությունն էլ, նրանց նախանձն էլ վաղուց է փչացել, և նրանց համար այլևս հավիտյան բաժին չկա արեգակի տակ եղած բոլոր

բաների մեջ»: «Գործ, խորհուրդ
գիտություն և իմաստություն
չկա մյուս աշխարհում, ուր որ
դու պիտի գնաս» (Ժողովող 9.5,
6, 10):

Երբ ի պատասխան Եզեկիայի
աղոթքի՝ Նրա կյանքը
տասնհինգ տարով
երկարացվեց, արքան
փառաբանեց Աստծուն Նրա մեծ
տրտմու-թյան համար: Իր
երգում նա հայտնում է իր
ուրախության պատճառը.
«Գերեզմանը քեզ չի գովի, մահը
քեզ չի օրհնաբանի, գուբն
իջնողները չեն հուսա քո

ճշմարտությանը: Ապրողը՝
ապրողն է քեզ օրհնելու,
ինչպես ես՝ այսօր» (Եսայիա
38.18,19): Հանրաճանաչ
աստվածաբանությունն արդար
մեռյալներին պատկերում է
երկնքում՝ երանության մեջ
Աստծուն գովերգելիս անմահ
լեզվով, բայց եզեկիան նման
փառավոր հեռանկար չտեսավ
մահվան մեջ: Նրա խոսքերին
ներդաշնակ է սաղմոսերգուհի
վկա-յությունը. «Մահվան մեջ
քեզ հիշել չկա. գերեզմանում
ո՞վ կփառավորի քեզ»: «Ոչ թե
մեռյալները կօրհնեն Տիրոջը, և

ոչ էլ լռության մեջ իջնողները»
(Սաղմոս 6.5, 115.17):

Պենտեկոստեի օրը Պետրոսը
հայտարարեց, որ Դավիթ
Նահապետը «մեռավ է,
թաղվեց է, և նրա գերեզմանը
մինչև այսօր մեր մեջ է»,
«որովհետև Դավիթը վեր չելավ
երկինք» (Գործք Առաքելոց
2.29,34): Այն փաստը, որ
Դավիթը գերեզմանում է մնում
մինչև հարությունը,
ապացուցում է, որ արդարները
մեռնելիս չեն գնում երկինք:
Միայն հա-րության միջոցով և
Քրիստոսի հարության

արժանիքով Դավիթն ի վերջո
կարող է նստել Աստծո աջ
կողմը:

Եվ Պողոսն էլ ասում է. «Եթե
մեռյալները հարուժյուն չեն
առնում, ապա Քրիստոսն էլ
հարուժյուն չի ստել, իսկ եթե
Քրիստոսը հարուժյուն չի ստել,
ունայն է ձեր հավատը, և դեռ
ձեր մեղքերի մեջ եք: Ուրեմն
նրանք էի որ Քրիստոսում
ննջեցին, կորան» (Ա
Կորնթացիս 15.16-18): Եթե չորս
հազար տարվա ընթացքում
արդարները մեռնելիս
անմիջապես երկինք գնացած

լինեին, ինչպե՞ս Պողոսը
կասեր, որ եթե հարուժյուն չկա,
[547] «Նրանք էլ, որ
Քրիստոսում ննջեցին, կորան»:
Այդ դեպքում հարուժյան
կարիք չէր լինի:

Նահատակ թինդալը, խոսելով
մեռածների վիճակի մասին,
ասել է. «Ես բացեիբաց
դավանում եմ, որ բոլորովին էլ
համոզված չեմ, թե նրանք
արդեն այն փառքի լիության
մեջ են, որում գտնվում են
Քրիստոսը կամ Աստծո ընտրյալ
հրեշտակները: Ես դրան չեմ
հավատում, քանզի եթե այդպես

փներ, ապա անիմաստ է
քարոզել մարմնի հարուժյան
մասին» (Ուիլյամ Թինդալ,
Նախաբան Նոր Կտակարանի
համար 1534 թ. հրատ, կամ
Բրիտանացի
Բարենորոգիչները, էջ 349):

Անհերքելի փաստ է, որ
մահվան մեջ անվախճան
երանուժյան հույսը հանգեցրել
է հարուժյան ուսմունքի
համատարած անտեսմանը: Այս
առումով դոկտոր Ադամ Կլարկն
ասել է. «Թերևս առաջին
քրիստոնյաները շատ ավելի են
կարևորել հարուժյան

ուսմունքը, քան դա արվում է
հիմա: Ինչո՞ւ: Առաքյալները
շարունակ հիշեցրել են դրա
մասին՝ քաջալերելով Աստծո
հետևորդներին լինել ժրաջան,
հնազանդ և բարեսիրտ: Իսկ
այսօրվա աշակերտները
հազվադեպ են հիշում այդ
մասին: Առաքյալներն այդ էին
քարոզում, և առաջին
քրիստոնյաները հավատում
էին դրան: Մենք էլ ենք դա
քարոզում, և մեր ունկնդիրները
ևս հավատում են:
Ավետարանում ոչ մի այլ
ուսմունք ավելի չի շեշտվում և
ներկա քարոզչության

համակարգում ավելի չի
արհամարհվում, քան
հարուժյան ուսմունքը»
(Մեկնաբանություն, Ա
Կորնթացիս 15, պարբ. 3):

Այսպես շարունակվեց այնքան,
մինչև որ քրիստոնեական
աշխարհը գրեթե մոռացավ
հարուժյան փառահեղ
ճշմարտությունը: Մի հայտնի
հեղինակ, մեկնաբանելով
Պարտի խոսքերը՝ գրված Ա
Թեսաղոնիկեցիս 4.13-18-ում,
ասում է. «Մխիթարության
բոլոր գործնական
նպատակներով արդարների

երանելի անմահության
ուսմունքը մեզ համար
փոխարինում է Տիրոջ երկրորդ
գալստյան մասին ցանկացած
կասկածելի ուսմունքի: Մեզ
համար Տերն արդեն գալիս է
մահվան ժամանակ: Ահա թե
ինչին պետք է մշտարթուն
սպասենք: Մեռյալներն արդեն
անցել են փառքի մեջ: Նրանք
չեն սպասում իրենց
դատաստանն ու երանությունը
ազդարարող փողի ձայնին»:
[548]

Բայց պատրաստվելով թողնել
իր աշակերտներին՝ Ջիսուսը

չասաց, թե նրանք շուտով իր
մոտ են գալու: «Գնում եմ ձեզ
համար տեղ պատ-րաստելու,—
ասաց Նա,— և եթե գնամ ու ձեզ
համար տեղ պատրաստեմ,
դարձյալ կգամ և ձեզ ինձ մոտ
կառնեմ» (Յովհաննես 14.2,3):
Եվ Պողոսն էլ ասում է, որ
«Ինքը՝ Տերը, հրամանով,
հրեշտակապետի ձայնով և
Աստծո փողով վայր կգա
երկնքից, և Բրիստոսով
մեռելները սկզբում հարուժյուն
կառնեն, իսկ հետո մենք, որ
կենդանի ենք մնացել, նրանց
հետ ամպերով օդի մեջ
կհափշտակվենք Տիրոջը

դիմավորելու, և այդպես ամեն
ժամանակ Տիրոջ հետ
կլինենք»։ Եվ ավելացնում է.
«Իրար մխիթարեցէք այս
խոսքերով» (Ա Թեսաղոնիկեցիս
4.16-18)։ Որքա՛ն մեծ է
հակասությունն այս
մխիթարական խոսքերի և վերը
մեջբերված ունիվերսալիստ
քարոզչի պնդումների միջև։
Վերջինս հավաստիացնում է իր
վշտաբեկ ընկերներին, թե
որքան էլ մեղավոր եղած լինի
մեռյալը, երբ նա իր վերջին
շունչն է փչում այստեղ, նրան
ընդունում են հրեշտակները։
Պողոսը մատնացույց է անում

իր եղբայրներին Տիրոջ ապագա
գալուստը, երբ կփշրվեն
գերեզմանի շղթաները, և
«Քրիստոսով մեռյալները»
հարուժյուև կառնեն
հավիտենական կյանքի
համար:

Նախքան որևէ մեկը
կկարողանա մտնել օրհնյալ
պալատները, նրա գործը պետք
է քննության ենթարկվի, և նրա
բնավորությունն ու կյանքը
պիտի ստուգվի Աստծո առաջ:
Բոլորը պետք է դատվեն
գրքերում գրվածի համաձայն և
հատուցում ստանան իրենց

գործերի համեմատ: Այս
դատավարութիւնը չի
կատարվում մահվան պահին:
Ուշադրութիւն դարձրեք
Պողոսի խոսքերին. «Մեկ օր
հաստատեց, որում աշխարհս
արդարությամբ պիտի դատի
այն մարդու միջոցով, որով
սահմանեց ամենքին հավատ
տալ հարութիւն տալով նրան
մեռելներից» (Գործք Առաքելոց
17.31): Այստեղ առաքյալը
ուղղակիորեն ասում է, որ
հատուկ ժամանակ է որոշված
ապագայում աշխարհը
դատելու համար:

Յուդոյան վկայակոչում է նույն ժամանակը՝ ասելով. «Այն հրեշտակ-ներին, որ իրենց իշխանությանը չպահեցին, այլ թողեցին իրենց բնա-կությունը, հավիտենական կապանքներով խավարի մեջ պահեց մեծ օրվա դատաստանի համար»: Եվ ապա մեջբերում է Ենոքի խոսքերը. «Ահա Տերը եկավ իր բյուրավոր [549] սուրբերով, որ դատաստան անի ամենքին» (Յուդոյա 6, 14, 15): Յովհաննեսն ասում է. «Ես տեսա մեռյալներին՝ մեծ ու փոքր՝ կանգնած աթոռի առաջ, և գրքերը բացվեցին.... և

մեռյալները դատվեցին և այն
գրքերում գրված իրենց
գործերի համեմատ»
(Յայտնություն 20.12): Բայց
եթե մեռյալներն արդեն
վայելում են երկնային
երանությունը կամ տանջվում
դժոխքի կրակների մեջ, այդ
դեպքում ի՞նչ կարիք կա
ապագա դատաստանի: Աստծո
խոսքի ուսմունքն այս կարևոր
հարցերի վերաբերյալ
դժվարիմաց կամ հակասական
չէ, այն հասկանալի է նույնիսկ
ամենահասարակ մարդուն:
Բայց ի՞նչ իմաստություն կամ
արդարություն կարող է գտնել

անկեղծ մարդը հիշյալ
տեսութեան մեջ: Արդարներն
ինչպե՞ս կարող են իրենց
գործերի քննությունից հետո
ստանալ այս գովասանքը.
«Լա՛վ, բարի և հավատարիմ
ծառա... մտիր քո Տիրոջ
ուրախությունը», եթե նրանք
արդեն, թերեւ, երկար դարեր
ապրում են Նրա հետ: Կամ
մի՞թե ամբարիշտները պիտի
հետ կանչվեն տանջանքի
վայրից՝ լսելու ողջ երկրի
Դատավորի վճիռը. «Ինձնից
դեն գնացեք, ով անիծյալներ,
հավիտենական կրակի մեջ»
(Մատթեոս 25.21,41):

Հանդիսավո ը ծաղրանք:
Աստծո իմաստութեան ու
արդարութեան ի՛նչ անամոթ
վարկաբեկում:

Հոգու անմահութեան
տեսութիւնն այն կեղծ
ուսմունքներից մեկն է, որ
Հռոմը, վախ առնելով
հեթանոսութիւնից, ներմուծեց
քրիստոնեական կրոնի մեջ:
Մարտին Լյութերն այն դասում
էր «Հռոմի կոնդակների
աղբակոլտը կազմող հրեշավոր
առասպելների» շարքին (Ե.
Պետավել, Անմահութեան
խնդիրը, Էջ 255):

Մեկնաբանելով Սողոմոնի
խոսքերը ժողովող գրքում այն
մասին, որ մեռյալները ոչինչ
չգիտեն, Բարենորոգիչն ասում
է. «Ահա ևս մի ապացույց, որ
մեռյալները... ոչինչ չեն զգում:
Այնտեղ չկա ոչ
պարտականություն, ոչ
գիտություն, ոչ ճանաչում, ոչ
իմաստություն: Ըստ Սողոմոնի՝
մեռյալները քնած են և բնավ
ոչինչ չեն զգում: Նրանք ննջում
են այնտեղ և ոչ օրեր են
հաշվում, ոչ տարիներ, իսկ երբ
արթնանան, նրանց կթվա, թե
մի րոպե հազիվ են քնել»
(Մարտին Լյութեր, Սողոմոնի

Ժողովող կոչված գրքի
մեկնաբանություն, էջ 152):

Սուրբ Գրքում ոչ մի տեղ մենք
չենք գտնում պնդումներ, [550]
թե արդարներն իրենց վարձքը
կամ ամբարիշտներն իրենց
պատիժը ստանում են մահվան
պահին: Նահապետներն ու
մարգարեները նման
հավաստիացում չեն թողել:
Քրիստոսն ու Նրա
առաքյալները ակնարկ անգամ
չեն արել այդ մասին:
Աստվածաշունչը հստակորեն
սովորեցնում է, որ մեռյալներն
անմիջապես երկինք չեն գնում:

Նրանք քնած են մինչև
հարության պահը: (Ա
Թեսաղոնիկեցիս 4.14, Յոբ
14.10-12): Այն օրը, երբ
կտրվում է արծաթյա թելը, և
կտրվում՝ ոսկե բաժակը
(Ժողովող 12.6), մարդու մտքերը
կորչում են: Գերեզման
իջևողները լռության մեջ են:
Նրանք այլևս ոչինչ չգիտեն, թե
ինչ է կատարվում արեգակի
տակ (Յոբ 14.21): Երանելի՛
հանգիստ հոգևած արդարների
համար: Ժամանակը՝ կարճ
լինի, թե երկար, նրանց համար
մի ակնթարթ է: Նրանք քնած
են, և կարթնանան Աստծո

փողից՝ ստանալու փառավոր
անմահություն: «Որովհետև
վաղը կփչի, և մեռյալները
հարություն կառնեն
անապա-կանելի... Եվ երբ այս
ապականացուն
անապականություն կհագնի, և
այս մահկանացուն՝
անմահություն, այն ժամանակ
կլինի այն խոսքը, որ գրված է,
թե՛ մահն ընկղմվեց
հաղթության մեջ» (Ա
Կորնթացիս 15.52-54):
Արթնանալով խոր քնից՝ նրանք
կսկսեն իրենց գոյությունը այն
պահից, երբ այն ընդհատվել
էր: Վերջին զգացումը մահվան

ցավն է եղել, իսկ վերջին
միտքը՝ այն, որ հանձնվում են
գերեզմանի իշխանությունը:
Գերեզմանից դուրս գալիս
նրանց առաջին ուրախ միտքը
արձագանք կգտնի հաղթական
այս աղաղակի մեջ. «Մահ, ո՞ւր
է քո խայթոցը, գերեզման, ո՞ւր
է քո հաղթությունը» (Ա
Կորնթացիս 15.55): [551]

ԳԼՈՒԽ

34—ՈԳԵՅԱՐՑՈՒԹՅՈՒՆ

Սուրբ հրեշտակների
ծառայությունը, ինչպես
ներկայացված է Սուրբ Գրքում,
չատ մխիթարական և
թանկագին ճշմարտություն է
Քրիստոսի յուրաքանչյուր
հետևորդի համար: Սակայն
հանրաճանաչ
աստ-վածաբանության
մոլորություններն աղավաղել
են Աստվածաշնչի ուս-մունքն
այս հարցի վերաբերյալ:
Բնական անմահության
գաղափարը՝ ի սկզբանե

փոխառված հեթանոսական
փիլիսոփայությունից և մեծ
ուրացության խավար
ժամանակներում ներմուծված
քրիստոնեական հավատի մեջ,
փոխարինել է Սուրբ Գրքի այն
հստակ ճշմարտությանը, որ
«մեռյալները ոչինչ չգիտեն»:
Չազարավոր մարդիկ
հավատում են, թե «սպասավոր
հոգիները` ...ուղարկված
սպասավորություն անելու
նրանց, ովքեր փրկությունը
պիտի ժառանգեն», մեռյալների
հոգիներն են, չնայած Սուրբ
Գրքի այն վկայությանը, որ
երկնային հրեշտակները

գոյութիւնն են ունեցել և
կապված են եղել մարդկային
պատմութեան հետ՝ դեռ
նախքան որևէ մարդու մահը:

Մահվան մեջ մարդու գիտակից
վիճակի մասին ուսմունքը,
հատ-կապես այն համոզմունքը,
թե մեռյալների հոգիները
վերադառնում են ծառայելու
կենդանի մարդկանց,
ճանապարհ է հարթել
Ժամանակակից
ոգեհարցութեան համար: Եթե
մեռյալները գտնվում են Աստծո
և սուրբ հրեշտակների
ներկայութեամբ և օժտված են

գիտելիքներով, որոնք
ան-համեմատ ավելի
գերազանց են իրենց նախկին
գիտելիքներից, ինչո՞ւ նրանք
չեն վերադառնում երկիր՝
լուսավորելու և խրատելու
ապրողներին: Եթե մեռյալների
հոգիները թևածում են իրենց
երկրային մտերիմների շուրջը,
ինչպես սովորեցնում է
հանրաճանաչ
աստվածաբանությունը, ինչո՞ւ
նրանց թույլ չի տրվում
հաղորդակցվել վերջիններիս
հետ, նախա-զգուշացնել
չարիքի մասին կամ մխիթարել
[552] վշտի մեջ: Ինչպե՞ս կարող

են նրանք, ովքեր հավատում են
մահվան մեջ մարդու գիտակից
վիճակին, մերժել փառավորված
հոգիների կողմից իրենց
հաղորդված «աստվածային
լույսը»: Ահա սրբազան
համարվող այն միջոցը, որով
սատանան գործում է իր
նպատակներն իրականացնելու
համար: Ենթարկվելով նրա
հրամանին՝ ընկած
հրեշտակները հայտնվում են
որպես լրաբերներ հոգիների
աշխարհից: Դրդելով
հավատալ, թե իբր ողջերը
կարող են հաղորդակցվել
մեռյալների հետ, չարի իշխանն

իր կախարդիչ ազդեցությունն է
գործում նրանց մտքի վրա:

Նա ի գորու է մարդկանց առաջ
հայտնվել նրանց մահացած
մտե-րիմների կերպարանքով:
Կեղծիքը կատարյալ է. ծանոթ
հայացքը, խոս-քերը, ձայնի
տոնը վերարտադրվում են
զարմանալի ճշգրտությամբ:
Շա-տերը մխիթարվում են այն
հույսով, որ իրենց սիրելիները
վայելում են երկնային
երանությունը, և չկասկածելով
վտանգի մասին՝ հավատում են
«մուլար ոգիների և դևերի
վարդապետություններին»:

Երբ մարդիկ սկսում են
հավատալ, թե մեռյալներն
իսկապես վերադառնում են՝
հաղորդակցվելու իրենց հետ,
սատանան այնպես է անում, որ
հայտնվեն նրանք, ովքեր
գերեզման են իջել
անպատրաստ: Եվ հայտնվելով՝
նրանք հայտարարում են, թե
իրենք երջանիկ են և նույնիսկ
բարձր դիրք են զբաղեցնում
երկնքում, և այսպես
տարածվում է այն
մոլորությունը, թե ոչ մի
տարբերություն չկա արդարի և
ամբարշտի միջև: Յոգիների

աշխարհից այս կեղծ
այցելուները երբեմն
նախազգուշացումներ են
անում, որոնք ճիշտ են դուրս
գալիս: Վստահություն չափելով՝
նրանք հետագայում
ներկայացնում են ուսմունքներ,
որոնք ուղղակի կործանում են
հավատը Սուրբ Գրքի հանդեպ:
Ստեղծելով տպավորություն, թե
խորապես շահագրգռված են
իրենց երկրային ընկերների
բարօրությամբ, նրանք
ներշնչում են
ամենավտանգավոր
մոլորություններ: Այն փաստը,
որ նրանք որոշ

ճշմարտություններ են ասում ու
երբեմն ի վիճակի են
կանխագուշակել ապագա
իրադարձությունները,
վստահություն է ներշնչում
Նրանց ասածների հանդեպ, և
Նրանց կեղծ ուսմունքը
հազարավորների կողմից
ընդունվում է այնպիսի
պատրաստակամությամբ ու
անվերապահ հավատով, ասես
դրանք Սուրբ Գրքի
ամենասրբազան
ճշմարտությունները լինեն:
Աստճո օրենքն անտեսվում է,
շնորհի Յոզիս՝ նախատվում,
իսկ ուխտի արյունը անսուրբ մի

բան է համարվում: Յոգիները
հերքում են Քրիստոսի
աստվածային էությունը և
անգամ Արարչին իրենց
հավասար են ներկայացնում:
Այսպիսով, թաքնված նոր
դիմակի տակ՝ մեծ խռովարարը
[553] դեռ իր պատերազմն է
մղում Աստծո դեմ, որը սկսվել
էր երկնքում և արդեն շուրջ վեց
հազար տարի շարունակվում է
երկրի վրա:

Շատերը վարձում են
ոգեհարցության
դրսևորումները բացատրել
որպես մեդիումի ձեռքերի

Խորամանկ ճարպկության
արդյունք: Դա հա- ճախ իրոք
այդպես է, սակայն լինում են
նաև գերբնական ուժի
ակնհայտ դրսևորումներ:
Խորհրդավոր թակոցները,
որոնք սկիզբ դրեցին
ժամանակակից
ոգեհարցությանը, մարդկային
խորամանկության կամ
ճարպկության արդյունք չէին,
այլ չար հրեշտակների ուղղակի
գործողությունը, որոնք այդ
կերպ ներմուծեցին
հոգեկործան
մոլորություններից
ամենահաջողվածը: Շատերը

Թակարդն են ընկնելու՝
կարծելով, թե ոգեհարցությունը
սուսկ մարդկային խաբեություն
է: Բայց երբ դեմառդեմ
հանդիպեն երևույթների, որոնք
չեն կարող գերբնական
չհամարել, նրանք կխաբվեն և
ստիպված կընդունեն դրանք
որպես Աստծո մեծ զորություն:

Այս անձինք անտեսում են
Սուրբ Գրքի վկայությունը
սատանայի և նրա
հրեշտակների գործած
հրաշքների վերաբերյալ:
Սատանայի օգ-նությամբ էր, որ
փարավոնի կախարդները

կարողացան կեղծել Աստծո
գործը: Պողոսը վկայում է, որ
Քրիստոսի երկրորդ գալուստից
առաջ լինելու են
սատանայական զորության
նմանատիպ դրսևորումներ:
Տիրոջ գալուստից առաջ կլինեն
դիվական ներգործություններ՝
«ամեն զորու-թյունով ու սուտ
նշաններով, հրաշքներով ու
անհրապուծության ամեն
խա-բեություններով» (Բ
Թեսաղոնիկեցիս 2.9,10): Եվ
Ջովհաննես առաքյալը,
նկարագրելով այն հրաշագործ
զորությունը, որ պետք է
դրսևորվի վերջին օրերում,

ասում է. «Եվ մեծ հրաշքներ է
անում, որ երկնքից կրակ էլ է
վայր բերել տալիս երկրի վրա
մարդկանց առաջ: Եվ
մոլորեցնում է երկրի վրա
բնակվողներին այն
նշաններով, որ տրված էին նրա
ձեռքը» (Չայտնություն
13.13,14): Այստեղ խոսքը
սովորական խաբեության
մասին չէ. մարդիկ մոլորվում
են այն հրաշքներից, որ
սատանայի գործակալներն ի
գորու են անելու, այլ ոչ թե սոսկ
երևութականությունից:

Խավարի իշխանը, ով այսքան
երկար ժամանակ իր հանճարեղ
միտքը գործի է դրել խաբելու
համար, իր փորձությունները
վարպետորեն հարմարեցնում է
բոլոր խավերին ու
պայմաններին: [554] Բարեկիրթ
ու հղկված բնավորության տեր
անձանց նա ոգեհարցությունը
ներկայացնում է իր
ամենանուրբ ու մտավոր
կողմերով, և այդպես շատերին
հաջողությամբ իր թակարդն է
զցում: Իմաստությունը՝ ձեռք
բերված ոգեհարցության
հետևանքով, Յակոբոս
առաքյալի նկարագրությամբ՝

«վերևից իջած չէ, այլ
երկրավոր, շնչավոր և
դիվական» (Ջակոբոս 3.15):
Բայց դա մեծ խաբեքան
թաքցնում է, երբ թաքցնելը
լավագույնս կծսաայի իր
նպատակին: Նա, ով
փորձության անապատում
Քրիստոսի առաջ հայտնվեց
երկնային սերովբեի
պայծառությամբ, մարդկանց
ներկայանում է ամենագրավիչ
տեսքով՝ որպես լույսի
հրեշտակ: Նա դիմում է
բանականությանը՝
ներկայացնելով վեհ թեմաներ,
երևակայությունը գրգռում է

հրապուրիչ տեսարաններով և
իշխում զգացմունքների վրա
սի-րո և գթասրտության պերճ
Նկարագրություններով: Նա
դրդում է երևա-կայությանը
բարձր թռիչքների, և մարդիկ
այնպես են հպարտանում
իրենց իմաստությամբ, որ սրտի
խորքում արհամարհում են
Ջավերժականին: Այն զորեղ
էակը, ով կարողացավ
աշխարհի Փրկչին հանել մի
շատ բարձր սարի գագաթը և
ցույց տալ Նրան երկրի բոլոր
թագավորություններն ու
դրանց փառքը, իր
փորձություններն այնպես

կներկայացնի մարդկանց, որ
կաղավաղի բոլորի
զգացմունքները, ովքեր
պաշտպանված չեն
աստվածային զորությամբ:

Սատանան այժմ մարդկանց
գայթակղեցնում է այնպես,
ինչպես շողոքորթությամբ
խաբեց եվային եդեմում՝
ցանկություն բորբոքելով
արգելված գիտության
նկատմամբ և առաջացնելով
ինքնամեծարման տենչ: Յենց
այս չարիքներն էին նրա
անկման պատճառը, և դրանց
մի-ջոցով էլ նա նպատակ ունի

Կործանել մարդկանց: «Աստծո
պես կլինեք,— հայտարարում է
Նա,— բարին ու չարը
գիտեցող» (Ծննդոց 3.5):
Ոգեհար-ցությունը
սովորեցնում է, «որ մարդն
առաջադեմ արարած է, որ
Նրան վիճակված է ծննդյան
պահից հավիտյան
առաջադիմել դեպի
Աստ-վածությունը»: Եվ
դարձյալ. «Յուրաքանչյուր
միտք դատելու է իրեն, և ոչ թե
արիշին»: «Այդ դատը ճիշտ
կլինի, քանզի դա սեփական
անձի դատ է ...Գահը ձեր
Ներսում է»: Մի ոգեհարց

ուսուցիչ, երբ նրանում
արթնացել է «հոգևոր
գիտակցութիւնը», ասել է. «Իմ
ընկերները բոլորն էլ եղել են
չընկած կիսաստվածներ»: Իսկ
մի ուրիշը հայտարարում է.
«Ամեն մի արդար և կատարյալ
էակ Զրիստոս է»:

Այսպիսով՝ անսահման Աստծո
արդարութեան [555] և
կատարելութեան փոխարեն, ով
միակն է արժանի
երկրպագութեան, Նրա օրենքի
կատարյալ արդարութեան
փոխարեն, որը մարդկային
գիտութեան ճշմարիտ

չափանիշն է, սատանան
ներկայացնում է մարդու
մեղավոր, սխալական
եղթյունը՝ որպես
երկրպագության միակ
առարկա, որպես դատողության
միակ կանոն կամ
բնավորության չափանիշ: Սա
առաջընթաց է ոչ թե դեպի վեր,
այլ դեպի վար:

Կա օրինաչավտություն մարդու
մտավոր և հոգևոր բնության
մեջ. նա-յելով՝ մենք
վերափոխվում ենք: Միտքն
աստիճանաբար հարմարվում է
այն նյութերին, որոնց մասին

Խորհում է: Նա միաձուլվում է
Նրան, ինչը սովոր է սիրել և
պաշտել: Մարդը երբեք
մաքրության, բարության կամ
ճշմարտության իր չափանիշից
վեր չի բարձրանա: Եթե նրա
գերագույն իդեալը է ես-ն է,
ապա նա երբեք չի հասնի
ավելի բարձրին: Ավելին՝ նա
մշտապես ավելի ու ավելի
կցածրանա: Աստծո շնորհն է
միայն ունակ վեհացնելու
մարդուն: Թողնված ինքն իրեն՝
նա անխուսափելիորեն ցած
կգլորվի:

Ցանկասեր, հաճույքներ սիրող
ու զգացմունքային մարդկանց
ոգեհարցությունը ներկայանում
է ոչ այնքան նուրբ դիմակով,
որքան բարեկիրթներին ու
մտավորականներին: Դրա
գռեհիկ ձևերում նրանք գտնում
են այն, ինչ ներդաշնակ է
իրենց հակումներին:
Սատանան ուսումասիրում է
մարդկային բնության
յուրաքանչյուր թուլություն,
նշում է այն մեղքերը, որ
յուրաքանչյուր անձ հակված է
գործելու և ապա հոգ է տանում,
որ չար հակումները
բավարարելու

հնարավորությունների պակաս
չլինի: Նա մարդկանց մղում է
անզսպության այն ամենում,
ինչ ինքնըստինքյան օրինավոր
է՝ դրդելով նրանց
անզսպության միջոցով
թուլացնել իրենց ֆիզիկական,
մտավոր և բարոյական ուժերը:
Նա կործանել և կործանում է
հազարավորներին՝ դրդելով
բավարարել իրենց կրքերը՝
այդպիսով անասնական
դարձնելով մարդու ողջ
էությունը: Եվ իր գործը
ավարտին հասցնելու համար
Նա հոգիների միջոցով
հայտարարում է, թե «ճշմարիտ

գիտութիւնը մարդուն վեր է
դասում բոլոր օրենքներից», թե
«այն ամենը, ինչ կա, ճիշտ է»,
թե «Աստված չի
դատապարտում», և թե «բոլոր
գործվող մեղքերը անմեղ են»:
Երբ մարդիկ այս կերպ դրդվում
են հավատալու, որ
ցանկութիւնն է գերագույն
օրենքը, որ ազատութիւնն
ամենաթողութիւնն է, և որ
մարդը միայն ինքն իրեն է
հաշվետու, կարելի՞ է արդյոք
զարմանալ, որ ամենուրեք
անառակութիւն և [556]
այլասերութիւն է տիրում:
Չազարավորներն ազահորեն

ընդունում են ուսմունքներ,
որոնք ազատութիւն են տալիս
հնազանդվելու իրենց մեղավոր
սրտի թելադրանքներին:
Ինքնատիրապետման սանձը
դրվում է կրքի պարանոցին,
մտավոր և հոգևոր ուժերը
ենթարկեցվում են անասնական
հակումներին, և սատանան
ցնձագին իր ցանցն է գցում
հազարավոր անձանց, ովքեր
իրենց Քրիստոսի հետևորդներ
են կոչում:

Սակայն թող ոչ ոք չխաբվի
ոգեհարցութեան կեղծ
պնդումներից: Աստված

աշխարհին բավարար լույս է
տվել, որպեսզի նկատվի
որոգայթը: Ինչպես արդեն
նշվեց, տեսությունը, որն ընկած
է ոգեհարցության հենց
հիմքում, հակասում է Սուրբ
Գրքի համոզիչ ու հստակ
ուսմունքին: Աստվածաշունչն
ասում է, որ մեռածները որևէ
բան չգիտեն, նրանց մտքերը
չքայքայ են, նրանք բաժին
չունեն այն ամենից, ինչ
կատարվում է արեգակի տակ և
ոչինչ չգիտեն իրենց երկրային
սիրեպիների ուրախու-թյունների
կապ վշտերի մասին:

Ավելին՝ Աստված խստորեն
արգելել է ամեն մի շփում
կարծեցյալ հոգիների հետ:
Յրեաների մեջ էլ այն ժամանակ
կային մարդիկ, ովքեր այսօրվա
ոգեհարցների պես պնդում էին,
թե հաղորդակցվում են
մեռած-ների հետ: Բայց «ծանոթ
ոգիները», ինչպես կոչում են
այդ այցելուներին մյուս
աշխարհից, ըստ
Աստվածաշնչի՝ «դների
հոգիներ են» (Յամեմատի
Թվոց 25.1-3, Սաղմոս 106.28, Ա
Կորնթացիս 10.20,
Յայտնություն 16.14): Նրանց
հետ հաղորդակցությունը

պղծութիւնն էր համարվում
Տիրոջ համար և խստորեն
արգելված էր մահվան
սպառնալիքով (Ղևտացոց
19.31,20.27):

«Կախարդութիւնն» ըստ
անգամ այսօր
արհամարհանքով է
արտասանվում: Պնդումը, թե
մարդիկ կարող են
հաղորդակցվել չար ոգիների
հետ, Խավար Միջնադարից
եկած առասպել է համարվում:
Բայց ոգեհարցութիւնն իր
միլիոնավոր համախոհներով
ներխուժել է գիտական
ասպարեզներ, հեղեղել

Եկեղեցիներն ու
բարեհաճությամբ ընդունվել
օրենսդրական մարմիններում և
Նույնիսկ արքայական
պալատներում: Եվ այս
հրեշավոր խաբեությունը ոչ այլ
ինչ է, եթե ոչ կախարդության
վերածնունդը Նոր քողի տակ,
որն արգելված և
դատապարտված էր
ան-ցյալում:

Եթե ոգեհարցության իրական
բնույթի մասին ուրիշ ոչ մի
ապացույց չփնտրվի, քրիստոնյայի
համար բավական կփնտրվի [557]
այն, որ հոգիները ոչ մի

տարբերութիւնն չեն դնում
արդարութեան և մեղքի,
Քրիստոսի ամենաազնիւ ու
սուրբ առաքյալների և
սատանայի ամենամբարիշտ
ծառաների միջև: Ամենաստոր
մարդկանց ներկայացնելով
երկնքում, և այն էլ շատ
մեծարված, սատանան ասում է
աշխարհին. «Նշանակութիւնն
չունի, թե որքան ամբարիշտ եք
դուք, կարևոր չէ՝ հավատո՞ւմ
եք Աստծուն և Աստվածաշնչին,
թե՞ ոչ: Ապրեք՝ ինչպես հաճելի
է ձեզ. երկինքը ձեր տունն է»:
Ոգեհարցութեան ուսուցիչներն,
ըստ էութեան, հայտարարում

են. «Ամեն չարագործ հաճելի է Տիրոջ աչքի առաջ, և ինքը հավանում է նրանց, կամ թե՛ ո՞ւր է դատաստանի Աստվածը» (Մաղաքիա 2.17): Աստծո խոսքն ասում է. «Վա՛յ նրանց, որ չարին ասում են բարի և բարուն՝ չար, որ խավարը շինում են լույս և լույսը՝ խավար» (Եսայիա 5.20):

Հայտնվելով առաքյալների տեսքով՝ այս մոլորեցնող ոգիներն ասում են բոլորովին հակառակը, ինչ նրանք Սուրբ Հոգու թելադրանքով գրել են երկրի վրա: Նրանք հերքում են

Սուրբ Գրքի աստվածային
ծագումը՝ այդպես քանդելով
քրիստոնյաների հույսի հիմքը և
հանգցնելով լույսը, որ ցույց է
տալիս երկինք տանող ուղին:
Սատանան դրդում է
աշխարհին հավատալու, որ
Աստվածաշունչն ընդամենը
հորինվածք է կամ, լավա-գույն
դեպքում, մի գիրք, որը
համապատասխան կլիներ
մարդկային ցեղի վաղ
տարիների համար, բայց հիմա
այն չպետք է լուրջ ընդունել
կամ էլ պիտի մի կողմ դրվի՝
որպես հնացած: Իսկ Աստծո
խոսքի փոխարեն նա

առաջարկում է մոգական
հրաշքներ: Սա մի միջոց է, որը
լիովին նրա հսկողութեան տակ
է, և որի օգնութեամբ նա կարող
է ստիպել աշխարհին
հավատալ այն ամենին, ինչ որ
կամենա: Այն գիրքը, որ պիտի
դատի իրեն և իր
հետևորդներին, սատանան
պահում է այնտեղ, որտեղ իրեն
պետք է՝ ստվերի մեջ: Աշխարհի
Փրկչին նա ներկայացնում է
որպես սովորական մի մարդ:
Եվ ինչպես Յիսուսի գերեզմանը
հսկող հռոմեական
պահակախումբը տարածեց
այն կեղծ լուրը, որ ներշնչեցին

Նրանց քահանաներն ու
ծերերը՝ հերքելու Նրա
հարուժյունը, այնպես էլ
ոգեհարցության ջատագովները
վարձում են ստեղծել
տպավորություն, թե մեր Փրկչի
կյանքում ոչ մի գերբնական
բան չի եղել: Այսպես ջանալով
Յի սուսին հետին պլան մղել՝
Նրանք ուշադրություն են
հրավիրում իրենց հրաշքների
վրա՝ հայտարարելով, թե
դրանք շատ ավելի գերազանց
են Քրիստոսի գործերից:

Ճիշտ է, որ ոգեհարցությունն
այժմ ձևափոխվում է, և,

քողարկելով իր առավել
մերժելի կողմերը՝
քրիստոնեական [558] տեսք է
ընդունում: Բայց մարդիկ
երկար տարիներ ամբիոններից
և մամուլից ծանոթացել են այդ
ուսմունքին, և դրա իրական
բնույթն արդեն բացահայտված
է: Այդ ուսմունքը հնարավոր չէ
ժխտել կամ թաքցնել:

Նույնիսկ իր ներկա ձևով, որն
ամենևին ավելի հանդուրժելի
չէ, քան նախկինում, այն
իրականում շատ ավելի
վտանգավոր է, քանզի ավելի
նենզ խաբեություն է: Եթե

Նախկինում այն մերժում էր
Քրիստոսին և Աստվածաշունչը,
ապա այժմ ձևացնում է, թե
երկուսն էլ ընդունում է: Բայց
Աստվածաշունչը
մեկնաբանվում է այնպես, որ
հաճելի է չնորոգված սրտին,
մինչդեռ նրա հանդիսավոր և
կենսական ճշմարտություններն
արժեզրկվում են: Սերը
ներկայացվում է որպես Աստծո
գլխավոր հատկանիշ, սակայն
նսեմացվում է մինչև թույլ
զգացմունքայնությունը՝ գրեթե
տարբերություն չդնելով բարու
և չարի միջև: Աստծո
արդարա-դատությունը, մեղքի

հանդեպ Նրա նողկանքը, Նրա
սուրբ օրենքի պա-հանջները՝
այս ամենը պահվում է
տեսադաշտից դուրս:
Ժողովրդին սո-վորեցնում են
Տասնաբանյան մեռած տառ
համարել: Հաճելի, դյուրթիջ
առասպելները գերում են
մարդկանց զգացմունքները՝
դրդելով նրանց մերժել
Աստվածաշունչը՝ իրենց
հավատի հիմքը: Քրիստոսն
առաջվա պես մերժվում է, բայց
սատանան այնպես է
կուրացրել մարդկանց աչ-քերը,
որ խաբեությունն աննկատ է
մնում:

Քչերը միայն ճիշտ
պատկերացում ունեն
ոգեհարցության խաբուսիկ
ուժի և դրա ազդեցության տակ
ընկնելու վտանգի մասին:
Շատերն ուղղակի
հետաքրքրասիրությունից են
սկսում զբաղվել դրանով:
Նրանք իրապես չեն հավատում
դրան և հոգիների
հսկողությանը արվելու մտքից
անգամ կզարհուրեին: Բայց
հանդգնելով մտնել արգելված
տարածքը՝ նրանք ընկնում են
զորեղ կործանիչի
իշխանության տակ՝ հակառակ

իրենց կամքին: Միայն մեկ
անգամ նրան ենթարկեցնելով
իրենց միտքը՝ նրանք դառնում
են նրա գերիները, և արդեն
անհնար է դառնում սեփական
ուժերով ազատվել դյուրթիչ
կախարդանքից: Բացի Աստծո
զորությունից, որը շնորհվում է
ի պատասխան հավատի
ջերմեռանդ աղոթքի, ոչինչ չի
կարող ազատել թակարդն
րնկած այդ հոգիներին:

Բոլոր նրանք, ովքեր
հոժարակամ փայփայում են
բնավորության մեղսավոր
գծերը կամ էլ սիրված մի մեղք,

իրենց վրա են հրավիրում
սատանայի փորձությունները:
[559] Նրանք իրենց բաժանում
են Աստուծոց և Նրա
հրեշտակների մշտադթուն
պահպանությունից, ու երբ
չարագործը ներկայացնում է իր
խաբեությունները, նրանք
անպաշտպան են լինում և
հեշտությամբ դառնում նրա
ավարը: Նրանք, ովքեր այս
կերպ հանձնվում են
սատանայի իշխանությանը,
հազիվ թե գիտակցեն, թե ինչով
կարող է դա վերջանալու:
Դարձնելով իր գերիները՝
փորձիչը նրանց օգտագործում

Է մյուսներին կործանելու
համար:

Եսայիա մարգարեն ասում է.
«Երբ ձեզ ասեն, հարցրեք
մեռելահարցուկներին և
վհուկներին կամ
փսփսացողներին ու
քրթմնջողներին, դուք էլ նրանց
ասացեք. Չէ՞ որ ժողովուրդը
պետք է իր Աստծուն հարցնի,
կենդանիների համար
մեռածների՞ն դիմի: Օրենքին ու
վկայությանը դիմեցեք, եթե
նրանք չխոսեն այս խոսքի
համեմատ, նրանք արշալույս
չունեն» (Եսայիա 8.19,20): Եթե

մարդիկ կամենային ընդունել
Սուրբ Գրքում հստակորեն
շարադրված ճշմարտությունը
մարդու բնության և մեռածների
վիճակի վերաբերյալ, ապա
ոգեհարցության պնդումների և
դրսևորումների մեջ նրանք
կտեսնեին սատանայի
ներգործությունը՝ զորությամբ
և նշաններով ու կեղծ
հրաշքներով: Բայց մարմնավոր
սրտին այդքան հաճելի
ազատությունը թողնելու և
սիրելի մեղքից հրաժարվելու
փոխարեն՝ շատերն իրենց
աչքերը փակում են լույսի
հանդեպ և շարժվում առաջ՝

անտեսելով
Նախագգուշացումների մինչ
սատանան իր ցանցն է հյուսում
Նրանց շուրջ և որսում նրանց:
«Որովհետև ճշմարտության
սերը չընդունեցին, որ ապրեն,
դրա համար Աստված
մոլորության ներգործություն
կուղարկի նրանց, որ
հավատան ստության» (Բ
Թեսաղոնիկեցիս 2.10,11):

Նրանք, ովքեր ընդդիմանում են
ոգեհարցության ուսմունքին,
հարձակում են գործում ոչ
միայն մարդկանց, այլ նաև
սատանայի ու նրա

հրեշտակների վրա: Նրանք
պայքարի մեջ են մտնում
«իշխանություն-
ների, պետությունների և չար
ոգիների դեմ. որ
երկնավորներում են»:
Սատանան մի թիզ անգամ չի
զիջի իր տարածքից, եթե հետ
չմղվի երկնային
պատգամաբերների
զորությամբ: Աստծո
ժողովուրդը, մեր Փրկչի նման,
պետք է կարողանա դիմավորել
Նրան հետեյալ խոսքերով.
«Գրված է»: Սատանան հիմա
էլ, ինչպես Բրիստոսի օրերում,
կարող է վկայակոչել Սուրբ

Գիրքը՝ աղավաղելով այն իր
խաբեությունները
հաս-տատելու համար: Ովքեր
ուզում են հաստատ մնալ այս
վտանգավոր ժա-մանակներում,
պետք է անձամբ իրենց համար
հասկանան Սուրբ Գրքի
վկայությունը: [560]

Շատերին դևերի ոգիները
կհայտնվեն սիրելի
ազգականների կամ ընկերների
տեսքով և կներկայացնեն
ամենավտանգավոր
հերձվածքներ: Այս այցելուները
կդիմեն մեր հոգու ամենանուրբ
զգացմունքներին և հրաշքներ

Կգործեն՝ իրենց կեղծիքները
հաստատելու համար: Մենք
պետք է պատրաստ փնենք
դիմակայելու նրանց
Աստվածաշնչի այն
ճշմարտությամբ, որ մեռածները
ոչինչ չգիտեն, և նրանք, ովքեր
այսպես հայտնվում են, դևերի
ոգիներն են:

Չենց մեր առջև է փորձության
ժամը, «որ գալու է այս
աշխարհի վրա՝ փորձելու երկրի
երեսի վրա բնակվողներին»
(Չայտնություն 3.10): Բոլոր
նրանք, ում հավատն ամուր
հաստատված չէ Աստծո խոսքի

վրա, կխաբւլեն և կհաղթւեն:
Սատանան գործում է
«անիրավության ամեն
խաբեությամբ», որպեսզի
իշխանությունն ձեռք բերի
մարդկանց որդիների վրա, և
Նրա խաբեությունները գնալով
աճելու են: Բայց Նա կարող է իր
Նպատակին հասնել միայն այն
դեպքում, երբ մարդիկ
հոժարակամ արվում են Նրա
փորձություններին: Նրանք,
ովքեր անկեղծորեն ձգտում են
ճանաչել ճշմարտությունը և
ջանում են հնազանդությամբ
սրբել իրենց հոգիները՝ անելով
ամեն հնարավորը պայքարին

պատրաստվելու համար,
հուսափ պաշտպանություն
կգտնեն ճշմարտության Աստծո
մեջ: «Որովհետև իմ
համբերության խոսքը
պահեցիր, ես էլ քեզ կպահեմ»,
խոստանում է Փրկիչը
(Չայտնություն 3.10): Նա ավելի
շուտ երկնային բոլոր
հրեշտակներին կուղարկի
պաշտպանելու իր ժողովրդին,
քան թույլ կտա, որ գեթ մի
հոգի, ով ապավինում է իրեն,
հաղթվի սատանայից:

Եսայիա մարգարեն
նկարագրում է այն սոսկալի

խաբեությունը, որ կգա
ամբարիշտների վրա՝ դրդելով
նրանց մտածել, թե ապահով են
Աստծո դատաստաններից.

«Մենք ուխտ ենք դրել մահի
հետ և դժոխքի հետ՝ դաշինք
կապել, որ հորդահոս հեղեղը,
եթե անցնելու լինի, մեզ չի
հասնի, որովհետև մենք
ստությունը մեր պատսպարանը
շինեցինք և խաբեության մեջ
ենք ծածկված» (Եսայիա 28.15):
Այստեղ պատկերված
մարդկանց շարքում են նաև
նրանք, ովքեր իրենց համառ
անզնությունամբ մխիթարում են
իրենց այն համոզմունքով, թե

մեղավորի համար պատիժ չի
լինելու, թե բոլոր մարդիկ,
որքան էլ ապականված լինեն,
կառնվեն երկինք և Աստծո
հրեշտակների պես կդառնան:
Բայց մահվան հետ [561] ուխտ
և դժոխքի հետ դաշինք են
կապում հատկապես նրանք,
ովքեր ուրանում են այն
ճշմարտությունները, որ
երկինքը տվել է արդարներին՝
որպես պաշտպանություն
նեղության ժամանակ՝ դրանց
փոխարեն ընդունելով
սատանայի առաջարկած
ստերը՝ ոգեհարցության

մուրրեցուցիչ
հավակնությունները:

Այս սերնդի կուրությունն
իսկապես զարմանալի է:
Չազարավոր մարդիկ մերժում
են Աստծո խոսքը՝ համարելով
անարժանահավատ, բայց
մեծագույն վստահությամբ
ընդունում են սատանայի
խաբեու-թյունները:
Կասկածամիտներն ու
ծաղրողները դատապարտում
են նրանց
Նախապաշարումները, ովքեր
պայքարում են մարգարեների և
առաքյալների հավատի համար

և ուզում են աչքի ընկնել՝
ծաղրի ենթարկելով Սուրբ
Գրքի հանդիսավոր
հայտարարությունները
Քրիստոսի, փրկության ծրագրի
և այն հատուցման մասին, որ
սպասվում է ճշմարտությունը
մերժողներին: Նրանք
ձևացնում են, թե մեծապես
խղճում են այդ նեղմիտ, թույլ
ու սնոտիապաշտ մարդկանց,
ովքեր հավատում և
հնազանդվում են Աստծո
օրենքի պահանջներին: Նրանք
այնպիսի համոզվածություն են
ցուցաբերում, կարծես իսկապես
մահվան հետ ուխտ են կնքել և

դժոխքի հետ՝ դաշինք կապեր
ասես անանցանելի,
անթափանցելի արգելք են
կանգնեցրել իրենց և Աստծո
վրիժառույթյան միջև: Նրանց
ոչինչ չի վախեցնում: Նրանք
այնպես են անձնատուր եղել
փորձչին, այնքան սերտորեն
կապվել նրա հետ ու
ամբողջովին համակվել նրա
ոգով, որ այլևս ո՛չ ուժ ունեն,
ո՛չ էլ ցանկություն՝ ազատվելու
նրա թակարդից:

Սատանան երկար
պատրաստվել է աշխարհը
խաբելու իր վերջին փորձին:

Նրա գործի հիմքը ղրվեց
եղեմում՝ եվային տված
հավաստիացմամբ. «Բնավ չեք
մեռնի»: «Այն օրը, որ նրանից
ուտեք, ձեր աչքերը կբացվեն, և
Աստծո պես կփնեք՝ բարին և
չարը գիտեցող» (Ծննդոց 3.4,5):
Աստիճանաբար նա ճանապարհ
հարթեց իր խաբեության
գլուխգործոցի՝ ոգեհարցության
համար: Նա դեռ չի հասել իր
ծրագրերի լիակատար
իրականացմանը, բայց կհասնի
Ժամանակի վերջին
հատվածում: Մարգարեն ասում
է. «Եվ տեսա երեք պիղծ հոգի ..
.գորտերի նման... Դրանք դևերի

ոգիներ են, որ նշաններ են
անում, նրանք գնում են [562]
երկրի և բովանդակ աշխարհի
թագավորների մոտ, որ նրանց
ժողովեն Ամենակա-
րող Աստծո
այն մեծ օրվա պատերազմի
համար» (Ջայտնություն
16.13,14): Բացի նրանցից,
ովքեր կպահվեն Աստծո
զորությամբ՝ հավատալով Նրա
խոսքին, ողջ աշխարհը
կներքաշվի այդ մոլորության
մեջ: Մարդիկ արագորեն
ընկնում են բախտորոշ
ապահովության նիրհի մեջ,
որպեսզի արթնանան միայն

Աստճո բարկության
պատուհասներից:

Տերն ասում է. «Եվ ես
իրավունքը՝ չափին հավասար,
և արդարու-թյունը՝ կշեռքին
հավասար պիտի անեմ, և
կարկուտը պիտի ստուգյան
պատսպարանը խորտակի, և
ջրերը պիտի ողողեն
թաքստոցը: Եվ ձեր ուխտը
մահվան հետ պիտի ջնջվի, և
դժոխքի հետ արած դաշինքը
պիտի չհաստատվի, որ երբ
հորդահոս հեղեղն անցնի, դուք
նրանից ոտնահար պիտի լինեք
» (Եսայիա 28.17,18): [563]

ԳԼՈՒԽ 35—ԽՆԴԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՎՏԱՆԳԻ ՏԱԿ

Բողոքականներն այսօր շատ
ավելի բարեհաճ են Յոնմի
եկեղեցու հանդեպ, քան
տարիներ առաջ: Այն
երկրներում, որտեղ
կաթոլիկությունը գերիշխող է,
և պապականները
հաշտվողական
քաղաքականություն են
վարում ազդեցության հասնելու
համար, աճող
անտարբերություն է տիրում
այն ուսմունքի նկատմամբ, որը

բաժանում է բարենորոգված
եկեղեցիները պապական
նվիրապետութունից:
Տարածվում է այն կարծիքը, թե
ի վերջո մեր
տարածայնությունները
գլխավոր հարցերի շուրջ
այնքան էլ մեծ չեն, ինչպես
ենթադրվել է, և որ մեր կողմից
թեթևակի զիջումները կօգնեն
վախճանման հասնելու Յոհանի
հետ: Կար ժամանակ, երբ
բողոքականները բարձր էին
գնահատում խղճի
ազատությունը՝ գնված այդքան
թանկ գնով: Նրանք իրենց
երեխաներին սովորեցնում էին

գարշել պապությունից՝
համոզված լինելով, որ Յոնմի
հետ հաշտության ձգտումն
անհավատարմություն է Աստծո
հանդեպ: Բայց որքա՛ն տարրեր
կարծիքներ են արտահայտվում
այսօր:

Պապության պաշտպանները
հայտարարում են, թե եկեղեցին
զրպարտվել է, և բողոքական
աշխարհը հակված է
համաձայնելու դրան: Շատերը
պնդում են, թե անարդարացի է
այսօրվա եկեղեցու մասին
դա-տել այն պիղծ ու անհեթեթ
բարքերով, որոնցով

Նշանավորվել է նրա
տիրապետությունը
տգիտության ու խավարի
դարերի ընթացքում: Նրանք
արդարացնում են եկեղեցու
սուկալի դաժանությունը՝
որպես ժամանակ-ների
բարբարոսության հետևանք և
հավաստիացնում, որ արդի
քաղաքակրթության
ազդեցությունը փոխել է նրա
պատկերը: [564]

Մոռացե՞լ են արդյոք այդ
մարդիկ, որ այս մեծամիտ
իշխանությունն ութ դար
շարունակ հավակնել է

անսխալականության: Նա ոչ միայն չի հրաժարվել այդ հավանությունից, այլև տասնիններորդ դարում հաս-տատել է այն էլ ավելի մեծ համոզվածությամբ, քան առաջ: Եթե Յոնան պնդում է, թե «Եկեղեցին երբեք չի սխալվել և, ըստ Սուրբ Գրքի, երբեք էլ չի սխալվելու» (Ջոն Լ. վոն Մոշեյմ, Եկեղեցական պատմության հաս-տատություններ, գիրք 3, II դար մաս 2, գլուխ 2, բաժին 9, խոսք 17), ապա ինչպե՞ս կարող է նա հրաժարվել այն սկզբունքներից, որոնցով

առաջնորդվել է անցյալ
դարերում:

Պապական եկեղեցին երբեք չի
հրաժարվի
անսխալականության իր
հավանությունից: Այն ամենն,
ինչ նա արել է՝ հալածելով
նրանց, ովքեր չեն ընդունել իր
դոգմաները, նա ճիշտ է
համարում, և եթե
հնա-րավորության ընձեռվեր,
մի՞թե նա նույնը չէր կրկնի:
Թող միայն աշ-խարհիկ
իշխանությունները հանեն
սահմանափակումները, և
Չոոմը վե-րագտնի իր նախկին

հզորությունը, նորից
արագորեն կվերածնվի նրա
բռնատիրությունն, ու կսկսվեն
հալածանքներ:

Ահա թե ինչ է ասել մի հայտնի
գրող խղճի ազատության
վերաբերյալ պապական
իշխանության դիրքորոշման և
այն վտանգների մասին, որոնք
հատկապես սպառնում են
Միացյալ Նահանգներին նրա
քա-ղաքականության
հաջողության դեպքում.

«Շատերը հակված են
Միացյալ Նահանգներում Յռոմի

կաթոլիկ եկեղեցու նկատմամբ
ցանկացած վախ վերագրել
սնահավատությանը կամ
մանկամտությանը: Այդպիսիք
կաթոլիկության եռության ու
վերաբերմունքի մեջ ո՛չ
թշնամություն են տեսնում
ազատության մեր
սկզբունքների հանդեպ, ո՛չ էլ
որևէ վտանգ այդ եկեղեցու աճի
մեջ : Նախ եկեք փորձենք
համեմատել մեր պետության մի
քանի հիմնարար սկզբունքներ
կաթոլիկ եկեղեցու
սկզբունքների հետ:

Միացյալ Նահանգների
սահմանադրությունը
երաշխավորում է խղճի
ազատություն: Ավելի թանկ և
հիմնարար ոչինչ չկա: Պիոս IX
պապը 1854 թ. օգոստոսի 15-ի
իր եկեղեցական ուղերձում
ասել է. «խղճի ազա-տությունը
պաշտպանող անհեթեթ
զառանցանքն ու մոլորեցուցիչ
ուս-մունքը ամենաաղետալի
սխալն է. դա չարիք է, որից
ամենաշատը պետք է
սարսափել պետության մեջ»:
Նայն պապը 1864 թ.
դեկտեմբերի 8-ի իր
եկեղեցական ուղերձում նզովել

Է բոլորին, «ովքեր հաստատում են խղճի ու երկրպագության [565] ազատությունը», ինչպես նաև «նրանց, ովքեր կարծում են, թե եկեղեցին չի կարող ուժ գործադրել»:

Չռոմի հաշտարար տոնը Միացյալ Նահանգներում չի վկայում ներքին վերափոխման մասին: Նա հանդուրժողական է այնտեղ, որտեղ անօգնական է: Եպիսկոպոս Օ`Կոննորն ասում է. «Կրոնական ազատությունը հանդուրժելի է այնքան ժամանակ, քանի դեռ հակառակ սկզբունքը հնարավոր չէ

իրագործել՝ առանց վտանգելու
կաթոլիկ աշխարհը»: Սենթ
Լուիսի արքեպիսկոպոսը մի
առիթով ասել է.

«Չերձվա-ծողությունն ու
անհավատությունը հանցանք
են, և քրիստոնեական այն
երկրներում, ինչպես օրինակ՝
Իտալիայում և Իսպանիայում,
որտեղ ամբողջ ժողովուրդը
կաթոլիկ է, և կաթոլիկ կրոնը
երկրի օրենսդրության էական
մասն է կազմում, դրանք մյուս
հանցանքների պես պատժվում
են»:

«Կաթուղիկ եկեղեցու
յուրաքանչյուր կարդինալ,
արքեպիսկոպոս և եպիսկոպոս
հավատարմության երդում է
տալիս պապին, որում ասվում
են հետևյալ խոսքերը. «Ես
պարտավորվում եմ իմ ողջ
ուժերով հալածել և կործանել
եմ հերետիկոսներին,
անջատողականներին ու մեր
տիրոջ՝ պապի կամ նրա
հետնորդների դեմ
ապստամբողներին» (Ջոսայա
Սթրոնգ, Մեր երկիրը, գլ. 5,
պարբ. 2-4):

Ճիշտ է, որ Յոնի կաթուղիկ
եկեղեցում կան իսկական
քրիստոնյաներ: Յագարավոր
մարդիկ այդ եկեղեցում
անկեղծորեն ծառայում են
Աստծուն իրենց ունեցած լույսի
համաձայն: Նրանց թույլ չի
տրվում ուսումնասիրել Աստծո
խոսքը, դրա համար էլ նրանք
տեղյակ չեն ճշմարտությանը:
Նրանք երբեք չեն տեսել
տարբերությունը կենդանի,
սրտաբուխ ծառայության և
սոսկ ձևերի ու
ծիսակատարությունների միջև:
Աստված կարեկից գորովանքով
է նայում այս հոգիներին, որոնք

դաստիարակվել են խաբուսիկ
և չհագեցնող հավատի մեջ: Նա
այնպես կանի, որ լույսի
ճառագայթները թափանցեն
Նրանց պարուրող թանձր
խավարի միջով: Նա
կբացահայտի Նրանց
ճշմարտությունը, ինչպես այն
Յիսուսում է, և շատերը դեռ
կմիանան Նրա ժողովրդին:

Բայց կաթուղիկությունը՝ որպես
համակարգ, այսօր ավելի
ներդաշնակ չէ Քրիստոսի
ավետարանին, քան իր
պատմական անցյալում:
Բո-դոքական եկեղեցիները մեծ

Խավարի մեջ են, այլապես
կնկատեին ժա-մանակի
նշանները: Յոռմի եկեղեցին
հեռահար ծրագրեր և
գործելաոճ ունի: Նա դիմում է
ամեն հնարքի՝ տարածելով իր
ազդեցությունն ու
ամ-րացնելով իր
իշխանությունը, որպեսզի
պատրաստվի կատաղի ու
վճռա-կան [566] պայքարին՝
կրկին հասնելու
համաշխարհային
տիրապետու-թյան, վերսկսելու
հալածանքները և խորտակելու
Բողոքականության բոլոր
նվաճումները:

Կաթոլիկութիւնն ամենուրեք
ամրացնում է իր դիրքերը:
Տեսեք նրա եկեղեցիների և
տաճարների աճող թիվը
բողոքական երկրներում:
Տեսեք, թե ինչ
ժողովրդականութիւն են
վայելում նրա քուէջներն ու
ճեմարանները Ամերիկայում՝
գամվելով հիմնականում
բողոքականների
հովանավորութեան ներքո:
Տեսեք, թե ինչպես է
զարգանում
ծիսապաշտութիւնն
Անգլիայում, և որքան է
հաճախացել անցումը

կաթոլիկների շարքերը: Այս
ամենը պետք է մտահոգի
բոլորին, ում համար թանկ են
ավետարանի սուրբ
սկզբունքները:

Բողոքականները մերձենում են
պապությանը և խոնարհվում
Նրա առջև: Նրանք այնպիսի
գիջումների ու
համաձայնության են գնում, որ
պապականներն իրենք էլ
զարմանում են և չեն
կարողանում հասկանալ:
Մարդիկ չեն ուզում տեսնել
կաթոլիկության իսկական
եղությունն ու այն վտանգները,

որ սպասվում են նրա
գերիշխանությունից:
Ժողովուրդը պետք է արթնանա՝
դիմակայելու քաղաքացիական
և կրոնական ազա-տության
այս ամենավտանգավոր
թշնամու առաջխաղացմանը:

Շատ բողոքականներ
ենթադրում են, թե կաթոլիկ
կրոնն անհրապույր է, իսկ նրա
պաշտամունքը՝ ձանձրալի,
ծեսերի մի անիմաստ շարան:
Այստեղ նրանք սխալվում են:
Թեև կաթոլիկությունը հիմնված
է խաբեության վրա, այն
կոպիտ և անճոռնի չի կարելի

համարել: Յոռմի եկեղեցու
ծառայութիւնը չափազանց
տպավորիչ արարողութիւն է:
Նրա շքեղ ու ցուցադրական
արարողութիւնները գերում են
մարդկանց զգացմունքները և
լռեցնում բանականութեան ու
խղճի ձայնը: Աչքը հմայ-վում է:
Վեհաշուք եկեղեցիները,
հանդիսավոր թափօրները,
ոսկե զոհա-սեղանները,
մարգարտապատ
դամբարանները, ընտիր
նկարներն ու մարմարե
քանդակները արթնացնում են
սերը դեպի գեղեցիկը: Ականջը
նույնպէս շոյվում է:

Երաժշտութիւնն
անգերազանցելի է: Երգեհոնի
հո-գեպարար, հարուստ
հնչյունները, միախառնվելով
երգողների ձայներին ու
տարածվելով տաճարների վսեմ
կամարների և սյուների տակ,
չեն կարող երկյուղ ու
ակնածանք չներշնչել
ներկաներին:

Այս արտաքին փայլը,
շքեղութիւնն ու ծեսերը, որ լոկ
ծաղր են մեղքով հիվանդ հոգու
տենչանքին, վկայում են
ներքին քայքայվածութեան
մասին: Քրիստոսի կրոնը

Կարիք չունի նման
հրապուրանքի՝ ուշադրություն
գրավելու համար: Խաչից
շողացող լույսի ներքո ճշմարիտ
քրիստոնեությունն այնքան
մաքուր և սքանչելի է թվում, որ
[567] արտաքին ոչ մի
զարդարանք չի կարող
մեծացնել նրա իսկական
արժեքը: Սրբության
գեղեցկությունը, հեզ և
հանդարտ հոգին է, որ
արժեքավոր են Աստծո հա-մար:

Փայլուն ոճը միշտ չէ, որ
վկայում է սուրբ ու վեհ մտքի
մասին: Երկ-րային ու

զգացմունքային մարդիկ
հաճախ ունենում են արվեստի
վեհ ընկալումներ, նուրբ ու
հղկված ճաշակ: Եվ դրանք
սատանան հաճախ
օգտագործում է՝ մարդկանց
դրդելու մոռանալ հոգու
կարիքները, անտե-սել ապագա
անմահ կյանքը, երես թեքել
իրենց անսահման Օգնականից
և ապրել միայն այս աշխարհի
համար:

Արտաքին կրոնը գրավիչ է
միայն չնորոգված սրտի
համար: Կաթոլիկների շքեղ ու
ձևական պաշտամունքը

Խաբբուսիկ, կախարդիչ ուժ
ուկնի, որից շատերը մոլորվում
են՝ Յոնմի եկեղեցին դիտելով
որպես երկնքի դուռ: Բացի
Նրանցից, ովքեր
հաստատապես կանգնած են
ճշմարտության հիմքի վրա, և
ուկ սրտերը նորոգված են
Աստծո Յոգով, ոչ ոք չի կարող
դիմակայել այդ ազդեցությանը
Յազարավոր մարդիկ, ովքեր
վարձով չեն ճանաչում
Քրիստոսին, կդրվեն
ընդունելու
աստվածապաշտության ձևերը՝
ատանց դրա զորության:
Այդպիսի կրոնը հենց այն է, ինչ

փափա-գում են
բազմությունները:

Մեղքեր թողնելու իրավունքի՝
կաթոլիկ եկեղեցու
հավակնությունը նրանց
դրդում է ազատորեն մեղք
գործելու, և խոստովանության
ծեսը, առանց որի ներում չի
շնորհվում, նույնպես
խրախուսում է մեղքը: Նա, ով
ծնկի է իջնում ընկած մարդու
առջև՝ խոստովանելով նրան իր
գաղտնի մտքերն ու սրտի
խորհուրդները, ստորացնում է
իրեն որպես մարդ՝ քայքայելով
իր հոգու վեհ ուժերը:

Չայտնելով իր մեղքերը
քահանային՝ սխալական,
մեղավոր մահկանացուին, ով
շատ հաճախ ապականված է
գինով ու անառակությամբ,
բնավորության նրա չափանիշը
ցածրանում է, և արդյունքում
նա պղծվում է: Աստված նրա
աչքին նսեմանում է ընկած
մարդու աստիճանի, քանզի
քահանան հանդես է գալիս
որպես Աստծո ներկայացուցիչ:
Մեկ մարդու նման
ստորացուցիչ
խոստովանությունը մյուսի
առջև այն գաղտնի աղբյուրն է,
որից բխել է աշխարհն

ապականող չարիքի զգալի
մասը՝ մղելով նրան իր
վերջնական կործանմանը:
Սակայն նրա համար, ով սիրում
է հագուելով տալ իր
ցանկություններին, [568] ավելի
հաճելի է խոստովանել իր նման
մահկանացուին, քան սիրտը
բացել Աստծո առջև:
Մարդկային բնությանն ավելի
ցանկապի է ինքնաճնշումը, քան
հրաժարումը մեղքից, ավելի
հեշտ է մեռցնել մարմինը
քուրճով, փշերով ու մաշկը
հարող շղթաներով, քան խաչել
մարմնավոր կրքերը: Ծանր է
այն լուծոյ որ մարմնավոր

մարդը ավելի շուտ պատրաստ
է կրել, քան խոնարհվել
Քրիստոսի լծի տակ:

Ապշեցուցիչ նմանություն կա
Յոնմի եկեղեցու և Քրիստոսի
առաջին գալստյան
ժամանակվա հրեական
եկեղեցու միջև: Մինչ հրեաները
գաղտնի ոտնահարում էին
Աստծո օրենքի յուրաքանչյուր
սկզբունք, ար-տաքուստ նրանք
խստորեն պահում էին դրա
պատվիրանները՝
ծանրա-բեռնելով այն խիստ
սահմանափակումներով ու
ավանդույթներով, որոնք

հնազանդությունը դարձրել էին
տանջալից ու ծանր: Ինչպես
հրեաներն էին ասում, թե
հարգում են օրենքը, այնպես էլ
կաթոլիկներն են պնդում, թե
պաշտում են խաչը: Նրանք
մեծարում են Քրիստոսի
չարչարանքների
խորհրդանիշը, մինչդեռ իրենց
կյանքում ուրանում են Նրան,
ու՛մ այդ խորհրդանիշը
ներկայացնում է:

Պապականները խաչեր են
դնում իրենց եկեղեցիների,
գոհասեղան-ների և
հանդերձների փլա: Ամենուրեք

Կարելի է տեսնել խաչի նշանը:
Ամենուրեք այն առերևույթ
բարձրացվում ու մեծարվում է:
Բայց Քրիստոսի ուսմունքը
թաղված է մտում անիմաստ
ավանդույթների, կեղծ
մեկնաբանությունների և խիստ
սահմանափակումների կույտի
տակ: Մոլեռանդ հրեաներին
ասված Քրիստոսի խոսքերն էլ
ավելի շատ վերաբերում են
Յոնմի կաթոլիկ եկեղեցու
առաջնորդներին. «Նրանք
ծանր ու դժվարակիր բեռներ են
կապում և դնում մարդկանց
ուսերին, բայց իրենց մատով
անգամ չեն կամենում շարժել

դրանք» (Մատթեոս 23.4):
Անկեղծ հոգիները մշտական
սարսափի մեջ են՝ երկյուղելով
վիրավորված Աստծո
բարկությունից, մինչդեռ
եկեղեցու պաշտոնյաներից
շատերն ապրում են ճոխության
ու զգայական հաճույքների մեջ:

Երկրպագությունը
պատկերներին ու
մասունքներին, սուրբերին
ուղղված աղոթքներն ու պապի
մեծարումը սատանայի
հնարքներն են՝ շեղելու
ժողովրդի միտքն Աստծուց և
Նրա Որդուց: Նրանց

ՈԼՉԱՊԻՐՈՒԹՅՈՒՆՆԸ շեղելով
Նրանից, ում միջոցով միայն
Նրանք կարող են փրկություն
գտնել, նա տանում է նրանց
կորստյան: Նա կուղղի նրանց
ՈԼՉԱՊԻՐՈՒԹՅՈՒՆՆԸ ցանկացած
առարկայի, որը կարող է
վտխարհնել Նրան, ով ասել է.
«Ինձ մոտ եկեք, ամեն
վաստակածներ և [569]
բեռնավորվածներ, և ես
հանգիստ կտամ ձեզ»
(Մատթեոս 11.28):

Սատանան մշտապես ջանում է
կեղծել Աստծո բնավորությանը,
մեղքի երկրյունը և մեծ

պայքարի իրական
պատճառները: Նրա
ստա-բանությանը մեղմացնում
է աստվածային օրենքի
պահանջները և մարդկանց
իրավունք տալիս մեղանջելու:
Մինևույն ժամանակ նա դրողում
է սխալ պատկերացումներ
փայփայել Աստծո մասին,
այնպես որ Նրան ավելի շուտ
նայում են վախով ու
ատելությամբ, քան սիրով: Իր
բնավորությանը բնորոշ
դաժանությունը վերագրվում է
Արարչին, այն մարմնավորվում
է կրոնական համակարգերում
և արտահայտվում

երկրպագության ձևերում:
Այսպես մարդկանց միտքը
կուրանում է, և սա-տանան
նրանց իր գործակալներն է
դարձնում՝ Աստծո
դեմպատերազմելու համար:
Աստվածային բնավորության
մասին աղավաղված
պատկերացումները հեթանոս
ազգերին դրդեցին հավատալ,
որ Աստծո բարեհաճությունը
շահելու համար անհրաժեշտ են
մարդկային
զոհաբերություններ, և
կռապաշտության տարատեսակ
ձևերի միջոցով զարհուրեփ

ԼՎԱԺՄԱՆՈՒԹՅԱ ՆՆԵՐ ԷԻՆ
ԱՐՎՈՒՄ:

Հռոմի կաթոսիկ եկեղեցին,
միավորելով հեթանոսությանն
ու քրիստոնեությունը, և
հեթանոսության նման
խեղաթյուրելով Աստծո բնա-
վորությունը՝ դիմել է ոչ պակաս
դաժան ու գարշելի
արարքների: Հռոմի
գերիշխանության օրոք իրենց
ուսմունքը պարտագրելու
համար օգտագործում էին
տանջանքի գործիքներ:
Խարույկ էր սպասվում
բոլո-րին, ովքեր չէին

հնազանդվի նրա
պահանջներին: Միայն
դատաստանի օրը հայտնի
կդառնա, թե ինչ կոտորածներ է
Նա արել: Եկեղեցու
պաշտոնյաներն իրենց տիրոջ՝
սատանայի թելադրանքով
այնպիսի միջոցներ էին
հնարում, որպեսզի հնարավոր
ամենադաժան տանջանքների
են-թարկեն իրենց զոհին, բայց
Նրան կյանքից չզրկեն: Շատ
դեպքերում դժոխսային
տանջանքները կրկնվում էին
այնքան, մինչև որ մարդն այլևս
անկարող էր լինում դիմանալ,
նրա բնությունը հրաժարվում

Էր պայքարից, և տառապյալը
ողջունում էր մահը՝ որպես
քաղցր ազատութիւն:

Այսպիսին էր Յոնմի
հակառակորդների
ճակատագիրը: Իսկ իր
համախոհներին նա կարգի էր
հրավիրում խարազանով, սովի
մատնելով կամ մարմնի ամեն
տեսակ սրտաճմլիկ
խոշտանգումներով: Երկնքի
բարեհաճութիւնը շահելու
համար ապաշխարող
մեղավորները, ոտնահարելով
բնության օրենքները,
խախտում էին Աստծո օրենքը:

Նրանց սովորեցնում էին խզել
այն բոլոր կապերը, որ Նա
ստեղծել է մարդու երկրային
պանդխտությունն օրհնելու և
ուրախ դարձնելու համար:
Եկեղեցական բազմերում
թաղված են միլիոնավոր [570]
զոհեր, ովքեր իրենց ողջ կյանքն
անց են կացրել զուր ջանքերի
մեջ, որպեսզի ճնշեն իրենց
բնական զգացմունքները,
խեղդեն մերձավորների
հանդեպ համակրանքի
յուրաքանչյուր միտք և
զգացում, միայն թե չհարուցեն
Աստծո բարկությունը:

Չասկանալու համար
սատանայի անողորմ
դաժանությունը, որ
հարյուրամյակներ շարունակ
դրսևորվել է ոչ թե նրանց
հանդեպ, ովքեր երբեք չեն լսել
Աստծո մասին, այլ
քրիստոնեական աշխարհի
հենց սրտում և նրա ամբողջ
տարածքով մեկ, բավական է
միայն մի հայացք գցել
կաթոլիկության պատմության
վրա: Մոլորեցուցիչ այս ահռելի
համակարգի միջոցով չարի
իշխանը հասնում է իր
նպատակին՝ անպատվելով
Աստծուն և դժբախտացնելով

մարդկանց: Ու տեսնելով, թե
Նրան ինչպես է հաջողվում
ծպտվել և իր գործը կատարել
եկեղեցու առաջնորդների
միջոցով, ավելի լավ
կհասկանանք, թե ինչու է Նա
այդքան ատում
Աստվածաշունչը: Եթե այդ
Գիրքը կարդացվի,
կբացահայտվի Աստծո
տրտմությունն ու սերը, պարզ
կդառնա, որ Նա այդ ծանր
բեռներից և ոչ մեկը չի դնում
մարդկանց վրա: Նրա ամբողջ
ուզածը կոտրված ու փշրված
սիրտն է, խոնարհ ու հնազանդ
հոգին:

Քրիստոսն իր կյանքով ոչ մի
օրինակ չի թողել, որ երկնքին
հաճո լինելու համար
տղամարդիկ ու կանայք
փակվեն վանքերում: Նա երբեք
չի սովորեցրել, որ սերն ու
կարեկցանքը պետք է ճնշվեն:
Փրկչի սիրտը միշտ փ էր սիրով:
Որքան մարդը ավելի է
մոտենում բարոյական
կատարելությանը, այնքան
ավելի նրբազգաց է դառնում,
մեղքի ընկալումն ավելի է
սրվում, և ավելի խորանում
նրա կարեկցանքը
տառապյալների հանդեպ:

Պապը պնդում է, թե ինքը
Քրիստոսի փոխանորդն է, բայց
կարո՞ղ է արդյոք նրա
բնավորությունը համեմատվել
մեր Փրկչի բնավորության հետ:
Երբևէ պատահե՞լ է, որ
Քրիստոսը մարդկանց բանտ
նետեր կամ տանջանքի
ենթարկեր նրա համար, որ
հրեն չեն պաշտել որպես .
երկնքի Թագավորի: Ո՞վ է լսել
Նրա ձայնը, որ մահվան
դատապարտեր նրանց, ովքեր
չէին ընդունում հրեն: Երբ Նա
արհամարիվեց Սամարիայի
գյուղերից մեկի բնակիչների
կողմից, Հովհաննես առաքյալը

զայրացած հարցրեց. «Տեր,
կամենո՞ւմ ես ասեմք՝ կրակ
իջնի երկնքից և նրանց
սատկեցնի, ինչպես եղիան էլ
արեց»: Հիսուսը
խղճահարուժյամբ նայեց իր
աշակերտին և հանդիմանեց
նրա կոպտությունն՝ ասելով.
«Մարդու Որդին չեկապ
մարդկանց հոգիները
կորցնելու, այլ ապրեցնելու»
(Ղուկաս 9.54-56): Որքա՞ն է
տարբերվում [571] քրիստոսն
իր՝ այսպես կոչված
«փոխանորդից »:

Ներկայումս Յոնի եկեղեցին
ազնիվ է ձևանում աշխարհի
առաջ՝ փորձելով
ներողութուններով ծածկել
անցյալի իր դաժան ու
զարհուրե— փ պատմությունը:
Թեև նա քրիստոնեական
հանդերձ է հագել, իրականում
նրա էությունը չի փոխվել:
Պապության յուրաքանչյուր
սկզբունք, որ գոյություն է
ունեցելանցյալդարերում,
գոյություն անի նաև այսօր:
Այսօր էլ դավանում են նույն
ունմունքը, որ հորինվել է
ամենամութ դարերում: Թող ոչ
ոք չխաբվի: Պապությունը,

որին բողոքականներն այժմ
այդքան պատրաստ են պատիվ
տալ, նույնն է, որն իշխում էր
աշխարհին Բա-րենորոգման
օրերում, երբ Աստծո մարդիկ,
վտանգի ենթարկելով իրենց
կյանքը, կանգնեցին՝
մերկացնելու նրա
ամբարշտությունը: Նա
պահ-պանել է նույն
հպարտաւթյունն ու
ամբարտավան
հավակնությունը, որով
ենթարկեցնում էին
թագավորներին ու
իշխաններին և իրենց
վերագրում Աստծո

իրավունքները: Նրա ոգին
հիմա պակաս դաժան ու բռնի
չէ, քան այն ժամանակ, երբ նա
ոտնահարում էր մարդկային
ազատությունն ու սպանում
Բարձրյալի սուրբերին:

Պապությունը հենց այն է, ինչ
մարգարետությունն անվանում է
վերջին օրերի
ապստամբություն (Բ
Թեսաղոնիկեցիս 2.3,4): Նրա
քաղաքականությունն է՝
այնպիսի տեսք ընդունել, որը
լավագույնս կնպաստի իր
նպատակների
իրականացմանը, բայց

քամելենի փոփոխվող
արտաքի- նի տակ նա
թաքցնում է օձի անփոփոխ
թույնը: Նա հայտարարում է.
«Չերեսիկոսներին կամ
հերձվածողության մեջ
կասկածվողներին տրված
խոստումը չպետք է պահվի»
(Լենֆանտ, հատոր 1, էջ 516):
Մի՞թե այս իշխանությունը, որի
պատմությունը մի ամբողջ
հազարամյակ գրվել է սուրբերի
արյունով, պետք է այսօր
ճանաչվի որպես Քրիստոսի
եկեղեցու մի մասը:

Բողոքական երկրներում
տարածված այն պնդումը, թե
կաթոլիկությունն այժմ ավելի
քիչ է տարբերվում
բողոքականությունից, քան
անցյալում, անհիմն է:
Փոփոխություն իրոք կատարվել
է, բայց ոչ պապության մեջ:
Կաթոլիկությունն իրոք շատ
բաներով նման է
ժամանակակից
բողոքականությանը, քանի որ
բողոքականությունը մեծ
անկում է ապրել
Բարենորոգման ժամանակից ի
վեր:

Երբ բողոքական եկեղեցիները
ձգտում էին արժանանալ
աշխարհի բարեհաճությանը,
կեղծ սերը կուրացրեց նրանց
աչքերը: Նրանք ուրիշ ոչինչ չեն
տեսնում, բացի նրանից, որ
ճիշտ է տեսնել բարին ամեն
չարի մեջ, և որպես
անխուսափելի արդյունք՝
նրանք, ի վերջո, ամեն բալոս
մեջ կտեսնեն չարը: [572] Այն
հավատը պաշտպանելու
փոխարեն, որ մեկ անգամ
ավանդվել է սուրբերին, նրանք
այսօր թողություն են աղերսում
Յոնմից՝ նրա մասին ունեցած
իրենց անգութ կարծիքի և

իրենց մո-լեռանդության
համար:

Ճատերն էլ, նույնիսկ նրանք,
ովքեր բարեհաճ չեն
կաթողիկոսյան հանդեպ,
գրեթե վտանգ չեն սպասում
նրա իշխանությունից ու
ազդեցությունից: Նրանք
պնդում են, թե Միջնադարում
տիրող մտավոր ու բարոյ
ականխավարը նպաստել է
նրադոգմա ներիու
նախապաշարում ների
տարածմանը և
հալածանքներին, իսկ
ներկայիս ավելի վեհ միտքը,

գիտութեան վերելքն ու աճող
ազատամտութիւնը կրօնական
հարցերում թույլ չեն տա, որ
վերածնվեն
անհանդուրժողականութիւնն
ու բռնութիւնը: Միտքն անգամ,
թե այս լուսավորված դարում
կարող է նման իրավիճակ
ստեղծվել, ծիծաղելի է թվում:
Ճիշտ է, որ մեր սերնդի վրա
մտավոր, բարոյական և
կրօնական մեծ լույս է շողում:
Աստճո սուրբ խոսքի բաց
էջերից երկնային լույս է
ընկնում աշխարհի վրա: Պետք
է հիշել, սակայն, որ որքան
ավելի պայծառ է շնորհված

լույսը, այնքան ավելի թանձր է
Նրանց խավարը, ովքեր
աղավաղում ու մերժում են
լույսը:

Աստվածաշնչի աղոթքային
ուսումնասիրությունը
բողոքականներին ցույց կտար
պապության իսկական
եությունը և կդրդեր նրանց
գարշելու հեռու մնալ նրանից:
Բայց շատերն այնքան
իմաստուն են իրենց աչքե-րում,
որ կարիք չեն զգում
խոնարհությամբ Աստծուն
որոնելու՝ տեսնելու
ճշմարտությունը: Իրենց

լուսավորվածությամբ հպարտ՝
Նրանք ոչ Գրքերը գիտեն, ոչ էլ
Աստծո զորությունը: Նրանք
պետք է ինչ-որ ձեով
հանգստացնեն իրենց խիղճը,
ուստի որոնում են այն, ինչն
ամենաքիչ հո-գևորություն ու
խոնարհություն է պահանջում:
Ձևացնելով, թե հիշում են
Աստծուն, նրանք իրականում
մոռացել են Նրան:
Պապությունը հենց
Նա-խատեսված է լրացնելու
այդ ամենի պակասը: Այն
բավարարում է գրեթե ողջ
մարդկությունը ներառող երկու
խմբերի պահանջները, նրանք,

ովքեր կամենում են փրկվել
իրենց արժանիքներով, և
նրանք, ովքեր կուզենային
փրկվել իրենանց մեղքերի մեջ:
Այստեղ է պապության
գործության գաղտնիքը:

Ինչպես ցույց տրվեց, մտավոր
մեծ խավարի դարաշրջանը
բարե-նպաստ էր պապության
զարգացման համար: Բայց
մենք դեռ կտեսնենք, [573] որ
մեծ լուսավորության
դարաշրջանը նմանապես
բարենպաստ է նրա
հաջողության համար: Անցյալ
դարերում, երբ մարդիկ չունեին

Աստժո խոսքը և չգիտեին
ճշմարտությունը, նրանց
աչքերն ասես կապված էին, և
հազարավորները ծուղակն էին
ընկնում՝ չտեսնելով իրենց
համար գցած ցանցը: Իսկ մեր
օրերում շատերին շլացնում է
մարդկային ուսմունքների,
այսպես կոչված «սուտանուն
գիտության» փայլը, նրանք չեն
տեսնում որոգայթը և կույրերի
պես ընկնում են նրա մեջ:
Աստված նախատեսել է, որ
մարդու մտավոր ուժերը
դիտվեն որպես պարզև
Արարչից և ծառայեն
ճշմարտությանն ու

արդարութեանը, բայց երբ
մարդիկ, փայփայելով
հպարտութիւնն ու
սնափառութիւնը, իրենց
տեսութիւնները վեր են դասում
Աստծո խոսքից, այդ ժամանակ
կրթութիւնը կարող է ավելի
մեծ վնաս հասցնել, քան
տգիտութիւնը: Այսպիսով՝
ինչպես մարդկանց
տգիտութեան մեջ պահելը
Խավար Միջնադարում
Նպաստեց պապութեան
վերելքին, այնպես էլ արդի
կեղծ գիտութիւնը, որ
խորտակում է հավատն
Աստվածաշնչի հանդէպ, Նայն

հաջողութեամբ ճամփա կհարթի
ընդունելու այն՝ իր բոլոր
մարդասիածո ծեսերով:

Միացյալ Նահանգներում այսօր
զարգացող բողոքական
շարժում-ները, որոնք իրենց
եկեղեցական
հաստատությունների և
կառույցների համար
պահանջում են պետության
աջակցություն, ընդամենը
հետևում են պապության
օրինակին: Դեռ ավելին՝ նրանք
դուռ են բացում պապու-թյան
համար բողոքական
Ամերիկայում վերագտնելու այն

գերիշխա-նությունը, որ կորցրել
Էր Յին Աշխարհում: Եվ այս
շարժմանն էլ ավելի մեծ
նշանակություն է հաղորդում
այն փաստը, որ նրա
սկզբունքային նպատակը
կիրակին պահելու
պարտադրանքն է, մի
սովորություն, որը ծնունդ է
առել Յռոմում, և որը վերջինս իր
հեղինակության նշանն է
համարում: Աշխարհիկ
սովորություններին
հարմարվելու, մարդկային ա-
վանդույթներն Աստծո
պատվիրաններից վեր դասելու
պապական ոգին է հենց, որ

Թափանցում է բողոքական
եկեղեցիները՝ դրդելով նրանց
մե-ծարել Կիրակին, ինչպես
պապությունն է արել իրենցից
առաջ:

Եթե ընթերցողն ուզում է
իմանալ, թե ինչ ուժեր են
ներքաշվելու վերահաս
պայքարի մեջ, թող միայն
թերթի պատմության այն
էջերը, որոնք ցույց են տալիս,
թե ինչ միջոցներով է Յոնան
անցյալ դարերում [574] հասել
նույն նպատակին: Եթե ուզում
եք հասկանալ, թե ինչպես են
պապական ու բողոքական

միացյալ ուժերը վարվելու
նրանց հետ, ովքեր կմերժեն
իրենց դոգմաները, տեսեք, թե
ինչ ոգի է Յոնանը դրսևորել
շաբաթի և նրա ջատագովների
հանդեպ:

Արքայական հրովարտակաները,
տիեզերական ժողովներն ու
աշխարհիկ իշխանության
կողմից աջակցվող
եկեղեցական կանոններն էին
այն քայլերը, որոնցով
հեթանոսական տոնն իր
պատվավոր տեղը գտավ
քրիստոնեական աշխարհում:
Հանրային առաջին միջոցը,

որով պարտադրվեց պահել
կիրակին, Կոնստանտին
կայսեր օրենքն էր՝ հռչակված
Ք.հ. 321 թ.: Այն պահանջում էր,
որ քաղաքի բնակիչները
հանգստանային «արեգակի
մեծապատիվ օրը», բայց
գեղջուկներին թույլ էր տրվում
շարունակել իրենց
գյուղատնտեսական
աշխատանքները: Ճագումով
հեթանոսական այդ տոնը
պարտադրվեց կայսեր կողմից,
երբ նա ձևականորեն ընդունեց
քրիստոնեութունը:

Բայց քանի որ արքայական
հրովարտակը չէր կարող
փոխարինել աստվածային
հեղինակությանը, Եվսեբիոս
Եպիսկոպոսը՝ Կոնստանտինի
մտերիմ ընկերն ու
շողոքորթողը, ձգտելով շահել
իշխանների բարեհաճությանը,
առաջ քաշեց այն պնդումը, թե
Քրիստոսն է շաբաթ օրը
փոխարինել կիրակիով: Բայց
նոր ուսմունքի հիմնավորման
համար չկար սուրբգրային գոնե
մեկ վկայություն: Եվսեբիոսն
ինքը ակամայից խոստովանում
է դրա կեղծությունը՝
մատնանշելով այդ

փոփոխութեան իսկական
հեղինակներին: «Այն ամենն,—
ասում է նա,— ինչ
պահանջվում է անել շաբաթ
օրը, մենք տեղափոխել ենք
Տիրոջ օրը» (Ռոբերտ Քոկս,
Շաբաթի օրենքներն ու
պարտականութիւնները, էջ
538): Բայց կիրակին պահելու
գաղափարը, որքան էլ որ
անհիմն էր, հանդուգն դարձրեց
մարդկանց՝ ոտնահարելու
Տիրոջ շաբաթը: Եվ բոլոր
նրանք, ովքեր որոնում էին
աշխարհի փառքը, ընդունեցին
հանրաճանաչ այդ տոնը:

Երբ պապությունն ամուր
հաստատվեց, շարունակվեց
կիրակի օրվա մեծարման
գործը: Որոշ ժամանակ, երբ
ժողովուրդը եկեղեցի չէր
հաճախում և զբաղվում էր
գյուղատնտեսական
աշխատանքով, յոթերորդ օրը
դեռ շաբաթն էր համարվում:
Բայց աստիճանաբար փո
փոխություն տեղի ունեցավ:
Հոգևորականներին արգելված
էր որևէ քաղաքացիական
հարցով կիրակի օրը
դատավճիռ կայացնել: Բայց
շուտով բոլորին, անկախ
դիրքից, հրամայվեց զերծ մնալ

առօրյա աշխատանքից:
Չհնազանդվելու դեպքում
ազատ քաղաքացիներին
տուգանք էր սպասվում, իսկ
[575] ստրուկներին՝ խարազան:
Ավելի ուշ հրաման արձակվեց,
որ հարուստները պիտի
պատժվեին՝ զրկվելով իրենց
ունեց-վաճքի կեսից, իսկ եթե
շարունակեին համառել, պետք
է ստրուկներ դառնալին: Ցածր
խավերին ցմահ աքսոր էր
սպասվում:

Դիմեցին նաև հրաշքների
օգնությանը: Այլ հրաշքների
հետ միասին՝ պատմում էին, թե

մի հողագործ կիրակի օրն իր
դաշտը հերկելու համար
երկաթի կտորով գութանը
մաքրելիս երկաթը խրվել է նրա
ձեռքի մեջ, և նա երկու տարի
այդ երկաթի կտորն իր ձեռքի
մեջ խրված՝ «մեծ ցավ ու
խայտառակությունն է կրել»
(Ֆրենսիս Ուեսթ, Պատմական
ու գործնական զրույց Տիրոջ
օրվա վերաբերյալ, էջ 174):

Ավելի ուշ պապը կարգադրեց,
որ ծխական քահանաները
կիրակի օրը խախտողներին
հորդորեն եկեղեցի գնալ և
աղոթք անել, որպեսզի որևէ

մեծ աղետ չբերեն իրենց և
իրենց մերձավորների վրա:
Եկեղեցական մի ժողով առաջ
քաշեց այն փաստարկը, որն
առայսօր լայնորեն պիտի
օգտագործվեր նույնիսկ
բողոքականների կողմից, թե
հանգստի օրը կիրակին է, քանի
որ այդ օրն աշխատանքիս
մարդիկ կայծակնահար են
եղել: «Ակնհայտ է,— ասացին
պրեզատները,— թե որքան մեծ
է Աստծո դժգոհաթյունն այս
օրը մերժողների հանդեպ»:
Չետո կոչ արվեց, որ
քա-հանաներն ու
ծառայողները, թագավորներն

ու իշխանները և ողջ
հա-վատացյալ ժողովուրդը
«ամեն ճիգ ու ջանք թափեն,
որպեսզի կիրակի օրվա
պատիվը վերականգնվի և,
հանուն քրիստոնեության,
հետագայում էլ ավելի
ակնածանքով պահվի» (Թոմաս
Մորիե, վեց երկխոսություն
Տիրոջ Օրվա անվան, իմաստի և
պահման վերաբերյալ, էջ 271):

Եկեղեցական հրամանագրերն
անբավարար գտնվեցին, ուստի
հոգևորականությունն
աշխարհիկ
իշխանություններին խնդրեց

մի հրովարտակ արձակել, որը
կսարսափեցներ ժողովրդին և
կստիպեր զերծ մնալ կիրակի
օրը աշխատելուց: Հռոմում
գումարված եկեղեցական
ժողովում նախկին բոլոր
որոշումները
վերահաստատվեցին ավելի մեծ
ուժով ու հանդիսավորությամբ:
Դրանք նաև ներմուծվեցին
եկեղեցական օրենքի մեջ և
քաղաքացիական
իշխանությունների կողմից
պարտադրվեցին գրեթե ողջ
քրիստոնեական աշխարհում
(Տես՝ Հեյլին, Շաբաթի

պատմութեանը, մաս 2, գլ. 5,
կետ 7): [576]

Բայց նայնպէս, կիրակին
պահելու աստվածաշնչյան
հեղինակութեան
բացակայութիւնը քիչ
անախորժութիւններ
չառաջացրեց: Ժողովուրդը
հարցնում էր, թե ի՞նչ
իրավունքով են իրենց
ուսուցիչներն անտեսում
Եհովայի հստակ
հայտարարութիւնը՝
«Յոթերորդ օրը քո Եհովա
Աստծո հանգստութեան օրն է»,
և պահանջում մեծարել

արեգակի օրը: Աստվածաշնչի
վկայության բացակայությունը
լրացնելու համար այլ
մի-չոցներ էին անհրաժեշտ:
Կիրակի օրվա մի մոլի
պաշտպան, տասներ-կուերորդ
դարի վերջում այցելելով
Անգլիայի եկեղեցիները,
հանդիպեց ճշմարտության
հավատարիմ վկաների
դիմադրությանը: Նրա ջանքերն
այնքան ապարդյուն էին, որ նա
որոշ ժամանակով հեռացավ
այդ երկրից ու սկսեց մտածել,
թե ինչ միջոցներով պարտադրի
իր ուսմունքը: Երբ նա
վերադարձավ, խնդիրը լուծված

Էր, և նրա հետագա
աշխատանքն ավելի մեծ
հաջողութուն ունեցավ: Նա իր
հետ բերել էր մի մագաղաթ՝
իբր թե ուղարկված անձամբ
Աստծո կողմից, որում գրված էր
կիրակին պահելու անհրաժեշտ
հրամանը՝ անհնազանդներին
ահաբեկելու սուկալի
սպառնալիքներով: Ասում էին,
թե այդ «թանկարժեք»
փաստաթուղթը, որը նույնքան
ստոր կեղծիք էր, որքան
հաստատությունը, որին այն
աջակցում էր, ընկել էր երկնքից
և այն գտել էին երոսադեմում՝
սուրբ Սիմեոնի գո-հասեղանի

վրա՝ Գողգոթայում: Բայց դա
փաստորեն ծնվել էր Յոնմի
պապական պալատում:
Պապական հիերարխիան բոլոր
դարերում օրի-նական է
համարել եկեղեցու
իշխանությանն ու
բարգավաճմանը նպաստող
ամեն մի կեղծիք ու
խարդախություն:

Մագաղաթը պահանջում էր
դադարեցնել աշխատանքը
իններորդ ժամից, այսինքն՝
շաբաթ օրը ժամը երեքից մինչև
երկուշաբթի օրվա արևածագը:
Եվ հռչակվեց, թե դրա

հեղինակութիւնը հաստատուել
է բազմաթիւ հրաշքներով:
Ասում էին, թէ նշված ժամերին
աշխատող անձինք
կաթվածահար են եղել: Մի
ջրաղացպան, ով փորձել էր
աղալ իր ցորենը, իբր տեսել է,
թէ ալրի փոխարեն արյուն է
հայտնվել, իսկ ջրաղացի
անիվները կանգ են առել`
չնայած ջրի մեծ ճնշմանը: Մի
կին հացը վառա-րանից հում
վիճակում է հանել, թեև
վառարանը շատ տաք է եղել:
Մի ու-րիշը, ով խմոր է
պատրաստել մինչև իններորդ
ժամը, բայց հետո որոշել է այն

մի կողմ դնել մինչև
երկուշաբթի, հաջորդ օրը տեսել
է, որ հացը թխվել է
աստվածային ուժով: Մի մարդ,
ով շաբաթ օրը ժամը իննից
հետո [577] հաց է թխել, մյուս
օրն առավոտյան այն կտրեփս
տեսել է, որ նրանից արյուն է
հոսում: Ահա թե ինչպիսի
անհեթեթ ու սնահավատ
կեղծիքներով են կիրակի օրվա
պաշտպանները ձգտել
հաստատել նրա սրբությունը
(Տես Ռոջեր դե Յովեդեն,
Տարեգրություններ, հ. 2, էջ
528-530):

Ճոտլանդիայում, ինչպես և
Անգլիայում, կիրակին էլ ավելի
մեծ հար- գանքի արժանացավ,
երբ դրա հետ միավորեցին հին
շաբաթի մի մասը: Բայց
ժամանակը, որը պետք էր սուրբ
պահել, փոփոխական էր:
Ճոտլանդիայի թագավորը
հրաման արձակեց, որ «շաբաթ
օրը կեսօրվա տասներկուսից
հետո պետք է սուրբ համարվի»,
և որ այդ պահից մինչև
երկուշաբթի առավոտ ոչ ոք
չպետք է զբաղվի աշխարհային
գործերով (Մորիե, էջ 290, 291):

Չնայած կիրակի օրվա
սրբությունը հաստատելու
բոլոր ջանքերին՝
պապականներն իրենք էլ
հրապարակավ խոստովանեցին
շաբաթի աստվածային
հեղինակությունը և դրան
փոխարինած օրենքի
մարդկային ծագումը:
Տասնվեցերորդ դարում
պապական մի ժողով
պարզորոշ հայտարարել է.
«Թող բոլոր քրիստոնյաները
հիշեն, որ յոթերորդ օրը սրբվել
է Աստծո կողմից և ընդունվել ու
պահվել է ոչ միայն հրեաների,
այլև բոլոր նրանց կողմից,

ովքեր երկրպագել են Աստծուն,
բայց մենք՝ քրիստոնյաներս,
շաբաթը փոխարինել ենք Տիրոջ
օրով» (Նույն տեղում, էջ
281,282): Նրանք, ովքեր
աղավաղում էին աստվածային
օրերը, անտեղյակ չէին իրենց
գործի բնույթին: Նրանք
դիտավորյալ էին իրենց
Աստծուց վեր դասում:

Այլախոհների հանդեպ Յոզմի
քաղաքականության ցայտուն
օրինակ է վաղդեսների
երկարատև ու արյունալի
հալածանքը, որոնցից շատերը
շաբաթապահ էին: Ուրիշներն է

ԵՆ ՆՈՒՅՆ ԿԵՐԱ ՃԱՐՃԱՐՎԵԼ
ՃՈՐՐՈՐՈՂ ԱՄԱՏՎԻՐԱՆԻՆ
ԽԱՎԱՏԱՐԻՄ ՄՆԱԼՈՒ ԽԱՄԱՐ:
ԱՅՂ ԱՌՈՒՄՈՎ ԽԱՏԿԱՆՉԱ-ԿԱՆ Է
ԵԹՈՎԱԿԻԱՅԻ և ԱԲԻՍԻՆԻԱՅԻ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԱՄԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԸ:
ՄԻՋՆԱ-ՂԱՐՅԱՆ ԽԱՎԱՐՈՒՄ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՖՐԻԿԱՅԻ
ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԸ ՄԵՏԱ-ՂԱՉՄԻՑ
ՂՈՒՐԱ ԷԻՆ ԹՈՂՆՎԵԼ ՈՒ ՄՈՌԱՑՎԵԼ
ԱՉԽԱՐԻԻ ԿՈՂՄԻՑ, և ԵՐԿԱՐ
ՂԱՐԵՐ ՆՐԱՆՔ ԱՉԱՏՈՐԵՆ
ԱՎԱԽՈՒՄ ԷԻՆ ԻՐԵՆՑ ԽԱՎԱՏՈՂ:
ԲԱՅՑ Ի ՎԵՐՋՈ ՅՈՒՄՆ ԻՄԱՑԳԱՎ
ՆՐԱՆՑ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, և
ՉՈՒՏՈՎ ԱԲԻՍԻՆԻԱՅԻ ԿԱՅՍՐԸ,
ԱՍԵԱ ԿԱԽԱՐՈՎԱԾ, ՃԱՆԱՃԵՑ

պապին՝ որպես Բրիտանի
փոխանորդի: Նրան հետևեցին
Նան ու Լիշները: [578] Հրաման
արձակվեց, որն արգելում էր
շաբաթապահաթյունը
խստագույն պատիժների
սպառնալի-քով (Տե՛ս Մայքլ
Գեդդես, Եթովպիայի եկեղեցու
պատմությունը, էջ 311, 312):
Բայց պապական
բռնատիրությունը շուտով մի
այնպիսի անտանելի լուծ
դարձավ, որ աբիսինիացիները
վճռեցին թոթափել այն
իրենցից: Սարսափելի
պայքարից հետո նրանք
կաթոլիկներին վտարեցին

իրենց տիրույթներից, և հին
հավատը վերականգնվեց:
Ցնծալով իրենց ազատության
մեջ՝ եկեղեցիները երբեք
չմոռացան իրենց սովորած
դասը Յոզմի խաբեության,
մոլեռանդության ու բռնի
իշխանության վերաբերյալ:
Նրանք համաձայն էին մնալ
իրենց մեկուսի արքայության
մեջ՝ անհայտ և հեռու լինելով
մնացած քրիստոնեական
աշխարհից:

Աֆրիկայի եկեղեցիները
պահում էին շաբաթը, ինչպես
պահում էր պապական

Եկեղեցին՝ մինչև իր կատարյալ
ուրացությունը: Տոնելով
շա-բաթն Աստծո պատվիրանի
համաձայն՝ նրանք չէին
աշխատում նաև կիրակի օրը՝
ըստ եկեղեցու սովորության:
Հասնելով գերագույն
իշխանության՝ Յոնան
ոտնահարեց Աստծո շաբաթը,
որպեսզի բարձրացնի իր
սեփականը, բայց Աֆրիկայի
եկեղեցիները, անսկսած մնալով
գրեթե հազար տարի, չմիացան
այդ ուրացությանը: Ընկնելով
Յոնանի իշխանու-թյան տակ՝
նրանք ստիպված թողեցին
ճշմարիտ շաբաթը և սկսեցին

պատվել կեղծը, բայց հենց որ
նորից անկախութիւնն ձեռք
բերեցին, դար-ձյալ
հնազանդվեցին չորրորդ
պատվիրանին:

Անցյալի այս պատմութիւնը
հստակորէն բացահայտում է
Յռոմի թշնամութեանը ճշմարիտ
շաբաթի ա նրա
պաշտպանների հանդէպ, և այն
միջոցները, որ նա
օգտագործում է պատվելու իր
հորինած դրվածքը: Աստծո
խոսքը սովորեցնում է, որ երբ
կաթոփկներն ու
բողոքականները միավորվեն

կիրակին մեծարելու համար,
այս իրադարձությունները
կրկնվելու են:

Չայտնություն 13-րդ գլխի
մարգարեության համաձայն՝
իշխանությունը, որ
ներկայացված է գառան
եղջյուրներով գազանի
պատկերով, պետք է ստիպի
«երկրին և նրանում
բնակվողներին» երկրպագել
պա-պությանը, որը
խորհրդանշված է «ընձառյուծի
նման» գազանով: Երկ-եղջյուր
գազանը նաև ասելու է «երկրի
բնակիչներին, որ պատկեր

շինեն այն գազանի», և [579] ապա հրամայելու է բուրդին՝ «փոքրերին և մեծամեծերին, հարուստներին և աղքատներին, ազատներին և ծառաներին», ընդունելու գազանի դրոշմը (Յայտնություն 13.11-16): Արդեն նշել ենք, որ իշխանությունը՝ ներկայացված գառան եղջյուրներով գազանի պատկերով, Միացյալ Նահանգներն են, և որ այս մար-գարեությունը կատարվելու է, երբ Միացյալ Նահանգները պարտադրի պահել կիրակին, ինչը Յռոմի կողմից դիտվում է որպես իր

գերիշխա-նության հատուկ
ճանաչում: Սակայն
պապությանը մեծարելու մեջ
Միացյալ Նահանգները
միայնակ չի լինի: Հռոմի
ազդեցությունն այն
երկրներում, որոնք մի
ժամանակ գտնվել են նրա
տիրապետության տակ,
ամենևին էլ դեռ չի վերացել:
Մարգարեությունն ասում է, որ
նրա իշխանությունը
վերականգնվելու է: «Եվ տեսա
նրա գլուխներից մեկը մահու
չափ խոցված, և նրա մահվան
վերքը ողջացավ, և ամբողջ
երկիրը զարմացավ այն

գագանի վրա» (Ջայտնություն 13.3): Մահացու վերք ստանալը խորհրդանշում է պապության տապալումը 1798 թ.—ին: Դրանից հետո, ասում է մարգարեն, «նրա մահվան վերքը ողջացավ, և ամբողջ երկիրը զարմացավ այն գագանի վրա»: Պողոսը որոշակիորեն ասում է, որ «անօրենության մարդը» գործելու է մինչև երկրորդ գալուստը (Բ Թեսաղոնիկեցիս 2.3-8): Ընդհուպ մինչև ժամանակի վերջը նա առաջ է տանելու իր խաբեությունը: Դառնալով պապությանը՝ Ջայտնության հեղինակն ասում

Է. «Եվ կերկրպագեն նրան
երկրի վրա բոլոր բնակվողները,
որոնց անունները գրված չեն
Գառան կյանքի գրքի մեջ»
(Չայտնություն 13.8): Թե՛ Յիս,
թե՛ Նոր Աշխարհում
պապությունը մե-ծարվելու է
կիրակի օրը պատվելու
միջոցով՝ դրվածք, որը
հաստատվել է միմիայն Չռոմի
եկեղեցու հեղինակությամբ:

Տասնիններորդ դարի կեսից ի
վեր մարգարեության
ուսումնասիրող-ները Միացյալ
Նահանգներում այս լուրը
ներկայացնում են աշխարհին:

Ներկայումս տեղի ունեցող
իրադարձությունները ցույց են
տալիս, որ մարգարեության
իրականացումը մոտ է:
Բողոքական ուսուցիչները ես
պնդում են, թե կիրակին
հաստատված է աստվածային
հեղինակությամբ, սակայն
Նույնպես առանց սուրբգրային
վկայության, ինչպես և
պապական առաջնորդները,
ովքեր հրաշքներ էին հորինում՝
Աստծո պատվիրանի տեղը
լրացնելու համար: Նորից
կերկնվեն այն պնդումները, որ
Աստծո դատաստանները
մարդկանց գլխին են թափվում

հենց կիրակի օրը [580]
խախտելու համար, և նման
հայտարարություններ արդեն
արվում են: Եվ կիրակիի
սրբությունը պարտադրելու
շարժումն արագորեն ընթացք է
առնում:

Յո՞ւմի եկեղեցու նենգությունն
ու խորամանկությունը հիրավի
զարմանալի են: Նա
պատկերացնում է, թե ինչ է
լինելու, և հարմար պահի է
սպասում՝ տեսնելով, որ
բողոքական եկեղեցիները
պատիվ են տալիս իրեն՝
ընդունելով կեղծ շաբաթը, և

պատրաստվում են այն
պարտագրել նայն միջոցներով,
որ հենց ինքն է կիրառել
անցյալում: Ճշմարտության
լույսը մերժողները դեռ դիմելու
են ինքն իրեն անսխալական
հռչակող այս իշխանության
օգնությանը՝ մեծարելու այն
դրվածքը, որ նա է հաստատել:
Դժվար չէ կռահել, թե այս
գործում ինչպիսի
պատրաստակամությամբ է նա
օգնության հասնելու
բողոքականներին: Պապական
առաջնորդներից ավելի լավ ո՞վ
գիտի, թե ինչպես պետք է

վարվել եկեղեցուն
չհնազանդվողների հետ:

Կաթուղիկ եկեղեցին՝ իր բոլոր
ճյուղավորումներով,
աշխարհով մեկ սփռված մի
կազմակերպություն է, որը
գտնվում է պապական գահի
վերահսկողության սուկ և
նախատեսված է ծառայելու
Նրա շահերին: Երկրագնդի
յուրաքանչյուր երկրում Նրա
միլիոնավոր անդամներին
սովոր- րեցնում են պապին
հավատարմության երդում
տալ: Անկախ ազգությունից ու
քաղաքացիությունից՝ նրանք

պետք է եկեղեցու
հեղինակութիւնը բոլոր
մյուսներից վեր դասեն: Թեև
նրանք կարող են
հավատարմութեան խոստում
տալ պետութեանը, սակայն
Յոնանիս հնազանդվելու երդումը
դրանից վեր է և ազատում է
նրանց ցանկացած խոստումից,
որը հակա-ռակ է նրա շահերին:

Պատմութիւնը վկայում է, թե
ինչ հնարամիտ ու համառ
ջանքերով է Յոնանի եկեղեցին
սողոսկել ազգերի գործերի մեջ,
և հենակետ ձեռք բերելով՝
առաջ տարել իր ծրագրերը՝

անգամ իշխանների ու
ժողովրդի կորստյան գնով:
1204 թ. Ինոկենտի III պապը
Պետրոս II-ից՝ Արագոնիայի
թագավորից կորզել է հետևյալ
արտասուվոր երդումը. «Ես՝
Արագոնիայի թագավոր
Պետրոսս, դավանում և
խոստանում եմ միշտ
հավատարիմ ու հնազանդ լինել
իմ տիրոջը՝ Ինոկենտի պապին,
նրա կաթոլիկ հետևորդներին ու
Յոզովի եկեղեցուն, և իմ
թագավորութունը հնազանդ
պահել նրան՝ պաշտպանելով
կաթոլիկ հավատը և հալածելով
հերետիկոսներին» (Ջոն

Դռուլինգ, Ռոմանիզմի
պատմութիւնը, հ. 5, գլ. 6, կետ
55): [581] Սա ներդաշնակ է այն
հավակնութեանդ, թե Յռոմի
պապը «իրավունք ունի
պաշտոնանկ անելու
կայսրերին» և «ազատելու
հպատակներին անարդար
ղեկավարներին
հնազանդվելուց» (Մոշեիմ, հ. 3,
խոսք 11, բաժին 2, գլ. 2, կետ 9,
նշում 17):

Յարկ է հիշել նաև, որ Յռոմը
պարծենում է նրանով, որ ինքը
երբեք չի փոխվում: Գրիգորի
VII—ի և Ինոկենտի III-ի

սկզբունքները մինչև այսօր
պահպանվում են Յոնի
կաթոլիկ եկեղեցում: Ու եթե
միայն իշխանություն ունենար,
ապա նա գործի կոներ դրանք
նույն եռանդով, ինչպես անցյալ
դարերում: Բողոքականները
գրեթե չեն հասկանում, թե ինչ
են անում՝ պատրաստվելով
ընդունել Յոնի օգնությունը
կիրակին մեծարելու գործում:
Մինչ նրանք զբաղված են
իրենց մտադրության
իրականացմամբ, Յոնը ձգտում
է վերականգնել իր
հզորությունը և վերադարձնել
իր կորցրած

գերիշխանությունը: Թող միայն
Միացյալ Նահանգներում
հաս-տատվի այն սկզբունքը, որ
եկեղեցին կարող է օգտագործել
կամ վե-րահսկել պետության
իշխանությունը, որ կրոնական
ձեսերը կարող են պարտադրվել
աշխարհիկ օրենքներով, որ,
կարճ ասած, եկեղեցին ու
պետական իշխանությունը
պետք է իշխեն մարդու խղճին,
և Յռոմի հաղ-թանակն այդ
երկրում ապահովված է:

Աստծո խոսքը

Նախազգուշացնում է վերահաս
վտանգի մասին: Եթե սա

անտեսվի, բողոքական
աշխարհը կիմանա, թե որոնք
են Յոհանի իրական
նպատակները, բայց արդեն
չափազանց ուշ կլինի թա-
կարդից խոսափելու համար:
Յոհան աննկատելիորեն
գորանում է իշխանությամբ:
Նրա ուսմունքն իր
ազդեցությունն է գործում
օրենսդրա-կան մարմիններում,
եկեղեցիներում և մարդկանց
սրտերում: Նա վեհա-շուք,
վիթխարի շինություններ է
կանգնեցնում, որոնց գաղտնի
լաբիրին-թոսներում կրկնվելու
են անցյալի արյունալի

հալածանքները: Ծպտված և
առանց կասկած հարուցելու՝
Նա ամրապնդում է իր դիրքերը՝
իր ծրագրերն առաջ տանելու
համար, մինչև որ գա վճռական
հարվածի պահը: Նպաստավոր
դիրքն է այն ամենը, ինչ նրան
հարկավոր է, և դա արդեն
տրվում է նրան: Մենք շուտով
կտեսնենք ու կհասկանանք, թե
որն է Յոզմի նպատակը: Բոլոր
նրանց, ովքեր կհավատան ու
կհնազանդվեն Աստծո խոսքին,
Նախատինք և հալածանքներ
են սպասվում: [582]

ԳԼՈՒԽ 36—ՎԵՐԱՅԱՍ ՊԱՅՔԱՐԸ

Երկնքում ծագած մեծ պայքարի
ամենասկզբից սատանայի
Նպատակն է եղել վերացնել
Աստծո օրենքը: Յենց այդ
Նպատակով էր, որ Նա
ապստամբեց Արարչի դեմ, և
երկնքից արտաքսվելուց հետո
Էլ դեռ շարունակում է իր
պատերազմը երկրի վրա:
Մարդկանց խաբել և այդպիսով
դրդել Նրանց խախտել Աստծո
օրենքը, սա է Նպատակը, որը
Նա համառորեն հետապնդում
է: Կարվի դա ամբողջ օրենքը

ոտնահարելով, թե մերժելով
պատվիրաններից գեթ մեկը՝
արդյունքը միանգամայն նույնն
է լինելու: Նա, ով «մեկ բանի
մեջ» հանցանք է գործում,
արհամարհում է ողջ օրենքը,
նրա ազդեցությունն ու
օրինակը խրախուսում են
անօրենությունը, և նա
«պարտական է դառնում
ամբողջ օրենքին» (Յակոբոս
2.10):

Ձգտելով արհամարհանքի
ստվեր գցել աստվածային
դրվածքների վրա՝ սատանան
խեղաթյուրել է Աստվածաշնչի

ուսմունքը, և այսպես
հազարավորները, կարծելով թե
հավատում են Սուրբ Գրքին,
իրականում հավատում են
ստուրթյան: Վերջին մեծ
բախումը ճշմարտության և
մոլորության միջև՝ Աստծո
օրենքի շուրջն ընթացող
բազմադարյա պայքարի
վերջնական փուլն է լինելու:
Այս պայքարի մեջ է, որ մենք
հիմա մտնում ենք, պայքար
մարդկային օրենքների ու
Եհովայի պատվիրանների
միջև, Աստվածաշնչի կրոնի և
հորինվածքների ու
ավանդության կրոնի միջև:

Այն ուժերը, որոնք միավորվելու են ճշմարտության ու արդարության դեմ այս պայքարում, այժմ ակտիվորեն գործում են: Աստծո խոսքը, որ մեզ է փոխանցվել չարչարանքների և թափված արյան [583] այդպիսի գնով, գրեթե արժեզրկվել է: Սուրբ Գիրքը մատչելի է բոլորին, բայց քչերն են այն ընդունում որպես կյանքի ուղեցույց: Անհավատությունը տագնապալի չափերով գերիշխում է ոչ միայն աշխարհում, այլ նաև

Եկեղեցում: Շատերը սկսել են
ուրանալ այն հիմունքները,
որոնք քրիստոնեական
հավատի սյուներն են:
Արարչագործության մեծ
փաստերը, որ ներկայացված են
ներշնչված հեղինակների
կողմից, մարդու անկումը,
քավությանն ու Աստծո օրենքի
անփոփոխությանը՝ այս ամենը
գործնականում, մասամբ, թե
ամբողջովին, մերժվում են
քրիստոնեական կոչվող
աշխարհի մեծմասի կողմից:
Հազարավորները, որ
հպարտացած են իրենց
իմաստությանը ու

անկախութեամբ, թուութիւն
են համարում բացարձակ
վատահոլութիւնն
Աստվածաշնչին: Նրանք
կարծում են, թէ Սուրբ Գրքի
քննադատութիւնը, նրա
կարևորագոյն
ճշմարտութիւններն
իմաստազրկելու և դրանց
վերացական մեկնաբանութիւն
տալը գերազանց տաղանդի ու
գիտութեան վկայութիւն է:
Շատ քարոզիչներ՝ իրենց
հոտին և շատ ուսուցիչներ ու
դասախոսներ իրենց
ուսանողներին սովորեցնում են,
որ Աստծո օրենքը փոխվել է

Կամ այլևս չի գործում, և
Նրանք, ովքեր դրա
պահանջները դեռ ուժի մեջ են
համարում՝ բառացիորեն
հնազանդվելով օրենքին,
արժանանում են միայն ծաղրի
ու արհամարհանքի:

Մերժելով ճշմարտությունը՝
մարդիկ մերժում են Նրա
Յեղիևակին: Ոտնահարելով
Աստծո օրենքը՝ նրանք
արհամարհում են Օրենսդրի
հեղինակությունը: Կեղծ
ուսմունքներից ու
տեսություններից կուռք
ստեղծելը նույնքան հեշտ է,

որքան փայտից կամ քարից
շինելը: Աղավաղելով Աստծո
բնավորությունը՝ սատանան
մարդկանց դրդում է կեղծ
պատկերացում կազմել Նրա
մասին: Շատերի սրտում
փիլիսոփայությունն է
գահակալել եհովայի
փոխարեն, մինչդեռ կենդանի
Աստծուն, ով բացահայտված է
Իր խոսքում, Քրիստոսի
կյանքում և
արարչագործության մեջ,
միայն քչերն են երկրպագում:
Հազարավորներն
աստվածացնում են բնությունը,
մինչդեռ ուրանում են բնության

Արարչին: Ինչպես Եղիայի
օրերին հին Իսրայելում
տարածված էր
կռապաշտութունը, այսօր էլ,
թեև ձևափոխված, այն
գոյություն ունի
քրիստոնեական աշխարհում:
Շատ այսպես կոչված
իմաստունների,
փիլիսոփաների,
բանաստեղծների,
քաղաքական գործիչների,
լրագրողների,
բարձրաշխարհիկ խավերի,
բազմաթիվ քուլեջների ու
համալսարանների և նույնիսկ
որոշ աստվածաբանական

հաստատությունների
աստվածը գրեթե ոչնչով չի
տարբերվում Փյունիկիայի
արևի աստծուց՝ Բահադից:
[584]

Քրիստոնյա աշխարհի կողմից
ընդունված ոչ մի սխալ այնքան
հանդգնորեն չի ըմբոստանում
երկնքի հեղինակության դեմ, ոչ
մեկն այնքան հակառակ չէ
բանականության
թելադրանքին, ոչ մեկն այնքան
կորստաբեր չէ իր
հետևանքներով, որքան
արագորեն տարածվող այն նոր
ուսմունքը, թե Աստծո օրենքն

այլևս պարտադիր չէ
մարդկանց համար: Ամեն մի
ազգ իր օրենքներն ունի, որոնք
հարգանք և հնազանդություն
են սրահանջում: Ոչ մի
կառավարություն գոյություն
չէր ունենա առանց դրանց, և
մի՞թե կարելի է պատկերացնել,
որ երկնքի ու երկրի Արարիչը
օրենք չունի՝ կառավարելու իր
ստեղծած էակներին: Ի՞նչ
կլիներ, եթե հայտնի
քարոզիչները սկսեին
հրապարակապ սովորեցնել, որ
իրենց երկիրը կառավարող ու
քաղաքացիների իրավունքները
պաշտպանող օրենքներն այլևս

պարտադիր չեն, որ դրանք
սահամանափակում են
ժողովրդի ազատութիւնը,
հետևաբար, դրանց չպետք է
հնազանդվել: Որքա՞ն երկար
նման մարդկանց
կթույլատրվեր քարոզել
ամբիոնից: Բայց մի՞թե
պետութիւնների և ազգերի
օրենքների անտեսումն ավելի
մեծ հանցանք է, քան Աստծո
պատվիրանների
ոտնահարումը, որոնք ամեն մի
կառավարութեան հիմքն են:

Շատ ավելի հավանական
կփներ, որ ազգերը վերացնեին

իրենց օրենքներն ու թույլ
տային ժողովրդին անել այն,
ինչ իրենց հաճելի է, քան որ
տիեզերքի Կառավարիչը
վերացներ իր օրենքը և
աշխարհը թողներ առանց
չափանիշի՝ դատապարտելու
հանցավորին և արդարացնելու
հնազանդին: Ուզո՞ւմ եք
իմանալ Աստծո օրենքը չեղյալ
համարելու հետևանքը: Նման
վարձ արդեն արվել է: Սոսկալի
էին այն իրադարձությունները,
որ տեղի ունեցան
Ֆրանսիայում, երբ աթեիզմը
գերիշխող ուժ դարձավ: Այն
ժամանակ աշխարհին ցույց

տրվեց, որ Աստծո կողմից
տրված սահմանափակումները
վերացնել՝ նշանակում է
ընդունել բռնակալներից
ամենադաժանի
կառավարությունը: Երբ
արդա-րության չափանիշը մի
կողմ է դրվում, չարի իշխանը
հնարավորություն է ստանում
երկրի վրա հաստատելու իր
իշխանությունը:

Այնտեղ, ուր մերժվում են
աստվածային պատվիրանները,
մեղքը դադարում է հանցավոր
թվալ, իսկ արդարությունը՝
ցանկափ: Նրանք, ովքեր

հրաժարվում են ենթարկվել
Աստծո կառավարութեանը,
բռնորոշին անգոր են
կառավարելու հենց իրենց:
Նրանց նենգամիտ
ուսմունքների միջոցով
անհնազանդությունն է
սերմանվում երեխաների ու
երիտասարդների սրտերում,
ովքեր էութեամբ հսկողություն
չեն հանդուրժում, և հետևանքը
լինում է հասարակության
անօրեն ու սանձարձակ
վիճակը: Մինչ ծաղրվում է
Նրանց հավատը, ովքեր
ենթարկվում են Աստծո
պահանջներին, [585]

հազարավորները
պատրաստակամորեն
ընդունում են սատանայի
խաբեուլթյունները: Նրանք
անձնատուր են լինում կրքերին
և գործում մեղքեր, որոնք
Աստծո դատաստաններն են
բերել հեթանոսների վրա:

Նրանք, ովքեր ժողովրդին
սովորեցնում են թեթևամտորեն
Նայել Աստծո
պատվիրաններին, սերմում են
խռովուլթյուն և վաղ թե ուշ
ամպ-րոպը կպայթի նրանց
գլխին: Թող միայն հանվեն
Աստծո օրենքով նշված

սահմանափակումները, և
մարդկային օրենքները շատ
շուտով կոտնահարվեն
բոյորովին: Քանի որ Աստված
արգելում է անազնիվ
գործարքները, ագահությունը,
ստախոսությունն ու
խարդախությունը, մարդիկ
պատրաստ են ոտնահարել Նրա
ցրվածքները՝ որպես իրենց
աշխարհային բարգավաճման
արդեյք, բայց այդ
պատվիրանների վե-րացման
հետևանքը այնպիսին կլինի, որ
Նրանք երբեք չեն սպասի: Եթե
օրենքը պարտադիր չլիներ,
ինչո՞ւ պիտի մարդ վախենար

այն խախտել: Ունեցվածքն
այլևս ապահով չէր լինի,
մարդիկ բռնությամբ կխլեին
ուրիշների սեփականությունը,
և ամենաուժեղը կդառնար
ամե-նահարուստը: Մարդու
կյանքը ևս չէր հարգվի:
Ամուսնական ուխտն այլևս
սրբազան պարիսպ չէր լինի
ընտանիքը պաշտպանելու
համար: Ցանկության դեպքում
ուժեղը բռնությամբ կտիրանար
իր դրացու կնոջը: Հինգերորդ
պատվիրանը կանտեսվեր
չորրորդի հետ միասին:
Երեխաները չէին վարանի խլել
իրենց ծնողների կյանքն

անգամ, եթե այդպիսով
կարողանային ձեռք բերել
իրենց ապականված սրտերի
փափագը: Քաղաքակիրթ
աշխարհն ավազակների ու
մարդասպանների բնակավայր
կդառնար, և խաղաղությունը,
հանգիստն ու երջանկությունը
կչքանային երկրի երեսից:

Ուսմունքն այն մասին, թե
մարդիկ ազատված են Աստծո
պահանջ-ներից
հնազանդվելուց, արդեն իսկ
թուլացրել է բարոյական
պարտակա-նության ուժը, և
անօրենությունը հեղեղել է

աշխարհը: Ոճիրը,
անառա-կությունն ու
ապականությունը կործանիչ
հոսանքի նման մեր գլխին են
թափվում: Սատանան
քայքայում է ընտանիքները:
Նրա դրոշը ծածան-վում է
նույնիսկ քրիստոնյա
կոչեցյալների տների վրա:
Ամենուրեք կարելի է տեսնել
նախանձ, չար կասկածներ,
կեղծավորություն, օտարացում,
մրցակցություն, կռիվներ,
սրբազան վստահության
դավաճանություն և կրքերի
բավարարում: Կրոնական
սկզբունքների և ուսմունքների

ողջ համակարգը, որ պիտի
հասարակական կյանքի հիմքն
ու շինվածքը լիներ, կարծես մի
խարխուլ զանգված լինի՝
պատրաստ վերածվելու
ավե-րակների: Ամենաստոր
ոճրագործները, երբ բանտ են
նետվում իրենց հանցանքների
համար, հաճախ պարզևների և
[586] ուշադրության են
արժանանում, կարծես թե
նախանձեփ ճանաչման են
հասել: Մեծապես գովազդվում
են նրանց բնավորությունն ու
հանցանքները: Մամուլը
հրա-պարակում է
ոճրագործաթյան նողկալի

մանրամասներ՝ մարդկանց
դրդելով խարդախության,
ավազակության ու
սպանության, և սատանան
ցնծում է իր դժոխային
ծրագրերի հաջողության
համար: Պղծության մոլուցքը,
անիմաստ
մարդասպանությունները,
ամեն տեսակի և աստի-ճանի
անզսպության ու
անօրենության ահռելի աճը
պետք է սթափեցնի բոլոր
նրանց, ովքեր վախենում են
Աստծուց, և մտածելու տեղիք
տա, թե ինչ կարելի է անել

չարի հոսքը կասեցնելու
համար:

Արդարադատության
ատյաններն ապականված են:
Իշխանավոր-ները գործում են
շահամոլության ու զգայական
հաճույքների մղումով:

Անժուժկալությունն այնպես է
բթացրել շատերի
ունակությունները, որ
սատանան գրեթե լիակատար
իշխանություն ունի նրանց
վրա: Արդա-րության
պաշտպաններն ապականված,
կաշառված ու անբարո են:
Հարբեցողություն ու

շվայտութիւն, կիրք, նախանձ
ու ամեն տեսակի
անազնվութիւն է տիրում
իրավապաշտպանների մեջ:
«Արդարութիւնը հեռու է
կանգնել, որովհետև
ճշմարտութիւնը գլորվում է
իրապարակում, և ուղղութիւնը
չի կարողանում ներս մտնել»
(Եսայիա 59.14):

Ամբարշտութիւնն ու հոգևոր
խավարը, որ տիրում էին Յոնմի
գերիշխանութեան օրոք, Սուրբ
Գրքի արգելման անխուսափելի
հետևանքն էին: Բայց որտե՞ղ
գտնել համատարած

անհավատության, Աստծո
օրենքի ոտնահարման և դրանց
հետևող ապականության
պատճառը ավետարանի
լուսարձակման ու կրոնական
ազատության այս
դարաշրջանում: Հիմա, երբ
սատանան այլևս ի գորու չէ
Սուրբ Գիրքը թաքցնելով իր
իշխանության տակ պահել
աշխարհը, նա ուրիշ միջոցների
է դիմում՝ հասնելու նույն
նպատակին: Կործանել
հավատն Ասավաճաշնչի
նկատմամբ՝ նույնքան ձեռնադր
է նրան, որքան հենց
Աստվածաշունչը կործանելը:

Նա այնպիսի հաջողութեամբ է
մարդկանց մղում
օրինազանցութեան՝ դրդելով
նրանց հավատալ, թե Աստծո
օրենքը պարտադիր չէ, կարծես
նրանք միանգամայն
անտեղյակ են դրա
պահանջներին: Եվ հիմա էլ,
ինչպես նախկին դարերում, իր
դիտավորությունն առաջ
տանելու համար նա գործում է
եկեղեցու միջոցով: Ներկայիս
կրոնական
կազմակերպությունները
հրաժարվել են ընդունել Սուրբ
Գրքում հստակորեն
բացահայտված ոչ

հանրաճանաչ
ճշմարտությունները, և
պայքարելով դրանց դեմ՝
որդեգրելեն
մեկնաբանություններ ու
դիրքորոշումներ, որոնք
ամենուրեք
կասկածամտության սերմեր են
ցանում: Կառչելով մարդու
բնական անմահության և
մահվան մեջ նրա [587]
գիտակից վիճակի մասին
պապական մոլորություններին՝
նրանք մերժել են
ոգեհարցության դեմ միակ
պաշտպանությունը: Ուսմունքը
հավիտենական տանջանքի

մասին շատերին դրդել է
չհավատալու Ասավաճաշնչին:
Ու երբ չորրորդ պատվիրանի
պահանջները բացատրվում են
մարդկանց, պարզվում է, որ
անհրաժեշտ է պահել յոթերորդ
օրվա շաբաթը, և որպես միակ
միջոց՝ ազատվելու իրենց
համար տիաճ այդ
պարտականությունից, շատ
հանրաճանաչ ուսուցիչներ
հայտարարում են, թե Աստծո
օրենքն այլևս պարտադիր չէ:
Այդպիսով՝ նրանք
ոտնահարում են օրենքն ու
շաբաթը միասին: Մինչ
ծավալվում է շաբաթի

հռչակման գործը,
աստվածային օրենքի այս
մերժումը կդառնա գրեթե
համընդհանուր՝ չորրորդ
պատվիրանի պահանջներից
խուսափելու համար:
Կրոնական առաջնորդների
ուսմունքները դուռ են բացել
անհավատության,
ոգեհարցության և Աստծո սուրբ
օրենքի հանդեպ
արհամարհական
վերաբերմունքի առաջ, և այս
առաջնորդների վրա է ընկնում
ահռելի
պատասխանատվությունն այն
անօրենության համար, որ

գոյութիւնն ունի
քրիստոնեական աշխարհում:

Այս նույն մարդիկ, սակայն,
պնդում են, որ արագորեն
տարածվող ապականութիւնը
մեծապես վերագրելի է այսպես
կոչված «քրիստոնեական
շաբաթի» սրբապղծմանը, և որ
կիրակի օրը պահելու
պարտադիր օրենքը
գլխավորապես կբարելավեր
հասարակութեան բարոյական
վիճակը: Այս գաղափարը
հատկապես պնդում են
Ամերիկայում, որտեղ ամենից
ավելի է քարոզվել ճշմարիտ

շաբաթի ուսմունքը: Այստեղ
զսպվածութեան կոչը՝
բարոյական
բարեփոխումներից
ամենակարևորն ու աչքի
ընկնողը, հաճախ համակցվում
է կիրակին պահելու շարժմանը,
և վերջինիս պաշտպաններն
իրենց ներկայացնում են որպէս
հասարակութեան բարձրագույն
շահերի ջատագովներ, իսկ
նրանք, ովքեր չեն կամենում
միանալ նրանց,
դատապարտվում են որպէս
զսպվածութեան ու
բարեփոխման թշնամիներ:
Բայց այն փաստը, որ

մուլորություն հաստատելու
շարժումը միավորված է մի
գործի հետ, որն ինքնին բարի է,
փաստարկ չէ հոգուս
մուլորության: Մենք կարող ենք
թույնը թաքցնել՝ խառնելով
այն որևէ առողջարար կերակրի
հետ, բայց նրա թունավոր
հատկությունը դրանից չի
վախվի: Ընդհակառակը, այն
ավելի վտանգավոր կդառնա,
քանզի, ամենայն
հավանականությամբ, չի
նկատվի: Սատանայի
հնարքներից մեկն է՝ ստի հետ
բավականաչափ
ճշմարտություն խառնել,

որպեսզի այն ճշմարտանման
թվա: Կիրակին պահելու
շարժման առաջնորդները
կարող են առաջարկել
բարեփոխումներ, [588] որոնք
անհրաժեշտ են ժողովրդին, և
սկզբունքներ, որոնք
ներդաշնակ են
Աստվածաշնչին, բայց երբ այս
ամենի հետ ներ-կայացվում է
մի պահանջ, որը հակառակ է
Աստծո օրենքին, Նրա
ծառաները չեն կարող միանալ
այդ շարժմանը: Ոչինչ չի
արդարացնի նրանց, ովքեր
ընդունում են մարդկային

դրվածքներ՝ արհամարհելով
Աստծո պատվիրանները:

Երկու մեծ կեղծիքի՝ հոգու
անմահության և կիրակի օրվա
սրբության միջոցով սատանան
մոլորեցնելու է ողջ աշխարհը:
Մինչ առաջինը հիմք է դնում
ոգեհարցության համար,
երկրորդը մտերմացնում է
Յոզովի հետ: Միացյալ
Նահանգների բողոքականները
առաջինն են ձեռք մեկնելու
անդունդի վրակով՝
ոգեհարցության ձեռքը բռնելու
համար, հետո անցնելով վիհի
վրայից՝ սեղմելու են

հռոմեական իշխանության
ձեռքը, և այս եռակի միության
ազդեցության տակ Ամերիկյան
գնալու է Յոնի հետքերով՝
ոտնահարելու խղճի
ազատությունը:

Քանի որ ոգեհարցությունը
գնալով ավելի է նմանվում
ձևական քրիստոնեությանը,
այն ավելի մեծ ուժ է դառնում
գայթակղեցնելու, խա-բելու և
թակարդը գցելու համար:
Սատանան ինքն էլ է կախվում
ժա-մանակի հետ: Նա
կհայտնվի լույսի հրեշտակի
կերպարանքով:

Ոգե-հարցութեան միջոցով մեծ
նշաններ են կատարվելու,
հիվանդները կբժշկվեն և շատ
անհերքելի հրաշքներ տեղի
կունենան: Եվ քանի որ
ոգիները կձևացնեն, թե
հավատում են Աստվածաշնչին,
և ցույց կտան, թե հարգում են
Եկեղեցական կանոնները,
նրանց գործն ընդունվելու է
որպես աստվածային
զորութեան դրսևորում:

Այսպես կոչված
քրիստոնյաներին ու
ամբարիշտներին բաժանող
սահմանն այսօր գրեթե

աննկատելի է: Եկեղեցու
անդամները սիրում են այն, ինչ
աշխարհն է սիրում, և
պատրաստ են միանալ նրան,
իսկ սատանան մտադիր է
միավորել նրանց մեկ մարմնի
մեջ և այդպիսով զորացնել իր
գործը՝ բռնորին ներքաշելով
ոգեհարցության շարքերը:
Պապականները, որ պարծենում
են հրաշքներով՝ որպես
ճշմարիտ եկեղեցու իսկական
նշան, հեշտությամբ խաբվելու
են այս հրաշագործ
զո-րությունից, և
բողոքականներն էլ, դեն գցելով
ճշմարտության վահանը,

Նրանց պես խաբվելու են:
Պապականները,
բողոքականները և
աշխարհասերները
հավասարապես
բարեպաշտության տեսք են
ընդունելու՝ առանց դրա
զորության, և այդ միության մեջ
նրանք տեսնելու են մի հզոր
շարժում, [589] որը դարձի
կբերի աշխարհը և կմոտեցնի
երկար սպաս-ված
հազարամյան:

Ոգեհարցության միջոցով
սատանան հայտնվում է որպես
մարդկային ցեղի բարերար՝

բուժելով ժողովրդի
հիվանդութիւնները և
հայտարարելով, թէ
ներկայացնում է հավատի նոր
ու ավելի վսեմ համակարգ,
բայց միեւնոյն ժամանակ
գործելու է որպէս կործանիչ:
Նրա փորձութիւնները
հազարավոր մարդկանց
տանում են կորստյան:
Անզսպութիւնը բթացնում է
բանականութիւնը, ինչին
հետևում են ցանկութիւնների
բավարարում, կռիվներ ու
արյունահեղութիւն:
Սատանան հրճվում է
պատերազմից, քանի որ այ ն

գրգռում է հոգու ամենասար
կրթերը և ապա վայրագ ու
արյունարբու իր զոհերին հրում
է դեպի կորստյան անդունդը:
Նրա նպատակն է՝ ազգերին
հրահրել իրար դեմ
պատերազմի, որովհետև այս
կերպ կարող է շեղել մարդկանց
մտքերը Աստծո օրվա համար
նախապատրաստվելուց:

Անպատրաստ հոգիների իր
հունձքը հավաքելու համար
սատանան գործում է նաև
բնության տարերքների
միջոցով: Նա ուսումնասիրել է
բնության գաղտնիքները և իր

ողջ ուժն օգտագործում է
տարերթները ղեկավարելու
համար, որքանով որ Աստված
թույլ կտա: Երբ նրան թույլ
տրվեց նեղութուն պատճառել
Յոբին, ի՛նչ արագությամբ
ոչնչացվեցին հոտերը, տները,
ծառաներն ու գավակները, մի
ակնթարթում մեկ
դժբախտությանը հաջորդեց
մյուսը: Աստված է, որ
պաշտպանում է իր
արարածներին՝ հետ պահելով
նրանց կործանիչի ուժից: Բայց
քրիստոնյա աշխարհն
արհամարհել է Եհովայի
օրենքը, և Տերն անելու է հենց

այն, ինչ հայտարարել է. Նա
գրկելու է երկիրն իր
օրհնություններից և իր
հոգատար պաշտպանությունը
հեռացնելու է նրանցից, ովքեր
ապստամբում են իր օրենքի և
ունմունքի դեմ՝ ստիպելով
ուրիշներին նույնն անել:
Սատանան իշխում է բոլոր
նրանց վրա, ում Աստված
հատուկ կերպով չի
պաշտպանում: Նա ոմանց
կօզնի բարգավաճել՝ իր
ծրագրերն առաջ տանելու
համար, իսկ մյուսների վրա
աղետներ կբերի՝ դրդելով

հավատալ, թե Աստված է իրենց
Նեղությունների պատճառը:

Ներկայանալով մարդկանց
որդիներին որպես մեծ բժիշկ,
ով կարող է բուժել նրանց բոլոր
ախտերը, նա միաժամանակ
հիվանդություն ու աղետներ
կբերի, և բազմամարդ
քաղաքներն ամայի
ավերակների կվե-րածվեն:
Չենց հիմա էլ նա այդ գործով է
գբաղված: Ծովի ու ցամաքի
վրա տեղի ունեցող վթարների
ու աղետների, ավերիչ
հրդեհների, կատաղի [590]
ցիկլոնների, ահռելի մրրիկների,

փոթորիկների, ջրհեղեղների,
վիթխարի ալեկոծությունների
ու երկրաշաբժերի մեջ՝
ամենուրեք և հազարավոր
ձևերով սատանան դրսևորում է
իր ուժը: Նա սրբում-տանում է
հասնող հունձքը՝ մարդկանց
մատնելով սովի ու
թշվառության: Նա օդի մեջ
մահացու վարակ է տարածում,
և հազարավորները մեռնում են
համաճարակից: Այս
նեղությունները գնալով ավելի
հաճախակի ու աղետալի են
դառնալու: Կործանումը վրա է
հասնելու թե՛ մարդկանց, թե՛
կենդանիներին: «Տխրելու,

տրտմելու է երկիրը»,
«նվաղելու են երկրի
ժողովուրդների մեծամեծերը:
Եվ երկիրը պղծված է լինելու իր
բնակիչների տակ, որովհետև
օրենքները զանց են արել,
պատվիրանը՝ փոխել,
հավիտենական ուխտը՝
խափանել» (Եսայիա 24.4,5):

Եվ ապա մեծ խաբեբան
համոզելու է մարդկանց, թե այդ
չարիքների պատճառը հենց
նրանք են, ովքեր ծառայում են
Աստծուն: Այն նույն մարդիկ,
ովքեր հարուցել են երկնքի
դժգոհությունը, իրենց բոլոր

Նեղությունների մեջ
մեղադրելու են նրանց, ում
հնազանդությունն Աստծո
պատվիրաններին մշտական
հանդիմանություն է
օրինազանցների համար:
Կհայտարարվի, թե մարդիկ
Աստծուն անարգում են՝
խախտելով կիրակի օրը, թե
հենց այս մեղքն է աղետներ
բերել, որոնք չեն դադարի,
մինչև որ ուժով չպարտադրվի
պահել կիրակին, և թե նրանք,
ովքեր ներկայացնում են
չորըորդ պատվիրանի
պահանջները՝ այդ կերպ
նսեմացնելով կիրակին,

շփոթեցնում են ժողովրդին՝
թույլ չտալով վերագտնել
Աստծո բարեհաճությունն ու
աշխարհիկ բարեկեցությունը:
Այսպես կկրկնվի մեղադրանքը,
որ անցյալում հարուցվեց
Աստծո ծառայի դեմ, այն էլ՝
միևնույն
պատճառաբանությամբ: «Յենց
որ Աքաաբը եղիային տեսավ,
իսկույն ասաց նրան. Սա դո՞ւ
ես, ով հարայելը խռովեցնող: Եվ
նա ասաց. Ես չեմ խռովեցրել
հարայելը, այլ դու և քո հոր
տունը, որ թողնելով Տիրոջ
պատվիրանները՝ գնում ես
Բահաղների ետևից» (Գ

Թագավորաց 18.17,18): Երբ
ժողովրդի բարկութիւնը
բորբոքվի սուտ
մեղադրանքների պատճառով,
նա այնպես կվարվի Աստծո
դեսպանների հետ, ինչպես
ուխտադրուժ Իսրայելը՝ Եղիայի
հետ:

Ոգեհարցութեան միջոցով
դրսևորվող հրաշագործ ուժն
[591] իր ազդեցութիւնը կգործի
նրանց դէմ, ովքեր
նախընտրում են հնազանդվել
Աստծուն, քան թէ մարդկանց:
Ոգիները մեղիումների
միջևորդութեամբ լուրեր

կհռչակեն, թե Աստված
ուղարկել է իրենց՝ համոզելու
կիրակին մերժողներին, որ
Նրանք մոլորված են՝ պնդելով,
որ պետության օրենքներին
պետք է հնազանդվել ճիշտ
այնպես, ինչպես Աստծո
օրենքին: Նրանք կձևացնեն, թե
ողբում են աշխարհում տիրող
մեծ ամբարշտության հա-մար և
կկրկնեն կրոնական
ուսուցիչների այն
վկայությունը, թե բարոյա-կան
անկման պատճառը կիրակիի
անարգումն է: Մեծ է լինելու
զայրույթը Նրանց դեմ, ովքեր

Կիրաժարվեն ընդունել նրանց
վկայությունը:

Աստծո ժողովրդի դեմ այս
վերջին պայքարում սատանայի
քաղա-քականությունը լինելու
է նույնը, ինչ որ եղել է
երկնքում՝ մեծ պայքարի
սկզբում: Նա հայտարարել էր,
թե ձգտում է նպաստել Աստծո
կառավար-ման կայունությանը,
մինչդեռ գաղտնաբար ջանք չէր
խնայում՝ տապա-լելու այն:
Ընդորոում նա մեղադրեց
հավատարիմ հրեշտակներին
այն նույն գործում, ինչ ինքը
եռանդագին ձգտում էր

իրականացնել: Խաբեության
այդ նույն քաղաքականությամբ
է նշանավորվել Յռոմի եկեղեցու
պատ-մությունը: Այն
ներկայացել է որպես երկնքի
փոխանորդ՝ միաժամանակ
ձգտելով իրեն գերադասել
Աստծուց և փոխել Նրա օրենքը:
Նրանք, ովքեր Յռոմի
իշխանության օրոք մահվան
էին դատապարտվում
Ավետարանին հավատարիմ
մնալու համար, մեղադրվում
էին որպես չարագործներ:
Նրանց համարելով սատանայի
դաշնակիցները՝ հնարավոր
ամեն միջոց օգտագործում էին,

որպեսզի նրանք
խայտառակվեն ժողովրդի
առաջ և հենց իրենց իսկ աչքին
երեսան որպես ծայրագայն
հանցագործներ: Նույնն էլ
հիմա է լինելու: Ջանալով
կործանել նրանց, ովքեր
պատվում են Աստծո օրենքը,
նա դրդելու է մեղադրել նրանց
որպես օրինազանցների, ովքեր
անպատվում են Աստծուն և
աշխարհի վրա բերում նրա
դատաստանները:

Աստված երբեք չի բռնանում
մարդու կամքին կամ խղճին,
իսկ սա-տանան մշտապես

դիմում է բռնության ա
դաժանության՝ իր
իշխա-նությանը
ենթարկեցնելու նրանց, ում այլ
կերպ չի կարող մոլորեցնել:
Վախի կամ ուժի միջոցով նա
ջանում է տիրել մարդու խղճին
և հարգանք ապահովել իր
հանդեպ: Այդ նպատակին
հասնելու համար նա
օգ-տագործում է թե՛
կրոնական, թե՛ աշխարհիկ
իշխանությունները՝ մղելով
նրանց պարտադրել
մարդկային օրենքներ՝
հակառակ Աստծո օրենքի: [592]

Նրանք, որ պատվում են
աստվածաշնչյան շաբաթը,
մեղադրվելու են որպես
հասարակական
կարգուկանոնի և օրենքի
թշնամիներ, ովքեր անցնելով
բարոյական նորմերի
սահմանները՝
անիշխանություն և
ապականություն են բերում և
երկրի վրա հրավիրում Աստծո
դատաստանները: Նրանց
բժախնդրությունը համարելու
են համառություն,
կամակորություն և
արհամարհանք
իշխանությունների հանդեպ:

Նրանք մեղադրվելու են որպես
խռովարարներ
կառավարության դեմ:
Եկեղեցական շատ
ծառայողներ, չեղյալ
հայտարարելով Աստծո օրենքը,
ամբիոններից կոչ են անելու
քաղաքացիական
իշխանություններին
ենթարկվելի քանի որ նրանք
կարգված են Աստծո կողմից:
Օրենսդրական և դատական
ատյաններում
պատվիրանապահները
կգրպարտվեն ու
կդատապարտվեն: Նրանց
խոսքերին կեղծ երանգներ

Կտրվեն, իսկ դրդումները
կմեկնաբանվեն
վատթարագույն իմաստով:

Քանի որ բողոքական
եկեղեցիները մերժում են
սուրբգրային հստակ
փաստարկները՝ ի
պաշտպանութուն Աստծո
օրենքի, նրանք ձգտելու են
լռեցնել նրանց, ում հավատն
անկարող են սասանել
Աստվածաշնչով: Իրենց աչքերը
փակելով այդ փաստի վրա՝
նրանք հիմա ընտրել են մի
ուղի, որը կհասցնի
հալածանքների նրանց

հանդեպ, ովքեր համառորեն
հրաժարվում են ճանաչել
քրիստոնեական ողջ աշխարհի
կողմից ընդունված պապական
շաբաթի պահանջները:

Եկեղեցական ու պետական
պաշտոնյաները կմիավորվեն,
որպեսզի կաշառեն, համոզեն
կամ ստիպեն բոլոր խավերին
պատվելու կիրակին:

Աստվածային հեղինակության
պակասը կլրացվի բռնի
օրենքներով: Քաղաքական
ապականությունը կործանում է
սերն արդարության և
հարգանքը ճշմարտության

հանդեպ: Եվ նույնիսկ ազատ
Ամերիկայում իշխանավորներն
ու օրենսդիրները ժողովրդի
համակրանքը շահելու հա-մար
տեղի կտան նրա պահանջին և
կընդունեն օրենք, որը
կպարտադրի պահել կիրակին:
Խղճի ազատությունը, որը ձեռք
է բերվել այդքան թանկ գնով,
այլևս չի հարգվելու: Վերահաս
պայքարի մեջ մենք կտեսնենք
մար-գարեի այս խոսքերի
իրականացումը. «Եվ վիշապը
բարկացավ կնոջ վրա և գնաց
պատերազմ անելու նրա մյուս
զավակների հետ, որ պահում
են Աստծո պատվիրանները և

ունեն Յիսուսի վկայութիւնը»
(Յայտնութիւն 12.17): [593]

ԳԼՈՒԽ 37—ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ ՈՐՊԵՍ ՄԻԱԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

«Օրենքին ու վկայությանը
դիմեցեք, եթե նրանք չխոսեն
այս խոսքի համեմատ, նրանք
արշալույս չունեն» (Եսայիա
8.20): Այս խոսքերն Աստծո
ժողովրդին ուղղում են դեպի
Սուրբ Գիրքը՝ որպես
պաշտպանության կեղծ
ուսուցիչներից և խավար
ոգիների մոլորեցուցիչ
գայթակղությունից: Սատանան
դիմում է ամեն տեսակ
հնարքների, որպեսզի թույլ

չտա մարդկանց ձեռք բերել
աստվածաշնչյան գիտելիքներ,
քանզի դրա հստակ դրույթները
բացահայտում են իր
խաբեությունները: Աստծո
գործի յուրաքանչյուր
վերածննդի ժամանակ չարի
իշխանն ավելի բուռն
գործունեություն է ծավալում:
Նա հիմա ներդնում է իր
գերագույն ջանքերը Քրիստոսի
և Նրա հետևորդների դեմ իր
վերջին պայքարին
պատ-րաստվելու համար:
Շուտով մենք ականատես
կլինենք վերջին մեծ
խա-բեությանը:

Չակաքրիստոսը մեր աչքերի
առաջ հրաշքներ է գործելու:
Կեղծիքն այնքան նման է
լինելու ճշմարտությանը, որ
միայն Սուրբ Գրքով հնարավոր
կլինի դրանք իրարից
զանազանել: Յուրաքանչյուր
պնդում կամ հրաշք պետք է
ստուգվի հենց Աստվածաշնչի
վկայությամբ:

Նրանց, ովքեր ջանու մ են
հնազանդվել Աստծո բոլոր
պատվիրաններին,
կվարկաբեկեն ու
կարհամարհեն: Նրանք կարող
են հաստատ մնալ միայն

Աստծով: Սպասվող
փորձութեանը դիմակայելու
համար Նրանք պետք է
հասկանան Աստծո կամքը՝
բացահայտված Նրա խոսքում:
Նրանք կարող են փառավորել
Նրան, միայն եթե ճիշտ
պատկերացում ունենան Նրա
բնավորության, կառավարման
ու նպատակների մասին, և
գործեն դրանց համաձայն:
Բացի նրանցից, ովքեր իրենց
միտքն ամրապնդել են
Աստվածաշնչի
ճշմարտություններով, ոչ ոք չի
կարողա-նալու կանգնել վերջին
մեծ [594] պայքարում:

Յուրաքանչյուրին սպաս-վում է
այս քննությանը, ո՞ւմ եմ ես
հնազանդվելու՝ Աստծո՞ւն, թե՞
մարդ-կանց: Վճռորոշ ժամն
արդեն իսկ շատ մոտ է: Ամուր
կանգնա՞ծ ենք արդյոք Աստծո
անփոփոխ խոսքի ժայռի վրա:
Պատրա՞ստ ենք արդյոք
պաշտպանելու Աստծո
պատվիրաններն ու Յիսուսի
հավատը, ինչ գնով էլ լինի:

Խաչելությունից առաջ Փրկիչն
իր աշակերտներին բացատրեց,
որ պիտի մահվան մատնվի և
հարություն առնի գերեզմանից,
և հրեշ-տակները ներկա էին,

որպեսզի տպավորեն Նրա
խոսքերը նրանց մտքե-րում և
սրտերում: Բայց աշակերտները
սպասում էին քաղաքական
ազա-տագրման Յոնի լծից և
չկարողացան հանդուրժել այն
միտքը, թե Նա, ում մեջ
կենտրոնացած էին իրենց բոլոր
հույսերը, պիտի մեռնի
ամոթալի մահով: Խոսքերը, որ
նրանք պետք է հիշեին, չքացել
էին նրանց մտքից, ու երբ եկավ
փորձության ժամը, նրանք
անպատրաստ գտնվեցին:
Յիսուսի մահն այնպես
հիմնովին խորտակեց նրանց
հույսերը, կարծես Նա չէր ել

Նախագգուշացրել այդ մասին:
Այդպես էլ
մարգարեություններում
ապագան մեզ բացահայտված է
Նույնքան հստակորեն, որքան
Քրիստոսի խոսքերն էին
բացահայտված
աշակերտներին: Մեր առջև
պարզորոշ ներկայացված են
փորձության ժամանակվա
ավարտի և մեծ նեղությանը
պատրաստվելու հետ կապված
իրադարձությունները, սակայն
շատերը գաղափար անգամ
չունեն այս կարևոր
ճշմարտությունների մասին,
կար-ծես դրանք բնավ էլ

հայտնված չեն եղել իրենց:
Սատանան արթուն հե-տևում է՝
չեզոքացնելու ամեն մի
տպավորություն, որը նրանց
իմաստուն կդարձնի փրկության
համար, որպեսզի նեղության
ժամանակը նրանց
անպատրաստ գտնի:

Երբ Աստված մարդկանց
ուղարկում է այնքան կարևոր
նախազգուշացումներ, որ
դրանք հռչակում են երկնքի
մեջտեղում թռչող
հրեշտակները, Նա պահանջում
է ամեն մի անհատից, ով
օժտված է մտածելու

կարողութեամբ, ականջ դնել
լուրին: Ահեղ դատաստանները,
որ սպասվում են նրանց, ովքեր
կերկրպագեն գազանին ու նրա
պատկերին (Յայտնութիւն
14.9-11), պետք է բոլորին դրդեն
մարգարեութիւնների ուշադիր
ուսումնասիրութեանը՝
իմանալու համար, թե որն է
գազանի դրոշմը, և ինչպես
խուսափել այն ընդունելուց:
Բայց ժալովրդի զանգվածներն
իրենց ականջները փակում են,
որպեսզի չլսեն
ճշմարտութիւնը, և դիմում են
առասպելների: Վերջին օրերի
մասին Պողոս առաքյալը

հռչակել է. «Ժամանակ կգա, որ
ողջամիտ [595]

վարդապետությանը չեն
համբերի» (Բ Տիմոթեոս 4.3):

Այդ ժամանակն արդեն եկել է:
Չազարավորները չեն ուզում
ընդունել Աստվածաշնչի
ճշմարտությունը, որովհետև
այն անհարիր է նրանց
մեղավոր, աշխարհասեր սրտի
ցանկություններին, և
սատանան մատուցում է
կեղծիքներ, որոնք նրանք
սիրում են:

Բայց Աստված երկրի վրա ունի
մի ժողովուրդ որի համար

Աստվածաշունչն է բոլոր
ուսմունքների չափանիշը և
բոլոր բարեփոխումների հիմքը:
Ո՛չ ուսյալ մարդկանց կարծիքը,
ո՛չ գիտության
եզրահանգումները, ո՛չ
եկեղեցական ժողովների
դոգմաները կամ որոշումները,
որոնք նույնքան բազմաթիվ ու
իրարամերժ են, որքան դրանք
ներկայացնող եկեղեցիները,
սրանցից ոչ մեկը և ոչ էլ բոլորը
միասին չպետք է ապացույց
համարվեն կրոնական հավատի
որևէ կետի դեմ կամ դրա
օգտին: Մինչև որևէ ուսմունք
կամ պատվիրան ընդունելը՝

մենք պետք է պահանջենք
հստակ վկայություն՝ որպես
դրա ապացույց՝ «այսպես է
ասում Տերը»:

Սատանան անդադար ջանում է
մեր ուշադրությունը Աստծուց
շեղել մարդկանց վրա: Նա
մարդկանց դրդում է իրենց
պարտականությունն իմանալու
համար Սուրբ Գիրքը
ինքնուրույն ուսումնասիրելու
փոխարեն դիմել
եպիսկոպոսներին, հովիվներին
կամ աստվածաբանության
դոկտորներին: Այնուհետև,
վերահսկելով այս

առաջնորդների միտքը՝ նա
կարող է ներգործել
հազարավորների վրա՝ իր
կամքի համաձայն:

Երբ քրիստոսը եկավ կյանքի
խոսքեր ասելու, հասարակ
ժողովուրդը Նրան
ուրախությամբ լսեց, և նույնիսկ
քահանաներից ու իշխաններից
շատերը հավատացին Նրան:
Բայց գլխավոր քահանաներն ու
ազգի առաջնորդները վճռել էին
դատապարտել և մերժել Նրա
ուսմունքը: Թեև Նրանք խճճվել
էին Նրա դեմ մեղադրանքներ
գտնելու իրենց բոլոր

ջանքերում, թեև չէին կարող
չզգալ Նրա խոսքերին ուղեկցող
աստվա-ծային զորության և
իմաստության ազդեցությունը,
սակայն փակվելով
Նախապաշարումների մեջ՝
Նրանք մերժեցին այն
ամենապարզ ապա-ցույցը, որ
Նա Մեսիան է, որպեսզի
ստիպված չլինեին Նրա
աշակերտները դառնալ:
Ժողովուրդին սովորեցրել էին
դեռ մանկությունից հարգել
Չիսուսի այս
հակառակորդներին, ում
հեղինակության առջև Նրանք
անխոս խոնարհվում էին:

«Ինչո՞ւ մեր իշխանները և
ուսյալ դպիրները չեն
հավատում Յիսուսին,—
հարցնում էին Նրանք,— եթե
Նա իրոք Քրիստոսը լիներ,
մի՞թե այս բարեպաշտ մարդիկ
[596] չէին ընդունի Նրան»:
Նման ուսուցիչների
ազդեցությունն էր, որ դրդեց
հրեա ազգին մերժելու իր
Փրկչին:

Այն նույն ոգին, որով
ներշնչված էին այդ
քահանաներն ու իշխանները,
այսօր էլ դրսևորվում է շատերի
մոտ, ովքեր իրենց խիստ

բարեպաշտ են ձևացնում:
Նրանք հրաժարվում են քննել
Սուրբ Գրքի վկայությունը
Ներկա ժամանակվա հատուկ
ճշմարտությունների
վերաբերյալ: Մատ-նանշելով
իրենց մեծաթիվ փնելը,
հարստությունն ու
ժողովրդականություն-ը՝
Նրանք արհամարհանքով են
Նայում ճշմարտության
սակավաթիվ, աղքատ ու
աննշան ջատագույներին,
ովքեր մի հավատ ունեն, որը
Նրանց բաժանում է աշխարհից:

Քրիստոսը գիտեր, որ իրենց
հեղինակության մեծարումը
դպիրների ու փարիսեցիների
կողմից չի ավարտվելու
իրեաների ցրվելով:
Մարգա-րեական հայացքով Նա
տեսավ մարդկային
իշխանության բարձրացումը,
որ պիտի վերահսկեր խիղճը,
ինչը բոլոր դարերում
սարսափելի անեծք է եղել
եկեղեցու համար: Եվ Նրա
ահավոր հանդիմանություններ
դպիրների ու փարիսեցիների
հասցեին, ինչպես նաև
ժողովրդին տված Նրա
Նախազգուշացումները այդ

ԿՈԼՅՐ առաջնորդներին
չհետեւելու վե-րաբերյալ,
արձանագրվել են որպէս խրատ
ապագա սերունդներին:

Հռոմեական եկեղեցին Սուրբ
Գրքի մեկնաբանության
իրավունքը վերապահում է
կղերականներին:

Պատճառաբանելով, թէ միայն
հոգևորականներն են իրազեկ՝
բացատրելու Աստծո խոսքը,
նրանք այն թաքցնում են
հասարակ ժողովրդից: Թեև
Բարենորոգումը բոլորին
մատ-չելի դարձրեց Սուրբ
Գիրքը, սակայն Հռոմի

որդեգրած նույն սկզբունքը
շատերին թույլ չի տալիս
բողոքական եկեղեցիներում
ինքնուրույն ու-սումնասիրել
Աստվածաշունչը: Նրանց
սովորեցնում են ընդունել
Աստվածաշնչի ուսմունքն
այնպես, ինչպես մեկաբանվում
է եկեղեցու կողմից, և
հազարավոր մարդիկ չեն
համարձակվում որևէ բան
ընդունել, որ հակասում է իրենց
հավատին կամ իրենց եկեղեցու
ուսմունքին, որքան էլ
պարզորոշ բացահայտված լինի
Սուրբ Գրքում:

Թեև Աստվածաշունչը լի է կեղծ
ուսուցիչների դեմ
Նախագգուշացումներով,
շատերը պատրաստ են
հոգևորականներին հանձնել
իրենց հոգիների
պահպանությունը: Այսօր
հազարավորներն իրենց կրոնի
դավանաբանական կետերի
համար այլ բացատրություն չեն
կարող տալ, բացի նրանից, որ
իրենց այդպես սովորեցրել են
իրենց կրոնական
առաջնորդները: Նրանք գրեթե
ուշադրություն չեն դարձնում
Փրկչի ուսմունքի [597] վրա և
անվերապահորեն վստահում

են ծառայողների խոսքերին:
Բայց մի՞թե ծառայողներն
անսխալական են: Ինչպե՞ս
կարող ենք մեր հոգիները
Նրանց վստահել, եթե Աստծո
խոսքից չիմանանք, որ Նրանք
լույս ունեն: Աշխարհի
արորված ճանապարհից դուրս
գալու բարոյական քաջության
պակասը շատերին դրդում է
գնալ ուսյալ մարդկանց
հետքերով, և խոսքն
ինքնուրույն ուսումնասիրելու
իրենց դժկամությամբ՝ Նրանք
անհուսալիորեն խճճվում են
մոլորության շղթաներում:
Նրանք տեսնում են, որ Ներկա

Ժամանակի համար
ճշմարտությունը հստակորեն
բացահայտված է
Աստվածաշնչում, և զգում են
դրա հռչակմանն ուղեկցող
Սուրբ Հոգու զորությունը,
սակայն կղերականության
ընդդիմությանը թույլ են տալիս
իրենց հեռու պահել լույսից:
Թեև բանականությունն ու
խիղճը համոզվում են, այս
մոլորյալ անձինք չեն
համարձակվում իրենց
քարոզչին հակառակ մտածել, և
իրենց անհատական
դատողությունն ու
հավիտենական շահերը

գոհաբերում են մեկ ուրիշի
անհավատությանը,
հպարտությանն ու
նախապաշարումներին:

Բազմաթիվ են ձևերը, որոնցով
սատանան գործում է
մարդկային ազդեցության
միջոցով՝ իր գերիներին
շղթայելու համար: Շատերին
նա գերում է՝ համակրանքի
թավշյա թելերով նրանց
կապելով մարդկանց հետ,
ովքեր Քրիստոսի խաչի
թշնամիներն են: Թե ինչպիսին
է այս կապվածությունը՝
ծնողական, որդիական,

ամուսնական կամ
հասարակական, արդյունքը
նույնն է. ճշմարտության
հակառակորդները ջանքեր չեն
խնայում՝ վերահսկելու խիղճը,
իսկ նրանց իշխանության տակ
պահվող հոգիները բավական
քաջություն կամ
անկախություն չունեն՝
ենթարկվելու պարտքի
անձնական զգացումին:

Ճշմարտությունն ու Աստծո
փառքն անբաժանելի են:
Չնարավոր չէ պատվել
Աստծուն սխալ
գաղափարներով, երբ

Աստվածաշունչը մատչելի է
մեզ: Շատերը պնդում են, թե
Էական չէ՝ մարդը ինչի է
հավատում, կարևորը ճիշտ
ապրելն է: Բայց հենց հավատն
է ձևավորում կյանքը: Եթե
լույսն ու ճշմարտությունը
հասանելի են մեզ, իսկ մենք
անտեսում ենք այն լսելու և
տեսնելու առավելությունը,
մենք, ըստ էության, մերժում
ենք այն՝ նսկիրնտրելով
խավարը լույսից:

«Կա ճանապարհ, որ մարդուն
ուղիղ է թվում, բայց նրա
վախճանը մահվան

ճանապարհներ են» (Առակաց
16.25): Տգիտությունը չի
արդարացնում մոլորությունը
կամ մեղքը, երբ ամեն
հնարավորություն կա՝ [598]
իմանալու Աստծո կամքը:
Ճամփորդելիս մի մարդ
հասնում է խաչմերուկ,
որտեղից մի քանի
ճանապարհներ են բաժանվում,
և դրված է ցուցանակ, թե
յուրաքանչյուրն ուր է տանում:
Եթե անտեսելով
նշատախտակը՝ նա ընտրի այն
ուղին, որն իրեն ճիշտ է թվում,
ապա նա, որքան էլ անկեղծ
լինի, ամենայն

հավանականությամբ,
կհայտնվի սխալ ճանապարհի
վրա:

Աստված տվել է մեզ իր խոսքը,
որպեսզի ծանոթանանք նրա
ուս-մունքին և ինքնուրույն
իմանանք, թե Նա ինչ է
պահանջում մեզնից: Երբ
օրենսգետը Ջիսուսի մոտ եկավ՝
հարցնելու, թե «Ի՞նչ անեմ, որ
հա-վիտենական կյանքը
ժառանգեմ», Փրկիչը նրա
ուշադրությունը հրավիրեց
Սուրբ Գրքի վրա՝ ասելով. «Ի՞նչ
է գրված օրենքում, ինչպե՞ս ես
կարդում»: Անգիտությունը չի

արդարացնի երիտասարդին
կամ ծերին, ոչ էլ կազատի
նրանց Աստծո օրենքը
խախտելու պատժից,
որովհետև նրանց ձեռքում է
այդ օրենքը և նրա
սկզբունքներն ու պահանջները
ներկայացնող ճշմարիտ
վկայությունը: Բավական չէ
բարի մտադրություններ
ունենալ, բավական չէ անել
այն, ինչը մարդուն ճիշտ է
թվում, կամ քարոզիչն է ճիշտ
համարում: Նրա հոգու
փրկությունը վտանգի տակ է, և
նա պետք է անձամբ քննի
Սուրբ Գիրքը: Որքան էլ ուժեղ

լինեն նրա համոզմունքները,
որքան էլ նա վստահ լինի, որ
ծառայողը ճշմարտությունը
գիտի, դա չպետք է լինի նրա
հավատի հիմքը: Նա ունի մի
քարտեզ, որի վրա նշված են
երկինք տանող ճանապարհի
բոլոր ուղենիշները, և նա
կարիք չունի ինչ-որ բան
կռահելու:

Յուրաքանչյուր բանական
էակի առաջին և ամենաբարձր
պարտականությունն է՝
սովորել Սուրբ Գրքից, թե որն է
ճշմարտությունը, և ապա քայլել
լույսի մեջ՝ ուրիշներին

քաջալերելով հետևելու իր
օրինակին: Մենք պետք է
օրեցօր ջանասիրաբար
ուսումնասիրենք
Աստվածաշունչը՝
կրշռադատելով յուրաքանչյուր
միտք և համեմատելով
տեքստերը: Աստվածային
օգնությամբ մենք պետք է մեր
անձնական կարծիքը կազմենք,
քանզի յուրաքանչյուրն
անձամբ պետք է պատասխան
տա Աստծո առաջ:

Աստվածաշունչում
բացահայտված ամենապարզ
ճշմարտությունները

կասկածներով ու խավարով են
պատվել ուսյալ մարդկանց
կողմից, ովքեր, հավակնելով
մեծ իմաստության,
սովորեցնում են, թե Սուրբ
Գիրքն ունի խորհրդավոր,
գաղտնի և հոգևոր
նշանակություն, որը գրքի
լեզվով չի երևում: Այս մարդիկ
կեղծ ուսուցիչներ են: Յենց
նրանց [599] նմաններին
Յիսուսը հայտարարեց. «Ո՛չ
Գիրքը գիտեք, ո՛չ էլ Աստծո
զորությունը» (Մարկոս 12.24):
Աստվածաշնչի լեզուն պետք է
մեկնաբանվի իր ուղղակի
նշանակությամբ, եթե չկա

Խորհրդանշան կամ
փոխաբերություն: Քրիստոսը
խոստացել է. «Եթե մեկն ուզում
է նրա կամքը կատարել, նա
կհմանա այս
վարդապետության մասին»
(Յովհաննես 7.17): Եթե
Աստվածաշունչն ընդունվեր
ինչպես գրված է, եթե չլինեին
կեղծ ուսուցիչներ, ովքեր
մոլորեցնում և շվարեցնում են
մարդկանց միտքը, մի այնպիսի
գործ կկատարվեր, որը
կուրախացներ հրեշտակներին
և Քրիստոսի փարախը կբերեր
հազարավոր հոգիներ, ովքեր

այսօր խարխափում են
խավարի մեջ:

Սուրբ Գիրքն ուսումնասիրելիս
պետք է լարել մտքի բոլոր
ուժերը, որպեսզի մեր
հասկացողությունն ըմբռնի
Աստծո մտադրությունների
խորությունը, որքանով որ դա
հասանելի է
մահկանացուներին: Սակայն
չպետք է մոռանալ, որ
ուսումնասիրողի իրական ոգին
մանկական պարզամտությունն
ու հնազանդությունն է:
Աստվածաշնչի դժվարիմաց
մասերը երբեք չեն հասկացվի

այն մեթոդներով, որոնք
օգտագործվում են
փիլիսոփայական խնդիրները
լուծելիս: Մենք պետք է Սուրբ
Գրքի ուսումնասիրության
անցնենք ոչ թե
ինքնավստահությամբ, որով
շատերը մրանում են
գիտության ասպարեզ, այլ
աղոթքով ապավինելով
Աստծուն և Նրա կամքն
իմանալու անկեղծ
ցանկությամբ: Մենք պետք է
խոնարհու-թյամբ և սովորելու
պատրաստ ոգով գանք
գիտելիքներ ստանալու մեծ «
ես եմ»—ից: Այլապես չար

հրեշտակներն այնպես
կկուրացնեն մեր միտքն ու
կխստացնեն մեր սրտերը, որ
ճշմարտությունը չի տպավորվի
մեր մեջ:

Սուրբ Գրքի շատ հատվածներ,
որոնք նույնիսկ գիտուններն
առեղծ-վաճ են համարում կամ
շրջանցում են որպես
անկարևոր, փ են
մխիթա-րությամբ և
խրատներով նրա համար, ով
սովորել է Քրիստոսի դպրոցում:
Պատճառներից մեկը, թե ինչու
շատ աստվածաբաններ
հստակորեն չեն հասկանում

Աստճո խոսքը, այն է, որ նրանք
անտեսում են այն
ճշմար-տությունները, որոնք
չեն կամենում կենսագործել:
Սուրբգրային ճշմար-տության
ըմբռնումը կախված է ոչ
այնքան մտքի կարողությունից,
որքան նպատակին հասնելու
ձգտումից ու արդարության
անկեղծ փափագից:

Աստվածաշունչը երբեք չպետք
է ուսումնասիրվի առանց
աղոթքի: Միայն Սուրբ Հոգին
կարող է մեզ զգացնել տալ
հեշտ [600] հասկացվող բաների
կարևորությունը կամ արգելել

մեզ մի կողմ գցելու դժվարիմաց
ճշմարտությունները: Երկնային
հրեշտակների գործն է՝
Նախապատրաստել մեր
սրտերն այնպես ըմբռնելու
Աստծո խոսքը, որ
հրապուրվենք նրա
գեղեցկությամբ,
հանդիմանվենք նրա
Նախազգուշացումներից կամ
խանդավառվենք ու զորանանք
նրա խոստումներով: Մենք
պետք է մերը դարձնենք
սաղմոսերգուհի խնդրանքը.
«Բաց արա իմ աչքերը,
որպեսզի քո օրենքի հրաշքները
տեսնեմ» (Սաղմոս 119.18):

Փորձությունները հաճախ
անհաղթահարելի են թվում,
որովհետև ան-տեսելով աղոթքն
ու Աստվածաշնչի
ուսումնասիրությունը՝
փորձվողը չի կարողանում
անմիջապես հիշել Աստծո
խոստումները և սատանային
դիմավորել Սուրբ Գրքի զենքով:
Բայց նրանք, ովքեր պատրաստ
են Աստծուց սովորելու,
շրջապատված են
հրեշտակներով, որոնք մեծ
փոր-ձության ժամանակ
կհիշեցնեն նրանց հենց այն
ճշմարտությունները, որոնք
պետք են: Այդպիսով՝ «երբ

թշնամին գետի պես գա, Տիրոջ
Յոգին դրոշ կբարձրացնի նրա
դեմ» (Եսայիա 59.19, անգլ.
թարգմ.):

Յիսուսը խոստացավ իր
աշակերտներին. «Մխիթարիչը՝
Սուրբ Յոգին, որ Յայրը
կուղարկի իմ անուկով, նա
ամեն բան կսովորեցնի ձեզ և
կհիշեցնի ձեզ այն ամենը, ինչ
որ ձեզ ասացի» (Յովհաննես
14.26): Բայց Քրիստոսի դասերը
պետք է նախապես
տպավորված լինեն մտքում,
որպեսզի Աստծո Յոգին
վտանգի ժամանակ դրանք

հիշեցնի մեզ: «Իմ սրտում
թաքցրի քո խոսքերը,— ասում է
Դավիթը,— որ չմեղանջեմ քո
դեմ» (Սաղմոս 119.11):

Բոլոր նրանք, ում համար թանկ
են իրենց հավիտենական
շահերը, պիտի զգուշանան,
որպեսզի կասկածամտությունը
չներխուժի իրենց կյանքը:
Ճշմարտության սյուներն իսկ
ենթարկվելու են հարձակման:
Անհնար է խուսափել
ժամանակակից
անհավատության ծաղրական
հարձակումներից, նրա
նենգավոր ու ավերիչ

ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԻԿ: Սատանան
հարմարեցնում է իր
փորձությունները բոլոր
խավերի մարդկանց:
Անկիրթների վրա նա
հարձակվում է կատակով ու
ծաղրով, մինչդեռ ուսյալներին
դիմավորում է գիտական
առարկություններով ու
փիլիսոփայական
փաստարկներով՝ երկու
դեպքում էլ նպատակը
անվստահություն կամ
արհամարհանք ներշնչելն է
Սուրբ Գրքի նկատմամբ:
Նույնիսկ անփորձ
երիտասարդներն են

համարձակվում կասկածներ
սերմանել քրիստոնեության
գլխավոր [601] սկզբունքների
վերաբերյալ: Եվ այս դեռահաս
անհավասարությունը, թեև
մակերեսային, բայց իր
ազդեցությունն է թողնում:
Շատերն այսպիսով դրդվում են
ծաղրելու իրենց հայրերի
հավատը և նախատելու շնորհի
Յոզու (Եբրայեցիս 10.29):
Շատերի կյանքը, որ կարող էր
պատիվ բերել Աստծուն և
օրհնություն՝ աշխարհին,
թունավորված է
անհավատության գարշահոտ
շնչով: Բոլոր նրանք, ովքեր

ապավինում են մարդկային
դատողության սնապարծ
որոշումներին՝ երևակայելով,
թե կարող են բացատրել
աստվածային գաղտնիքներն ու
ճշմարտությանը հասնել
առանց Աստծո իմաստության,
բռնված են սատանայի
թակարդում:

Մենք ապրում ենք այս
աշխարհի պատմության
ամենապատասխանատու
ժամանակաշրջանում: Շուտով
կվճռվի երկրի բազմամիլիոն
բնակիչների ճակատագիրը:
Մեր իսկ ապագա

բարօրութիւնը, ինչպէս նաև
այլոց փրկութիւնը կախված է
Նրանից, թե որ ուղղությամբ
ենք մենք հիմա ընթանում:
Մենք կարիք ունենք
առաջնորդվելու ճշմարտության
Յոգով: Քրիստոսի
յուրաքանչյուր հետնորդ պետք
է անկեղծօրէն հարցնի. «Տեր,
ի՞նչ ես կամենում, որ անեմ»:
Մենք պետք է ծովով ու
աղոթքով մեր անձերը
խոնարհեցնենք Տիրոջ առաջ՝
հաճախակի խորհելով Նրա
Խոսքի շուրջ և հատկապէս
դատաստանի տեսարանների
մասին: Հիմա մենք պետք է

ձգտենք խոր և կենդանի
փորձառություններ ունենալ
Աստծո հետ: Մենք կորցնելու ոչ
մի պահ չունենք: Մեր շուրջը
տեղի են ունենում կենսական
կարևորության
իրադարձություններ: Մենք
գտնվում ենք սատանայի
կախարդված տարածքում:
Աստծո պահապաններ, մի՛
ննջեք, ահա թշնամին դարան
մտած՝ պատրաստ է ամեն
վայրկյան նետվելու և ձեզ իր
ավարը դարձնելու, եթե
թուլանաք ու թմրեք:

Շատերն Աստծո առաջ իրենց
իրական վիճակի վերաբերյալ
խաբված են: Նրանք
բավարարվում են նրանով, որ
սխալ արարքներ չեն
կատարում, և մոռանում են
հիշատակել այն բարի ու ազնիվ
գործերը, որոնք Աստված
պահանջում է իրենցից, և որոնք
նրանք անտեսել են: Բավական
չէ ծառ լինել Աստծո
պարտեզում: Պետք է
արդարացնել Նրա
սպասելիքները՝ պտուղ
բերելով: Նրանք հաշիվ են
տալու Աստծուն այն ողջ
բարիքի համար, որ կարող էին

գործել իրենց գորացնող Նրա
շնորհի միջոցով, բայց թերացել
են: Երկնային գրքերում նրանք
արձանագրված են որպես
անպիտան ծառեր: Սակայն այս
դասակարգի դրությունն էլ դեռ
ծայրաստիճան անհուսալի չէ:
Նրանց, ովքեր մերժել են Աստծո
ողորմությունը և չարաշահել
Նրա շնորհը. երկայնամիտ սիրո
[602] սիրտը դեռ շարունակում է
աղերսել: «Սրա համար էլ
ասում է. Վեր կաց, ով քնած, և
վեր կանգնիր մեռելներից, և
Քրիստոսը կլուսավորի քեզ:
Արդ նայեցեք, թե ինչպես
զգուշությամբ վարվեք

...զնեցեք ժամանակը,
որովհետև օրերը չար են»
(Եփեսացիս 5.14-16):

Երբ գա փորձության
ժամանակը, կհայտնվեն
նրանք, ովքեր Աստծո խոսքն
իրենց կյանքի կանոնն են
դարձրել: Ամռանը
տարբերությունը չի նկատվում
մշտադալար և սովորական
ծառերի միջև, բայց երբ վրա է
հասնում ձմռան
սառնամանիքը, մշտադալար
ծառերն այդպես էլ մնում են,
մինչդեռ մյուսները զրկվում են
իրենց սաղարթից: Այդպես էլ

Կեղծ հավատացյալը հիմա
կարող է չտարբերվել իսկական
քրիստոնյայից, բայց վրա է
հասնում ժամանակը, երբ
տարբերությունն ակնհայտ
կլինի: Յենց որ սկսվեն
հետապնդումները, երբ
դարձյալ գլուխ բարձրացնեն
մուլեռանդությունն ու
անհանդուրժողականությունը,
և բորբոքվեն հալա-ծանքները,
երկմիտներն ու կեղծավորները
կերերան ու կթողնեն հավատը,
բայց ճշմարիտ քրիստոնյան
վեմի պես հաստատ կմնա, նրա
հավատն ավելի կզորանա,

հույսն ավելի պայծառ կլինի,
քան բարօրության ժամանակ:

Սաղմոսերգուն ասում է. «Քո
վկայություններն են իմ
մտածմունքը»: «Քո
պատվիրաններով ես
իմաստուն եղա, դրա համար
ասում եմ ստության ամեն
ճանապարհը» (Սաղմոս 119.
99,104):

«Երանի այն մարդուն, որ
իմաստություն է գտել»: «Նա
կնամանվի մի ծառի, ուր անկված
է ջրերի մոտ. նա իր
արմատները կձգի գետի մոտով

և տաքութիւն չի տեսնի՝ եկած
ժամանակը, այլ նրա տերևները
կանաչ կլինեն, և երաշտ
տարին նա չի վախենա և չի
դադարի պտուղ տալուց»
(Առակաց 3.13, Երեմիա 17.8):

ԳԼՈՒԽ 38—ՎԵՐՁԻՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄԸ

«Եվ սրանից հետո տեսա մի ուրիշ հրեշտակ՝ երկնքից վայր գալիս, որ մեծ իշխանություն ուներ, և երկիրը լուսավորվեց նրա փառքից: Եվ զորությամբ աղաղակեց մեծ ձայնով ու ասաց. Ընկա՛վ, ընկա՛վ մեծ Բաբելոնը, և եղավ դների բնակություն, և ամեն պիղծ հոգու արգելանոց, և ամեն անսուրբ ու ատելի թռչունի վանդակ: Եվ մի ուրիշ ձայն լսեցի երկնքից, որ ասում էր. Դուրս եկեք դրանից, ով իմ

ժողովարդ, որ մասնակից
չլինեք դրա մեղքերին և դրա
պատուհասից չընդունեք»
(Յայտնություն 18.1,2,4):

Այստեղ խոսքը վերաբերում է
այն ժամանակին, երբ
Բաբելոնի անկման վերաբերյալ
երկրորդ հրեշտակի լուրը
(Յայտնություն 14.8) պետք է
կրկնվի՝ լրացուցիչ
հիշատակումով այն
պղծությունների, որ թափանցել
են Բաբելոնը կազմող տարբեր
եկեղեցական
կազմակերպություններ այն
ժամանակից ի վեր, երբ լուրն

առաջին անգամ հռչակվեց
1844թ.—ի ամռանը: Այստեղ
նկարագրված է կրոնական
աշխարհի սոսկալի վիճակը:
Ճշմարտության ամեն մի նոր
մերժման հետ մարդկանց
միտքը գնալով մթագնելու է,
իսկ սրտերն ավելի են
խստանալու, մինչև որ նրանք
կարծրանան հանդուգն
անհավատության մեջ:
Հակառակ Աստծո
նախազգուշացումների՝ նրանք
շարունակելու են ոտնահարել
Տասնաբանյայի
պատվիրաններից մեկը, մինչև
որ կսկսեն հալածել այդ

պատվիրանը սուրբ
պահողներին: Արհամարհելով
Աստծո խոսքը և Նրա
ժողովրդին՝ նրանք
արհամարհում են Քրիստոսին:
Երբ եկեղեցիներն ընդունեն
ոգեհարցության ուսմունքը,
[604] մարմնավոր սրտի
սանձերը կվերանան, և կրոնի
դավանանքն ամենասար
ոճիրների քող կդառնա:
Հավատը ոգեհարցական
երևույթների հանդեպ դուռ
կբացի մռլար ոգի-ների և դևերի
վարդապետությունների առաջ,
և եկեղեցիներում կզգացվի չար
հրեշտակների ազդեցությունը:

Բաբելոնի մասին, որը
Նկարագրված է այս
մարգարեության մեջ նշված
ժամանակ, ասված է. «Դրա
մեղքերը հասան մինչև երկինք,
և Աստված հիշեց դրա
անիրավությունները»
(Յայտնություն 18.5): Նա
լրացրեց իր հանցանքի չափը, և
կործանումն ուր որ է վրա
կհասնի նրան: Բայց Աստված
դեռ ժողովուրդ ունի
Բաբելոնում, և նախքան
կթափվեն Նրա
դատաստանները՝ այս
հավատացյալները պետք է

դուրս կանչվեն, որպեսզի
«մասնակից չլինեն նրա
մեղքերին և նրա պատուհասից
չըն-դունեն»։ Յենց դրա համար
է շարժումը խորհրդանշված
երկնքից իջնող հրեշտակով, ով
իր փառքով լուսավորում է
երկիրը և գորությամբ
աղա-դակում մեծ ձայնով՝
հռչակելով Բաբելոնի մեղքերը։
Նրա լուրն ուղեկցվում է այս
կոչով. «Դուրս եկեք դրանից, ով
իմ ժողովուրդ»։ Այս լուրերը,
միանալով երրորդ հրեշտակի
պատգամին, կազմում են
վերջին նախա-զգուշացումը, որ

պետք է տրվի երկրի
բնակիչներին:

Սարսափեցի է վախճանը, որին
շտապում է աշխարհը: Երկրի
իշխանությունները, որոնք
միավորվում են պատերազմելու
Աստծո պատվիրանների դեմ,
օրենք են հռչակելու, որ
«բուլորին՝ փոքրերին ու
մեծամեծերին, հարուստներին
և աղքատներին, ազատներին և
ծառաներին» (Չայտնություն
13.16) ստիպեն հնազանդվել
եկեղեցու սովորություններին՝
պահելով կեղծ շաբաթը: Ովքեր
կիրաժարվեն հնազանդվել,

կենթարկվեն քաղաքացիական
պատիժների, և վերջապես
կհռչակվի, որ նրանք արժանի
են մահվան: Մյուս կողմից,
սակայն, Արարչի հանգստյան
օրը պարտադրող Աստծո
օրհնքն է հնազանդություն
պահանջում և սպառնում նրա
զայրույթով բորտին, ովքեր
խախտում են օրենքի
պատվիրանները:

Երբ այս հարցը պարզորոշ
ներկայացվի մարդուն, այն
ժամանակ նա, ով ոտնահարում
է Աստծո օրենքը՝ մարդկային
օրենքին հնազանդվելու

համար, ընդունում է գազանի
դրոշմը, նա ընդունում է այն
իշխանությանը հավատարիմ
լինելու նշանը, որին որոշում է
հնազանդվել Աստծո
փոխարեն: Երկնային
Նախագգուշացումը հետևյալն
է. «Ով որ երկրպագում է
գազանին [605] և նրա
պատկերին և դրոշմ ընդունում
իր ճակատի կամ աջ ձեռքի վրա,
այնպիսին Աստծո
սրտմտության գինուց պիտի
խամի, որ անխառն լցված է նրա
բարկության բաժակի մեջ»
(Յայտնություն 14.9,10):

Բայց ոչ մի մարդ չի տուժի
Աստծո բարկությունից, մինչև
ճշմարտությունը չհասկանա
մտքով ու խղճով և ապա մերժի
այն: Շատերը երբեք
հնարավորություն չեն ունեցել
լսելու ներկա ժամանակին
վերա-բերող հատուկ
ճշմարտությունները: Չորրորդ
պատվիրանի պահանջները
նրանց երբեք չեն ներկայացվել
ճիշտ լույսի ներքո: Նա, ով
կարդում է մարդու սիրտը և
քննում ամեն մի
դրդապատճառ, թույլ չի տա, որ
ճշմարտությանը փափագող
որևէ անձ խաբվի այն

հարցերում, որոնց շուրջ
պայքար է մղվելու: Ժողովուրդը
կուրորեն չի հնազանդվելու
հրամանագրին:

Յուրաքանչյուրին
բավականաչափ լույս է
տրվելու, որպեսզի
կանխամտածված որոշում
կայացնի:

Շաբաթը լինելու է
հավատարմության մեծ
ստուգում, որովհետև այն
վերաբերում է ճշմարտության
ամենավիճահարույց կետին:
Երբ հասնի վերջնական
ստուգարքի պահը, այն

Ժամանակ տարբերիչ
սահմանագիծ կքաշվի Նրանց
միջև, ովքեր ծառայում են
Աստծուն, և ովքեր Նրան չեն
ծառայում: Մինչ կեղծ շաբաթը
պահելը՝ ըստ պետության
օրենքի և հակառակ չորրորդ
պատվիրանի,
հավատարմության նշան է մի
իշ-խանության, որը թշնամի է
Աստծուն, ճշմարիտ շաբաթը
պահելը՝ որպես
հնազանդության նշան Աստծո
օրենքին, Արարչի հանդեպ
հավա-տարմության ապացույց
է: Մարդկանց այն խումբը, որ
գերադասում է հավատարիմ

մնալ երկրային
իշխանություններին,
ընդունում է գազանի դրոշմը,
իսկ մյուսն, ընտրելով
հավատարմությունն
աստվածային իշխանությանը,
ընդունում է Աստծո կնիքը:

Նրանք, ովքեր մինչ այդ
ներկայացրել են երրորդ
հրեշտակի լուրը, հաճախ
համարվել են
խուճապարարներ: Նրանց
նախազգուշացումներն այն
մասին, որ Միացյալ
Նահանգներում գլուխ է
բարձրացնելու կրոնական

անհանդուրժողականությունը,
որ եկեղեցին ու պետությունը
միավորվելու են՝ հալածելու
Աստծո պատվիրանները
պահողներին, համարվել են
անհիմն ու անհեթեթ:
Վստահաբար հայտարարվել է,
թե այս երկիրը երբեք չի
դադարելու մնալ որպես
կրոնական ազատության
պաշտպան: Բայց [606] հենց որ
սկսվի լայնորեն քննարկվել
կիրակին պարտագրելու հարցը,
կնշանակի, որ արդեն մոտ է
իրադարձությունը, որին
այդքան երկար կասկածել են և
չեն հավատացել: Այդ

Ժամանակ երրորդ հրեշտակի
լուրն այնպիսի ազդեցութիւնն է
գործելու, որի մասին առաջ չէր
էլ կարելի երագել:

Յուրաքանչյուր սերնդի
Աստված ուղարկել է իր
ծառաներին՝ հանդիմանելու
մեղքը թե՛ աշխարհում, թե՛
եկեղեցում: Բայց մարդիկ
ցանկանում են, որ իրենց
հաճելի բաներ ասվեն, իսկ
անաղարտ, շիտակ
ճշմարտութիւնն ընդունելի չէ:
Շատ բարենորոգիչներ, սկսելով
իրենց գործը, վճռել են մեծ
զգուշութիւնն ցուցաբերել

Եկեղեցու և ազգի մեղքերը
մերկացնելիս՝ հույս ունենալով
քրիստոնեական սուրբ կյանքի
օրինակով ժողովրդին դրդել
վերադառնալու
Աստվածաշնչյան ուսմունքին:
Բայց Աստծո Յոզիս իջնում էր
Նրանց վրա, ինչպես իջավ
Եդիսայի վրա՝ նրան մղելով
հանդիմանելու ամբարիշտ
Թագավորի և հավատուրաց
ժողովրդի մեղքերը: Նրանք
չէին կարող չքարոզել
Աստվածաշնչի պարզ
ուսմունքները, որոնք
վարանում էին ներկայացնել, և
ստիպված էին ջերմեռանդորեն

հռչակել ճշմարտությունը և այն
վտանգը, որ սպառնում էր
հոգիներին: Նրանք ասում էին
այն խոսքերը, որ Տերն էր
տայիս իրենց՝ չվախենալով
հետևանքներից, և ժողովուրդը
ստիպված լսում էր
Նախագգուշացումը:

Այսպես է հռչակվելու Նաև
երրորդ հրեշտակի լուրը: Երբ
գա այն մեծ զորությամբ
հռչակելու ժամանակը, Տերը
գործելու է խոնարհ հոգիների
միջոցով՝ ղեկավարելով նրանց
միտքը, ովքեր նվիրվել են Նրա
ծառայությանը: Աշխատողներն

ավելի շուտ որակավորվելու են
Նրա Յո-գու օժուրթյամբ, քան թե
հատուկ կրթութայամբ: Յավատի
և աղոթքի մարդիկ կդրդվեն
սուրբ եռանդով հռչակելու այն
խոսքերը, որ Աստված կտա
Նրանց: Բաբելոնի մեղքերը
կմերկացվեն: Քաղաքացիական
իշխանության կողմից եկեղեցու
դրվածքի պարտադրման
սուսկալի հետևանքները,
ոգեհարցության ներխուժումը,
պապական իշխանության
գաղտնի, բայց արագ
հզորացումը՝ այս բոլորը պետք
է բացահայտվի: Այս
հանդիսավոր

Նախագգուշացումները կհուզեն
հազարավորներին, ովքեր
երբեք նման խոսքեր չեն լսել:
Նրանք զարմանքից կապշեն՝
լսելով [607] վկայությունը, որ
Բաբելոնը եկեղեցին է՝ ընկած
իր մոլորությունների, մեղքերի
և երկնային ճշմարտությունը
մերժելու պատճառով: Երբ
ժողովուրդը դիմի իր նախկին
ուսուցիչներին՝ պարզելու, թե
«Իրո՞ք դա այդպես է»,
եկեղեցականներն առասպելներ
կպատմեն, հանգստացնող
մարգարեու-թյուններ կանեն՝
ցրելու նրանց վախերն ու
թմրեցնելու արթնացած խիղճը:

Բայց քանի որ շատերին չի
գոհացնի զուտ մարդկային
հեղինակությունը, և նրանք
կպահանջեն հստակ
վկայություն՝ «Այսպես է ասում
Տերը», հանրաճանաչ
եկեղեցականներն, անցյալի
փարիսեցիների նման,
զայրույթով կլցվեն, որ իրենց
հեղինակությունը կասկածի է
ենթարկվում, կմեքժեն լուրը՝
որպես սատանայական, և մեղք
սիրող ամբոխներին կգրգռեն՝
հայհոյելու և հալածելու այն
հռչակողներին:

Տեսնելով, որ պայքարը
ծավալվում է նոր
տարածքներում, և ժողովրդի
ուշադրութունը հրավիրվում է
Աստծո ոտնահարված օրենքի
վրա, սատանան կբորբոքվի:
Լուրին ուղեկցող զորութունը
միայն կկատաղեցնի
հակառակորդներին:
Չոգևորականները գրեթե
գերմարդկային ջանքեր
կգործադրեն՝ թույլ չտալու, որ
լույսը շողա իրենց հոտի վրա:
Չնարավոր բոլոր միջոցներով
նրանք վարձելու են արգելել
այդ կենսական հարցերի
քննարկումը: Եկեղեցին կդիմի

քաղաքացիական
իշխանության գործող բազկին, և
այս գործում պապականներն ու
բողոքականները կմիավորվեն:
Երբ կիրակին պարտադրելու
շարժումն ավելի հանդուգն ու
վճռական կդառնա,
պատվիրանները պահողների
դեմ օրենք կընդունվի: Նրանց
կսպառնան տուգանքով ու
բանտարկությամբ, ոմանց
կառաջարկեն հեղինակավոր
պաշտոններ և այլ պարգևներ
ու արտոնություններ՝ դրդելով
ուրանալ իրենց հավատը: Բայց
ահա նրանց հաստատ
պատասխանը. «Ցույց տվեք

մեր սխալն Աստծո խոսքից»:
Այս նույն խնդրանքն է հայտնել
Լյութերը նման
պարագաներում: Նրանք,
ովքեր կբերվեն դատարանների
առջև, մեծ զորությամբ
կպաշտպանեն
ճշմարտությունը, և նրանց
ունկնդրողներից ոմանք կվճռեն
պահել Աստծո բոլոր
պատվիրանները: Այսպիսով՝
լույսը կշողա հազարավորների
վրա, ովքեր այլ կերպ ոչինչ
չէին իմանա այս
ճշմարտությունների մասին:
[608]

Աստճո խոսքին գիտակցաբար
հնազանդվելը կոփտվի որպես
ապստամբութիւն:

Սատանայից կուրացած՝
ճնողները կոպտութեամբ ու
խստութեամբ կվարվեն իրենց
հավատացյալ երեխաների հետ,
տերերն ու տիրուհիները կճնշեն
պատվիրանները պահող իրենց
ծառաներին: Ընտանեկան
կապերը կխզվեն, երեխաները
կզրկվեն ժառանգութիւնից և
տնից դուրս կքշվեն:

Բառացիորեն կկատարվեն
Պողոսի այս խոսքերը. «Բոլոր
նրանք, որ կամենում են
աստվածապաշտութեամբ

ապրել Քրիստոս Յիսուսում,
հալածանք պիտի կրեն» (Բ
Տիմոթեոս 3.12): Քանի որ
ճշմարտության պաշտպանները
հրաժարվելու են պատվել
կիրակին՝ կեղծ շաբաթը,
նրանցից ոմանց բանտ կգցեն,
մյուսներին կաքսորեն,
եր-րորդների հետ կվարվեն
ստրուկների պես: Մարդկային
իմաստությանն այսօր անհնար
է թվում այս ամենը, բայց հենց
որ Աստծո զսպող Յոզիև
հեռանա մարդկանցից, և
նրանք թողնվեն սատանայի
հսկողության տակ, ով ատում է
աստվածային պատվերները,

տարօրինակ զարգացումներ
կկատարվեն: Սիրտը կարող է
շատ դաժան լինել, երբ նրանից
հեռացվում են Աստծո երկյուղն
ու սերը:

Երբ փոթորիկը մոտենա,
հազարավոր մարդիկ, ովքեր
դավանել են, թե հավատում են
երրորդ հրեշտակի պատգամին,
բայց չեն սրբագործվել
ճշմարտությանը
հնազանդվելու միջոցով,
թողնելու են իրենց դիրքերն՝
անցնելով ընդդիմության
շարքերը: Միանալով
աշխարհին և ընդունելով նրա

ոգին՝ նրանք սկսել են իրերը
տեսնել գրեթե նույն լույսի
ներքո, ու երբ գա
փորձությունը, նրանք կրկնորեն
հեշտը՝ մեծամասնության
կարծիքը: Տաղանդավոր ու
համակրելի անձինք, ովքեր մի
ժամանակ ցնձացել են
ճշմարտությանը, իրենց ուժերը
կսկսեն օգտագործել մարդկանց
խաբելու և մոլորեցնելու
համար: Նրանք իրենց նախկին
եղբայրների ամե-նաոխտիմ
թշնամիները կդառնան: Երբ
շաբաթապահները դատարան-
ների առաջ բերվեն՝
պատասխանելու իրենց

հավատի համար, այս
ուրացողները սատանայի
ամենանվիրյալ գործակալներն
են լինելու, որ-պեսզի
զրպարտեն ու մեղադրեն
Նրանց՝ կեղծ խոսքերով ու
վկայություններով Նրանց դեմ
գրգռելով իշխանավորներին:

Այս հալածանքներում
փորձվելու է Տիրոջ ծառաների
հավատը: Նրանք
հավատարմորեն հայտնել են
Նախագգուշացման լուրը՝
ապա-վինելով միայն Աստծուն
և Նրա խոսքին: Աստծո Յոզին,
ներգործելով Նրանց սրտերի

վրա, դրդել է նրանց խոսելու:
Ոգեշնչված [609] սուրբ
եռանդով ու լիցքավորված
աստվածային զորությամբ՝
Նրանք անցել են իրենց
պարտականություններին՝
առանց սառնորեն
հաշվարկելու, թե ինչ
հետևանքներ կունենա Տիրոջ
խոսքը ժողովրդին հասցնելը:
Նրանք հաշվի չեն առել իրենց
երկրային շահերը, ոչ էլ ձգտել
են պահպանել իրենց բարի
անունը կամ կյանքը:
Այդուհանդերձ, երբ
ընդդիմության ու նախատինքի
փոթորիկը պայթի նրանց

գլխին, ոմանք սարսափահար
պատրաստ կլինեն աղաղակել.
«Եթե մենք կանխատեսեինք
մեր խոսքերի հետևանքը, ապա
կլռեինք»: Նրանք
շրջապատված են
դժվարություններով:
Սատանան հարձակվում է
Նրանց վրա կատաղի
փորձություններով: Գործը, որ
Նրանք ձեռնարկել են, Նրանց
ուժերից խիստ վեր է թվում:
Նրանց սպառնում են
ոչնչացնել: Ու թեև Նրանց
խանդավառությունն անցել է,
Նրանք չեն կարող ետ դառնալ:
Եվ ապա, զգալով իրենց

Կատարյալ
անօգնականությունդ նրանք
ուժ կխնդրեն Ամենագորհից:
Նրանք հիշում են, որ իրենց
ասած խոսքերն իրենցը չէին,
այլ Նրանը, ով պատվիրել էր
հռչակել նախագգուշացումը:
Աստված էր ճշմարտությունը
դրել նրանց սրտերի մեջ, և
նրանք չէին կարող
չազդարարել այն:

Նույն փորձությունների միջոցով
Աստծո ծառաներն անցել են
նաև ան-ցյալ դարերում:
Ուիկլիֆը, Յուսը, Լյութերը,
Թինդալը, Բաքստերը, Ուեսլին

պնդում էին, որ բոլոր
ուսմունքները պետք է
ստուգվեն Աստվածաշնչով՝
հայտարարելով, որ կուրանան
այն ամենը, ինչ այն
դատապարտում է: Այս
մարդկանց հալածում էին
անողոք դաժանությամբ, բայց
նրանք չէին դադարում հռչակել
ճշմարտությունը: Եկեղեցու
պատմության տարբեր
ժամանակահատվածներ
նշանավորվել են այդ
ժամանակվա համար Աստծո
ժողովրդին անհրաժեշտ որևէ
հատուկ ճշմարտության
քարոզչությամբ: Ամեն մի նոր

ճշմարտությունն իր
ճանապարհը հարթել է
ատելության ու ընդդիմության
միջով, և նրանք, ովքեր օրհնվել
են դրա լույսով, ենթարկվել են
փորձությունների:
Ճգնաժամային պահերին Տերը
հատուկ ճշմարտություն է
հայտնում իր ժողովրդին: Ո՞վ
կհամարձակվի հրաժարվել այն
հոգևակեցաց: Նա իր ծառաներին
պատվիրում է աշխարհին
ուղղել տրտմության վերջին
կոչը: Նրանք չեն կարող լուռ
մնալ առանց վտանգի
ենթարկելու իրենց հոգիները:
Քրիստոսի [610] լրաբերները

չպետք է մտածեն
հետևանքների մասին: Նրանք
պետք է կատարեն իրենց
պարտականությունը, իսկ
հետևանքը թողնեն Աստծուն:

Երբ ընդդիմությունը
բորբոքվում է կատաղության
աստիճանի, Աստծո ծառաները
Նորից շփոթվում են՝
ենթադրելով, թե իրենք են այդ
ճգնաժամի պատճառը: Բայց
խիղճն ու Աստծո խոսքը
համոզում են նրանց, որ իրենց
ընթացքը ճիշտ է, ու թեև
փորձությունները
շարունակվում են, նրանք

զորացած են՝ դրանց
դիմակայելու համար: Պայքարը
գնալով ավելի է սրվում, բայց
Նրանց հավատն ու
արիությունն աճում են դրան
զուգընթաց: Ահա Նրանց
վկայությունը. «Մենք չենք
հանդգնի աղավաղել Աստծո
խոսքը՝ բաժանելով Նրա սուրբ
օրենքը՝ դրա մի մասը
համարելով էական, մյուսը՝ ոչ,
որպեսզի շահենք աշխարհի
բարեհաճությունը: Տերը, ում
մենք ծառայում ենք, կարող է
ազատել մեզ: Քրիստոսը
հաղթել է երկրային ուժերին, և
ինչո՞ւ մենք պետք է

վախենանք արդեն հաղթված
աշխարհից»:

Չալածանքն իր տարբեր ձևերով
մի սկզբունքի դրսևորումն է,
որը գոյություն է ունենալու,
քանի դեռ կա սատանան, և
քրիստոնեությունը կենսական
զորություն ունի: Ոչ ոք չի
կարող ծառայել Աստծուն՝
առանց իր վրա հրավիրելու
խավարի զորքերի
ընդդիմությունը: Չար
հրեշտակները կհարձակվեն
Նրա վրա՝ տագնապած այն
բանից, որ Նրա ազդեցությունն
իրենց ձեռքից խլում է ավարը:

Չար մարդիկ, հանդիմանված
Նրա օրինակից, միավորվելով
դևերի հետ, կձգտեն բաժանել
Նրան Աստծուց իրենց
գայթակղիչ փորձություններով:
Երբ դա նրանց չհաջողվի, այն
ժամանակ կփորձեն բռնի ուժով
տիրանալ նրա խղճին:

Քանի դեռ Հիսուսը մարդու
բարեխոսն է վերին
սրբարանում, իշխանավորների
և ժողովրդի վրա զգացվելու է
Սուրբ Հոգու սանձահարող
ազդեցությունը: Այն դեռ որոշ
չավտվ վերահսկում է երկրի
օրենքները: Եթե չլինեին այդ

օրենքները, աշխարհի վիճակը
շատ ավելի վատ կլիներ, քան
հիմա է: Մինչ մեր
իշխանավորներից շատերը
սատանայի ակտիվ
գործակալներն են, Աստված էլ
իր գործակալներն ունի ազգի
առաջ-նորդների մեջ: Թշնամին
իր ծտոանեբին դրդում է
միջոցներ ձեռնարկել, որոնք
մեծապես կխափանեին Աստծո
գործը, բայց պետական որոշ
աստվածավախ այրեր սուրբ
հրեշտակների ազդեցությամբ
ընդդիմանում են այդ
առաջարկներին անհերքելի
փաստարկներով: Այսպիսով՝ մի

քանի մարդ [611] կկասեցնեն
չարի ահռելի հոսքը:
Ճշմարտության թշնամիների
ընդդիմությունը
կսանձահարվի, որպեսզի
երրորդ հրեշ- տակի լուրն
ավարտի իր գործը: Երբ
հռչակվի վերջին
Նախագգուշացումը, այն
գրավելու է այս
իշխանավորների
ուշադրությունը, ում միջոցով
հիմա գործում է Տերը, և
ընդունելով լուրը՝ նրանցից
ոմանք մեծ նեղության
ժամանակ կկանգնեն Աստծո
ժողովրդի կողմը:

Յրեշտակը, որ կմիանա երրորդ
հրեշտակի պատգամի
հռչակմանը, իր փառքով
կլուսավորի ողջ երկիրը:
Այստեղ կանխագուշակված է
մի գործ, որն արտասովոր
զորությամբ կկատարվի
համայն աշխարհում:
1840-1844 թվականների
ադվենտիստական շարժումն
Աստծո զորության փառավոր
դրսևորումն էր: Առաջին
հրեշտակի լուրը հասավ երկրի
բոլոր ավետարանչական
կենտրոնները, և որոշ
երկրներում առաջացավ

կրոնական մեծագույն
հետաքրքրություն, որ երբևէ
նկատվել է որևէ երկ-րում XVI
դարի Բարենորոգումից ի վեր:
Բայց երրորդ հրեշտակի վեր`
ջին նախագգուշացումը
հռչակող հզոր շարժումը
մեծապես կգերազանցի դրան:

Այդ գործը նման կլինի նրան,
ինչ կատարվեց Պենտեկոստեի
օրը: Ինչպես «առաջին
անձրևը» տրվեց ավետարանի
հռչակման սկզբում` Սուրբ
Յոզու հեղման մեջ, որպեսզի
թանկագին սերմը ծիլ տա,
այնպես էլ կտրվի «վերջին

անձրևը» ավարտին, որպեսզի
հունձքը հասնի: «Եվ
կճանաչենք, և էլ կհետևենք
ճանաչելու Տիրոջը, արշալույսի
պես պատ-րաստ է նրա ելքը, և
նա պիտի գա մեզ համար
անձրևի պես, վերջին անձ-րևի
պես, որ ոռոգում է երկիրը»
(Ովսե 6.3): «Ով Սիոնի որդիք,
ցնծացեք և ուրախացեք Ձեր
Տեր Աստծով, որ ...ձեզ համար
անձրև կիջեցնի՝ առաջին և
վերջին անձրև՝ առաջվա պես»
(Յովել 2.23): «Վերջին օրերում,
ասում է Աստված, իմ Յոզուց
կթափեմ ամեն մարմնի վրա»:
«Եվ կլինի, որ ամեն ոք, ով որ

Տիրոջ անունը կանչի՝ կփրկվի»
(Գործք 2.17,21):

Ավետարանի մեծ գործը
կավարտվի Աստծո զորության
ոչ պակաս դրսևորմամբ, քան
երբ այն սկսվեց:

Մարգարեությունները, որ
կա-տարվեցին առաջին անձրևի
[612] ժամանակ՝
ավետարանչության սկզբում,
նորից կկատարվեն վերջին
անձրևի ժամանակ: Դրանք
«հան-գստության
ժամանակներն են», որոնք
վկայակոչում էր Պետրոս
առա-քյալն՝ ասելով. «Ուրեմն

զղջացեք ու ետ դարձեք, որ ձեր
մեղքերը ջնջվեն, որ Տիրոջ
երեսից հանգստանալու
ժամանակները գան, և նա
ուղարկի սկզբից ձեզ համար
քարոզված Հիսուս Քրիստոսին»
(Գործք 3.19,20):

Աստծո ծառաները՝
լուսավորված և սուրբ
նվիրումից քայլող դեմ-քերով,
կշտապեն տեղից տեղ՝
հռչակելու երկնային լուրը:
Հազարավոր ձայներ ամբողջ
երկրով մեկ կազդարարեն
նախազգուշացումը:
Կկա-տարվեն հրաշքներ,

հիվանդները կթշկվեն, և
նշաններ ու հրաշքներ
կուղեկցեն հավատացյալներին:
Բայց սատանան նույնպես
կգործի իր կեղծ հրաշքներով, և
նույնիսկ երկնքից կրակ
կիջեցնի երկրի վրա՝
մարդ-կանց առաջ
(Չայտնություն 13.13): Այսպես
երկրի բնակիչները կկանգնեն
վերջնական ընտրության
առաջ:

Լուրը հռչակվելու է ոչ այնքան
փաստարկների, որքան Աստծո
Չոգու խոր ազդեցության
միջոցով: Ապացույցներն

արդէն ներկայացված են եղել,
սերմը՝ ցանված, և հիմա այն
կհասնի ու պտուղ կտա:
Ավետարանիչների կողմից
տարածված գրականութունն
իր ազդեցութունն է թողել,
բայց շատերին, ովքեր
տպավորվել են, խանգարել են
լիովին ըմբռնելու
ճշմարտութունը կամ
հնազանդվելու դրան: Բայց
հիմա լույսի շողերը
թափանցում են ամենուր,
ճշմարտութունը պարզ է
դառնում, և Աստծո անկեղծ
զավակները քանդում են իրենց
պահող կապանքները:

Ընտանեկան կապերը,
Եկեղեցական
պարտավորություններն արդեն
անգոր են կանգնեցնելու
Նրանց: Ճշմարտությունն ամեն
ինչից ավելի թանկ է: Չնայած
ճշմարտության դեմ
համախմբված ուժերին՝
հազարա-վորները կանցնեն
Տիրոջ կողմը: [613]

ԳԼՈՒԽ 39—ՆԵՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Եվ այն ժամանակ վեր կկենա Միքայելը՝ այն մեծ իշխանը, որ կանգնած է քո ժողովրդի որդկանց վրա, և նեղության ժամանակ կլինի, ինչսփսին երբեք չի եղել այն ժամանակից, երբ որևէ ազգ կար, մինչև այս ժամանակը, և այդ ժամանակ կազատվի քո ժողովուրդը՝ ով որ գտնվի գրքի մեջ գրված» (Դանիել 12.1):

Երբ ավարտվի երրորդ հրեշտակի լարի հռչակումը,

Տիրոջ տրտ-մությունն այլևս չի
աղերսի երկրի մեղավոր
բնակիչների համար: Աստճո
ժալովուրդն արդեն կատարել է
իր գործը: Նա ստացել է
«վերջին անձրևը»՝
«հանգստությունը Տիրոջ
երեսից», և պատրաստ է
վերահաս փորձության ժամին:
Երկնքում հրեշտակներն այս ու
այն կողմ են շտապում:
Վերադառնալով երկրից՝ մի
հրեշտակ ազդարարում է, որ իր
գործն ավարտված է, աշխարհը
ենթարկվել է վերջնական
ստուգարքին, և բոլորն, ովքեր
հավատարիմ են գտնվել

աստվածային
պատվիրաններին, ընդունել են
«Կենդանի Աստծո կնիքը»:
Այնուհետև Յիսուսը
դադարեցնում է իր
բարեխոսությունը վերին
սրբարանում: Վեր պարզելով
իր ձեռքերը՝ Նա բարձր ձայնով
ասում է. «Կատարվեց», և
հրեշտակների ամբողջ զորքը
հանում է իր պսակները, մինչ
Նա հանդիսավոր կերպով
ազդարարում է.
«Անհրավություն գործողը թող
ել անհրավանա, և կեղտոտը
թող էլ կեղտոտվի, իսկ արդարը
թող էլ արդարանա, և սուրբը

թող էլ սրբվի» (Յայտնություն 22.11): Յուրաքանչյարի ճակատագիրը վճռված է. կա՛մ կյանք, կա՛մ մահ: Քրիստոսը քավություն է արել իր ժողովրդի համար [614] և ջնջել նրանց մեղքերը: Նրա հպատակների թիվը լրացել է, «թագավորությունն ու իշխանությունը և բոլոր երկնքի տակ եղող թագավորությունների մեծությունը» շուտով կտրվի փրկության ժառանգորդներին, և Յիսուսը կթագավորի որպես թագավորների Թագավոր և տերերի Տեր:

Երբ Նա դուրս է գալիս
սրբարանից, խավար է պատում
երկրի բոլոր բնակիչներին: Այդ
ահավոր օրերին արդարները
պետք է ապրեն սուրբ Աստծո
առաջ առանց բարեխոսի:
Ամբարիշտներին զսպող
աստվածային ուժը հեռացվում
է, և սատանան լիակատար
իշխանություն է ձեռքբերում
անոպղեփ անզեղչների վրա:
Աստծո երկայնամտությունը
հատել է: Աշխարհը մերժել է
Նրա տրտմությունը,
արհամարհել Նրա սերը և
ոտնահարել Նրա օրենքը:

Ամբարիշտներին հատկացված
փորձնական ժամկետը լրացել
է, և համառորեն մերժված
Աստծո Յոզիս վերջապես լքում
է նրանց: Աստվածային
շնորհից զրկված՝ նրանք այլևս
պաշտպանութիւն չունեն
չարագործի դէմ: Սատանան
այդ ժամանակ երկրի
բնակիչներին կզգի մեծագույն
վերջնական նեղութեան մեջ:
Յենց որ Աստծո հրեշտակները
դադարեն սանձահարել
մարդկային կրքի վայրագ
քամիները, թշնամութեան ողջ
տարերքին ազատ կարձակվի:
Ողջ աշխարհին ավելի ահավոր

ավերածություն է սպասվում,
քան այն, որին ենթարկվեց հին
երուսաղեմը:

Միայն մեկ հրեշտակ բնաջնջեց
եգիպտացիների բոլոր
առաջնեկ-ներին և սգով լցրեց
ողջ երկիրը: Երբ Դավիթը
մեղանջեց Աստծո դեմ՝
հաշվելով ժողովրդին, մի
հրեշտակ ահռելի
ավերածություն գործեց, որով
պատժվեց նրա մեղքը: Նույն
կործանիչ ուժը, երբ
գործադրվում է սուրբ
հրեշտակների կողմից Աստծո
հրամանով, գործի կդնեն նաև

չար հրեշտակները, երբ Նա
թույլ տա: Հիմա արդեն
պատրաստ ուժեր կան, որ
միայն սպասում են
աստվածային թույլտվությանը,
որպեսզի ամենուրեք
ավերածություն սփռեն:

Աստծո օրենքը պահողները
մեղադրվել են աշխարհի վրա
դատաս-տաններ բերելու մեջ, և
Նրանց են համարում պատճառը
բնության այն զարհուրելի
ցնցումների և մարդկանց
կռիվների ու
արյունահեղության, որոնք
երկիրը լցնում են

Թշվառութեամբ: Վերջին
Նախագգուշացմանն ու-ղեկցող
գորութիւնը զայրացնում է
ամբարիշտներին՝ նրանց
բարկութիւնը բորբոքելով
բոլոր նրանց դէմ, ովքեր [615]
ընդունել են լուրը, իսկ
սա-տանան ավելի սաստիկ
կբորբոքի ատելութեան ու
հալածանքի ոգին:

Երբ Աստծո ներկայութիւնը
վերջնականապէս լքեց հրեա
ազգին, քահանաներն ու
ժողովուրդը չիմացան այդ
մասին: Գտնվելով սատանայի
իշխանութեան տակ և բռնված

ամենազարհուրեփի ու չար
կրքերով՝ նրանք իրենց դեռ
Աստծո ընտրյալներն էին
համարում: Ծառայությունը
տաճարում դեռ շարունակվում
էր, դեռ զոհեր էին մատուցվում
Նրա պղծված զոհասեղանների
վրա, և աստվածային
օրհնությունն էր հայցվում ամեն
օր մի ժողովրդի համար, որը
հանցավոր էր Աստծո Սիրելի
Որդու արյան մեջ և ջանում էր
սպանել Նրա լրաբերներին ու
առաքյալներին: Այդպես էի երբ
ազդարարվի սրբարանի
անդամնալի որոշումը, և
աշխարհի ճակատագիրն

առհասպետ վճռվի, երկրի
բնակիչները չեն իմանա այդ
մասին: Մարդիկ, որոնցից
Աստծո Յոզիս հեռացած կլինի
վերջնականապես,
կշարունակեն իրենց կրոնական
ծի-սակատարությունները, և
դիվական եռանդը, որով
խավարի իշխանը պարուրելու
է նրանց իր չարակամ
ծրագրերն իրականացնելու
համար, կհամարվի
նախանձախնդրություն հանուն
Աստծո:

Քանի որ շաբաթը պայքարի
հատուկ հարց է դառնալու

քրիստոնեա-կան ողջ
աշխարհով մեկ, և կրոնական ու
աշխարհիկ իշխանությունները
միավորվելու են, որպեսզի
պարտադրեն սուրբ պահել
կիրակին, մի աննշան
փոքրամասնության համառ
մերժումը՝ ենթարկվելու
հանրության պահանջին,
համընդհանուր հակակրանքի
առարկա է դարձնելու նրան:
Կհայտարարվի, որ եկեղեցու
դրվածքին ու պետական
օրենքին ընդ-դիմացող այս
փոքրամասնությանը չպետք է
հանդուրժել, որ ավելի լավ է՝
նրանք չարչարվեն, քան

ամբողջ ազգեր ընկնեն
խառնաշփոթության ու
անօրենության մեջ: Այդ նույն
փաստարկը բերվեց Քրիստոսի
դեմ տասնութ դար առաջ՝
«ժողովրդի իշխանների»
կողմից: «Լավ է մեզ հա-մար,—
ասաց նենգ Կայիափան,— որ
մեկ մարդ մեռնի ժողովրդի
համար, քան թե ամբողջ ազգը
կորչի» (Յովհաննես 11.50): Այս
փաստարկը համոզիչ կթվա, և
վերջապես հրամանագիր
կարձակվի նրանց դեմ, ովքեր
սուրբ են պահում չորրորդ
պատվիրանի շաբաթը՝ նրանց
արժանի հռչակելով

Խստագույն պատժի և
ժողովրդին ազատութիւն [616]
տալով որոշ ժամանակ անց
մահապատժի ենթարկել
նրանց: Պապութիւնը Յիս
Աշխարհում, իսկ նահանջած
բողոքականութիւնը՝ Նորում,
նույն կերպ են վարվելու նրանց
հետ, ովքեր պահում են
աստվածային բոլոր
պատ-վիրանները:

Աստծո ժողովրդն այդ
ժամանակ կգցվի այն
տառապանքի ու հո-գեվարքի
մեջ, որն ըստ մարգարեի
նկարագրութեան՝ կոչվում է

Չակոբի նեղության ժամանակ:

«Այսպես է ասում Տերը.

Սոսկալի ձայն լսեցինք, վախ

կա, և խաղաղություն չկա...

Բոլոր երեսները փոխված

դեղնացած են: Ավա՛ղ,

որովհետև մեծ է այն օրը, որի

նմանը չկա, և դա նեղության

ժամանակ պիտի լինի Չակոբի

համար, բայց նա ազատվելու է

դրանից» (Երեմիա 30.5-7):

Չակոբի հոգեվարքի գիշերը, երբ

նա աղոթքում պայքարում էր

Եսավի ձեռքից ազատվելու

համար (Ծննդոց 32.24-30),

խորհրդանշում է Աստծո

Ժողովրդի փորձառությունը մեծ
նեղության ժամանակ:
Խաբեությամբ ձեռք բերելով իր
հոր օրհնությունը՝
Նախատեսված Եսալի համար,
Յայկոբը. տագնապած իր եղբոր
մահացու սպառնալիքներից,
փախել էր՝ փրկելու իր կյանքը:
Երկար տարիներ աքսորյալ
մնալուց հետո նա իր կանանց
ու երեխաների և իր հոտերի ու
Նախիրների հետ Աստծո
հրամանով ճանապարհ ընկավ
դեպի իր հայրենիքը: Յասնելով
երկրի սահմաններին՝ նա
սարսափահար եղավ՝ լսելով, որ
գինյալների մի խումբ՝ Եսալի

գլխավորությամբ, մոտենում է
իրեն՝ անկասկած վրեժ առնելու
մտադրությամբ: Թվում էր, թե
Ջակոբի անգեն ու
անպաշտպան ուղեկիցները
շուտով բռնության ու
սպանության գոհ կդառնան:
Տագնապի ու վախի բեռան վրա
ավելանում էր նաև
ինքնակշտամբանքի ճնշող
ծանրությունը, քանզի իր իսկ
մեղքն էր հենց այդ վտանգի
պատճառը: Նրա միակ հույսը
Աստծո տրտմությունն էր, միակ
պաշտպանությունն՝ աղոթքը:
Սակայն նա իր կողմից արեց
ամեն ինչ՝ քավելու եղբոր դեմ

գործած հանցանքը և կանխելու
սպառնացող վտանգը: Այդպես
էլ, երբ մոտենա նեղության
ժամանակը, Քրիստոսի
հետևորդները պետք է ամեն
չանք ներդնեն, որպեսզի
պատշաճ լույսի ներքո երևան
մարդկանց առաջ՝ ցրելով
նրանց նախապաշարումները և
կանխելով վտանգը, որ
սպառնում է խղճի
ազատությանը:

Իր ընտանիքի անդամներին
ուղարկելով առաջ, որպեսզի
ականատես չլինեն իր վշտին,
Ջակոբը միայնակ է մնում՝

Թախանձելու Աստծո
գթությունը: [617]
Խոստովանելով իր մեղքը և
շնորհակալությամբ
ըն-դունելով Աստծո
տրտմությունն իր հանդեպ՝ նա
մեծ խոնարհությամբ
վկայակոչում է Նրա ուխտն իր
հայրերի հետ, ինչպես նաև
Բեթելում և իր պանդխտության
երկրում իրեն տրված
խոստումները: Եկել էր նրա
կյանքի ճգնաժամը, ամեն ինչ
կախված էր այս բախտորոշ
պահից: Մթության ու
միայնության մեջ նա
շարունակում է աղոթել և

Խոնարհեցնել իրեն Աստծո
առաջ: Հանկարծ մի ձեռք
դիպչում է նրա ուսին:
Կարծելով, թե մի թշնամի
ուզում է խլել իր կյանքը, նա
ծայրահեղ հուսահատությամբ
և ամբողջ ուժով գոտեմարտում է
հակառակորդի հետ:
Լուսադեմին անձանոթը
դրսևորում է իր գերմարդկային
ուժը, նրա հպումից այդ զորեղ
մարդն ասես կաթվածահար է
լինում՝ անօգնական ու
աղերսագին հեծկլտալով
ընկնելով իր խորհրդավոր
հակառակորդի վզով: Հակոբն
այժմ հասկանում է, որ դա

ուխտի Յրեշտակն է, ում հետ
ինքը գոտեմարտել էր: Թեպետ
ուժասպառ էր, վիրավոր և
տանջվում էր սուր ցավից, նա
չի հրաժարվում իր նպատակից:
Նա իր մեղքի պատճառով շատ
երկար էր տանջվել խղճի
խայթոցներից, և հիմա պետք է
հավաստիանա, որ այն ներված
է: Աստվածային այցելուն
կարծես պատրաստվում է
հեռանալ, բայց Յակոբն, ամուր
կառչելով Նրանից, օրհնություն
է աղերսում: Երբ Յրեշտակը
պնդում է՝ «Թող ինձ, որովհետև
արշալույսը ծագեց»,
նահապետը բացականչամ է.

«Չեմ թողնի, մինչև որ ինձ
չօրհնես»։ Ինչպիսի՞
վատահուլթյուն, ինչպիսի՞
հաստատակամություն ու
հա-մառություն։ Եթե սա մի
հանդուգն, ինքնավստահ
պահանջ փնտր, Չակոբն
անմիջապես կոչնչացվեր, բայց
դա հավակնությունն էր մի
մարդու, ով խոստովանում է իր
թուլությունն ու
անարժանությունը՝
ապավինելով իր ուխտին
հավատարիմ Աստծո
տրտմությանը։

«Նա գոտեմարտեց հրեշտակի
հետ և հաղթեց» (Ովսե 12.4):
Խոնարհությամբ,
ապաշխարությամբ ու
ինքնուրացությամբ այս
մեղավոր, մոլորյալ
մահկանացուն հաղթեց երկնքի
Վեհափառությանը: Նա իր
դողդոջուն հավատով կառչեց
Աստծո խոստումներից, և
Անսահման Սիրո սիրտը
չկարողացավ մերժել մեղավորի
աղերսը: Որպես վկայություն
Նրա հաղթանակի և որպես
խրախուսանք՝ Նրա օրինակին
հետևելու համար, Հակոբի
անունը, որ հիշեցնում էր Նրա

մեղքը, փոխարինվեց մի
ուրիշով, որը նշանավորում էր
Նրա հաղթանակը: Եվ այն
փաստը, [618] որ Հակոբը
հաղթեց Աստծուն, երաշխիք էր,
որ Նա կհաղթի Նաև մարդկանց:
Նա այլևս չէր վախենում իր
եղբոր բարկութունից, քանզի
Տերն էր Նրա պաշտպանը:

Սատանան մեղադրել էր
Հակոբին Աստծո հրեշտակների
առաջ՝ պնդելով, որ իրեն
իրավունք տրվի կործանել
Նրան իր մեղքի համար: Նա
Եսավին մղել էր դուրս գալու
Նրա դեմ, և Նահապետի

գոտեմարտի երկար գիշերվա
ընթացքում ջանացել էր կոտրել
Նրան՝ հիշեցնելով իր մեղքի
ծանրությունը, որպեսզի Նա
վհատվեր ու դադարեր
ապավինել Աստծուն: Հակոբը
գրեթե հուսահատվել էր,
սակայն գիտեր, որ առանց
երկնքի օգնության ինքը կորած
է: Նա անկեղծորեն
ապաշխարել էր իր մեծ մեղքի
համար և աղերսեց Աստծո
տրտմությունը: Նա
չհրաժարվեց իր նպատակից, և
ամուր կառչելով Հրեշտակին՝
ջերմեռանդ, տանջակից

աղաղակներով պնդեց իր
խնդրանքը, մինչև որ հաղթեց:

Ինչպես սատանան եսավին
դրդեց դուրս գալ Յակոբի դեմ,
այնպես էլ նեղության
ժամանակ կգրգռի
ամբարիշտներին՝ կործանելու
Աստծո ժողովրդին: Եվ ինչպես
Նա մեղադրում էր Յակոբին,
այնպես էլ մեղադրելու է Աստծո
ժողովրդին: Նա աշխարհի
բնակիչներին իր հպատակներն
է համարում, բայց մի փոքր
խումբ, որ պահում է Աստծո
պատվիրանները, դիմադրում է
Նրա իշխանությանը: Եթե Նրան

հաջողվի բնաջնջել նրանց
երկրի երեսից, ապա իր
հաղթանակը կատարյալ կլինի:
Նա տեսնում է, որ սուրբ
հրեշտակները պահպանում են
նրանց, և ենթադրում է, որ
նրանց մեղքերը ներվել են,
բայց նա տեղյակ չէ, որ նրանց
ճակատագիրն արդեն վճռվել է
երկնային սրբարանում: Նա
ճշտիվ գիտի այն մեղքերը, որ
նրանք գործել են իր իսկ
գայթակղությամբ, և դրանք
Աստծուն ներկայացնում է
խիստ չափազանցված լույսի
ներքո: Նրա համոզմամբ այդ
ժողովուրդը հավասարապես

արժանի է զրկվելու Աստծո
բարեհաճությունից: Նա
հայտարարում է, որ Տերն
արդար չի լինի, եթե նրանց
մեղքերը ների, իսկ իրեն ու իր
հրեշտակներին ոչնչացնի: Նա
իր ավարն է համարում նրանց
և պահանջում է, որ իրեն թույլ
արվի՝ կործանել նրանց:

Քանի որ սատանան մեղադրում
է Աստծո ժողովրդին իրենց
մեղքերի համար, Տերը թույլ է
տալիս նրան մինչև վերջ
փորձելու նրանց: Նրանց
վստահությունն առ Աստված,
նրանց հավաան ու

տոկոսութիւնը խստորեն
փորձվելու են: Մտաբերելով
անցյալը՝ նրանք կորցնում են
հույսը, [619] քանզի իրենց ողջ
կյանքում շատ քիչ բարի բան
են տեսնում: Նրանք լիովին
գիտակցում են իրենց
տկարութիւնն ու
անարժանութիւնը: Ասասնան
ահաբեկում է նրանց այն
մտքով, թե իրենց վիճակն
անհուսալի է, և թե իրենց
պղծութեան բիծը երբեք չի
մաքրվի: Նա հույս ունի այդպես
կործանել նրանց հավատը,
որպեսզի նրանք տեղի տան իր

փորձություններին և իրենց
հույսը կտրեն Աստուծոց:

Թեև Աստծո ժողովուրդը
շրջապատված է լինելու
թշնամիներով, ովքեր կշտապեն
նրանց կործանելու, նրանց
հոգեվարքի պատճառը ոչ թե
ճշմարտության համար
հալածվելու սարսափն է, այլ
վախը, որ գուցե մնացել է որևէ
չապաշխարած մեղք կամ որևէ
թերություն իրենց մեջ, որի
պատճառով կարող է
չիրականանալ Փրկչի այս
խոստումը. «Ես ...քեզ կպահեմ
այն փորձության ժամից, որ

գալու է այս աշխարհի վրա»
(Ջայտնություն 3.10): Եթե
միայն նրանք համոզվեն, որ
ներված են, ոչ տանջանքը, ոչ էլ
մահը չեն սարսափեցնի նրանց:
Բայց եթե նրանք անարժան
գտնվեն և կյանքից զրկվեն
իրենց իսկ բնավորության
արատների պատճառով, Աստծո
սուրբ անունը կանարգվի:

Ամենուրեք նրանք լսում են
դավադրությունների մասին և
տեսնում են, թե ինչ թափով է
զարգանում
ապստամբությունը, և նրանց
մեջ մի բռնն ցանկություն,

հոգու մի անհագ տենչ է
բռնկվում, որ այդ մեծ
հավատուրացությունը
կասեցվի և վերջ դրվի
ամբարիշտների չարությանը:
Բայց Աստծուն աղերսելով
կասեցնել ապստամբությունը՝
Նրանք ինքնակշտամբանքի
սուր զգացումներ կունենան,
քանի որ այլևս ուժ չունեն
դիմակայելու չարի զորեղ
հոսանքին և ետ մղելու այն:
Նրանք զգում են, որ եթե միշտ
իրենց ողջ կարողությամբ
ծառայեին Քրիստոսին՝ առաջ
գնալով զորությունից դեպի
զորություն, սատանայի զորքն

իրենց հաղթելու ավելի քիչ ուժ
կունենար:

Նրանք իրենց հոգու կսկիծն են
հայանում Աստծուն՝
վկայակոչելով իրենց
ապաշխարությունն անցյալում
գործած իրենց բազմաթիվ
մեծերի համար և աղերսելով
Փրկչի խոստումը. «Թող իմ
զորությունից բռնեն, ինձ հետ
խաղաղություն անեն, թող
խաղաղություն անեն ինձ հետ»
(Եսայիա 27.5): Նրանց հավատը
չի թուլանում նրանից, որ իրենց
աղոթքների [626]
պատասխանն անմիջապես չեն

ստանում: Թեև գտնվելով
դառնազին հոգեվարքի,
սարսափի ու վիատության մեջ՝
Նրանք չեն դադարեցնում
իրենց աղոթքները: Նրանք
բռնում են Աստծո
զորությունից, ինչպես Չակոբը՝
Յրեշտակից, և Նրանց հոգին
ասես աղերսում է. «Չեմ թողնի
քեզ, մինչև որ ինձ չօրհնես»:

Եթե Չակոբը նախապես
ապաշխարած չփներ
առաջնեկությունը
խաբեությամբ ձեռք բերելու իր
մեղքի համար, Աստված չէր լսի
Նրա աղոթքը և ողորմածաբար

չէր պահպանի նրա կյանքը:
Նմանապես էլ, եթե նեղության
ժամանակ Աստծո ժողովուրդն
ունենա մեղքեր, որոնք չեն
խոստովանվել, ապա վախի ու
հոգեվարքի մեջ նրանք
կընկճվեն, հուսահատութիւնը
կխորտակի նրանց հավատը, և
նրանք չեն կարող
վստահութեամբ խնդրել
Աստծուն իրենց ազատել: Բայց
խորապես գի-տակցելով իրենց
անարժանութիւնը՝ նրանք
ծածուկ մեղքեր չեն ունենա
հայտնելու: Նրանց մեղքերն
արդէն նախօրոք ներկայացվել
են դատաստանի և ջնջվել, և

Նրանք այլևս չեն կարող հիշել
դրանք:

Սատանան շատերին դրդում է
հավատալու, թե Աստված
անուշադիր է իրենց
անհավատարմությանը կյանքի
աննշան հարցերում, բայց
Ջակոբի հանդեպ Նրա
վերաբերմունքը ցույց է տալիս,
որ Նա երբեք չի արդարացնի
կամ հանդուրժի չարը: Բոլոր
Նրանք, ովքեր ջանում են
արդարացնել կամ թաքցնել
իրենց մեղքերը՝ թույլ տալով,
որ դրանք չխոստովանված ու
չներված մնան երկնային

գրքերում, կհաղթվեն
սատանայի կողմից: Որքան
ավելի բարձր է նրանց կոչումը
և պատվավոր՝ դիրքը, այնքան
ավելի ծանր է նրանց
հանցանքն Աստծո աչքերում, և
ավելի հաստատ է նրանց մեծ
թշնամու հաղթանակը: Նրանք,
ովքեր հետաձգում են իրենց
պատրաստությունն Աստծո
օրվան, չեն կարող դա անել
Նեղություն ժամանակ կամ էլ
ավելի ուշ: Բոլոր այդպիսիների
վիճակն անհուսալի է:

Այն ինքնակոչ քրիստոնյաները,
ովքեր անպատրաստ կլինեն,

երբ գա վերջին սուկալի
պայքարը, դառն
հուսահատությամբ կսկսեն
խոստովանել իրենց մեղքերը,
մինչ ամբարիշտները միայն
կցնծան Նրանց
տա-ռապանքից: Նրանց
խոստովանությունը նույնը
կլինի, ինչ որ Եսավինը կամ
Յուդայինը: Նրանք ողբում են
ոչ թե օրինազանցության, այլ
դրա հետևանքի համար: Նրանք
[621] անկեղծորեն չեն զղջում,
ոչ էլ գարշում են չարից: Նրանք
պատժվելու վախից են
խոստովանում իրենց մեղքը,
բայց ինչպես փարավոնն

անցյալում, նրանք նորից
կապստամբեին երկնքի դեմ,
եթե պատիժները դադարեին:

Չակորբի պատմութիւնը
հավաստիացնում է մեզ, որ
Աստված չի թողնի նրանց,
ովքեր խաբւել, գայթակղւել ու
մեղանչել են, սակայն ճշմարիտ
ապաշխարութեամբ կրկին Նրա
մոտ են եկել: Մինչ սատանան
կձգտի կործանել
այդպիսիներին, Աստված իր
հրեշտակներին կուղարկի,
որպեսզի վտանգի ժամանակ
մխիթարեն ու պաշտպանեն
նրանց: Սատանայի

հարձակումները կատաղի են ու
վճռական, նրա
մոլորությունները՝ սարսափելի,
բայց Տիրոջ աչքն իր ժողովրդի
վրա է, և Նա լսում է նրանց
աղաղակը: Նրանք մեծ
նեղության մեջ են, հնոցի
կրակը ասես պատրաստ է
ոչնչացնելու նրանց, բայց
Ջալեցնողը նրանց դուրս է
բերելու, ինչպես կրակով
փորձված ոսկի: Աստծո սերն իր
որդիների հանդեպ նույնքան
ուժգին ու ջերմ է այս
ամենախիստ փորձության
ժամանակ, որքան նրանց
ամենաբարեկեցիկ օրերին,

բայց անհրաժեշտ է, որ նրանք
անցնեն հնոցի միջով. երկրային
ամեն բան պետք է վերանա,
որպեսզի Քրիստոսի պատկերը
կատարելապես արտացոլվի:

Մեզ սպասող վշտի և
հոգեվարքի ժամանակն
այնպիսի հավատ է
պահանջելու, որը
կհաղթահարի հոգևածուրթյունը,
հապաղումը և սովը, հավատ,
որն ամենադաժան
փորձուրթյունից անգամ չի
թուլանա: Յուրաքանչյուրին
փորձնական ժամկետ է տրված
այդ ժամանակին

պատրաստվելու համար:
Չակոբը հաղթեց, որովհետեւ
համար էր ու վճռական: Նրա
հաղթանակը վկայում է համար
աղոթքի գորութեան մասին:
Բոլոր նրանք, ովքեր Չակոբի
նման կկառչեն Աստծո
խոստումներին և կլինեն
նույնքան անկեղծ ու համար,
հաջողութեան կհասնեն: Իսկ
ովքեր չեն կամենում ուրանալ
իրենց ես-ը, երկար ու
ջերմեռանդ աղոթքով
պայքարել Աստծո հետ, չեն
ստանա Նրա օրհնութիւնը:
Գոտեմարտ Աստծո հետ,
որքա՛ն քչերը գիտեն, թե ինչ է

դա: Ինչքա՛ն քչերն են երբևէ
Աստծուն ձգտել հոգու անհազ
տենչանքով, մինչև որ Նրա
զորությունն առնեն: Երբ
վհատության ափքները, որ ոչ
մի լեզու չի կարող
արտահայտել, հեղեղում են
աղոթողին, որքա՛ն քչերն են
աննահանջ հավատով կառչում
Աստծո խոստումներին: [622]

Նրանք, ովքեր այսօր թույլ են
հավատով, սատանայական
մոլորությունների և խղճին
բռնացող հրամանագրի
իշխանության տակ
հայտնվելու մեծագույն

վտանգի մեջ: Եվ եթե նույնիսկ
Նրանք դիմանան այս
փորձությանը, նեղության
ժամանակ ընկնելու են խոր
վհատության ու հոգեվարքի
մեջ, քանզի երբեք
սովորություն չեն ունեցել
վատա- հելու Աստծուն:
Հավատի անտեսված դասերը
Նրանք ստիպված կլինեն
յուրացնել հուսահատության
ահռելի ճնշման տակ:

Մենք պետք է այժմ ճանաչենք
Աստծուն՝ փորձելով Նրա
խոստում-ները: Հրեշտակները
գրի են առնում յուրաքանչյուր

ջերմեռանդ ու անկեղծ աղոթք:
Ավելի լավ է թողնել
եսասիրական հաճույքները,
քան անտեսել
հաղորդակցությունն Աստծո
հետ: Ծայրահեղ
աղքատությունն ու մեծագույն
ինքնուրացությունը Նրա
բարեհաճությամբ ավելի լավ է,
քան հարստությունը,
պատիվները, հանգիստն ու
ընկերությունը՝ առանց Նրա:
Մենք պետք է ժամանակ
գտնենք աղոթելու: Եթե թույլ
ենք տալիս, ոչ աշխարհիկ
շահերը զբաղեցնեն մեր միտքը,
Տերը կարող է ժամանակ տալ

մեզ՝ գրկելով մեզ մեր ոսկյա
կուռքերից, տներից կամ
բերքառատ հողերից:

Երիտասարդները չէին ընկնի
մեղքի ծուղակը, եթե
հրաժարվեին գնալ այլ
ճանապարհներով, բացի
Նրանից, որտեղ կարող են
խնդրել Աստծո օրհնությունը:
Եթե լրաբերները, ովքեր
աշխարհին հռչակում են
վերջին հանդիսավոր
Նախագգուշացումը, աղոթեին
Աստծո օրհնության համար ոչ
թե սառը, անտարբեր, ծուլ
կերպով, այլ Հակոբի նման

ջերմեռանդորեն ու հավատով,
ապա շատ առիթներ
կուսենային ասելու. «Դեմ առ
դեմ տեսա Աստծուն, և իմ անձը
ողջ մնաց» (Ճննդոց 32.30):
Այդժամ երկինքը նրանց
կհամարի իշխաններ, ովքեր ուժ
ունեն հաղթելու Աստծուն և
մարդկանց:

Շուտով վրա կհասնի
«նեղության ժամանակը,
ինչպիսին երբեք չի եղել», և
մենք կարիք կունենանք
այնպիսի փորձառության, որն
այժմ չունենք, և որը ձեռք
բերելու համար շատերը

չափազանց ծուլլ են: Հաճախ
սպասվող նեղութիւնն ավելի
մեծ է թվում, քան լինում է
իրականում, բայց սա չի
վերաբերում վերահաս
ճգնաժամին: Ամենավառ
նկարագրութիւնն անգամ
անկարող է ներկայացնել այդ
օրհասական փորձութեան
մեծութիւնը: Փորձութեան այդ
ժամին յուրաքանչյուր անձ
ինքնուրույն պիտի կանգնի
Աստծո առաջ: «Թեև Նոյը,
Դանիէլն ու Հոբը» երկրում
լինեին, «կենդանի եմ ես, ասում
է Տեր Եհովան, որ ոչ տղա [623]
և ոչ աղջիկ կազատեն, նրանք

իրենց արդարութեամբ իրենց
անձը կազատեն» (Եզեկիել
14.20):

Այժմ, մինչ մեր մեծ
Քահանայապետը քակութիւնն է
անում մեզ հա-մար, մենք պիտի
ջանանք կատարյալ դառնալ
Քրիստոսում: Մեր Փրկիչը
մտքով անգամ չի զիջել
փորձութեանը: Սատանան
մարդու սրտում որևէ հենակետ
է գտնում՝ ինչ-որ փայփայվող
մեղավոր ցանկութիւն, որի
միջոցով նրա փորձութիւնները
ուժ են առնում: Իսկ Քրիստոսն
իր մա- սին ասել է. «Այս

աշխարհի իշխանը գալիս է, և
ինձանում ոչինչ չունի»
(Յովհաննես 14.30): Սատանան
ոչինչ չկարողացավ գտնել
Աստծո Որդու մեջ, ինչը
հնարավորություն կտար իրեն
հաղթանակ տոնելու: Հիսուսը
պահեց իր Հոր
պատվիրանները, և Նրանում
մեղք չկար, որն առավելություն
տար սատանային: Նույն
վիճակում պիտի գտնվեն
Նրանք, ովքեր կկանգնեն
Նեղության ժամանակ:

Այս կյանքում է հենց, որ մենք
պետք է մեղքը հեռացնենք

մեզնից՝ հավատալով
Քրիստոսի քավչարար արյանը:
Մեր թանկագին Փրկիչը մեզ
հրավիրում է միանալ իրեն, մեր
տկարությունը միացնել իր
զորությանը, մեր
անգիտությունն՝ իր
իմաստությանը, մեր
անսրժանությունը՝ իր
արժանիքներին: Աստճո
նախախնամությունն այն
դպրոցն է, որտեղ մենք պետք է
սովորենք Հիսուսի հեզությունն
ու խոնարհությունը: Տերը միշտ
մեր առջև է դնում ոչ թե այն
ճանապարհը, որը մենք
կընտրեինք, քանզի այն ավելի

հեշտ ու հաճելի է թվում, այլ
կյանքի իսկական
նպատակները, իսկ մեզ մնում է
միայն համագործակցել այն
ուժերի հետ, որ երկինքը
նախատեսել է մեր
բնավորություններն
աստվածային օրինակին
համապատասխանեցնելու
համար: Ոչ ոք չի կարող
արհամարհել կամ հետաձգել
այդ գործը՝ առանց ահավոր
վտանգի ենթարկելու իր հոգին:

Չովհաննես առաքյալը տեսիլքի
մեջ բարձր ձայն լսեց երկնքից,
որ ասում էր. «Վա՛յ երկրին և

ծովին և նրանցում
բնակվողներին, որովհետև
Բանասարկուն վայր իջավ ձեզ
մոտ, որ մեծ բարկություն ունի՝
գիտենալով, որ քիչ ժամանակ
ունի» (Չայտնություն 12.12):
Ահավոր է այն
իրականությունը, որը
երկնային այս
բացականչության պատճառն է:
Սատանայի բարկությունն
աճում է իր ժամանակի
սպառվելուն զուգընթաց, և
նրա մոլորեցուցիչ ու
կործանարար գործն իր
գագաթնակետին է հասնելու
նեղության ժամանակ: [624]

Ճուտով երկնքում ահավոր
գերբնական տեսիլքներ
կերևան՝ ի նշան դևերի
հրաշագործ ուժի: Դևերի
ոգիները կհայտնվեն երկրի
թագավորների և ողջ աշխարհի
մոտ՝ մոլորեցնելու նրանց և
ստիպելու, որ միանան
սատանային՝ երկնքի
կառավարություն դեմ նրա
վերջին պայքարում: Նրանց
խաբեությունից
հավասարապես կմոլորվեն
ղեկավարներն ու
հպատակները: Մարդիկ վեր
կկենան՝ ձևացնելով, թե իրենք

Քրիստոսն են, և հավակնելով
այն տիտղոսին ու
երկրպագությանը, որ
պատկանում են միայն
աշխարհի Փրկչին: Նրանք
զարմանահրաշ բժշկություններ
կանեն՝ ասելով, թե
հայտնություններ ունեն
երկնքից, որոնք, սակայն,
հակասելու են Սուրբ Գրքի
վկայությանը:

Որպես խաբեության մեծ
դրամայի եզրափակիչ
գործողություն՝ սատանան
ինքը կհայտնվի Քրիստոսի
կերպարանքով: Եկեղեցին

վաղուց հայտարարել է, որ
սպասում է Փրկչի գալստյանը՝
որպես իր հույսերի
իրականացում: Մեծ խաբեքան
այժմ այնպես կանի, որ թվա, թե
Քրիստոսը եկել է: Երկրի
տարբեր մասերում սատանան
կհայտնվի մարդկանց որպես
շլացուցիչ պայծառության
փառավոր մի էակ՝ հիշեցնելով
Աստծո Որդուն՝ նկարագրված
Յովհաննեսի Յայտնություն
գրքում: (Յայտնություն
1.13-15): Նրան շրջապատող
փառքը գերազանցում է այն
ամենն, ինչ երբևէ տեսել են
մահկանացու աչքերը: Օդը

լցվում է հաղթական
բացականչություններով.
«Քրիստոսը եկե՛լ է, Քրիստոսը
եկե՛լ է»: Փռվելով գետնին՝
մարդիկ երկրպագում են նրան,
իսկ նա բարձրացնում է իր
ձեռքերը և օրհնության խոսքեր
ասում նրանց, ինչպես
Քրիստոսն էր օրհնում իր
աշակերտներին, երբ երկրում
էր: Նրա ձայնը մեղմ է, զուսպ,
բայց և քաղցրահնչյուն: Քնքուշ
ու կարեկից տոնով նա
արտասանում է երկնային այն
շնորհառատ
ճշմարտություններից մի
քանիսը, որ ասել էր Փրկիչը:

Նա բժշկում է մարդկանց
հիվանդությունները և ապա,
կեղծելով Քրիստոսի
հեղինակությունը, պնդում է,
թե շաբաթը վախել է կիրակիի,
և հրամայում է բոլորին սուրբ
պահել այն օրը, որ ինքն օրհնել
է: Նա հայտարարում է, որ
Նրանք, ովքեր համառորեն
շարունակում են սուրբ պահել
յոթերորդ օրը, հայիոյում են իր
անունը՝ հրաժարվելով լսել իր
հրեշտակներին՝ ուղարկված
լույս և ճշմարտություն բերելու
Նրանց: Սա հզոր, գրեթե
անհաղթահարելի խաբեություն
է: Սամարիացիների նման, որ

[625] Խաբվեցին Սիմոն մոգից,
շատերը՝ ամենափոքրից մինչև
ամե-նամեծը, կախարդված
լսում են այդ խոսքերն՝ ասելով.
«Սա է Աստծո այն մեծ
զորությունը» (Գործք 8.10):

Սակայն Աստծո ժողովուրդը չի
խաբվի: Այս կեղծ քրիստոսի
ուսմունքը ներդաշնակ չէ
Սուրբ Գրքին: Նրա
օրհնությունն ուղղված է
Նրանց, ովքեր երկրպագում են
գազանին ու Նրա պատկերին:
Այդ Նրանք են հենց, ում վրա,
ըստ Աստվածաշնչի, թափվելու
է Աստծո անողորմ զայրույթը:

Ավելին, սատանային թույլ չի տրվի կրկնօրինակել Քրիստոսի գա-լուստը: Փրկիչը զգուշացրել է իր ժողովրդին այս խաբեության վերաբերյալ և հստակորեն նկարագրել իր երկրորդ գալստյան ձևը: «Սուտ քրիստոսներ և սուտ մարգարեներ վեր կկենան և մեծ նշաններ ու հրաշքներ կտան, մինչև որ, եթե կարելի լիներ, ընտրվածներին էլ կմոլորեցնեին: ...Արդ եթե ձեզ ասեն՝ Ահա անապատում է, դուրս չգաք, կամ թե՛ Ահա ներսի սենյակում է,

չհավատաք: Որովհետև ինչպես
կայծակն է դուրս գալիս
արևելքից ու երևում մինչև
արեմուտք, այնպես էլ կլինի
մար- դի Որդու գալուստը»
(Մատթեոս 24.24-27,31, 25.31,
Հայտնություն 1.7, Ա
Թեսաղոնիկեցիս 4.16,17):
Այսպիսի գալուստն անհնար է
կեղծել: Այդ մասին կիմանան
բոլորը, ողջ աշխարհը կտեսնի
այն:

Միայն նրանք, ովքեր
ջանասիրաբար ուսումնասիրել
են Սուրբ Գիրքը և ընդունել
ճշմարտության սերը,

կպաշտպանվեն այդ ահռելի
մոլո-րությունից, որը կգերի
աշխարհը: Աստվածաշնչի
վկայությամբ նրանք
կբացահայտեն քողարկված
խաբեբային: Փորձության ժամը
վրա է հասնելու բոլորին՝
մաղելով մարդկանց և ի հայտ
բերելով իսկական
քրիստոնյաներին: Արդյոք
բավականաչափ ամո՞ւր է
կանգնած Աստծո ժողովուրդը
Նրա խոսքի վրա, որպեսզի
տեղի չտա իր
զգացմունքներին: Այսպիսի
ճգնաժամի պահին կապավինի՞
արդյոք միայն և միայն

Աստվածաշնչին:
Չնարավորութեան դեպքում
սատանան կփորձի արգելել,
որպեսզի նրանք անպատրաստ
գտնվեն այն օրը: Նա գործերին
այնպիսի ընթացք կտա, որ
արգելափակի նրանց
ճանապարհը, թակարդը գցի
երկրային գանձերով ու դրդի
կրել իրենց ծանր, հոգնեցուցիչ
բեռը, որպեսզի [626] նրանք
կլանված լինեն այս կյանքի
հոգսերով, և փորձութեան օրը
նրանց վրա հասնի գողի նման:

Երբ քրիստոնեական աշխարհի
տարբեր ղեկավարների կողմից

պատվիրանները պահողների
դեմ հռչակած օրենքը նրանց
զրկի կառավարութեան
պաշտպանութիւնից և հանձնի
այն մարդկանց ձեռքը, ովքեր
ցանկանում են նրանց
կործանումը, Աստուծո
ժողովուրդը կփախչի
քաղաքներից ու գյուղերից և
խմբերով կբնակվի
ամենսղքված ու ամառի
վայրերում: Շատերն իրենց
ապաստարանը կգտնեն
լեռների ամրոցներում:
Պիեմոնտի հովիտների
քրիստոնյաների նման՝ նրանք
երկրի լեռնաբերձր վայրերն

իրենց համար սրբարաններ
կդարձնեն և
շնորհակա-լուծյուն կհայտնեն
Աստծուն «վեմերի
ամրուծյունների» համար
(Եսայիա 33.16): Բայց շատերը՝
բոլոր ազգերից ու խավերից,
բարձր թե ցածր, հարուստ թե
աղքատ, սևամորթ թե
սպիտակամորթ, կմատնվեն
ամենաանարդարացի ու
դաժան գերուծյան: Աստծո
սիրեցյալները ծանր օրեր են
ապրելու՝ շղթայակապ,
բանտերում փակված ու
մահվան դատապարտված, իսկ
ոմանք էլ՝ խավար ու նողկափ

զնդաններում սո-վամահության
մատնված: Ոչ ոք չի լսի նրանց
հառաչանքը, մարդկային ոչ մի
ձեռք օգնության չի հասնի
նրանց:

Կմոռանա՞ արդյոք Տերն իր
ժողովրդին փորձության այս
ժամին: Մոռացա՞վ արդյոք
հավատարիմ Նոյին, երբ
դատաստաններ ուղղարկեց
մինչ ջրհեղեղյան աշխարհի
վրա: Մոռացա՞վ արդյոք
Ղովտին, երբ երկնքից կրակ
իջավ՝ լափելու հարթավայրի
քաղաքները: Մոռացա՞վ Նա
արդյոք Ջովսեփին եգիպտոսի

կռապաշտութեան մեջ:
Մոռացա՞վ Նա եղիային, երբ
Յեզաբելը երդումով սպառնաց
Նրան արժանացնել Բահադի
մարգարտների ճակատագրին:
Մոռացա՞վ արդյոք Երեմիային
բանտի խավար ու մռայլ գուբի
մեջ: Մոռացա՞վ Նա արդյոք
երեք ազնվական
երիտասարդներին կրակի
հնոցում կամ Դանիելին՝
առյուծների գուբի մեջ:

«Սիոնն ասաց. Եիովան ինձ
ձգել է, և Տերը մոռացել է ինձ:
Մի՞թե կինը կմոռանա իր
կաթնակեր մանուկին, որ չգթա

իր որովայնի ծննդյան վրա.
Նրանք եթե մոռանան էլ, ես քեզ
չեմ մոռանա: Ահա ես իմ ձեռքի
մեջ եմ նկարագրել քեզ»
(Եսայիա 49.14-16): Չորաց Տերն
ասել է. «Ձեզ դիպչողը նրա
աչքերի բիբին է դիպչում»
(Չաքարիա 2.8): [627]

Թշնամիները կարող են նրանց
բանտ նետել, սակայն զնդանի
պա-տերը չեն կարող խզել
նրանց հոգու
հաղորդակցությունը Քրիստոսի
հետ: Նա, ով տեսնում է նրանց
ամեն մի թուլությունը և
տեղյակ է նրանց

յուրաքանչյուր փորձութեանը,
երկրային բոլոր
իշխանութիւններից վեր է:
Նրա հրեշտակները երկնքից
լույս և խաղաղութիւն կբերեն
Նրանց մե-նավոր խցերը, և
բանտը պալատ կդառնա,
որովհետև այնտեղ կբնակվեն
հավատով հարուստները, և
մռայլ պատերը կլուսավորվեն
երկնային լույսով, ինչպես այն
ժամանակ, երբ Պարան ու
Շիղան աղոթում ու գո-վերգում
էին Աստծուն Փիլիպպեի
բանտում:

Աստժո պատուհասները վրա
կհասնեն նրանց, ովքեր ուզում
են ճնշելու կործանել Նրա
ժողովրդին: Նրա
երկայնամտությունն
ամբարիշտ-ների հանդեպ
մարդկանց հանդուգն է
դարձնում անօրենության մեջ,
բայց նրանց պատիժը թեև
երկար հետաձգված,
այնուամենայնիվ,
անխուսափելի ու սարսափելի է
լինելու: «Ինչպես Փարասին
սարի վրա՝ վեր է կենալու Տերը
և բարկանալու է, ինչպես
Գաբավոնի ձորում, որ գործի իր
գործը՝ իր օտարոտի գործը, և

կատարի իր պաշտոնը՝ իր
տարօրինակ պաշտոնը»
(Եսայիա 28.21): Մեր գթասիրտ
Աստճո համար պատժերը
«օտարոտի» գործ է: «Կենդանի
եմ ես, ասում է Տեր Եհովան, որ
ամբարշտի մեռնելը չեմ ուզում»
(Եզեկիել 33.11): Տերը
«ողորմած և գթած՝
երկայնամիտ և ստատ է
տրտմությամբ ու
ճշմարտությամբ
...անօրենություն, հանցանք և
մեղք ներող»: Սակայն Նա
«երբեք չի արդարացնի
հանցավորին»: «Տերը
երկայնամիտ է և մեծագոր, և

երբեք չի արդարացնի
հանցավորին» (Ելից 34.6,7,
Նաում 1.3): Արդարության
սարսափելի գործերով Նա
կվերականգնի իր
ոտնահարված օրենքի
հեղինակությունը: Այն մասին,
թե ինչ խստությամբ են
պատժվելու անօրենները,
կարելի է դատել
արդարադատությունն
իրագործելու՝ Տիրոջ
դժկամությամբ: Այն
ժողովուրդը, որին Նա երկար
համբերում է և չի հատուցելու,
մինչև Նա չլրացնի իր
անօրենության չափը, ի վերջո

Խամելու Է Աստծո բարկության
բաժակը անխառն
ողորմության հետ:

Երբ Քրիստոսն ավարտի իր
բարեխոսությունը
սրբարանում, սպառնացող
անխատն բարկությունը
կթափվի նրանց վրա, ովքեր
երկրպագում են գազանին ու
նրա պատկերին և ընդունում
նրա դրոշմը (Յայտնություն
14.9,10): Այդ սուկալի ու
համատարած
դատաստանները, որ տեղալու
են աշխարհի վրա Աստծո
ժողովրդի [628] վերջնական

ազատագրումից անմիջապես
առաջ, իրենց բնույթով նման
կլինեն Եգիպտոսի վրա
թափված պատուհասներին,
երբ Աստված պատրաստվում
էր ազատագրել Իսրայելին:
Չայտնության հեղինակն
այսպես է նկարագրում այդ
սարսափեփ հարվածները.
«Չարաչար պալարներ եղան
այն մարդկանց վրա, որ ունեին
գազանի դրոշմն ու
երկրպագում էին նրա
պատկերին»: Ծովը «դառապ
մեռածի արյունի նման, և ամեն
կենդանի շունչ սատկեց, որ
ծովում էր»: Եվ «գետերն ու

ջրերի աղբյուրները... արյուն
եղան»: Որքան էլ զարհուրելի
են այս պատուհասները, Աստծո
դատաստանը լիովին
արդարացված է: Աստծո
հրեշտակը հայտարարում է.
«Արդար ես, Տեր, որ այս
դատաստանն արիր: Քանի որ
սուրբերի և մարգարեների
արյունը թափեցին, դրա համար
էլ արյուն տվիր նրանց խմելու,
որ արժանի են» (Յայտնություն
16.2-6): Աստծո ժողովրդին
դատապարտելով մահվան՝
նրանք նույնքան մեղավոր են
նրանց արյունը թափելու մեջ,
ինչպես եթե իրենց իսկ

ձեռքերով անեին դա:
Նմանապես Քրիստոսն էր
ժամանակի հրեաներին
հանցավոր հռչակեց բոլոր
սուրբերի արյան մեջ, որ
թափվել էր Չաբեփ օրերից ի
վեր, քանզի նրանք համակված
էին նույն ոգով և ձգտում էին
անել նույն գործը, որ արել էին
մարգարեներին սպանողները:

Չաջորդ պատուհասի ժամանակ
արեգակին «տրվեց... որ
մարդկանց խորշակահար անի
կրակով: Եվ խորշակահար
եղան մարդիկ սաստիկ տաքով»
(Չայտնություն 16.8,9):

Մարգարեներն այսպես են
Նկարագրում երկրի վիճակն
այդ ահավոր օրերին. «Երկիրը
սուզ է անում... որովհետև
փչացել է դաշտի բերքը:
...Արտի բոլոր ծառերը չորացել
են, որովհետև ցամաքել է
ուրախությունը մարդկանց
որդիներից»: «Սերմերը փտել
են հողակոշտերի տակ,
ամայացել են շտեմարանները...
Ինչպե՛ս են հեծում
անասունները, շշկվել են
արջառների հոտերը, որովհետև
արոտ չկա նրանց համար...
Չորացել են ջրերի վտակները, և
կրակն այրել է անապատի

արոտները»: «Եվ պիտի ողբան
տաճարի երգերն այն օրը,
ասում է Տեր Եհովան. շա՛տ
դիպկներ, ամեն տեղ ձգված՝
լուռ» (Յովել 1.10-12, 17-20,
Ամոս 8.3):

Այս պատուհասները չեն
թափւի բոլորի վրա, այլապես
երկրի բնա-կիչներն
ամբողջովին բնաջինջ կլինեին:
Այնուհանդերձ դրանք [629]
ամենասարսափելի
հարվածները կլինեն, որ երբևէ
տեսել են մահկանա-ցու
մարդիկ: Փորձնական ժամկետի
ավարտից առաջ մարդկանց

վրա հասած բոլոր
դատաստանները զուգորդված
են եղել ողորմությամբ:
Քրիստոսի արյան շնորհիվ
մեղավորն ազատվել էր իր
հանցանքի արժանի պատիժը
կրելուց, բայց վերջին
դատաստանի ժամանակ
բարկությունը գթասրտությամբ
չի մեղմացվի:

Այդ օրն ամբոխները կկամենան
պաշտպանվել Աստծո
գթասրտու-թյամբ, որն այդքան
երկար արհամարհել էին: «Ահա
օրեր են գալիս, ասում է Տեր
Եհովան, որ սով պիտի

ուղարկեմ երկրի վրա, ոչ թե
հացի սով և ոչ ջրի ծարավ, այլ
Տիրոջ խոսքը լսելու: Եվ պիտի
թափառեն ծովից մինչև ծով և
հյուսիսից մինչև արևելք,
նրանք պիտի ման գան՝ Տիրոջ
խոսքը որոնելու, բայց պիտի
չգտնեն» (Ամովս 8.11,12):

Աստծո ժողովուրդը նույնպես չի
խուսափի տառապանքից,
սակայն հալածանքի ու
վհատության, զրկանքների ու
սովի մեջ նա չի մատնվի
կորստյան: Աստված, ով հոգ
տարավ Եղիայի մասին, չի
անցնի իր ինքնագոհ

գավակներից և ոչ մեկի կողքով:
Նա, ով գիտի նրանց գլխի
մազերի հաշիվը, կհոգա նրանց
համար, և սովի ժամանակ
նրանք կկե-րակրվեն: Մինչ
ամբարիշտները մեռնում են
սովից ու աղետներից,
հրեշ-տակները կպաշտպանեն
արդարներիս և կհոգան նրանց
կարիքները: «Արդարությամբ
վարվողին» տրված է այս
խոստումը. «Նրա հացը տրվում
է, նրա ջրերն ապահով են»:
«Աղքատներն ու տնանկները
ջուր են որոնում, և չկա, նրանց
լեզուն ծարավից չորացել է. ես՝
Եհովաս, նրանց պատասխան

Եմ տալու, Իսրայելի Աստվածս
Նրանց չեմ ձգի» (Եսայիա
33.15,16,41.17):

«Թեև թզենին չծաղկի, և
որթերի վրա բերք չլինի,
ձիթենու արդյունքը ստի և
արտերը կերակուր չտան,
կտրվի ոչխարը փարախից, և
արջառ չլինի գոմերում»,
այնուամենայնիվ, Աստծուց
վախեցողները «Տերով պիտի
ցնձան և իրենց վտկության
Աստծով պիտի ուրախանան»
(Ամբակում 3.17,18):

«Տերը քո պահապանն է, Տերը
քեզ հովանի է քո աջ ձեռքի
վրա: Ցերեկն արեգակը չի
զարկի քեզ, ոչ էլ լուսինը՝
գիշերը: Տերը կպահպանի քեզ
ամեն չարից, [630] նա
կպահպանի քո անձը»: «Նա
կփրկի քեզ որսողի որոգայթից,
չար ժանտամահից: Նա կծածկի
քեզ իր փետուրներով, նրա
թևերի տակ ապահով կլինես.
Նրա ճշմարտությունն ասպար է
և զրահ: Դու չես վախենա
գիշերվա զարհուրանքից, այն
նեսից, որ թռչում է ցերեկը: Այդ
ժանտամահից, որ խավարում
շուռ է գալիս, այն հարվածից,

որ սատկացնում է կեսօրին:
Չազար հոգի քո կողմից
կընկնեն, և տասը հազար՝ քո
աջ կողմից, բայց քեզ չի
մոտենա: Միայն քո աչքերով
կնայես և ամբարիշտների
հատուցումը կտեսնես:
Որովհետև դու Բարձրյալին՝
Տիրոջը, որ իմ հույսն է, քեզ
ապավեն արիր, քեզ չար բան չի
հասնի, և նեղութուն չի
մոտենա քո բնակարանին»
(Սաղմոս 121.5-7,91.3-10):

Սակայն մարդկային
տեսակետից կթվա, թե շատ
չանցած՝ Աստծո ժողովուրդն իր

վկայութեանն արյունով է
կնքելու, ինչպես նախկինում
արել են նահատակները:
Նրանք իրենք էլ սկսում են
վախենալ՝ մտածելով, թե Տերն
իրենց մատնել է թշնամիների
ձեռքը: Դա սուկումալի
հոգեվարքի ժամանակ է
լինելու: Գիշերուզօր նրանք
աղերսում են, որ Աստված փրկի
իրենց: Ամբարիշտները ցնծում
են, և լսվում է նրանց
ծաղրական
բացականչությունը. «Ո՞ր է
հիմա ձեր հավատը: Ինչո՞ւ
Աստված ձեզ չի ազատում մեր
ձեռքից, եթե դուք իսկապես

Նրա ժողովուրդն եք»: Բայց սպասողները հիշում են Գողգոթայի խաչի վրա մեռնող Հիսուսին և քահանաների ու իշխանների ծաղրական խոսքերը. «Ուրիշներին ազատեց, ինքն իրեն չի կարողանում ազատել, թե որ Իսրայելի թագավորն է, թող հիմա իջնի խաչից, և կհավատանք դրան» (Մատթեոս 27.42): Հակոբի նման բոլորը գոտեմարտում են Աստծո հետ: Նրանց դեմքերին երևում է ներքին պայքարի դրոշմը: Բոլորի դեմքերը գունատ են: Սակայն նրանք չեն

դադարեցնում իրենց
ջերմեռանդ աղոթքները:

Եթե մարդիկ երկնային
տեսողություն ունենային, ապա
կտեսնեին գորությամբ
գերազանցող հրեշտակների
խմբեր՝ հավաքված Նրանց
շուրջը, ովքեր պահում են
Քրիստոսի համբերության
խոսքը: Կարեկից գորովանքով
այդ հրեշտակներն ականատես
են եղել Նրանց վշտին ու լսել
Նրանց աղոթքները: Նրանք
սպասում են իրենց
Ջրամանատարի խոսքին,
որպեսզի վտանգից ազատեն

Նրանց: Բայց նրանք դեռ մի
փոքր էլ պետք է սպասեն:
Աստճո ժողովուրդը պետք է
խմի [631] բաժակից և մկրտվի
մկրտութեամբ: Նրանց համար
այդքան ցավափ այդ
հապաղումն էլ հենց իրենց
աղոթքների լավագույն
պատասխանն է:
Վստահութեամբ սպասելով
Տիրոջ միջամտությանը՝ նրանք
սովորում են հավատ, հույս և
համբերություն դրսևորել, ինչը
չափազանց քիչ են ունեցել
իրենց հոգևոր կյանքում: Բայց
հանուն ընտրյալների՝
Նեղութեան ժամանակը

կկարճացվի: «Մի՞թե Աստված
իր ընտրյալների համար
իրավունք չի անի, որ ցերեկ և
գիշեր աղաղակում են դեպի
Նա... Ասում եմ ձեզ, թե շուտով
իրավունք կանի Նրանց
համար» (Ղուկաս 18.7,8): Վերջը
կգա ավելի շուտ, քան մարդիկ
սպասում են: Տորենը
կհավաքվի և խուրձերով
կկապվի Աստծո շտեմարանի
համար, իսկ որոմները
կկապվեն՝ լափող կրակի մեջ
գցվելու համար:

Հավատարիմ իրենց
պարտականությանը՝ երկնային

պահապանները շարունակում
են հսկել: Թեև ըստ
համընդհանուր հրամանագրի
որոշվել է ժամանակը, երբ
պետք է պատվիրանները
պահողներին մահապատժի
ենթարկեն, նրանց թշնամիները
որոշ դեպքերում ջանալու են
դա անել նշված ժամանակից
շուտ: Բայց ոչ ոք չի կարողանա
շրջանցել զորավոր
պահապաններին, որոնք
շրջապատում են
յուրաքանչյուր հավատարիմ
հոգու: Ոմանց վրա են հասնում
քաղաքներից և գյուղերից
փախչելու ժամանակ, բայց

Նրանց դեմ բարձրացված սրերը
ծղոտի պես ջարդվում են ու
ընկնում: Մյուսները
պաշտպանվում են
զինվորականի տեսքով
հրեշտակների կողմից:

Բոլոր դարերում իր ժողովրդին
պաշտպանելու և ազատելու
համար Աստված գործել է սուրբ
հրեշտակների միջոցով:
Երկնային էակները գործունե
մասնակցութուն են ունեցել
մարդկանց կյանքում: Նրանք
հայտնվել են կայծակի պես
փայլուն հանդերձներով կամ
սովորական ճամփորդների

տեսքով: Հրեշտակները
հայտնվել են Աստծո
զավակներին մարդկային
կերպարանքով: Կեսօրին
Նրանք հանգստացել են
կաղնիների տակ՝ ասես
ճամփից հոգնած,
հյուրընկալվել են մարդկանց
հյուրասեր տներում, մուլթն
ընկնելիս ուղեկցել են
ճամփորդներին: Նրանք իրենց
իսկ ձեռքով վառել են կրակը
զոհառեղանի վրա, բացել են
բանտերի դռները և աղատ
արձակել Տիրոջ ծստաներին:
Երկնային սպառազինոււթյուն
հագած՝ նրանք եկան՝ դեն

գլորելու քարը Փրկչի
գերեզմանից:

Յրեշտակները հաճախ
մարդկային կերպանքով ներկա
են լինում արդարների [632]
ժողովներին: Նրանք այցելում
են նաև ամբարիշտների
հավաքները, ինչպես գնացին
Սողոմ` գրի առնելու նրանց
գործերը և պարզելու, թե չե՞ն
անցել նրանք արդյոք Աստծո
երկայնամտության սահմանը:
Տերը սիրում է ողորմել, և
հանուն մի քանիսի, ովքեր
իսկապես ծառայում են Իրեն,
Նա զսպում է աղետները,

որպեսզի բազմությունների
հանգիստը շարունակվի:
Աստճո դեմ մեղանջողները
հազիվ թե գիտակ-ցեն, որ
իրենց կյանքի համար
պարտական են այն փոքրաթիվ
հավա-տարիմ մարդկանց, ում
հաճույքով ծաղրում են ու
ճնշում:

Այո աշխարհի ղեկավարները
չգիտեն, որ իրենց
խորհուրդներում հաճախ
հրեշտակներ են ելույթ ունեցել:
Մարդիկ իրենց աչքերով նայել
են նրանց և իրենց ականջներով
լսել նրանց կոչերը: Նրանք

իրենց շուրթերով ընդդիմացել են նրանց առաջարկներին և ծաղրի են ենթարկել նրանց խորհուրդները, իրենց ձեռքերով վարկաբեկել ու վիրավորել են նրանց: Խորհրդարաններում և արդարադատության ատյաններում այս երկնային լրաբերները ցույց են տվել, որ քաջատեղյակ են մարդկային պատմությանը, նրանք շատ ավելի մեծ հաջողությամբ են պաշտպանել ճնշվածների դատը, քան վերջիններիս ամենաուռնակ ու պերճախոս պաշտպանները: Նրանք խափանել են ծրագրեր և

կանխել չարիքներ, որոնք
կարող էին մեծ վնաս հասցնել
Աստծո գործին և խոր
տառապանք պատճառել նրա
ժողովրդին: Վտանգի և վշտի
պահին «Տիրոջ հրեշտակը
բանակ է շինում նրանից
վախեցողների չորս կողմով և
փրկում է նրանց» (Սաղմոս
34.7):

Աստծո ժողովուրդը խորին
փափագով է սպասում իր
Արքայի գալստյան նշաններին:
Երբ դիմում են
պահապաններին. «Ի՞նչ կա
գի-շերից», նրանք, առանց

վարանելու, պատասխանում
են. «Առավոտը գալիս է ու նաև
գիշերը» (Եսայիա 21.11,12):
Լույսն արդեն շողում է
լեռ-նազագաթների վերևում
կուտակված ամպերի վրա:
Շուտով կհայտնվի Նրա փառքը,
և կծագի Արդարության
Արեգակը: Առավոտն ու գիշերը՝
երկուսն էլ մոտ են.
անվերջանալի օրվա
արշալույսը՝ արդարների, իսկ
հավերժական գիշերվա
մայրամուտը՝ ամբարիշտների
համար:

Երբ աղոթքում պայքարողները
շարունակում են թախանձագին
ա— դերսել Աստծուն,
վարագույրը, որ նրանցից
ծածկում է անտեսանելին,
կարծես ամբողջովին բացվում
է: Երկինքը փայլամ է
հավերժական օրվա
արշալույսով, և հրեշտակային
երգերի մեղեդու պես լսվում են
այս [633] խոսքերը. «Ամուր
բռնեք ձեր հավատը:
Օգնությունը գալիս է»:
Քրիստոսը՝ ամենագոր
Յաղթողը, անմահ փառքի մի
պսակ է մեկնում իր հոգնած
զինվորներին, և բաց

դարպասների ետեվից լսվում է
Նրա ձայնը. «Ահա ես ձեզ հետ
եմ: Սխ վախեցեք: Ես ծանոթ եմ
ձեր բոլոր վշտերին, ես կրել եմ
ձեր ցավերը: Դուք անծանոթ
թշնամուհ դեմ չե, որ
պատերազմում եք: Ես
պայքարել եմ հանուն ձեզ, և իմ
անունով դուք ավելի քան
հաղթողներ եք»:

Թանկագին Փրկիչը օգնություն
կուղարկի մեզ ճիշտ
ժամանակին: Երկինք տանող
ճանապարհը սրբված է Նրա
ոտնահետքերով: Մեզ ծակող
յուրաքանչյուր փուշ վիրավորել

Է և Նրան: Յուրաքանչյուր խաչ,
որ մենք կանչված ենք կրելու,
Նա կրել է մեզանից առաջ:
Տերը թույլ է տալիս
բախումներ, որպեսզի հոգին
պատրաստի խաղաղության
համար: Նեղության ժամանակը
սարսափելի վտրձություն է
Աստծո ժողովրդի համար, բայց
դա այն ժամանակն է, երբ
յուրաքանչյուր ճշմարիտ
հա-վատացյալ պետք է վեր
Նայի և հավատով տեսնի իրեն
շրջապատող խոստման
ծիածանը:

«Տիրոջ փրկվածները եա պիտի
դառնան և գան Սիոն ցնծագին
եր-գերով, և հավիտենական
ուրախա թյուն պիտի լինի
նրանց գլխին, ցնծու-թյան և
ուրախության պիտի հասնեն,
իսկ տրտմությունն ու
հեծությունը պիտի փախչեն:
Ես, ես եմ ձեզ մխիթարողը, դու
ո՞վ ես, որ վախենում ես
մահկանացու մարդուց և
մարդու որդուց, որ խոտի նման
է շինված: Եվ մոռանում ես
Տիրոջը՝ քո Ստեղծողին... և
վախենում ես միշտ՝ ամեն օր,
բռնավորի բարկությունից, որ
կարծես թե պատրաստ է քեզ

Կորցնելու: Բայց ո՞ւր է
բռնավորի բարկութիւնը:
Կալանավորը շուտով պիտի
ար-ձակվի, նա չի մեռնի գուբի
մեջ, և նրա հացը չի պակասի:
Ես եմ քո Տեր Աստվածը, որ
սաստում եմ ծովին, երբ նրա
ալիքներն աղմուկ են հանում:
Չորաց եիովա է իմ անունը: Ես
իմ խոսքերը դրի քո բերանում,
և իմ ձեռքի հովանիով ծածկեցի
քեզ» (Եսայիա 51.11-16):

«Ուրեմն լսիր այս, ով խեղճ, և
ով հարբած, բայց ոչ գինով.
Այսպես է ասում քո Տերը՝
Եիովան, և քո Աստվածը, որ

պաշտպանում է իր
ժողովրդին. ահա սանում եմ
ձեռքիցդ թմրութեան բաժակը, և
դու այլևս պիտի չխմես այն: Եվ
դնում եմ այն քեզ
հարստահարողների ձեռքին,
որոնք ասում էին [634] քո
անձին. Ճշիր, որ մենք
անցնենք, և դու քո մեջքը
երկրին հավասար արիր և
փողոցի պես՝
անցուդարձողների համար»
(Եսայիա 51.21-23):

Դարերի խորքը թափանցող
Աստծո հայացքն ուղղված է իր
ժողովրդին սպասվող

ճգնաժամին, երբ երկրային
ուժերը պիտի ելնեն նրա դեմ:
Գերված աքսորյալի պես նա
կվախենա մեռնել սովից կամ
բռնու-թյունից: Բայց Սուրբը, ով
Կարմիր ծովը բաժանեց
Իսրայելի ժողովրդի առաջ,
կդրսևորի Իր հզոր ուժը և
կազատի նրան գերու-թյունից:
«Նրանք իմը կլինեն, ասում է
Չորաց Տերը, այն օրը, երբ ես
կհագնեմ իմ մարգարիաները. և
ես կխնայեմ նրանց, ինչպես մի
մարդ իր որդուն կխնայի, որ
ծառայում է իրեն» (Մաղաքիա
3.17, անգլ. թարգմ.): Եթե այդ
ժամանակ թափվեր Քրիստոսի

հավատարիմ վկաների
արյունը, դա չէր կարող սերմի
պես լինել, ինչպես
Նահատակների արյունը, որը
պտուղ կտար Աստծո համար:
Նրանց հավատարմությունը
վկայություն չէր լինի՝ այլոց
ճշմարտության մեջ համոզելու
համար, քանզի կարծրացած
սրտերն անդամնալիորեն ետ
են մղել ողորմության
ալիքները: Եթե թույլ տրվեր, ոչ
արդարները դառնան իրենց
թշնամիների զոհը, խավարի
իշխանը կարող էր հաղթանակ
տոնել: Բայց սաղմոսերգուն
ասում է. «Չար օրերում նա

ծածկում է ինձ իր վրանի մեջ,
և ա թաքցնում է ինձ իր խորանի
ծածուկ տեղում» (Սաղմոս 27.5,
անգլ. թարգմ.): Քրիստոսն ասել
է. «Գնա, ով իմ ժողովուրդ,
մտիր քո սենյակները և գոցիր
քո դռները ետևիցդ, ծածկվիր մի
փոքրիկ վայրկյան, մինչև որ
բարկությունն անցնի:
Որովհետև ահա Տերը դուրս է
գալիս իր տեղից, որ երկրի
բնակիչներին այցելի իրենց
անօրենությունների համար»
(Եսայիա 26.20,21): Փառահեղ է
լինելու նրանց ազատագրումը,
ովքեր համբերությամբ սպասել
են Նրա գալստյանը, և ում

անունները գրված են կյանքի
գրքում: [635]

ԳԼՈՒԽ 40—ԱՍՏԾՈ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

Երբ նրանք, ովքեր պատվում են Աստծո օրենքը, զրկվեն մարդկային օրենքների պաշտպանությունից, տարբեր երկրներում միաժամանակ կսկսվի մի շարժում՝ նրանց ոչնչացնելու նպատակով: Երբ մոտենա հրա-մանագրում նշված ժամանակը, ժողովուրդը դավեր կնյութի, որպեսզի արմատախիլ անի ատելի աղանդը: Կորոշվի մի գիշերվա մեջ վճռական հարված հասցնել, որն ընդմիջտ կլռեցնի

բողոքի և հանդիմանութեան
ձայնը:

Աստճո ժողովուրդը՝ ոմանք
բանտախցերում, մյուսները
թաքնված անտառների ու
լեռների մեկուսի
ապաստարաններում,
շարունակում է Աստճուց
օգնութիւն աղերսել, մինչ
աշխարհի չորս կողմերում
զինված մարդկանց խմբերը
չար հրեշտակների
թելադրանքով պատրաստվում
են սպանութեան գործին: Եվ
հենց այդ ծայրահեղ վտանգի
պահին է, որ Իսրայելի

Աստվածը կմիջամտի՝
ազատագրելու իր
ընտրյալներին: Տերն ասում է.
«Դուք երգ կունենաք սուրբ
տոնի գիշերվա նման, և սրտի
ուրախություն՝ սրինգով
գնացողի պես, որ գնում է
Տիրոջ սարը՝ Իսրայելի Վեմի
մոտ: Եվ Տերը լսել է տալու իր
ձայնի փառքը, և իր բազկի
իջնելու ցույց է տալու սաստիկ
բարկությամբ ու լավտո կրակի
բոցով, հեղեղով, փոթորկով և
կարկտի քարերով» (Եսայիա
30.29,30):

Չաղթանակի, ծաղրանքի և
անեծքի աղաղակներով
չարացած մարդ-կանց ամբոխը
պատրաստվում է հարձակվելիք
գոհի վրա, երբ հանկարծ [636]
մի թանձր խավար՝ գիշերվա
մթուճյունից ավելի խիտ,
իջնում է երկրի վրա: Իսկ քիչ
անց, շողալով Աստծո գահից
ճառագող փառքով, երկնքում
մի ծիածան է բացվում և ասես
շրջապատում յուրաքանչյուր
աղոթող խմբի: Մոլեգնած
ամբոխները հանկարծ կանգ են
առնում: Լռում են Նրանց
ծաղրական գոռոցները: Նրանց
սպանիչ վայրագության

առարկան մոռացվում է:
Սոսկալի կանխազգացումներով
Նրանք իրենց աչքերը սևեռում
են Աստծո ուխտի
խորհրդանշանին և փափագում
ծածկվել Նրա շլացուցիչ
պայծառությունից:

Աստծո ժողովուրդը լսում է
հստակ ու մեղեդային մի ձայն.
» Վեր Նայեցեք»: Եվ իրենց
աչքերը բարձրացնելով դեպի
երկինք՝ նրանք տեսնում են
ավետյաց երկրի ծիածանը:
Երկնակամարը ծածկող սե ու
մռայլ ամ-պերը ցրվում են, և
Ստեփանոսի պես նրանք

Նայում են դեպի երկինք ու
տեսնում Աստծո փառքը և
մարդու Որդուն՝ նստած իր
գահին: Նրա աստվածային
կերպարանքում նրանք
նկատում են Նրա
նվաստացման նշանները և
Նրա շուրթերից լսում իր Յոր և
սուրբ հրեշտակների առաջ
ներկայացվող խնդրանքը.
«Կամենում եմ, որ նրանք, ում
ինձ տվիր, ինձ հետ լինեն
այնտեղ, որտեղ ես եմ»
(Յովհաննես 17.24): Դարձյալ
լսվում է մեղեդային ու
հաղթական մի ձայն՝ ասելով.
«Նրանք գալի՛ս են, նրանք

գալի՛ս են՝ սուրբ, անմեղ և
անբիծ: Նրանք պահել են իմ
համբերության խոսքը և պիտի
քայլեն հրեշտակների մեջ», և
Նրանց գունատ ու դողդոջուն
շուրթերից, ովքեր հաստատ են
պահելիրենց հավատը,
հաղթության աղաղակ է դուրս
թռչում:

Յենց կեսգիշերին Աստված
դրսևորում է իր գործությունն՝
իր ժողովրդին ազատագրելու
համար: Արեգակը հայտնվում է
իր շլացուցիչ փայլով:
Նշաններն ու հրաշքները
արագորեն հաջորդում են

միմյանց: Ամբարիշտները
սոսկումով ու զարմանքով
նայում են այդ տեսարանին,
մինչ արդարները հանդիսավոր
ուրախությամբ տեսնում են
իրենց ազա-տագրման
նշանները: Թվում է, թե
բնության մեջ ամեն ինչ շեղվել
է իր ընթացքից: Դետերը
դադարում են հոսել: Մութ,
թանձր ամպերը մոտենում և
բախվում են իրար: Մուլեգևած
երկնքի մեջտեղում
աննկարագրելի փառքի մի
տարածություն է երևում,
որտեղից լսվում է Աստծո ձայնը

շատ ջրերի ձայնի պես՝ ասելով.
«Եղավ» (Չայտնություն 16.17):

Այդ ձայնից ցնցվում են
երկինքն ու երկիրը: Չգոր
երկրաշարժ [637] է տեղի
ունենում, «որ այդպիսին դեռ չի
եղել, ինչ մարդիկ երկրի վրա
են, այնպիսի մեծ երկրաշարժ
եր» (Չայտնություն 16.17,18):
Երկինքն ասես բացվում ու
փակվում է, և այդ բացվածքից
փայլատակում է Աստծո գահից
ճառագող փառքը: Սարերը
ցնցվում են քամուց
տատանվող եղեգի նման, և
փշրվող ժայռերը ցրիվ են գալիս

ամեն կողմ: Ասես մոտեցող
փոթորկի ոռնոց է լսվում: Ծովը
կատաղորեն ալեկոծվում է:
Մրրկի շառաչյունն իրենց
ավերիչ գործը կատարող դևերի
ձայն է հիշեցնում: Ամբողջ
երկիրը բարձրանում և իջնում է
ծովի ալիքների պես: ճեղքվում
է նրա մակերեսը, և թվում է, թե
նրա հիմքերը փլուզվում են:
Լեռնաշղթաներն ընկղմվում են
ջրի մեջ, անհետանում են
մարդաբնակ կղզիները:
Նավահանգիստները, որ
Սողոմի պես են դարձել
ամբարշտության պատճառով,
կուլ են գնում կատաղի

ալիքներին: Մեծ Բաբելոնը
«հիշվեց Աստծո ա-ռաջ,որ իր
սաստիկ ցամառն գինու
բաժակը նրան տա»:
«Տաղանդաչափ» խոշոր
կարկուտն իր ավերիչ գործն է
անում (Յայտնություն 16.19,
21): Երկրի ամենահպարտ
քաղաքները հավասարվում են
հողին: Արքայական
պալատները, որոնց
կառուցման վրա աշխարհի
մեծամեծերը շռայլել են իրենց
հարստությունն՝ իրենց անձը
փառավորելու համար,
ավերակների են վերածվում
նրանց աչքերի առաջ:

Բանտերի պատերը փլուզվում են, և Աստծո ժողովուրդը, որ գերված էր իր հավատի համար, ազատ է արձակվում:

Գերեզմանները բացվում են, և «երկրի հողում ննջածներից շատերն» արթնանում են՝ «ոմանք՝ ի հավիտենական կյանք, իսկ ոմանք՝ ի հավիտենական նախատիևք և անարգանք» (Դանիել 12.2): Բոլոր նրանք, ովքեր մեռել էին՝ հավատալով երրորդ հրեշտակի պատգամին, գերեզմաններից դուրս են գալիս փառավորված՝ լսելու Աստծո խաղաղության

ուխտը նրանց հետ, ովքեր
պահել են Նրա օրենքը:
Չարություն են առնում նաև
«նրանք, որ խոցեցին նրան»
(Չայտնություն 1.7), որ
ծաղրեցին Քրիստոսին իր
մահացու հոգեվարքի ժամին, և
Նրա ճշմարտության ու Նրա
ժողովրդի ամենակատաղի
թշնամիները, որպեսզի տեսնեն
Նրան իր փառքի մեջ և այն
պատիվը, որին արժանանում
են հավատարիմներն ու
հնազանդները:

Թանձր ամպերը դեռ ծածկում
են երկինքը, սակայն արեք

մերթընդ-մերթ շողում է նրանց
միջից՝ նման եհովայի
վրիժառության աչքին: [638]
Վայրագ կայծակները
վազվզում են երկնքում՝ երկիրը
պարուրելով բո-ցեղեն շղարշով:
Ավելի բարձր, քան որոտի
ահավոր դղրդյունն է, լսվում են
խորհրդավոր ու զարհուրելի
ձայներ՝ ազդարարելով
ամբարիշտների ճակատագիրը:
Ոչ բոլորն են հասկանում այդ
բառերը, բայց դրանք
հստակորեն ընկալվում են կեղծ
ուսուցիչների կողմից: Նրանք,
ովքեր քիչ առաջ այնքան
անփուլյթ էին, այնքան

հանդուգն ու գռեհիկ, Աստծո
ժո-ղովրդի հանդեպ իրենց
դաժանության մեջ այնքան
ամբարտապան, հիմա դողում
են սուկու մից ու ցնցվում:
Նրանց ողբը խլացնում է
տարերթի աղմուկը: Դները
ճանաչում են Քրիստոսի
աստվածությունը և դողում
Նրա զորությունից, մինչ
մարդիկ, սարսափահար ու
ստորաքարշորեն սողալով,
տրտմություն են աղերսում:

Չին օրերի մարգարեները,
տեսնելով Աստծո օրը սուրբ
տեսիլքի մեջ, ասել են.

«Ողբացեք, որովհետեւ մոտ է
Տիրոջ օրը, իբրեւ զորավոր
ավերում է գալիս
Ամենազորավորից» (Եսայիա
13.6): «Մտիր ժայռի մեջ և
հողում թաք կացիր Տիրոջ
ահավորութեան երեսից և նրա
վեհափառութեան
մեծութունից: Մարդիս
ամբարտավան աչքերը պիտի
խոնարհվեն, և պիտի իջնի
մարդկանց հպարտութունը, և
միայն Տերը կբարձրանա այն
օրը: Որովհետև Չորաց Տերը
մեկ օր ունի ամեն
ամբարտավանութեան ու
բարձրութեան դեմ և ամեն

հպարտացողների դեմ, և
Նրանք պիտի ցածրանան»:
«Այն օրը մարդ իր արձաթի
կուռքերն ու ոսկի կուռքերը, որ
շինել է՝ Նրան երկրպագելու
համար, կգցի խլուրդների և
չղջիկների մոտ, որպեսզի մտնի
ապառաժների ծակերը և
վեմերի ծերպերը Տիրոջ վախի
երեսից և Նրա վեհափառության
մեծությունից» (Եսայիա
2.10-12, 20,21):

Ամպերի բացվածքից մի աստղ
է շողում, որի պայծառությունը
խա-վարի ֆոնին
քառապատկվում է: Այն հույս և

ուրախություն է ներշնչամ
հավատացյալներին, իսկ
Աստծո օրենքը խախտողները
Նրանում տեսնում են Աստծո
զայրույթի նախանշանակը:
Նրանք, ովքեր ամեն ինչ
զոհաբերել են հանուն
Քրիստոսի, այժմ ապահով են՝
ասես թաքնված Տիրոջ խորանի
ծածուկ տեղում: Նրանք
վարձվել են, և աշխարհի ու
ճշմարտության թշնամիների
ատաղ իրենց
հավատարմությունն են ցույց
տվել Նրա հանդեպ, [639] ով
մեռավ հանուն իրենց: Հրաշալի
փոփոխություն է տեղի ունեցել

Նրանց հետ, ովքեր մահվան
երախում իսկ պահպանել են
իրենց մաքրությունը: Նրանք
անսպասելիորեն ազատվել են
դևերի փոխակերպած
մարդկանց մութ ու
սահմուկեցուցիչ բռնու-թյունից:
Նրանց դեմքերը՝ դեռ վերջերս
գունատ, տազնապած ու
հյուճված, այժմ փայլում են
հիացմունքով, հավատով ու
սիրով: Լսվում է հաղթության
ցնձագին երգը. «Աստված մեզ
համար ապավեն է և
գորու-թյուն, նեղությունների
մեջ նա շատ օգնող գտնվեց:
Սրա համար չենք վախենա,

թեև երկիրն անցնի, և սարերը
ծովի մեջտեղն ընկնեն: Թող
գոռան ու եռան նրա ջրերը, թող
սարերը դողդողուն նրա
ուռչելով» (Սաղ-մոս 46.1-3):

Մինչ սուրբ վատահուլթյան այս
բառերը բարձրանում են առ
Աստված, ամպերը ետ են
քաշվում, և երևում է
աստղազարդ երկինքը՝
անպատմելիորեն փառավոր՝
երկնքի բոլոր ծայրերում
հավաքված սև ու սպառնափ
ամպերի հակադրությամբ: Բաց
դարպասներից ճառագում է
չնաշխարհիկ քաղաքի փառքը:

Չեստո երկնքում հայտնվում է մի ձեռք՝ իրար վրա քարե երկու տախտակներ բռնած:

Մարգարեն ասում է. «Երկինքը կպատմի նրա արդարութունը, որովհետև Աստված դատավոր է» (Սաղմոս 50.6): Այն սուրբ օրենքը՝ Աստծո

արդարութունը, որ

որոտ-մունքի ու բոցի մեջ

Սինայից հռչակվեց որպես

կյանքի ուղեցույց, այժմ

հայտնվում է մարդկանց որպես

դատաստանի չափանիշ: Այդ

ձեռքը բացում է տախտակները,

և երևում են Տասնաբանյայի

պատվիրանները՝ փորագրված

ասես կրակե գրչով: Բառերն
այնքան պարզ են, որ բոլորը
կարող են կարդալ դրանք:
Չիշողությունն արթնանում է,
սնահավատու-թյան ու
հերձվածողության խավարը
ցրվում է յուրաքանչյուրի
մտքից, և Աստծո Տասը
պատվիրանները՝ համառոտ,
հասկանալի ու հրամայական,
երևում են երկրի բոլոր
բնակիչներին:

Անհնար է նկարագրել նրանց
սարսափն ու
հուսահատությունը, ով-քեր
ոտնահարել են Աստծո սուրբ

պահանջները: Տերը տվել էր
Նրանց իր օրենքը, նրանք
կարող էին համեմատել իրենց
բնավորությունը դրա հետ և
տեսնել իրենց թերությունները,
երբ դեռ հնարավորություն կար
ապաշխարելու և
վերափոխվելու, բայց աշխարհի
բարեհաճությունը շահելու
համար նրանք ոչ միայն իրենք
անտեսեցին օրենքի
պատվիրան-ները, այլև
ուրիշներին սովորեցրին
խախտել դրանք: Նրանք
փորձել են ստիպել [640] Աստծո
ժողովրդին պղծելու Նրա
շաբաթը: Հիմա նրանք

դատապարտվում են հենց այն
օրենքով, որն արհամարհել են:
Չարիուրելի պարզությամբ
Նրանք տեսնում են, որ
արդարացում չունեն: Նրանք
իրենք են ընտրել՝ ում ծառայեն
ու երկրպագեն: «Եվ դուք ետ
կդառնաք ու կտես-նեք արդարի
ու ամբարիշտի
տարբերությունը, Աստծուն
ծառայությունն անողի և
ծառայությունն չանողի
տարբերությունը» (Մաղաքիա
3.18):

Աստծո օրենքի թշնամիները՝
քարոզիչներից մինչև

հասարակ շարքայինը, նորովի
են ըմբռնում ճշմարտություն
ու իրենց

պարտականությունները:

Չափազանց ուշ են նրանք
տեսնում, որ չորըորդ

պատվիրանի շաբաթը կենդանի
Աստծո կնիքն է: Շատ ուշ են

նրանք հասկանում իրենց կեղծ
շաբաթի իսկական բնույթը և

ավազե հիմքը, որի վրա
կառուցել են: Նրանք

գիտակցում են, որ կռվել են

Աստծո դեմ: Ասելով, թե

մարդկանց առաջնորդում են

դեպի դրախտի դարպասները,

կրոնական ուսուցիչներն

իրականամ նրանց կորստյան
են տարել: Միայն վերջին
հատուցման օրը կպարզվի, թե
որքան մեծ է այն մարդկանց
պատասխանատվությունը,
ովքեր սուրբ պաշտոն են
զբաղեցնում, և որքան ահավոր՝
նրանց անհավատարմության
հետեանքը: Միայն
հավերժության մեջ
կկարողանանք ճիշտ
գնահատել մեկ հոգու կորուստն
անգամ: Սարսափելի է լինելու
նրա վախճանը, ում Աստված
կասի. «Յեռացի՛ր ինձանից, չար
ծառա»:

Երկնքից լսվում է Աստծո ձայնը,
որ հայտարարում է Յիսուսի
գալստյան օրն ու ժամը և
հռչակում հավիտենական
ուխտը Իր ժողովրդին:
Ամենահզոր որոտմունքի պես
Նրա խոսքերը դղրդում են
ամբողջ երկրով մեկ: Աստծո
Իսրայելը կանգնած լսում է՝
Նայելով դեպի վեր: Նրանց
դեմքերը լուսավորված են Նրա
փառքով և փայլում են, ինչպես
Մովսեսի դեմքը, երբ Նա ցած
իջավ Սինա սարից:
Ամբարիշտներն ի վիճակի չեն
Նայելու Նրանց: Եվ երբ օրհնյալ
են հռչակվում Նրանք, ովքեր

պատվել են Աստծուն՝ սուրբ
պահելով Նրա շաբաթը, թնդում
է հաղթության հզոր աղաղակը:

Ճուտով արեւելքում մի փոքր,
գրեթե մարդու ձեռքի ակի
մեծության, սե ամպ է
հայտնվում: Այդ ամպը, որ
շրջապատում է Փրկչին, հեռվից
երեւում է ասես խավարով
պատված: Աստծո ժողովուրդը
գիտի, որ դա մարդու Որդու
նշանն է: Հանդիսավոր
լռությանք նրանք անթարթ
նրան են նայում, [641] երբ այն
մոտենում է երկրին՝ հետզհետե
դառնալով ավելի լուսավոր ու

փառահեղ, մինչև որ մեծ ու
սպիտակ մի ամպի է
վերածվում՝ ողողված փառքով,
որը մաշող կրակ է հիշեցնում,
իսկ ամպի վերելում՝ ուխտի
ծիածանը: Հիսուսը մոտենում է՝
հիմա արդեն ոչ թե որպես
«վշտերի տեր», որ եկավ խմելու
անարգանքի ու տառապանքի
դառը գավաթը, այլ որպես
զորավոր հաղթող: Նա գալիս է
որպես հաղթող երկնքում և
երկրում՝ դատելու ողջերին ու
մեռածներին: «Հավատարիմ և
ճշմարիտ»՝ «Նա
արդարությամբ է դատաստան
անում և պատերազմում»: «Եվ

երկնքի գորքերը գնում են նրա
ետեից» (Ջայտնություն
19.11,14): Նրան ուղեկցում է
սուրբ հրեշտակների հոծ,
անհամար բազմությունը՝
երկնային սքանչելի օրհներգեր
երգելով: Թվում է, թե երկինքը
լցված է «հազար հազարավոր
ու բյուր բյուրավոր» լուսափայլ
եակներով: Մարդկային գրիչն
անկարող է նկարագրել այդ
տեսարանը: Ոչ մի
մահկանացու չի կարող
պատկերացնել դրա
փառահեղությունը: «Նրա
փառքը ծածկեց երկինքը, և նրա
գովաբանությամբ լցվեց

երկիրը: Եվ պայծառությունը
լույսի պես էր» (Ամբակում
3.3,4): Մինչ կենդանի ամպը
ավելի ու ավելի է մոտենում,
ամեն մի աչք տեսնում է
կյանքի իշխանին: Փշե պսակը
հիմա չի պատառոտում Նրա
սուրբ քունքերը, այլփառքի
թագ է հանգչում Նրա
ճակատին: Նրա դեմքն ավելի
պայծառ է շողում, քան
Նույնիսկ կեսօրվա շլացուցիչ
արեը: «Եվ իր հանդերձի վրա, և
իր ազդրերի վրա գրված էր
անունը՝ թագավորների
Թագավոր և տերերի Տեր»
(Ջայտնություն 19.16):

Նրա ներկայութեամբ «բոլոր
երեսները վախված դեղնացած»
են, Աստծո տրտմութիւնը
մերժողների վրա իջնում է
հավիտենական
հոլա-հատութեան սարսափը:
«Սիրտը հալվում և ծնկները
դողում... և ամենքի երեսները
սփրթնում են» (Երեմիա 30.6,
Նաում 2.10): Արդարները սրտի
թրթիռով աղաղակում են. «Ո՞վ
կարող է կանգնել»:
Յրեշտակների երգը դադարում
է, և մի պահ ահավոր լռութիւն
է տիրում: Այնտեղ լսվում է
Յիսուսի ձայնը. «Իմ շնորհը

բավական է ձեզ»։ Արդարների
դեմքերը նորից փայլում են, և
ամեն սիրտ լցվում է
ուրախությամբ։ Իսկ
հրեշտակներն ավելի ու ավելի
են մոտենում երկրին, և մի տոն
ավելի բարձր վերցնելով՝ նորից
երգում են։

Արքաների Արքան ամպի վրա
իջնում է՝ բոցեղեն կրակով
պարուր-ված։ Երկինքները
գալարվում են մագաղաթի
պես, երկիրը դողում է Նրա
առաջ, և բոլոր սարերն ու
կղզիները [642] շարժվում են
իրենց տեղից։ «Մեր Աստվածը

կգա և լուռ չի մնա: Նրա առաջ՝
փչացնող կրակ, և նրա չորս
կողմով սաստիկ մրրիկ կա: Նա
կանչում է երկնքին վերևից, և
երկրիս, որ իր ժողովրդին
դատի» (Սաղմոս 50.3,4):

«Եվ երկրի թագավորները, և
մեծամեծներն ու հարուստները,
և հազարապետներն ու
զորավորները, և ամեն ծառա ու
ամեն ազատ թաքց-րին իրենց
անձերը այրերի և սարերի
ժայռերի մեջ՝ ասելով սարերին
և ժայռերին. Վայր ընկեք մեզ
վրա, և ծածկեցեք մեզ աթոռի
վրա նստողի երեսից և Դատի

բարկությունից, որովհետև նրա
բարկության մեծ օրը եկել է, և
ո՞վ կարող է կանգնել»
(Յայտնություն 6.15-17):

Ծաղրանքները դադարել են,
ստախոս շուրթերը՝
պապանձվել: Լռել են զենքերի
շաչյունն ու պատերազմի
աղմուկը: «Բոլոր զենքերը և
արյուն-նաթաթախ
հանդերձներն այրվել են»
(Եսայիա 9.5): Լսվում են միայն
աղոթքներ, հեկեկանք ու ողբ:
Քիչ առաջ ծաղրող շուրթերից
մի աղաղակ է պոկվում. «Նրա
բարկության մեծ օրը եկել է, և

ո՞վ կարող է կանգնել»:

Ամբարիշտներն աղոթում են, որ
թաղվեն սարերի ու ժայռերի
տակ, միայն թե չտեսնեն Նրա
դեմքը, ում արհամարիել և
մերժել են:

Նրանք ճանաչում են այն
ձայնը, որ թափանցում է
մեռյալների ականջները:
Ինչքա՞ն հաճախ է աղիողորմ
ու քնքուշ տոնով այն
ապաշխարության կանչել
իրենց: Ինչքա՞ն հաճախ է այն
լսվել բարեկամի, եղբոր, Փրկչի
հուզիչ թախանձանքներում:
Նրա շնորհը մերժողների

համար ոչ մի ուրիշ ձայն
այնքան դատապարտող ու
այնքան մեղադրական չէր
ինչի, որքան այս մեկը, որ
այդքան երկար աղաչել էր.
«Դարձեք, դարձեք ձեր չար
ճանապարհներից, և ինչո՞ւ
համար դուք մեռնեք» (Եզեկիել
33.11): Օ՛հ, երանի թե նրանց
անձանոթ լիներ այդ ձայնը:
Չիտուսն ասում է. «Ես կանչեցի,
բայց դուք չուզեցիք, ձեռքս
մեկնեցի, բայց ուշադրություն
դարձնող չկար: Դուք մերժեցիք
իմ ամբողջ խորհուրդը, և
չուզեցիք իմ
հանդիմանությունը» (Առակաց

1.24,25): Ի՞նչ ուրախությամբ
Նրանք կջնջեին այն հուշերը, որ
այդ ձայնն արթնացնում է.
անտեսված
Նախազգուշացումներ,
մերժված կոչեր,
արհամարհված
ար-տոնություններ: [643]

Այնտեղ են նրանք, ովքեր
ծաղրում էին Քրիստոսին իր
նվաստացման մեջ: Նրանք
սարսռում են՝ հիշելով
Տառապյալի խոսքերը, երբ Նա,
պատասխանելով
քահանայապետի երդմանը,
հանդիսավոր կերպով հռչակեց.

«Այսուհետ կտեսնեք մարդու
Որդուն՝ Չորության աջ կողմը
Նստած և երկնքի ամպերի վրա
գալիս» (Մատթեոս 26.64):

Հիմա Նրանք տեսնում են Նրան
Իր փառքի մեջ և դեռ պիտի
տեսնեն՝ Չորության աջ կողմը
Նստած:

Նրանք, ովքեր ծաղրել էին
Աստծո Որդին լինելու Նրա
հավակնու-թյունը, այժմ
պապանձված են: Այստեղ է
գոռոզ Յերովդեսը, ով ծիծաղել
էր Նրա արքայական տիտղոսի
վրա և ծաղրող զինվորներին
հրամայել, որ թագադրեն

Նրան: Այստեղ են նաև այն
մարդիկ, ովքեր իրենց
սրբապիղծ ձեռքերով Նրան
ծիրանագուլյն պատմուճան
հագցրին, փշե պսակ դրին Նրա
սուրբ ճակատին, Նրա
չղիմաղրող ձեռքը կեղծ
գավազան տվեցին և հայիոյիչ
ծաղրանքով խոնարհվեցին
Նրա առաջ: Մարդիկ, ովքեր
հարվածում էին կյանքի
Իշխանին և թքում Նրա վրա,
հիմա շրջվում են Նրա
խորաթափանց հայացքից և
ջանում փախչել Նրա
ներկայության ամենահաղթ
փառքից: Նրանք, ովքեր

մեխերը խրեցին Նրա ձեռքերի
ու ոտքերի մեջ, և զինվորը, ով
խոցեց Նրա կողը, սոսկումով ու
զղջումով են հիմա նայում այդ
նշաններին:

Սահմուկեցուցիչ հստակությամբ
են քահանաներն ու
իշխանները վերհիշում
Գողգոթայի
իրադարձությունները: Նրանք
ահ ու դողով հիշում են, թե
ինչպես էին դիվական
հրճվանքով իրենց գլուխները
տարուբերում՝ բացականչելով.
«Ուրիշներին ազատեց, ինքն
իրեն չի կարողանում ազատել.

թե որ Իսրայելի թագավորն է,
թող իջնի հիմա խաչից, և
կհավա-տանք դրան: Աստճուն
հուսաց, հիմա թող նա փրկի
դրան, եթե ուզում է դրան»
(Մատթեոս 27.42,43):

Նրանք պարզորոշ վերհիշում են
Փրկչի առակը մշակների
մասին, ովքեր հրաժարվեցին
պտուղ տալիրենց տիրոջը
խաղողի այգուց, անար-գեցին
նրա ծառտներին և սպանեցին
նրա որդուն: Նրանք հիշում են
նաև այն դատավճիռը, որ հենց
իրենք կայացրին՝ ասելով, որ
այգու տերը «չարերին

չարաչար կկորցնի»։ Այդ
անհավատարիմ մարդկանց
մեղքի ու պատժի մեջ
քահանաներն ու ծերերը
տեսնում են իրենց իսկ վարքն
ու արդարացի ճակատագիրը։
Եվ ահա մահացու հոգեվարքի
մի ճիչ է բարձրանում։ Ավելի
բարձր, քան «խաչիր դրան,
խաչիր դրան» աղաղակը, որ
հնչեց Երուսաղեմի
փողոցներով մեկ, այժմ լսվում է
ահավոր [644] ու հուսահատ
ողբը. «Նա Աստծո Որդին է, Նա
է ճշմարիտ Մեսիան»։ Նրանք
ջանում են փախչել արքաների
Արքայի ներկայութունից՝

իզուր փորձելով թաքնվել
մուլեգնած տարերքից
պատառոտված երկրի
խորշերում:

Բոլոր նրանց կյանքում, ու 1քեր
մերժում են ճշմարտությունը,
լինում են պահեր, երբ խիղճն
արթնանում է, երբ
հիշողության մեջ կենդանա-
նում են կեղծավոր կյանքի
տանջալից հուշերը, և հոգին
տանջվում է ապարդյուն
զղջումներից: Բայց ի՞նչ է սա
այն օրվա զղջման համեմատ,
երբ «վախը կործանման պես
կգա», երբ «թշվառությունը

մրրիկի նման կհասնի»
(Առակաց 1.27): Նրանք, ովքեր
կամենում էին ոչնչացնել
Քրիստոսին և Նրա
հավատարիմ ժողովրդին, այժմ
տեսնում են նրանց վրա
հանգչող փառքը: Սոսկումով
Նրանք լսում են սուրբերի
ցնծագին բացականչությունը.
«Ահա մեր Աստվածը, ում մենք
հուսացել ենք, և նա փրկեց
մեզ» (Եսայիա 25.9):

Երկրաշարժի, կայծակի
փայլատակման ու որոտմունքի
դրդողի մեջ Աստծո Որդու
ձայնը դուրս է կանչում ննջող

սուրբերին: Նա նայում է
արդարների գերեզմաններին, և
ապա ձեռքերը դեպի երկինք
բարձ-րացնելով՝ գոչում է.

«Արթնացեք, արթնացեք,
արթնացեք դուք, որ հողի մեջ
քնած եք, և դուրս ելեք»: Երկրի
չորս կողմերում մեռյալները
կլսեն այդ ձայնը, և լսողները
կկենդանանան: Եվ ողջ երկիրը
կթնդա, երբ այդ ահռելի
բանակը՝ կազմված ամեն
ազգից, ցեղից, լեզվից ու
ժողովրդից, ոտքի կանգնի:
Հագած փառավոր
անմահություն՝ նրանք դուրս
են գալիս մահվան բանտից և

բաջականչում. «Ով մահ, ո՞ւր է
քո խայթոցը, գերեզման, ո՞ւր է
քո հաղթությունը» (Ա
Կորնթացիս 15.55): Եվ
կենդանի արդարների ու
հարություն առած սուրբերի
ձայները միաձուլվում են
հաղթության երկար, ցնձագին
աղաղակի մեջ:

Բոլորը դուրս են գալիս
գերեզմաններից նույն
կերպարանքով, ինչ-պես որ
գերեզման էին իջել:
Չարություն առած բազմության
մեջ կանգնած է Ադամը՝
բարձրահասակ ու փառահեղ

տեսքով՝ հասակով միայն քիչ
ցածր Աստծո Որդուց: Նա
զգալիորեն տարբերվում է
ավելի ուշ սերունդների
մարդկանցից, և այս մեկ բանով
արդեն իսկ երեւում է
մարդ-կային ցեղի մեծ
քայքայումը: Սակայն բոլորը
հարուժյուն են առնում
հավերժական
երիտասարդության
թարմությամբ ու ավյունով:
Սկզբում մարդը [645] ստեղծվել
էր Աստծո պատկերով ոչ միայն
բնավորությամբ, այլ նաև
տեսքով ու հատկանիշներով:
Մեղքն աղավաղեց և գրեթե

ջնջեց աստվածային
նմանությունը, բայց Քրիստոսը
եկավ՝ վերականգնելու
կորցրածը: Նա կվախի մեր
նսեմ մարմինները և
կվերափոխի իր փառավոր
մարմնի նմանությամբ:
Մահկանացու, ապականացու
մարմինը զուրկ
վայելչությունից ու երբեմնի
պղծված մեղքով, դառնում է
կա-տարյալ. գեղեցիկ ու
անմահ: Բոլոր բծերն ու
արատները մնացել են
գերեզմանում: Վերագտնելով
վաղուց կորցրած եղեմում
կենաց ծառից օգտվելու

իրավունքը՝ փրկվածները
սփտի «աճեն» (Մաղաքիա 4.2,
անգլ. թարգմ.) մինչև այն
կատարյալ հասակը, որ մարդն
ունենի իր նախաստեղծ փառքի
մեջ: Մեղքի անեծքի
ամենավերջին հետքերը
կջնջվեն, և Քրիստոսի
հավատարիմ հետևորդները
կհայտնվեն «մեր Տեր Աստծո
վայելչությամբ»՝ մտքով, հոգով
ու մարմնով արտացոլելով
իրենց Տիրոջ կատարյալ
պատկերը: Օ՛հ, հրաշալի
փրկություն, որի մասին երկար
խոսել են, որին երկար
հուսացել են, որի շուրջ խորհել

են անհամբեր սպասումներով,
բայց երբեք լիովին չեն
հասկացել:

Կենդանի արդարները
վերափոխվում են «հանկարծ՝
մի ակնթար-թում» (Ա
Կորնթացիս 15.52): Աստծո
ծայնից նրանք փառավորվել
էին, իսկ հիմա դառնում են
անմահ և հարուժյան առած
սրբերի հետ միասին
հափշտակվում են՝ Տիրոջը
դիմավորելու օդում:
Ջրեշտակները ժողովում են
«նրա ընտրյալներին չորս
հողմից՝ երկնքի ծայրերից

մինչև նրա մյուս ծայրերը»
(Մատթոս 24.31): Սուրբ
հրեշտակները փոքր
երեխաներին բերում և տալիս
են իրենց մայրերի ձեռքը:
Ընկերները, որոնց մահը
վաղուց բաժանել էր իրարից,
այժմ միանում են, որպեսզի
այլևս երբեք չբաժանվեն, և
ցնծագին երգերով միասին
բարձրանում են դեպի Աստծո
քաղաքը:

Ամպեղեն կառքի ամեն կողմում
թևեր են, իսկ նրա տակ`
կենդանի անիվներ: Ու երբ
կառքը բարձրանում է վեր,

անիվները բացականչում են.
«Սո՛ւրբ», և թներն էլ
շարժվելով՝ բացականչում են.
«Սո՛ւրբ», և հրեշտակների
շքախումբն էլ բացականչում է.
«Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ, Տեր
Աստված Ամենակալ»:
Փրկվածներն էլ գոչում են.
«Ալելու՛իա», մինչ կառքը
շարժվում է դեպի Նոր
Երուսաղեմ:

Աստծո քաղաքը մտնելուց
առաջ Փրկիչն իր հետևորդների
վրա հաղթության
խորհրդանշաններ է դնում և
պարզևատրում նրանց իրենց

արքայական կարգավիճակը
ցույց տվող նշաններով:
Ճողջողուն շարքերը մոտենամ
են իրար՝ կազմելով դատարկ
քառակուսի իրենց թագավորի
շուրջը, ում փառապանծ
կերպարանքը վեր է
բարձրանում սարբերից ու
հրեշտակներից, [646] ում դեմքը
շողում է նրանց վրա գթասիրտ
սիրո փուլթյամբ: Փրկվածների
անհամար բազմության մեջ
բոլորի հայացն ուղղված է
Նրան, ամեն աչք տեսնում է
Նրա փառքը, ում տեսքը
«խան-գարված» էր «մարդու
տեսքից, և կերպարանքը՝

մարդու որդկանց
կեր-պարանքից» (Եսայիա
52.14): Յիսուսն իր աջ ձեռքով
հաղթողների գլխին է դնում
փառքի պսակը: Ամեն մեկի
համար պսակ կա՝ վրան գրված
իր «նոր անունը»
(Յայտնություն 2.17) և այս
խոսքը՝ «Սրբություն Տիրոջը»:
Յուրաքանչյուրի ձեռքն է
տրվում հաղթողի արմավենին
ու շողշողուն քնարը:
Այնուհետև, երբ առաջնորդող
հրեշտակները վերցնում են
նոտան, յուրաքանչյուր ձեռք
հմտորեն դիպչում է քնարի
յարերին, և հնչում է հա-րուստ

ու սքանչելի երաժշտություն:
Բոլորի սրտերը լցվում են
անասելի հիացմունքով, և ամեն
ձայն գովերգում է «նրան, ով
մեզ սիրեց և մեր մեղքերից
լվաց մեզ իր արյունով, և մեզ
թագավորներ ու քահանաներ
դարձրեց Աստծո և իր Յոր
համար, նրան փառք և
զորություն հավիտյանս
հավիտենից» (Յայտնություն
1.5,6):

Փրկվածների բազմության
դիմաց Սուրբ Բաղաքն է:
Յիսուսը լայն բացում է
մարգարտյա դռները, և

Ժողովուրդը, որ պահել է
ճշմարտություն-նը, ներս է
մտնում: Այնտեղ նրանք
տեսնում են Աստծո դրախտը՝
Ադամի տունը Օրա
անմեղության ժամանակ: Յետո
լսվում է մի ձայն՝ ավելի
քաղցրահնչյուն, քան
ցանկացած երաժշտություն, որ
երբևէ յսել են
մահ-կանացուները՝ ասելով.
«Ձեր պայքարն ավարտված է»:
«Եկեք, ով իմ Յոր օրհնյալներ, և
ժառանգեցեք աշխարհի սկզբից
ձեզ համար պատ-րաստված
արքայությանը»:

Այժմ իրականանում է Փրկչի աղոթքն իր աշակերտների համար. «Կամենում եմ, որ Նրանք էլ, ում որ ինձ տվիր դու, ինձ հետ լինեն, որտեղ որ ես եմ»: Քրիստոսը ներկայացնում է Յորն իր արյամբ գնվածներին «անարատ ...իր փառքի առաջ, անբիծ ցնծությունով» (Յուդա 24)՝ հայ-տարարելով. «Ահա ես և այն զավակները, որ Տերը տվեց ինձ»: «Նրանց, ում որ տվիր ինձ, պահեցի» (Եսայիա 8.18, Յովհաննես 17.12): Օ՛ր, փրկարար սիրո ինչպիսի՞ հրաշք: Ի՞նչ սքանչելի պահ, երբ անսահման Յայրը, նայելով

փրկվածներին, կտեսնի իր
պատկերը՝ ազատ մեղքի
բժերից ու քայքայումից, և
մարդկայինը՝ կրկին
ներդաշնակ աստվածայինի
հետ: [647]

Անասելի սիրով Յիսուսն իր
հավատարիմ զավակներին
հրավիրում է մտնելու իրենց
Տիրոջ ուրախության մեջ:
Փրկչի ուրախությունն է՝
փառքի արքայության մեջ
տեսնել նրանց, ովքեր փրկվել
են իր տանջանքների ու
նվաստացման գնով: Եվ
փրկվածները կկիսեն Նրա

ուրախությունը՝ օրհնյալների
մեջ տեսնելով նրանց, ուլքեր
շահվել են Քրիստոսի համար
իրենց աղոթքների, ջանքերի ու
սիրառատ գոհողության
միջոցով: Երբ հավաքվում են
սպիտակ մեծ գահի շուրջը՝
նրանց սրտերը լցվում են
անպատմելի ուրախությամբ,
քանզի այստեղ տեսնում են
նրանց, ում շահել են Քրիստոսի
համար, տեսնում են, որ մեկը
շահել է մյուսներին, մյուսներն
էլ իրենց հերթին՝ ուրիշներին, և
բոլորը եկել են հանգստի
հանգրվան՝ իրենց պսակները
դնելու Հիսուսի ոտքերի մոտ և

գովերգերս Նրան
հավերժության անվերջանալի
շրջապտույտի ընթացքում:

Մինչ փրկվածներին ողջանում
են Աստծո Քաղաքում, օղը
զընգում է հիացմունքի
ցնծագին բացականչությամբ:
Հասել է երկու Աղամների
հանդիպման պահը: Աստծո
Որդին ձեռքերը պարզած՝
պատրաստ է ընդունելու
մարդկության նախահետը՝ այն
էակին, ում Նա ստեղծել է, ով
մեղանչել է իր Արարչի դեմ, և
ուր մեղքի պատճառով Փրկչի
մարմինն իր վրա է կրում

Խաչելութեան հետքերը:
Տեսնելով մեխերի դաժան
սպիները՝ Ադամը ոչ թե
նետվում է իր Տիրոջ գիրկը, այլ
խոնարհութեամբ ընկնում է
Նրա ոտքերին՝ բացականչելով.
«Արժանի՛ է, արժանի՛ է
մորթված Գառը»: Փրկիչը
ջերմորեն բարձրացնում է նրան
և հրավիրում կրկին տեսնելու
Եդեմի տունը, որից նա այնքան
երկար ժամանակ վտարված է
եղել:

Եդեմից արտաքսվելուց հետո
Ադամի կյանքը երկրում փ է
եղել տրտմութեամբ: Ամեն մի

թառամող տերև, ամեն մի
զոհաբերվող կենդանի,
ապականության ամեն մի հետք
բնության հիանափ պատկերի
վրա, ամեն մի բիծ մարդու
մաքրության վրա նրան
մշտապես իր մեղքն է հիշեցրել:
Սոսկալի էին խղճի
խայթոցները, երբ նա տեսավ
անօրենության տարա-ծումը, և
ի պատասխան իր
նախազգուշացումների՝ միայն
մեղադրվեց, որ ինքն էր մեղքի
պատճառը: Համբերատար
խոնարհությամբ նա գրեթե
հազար տարի կրեց
անօրենության պատիժը:

Անկեղծորեն ապաշ-խարելով
իր մեղքի համար ու փոսկին
ապավինելով խոստացված
Փրչի արժանիքներին՝ նա
մեռավ հարուստուն առնելու
հույսով: Աստծո Որդին
փրկագնեց մարդու անկումն ու
կորուստը, և հիմա [648]
քավության շնորհիվ Ադամին
վերադարձվում է իր նախկին
տիրապետությունը:

Ցնծալով ուրախությունից՝ նա
տեսնում է այն ծառերը,
որոնցով հրճվում էր մի
ժամանակ, այն նույն ծառերը,
որոնց պտուղն իր ձեռքով էր

հավաքում իր անմեղության
երանեփ օրերին: Տեսնում է
խաղողի այն որթերը, որոնց
ոստերին ինքն էր ուղղություն
տվել, այն նույն ծաղիկները,
որոնք մի ժամանակ սիրով
խնամում էր: Նրա միտքը
որոտում է տեսարանի
իրողությունը, նա հասկանում
է, որ դա իսկապես
վերականգնված եղեմն է՝ հիմա
ել ավելի չքնաղ, քան այն
ժամանակ, երբ վտարվեց
այնտեղից: Փրկիչը նրան
տանում է կենաց ծառի մոտ,
քաղում է փառավոր պտուղը և
առաջարկում ճաշակել: Նա իր

շուրջն է նայում և տեսնում իր
փրկված ընտանիքի հոծ
բազմությունը՝ կանգնած
Աստծո Դրախտում: Եվ նա իր
շողշողուն պսակը դնում է
Ջիսուսի ոտքերի մոտ և
ընկնելով Նրա կրծքին փարվում
Նրան: Ջեսս նա վերցնում է
ոսկե քնարը, դիպչում Նրա
լարերին, և երկնքի ծայրերն
արձագանքում են Նրա
հաղթական երգին. «Արժանի է,
արժանի է, արժանի է Գառը, որ
մորթվեց, և ահա կենդանի է»:
Ադամի ընտանիքը միանամ է
երգին, և իրենց պսակները
դնելով Փրկչի ոտքերի մոտ՝

բոլորն ակնածանքով
երկրպագում են Նրան:

Այս վերամիավորման
ականատեսներն են այն
հրեշտակները, ովքեր ողբացին,
երբ Ադամը մեղանջեց, և
ցնծացին, երբ Յիսուսը,
հարուժյուն առնելով, երկինք
համբարձվեց՝ գերեզմանի
դռները բացելով բոլորի համար,
ուվքեր կհավատան իր անվանը:
Եվ հիմա տեսնելով, որ
փրկության գործն ավարտված
է, նրանք են ձայնակցում են
փառաբա-նության օրհներգին:

Գահի առաջ՝ բյուրեղյա ծովի վրա, որը պսպղում է «իբրև ապակեղեն ծաք՝ կրակով խառնված», կանգնած է այն խումբը, որ հաղթել է «գագանին, նրա պատկերին, նրա դրոշմին և նրա անվան թվին»: Գառան հետ միասին Սիոն սարի վրա, «Աստծո քնարներն» իրենց ձեռքին, կանգնած են նրանք՝ հարյուր քառասունչորս լազարը, որ փրկվել են մարդկանցից, և «շատ ջրերի ձայնի պես» ու «մեծ որոտմունքի ձայնի պես» լսվում է «քնար նվագողների ձայնը, որ իրենց քնարներն էին

նվագում»։ Նրանք « նոր երգ»
[649] են երգում աթոռի առաջ,
երգ, որը «ոչ ոք չէր կարող
սովորել... բացի այն հարյուր
քառասուն չորս հազարից»։ Դա
Մովսեսի և Գառան երգն է՝
ազատագրման երգը։ Միմիայն
հարյուր քառասունչորս
հազարը կարող են երգել այն,
քանզի դա իրենց
վարձառության երգն է,
փորձառություն, որը բացի
նրանցից՝ ոչ ոք երբեք չի
ուներցել։ Այդ «նրանք են, որ
Դառի ետեից գնում են, ուր որ
նա գնա»։ Նրանք,
փոխադրվելով երկրից՝ ողջերի

միջից, համարվում են
«Աստծուն և Գառին իբրե
երախայրի» (Ջայտնության
15.2,3, 14.1-5): Այդ «Նրանք են,
որ գալիս են մեծ
Նեղությունից»: Նրանք անցել
են Նեղության այնպիսի
ժամանակի միջով, որ երբեք չի
եղել, ինչ մարդիկ ապրում են
երկրի վրա: Նրանք կրել են
Ջակոբի Նեղության ժամանակի
հոգեվարքը և առանց
Բարեխոսի ապրել Աստծո
վերջին դատաստանների
հեղման ընթացքում: Բայց
Նրանք փրկված են, քանզի
«իրենց հանդերձները լվացին և

սպիտակեցրին Գառի
արյունով»: «Նրանց բերանում
նենգություն չգտնվեց,
որովհետեւ անարատ են»
Աստճո առաջ: «Դրա համար
Աստճո աթոռի առաջ են և
պաշտում են նրան գիշեր ու
ցերեկ նրա տաճարի մեջ, և
աթոռի վրա նստողը նրանց մեջ
կբնակվի»: Նրանք տեսել են
սովից ու համաճարակից
ամայացած երկիրը, արեգակը,
որին իշխանություն էր տրվել
«մարդկանց խորշակահար»
անելու «սաստիկ
տաքությամբ», և հենց իրենք էլ
տառապանքներ են կրել, սովել

ու ծարավել: Բայց «այլևս ոչ կսովեն, ոչ կծարավեն, և չի ընկնի նրանց վրա ոչ արեը և ոչ մի տաքութիւն: Որովհետև Գառը, որ աթոռի մեջ է, կհովվի նրանց և կառաջնորդի նրանց դեպի կենդանի ջրերի աղբյուրները. և Աստված կսրբի ամեն արտասուքը նրանց աչքերից» (Հայտնութիւն 7.14-17):

Բոլոր դարերում Փրկչի ընտրյալները կրթվել ու դաստիարակվել են փորձութեան դպրոցում: Նրանք երկրում քայլել են նեղ

ճանապարհներով և մաքրվել
են տառապանքի հնոցում:
Չանուն Չիսուսի Նրանք
դիմացել են ընդդիմության,
ատելության և զրպարտության:
Նրանք հետևել են Նրան ծանր
պայքարի միջով՝ դրսևորելով
անձնուրացություն և կրելով
դառը հիասթափություններ:
Իրենց [650] իսկ ցավալի
փորձով են նրանք ըմբռնել
մեղքի հրեշավորությունն ու
ուժը, հանցավորությունն ու
բերած աղետը, և գարշել են
դրանից: Այն ընդմիջտ
վերացնելու համար բերված
անսահման զոհաբերության

գիտակցումը խոնարհեցնում է
Նրանց իրենց իսկ աչքերում և
Նրանց սրտերը լցնում
շնորհակալությամբ ու
գոհությամբ, ինչը Նրանք,
ովքեր երբեք չեն մեղանչել, չեն
կարող գնահատել: Նրանք շատ
են սիրում, որովհետև Նրանց
շատ է ներվել: Մասնակցելով
Քրիստոսի չարչարանքներին՝
Նրանք արժանի են
հաղորդակից լինելու նաև Նրա
փառքին:

Աստճո ժառանգները եկել են
ձեղնահարկերից,
հյուղակներից, զնդաններից,

կառափնարաններից, լեռներից,
անապատներից, քարայր-ներից
ու ծովի խորքերից: Երկրում
նրանք ապրել են
«կարոտություն քաշելով,
նեղված, չարչարված»
(Եբրայեցիս 11.37):
Միլիոնավորներն
անարգանքով են գերեզման
իջել, որովհետև համառորեն
հրաժարվել են զիջել
սատանայի խաբուսիկ
պահանջներին: Մարդկային
դատարանները նրանց
դատապարտել են որպես
ամենաստոր հանցագործների:
Բայց հիմա «Աստված Ինքն Է

դատավոր» (Սաղմոս 50.6):
Չիմա երկրային
դատավճիռները
հակադարձվում են: «Իր ազգի
ամոթը պիտի հեռացնի»
(Եսայիա 25.8), և «Նրանց պիտի
ասեն. Սուրբ ժողովուրդ, Տիրոջ
փրկվածներ»: Նա որոշել է, որ
«Նրանց փառք տրվի՝ մոխրի
փոխարեն, ուրախության յուղ՝
սգո փոխարեն, և գովության
պատմուճան՝ հանգած սրտի
փոխարեն» (Եսայիա 62.12,
61.3): Նրանք այլևս տկար,
տանջահար, ցիրուցան եղած ու
ճնշված չեն: Այսուհետև նրանք
ընդմիջտ Տիրոջ հետ կլինեն:

Նրանք կանգնած են գահի
առաջ՝ ավելի թանկարժեք
հանդերձանքով, քան երբևէ
հագել են աշխարհի
մեծամեծերը: Նրանք կրում են
ավելի փառավոր պսակներ,
քան երբևէ դրվել են երկրային
միապետների գլխին: Ցավի ու
լացի օրերն առհավետ անցել
են: Փառքի Արքան սրբել է
արցունքները բոլոր դեմքերից,
վշտի ոչ մի պատճառ այլևս
չկա: Թափահարելով
արմավենու ճյուղեր՝ նրանք
գովասանքի օրհներգ են
երգում՝ ջինջ, քաղցր ու
ներդաշնակ: Բոլոր ձայները

միանում են երգին, մինչև որ
օրհներգը թնգում է ամբողջ
երկնքով մեկ. «Փրկությունը մեր
Աստծուն, որ նստած է աթոռի
վրա, և Գառին»: Եվ բոլոր
երկնաբնակաները միաձայն
պատասխանում են. «Ամեն,
օրհնություն, և փառք, և
իմաստություն, և [651]
գոհություն, և պատիվ, և
կարողություն, և զորություն
լինի մեր Տեր Աստծուն՝
հավիտյանս հավիտենից»
(Ջայտնություն 7.10,12):

Այս կյանքում մենք միայն
մասամբ կարող ենք հասկանալ

փրկութեան հրաշալի թեման:
Սեր սահմանափակ
հասկացողութեամբ մենք կարող
ենք ամենալուրջ կերպով
գիտակցել ամոթն ու փառքը,
կյանքն ու մահը,
արդարութիւնն ու
ողորմութեանը, որ հանդիպեցին
իրար խաչի վրա, սակայն մեր
մտավոր ուժերի բարձրագույն
թռիչքն անգամ անկարող է
ըմբռնել դրա ամբողջական
նշանակութիւնը: Փրկարար
սիրո երկարութիւնն ու
լայնութիւնը, խորութիւնն ու
բարձրութիւնը միայն աղոտ
կերպով են պատկերացվում:

Փրկութեան ծրագիրն
ամբողջովին չի հասկացվելու
նույնիսկ այն ժամանակ, երբ
փրկվածները կտեսնեն, ինչպես
տեսնվում են, և կգիտենան,
ինչպես գիտեցված են. բայց
հավիտենական դարերի
ընթացքում նրանց զարմացած
ու հիացած մտքերին շարունակ
նորանոր ճշմարտություններ
կբացահայտվեն: Թեև
երկրային վշտերը, ցավերն ու
վտրճությունները կվերջանան,
և դրանց պատճառը կվերանա,
Աստծո ժողովուրդն ընդմիշտ
հստակորեն գիտակցելու է, թե

ինչ գնով է իր փրկութեանը ձեռք
բերվել:

Քրիստոսի խաչը փրկվածների
ուսումնասիրության առարկան
ա փառաբանության երգն է
լինելու ամբողջ հավերժության
ընթացքում: Փառավորյալ
Քրիստոսում նրանք տեսնելու
են խաչյալ Քրիստոսին: Երբեք
չի մոռացվի, որ Նա, ով իր
զորութեամբ ստեղծել ու պահել
էր անսկիզբ ու անձայր
տիեզերքի անհամար
աշխարհները, Աստծո Սիրելին,
երկնքի Վեհափառությունը, Նա,
ով քերովբեներն ու լուսաշող

սերովբեները հիացմունքով
երկրպագում էին,
խոնարհեցրեց իրեն՝
վեհացնելու ընկած մարդուն, որ
Նա կրեց մեղքի պատիժն ու
ամոթը, և Յայրը երեսը ծածկեց
իրենից, մինչև որ կորած
աշխարհի վշտերը փշրեցին
Նրա սիրտը և խլեցին Նրա
կյանքը Գողգոթայի խաչի վրա:
Այն, որ բոլոր աշխարհների
Ստեղծողը, բոլոր
ճակատագրերի Դատավորը մի
կողմ դրեց իր փառքը, և մարդու
հանդեպ սիրուց դրդված՝
խոնարհեցրեց իր անձը,
ընդմիշտ առաջացնելու է

տիեզերքի զարմանքն ու
հիացմունքը: Նայելով իրենց
Փրկչին ու Նրա դեմքին
տեսնելով Յոր հավերժական
փառքը, տեսնելով Նրա գահը,
որ հաստատված է հավիտյանս
հավիտենից, և իմանալով, որ
Նրա թագավորությանը վերջ չի
լինելու, փրկվածների
ժողովուրդը հիասքանչ
օրհներգ է թնդացնում.«
Արժանի է, արժանի է Գառը,
[652] որ մորթվեց և փրկագնեց
մեզ Աստծուն իր ամենաթանկ
արյունով»:

Խաչի Խորհուրդը
բացահայտում է բոլոր մյուս
գաղտնիքները: Գողգոթայից
ճառագող լույսի ներքո Աստծո
հատկությունները, որ մեզ ահ
ուհող էին պատճառում,
գեղեցիկ ու գրավիչ են երեւում:
Գթությունը, քնքշությունն ու
ճնողական սերը տեսնում ենք
միախառնված սրբության,
արդարադատության ու
զորության հետ: Նայելով Նրա
«բարձր ու վերացած» գահի
վեհափառությանը՝ մենք
տեսնում ենք Նրա գթասիրտ
բնավորությունը, և ըմբռնում
ենք, ինչպես երբեք

Նախկինում, այս քաղցր ու
հարազատ անվան
նշանակությունը. «Չայր մեր»:

Ակնհայտ կդառնա, որ Նա, ով
անսահման է իմաստությամբ,
բացի իր Որդու
զոհաբերությունից՝ չէր կարող
այլ ծրագիր մշակել մեր
փրկության համար: Այս
զոհաբերության
փոխհատուցումը կլինի երկիրը
փրկվածներով՝ սուրբ, երջանիկ
ու անմահ էակներով
բնակեցնելու ուրախությունը:
Խավարի ուժերի դեմ Փրկչի
պայքարի արդյունքը

փրկվածների ցնծութունն է,
որն ամբողջ հավերժության
ընթացքում բազմապատկելու է
Աստծո փառքը: Եվ այնպիսին է
հոգու արժեքը, որ Յայրը
բավարարված է իր վճարած
գնով, և Քրիստոսն ինքն էլ
բավարարված է՝ տեսնելով իր
մեծ զոհաբերության պտուղը:
[653]

ԳԼՈՒԽ 41—ԵՐԿՐԻ ԱՄԱՅԱՑՈՒՄԸ

«Նրա մեղքերը հասան մինչև երկինք, և Աստված հիշեց Նրա անի-րավուրթյունները ...Այն բաժակը, որ դա լցրեց, լցրեք դրա համար երկ-պատիկ: Եվ որչափ որ իրեն փառավորեց ու զեխացավ, այնքան տանջանք և սուգ տվեք դրան, որովհետև նա իր սրտում ասում է.

Թագուհի եմ նստած, և այրի չեմ, և բնավ սուգ չեմ տեսնի: Նրա համար մեկ օրում պիտի գան դրա վրա իր հարվածները՝ մահ, սուգ և սով, և կրակով

կայրվի, որովհետև զորավոր Է
Տեր Աստվածը՝ դրա
դատաստանն անողը: Եվ լաց
ու կոծ կանեն նրա վրա երկրի
թագավորները, որ նրա հետ
պռնկացան ու զեխուլթյուն
արին... և կասեն. Վա՛յ, վա՛յ
քեզ, մեծ քաղաք Բաբելոն,
զորավոր քաղաք, որ մեկ
ժամում եկավ քո
դատաստանը» (Չայտնուլթյուն
18.5-10):

«Եվ երկրի վաճառականները»,
որ հարստացել էին «նրա
զեխուլթյան զորուլթյունից»,
«հեռվում կկանգնեն, և նրա

տանջանքի վախից լաց և սուգ
անելով՝ կասեն. Վա՛յ, վա՛յ, մեծ
քաղաք, որ բեհեզ, ծիրանի և
որդան կարմիր էիր հագած, և
ոսկով, ազնիվ քարերով ու
մարգարիտներով զարդարված:
Որովհետև մեկ ժամվա մեջ
այդչափ մեծությունն ավերակ
եղավ» (Ջայտնություն
18.11,3,15-17):

Սրանք են պատիժները, որ
թափվում են Բաբելոնի վրա
Աստծո ցասման այցելության
օրը: Նա լցրել է իր
անօրենության չափը. Արա
ժամը հասել է, և նա

հասունացել է կործանման
համար: [654]

Գերությունից կյանքի կոչելով
Իր ժողովրդին՝ Աստծո ձայնը
զարհուրելի կերպով
կսթափեցնի նրանց, ովքեր
կյանքի մեծ պայքարում
կորցրել են ամեն ինչ: Մինչ
վտրձնական ժամկետը դեռ
շարունակվում էր, նրանք,
սատանայի խաբեություններից
կուրացած, արդարացնում էին
իրենց մեղավոր կյանքը:
Չարուստները հպարտանում
էին իրենց գերազանցությամբ
նրանց հանդեպ, ովքեր ավելի

պակաս ունևոր էին, բայց
Նրանք հարստացել էին՝
խախտելով Աստծո օրենքը:
Նրանք հրաժարվել են
քաղցածներին կերակրելուց,
մերկերին հագցնելուց,
արդարացի չեն վարվել և
ողորմության չեն սիրել: Նրանք
ձգտել են
մեծարելիորեն ցեճեռքերելիորեն ց
դրացիների
փառքնուհարգանքը: Հիմա
Նրանք ղրկված են այն ամենից,
ինչը Նրանց մեծ էր դարձրել, և
մնացել են դատարկ ու
անպաշտպան: Նրանք
ահաբեկված նայում են այն

ԿՈԼՈՔԵՐԻ ԿՈՐԾԱՆՄԱՆՐ, ՈՐ
ԳԵՐԱՊԱՏԵԼ ԵՆ ԻՐԵՆԳ
ՍՈՒՂԾՈՂԻԳ: ՆՐԱՆՔ ԻՐԵՆԳ
ԽՈԳԻՆԵՐՆ ՎԱՃԱՌԵԼ ԵՆ
ԵՐԿՐԱՅԻՆ ԽԱՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՈՒ
ԽԱՃՈՒՅՔՆԵՐԻ ԽԱՄԱՐ, Ա չԵՆ
ՃԳՄԵԼ ԽԱՐԱՍՏԱՆԱԼ ԱՍՏԾՈՎ:
ԱՐԴՅՈՒՆՔՐՈՒՄ` ՆՐԱՆԳ ԿՅԱՆՔՆ
ՃԱԽՏՈՂՎԱԾ Է, ՆՐԱՆԳ
ԽԱՃՈՒՅՔՆԵՐՆ ԼԵՂԻ ԵՆ ՊԱՐԾԵԼ,
ԻՍԿ ԳԱՆՃԵՐՆ`
ԱՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: ԿՅԱՆՔԻ ՈՂՋ
ՆԹԱԳՔՐՈՒՄ ՃԵՌՔ ԲԵՐԱԾՆ
ՈՃՆՃԱՆՈՒՄ Է ՄԻ ԱԿՆԹԱՐԹՈՒՄ:
ՉԱՐՈՒՍՏՆԵՐՆ ՈՂՔՐՈՒՄ ԵՆ`
ՄԵՏՆԵԼՈՎ ԻՐԵՆԳ ՉՔԵՂ
ԱՎԱԼԱՍՏՆԵՐԻ ԿՈՐԾԱՆՈՒՄՆ, Ա ԹԵ

ինչպես են ցաքուցրիվ լինում
իրենց ոսկին ու արծաթը: Բայց
Նրանք դադարեցնում են իրենց
ողբը՝ վախենալով, որ իրենց
կուռքերի հետ միասին կորչելու
են նաև իրենք:

Ամբարիշտները լցվում են
զղջումով, բայց ոչ Աստծո և
իրենց մերձավորների հանդեպ
իրենց հանցավոր
արհամարհանքի համար, այլ
որովհետեւ Աստված հաղթել է:
Նրանք ողբամ են, որ իրենց
վերջն այդպես ստացվեց, բայց
չեն ապաշխարում իրենց
անօրենուրթյան համար: Եթե

Կարողանային, Նրանք
Կօգտագործեին բոլոր
միջոցները հաղթելու համար:

Աշխարհը տեսնում է, որ
Նրանք, ում իրենք ծաղրել և
արհամարհել են,
համաճարակներից, փոթորկից
և երկրաշարժից ոչ մի վնաս
չեն կրել: Նա, ով իր օրենքը
խախտողների համար մաշող
կրակ է, իր ժողովրդի համար
ապահով ապաստարան է:

Չոգեորականը, ով զոհաբերել
էր ճշմարտությունը մարդկանց
բարեհաճությունը շահելու

համար, այժմ հասկանում է իր
ուսուցման բնույթն ա
ազդեցությունը: Ակնհայտ է
դառնում, որ ամենատես աչքը
հետևել է իրեն, երբ ինքը
կանգնած է եղել ամբիոնի
առաջ, քայլել է փողոցներով ու
շփվել մարդկանց հետ կյանքի
տարբեր պարագաներում:
Չոգու [655] ամեն մի հույզը,
գրած ամեն մի տողը,
արտասանած ամեն մի խոսքը,
և ամեն մի արարք, որը
մարդկանց մղել է հանգիստ
ապրելու կեղծիքի մեջ, ցանված
սերմ է եղել, և հիմա իրեն
շրջապատող թշվառ, կորած

հոգիների մեջ նա տեսնում է
հունձքը:

Տերն ասում է. «Ու թեթև
կերպով բժշկում են իմ
ժողովրդի աղջկա վերքերն՝
ասելով. Խաղաղություն,
խաղաղություն, երբ
խաղաղություն չկա»: «Դուք
տրտմեցնում եք արդարի
սիրտը ստությունով, որին ես
չեմ տրտմեցնում, և
ուժովացնում եք ամբարիշտի
ձեռքերը, որ իր չար
ճանապարհից ետ չդառնա և
ապրի» (Երեմիա 8.11, Եզեկիել
13.22):

«Վա՛յ այն հովիվներին, որ կորցնում և ցրում են իմ արոտի ոչ-խարներին... Ահա ես ձեզ պիտի այցելություն անեմ ձեր գործերի չարու-թյան համար»:
«Ողբացեք, ով հովիվներ, և աղաղակեցեք ու թավալվեցեք, ով հոտի ընտիրներ, որովհետև լրացել են ձեր մորթվելու և ցիրուցան լինելու օրերը... Եվ պիտի անհայտանա ապաստանը հովիվներից, և փրկությունը՝ հոտի ընտիրներից» (Երեմիա 23.1,2,25.34,35):

Ծառայողներն ու ժողովուրդը
հասկանում են. որ Աստծո հետ
ճիշտ հարաբերություններ չեն
ունեցել: Նրանք գիտակցում են,
որ ապստամբել են արդար ու
ճշմարիտ օրենքի Յեղիևակի
դեմ: Աստվածային
դրվածքների ոտնահարումը
չարիքի, անհամաձայնության,
ատելության ու անօրենության
հազարավոր աղբյուրներ է
բացել, մինչև որ երկիրը
վերածվել է մի ահռելի
ռազմադաշտի,
ապականության մի որջի: Ահա
թե ինչ տեսաբան է հիմա
երևում նրանց, ովքեր, մերժելով

ճշմարտությունը, նախընտրել
են փայփայել մոլորությունը: Ոչ
մի լեզու չի կարող նկարագրել,
թե ինչպես են
անհնազանդներն ու
անօրենները փափագում այն,
ինչ կորցրել են ընդմիջտ՝
հավիտենական կյանքը:
Մարդիկ, ում աշխարհը
երկրպագել է իրենց
տաղանդների ու
պերճախոսության համար,
հիմա ամեն ինչ ատենում են
իրական լույսի ներքո: Նրանք
գիտակցում են, թե ինչից են
գրկվել անօրենության
պատճառով, և ընկնում են

Նրանց ոտքերը, ում
հավատարմությունն
արհամարհելու ծաղրելեն՝
խոստովանելով, որ Աստված
սիրել է նրանց:

Մարդիկ հասկանա չք են, որ
խաբված են եղել, և սկսում են
մեկը մյուսին մեղադրել
կորստյան տանելու մեջ, բայց
բոլորը միասին իրենց
ամենադառը մեղադրանքները
տեղում են ծառայողների
գլխին: Անհա-վատարիմ
հովիվները
մարգարեություններ են արել՝
իրենց ունկնդիր-ներին դրդելով

անտեսել Աստծո օրենքը և [656]
հալածել նրանց, ովքեր սուրբ
կպահեն այն: Յուսահատված՝
այս ուսուցիչները հիմա
աշխարհի առաջ խոստովանում
են իրենց խաբեությունը:
Ամբոխները կատաղում են:
«Մենք կորած ենք, և դուք եք
մեր կործանման պատճառը»,—
ճչում են նրանք ու հարձակվում
այս կեղծ հովիվների վրա: Յենց
նրանք, ովքեր մի ժամանակ
ամենից ավելի էին հիացել
իրենց հովիվներով, այժմ
ամե-նասուկալի անեծքներն են
թափում նրանց գլխին: Այն
նույն ձեռքերը, որ մի ժամանակ

Նրանց պսակել էին
դափնիներով, հիմա
բարձրանում են՝ կործանելու
Նրանց, և այն սրերը, որոնցով
պիտի սպանեին Աստծո
ժողովրդին, այժմ մերկացվում
են՝ կործանելու նրա
թշնամիներին: Ամե-նուրեք
կռիվ ու արյունահեղուժյուն է:

«Աղաղակը հասնելու է մինչև
երկրի ծայրը, որովհետև Տերը
վեճ ունի երկրի ազգերի հետ,
նա դատ է տեսնում ամեն
մարմնի հետ, նա սրի է
մատնելու ամբարիշտներին,
ասում է Տերը» (Երեմիա 25.31):

Վեց հազար տարի շարունակ
ընթացել է մեծ պայքարը:
Աստծո Որդին ու Նրա երկնային
լրաբերները պատերազմել են
չարի ուժերի դեմ, որպեսզի
Նախագգուշացնեն, լուսավորեն
ու փրկեն մարդկանց
որդիներին: Յիմա բոլորը
կայացրել են իրենց որոշումը,
ամբարիշտները լիովին
միավորվել են սատանայի հետ՝
պատերազմելու Աստծո դեմ:
Եկել է Աստծո ժամանակը՝
արդարացնելու իր
ոտնահարված օրենքի
հեղինակութունը: Այժմ
պայքարը ոչ միայն սատանայի

հետ է, այլև մարդկանց: «Տերը
վեճ ունի ազգերի հետ», «Նա
ամբարիշտներին սրի է
մատնելու»:

Նրանց վրա, «ովքեր հառաչում
և ողբում են ...բոլոր
պղծությունների համար»,
փրկության նշան է դրվել: Ահա
դուրս է գալիս մահվան
հրեշ-տակը՝ եզեկիելի տեսիլքի
մեջ պատկերված մարդկանցով,
ովքեր «փշրող գործիք» ունեին,
և ում կարգադրվում է. «Ծերին,
երիտասարդին, կույսին,
երեխային ու կանանց սպանեք
փչացրեք, բայց նրանց, ում վրա

նշան լինի, միս մոտենաք, և
սկսեք իմ սրբարանից»:
Մարգարեն ասում է. «Եվ
նրանք սկսեցին այն ծեր
մարդկանցից, որ տան առաջ
էին» (Եզեկիել 9.1-6):
Կործանման գործը կսկսվի
նրանցից, ովքեր իրենց
ժողովրդի հոգևոր
պահապաններն են համարվել:
Անհավատարիմ
ժամապահներն առաջինը
կընկնեն: Ոչ մեկին չեն խղճա
կամ խնայի: Տղամարդիկ,
կանայք, կույսերն ու
մանուկները միասին
կկործանվեն:

«Ահա Տերը դուրս է գալիս իր տեղից, որ երկրի բնակիչներին [657] այցելի իրենց անօրենոււթյան համար, և երկիրը պիտի հայտնի իր ըն-դունած արյունները և այլևս չպիտի ծածկի իր սպանվածներին» (Եսայիա 26.21): «Եվ սա է լինելու այն հարվածը, որով Տերը պիտի հարվածի բոլոր ժողովուրդներին, որոնք պատերազմեցին Երուսաղեմի դեմ. նրանց մարմինը պիտի հալվի՝ իրենց ոտների վրա կանգնած, և նրանց աչքերը

պիտի հալվեն իրենց
խորշերում, և նրանց լեզուն
պիտի հալվի իրենց բերանում:
Եվ պիտի լինի այն օրը, որ
Տիրոջ խռովութիւնը մեծ պիտի
լինի նրանցում, և ամեն մարդ
պիտի բռնի իր ընկերոջ ձեռքը,
և նրա ձեռքը պիտի բարձրանա
իր ընկերոջ ձեռքի դէմ»

(Չաքարիա 14.12,13): Իրենց
իսկ մեջ փոթորկվող կատաղի
կրքերից և Աստծո սուկումալի
ու անողորմ բարկութեան
հեղումից կկործանվեն երկրի
մեղավոր բնակիչները՝
քահանաները, իշխաններն ու
ժողովուրդը՝ հարուստ ու

աղքատ, մեծ ու փոքր: «Եվ
Տիրոջ սպանվածներն այն օրը
երկրի մի ծայրից մինչև երկրի
մյուս ծայրը կլինեն. նրանց
համար սուգ չի լինելու, և
նրանք չեն ժողովվելու և
թաղվելու» (Երեմիա 25.33):

Քրիստոսի Երկրորդ գալստյան
ժամանակ մեղավորները
կսրբվեն երկրի երեսից,
կայրվեն Նրա բերանի հոգուց և
կկործանվեն Նրա փառավոր
պայծառությունից: Քրիստոսն
իր ժողովրդին տանում է Աստծո
քաղաքը, իսկ երկիրը մնում է
առանց բնակիչների: «Ահա

Տերը դատարկելու է երկիրը,
այն քարուքանդ է անելու,
վախելու է նրա կեր-պարանքը
և ցրելու է նրա բնակիչներին»:
«Երկիրը դատարկվելու՝
դատարկ է լինելու, և
կողոպտվելով կողոպուտ է
դառնալու, որովհետեւ Տերն է
խոսել այս խոսքը»:
«Եվ երկիրը
պղծված է լինելու իր
բնակիչների տակին, որովհետեւ
օրենքները զանց են արել,
պատվիրանը՝ փոխել,
հավիտենական ուխտը՝
խաճուսնել: Դրա համար
անեծքը թափել է երկիրը, և
բնակիչները նրանով պատիժ

կրեցին, այս պատճառով երկրի
բնակիչներն այրվեցին»
(Եսայիա 24.1,3,5,6):

Ամբողջ երկիրը մի ամառի
անապատի է նման:
Երկրաշարժից կործանված
քաղաքների և գյուղերի
ավերակները, արմատախիլ
եղած ծառերը, ծովից դուրս
նետված կամ երկրից պոկված
խորդուբորդ ժայռաբեկորները
ցրված են երկրի մակերեսին,
մինչ վիթխարի խոռոչները
ցույց են տալիս, թե որտեղ են
լեռներն իրենց հիմքից պոկվել:
[658]

Չիմա տեղի է ունենում այն
իրադարձությունը, որը
նախապատկերված է
Քավության օրվա վերջին
հանդիսավոր ծառայությամբ:
Երբ ծառայությունը Սուրբ
Սրբոցում ավարտվում էր, և
Իսրայելի մեղքերը հեռացվում
էին սրբարանից մեղքի
պատարագի արյան շնորհիվ,
Տիրոջ առաջ ներկայացվում էր
արձակման նոխազը, և
համայնքի ներկայությամբ
քահանայապետը
խոստովանում էր «նրա վրա
Իսրայելի որդիների բոլոր

անօրենությունները և նրանց
բոլոր հանցանքներն՝ իրենց
բոլոր մեղքերով, և դրանք
դնում էր նոխազի գլխին»
(Ղևտացոց 16.21): Նմանապես
էլ, երբ երկնային սրբարանում
ավարտվի քավության գործը,
այն ժամանակ Աստծո, սուրբ
հրեշտակների և փրկվածների
բազմության ներկայությամբ
Աստծո ժողովրդի մեղքերը
կդրվեն սատանայի վրա. նա
մեղավոր կհայտարարվի այն
ողջ չարության համար, որ
նրանց դրդել է անելու: Եվ
ինչպես արձակման նոխազն էր
ուղարկվում մի անբնակ

անապատ, այնպես էլ
սատանան կաքսորվի անբնակ
ու ամայի անապատ դարձած
երկիրը:

Չայտնության հեղինակը
կանխատու է սատանայի
աքսորումը և այն քառսային ու
ամայի վիճակը, որ պետք է
տիրի երկրին՝ հայտարարելով,
որ այդ իրավիճակը տևելու է
հազար տարի: Տիրոջ երկրորդ
գալստյան ու ամբարիշտների
կործանման տեսարանները
պատկերելուց հետո մարգարեն
շարունակում է. «Եվ տեսա մի
հրեշտակ՝ վայր գալիս երկնքից,

որ դժոխքի բանալին ուներ և մի
մեծ շղթա իր ձեռքում: Եվ նա
բռնեց այն վիշապին, այն
առաջին օձին, որ բանասարկուն
է և սատանան, կապեց նրան
հազար տարի, գցեց նրան
անդունդի մեջ, վապեց նրան և
կնիք դրեց նրա վրա. որ էլ
չմոլորեց նի ազգերին, մինչև որ
հազար տարին լրանա, և
դրանից հետո նա պետք է մի
քիչ ժամանակով արձակվի»
(Յայտնություն 20.1-3):

Այն, որ «անդունդ» բառը
ներկայացնում է երկիրն իր
քարոլքանդ ու խավար

վիճակում, ակնհայտ է մյուս
տեքստերից: Երկրի վիճակի
մասին «սկզբում»

Աստվածաշունչն ասում է, որ
«երկիրն անձե ու դատարկ էր, և
խավար կար անդունդի վրա»

[659] (Ճննդոց 1.2):

Մարգարեությունը

սովորեցնում է, որ երկիրը, գոնե
մասամբ, նույն վիճակին պիտի

վե-րադառնա: Նայելով առաջ՝

Աստծո մեծ օրվան, Երեմիա

մարգարեն ազդարարում է.

«Նայեցի երկրի վրա, և ահա

պարապ ու անձև էր, և երկնքին՝

և նրա լույսը չկար: Նայեցի

սարերին, և ահա դողում էին, և

բոլոր բլուրները սասանվում
էին: Նայեցի, և ահա բերքատու
այգին անապատ էր. և նրա
բոլոր քաղաքները
քարուքանդված էին» (Երեմիա
4.23-27, անգլ. թարգմ.):

Այստեղ է լինելու սատանայի և
նրա չար հրեշտակների տունը
հազար տարի: Արգելափակված
երկրում՝ նա մուտք չի ունենա
այլ աշխարհներ՝ փորձելու և
անհանգստացնելու նրանց,
ովքեր երբեք չեն մեղանջել: Այս
իմաստով է հենց, որ սատանան
կապված է. ոչ ոք չի մնացել,
ով վրա նա կարողանա

գործադրել իր ուժը: Նա
ամբողջովին կտրված է
խաբեության ու կործանման
գործից, որը նրա միակ
հաճույքն է եղել շատ դարերի
ընթացքում:

Եսայիա մարգարեն, տեսնելով
ապագայում սատանայի
տապալման ժամանակը,
բացականչում է. «Ինչպե՞ս
վայր ընկար երկնքից, ով
առավոտը ծագող Արուսյակ,
կտրվեցիր, գետինն ընկար, ով
ազգեր նկուն անողդ ...Բայց
ինքդ ասել էիր քո սրտում, վեր
կելնեմ երկինքը, Աստծո

աստղերից բարձր կդնեմ իմ
արթունը ...Բարձրյալին
կնմանվեմ: Բայց դու դժոխքն
ես իջել, գուբի
խորխորատները: Քեզ
տեսնողները հիանալու են քեզ
վրա՝ հարցնելով, սա՞ է այն
մարդը, որ սարսեցնում էր
երկիրը, դո-դացնում էր
թագավորութունները,
աշխարհս անապատ էր
դարձնում, նրա քաղաքներն
ավերակ անում և նրա
գերիներին չէր արձակում տուն
գնալու» (Եսայիա 14.12-17):

Վեց հազար տարի շարունակ
սատանայի ապստամբ
գործունեու-թյունը
«սարսեցնում էր երկիրը»: Նա
«աշխարհս անապատ էր
դարձնում», «Նրա քաղաքներն
ավերակ անում», և «Նրա
գերիներին չէր արձակում տուն
գնալու»: Վեց հազար տարի
Նրա բանտն ընդունել է Աստծո
Ժողովրդին, և Նա Նրան գերի
կապահեր հավիտյան, բայց
Քրիստոսը փշրեց Նրա
շղթաները և ազատագրեց
բանտարկյալներին: [660]

Չիմա սատանան նույնիսկ
ամբարիշտների վրա
իշխանութիւն չի ունենա, և իր
չար հրեշտակների հետ մենակ
կմնա՝ տեսնելու մեղքի բերած
անեծքի հետևանքը: «Բոլոր
ազգերի թագավորները,
ամենքը պառկած են փառքով
իրենց տներում (գերեզմանումի
Բայց դու դուրս գցվեցիր քո
գերեզմանից գարշելի ընծյուղի
պես... Դու թաղումով չմիացար
նրանց հետ, որովհետև դու
քանդեցիր քո երկիրը,
սպանեցիր քո ժողովրդին»
(Եսայիա 14.18-20):

Հազար տարվա ընթացքում
սատանան պիտի թափառի
ամայացած երկրում՝ տեսնելու
Աստծո օրենքի դեմ իր
ապստամբության հետևանքը:
Այդ ժամանակ նա անասեփ
տառապանքներ է կրում: Իր
մեղանչումից հետո նա
անդադար գործում էր և
խորհելու ժամանակ չէր
ունեցել: Հիմա, երբ զրկված էր
իշխանությունից,
հնարավորություն ուներ
մտածելու, թե ինչ դեր է
խաղացել այն օրվանից, երբ
առաջին անգամ ապստամբեց
երկնքի կառավարության դեմ:

Նա ահով ու ղողով է սպասելու
զարհուրելի ապագային, երբ
պիտի տանջվի իր պատճառած
ողջ չարիքի համար և պատժվի
այն մեղքերի համար, որ
մարդուն դրդել է գործել:

Սատանայի գերությունն
ուրախություն և ցնծություն
կբերի Աստծո ժողովրդին:
Մարգարեն ասում է. «Եվ կլինի
այն օրը, երբ Տերը քեզ
կհանգստացնի քո
աշխատությունից, քո
տանջանքից և այն ծանր
ծառայությունից, որով դու
ծառա էիր եղած, այն ժամանակ

այս ստակը խոսես Բաբելոնի
թագավորի մասին և ասես.
Ինչպե՛ս է դադարել
բռնավորը... Տերը կոտրել է
ամբարիշտների գավազանը,
իշխանավորների մահակը, որ
սրտմտությամբ զարկում էր
ազգերին անդադար
հար-վաճներով, որ բռնանում
էր բարկությամբ
ժողովուրդների վրա անզուսպ
հալածանքով» (Եսայիա 14.3-6):

Առաջին և երկրորդ հարության
միջև ընկած հազար տարիների
ընթացքում տեղի կունենա
ամբարիշտների դատը: Պողոս

առաքյալը մատնանշում է այս դատը որպես իրադարձություն, որը պետք է հաջորդի Երկրորդ գալուստին: «Ուրեմն ժամանակից առաջ մի դատեք, մինչև Տերը գա, որ խավարի ծածուկ բաները կբերի լույսի մեջ և սրտերի խորհուրդները [661] կհայտնի» (Ա Կորնթացիս 4.5): Դանիելն ասում է, որ երբ Յինավուրցը եկավ, «իրավունք տրվեց Բարձրյափ սրբերին» (Դանիել 7.22): Այդ ժամանակ արդարներն իշխում են որպես թագավորներ ու Աստծո քահանաներ: Յովհաննեսը Յայտնության մեջ ասում է. «Ես

տեսա աթոռներ, և նրանց վրա
նստեցին, և դատավորութիւն
տրվեց նրանց»: Նրանք «Աստծո
և Քրիստոսի քահանաներ
կլինեն և նրա հետ
կթագավորեն հազար տարի»
(Յայտնութիւն 20.4,6): Յենց
այս ժամանակ է, որ ըստ
Պողոսի մարգարեութեան՝
«սուրբերն աշխարհս պիտի
դատեն» (Ա Կորնթացիս 6.2):
Քրիստոսի հետ միասին նրանք
դատում են ամբարիշտներին՝
համեմատելով նրանց գործերն
օրենսդրութեան գրքի՝
Աստվածաշնչի հետ, և վճռելով
յուրաքանչյուրի դատը

համաձայն այն արարքների, որ գործվել են մարմնում: Յետո որոշվում է ամբարիշտների պատժի չափը՝ ըստ նրանց գործերի, և դա գրվում է նրանց անունների դիմաց, մահվան գրքի մեջ:

Քրիստոսն ու Նրա ժողովուրդը դատելու են նաև սատանային ու նրա հրեշտակներին: Պողոսն ասում է. «Չգիտե՞ք, որ մենք դատելու ենք հրեշտակներին» (Ա Կորնթացիս 6.3): Եվ Յուդան էլ հռչակում է, որ «Տերն ...այն հրեշտակներին, ովքեր իրենց իշխանությունը չպահեցին, այլ

թո-ղեցին իրենց բնակութիւնը,
հավիտենական կապանքներով
խավարի մեջ պահեց՝ մեծ օրվա
դատաստանի համար» (Յուդա
6):

Չազար տարին ըլանալուց
հետո տեղի կունենա երկրորդ
հարու-թիւնը: Այդ ժամանակ
հարու-թիւն կառնեն մեռած
ամբարիշտները և կհայտնվեն
Աստծո առաջ, որպեսզի նրանց
վրա կատարվի «գրված
դա-տաստանը» (Սաղմոս
149.9): Եվ այսպես,
նկարագրելով արդարների
հարու-թիւնը՝ Չայտնության

հեղինակն ասում է. «Իսկ
մեռելների մնա-ցյալները
չկենդանացան, մինչև որ
հազար տարին ըոսնա»
(Չայտնություն 20.5): Եսայիան
Էլ ամբարիշտների վերաբերյալ
հռչակում է. «Եվ պիտի
հավաքվեն միասին, ինչպես
բանտարկյալներն են
հավաքվում գուբի մեջ, ու
փակվեն բանտի մեջ. և շատ
օրերից հետո պիտի
այցելություն ունենան»
(Եսայիա 24.22): [662]

ԳԼՈՒԽ 42—ՊԱՅՔԱՐՆ ԱՎԱՐՏՎԱԾ Է

Հազար տարվա վերջում
Քրիստոսը դարձյալ
վերադառնում է երկիր՝
փրկվածների բազմության ու
հրեշտակների շքախմբի
ուղեկցությամբ: Իջնելով
ահավոր վեհափառությամբ՝
Նա հրամայում է մեռած
ամբարիշտներին հարուստ
սանել՝ ընդունելու իրենց
դատավճիռը: Նրանք
գերեզմաններից դուրս են
գալիս վիթխարի բազմությամբ՝
անթիվ-անհամար, ինչպես

ծովի ավազը, ճիշտ
հակապատկերը նրանց, ովքեր
արթնացել էին առաջին
հարուժյան ժամանակ:
Արդարները հարուժյուն էին
առել անմահ
երիտասարդություն ու
գեղեցկություն հագած, մինչդեռ
ամբարիշտները կրում են
հիվանդության ու մահվան
հետքերը:

Բոլորի աչքերն այդ հսկայական
բազմության մեջ ուղղվում են՝
տես-նելու Աստծո Որդու
փառքը: Ամբարիշտների
ամբոխը միաձայն

բացա-կանչում է. «Օրհնյալ է
Տիրոջ անուսով եկողը»: Բայց
Յիսուսի հանդեպ սերը չէ, որ
նրանց մղում է այդ անելու:
Ճշմարտության ուժն է պոկում
այդ բառերը նրանց դժկամ
շուրթերից: Ինչպես
ամբարիշտները գերեզման էին
մտել, այնպես էլ դուրս են
գալիս՝ Քրիստոսի հանդեպ
նույն թշնամությամբ ու
ապստամբության նույն ոգով:
Նրանք այլևս վտրձության
ժամանակ չեն ունենա՝ ոպղելու
իրենց անցյալ կյանքի
արատները: Դա ո՛չինչ չէր
փոխի: Անօրենության մեջ

անցկացրած կյանքը չի
փափկացրել նրանց սրտերը:
Եթե տրվեր երկրորդ ժամկետը,
նրանք կանցկացնեին առաջինի
պես՝ շրջանցելով Աստծո
պահանջներն ու
ապստամբելով Նրա դեմ:

Քրիստոսն իջնում է Ձիթենյաց
լեռան վրա, որտեղից
համբարձվել էր Իր
հարուժյուկներից հետո, և որտեղ
հրեշտակները կրկնել էին Նրա
վե-րադարձի խոստումը:
Մարգարեն ասում է. «Եվ պիտի
գա իմ Տեր Աստ-վածը, [663] և
բոլոր սուրբերը՝ նրա հետ»:
«Եվ

Նրա ոտքերը կանգնած կլինեն
այն օրը Ձիթենյաց սարի վրա,
որ Երուսաղեմի առաջն է՝ դեպի
արևելք, և կպատռվի Ձիթենյաց
սարը միջից ...խիստ մեծ ձոր
(«դաշտ», անգլ. թարգմ.)

կլինի»: «Եվ Տերը Թագավոր
կլինի բոլոր երկրի վրա. այն օրը
մեկ կլինի Տերը, և նրա անունն
եւ՝ մեկ» (Չաքարիա 14.5,4,9):
Իր շլացուցիչ փայլով իջնելով
երկնքից՝ Նոր Երուսաղեմը
հանգչում է իր համար սրբված
ու պատրաստված տեղի վրա, և
Քրիստոսն իր ժողովրդի ու
հրեշտակների հետ մտնում է
Սուրբ քաղաքը:

Չիմա սատանան
պատրաստվում է վերջին ատեղ
պայքարը մղել
գերիշխանության համար: Այն
ժամանակ, երբ չարի իշխանը
զրկվել էր իր իշխանությունից
ու խաբեության գործից, թշվառ
ու ընկճված էր: Բայց հենց որ
հարություն են առնում մեռած
ամբարիշտները, և նա տեսնում
է իր կողմնակիցների հոծ
բազմությունները, նրա
հոլյսերը նորից արթնանում են,
և նա որոշում է չզիջել մեծ
պայքարում: Նա իր դրոշի
ներքո կհավաքի կորչողների

բոլոր գորքերը և նրանց
միջոցով կձգտի իրականացնել
իր ծրագրերը: Ամբարիշտները
սատանայի գերիներն են:
Մերժելով Քրիստոսին՝ նրանք
ընդունել են ապստամբ
առաջնորդի իշխանությունը:
Նրանք պատրաստ են
ընդունելու նրա առաջարկներն
ու կատարելու նրա
հրամանները: Սակայն,
հավատարիմ իր նախկին
նենգամտությանը՝ նա չի
հայտնում, որ սատանան է, այլ
հայտարարում է, որ ինքն
իշխան է՝ աշխարհի օրինավոր
տերը, ում ժառանգությունն

ապօրինի կերպով խլվել է
իրենից: Նա ներկայանում է իր
մոլորյալ հպատակներին
որպես փրկիչ՝
հավաստիացնելով նրանց, որ
հենց իր գորությամբ են նրանք
դուրս եկել գերեզմաններից, և
որ ինքը պատրաստվում է
ազատել նրանց ամենադաժան
բռնակալությունից: Քրիստոսի
ներկայությունից հեռու՝
սատանան հրաշքներ է գործում
իր հավակնությունը
հաստատելու համար: Նա ուժ է
տալիս թույլերին և բոլորին
ներշնչում է իր ոգին ու
եռանդը: Նա առաջարկում է իր

առաջնորդութեամբ դուրս գալ
սուրբերի բանակի դեմ և
տիրանալ Աստծո քաղաքին:
Դիվային ցնծութեամբ նա ցույց
է տալիս մեռելներից
հարութուն առած անհամար
միփոններին և հայտարարում,
որ ինքը՝ որպես իրենց
առաջնորդ, ամբողջապես
կարող է ջախջախել քաղաքը և
վերադարձնել իր գահն ու
թագավորութիւնը: [664]

Այդ հոժ ամբոխի մեջ են
մինչջրհեղեղյան աշխարհի
երկարակյաց ցեղի
բազմութիւնները՝

բարձրահասակ ու հանճարեղ
մտքի տեր մարդիկ, ովքեր,
տրվելով ընկած հրեշտակների
հսկողութեանը, իրենց ողջ
հմտութիւնն ու գիտելիքները
նվիրել են ինքնամեծարմանը,
մարդիկ, ում հրաշալի արվեստի
գործերն աշխարհին դրդել են
աստվածացնելու նրանց
հանճարը, ում դաժանութիւնն
ու չար
հայտնագործութիւնները,
սակայն, պղծելով երկիրն ու
աղավաղելով Աստծո
պատկերը, Նրան մղել են
բնաջնջելու նրանց երկրի
երեսից: Այստեղ են

Թագավորներ ու զորավարներ,
ովքեր նվաճել են ազգեր,
անվեհեր մարդիկ, ովքեր երբեք
պարտութեան չեն կրել, հպարտ
ու փառատենչ մարտիկներ, ում
մոտե-ցումից դողում էին
ամբողջ թագավորություններ:
Մահը նրանց չի փոխել:
Գերեզմանից դուրս գալիս
նրանց մտքերի ընթացքը
շարունակվում է ճիշտ
այնտեղից, ուր դադարել էր:
Նրանք լցված են զավթելու այն
նույն տենչով, որն իշխել էր
նրանց մեռնելու պահին:

Սատանան խորհրդակցում է
Նախ իր հրեշտակների, և ապա՝
այս թագավորների,
Նվաճողների ու զորավոր
մարդկանց հետ: Նայելով իրենց
կողմնակիցների զորությանն ու
թվակազմին՝ Նրանք հռչակում
են, որ քաղաքի ներսում
գտնվող բանակն իրենց ուժերի
համեմատ փոքրաթիվ է, և որ
այն կարելի է նվաճել: Նրանք
իրենց ծրագրերն են կազմում՝
տիրանալու Նոր Երոսաղեմի
գանձերին ու փառքին: Բոլորն
անմիջապես սկսում են
պատրաստվել պատերազմի:
Հմուտ արհեստավորները

գենքեր են շինում: Իրենց
հաջողութուններով հայտնի
գորավարները ռազմատենչ
ամբոխներին բաժանում են
ջոկատների և գնդերի:

Վերջապես տրվում է շարժվելու
հրամանը, և անթիվ-անհամար
գորքը շարժվում է առաջ, մի
բանակ, որի նմանը երբեք չի
գորակոչվել երկրային
նվաճողների կողմից, և որին
երբեք չեն կարող հավասարվել
երկրի վրա առաջին
պատերազմից ի վեր
հավաքված բոլոր դարերի
միա-ցյալ ուժերը: Սատանան՝

գորավարներից ամենահզորը,
բանակի գլուխ է անցնում, իսկ
Նբա հրեշտակներն իրենց
ուժերն են միավորում այս
վերջին պայքարի համար: Նրա
շարքերում թագավորներ ու
գորավարներ են, որոնց
հետևում են ամբոխները՝
հսկայական խմբերով, որոնցից
ամեն մեկն ունի իր
հրամանատարը: Ստվար
շարքերը ռազմական
կար-գապահուլթյամբ երկրի
քարուքանդ ու անհարթ
մակերեսով շարժվում են առաջ՝
դեպի Աստծո քաղաքը: Հիսուսի
հրամանով Նոր Երոսաադեմի

դարպասները փակվում են, և
սատանայի հրոսակները
շրջապատում են քաղաքն ու
պատրաստվում գրոհի: [665]

Յիմա Քրիստոսը նորից
հայտնվում է իր թշնամիների
աչքերի առաջ: Քաղաքից շատ
վեր` ոսկյա փայլուն
պատվանդանի վրա, մի գահ է`
բարձր ու վերացած: Այս գահին
նստած է Աստծո Որդին, իսկ
Նրա շուրջը իր արքայության
հպատակներն են: Ոչ մի լեզու
չի կարող նկարագրել, և ոչ մի
գրիչ չի կարող պատկերել
Քրիստոսի գորությունն ու

վեհափառությունը:
Հավերժական Հոր Փառքը
պարուրում է իր Որդուն: Նրա
ներկայության
պայծառությունը լցնում է
Աստծո քաղաքը և հորդում
դարպասներից դուրս՝ իր
ճաճանչներով հեղեղելով ողջ
երկիրը:

Գահին ամենամոտը կանգնած
են նրանք, ովքեր մի ժամանակ
սատանայի ակտիվ
գործակալներն են եղել բայց
խանձողի պես պոկվելով
կրակից՝ անմնացորդ
նվիրվածությամբ հետևել են

իրենց Փրկչին: Չաջորդը նրանք
են, ովքեր քրիստոնեական
բնավորություն են ձևավորել
կեղծիքի ու անհավատության
մեջ, նրանք, ովքեր պատվել են
Աստծո օրենքը, երբ
քրիստոնեական աշխարհը
չեղյալ էր հայտարարել այն, և
բոլոր դարերում իրենց
հավատի համար
նահատակված միլիոնավոր
մարդիկ,: Եվ ապա գալիս է այն
«մեծաթիվ ժողովուրդը, որը ոչ
ոք չէր կարող հաշվել, ամեն
ազգից, ցեղից, ժողովուրդներից
և լեզուներից... աթոռի առաջ և
Գառնի առաջ՝ սպիտակ

հանդերձներ հագած և իրենց
ձեռքերում՝ արմավենիներ»
(Յայտնություն 7.9): Նրանց
պատերազմն ավարտված է,
նրանց հաղթանակը՝ շահված:
Նրանք վազել են ասպա-րեզը և
շահել մրցանակը: Արմավենու
ճյուղը նրանց ձեռքերում՝ իրենց
հաղթանակի խորհրդանիշն է,
իսկ սպիտակ հանդերձը՝
Քրիստոսի անբիծ
արդարության, որն այժմ
նրանցն է:

Փրկվածները գովասանքի
օրհներգ են երգում, որն
արձագանքում է երկնային

ապարանքներում.

«Փրկությունը մեր Աստծուն, որ
նստում է աթոռի վրա, և
Գառին» (Յայտնություն 7.10):

Եվ հրեշտակներն ու

սերովբեները հիացմունքով

ձայնակցում են նրանց:

Տեսնելով սատանայի ուժն ու

չարությունը՝ փրկվածները

հասկացան, ինչպես երբեք

նախկինում, որ բացի

Քրիստոսի զորությունից՝ ուրիշ

ոչ մի ուժ չէր կարող իրենց

հաղթող դարձնել: Այդ

շողշողուն բազմության մեջ չկա

մեկը, ով իրեն վերագրի

փրկությունն, ասես ինքն է

հաղթել իր ուժով ու
բարությամբ: Ոչինչ չի ասվում
իրենց արածների կամ
տառապանքների մասին:
Յուրաքանչյուր օրհներգի,
ամեն մի գովասանքի կրկներգը
սա է. «Փրկությունը մեր
Աստծուն և Գառին»: [666]

Երկրի ու երկնքի բնակիչների
ներկայությամբ տեղի է
ունենում Աստծո Որդու
վերջնական թագադրումը: Եվ
այժմ, օժտված գերագույն
փառքով ու իշխանությամբ՝
արքաների Արքան հռչակում է
իր կառա-վարության դեմ

Խռովարարների դատավճիռը և
հրականացնում է
ար-դարադատություն նրանց
նկատմամբ, ովքեր խախտել են
իր օրենքը և ճնշել իր
ժողովրդին: Աստծո մարգարեն
ասում է. «Տեսա մի սպիտակ
մեծ աթոռ և նրա վրա նստողին,
ուր երեսից երկինքն ու երկիրը
փախան, և տեղ չգտնվեց
նրանց համար: Եվ տեսա
մեռելներին՝ մեծ և փոքր,
կանգնած աթոռի առաջ, և
գրքերը բացվեցին, և մի ուրիշ
գիրք էլ բացվեց, որ կյանքի
գիրքն է, և մեռելները
դատվեցին այն գրքում

գրվածներից՝ իրենց գործերի
համեմատ» (Ջայտնություն
20.11,12):

Ջենց որ բացվում են գրքերը, և
Ջիսունն իր հայացքն ուղղում է
ամ- բարիշտներին, նրանք
մտաբերում են ամեն մի մեղք,
որ երբևէ գործել են: Նրանք
տեսնում են, թե որտեղ են
շեղվել մաքրության ու
սրբության ճանապարհից, թե
հպարտությունն ու
ապստամբությունը որքան
հեռու են նրանց հասցրել
Աստծո օրենքը խախտելու մեջ:
Գայթակղիչ փորձությունները,

որոնց նրանք զիջել են՝
փայփայելով մեղքը,
չարաշահ-ված
օրհնությունները, Աստծո
արհամարհված լրաբերները,
մերժված զգուշացումները,
համառ, անզեղջ սրտերի
կողմից ետ մղված
տրտմու-թյան ափքները. այս
ամենը պատկերվում է նրանց՝
ասես հրեղեն տառերով գրված:

Գահի վերևում հայտնվում է
խաչը: Համայնապատկերի
նման երևում են Աղամի
վտրճության ու անկման և
փրկության մեծ ծրագրում

դրանց հաջորդող մյուս
տեսարանները: Փրկչի համեստ
ծնունդը, Նրա պարզ ու
հնազանդ մանկությունը, Նրա
մկրտությունը Հորդանանում,
ծոմն ու փորձությունը
անապատում, Նրա հանրային
ծառայությունը, որ
բացահայտում էր երկնքի
ամենաթանկարժեք
օրհնությունները, սիրո և
գթության գործերով լի օրերը,
մեկուսի լեռներում աղոթքի և
արթնության մեջ անցկացրած
գիշերները, նախանձով,
ատելությամբ ու չարությամբ լի
դավերը՝ ի հատուցումն Նրա

բարեգործության, Գեթսեմանի
սուկալի, խորհրդավոր
հոգեվարքը՝ ողջ աշխարհի
մեւելքերի ջախջախիչ
ծանրու-թյան տակ, Նրա
մատնվելը մարդասպան [667]
խուժանի ձեռքը, այն
զարհուրելի գիշերվա
ահասարսուռ
իրադարձությունները,
դիմադրություն ցույց չտվող
կալանավորը՝ ավաճ հր
ամենասիրելի աշակերտների
կողմից, ում կոպտորեն քարշ
էին տալիս Երուսաղեմի
վտղոցներով, Աննայի առաջ
Աստծո Որդու չարախիճ

ծաղրանքն, Նրա դատը
քա-հանայապետի պալատում,
հետո Պիղատոսի դատարանի
դահիվճում, վախկոտ ու դաժան
Յերովդեսի առջև՝ մատնված
ծաղրի, անարգանքի ու
տանջանքի և դատապարտված
մահվան, այս բոլորը
պատկերվում է ամենավառ
կերպով:

Ահա ակեկոծ ամբոխի Լսռաջ
պատկերվում են վերջին
տեսարանները. համբերատար
Տառապյալը՝ Գողգոթա տանող
արահետին, երկնքի
Արքայազնը՝ կախված խաչից,

Նրա մահվան հոգեվարքը
ծաղրող գոռոզ քահանաներն ու
ամբոխը, գերբնական խավարը,
երկրաշարժը, պատառոտվող
ժայռերն ու բացված
գերեզմանները, որ
նշանավորեցին աշխարհի
Փրկչի մահվան պահը:

Այս ահավոր տեսարանը
պատկերվում է իր ողջ
իսկությամբ: Սատանան, նրա
հրեշտակներն ու հպատակներն
ի վիճակի չեն երեսները շրջելու
իրենց իսկ սեփական գործերի
ատեսարանից: Ամեն մեկը հի-
շում է իր խաղացած դերը:

Չերովդեսը, ով Իսրայելի
Թագավորին կործանելու
համար սպանեց Բեթլեհեմի
անմեղ մանուկներին, պիղծ
Չերովդիան, ում հանցավոր
հոգու վրա է ծանրացած
Չովհաննես Մկրտչի արյունը,
թուլակամ ու վափոխամիտ
Պիղատոսը, ծաղրող
գինավորները, քահանաները,
իշխաններն ու խենթացած
ամբոխը, որ աղաղակում էին.
«Նրա արյունը մեր և մեր
որդիների վրա», բոլորը
տեսնում են իրենց հանցանքի
հրեշավորութունը: Նրանք
իզուր ջանում են թաքնվել Նրա

դեմքի աստվածային
վեհուԼթյունից, որն ավելի
գերազանց է, քան արևի
փառքը, մինչ փրկվածներն
իրենց պսակները նետում են
Փրկչի ոստերի մոտ՝
բացականչելով. «Նա մեռավ
ինձ համար»:

Փրկվածների բազմության մեջ
են Բրիստոսի առաքյալները՝
անվեհեր Պողոսը, կրակոտ
Պետրոսը, սիրված ու սիրող
Յովհաննեսը և նրանց
ազնվասիրտ եղբայրակիցները
և նրանց հետ նահատակների
հսկայական բանակը, մինչդեռ

պարիսպներից դուրս ամեն մի
պիղծ ու գարշելի բանի հետ
նրանք են, ովքեր հալածել,
բանտարկելու սպանել են
նրանց: Այնտեղ է Ներոնը՝ այդ
դաժան ու անառակ հրեշը, ով
տեսնում է նրանց
ուրախությունն ու ցնծությունը,
ու՛մ մի ժամանակ չարչարել և
ու՛մ ծայրահեղ տանջանքներից
դիվական հաճույք է ստացել:
Այնտեղ է և նրա մայրը,
որպեսզի տեսնի իր իսկ գործի
հետևանքը, [668] տեսնի, թե
ինչպես է իր բնավորության
չար դրոշմը վտխանցվելորդուն,
և ինչպես են իր ազդեցությամբ

քաջալերված ու զարգացած են
կրքերը ծնել ոճիրներ, որոնք
ցնցել են աշխարհը:

Այնտեղ են պապական
քահանաներն ու պրելատները,
ովքեր հավակնելեն Յիսուսի
դեսպանները լինելու, սակայն
Նրա ժողովրդի խղճին
տիրանալու համար դիմել են
տանջանքի, զնդանի և
խարույկի: Այնտեղ են հպարտ
պապերը, ովքեր իրենց վեր
դասելով Աստծուց՝ հանդգնել
են փոխել Բարձրյալի օրենքը:
Եկեղեցու այդ կեղծ հայրերը
հաշիվ պիտի տան Աստծուն,

ինչից նրանք մեծ
ուրախությամբ կխուսափեին:
Նրանք շատ ուշ են հասկանում,
որ Ամենագետը
նախանձախնդիր է իր օրենքի
համար և ոչ մի դեպքում չի
արդարացնի հանցավորին:
Նրանք հիմա են հասկանում, որ
Քրիստոսն իր շահերը
նույնացնում է իր տառապյալ
ժողովրդի շահերի հետ, և զգում
են Նրա այս խոսքերի ուժը.
«Որովհետև իմ այս փոքր
եղբայրներից մեկին արիք, ինձ
արիք» (Մատթեոս 25.40):

Ողջ ամբարիշտ աշխարհը
կանգնած է Աստծո ատյանի
առաջ՝ երկնքի
կառավարութեանը
դավաճանելու մեղադրանքով:
Նրանք ոչ ոք չունեն, որ
պաշտպանի իրենց դատը,
չունեն որևէ արդարացում, և
նրանց դեմ կայացվում է
հավիտենական մահվան
դատավճիռը:

Չիմա բոլորին պարզ է, որ
մեղքի վարձքը վստահոր
անկախութիւնները և
հավիտենական կյանքը չէ, այլ
ստրկութիւնները, կործանումը և

մահը: Ամբարիշտները տեսնում
են, թե ինչից են զրկվել իրենց
ապստամբ կյանքով:

«Ամենագերագանց
հավիտենական փառքի
մեծությունն» ար-համարիվել
էր, երբ առաջարկվել էր նրանց,
բայց որքա՛ն փափագելի է այն
թվում հիմա: «Ես կարող էի
ունենալ այս ամենը,—
աղաղակում է կորած հոգին,—
բայց նախընտրեցի ղրանք
հեռացնել ինձնից: Օ, ի՛նչ
տարօրինակ մոլուցք: Ես
խաղաղությունը,
երջանկությունն ու պատիվը
փոխանակել եմ թշվառության,

անարգանքի և
հուսահատության հետ»:
Բոլորը տեսնում են, որ իրենք
իրավացիորեն են բացառվել
երկնքից: Իրենց կյանքով
նրանք հայտարարել են. «Չենք
ուզում, որ դա թագավորի մեզ
վրա» (Ղուկաս 19.14):

Ասես հմայված՝
ամբարիշտները նայում են
Աստծո Որդու թագադրությանը:
Նրա ձեռքերում նրանք տեսնում
են աստվածային օրենքի
տախտակները, այն
պատվիրանները, որ
արհամարհել [669] ու խախտել

են: Նրանք տեսնում են
փրկվածների զարմանքի,
հիացմունքի և ցնծության
պռռթկումը, ու երբ մեղեդու
հնչյունները հասնում են
քաղաքից դուրս գտնվող
բազմությանը, բոլորը միաձայն
բացականչում են. «Մեծ և
զարմանալի են քո գործերը,
Տեր Աստված Ամենակալ,
արդար և ճշմարիտ են քո
ճանապարհները, ով սուրբերի
Թագավոր» (Չայտնություն
15.3), և երեսնիվայր
երկրպագում են կյանքի
Իշխանին:

Տեսնելով Քրիստոսի փառքն ու
մեծափառութիւնը՝ սատանան
ասես կաթվածահար է լինում:
Երբեմնի ծածկող քերովբեն
հիշում է, թե որտեղից է ընկել:
Ինչպե՛ս է փոխվել, ինչպե՛ս
այլասերվեյ լուսափայլ
սերովբեն «արշալույսի որդին»:
Նա ընդմիշտ հեռացված է այն
խորհրդից, որտեղ մի ժամանակ
պատվավոր անդամ էր: Նա
հիմա մեկ ուրիշին է տեսնում
կանգնած Յոր կողքին, ով
ծածկում է Նրա փստքը: Նա
տեսնում է, որ բարձրահասակ
ու վեհաշուք կերպարանքով մի
հրեշտակ թագը դնում է

Քրիստոսի գլխին, և հասկանամ
է, որ այս հրեշտակի բարձր
դիրքը կարող էր իրենը լինել:

Նա մտաբերում է իր
անմեղության ու մաքրության
կացարանը, խաղաղությունն ու
գոհությունը, որ վայելում էր,
մինչև որ սկսեց տրտնջալ
Աստծո դեմ և
ՆախանձելՔրիստոսին: Իր
մեղադրանքներն ու
ապստամբությունը, իր
կեղծիքը՝ հրեշտակների
համակրանքն ու
աջակցությանը շահելու
համար, սթափվելուց

հրաժարվելու իր
համառությունը, երբ Աստված
դեռ պատրաստ էր ներում
շնորհել, այս ամենը պարզորոշ
պատկերվում է նրա առաջ: Նա
վերհիշում է իր գործը
մարդկանց մեջ և դրա
հետևանքները՝ մարդու
թշնամությունն իր դրացուդեմ,
մարդկային կյանքի սուկալի
քայքայումը,
թագավորությունների ծագումն
ու անկումը, գահերի
տապալումը, խռովությունների,
բախումների և
հեղափոխությունների երկար
շարքը: Հիշում է Քրիստոսի

գործին հակառակվելու և
մարդուն ավելի ու ավելի
ապականելու իր անդուլ
ջանքերը: Նա տեսնում է, որ իր
դժոխային դավերն անգոր են
եղել կործանելու նրանց, ովքեր
հուսացել են Յիսուսին: Նայելով
իր թագավորությանը՝ իր
տքնաջան աշխատանքի
պտղին, սատանան միայն
ձախողում և ավերածություն է
տեսնում: Նա ամբոխ ներին
դրդեց հավատալու, որ հեշտ
կլինի գրավել Աստծո քաղաքը,
բայց քաջ գիտի, որ դա սուտ է:
Մեծ պայքարի ընթացքում նա
նորից ու նորից պարտվել է՝

ստիպված լինելով նահանջել:
Նա չափազանց լավ գիտի
Չավերժականի գորութունն ու
վեհափառութունը: [670]

Մեծ խռովարարի միակ
նպատակը մշտապես եղել է
իրեն արդա-րացնելը և իր
ապստամբության
պատասխանատվությունն
աստվածային կառավարության
վրա գցելը: Այս ուղղությամբ է
Նա օգտագործել իր մտավոր
վիթխարի ուժը: Նա գործել է
կանխամտածված, կանոնավոր
կերպով և զարմանալի
հաջողությամբ՝ միլիոնավոր

մարդկանց դրդելով ընդունելու
դարեր շարունակ ընթացող մեծ
պայքարի իր
մեկ-նաբանությունը:
Չազարավոր տարիներ
դավադրության այս մեծ
պա-րագլուխը ճշմարտության
փոխարեն մարդկանց կեղծիք է
մատուցել: Բայց հիմա եկել է
ժամանակը, երբ
ապստամբությունը
վերջնականապես պիտի
տապալվի, և բացահայտվի
սատանայի իսկական
պատմությունն ու
բնավորությունը: Քրիստոսին
գահընկեց անելու, Նրա

Ժողովրդին կործանելու և
Աստծո քաղաքը զավթելու այս
վերջին փորձով գերխաբեքան
ամբողջովին մերկացրեց իրեն:
Եվ ովքեր միացել էին նրան,
տեսնում են նրա գործի
կատարյալ ձախողումը:
Քրիստոսի հետևորդներն ու
հավատարիմ հրեշտակները
հասկանում են Աստծո
կառավարության դեմ նյութած
նրա դավերի ողջ խորությունը:
Բոլորն այժմ նողկանք են
տածում նրա հանդեպ:

Սատանան տեսնում է, որ իր
ինքնակամ ապստամբությունն

իրեն անպիտան է դարձրել
երկնքի համար: Նա իր ուժերը
վարժեցրել է պատերազմելու
Աստծո դեմ, և երկնքի
մաքրությունը, անդորըն ու
ներդաշնակությունը գերագույն
տանջանք կփնեին նրա
համար: Նրա մեղադրանքներն
Աստծո գթասրտության և
արդարադատության դեմ այժմ
դադարել են: Նախատինքը, որ
Նա ջանացել էր գցել Եհովայի
վրա, ամբողջովին իր վրա է
ընկնում: Եվ հիմա սատանան
խոնարհվում է՝ խոստովանելով
իր դատավճռի
արդարացիությունը:

«Ով է, որ քեզանից չվախենա,
ով Տեր, և քո անունը
չփառավորի, որ միայն դու ես
սուրբ, որովհետև բոլոր ազգերը
կգան և քո առաջ
երկրպագություն կանեն,
որովհետև քո իրավունքները
հայտնվեցին» (Յայտնություն
15.4): Ամեն մի ճշմարտություն
կամ սխալ, որ ծագել է այս
երկարատև պայքարի
ընթացքում, այժմ պարզվում է:
Ապստամբության
հետևանքները, աստվածային
պատվիրանները մի կողմ
դնելու պտուղ-ները

բացահայտվում են արարված
բոլոր բանական էակներին:
Սա-տանայի
կառավարաթյունն՝ ի
հակադրություն Աստծո
կառավարման, ներկայացվում
է ողջ տիեզերքին: Սատանան
դատապարտվում է իր իսկ
գործերով: Աստծո
իմաստությունը, Նրա
արդարությունն ու բարությունը
ամբողջովին արդարացվում են:
Բացահայտվում է, որ մեծ
պայքարում [671] իր բոլոր
գործողություններն Աստված
արել է հանուն իր ժողովրդի և
իր ստեղծած բպոր

աշխարհների հավիտենական
բարօրութեան: «Տեր, քո բոլոր
գործերը պիտի գոհանան
քեզանից, և քո սուրբերը պիտի
օրհնեն քեզ» (Սաղմոս 145.10):
Մեղքի պատմութիւնն ամբողջ
հավերժութեան ընթացքում
մնալու է որպէս վկայութիւն
այն բանի, որ Աստուծո օրենքի
գոյութեամբ է
պայմանավորված Նրա
ստեղծած բոլոր էակների
երջանկութիւնը: Մեծ պայքարի
բոլոր փաստերն իրենց առաջ`
ողջ տիեզերքը` հավատարիմ թե
ապստամբ, միաձայն
բացականչում է. «Արդար և

ճշմարիտ են քո
ճանապարհները. ով սարքերի
Թագավոր»:

Տիեզերքի առաջ պարզորոշ
ներկայացվեց Յոր և Որդու մեծ
զոհաբերությունը հանուն
մարդու: Հասել է ժամը, երբ
Քրիստոսը գրավում է Իր
օրինական դիրքը և
փառավորվում է
իշխանություններից,
պետություններից և ամեն
անունից վեր: Իր առջև դրված
ուրախության փոխարեն՝ Նա
խաչը հանձն առավ և
արհամարիեց ամոթը, որպեսզի

շատ որդիների դեպի փառք
առաջնորդի: Ու թեև վիշտն ու
ամոթն անըմբռնելիորեն մեծ
էին, ուրախությունն ու փառքը
շատ ավելի մեծ են: Նա նայում
է փրկվածներին, ովքեր
նորոգված են իր պատկերով,
ամեն մի սիրտ կրում է
աստվածային կատարյալ
դրոշմը, և ամեն մի դեմք
արտացոլում է իր Արքայի
նմանությունը: Նրանց մեջ Նա
տեսնում է իր հոգու
աշխատության պտուղը և
բավարարվում: Եվ մի ձայնով,
որը հասնում է արդարների և
ամբարիշտների

բազմություններին, Նա
հռչակում է. «Ահա իմ արյամբ
գնվածները: Նրանց համար ես
չարչարվեցի, նրանց համար
մեռա, որպեսզի նրանք իմ
ներկայությամբ բնակվեն
անվախճան դարերի
ընթացքում»: Եվ
ճերմակազգեստ փրկվածները՝
գահի շարջ կանգնած,
հնչեցնում են գովասանքի
օրհներգը. «Արժանի է մորթված
Գառն առնելու և զորություն, և
հարառության, և՛
կարողություն, և՛ պատիվ,
եփստք, և օրհնություն»
(Չայտնություն 5.12):

Թեպետ սատանան
հարկադրված ճանաչեց Աստծո
արդարությունը և խոնարհվեց
Քրիստոսի գերիշխանության
առաջ, նրա բնավորությունը
մնաց անփոփոխ:
Ապստամբության ոգին՝ հզոր
հեղեղի նման, դարձյալ
պոռթկում է: Կատաղությամբ
լցված՝ նա վճռում է չզիջել մեծ
պայքարում: Եկել է ժամը՝
վերջին հուսահատ կռիվը
մղելու երկնքի [672] Թագավորի
դեմ: Նա նետվում է իր
հպատակների շարքերը և
ջանում նրանց ներշնչել իր իսկ

վայրագությունն ու գրգռել
Նրանց անհապաղ գրոհի: Բայց
այդ անհամար միփոններից,
ու՛մ նա ներքաշել էր
ապստամբության մեջ, ոչ ոք
հիմա չի ընդունում Նրա
գերիշխանությունը: Նրա
իշխանության վերջը մոտ է:
Ամբարիշտներն Աստծո դեմ
նույն ատելությամբ են լցված,
որով ներշնչված է սատանան,
բայց նրանք տեսնում են, որ
իրենց գործն անհուսալի է, որ
իրենք չեն կարող հաղթել
Եհովային: Նրանց ցատկը
բորբոքվում է սատանայի և
Նրա մոլորեցնող

գործակալների դեմ, և նրանք
դիվային գազանությամբ
հարձակվում են նրանց վրա:

Տերն ասում է. «Որովհետև դու
քո սիրտը Աստծո սրտի նման
շինեցիր, ահա ես քեզ վրա
պիտի բերեմ օտարների՝
ազգերի բռնավորներին, և
նրանք պիտի հանեն իրենց
սրերը քո իմաստության
գեղեցկության վրա ու պիտի
ապականեն քո
գեղեցկաթյունը: Նրանք քեզ
գուբը պիտի գցեն», «Ես քեզ...
կփչացնեմ, ով ծածկող
քերովբե, կրակի քարերի միջից

...Ես քեզ գետինը պիտի գցեմ,
թագավորների առաջ քեզ
տեսարան պիտի շինեմ ...Ես
քեզ մոխիր պիտի շինեմ երկրի
վրա բոլոր քեզ տեսնողների
աչքերի առաջ ...Դու սուկում
եղար և ոչնչացար հավիտյան»
(Եզեկիել 28.6-8, 16-19):

«Ճակատամարտի մեջ
զինվորյալների բոլոր զենքերն
տ արյունա-թաթախ
հանդերձները պիտի այրվեն և
հրո ճարակ լինեն»։ «Որովհետև
Տիրոջ բարկությունը բոլոր
ազգերի վրա է, և
սրտմտությունը՝ նրանց բոլոր

գորքերի վրա: Նա նրանց
նզոպել է, մահվան է մատնել»: «Նա ամ-բարիչտների վրա
որոգայթներ՝ կրակ և ծծումբ
կտեղա, և նրանց բաժակի
բաժինն այրող մրրիկ կլինի»
(Եսայիա 9.5, 34.2, Սաղմոս
11.6): Ահա կրակ է իջնում
Աստծուց՝ երկնքից: Երկիրը
ճեղքվում է: Նրա խորքերում
թաքնված զենքերը դուրս են
բերվում: Երկրի
ճեղքվածքներից կրակ է
արտաժայթքում: Ժայռերն
անգամ բռնկվում են: Եկել է
«այն օրը, որ վառված է թոնրի
պես»: «...Եվ տարերքը՝ կրակով

վառված կհալվեն, երկիրը և
Նրանում եղած բաներն էլ
կայրվեն» (Մադաքիա 4.1, Բ
Պետրոս 3.10): Երկրի մակերեսն
ասես մի հալած զանգված լինի՝
մի եռացող վիթխարի [673]
կրակե լիճ: Սա անաստված
մարդկանց դատաստանի և
կորստյան ժամանակն է,
«վրիժառուլթյան օրը Տիրոջ
համար, հատուցման տարին
Սիոնի վեճի համար» (Եսայիա
34.8):

Ամբարիշտներն իրենց
հատուցումն են ստանում երկրի
փոս (Առակաց 11.31): Նրանք

«հարդի պես են լինելու, և
Նրանց պետք է այրի այն եկող
օրը, ասում է Չորսոց Տերը»
(Մադաքիա 4.1): Ոմանք
ոչնչանում են մեկ
վայրկյանամ, մինչդեռ
մյուսները տանջվում են շատ
օրեր: Բոլորը պատժվում են
«իրենց գործերի համեմատ»:
Քանի որ արդարների մեղքերը
սատանայի վրա են դրվել, նա
պետք է տանջվի ոչ միայն իր
ապստամբության համար, այլ
նաև այն բոլոր մեղքերի, որ նա
Աստծո ժողովրդին դրդել է
գործեր Նրա պատիժը շատ
ավելի մեծ կլինի, քան նրանցը,

ում նա խաբել է: Այն բանից
հետո, երբ կմեռնեն բոլոր
նրանք, ովքեր նրա
խաբեության գոհն են դարձեր
նա դեռ կշարունակի ապրել և
տանջվել: Մաքրող բոցերում ի
վերջո ոչնչանամ են
ամբարիշտները՝ արմատը և
ոստը: Արմատը սատանան է,
ոստերը՝ նրա հետևորդները:
Օրենքի լիակատար պատիժն
իրագործված է, արդարության
պահանջ-ները՝ բավարարված,
և երկինքն ու երկիրը նայելով՝
հռչակում են Եհովայի
արդարությունը:

Սատանայի ավերիչ
գործունեությանն առհավետ
վերջ է տրված: Վեց հազար
տարի նա իր կամքն է
կատարել՝ երկիրը լցնելով
տառապանքով և վիշտ
պաածառելով ողջ տիեզերքին:
«Բոլոր ստեղծվածները
միասին» հառաչել ու ցավի մեջ
են եղել: Աստծո արարածներն
այժմ ընդմիշտ ազատ են նրա
ներկայութունից ու
վարձութուններից:
«Չանգստացել, հանդարտվել է
բոլոր երկիրը, նրանք
(արդարները) գոչում են
ցնծությամբ» (Եսայիա 14.7): Եվ

գովասանքի ու հաղթանակի
աղաղակ է բարձրանում
համայն հավատարիմ
տիեզերքից: Լսվում է «մի մեծ
բազմության ձայն», «իբր շատ
ջրերի ձայն... որ ասում է.
Ալելու՛հա, որովհետև
Ամենակալ Տեր Աստվածը
թագավորեց» (Յայտնություն
19.6):

Մինչ երկիրն այրվում է լափող
բոցերի մեջ՝ արդարներն
ապահով բնակվում են Սուրբ
քաղաքում: Նրանց վրա, ովքեր
բաժին են ունեցել առաջին
հարության մեջ, երկրորդ մահը

իշխանությունն չունի: Մինչ
Աստ-ված մաշող կրակ է
ամբարիշտների համար, իր
ժողովրդի համար Նա արն ու
վահան է (Չայտնություն 20.6,
Սաղմոս 84.11): [674]

«Տեսա նոր երկինք և նոր
երկիր, որովհետեւ առաջին
երկինքը և երկիրը անցան»
(Չայտնություն 21.1): Կրակը, որ
սպառում է ամբարիշտներին,
մաքրում է երկիրը: Սրբվում են
անեծքի բոլոր հետքերը:
Չավիտյան վառվող ոչ մի
դժոխք փրկվածներին չի

հիշեցնի մեղքի գարհուրելի
հետևանքները:

Կմնա միայն մեկ հիշեցում, մեր
Փրկիչն առհավետ կրելու է իր
խաչելության նշանները: Նրա
վիրավոր գլխին, Նրա կողքին և
ձեռքերի ու ոտքերի վրա մեղքի
գործած դաժանության միակ
հետքերն են: Տեսնելով
Քրիստոսին իր փառքի մեջ՝
մարգարեն ասում է. «Նա
պայծառ ճառագայթներ ուներ,
որ դուրս էին գալիս իր կողից, և
այնտեղ էր նրա զորության
ծածկույթը» (Ամբակում 3.4,
անգլ. թարգմ.): Այդ խոցված

կողր, որտեղից հոսեց արյան ալ
շիթը և հաշտեցրեց մարդուն
Աստծո հետ, այնտեղ է Փրկչի
փառքը, «Նրա զորության
ծածկույթը»: «Ի զորու՝
փրկելու» քավչևարար
զոհաբերության միջոցով, Նա
կարող է արդարացիորեն
դատել Նրանց, ովքեր
արհամարհել են Աստծո
ողորմությունը: Եվ Նրա
նվաստացման նշանները Նրա
բարձրագույն շքանշաններն են:
Չավի-տենական դարերի
ընթացքում Գողգոթայի
վերքերը հռչակելու են Նրա
փառքն ու Նրա զորությունը:

«Ով հոտի աշտարակ, Սիոնի աղջկա բլուր, մինչև քեզ է գալու և հասնելու առաջին իշխանությունը» (Սիբիա 4.8): Եկել է ժամանակը, որին սուրբերն անհամբեր սպասել են այն օրից ի վեր, երբ բոցեղեն սուրը եղեմից վտարեց առաջին զույգին, «ստացվածքի փրկության» ժամանակը (Եփեսացիս 1.14): Երկիրը, որ ի սկզբանե տրված էր մարդուն՝ որպես նրա թագավորությունը, որ նրա ձեռքով մատնված էր սատանային ու այնքա՛ն երկար բռնագրավված էր հզոր

թշնամու կողմից,
վերադարձվում է փրկության
մեծ ծրագրի միջոցով: Այն
ամենն, ինչ կորսվել էր մեղքի
պատճառով, վերականգնված է:
«Այսպես է ասում Եհովան ...որ
կազմեց երկիրը, որ ստեղծեց և
հաստատեց այն, չստեղծեց այն
դատարկ, այլ բնակվելու
համար ստեղծեց» (Եսայիա
45.18): Աստծո՝ երկրի
ստեղծման սկզբնական
նպատակն իրականանում է,
երբ այն դառնում է
փրկվածների հավիտենական
բնակավայրը: «Արդարները
կժառանգեն երկիրը և

հավիտյան կբնակվեն
Նրանում» (Սաղմոս 37.29):

Մտավախությունը, որ ապագա
ժառանգությունը չափից ավելի
նյութական [675] կթվա,
շատերին դրդեյ է հոգևոր
մեկնությամբ ներկայացնելու
հենց այն ճշմարտությունները,
որոնք դրդում են մեզ դիտելու
այն որպես մեր տունը:
Քրիստոսն իր աշակերտներին
հավաստիացրել է, որ գնում է
Նրանց համար ապարանքներ
պատրաստելու հոր տանը:
Նրանք, ովքեր ընդունում են
Աստծո խոսքի ուսմունքը,

լիովին անտեղյակ չեն լինի
երկնային հայրենիքի
վերաբերյալ: Եվ,
այնուամենայնիվ, «ինչ որ աչք
չտեսավ, և ականջ չլսեց, և
մարդու սիրտը չընկավ, այն
պատրաստեց Աստված իրեն
սիրողների համար» (Ա
Կորնթացիս 2.9): Մարդկային
լեզու և անկարող է նկարագրել
արդարների վարձքը: Դա
կիմանան միայն նրանք, ովքեր
կտեսնեն այն: Մարդկային ոչ
մի միտք չի կարող ըմբռնել
Աստծո դրախտի փառքը:

Աստվածաշնչում փրկվածների
ժառանգությունը «հայրենիք» է
կոչ-վում (Եբրայեցիս 11.14-16):
Այնտեղ երկնային Յովիվն իր
հոտը տանում է կենդանի ջրերի
աղբյուրների մոտ: Կյանքի
ծառն ամեն ամիս իր պտուղն է
տալիս, և նրա տերերերը
ազգերին ծառայելու համար են:
Այնտեղ մշտապես վտակներ
կան՝ բյուրեղի պես ջինջ, և
նրանց ափերին աճող ծառերն
իրենց ստվերն են գցում
շավիղների վրա՝
պատրաստված Տիրոջ
փրկյալների համար: Այնսւեղ
ընդարձակ հարթավայրերը

վերածում են չքնաղ բլուրների,
և երեամ են Աստծո լեռների
վեհապանձ գագաթները: Այս
խաղաղ հովիտներում՝
կենդանի ջրի աղբյուրների
մոտ, Աստծո ժողովուրդը՝
դարեր շարունակ պանդուխտ
ու թափառական, կգտնի իր
տունը:

«Իմ ժողովուրդը կբնակվի
խաղաղավետ բնակարանում,
ապահով վրաններում և
անդորրը հանգստավայրերում»:
«Այլևս լսելի չի լինի քո երկրում
բռնություն, ավերում ու
կոտորած՝ քո սահմաններում, և

դու քո պարիսպները կոչելու ես
Փրկություն և քո դոները՝
Օրհնաբանություն»։ «Եվ տներ
պիտի շինեն ու բնակվեն, և
այգիներ տնկեն ու նրանց
պտուղն ուտեն։ Նրանք չեն
շինի, որ ուրիշը բնակվի, նրանք
չեն տնկի, որ ուրիշն ուտի
...իրենց ձեռքերի գործը պիտի
երկար վայելեն իմ
ընտրյալները» (Եսայիա 32.18,
60.18, 65.21,22):

Այնտեղ «անապատն ու չոր
երկիրը կուրախանան, և կցնձա
ամային ու կծաղկի շուշանի
պես»։ «Թփի փոխարեն մայր

պիտի բուսնի, դժնիկի
փոխարեն մրտենի պիտի
բտսնի»: «Եվ գայլը կբնակվի
գառնի հետ, և ինձը [676] ուլի
հետ կպառնի ...և. մի փոքր
երեխա կքշի նրանց»: «Նրանք
չեն վնասի և չեն ապականի իմ
բոլոր սուրբ սարի վրա», ասում
է Տերը (Եսայիա 35.1,
55.13, 11.6, 9):

Երկնքի մթնոլորտում ցավ չի
կարող գոյութայուն ունենալ:
Այնտեղ այլևս չեն լինի
արցունքներ, թաղման
թավուրներ, վշտի նշաններ:
«Եվ մահ այլևս չի լինի, ոչ սուգ,

ոչ աղաղակ ...որովհետև
առաջիններն անցան»:
«Այնտեղի բնակիչը չի ասելու,
թե ես տկար եմ. այնտեղ
բնակվող ժողովրդի
անօրենությունը թողնված է»
(Հայտնություն 21.4, Եսայիա
33.24):

Այնտեղ է Նոր Երուսաղեմը՝
փառավորված Նոր Երկրի
մայրաքաղաքը՝ «փառավոր
պսակ ...Տիրոջ ձեռքում, և
արքայական թագ՝ քո Աստծո
ափում»:
«Նրա
լուսավորվածությունը
պատվական ակունքի նման է,

ինչպես բյուրեղացած հասպիս քար»։ «Եվ փրկյալների ազգերը նրա լույսով պիտի գնան, և երկրի թագավորները իրենց փառքը և պատիվը կբերեն նրա մեջ»։ Տերն ասում է. «Ես պիտի ցնծամ Երուսաղեմի վրա և ուրախանամ իմ ժողովրդով»։ «Ահա Աստծո խորանը մարդկանց հետ, և նա կբնակվի նրանց հետ, և նրանք կլինեն նրան ժողովուրդ, և ինքն Աստված նրանց հետ կլինի նրանց Աստված» (Եսայիա 62.3, Ջայտնություն 21.11,24, Եսայիա 65.19, Ջայտնություն 21.3)։

Աստճո քաղաքում «գիշեր չի
լինի»: Ոչ ոք հանգստի կարիք
կամ ցանկություն չի ունենա:
Այ նտեղ ոչ ոք չի հոգնի՝ Աստճո
կամքը կատարե-լով և Նրա
անունը փառաբանելով: Մենք
միշտ կզգանք առավոտվա
թար-մությունը, որը երբեք չի
անցնի: «ճրագի և արեգակի
լույսի պետք չէր Նրանց,
որովհետե Տեր Աստվածը
լուսավորում է Նրանց»
(Չայտնություն 22.5) : Արեի
լույսին կփոխարինի մի
այնպիսի շողարձակում, որը չի
շլացնի ցավալիորեն, թեև
անսահմանորեն կգերազանցի

կեսօրվա արեի
պայծառութիւնը: Աստօծ և
Գառնան փառքն անմար լույսով
ողողում է սուրբ քաղաքը:
Փրկվածները քայլում են
մշտնջենական ցերեկվա
փառքի մեջ:

«Եվ տաճար չտեսա նրա մեջ,
որովհետեւ Տեր Աստված
Ամենակալը և Գառն է նրա
տաճարը» (Հայտնութեան
21.22): Աստօծ ժողովրդին
առաւելութիւն է տրվում
ուղղակիորեն հաղորդակցւելու
Հոր և Որդու հետ: «Հիմա
հայելու մեջ օրինակով ենք

տեսնում» [677] (Ա Կորնթացիս
13.12): Ինչպես հայելու մեջ՝
մենք տեսնում ենք Աստծո
պատկերն՝ ար-տացուլված
բնության և մարդկանց
հանդեպ Նրա վարքի մեջ,
սակայն այն ժամանակ մենք
Նրան կտեսնենք դեմառդեմ՝
առանց մեր միջև աղոտ
վարագույրի: Մենք կկանգնենք
Նրա ներկայության մեջ և
կտեսնենք Նրա երեսի փառքը:

Այնտեղ փրկվածները
կգիտենան, ինչպես որ
տեղեկացված են: Մերն ու
համակրանքը, որ ինքն

Աստված է սերմանել մարդու
հոգում, այնտեղ կգտնեն իրենց
ամենաճշմարիտ ու
ամենաքաղցր դրսևորումը:
Մաքուր հաղորդակցությունը
սուրբ Էակների հետ,
ներդաշնակ կյանքը օրհնյալ
հրեշտակների և բոլոր դարերի
հավատարիմների
հասարակության հետ, ովքեր
իրենց հանդերձները լվացել ու
սպիտակեցրել են Գառան
արյունով, սրբազան կապերը,
որ իրար են միացնում «ամեն
մի ընտանիք երկնքում և
երկրում» (Եփեսացիս 3.15,

անգլ. թարգմ.), կմեծացնեն
փրկվածների երջանկությունը:

Այնտեղ անմահ
բանականությունը անմար
հրճվանքով պիտի խորհի
արարչագործ զորության
հրաշքների և փրկարար սիրո
գաղտնիքների մասին: Այնտեղ
չի լինի դաժան ու նենգ
թշնամի, որ դրդի մոռանալ
Աստծուն: Ամեն մի
ունակություն կգարգանա,
կաճի ամեն մի շնորհը:
Գիտելիքների ձեռքբերումը չի
հոգնեցնի միտքը կամ սպառնի
ուժերը: Այնտեղ հնարավոր

Կլի՛նի իրականացնել
ամենախոշոր ձեռնարկումները,
հասնել ամենաբարձր
նպատակներին, իրագործել
մեծագույն ձրգտումները, և
այդուհանդերձ կհայտնվեն նոր
բարձունքներ, որ պիտի
հաղթահարվեն, նոր հրաշքներ,
որ կհիացնեն բոլորին, նոր
ճշմարտություններ՝
հասկանալու, նոր
նպատակներ, որ կպահանջեն
մտքի, հոգու և մարմնի աժերը:

Աստճո փրկյալների առջև
ուսումնասիրության համար
բաց կլինեն տիեզերքի բոլոր

գանձերը: Մահվան
կապանքներից ազատված՝
նրանք կթռչեն հեռավոր
աշխարհները, որոնք խոր
վշտով էին հետևել մարդկային
տառապանքներին և
ցնծության օրհներգերով
ողջանել ամեն մի հոգու
փրկությանը: Երկրի
զավակներն անասելի
բերկրանքով են մտնում
չընկած էակների ուրախության
ու իմաստության մեջ, ովքեր
կհավում են գիտության և
իմաստության գանձերով՝ ձեռք
բերված դարերի ընթացքում
Աստծո ձեռքի գործերի

հետազոտութեամբ: Նրանք
անմշուշ հայացքով են նայում
փառավոր արարչութեանը՝
արևներին, աստղերին և բոլոր
համակարգերին, որոնցից ամեն
մեկն իր համար սահմանված
կարգով պտտվում է
Աստվածութեան գահի [678]
շուրջը: Ամեն ինչի վրա՝
ամենափոքրից մինչև
ամենամեծը, գրված է Արարչի
անունը, և ամեն ինչում երևում
է Նրա գործութեան
առատութիւնը:

Եվ հավերժութեան տարիները,
գլորվելով առաջ, իրենց հետ

ավելի հարուստ ու ավելի
փառահեղ հայտնություններ
կբերեն Աստծո և Քրիստոսի
մասին: Գիտության
զարգացման հետ մեկտեղ
կաճեն նաև սերը, ակնածանքն
ու երջանկությանը: Մարդիկ
որքան շատ ճանաչեն Աստծուն,
այնքան ավելի կհիանան Նբա
բնավորությամբ: Երբ Հիսուսը
փրկվածների առջև
բացահայտում է փրկության
գանձերը և սատանայի դեմ մեծ
պայքարում ձեռք բերված
զարմանալի նվաճումները,
նրանց սրտերը թրթռում են
ավելի ջերմեռանդ նվիրումով,

Նրանք ավելի մեծ հիացմունքով
են նվագում ոսկյա տավիղների
վրա, և հազար հազարավոր ու
բյուր բյուրավոր ձայներ
միանում են փառաբանող հզոր
երգչախմբին:

«Եվ ամեն ստեղծված, որ
երկնքում է, և երկրի վրա, և
երկրի տակ, և ծովում, և այն
ամենը, որ նրանց մեջ են, լսեցի,
որ ասում էին. Աթոռի վրա
նստողին և Գառին լինի
օրհնությունը, և փառքը. և
կարողությունը հավիտյանս
հավիտենից» (Յայտնություն
5.13):

Մեծ պայքարն ավարտված է:
Մեղք և մեղավորներ այլևս
չկան: Ամբողջ տիեզերքը
մաքուր է: Ներդաշնակության և
ուրախության մեկ զուրկ է
բաբախում սևմբողջ անծայր
արարչագործության մեջ:
Նրանից, ով ստեղծել է ամենը,
կյանք, լույս ու բերկրանք է
հորդում անեզր տիեզերքի
բոլոր տիրույթները:
Փոքրագույն ատոմից մինչև
մեծագույն աշխարհը, ամեն
բան՝ շնչավոր թե անշունչ, իր
անսքող գեղեցկությամբ և
կատարյալ ուրախությամբ

հռչակում է, որ Աստված սեր է:
[679]